Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՊԱՏ ԱՎԱՄԵՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (1991-2016թթ.)

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

Ա.Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ, Գ.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(1991-2016թթ.)

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ
2017

ՀՏԴ 37(091)
ԳՄԴ 74.03
Ա 774

Տպագրվում է Արցախի հանրապետության գիտական կենտրոնի գիտական խորհրդի 31.03.2017թ. նիստի որոշմամբ

Գրախոսներ՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտ (ՀՀԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ. Ա.Մելքոնյան)

Գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտի գիտաշխատողներ, պ.գ.դ. Հ.Աբրահամյան, պ.գ.դ. Գ.Ստեփանյան, պ.գ.թ. Մ.Հարությունյան:

Ավանեսյան Ա.Ս., Հարությունյան Գ.Հ.
Ա 774 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգը (1991-2016թթ.): Ա.Ավանեսյան, Գ.Հարությունյան: Ստեփանակերտ, «Դիզակ Պլյուս», 2017, Հ. 3.- 688 էջ:

Աշխատության երրորդ հատորում ուսումնասիրության է ենթարկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի 1991թ.-ից 2016թ. ընկած ժամանակահատվածի ամբողջական պատմությունը: Արխիվային հարուստ նյութերի, սկզբնաղբյուրների և ժամանակակիցների հուշերի համադրական վերլուծության հիման վրա հետազոտվել և նորովի լուսաբանվել են քննարկվող ժամանակաշրջանի (1991-2016թթ.) ԼՂՀ կրթական գործի վիճակը Արցախի Հանրապետության հռչակման նախօրյակին, կրթական նոր համակարգի ձևավորումն ու սերտաճումը Հայաստանի կրթական համակարգի հետ, ՀՀ և ԼՂՀ կրթության միասնական քաղաքականությունն ու զարգացման միտումները, կրթական համակարգի միասնական կառավարման հիմնախնդիրները համահայկական կրթադաշտում, բարեփոխումները ԼՂՀ կրթության համակարգում և նրա զարգացման ուղղությունները, ԼՂՀ կրթության համակարգի կառուցվածքը, կառավարման տեսությունն ու պրակտիկան, ԼՂՀ կրթական գործի կազմակերպիչների գործունեությունը, մանկավարժական կադրերի վերապատրաստման հիմնախնդիրները, ԼՂՀ վաստակավոր մանկավարժների, գիտության վաստակավոր գործիչների գործունեությունը, նախադպրոցական կրթական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների, արհեստագործական ուսումնարանների, ռազմական վարժարանի, երաժշտական, մարզական ու վարչատարածքային շրջանների առանձին դպրոցների գործունեությունը, նրանց առաջավոր փորձի և պատմական ու տեսական արժեք ունեցող այլ հարցեր, որոնք հնարավորինս ամբողջական կերպով գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Աշխատությունը նախատեսված է հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմությամբ զբաղվողների, առանձնապես ուսուցիչների, մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի դասախոսների, ուսանողների և, առհասարակ, ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 37(091)
ԳՄԴ 74.03

ISBN 978-9939-1-0558-1

© Ավանեսյան Ա.Ս., 2017
© Հարությունյան Գ.Հ., 2017

Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS «Արցախի կրթական համակարգը» գիտական թեմայի շրջանակներում:

ԱՌԱՋԱԲԱՆ

20-րդ դարի 80-ական թվականների վերջին արցախահայության նոր թափով ծավալված ազգային ազատագրական պայքարն իր էությամբ և նշանակությամբ դարակազմիկ իրադարձություն է հայ Ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Կասկածից վեր է, որ անարդարության ճիրաններում հայտնված հայկական երկրամասի այս հատվածի բնակչությունը պոռթկաց հանուն հալածված ճակատագրի փրկության, ազդարարեց բոլոր բոլոր նրանց դեմ, ովքեր շուրջ յոթ տասնամյակ շարունակ ոտնահարել են իրենց հայ լինելու ի վերուստ շնորհված իրավունքը՝ ճշմարտությունը թողնելով պատմական վարագույրի ետևում: Ռուս-թուրքական ստոր գործարքի հետևանքով արհեստականորեն երկատված հայ ազգի արժանապատվության փրկությունը դարձավ ժամանակի անհետաձգելի պահանջ, քանզի շարունակել հապաղել՝ կնշանակեր արցախահայության դանդաղ մահ և ոչ հեռու ապագայում Արցախի հայաթափում Նախիջևանի օրինակով:

Իր վեհ նպատակին հասնելու համար հայ Ժողովուրդը սկզբից ևեթ ընտրեց հիմնախնդրի լուծման օրինական ճանապարհը՝ համազգային շարժումը: Փաստորեն, 88-ին տեղի ունեցավ այն, ինչ տասնամյակներ շարունակ հայ Ժողովրդի չիրականացված իղձն էր: Արցախահայությունը ելավ պայքարի հանուն ազատության, անկախության, հանուն հայրենիքի միասնության, ազգային արժանապատվության: Ազգային ազատագրական պայքարի շնորհիվ արցախական աշխարհի բնակչությունը վերջնականապես ազատվեց Ադրբեջանի գաղութային լծից և վերականգնեց շուրջ յոթ տասնամյակ կորցրած իր անկախությունը:

1991թ. սեպտեմբերի 2-ը Արցախի բազմադարյան պատմության մեջ մտավ որպես հայկական երկրորդ պետության ստեղծման օր, քանզի այդ օրն ընդունվեց հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) հռչակման մասին: Այդ օրվանից նորաստեղծ հանրապետությունը իր պատմության առաջին տասնամյակում անցել է բարդ ու դժվարին ուղի՝ լեցուն կորուստներով ու ձեռքբերումներով, անկումներով ու վերելքներով: Մի կողմից՝ շրջափակումը, պատերազմը, մարդկային, նյութական ու հոգևոր կորուստները, մյուս կողմից՝ ազատ ու անկախ ապագա կերտելու արցախցիների անկոտրում կամքը՝ երկիրը փլատակներից վեր հանելու, անկախ պետականություն հաստատելու, զարգացման ու ամրապնդման ճանապարհն անշրջելի դարձնելու համար:

Անկախություն ձեռք բերելուց հետո ինչպես մայր Հայաստանում, այն-

պես էլ Արցախի նորաստեղծ հանրապետությունում ընթացող հասարակական, քաղաքական և տնտեսական վերափոխումները խորապես ազդեցին ժողովրդի կենսագործունեության բոլոր դրսևորումների վրա: Այդ ազդեցության ուժգնությունն այնքան մեծ էր, որ հավակնում էր փոխելու հայ մարդուն, նրա նկարագիրը և արժեքային համակարգը: Նմանօրինակ ծավալուն հասարակական վերափոխումների կիզակետում, բնականաբար, պետք է հայտնվեր հասարակության ամենախոշոր և ամենաազդեցիկ ենթակառույցներից մեկը՝ կրթական համակարգը:

Հայաստանի անկախության սկզբնական շրջանում քաղաքական, հասարակական և տնտեսական փոփոխություններին զուգընթաց վերափոխումներ սկսեցին իրականացվել նաև կրթական համակարգում: Դառնալով անկախ հանրապետություն, Արցախը նույնպես հնարավորություն ստացավ փոխել գոյություն ունեցող քաղաքական կարգը և ինքնուրույնաբար լուծել իր առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները: Խորհրդային Միության և Բաքվի իշխանությունների կողմից նպատակամետ պլանավորվող և վարչահրամայական մեթոդներով կառավարվող տնտեսությունից և քաղաքականացված կրթական համակարգից անցումը ազատականի արմատապես փոխեց ոչ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունները, այլև հրատապ խնդիր դարձրեց նոր ազգային կրթական համակարգի ստեղծումն ու զարգացումը, կառավարման նոր սկզբունքների, մեթոդների ու գործառույթների ապահովումը, դպրոցի, որպես կրթական համակարգի առաջնային օջախի զարգացումը:

Հարկ է նշել, որ այս գործընթացը դյուրին չէր ընթանում, քանզի, որպես կանոն, նորը հնի դեմ պայքարելով և նրանից դրականը վերցնելով ու բացասականը դեն նետելով է ինքնահաստատվում: Այս առումով թերևս առավել քան կարևորվում է խորհրդային հասարակարգի կրթական համակարգի փորձը: Իր առանձնահատկություններով հանդերձ՝ այն ունի դրական կամ բացասական առումներով ուսանելի դրսևորումներ, որոնք հաշվի առնելու դեպքում կարելի է առավել օպտիմալ կերպով լուծել ներկայիս չափազանց հրատապ ու արդիական կրթական հարցերը:

Անտարակույս, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի և 21-րդ դարը մուտք գործած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) կրթական համակարգի միջև բովանդակային առումով կան որոշակի նմանություններ ու տարբերություններ: Հանգամանք, որն իր հերթին պահանջում է անդրադառնալ խնդրո առարկա ժամանակաշրջանում (1920-1988թթ.) ծավալված իրադարձություններին, մասնավորապես ԼՂ Ինքնավար մարզի կրթական համակարգի բազմակողմանի ուսումնասիրմանը (դա հեղինակներին հաջողվել է սույն աշխատության երկրորդ հատորում՝

«Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը 1923-1988թթ.» («Դիզակ պլյուս» հր., 2015), խորագրով աշխատությունում, տալ դրանց ազգային և քաղաքական գնահատականը, քննական վերլուծություններով պատմագիտական և գիտագործնական առումով ընդհանրացնել մարզի այդ տարիների կրթական համակարգի զարգացման հարուստ փորձը: Որպես տրամաբանական շարունակություն չափազանց կարևոր է համակողմանի ուսումնասիրել նաև հետխորհրդային շրջանի Արցախի (ԼՂՀ-ի) կրթական համակարգի պատմությունը, որն, անշուշտ, կնպաստի նաև Արցախի կրթական համակարգի, ինչպես նաև հայ կրթական համակարգի ամբողջական պատմության (5-րդ դարից մինչև 21-րդ դարի 2-րդ տասնամյակը) ստեղծմանը:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է 1991-2016թթ.: Սակայն առանձին դեպքերում, ըստ անհրաժեշտության, անդրադարձել ենք նախորդ ժամանակաշրջանի՝ 1988-1991թթ. ԼՂԻՄ-ի կրթական համակարգի վիճակին, ծավալվող քաղաքական իրադարձությունների համատեքստում, և հնարավորինս լուսաբանել մարզի կրթական համակարգի հիմնախնդիրները մինչև անկախացումը:

Աշխատության հեղինակները պատմագիտական աղբյուրների, արխիվային հարուստ նյութերի, վաստակաշատ մանկավարժների հուշերի, պարբերական մամուլում տպագրված բազմաթիվ հեղվածների ուսումնասիրության հիման վրա փորձում են վերլուծաբար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի մեջ ներառված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի (նախադպրոցական հիմնարկների, կրտսեր, միջին, ավագ, հանրակրթական դպրոցների, պարարվեստի, երաժշտական, սպորտի դպրոցների, ռազմամարզական վարժարանի, արհեստագործական ուսումնարանի, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների, ՀՀ Ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի) գործունեության ամբողջական պատմությունը: Միաժամանակ, պատմահամեմատական, քննական վերլուծություններով հանգամանորեն ցույց տալ կրթական համակարգի վիճակը մինչև անկախության շրջանը(1988-1991թթ.) և անկախության շրջանում կրթական նոր համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությունները՝ կրթական համակագի զարգացման անցումային, կայունացման, կայացման և արմատական վերափոխումների շրջափուլերը (1992-2016թթ.)՝ ՀՀ և ԼՂՀ կրթության միասնական քաղաքականությունն ու զարգացման միտումները, կրթության համակարգի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները, ՀՀ և ԼՂՀ կրթության համակարգի միասնական կառավարման և կարգավորման առանձնահատկությունները, ԼՂՀ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները,

ներառական կրթության իրականացման, մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման հիմնախնդիրները, կրթական գործի կազմակերպիչների, վաստակավոր մանկավարժների գործունեությունը, ինչպես նաև ԼՂՀ վարչատարածքային շրջանների առանձին դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) և այլ հիմնահարցեր:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատության երրորդ հատորը ԼՂՀ կրթական համակարգի ամբողջական պատմությունը ներկայացնելու առաջին փորձն է: Անշուշտ. աշխատությունում կլինեն նաև թերություններ, ինչը յուրահատուկ է ցանկացած ուսումնասիրության: Հարգարժան ընթերցողը թող ների նման թերությունների համար: Աշխատության վերաբերյալ ցանկացած դիտողություն հեղինակների կողմից կընդունվի սիրով և շնորհակալությամբ:

Հեղինակները խորին շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց խորհուրդներով և մասնակցությամբ նպաստել են աշխատության ստեղծմանը:

Հեղինակներ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1988-2016ԹԹ.)

1. Կրթական համակարգի վիճակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման նախօրյակին (1988-1991թթ.)

Քանի որ սույն աշխատությունը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը 1923-1988թթ.» խորագիրը կրող աշխատության տրամաբանական շարունակությունն է, սխալված չենք լինի, եթե քննարկվող հիմնահարցերի ուսումնասիրության և վերլուծության սկզբնակետը վերցնենք 1988 թվականը: Մի կողմից՝ ԼՂՀ կրթության ներկայիս համակարգի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է առաջին հերթին հետադարձ հայացք ձգել մինչև Արցախյան շարժումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգին (1986-1988թթ.), բնութագրել նրա վիճակը, մյուս կողմից՝ քննարկվող հիմնահարցերը դիտարկել քաղաքական իրադարձությունների (88-ի ղարաբաղյան շարժման սկիզբը, սումգայիթյան դեպքերը, դեկտեմբերյան ահավոր երկրաշարժը, պատերազմական ժամանակաշրջանում բնակչության բռնի տեղահանումը, կրթական հաստատություններում ուսուցումն արդյունավետ իրականացնելու համար անբարենպաստ պայմանները և այլն) համատեքստում:

Ինչպիսի՞ն էր ԼՂԻՄ-ի կրթական համակարգի վիճակը Արցախյան շարժման նախօրյակին (1986-1988թթ.):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1986-1988թթ. ԼՂԻՄ-ի կրթական համակարգը ներառում էր 83 նախադպրոցական հիմնարկներ, որոնցում ընդգրկված էին 6650 երեխաներ: Հայկական և ռուսական շատ մանկապարտեզներ հասել էին մեծ նվաճումների մատաղ սերնդի դաստիարակության բնագավառում(ի հաստատումն ասվածի նշենք, որ Ստեփանակերտի թիվ 4 մանկապարտեզի փորձը ցուցադրվել է ՍՍՀՄ ԺՏՆ ցուցահանդեսում ու արժանացել բրոնզե մեդալի): Մարզում գործում էին 6 պիոներական տներ, 4 մանկապատանեկան մարզական դպրոցներ: Ստեփանակերտում գործում էին նաև երաժշտական և շախմատի դպրոցներ, իսկ Հադրութում՝ մարզական դպրոց[1]: Բացի դրանից, Ստեփանակերտում գործում էին նաև պատանի տեխնիկների և պատանի բնասերների կայաններ, որոնց 16 խմբակներում ընդգրկված էին 250-ից ավելի դպրոցականներ: Պատանի տեխնիկների խմբակներում ընդգրկված դպրոցականները՝ կայանի ավտոմոդելիստները, բազմիցս մրցանակային տեղեր են գրավել հանրապետությունում: Կայանը ամեն տարի անցկացնում էր պատանի ֆիզիկոսների, քիմիկոսների, մաթեմատիկոսների մարզային մրցույթներ, օլիմպիադաներ, պատանի տեխնիկների ստեղծագործությունների լուսանկարների, գործերի ցուցահանդեսներ և այլն[2]:

Որպես ականատես (համահեղինակ՝ Հ.Գ.) նշեմ, որ պատանի բնասերների մարզային կայանի տնօրինությանն էր պատկանում ուսումնափորձնական հողամասը: Կայանն ուներ բնության պահպանության, ծաղկաբուծական, դեղաբույսերի, ճագարաբուծական, բանջարաբուծական, այգեգործական և այլ խմբակներ, որոնց աշխատանքները սիրով ղեկավարում էին կենսաբանության ուսուցիչները: Պատանի բնասերների մարզային կայանը սերտ կապ ուներ Երևանի բուսաբա-

նական այգու, գյուղատնտեսական ինստիտուտի, Մասիսի բանաջարաբուծական գիտահետազոտական փորձակայանի հետ: Հենց դա էլ շարժառիթ եղավ պատանի տեխնիկների, բնասերների կայանների խմբակի դպրոցականներից շատերի համար հետագայում ընտրելու մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության մասնագիտությունը: Նրանցից շատերն այսօր դասավանդում են հանրապետության ուսումնական հաստատություններում և աշխատում արտադրության տարբեր ոլորտներում: Ի դեպ, նշենք, որ նշված կայանները գործում են 1952 թվականից, իսկ պատանի տուրիստների կայանը՝ 1971 թվականից, որի նպատակն էր դպրոցականներին ծանոթացնել մարզի տեսարժան վայրերին (հեղինակները առաջարկում են, որ նման լավագույն ավանդույթները շարունակվեն նաև մեր օրերում):

Մարզի կրթական համակարգում ներառված հիմնական օղակը հանրակրթական դպրոցն էր: Իսկ ինչպիսի՞ կարգավիճակում էին գտնվում կրթական օջախները մինչև 1988թ. Արցախյան շարժումը: Ըստ վիճակագրական տվյալների, 1986-1988թթ. Լեռնային Ղարաբաղում գործում էին 161 հայկական դպրոցներ, որտեղ սովորում էին 29700 աշակերտներ, դասավանդում 3268 ուսուցիչներ:

Աղյուսակ 1

Դպրոցների և աշակերտների թվակազմը՝ ըստ շրջանների 1987-1988 ուս.տարում

հհ	շրջանը	դպրոցների քանակը	աշակերտների քանակը
1	Ստեփանակերտի	10	5772
2	Մարտակերտի	38	6568
3	Մարտունու	39	5862
4	Հադրութի	28	4564
5	Ասկերանի	39	5562
6	Շուշիի	7	768[3]

Մարզի ժողկրթբաժնի արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ վերոնշյալ ուսումնական տարում մարզի 6 երաժշտական դպրոցներում (Ստեփանակերտում և շրջաններում) սովորում էին 225 աշակերտներ, դասավանդում 75 ուսուցիչներ: Ստեփանակերտի արվեստի դպրոցում սովորում էին 65 աշակերտներ, դասավանդում 7 մասնագետներ: Սպորտի տարբեր ձևերի գծով մարզում գործում էր 6 դպրոց, որտեղ պարապում էին 120 սաներ, դասավանդում 15 մարզիչներ[4]:

Վերոհիշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողկրթության համակարգը գործել է կանոնավոր, և չնայած Բաքվի իշխանությունների հայահալած քաղաքականության, հայրենասեր մտավորականների ջանքերով կրթական համակարգում ձեռք են բերվել շոշափելի նվաճումներ:

Սակայն անժխտելի փաստ է, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Ադր-

բեջանին բռնակցելուց հետո 70 տարի նրա ժողովուրդը ենթարկվել է ճնշումներ-ի, զրկանքների, ունեցել ազգային արժեքների կորուստ: Ղարաբաղում աննպաստ պայմաններ են ստեղծվել արցախահայության տնտեսության, մշակույթի, կրթական գործի ու լուսավորության զարգացման համար, և եթե միջոցներ են հատկացվել, ապա դրանք տրամադրվել են ղարաբաղաբնակ ադրբեջանցիների հոգևոր մշակութային արժեքների, դպրոցի ու կրթական համակարգի զարգացման համար: Ամենևին չեն խրախուսվել հայկական հոգևոր արժեքները, մշակույթն ու դպրոցը: Սակայն նույնիսկ այդպիսի ահավոր պայմաններում երկրամասի կրթական համակարգում նկատելի էին շոշափելի ձեռքբերումները: Անշուշտ, աներկբա է այն, որ արձանագրված առաջընթացը, ձեռքբերումներն ու նվաճումները տեղի են ունեցել մայր Հայաստանի ու Արցախի հայրենասեր մտավորականների համառ ջանքերի շնորհիվ:

Արցախի պատմությանը խորագիտակ Հայկ Խաչատրյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Շահեն Մկրտչյանը, Հրանտ Աբրահամյանը և ուրիշներ Արցախյան ազատամարտի թեժ օրերին պատմական ու գիտական անհերքելի տվյալներով հաստատել են Ադրբեջանի ազգահալած գաղութային քաղաքականությունը և նրա հետևանքները: Բ.Ուլուբաբյանը «Արցախի պատմությունը» աշխատության մեջ իրավացիորեն մատնանշում է. «Ազգային խտրականության, ճնշման ու հալածանքի քաղաքականությունն առավել մոլեգնորեն կիրառվում էր մշակույթի ու ժողովրդական կրթության ոլորտներում: Մարզի հայկական դպրոցը երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական կյանքից: Ոչ միայն դպրոցը. արցախահայն այնպես բաժանվեց իր ազգային վարչական մշակութային առավել խոշոր միավորից, որ Հայաստան ուսման գնալը կամ այնտեղ կատարած սովորական երթևեկը դիտվում էր որպես քաղաքական անհուսալիության դրսևորում[5]: Սակայն առավել վտանգավորն ու դատապարտելին համարվում էր Հայաստանի հայի հայտնվելն Արցախում, նրա որևէ առնչությունն Արցախի հասարակական կյանքի հետ: Հայ գրողը, հայկական մշակութային գործիչը, հայ գիտնականն ու արվեստագետը իրավունք չունեին ոտք դնելու Արցախ, հանդիպելու իրենց հայրենակիցների հետ, որոնք իբր թե ունեին սեփական ինքնավարություն և կարող էին վայելել դրա ընձեռած ազգային մշակույթի ու առաջադիմության պտուղները...[6]»:

80-ական թվականների կեսերին (1985թ. գարնանը) Խորհրդային Միությունում տեղի ունեցավ, այսպես կոչված, հեղափոխություն(սուտ), որը պետական շրջաններում կոչվում էր վերակառուցում (перестойка) և հրապարակը լցրել էր ժողովրդավարության, հրապարակայնության, անհատի ու ազգի իրավունքների պաշտպանության բարձրագոչ խոստումներով և երևի թե ամենից շատ ոգևորել էր հայ ժողովրդին: Իսկ հայ ժողովրդի մեջ էլ՝ արցախահայությանը: ԼՂԻՄ-ի ամբողջ հայ բնակչությունը, ղեկավարներից (չհաշված Կևորկովին, Սամվելովին և նմաններին) մինչև բանվոր, հողագործ ու անասնապահ, միանգամից խանդավառ եռուզեռ ապրեց, հուսալով իրականացված տեսնել յոթ տասնամյակների իր երազանքը:

Վերակառուցման քաղաքականությամբ ոգևորված՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ բնակչությունը կրկին բարձրացրեց շուրջ յոթ տասնամյակ ծխացող Ղարաբաղի հիմնահարցը՝ մարզը մայր Հայաստանին վերամիավորելու հարցը, պահանջել ու պայքարել, որ այն վերջնական լուծում ստանա: «Արցախահայերը, որ դարերի ընթացքում դիմագրավել են տարբեր փորձությունների և գոյատևել որպես Հայաստան աշխարհ, այս անգամ էլ իրենց խոսքին հաստատ

ընտրեցին երկրորդ՝ պայքարի ուղին»,- մատնանշում է Արցախյան շարժման նշանավոր գործիչ Զորի Բալայանը:

1988-ին ծավալվեց համազգային շարժումը՝ ի պաշտպանություն արցախահայության պահանջատիրության: Այդ օրերին Արցախի հետ միասին փոթորկված Երևանը, որի բնակչության մի զգալի մասը լցվել էր Օպերայի և կենտրոնական հրապարակները, իր սրտակցությունն էր արտահայտում արցախահայությանը՝ ինքն էլ իր ղեկավարությունից պահանջելով սատարել հարցի լուծմանը, պայքարել մինչև վերջ, մինչև արդարության հաղթանակը: Այսպես, ազգովի ելանք պայքարի՝ հանուն ազատության, անկախության, հանուն յոթ տասնամյակ անջատված իր հայրենիքի՝ մայր Հայաստանի միասնության և ազգային արժանապատվության: Ամենակարևորը, ի վերջո, միասնական դարձավ հայի ազատատենչ ոգին: Արցախ, Հայաստան և հայրենիք միտվող Սփյուռք. սա է թերևս 88-ի ամենամեծ նվաճումը: Այս եռամիասնության վրա է կառուցվում հայ ժողովրդի պայծառ ապագան: Եթե գոյապայքարի 25-ամյա ուղին դիտենք ներքին ազատության լույսի ներքո, պարզորոշ կդառնա մեր աստիճանական հաղթահարումները շրջադարձից շրջադարձ. հանրահավաքային խանդավառություն, բռնի տեղահանումների, նվաստացումների, պատերազմի ծանր մղձավանջ, հաղթանակի բերկրանք, հետպատերազմյան նկատելի հոգեկան դեգրադացիա, ներքին հեղաբեկում, և վերջապես՝ ինքնակայացման վստահություն, որը մեր այսօրվա իրական վիճակն է:

Իսկ ինչպիսի՞ վիճակում էր գտնվում ԼՂԻՄ-ի կրթական համակարգը Արցախյան շարժման տարիներին(1988-1991թթ.)՝ խորհրդային բանակի անօրինական ռազմական դրության պայմաններում, սումգայիթյան դեպքերից հետո սրվող հակամարտության, ադրբեջանցի ավազակախմբերի կողմից ծավալվող ռազմական գործողությունների պայմաններում:

Փաստագրական նյութերի, երկրամասում ծավալված քաղաքական-ռազմական իրադարձությունների մասնակիցների և ականատեսների (այդ թվում՝ սույն աշխատության հեղինակների) հուշերի ուսումնասիրությունները հիմք են տալիս հավաստի փաստել, որ քննարկվող ժամանակաշրջանում (1988-1991թթ.)՝ պայմանավորված քաղաքական, ռազմական գործողություններով և այլ շարժառիթներով, որոշ չափով նվազել է հանրակրթական դպրոցների և աշակերտների թիվը: Դպրոցներինը դարձել էր 161-ից 156, աշակերտներինը՝ 29700-ից 28554, ուսուցիչներինը՝ 3268-ից 3189: Բավականին լուրջ դժվարություններ էին ստեղծվել շրջանների (շրջկենտրոնների), քաղաքների դպրոցներում ուսումնական պարապմունքները պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ: Նույն վիճակում էին գտնվում նաև արտադպրոցական հիմնարկները: Իսկ դա պայմանավորված էր մի շարք պատճառներով.

1. Հանրակրթական դպրոցներում ուսումնական պարապմունքների ժամերի խիստ բացթողումը՝ պայմանավորված հանրահավաքներին, ցույցերին մանկավարժական կոլեկտիվների, դպրոցականների ակտիվ մասնակցությամբ:

2. Երկարատև գործադուլներն ու դասադուլները:

3. Բարոյահոգեբանական վատ մթնոլորտը մարզի որոշ շրջաններում (Շուշիում, Մարտակերտում, Հադրութում) գործող «ինտերնացիոնալ» կրթական հաստատություններում (ադրբեջանցիների հետ մեկտեղ աշխատելը դարձավ անհնարին, առանձնապես Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից հետո):

4. 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո Արցախի մտավորականու-

թյան, մանկավարժական կոլեկտիվների և բարձր դասարանցիների ակտիվ մասնակցությունը փրկարարական և շինարարական աշխատանքներին:

5. Մարզի տարածքում խորհրդային բանակի ռազմական գործողություններն իրականացնելու նպատակով Ղարաբաղի ադրբեջանական գյուղերում ստեղծվեցին ռազմական կայաններ: Հայկական կրթական հաստատությունների մի մասը վերածվեց ռազմական օբյեկտների:

6. Մարզի շրջաններում և քաղաքներում անընդհատ սրվող ընդհարումները, ռազմական գործողությունները շարժառիթ դարձան բնակչության, այդ թվում նաև ուսուցիչների մի մասի համար՝ ժամանակավորապես արտագաղթել Հայաստան կամ Խորհրդային Միության այլ հանրապետություններ:

Վերոնշյալ և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները հնարավորություն չեն ընձեռել կազմակերպելու մարզի հանրակրթական դպրոցների անխափան, կանոնավոր աշխատանքները, ապահովել դպրոցակահասակ բոլոր երեխաների ընդգրկումը դպրոցներում, ուժեղացնել դպրոցների հսկողությունն ու ջերմ հոգատարությունը այն բոլոր երեխաների նկատմամբ, որոնց հայրերը, մայրերը անցել են ռազմական պաշտպանական աշխատանքի կամ մասնակցում են ահավոր երկրաշարժի գոտում փրկարարական աշխատանքներին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 80-ական վանակների վերջերին սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում ծավալվող իրադարձությունները հիմնականում կանխորոշեցին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հետագա հիմնահարցերը և սկիզբ դրեցին սոցիալ-մշակութային իրադրության, կրթական համակարգի փոփոխությունների տարերայնությանն ու անորոշություններին: Այսպես, Հայաստանում և Ղարաբաղում ամբողջ տարածաշրջանը ցնցած քաղաքական իրադարձություններն իրենց մեջ ներքաշեցին մանկավարժական հանրության ներկայացուցիչներին՝ դանդաղ, բայց հետևողականորեն ազդելով նրանց քաղաքական, աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների վրա: Մանկավարժական պրակտիկան այս ամենին արձագանքեց մի քանի տարի անց՝ 88-ի շարժման սկզբներին, նախ այն պատճառով, որ կրթական համակարգն ընդհանուր առմամբ պահպանողական էր: Եվ երկրորդ՝ դեռ կար Խորհրդային Միությունը՝ պետական կյանքի կազմակերպման հատուկ գործող մեխանիզմով և կրթական համակարգի գործառությամբ: Երեխաներն ու ուսուցիչները դեռ հաճախում էին հին չափանիշներով դպրոց: Դեռ տարածվում էին լեգենդներ նորարար ուսուցիչների մասին: Նոր կայացած համամիութենական մանկավարժական համագումարից (1987-1988 ուս.տարվա ապրիլին) ոգեշնչված՝ դեռ փայփայվում էին հույսեր կրթական համակարգի այնպիսի արմատական բարեփոխումների վերաբերյալ, որտեղ հավակնում էին իրագործել ինչ-որ «դեմոկրատական իդեալներ» և ապահովել անձի ինչ-որ «ազատություններ»:

Սակայն այդ տարիներին(1988-1990թթ.) Հայսատանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը չընթացավ նախատեսված բարեփոխումների ուղղությամբ, այլ գերադասեց արագ վերակողմնորոշման ճանապարհը: Այսպես՝ 1989-1990թթ. Հայաստանում հապճեպ վերահրատարակվեցին հասարակագիտական առարկաների դասագրքերը, ուսումնական պլաններն ու ծրագրերը, որոնցում ընդամենը մի քանի թեմաներ ու տեքստեր փոխարինվեցին նորերով: Դա հավասարապես վերաբերում էր նաև Ղարաբաղի կրթական ոլորտին: Ըստ մեր դիտարկումների, ուսումնական պլաններում ընդգրկվեցին նոր առարկաներ՝ առանց դպրոցներում հատկապես այդ առարկաների ներմուծման անհրաժեշտության ու նպատակահարմարության լուրջ ուսում-

նասիրությունների: Առաջնորդվելով «Ազգային կրթությունը՝ ազգային լեզվով» նշանաբանով՝ ռուսաց լեզվով ուսուցմամբ դպրոցները զանգվածաբար անցան հայոց լեզվով ուսուցման: Այդ տարիներին հայտնվեցին առաջին մասնավոր դպրոցները (սկզբում Հայաստանում, անկախությունից հետո՝ նաև Ղարաբաղում), ավելացավ, այսպես կոչված, հեղինակային դպրոցների քանակը, առաջ եկան նոր անվամբ կրթօջախներ՝ քոլեջներ (Հայաստանում նաև գիմնազիաներ, ճեմարաններ), վարժարաններ: Այս բոլոր ձևափոխումների հիմքում ընկած էր որքան հնարավոր է շուտ կրթական հին համակարգից հրաժարվելու և արևմտյան ավելի ժամանակակից ու արդյունավետ թվացող մեթոդները ներդնելու ձգտումը:

Այսպիսով, հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ առկա փաստագրական նյութերի, աշխատությունների պատմահամեմատական ու քննական վերլուծությունը ցույց տվեց, որ ազգային մտավոր զարթոնքի նոր ժամանակներում՝ համազգային շարժման տարիներին, հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին հաղորդակից լինելով, Հայաստանի և Արցախի կրթական հաստատությունների ներքին կյանքում համեմատաբար որոշակի փոփոխություններ կատարվեցին՝ նախորդ համակարգում եղած դրականը պահպանելու սկզբունքից ելնելով, ներդնելով ազգային տարրերը և ձերբազատվելով այն ամենից, ինչն արգելակում էր կրթական համակարգի բնականոն զարգացումը: Իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության և Արցախի նորաստեղծ հանրապետության կրթության համակարգը, լինելով խորհրդային համակարգի ժառանգորդը, թևակոխեց անցումային փոփոխությունների դժվարին, իսկ զինադադարից հետո(1994թ.), հանրապետությունում ընթացող սոցիալ-տնտեսական տեղաշարժերին զուգընթաց, զարգացման նոր փուլ: Այդ մասին մանրամասն կնշվի աշխատության հաջորդ բաժնում:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությունները և նրա սերտաճումը Հայաստանի կրթության համակարգի հետ (1991-2016թթ.)

Արցախյան ազգային ազատագրական շարժման տարիներին Ադրբեջանը մեկ անգամ ևս հաստատեց անհանդուրժողական դիրքորոշումը հայ ժողովրդի այս հատվածի արդարացի պահանջատիրության նկատմամբ և շարունակեց ահաբեկչական քաղաքականությունը: Ադրբեջանի ազգայնամոլ ազգային ճակատի ավազակախմբերի զինված հարձակումները հայկական գյուղերի ու քաղաքների վրա հաճախակի դարձան: Ներքին գործերի ստորաբաժանումների սանձարձակ բռնություններն օրեցօր բացահայտ բնույթ էին կրում: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի շրջափակումը սաստկացավ: Բաքվում հայ բնակչության ջարդերը (1990թ. հունվարի 13-ին) վերստին դարձան օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականությունն ավարտին հասցնելու վճռական փուլը: Խորհրդային բանակի զինվորական ստորաբաժանումների աջակցությամբ բռնի կերպով տեղահանվեցին Խանլարի, Շահումյանի և Ադրբեջանի այլ շրջանների և քաղաքների ու հայկական գյուղերի բնակիչները:

ԼՂԻՄ-ում խորհրդային զինվորական բռնապետական դիկտատուրայի հովանավորությամբ գաղութատիրական իշխանություն էր ստեղծել հանրապետական կազմկոմիտեն, որի կողմից հայ բնակչության նկատմամբ իրականացվեցին տարաբնույթ կամայականություններ և ստեղծվեց անիշխանության, տեռորի և վախի մթնոլորտ: Մարզում սահմանվեց խիստ գրաքննություն, երկար ժամանակ չէին գործում մարզային ու շրջանային հայկական թերթերը (ինչպես նշել ենք աշխա-

տության երկրորդ հատորում, գրաքննության նման իրավիճակ էր ստեղծվել նաև Հայաստանում և Ղարաբաղում դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին Կովկասի փոխարքա Գոլիցինի կողմից, որին մերկացրին ռուս հայրենասեր և հայ ժողովրդի բարեկամ մտավորականները), հեռուստատեսությունը, ռադիոն, և ամենասարսափելին այն էր, որ անհիմն կերպով ձերբակալվում և բանտերն էին նետվում Շարժման բազմաթիվ ակտիվիստներ:

Ինչպես նշում է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Բալայանը (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողովի փոխխոսնակ), պատմական Արցախը հայաթափ անելու միջոցով նրա տարածքին վերջնականապես տեր դառնալու գործընթացը հաղթական ավարտին հասցնելու հաջորդ քայլը Լեռնային Ղարաբաղի հայության բնաջնջումն էր: 1991թ. հունիսին Ադրբեջանի հատուկ նշանակության զինված ջոկատների (ՕՄՕՆ) և Խորհրդային բանակի զորքերի հետ համատեղ իրականացրին «Օղակ» ռազմական գործողությունները Գետաշենում, Շահումյանում, Մարտունաշենում, Մարտակերտի և Հադրութի շրջաններում, հիմնահատակ ավերվեցին Մարտակերտի և Հադրութի շրջանների 20-ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին ու վիրավորվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ, պատանդ տարվեց ավելի քան 700 մարդ, որոնք կտտանքների ենթարկվեցին Ադրբեջանի բանտերում: Հազարավոր մարդիկ ստիպված լքեցին իրենց պապենական բնօրրանը:[7]

Ռազմաքաղաքական դժնդակ տարիներին, անորոշության պայմաններում ապագա արհավիրքներին դիմագրավելու, բնակչության անվտանգությունն ապահովելու, Արցախի ճակատագիրը կանխորոշելու համար Շարժման ղեկավարները պահի առումով ճիշտ ու հստակ որոշում կայացրին:

Հիմք ընդունելով 1990թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի 3-րդ հոդվածը, որտեղ ասված է. «Միութենական հանրապետությունում, որի կազմում կան ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ, հանրաքվեն յուրաքանչյուր ինքնավարության համար անց է կացվում առանձին: Ինքնավար հանրապետությունների ժողովուրդներին իրավունք է վերապահված ինքնուրույն որոշել ԽՍՀՄ կազմից դուրս եկող ինքնավար միութենական հանրապետությունում մնալու, ինչպես նաև՝ իր պետական կարգավիճակի ձևակերպման հարցը»[8], նրանց համառ ջանքերի շնորհիվ 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»[9]: Պրոֆեսոր Սերգեյ Մելքումյանը «Լեռնային Ղարաբաղ (ԼՂՀ)» գրքի առաջաբանում գրում է.«Այսպիսով, աշխարհի քաղաքական քարտեզի վրա ձևավորվեց հայկական երկրորդ պետականությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)»[10]:

Ի վերջո իրականացավ ազատատենչ արցախահայության երազանքը. երկարամյա հերոսական պայքարի ու համայն հայության լայն աջակցության շնորհիվ 1991թ. սեպտեմբերի 2-ին ձեռք բերվեց քաղաքական անկախություն:

Անկախացումից հետո Հայաստանը (1991թ. սեպտեմբերի 21) և Արցախի նորաստեղծ հանրապետությունը լայն հնարավորություն ստացան միասնաբար լուծելու իրենց առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները:

Ժամանակագրական առումով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի ձևավորման, վերափոխումների գործընթացն ու զարգացման ուղղությունները դիտարկենք անցումային (1991-1995թթ.), կայունացման (1996-2002թթ.), կայացման (2002-2008թթ.) և արմատական վերափոխումների ու զարգացման (2008-2015թթ.) փուլերով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անկախություն ձեռք բերելուց հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հասարակական և սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց վերափոխումներ կատարվեցին նաև հոգևոր-մշակութային և հանրակրթության ոլորտում: Դա տեղի էր ունենում մի շարք գործոնների ազդեցության տակ՝ ա)կրթական համակարգի (բոլոր ոլորտների) այն ժառանգությունը, որը Հայատանն ու Արցախը ստացել էին հարուստ և ուսանելի անցյալից (նկատի ունենք նախախորհրդային և խորհրդային շրջանը), բ) բացառիկ մեծ նշանակություն ունեցավ Արցախի և Հայաստանի անկախացումը, որի շնորհիվ երկու հանրապետություններում մշակույթը, գիտությունը, նոր ձևավորված կրթական համակարգը՝ բոլոր ոլորտներում սկսում են զարգանալ իրար հետ փոխկապակցված և, ամենակարևորը, իրականացվեցին վաղուց երազած մտահղացումները՝ Արցախի կրթական համակարգն ամբողջությամբ ներառվեց Հայաստանի կրթական համակարգի մեջ և իրականացվեց միասնական կրթական քաղաքականությունը(այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժիններում):

Քննարկվող հիմնահարցի վերաբերյալ փաստագրական նյութերի, անհրաժեշտ աղբյուրների[11] ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 1991թ.-ից անկախացած Հայաստանի և Արցախի նորաստեղծ հանրապետություններում տնտեսությունը, ինչպես և գիտության, մշակույթի ու կրթության բնագավառը, հայտնվեցին կաթվածահար վիճակում. առաջացան խնդիրներ, որոնք արմատական լուծում էին պահանջում: Կրթության համակարգը, լինելով խորհրդային համակարգի ժառանգորդը, թևակոխեց անցումնային փոփոխությունների դժվարին փուլը: Անկախությանը հաջորդած առաջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի և նրա անբաժան հատվածի՝ Արցախի տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև կրթության համակարգի վրա:

Անցումային փուլում ի հայտ եկան այնպիսի գործոններ, որոնք դանդաղեցրին և խոչընդոտեցին կրթական համակարգի բարեփոխումները և առաջընթաց զարգացումը: Նկատի ունենք հետևյալ գործոնները.

1. 1988-ի իրադարձությունները՝ Ղարաբաղյան շարժման սկիզբը, սումգայիթյան ողբերգական դեպքերը, դեկտեմբերյան ահավոր երկրաշարժը, որի պատճառով ավերվեց Հայաստանի Հանրապետության տարածքի ավելի քան 40 տոկոսը և ավելի քան կես միլիոն մարդ մնաց անօթևան: Երկրաշարժի հետևանքով ամբողջությամբ կամ մասամբ վնասվեցին 277 դպրոցական և 245 նախադպրոցական հիմնարկների շենքեր, ինչպես նաև տասնյակից ավելի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնաշենքեր[12]:

2. Ղարաբաղյան հակամարտության պատճառով դրությունը ավելի բարդացավ, և Ադր.ԽՍՀ-ում բնակվող շուրջ 350 հազար փախստական հայեր բռնագաղթվեցին Հայաստան, մի մասն էլ ԽՍՀՄ այլ հանրապետություններ:

3. 1991-1993թթ. իրադարձությունները՝ Խորհրդային Միության վերջնական փլուզումը, Հայաստանի, Արցախի անկախության հռչակումը, ռազմական դրու-

թյունը, հանրապետության շրջափակումը և նրա մի շարք բնակավայրերի հրթիռակոծումն ու ռմբակոծումները, նկուղային ծանր պայմանները, էներգետիկ ճգնաժամը և այլն:

Այդ ամենի հետևանքով վերոնշյալ ժամանակահատվածում զգալիորեն նվազեց ողջ կրթական համակարգի նյութական և տեխնիկական հագեցվածությունը: Հետին պլան մղվեցին կրթական խնդիրները, որի պատճառով ոլորտը հայտնվեց ամենաթողության մթնոլորտում: Պրոֆեսիոնալիզմը (մասնագիտացումը) արհամարհվում էր գրեթե ամենուրեք՝ կառուցվածքային փոփոխություններ իրականացնելիս, պատասխանատու պաշտոնների համար կադրեր ընտրելիս, կրթական հաստատությունների գործունեությունը կազմակերպելիս, մանկավարժական կադրեր վերապատրաստելիս ու ատեստավորելիս:

Անկախությանը հաջորդած առաջին տարիները՝ մինչև զինադադարը (1991-1994թթ.)՝ կարելի է բնորոշել որպես կրթական համակարգի գոյատևման և խորհրդային տարիների կրթական ձեռքբերումների պահպանման ժամանակաշրջան: Հայտնի է, որ նախորդ տասնամյակներին մեր անցածը բավականին զորավոր ժառանգություն է և խորհրդային կրթական համակարգը որպես մեխանիզմ թեև քաղաքականացված էր, այնուամենայնիվ, ընդօրինակելու շատ բան ուներ: Այն ընդգրկում էր կուռ և միասնական համակարգ: Անշուշտ, նախորդ վարչակազմին բնորոշ հանդիսամոլությունն ու ձևապաշտությունը ստվերարկում էին իրականացվող աշխատանքները, բայց, այնուհանդերձ, համընդհանուր կրթության, դաստիարակության պլանային գործունեությունը կատարում էր իր «առաքելությունը»: Անհրաժեշտ էր հավուր պատշաճի գնահատել նախորդ կրթական համակարգը, նրա առավելություններն ու թերությունները, ապա քննարկվող ժամանակաշրջանում ունեցած մեր ձեռքբերումներն ու կորուստները:

Հայտնի է, որ խորհրդային կրթական համակարգի անվիճելի առավելությունը հանրակրթության հիմնարարությունն ու հանրագիտայնությունն է: Իրոք, մեր երեխաների կրթվածության միջին մակարդակը անհամեմատ բարձր էր, քան այլ երկրներում: Իհարկե, դա քաղաքականացված համակարգ էր, որը հնարավորություն չէր ընձեռում ազատ մտածելու ու ստեղծագործելու ոչ ուսուցչին, ոչ էլ աշակերտին: Կարևորում ենք նաև ընդգծել հիմնական թերությունը, որն առկա էր խորհրդային կրթական համակարգում. դա կրթության ազգային մշակութային բովանդակության սահմանափակումն էր, որն արտահայտվում էր հատկապես հումանիտար առարկաների դասավանդման ժամանակ: Նշենք նաև, որ հանրակրթության ոլորտի բոլոր ուսումնական ծրագրերը, պլանները միասնականացված էին և տրվում էին մեկ միասնական կենտրոնից՝ Մոսկվայից, որը խեղաթյուրված ձևով Բաքվի լուսավորության նախարարությունից տրամադրվում էր Լեռնային Ղարաբաղին՝ այն կյանքի կոչելու համար...

Անժխտելի փաստ է, որ անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանում և Արցախի Հանրապետությունում նոր ձևավորված կրթական համակարգում անհրաժեշտ էր փոփոխություններ անցկացնել՝ հիմք ընդունելով նախորդ համակարգում եղած դրականը և այդ սկզբունքից ելնելով ներդնել ազգային տարրերը և ձերբազատվել այն ամենից, ինչն արգելակում էր ազգային նոր կրթական համակարգի բնականոն զարգացմանը:

Այդպես էլ կատարվեց: Հայաստանի և Արցախի անկախ հանրապետությունների հռչակումից հետո կրթական համակարգի վերափոխումների անցումային փուլում երկրում սկսվեց կրթամշակութային ոլորտի կատարելագործման ուղինե-

րի որոնումը: Սակայն քաղաքական իրադարձությունների և պատերազմական պայմաններում կրթական համակարգում ընթացող բարեփոխումներն ունեցան այլ ուղղություն: Մինչև զինադադարը (1994թ. ապրիլ) երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակն իր բացասական ազդեցությունն ունեցավ նոր ձևավորված կրթական համակարգի վերափոխումների զարգացման վրա:

Ազգային-ազատագրական պայքարի խորացման և օրեցօր ծավալվող ռազմական գործողությունների պայմաններում Արցախի հայ բնակչությունը ահավոր օրեր է ապրում. անարգ և ստոր ազերի ավազակախմբերը մեր հայրենի երկրի խորքերն էին սողոսկում խորհրդային բանակի զինվորների ուղեկցությամբ: Ինչպես նշեցինք, Խանլարի, Շահումյանի շրջանների Գետաշենի, Մարտունաշենի հայ բնակչությունը հարկադրաբար բռնագաղթվել էր, լրիվությամբ ավերվել էին հայկական գյուղերը, հոգևոր-մշակութային, կրթական օջախները:

Պատմական Արցախը, ինչպես նշում է Վ.Բալայանը, հայաթափ անելու միջոցով նրա տարածքին վերջնականապես տիրանալու գործընթացը հաղթական ավարտին հասցնելու հաջորդ քայլը Լեռնային Ղարաբաղի հայության բնաջնջումն էր: 1991թ. հունիսին հիմնահատակ կործանվեցին Մարտակերտի և Հադրութի շրջանի 20-ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ, դպրոցականներ, ուսուցիչներ: Պատանդ տարվեց ավելի քան 700 մարդ, որոնք կտտանքների ենթարկվեցին Ադրբեջանի բանտերում: Հազարավոր մարդիկ ստիպված եղան լքել իրենց պապենական բնօրրանը[13]: Սակայն պետք է նշել, որ չնայած տնտեսական, քաղաքական ծանր կացությանը, հանրապետության դպրոցները երբեք չեն դադարեցրել իրենց գոյությունն ու աշխատանքը: Արցախի ժողովուրդը, նրա մտավորականությունը ամեն ինչ անում էին կրթական օջախները պահպանելու համար: Այդ մասին իրենց հուշերում պատմում են շրջանային կրթության բաժինների վարիչները:

Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչ Ռաֆայել Բաղդասարյանը (1988-1994թթ.) իր հուշերում[14] գրում է, որ ռազմական գործողությունների ժամանակ ազերի ավազակախմբերի (ՕՄՕՆ) կողմից լրիվ ավերվել են Մարաղայի, Կարմիրավանի, Չայլվի, Բագյումսարովի, Սեյսուլանի, Մարտակերտի շրջկենտրոնի, Մոխրաթաղի, Վաղուհասի, Չափարի, Հաթերքի, Գետավանի և այլ (թվով 16) գյուղերի կրթական, մշակութային օջախները: Եթե 1989-1990թթ. Մարտակերտի ծրջանում գործում էր 35 դպրոց, 4724 աշակերտների ընդգրկմամբ, դասավանդում 600-ից ավելի ուսուցիչներ, ապա 1991-1992թթ. գործող 18 դպրոցներում (Կուսապատի, Մեծ շենի, Մաղավուզի, Ջանյաթաղի, Կոճողոտի, Դրմբոնի, Պողոսագոմերի, Չլդրանի, Կիչանի, Վանքի, Շահմասուրի, Առաջաձորի, Ղազարահողի, Քոլատակի և այլ գյուղերի) սովորում էին ընդամենը 2452 աշակերտ, դասավանսում 264 ուսուցիչ: Այդ ժամանակահատվածում լրիվ ավերվել էին նաև արտադպրոցական հիմնարկներն ու մշակութային օջախները:

Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ Անդրանիկ Աբրահամյանը իր հուշերում[15] վկայում է, որ պատերազմական գործողությունների հետևանքով ավերվել են 10-ից ավելի կրթական, մշակութային օջախներ, արտադպրոցական հիմնարկներ, իսկ Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Արվիդ Ավանեսյանի տվյալներով՝ լրիվ ավերվել էին շրջանի Խրամորթ գյուղի կրթօջախը, մանկապարտեզի շենքը, շրջանում ռմբակոծության հետևանքով վնասվել են շուրջ մեկ տասնյակ դպրոցական շենքեր:

Եթե այդ տարիներին հանրապետության շրջաններում, քաղաքներում ինչ-որ

չափով բարենպաստ պայմաններ են եղել ավելի ապահով վայրերում գործող դպրոցներում ուսումնական գործընթացը շարունակելու համար, ապա անհամեմատ վատթարագույն վիճակում էին հայտվնել Շուշի քաղաքի և շրջանի 7 հայկական գյուղերի կրթական, մշակութային օջախները: Միայն 1992թ., ինքնապաշտպանական ջոկատների և կամավորական ազատամարտիկների կողմից Շուշին ազատագրվելուց հետո հայկական կրթօջախները վերահաստատվում են քաղաքում և շրջանի գյուղերում, և 1993թ. սեպտոմբերի 1-ից վերստին մանկավարժական կոլեկտիվները շարունակում են իրենց աշխատանքային գործունեությունը կիսավեր, ոչ հարմարավետ շենքային պայմաններում: Նույն թվականի հոկտեմբեր ամսին ուսումնական պարապմունքները շարունակվում են նաև Մարտակերտի ու Հադրութի շրջանների ազատագրված գյուղերի դպրոցներում:

Ինչպես վկայում է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը, Արցախյան պատերազմի տարիներին ամբողջովին ավերվել կամ լրջորեն վնասվել է 110 դպրոցական շենք: Խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղում ստեղծված կրթական համակարգը պատերազմի հետևանքով խիստ թուլացել էր: Պատերազմի տարիներին լրջորեն տուժել են նաև նախադպրոցական հիմնարկները, որոնց գործունեությունը դադարեցվել է 1992թ.-ին[16]: Վիճակագրական տարեգրքի և այլ աղբյուրների տվյալների համաձայն, եթե 1990-1991թթ. մարզում գործում էին 166 հանրակրթական, 1991-1992թթ.՝ 155 դպրոցներ, ապա մարտական գործողությունների թեժ պահերին՝ 1992-1993թթ., գործում էին 113 դպրոցներ, 13458 աշակերտների ընդգրկմամբ, իսկ դասավանդող ուսուցիչների թիվը հասնում էր 2127-ի: Մինչդեռ 1990-1991թթ. 166 դպրոցներում սովորում էին 34654 աշակերտներ, դասավանդում 3514 ուսուցիչներ, 1991-1992թթ. սովորում էին 25659 աշակերտներ, դասավանդում 3350 ուսուցիչներ[17]:

1991-1993թթ. Արցախի նորաստեղծ հանրապետությունում բավականին մեծ դժվարություններ էին ստեղծվել թե հասարակական կյանքում (անընդհատ ռմբակոծություններ, էներգետիկ ճգնաժամ, նկուղային անբարենպաստ պայմաններ և այլն) և թե կրթական հաստատություններում: Պատճառներն ակնհայտ են: Սակայն նշենք, որ պատերազմի դժնդակ տարիներին շրջանային, քաղաքային կրթության բաժինների առաջնահերթ խնդիրն էր պատշաճ մակարդակով կազմակերպել հանրապետության դպրոցների անխափան, կանոնավոր աշխատանքը, ապահովել դպրոցահասակ բոլոր երեխաների ընդգրկումը դպրոցներում, ուժեղացնել հսկողությունն ու ջերմ հոգատարությունը այն բոլոր երեխաների նկատմամբ, որոնց հայրերը մասնակցում են սրբազան պատերազմին, իսկ մայրերն անցել էին պաշտպանական աշխատանքի: Հարկ է նշել նաև այն իրական փաստը, որ Արցախյան պատերազմի դաժան օրերին հանրապետության դպրոցներում հնարավորինս կազմակերպվում էին ուսումնական պարապմունքները նկուղներում և հատկապես վերաբնակեցված վայրերում գործող նորաբաց դպրոցներում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը բարձրացնելու կարևորագույն ձեռնարկումներից մեկը հանդիսացավ վերաբնակեցված գյուղերի դպրոցները բարձրորակ մանկավարժական կադրերով ապահովելը, քանի որ ուսուցիչների զգալի մասը մասնակցում էր ազատագրական պայքարին, մի մասն էլ արտագաղթել էր Հայաստան և այլ հանրապետություններ: Դպրոցներում լուրջ դժվարություններ էին ստեղծվել նաև ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի՝ դասամատյանների, աշակերտական օրագրերի, հաշվապահական մատյանների, ուսումնական կաբինետնե-

րի, լաբորատոր սարքավորումների բացակայության պատճառով, քանի որ ռազմական գործողությունների ու ռմբակոծությունների հետևանքով լրիվ ավերվել էին:

Վերոնշյալ և այլ բնույթի հարցերին արագ լուծում տալու և երկրի համար այդ ծանր վիճակում հանրակրթական դպրոցներում ուսումնական պարապմունքները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով հրավիրվեց նորանկախ Արցախի Հանրապետության ուսուցիչների առաջին ընդհանուր հորհրդակցությունը (1991-1992 ուս.տարվա օգոստոսի 24-26-ին), որին մասնակցում էին ԼՂՀ կրթության բաժնի վարիչ Վիգեն Հայրապետյանը (կրթության մարզային բաժինը ղեկավարել է 1986թ. մինչև 1992թ. վերջը), ՀՀ կրթության, գիտության նախարարության ներկայացուցիչներ, հանրապետության վաստակաշատ մանկավարժներ, շրջանային, քաղաքային կրթության բաժինների վարիչներ, Արցախյան շարժման գործիչներ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին պատգամավոր-ուսուցիչներ և Արցախյան շարժման ակտիվիստներ(նրանց մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժիններում):

Փաստագրական նյութերի և խորհրդակցության մասնակիցների (Ա.Ավանեսյան, Գ. Հարությունյան, Վ. Հակոբյան, Բ. Դավթյան, Ռ. Բաղդասարյան, Է. Աղաբեկյան և ուրիշների) հուշերի[18] ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ բավականաչափ հետաքրքիր ու քաղաքական բարձր մակարդակով է անցել նորանկախ հանրապետության առաջին ուսուցչական խորհրդակցությունը, որտեղ ծավալուն զեկուցումով («Հանրապետության ներկա քաղաքական, ռազմական ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցներում ուսումնական պարապմունքները անխափան կազմակերպելու և Շահումյանի, Մարտակերտի, Հադրութի, Շուշիի շրջաններից բռնագաղթված դպրոցահասակ բոլոր երեխաներին դպրոց ընդգրկելու մասին») հանդես եկավ հանրապետության կրթության բաժնի վարիչ Վ.Հայրապետյանը: Մինչև ԼՂՀ անկախացումը կրթության բաժինը ղեկավարել է Վ. Հայրապետյանը: Նա իր զեկուցման մեջ անհետաձգելի և առաջնահերթ խնդիր համարեց՝

1. վերաբնակեցված գյուղերում անհապաղ պետք է գործեն դպրոցներն՝ ըստ կարգավիճակի. տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ,
2. դպրոցներն ապահովել որակյալ մանկավարժական կադրերով,
3. դպրոցներն ապահովել ուսումնական ծրագրերով, պաններով, դասագրքերով,
4. դպրոցներում կազմակերպել մանկավարժական խորհուրդներ,
5. հնարավորինս բավարարել ուսուցիչների նյութական վիճակը, ինչպես նաև դպրոցների ուսումնանյութական բազան,
6. կազմակերպել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որոնք պետք է ունենան իրենց հատուկ ծրագրերը՝ հետևյալ բաժիններով. կազմակերպչական-վարչական, գիտական-մանկավարժական, քաղաքական-հասարակական և այլն:

Խորհրդակցությունում հանրապետության կրթության բաժնի վարիչը՝ հանձնարարականներ տալով շրջանային կրթության բաժինների վարիչներին, միաժամանակ մատնանշեց. «Ինչպես գիտենք, Արցախյան պատերազմի ժամանակ հանրապետության տարածքում մեծ մասամաբ ավերվել են բնակելի, դպրոցական շենքեր, ստեղծվել են անբարենպաստ պայմաններ, սակայն բոլորիս առաջնահերթ խնդիրն է համախմբել մանկավարժական կոլեկտիվները և ներգրավել

ուսումնական աշխատանքի մեջ՝ նրանց համար ստեղծելով համեմատաբար նպաստավոր պայմաններ, ուսումնական պարապմունքները հնարավորինս կազմակերպել հարմարեցված շենքերում, միաժամանակ հավաքագրել ցիրուցան եղած աշակերտական կազմը և ընդգրկել պարապմունքներին: Իսկ որոշ դպրոցներում պահպանված ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ փաստաթղերի մի մասը (դասամատյաններ, ուսումնական ծրագրեր, պլաններ, դիտազննական պարագաներ, լաբորատոր սարքավորումներ, դպրոցի ներքին կյանքին առնչվող այլ իրեր) տրամադրել բռնագաղթված գյուղերի վերաբացված դպրոցներին»[19]:

Քննարկվող հարցի շուրջ շրջանային կրթության բաժինների վարիչներ Ռ.Բաղդասարյանը(Մարտակերտ), Ա.Աբրահամյանը (Հադրութ), Ս.Պետրոսյանը (Մարտունի) և ուրիշներ իրենց ելույթներում արձանագրեցին, որ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել վերաբնակեցված վայրերում նոր դպրոցների բացման համար, բարելավվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը և աստիճանաբար դպրոցներում ավելացել է թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների քանակը: «Չնայած դժվարություններին,- իր ելույթում մատնանշում է Մարտակերտի կրթության բաժնի վարիչ Ռ.Բաղդասարյանը,- մեր շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվները տնօրենների գլխավորությամբ ձգտում են հնարավորինս կատարել ամեն ինչ՝ պահպանելու այսօրվա դպրոցի պատմական լավագույն ավանդույթները»[20]:

Պատերազմական գործողությունների հետևանքով հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում, առավել ևս կրթական համակարգում չնայած ստեղծվել են մեծ դժվարություններ, հատկապես 1992-1993թթ., այնուհանդերձ, չէին կարող թեկուզ որևէ չափով դպրոցներում անուշադրության մատնել ուսումնական պարապմունքների կազմակերպումը կամ կրճատել ուսումնական ծրագրերն ու պլանները, կամ թույլ տալ, որ թերակատարվեն ծրագրային նյութերը: Ընդհակառակը, հանրապետության ղեկավարները, ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նորաստեղծ նախարարության (ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստեղծվել է 1992թ. սեպտեմբերի 1-ին, նախարար է նշանակվել Նելլի Ոսկանյանը, որը ղեկավարել է 1992-1995թթ.), շրջանային, քաղաքային կրթության բաժինների ղեկավարները միջոցներ էին ձեռնարկում հնարավորինս իրականացնելու դեռևս գործող խորհրդային շրջանի դպրոցի ուսումնական ծրագրերն ու պլանները, ըստ պատշաճի կազմակերպելու ուսուցման գործընթացը դպրոցներում: Հանրապետության կրթության ոլորտի ղեկավարների ուշադրության կենտրոնում էին գտնվում առավել ևս վերաբնակեցված վայրերի նորաբաց դպրոցներում ուսումնական պարապմունքների արդյունավետ կազմակերպումը, գիտակցական կարգապահության բարձրացումը:

ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության արխիվային փաստաթղթերի և Բահատուր Դավթյանի (1992թ.-ից ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության կազմավորումից հետո 1992-1994թթ. եղել է նախարարի տեղակալ) հուշերի[21] ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ 1993թ. ապրիլի 16-ին նախարարության կոլեգիայի նիստում (մասնակցում էին շրջանային, քաղաքային կրթության բաժինների վարիչները, նորանշանակ դպրոցական տեսուչները, տնօրենները) նախարարը շրջանային կրթության բաժինների վարիչների ներկայացրած մանրամասն հաշվետվությունների հիման վրա ներկայացրել է հանրապետությունում կրթության առկա վիճա-

կը, ուսումնադաստիարակչական աշխատանքների ժամանակավոր վերակառուցման ընթացքը, այդ դժվարին պայմաններում մանկավարժական կոլեկտիվների կողմից ցուցաբերված օգնությունը երեխաների ուսումնական աշխատանքները անխափան կազմակերպելու ուղղությամբ: Նաև մատնանշել է, որ հանրապետության ազատագրված գյուղերում շրջանային, քաղաքային կրթության բաժինները, գյուղական կազմակերպությունները պետք է բացատրական լայն աշխատանք տանեն բնակչության շրջանում՝ հորդորելով, կոչ անելով նրանց օգնելու վնասված դպրոցական շենքերի վերանորոգման, սեղան-նստարանների, գրատախտակների և անհրաժեշտ այլ գույքի պատրաստման աշխատանքներին, ինչպես նաև հնարավորինս միջոցներ տրամադրելու ուսուցիչների նյութականն ապահովելու համար և այլն: Որպես ականատես այդ շրջանի իրադարձություններին, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Միքայել Բալյանը (նաև 20-րդ դարի լավագույն մանկավարժ) իր հուշերում գրում է. «Հադրութի շրջանում դպրոցների վերանորոգման աշխատանքներին մասնակցում էին ուսուցչական, ուսանողական կոլեկտիվները, շրջանի հասարակությունը՝ շաբաթօրյակների միջոցով, և առանձին անհատներ մասնակցում էին համաժողովրդական հանրօգուտ աշխատանքներին, վերականգնում կիսաքանդ շենքերը և ստեղծում հարմարավետ պայմաններ ուսումնական աշխատանքներն ինչ-որ չափով արդյունավետ կազմակերպելու նպատակով»[22]:

Ի դեպ, նշենք, որ «Ազատ Արցախ» հանրապետական թերթի 1993-1994թթ. համարներում տպագրված են վաստակաշատ մանկավարժներ Մ.Բեգլարյանի (Մարտունի, Քերթ), Մ.Միքայելյանի (Մարտակերտ, Վաղուհաս), Մ.Աղաջանյանի (Հաթերք), Ս.Խաչատրյանի (Շուշիի հումանիտար ուսումնարանի տնօրեն) նամակներն ու հուշերը հայրենասիրական այդ նախաձեռնությունների մասին, որ պատերազմական տարիներին ստեղծված ամենածանր պայմաններում մանկավարժական կոլեկտիվները կարողացել են հաղթահարել այդ դժվարությունները:

Վերոնշյալ փաստագրական նյութերից նաև տեղեկանում ենք, որ պատերազմական ժամանակաշրջանում շրջանային կրթության բաժինների վերահսկողության շնորհիվ դպրոցներում չի կրճատվել ուսումնական պլաններում, ծրագրերում նախատեսված ծանրաբեռնվածության ժամաքանակը, քանի որ ՀՀ կրթության, գիտության նախարարության աջակցությամբ ժամանակին դպրոցներն ապահովվել են ուսումնական պլաններով, ծրագրերով, դասագրքերով և լաբորատոր անհրաժեշտ սարքավորումներով:

Այսպիսով, վերոնշյալ փաստագրական տվյալների համառոտ վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին պատերազմական գործողությունների (1991-1994թթ.) հետևանքով հանրապետության կրթական համակարգը հայտնվել էր վատթարագույն վիճակում: Պատերազմական իրավիճակը, քաղաքական, տնտեսական և սոցիալական անբարենպաստ պայմանները հաճախ դպրոցները փակելու կամ տեղաշարժելու պատճառ էին դառնում: Անշուշտ, դա անժխտելի փաստ է և ոչ ոք չի կարող առարկել:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պատերազմական գործողությունների հետևանքով հանրապետության շրջաններում ու քաղաքներում լրիվությամբ ավերվել են 49 հանրակրթական դպրոցների շենքեր, հրետակոծության հետևանքով զգալիորեն վնասվել են ավելի քան 51 դպրոցներ, շարքից դուրս է եկել դպրոցական գույքի, ուսումնադիտողական ու տեխնիկական միջոցների

զգալի մասը: Ի դեպ, նորաստեղծ հանրապետության դպրոցական մի շարք շենքեր վերածվեցին զինվորական հիվանդանոցների, և այդ պատճառով շատ դպրոցներ ստիպված եղան անցնել երկհերթ, նույնիսկ եռհերթ պարապմունքների:

Հարկ է նշել, որ այդ դժնդակ տարիներին երկրամասի հայ բնակչությունը, հայրենասեր գործիչներն ու մանկավարժական կոլեկտիվները երբեք չեն կորցրել իրենց հոգեկան կորովը, իրար հաջորդող ամենածանր և անբարենպաստ պայմաններում անկարելին և անհնարինը հնարավոր են դարձրել: Ինչպես դարեր շարունակ դա հատուկ էր հայ ժողովրդին, այս անգամ էլ՝ 20-րդ դարի վերջին, խորհրդային իշխանության աջակցությամբ Ադրբեջանի հայահալած ռազմական գործողությունների պայմաններում արցախահայությունը միշտ միջոցներ ու հնարներ է գտել կենաց ու մահու գոտեմարտում ու մաքառումներով պահպանել հայրենի երկրամասի մշակույթն ու ազգային կրթական օջախների կենսահաստատությունը, անշուշտ՝ համայն հայության լայն աջակցության շնորհիվ:

Այսպիսով, վեր շարադրվածում քննական վերլուծությունները ցույց տվեցին, որ պատերազմը իր բացասական կնիքը դրեց ոչ միայն ժողովրդական տնտեսության, բնակչության սոցիալական վիճակի, այլև կրթական գործի, հանրակրթական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցների վրա: Ուստի հետպատերազմյան շրջանում, զինադադարից հետո (1994թ. ապրիլ), անհրաժեշտ եղավ մեծ ջանքեր գործադրել, որպեսզի հանրապետության տարածքում վերականգնվի նախապատերազմական վիճակը ժողտնտեսության և հանրակրթության ոլորտում և նախապայմաններ ստեղծվեն նորանկախ հանրապետության կրթական համակարգի հետագա զարգացման համար: ԼՂՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ ժողտնտեսության, մշակութային հիմնարկների, հանրակրթական դպրոցների, ուսումնական հաստատությունների և այլ ոլորտների աշխատանքների վերականգնման անհետաձգելի միջոցառումների վերաբերյալ: Այդ միջոցառումների ընդհանուր համակարգում կարևոր օղակ հանդիսացավ 1994թ. մայիսի 16-ին ԼՂՀ կառավարության ընդունած որոշումը[23], որով նախատեսվում էր ոչ միայն վերականգնել, այլև զգալի չափով գերազանցել տնտեսության, մշակույթի և կրթության բոլոր բնագավառների նախապատերազմյան մակարդակը: Ընդ որում, որոշման մեջ մեծ ուշադրություն է դարձվում նաև մշակույթին և հանրակրթության ոլորտին: Նախատեսվում էր ոչ միայն վերականգնել պատերազմի ժամանակ քայքայված կրթական հաստատությունների, մշակութային օջախների շենքերը, այլև զգալիորեն ընդարձակել դպրոցների ցանցը և ավելացնել նրանցում սովորողների թիվը:

Ուսումնասիրություններից հայտնի է, որ մեր հանրապետության կրթական համակարգում պատերազմի հետևանքների վերացմանը և համակարգի հետագա զարգացմանը խոչընդոտում էին ֆինանսական միջոցների սղությունը, սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը: Կրթական համակարգի այն ժամանակվա ֆինանսավորման չափերով հնարավոր չէր լուծել շենքերի վերանորոգման, գույքի և սարքավորումների, ուսումնադիտողական պարագաների և տեխնիկական վերազինման կարևորագույն խնդիրները: Հանրապետությունում գործող արտադպրոցական հաստատությունների՝ համայնքներից տրվող ֆինանսավորման չնչին ծավալներով հնարավոր չէր իրականացնել երեխաների արտադասարանական ու արտադպրոցական դաստիարակությունը, ինչը էապես ազդում էր նրանց ֆիզիկական, ռազմահայրենասիրական, գեղագիտական դաստիարակությանը:

Արհեստագործական դպրոցների բացակայության պատճառով հիմնական դպրոցների շրջանավարտների որոշ մասը չի ստանում միջնակարգ և մասնագիտական կրթություն:

Պետական նախադպրոցական համակարգի վերացման հետևանքով չեն ապահովվում նախադպրոցական և տարրական կրթության հաջորդայնությունը ու շարունակականությունը, աճում է դպրոց ընդունված երեխաների մտավոր զարգացման մակարդակների տարբերությունը:

Փաստագրական նյութերի, ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության հաշվետվությունների, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունները վկայում են այն իրական փաստը, որ հետպատերազմյան առաջին տարիներին հանրապետության կրթության ոլորտում զգալի տեղաշարժ է կատարվել արցախահայության անձնուրաց աշխատանքի և համայն հայության աջակցության շնորհիվ: Կարճ ժամանակամիջոցում հանրապետության շրջաններում ու քաղաքներում վերականգնվեցին նաև դպրոցական, մշակութային օջախների նոր շենքեր, նորից ստեղծվեցին ազերիների կողմից ոչնչացված գրադարանները, մշակութային օջախները (երաժշտական, արվեստի դպրոցները և այլն), դպրոցների ուսումնական կաբինետները և արտադպրոցական հիմնարկները (դրանց պատմության մասին կնշվի հաջորդ գլուխներում): Համայն հայությունը ցույց էր տալիս ըստ ամենայնի եղբայրական օգնություն այդ գործում: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում շտապ տպագրվեցին ուսումնական դասագրքեր, պլաններ, ծրագրեր ԼՂ Հանրապետության դպրոցների համար: Հայաստանի տարբեր շրջանների ու քաղաքների դպրոցների մանկավարժական կոլեկտիվները, դպրոցականները և վաստակաշատ գիտնականները, ՀՀ ԿԳ նախարարության աշխատողները, բուհերի դասախոսներն ու ուսանողները հավաքեցին ուսումնական ձեռնարկներ, գեղարվեստական գրքեր, ամսագրեր, թերթեր և անհրաժեշտ դիտազննական պարագաներ, լաբորատոր սարքավորումներ և այլ իրեր տուժած դպրոցների համար[24]:

Հարկ է նաև նշել, որ հայրենասիրական այդ նախաձեռնությանն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև հանրապետության բնակչությունը, ինչպես նաև Երևանում և ուրիշ հանրապետություններում բնակվող արցախցիները: Նրանք, ըստ հնարավորության, ցույց տվեցին գործնական օգնություն թե ֆինանսական, և թե տեխնիկական միջոցներով, իսկ Հայաստանի ուսուցիչներից շատերը ցանկություն հայտնեցին աշխատել ԼՂ Հանրապետության ծայրամասային գյուղերում: Ինչպես նշվում է Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ Անդրանիկ Աբրահամյանի հուշերում, տարեցտարի ծավալվում էր շրջանի գյուղերում, շրջկենտրոնում, կրթամշակութային օջախներին, վերաբնակեցված գյուղերի բնակչությանն օգնություն ցույց տալու ժողովրդական նախաձեռնությունը, և անշեղորեն մեծանում էին կրթական հաստատություններին հատկացվող գումարները, որն, անշուշտ, բարենպաստ պայմաններ ստեղծեց հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների ցանցի ընդլայնման, նրանցում ուսումնայնութական բազայի ամրապնդման ու ընդհանուր ուսուցման կազմակերպման համար: Այդ մասին ԼՂՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացրած իրենց հաշվետվություններում մատնանշում են Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Հադրութի, Շուշիի շրջանների կրթության բաժինների վարիչները[25]:

ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվային փաստաթղթերի և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ ԼՂ Հանրապետության ու-

սուցիչների խորհրդակցությունում (1994-1995 ուս.տարվա օգոստոսի 22-24-ին) ունեցած իր ելույթում ԼՂՀ ԿԳՄՍ նախարար Նելլի Ոսկանյանը՝ ներկայացնելով հետպատերազմյան շրջանի առաջին ուսումնական տարում հանրակրթության ոլորտում տարվող լայնածավալ աշխատանքները (դպրոցական ցանցի ընդլայնում, շենքերի վերանորոգում, ուսուցիչների, աշակերտների համակազմի աճ, որոշ չափով ուսումնանյութական բազայի ապահովում, դասարանների կահավորում՝ նստարաններ, գրատախտակներ և այլն) մատնանշեց, որ հանրապետությունում սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց առավել փոփոխություններ են կատարվել նաև հանրակրթության ոլորտում: Այսպես, դպրոցների թիվն ավելացնելու նպատակով կառավարությունն անհրաժեշտ միջոցներ է տրամադրել, առանձնապես ուշադրություն դարձրել 8-ամյա և միջնակարգ դպրոցների թիվը ավելացնելու վրա[26]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետպատերազմյան շրջանում՝ 1994-1995թթ., մեծ առաջընթաց է նկատվել հանրակրթության ոլորտում: Ընդարձակվել է հանրակրթական դպրոցների ցանցը, ինչպես նաև ավելացել ուսուցիչների և սովորողների քանակը: Այսպես, օրինակ, եթե 1993-1994 ուս.տարում հանրապետությունում գործում էր 130 դպրոց, 19366 սովորողների ընդգրկմամբ, դասավանդում 2427 ուսուցիչ, ապա 1994-1995 ուս. տարում դպրոցների թիվը հասավ 148-ի, սովորողներինը՝ 20510-ի, ուսուցիչներինը՝ 2735-ի[27]: Այդ ժամանակահատվածում շրջաններում ու քաղաքներում լայնածավալ շինարարական աշխատանքներ են տարվել բնակելի և դպրոցական շենքերի վերանորոգման ուղղությամբ: Անչափ կարևորություն են ստանում նաև նախադպրոցական կրթության հարցերը, քանի որ պատերազմական տարիներին նախադպրոցական հիմնարկները քայքայվել էին, ինչպես արդեն նշել ենք, նրանց գործունեությունը դադարեցվել էր 1992թ.-ից: Ըստ Հ.Աբրահամյանի աշխատության տվյալների, 1995-1996 ուս.տարում հանրապետությունում արդեն գործում էին 7 նախադպրոցական ոչ պետական հիմնարկներ[28]:

Հարկ է նշել, որ հանրապետությունում դպրոցների վերանորոգումն ու ցանցի հետագա ընդլայնումը կատարվում էին ազգաբնակչության թվի խտության և նրա տնտեսական զարգացման հեռանկարների հաշվառմամբ: Կազմվում էին դպրոցական շենքերի շինարարության և վերականգնման, ուսումնանյութական բազայի ամրապնդման և ծավալման, դպրոցական ցանցի նպատակահարմար կազմակերպման, կրթական հաստատություններում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման պլաններ: Կարևորում ենք նաև նշել, որ ԼՂՀ-ում գլխավոր ուշադրությունը դարձվում էր երեխաներին (առանձնապես մեկ կամ երկու ծնող կորցրած երեխաներին) դպրոց ներգրավելու, սովորողների կոնտինգենտը պահպանելու, մանկավարժական անհրաժեշտ կադրեր պատրաստելու վրա:

Ըստ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական տվյալների, ԼՂՀ կրթական համակարգի կայունացման փուլում (1995-2000թթ.) զգալի փոփոխություններ կատարվեցին. ընդարձակվեց հանրակրթական դպրոցների, արտադպրոցական հիմնարկների ցանցը, ավելացավ աշակերտների և դասավանդող ուսուցիչների քանակը: Այդ մասին են վկայում ներկայացվող աղյուսակում բերված տվյալները[29]:

Աղյուսակ 2

ԼՂՀ հանրակրթական դպրոցների, սովորողների և ուսուցիչների թվաքանակների դինամիկան (1995-2000թթ.)

ուսումնա - կան տարի	դպրոց - ների քանակը	տարրական	իննամյա	միջնակարգ	սովորողների թիվը	ուսուցիչների քանակը
1995-1996	147	35	14	98	20510	2735
1996-1997	150	12	35	100	21464	2753
1997-1998	152	12	35	106	22136	2915
1998-1999	149	12	36	101	22104	2884
1999-2000	154	10	38	106	21230	2815

Հաջորդ աղյուսակի տվյալները ներկայացնում են ԼՂՀ հանրակրթական դպրոցների ցանցը նշված ժամանակահատվածում[30]:

Աղյուսակ 3

ԼՂՀ հանրակրթական դպրոցների ցանցը՝ ըստ շրջանների (1995-2000թթ.)

հ.հ.	շրջանը	դպրոցների քանակը	միջնակարգ	իննամյա	տարրական
1	Մարտակերտի	35	27	6	2
2	Մարտունու	37	25	7	5
3	Հադրութի	26	10	14	2
4	Ասկերանի	33	22	8	3
5	Քաշաթաղի	3	1	1	1
6	Շահումյանի	3	2	-	1
7	Շուշիի	6	3	2	1
8	Ստեփանակերտի վարչատարածքային շրջան	10	10	-	-

Աղյուսակից երևում է, որ հետպատերազմյան շրջանում ԼՂ Հանրապետության կրթական հաստատությունների թիվը բավականին աճել է:

Ինչպիսի՞ կարգավիճակում էր գտնվում նախադպրոցական, արտադպրոցական համակարգը ԼՂՀ կրթական համակարգի կայունացման փուլում (1995-2000թթ.): Իրական փաստացի տվյալներից ելնելով, հարկ ենք համարում նշել, որ անցումային և կայունացման ժամանակահատվածում ԼՂՀ նախադպրոցական համակարգը համարյա չէր գտնվում պետական հովանու ներքո, այն սահմանափակվում էր ոչ պետական 7 մանկապարտեզներով, որոնցից 3-ը գտնվում էին

Ստեփանակերտեում, 2-ը՝ Մարտունիում, 1-ը՝ Մարտակերտում և 1-ը՝ Շուշիում: Դրանց մի մասը մասնակիորեն գոյատևում էին հանգանակությունների հաշվին:

Նախապատերազմյան ժամանակաշրջանում գործող 81 նախադպրոցական հիմնարկները մտցված էին համայնքների գույքի ցանկի մեջ, սակայն վերոնշյալ ժամանակաշրջանի դրությամբ ոչ մի համայնք նյութապես ի զորու չէր վերաբացելու մանկապարտեզներ:

Մանկապարտեզների վերաբացման խնդիրը հիմնականում պիտի լուծվեր պետական բյուջեից տրվող հատկացումների հաշվին:

Հանրապետության 106 միջնակարգ դպրոցներում նախադպրոցական խմբերի թիվը 1998-1999 ուս.տարում 345 էր, դասարան կոմպլեկտների թիվը՝ 1537, այդ թվում՝ մայրաքաղաքում՝ 338, Մարտունու շրջանում՝ 341, Մարտակերտի շրջանում՝ 301, Ասկերանի շրջանում՝ 263, Հադրութի շրջանում՝ 196, Շուշիի շրջանում՝ 67, Շահումյանի շրջանում՝ 21, Քաշաթաղի շրջանում՝ 10:

Հանրապետության 6 մանկական ստեղծագործական կենտրոններում գործում էին 213 խմբեր՝ ավելի քան 2 հազար սովորողների ընդգրկմամբ, այդ թվում՝ Ստեփանակերտում՝ 68 խումբ, Ասկերանի շրջանում՝ 25, Մարտակերտի շրջանում՝ 50, Մարտունու շրջանում՝ 20, Հադրութի շրջանում՝ 20, Շուշիի շրջանում՝ 30[31]: (Այդ մասին մանրամասն կնշվի աշխատության 5-րդ գլխում):

Ինչպիսի՞ն էր ընդհանուր կրթական գործի վիճակը ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ կայունացման փուլում (1995-2000թթ.): Եթե 1998-1999 ուս.տարում հանրապետությունում գործել են 106 միջնակարգ դպրոցներ, ապա 1995-2000թթ.՝ 108: Ստեփանակերտի թիվ 6 և Մարտակերտի շրջանի Կիչանի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը վերակազմավորվել են միջնակարգի, Ծաղկաշենի (Ճանկաթաղ) ոչ լրիվ միջնակարգ դպրոցը՝ տարրականի, Մարտունու շրջանի Ղավախանի մասնաճյուղը՝ տարրական դպրոցի, իսկ Ասկերանի շրջանի Հովսեփավան գյուղում բացվել է տարրական դպրոց[32]:

ԼՂՀ կրթական համակարգի կայունացման փուլում ընդհանուր միջնակարգ կրթության ապահովումը նախատեսվում էր իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

- ընդհանուր միջնակարգ կրթության համակարգի պահպանում և զարգացում, կրթության շարունակականության և մատչելիության ապահովում, կրթության բովանդակության ապահովում և կատարելագործում, անցում 11-ամյա ուսուցման համակարգի,
- «Կրթության մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան իրավական- նորմատիվ փաստաթղթերի փաթեթի մշակում, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության որակի ապահովման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում,
- օժտված և շնորհալի երեխաների հայտնաբերում ու նրանց կրթության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- արհեստագործական պատրաստության բովանդակության կատարելագործում, նախամասնագիտական կրթության կառուցվածքի օպտիմալացում, նորմատիվ-իրավական և մեթոդական հիմքի զարգացում:

Վերոնշյալ ուղղությունների իրականացման համար նախատեսվում էր.

- առաջիկա հինգ տարիների ընթացքում ավարտել հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցման աշխատանքները՝ համաձայն ԼՂՀ կառավարության 1999թ. հունիսի 1-ի «ԼՂՀ հանրակրթական դպրոցների վերակառուցման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 102 որոշման, միաժամանակ կառուցել նոր

դպրոցական շենքեր վերաբնակեցվող բնակավայրերում[33],

- հանրակրթական դպրոցների ապահովում նոր դպրոցական գույքով, սարքավորումներով, ուսումնադիտական և լաբորատոր սարքավորումներով: Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար անհրաժեշտ է առաջնահերթ կարգով ձեռք բերել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, ռազմագիտության, համակարգչային և աշխատանքի ուսուցման կաբինետների կահավորանք ու սարքավորումներ:

Քննարկվող ժամանակաշրջանում (1991-2000թթ.) ԼՂ Հանրապետությունում կրթական համակարգը ներառում էր կրթության ամբողջ մակարդակը՝ նախադպրոցականից մինչև բուհական համակարգը, որը լիովին ֆինանսավորվում էր պետական բյուջեից:

Ստորև ներկայացնում ենք ԼՂ Հանրապետությունում կրթական համակարգը 1991-2000թթ.

1. Նախադպրոցական կրթությունն իրականացվում էր երեք տիպի հաստատություններում.

- ավագ խումբ (կամ միջն.դպրոցներին կից գործող խումբ),
- միջին խումբ,
- փոքրերի խումբ,
- փոքրերի առաջին խումբ:

2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում էր եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 10 տարի տևողությամբ՝ հետևյալ հաջորդականությամբ.

- տարրական (կրտսեր) դպրոց՝ 1991-1998թթ. 1-4-րդ դասարաններ, 1999-2001թթ.՝ 1-3-րդ դասարաններ, 2002թ,-ից՝ 1-4-րդ դասարաններ,
- միջին (ոչ լրիվ) դպրոց՝ 1991-1996թթ.՝ 4-8-րդ դասարններ, 1997-2000թթ.՝ 5-9-րդ դասարաններ(9-ամյա),
- ավագ դպրոց՝ 1991-1998թթ.՝ 10-ամյա, 1999-2000թթ.՝ 11-ամյա: Միջնակարգ հանրակրթական դպրոցի երկու աստիճանները, ինչպես նշված է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագրերում, կազմում են հիմնական դպրոցը[34]:

3. Հատուկ ընդհանուր կրթությունն իրականացվում էր գիշերօթիկ հաստատություններում՝ հանրակրթական և հատուկ ծրագրերով,

4. Արտադպրոցական դաստիարակությունն իրականացնող համակարգը ներառում էր մարզական, գեղագիտական (արվեստի) մանկապատանեկան և տեխնիկական ստեղծագործության դպրոցներ և կենտրոններ,

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում (ՄՏՈՒ)՝ հիմնական, ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա՝ երեք տարի ուսուցման ժամկետով: Ի դեպ, նշենք, որ հետագայում կրթական համակարգի կայացման և արմատական վերափոխումների շրջափուլերում նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում էր նաև միջնակարգ հանրակրթական դպրոցների, ավագ դպրոցների արհեստագործական հոսքերում,

6. Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում էր միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ)՝ քոլեջներում և ուսումնարաններում: ՄՄՈՒՀ-երում ուսուցումն իրագործվում էր հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևով: Ուսուցման տևողությունը կախված էր սովորողների

հենքային կրթությունից և ընտրած մասնագիտությունից՝ 1 տարի 10 ամսից մինչև 4 տարի 10 ամիս: Մասնագետներ էին պատրաստվում տարբեր մասնագիտությունների գծով: Իսկ շրջանավարտներին շնորհվում էր կրտսեր մասնագետների որակավորում,

7. Բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում էր երկաստիճան, 2002թ.-ից՝ եռաստիճան, բակալավրի համակարգով,

8. Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում էր մագիստրոսի կրթական ծրագրերով՝ պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում, առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գործում էր նաև ասպիրանտուրա:

Հանրապետության կրթական համակարգի մեջ ներառված առանձին օղակների ամբողջական պատմությունը (բացառությամբ բուհական և հետբուհական) մանրամասն կներկայացվի աշխատության համապատասխան գլուխներում՝ ըստ շրջափուլերի:

Ելնելով վերը շարադրվածից, պետք է նշել, որ ԼՂՀ կազմավորումից հետո ազգային դպրոցը պետականության հզորացման գործում ուներ առանձնահատուկ նշանակություն: Հենց այս միտումով էլ այս ուղեգիծը անմիջապես գտնվել է հանրապետության իշխանությունների ռազմավարական ծրագրերում, որի շնորհիվ ձեռք բերվեցին լուրջ նվաճումներ հանրակրթության ոլորտում: Սակայն նշենք, որ այս ամենը՝ դրական շեշտադրումներով հանդերձ, կրթական համակարգի անցումնային, կայունացման փուլերի (1991-1995թթ., 1996-2000թթ.) մեջ պարունակում էր նաև որոշ բացասական երանգներ, որոնք ժամանակավորապես խոչընդոտել են կրթական համակարգի բնականոն զարգացմանը:

Այժմ արխիվային անհրաժեշտ նյութերի, այլ աղբյուրների ուսումնասիրության ու պատմաքննական վերլուծության հիման վրա փորձենք պարզաբանել քննարկվող ժամանակաշրջանում անցումային և կայունացման շրջափուլերում հանրապետության կրթական համակագում տեղի ունեցած վերափոխումները, համակարգին խոչընդոտող բացասական գործոնները և դրդապատճառները:

90-ական թվականների սկզբին, անկախություն ձեռք բերելուց հետո, Հայաստանում և Արցախի նորաստեղծ հանրապետությունում դպրոցական, կրթական համակարգում բարեփոխումները այլ ուղղություն ունեցան: Երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, պատերազմական գործողությունները, ռազմական դրությունը իրենց բացասական ազդեցությունն ունեցան հանրապետության նոր ձևավորված կրթական համակարգի թե կառուցվածքային և թե բովանդակային բարեփոխումների զարգացման վրա: Գուցե թե դրանով պիտի բացատրել նաև համակարգում, այսպես կոչված, առաջընթացի դոփումը երկրի իշխանությունների ռազմավարական ծրագրերում: Բնականաբար, Արցախյան պատերազմի տարիներին և դրան հաջորդած հետպատերազմյան ժամանակաշրջանում (1994-1999թթ.) կրթական համակարգի զարգացման ծրագրերը հնարավոր չէր իրականացնել սպասվող արդյունավետությամբ, հատկապես հանրապետության ստեղծման առաջին տարիներին: Բացասական առումով շոշափելի ազդեցություն են թողել թե՛ դպրոցներից տղամարդ ուսուցիչների հեռանալը, թե՛ ուսուցչի սոցիալական կացության ցածր նիշը, թե՛ դպրոցաշինության անմիխիթար վիճակը (1991-1995թթ.) և այլ խոչընդոտող հանգամանքներ:

Հայտնի է, որ 1991-1995թթ. ԼՂ Հանրապետությունում կրթության համակարգի ճգնաժամային իրավիճակ էր ստեղծվել՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկ-

տիվ պատճառներով: Դիտարկենք այդ պատճառները:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում պատերազմական իրավիճակով պայմանավորված բավականին մեծ դժվարություններ էին ստեղծվել հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքն արդյունավետ կազմակերպելու գործում:

Այսպես, օրինակ, դպրոցներում ջեռուցման բացակայության պատճառով ուսումնական տարվա և դասաժամերի տևողության կրճատումը, լավագույն ուսուցիչների արտահոսքը, դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, գրենական պիտույքների թանկությունը և այլ հանգամանքներ անհնար դարձրին ուսումնական պլանների կատարումը: Ինչ-ինչ պատճառներով ծանր վիճակում էին գտնվում դպրոցների նյութատեխնիկական միջոցները, պատերազմական գործողությունների պատճառով շինությունները չէին վերանորոգվում (1991-1994թթ.), և դրանց հետագա շահագործումը դառնում էր վտանգավոր: Այս նույն երևույթները առկա էին նաև նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում: Անժխտելի է նաև այն փաստը, որ բարձրագույն կրթությամբ շատ ուսուցիչներ, հիմնականում տղամարդիկ, սոցիալական ծանր վիճակի պատճառով հեռանում էին դպրոցից և անցնում այլ աշխատանքի: «Սակայն իրենց կոչմանը հավատարիմ ուսուցիչները,- նշում է իր հուշերում Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչ Ռ.Բաղդասարյանը,- շարունակում են իրենց սուրբ առաքելությունը: Արցախյան պատերազմի դժնդակ տարիներին նրանք գորովով ջերմացրին երեխաների հոգիները»[35]: Իսկ Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) Մ.Բալյանը իր հուշերում այսպես է գրում. «Պատերազմական գործողությունների ամենածանր պայմաններում շրջանի հայրենասեր ուսուցիչները՝ հայրենասիրության ու հերոսության, ազնվության ու վեհանձնության դասեր տալով իրենց սաներին՝ հայրենիքի ապագա պաշտպաններին, երկիր շենացնող մատաղ սերնդի սրտերում անշեջ են պահել ոգու հուրը: Ոչ մի պահ, մինչև անգամ ռմբակոծությունների տակ, կանգ չառավ հանրակրթական դպրոցի աշխատանքային ռիթմը»[36]:

ԼՂ Հանրապետության կրթական համակարգի բարեփոխումների ընթացքի վրա հատկապես բացասաբար են անդրադարձել ԼՂՀ կառավարության 1995-1998թթ. ընդունած որոշումները: Այսպես, օրինակ, 1995թ. միանգամից բոլոր նախադպրոցական հիմնարկները փակվեցին, որով փաստորեն կրթական ծրագրի ընդհանուր շղթայից անջատվեց նախադպրոցական կրթությունը: ԼՂՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 10-ի «Համայնքի սեփականության գույքը սահմանելու մասին» թիվ 227 որոշման համաձայն՝ ԼՂՀ պետական հանրակրթական դպրոցներն ընդգրկվեցին համայնքի սեփականության գույքի ցանկում[37]: Ընդունվեցին նաև նշված որոշումից բխող մի շարք նորմատիվային փաստաթղթեր, որոնք պետք է ապահովեին հանրակրթական դպրոցների գործունեությունը: Սակայն անցած մի քանի ամիսները վկայեցին, որ նման որոշումը ժամանակավրեպ է և հազիվ թե կարողանար իրեն արդարացնել՝ ելնելով մի շարք հանգամանքներից.

- նախ՝ նշված ժամանակաշրջանում գյուղական համայնքները դեռևս ինքնուրույն, կայացած համարել չէր կարելի.
- երկրորդ՝ գյուղապետարանները չունեին համապատասխան մասնագետներ, որոնք կարողանային իմանալ դպրոցը, օժանդակել նրան ու վերահսկել նրա գործունեությունը.
- երրորդ՝ կրթության բովանդակության միասնականությունը ապահովում է ԿԳ

նախարարությունը՝ շրջանային վարչակազմերի կրթության բաժինների միջոցով: Ինքնըստինքյան դպրոցի համար վերադաս մարմին էր դառնում կրթության բաժինը, և դպրոցը հայտնվել էր «երկու տիրոջ ծառայի» կարգավիճակում, որոնց որոշումները հնարավոր էր նույնիսկ իրարամերժ լինեին: Ուստի նպատակահարմար էր դպրոցը թողնել կրթության բաժինների ենթակայության տակ: Սակայն դա չկատարվեց:

Գյուղական դպրոցներում առկա էր մի շարք մասնագետների պակաս և դրան հակառակ, մի շարք մասնագետների կուտակում: Այդ պատճառով մոտավորապես 10 տարվա աշխատանքային փորձով մասնագետներ հեռացել են ոչ իրենց մասնագիտության ուղղությամբ, և նոր մասնագետների առկայությունը դպրոցում մեխանիկորեն կզրկի նրանց աշխատանքից: Նպատակահարմար չէ՞ր արդյոք, որ ուսուցիչների ատեստավորման և որակավորման վարչությունը անցկացներ այդ կարգի ատեստավորում և տար համապատասխան փաստաթուղթ տվյալ մասնագիտություններով աշխատելու համար: Սակայն դա ևս չկատարվեց:

Ի դեպ, նշենք նաև, որ 1997-1998 ուս.տարվանից դպրոցի հաստիքացուցակում կրճատվել էր արտադասարանական աշխատանքների գծով կազմակերպչի հաստիքը, որի հետևանքով արտադասարանական միջոցառումների քանակը խիստ կրճատվել էր և որը բացասաբար էր անդրադառնում սովորողների դաստիարակությանը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում դպրոցական կյանքում առկա էին նաև ուրիշ հիմնախնդիրներ.

- ուսումնական նոր ծրագրերով, դասագրքերով ապահովվածությունը դպրոցներում,
- դպրոցների բյուջետային ֆինանսավորումը,
- դպրոցաշինությունը,
- ուսումնական կաբինետների կահավորումը,
- ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը,
- դպրոցական օլիմպիադաների կազմակերպումը,
- մեթոդմիավորումների (առարկայական) ստեղծում,
- միջփնջային դասալսումների կազմակերպում, և այլն:

Անշուշտ, ազգային դպրոցի վերակառուցման այդ շրջանում կրթական համակարգը լուրջ փոփոխությունների կարիք ուներ: Հատկապես անհետաձգելի հարց էր դպրոցները որակյալ կադրերով ապահովելը: Ինչպես նշում է վաստակաշատ մանկավարժ Մ.Բալյանը «Խորհրդային դպրոցի լավագույն ավանդույթների օգտագործման անհրաժեշտությունը» խորագրով հոդվածում[38], անհրաժեշտ էր բարձրացնել առարկայական հանձնաժողովների դերը դպրոցներում, աշխուժացնել ուսումնամեթոդական միավորման աշխատանքը, առաջավոր ուսուցիչների փորձը ընդհանրացնելու նպատակով կազմակերպել միջդպրոցական դասալսումներ, խորհրդակցություններ, քննարկել և լավագույն փորձը մասսայականացնել, հրատարակել ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ ամփոփելով լավագույն մանկավարժական աշխատանքը (այդ մասին կնշվի աշխատության հաջորդ բաժնում):

Անժխտելի փաստ է, որ քննարկվող ժամանակաշրջանում հանրապետության կրթական համակարգի բարեփոխումների վրա իր բացասական ներգործությունն ունեցավ նաև մեկ այլ գործոն: Ինչպես արդեն նշել ենք, 1993-1995թթ. «աչքի ընկան» կրթական համակարգի տարերային ու պատահական վերափոխումներով: Հատկապես այդ տարիներին համակարգը լրիվ քայքայվեց և հայտնվեց փակու-

ղում: Դրան զգալիորեն նպաստեցին նաև կառավարման վերին և միջին օղակների կառուցվածքային ու կադրային վերափոխումները, որոնք միշտ չէ, որ արդարացված էին: Հայաստանում, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում վեց տարվա ընթացքում (1992-1998թթ.) երեք անգամ վերածնավորվեց նախարարությունը: Սկզբում լուսավորության և բարձրագույն ու միջին կրթության նախարարություն (Հայաստանում), Արցախում՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Հայաստանում երկու նախարարությունները միավորվեցին, մեկ տարի հետո նորից անջատվեցին, իսկ Արցախում, ընդհակառակը, կրթության, գիտության նախարարությունն առանձնացավ, ստեղծվեց նոր՝ ԼՂՀ մշակույթի և սպորտի նախարարություն, 2000թ. նորից երկու նախարարությունները միավորվեցին: Այդ տարիներին (1994-2000թթ.) երկու անգամ վերափոխվեց համակարգի միջին օղակը: 1995թ. ստեղծվեցին նախարարության ենթակայության շրջանային ու քաղաքային տեսչություններ, որոնք կոչված էին հսկելու դպրոցների ուսումնադաստիարակչական գործունեությունը: Ինչպես նշեցինք, դպրոցները՝ գտնվելով համայնքի ենթակայության տակ (1995-1999թթ.), համայնքի ղեկավարներն էին վերահսկում հանրակրթական հաստատությունների գործունեությունը, իսկ շրջանային կրթության բաժնի վարիչը, համապատասխան մասնագետները միայն դիտորդի կարգավիճակում էին: Ահա թե ինչու կրթության, մշակույթի և սպորտի նախարարության, այնուհետ, և կրթության, գիտության նախարարության տեսուչները չկարողացան լիարժեք գործել, քանի որ հենց հաջորդ տարում (1999թ.) հանրապետության վարչատարածքային կառուցվածքի փոփոխման պատճառով հերթական անգամ վերածնավորվեց կրթության համակարգի միջին հատվածը:

Առաջ անցնելով ասենք, որ այդ տարիներին զգալի էր կրթության մասին նոր օրենքի ու պետական կրթական չափորոշիչների բացակայությունը: Կրթական հաստատությունների ղեկավարներն ու աշխատակիցները դեռևս չունեին նպատակաուղղված գործունեություն ծավալելու հենակետային կողմնորոշիչներ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԼՂ Հանրապետությունում հանրակրթական բնագավառում նշանակալի դեր ունեցավ 1996թ. ՀՀ պետական հանրակրթական հաստատության օրինակելի կանոնադրության հաստատումը, քանի որ մինչ այդ երկու հանրապետությունների կրթական հաստատությունները, այդ թվում դպրոցները, աշխատում էին ժամանակավոր, որոշ դպրոցների գործունեությունը կասեցված կանոնադրությամբ: Նաև՝ ՀՀ Սահմանադրության (1995թ.) 35-րդ հոդվածով, ԼՂՀ Սահմանադրության (2006թ. դեկտեմբերի 10) կանոնադրության համաձայն՝ ամրագրվեցին յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը(ԼՂՀ Սահմանադրության 36-րդ հոդված) և այն, որ միջնակարգ կրթությունը պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում անվճար է: Ի դեպ, նույն ժամանակահատվածում ԼՂՀ կառավարության կողմից ևս ընդունվեց նմանատիպ կանոնադրություն:

Կանոնադրության համաձայն՝ առաջին անգամ ազգային դպրոցին իրական ինքնավարություն տրվեց, հատկապես ուսուցման մեթոդների տարբերակված, հոսքային դասարաններ բացելու և կադրային համալրման հարցերում: 1997թ. ՀՀ կառավարության որոշմամբ նույնը՝ նաև ԼՂՀ կառավարության որոշմամբ, փոփոխություն է կատարվել դպրոցական օրինակելի կանոնադրության մեջ: Հանրակրթական հաստատության կառավարման և ֆինանսավորման վերաբերյալ բաժիններն ամբողջությամբ վերանայվել են: Խորհուրդների միջոցով ներմուծվել է կառավարման նոր ձև: Եվ այսպես, ինչպես նշել ենք, 1998թ. հոկտեմբերին ԼՂՀ կա-

ռավարության որոշմամբ հանրապետության տարբեր շրջանների դպրոցներ հանձնվել են համայնքների կառավարմանը:

Հայտնի ճշմարտություն է, որ դպրոցական կրթությունը եղել և մնում է բազային օղակ, հիմք, որի վրա պետք է կառուցվի հետագա կրթության ողջ համակարգը: Այստեղ հապճեպությունն ու սխալ որոշումները կարող են անշտկելի հետևանքներ թողնել՝ կաթվածահարելով դպրոցները, խարխլելով անգամ պետության հիմքերը: ԼՂՀ ԿԳ նախարար Համլետ Ասրյանը 1998թ. նոյեմբերին հրավիրված կոլեգիայի նիստում անդրադառնալով այդ որոշման («դպրոցների ընդգրկումը համայնքների ցուցակում»)[39] դրույթներին, հիմնավորեց, որ այդ որոշումը հազիվ թե կարողանա իրեն արդարացնել: Նույն կարծիքն է հայտնել նաև ԼՂՀ ԿԳ նախարար Համլետ Գրիգորյանը 1999թ. հոկտեմբերին նախարարության ընդլայնված խորհրդակցությունում[40]: Նախարարը մատնանշել է, որ գյուղական համայնքները դեռևս ինքնուրույն, կայացած համարել չի կարելի, և երկրորդ՝ գյուղապետարանները չունեն համապատասխան մասնագետներ, որոնք կարողանային իմանալ դպրոցը, օժանդակել նրան ու վերահսկել նրա գործունեությունը, երրորդ՝ կրթության բովանդակության միասնականությունն ապահովվում է ԿԳ նախարարության շրջանային վարչակազմերի կրթության բաժինների միջոցով:

Ելնելով վերը շարադրվածից և վերլուծություններից, կարելի է եզրակացնել, որ անկախություն ձեռք բերելուց հետո ԼՂՀ-ում հասարակական և սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները որոշակիորեն իրենց ազդեցությունն են ունեցել նոր ձևավորված կրթական համակարգի թե կառուցվածքային և թե բովանդակային վերափոխումների վրա: Վերլուծությունները նաև ցույց տվեցին, որ կրթական համակարգը միշտ էլ արտացոլել է այն փոփոխությունները, որոնք կատարվում են հասարակության մեջ և կոչված են բավարարելու նրա պահանջները: Ինչպես նշել ենք, սկսած 1991թ.-ից, արմատական փոփոխություններ կատարվեցին հանրապետության կրթական համակարգում թե դրական և թե բացասական առումներով: ԼՂ ԿԳ նախարարության շրջանային, քաղաքային բաժինների կոլեգիայի նիստերում քննարկվել են տարաբնույթ հարցեր դպրոցական ցանցի ընդլայնման, մանկապարտեզների, արտադպրոցական հիմնարկների վերաբացման, դպրոցների վերանորոգման, ուսումնանյութական բազայի ապահովման, մանկավարժական կադրերով ապահովման և այլ հարցերի ուղղությամբ և ընդունվել համապատասխան որոշումներ՝ հանրակրթության ոլորտում ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու և այդ բնագավառում տեղ գտած թերությունները վերացնելու համար: Փաստագրական նյութերի քննական վերլուծությունները նաև ցույց տվեցին, որ 1991-1999թ., չնայած ստեղծված դժվարություններին և անհիմն ընդունված որոշումների (1998թ.) բացասական ազդեցության, այնուհանդերձ, հնարավորինս պահպանվել են կրթական համակարգի լավագույն ավանդույթներն ու ձեռքբերումները և միաժամանակ նախադրյալներ ստեղծվել նրա հետագա զարգացումն ապահովելու համար: Այդ գործընթացը թափ է առնում հատկապես 1999թ.-ից սկսած, երբ «Հանուն միասնական կրթական համակարգի պահպանման և զարգացման» հիմնահարցի շուրջ քննարկումներ եղան 1999թ. նոյեմբերի 30-ին ԼՂՀ ԿԳ նախարարության խորհրդակցությունում, որին մասնակցում էին ԼՂՀ ԿԳ նախարարության համագործակցային ծրագրի աշխատանքնային այցով Արցախ ժամանած ՀՀ ԿԳ նախարար, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և անվանի

գիտնականներ Սևակ Արզումանյանը, Արամ Աբրահամյանը, Հրանտ Աբրահամյանը և ուրիշներ:[41] Հանդիպման նպատակն էր մշակել ՀՀ և ԼՂՀ միասնական կրթական համակարգի ծրագրերը, զարգացման ուղղությունները, բարեփոխումների իրականացման հիմնախնդիրները:

ՀՀ ԿԳ նախարար Է.Ղազարյանը իր ելույթում ներկայացրեց Հայաստանում 1990-1999թթ. կրթական համակարգում կատարված փոփոխություններն ու կրթության ոլորտում տեղ գտած թերությունները, որոնք ինչ-որ չափով խոչընդոտել են կրթության զարգացմանը: Նախարարի ներկայացրած հիմնադրույթները նպատակ ունեին կանխել կրթության համակարգի անկումը (1991-1998թթ.), հնարավորինս պահպանել լավագույն ավանդույթներն ու ձեռքբերումները և միաժամանակ նախադրյալներ ստեղծել նրա հետագա զարգացումն ապահովելու համար: Է.Ղազարյանը այն բազմաթիվ գործոններից, որոնք բացասական ազդեցություն են թողել երկու հանրապետությունների (Հայաստանի և Արցախի) կրթության համակարգի վրա, առանձնացրեց երեքը, որոնք համընդհանուր բնույթ էին կրում և վերաբերում էին նաև ԱՊՀ երկրներին: Առաջին՝ տնտեսական ճգնաժամային իրավիճակով պայմանավորված ֆինանսական միջոցների սղություն, երկրորդ՝ սոցիալ-տնտեսական անկատարություն, երրորդ՝ թերի նորմատիվային իրավական դաշտի առկայություն, հաճախ օրենսդրական նորմերի անտեսում: Նախարարն իր զեկուցման մեջ նաև ընդգծեց, որ անկախությունից հետո Հայաստանում և Արցախում հանրակրթությունը յուրատեսակ ժամանակաշրջան ապրեց: Մի կողմից հայտնի պատճառներով կրթական համակարգը փլուզվեց և հայտնվեց անելանելի իրավիճակում, մյուս կողմից՝ այդ իրավիճակն ինքըստինքյան նպատավոր պայմաններ ստեղծեց նոր, առաջավոր համակարգ կառուցելու համար: Փաստորեն հնարավորություն ստեղծվեց Հայաստանում և Արցախում ճշգրտելու, վերաիմաստավորելու հանրակրթության նպատակաուղղվածությունն ու բովանդակությունը, ստեղծելու նոր ուսումնական ծրագրեր, պլաններ ու դասագրքեր, ներմուծելու նոր հանրակրթական առարկաներ:

Ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանն իր ելույթում մատնանշեց, որ հետպատերազմյան տարիներին (1994-1999թթ.) Հայաստանի և Արցախի Հանրապետության կրթության ոլորտում նկատվեց որոշակի դրական տեղաշարժ: Նախ՝ զգալի դարձավ կրթության ոլորտի բովանդակային փոփոխությունների համեմատական անկախությունը քաղաքական ինտրիգներից: Կազմավորվեցին ԿԳ նախարարություն (ԼՂՀ-ում՝ ԿԳՄՍ նախարարություն), կրթական բարեփոխումների կենտրոն (հետագայում այն վերանվանվեց կրթության ազգային ինստիտուտ և հետագայում իր մասնաճյուղն ունեցավ Ստեփանակերտում): Մշակվեցին և հաստատվեցին մի շարք կարևորագույն պետական փաստաթղթեր՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (14 ապրիլի 1999թ.), «Կրթության մասին» ԼՂՀ օրենքը (15 մարտի 2000թ.)[42], «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը և այլն: Նշմարելի է հասարակության շահագրգիռ վերաբերմունքը կրթության հիմնախնդիրներին, ինչը հնարավորություն է տալիս շոշափել կրթության զարգացմանը վերաբերող ավելի հիմնարար հարցեր[43]:

Խորհրդակցությունում զեկուցումով հանդես եկավ նաև ԼՂՀ ԿԳ նախարար Հ.Գրիգորյանը: Նա մատնանշեց, որ դպրոցական կրթությունը եղել և մնում է բազային օղակ, հիմք, որի վրա պետք է կառուցվի հետագա կրթության ողջ համակարգը: Միաժամանակ առաջարկեց, որպեսզի դպրոցները հանվեն համայնքների գույքի սեփականության ցուցակից և հանձնվեն կրթության բաժիններին: Զեկուց-

ման մեջ նաև շեշտեց ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի անհրաժեշտության հարցը:

Խորհրդակցությունում քննարկվող կարևոր հարցերից մեկն էլ գիշերօթիկ դպրոցների վիճակն էր, որն անհրաժեշտ էր կարգավորել: Ինչպես հայտնի է, 1994թ.-ից այդ ուղղությամբ ԿԳՄՍ նախարարության, շրջանային կրթության բաժինների կողմից լուրջ աշխատանքներ են տարվել յուրաքանչյուր շրջանում գիշերօթիկ դպրոց բացելու և նորմալ պայմաններով ապահովելու ուղղությամբ:

Խորհրդակցությունում քննարկվել է նաև դպրոցաշինության հարցը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետությունում 1992-1996թթ. ոչ արդյունավետ տնտեսվարություն էր նկատվում՝ կապված դպրոցական շենքերի վերանորոգման, գույքի, ուսումնանյութական բազայի հետ: Անբավարար ֆինանսական միջոցների պատճառով շենքերը հիմնարար վերանորոգման չէին ենթարկվում, հազիվ նորոգվում էին շենքերի տանիքները, պարապմունքները կազմակերպվում էին ոչ բարվոք սանիտարահիգիենիկ պայմաններում, ինչը պատճառ էր դառնում ամեն տարի անդրադառնալ այդ հարցին: Ի վերջո, 1997թ.-ից լրջորեն քննարկվեց դպրոցաշինության հարցը: ԼՂՀ կառավարության 1997թ. մարտի 16-ի որոշման համաձայն՝ շրջաններում սկսվեցին լայնածավալ աշխատանքներ տարվել դպրոցական շենքերը հիմնանորոգելու ուղղությամբ:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 90-ական թվականների վերջին ԼՂ Հանրապետությունը թևակոխեց զարգացման նոր՝ ավելի բարձր փուլ: Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները, ԼՂՀ կառավարության որոշումները գործունեության ուղենիշ հանդիսացան երկրի տնտեսության, մշակույթի, այդ թվում նաև հանրակրթության ոլորտում մի շարք փոփոխություններ անցկացնելու, եղած դրականը պահպանելու համար, միջոցներ ձեռնարկվեցին մշակելու կրթական համակարգի զարգացման նոր հայեցակարգ և ձերբազատվելու այն ամենից, ինչը խոչընդոտում էր հանրապետության կրթական համակարգի հետագա զարգացմանը: Ինչպես վերևում հիշատակվեց, 1998թ. նոյեմբերի 10-ին ԼՂՀ կառավարության որոշմամբ[44] դպրոցները հանձնվել են համայնքների կառավարմանը: Դրանից հետո շրջվարչակազմերի կրթության բաժինները ցած դրեցին իրենց լիազորությունները, որը խիստ բացասական հետևանք թողեց դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության վրա: Ի դեպ, նշենք, որ ոչ ճիշտ քաղաքականության արդյունք էր նաև հանրապետությունում 1995թ.-ից միանգամից բոլոր նախադպրոցական հիմնարկների փակումը, որով, փաստորեն, կրթական ծրագրի ընդհանուր շղթայից անջատվեց նախադպրոցական կրթությունը: Այդ վիճակը չէր կարելի հանդուրժել: ԿԳ նախարարությունը, շրջանային կրթության բաժինները, դպրոցների մանկավարժական կոլեկտիվները բազմաթիվ նամակներով ու որոշումներով հանդես եկան ԼՂՀ կառավարության առջև՝ պահանջելով անմիջապես վերացնել այդ թյուրիմացությունը և դպրոցները հանել գյուղապետարանների ենթակայությունից: Եվ ահա ԼՂՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 10-ի որոշումով[45] գյուղական դպրոցները հանվեցին համայնքների սեփականության գույքի ցուցակից և հանձնվեցին շրջանային կրթության բաժինների ենթակայությանը՝ վերականգնելով նախկին կարգավիճակը: Որոշման համաձայն առանձնացվեցին նաև միջին և ավագ դպրոցներում սխալ ձևով կոմպլեկտավորված դասարանները: ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում (1999թ. նոյեմբերի 26-ին) հանգամանորեն քննարկվել են նաև նախադպրոցական կրթության հարցերը, քանի որ

նախադպրոցական հիմնարկները քայքայվել էին, և նախարարությունը առաջարկել է կառավարությանը առաջիկայում այդ ցանցը վերականգնել:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը, հանգամանորեն ցույց տանք ԼՂՀ կրթական համակարգի ձևավորման ու զարգացման պատմության առաջին տասնամյակում (1991-2000թթ.), անցումնային և կայունացման շրջափուլերում հանրակրթության ոլորտում ձեռք բերված նվաճումները և տեղ գտած բացթողումները, միաժամանակ ընդգծենք այն անհրաժեշտ նախապայմանները, որոնք հնարավորություններ են ստեղծել կարճ ժամանակամիջոցում վերացնել տեղ գտած թերությունները, և ԿԳ նախարարության կողմից մշակվել է հանրակրթական դպրոցի զարգացման ու բարեփոխումներ ռազմավարական նոր ծրագրեր:

Այսպես, հայտնի է, որ Արցախյան ազգային ազատագրական պայքարի տարիներին պատերազմական գործողությունների հետևանքով կրթական համակարգը հայտնվել էր վատթարագույն վիճակում, լրիվությամբ այրվել կամ ավերվել էին հանրակրթական դպրոցների շենքեր, հրետակոծության հետևանքով զգալիորեն տուժել էր կրթական հաստատությունների զգալի մասը, շարքից դուրս էր եկել դպրոցական գույքի, ուսումնադիտողական և լաբորատոր սարքավորումների մեծ մասը:

Հանրապետության կրթական համակարգում պատերազմի թողած հետևանքների վերացմանը խոչընդոտում էին նաև ֆինանսական միջոցների սղությունը, անկայուն սոցիալ-տնտեսական վիճակը: Կրթական համակարգի նման ֆինանսավորման չափերով հնարավոր չէր լուծել շենքերի վերակառուցման, գույքի և սարքավորումների, ուսումնադիտողական և լաբորատոր սարքավորումների ու այլ պարագաների և տեխնիկական վերազինվածության ծավալուն ու կարևոր խնդիրները: Հանրապետությունում գործող արտադպրոցական հաստատություններին համայնքներից տրվող ֆինանսական չնչին միջոցներով հնարավոր չէր իրականացնել երեխաների արտադասարանական ու արտադպրոցական դաստիարակությունը, ինչը էապես ազդում էր նրանց ֆիզիկական, ռազմահայրենասիրական, գեղագիտական դաստիարակությանը: Արհեստագործական դպրոցների բացակայության պատճառով հիմնական դպրոցների շրջանավարտների որոշ մասը չէր ստանում միջնակարգ և նախամասնագիտական կրթություն:

Պետական նախադպրոցական համակարգի վերացման հետևանքով չէին ապահովվում նախադպրոցական և տարրական կրթության հաջորդականությունն ու շարունակականությունը, աճում էր դպրոց ընդունված երեխաների մտավոր զարգացման մակարդակների տարբերությունը:

Հանրապետությունում դանդաղ էին ընդլայնվում ավագ դպրոցների հոսքային դասարաններն ու վարժարանները, չէր ապահովվում ավագ դպրոցների շրջանավարտների լիարժեք պատրաստվածությունը ծրագրով նախատեսված բոլոր առարկաներից: Դեռևս արմատավորված չէր կապը միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև: Հանրակրթական դպրոցները, ինչպես նաև միջին մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունները, ապահովված չէին բարձրորակ մասնագետներով: Լուրջ հիմնախնդիր էր դարձել հանրակրթական դպրոցներում տղամարդ ուսուցիչների քանակի խիստ նվազումը:

Իսկ ինչ աշխատանքներ են տարվել հատկապես կրթական համակարգի կայունացման վերջին շրջանում՝ 1999-2002թթ.-ին:

ԼՂՀ իշխանությունների կողմից իրականացվող վերակառուցողական միջոցառումների շնորհիվ որոշակիորեն ապահովվել են կրթական հաստատությունների

գործունեության նվազագույն պայմանները՝ շնորհիվ որոնց այդ ժամանակահատվածում արդեն գործում էին 156 հանրակրթական դպրոցներ, 15 մանկապարտեզ և 5 արտադպրոցական հիմնարկներ: Առաջնորդվելով կառավարության որոշումներով, ԿԳ նախարարության, շրջանային կրթության բաժինների կողմից որոշակի աշխատանքներ են կատարվել դպրոցի վերակառուցման և համակարգի հետագա զարգացման ուղղությամբ[46]:

Այսպես, օրինակ, մեծ ուշադրություն է դարձվել կրթության բովանդակությանը (ուսումնական ծրագրեր, պլաններ), նորացմանն ու կատարելագործմանը, որոշակի աշխատանքներ են կատարվել ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, ուսուցչական կադրերի պատասխանատվության բարձրացման, աշխատանքային և կատարողական կարգապահության ամրապնդման ուղղությամբ: Այսպես՝

- վերակազմավորվել են մի շարք դպրոցներ, ընդլայնվել է դպրոցական ցանցը,
- հանրակրթական դպրոցները հանվել են համայնքների սեփականության գույքի ցանկից և հանձնվել կրթության բաժինների ենթակայությանը՝ վերականգնելով նախկին կարգավիճակը,
- առանձնացվել են միջին և ավագ դպրոցներում սխալ ձևով կոմպլեկտավորված դասարանները,
- 2000թ. հունվարի 1-ից սահմանվել է Երևանի պետական համալսարանին կից ֆիզմաթ գիշերօթիկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի (այդ թվում նաև հանրակրթական դպրոցների) ուսուցիչների աշխատավարձի լրավճար,
- նախարարության պաշտոնաթերթ «Լուսարար»-ն արդեն 1999թ.-ից հրատարակվել է և դարձել ուսուցիչների մասնագիտական ստեղծագործական ընդունակությունների բացահայտման պարբերական,
- հաստատվել են նոր տիպային հաստիքացուցակներ, դրանք համապատասխանեցվել են ժամանակաշրջանի դպրոցների աշխատանքի բովանդակությանն ու ծավալին,
- պարբերաբար անցկացվել են հանդիպումներ մանկավարժական կոլեկտիվների և ծնողական կոմիտեների հետ, քննարկվել օրախնդիր հարցեր,
- մշակվել ու գործածության մեջ է դրվել 2000-2001 ուս.տարվա ուսումնական պլանը և կատարվել որոշակի փոփոխություններ՝ նախապատրաստական դասարաններում շաբաթական ժամերի քանակը 12-ից դարձվել է 18 , իսկ ֆիզկուլտուրայի, կերպարվեստի առարկաներինը՝ 2-ական ժամ,
- ապահովվել է հիվանդ և արատավոր երեխաների ընդգրկումը հատուկ խմբերում կամ դասարաններում, ուստի դպրոցական ուսումնական պլանում ներառված էր նաև առանձին ուսումնական պլան մտավոր հետամնաց երեխաների հատուկ (օժանդակ) դասարանների համար և այլն:

Ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տվել նաև, թե ինչ չլուծված խնդիրներ են ծառացել հանրապետության կրթական համակարգի առջև.

1. դպրոցահասակ երեխաների հաշվառման աշխատանքները և ընդհանուր կրթության ապահովումը բոլոր դպրոցահասակ երեխաների համար,
2. դպրոցական շենքերի անմխիթար վիճակը՝ վերականգնողական ու վերանորոգման աշխատանքներ չտարվելու պատճառով,
3. նախադպրոցական և արտադպրոցական պետական համակարգի բացակայությունը: Կրթական համակարգի դինամիկ միասնության մեջ ընդգրկելու համար անհրաժեշտ էր վերաբացել նախակրթարանները և արտադպրոցական հիմ-

նարկները ու դրանք վերամիավորել հանրակրթական դպրոցների հետ,

4. հսկայական ֆինանսական միջոցների բացակայությունը, որը արգելակում էր կրթական համակարգում իրականացվող ցանկացած դրական տեղաշարժ,

5. կադրային հարցերի չլուծված լինելը, որակյալ մասնագետների խիստ պակասը: Չնայած ԱրՊՀ-ն ու ոչ պետական բուհերը յուրաքանչյուր տարի թողարկում էին զգալի թվով մանկավարժական կադրեր, դրանց մեծ մասը տարբեր պատճառներով խուսափում էր աշխատել դպրոցներում,

6. նյութատեխնիկական բազայի աղքատիկ վիճակը, առաջնային նշանակություն ունեցող գույքի՝ աշակերտական նստարանների, ուսուցչի սեղանների, գրապահարանների, աթոռների պակասը,

7. թոշակառու ուսուցիչների սոցիալական ծանր պայմանները, ուսուցչի ցածր աշխատավարձը և այլն:

Այժմ արխիվային փաստագրական նյութերի և կրթական հաստատություններում կատարած ուսումնասիրությունների հիման վրա փորձենք համեմատական վերլուծություններով ներկայացնել նաև ԼՂՀ կրթական համակարգի հիմնախնդիրներն ու զարգացման ուղղությունները: Հիմնահարցի վերլուծությունն ընդգրկում է 1992-2002թթ.՝ մինչև հանրապետության կրթության համակարգում արմատական բարեփոխումների իրականացումը:

Այսպես՝ բնութագրող ժամանակաշրջանում ԼՂՀ սոցիալ-տնտեսական ծանր վիճակով պայմանավորված, հանրապետության կրթության ոլորտում առաջացել էին բազմաթիվ հիմնախնդիրներ: Պատերազմական վիճակով պայմանավորված բնակչության կենսամակարդակի շարունակական անկումը և հարաճուն աղքատությունը նույնպես արտացոլվել են կրթության համակարգում, և նշված գործոնների հանրագումարը բացասաբար է ազդել կրթության որակի վրա՝ հանգեցնելով բնակչության համընդհանուր կրթվածության անկմանը: Կրթության բոլոր մակարդակներում առկա բազմապիսի հիմնախնդիրների և դժվարությունների զգալի մասը համակարգային էր, իսկ որոշ մասը՝ առանձնահատուկ տվյալ մակարդակի համար:

Քննարկվող ժամանակաշրջանի ԼՂՀ կրթության համակարգի լուծում պահանջող հիմնախնդիրները հանգում են հետևյալին.

1. կրթության համակարգի կառուցվածքը և օպտիմալացումը,

2. կրթության համակարգի բարեփոխումների գերակա ուղղությունները,

3. կադրային ապահովվածությունը և նրանց ընտրության չափորոշիչները,

4. կրթության հիմնախնդիրներն ու ֆինանսավորումը,

5. օրենսդրության անկատարությունը, ենթաօրենսդրական ակտերի բացակայությունը և օրենքների ոչ լրիվ կիրառումը,

6. ուսուցման և դաստիարակության գործընթացների տարանջատվածությունը,

7. կառավարման համակարգի անկատարությունը, կրթության մատչելիության անկումը,

8. նյութատեխնիկական և ուսումնամեթոդական անբավարար հիմքը,

9. կրթական համակարգի արդյունավետ գործառություն, կրթության կառուցվածքի և բովանդակության անհամապատասխանությունը շուկայական հարաբերությունների պահանջներին,

10. կրթության զարգացման պետական ծրագրի անհրաժեշտություն և այլն:

Ինչպես տեղեկացանք ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից, այդպիսի ծրագիր («ԼՂՀ հանրակրթական դպրոցների վերակառուցման ծրագիրը

հաստատելու մասին») ընդունվել է 1999թ. հունիսի 1-ին ԼՂՀ կառավարության կողմից[47], որով նախատեսվում էր ընդլայնել հանրակրթական դպրոցների ցանցը բոլոր շրջաններում, միաժամանակ կառուցել նոր դպրոցական շենքեր վերաբնակեցվող բնակավայրերում (Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում):

Ծրագրում նախատեսվում էր մինչև 2005թ. լայնածավալ շինարարական աշխատանքներ տանել դպրոցների նորոգման, հիմնանորոգման և նոր դպրոցների շենքերի կառուցման ուղղությամբ, հանրակրթական դպրոցներն ապահովել նոր դպրոցական գույքով, սարքավորումներով, իսկ ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար առաջնահերթ կարգով ձեռք բերել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, ռազմագիտության, համակարգչային և աշխատանքի ուսուցման կաբինետների կահավորանք ու սարքավորումներ: Ըստ ծրագրի պահանջների՝ 2000-2005թթ. ընթացքում հանրապետության բոլոր բնակավայրերում դպրոցները պետք է գործեին հետևյալ հաջորդական աստիճաններով.

1. տարրական (կրտսեր) դպրոց՝ 1-3 դասարաններ,
2. միջին (ոչ լրիվ) դպրոց՝ 4-8-րդ դասարաններ,
3. ավագ դպրոց՝ 9-10-րդ դասարաններ(հետագայում՝ 2001-2002 ուս.տարում անցան 11-ամյա կրթության):

Միջնակարգ դպրոցի առաջին երկու աստիճանները(տարրական և ութամյա, հետագայում՝ 2001-2002 ուս.տարում 9-ամյա) կազմում են հիմնական դպրոց: Դպրոցական այս համակարգը պահպանվեց մինչև 2008-2009 ուս.տարին, երբ հանրապետությունում նախապատրաստական աշխատանքներ էին տարվում անցում կատարելու ավագ դպրոցի 12-ամյա ուսուցման:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրթական համակարգի կայունացման փուլում՝ 2001-2002 ուս.տարում, ԼՂՀ-ում գործում էր 169 հանրակրթական դպրոց (բոլոր թվական տվյալները բերված են առանց Քաշաթաղի շրջանի), որից 19-ը՝ տարրական, 33-ը՝ հիմնական (9-ամյա), 117-ը՝ միջնակարգ[48]: Ավագ դպրոցներից միայն մեկն ուներ արհեստագործական դպրոցի կարգավիճակ: Բացի պետական դպրոցներից, հանրապետությունում գործում էին «Էրուդիտ» ոչ պետական դպրոցը, Շուշիի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված հանրակրթական գիշերօթիկ դպրոցը: Բացի այդ, հանրապետությունում գործում էին Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը, ԱրՊՀ-ին կից վարժարանը և ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմամարզական վարժարանը:

Հանրակրթական դպրոցներում աշխատում էին շուրջ 3158 մանկավարժ: Թեև ուսուցիչների թվաքանակը գերազանցում էր նորմատիվային թիվը (3046 ուսուցիչ), սակայն նրանք բաշխված էին անհավասարաչափ և թերբեռնված էին, որի հետևանքով առկա էր մանկավարժական կադրերի պահանջ, հատկապես գյուղական վայրերում: Հանրապետությունում ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը 1:7 էր, իսկ վարչական աշխատող-աշակերտ հարաբերակցությունը՝ 1:3, ինչը ցածր էր ոչ միայն տնտեսապես զարգացած երկրների, այլև աշխարհի (եվրոպական համագործակցության երկրներում դրանք համապատասխանաբար կազմում են 1:17 և 1:25) ցուցանիշներից:

Ինչպես նշված են ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում[49], հանրապետությունում կրթական համակարգի վերակառուցման առաջին շրջափուլում (1998-2002թթ.) պետբյուջեի և միջազգային կազմակերպությունների, Ռուսաստանում և արտասահմանում բնակվող հայ բարերարների միջոցով կառուցվել են 21 նոր դպրոցական շենքեր՝ հիմնականում վե-

ռաբնակեցված շրջաններում (Շահումյանում և Քաշաթաղում), իսկ մյուս շրջաններում վնասված շենքերը ժամանակավորապես վերանորոգվել և դրանցում կազմակերպվել են ուսումնական պարապմունքները: Սակայն նշենք նաև այդ շրջանում կրթության ոլորտում առկա բացասական այլ գործոններ, որոնք խոչընդոտում էին համակարգի բնականոն զարգացմանը: Այսպես, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կրթական օջախներում չէին ապահովվում ուսուցման առողջապահական և սանիտարահիգենիկ նորմերը, ինչպես նաև անհատական պաշտպանության և անվտանգության կանոնները:

Կրթության բոլոր մակարդակներում հաստատությունները համալրված չէին գույքով, կահավորանքով, լաբորատոր սարքավորումներով, ուսումնադիդակտիկ պարագաներով, փորձանյութերով: Խիստ անբավարար էին ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցները, լաբորատոր սարքավորումները, տեղեկատվական, համակարգչային, տեխնիկական և կապի միջոցները: Կրճատվել էին հաստատություններում կատարվող ուսումնամեթոդական մշակումները, տպագրվող մասնագիտական գրականության տեսականին և ծավալները:

Եթե հանրակրթությունը ուսումնական գրականությամբ հիմնականում ապահովված էր, ապա մասնագիտական կրթության ոլորտում գրականության ստեղծման, թարգմանության և տեղայնացման աշխատանքներն անբավարար էին: Հաստատությունների գրադարանային ֆոնդերը հնացած էին և մաշված, չէին համապատասխանում ժամանակակից գրադարանին ներկայացվող պահանջներին՝ տարածքի կահավորման և տեխնիկական սպասարկման առումով (էլեկտրոնային գրադարաններ):

Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ ժամանակահատվածում կրթության բնագավառում օրենսդրության անկատարության հետևանք էր պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև օպերատիվ կապերի բացակայությունը: Ուսումնական հաստատությունները գտնվում էին տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ, չկային լիազորությունների հստակ տարանջատման ենթաօրենսդրական ակտեր: Կառավարման համադասումը (կոորդինացումը) ապահովող ակտերի բացակայությունը լուրջ դժվարություններ էր ստեղծում կրթության կառավարման լիազորված մարմնի համար իր գործառույթները իրականացնելիս: Գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերի չհամաձայնեցումը կառավարման համակարգում ծնում էր հակասություններ:

Կրթության կառավարման գրեթե բոլոր մակարդակներում չկային անհրաժեշտ հմտություններ, թույլ էին ուսումնական հաստատությունների ինքնակառավարման մարմինները (նկատի ունենք այն շրջանը, երբ դպրոցները գտնվում էին համայնքների իրավասության տակ): Հաստատությունների իրական զարգացումն ապահովող ինքնավարության իրականացմանը խոչընդոտում էին նրանց միջև մրցակցության բացակայությունն ու առանձին հաստատությունների անմրցունակությունը: Ինքնավարության իրական հիմքն ապահովված չէր նաև վերահսկողական համակարգի անկատարության պատճառով: Դանդաղ էր ընթանում կրթական համակարգի ժողովրդավարացումը:

Այդ ժամանակահատվածում հանրապետությունում կրթության անմատչելիությունը պայմանավորված էր հետևյալ մի քանի հիմնական գործոններով.

- բնակչության հիմնական զանգվածի ցածր կենսամակարդակ և անվճարունակություն,
- միջին և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերի և

վճարովի ուսուցման անհամամասնություն,

- կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսումնական գործընթացում ընդգրկելու համար անհրաժեշտ միջոցների և համապատասխան պայմանների բացակայություն,

- բնակչության տեղաշարժի հետ կապված ժողովրդագրական փոփոխության և դրա հետևանքով հանրապետությունից ժամանակավորապես մեկնող ու վերադարձող ընտանիքների երեխաներին ուսումնական գործընթացում ներգրավելու, լեզվական արգելքների հաղթահարման և հոգեբանական հարմարման դժվարություններ և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթական համակարգի կայացման շրջափուլում (2002-2008թթ.), նախորդ տասնամյակի համեմատությամբ, հանրապետությունում կրթական համակարգը վերելք էր ապրում, որը պայմանավորված էր ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերություններում ընթացող տեղաշարժերի, քաղաքական իրադրության, գիտության զարգացման մակարդակով, կյանքի պահանջներով և այլ հանգամանքներով: Կրթական համակարգի վերակառուցման նոր փուլում ընդլայնվել էր դպրոցական ցանցը, բարելավվել նյութական բազան, լայնածավալ շինարարական աշխատանքներ են տարվել դպրոցների նորոգման, հիմնանորոգման ուղղությամբ, կառուցվել են դպրոցական նոր շենքեր: Բարեփոխվող դպրոցի նոր փուլում պետական ու ազգային կարևորագույն խնդիր էին համարվում կրթության որակի ապահովումը, համակարգի պահպանումն ու զարգացումը: Ի դեպ, նշենք, որ կրթական համակարգում տեղի ունեցած վերոնշյալ փոփոխությունները կատարվել են 1999թ. ԼՂՀ կառավարության կողմից հաստատված հնգամյա ծրագրի (1999-2004թթ.) պահանջներին համապատասխան: Այդ ծրագրի հիմնական թվերը, գույքի համապատասխան հաշվարկները մտցվել են նաև 2005թ. մարտի 17-ին ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում հաստատված «ԼՂՀ կրթական համակարգի պահպանման և զարգացման 2005-2010թթ. ժամանակաշրջանի» ծրագրում: Նշված հնգամյա ծրագրի պահանջներին համապատասխան ձեռքբերումներ են եղել հանրապետության կրթության համակարգում:

Այժմ արխիվային տվյալների, կրթության շրջանային, քաղաքային բաժինների վարիչների հաշվետվությունների[50] և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա պարզաբանենք, թե քննարկվող ժամանակաշրջանում, ըստ ուսումնական տարիների ինչպիսին էր կրթական համակարգը հանրապետության շրջաններում, քաղաքներում, միաժամանակ ցույց տանք նաև համակարգի կառուցվածքային փոփոխությունները, ուշագրավ այն նախաձեռնությունները (եռամիասնության՝ Արցախ, Հայաստան և հայրենիք միտվող Սփյուռքի), որոնց շնորհիվ ընդլայնվել է դպրոցական ցանցը, լայնածավալ աշխատանքներ են կատարվել դպրոցաշինության բնագավառում:

2002-2003 ուս.տարվա օգոստոսի 23-29-ը հանրապետության բոլոր շրջաններում և մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցան ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցություններ: Ուսումնական տարվա իրենց գլխավոր ժողովին շրջանային կրթության բաժինների վարիչները, ուսուցիչները, կրթական ոլորտի համապատասխան մասնագետները ներկայացան կրթական հիմնական խնդիրների շուրջ բաց և գործնական քննարկում վարելու նպատակադրությամբ:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնաթերթ՝ «Լուսարար»-ի 2002թ. թիվ 9 և 2003թ. թիվ 6 համարներում տպագրված՝ Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչ Ռուբեն Հարությունյանի «2002-2003 ուս.տարում կատարած աշխա-

տանքների մասին» հաշվետվությունից տեղեկանում ենք, որ նշված ուսումնական տարում շրջանում գործել են 37 հանրակրթական դպրոցներ, որոնցից 29-ը՝ միջնակարգ, 4-ը՝ ութամյա, 4-ը՝ տարրական: Դպրոցներում սովորում էին 2829 աշակերտ, դասավանդում 565 ուսուցիչներ[51]: Շրջանի դպրոցականների առարկայական օլիմպիադայում շրջանային, քաղաքային և հանրապետական փուլերում հաղթած 16 աշակերտներից 6-ը մասնակցել են ՀՀ օլիմպիադայի մրցույթի փուլին և նվաճել դիպլոմներ ու գովասանագրեր: Առարկայական օլիմպիադայի արդյունքները ցույց են տվել, որ շրջանում կան գիտական ներուժով աշակերտներ, որոնց հետ կանոնավոր աշխատանքի դեպքում հնարավոր է հասնել հաջողությունների կրթության բոլոր ասպարեզներում, այդ թվում նաև՝ մեդալակիրների:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հետպատերազմյան շրջանում (1994-2000թթ.) դպրոցական շենքերի մի մասը գտնվում էր անբարենպաստ պայմաններում, միայն 2000-2002թթ. սկսվել են դպրոցների վերանորոգման աշխատանքները: Այսպես, Մարտակերտում կառուցվել է 4 դպրոց, որից 2-ը՝ հովանավորների միջոցներով, նույնքան էլ կատարվել է հիմնանորոգում: Շրջանի Մատաղիսի, Տոնաշենի միջնակարգ դպրոցները, Կուսապատի միջնակարգ դպրոցի Մեհմանայի մասնաճյուղը, Մեծ շենի, Թբլղուի, Չլդրանի, Նոր Այգեստանի, Զագլիկի, Առաջածորի, Մարտակերտի թիվ 2 դպրոցների շենքերը գտնվում էին խարխուլ, վթարային վիճակում, մի քանի դպրոցներ տեղակայված էին մասնավոր տներում՝ բնակիչների հետ կողք-կողքի: Արդեն 2001-2002 ուս.տարում ԿԳ նախարարության ներկայացրած դպրոցաշինության ծրագիրը քննարկվել և հաստատվել էր ԼՂՀ կառավարության նիստում և նախատեսվում էր նշված դպրոցների շենքերը հիմնանորոգել կամ կառուցել նոր շենքեր:

Հարկ է նշել, որ դպրոցաշինության ծրագիրն Արցախում, սկսած նշված ուսումնական տարվանից, գերազանցապես իրականացվում էր սփյուռքահայ բարերարների օժանդակությամբ:

Ըստ արխիվային տվյալների և ականատեսների (Վ.Անտոնյան, Ա.Հայրապետյան) հուշերի[52], Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչ Սլավիկ Պետրոսյանը 2002-2003 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (օգոստոսի 22-23-ը) հանգամանորեն ներկայացրեց շրջանի կրթական համակարգի վիճակը: Բաժնի վարիչը նշեց, որ 2002-2003 ուս.տարում շրջանում գործել են 40 հանրակրթական դպրոցներ, որից 25-ը՝ միջնակարգ, 9-ը՝ ութամյա, 6-ը՝ տարրական և դրանց կից երեք բաժանմունքներ՝ 4417 աշակերտների և 674 ուսուցիչների ընդգրկմամբ: 2000-2001 ուս.տարվա համեմատությամբ աշակերտների թիվն ավելացել է 84-ով, դպրոցներինը՝ 2-ով: Շրջանում ութամյա դպրոցներ են բացվել Վազգենաշեն և Ջիվանի բնակավայրերում: Շրջանում գործում էր նաև արհեստագործական դպրոց՝ երեք մասնագիտություններով, 107 աշակերտի ընդգրկմամբ:[53]

Շրջանում դպրոցաշինության բնագավառում ծավալուն աշխատանքներ են կատարվել: Ըստ կրթության բաժնի տվյալների, 2001-2002 ուս.տարում նոր դպրոցական շենքեր են կառուցվել Ջիվանիի, Շեխերի, Հերհերի համայնքներում, նորոգման են ենթարկվել շրջանի բոլոր դպրոցները, իսկ 2003-2005թթ. հիմնանորոգվել են Մարտունու թիվ 1, 3, Նոր շենի, Քերթի, Գիշու, Կարմիր շուկայի, Եմիշճանի, Մյուրիշենի, Ճարտարի թիվ 3, Ղուզե Ճարտարի, Քարահունջի և Վազգենաշենի համայնքներում սկսել են նոր դպրոցների կառուցման շինարարական աշխատանքները:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շրջանի դպրոցներում բավարար հիմքի վրա է նաև ուսումնանյութական բազան, դասասենյակների, լաբորատորիաների, կաբինետների կահավորումը, որը հնարավորություն է ընձեռում արդյունավետ կազմակերպել ուսումնական պարապմունքները: «Լուսարար» թերթի 2002թ. թիվ 12-ում տպագրված մի հոդվածից (հեղինակ՝ Վ.Անտոնյան)[54] տեղեկանում ենք, որ վերոնշյալ ուսումնական տարում շրջանի հանրակրթական դպրոցներում ավանդույթ է դարձել հրավիրել մեթոդմիավորման միացյալ նիստ, որտեղ քննարկվում են ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման բազմաբնույթ հարցեր: Այսպես, ուսումնական տարվա առաջին կիսամյակում Գիշու, Խնուշինակի, Սպիտակաշենի դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում կազմակերպվում են մեթոդմիավորման միացյալ նիստեր, դա շարունակվում է նաև երկրորդ կիսամյակում: Մանկավարժական կոլեկտիվները հնարավորություն են ստանում միմյանց հաղորդելու իրենց փորձը, միմյանց հետ կիսելու իրենց հուզող հարցերն ու խնդիրները, կազմակերպելու բաց և փոխադարձ դասեր հումանիտար և բնագիտական առարկաներից: Փորձառու ուսուցիչների կազմակերպած դասերը (Ա.Օհանջանյան, Ի.Բալայան) բովանդակային առումով արժանացան բարձր գնահատականի, և մեթոդմիավորման նիստի որոշմամբ նրանք ճանաչվեցին շրջանի տարվա լավագույն ուսուցիչներ:

Շրջանային կրթության բաժնի վարիչ Ս.Պետորսյանը՝ խորհրդակցությունում ընդհանրացնելով դասալսումների արդյունքները, մատնանշեց, որ իրոք իրենց կողքին գործում, աշխատում են բանիմաց, ստեղծագործող, եռանդուն, գործունյա ուսուցիչներ, որոնց նպատակը աշակերտներին խոր և կայուն գիտելիքներ հաղորդելն է, նրանց մեջ դատողական ունակություններ զարգացնելը:

Ուշագրավ է նշել նաև այն կարևոր փաստը, որ հանրապետության դպրոցների վերակառուցման շրջափուլերում (կայունացման և կայացման), սկսած 1999թ.-ից, ԿԳ նախարարությունը կրթության շրջանային բաժինների վարիչների, դպրոցների տնօրենների գործունեությունը ակտիվացնելու, համակարգում տեղ գտած թերությունները վերացնելու նպատակով շրջանի դպրոցներում պարբերաբար կազմակերպում էր կոլեգիայի արտագնա նիստ, որտեղ քննարկվում էին համակարգի վերափոխումներին վերաբերող բազմաբնույթ հարցեր:

Այսպես, ըստ Մարտունու շրջանի կրթության բաժնի տվյալների, 2001-2002 ուս.տարում ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի հերթական արտագնա նիստը տեղի ունեցավ Մարտունու շրջանի Կարմիր շուկայի միջնակարգ դպրոցում, որին մասնակցում էին հանրապետության բոլոր շրջանների կրթության բաժինների վարիչները, գլխավոր մասնագետները, շրջանի դպրոցների տնօրենները, փորձառու մանկավարժները, ինչպես նաև շրջվարչակազմի ղեկավարները:[55]

Քննարկվեցին շրջանի կրթական համակարգի վերակառուցման մի շարք հարցեր.

- հանրակրթական դպրոցների շենքերի հիմնանորոգում, համապատասխան սարքավորումներով ապահովում (գույք, նստարաններ, լաբորատոր սարքեր, ուսումնական կաբինետների կահավորում).
- ուսումնական-առարկայան կաբինետների ստեղծում, կահավորում, անցում ուսուցման կաբինետային համակարգի.
- շրջանում դպրոցական ցանցի ընդլայնում.
- առարկայական մեթոդմիավորումների ստեղծում, միջփնջային, միջդպրոցական դասալսումների կազմակերպում.

- արտադպրոցական դաստիարակչական հիմնարկների ցանցի ընդլայնում, այդ թվում՝ մանկապարտեզների, արհեստագործական ուսումնարանների.

- մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն:

Ըստ պաշտոնական տվյալների, 1999-2002թթ. ԿԳ նախարարությունը պարբերաբար, յուրաքանչյուր ուսումնական տարում հանրապետության բոլոր շրջաններում կազմակերպում էր կոլեգիայի արտագնա նիստեր, քննարկում կրթական համակարգի վերակառուցման և հետագա զարգացման հիմնահարցերը: Ինչպես իրենց հուշերում նշում են արտագնա նիստերի մասնակիցներ Մ.Բեգլարյանը, Վ.Անտոնյանը (Մարտունի), Բ.Դավթյանը (ԼՂՀ ԿԳՆ գլխավոր մասնագետ), Ռ.Բաղդասարյանը (Մարտակերտի շջանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ), Մ.Բալյանը (Հադրութի շրջանի Մեծ Թաղերի դպրոցի ուսուցիչ) և ուրիշներ, արտագնա նիստերի մասնակից փորձառու ուսուցիչները կազմակերպում էին նաև բաց դասեր, որին մասնակցում էին հատկապես սկսնակ ուսուցիչները, ինչպես նաև հանդես էին գալիս հետաքրքիր մասնագիտական զեկուցումներով: Այդ ավանդույթը շարունակվել է նաև հետագա տարիներին: Նշենք նաև, որ 1992-1999թթ. ԿԳ նախարարությունը այդպիսի նախաձեռնություն չի ձեռնարկել:

Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ Անդրանիկ Աբրահամյանի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ շրջանի կրթական համակարգում (1999-2002թթ.) արձանագրվել են մի շարք դրական տեղաշարժեր: Այդ են վկայում 2002-2003 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (օգոստոսի 24-25-ին) ներկայացրած իր հաշվետվության տվյալները, համաձայն որի նշված ուս.տարում շրջանում գործել են 27 հանրակրթական դպրոցներ, որից 11-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ութամյա, 5-ը՝ տարրական: Դպրոցներում սովորում էին 2002 աշակերտներ, դասավանդում 426 ուսուցիչներ: Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցության ցածր լինելը բացատրվում էր վերաբնակեցված և հեռավոր գյուղերում սակավ կոնտինգենտ ունեցող դպրոցների 5-10-րդ դասարան մասնաճյուղերի առկայությամբ:

Շրջանի դպրոցներում գործել են 25 միացյալ դասարաններ, այդ թվում 12-ը՝ եռակոմպլեկտ: Միացյալ դասարանների առկայությունը թույլ չէր տալիս ուսուցումը արդյունավետ ու որակյալ կազմակերպել: Այդ պրոբլեմը Հադրութի շրջանում առկա էր նաև նախկինում: Սակայն 2004-2005 ուս.տարվանից դրությունը համեմատաբար շտկվել է, պակասել է միացյալ դասարանների թիվը:

2002-2003 ուս.տարում դպրոցների թիվը ավելացել է երկուսով, աշակերտներինը՝ 108-ով[56]: Իսկ Առաքելի ութամյա դպրոցը վերափոխվել է միջնակարգի, Հակակուի տարրական դպրոցը՝ ութամյայի, Պլեթանցի դասարան-մասնաճյուղը՝ տարրական առանձին դպրոցի: 9-10-րդ դասարանի մասնաճյուղեր են բացվել Քուրաթաղ, Մոխրենես և Ջրակուս համայնքներում:

Ինչպես տեղեկացանք «Լուսարար» թերթի 2004թ. թիվ 17 համարում (օգոստոսի 16) մի հոդվածից (հեղինակ՝ Մ.Բալյան), 2002թ. Հադրութի շրջանում հիմնադրվել է նոր գյուղ՝ Առաջուղ, որտեղ էլ բացվել է ութամյա դպրոց: Դպրոցի բացմանը օժանդակել է «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը: Արցախյան ծրագրերի տնօրեն Անդրանիկ Գասպարյանը, փոխտնօրեն Արմեն Սարգսյանը իրենց գործունեությունը իրականացնում էին վերաբնակեցման և կրթամշակութային ուղղություններով: Ընդ որում վերաբնակեցումը իրականացվում էր երկու ուղղությամբ՝ նոր գյուղերի հիմնադրում, դպրոցների բացում, ազատագրված տարածք-

ներում վերաբնակեցված գյուղերի ամրապնդում ու զարգացում, դպրոցների վերանորոգում:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 2002-2003 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում(օգոստոսի 24-25-ին) Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Ա.Ավանեսյանը իր հաշվետվությունում ներկայացրեց շրջանի կրթական համակարգի վիճակը: Նա մատնանշեց, որ նախորդ տարիների համեմատ շրջանում մեծ առաջընթաց է գրանցվել հանրակրթության ոլորտում: Ըստ կրթության բաժնի հաշվետվության տվյալների, եթե նախկինում մինչ այդ գործել են 33 հանրակրթական դպրոցներ, որոնցից 22-ը՝ միջնակարգ, 8-ը՝ ութամյա, 3-ը՝ տարրական, սովորողների թիվը հասնում էր 2560-ի[57], ապա 2002-2003 ուս.տարում համեմատաբար ավելացել է թե դպրոցների և թե սովորողների քանակը: Այսպես՝ 36 հանրակրթական դպրոցներից 24-ը՝ միջնակարգ, 9-ը՝ ութամյա, 3-ը՝ տարրական: Այդ ուսումնական տարում Խրամորթի միջնակարգ դպրոցին կից մասնաճյուղ է բացվել Ուղտասար (Շելլի) բնակավայրում: Սովորողների թիվը շրջանի դպրոցներում կազմում էր 2900, ուսուցիչներինը՝ 568: Վերոնշյալ ուսումնական տարում շրջանի դպրոցների մեծ մասը (Դահիրավ, Լուսաձոր, Քռասնի, Ջրաղացներ, Մադաթաշեն, Մոշխմհատ, Շոշ, Այգեստան, Խնածախ, Նորագյուղ և այլն) նորոգվել և հիմնանորոգվել է: 2002-2003թթ. շրջանում կառուցվել է 4 նոր դպրոցական շենք, կահավորվել անհրաժեշտ գույքով, լաբորատոր սարքավորումներով[58]: Դրան զուգընթաց նախատեսվում էր պետբյուջեի միջոցների և բարերարների օգնության հաշվին մի շարք գյուղերում կառուցել նոր դպրոցական շենքեր:

Ըստ արխիվային տվյալների և ժամանակակիցների հուշերի, Շուշիի շրջանում[59] կրթական համակարգում կարգավորումը սկսվել է հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ 1994թ.-ից: Սկզբում վերաբացվել է Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջը, այնուհետև՝ Խ.Աբովյանի անվան թիվ 1 դպրոցը: 90-ական թվականների վերջերին շրջանում գործում էր 5 հանրակրթական դպրոց, որտեղ սովորում էին 420 աշակերտ, դասավանդում 92 ուսուցիչներ: 2002-2003 ուս.տարում գործել են 7 միջնակարգ դպրոցներ Շուշիի Մուրացանի անվան թիվ 2, Քարին տակի, Եղծահողի, Հին շենի, Մեծ շենի, Լիսագորի համայնքներում: Դպրոցներում սովորում էին 800 աշակերտներ, դասավանդում 138 ուսուցիչներ:

Ինչպես նշել ենք, պատերազմական գործողությունների հետևանքով հայոց Շուշի քաղաքը հայտնվել էր ծանր կացության մեջ, և հայության այդ հատվածը զրկված էր տնտեսական ու մշակութային զարգացման նվազագույն հնարավորություններից: Այնուամենայնիվ, տեղի հայ հասարակության ու մտավորականության ձեռնարկումների շնորհիվ հայոց հնագույն մշակութային կենտրոն Շուշին նորից վերականգնվեց և վերստին սկսեցին գործել հոգևոր, մշակութային, կրթական օջախները:

Արցախի կրթական համակարգում զգալի փոփոխություններ կատարվեցին հետպատերազմյան ժամանակաշրջանում: Հայտնի է, որ պատերազմի հետևանքները իրենց բացասական ազդեցությունը թողեցին կրթության վրա: Սակայն վերջինս նույնպես զերծ չմնաց վայրիվերումների «զարգացումից»: Այդ տարիներին (1992-1994թթ.) գերխնդիրը պարզապես համակարգը պահելն էր, ինչը, կարելի է ասել, վատ չի կատարվել մեզ մոտ, համենայնդեպս Արցախում չի փակվել ոչ մի դպրոց, եթե չասենք՝ հակառակն է եղել, բացվել են նորերը, հատկապես վերաբնակեցված շրջաններում՝ Քաշաթաղում և Շահումյանում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Քաշաթաղի (Լաչինի) շրջանում 1994թ.-ից՝ վերաբնակեցման առաջին տարում, գործում էր 2 դպրոց (1994-1995թթ.), 1996-1999թթ.՝ 22 դպրոց, որտեղ սովորում էին 356 աշակերտ, դասավանդում 32 ուսուցիչ: 2000թ.-ից աննախադեպ վերելք ունեցավ շրջանի կրթական համակարգը՝ շնորհիվ համայն հայության աջակցության: Հատկապես հիշատակման արժանի է «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Անդրանիկ Գասպարյանի, փոխտնօրեն Արմեն Սարգսյանի գործունեությունը: Նրանց ծրագրերով իրականացվում են Արցախի գյուղերի դպրոցների վերանորոգման, հիմնանորոգման, նոր դպրոցների կառուցման աշխատանքներ, սակայն ավելի շատ՝ Քաշաթաղի, Շահումյանի շրջաններում՝ նպատակ ունենալով շատացնել վերաբնակեցված բնակչության, կրթական օջախների քանակը, բարձրացնել մարդկանց բարեկեցությունը:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ հայրենասեր բարերարների նախաձեռնության շնորհիվ շրջանում ընդլայնվում է դպրոցական ցանցը: Այսպես՝ 2001-2002 ուս.տարում Քաշաթաղի շրջանում գործում էր 50 հանրակրթական դպրոց, որից 48-ը՝ ընդհանուր միջնակարգ, 2-ը՝ ութամյա և մեկ հումանիտար հոսքի վարժարան: Դպրոցներում աշխատում էին 555 ուսուցիչներ, որից բարձրագույն մասնագիտական կրթություն ուներ մոտ 50 տոկոսը: Սովորողների թիվը դպրոցներում անցնում էր 2100-ից: Միայն Քաշաթաղի շրջկենտրոնում, Բերձոր քաղաքում, գործում էին 2 միջնակարգ դպրոցներ, 1 վարժարան, 1 գիշերօթիկ, արվեստի և սպորտի դպրոց, քաղաքային պատկերասրահ, գրադարան, մսուր-մանկապարտեզ՝ 21 աշխատողների և 60 երեխաների ընդգրկմամբ, 4 խմբերով: 2002-2003 ուս.տարում խմբերի թիվը ավելացել է 3-ով[60]: Բացի այդ, Բերձորում գործում էր նաև երաժշտական դպրոց՝ 37 աշխատատեղով և 113 աշակերտների ընդգրկմամբ: Երաժշտական դպրոցն ուներ իր մասնաճյուղերը Իշխանաձոր, Վարդաբաց, Մարաթուկ, Ուռեկան գյուղերում և Միջնավան քաղաքում: Ի դեպ, նշենք, որ վերոնշյալ փաստագրական տվյալները (դպրոցների, արտադպրոցական հիմնարկների քանակը) պահպանվել են նաև 2002-2003 ուս.տարում: Ուշագրավ է նշել նաև այն փաստը, որ շրջանի բնակչությունը ակտիվորեն մասնակցում էր դպրոցական շենքերի վերանորոգմանը:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ Շահումյանի շրջանի վերաբնակեցված գյուղերում դպրոցական ցանցը ընդլայնվել է հատկապես 2000-2001 ուս.տարում. գործել է 10 դպրոց, որից 7-ը՝ միջնակարգ, 2-ը՝ ութամյա, 1-ը՝ տարրական, որտեղ սովորել են 368 աշակերտ, դասավանդել 112 ուսուցիչներ: Իսկ 2002-2003 ուս.տարում շրջանի 14 համայնքներում(Ականաբերդի, Քարվաճառի, Նոր Բրաջուրի, Ծարի, Դադիվանքի, Եղեգնուտի, Նոր վերին շենի, Նոր Գետաշենի, Նոր Էրքեջի, Չարեքտարի, Նոր Կարաչինարի, Հավսաթաղի, Նոր Մանաշիդի) գործել են 14 դպրոցներ, որից 9-ը՝ միջնակարգ, 4-ը՝ ութամյա, 1-ը՝ տարրական: Դպրոցներում սովորում էին 552 աշակերտներ, դասավանդում 212 ուսուցիչներ: Հատկապես ծավալուն աշխատանքներ էին տարվում դպրոցաշինության բնագավառում: Ինչպես տեղեկացանք շրջանային կրթության բաժնի վարիչ Ս.Խաչատրյանի հաշվետվությունից, շրջանում առաջին տիպային դպրոցական շենքը կառուցվել է 2002թ. Ղարաչինարում՝ շահումյանցի Աշոտ Խաչատրյանի անմիջական ներդրումով: Հայրենասիրական այդ նախաձեռնությանը իր օժանդակությունն է ցուցաբերել նաև շահումյանցի բարերար Գենադի Ստեփանյանը[61]:

Դպրոցների տնօրինությունները, մանկավարժական կոլեկտիվները, ուղենիշ ունենալով բարեփոխվող ազգային դպրոցին ներկայացվող արդի պահանջները, ստեղծագործաբար, բարձր արդյունավետությամբ աշխատում էին դրական արդյունքների հասնելու համար:

Ըստ արխիվային տվյալների, քննարկվող ժամանակաշրջանում մայրաքաղաք Ստեփանակերտում զգալի չափով ընդլայնվում է դպրոցների, մշակութային օջախների, արտադպրոցական հիմնարկերի ցանցը: Այսպես, օրինակ, 2002-2003 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (օգոստոսի 27-28-ին) Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանի ներկայացրած զեկուցագրից տեղեկանում ենք, որ նշված ուսումնական տարում մայրաքաղաքում գործել են 11 միջնակարգ դպրոց, 1 նախադպրոցական հիմնարկ (թիվ 1 մանկապարտեզը) և 1 արտադպրոցական հիմնարկ՝ մանկական ստեղծագործության կենտրոնը: Նշված ուսումնական տարում այդ դպրոցներում սովորում էին 7623 աշակերտներ, դասավանդում 758 ուսուցիչներ: Ուսումնական տարին գերազանց գնահատականներով ավարտել է 869 աշակերտ: Հանրապետության 11 մեդալակիրներից 10-ը տվել են մայրաքաղաքի դպրոցները: Դպրոցները ապահովված էին որակյալ մասնագետներով, թերևս դրանով է բացատրվում տեղի դպրոցականների համեմատաբար բարձր մակարդակը[62]:

Տնօրինությունների կազմած ցուցակների համաձայն՝ քաղաքի դպրոցներում սովորում էին սոցիալապես անապահով 1699 երեխաներ, այդ թվում՝ զոհված ազատամարտիկների 695, բազմազավակ ընտանիքների 264, սակավակարող ընտանիքների 740 երեխաներ: Այդ երեխաների կրթության, դաստիարակության կազմակերպման հարցը մշտապես գտնվում էր ԼՂՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում:

Ուսուցչական խորհրդակցությունում կրթության բաժնի վարիչը իր հաշվետվության մեջ նշեց նաև, որ ներկայումս մայրաքաղաքում ևս առկա է դպրոցաշինության խնդիրը: Չնայած կատարված որոշակի աշխատանքներին (գույքի ձեռքբերում, մասնակի վերանորոգում), 2002թ. դրությամբ քաղաքի թիվ 2, 5, 6, 7 (նախկին մասնաշենք), 9, 10, 11 դպրոցների և մանկական ստեղծագործության կենտրոնի շենքերը կապիտալ վերանորոգման կարիք ունեին և առաջին անհրաժեշտության ուսումնական գույքի խիստ պահանջ էր զգացվում:

Հանրապետության մայրաքաղաքում, շրջաններում կայացած ուսուցչական խորհրդակցություններում վերստին քննարկվել է դպրոցաշինության հարցը:

Ապրիլի 16-ին ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստում (ներկա էին շրջվարչակազմերի կրթության բաժինների աշխատողները, դպրոցների տնօրենները) քննարկված հարցերից մեկը դպրոցաշինությունն էր[63]: Նախարար Ա.Սարգսյանը մասնավորապես նշեց, որ գլխավոր խնդիրը դպրոցաշինության առանձնահատկություններն են՝ կապված այն շրջանների հետ, որոնք ազատագրվել են և պետք է այնտեղ նոր դպրոցներ բացվեն: Այս իմաստով պարզապես արմատական քայլ կատարվեց Արցախի համար՝ ի տարբերություն ՀՀ-ի, որտեղ բոլոր դպրոցների վերանորոգման և գույքով ապահովման խնդիրները լուծվել են տարբեր տարիների:

Դպրոցաշինությունը կրթական համակարգի զարգացման կարևորագույն օղակներից մեկն է: Ցավոք, պայմանավորված պատերազմական գործողություններով, 90-ական թվականներին այս ոլորտը խիստ տուժել է: Ռազմական գործո-

ղությունների հետևանքով հանրապետության շատ դպրոցների շենքեր ու տարիների ընթացքում դժվարությամբ ձեռք բերված դպրոցական գույքը ավերվել կամ շարքից դուրս են եկել: Ինչպես նշեցինք, հետպատերազմյան շրջանում լայնածավալ շինարարական աշխատանքներ են տարվել հանրապետության շրջաններում ու քաղաքներում դպրոցները վերանորոգելու կամ հիմնանորոգելու ուղղությամբ, շրջաններում կառուցվել են մի քանի դպրոցական շենքեր:

ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ կառավարության կողմից Արցախի կրթական համակարգի զարգացման հեռանկարային համալիր ծրագիր է մշակվել 2001-2005թթ. համար, որում նշվել են նաև դպրոցաշինությունը ավարտին հասցնելու ուղիները: Ի դեպ, նշենք, որ դպրոցաշինության հարցն իր կոնկրետ ծրագրային արտացոլումը գտավ նաև 2002թ. մայիսի 27-28-ը Երևանում կայացած «Հայաստան-Սփյուռք» համահայկական երկրորդ խորհրդաժողովում,որի ընդունած ծրագրում ներառվում էին ինչպես պետական միջոցների ներդրումը, այնպես էլ սփյուռքահայ բարերարների և բարեգործական կազմակերպությունների աջակցությունը: Ամրագրվեց առաջիկա երեք տարիների ընթացքում (2002-2005թթ.) Արցախի բոլոր դպրոցները հիմնանորոգելու և դպրոցական շենքեր կառուցելու հարցը:

«Հայաստան-Սփյուռք» համահայկական երկրորդ խորհրդաժողովի կողմից «Արցախի դպրոցաշինության մասին» ծրագրի ընդունումից հետո մեր հանրապետությունում նոր թափ է ստացել այդ գործընթացը: Հանրապետության շրջաններում կառուցվեցին նոր դպրոցական շենքեր: Ըստ արխիվային տվյալների, 1999-2002թթ. հանրապետությունում կառուցվել են նոր դպրոցական շենքեր Վաղուհասում, Սեյդիշենում (Լուսաձոր), Մոշխմատում, Խնձրիստանում, Հերհերում, Թաղավարդում, Շեխերում, Քաշաթաղում (Բերձորում), Քարվաճառում և Ղարաչինարում: Հարկ է նշել, որ այդ գործում շոշափելի են նաև սփյուռքահայ բարերարների, Հայաստանում և այլ հանրապետություններում բնակվող հայրենասեր հայ բարերարների ներդրումները:

Դպրոցաշինության ոլորտի կարևոր խնդիրներից մեկն էլ կրթօջախները ժամանակակից տեխնիկայով ապահովումն է, առանց որի հնարավոր չէ ներկա սերնդի համակողմանի զարգացումը: Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 2000-2001 ուս.տարում ԱՄՆ-ի Սան Ֆրանցիսկո քաղաքում գործող «Ղարաբաղի երեխաներ» հիմնադրամի ղեկավարությունը, տեղի հայ բարերարների մասնակցությամբ, Արցախի դպրոցներին հատկացրել է բավականին քանակությամբ համակարգիչներ, և 2003թ. հոկտեմբերին Արցախ է ժամանել նշված հիմնադրամի նախագահ Միքայել Հավիաննիսյանը: Նշենք, որ այս կազմակերպությունը նախաձեռնող եղբայրներ Միքայել և Ռոմա Հովհաննիսյանները ծագումով ղարաբաղցի են, ծնվել են Ասկերանի շրջանի Բադարա գյուղում, իսկ կրտսեր եղբայրը՝ Վիտալի Ղազարյանը, ծնվել է Բաքվում: Այս երեք եղբայրները 90-ականների սկզբին Բաքվի հայկական ջարդերից մազապուրծ հանգրվանել են օվկիանոսից այն կողմ, որտեղ էլ վերջնականապես հիմնավորվել են և 2000թ. ստեղծել «Ղարաբաղի երեխաներ» հիմնադրամը ու նպատակ դրել ամեն կերպ նպաստել Արցախում իրականացվող դպրոցաշինության ծրագրերին: Այս առաքելության առաջին արտահայտությունը եղավ նրանց հանգանակած միջոցներով ձեռք բերված ավելի քան 350 համակարգիչների տրամադրումը Արցախի դպրոցներին: Համակարգիչների տրամադրումը բեկումնային քայլ էր Արցախի դպրոցների կոմպյուտերացման քաղաքականության մեջ:

Այս գործընթացն աստիճանաբար թափ է առնում Արցախում: Շնորհիվ սփյուռքահայ բարերարների աջակցության, հանրապետության դպրոցների զգալի մասը, այդ թվում գյուղական վայրերի, ապահովված է համակարգիչներով: «Ազատ Արցախ» թերթի 2004թ. հունիսյան համարներից մեկում տպագրված «Համակարգիչների տեղադրման գործընթացը շարունակվում է» խորագրով հոդվածից (Լ.Գրիգորյան) տեղեկանում ենք, որ ֆրանսիական «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում մի շարք ծրագրեր են իրականացվում: Արցախում իրականացվող հիմնական ծրագիրը գյուղական դպրոցները համակարգիչներով ապահովելն է, որի շրջանակներում կրթօջախներում տեղադրվել է շուրջ 50 համակարգիչ: Ընդհանուր առմամբ, շրջանների դպրոցներում նախատեսված էր տեղադրել 200 համակարգիչ: Յուրաքանչյուր դպրոց պետք է ունենա առնվազն երկու համակարգիչ: «Շեն» կազմակերպության կողմից 2003-2004 ուս.տարվա հունիս ամսում ստացվել է 12 համակարգիչ և տեղադրվել Մարտունու դպրոցներում[64]:

«Ազատ Արցախ» թերթի 2004թ. հուլիսյան համարներից մեկում տպագրված մեկ այլ հոդվածից (Լ.Գրիգորյան) տեղեկանում ենք, որ ԱՄՆ «Ղարաբաղի երեխաներ» հիմնադրամի օժանդակությամբ նախարարությունում գործում է համակարգչային կենտրոն, որտեղ ՀՀ կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի նախաձեռնությամբ ամառային արձակուրդի օրերին հանրապետության բոլոր շրջանների ինֆորմատիկայի ուսուցիչները յոթնօրյա վերապատրաստման դասընթացներ են անցնում համակարգչային նվազագույն գիտելիքներ ձեռք բերելու և «Պասկալ» ծրագրավորման լեզվի հիմունքներին ծանոթանալու նպատակով:

Քննարկվող ժամանակաշրջանում (2000-2004թթ.) հանրապետությունում հետզհետե ավելանում է հանրակրթական դպրոցների թիվը: Այսպես, օրինակ, ԿՄՍ նախարարության կոլեգիայի կողմից հաստատված նախնական ցանկի համաձայն՝ 2003-2004 ուս.տարում հանրապետությունում գործում էին 233 ցերեկային հանրակրթական, գիշերօթիկ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ և հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ հիմնարկներ: Դպրոցների 85.9 տոկոսը, կամ 201-ը, գտնվում էին գյուղերում, 14.1 տոկոսը, կամ 33-ը՝ քաղաքային վայրերում: 2002-2003 ուս.տարվա համեմատ հանրապետությունում դպրոցների թիվը աճել է երկուսով, ընդ որում՝ երկուսն էլ գյուղական բնակավայրերում: 2003-2004 ուս.տարում հանրապետության դպրոցներում սովորում էր 22463 աշակերտ, որոնց թիվը նախորդ ուս.տարվա համեմատ նվազել է 1249-ով, կամ 3.3 տոկոսով: Աշակերտների ընդհանուր թվաքանակից 11220 աշակերտ, կամ 49.9 տոկոսը, սովորում են քաղաքային, իսկ 11243 աշակերտ, կամ 50.1 տոկոսը, գյուղական դպրոցներում[65]:

Արխիվային հարուստ տվյալների ընձեռած հնարավորությունների և այլ աղբյուրների հիման վրա ստորև տալիս ենք ԼՂ Հանրապետության դպրոցների ցանցի ընդլայնումը 2004-2005 ուս.տարում՝ ըստ շրջանների[66]:

Աղյուսակ 4

ԼՂՀ դպրոցների և աշակերտների թվակազմը (2004-2005 ուսումնական տարի)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

հհ	Դպրոցը	Աշակերտների թվաքանակը
1	թիվ 1 մ.դ.	904
2	թիվ 2 մ.դ.	979
3	թիվ 3 մ.դ.	630
4	թիվ 4 մ.դ.	129
5	թիվ 5 մ.դ.	383
6	թիվ 6 մ.դ.	249
7	թիվ 7 մ.դ.	731
8	թիվ 8 մ.դ.	1177
9	թիվ 9 մ.դ.	474
10	թիվ 10 մ.դ.	754
11	թիվ 11 մ.դ.	313
12	թիվ 12 մ.դ.	52
Ընդամենը՝		**6779**

ՄԱՐՏՈՒՆԻ

հհ	Դպրոցը	Աշակերտների թվաքանակը
1	Մարտունու թիվ 1 մ.դ.	375
2	Մարտունու թիվ 2 մ.դ.	460
3	Մարտունու թիվ 3 մ.դ.	120
4	Կարմիր շուկայի մ.դ.	206
5	Թաղավարդի մ.դ.	115
6	Շեխերի մ.դ.	65
7	Սոսի մ.դ.	171
8	Մաճկալաշենի մ.դ.	100
9	Հերհերի մ.դ.	110
10	Ղ.Ճարտարի մասն.	240
11	Ճարտարի թ. 1 մ.դ.	224
12	Ճարտարի թ. 2 մ.դ.	147
13	Հաղորտու մ.դ.	29
14	Մուշկապատի մ.դ.	69
15	Կաղարծու մասն.	86
16	Ննգու մ.դ.	56

17	Աշանի մ.դ.	115
18	Բերդաշենի մ.դ.	283
19	Նոր շենի մ.դ.	64
20	Սպիտակաշենի մ.դ.	90
21	Գիշու մ.դ.	228
22	Խնուշինակի մ.դ.	127
23	Կոլխոզաշենի մ.դ.	61
24	Քերթի մ.դ.	112
25	Քարահունջի մ.դ.	31
26	Վազգենաշենի մ.դ.	64
27	Ճարտարի թ. 3 8-ամյա	56
28	Ղ.Կալերի 8-ամյա	63
29	Սարգսաշենի 8-ամյա	35
30	Մյուրիշենի 8-ամյա	29
31	Ավդուռի 8-ամյա	24
32	Եմիշճանի 8-ամյա	33
33	Հացու 8-ամյա	38
34	Ջիվանի 8-ամյա	19
35	Ծովատեղի 8-ամյա	23
36	Ղավախանի 8-ամյա	12
37	Պառավաթումբի տարր.	3
38	Խերխանի տարր.	13
39	Մսմնայի տարր.	2
40	Զարդարաշենի տարր.	3
Ընդամենը՝		**4105**

ԱՍԿԵՐԱՆ

հհ	Դպրոցը	Աշակերտների թվաքանակը
1	Ասկերանի մ.դ.	352
2	Իվանյանի մ.դ.	150
3	Նախիջևանիկի մասն.	88
4	Խրամորթի մ.դ.	63
5	Փառուխի մասն.	11
6	Չուլլի մասն.	4
7	Մեծ խաչի մասն.	7
8	Աղդամի մասն.	4
9	Խանաբադի մասն.	158
10	Նորագյուղի մ.դ.	220

11	Սարդարաշենի մ.դ.	32
12	Ծաղկաշատի մ.դ.	38
13	Խաչենի մ.դ.	45
14	Խնձրիստանի մ.դ.	132
15	Աստղաշենի մ.դ.	69
16	Բաղարայի մ.դ.	105
17	Բալլուջայի մ.դ.	181
18	Լեռնավանի մ.դ.	96
19	Շոշի մ.դ.	85
20	Սղնախի մ.դ.	48
21	Ավետարանոցի մ.դ. (Չանաղչի)	204
22	Ակնաղբյուրի մ.դ.	108
23	Սարուշենի մ.դ.	78
24	Խաչմաչի մ.դ.	43
25	Կարմիր գյուղի մ.դ.	32
26	Հարավի մ.դ.	50
27	Ազնեքի մ.դ.	29
28	Դահրավի 8-ամյա	23
29	Հիլիսի 8-ամյա	18
30	Խանցքի 8-ամյա	33
31	Լուսաձորի 8-ամյա	24
32	Քռասնու 8-ամյա	16
33	Ջրաղացների 8-ամյա	19
34	Դաշուշենի 8-ամյա	12
35	Բերքաձորի 8-ամյա	26
36	Մոշխմհատի 8-ամյա	13
37	Հովսեփավանի 8-ամյա	25
38	Արմենակավանի 8-ամյա	17
39	Ուղտասարի 8-ամյա	38
40	Մադաթաշենի տարր.	6
41	Մխիթարաշենի տարր.	11
42	Ռևի տարր.	6
Ընդամենը՝		**2719**

ՄԱՐՏԱԿԵՐՏ

hh	**Դպրոցը**	**Աշակերտների թվաքանակը**
1	Մարտակերտի թիվ 1 մ.դ	381
2	Մարտակերտի թիվ 2 մ.դ.	179
3	Հաթերքի մ.դ.	200

4	Վանքի մ.դ.	208
5	Առաջածորի մ.դ.	109
6	Վաղուհասի մ.դ.	97
7	Ն.Հոռաթաղի մ.դ.	118
8	Վ.Հոռաթաղի մ.դ.	70
9	Մոխրաթաղի մ.դ.	45
10	Չլդրանի մ.դ.	92
11	Կոճողոտի մ.դ.	91
12	Ջանյաթաղի մ.դ.	57
13	Մաղավուզի մ.դ.(մասն.)	79
14	Գետավանի մ.դ.	40
15	Քոլատակի մ.դ.	65
16	Թալիշի մ.դ.	76
17	Մեծաշենի վ	42
18	Դրմբոնի մ.դ.	63
19	Կուսապատի մասն.	37
20	Ջագլիկի մ.դ.	46
21	Ն.Սեյսուլանի մ.դ.	72
22	Մատաղիսի մ.դ.	59
23	Չափարի մ.դ.	33
24	Պողոսագոմերի մ.դ.	38
25	Հարությունագոմերի մ.դ.	57
26	Կիչանի մ.դ.	68
27	Մարաղայի մ.դ.(մասն.)	56
28	Գյուլաթաղի 8-ամյա	14
29	Ջարդախաչի 8-ամյա	17
30	Խնկավանի 8-ամյա	17
31	Ծմակահողի 8-ամյա	27
32	Շահմասուրի 8-ամյա	18
33	Այգեստանի 8-ամյա	32
34	Ծաղկաշենի տարր.	9
35	Աղաբեկալանջի տարր.	9
36	Թբլղվի տարր.	11
37	Տոնաշենի տարր,	9
38	Գառնաքարի տարր.	11
Ընդամենը՝		**2649**

ՀԱԴՐՈՒԹ

հհ	Դպրոցը	Աշակերտների թվաքանակը
1	Հադրութի մ.դ.	523
2	Մեծ Թաղերի մ.դ.	242
3	Ազոխի մ.դ.	121
4	Տողի մ.դ.	111
5	Դրախտիկի մ.դ.	71
6	Ուղտաձորի մ.դ.	90
7	Մարիամաձորի մ.դ.(Ծակուռիի մասն.)	55
8	Հին Թաղլարի մ.դ.	28
9	Տումու մ.դ.	124
10	Թաղոտի մ.դ.	52
11	Մոխրենեսի մ.դ.	61
12	Ջրակուսի մ.դ.	55
13	Ակնաղբյուրի մ.դ.	91
14	Խանձաձորի մ.դ.	24
15	Առաքելի մ.դ.	39
16	Թաղասեռի 8-ամյա	45
17	Բանաձորի 8-ամյա	26
18	Խծաբերդի 8-ամյա	32
19	Քյուրաթաղի 8-ամյա	42
20	Այգեստանի 8-ամյա	37
21	Արևշատի 8-ամյա	24
22	Հակակվի 8-ամյա	35
23	Նորաշենի 8-ամյա	32
24	Առաքելի 8-ամյա	31
25	Կամրակուճի տարր.	12
26	Վարդաշատի տարր.	13
27	Սպիտակաշենի տարր.	3
28	Ծամձորի տարր.	6
29	Պլեթանցի տարր.	2
30	Հայկավանի տարր.	10
Ընդամենը՝		**2649**

ՇՈՒՇԻ

հհ	Դպրոցը	Աշակերտների թվաքանակը
1	Շուշիի Խ.Աբովյանի անվան թիվ 1 մ.դ.	336
2	Շուշիի Մուրացանի անվան մ.դ..	178

3	Քարինտակի մ.դ.	91
4	Հին շենի մ.դ.	26
5	Եղծահողի մ.դ.(մասն.) Կանաչ թալա	31
6	Լիսագորի մ.դ.	23
7	Մեծ շենի 8-ամյա	15
Ընդամենը՝		**700**

ՇԱՀՈՒՄՅԱՆ

հհ	**Դպրոցը**	**Աշակերտների թվաքանակը**
1	Ականաբերդի մ.դ.	93
2	Քարվաճառի մ.դ.	88
3	Նոր Բրաջուրի մ.դ.	39
4	Ծարի մ.դ.	12
5	Դադիվանքի մ.դ.	22
6	Եղեգնուտի մ.դ.	46
7	Նոր Վերինշենի մ.դ.	62
8	Զուարի մ.դ.	22
9	Նոր Գետաշենի մ.դ.	69
10	Նոր Էրքեջի մ.դ.	37
11	Չարեքտարի 8-ամյա	11
12	Նոր Կարաչինարի 8-ամյա	33
13	Հովսաթաղի 8-ամյա	14
14	Նոր Մանաշիդի տարր.	4
Ընդամենը՝		**552**

ՔԱՇԱԹԱՂ

50 դպրոց- 1810 աշակերտ

Ընդամենը՝ 233 դպրոց, 21351 աշակերտ[67]:

Վերոհիշյալ աղյուսակից պարզ երևում է, որ նախորդ շրջանի համեմատությամբ, 2002-2003թթ. սկսած, հանրապետությունում դպրոցների և աշակերտների թիվը բավականին ավելացել է:

Ինչպես տեսնում ենք, պատմական կարճ ժամանակամիջոցում հանրապետությունում տնտեսական, մշակութային կյանքի զարգացման հետ միասին արագ թափով ընդլայնվում է հանրակրթական դպրոցների, հատկապես միջնակարգ դպրոցների ցանցը: Հետևապես, հետպատերազմյան շրջանում՝ 11 տարում (1994-2005թթ.), ինչ արվել է հանրապետության կրթահամակարգում, տեղի է ունեցել հնարավորությունների գերազանցումով: Ընդլայնվել է հանրակրթական

դպրոցների ցանցը, ավելացել աշակետների, ուսուցիչների թվակազմը: ԿՄՍ նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 1995-2005թթ. հանրապետությունում կառուցվել է 45, հիմնանորոգվել 47 դպրոց: 50 դպրոց կահավորվել է նոր կահույքով, լաբորատոր, համակարգչային սարքավորումներով. ուսուցումը այդ դպրոցներում տարվում է կաբինետային համակարգով[68]: Ի դեպ, նշենք, որ 2005թ. հոկտեմբերի 1-ին ԼՂՀ ԿՄՍ նախարարության կոլեգիայի նիստում, որին մասնակցում էին հանրապետության շրջանների կրթության բաժինների վարիչները, դպրոցների տնօրենները, քննարկվել է նաև դպրոցներում Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու հարցը, որի շուրջ եղել են առաջարկություններ: ԿՄՍ նախարար Կամո Աթայանը կրթության ոլորտի ղեկավարներին հանձնարարել է.

ա) 2005-2006 ուս.տարվանից սկսած անհրաժեշտ շենքային և նյութական պայմաններ ունեցող հանրակրթական դպրոցներում անցում կատարել ուսուցման կաբինետային համակարգին, օգտագործելով նախկինում ունեցած ուսումնադիտողական պարագաներն ու սարքավորումները, տեխնիկական միջոցները.

բ) ուսուցման գործընթացում աստիճանաբար ներդնել դպրոցներում ստեղծված համակարգչային կաբինետների հնարավորությունները, առանձին ուսումնական թեմաների ուսուցման ծրագրերի և ինտերնետ (համացանցի) կապի հնարավորությունները.

գ) ուսումնական կաբինետների համալրումը մասնակիորեն իրականացնել թեմատիկ նյութերի հավաքագրման, անձնական նախաձեռնությամբ աղյուսակների, ցուցապաստառների ու ինքնաշեն գործիքների պատրաստման, մեթոդական և ուսումնաօժանդակ գրականության կենտրոնացման և այլ միջոցներով[69]:

ԿՄՍ նախարարության կոլեգիայի նիստում քննարկվել է նաև դպրոցի ֆինանսավորման հարցը: Նախարար Կ.Աթայանը հավաստի տվյալների հիման վրա մատնանշեց, որ ԼՂՀ ֆինանսների նախարարության վիճակագրական տվյալների համաձայն՝ 2004-2005թթ. պետբյուջեում դպրոցաշինության կապիտալ ներդրումների պետական պատվերի շրջանակներում նախատեսված է 595 մլն դրամ և 100 մլն դրամ (առաջին անգամ մեր անկախության շրջանում)՝ դպրոցի ընթացիկ վերանորոգումների համար: Ինչը՝ մեր դիտարկումներով, հաջողությամբ է ընթացել:

Բավականին մեծ աշխատանքներ են տարվել հայրենասեր բարերարների կողմից՝ դպրոցները անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու նպատակով: Այսպես, 2005թ. ԱՄՆ «Ղարաբաղի երեխաներ» և ՀՀ-ում գործող «Շեն» բարեգործական կազմակերպությունների շնորհիվ Արցախի կրթական հաստատություններն ապահովվել են համակարգիչներով, դրանք ծառայում էին որպես ուսուցման միջոց[70]:

Նախարարը միաժամանակ իր ելույթում մատնանշեց, որ եթե 2005թ. մեր երկրի պետբյուջեի շուրջ մեկ քառորդն ուղղված էր կրթական համակարգի խնդիրների լուծմանը, դա վկայում է այն մասին, որ մեր պետությունը շահագրգռված է դպրոցների զարգացմամբ: Եվ դա դրսևորվում էր թե դպրոցական շենքերի վերանորոգումով կամ նորերի կառուցմամբ, թե նյութատեխնիկական բազայի հարստացման միտմամբ և թե ուսուցիչների աշխատավարձերի աստիճանական բարձրացմամբ: Ասենք նաև, որ ԼՂՀ-ն աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությամբ եզակի տարածք է աշխարհում, որովհետև մեկ ուսուցչին հասնող աշակերտների թվաքանակը շատ երկրների համեմատությամբ բավականին նվազ է: Իհարկե, պետության համար դա լրացուցիչ ծախսեր է առաջացնում, սակայն նման վիճակը

հանդուրժվում է ռազմավարական տեսանկյունից, որովհետև մեր բոլոր գյուղերում էլ դպրոցների առկայությունը խիստ անհրաժեշտ է[71]:

Ինչպես նկատեցինք, ազգային դպրոցի բարեփոխումների նոր փուլում(կայացման փուլում) 2001թ. սկսած՝ հանրապետությունում կրթական համակարգը համեմատաբար վերելք է ունեցել. ընդլայնվել է հանրակրթական դպրոցների ցանցը, դպրոցներն ապահովվել են որակյալ մանկավարժական կադրերով, հատկապես նոր բնակեցված վայրերում՝ Քաշաթաղում, Շահումյանում ունեցանք նաև ամբողջական դասագրքային համակարգ՝ 10-11-ամյա ուսուցման համար, ընդունվեցին մի շարք իրավական նորմատիվային փաստաթղթեր, որոնք ճշգրիտ ուղղություն տվեցին կրթական համակարգի կառավարման մարմիններին: Եղավ այն, որ առաջընթացով սկիզբ դրվեց կրթական համակարգի հետագա զարգացմանը:

Հարկ է նշել, որ հանրապետության կրթական համակարգի վերափոխումների ու զարգացման երրորդ շրջափուլում եղան նաև հիշարժան իրադարձություններ, որոնք իրենց բարերար ազդեցությունն ունեցան ուսուցման գործընթացի որակի բարձրացման վրա:

Առաջինն Արցախի մանկավարժական պարբերականի՝ «Լուսարար» թերթի շարունակական հրատարակումն է, որի անդրանիկ համարը լույս է տեսել 1999թ. սեպտեմբերին: Իսկ առաջին մանկավարժական պարբերականը՝ «Հայկական աշխարհը», լույս է տեսել 1874թ. Շուշիում՝ մանկավարժության երախտավոր Խորեն Ստեփանեի նախաձեռնությամբ (այդ մասին նշվել է աշխատության առաջին հատորում): «Լուսարարը» իր շուրջն է համախմբում մանկավարժ գիտնականների, նորարար ու ստեղծագործ ուսուցիչների ու դաստիարակների մի մեծ բանակ, որի միջոցով էլ լուծվում են կրթական համակարգում կուտակված հրատապ խնդիրներ և որն էլ հնարավորություն է տալիս ունենալ առաջավոր կրթական համակարգ:

Երկրորդը՝ հանրապետության ԿԳ նախարարության ուշագրավ նախաձեռնություններից մեկն էլ եղավ հանրապետական մանկավարժական ընթերցումների կազմակերպումը (2001-2002 ուս.տարվա ապրիլի 24-26-ը): Այսպես՝ հանրակրթական դպրոցի ուսուցչի դերն ու նշանակությունը բարձրացնելու, մատաղ սերնդի ուսուցման, դաստիարակության գործը արդյունավետ կազմակերպելու համար ԼՂՀ ԿԳ նախարարությունն առաջին անգամ «Բարեփոխվող դպրոց, ուսումնադաստարակչական գործընթաց և կառավարում» թեմայով կազմակերպեց հանրապետական մանկավարժական ընթերցումներ, որոնց նպատակն էր բացահայտել հանրակրթության հետագա զարգացմանն ուղղված գիտամանկավարժական ու մասնագիտական ակտիվ գործունեություն ծավալելու ընդունակ, ստեղծագործող ու գործնական կարողություններով օժտված մանկավարժ-մասնագետներին, ուսումնասիրել, ընդհանրացնել ու տարածել կրթական բարեփոխումների գործընթացին նպաստող առաջավոր մանկավարժական ու մասնագիտական միտքն ու նվաճումները[72]:

Ընթերցումները նպատակ չունեն ուսուցիչներին պարտադրելու այս կամ այն մանկավարժի ուսուցման մեթոդները, այլ, լսելով կամ հետագայում ուսումնասիրելով լավագույն ճանաչված թեմաները, տվյալ պահին ուսուցիչը կարողանա դրանց մեջ գտնել և ընտրել այն արդյունավետ ձևը, որն ուղղակի կամ մասնակիորեն կնպաստի սեփական փորձի ու մեթոդների ձևավորմանն ու մանկավարժական վարպետության բարձրացմանը: Ընթերցումներին մասնակցում էին շրջանների, քաղաքների լավագույն ուսուցիչներ, ինչպես նաև բուհերի դասախոսներ:

Ընթերցումների մասնակիցները հանդես են եկել մանկավարժության և հոգեբանության դասավանդման մեթոդների և ձևերի, արտադասարանական աշխատանքների և մասնագիտական բնույթի թեմաներով: Լավագույն ճանաչված զեկուցումները խրախուսվում են և տպագրվում հանրապետական թերթերում ու ԼՂՀ ԿԳ «Կրթությունն ու գիտությունը Արցախում» տեղեկագրում:

Արցախի կրթական համակարգում հիշարժան իրադարձություն էր նաև ԿԳ նախարարության կողմից կազմակերպված «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ» դարակազմիկ մրցույթը: Մրցույթի անցկացման գործում նախարարությունն ակնկալում էր հանրապետության բոլոր ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և անհատների մասնակցությունը՝ օժանդակելու մրցույթին և կրթության բաժիններին՝ անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու դարի այս կամ այն հատվածում Արցախում մանկավարժական գործունեություն ծավալած վաստակաշատ մանկավարժների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Ներկայացված 200 թեկնածուներից ընտրվել են 100 լավագույն մանկավարժներ՝ հաշվի առնելով Արցախի կրթական համակարգի զարգացման մեջ նրանց ունեցած ներդրումը, գիտական հրապարակումները, առաջավոր փորձը:

Մանկավարժական կոլեկտիվներում կրթության նկատմամբ շահագրգիռ հետաքրքրություն և աշխուժություն առաջացնելու նպատակով ԼՂՀ ԿԳ նախարարությունը, սկսած 1999թ., անց է կացնում «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն տնօրեն» ամենամյա մրցույթը: Այդ մրցույթները մեծ աշխուժություն են մտցրել մանկավարժական կոլեկտիվներում և պրպտումների մղել մանկավարժական կոլեկտիվներին:

ԼՂՀ հանրակրթական դպրոցի զարգացման վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև ԿԳ նախարարության կողմից կազմակերպված արտագնա նիստերը, խորհրդակցությունները հանրապետության շրջաններում՝ վարչակազմերում, կրթության բաժիններում, հանրակրթական դպրոցներում, ուր բարձրացված կրթական խնդիրները ներկայացվում են կոլեգիայի նիստի քննարկման: Այսպես՝ ԿԳ նախարարության առաջին արտագնա նիստը տեղի ունեցավ 2001-2002 ուս.տարվա ապրիլին՝ Մարտունու շրջանի Կարմիր շուկայի միջնակարգ դպրոցում, որին մասնակցում էին նախարարության պատասխանատու աշխատողները, շրջվարչակազմերի կրթության բաժինների վարիչները, Մարտունու շրջվարչակազմի ղեկավարը, շրջանի դպրոցների փորձառու ուսուցիչները, տնօրենները և թոշակառու անվանի մանկավարժները:

Համանման արտագնա նիստեր են հրավիրվել նաև Մարտակերտի, Հադրութի, Ասկերանի, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում: Այդ նիստերի հրավիրումը կարևոր նշանակություն ունի կրթական համակարգի առաջնահերթ խնդիրները տեղում պարզելու և դրանց անհրաժեշտ լուծում տալու առումով դպրոցներում կրթադաստիարակչական գործընթացի բարելավման ուղղությամբ: Ստուգումների ժամանակ տեղում բացահայտվում են նաև ներդպրոցական աշխատանքներում նկատվող թերությունների օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները, նշվում դրանց վերացման ուղիները:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի պատկեր է ներկայացնում ԼՂՀ ԿԳ նախարարության և կրթության շրջանային բաժինների տեսուչների, համապատասխան մասնագետների կողմից 2004-2005 ուս.տարում առաջին անգամ հանրակրթական դպրոցներում անցկացված համակողմանի ստուգումների արդյունքները:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղ-

թերից (հրամաններ, որոշումներ), նախարար Կ.Աթայանի հրամանով 2004-2005 ուս.տարում համակողմանի ստուգման են ենթարկվել Ստեփանակերտի թիվ 1, 2, 7, 8, 9, 10, Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի, Բադարայի, Խանաբադի, Սզնեքի, Խաչմաչի, Աստղաշենի, Հիլիսի, Մարտակերտի շրջանի Դրմբոնի, Վաղուհասի, Պողոսագոմերի, Ն.Հոռաթաղի, Վարդաձորի, Մարտակերտի թիվ 1, 2, Մեծ շենի, Մարտունու շրջանի Գիշու, Խնուշինակի, Կաղարծու, Ննգու, Նոր շենի, Աշանի, Պառավաթումբի, Շահումյանի շրջանի Քարվաճառի, Չարեքտարի, Դադիվանքի, Եղեգնուտի, Վերին շենի, Քաշաթաղի շրջանի Բերձորի թիվ 1, 2, Սոնասարի, Միջնավանի և այլ դպրոցներ՝ նպատակ ունենալով կազմակերպել բաց, փոխադարձ դասալսումներ, ծանոթանալ դասվարների, դաստղեկների դաստիարակչական աշխատանքների պլաններին, մեթոդմիավորումների աշխատանքներին, ներդպրոցական կառավարման համակարգում տնօրինության վերահսկողության ձևերին, հատկապես սովորողների ուսման առաջադիմությանը և ներդպրոցական կյանքին վերաբերվող այլ աշխատանքներին՝ դպրոցի նորոգման, սանիտարահիգենիկ պայմանների պահպանման, առարկայական կաբինետների կահավորման, դպրոցական կարգապահության ու այլ աշխատանքներին:

Ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում՝ վերոնշյալ և այլ դպրոցներում կատարված համակողմանի ստուգումների արդյունքները քննարկվել են դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում, շրջանային կրթության բաժինների խորհրդակցություններում, ԼՂՀ ԿՄՍ նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստում, որին մասնակցել են կրթության շրջանային բաժինների վարիչները, տնօրենները, առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովների նախագահները, ինչպես նաև վաստակաշատ մանկավարժներ:

Ստուգող հանձնախմբի ղեկավար, ԼՂՀ ԿՄՍ նախարարության տեսչական բաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Օնիկ Ասրյանի հաշվետվության ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ համաձայն կրթության զարգացման պետական ծրագրի (2000-2005թթ.) պահանջների, վերոհիշյալ և մյուս դպրոցների մանկավարժական կոլեկտիվների, տնօրենների կողմից բավականին մեծ աշխատանքներ են տարվել սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման և բարելավման ուղղությամբ: Հանրակրթական դպրոցներում տնօրենների եռանդուն գործունեության շնորհիվ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ միջնակարգ ընդհանուր կրթության պետական չափորոշիչի գործառույթներում կրթության բովանդակությունը և կրթական յուրաքանչյուր աստիճանի սովորողների պատրաստության մակարդակին ներկայացվող հիմնական պահանջներն իրագործելու ուղղությամբ: Ինչպես նշում է ԿՄՍՆ տեսչության բաժնի պետ Օ.Ասրյանը, հանրապետության կրթական հաստատությունները համարյա ապահովված են բոլոր առարկաների ուսումնական պլաններով, ծրագրերով, դասագրքերով, և դա հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին ունենալ օրինակելի թեմատիկ պլանավորումներ[73]:

Օ. Ասրյանի խոստովանությամբ, առանձնապես բավարար հիմքերի վրա է դպրոցների առարկայական մեթոդմիավորման աշխատանքների դրվածքը: Համարյա բոլոր դպրոցներում գործում են մեթոդմիավորումները՝ նույն առարկայի երեքից ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Դպրոցների տնօրենների(Բադարայի միջն. դպրոցի տնօրեն Ռիտա Մնացականյան, Ակնաղբյուրի միջն. դպրոցի տնօրեն Ժորա Մարգարյան, Վարդաձորի միջն. դպրոցի տնօրեն Ա.Սավադյան, Խանաբադի միջն. դպրոցի տնօրեն Զավեն Բեգլարյան և ուրիշներ) հաշվետվությունների ուսումնասիրությունները[74] ցույց է տալիս, որ դպրոցներում արդյունա-

վետ են գործում մեթոդմիավորումները, որոնք կազմակերպում են փնջային (միջդպրոցական) դասալսումներ, սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ: Ըստ հաշվետվության տվյալների, դպրոցներում ուսուցիչների ինքնակրթությունը իրականացվում էր երեք ուղղություններով՝ մանկավարժական, մասնագիտական և ընդհանուր զարգացվածության: Ուսուցիչների ինքնակրթությանը մեծ ուշադրություն էր դարձվում դպրոցներում: Ինչպես նշված է վաստակաշատ մանկավարժ Ա.Օհանջանյանի հաշվետվությունում (Մարտունու շրջանի Գիշու միջն. դպրոցի փոխտնօրեն), դպրոցում ուսուցչական կոլկտիվն աշխատում է «համալիր մոտեցում ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդիրներին» նշանաբանով[75]: Ուսուցիչների ինքնակրթության մշակումները պահվում են մեթոդմիավորումների մոտ: Նրանք պահում են թղթապանակ՝ «մանկավարժություն բոլորի համար» վերնագրով, որտեղ կարելի է գտնել տարբեր թեմաներից մշակումներ ու զեկուցագրեր: Հարկ է նշել, որ նմանատիպ արդյունավետ աշխատանքներ են տարվում նաև Մարտակերտի թիվ 1, Հաթերքի, Մեծ շենի, Կուսապատի, Մարտունու թիվ 1, Ճարտարի թիվ 1, Հադրութի թիվ 1, Մեծ Թաղերի, Տումու, Ասկերանի թիվ 1, Նորագյուղի, Շուշիի թիվ 1, թիվ 2, Քարին տակի, Հին շենի, Ստեփանակերտի թիվ 1, 2, 3, 5, 6, 7, 8, 10 դպրոցներում: Իհարկե, մյուս դպրոցներում համեմատաբար ևս կատարվում էին նմանատիպ աշխատանքներ, որն անհրաժեշտ խթան էր հանդիսանում ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման համար:

Ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք նաև, որ դպրոցների տնօրենները հատկապես մեծ նշանակություն են տալիս մանկավարժական խորհրդի գործունեությանը՝ նպատակ ունենալով բարձրացնել նրա դերն ու նշանակությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, ուսուցիչների ակտիվությունը և մեթոդամանկավարժական պատրաստվածությունը էլ ավելի բարձրացնելու գործում: Այս առումով օրինակելի է Զ.Բեգլարյանի (Ասկերանի շրջանի Խանաբադի միջն.դպրոցի տնօրեն), Ժ.Մարգարյանի (Ակնաղբյուրի միջն. դպրոցի տնօրեն), Ա.Խաչատրյանի (Մարտակերտի շրջանի Կուսապատի միջն.դպրոցի տնօրեն), Լ.Մարտիրոսյանի (Ստեփանակերտի թիվ 2 միջն. դպրոցի տնօրեն), Ա.Գրիգորյանի (Ստեփանակերտի թիվ 11 միջն. դպրոցի տնօրեն), Ա.Պողոսյանի (Ստեփանակերտի թիվ 7 միջն. դպրոցի տնօրեն) և ուրիշների կազմած՝ մանկավարժական խորհրդի աշխատանքային պլանը:

Գրեթե բոլոր դպրոցներում մանկավարժական խորհուրդների նիստերը (որոնց մասնակցել են սույն գրքի հեղինակները՝ Ա.Ա., Գ.Հ.) լրիվությամբ իրենց նպատակին են ծառայում, հիմնականում քննարկվում են քառորդային արդյունքները, առարկաների դասավանդման դրվածքը, դասվարների, դասղեկների, ըստ մասնագիտական առարկաների մեթոդմիավորումների կատարած աշխատանքների արդյունքները(դասալսումների, սեմինարների, մանկավարժական ընթերցումների կազմակերպումը), ուսուցիչների վերապատրաստման ու ատեստավորման, միջփնջային դասալսումների, ինչպես նաև արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հետ կապված այլ հարցեր: Դրվատանքի արժանի է այն, որ քննարկումների ժամանակ բացահայտված թերությունները ուսուցիչները ընդունում են առանց հակաճառելու: Իհարկե, թերությունների մեծ մասը նկատվում է երիտասարդ սկսնակ ուսուցիչների մոտ, իսկ նրանց կցված են դպրոցի փորձառու ուսուցիչները: Տարիների իրենց ուսանելի փորձը փոխանցելու նպատակով մեթոդական օգնություն են ցուցաբերում դասալսումների արդյունքները քննարկելիս:

Քննարկվող ժամանակաշրջանում ԼՂՀ ԿԳ նախարարության ուսանելի ձեռնարկումներից մեկն էլ հանրակրթական դպրոցներում մեթոդմիավորումների միջփնջային սեմինար խորհրդակցության, ուսուցիչների առաջավոր փորձի ուսումնասիրման , ընդհանրացման, ինչպես նաև այդ նպատակով համաքաղաքային, շրջանային դասալսումների, բաց դասերի և այլ միջոցառումների կազմակերպումն է, որը երկար ժամանակ անտեսվել է: Ակնհայտ է, որ կրթության բաժինների մեթոդկաբինետների լուծարումից հետո (1998թ.) այդ աշխատանքի ամբողջ ծանրությունն ընկավ դպրոցների առարկայական մեթոդմիավորումների վրա՝ սահմանափակվելով, սակայն, յուրաքանչյուրն իր դպրոցի շրջանակներում առավել շփվելու, առնչվելու, հաղորդակցվելու մյուս դպրոցների նույն առարկայի ուսուցիչների հետ:

Մեթոդմիավորումները որոշակի աշխուժություն են մտցրել ուսուցիչների հետ տարվող մեթոդական աշխատանքներում՝ ապահովելով դպրոցներում մեթոդամանկավարժական նորույթի պրոպագանդման, նպատակային և բաց դասերի կազմակերպման միջոցով առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման ու տարածման, ուսուցիչների ակտիվության բարձրացման, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացման ու ինքնակրթության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳ նախարարության ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Բ.Դավթյանի հաշվետվությունից, 2004-2005 ուս.տարում հանրապետության հանրակրթական դպրոցներում առարկայական մեթոդմիավորման նախագահների կողմից ժամանակին հրավիրվել են մեթոդմիավորման նիստեր, քննարկվել ծրագրամեթոդաբանական, մանկավարժական հարցեր, կազմակերպվել բազմապիսի և բազմաբնույթ միջոցառումներ, ցերեկույթներ, նպատակային դասալսումներ, բաց դասեր թե փորձառու և թե երիտասարդ ուսուցիչների մոտ, սեմինար պարապմունքներ, ընդհանրացվել և «Լուսարար» թերթում հրապարակվել է ուսուցիչների առաջավոր փորձի մասին հոդված:

«Լուսարարը»[76] հաղորդում է, որ Մարտունու շրջանի Գիշու, Խնուշինակի և Սպիտակաշենի մանկավարժական կոլեկտիվները հնարավորություն են ստանում միմյանց հաղորդելու իրենց փորձը, քննարկելու իրենց հուզող հարցերն ու խնդիրները: Այս անգամ բաց դասեր էին կազմակերպվել քիմիայից, աշխարհագրությունից, մայրենի լեզվից: Մասնակցեցին շրջանի տարվա լավագույն և ճանաչված ուսուցիչներ Ա.Օհանջանյանի և Ի.Բալայանի դասերին: Ստեղծագործող, եռանդուն, գործունյա ուսուցիչների նպատակն է աշակերտներին խոր և կայուն գիտելիքներ հաղորդել, նրանց մեջ դատողական ունակություններ զարգացնել: Մեթոդմիավորման հերթական նիստեր անցկացվեցին Սպիտակաշենում, Խնուշինակում և այլուր:

«Լուսարարը» նաև մեզ տեղեկացնում է, որ 2003-2004 ուս.տարվա Առաջածորի ենթաշրջանի փնջային մեթոդմիավորման ապրիլ ամսվա նիստը անց է կացվել Վանքի միջնակարգ դպրոցում, որին մասնակցում էին Առաջածորի, Ծմակահողի, Շահմասուրի, Գառնաքարի, Քոլատակի, Կիչանի և այլ գյուղերի դպրոցների առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովների անդամները, դպրոցների տնօրենները, գյուղապետերը, ԿԳ նախարարության առաջատար մասնագետները, շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչը, գլխավոր մասնագետները և ծնողներ: Փնջային նիստն անց է կացվել հետաքրքիր և բովանդակալից: Դպրոցի կոլեկտիվի նախաձեռնությամբ ու աշակերտների ուժերով կազմակերպվեց քիմիայի երախտավորներին նվիրված ցերեկույթ: Միջոցառմանը մասնակցող 50 երե-

խաներ պարգևատրվեցին հուշանվերներով[77]:

Նմանատիպ միջոցառումներ են կազմակրպվել նաև Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Հարգոմերի, Հաթերքի և այլ դպրոցներում: «Լուսարար» թերթի նույն համարում նշվում է նաև, որ 2004թ. ապրիլին Շուշիի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցում հրավիրվել էր Շուշիի երկու հանրակրթական՝ Խ.Աբովյանի և Մուրացանի անվան, Քարին տակի միջնակարգ դպրոցների ուսուցիչների փնջային սեմինար-խորհրդակցություն, որտեղ ուսուցիչները, դպրոցների տնօրենները, շրջվարչակազմի կրթության բաժնի, ԿԳ նախարարության ներկայացուցիչները հանդես եկան հայոց լեզվի և գրականության, պատմության, մաթեմատիկայի, քիմիայի, օտար լեզուների և այլ առարկաների դասերի արդյունավետության բարձրացման, կրթական համակարգի նոր բարեփոխումների մասին զեկուցումներով:

Նշենք նաև մի ուսանելի օրինակ. Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժինը (վարիչ՝ Ա.Ավանեսյան) դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների նկատմամբ վերահսկողությունն ավելի գործուն ու արդյունավետ դարձնելու, ուսուցիչների, դպրոցների տնօրենների պատասխանատվությունը բարձրացնելու, դպրոցական կյանքն ավելի հետաքրքիր ու բազմաբովանդակ դարձնելու համար վերակառուցված ձևով վերականգնել է մեթոդմիավորումների աշխատանքը, որը դարի 60-ական թվականներին մեծ նվաճումներ էր բերել դպրոցին: Շրջանում գործում է 10 մեթոդփունջ, որոնց արդյունավետ աշխատանքների մասին բերենք մի քանի կոնկրետ օրինակներ: Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի փաստաթղթերի ուսումնասիրությունից տեղեկացանք, որ յուրաքանչյուր ուսումնական տարում Ասկերանի և Նորագյուղի հենակետային դպրոցներն ընդգրկող մեթոդփնջերում բաց դասեր են կազմակերպվում: Դրանք ոչ միայն բաց կամ առաջավոր փորձի փոխանակման դասեր էին, այլև նորարարական: Ավելորդ չի լինի, եթե ընդգծենք, որ մի ժամանակ մենք կրկնում և հպարտանում էինք Մոսկվայի, Դոնեցկի, Լիպեցկի, Կիրովոգրադի մարզի և այլ դպրոցների ուսուցիչների փորձով և ձգտում տեսականորեն ծանոթանալ և կիրառել պրակտիկայում, այնինչ, մեր ազգային հայեցի կրթություն, դաստիարակություն տվող դպրոցում իրականացվում են նման ուսանելի փորձնական դասեր: Ասկերանի շրջանի մեթոդփնջում օրինակելի դաս է համարվել պատմության ուսուցչուհի Գայանե Սարգսյանի (Խանաբադի միջնակարգ դպրոց) «Հայկական հարցը Փարիզի հաշտության վեհաժողովում», Մելանյա Հովսեփյանի (Ասկերանի միջնակարգ դպրոց)՝ «Ընդհանուր պատմությունից ընդհանուր կրկնություն» և այլ դասեր[78]:

Վաստակաշատ մանկավարժ Մառլեն Շահրամանյանը, մասնակից լինելով բաց դասերին, մատնանշում է, որ հնարավոր չէ նկարագրել այն զգացումը, որ երկուստեք ունեցան թե երիտասարդ և թե տարեց ուսուցիչները: Երիտասարդ ուսուցչի համար դա երազանքին, նպատակին հասնելու միջոցառում էր, փորձառու ուսուցիչների համար՝ ավանդույթների վերականգնում, անցածի վերհիշում, լավագույն հուշերի արթնացում: Վաստակաշատ մանկավարժը իր «Ուրախ եմ՝ իմ սերունդը լավագույն փոխարինողներ ունի» հոդվածում[79] նշում է, որ նմանատիպ օրինակելի դասեր են կազմակերպվել նաև Ասկերանի թիվ 1, Նորագյուղի, Խանաբադի, Բալլուջայի և այլ գյուղերի դպրոցներում: Փորձառու մանկավարժը միաժամանակ նշում է, որ ընդհանրապես բոլորի մոտ էլ բացարձակորեն երևում է, որ դասը համեմվում է լրացուցիչ գրականությունից վերցրած նյութերով, որի շնորհիվ էլ գոհացուցիչ ու արդյունավետ է, որ նմանատիպ միջոցառումներին ներկա են լինում ծնողները, գյուղապետերը, կրթության բաժնի ներկայացուցիչները, նախարարության առաջատար մասնագետները:

Ուսանելի էր նաև Ասկերանի շրջանի Ավետարանոցի Իվան Աթայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նվարդ Բաղրյանի կազմակերպած բաց դասը 9-րդ դասարանում՝ «Սայաթ-Նովա» թեմայով, որին մասնակցում էին Ակնաղբյուրի, Ձրաղացների, Մադաթաշենի, Մոշխմհատի, Սարուշենի և այլ դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչներն ու ծնողները, շրջանի ժողկրթբաժնի վարիչը և ուրիշներ: Դասի արդյունքներն ընդհանրացնելիս շրջժողկրթբաժնի վարիչն ասաց. «Ուսուցչուհու մանկավարժական տակտը, կեցվածքը, առոգանությունը առանձին հմայք էին պարգևում»[80]:

Հետաքրքիր ու բովանդակալից էր հանրակրթական առարկաների նկատմամբ առանձնակի հակում ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ նրանց շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով ԿԳ նախարարության 2003-2004 ուս. տարում դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպումը: Ի դեպ, նշենք, որ երկար ընդմիջումից հետո առաջին առարկայական օլիմպիադան անց է կացվել 2000-2001 ուս. տարում, Ստեփանակերտում:

Օլիմպիադան դպրոցականների կյանքում ամենանշանակալից իրադարձություններից մեկն է: Այն տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաների հայտնաբերման և նրանց հետ անհատական աշխատանքի կազմակերպման լավագույն միջոց է, որը նպաստում է ուսումնական առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրությունների զարգացմանն ու այդ առարկաներից խոր և կայուն գիտելիքներ ստանալուն:

ԼՂՀ ԿԳ նախարարությունը, գիտակցելով առարկայական օլիմպիադայի դերն ու նշանակությունը, տարեցտարի ավելի մեծ ուշադրություն է դարձնում օլիմպիադայի դպրոցական, շրջանային (քաղաքային) և հանրապետական փուլերի նախապատրաստման ու անցկացման աշխատանքներին: Սկսած 2000թ., առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը սկզբունքորեն տարբերվեց իր նախորդից կազմակերպչական աշխատանքների անցկացման բարձր մակարդակով: Այդ մասին հրապարակայնորեն իրենց դրական կարծիքը հայտնեցին ԿԳ նախարարության առաջատար մասնագետները (Բ.Դավթյան, Ս.Դավթյան, Լ.Մարտիրոսյան, Ս.Պետրոսյան (ԱրՊՀ պրոֆեսոր), Կ.Արամյան (դոցենտ) և ուրիշներ), ուսուցիչները, դպրոցների ղեկավարները, կրթության շրջանային, քաղաքային բաժինների աշխատողները և այլ դիտորդներ:

Ուշագրավ է, որ նախարարության կողմից տարաբնույթ նախապատրաստական աշխատանքներ են կատարվել: Այսպես՝ 2002-2003 ուս. տարվա սկզբից դպրոցների ուսումնական պլաններում նախատեսված էին հատուկ ժամեր՝շնորհալի երեխաներին օլիմպիադային նախապատրաստելու համար: Առաջին անգամ մշակվեց ու տպագրվեց «Լուսարարում» ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի կանոնադրությունը: Օլիմպիադան անց է կացվել 10 առարկաներից՝ հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն: Օլիմպիադաներն անց են կացվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացված առարկայական օլիմպիադաների մարզային փուլի առաջադրանքներով: Ստեղծված են եղել բոլոր առարկաների գծով հանձնաժողովներ, որոնք ղեկավարել են ԱրՊՀ ամբիոնի վարիչներ ու ճանաչված դասախոսներ(Ս. Պետրոսյան, Ա. Ներսիսյան, Վ.Բալայան, Վ.Ավանեսյան):

ԼՂՀ բոլոր շրջանների ու քաղաքների դպրոցականների հետ միասին առաջին անգամ օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել են նաև Քաշաթաղի

և Շահումյանի շրջանների դպրոցականները: Օլիմպիադային ներկայացել է 198 աշակերտ, այդ թվում՝ 7-րդ դասարանի 53, 9-րդ դասարանի 62, 10-րդ դասարանի 82: ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից պարգևատրվել է 70 մասնակից[81]:

2003-2004 ուս.տարում կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունն առաջին անգամ անցկացրեց «Տարվա լավագույն դպրոց» ամենամյա մրցույթ, որի նպատակն է բացահայտել և խրախուսել ժամանակակից պահանջները բավարարող լավագույն դպրոցներին, ընդհանրացնել և տարածել այդ դպրոցների փորձը, դրանով իսկ նպաստել մատաղ սերնդի ուսուցման, դաստիարակության ու զարգացման կարևոր գործում դպրոցի հեղինակության, դերի ու նշանակության, ուսուցչի վարկի բարձրացման խնդիրներին:

Այսպիսով, վերը շարադրվածից երևում է, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում տասը տարիներին (1995-2005թթ.) հասարակական, տնտեսական, մշակութային կյանքի ընդհանուր աշխուժացման հետ միասին հանրապետությունում հատկապես կրթական համակարգը մեծ առաջընթաց ունեցավ: Ինչպես նշեցինք, Արցախյան գոյապայքարի ընթացքում մեծ ավերումների ենթարկվեց նաև կրթական համակարգը՝ բառիս բովանդակային և նյութական առումներով: Զինադադարի հաստատումից հետո նորանկախ հանրապետության ղեկավարության առաջնահերթ խնդիրը դարձավ կրթական համակարգի բնականոն գործունեության ապահովումը, որը պայմանավորված էր ինչպես տուժած դպրոցական շենքերի վերակառուցման, գույքով ապահովման, մանկավարժական մասնագետներով համալրման աշխատանքներով, այնպես էլ պետական բյուջեի և մարդասիրական օժանդակությունների գծով ստացվող միջոցների ներգրավմամբ:

Բավական է նշել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում, մեկ տասնամյակում, ԼՂՀ իշխանությունների հետևողական քաղաքականության շնորհիվ պետական բյուջեի և սփյուռքահայ կազմակերպությունների միջոցներով վերանորոգվել կամ կառուցվել են 150-ից ավելի դպրոցական շենքեր: Հարկ է նշել, որ ԼՂՀ կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագրի պահանջներին համապատասխան, 2004-2005 ուս.տարում ԿՄՍ նախարարության մշակած դպրոցաշինության ծրագիրը համարյա ավարտվել է[82]:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարության մշակած 2005-2010թթ. կրթության զարգացման նոր ծրագրի հիմնադրույթները, ԼՂՀ ԿՄՍ նախարարությունը ևս մշակել է նմանատիպ՝ ԼՂՀ կրթության զարգացման 2005-2010թթ. ռազմավարական ծրագիր, որից հետևում է հստակ կրթական մարտավարություն յուրաքանչյուր տարվա համար[83]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2005-2010 թվականներին ԼՂՀ կրթական համակարգը թևակոխեց զարգացման նոր՝ ավելի բարձր փուլ: Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում դպրոցաշինությունն առանձնապես ուժեղ թափ ստացավ: Յուրաքանչյուր ուսումնական տարում դպրոցների կապիտալ, ընթացիկ վերանորոգման և հիմնանորոգման, ինչպես նաև դպրոցական շենքերի կառուցման համար ծախսվում էին հսկայական միջոցներ, որոնք հատկացվում էին ինչպես պետության, այնպես էլ հայրենասեր բարերարների, «Համահայկական հիմնադրամի» կողմից: ԼՂՀ ԿՄՍ նախարար Կ.Աթայանը օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (2006-2007 ուս.տարվա օգոստոսի 28-29-ը, Ստեփանակերտ) իր զեկուցման մեջ խոսելով այդ մասին, փաստեց, որ հանրապետությունում դպրոցաշինությունը մեծ թափ է առնում: Յուրաքանչյուր ուսումնական տարում պետությունը 200 միլիոնից ավելի դրամ է հատկացնում դպրոցների վերանորոգմանն ու նոր շենքերի կառուցմանը: Դրա հետ հաշված

նաև բարերարների կողմից հատկացված հսկայական գումարները[84]:

Նախարարի զեկուցումը հիմնականում նպատակաուղղված էր «Ուսման որակի ապահովումը՝ նոր ուսումնականի գերխնդիր» հիմնահարցի վերլուծությանը: Նա նշեց, որ հանրապետության կրթական համակարգի կարևորագույն խնդիրն այսօր պետք է լինի ուսման որակի ապահովումը նոր տեխնոլոգիաների լայնորեն կիրառմամբ և հայ ազգային դպրոցի լավագույն ավանդույթների պահպանումը(այդ մասին մանրամասն կնշվի աշխատության երկրորդ գլխում):

Նախարարն ընդհանրացնելով հանրապետության կրթական համակարգի ձեռքբերումներն ու նվաճումները (1995-2005թթ.), մատնանշեց, որ 2006թ. վիճակագրական տվյալներով՝ Արցախի կրթական համակարգն ունի հետևյալ պատկերը: Այսպես, 2006-2007 ուս.տարում հանրապետությունում գործում էին 236 հանրակրթական դպրոցներ, որտեղ սովորում էին 21393 աշակերտներ, որոնց կրթության և դաստիարակության գործով զբաղված էին ավելի քան 4242 ուսուցիչներ[85]: Իր զեկուցման մեջ նախարարը նաև նշեց, որ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դպրոցներում ուսումնանյութական բազայի ստեղծմանը: Դժվար է արդի կրթական համակարգի հիմնախնդիրները լուծել առանց նյութատեխնիկական բազայի, ուսումնական կաբինետների ստեղծման: Այդ ուղղությամբ հանրապետության շրջանների դպրոցներում բավականին մեծ աշխատանքներ են տարվել: Օրինակ, Մարտակերտի շրջանի դպրոցներում ստեղծվել է 53, Ասկերանում՝ 13, Մարտունու շրջանում՝ 40, Շահումյանում՝ 16, Քաշաթաղում՝ 22, Շուշիում՝ 5, Հադրութի շրջանում՝ 20, Ստեփանակերտում՝ 24 ուսումնական կաբինետներ, որոնք կահավորվել են անհրաժեշտ սարքավորումներով, համակարգիչներով և դիդակտիկ նյութերով[86]:

Այժմ տեսնենք, թե նախորդ շրջանի համեմատ 2005-2010թթ. ինչպիսի կարգավիճակում էր գտնվում հանրապետության կրթական համակարգը (նկատի ունենք միայն հանրակրթական դպրոցները, քանի որ մյուս հաստատությունների մասին նշվելու է առանձին գլուխներում), միաժամանակ ցույց տանք նաև համակարգում իրականացվող բարեփոխումներն ու նորամուծությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2006-2007 ուս.տարվա նախաշեմին հանրապետության բոլոր շրջաններում և մայրաքաղաքում անցկացվեցին ուսուցիչների ավանդական օգոստոսյան խորհրդակցություններ, որոնց մասնակցել են ԼՂՀ ԿՄՍ նախարարության ղեկավարները, շրջանային կրթության բաժինների վարիչները: Նրանք իրենց հաշվետվություններում հանգամանալից ներկայացրին իրենց շրջանների կրթության, մշակույթի և սպորտի բաժինների մեկ տարվա կատարած աշխատանքները և նոր ուս.տարվա անելիքները:

Այսպես՝ օրինակ, Մարտակերտի շրջվարչակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ Ռուբեն Հարությունյանի ներկայացրած հաշվետվության տվյալների (նկատի ունենք 2006-2007 ուս.տարվա օգոստոսի 22-24-ին շրջանի ուսուցչական խորհրդակցությունում) համաձայն՝ գործել են 40 հանրակրթական դպրոցներ, որից 28-ը՝ միջնակարգ, 7-ը՝ 8-ամյա և 5-ը՝ տարրական, որոնցում ընդգրկված էին 2822 աշակերտ: Առաջին դասարան է ընդգրկվել 476 երեխա, որոնցից 188-ը՝ 6 տարեկան: 8-րդ դասարանն ավարտել է 244 աշակերտ, լրիվ միջնակարգ կրթություն է ստացել 242 աշակերտ: Երկու դպրոց՝ Աղաբեկալինջում և Նոր Կարմիրավանում, տարրականից վերակազմավորվել է 8-ամյակի, Մաղավուզի և Կուսապատի դպրոցների բաժանմունքներ են գործել Վարնկաթաղում և Մեհմանայում: Բաժնի վարիչի հաշվետվությունում մատնանշվում է նաև, որ շրջանի 40 դպրոցներից 36-ը ենթարկվել է ընթացիկ վերանորոգման: Շահագործ-

ման է հանձնվել Մատաղիսի միջնակարգ դպրոցի շենքը՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով, կահույքով և լաբորատոր սարքավորումներով, տեղադրվել է վերջին մակնիշի 10 համակարգիչ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այս ամենը կատարվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի Կանադայի մասնաճյուղի և ՀՀ ԳԱԱ միջոցներով[87]: Ըստ շրջանային կրթության բաժնի դպրոցական տեսուչ Ա.Մուրադյանի տեղեկատվության, վերանորոգման մեծ աշխատանքներ են կատավել Հաթերքի դպրոցում: Համայնքի 237 երեխայի միահերթ ուսուցումը կազմակերպվել է լավագույն ձևով նորոգված նոր դպրոցական կահույքով կահավորված դասասենյակներում: Նմանատիպ աշխատանքներ են կատարվել Մարտակերտի թիվ 1, Մատաղիսի, Թալիշի, Զագլիկի, Մոխրաթաղի, Ճանկաթաղի, Նոր Սեյսուլանի դպրոցներում: Իսկ բարերար Լևոն Հայրապետյանի միջոցներով Վանքում կառուցվել է դպրոցական նոր շենք՝ ժամանակակից բոլոր հարմարություններով: Սփյուռքահայության հանգանակություններով տիպային դպրոցական շենքեր են կառուցվել Վերին Հոռաթաղի և Կոճողոտի համայնքներում:

Ըստ Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Սլավա Պետրոսյանի հաշվետվության տվյալների (հաշվետվությունը ներկայացրել է 2006-2007 ուս.տարվա օգոստոսի 25-26-ին շրջանի ուսուցչական խորհրդակցությունում), նախորդ տարիների համեմատ 2006-2007 ուս.տարում շրջանում ընդլայնվել է դպրոցական ցանցը: Գործող 40 հանրակրթական դպրոցներից 28-ը միջնակարգ է, 7-ը՝ 8-ամյա և 5-ը՝ տարրական: Դպրոցների 350 դասարանների կոմպլեկտներում ընդգրկված են 2788 աշակերտ: Դասարան-կոմպլեկտների միջին խտությունը կազմել է 11-12 երեխա: Շրջանի դպրոցներում աշխատել է 831 ուսուցիչ, որոնցից 139-ը զբաղեցրել են վարչական կամ մանկավարժական հաստիքներ:

Բաժնի վարիչի հաշվետվության տվյալներով, 2003-2007թթ. շրջանում հիմնանորոգվել են 5 դպրոցական շենքեր, շահագործման հանձնվել 4 նոր դպրոցական շենքեր, 19 դպրոց ապահովվել է նոր գույքով, 5 դպրոց ստացել է ֆիզիկայի և քիմիայի լաբորատոր սարքավորումների կոմպլեկտներ: Շրջանի դպրոցներում կահավորվել և գործել են 44 առարկայական, ինչպես նաև 27 համակարգչային կաբինետներ, 64 առարկայական մեթոդմիավորումներ[88]: Բոլոր դպրոցներն ընդգրկվել են յոթ փնջային մեթոդմիավորումներում, որոնք կանոնավոր կազմակերպել են առաջավոր փորձի ուսումնասիրման և փոխանակման աշխատանքները: Համարյա շրջանի դպրոցները հնարավորության սահմաններում գործնականորեն ապահովվել են դասագրքերով, ուսումնական ծրագրերով, մեթոդական ուղեցույցներով և անհրաժեշտ այլ փաստաթղթերով:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնաթերթի՝ «Լուսարար»-ի 2007թ. սեպտեմբերի 8-ի համարում տպագրված՝ Հադրութի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Էդիկ Պետրոսյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ շրջանում գործել են 30 հանրակրթական դպրոցներ՝ 2025 աշակերտների ընդգրկմամբ, որոնցում դասավանդում էին 478 ուսուցիչներ: Բացի այդ, ուսումնական տարում շրջանի դպրոցներում գործել են նաև 4 նախադպրոցական խմբեր՝ 80 երեխայի ընդգրկմամբ: 2006-2007 ուս.տարվա օգոստոսի 26-ին կայացած ուսուցչական խորհրդակցությունում բաժնի վարիչը իր հաշվետվության մեջ նաև նշեց դպրոցաշինության ասպարեզում կատարված բավականին արդյունավետ աշխատանքի մասին: Այսպես, օրինակ, 2005-2007 թթ. հիմնանորոգման աշխատանքներ են ծավալվել Քյուրաթաղի, Դրախտիկի, Ազոխի, Տողի, Բանաձորի, Թաղասեռի, Առաքելի, Ծամձորի, Հին Թաղերի, Խծաբերդի և այլ դպրոցներում: Կառուցվել են Հակակուի, Արևշատի նոր դպրոցական շենքեր, Ազոխի երկու խմբանոց մանկա-

պարտեզը: 2007-2008 ուս.տարվա դպրոցների վերանորոգման համար բաժինը տրամադրել է 14 մլն դրամ, պետբյուջեից՝ 15 մլն դրամ, իսկ Համահայկական հիմնադրամի կողմից՝ 22 մլն դրամ[89]:

Կրթության բաժնի վարիչը իր հաշվետվության մեջ ներկայացրեց նաև ուսումնական տարում կրթության բաժնի դպրոցական տեսուչների կողմից կատարված աշխատանքները, որոնք գնահատվել են ըստ պատշաճի: Այսպես, օրինակ, շրջանի դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման դրվածքը ստուգելու նպատակով դպրոցական տեսուչների և ԼՂՀ ԿՄՍ նախարարության առաջատար մասնագետների համատեղ ուժերով թեմատիկ և ֆրոնտալ ստուգման են ենթարկվել Այգեստանի, Նորաշենի 8-ամյա, Վարդաշենի, Կարմրակուճի տարրական, Թաղուտի, Մեծ Թաղերի միջնակարգ, Ուխտաձորի, Ակնաղբյուրի, Բանաձորի, Ծամձորի, Խանձաձորի, Արևշատի, Առաքելի և այլ դպրոցներ, մեթոդական օգնություն է ցուցաբերվել ուսուցիչներին, տնօրինությանը: Տեսչավորման արդյունքները քննարկվել են շրջանի կրթության բաժնի խորհրդի նիստում՝ ԼՂՀ ԿՄՍ նախարարության առաջատար մասնագետների, փոխնախարար Ս.Ասրյանի մասնակցությամբ, լսվել են նաև դպրոցների տնօրենների հաշվետվությունները 2005-2007 ուս.տարում կատարած աշխատանքների մասին:

Դպրոցական տեսուչների նախաձեռնությամբ և անմիջական վերահսկողությամբ շրջանի դպրոցներում բավականին աշխատանք է տարվել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման ու մասսայականացման, ֆիզկուլտուրա և նախնական զինվորական պատրաստվածություն (ՆԶՊ) առարկաների դասավանդման որակի բարձրացման, ռազմահայրենասիրական դաստիարակության, պարզ տիպի մարզական խաղահրապարակների վերանորոգման ու պատրաստման, մարզադահլիճների հիմնանորոգման, որոշակի քանակի մարզական գույքի ձեռքբերման ուղղությամբ:

Աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության գործը միշտ եղել է շրջանի կրթության բաժնի ուշադրության կենտրոնում: Ենթաշրջանի 8 թիմի և շրջանային 5 թիմի մասնակցությամբ անց են կացվել «Արծվիկ» ռազմահայրենասիրական խաղերի առաջնություններ 117 աշակերտների մասնակցությամբ: Ժամանակին կազմակերպվել և անց են կացվել երկօրյա գարնան-դաշտային պարապմունքներ 10-րդ դասարանցիների համար: Շրջանային կրթության բաժնի կողմից անց են կացվել «Արիության դասեր» շրջանի դպրոցներում և զորամասերում: Ըստ ժամանակացույցի կազմակերպվել են հանդիպումներ ՊԲ զորամասերի զինծառայողների և կցված ուսումնական հաստատությունների սովորողների հետ: Հաճախակի են կազմակերպվում և անցկացվում մարզական զանգվածային միջոցառումներ Հաղթանակի, Երեխաների պաշտպանության միջազգային օրվա, Եռատոնի, Հադրութ քաղաքի, ԼՂՀ անկախության օրերի կապակցությամբ: Ի դեպ, նշենք, որ նմանատիպ միջոցառումներ անց են կացվում նաև հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում (այդ մասին մանրամասն կնշվի աշխատության երկրորդ գլխում):

Ինչպես տեղեկացանք շրջանային կրթության բաժնի տեսուչների հաշվետվություններից, պարբերաբար վերահսկվում է նաև շրջանի դպրոցներում գործող 22 փնջային առարկայական մեթոդմիավորման գործունեությունը:

Ըստ ենթաշրջանների՝ մեթոդմիավորման նիստերում ընդգրկված են շրջանի բոլոր դպրոցները, անց են կացվում փնջերի նպատակային պարապմունքներ, լսվում ուսումնական գործընթացի կատարելագործման վերաբերյալ հիմնահարցեր, հրավիրվում լիագումար նիստեր՝ մասնակից դարձնելով շրջանի կրթության

բաժնի և ԼՂՀ ԿՄՍ նախարարության առաջատար մասնագետներին (փնջային մեթոդմիավորումների գործունեությունը կներկայացվի աշխատության երկրորդ գլխում):

Ասկերանի շրջանի հանրակրթական դպրոցների ցանցի ընդլայնման և նրանց նյութատեխնիկական բազայի հարստացման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու որակի բարձրացման մասին իր հաշվետվությունում ներկայացնում է կրթության բաժնի վարիչ Արվիդ Ավանեսյանը՝ 2006-2007 ուս.տարվա օգոստոսի 26-27-ին կայացած ուսուցչական խորհրդակցությունում: Նրա տվյալներով նախորդ ուս.տարվա համեմատությամբ շրջանում գործել են 38 հանրակրթական դպրոցներ (34-ի փոխարեն), որից 25-ը՝ միջնակարգ (22-ի փոխարեն), 10-ը՝ ութամյա, 3-ը՝ տարրական: Գործել են նաև հինգ մասնաճյուղեր Խրամորթի և Նախիջևանիկի միջնակարգ դպրոցներին կից: Նշված ուս.տարում շրջանի դպրոցներում աշակերտների թիվը հասնում էր 2643-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 647-ի: Այդ ուս.տարում դպրոցները տվել են 517 շրջանավարտ, որոնցից 267-ը ստացել են միջնակարգ, 250-ը՝ ութամյա կրթություն[90]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շուշիի շրջանի դպրոցների ընդհանուր վիճակի և ներքին կյանքում կատարվող փոփոխությունների մասին պարբերաբար հաղորդումներ էին տալիս «Լուսարար» թերթի տարբեր համարներում տպագրված՝ կրթության բաժնի վարիչ Վյաչեսլավ Գաբրիելյանի և դպրոցական տեսուչների հաշվետվությունները: 2006-2007 ուս.տարվա կատարած աշխատանքների մասին Վ. Գաբրիելյանի հաշվետվությունը տպագրվել է «Լուսարար» թերթի 2007թ. թիվ 18-ում: Հաշվետվության տվյալներով՝ ուս.տարում շրջանում գործել են 6 միջնակարգ և 1 ութամյա դպրոցներ՝ 699 աշակերտի ընդգրկմամբ, դասավանդել է 144 ուսուցիչ, որոնց գերակշռող մասն ուներ բարձրագույն կրթություն: Ուսումնական տարում շրջանի դպրոցներից 12 աշակերտ մասնակցել է առարկայական օլիմիադաների հանրապետական փուլին՝ հասնելով դրական արդյունքների: Սակայն ծայրամասային գյուղերի դպրոցներում առկա է բավականին տխուր պատկեր: Օրինակ՝ Հին շենի միջնակարգ դպրոցում 2006-2007 ուս.տարում գործել է 5 դասարան-կոմպլեկտ՝ 22 աշակերտի ընդգրկմամբ, որոնց դասավանդում էր 9 ուսուցիչ: Հարկ է նշել, որ քիմիա-կենսաբանություն և օտար լեզու առարկաները դասավանդվել են ոչ մասնագետների կողմից: Ավարտական վկայական ստացած 4 շրջանավարտներից 3-ն ընդունվել է բուհ, ընդ որում 2-ը՝ պահանջագրերով, օտար լեզու և անասնաբուժություն մասնագիտություններով: Դպրոցում հիմնականում հաջողությամբ է իրականացվում 8-ամյա կրթությունը: Շրջանում կառուցվել են երկու նոր դպրոցական շենք՝ Եղցահողի և Բերձորի համայնքներում: Հիմնանորոգվել է Մեծ շենի դպրոցը, որի 105-րդ տարեդարձը նշվել է 2007թ. սեպտեմբերի 1-ին: Ափսոսանքով պետք է նշել, որ խորհրդային շրջանում այդ դպրոցում սովորում էին 60-ից ավելի աշակերտներ (նախախորհրդայինում՝ 32), իսկ 2006-2007 ուս.տարում սովորում էր 13 աշակերտ, դասավանդում 5 ուսուցիչ: Բացասական ազդեցություն է ունեցել գյուղի բնակչության արտագաղթը:

Շրջանի ուսուցչական օգոստոսյան խորհրդակցությունում բաժնի վարիչը հատկապես անդրադարձավ հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման օրակարգային հարցին՝ կարևորելով ռազմահայրենասիրական և աշխատանքային դաստարակության առաջնահերթությունը: Նա գոհունակություն հայտնեց այն առիթով, որ մայիսին կայացած «Արծվիկ» ռազմամարզական խաղերում Շուշիի Խ.Աբովյանի անվան դպրոցի թի-

մը զինղեկ Ռ.Խաչատրյանի ղեկավարությամբ գրավել է 3-րդ պատվավոր տեղը, որը շրջանի ամենալավ արդյունքն է նման խաղերում: Սակայն նշենք, որ մտահոգիչ է աշխատանքային դաստարակության դրվածքը, դպրոցներին կից հողամասերն ու այգիները վաղուց դադարել են ոչ միայն դպրոցի համար եկամտի աղբյուր լինելուց, այլև չեն կատարում իրենց հիմնական՝ աշխատանքային դաստարակության վայր լինելու խնդիրը, ինչը խորհրդային շրջանում բարձր հիմքի վրա էր դրված:

Ուսուցչական խորհրդակցությունում ելույթներով հանդես եկան դպրոցների տնօրենները, վաստակաշատ ուսուցիչները: Նրանք անդրադարձան կրթական նոր համակարգում իրականացվող բարեփոխումներին, ընդգծեցին ձեռքբերումներն ու նվաճումները, միաժամանակ մատնանշեցին տեղ գտած թերություններն ու բացթողումները: Հատկապես անդրադարձան երեխաների դաստիարակության գործընթացում եղած հիմնախնդիրներին և հանդես եկան առաջարկություններով:

Փաստագրական տվյալներից տեղեկանում ենք, որ 2007թ. փետրվարի 23-24-ին ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը, նախարար Լ.Մկրտչյանի գլխավորությամբ, գտնվում էր Արցախում: Նպատակը երկու հանրապետությունների կրթական գերատեսչությունների հերթական համատեղ խորհրդակցություն անցկացնելն էր: Խորհրդակցությունը կայացավ Քաշաթաղի շրջանի Կովսականի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցում, որին ներկա էին ՀՀ կրթության ազգային ինստիտուտի տնօրեն Ն.Ղուկասյանը, ՀՀ ԿԳ փոխնախարար Բ.Եսայանը, ԼՂՀ ԿԳ նախարարը, փոխնախարարը, նախարարության գլխավոր մասնագետները, շրջանային կրթության բաժինների վարիչները և այլ անձինք: Քննարկվեցին երկու հանրապետությունների կրթական համակարգերում իրականացվող բարեփոխումների ծրագրերը, 12-ամյա կրթության անցման և դպրոցաշինության հետ կապված բազմաբնույթ հարցեր: Կրթական համակարգում տեղի ունեցող բովանդակային լուրջ փոփոխությունները, ըստ Լ.Մկրտչյանի, հույժ կարևոր են, քանի որ ուղղված են համակարգի առողջացմանը և միջազգային ասպարեզում մեր կրթության որակը ճանաչելի և ընդունելի դարձնելուն:

Խորհրդակցությունում Քաշաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ (ԿՄՍԵ) Կարեն Գրիգորյանը ներկայացրեց շրջանի վերաբնակեցվող գյուղերի դպրոցներում տարվող աշխատանքները: Ըստ զեկուցագրի տվյալների, 2002-2005թթ. շրջանում գործել են 40, իսկ 2006-2007 ուս.տարում՝ 49 դպրոցներ, Բերձորի քաղաքային մանկապարտեզը, գիշերօթիկը, սպորտի, արվեստի և երաժշտական դպրոցները, քաղաքային գրադարանը, երկրագիտական թանգարանը և պատկերասրահը: Ի դեպ, նշենք, որ վերաբնակեցման ընթացքում Քաշաթաղի լավագույն ժամանակաշրջանը եղել է 2002թ., երբ գործել է 54 դպրոց՝ 2000-ից ավելի աշակերտներով: Սակայն կենցաղային վատ պայմանները 2003-2006թթ. նպաստել են բնակչության արտահոսքին:

Ուս. տարում շրջանի դպրոցներում սովորել են 1620 աշակերտ, աշխատել 582 ուսուցիչ, որոնց 60 տոկոսը ուներ բարձրագույն մանկավարժական կրթություն, իսկ մյուսները՝ բարձրագույն տեխնիկական կամ միջնակարգ մասնագիտական կրթություն: 10 տոկոսը կազմում էին բարձր կուրսերի ուսանողները: Այն ամենին, ինչ տեղի էր ունենում ՀՀ և ԼՂՀ կրթական համակարգում, հաջողությամբ մասնակցում էին շրջանի կրթօջախները: Ստուգայցեր ու ստուգումներ են կազմակերպվել դպրոցներում. արդյունքները եղել են գոհացուցիչ:

Ըստ բաժնի վարիչի տվյալների, «Հայ կրթական հիմնարկություն» բարեգոր-

ծական կազմակերպության ուժերով հիմնանորոգվել կամ նորոգվել են 11-ից ավելի համայնքային դպրոցներ[91]: Բերձորի մանկապարեզ հաճախում էր 70 երեխա, գիշերօթիկ դպրոցը՝ 35 աշակերտ: Երաժշտական դպրոցի 11 բաժանմունքներում սովորում էին 120 երեխաներ, որոնք մասնակցելով ԼՂՀ-ում և ՀՀ-ում կազմակերպված մրցույթներին, բազմիցս արժանացել են մրցանակների:

Ուշագրավ է նշել նաև այն նախաձեռնությունը, որը ցուցաբերել են մանկավարժական կոլեկտիվները: Այսպես՝ Բերձորի նորաստեղծ թանգարանում ցուցադրվում են դպրոցականների, մանկավարժական կոլեկտիվների, շրջանի կրթության բաժնի աշխատողների և այլ անձանց կողմից հայտնաբերված հնագիտական արժեք ունեցող իրեր, որոնք ապացուցում են նրա հայկական լինելը: Պատկերասրահում ցուցադրված են ժամանակակից և ավելի վաղ շրջանի հայ նկարիչների մոտ 300 գործեր:

Նույն ուսումնական տարում Շահումյանի շրջանում գործել են 15 հանրակրթական դպրոցներ, որոնցից 9-ը՝ միջնակարգ, 4-ը՝ ութամյա, 2-ը՝ տարրական: Դպրոցներում սովորել են 1250 աշակերտ, դասավանդել 322 ուսուցիչներ: Բացի այդ, շրջանում գործել են նաև երաժշտական, սպորտի, արվեստի դպրոցներ, քաղաքային գրադարան:

«Լուսարար» թերթի 2007թ. թիվ 18-ում տպագրված՝ Ստեփանակերտի քաղաքպետարանի ԿՄՍ բաժնի վարիչ Կ.Մարգարյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2006-2007 ուս.տարում բաժնի ենթակայության տակ գործել են 12 հանրակրթական միջնակարգ դպրոցներ,1 նախադպրոցական հիմնարկ՝ 5 խմբով, 150 երեխայի ընդգրկմամբ, 1 մանկական ստեղծագործության կենտրոն՝ 90 խմբով և 950 երեխայի ընդգրկմամբ, 1 սպորտի դպրոց՝ 27 խմբով և 345 երեխայի ընդգրկմամբ, 1 արվեստի դպրոց՝ 3 բաժնով և 350 երեխայի ընդգրկմամբ, 1 երաժշտական դպրոց՝ 9 բաժնով և 446 երեխայի ընդգրկմամբ, 1 պատկերասրահ՝ 366 գործերով (318 նկար և 48 քանդակ) և 1 քաղաքային գրադարան (Մուրացանի անվան)՝ 55534 կտոր գրականությամբ:

Ըստ հաշվետվության տվյալների, ուսումնական տարվա սկզբին 12 հանրակրթական դպրոցներում կոմպլեկտավորվել է 326 լրակազմ դասարան՝ 6793 սովորողի ընդգրկմամբ, որոնց դասավանդել են 993 ուսուցիչ-մասնագետներ[92]: Ուս.տարին նշանավորվել է նրանով, որ միաժամանակ կատարվել է երկու 1-ին դասարանների ընդունելություն՝ 6 և 6-5 տարեկանների, վերջինով հիմք դնելով ուսուցման 12-ամյա կրթակարգին: Հանրակրթական դպրոցներում (նկատի ունենք նաև մյուս շրջաններում) գործել են 6-5 տարեկանների (եռամյա) 30 դասարան՝ 654 և 6 տարեկանների (քառամյա) 16 դասարան՝ 282 աշակերտների ընդգրկմամբ: Ըստ բաժնի վարիչի տվյալների, 2006-2007 ուս.տարում Ստեփանակերտի դպրոցների ավարտական 8-րդ դասարանների 639 աշակերտներից 603-ին բաց է թողնվել քննության և տրվել 8-ամյա (հիմնական) կրթության վկայական, այդ թվում՝ գերազանցության նշումով՝ 43 աշակերտի: Ավարտական՝ 10-րդ դասարանների 820 աշակերտներից 804-ին տրվել է միջնակարգ (լրիվ) կրթության ատեստատ, այդ թվում հատուկ նմուշի՝ մեկ հոգու: Ուսումնական տարվա արդյունքներով (ըստ գնահատականների) 21 մեդալի հավակնորդներից հայտ է ներկայացրել 4-ը:

Կրթության բաժնի վարիչի հաշվետվությունում նշվում է նաև, որ ժամանակին մայրաքաղաքի կրթական հաստատություններ են հասցվել ուսումնական ծրագրեր, մեթոդական գրականություն, դասագրքեր, ամսագրեր, լաբորատոր սարքավորումներ և այլն: Դպրոցներին են տրամադրվել քիմիայի 10, ֆիզիկայի 11 լաբո-

ռատորիա և սարքավորումներ, 14362 կտոր գիրք, որից 745-ը առարկայական նոր ծրագրեր, մեթոդական գրքեր և ամսագրեր: 2006-2007 ուս.տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում գործել են 127 (որից 26-ը քաղաքային) վճարովի առարկայական մեթոդմիավորումներ[93]:

Կ.Մարգարյանը իր հաշվետվության մեջ ընդգծում է նաև առարկայական օլիմպիադաներում դպրոցականների ձեռք բերած հաջողությունների մասին: Այսպես՝ վերոնշյալ ուս.տարում կրթության բաժնի ենթակայության տակ գտնվող դպրոցականների առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլում հաղթող ճանաչված 366 աշակերտ մասնակցել է քաղաքային փուլի 50 օլիմպիադայի, որտեղ 57 աշակերտ գրավել են մրցանակային տեղեր (15,6 տոկոս), իսկ 2005-2006 ուս.տարում՝ 15,9 տոկոս, մասնակիցների 39,6 տոկոսը (145 աշակերտ) ստացել է 8-ից ցածր միավոր, իսկ 38,6 տոկոսը (134 աշակերտ)՝ «3» գնահատական, որը համարժեք է 8-13 միավորի: Այսինքն՝ դպրոցներից օլիմպիադայի քաղաքային փուլին ներկայացած աշակերտների 76,2 տոկոսը(279 աշակերտ) ցուցաբերել է միջին և դրանից ցածր առաջադիմություն[94]: Ի դեպ, նշենք նաև, որ այդ ուսումնական տարում ՀՀ դպրոցականների օլիմպիադայի եզրափակիչ փուլում հայոց լեզու, պատմություն և մաթեմատիկա առարկաներից հաջողություններ են ձեռք բերել Արցախի դպրոցականները: Նկատի ունենք Մարտակերտի թիվ 1, Մարտակերտի շրջանի Կուսապատի, Հաթերքի, Վաղուհասի, Մեծ շենի, Մաղավուզի, Ասկերանի միջնակարգ դպրոցի, Մարտունու թիվ 1, Ճարտարի, Գիշու, Ստեփանակերտի թիվ 1, 2, 5 դպրոցների աշակերտներին, որոնք արժանացել են պատվոգրերի:

Քննարկվող ժամանակաշրջանում հանրապետության կրթական համակարգում ընթացող վերափոխումներին զուգընթաց, ԿՄՍ նախարարության կարևոր ձեռնարկումներից մեկն էլ եղավ ուսուցիչների, տնօրենների աշխատանքի ըստ արժանվույն գնահատումը, որը դրականորեն է անդրադառնում ուսուցչի մասնագիտական աճի ու զարգացման վրա: 2005-2006 ուս.տարում առաջին անգամ հանրապետությունում անց է կացվել «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի քաղաքային փուլ: Մրցույթ, որը նպաստում է առարկայական խոր պատրաստություն ունեցող, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչների բացահայտմանը, նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձի տարածմանը, հասարակության մեջ ուսուցիչ-անհատի հեղինակության բարձրացմանը: Քաղաքային փուլի արդյունքներով մայրաքաղաքի թիվ 10 դպրոցի դասվար Գալյա Գրիգորյանի մանկավարժական փորձը ճանաչվել է տարվա «Լավագույն մանկավարժական փորձ» և ներկայացվել մրցույթի 2-րդ՝ հանրապետական փուլին, որտեղ և հաղթող է ճանաչվել ու պարգևատրվել ԼՂՀ ԿՄՍ նախարարության կողմից: Իսկ թիվ 2 միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Նունե Բեգլարյանի մանկավարժական փորձը քաղաքային փուլի արդյունքներով գնահատվել է ըստ «Առարկայի իմացության մակարդակը և նյութը փոխանցելու վարպետությունը» անվանակարգի, պարգևատրվել կրթության բաժնի պատվոգրով:

Հանրապետության դպրոցներում առաջին անգամ կազմակերպվել ու անց են կացվել «Լավագույն զինղեկ», «Լավագույն աշակերտ» մրցույթները, որոնց արդյունքներով Մարտակերտի թիվ 1, Կուսապատի, Վաղուհասի, Հաթերքի, Մոխրաթաղի, Ասկերանի շրջանի Այգեստանի, Բաղարայի, Նորագյուղի, Մարտունու շրջանի Սոսի, Գիշու, Ղուզե Ճարտարի, Մաճկալաշենի, Շեխերի, Հադրութի թիվ 1, Տումու, Տողի, Մեծ Թաղերի, Ստեփանակերտի թիվ 1, 2, 3, 5, 7, 10 միջնակարգ

դպրոցների զինղեկները ճանաչվել են «Տարվա լավագույն զինղեկ», իսկ նշված և Շուշիի թիվ 1, 2, Քարին տակի դպրոցների աշակերտները, թվով 12 հոգի, ճանաչվել են «Տարվա լավագույն աշակերտ» և պարգևատրվել ԿՄՍ նախարարության պատվոգրերով:

2006-2007 ուս.տարում առաջին անգամ անց է կացվել նաև «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի շրջանային, քաղաքային, հանրապետական փուլ, որի արդյունքներով Մարտակերտի թիվ 1, Շուշիի թիվ 2, Ասկերանի թիվ 1, Մարտունու թիվ 1, Հադրութի թիվ 1, Ստեփանակերտի թիվ 1, 2, 7 դպրոցները հաղթող են ճանաչվել հանրապետական փուլում: Դպրոցները ճանաչվել են ուսումնադաստիարակչական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման գործում որպես «Տարվա հանրապետության լավագույն դպրոց» և պարգևատրվել համապատասխան անվանակարգով:

Վերոնշյալ ուսումնական տարում ԼՂՀ ԿՄՍ նախարարության հանձնարարությամբ հանրակրթական դպրոցների սովորողների ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով կազմակերպվել է արդեն ավանդույթ դարձած ստեղծագործական շարադրությունների մրցույթ՝ «Մեր հայրենիքը մենք պիտի պաշտպանենք» թեմայով, նվիրված Մայիսյան եռատոնին, որին մասնակցած 166 աշակերտներ գրավել են մրցանակային տեղեր, պարգևատրվել ԿՄՍՋ բաժնի, ԼՂՀ պաշտպանության և ԼՂՀ ԿՄՍ նախարարությունների պատվոգրերով, դիպլոմներով ու դրամական պարգևներով:

Այսպիսով, հանրակրթական դպրոցներում ուսուցիչների աշխատանքի, սովորողների ուսումնահիմնական գործունեության գնահատման օբյեկտիվության համապատասխանեցումը նրա մասնագիտական հնարավորությունների հետ, պարգևատրությունների բաժանման արդյունավետությունը կարևոր պայմաններ են թե ուսուցիչների և թե աշակերտների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Հատկապես կարևոր է նշել նախարարության, կրթության շրջանային բաժինների այն ուշագրավ նախաձեռնությունը, որ առանձնահատուկ ուշադրություն դարձվեց սովորողների ուսման առաջադիմության, աստեղծագործական աշխատանքի գնահատմանը, և դա մեծ ոգևորություն առաջացրեց սովորողների մոտ՝ ըմբռնելով ուսման կարևորությունն ու անհրաժեշտությունը, առանց որոշակի շահագրգռվածություն ու հետաքրքրություն ձեռք ցուցաբերելու, սոսկ կատարում, իրենց պարտականությունները:

Պետք է հստակ նշել, որ ի տարբերություն նախորդ տարիների, 2006-2007 ուս.տարում հանրապետության կրթական համակրգում բավականին մեծ նվաճումներ ու ձեռքբերումներ ունեցանք: Եվ այդ մասին ԼՂՀ ԿՄՍ նախարար Կ.Աթայանը օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (2007թ. օգոստոսի 22-24), որին մասնակցում էին նաև հանրապետության ղեկավարները, իր զեկուցման մեջ ամփոփեց ուսումնական տարվա արդյունքները և մատնանշեց, որ ըստ նախարարության մշակած ռազմավարական ծրագրի՝ հանրապետության կրթական համակարգում լուրջ փոփոխություններ են կատարվել 2006-2007 ուս.տարում[95]: Այսպես՝ օրինակ, եթե 1992-2000թթ. դպրոցները նյութատեխնիկական հարմարանքներով չեն համալրվել, պայմանավորված պատերազմական իրավիճակով, ապա 2001-2006թթ. առաջին անգամ հնարավոր եղավ հանրակրթական դպրոցներին տրամադրել նյութատեխնիկական բազա, սկսվեցին նաև դպրոցների հիմնանորոգման աշխատանքները, աստիճանաբար ընդլայնվեց դպրոցական ցանցը, դպրոցներն ապահովվեցին որակյալ մասնագետներով: 2006-2007 ուս.տարում երկու լուրջ փոփոխություններ կատարվեցին կրթկան համակարգում: Առա-

ջինը նոր կրթակարգն է՝ ի դեմս 12-ամյա կրթության: Նոր՝ 2006-2007 ուս.տարում այդ նպատակին միտված առաջին քայլը 6 տարեկանից ուսուցումն սկսելն է: Արդեն դպրոց հաճախող 6 տարեկան երեխան սվորելու է 12 տարի: Այսինքն՝ միջնակարգ դպրոցի տևողությունը լինելու է 12 տարի: Իհարկե, ինչպես նշվում է մանկավարժահոգեբանական գրականության մեջ, 6 տարեկանը համարվում է նախադպրոցական տարիք: Սակայն աշխարհում ընդունված է 6 տարեկանից ուսուցումը սկսել դպրոցում:

Հարկ է նշել, որ 6 տարեկանների ուսուցումը ոչ թե կամավորական սկզբունքով է, այլ օրենքով: Ինչպես նշել ենք, 2005-2006 ուս.տարում հանրապետության դպրոցներում արդեն ունեինք երկու 1-ին դասարան: Մինչև դեկտեմբերի 30-ը 7 տարին լրացած երեխաները սովորում են հին կրթահամակարգով՝ 11 տարի, իսկ լրացածները՝ նորովի՝ 12 տարի:

Առհասարակ նոր կրթակարգով ավագ դպրոցում պետք է սովորեն մասնագիտական ունակություններով օժտված աշակերտներ՝ հետագայում ուսումը համապատասխան կրթության օղակներում շարունակելու նպատակով:

Հանրապետության կրթական համակարգում երկրորդ բարեփոխումը կապված է թեստավորման կենտրոնի ստեղծման, կառավարության կողմից գիտելիքների գնահատման հայեցակարգի ընդունման հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2008-2009 ուս.տարվանից ԼՂՀ կրթական համակարգը թևակոխում է բարեփոխումների նոր փուլ. դա ավագ դպրոցի ներդրումն է: Մինչև ավագ դպրոցի ստեղծման գործընթացի պարզաբանումը նախ փաստագրական նյութերի ուսումնասիրությունների հիման վրա հանգամանորեն ցույց տանք միջնակարգ կրթության ոլորտում կատարված փոփոխությունները:

Ինչպես հայտնի է, նորաստեղծ ԼՂ Հանրապետության կրթական համակարգում կարևոր բարեփոխումներ կատարվեցին 90-ական թվականներին: Դպրոցական ենթահամակարգում վերացվեց պարտադիր միջնակարգ կրթությունը և պարտադրվեց թերի միջնակարգ՝ 8-ամյա կրթությունը: Դրա հետ միասին ավագ դպրոցին առաջարկվեցին ընդհանուր հանրակրթական, հոսքային (բնագիտական, հումանիտար, արհեստագործական) ուսումնական ծրագրեր: Բացվեցին վճարովի՝ ոչ պետական դպրոցներ: Իսկ վերոհիշյալ բարեփոխումներից 10 տարի անց (1996-2006թթ.) ի՞նչ ունենք արդյունքում:

Այսպես, օրինակ, դիտարկումները ցույց են տալիս, որ ավագ դպրոցում ուսումը շարունակում են գերազանցապես բոլոր աշակերտները՝ անկախ իրենց ունակություններից, որի հիմնական պատճառը դպրոցի կոոպերատիվ շահերն են (չկորցնել աշակերտ-դասարան, հետևաբար և ֆինանսավորումը), և թեև միջնակարգն ավարտելուց հետո 15-ամյա պատանիներն ու աղջիկները ծնողների հետ միասին այլընտրանք չունեն, այլևս գոյություն չունեն արհեստագործական ուսումնական կրթական հաստատություններ, ուր կկարողանային որակյալ բանվորական մասնագիտություններ ձեռք բերել:

Հոսքային ուսուցումը (բնագիտական և հումանիտար), որը պիտի օգներ ավագ դպրցի աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը և նախընտրած առարկաների խորացված ուսումնասիրմանը, նույնպես տապալված է. օբյեկտիվ պատճառը նախևառաջ այն է, որ հոսքային դասարաններ տվյալ դպրոցում տեսականորեն և գործնականորեն հնարավոր է կազմավորել, եթե դպրոցի աշակերտների թիվը գերազանցում է 1000-1500-ը: Իսկ այդպիսի խոշոր դպրոցներ քանի՞սն են, չունենք:

Ասենք, եթե հետպատերազմյան շրջանում հանրապետությունում ըստ ուսումնական տարիների գործում էին՝ 1994-95 ուս.տարում՝ 148, 1995-96 ուս.տարում՝ 147, 1996-97 ուս.տարում՝ 150, 1997-98 ուս.տարում՝ 152, 1998-99 ուս.տարում՝ 149, 1999-2000 ուս.տարում՝ 154 դպրոցներ, ապա 2001-2009թթ. (մինչև ավագ դպրոցի անցման շրջանը), հանրապետության դպրոցների, վարժարանների, նախադպրոցական հիմնարկների ցանցը հետևյալ պատկերն էր ներկայացնում[96].

Աղյուսակ 5

ուսումնական տարիներ	**2000 - 01**	**2001 - 02**	**2002 - 03**	**2003 - 04**	**2004 - 05**	**2005 - 06**	**2006 - 07**	**2007 - 08**	**2008 - 09**
հանրակրթական դպրոցների քանակը	212	224	232	234	237	236	238	238	236
դրանցում սովորողների քանակը	23468	23878	23712	23463	21964	21632	21880	21372	20813
դասավանդող ուսուցիչների քանակը	3759	3908	4057	4056	4173	4308	4413	4479	4525
Վարժարանների քանակը	1	1	2	2	2	2	2	2	2
դրանցում սովորողների քանակը	88	80	184	180	181	176	161	147	120
դասավանդող ուսուցիչների քանակը	22	22	34	35	37	38	35	33	30
մասնավոր դպրոցների քանակը	2	2	2	2	2	2	2	2	1
դրանցում սովորողների քանակը	168	175	206	180	151	156	147	161	98
նախադպրոցական հիմնարկների քանակը	-	-	23	20	20	23	27	27	27
դրանցում ընդգրկված երեխաների քանակը	-	-	1190	1269	1269	1533	1603	1531	2056

Աղյուսակից երևում է, որ եթե հանրապետությունում 2000-2008թթ. հանրակրթական դպրոցների թիվը աճել է 24-ով, ապա սովորողների թիվը պակասել է 2655-ով, որը բացատրվում է ծնելիության նվազումով և միգրացիայով (մեկնող ամուսինների հետ գնացել են նաև նրանց դպրոցահասակ երեխաները): Ի դեպ, նշենք, որ 2009-2010 ուս.տարում դպրոցներում սովորողների թվի առաջընթաց է նկատվել, իսկ դա պայմանավորված է ավագ դպրոցների ներդրման հետ:

Այժմ ցույց տանք, թե Հայաստանի Հանրապետությունում ինչպես է անցել ավագ դպրոցի փորձաշրջանը, որը նախապայմաններ է ստեղծել Արցախում ևս ավագ դպրոցի ներդրման համար: Ինչպես տեղեկացանք «Լուսարար» թերթի 2009թ. թիվ 17-ում տպագրված՝ Ռոզա Պողոսյանի «Ավագ դպրոցի մեկամյա փորձաշրջանը վերացրել է բոլոր տրտնջումները» վերնագրով հոդվածի[97] ուսումնասիրությունից, պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության 10 դպրոցներում 2007-2008 ուս.տարում մուտք գործած ավագ դպրոցի փորձնական ծրագիրը սկզբնական շրջանում արժանացավ դպրոցների տնօրենների ու ծնողների ակնհայտ տրտնջումներին, քանի որ նրանք հստակ չէին պատկերացնում, թե շոշափելի ինչ արդյունքներ կարող էր տալ ավագ դպրոցը, այն էլ՝ կարճ ժամանակամիջոցում: Սակայն, ի զարմանս նրանց, հոսքային ուսուցման արդյունավետությունը նկատելի դարձավ մի քանի ամսից՝ հույս ներշնչելով, որ բուհ ընդունվելու մտադրություն ունեցող աշակերտն ավարտական դասարանում այլևս կարիք չի ունենալու լրացուցիչ պարապմունքների ու ծնողին կազատի նյութական հոգսերից:

Կրթության ոլորտի պատասխանատուներն ակնկալում էին, որ ավագ դպրոցի փորձնական ծրագրում ընդգրկված Հայաստանի և Արցախի դպրոցները կապահովեն սահուն անցում հանրակրթությունից բուհական համակարգ:

ՀՀ ԿԳ նախարարության և ԼՂՀ ԿՄՍ նախարարության կոլեգիայի նիստում քննարկված փաստաթղթերում, ինչպես նաև հաշվետվություններում նշվում է, որ հանրակրթական դպրոցներում աստիճանաբար ընդլայնվում է նաև ավագ դպրոցների ցանցը: Այսպես, օրինակ՝ 2008-2009 ուս. տարում (ապրիլի 16-ին) ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատողների, կրթության շրջանային բաժինների վարիչների, դպրոցների տնօրենների հետ հանդիպման ժամանակ[98] ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանն ասաց, որ ներկայումս Հայաստանում գործում են 1430 հանրակրթական դպրոցներ, իսկ ավագ դպրոցի 12-ամյա կրթությունը շատ լուրջ խնդիր է, որը թեպետ օրենքով, բայց մեծագույն պրոբլեմ է ՀՀ-ում, Արցախում: Ավագ դպրոցի ստեղծման ուղղությամբ բարեփոխումները սկսվել են 2008թ.: Հայաստանում 2008-2009 ուս. տարում գործում էր 48 ավագ դպրոց, Արցախում՝ 2, 2009-2010 ուս. տարում՝ Հայաստանում՝ 96 ավագ դպրոց ապահովված էր համապատասխան սարքավորումներով: Հանրապետության բյուջետային խնայողությունների հաշվին հաջողվել է բոլոր ավագ դպրոցներին հավելյալ մատակարարել համակարգիչներ: Նախարարը նաև ընդգծեց, ու հիմա շատ բան կախված է լինելու նրանից, թե որքանով ուսուցիչներն ու աշակերտները կկարողանան օգտագործել նորագույն կրթական տեխնոլոգիաները՝ իրականում բարելավել կրթական գործընթացն այդ բազայի շնորհիվ:

Իսկ ինչպե՞ս էր ընթանում ԼՂՀ-ում ավագ դպրոցի ստեղծման գործընթացը: Փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա դիտարկենք Բոլոնիայի գործընթացի համատեքստում ԼՂՀ-ում ավագ դպրոցի իրագործման հիմնական ուղիները:

Հանրակրթական ոլորտի բարեփոխումների 2009թ. հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն էր: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն է 12-ամյա հանրակրթական համակարգին անցումը, որի իրականացումը սկսվել է 2006-2007 ուս.տարում, առավել ևս 2007-2008 ուս.տարում: Այդ գործընթացի շրջանակներում 2009-2010 ուս. տարվանից նախատեսվում էր եռամյա ավագ դպրոցի ներդրումը, որն ուղղված էր հանրակրթական երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում կրթության որակի և արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը: Ավագ դպրոցը հանդիսանում է «նախամասնագիտական» կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: Ինչպես նշված է «Հանրակրթության պետական կրթակարգ»-ում[99], ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն:

Ելնելով «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի պահանջներից՝ ԼՂՀ-ում միջնակարգ ընդհանուր կրթությունը, 2007 ուս.տարվանից սկսած, իրականացվում է եռաստիճան դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով,

- տարրական դպրոց՝ 1-4 դասարաններ.
- միջին դպրոց (հիմնական՝ 9-ամյա).
- ավագ դպրոց՝ 10-11-ամյա, իսկ 12-ամյան՝ 2008-2009 ուս.տարում (նկատի ունենք ավագ դպրոցի նախապատրաստական աշխատանքները):

Դա մասնագիտական կողմնորոշման եռամյակ է: Նրանք, ովքեր պետք է սովորեն բուհում, ավագ դպրոցում պետք է սովորեն հումանիտար կամ բնագիտական թեքումով: Իսկ եթե երեխան չի ցանկանում ուսումը շարունակել բուհում, պետությունը նրան ևս տրամադրում է հնարավորություն մասնագիտական կրթություն ստանալու: Եվ այստեղ առաջ է գալիս արհեստագործական ավագ դպրոցի ցանցի անհրաժեշտությունը, որն ավելի շատ պետք է տվյալ շրջանի համար: Փաստորեն կլինեն երեք կարգի ավագ դպրոցներ՝ արհեստագործական, հումանիտար և բնագիտական: Կրթության որակի ապահովման խնդիրը կարևորվում է բոլոր աստիճաններում՝ տարրական (կրտսեր), 9-ամյա (հիմնական), առանձնապես ավագ դպրոցում, որը հանդիսանում է մասնագիտական կրթության նախաշեմ:

Փաստագրական նյութերի ընձեռած հնարավորությունների հիման վրա այժմ պարզաբանենք հանրապետությունում ավագ դպրոցի ստեղծման առաջին քայլերը և նրա հետագա զարգացման ուղիները:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ կառավարության պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունից, 2008թ. ապրիլի 18-ին ԼՂՀ կառավարության ընդունած որոշմամբ[100] հաստատվեց ավագ դպրոցի ռազմավարական ծրագիրը, որի էությունը հասցվեց հասարակությանը: Ավագ դպրոցի ցանցի ձևավորման առաջին փուլում ստեղծվեցին երեք առանձնացված ավագ դպրոցներ (Ստեփանակերտի թիվ 8, 11, Շուշիի Մուրացանի անվան դպրոց) և հոսքային (հումանիտար, բնագիտամաթեմատիկական) ուսուցմամբ միջնակարգ դպրոցներ Ասկերանում, Մարտակերտում, Հադրութում, Մարտունիում և Ճարտարի համայնքում, որոնք իրենց գործունեությունը սկսեցին 2009թ. սեպտեմբերի 1-ից[101]:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Ս.Ասրյանի հաշվետվության (2008-2009 ուս. տարվա կատարած աշխատանքների մասին) տվյալների համաձայն, նախարարությունը ժամանակին պլանավորել և իրականացրել է ավագ դպրոցի նախապատրաստա-

կան աշխատանքները: Ի՞նչ է արվել կոնկրետ: **Առաջին՝** կատարվել է դպրոցների ընտրություն: **Երկրորդ՝** այդ դպրոցներն ապահովվել են ուսումնանյութական անհրաժեշտ բազայով և լաբորատոր սարքավորումներով: **Երրորդ՝** կատարվել է ուսուցիչների ընտրություն, որը եղել է մի քանի փուլով. նախ՝ դպրոցներում, այնուհետև՝ կրթության շրջանային, քաղաքային բաժինների կողմից, ապա՝ նախարարությունում՝ առարկայական մասնագետների մասնակցությամբ:

Շրջանային կրթության բաժինների վարիչների, դպրոցների տնօրենների, մանկավարժական կոլեկտիվների մեթոդմիավորումների խորհրդակցությունում (2008-2009 ուս.տարվա օգոստոսի 22-ին) Սլավա Ասրյանը իրավացիորեն մատնանշեց, որ մեր հանրապետությունում ավագ դպրոցի անցման պարտադիր պահանջներից մեկը համապատասխան ուսուցիչների հայտագրումն ու նրանց վերապատրաստումն է: Այս նպատակով 2009թ. օգոստոսի 14-23-ը Արցախի պետական համալսարանում կազմակերպվել են ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Դրանք իրականացվել են հայատանյան ճանաչված մասնագետների կողմից: Ինչպես տեղեկացանք Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության և ստանդարտացման վարչության պետ Նաիրա Հակոբյանի հաշվետվության տվյալներից (դասընթացների կազմակերպիչը Ն.Հակոբյանն էր), ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացները ՀՀ-ում իրականացվում են 2007-2008 ուս.տարվանից, և այդ ընթացքում վերապատրաստվել են շուրջ 1000 ուսուցիչներ:

ԿԳ նախարարության նախաձեռնությամբ մայրաքաղաքում, շրջաններում անց են կացվել սեմինար-խորհրդակցություններ, որոնց նպատակն էր ավագ դպրոցի ուսուցիչներին բացատրել նոր ծրագրերի բովանդակությունը և թե նոր ուսումնականի առաջին իսկ օրից ինչպես սկսել ավագ դպրոցի աշխատանքները:

ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից նաև տեղեկացանք, որ մինչև նոր ուսումնական տարին սկսելը այդ հարցը հանգամանորեն քննարկվել է նաև ԼՂՀ իշխանությունների մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում: Խորհրդակցությանը մասնակցում էին վարչապետը, նախարարները, ԿԳ նախարարության պատասխանատու աշխատողները, նախարար Վ.Խաչատրյանը, փոխնախարար Ս.Ասրյանը, շրջանային կրթության բաժինների վարիչները: Ս.Ասրյանը իր զեկուցման մեջ («Հանրապետությունում ավագ դպրոցի ներդրման գործընթացը») ներկայացրեց ավագ դպրոցի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները և դիտարկումների արդյունքները: Փոխնախարարը տեղեկացրեց, որ 2009-2010 ուս.տարում 3 ավագ և 5 հոսքային դպրոցներում կատարված ստուգումները ցույց են տվել, որ ավագ դպրոցի ներդրումն անհրաժեշտություն է: Նախարարը միաժամանակ մատնանշեց, որ դիտարկումներից պարզվել է, որ սկզբում սովորողների մի զգալի մասը ճիշտ չի կողմնորոշվել և հայտնվել է հումանիտար կամ բնագիտական հոսքերից մեկում՝ առանց ունենալու տվյալ հոսքի պահանջներին համապատասխան գիտելիքներ: Ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքներով (փորձնական շրջանում)՝ ավագ դպրոցի հումանիտար հոսքի 577 սովորողներից 177-ը (31 տոկոսը) ստացել է անբավարար գնահատականներ: Առաջադիմությունը հատկապես ցածր էր Ստեփանակերտի թիվ 8 (45 տոկոս) և Մարտակերտի թիվ 1 (30 տոկոս) դպրոցներում, իսկ բնագիտական հոսքի 309 սովորողներից անբավարար գնահատական են ստացել 61-ը (20 տոկոս)[102]: Ամենացածր առաջադիմությունը նշված հոսքում դարձյալ գրանցվել է

Ստեփանակերտի թիվ 8 դպրոցում (64 տոկոս): Այսպիսով, ավագ դպրոցների հումանիտար հոսքի առաջադիմությունը կազմել է 70 տոկոս, իսկ բնագիտական հոսքինը՝ 79 տոկոս:

Ոչ ճիշտ ընտրություն կատարելու հետևանքով ցածր գիտելիքներով 28 սովորողներ առաջին կիսամյակում կամավոր թողել են ավագ դպրոցը և ուսումը շարունակել միջին մասնագիտական և արհեստագործական հաստատություններում: Արված դիտարկումների արդյունքներից պարզ դարձավ, որ անհրաժեշտ է ունենալ նաև ընդհանուր հոսքով դասարաններ, որոնցում կընդգրկվեն ըստ հոսքերի չկողմնորոշված և համեմատաբար միջակ կարողությունների սովորողները: Եվ դա հնարավոր եղավ իրականացնել 2012-2013 ուսումնական տարում:

Այն, որ ավագ դպրոցի գաղափարը դրականորեն է ընկալվում հասարակության, սովորողների, ծնողների շրջանում, վկայում է նաև այն փաստը, որ 2009-2010 ուս.տարում Ստեփանակերտի թիվ 8 և 11 ավագ դպրոցներում ընդգրկված էին գյուղական բնակավայրերի 25 սովորողներ, իսկ ֆիզմաթ դպրոցում՝ 16: Փաստորեն ավագ դպրոցի ստեղծման պահանջ է առաջանում նաև ըստ գյուղական ենթաշրջանների[103]:

Ըստ պաշտոնական տվյալների, ԼՂՀ ԿԳ նախարարության ծրագրով նախատեսվել էր 2009-2010 ուս.տարում ավագ դպրոցներ բացել բոլոր շրջկենտրոններում, որի դեպքում աշակերտների մի գյուղից մյուսը տեղափոխվելը պետք է իրականացվեր տրանսպորտով՝ պետական միջոցների հաշվին:

Այսպիսով, ԼՂՀ ԿԳ նախարարության տվյալների համաձայն, 2009-2010 ուս.տարում հանրապետությունում գործում էին 3 ավագ դպրոցներ, երկուսը՝ մայրաքաղաքում(թիվ 8 և 11), մեկը՝ Շուշիում և ավագ դպրոցի հոսքային ուսուցմամբ հինգ միջնակարգ դպրոցներ՝ շրջկենտրոններում և Ճարտարի համայնքում: Ավագ դպրոցը իրականացնում է իր գլխավոր խնդիրը՝ լիարժեք կերպով վերապատրաստել սովորողներին հետագա բարձրագույն կրթություն ստանալու: Բայց քանի որ առաջին տարում չկային ընդհանուր հոսքի դասարաններ (հաշվի առնելով, որ Ստեփանակերտում գործում է արհեստագործական ուսումնարան, և իրոք բավական թվով սովորողներ ընդգրկվել են նրանում և հոսքերում, հիմնականում՝ հումանիտար) ընդգրկվել էին հիմնականում չկողմնորոշված և թույլ կարողություններով երեխաներ, առաջադիմությունն ու որակը սպասված արդյունքը չտվեցին: 2010-2011 ուս.տարում ավագ դպրոցում արդեն գործում են նաև ընդհանուր հոսքի դասարաններ, ինչը թույլ կտա հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերում ընդգրկել համապատասխան կարողություններով սովորողների և կապահովի ուսման բավարար որակ[104]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավագ դպրոցի առաջին տարում՝ 2009-2010 ուս.տարում, 8 դպրոցներում (3-ը՝ ավագ, 5-ը՝ ավագ դպրոցի հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցներ) ընդգրկված էին հումանիտար հոսքերում՝ 601, բնագիտամաթեմատիկականում՝ 313 աշակերտներ, 28 աշակերտներ (16+12) հոսքային ուսուցման պահանջները չհաղթահարելու պատճառով իրենց կամքով դուրս են եկել դպրոցներից և ընդգրկվել միջին մասնագիտական և արհեստագործական հաստատություններ (այդ մասին մանրամասն կնշվի 5-րդ գլխում):

Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցի տնօրեն Վալերի Սահակյանի տեղեկատվությամբ՝ 2009թ. սեպտեմբերին դպրոցն ընդունվել են 294 աշակերտ, որից 179-ը՝ հումանիտար հոսքում, 115-ը՝ բնագիտամաթեմատիկական: Կոմպլեկտա-

վորվել է 11 դասարան, 7-ը՝ հումանիտար, 4-ը՝ բնագիտամաթեմատիկական: Տարվա ընթացքում դուրս են եկել 19 աշակերտներ, ընդունվել 10-ը: Դուրս եկածների զգալի մասը՝ 17 հոգի, կողմնորոշվել և գնացել են գյուղատնտեսական քոլեջ, իսկ մյուսները՝ ֆիզմաթ դպրոց:

Թիվ 8 ավագ դպրոցում սովորողներից 15-ը շրջաններից են: Իսկ ինչպիսին է ուսման առաջադիմությունը: Ինչպես նշվում է տնօրենի հաշվետվությունում, 2009-2010 ուս.տարվա առաջին կիսամյակի արդյունքներով՝ հումանիտար հոսքում առաջադիմությունը կազմել է 46 տոկոս, բնագիտականում՝ 79: Ուսումնական տարվա վերջին 22 հոգի մնացել են նույն դասարանում, որից 1-ը՝ բնագիտական հոսքից[105]:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերի տվյալների համաձայն, 2008թ. ԼՂՀ կառավարության հունիսի 20-ի թիվ 8 որոշման[106] հանձայն Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցի 2-11-րդ դասարանների ռուսական սեկտորի(բաժնի 235 աշակերտներ տեղափոխվել են Ռիչարդ Թուֆենյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոց: «Էրուդիտ» ոչ պետական մասնավոր ռուսական դպրոցը լուծարվելուց հետո տարբեր դասարանների ևս 53 սովորողներ ընդունվել են թիվ 3 միջնակարգ դպրոց: Դրանով իսկ մինչև նոր ընդունելությունը ձևավորվել է ռուսական բաժին՝ 288 աշակերտի ընդգրկմամբ: Դպրոցի տնօրեն Լյուդմիլա Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ձևավորվել է համերաշխ մանկավարժական կոլեկտիվ, որը կարողացել է կարճ ժամանակահատվածում՝ կրթօջախի վերակազմավորումից ու վերանվանումից հետո, անցած ընդամենը 1,5 տարվա ընթացքում հասնել շոշափելի հաջողությունների ինչպես կազմակերպչական, այնպես էլ ուսումնադաստիարակչական. աշխատանքներում:

Դպրոցում կազմավորվել է 32 դասարան-կոմպլեկտ՝ 644 աշակերտի ընդգրկմամբ, ընդ որում՝ հայկական բաժնում 15 դասարան՝ 297, ռուսական բաժնում՝ 17 դասարան՝ 347 աշակերտների ընդգրկմամբ: Հայկական բաժնում 2008-2009 ուս.տարում 1-ին և 10-րդ դասարաններում ընդունելություն չի կատարվել:

Ընդհանրապես առաջին ռուսական դասարանների ընդունելությունը կատարվել է ԼՂՀ հանրակրթական դպրոցներում ռուսերենով ուսուցմամբ դասարաններում սովորողների ընդունելության և տեղափոխման գործընթացը վերահսկելու նպատակով ստեղծված մշտական գործող հանձնաժողովի որոշումների համաձայն: 2008-2009 և 2009-2010 ուս.տարիների ընթացքում 1-11-րդ դասարաններում համապատասխանաբար ընդունվել են 54 և 53 աշակերտ: Սկզբում հայ երեխաների մեծ մասն ընդունվում էր ռուսական բաժին, հետագայում այն կարգավորվել է հանձնաժողովի կողմից:

Ինչպես տեղեկացանք թիվ 11 ավագ դպրոցի տնօրեն Աիդա Գրիգորյանի հաշվետվությունից[107], 2009թ. սեպտեմբերի 1-ին այստեղ ընդունվել է 202 աշակերտ, կոմպլեկտավորվել է 8 դասարան, որից 5-ը՝ հումանիտար (124 աշակերտ), 3-ը՝ բնագիտամաթեմատիկական (78 աշակերտ): Ուսումնական տարվա ընթացքում 14 հոգի դուրս է եկել, որից 4-ը գնացել է գյուղքոլեջ, 3-ը՝ թիվ 8 ավագ դպրոց, 2-ը՝ արհեստագործական ուսումնարան: Այստեղ նույնպես հանրապետության տարբեր վայրերից՝ Վազգենաշեն, Եմիշճան, Մյուրիշեն, Եղցահող, Մոշխմհատ, Զագլիկ, Դահրավ և այլ բնակավայրերից սովորելու են եկել 15 աշակերտներ: Փաստորեն Ստեփանակերտի ավագ դպրոցներում սովորող 473 աշակերտներից 30-ը շրջաններից եկածներ են:

Հանրակրթական դպրոցներում 2009-2010 ուս.տարվա առաջին կիսամյակն

առանձնահատուկ էր գնահատման նոր համակարգով, որը, չնայած ներդրվել էր անցած՝ 2008-2009 ուս.տարում, բայց բոլոր ձևերով գործարկվեց 2010թ.՝ բացահայտելով ու հազթահարելով նոր դժվարություններ, շտկելով թերությունները:

Հանրակրթության մեջ, սակայն, ժամանակի ամենամեծ խնդիրն ավագ դպրոցն էր, որը առաջին քայլերն էր արել 2009-2010 ուս.տարվա առաջին կիսամյակում և այդ առումով նրա համար փորձաշրջան էր: Սա էր ԼՂՀ ԿԳ նախարարության նիստերի դահլիճում հունվարի 29-ին հրավիրված խորհրդակցության նպատակը: Հրավիրված էին մայրաքաղաքի թիվ 8 և 11 ավագ դպրոցների ուսուցիչները, տնօրեններն ու փոխտնօրենները: Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳՆ արխիվային փաստաթղթերից, տնօրենները իրենց հաշվետվություններում ներկայացրին առաջին ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքները: Շրջանավարտների 25 տոկոսը գնացել էր արհեստագործական ուսումնարան և միջին մասնագիտական հաստատություններ, իսկ 75 տոկոսը սովորում էր ավագ դպրոցներում[108]:

Խորհրդակցությանը մասնակցում էին նաև հանրապետության շրջանների կրթության բաժինների վարիչները, որոնք իրենց հաշվետվություններում ներկայացրին 2009-2010 ուս.տարում կատարած աշխատանքները:

Այսպես, օրինակ՝ Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչ Գեորգի Սևիկյանի հաշվետվության տվյալների համաձայն՝ 2009-2010 ուս.տարում շրջանում գործել են 3 տարրական, 12 հիմնական և 23 միջնակարգ դպրոցներ, որից 2-ը՝ հոսքային, միջնակարգի կարգավիճակով, 333 դասարան-կոմպլեկտների առկայությամբ: Սովորողների քանակը ուսումնական տարվա սկզբում եղել է 3602, վերջում՝ 3552, 213 շրջանավարտներից 210-ը ավարտել են միջնակարգ դպրոցը՝ ստանալով հասունության ատեստատ: Դպրոցներում աշխատում են 1260 հոգի, որից 885 ուսուցիչ:

Կրթության բաժնի վարիչի հաշվետվության տվյալներով՝ 2008-2010թթ. ԼՂՀ կառավարության, ԿԳ նախարարության աջակցությամբ և Համահայկական հիմնադրամի միջոցներով շահագործման են հանձնվել Աշանի միջնակարգ (2008թ.), Սպիտակաշենի, Ճարտարի թիվ 2 հիմնական, Շեխերի միջնակարգ, Գիշու միջնակարգ, Ալիբալիի հիմնական, Խնուշինակի միջնակարգ դպրոցների նոր շենքերը: Բոլոր դպրոցներն ապահովված են դպրոցական համապատասխան գույքով:

Շրջանի երեք դպրոցներում (Ճարտարի, Գիշու, Մարտունու թ.1) կան ուսուցման համակարգչային կաբինետներ՝ 10 համակարգիչներով, 21 դպրոցներ ապահովված են պատճենահանող սարքերով, որոնցից 14-ը՝ համակարգչային կոմպլեկտներով: Դպրոցներում գործել են 93 առարկայական կաբինետներ և 107 մեթոդմիավորումներ, որոնք հիմք են հանդիսացել ուսումնական գործընթացի բարելավման համար[109]:

Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ժասմեն Դավթյանի հաշվետվության տվյալներից տեղեկանում ենք, որ վերոնշյալ ուս.տարում շրջանում գործել են 36 հանրակրթական դպրոցներ, որից 27-ը՝ միջնակարգ, 9-ը՝ հիմնական և 5 մասնաճյուղեր Նոր Ջրաբերդում, Տոնաշենում, Խնկավանում, Թբլղում և Ծաղկաշենում: Ուսումնական գործընթացում՝ ուսումնական տարվա սկզբին ընդգրկված էին 3207, շարժի արդյունքում ուսումնական տարվա վերջին՝ 2186 աշակերտներ՝ 360 դասարան-համակազմերում, որոնցից 7-ը ավագ դպրոցի հոսքային դասարաններն էին՝ 139 աշակերտի ընդգրկումով՝ Մարտակերտի Վ.Բալայանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի բազայի վրա: Ուսումնական տա-

ում առաջին դասարան է հաճախել 325 աշակերտ:

Ուսումնական տարվա վերջին 9-րդ դասարանի 239 աշակերտներից ավարտել և վկայական է ստացել 225-ը: Ավագ դպրոցի 10-րդ դասարանում սովորող 27 աշակերտ փոխադրվել են հաջորդ դասարան կամ ավարտել են դպրոցը: Ընդհանուր առմամբ, ուսումնական տարվա վերջում 3186 աշակերտից հաջորդ դասարան է փոխադրվել 3159-ը, 12-րդ դասարանն ավարտել 151-ը[110]:

Ինչպես նշված է Հադրութի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Էդիկ Պետրոսյանի հաշվետվություն, 2009-2010 ուս.տարում շրջանում գործել են 13 միջնակարգ, 12 հիմնական դպրոցներ, 4 մասնաճյուղեր՝ կցված Մարիամաձորի և Խծաբերդի հիմնական դպրոցներին: Շրջանի հանրակրթական դպրոցներում սովորում են 1993 աշակերտներ, դասավանդում 566 ուսուցիչներ: Բացի այդ, Տող գյուղում գործել է նաև երաժշտական դպրոց, որտեղ ընգդրկված էին Տողի և Ուխտաձորի ենթաշրջանի դպրոցների սաները:

Արխիվային փաստաթղթերից[111] և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ 2009-2010 ուս.տարում Ասկերանի շրջանում գործել են 32 հանրակրթական դպրոցներ, որոնցից 24-ը՝ միջնակարգ, 18-ը՝ հիմնական և 3 մասնաճյուղ դպրոցներ Խրամորթի միջնակարգ դպրոցին կից՝ Արմենակավան և Փառուխ համայնքներում, Խնձրիստանի միջնակարգ դպրոցին կից՝ Հիլիսում, Նախիջևանիկի միջնակարգ դպրոցին կից՝ Սառնաղբյուր համայնքում: Իսկ Շուշիի շրջանում գործել են 8 հանրակրթական դպրոցներ, ինչպես նաև արվեստի, երաժշտական և սպորտի դպրոցներ Շուշի քաղաքում:

Արխիվային մի քանի փաստաթղթերում կարդում ենք Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանի հաշվետվությունը[112], որտեղ հիշատակվում է, որ 2009-2010 ուս.տարում կրթության բաժնի ենթակայության տակ գործել են 12 հանրակրթական դպրոցներ՝ 289 լրակազմ դասարաններով, 6722 աշակերտների ընդգրկմամբ, 3 նախադպրոցական հիմնարկ՝ 21 խմբով, 880 երեխայի ներգրավվածությամբ, 1 մանկական ստեղծագործության կենտրոն՝ 100 խմբով, 1061 երեխայի ընդգրկմամբ: Մայրաքաղաքի ուսումնական հաստատություններից հանրակրթություն են իրականացրել նաև ֆիզմաթ դպրոցը, ռազմամարզական վարժարանը և պարարվեստի քոլեջը՝ միասին 31 լրակազմ դասարաններով՝ 381 աշակերտի ընդգրկմամբ:

Փոխադրական դասարաններում ուսումնական տարում գերազանց գնահատականներով ավարտել է 562 աշակերտ: Ավարտական 9-րդ դասարանների 759 աշակերտներից գերազանցության նշումով վկայականի հավակնել է 18 աշակերտ, որոնցից միայն երեքին է հաջողվել քննությունների ժամանակ պահպանել գերազանցությունը՝ թիվ 1, թիվ 6 և ֆիզմաթ դպրոցներում:

ԼՂՀ ԿԳ նախարարությունում տեղի ունեցած խորհրդակցությունում (2009-2010 ուս.տարվա օգոստոսի 10-ին), որին մասնակցում էին նաև վերաբնակեցված շրջանների կրթության բաժինների վարիչները, նախարար Վ.Խաչատրյանը նպատակահարմար գտավ շրջաններում հրավիրել խորհրդակցություններ:

Ըստ պաշտոնական տվյալների, 2009-201 ուս.տարում օգոստոսի 27-ին Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի դահլիճում կայացավ Քաշաթաղի շրջանի մանկավարժական կոլեկտիվների խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև ԼՂՀ ԿԳ նախարարության ղեկավարներն ու գլխավոր մասնագետները: Խորհրդակցությունում շրջանային կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը իր հաշվետվությունում ներկայացրեց 2009-2010 ուս.տարում

կատարած աշխատանքները և նոր ուսումնականում անելիքները: Համաձայն հաշվետվության, շրջանում գործել են 51 հանրակրթական դպրոցներ, որից 43 միջնակարգ՝ 2 մասնաճյուղերով (Հակում և Գետափում), և 8-ը՝ հիմնական: Ձևավորվել է 355 դասարան կոմպլեկտ՝ 1716 աշակերտների ընդգրկմամբ: Դասավանդել են 728 ուսուցիչներ: Շրջանում գործել են նաև 2 նախադպրոցական հաստատություններ՝ Բերձորի պետական և Քարեգահի՝ բարեգործական հիմունքներով մանկապարտեզներ: Շրջվարչակազմի և կրթության բաժնի աջակցությամբ կազմավորվել են Բազմատուսի և Կերենի միջնակարգ դպրոցները: Ուսումնական տարում առաջին դասարան են ընդունվել 150 աշակերտ: Ուշագրավ է նշել նաև, որ Քաշաթաղի վերաբնակեցված շրջանի հարավային Կովսական քաղաքը դարձել է տարածքի բնակավայրերի մշակութային, գիտակրթական կենտրոն: Այստեղ՝ Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցում սովորում են 116 աշակերտ՝ 12 համակարգ դասարանով: Ուսումնական տարում միջնակարգ դպրոցի առաջին դասարան է ընդունվել 14 աշակերտ, 12-րդում կա 6 աշակերտ: Դպրոցում գործում է նաև նախադպրոցական խումբ՝ 18 երեխայով: Կրթօջախում դասավանդում է 22 ուսուցիչ: Դպրոցն ունի կահավորված ուսումնական առարկայական կաբինետ, բնագիտական առարկաների լաբորատորիա, համակարգչային կենտրոն, համացանց և հարուստ գրադարան: Դպրոցի տնօրենի հաշվետվությունից տեղեկանում ենք նաև, որ նշված ուս.տարում կրթօջախը ևս մեկ նվեր ստացավ: Կապանի ոսկու կոմբինատի տնօրեն, կանադահայ Հրաչ Ջաբրայանի հովանավորությամբ դպրոցի դիմաց կառուցվել է ռազմամարզական հրապարակ՝ տարբեր մարզասարքերով[113]: Ի հավելումն նշենք, որ Բերձորի միջնակարգ դպրոցը շրջանի առաջին կրթօջախն է, որը բացվել է 1994թ.՝ տարածքի վերաբնակեցման առաջին տարում: Այստեղ սովորում են շուրջ 96 աշակերտ, դասավանդում 15 ուսուցիչ, իսկ 2009-2010 ուս.տարում՝ 200 աշակերտ, դասավանդում 27 ուսուցիչ: Իսկ Կովսական քաղաքային համայնքի, Կերեն և Գանձայի գյուղական համայնքների, Բազմատուս գյուղի դպրոցները բացվել են 2012-2013 ուս.տարում: Շրջանի Հակարի համայնքի միջնակարգ դպրոցը բացվել է 1995թ., որտեղ սովորում էին 10 աշակերտ, իսկ 2012-2013 ուս.տարում՝ 66 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: Շրջանի Արտուշավան համայնքի հիմնական դպրոցը գործում է վերաբնակեցման երկրորդ՝ 1995-1996 ուս.տարվանից: Սկզբում դպրոցում սովորում էր 16 աշակերտ, դասավանդում 5 ուսուցիչ, 2009-2010 ուս.տարում արդեն դպրոցում սովորում էր 86 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Շահումյանի վերաբնակեցված շրջանում 2009-2010 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում շրջանի կրթության բաժնի վարիչ Խ.Վարդանյանը իր հաշվետվությունում հանգամանորեն ներկայացրեց ուս.տարում կատարած աշխատանքներն ու ձեռքբերումները և ընդգծեց անելիքները: Համաձայն բաժնի վարիչի հաշվետվության տվյալների, ուսումնական տարում շրջանում գործել են 16 հանրակրթական դպրոցներ, որից 11-ը՝ միջնակարգ, 5-ը՝ հիմնական: Նշված դպրոցներում ընդգրկված են 647 աշակերտ, դասավանդում են 355 ուսուցիչ: Քարվաճառի միջնակարգ դպրոցի տնօրեն Էմմա Ֆահրադյանը (փնջային մեթոդմիավորման նախագահ) իր հաշվետվությունում մատնանշում է, որ ուսումնական տարում առարկայական օլիմպիադաների շրջանային փուլին մասնակցել են շրջանի 11 դպրոցների 65 աշակերտներ, նրանցից 17-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին և գրավել են 2-րդ տեղը՝ հատկապես ՆԶՊ առարկայից և արժանացել գովասանագրերի[114]:

Այսպիսով, վերոնշյալ փաստագրական տվյալները մեկ անգամ ևս վկայում են այն իրողությունը, որ 2009-2010 ուս.տարում հանրապետության կրթական համակրգում բավականին մեծ առաջընթաց է կատարվել, արագ թափով ընդլայնվել է հանրակրթական տարբեր աստիճանների դպրոցների ցանցը, միաժամանակ վերափոխվել է նաև կրթական համակարգը:

ԼՂ Հանրապետության կրթական համակարգի արմատական վերափոխումների այս շրջափուլում՝ 2011-2012 ուս.տարում (ի դեպ, նշենք, որ հանրապետության կրթական համակրգում արմատական վերափոխումները սկսվել են 2008թ.-ից), ըստ ռազմավարական ծրագրերի և «Հանրակրթության մասին» օրենքի (2009թ. դեկտեմբերի 23) պահանջների, ավագ դպրոցի երկրորդ փուլը համարվում է 2010-2012թթ.: Նախարարության կոլեգիայի նիստում (2011թ. ապրիլի 20-ին)[115] քննարկվեց նաև ռազմավարական ծրագրի այն հարցը, որպեսզի գյուղական վայրերից երեխաների հոսք չլինի դեպի քաղաքի ավագ դպրոցներ(օրինակ, Ստեփանակերտի թիվ 8, 11 և Շուշիի ավագ դպրոցներում սովորում էին 28-30 երեխաներ հանրապետության տարբեր շրջաններից), բնականաբար, պետք է լինի նաև գյուղական բնակավայրերում հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցների ստեղծում՝ գյուղերից արտահոսքը կանխելու հանար, ինչը ռազմավարական նշանակության հարց է: Հնարավոր է ձևավորել հոսքային դասարաններ այն դպրոցներում, որտեղ աշակերտների քանակը հասնում է առնվազն 50-60-ի, և այս դեպքում պետք է ունենալ կենտրոնացված դպրոցներ մի քանի բնակավայրերի համար, ուր կհաճախեն նաև մոտակա գյուղերի աշակերտները, որոնց տեղափոխումը կկատարվի(անվճար հիմունքներով) տրանսպորտային միջոցներով: Ինչպես վկայում են ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերի տվյալները, 2010-2011 ուս.տարում ավագ դպրոցների երկրորդ փուլի անցումն ապահովելու նպատակով շրջաններում որոշ կրթօջախներ ավագ դպրոցի կարգավիճակ ստացան: ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի որոշմամբ (2011թ. ապրիլի 16-ին) նախատեսվում է 2011-2012 ուս.տարում Մարտունու շրջանի Բերդաշենի, Մարտակերտի շրջանի Վանքի և Հաթերքի, Հադրութի շրջանի Տողի հիմնական դպրոցներին ավագ դպրոցի կարգավիճակ տալ:

ԼՂՀ ԿԳ նախարար Ս.Ասրյանի հաշվետվությունից տեղեկացանք, որ 2011-2012 ուս.տարում հանրապետությունում գործող ավագ դպրոցները տվել են 12-ամյա կրթության առաջին շրջանավարտները՝ 1762 հոգի, որից 705-ը՝ խորացված հոսքային ուսուցմամբ: Գոհացուցիչ էին ավագ և խորացված հոսքային ուսուցմամբ շրջանավարտների միասնական քննության արդյունքներով բուհեր ընդունվողների ցուցանիշները: Այսպես, ԱրՊՀ ընդունվել է 561 դիմորդ, ՀՀ պետական բուհեր՝ 84, ընդամենը՝ 645, որից 407-ը, կամ 63 տոկոսը, հոսքային ուսուցմամբ շրջանավարտներ են: Ասել է թե՝ ավագ դպրոցը տվել է սպասված արդյունքը. ընդհանուր թվի մեջ 65 տոկոսը հուշում է, որ իրոք այդ քաղաքականությունը ճիշտ է ընտրված, և ավագ դպրոցները առաջիկա ուսումնական տարում իրենց խնդիրներն իրականացրել են և այն հաջորդաբար շարունակվում է:

Իսկ ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվել ԼՂ Հանրապետության կրթական համակարգում և նախարարության կողմից ի՞նչ աշխատանքներ են կատարվել 2012-2014թթ.-ին: Այդ մասին հանգամանորեն նշվում է ԼՂՀ ԿԳ նախարար Ս.Ասրյանի հաշվետվությունում, ինչպես նաև կրթության շրջանային բաժինների վարիչների հաշվետվություններում: Հիմնավորենք փաստագրական տվյալներով:

ԼՂՀ ԿԳ նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. թիվ 7-8-ում տպագրված՝ ԿԳ նախարար Ս.Ասրյանի հաշվետվության տվյալներով, 2012-2013 ուս.տարում հանրապետությունում գործում էին 239 հանրակրթական դպրոցներ, որոնցից 140-ը՝ միջնակարգ, 3-ը՝ ավագ, 76-ը՝ հիմնական, 12-ը՝ տարրական: Հանրապետության շրջանների 20 բնակավայրերում գործում էին դպրոցներին կից մասնաճյուղեր՝ 1-2 դասարանների ընդգրկմամբ:

Հանրակրթական դպրոցներում սովորում են 20566 դպրոցականներ, որն 2009-2010 ուս.տարվա համեմատ ավել է 40-ով և դա պայմանավորված է 1-ին դասարանցիների ընդունելության աճով: Հարկ է նշել, որ վերջին տարիներին առաջին անգամ է աճ արձանագրվել և այն դեպքում, երբ 10-րդ դասարանի ընդունելությունը նվազել է 560-ով: Բացի այդ, հանրապետությունում գործում են 40 մանկապարտեզներ, 5 միջնակարգ մասնագիտական հաստատություններ և բուհեր:

Ս.Ասրյանի հաշվետվությունում նշված է, որ կրթությունը, որպես գերակա ոլորտ, ապահովում է նախադպրոցականից մինչև հետբուհական մասնագիտական կրթության ներդաշնակ գործունեությունը, հիմնախնդիրն է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը: Ամբողջ համակարգում ընթանում են բարեփոխումներ, առանցքայինը՝ հանրակրթության ոլորտում, որի արդյունավետ աշխատանքից կախված է կրթական մյուս աստիճանների փոխկապակցված ու արդյունավետ գործունեությունը:

2012թ. նշանակալից էր 12-ամյա կրթությամբ առաջին շրջանավարտների թողարկմամբ: Վերլուծությունը ցույց է տվել, որ ճիշտ քաղաքականություն է ընտրված, մասնավորապես՝ ավագ դպրոցները կարողացել են լուծել այն խնդիրները, որոնք միտված են ուսման որակի բարձրացմանը: Ելնելով մեր ուսումնասիրություններից, բերենք հետևյալ փաստը. Արցախի և ՀՀ բուհեր ընդունվողների 63 տոկոսը ավագ և հոսքային դպրոցիների շրջանավարտներն էին: Ավագ դպրոցներում ընդգրկված է 10-12 դասարանների սովորողների 39,5 տոկոսը[116]:

Նախարարի հաշվետվությունում ներկայացվում էին նաև 2010-2014թթ. հանրապետությունում դպրոցաշինության ոլորտում իրականացված ծրագրերը: Ինչպես նշվում է հաշվետվությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության ոլորտում կատարվող բովանդակային բարեփոխումներին մեծապես խթանող հանգամանքը դպրոցաշինության լայնածավալ շինարարական աշխատանքների իրականացումն է: Հավաստի փաստ է, որ հանրապետության կրթական համակարգի գերակա խնդիրը ուսման առաջադիմության և որակի բարձրացումն է, որի տակ տեսնում ենք մի շարք ընդգծված ծրագրեր: Առաջին հերթին դա դպրոցական նոր շենքերի կառուցումն է, վերանորոգումը, դպրոցներն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովումը: Խնդիրներից մեկն էլ տեղեկատվական համակարգի ներդրումն է: Հանրապետության իշխանություններն ամեն ինչ անում են ոլորտի խնդիրների լիաժեք լուծման ուղղությամբ: Պաշտոնական տվյալները (ԼՂՀ ԿԳՆ տեղեկագիր) վկայում են, որ 2010-2011 ուս.տարում 6 նոր կրթօջախ իրենց դռներն են բացել մատաղ սերնդի առաջ, որից 4-ը՝ դպրոց, 2-ը՝ մանկապարտեզ: Շարունակվում են դպրոցաշինական աշխատանքները հանրապետության տարբեր բնակավայրերում: Օրինակ, ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2010-2011 ուս.տարում շահագործման են հանձնվել Ստեփանակերտի թիվ 1 հիմնական, թիվ 11 ավագ դպրոցների նոր մասնաշենքերը, Ասկերանի շրջանի Նարագյուղի միջնակարգ դպրոցի, Բեր-

քաձորի հիմնական դպրոցի, Մարտունու շրջանի Ճարտարի թիվ 2 հիմնական դպրոցի, Մարտակերտի շրջանի Վանքի մանկապարտեզի շենքերը: 2011-2012 ուս.տարում ավարտվել են Ստեփանակերտի թիվ 6 հիմնական դպրոցի, Մարտակերտի շրջանի Հարությունագոմերի և Վաղուհասի միջնակարգ դպրոցների, Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցի, Ալիբալի տեղամասում նոր դպրոցական շենքերի, Խնուշինակի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի և կից կառույցի, Շահումյանի շրջանի Քարվաճառի միջնակարգ դպրոցի, Հադրութի շրջանի Արևշատի դպրոցի շինարարական աշխատանքները, ինչպես նաև Ճարտարի և Դրախտիկի մանկապարտեզների նոր շենքերը: Ըստ նախարարության վիճակագրական տվյալների, նշված ուս.տարում նոր դպրոցական շենքերի լայնածավալ շինարարություն է սկսվել Ասկերանի շրջանի Աստղաշեն, Հովսեփավան, Մարտունու շրջանի Ծովատեղ, Կարմիր շուկա, Նորշեն, Հադրութի շրջանի Արտաշավ, Հայկազյան համայնքներում: Հիմնանորոգման աշխատանքներ են տարվել Մարտունու թիվ 1 հոսքային միջնակարգ դպրոցի, Քաշաթաղի շրջանի Այգեհովիտի միջնակարգ դպրոցի շենքերում:

Նախադպրոցական կրթության ոլորտում կառուցվել են նոր մանկապարտեզների շենքեր Մատակերտի շրջանի Հարությունագոմերի, Հադրութ քաղաքի, շրջանի Տումու, Քաշաթաղի շրջանի Կովսականի համայնքներում:

Պետական բյուջեի միջոցներով դպրոցների ընթացիկ վերանորոգումների համար դեռևս 2010թ. հատկացվել է շուրջ 50 մլն դրամ գումար, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 30 մլն դրամով՝ կապված ֆինանսների սղության հետ, սակայն հնարավորություն է ընձեռվել բարեկարգ վիճակում պահպանել նորակառույց և հիմնանորոգված շենքերը: Վերլուծություններից պարզ է դարձել նաև, որ հանրապետությունում հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Քաշաթաղի շրջանի Կովսականի, Ստեփանակերտի թիվ 5 դպրոցներում: Հայ կրթական հաստատության կողմից հիմնանորոգվել են նաև Մարտունու շրջանի Ղավախանի և Զարդանաշենի տարրական և Շուշիի շրջանի Հին շենի հիմնական դպրոցները[117]:

Ինչպես նշվում է Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերում, 2011-2012 ուս.տարում մայրաքաղաքում մեծ թափով շարունակվել է դպրոցաշինության գործընթացը: Շահագործման է հանձնվել թիվ 3 միջնակարգ դպրոցի վերակառուցված և կահավորված շենքը, վերանորոգման շինարարական աշխատանքները շարունակվել են թիվ 1, 2, 6, 7, 9 և 10 դպրոցներում, վերանորոգվել է նաև թիվ 4 մանկապարտեզի շենքը[118]:

Տարեցտարի ավելանում են ներդրումները դպրոցաշինության ասպարեզում: Համապետական և համազգային նշանակության այս ծրագրի հաջողության գործում իրենց ներդրումներն են անում ինչպես պետությունը, այնպես էլ աշխարհի տարբեր ծայրերում բնակվող մեր հայրենակից բարերարները:

Ըստ նախարարության պաշտոնական տվյալների՝ 2013-2014 ուս.տարվա սեպտեմբերի 1-ին 5 դպրոցներում պարապմունքները սկսվեցին նոր դպրոցական շենքներում, 2-ը՝ Ստեփանակերտում, 3-ը՝ Մարտակերտի շրջանի Չափարի, Քաշաթաղի շրջանի Արտաշավանի և Ասկերանի շրջանի Աստղաշենի միջնակարգ դպրոցներում: Իսկ 6 դպրոցներում ընթանում էին հիմնանորոգման աշխատանքները: Ընդհանուր առմամբ քննարկվող ժամանակաշրջանում հանրապետությունում շահագործման են հանձնվել երկու տասնյակ դպրոցական շենքեր և հիմնանորոգվել 26 դպրոցների հին շենքեր:

Հանրակրթական դպրոցներում ուսման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների հաջողությունը պայմանավորված է նաև դպրոցի նյութատեխնիկական բազայի ապահովմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության կրթության համակարգի կազմակերպիչների կողմից այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ են տարվել դպրոցների համակարգչային բազայի ստեղծման և դիտողական պարագաների համալրման ուղղությամբ: Անշուշտ, այդ գործում մեծ է նաև հայ բարերարների ներդրումը: Հիմնավորենք կոնկրետ օրինակներով:

ԼՂՀ պետբյուջեի միջոցների, Համահայկական հիմնադրամի աջակցության և առանձին անհատների, բարերարների օգնության շնորհիվ լայնածավալ աշխատանքներ են տարվել դպրոցների ժամանակակից նյութատեխնիկական բազայի հագեցման, առանձնապես տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: ԿԳ նախարարի հաշվետվությունում նշված է, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հանրակրթական դպրոցներին է տրամադվել հինգ հազար աշակերտի համար հաշվարկված դպրոցական գույք, սկսված է 1000 ուսուցչական աթոռների, 1300 լաբորատոր պահարանների և 100 քարշիչ պահարանների առաքման գործընթացը: Տեխնիկական հագեցվածության ուղղությամբ Հիմնադրամի կողմից տրամադրվել են 50 բարձրակարգ համակարգիչներ, համապատասխան տպիչ, պատճենահանման և սկան սարքավորումներով: Բարերար Լևոն Հայրապետյանը նվիրաբերել է 50 հատ տպիչ, պատճենահող սարքեր: «Փյունիկ» հիմնադրամի կողմից տրամադվել են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության կաբինետների 45-ական կոմպլեկտ-սարքավորումներ: Համակարգչային կաբինետներ են կահավորվել հանրակրթական 7 դպրոցներում: ՀՀ-ում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մի շարք կազմակերպությունների հետ ծեռք են բերվել պայմանավորվածություններ՝ նրանց աջակցությամբ Արցախի դպրոցականների հետ որոշակի աշխատանքներ տանելու այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են «Դիջիթեք»-ը և ռոբոտատեխնիկայի ուսումնասիրման աշխատանքները: Բացի այդ, «Սինոպսիս Արմենիա» ընկերության հետ պայմանավորվածություն է ծեռք բերվել և արդեն 2013թ. սեպտեմբերի 1-ից այնտեղ պետք է գործեր հատուկ ամբիոն, որտեղ կպատրաստվեն կապի և հեռահաղորդակցության ոլորտի մասնագետներ[119]:

Ինչպես նկատում ենք, առանձնահատուկ ընդգծված ծրագիր է հանրակրթական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի հարստացումը նոր գույքով, անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով, դիտողական պարագաներով ապահովելը և ուսումնական կաբինետների կահավորումը:

Այսպես, օրինակ, ԼՂՀ կառավարության վիճակագրական տվյալների համաձայն, պետբյուջեի շրջանակներում և առանձին բարերարների կողմից բավականին միջոցներ են հատկացվել (պետբյուջեից մոտ 150 մլն դրամ) հանրակրթական դպրոցական գույք ձեռք բերելու համար: ԼՂՀ ԿԳ նախարարության և կրթության շրջանային բաժինների կողմից պլանավորված էր 2011-2014թթ. դպրոցները լրիվ ապահովել նոր գույքով՝ 5000 աթոռ, 2500 նստարան, ուսուցչի 1250 աթոռ, 200 լաբորատոր սեղաններ, 1300 լաբորատոր պահարաններ, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության 4-ական և մասամբ աշխարհագրության լաբորատոր սարքավորումներ: Այդ ժամանակահատվածում հանրակրթական դպրոցներն ապահովվել են համակարգիչներով: Օրինակ՝ միայն 2011-2012 ուս.տարում ծեռք են բերվել շուրջ 120 համակարգիչներ և 110 պատճենահանող սարքեր: Ընդ որում, հա-

մակարգիչներից 50-ը ԼՂՀ ԿԳ նախարարությունը նվեր է ստացել «Փյունիկ» հիմնադրամից, իսկ պատճենահանող սարքերից 50-ը նվիրել է հայտնի բարերար Լևոն Հայրապետյանը: Կրթօջախների տեխնիկական հագեցվածության ծրագիրը նույնպես շարունակական բնույթ է կրել՝ ըստ ուսումնական տարիների: Այսպես, օրինակ՝ 2011-2012 ուս.տարում ՀՀ ԿԳ նախարարության անմիջական օգնությամբ Ասկերանի նորակառույց դպրոցում բացվել է եռաֆունկցիոնալ գործողության համակարգչային դասարան, որը հնարավորություն տվեց հետագայում իրականացնել հեռահար ուսուցում: Ս. Ասրյանի հաշվետվության մեջ նշված է, որ 2012-2013 ուս.տարում բոլոր ավագ դպրոցները կունենան դրանք: Նոր տեխնոլոգիաների ներդրումը համարվում է ռազմավարական ծրագիր: Ս. Ասրյանը նշեց նաև, որ նախարարությունը նպատակադրվել է 2012թ.-ից հանրակրթական բոլոր դպրոցները միացնել համացանցին և ձեռք բերել բարձրակարգ համակարգիչներ ու համապատասխան ծրագրային բազա՝ ուսումնական առարկաները ժամանակակից մեթոդներով դասավանդելու համար: Այս ծրագիրն իրականացվում է հայ կրթական հաստատության կողմից, և այն սկզբում կյանքի է կոչվել Ստեփանակերտի, այնուհետև՝ մյուս դպրոցներում: Նախարարի հաշվետվությունից նաև տեղեկանում ենք, որ ժամանակակից համակարգչային տեղեկատվական կաբինետների ստեղծման նպատակով գործուն քայլեր են արվել ՀՀ կառավարության կողմից՝ հատկացնելով նման 5 կաբինետներ: Մեկ կաբինետ կահավորվել է Կովսականում Լիբանանի «Արցախ ֆոնդ»-ի միջոցներով: Դպրոցները համակարգիչներով ապահովելու գործում իրենց աջակցությունն են բերել Ռուսաստանի հայերի միությունը, «Փյունիկ» հիմնադրամը, «Հայռուսգազարդը», «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆրանսիական մասնաճյուղը, ինչպես նաև առանձին բարերարներ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից հատկացված 35 համակարգիչները տեղադրվել են Ասկերանի շրջանի Նորագյուղի, Մարտակերտի շրջանի Հարությունագոմերի միջնակարգ դպրոցներում, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում և Շուշիի հումանիտար քոլեջում[120]:

Ինչպես վկայում են կրթության շրջանային բաժինների վարիչների հաշվետվություններում բերված փաստագրական տվյալները, 2012-2013 ուս.տարում մայրաքաղաքի և շրջանների 13 դպրոցներ արդեն ունեին նոր տեխնոլոգիաներով կահավորված դասարաններ, իսկ Քաշաթաղի շրջանում՝ Կովսականում նոր տեխնոլոգիաներ տեղադրեցին Բեյրութի «Արցախֆոնդ» կազմակերպության միջոցներով: Կովսականի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման ֆինանսավորմանը նույնպես օժանդակել է այդ կազմակերպությունը: Տեղեկատվական դասարանների ներդրումը շարունակական բնույթ է կրել հաջորդ ուսումնական տարիներին: Նախարարության, կրթության շրջանային բաժինների կողմից խնդիր էր դրվել, որպեսզի այդ կարգի դպրոցներում դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առնվազն ամիսը մեկ անգամ դասընթացը կազմակերպել՝ օգտագործելով տեղեկատվական համակարգի հնարավորությունները[121]:

Ուսումնասիրության բնույթից ելնելով՝ նպատակահարմար ենք գտնում այստեղ ներկայացնել նաև կրթության շրջանային բաժինների վարիչների 2013-2014 ուս.տարվա հաշվետվությունների տվյալները հանրակրթության ոլորտում կատարած աշխատանքների մասին:

Այսպես՝ ըստ Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ժասմեն Դավթյանի 2013-2014 ուս.տարվա հաշվետվության տվյալների, շրջանի դպ-

րոցականների մոտավորապես 68 տոկոսը սովորում է նորակառույց, սանիտարահիգիենիկ նորմալ պայմաններում գտնվող կրթօջախներում: 2013-2014 ուս.տարում հովանավորների միջոցներով շահագործման է հանձնվել Չափարի դպրոցական նոր շենքը, Մարտակերտի, Մատաղիսի, Թալիշի դպրոցներն արժանացել են ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ վաստակավոր արտիստուհի Շուշան Պետրոսյանի այցելություններին, ուշադրությանը և նյութական աջակցությանը՝ նյութատեխնիկական բազայի հարստացման առումով: Դպրոցաշինությունը լայն թափ է ստանում շրջանում: Հիմնանորոգման ծավալուն աշխատանքներ են տարվել Մարտակերտի թիվ 1, թիվ 2, Քոլատակի, Թբլղուի, Պողոսագոմերի, Շահմասուրի, Կարմիրավանի, Ն.Հոռաթաղի, Ն.Զրաբերդի, Ն.Մարաղայի, Ն.Սեյսուլանի, Չայլվի (Այգեստանի) և այլ դպրոցներում:

Հանրակրթական դպրոցներում ավանդույթ էր դարձել համագործակցության ծրագրերի շրջանակներում սերտ կապերի հաստատումը շրջանի և ՀՀ դպրոցների միջև: Այսպես, 2013-2014 ուս.տարում Մարտակերտի թիվ 1 և Լոռու մարզի Վանաձորի թիվ 28, Ն.Հոռաթաղի և Տավուշի մարզի Նոյեմբերյանի շրջանի Կոթ գյուղի, Մատաղիսի և Երևանի թիվ 43 միջնակարգ դպրոցների միջև կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, դասալսումներ, մանկավարժական ընթերցումներ և այլ հետաքրքիր միջոցառումներ: Համագործակցության շրջանակների ընդլայնմանն էր միտված բարերարների աջակցությունը: Շրջանի դպրոցներում շարունակվում է նաև համակարգչային և այլ էլեկտրոնային սարքավորումներով դպրոցների հագեցումը, որին օժանդակում էին նաև բարերարները: 2013-2014 ուս.տարում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 1 մլն 17 հազար դրամ ընդհանուր արժողությամբ էլեկտրոնային տեխնիկա և սպորտային գույք է տրամադրվել Մարտակերտի թիվ 1, Պաշտպանության բանակի կողմից 126 հազար դրամ արժողությամբ պաստառների վահանակներ Հաթերքի, «Իզմայիլյան» հիմնադրամի երևանյան գրասենյակի կողմից 5 համակարգիչ և 2 տպիչ սարք Չլդրանի, երգչուհի Շուշան Պետրոսյանի կողմից մարզագույք Մարտակերտի թիվ 1, հեռուստացույց նոր Մարաղայի միջնակարգ դպրոցներին: ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից ստացված 15 համակարգիչները բաշխվել են Մաղավուզի, Մատաղիսի, Մարտակերտի թիվ 2, Քոլատակի, Պողոսագոմերի, Շահմասուրի, Նոր Սեյսուլանի դպրոցներին:

Գիտական և ուսումնական տեղեկատվության աննախադեպ աճի ներկայիս փուլում դպրոցը, աշակերտներն ու ուսուցիչներն ունեն համակարգված գիտահանրամատչելի ու գիտամեթոդական օգնության ընդգծված պահանջ, որը կարելի է բավարարել համացանցի և գիտական գրականության միջոցով: Շրջանում համացանցային կապ է գործում շուրջ 24 դպրոցներում: Տեխնիկական միջոցներով դպրոցների հագեցման գործընթացի արդյունքում շրջանի դպրոցները 2013-2014 ուս.տարում ունեին 396 համակարգիչներ, որոնց մի մասը, մոտ 28 տոկոսը, հին էր: Ըստ վիճակագրական տվյալների, յուրաքանչյուր 8 աշակերտի բաժին էր ընկնում 1 համակարգիչ[122]:

Մարտունու շրջանի 2013-2014 ուս.տարվա (օգոստոսի 22-24-ը) ուսուցչական խորհրդակցությունում շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Զորիկ Ղուլյանը իր հաշվետվությունում ներկայացրեց շրջանի կրթական գործի ընդհանուր բնութագիրը: Եթե 2009-2012թթ. շրջանում գործել են 30 դպրոցներ, ապա 2013-2014 ուս.տարում՝ 36 հանրակրթական դպրոցներ՝ 7 մասնաճյուղերով, որից 23-ը՝ միջնակարգ (անցած ուս.տարվա 21-ի փոխարեն), այդ թվում 2-ը՝ հոսքային,

13-ը՝ հիմնական: Սովորողների թիվը 2013-2014 ուս.տարում հասավ 3621-ի (2009-2012թթ.-ին՝ 3361):

Շրջանում զգալի աշխատանքներ են կատարվել դպրոցաշինության բնագավառում: ԼՂՀ կառավարության, ԿԳ նախարարության հատկացրած բյուջետային միջոցներով հիմնանորոգվել են շուրջ 14 դպրոցներ (անցած ուս.տարում՝ 9 դպրոց), շենքերը և բոլոր դպրոցներն ապահովված են աշակերտական նստարաններով և մասնակիորեն՝ պահարաններով, ուսուցչական սեղաններով, իսկ ուսումնական կաբինետները. լաբորատորիաները կահավորված են ժամանակակից ուսումնական սարքավորումներով և այլ գույքով: Դպրոցների ուսումնանյութական բազայի հարստացման ուղղությամբ շարունակվել են համակարգչային կաբինետների ստեղծման աշխատանքները, շուրջ 15 դպրոցներ ունեին համակարգչային դասարաններ, այսինքն շրջանի դպրոցների 80 տոկոսն օգտվում է համացանցից: Ըստ կրթության բաժնի վարիչի հաղորդած տվյալների, շրջանի դպրոցներում եթե անցած ուսումնական տարում գործել են 22 համակարգիչ, 86 առարկայական կաբինետներ, ապա նշված ուսումնական տարում՝ 38 համակարգչային և 106 առարկայական կաբինետներ:

2014թ. սեպտեմբերի 1-ը Մարտունու շրջանի Հացի համայնքի հիմնական դպրոցի աշակերտները և ուսուցիչները դիմավորեցին հիմնանորոգված շենքում՝ շնորհիվ գյուղի մեծ բարերար, ակադեմիկոս Սերգեյ Գաբրիելյանցի: Դպրոցում անցկացվեցին արիության դասեր՝ աշակերտներին սեփական ազգի մերօրյա հերոսների սխրանքներին ու պատմությանը ծանոթացնելու նպատակով: «Այսօրվա դպրոցը նաև ազգային մտածողության ու արժանապատվության բնօրրան է,- ասաց ակադեմիկոսը»: Անցկացվեցին զուգահեռներ Արցախյան գոյապայքարի հերոսների և դիրքերում աչալուրջ կանգնած զինվորների սխրանքների միջև: Աշակերտները մեկ անգամ ևս գիտակցեցին, որ հերթափոխը վաղը իրենք պիտի ընդունեն ու հպարտորեն կանգնեն հայրենիքի պաշտպանության դիրքերում, որի ազատությունն ու անկախությունը պիտի անձնվիրաբար պահել, պահպանել, փայփայել[123]:

Ըստ Հադրութի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Էդիկ Պետրոսյանի հաշվետվության տվյալների, 2013-2014 ուս.տարում շրջանում գործել են 13 միջնակարգ և 12 հիմնական դպրոցներ և 4 մասնաճյուղեր՝ կցված Մարիամաձորի միջնակարգ, Թաղասեռի, Խանձաձորի և Խծաբերդի հիմնական դպրոցներին: Շրջանի հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը ուսումնական տարվա սկզբին եղել է 1993, իսկ վերջին՝ 1964. 35 աշակերտներ տեղափոխվել են այլ դպրոցներ: Միջնակարգի ընդհանուր ատեստատ են ստացել 144 շրջանավարտ, հիմնական ընդհանուր կրթության վկայական՝ 145: Շրջանի Տող գյուղում գործում է երաժշտական դպրոց, որտեղ ընդգրկված էին Տողի և Ուխտաձորի ենթաշրջանի դպրոցների սաները[124]: Բացի այդ, ուսումնական տարում գործել են նաև 4 մասնաճյուղեր Առաքելի, Թաղասեռի, Խանձաձորի և Խծաբերդի հիմնական դպրոցներին կից, ուր հաճախել են 2012 աշակերտ:

Ինչպես տեղեկացանք Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբալյանի հաշվետվությունից (այն ներկայացրել է 2013-2014 ուս.տարվա օգոստոսի 24-25-ին՝ շրջանի ուսուցչական խորհրդակցությունում), 2013-2014 ուս.տարում շրջանում գործել են 32 հանրակրթական դպրոցներ, որից 24-ը՝ միջնակարգ, 8-ը՝ հիմնական: Մասնաճյուղ-դպրոցներ են գործել Նախիջևանիկի, Սառնաղբյուրի, Խրամորթի, Արմենակավանի և Փառուխի, Խնձրիս-

տանի, Հիլիսի, Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցներին կից: Հանրակրթական դպրոցներում սովորում էին 2258 աշակերտ (30-ով ավելի 2011-2012 ուս.տարուց), որից 1108-ը՝ տղա, 1150-ը՝ աղջիկ:

Աշակերտական կազմի ստորին և վերին սահմանը կազմում էր՝

- առաջին դասարանցիներ՝ 247,
- 9-րդ դասարանցիներ՝ 147,
- 12-րդ դասարանցիներ՝ 97:

Նշված 32 դպրոցներն ունեին 363 դասարան: Ընդհանուր առմամբ հիմնական կրթության վկայական ստացել են 147 9-րդ դասարանցիներ:

Շրջանում դպրոցականների կրթության և դաստիարակության գործն իրականացնում են 674 ուսուցիչներ, որոնցից 657-ը՝ բարձրագույն, 21-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ[125]:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 2013-2014 ուս.տարվա օգոստոսի 28-ին Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցում անցկացվեց ուսուցիչների ամենամյա օգոստոսյան խորհրդակցություն, որի աշխատանքներին մասնակցում էին ԼՂՀ ԿԳ նախարար Ս.Ասրյանը, կրթության ոլորտի պատասխանատու աշխատողներ և այլ անձինք: Խորհրդակցությունում շրջանի կրթական համակարգի 2013-2014 ուս.տարվա գործունեության մասին հաշվետվություն ներկայացրեց կրթության բաժնի վարիչ Իրինա Սարգսյանը: Ըստ հաշվետվության տվյալների՝ շրջանում գործել են 1 ավագ, 4 միջնակարգ և 3 հիմնական դպրոցներ, որոնցում ընդգրկված են եղել 681 աշակերտ՝ 57 դասարան կոմպլեկտներում: Նշված դպրոցներում դասավանդել են 150 ուսուցիչներ, որոնցից 131-ը՝ բարձրագույն, 19-ը՝ միջնակարգ-մասնագիտական կրթությամբ: Շուշիում գործում էին նաև Դանիել Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական դպրոց՝ 12 դասարանով, 105 աշակերտների ընդգրկմամբ: Շրջանի բոլոր դպրոցներում գործում են համակարգչային կաբինետներ: Քիրսավանից բացի բոլոր դպրոցները միացված են համացանցին:

Կրթության բաժնի վարիչի հաշվետվության տվյալների համաձայն՝ շրջանում գործող 7 դպրոցներում աշակերտների քանակը հետևյալն է՝

- Շուշիի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոց՝ 378,
- Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց՝163,
- Քարինտակի միջնակարգ դպրոց՝ 19,
- Մեծ շենի միջնակարգ դպրոց՝ 16,
- Շուշիի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոց՝ 102[126]:

Քաշաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ կրթության բաժինը հետևողական աշխատանքներ էր տանում շրջանի հանրակրթական դպրոցներում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, համապատասխան մասնագետներով ապահովման և ուսման որակի բարձրացման ուղղությամբ:

Ըստ հաշվետվության տվյալների, 2013-2014 ուս.տարում Քաշաթաղի շրջանում գործել է 51 հանրակրթական դպրոց (անցած ուս.տարում՝ 48), որից 42-ը՝ միջնակարգ (անցած ուս.տարում՝ 39)՝ 2 մասնաճյուղերով, և 9-ը՝ հիմնական: Ձևավորվել է 339 դասարան կոմպլեկտ՝ 1759 աշակերտների ընդգրկմամբ: Նախորդ ուսումնական տարվա համեմատ աշակերտների քանակը ավելացել է շուրջ 80-ով: Նշված ուսումնական տարում շրջանի դպրոցներն ունեցել են 1103

աշխատող, որից 755-ը՝ ուսուցիչներ[127]:

Ուսումնական տարվա ընթացքում շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտներն ակտիվորեն մասնակցել են ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված ռազմամարզական մրցույթներին և առարկայական օլիմպիադաներին: 2013-2014 ուս.տարում ԼՂՀ և ՀՀ առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է շրջանի 29 աշակերտ: Օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցության համար պատվոգիր են ստացել 4 աշակերտներ 5 առարկաներից: Ի տարբերություն նախորդ երկու տարիների, այդ ուսումնական տարում մրցանակային տեղեր է գրավել 2 աշակերտ, իսկ օլիմպիադայի շրջանային փուլում հաղթող են ճանաչվել 12 աշակերտներ: Օլիմպիադայի արդյունքներն ամփոփվել են շրջանի դպրոցների տնօրենների խորհրդակցությունում: Ակտիվ մասնակցություն ունեցած աշակերտները խրախուսվել են (աշակերտական-ծնողական ժողովում), կրթության շրջանային բաժնի կողմից պարգևատրվել պատվոգրերով:

Իր հաշվետվությունում բաժնի վարիչը ներկայացրեց նաև դպրոցաշինության ոլորտում կատարված ծավալուն աշխատանքները: Ուսումնական տարում կառուցվել է 3 դպրոցական նոր շենք: Կրթության բաժնի բյուջեով, վարչակազմի ղեկավարի և բարերարների աջակցությամբ հիմնանորոգվել են երկու տասնյակից ավելի դպրոցներ: Վ.Մովսիսյանը ներկայացրեց նաև ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» բարեգործական կազմակերպության միջոցներով կատարված աշխատանքները: 2013-2014 ուս.տարում շրջանի Լեռնահովիտ, Սպիտակջուր, Շրվական համայնքներում հիմնանորոգվել են դպրոցական շենքերը: Նա ուրախությամբ ներկայացրեց, որ «Հայրենասեր» բարեգործական կազմակերպության հիմնադիր ամուսիններ Նելլի-Շուշի Մարտիրոսյանը և Սեփան Սարգսյանը դիմեցին ամերիկահայությանը և սփյուռքում բնակվող մեր հայրենակիցներին՝ խնդրելով կատարել ներդրում Քաշաթաղի շրջանի վերաբնակեցված գյուղերում դպրոցական շենքերը հիմնանորոգելու համար: Դպրոցների վերաբացումը տեղի ունեցավ 2014թ. սեպտեմբերի 25-ին, որին մասնակցում էին Նելլի Մարտիրոսյանը, Ստեփան Սարգսյանը և ամերիկահայ բարերարներ[128]:

«Լուսարար» թերթի 2014թ. թիվ 33-ում տպագրված՝ Շահումյանի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Խ.Վարդանյանի 2013-2014 ուս.տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունից (այն ներկայացրել է օգոստոսի 24-25-ին՝ օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում) տեղեկանում ենք, որ նշված ուսումնական տարում շրջանում գործել են 11 միջնակարգ և 5 հիմնական դպրոցներ: Դրանցում ընդգրկված են եղել 675 աշակերտներ (նախորդ ուս.տարում՝ 647), որից 133-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում, իսկ մնացած 542-ը՝ գյուղական համայնքների (նախորդ ուս.տարում՝ 517) դպրոցներում: Ընթացիկ ուս.տարում առաջին դասարան են հաճախել 73 աշակերտ: Դպրոցներն ունեցել են 117 դասարան կոմպլեկտ, որը պահպանվել է նաև 2013-2014 ուս.տարում: Այդ ուսումնականում դպրոցներ են հաճախել 722 աշակերտներ, դպրոցների քանակը ավելացել է 2-ով:

Շրջանի դպրոցներում դասավանդել են 244 ուսուցիչներ: Նրանցից 167-ը՝ բարձրագույն մանկավարժական, 29-ը՝ թերի բարձրագույն, 36-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ, իսկ 12-ը՝ ոչ մասնագետներ, որոնցից մի մասը տարբեր բուհերի ուսանողներ էին և նոր ուսումնականում համալրել են մասնագետ ուսուցիչների շարքերը:

Շրջանի վերաբնակեցված գյուղերի դպրոցներում հնարավորինս հարստացվել է դպրոցների ուսումնանյութական բազան, կրթօջախները ունեին կահավորված ուսումնական կաբինետներ, դպրոցական գույք, համակարգիչներ, իսկ Քարվաճառի միջնակարգ դպրոցը՝ համակարգչային կաբինետ և տպիչ սարք:

Պետական բյուջեի հաշվին և բարերարների աջակցությամբ շրջանում կատարվել են կրթական հաստատությունների վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգվել են նոր Ղարաչինարի, Ակնաբերդի, Նոր Էրքեջի, Չարեքտարի, Դադիվանքի, Նոր Բրաջուրի համայնքների դպրոցական շենքները, կահավորվել ժամանակակից սարքավորումներով ու գույքով: Հիմնանորոգվել են նաև նոր Մանաշիդի, նոր Խարխափուտի համայնքների դպրոցների շենքները:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ վերոնշյալ ուսումնական տարում Ստեփանակերտում գործել են հանրակրթություն իրականացնող 9 հիմնական, 1 միջնակարգ, 2 ավագ և մեկ հատուկ(ֆիզմաթ) դպրոցներ, 1 վարժարան, 1 մասնագիտական(արվեստի) քոլեջ՝ 296 լրակազմ դասարաններով (նախկին ուսումնականում՝ 321), 6891 աշակերտի ընդգրկմամբ, 4 նախադպրոցական հիմնարկ՝ մանկապարտեզ՝ 26 խմբով, 1085 երեխայի ընդգրկմամբ, 1 մանկական ստեղծագործության կենտրոն՝ 100 խմբով, 1225 երեխայի ընդգրկմամբ, 1 մարզադպրոց՝ 45 խմբով, 595 երեխայի ընդգրկմամբ (ընդամենը՝ 21 կրթական հաստատություն):

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կ.Մարգարյանի 2013-2014 ուս.տարվա հաշվետվությունում նշված է, որ 2013-2014 ուս.տարվա հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի թիվ 1 հիմնական դպրոցի նոր մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին հանրապետության ղեկավարները, ԼՂՀ ԿԳ նախարար Ս.Ասրյանը և պատասխանատու այլ անձինք: Դպրոցը կահավորված է ժամանակակից համակարգչային կաբինետներով:

Ըստ հաշվետվության տվյալների, մայրաքաղաքի Հովհ.Թումանյանի անվան թիվ 9 հիմնական դպրոցն ունեցավ ժամանակակից համակարգչային կաբինետ 2012-2013 ուս.տարում: Այն իտալահայ բարերարների՝ Սարո և Սիրան Խուդավերդյանների նվերն է դպրոցին: Ի դեպ, նշենք, որ այս բարերարների միջոցներով 2011-2012 ուս.տարում համակարգչային կաբինետ է բացվել նաև մայրաքաղաքի թիվ 5 հիմնական դպրոցում: 2013թ. օգոստոսին իտալահայ բարերարները ԼՂՀ ԿԳ նախարարի ուղեկցությամբ եղան թիվ 5 և թիվ 9 հիմնական դպրոցներում, ծանոթացան համակարգչային դասարաններին: Բարերարներն իրենց ելույթներում նշեցին, որ ամեն ինչ տարվում է՝ Արցախի երեխաների կրթությունը ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով կազմակերպելու համար[129]:

ԼՂՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ 2013-2014 ուս.տարվա մարտի 3-5-ը ԼՂՀ Ազգային ժողովում կազմակերպվեց «Ավագ դպրոց. առկա վիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով գիտագործնական կոնֆերանս: Քննարկվեցին կրթական ոլորտին վերաբերող մի շարք հարցեր: «Հանրապետությունում կրթական համակարգի առկա վիճակը և զարգացման հեռանկարները ավագ դպրոցում» թեմայով զեկուցումով հանդես եկավ ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը: Նա փաստեց, որ ԼՂՀ-ում ավագ դպրոցների ստեղծման գործընթացը սկսվել է 2009-2010 ուս.տարվանից՝ հիմք ընդունելով «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական և փորձնական ծրագրերին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության որոշումը: Արդյունքում ԼՂՀ կառավարության

2008թ. օգոստոսի 5-ի որոշմամբ հաստատվեց ավագ և հիմնական դպրոցների ցանկը, ըստ որի՝ Ստեփանակերտի թիվ 8, թիվ 11 և Շուշիի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցները վերակազմավորվեցին ավագ, իսկ Ասկերանի, Մարտակերտի թիվ 1, Մարտունու թիվ 1, Ճարտարի թիվ 1 և Հադրութի միջնակարգ դպրոցները՝ հոսքային ուսուցմամբ դպրոցների: Հոսքային ուսուցում են իրականացնում նաև նախկինում ստեղծված՝ Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը, ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմամարզական վարժարանը և Շուշիի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված հանրակրթական դպրոցը: Գործող 3 ավագ, 5 հոսքային միջնակարգ և ֆիզմաթ հատուկ դպրոցների 10-12-րդ դասարաններում ընդգրկված են 1642 սովորողներ, որոնցից 10-րդ դասարանում՝ 637, 11-րդ դասարանում՝ 526, 12-րդ դասարանում՝ 479 սովորողներ: Ավագ դպրոցների 10-12-րդ դասարաններում ընդգրկվածները կազմում են ընդհանուր սովորողների 42 տոկոսը:

Նախարարը միաժամանակ մատնանշեց, որ ավագ դպրոցի կայացումն ու հետագա զարգացումը պետք է դիտարկել որպես ընդհանուր միջնակարգ կրթության բարձրագույն աստիճան, որի արդյունավետ գործընթացը հիմնվում է հիմնական կրթության վրա, հետևաբար, առաջադեմ ավագ դպրոց կարելի է ունենալ կայացած հիմնական դպրոցի առկայության պայմաններում, և հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ապահովեն նրա բոլոր աստիճանների ներդաշնակ զարգացումը[130]:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից, վերոնշյալ ուսումնական տարում մարտի 3-5-ը աշխատանքային այցով Արցախում էր ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը, որը հանդիպում ունեցավ հանրակրթության ոլորտի աշխատողների հետ: Նա մասնակցեց նաև ԼՂՀ Ազգային ժողովում կազմակերպված «Ավագ դպրոց. առկա վիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով գիտագործնական կոնֆերանսին: ՀՀ ԿԳ նախարարը անդրադարձավ այդ ուսումնական տարում ՀՀ պարտադիր 12-ամյա կրթության անցման հարցին և նշեց, որ երկու հանրապետությունների օրենսդիր և գործադիր իշխանությունները գտնում են, որ ճիշտ կլինի անցնել պարտադիր 12-ամյա կրթության: Հանրակրթության բարեփոխումների հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է, որն արդեն մի քանի տարի է իրականացվում է 12-ամյա կրթության ապահովմամբ: Նպատակը ոլորտի համապատասխանեցումն է համընդունելի միջազգային չափորոշիչներին:

ՀՀ ԿԳ նախարարը 12-ամյա պարտադիր կրթությունը անհրաժեշտ է համարում մի քանի պատճառներով: Հայաստանում ամեն տարի մոտ 5000 երեխա 9-րդն ավարտելուց հետո ոչ մի տեղ չի սովորում: Սրանք այն երեխաներն են, որոնք փաստացի դատապարտվում են աղքատության, որովհետև կրթական նման ցածր շեմով նրանց լավ ապագա ունենալու հավանականությունը քիչ է: Նման կրթական ցենզով երեխաների առկայությունը նշանակում է աղքատության որոշակի մակարդակի պահպանում, որովհետև կրթության այդպիսի ցենզի պարագայում աշխատաշուկայում բարձր վարձատրվող աշխատանք նրանք չեն կարող գտնել: Բացի դրանից, այդ երեխաներն ունենում են սոցիալականացման խնդիր, ընկնում են փողոց, ինչը հակադաստիարակչական է: Եվ, վերջապես, 5000 երեխա բերելով ուսումնական հաստատություն՝ ուսումնական ծանրաբեռնվածություն կապահովեն ուսուցիչների համար և կխուսափեն կրճատումներից, որոնք,

ցավոք, պարբերաբար դառնում են անխուսափելի: Այս ամենը հաշվի առնելով, որոշվել է Հայաստանում և Արցախում միջնակարգ կրթությունը դարձնել պարտադիր 12-ամյա: Հանրակրթական դպրոցում սովորող 16-18 տարեկանների համար փաստացի «պայքարում» են երեք կարգի ուսումնական հաստատություններ՝ քոլեջներ, ուսումնարաններ և ավագ դպրոցներ[131]:

Ի դեպ, նշենք, որ այդ ուսումնական տարվա նոյեմբերի 7-ին ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը հրավիրել է խորհրդակցություն՝ մի շարք նախարարների և վարչակազմի ղեկավարների մասնակցությամբ, որի ժամանակ քննարկվել են նաև կրթության ոլորտի վերաբերյալ հարցեր:

ԼՂՀ ԿԳ նախարար Ս.Ասրյանը ներկայացրել է կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է փոքրաքանակ աշակերտներ ունեցող դպրոցները միավորել պետական ոչ առևտրային կազմակերպություններում (ՊՈԱԿ), ինչը թույլ կտա նրանց կառավարումը կազմակերպել կենտրոնացված մեթոդներով: Վարչապետի խոսքով՝ այս գործընթացը կրթօջախների աշխատակիցների կրճատումներ չի ենթադրում, այլ ուղղակի դպրոցների իրավական կարգավիճակն է փոխում՝ դրանք միավորելով ՊՈԱԿ-ների մեջ: Խորհրդակցությունում քննարկվել է նաև գյուղական համայնքներում գործող բոլոր պետական մանկապարտեզները դպրոցներին կից՝ մեկ վարչական կառույցում միավորելու հարցը: Այդ համատեքստում ընդգծվել է, որ նպատակահարմար չէ փոքր մանկապարտեզներում առանձին վարչական հաստիքներ ունենալ: Որոշման ընդունման պարագայում՝ շրջվարչակազմերից որոշ ֆինանսական հարցերի հետ կապված լիազորություններ կտրվեն նոր ստեղծվող ՊՈԱԿ-ներին՝ վարչակազմերի կրթության բաժիններին թողնելով միայն ուսումնադաստիարակչական գործառույթները[132]:

Այսպիսով, վերը շարադրվածից երևում է, որ կրթական համակարգի արմատական վերափոխումների շրջանում (2008-2014թթ.) հանրապետության կրթական համակարգում մեծ առաջընթաց էր նկատվում թե համակարգի բովանդակային կառուցվածքի բարեփոխումների ոլորտում, և թե դպրոցաշինության բնագավառում: Իսկ ինչ ձեռքբերումներ ու նվաճումներ եղան հանրապետության կրթական համակարգում 2014-2016թթ.-ին: Հիմնավորենք կոնկրետ օրինակներով:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ ԼՂՀ-ում վերջին տարիներին, հատկապես 2014-2015թթ.-ին, հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազան հարստացել է: Տեխնիկական հագեցվածության բարելավման առումով նշանակալի էր Հայաստանի ազգային պոլիտեխնիկ համալսարանի կողմից դպրոցներին նորագույն համակարգիչներ նվիրելը՝ ուղեկցվող բոլոր պարագաներով, ինչի շնորհիվ ավելացավ դպրոցների համակարգիչների քանակը: Ըստ պաշտոնական տվյալների, Հայաստանի բուհեը ԼՂՀ դպրոցներին նվիրել են 30-ից ավելի համակարգիչներ՝ համապատասխան սարքավորումներով: Դպրոցները միացված են համացանցին, իսկ 1-7-րդ դասարանների բոլոր աշակերտներն ընդգրկված են ՆՈՒՌ ծրագրի մեջ, ասել է թե՝ բոլոր աշակերտներն ունեն համակարգիչ: Անշուշտ, այս ամենը էական նշանակություն ունի ուսումնադաստիարակչական գործընթացին նոր որակ հաղորդելու, դասապրոցեսը ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Հանրակրթական դպրոցներում որոշակի դրական քայլեր են արվել ուսումնական առարկայական նոր կաբինետների ստեղծման ու եղածների համալրման ու հարստացման, ինչպես նաև ուսուցման կաբինետային համակարգին անցնելու ուղղությամբ: Եթե 2010-2014թթ. դպրոցներում կային 3-4 առարկայական կաբի-

նետներ, ապա 2014-2015 ուս.տարում առկա են 10 կաբինետներ, չհաշված ՆԶՊ, համակարգչային կաբինետները և արհեստանոցը: Հարկ է նշել նաև այն փաստը, որ Ստեփանակերտ քաղաքի դպրոցների տարրական դասարանները կահավորված են բարձր ճաշակով, աչքի են ընկնում ինքնատիպ ձևավորված դասարանական, ԼՂՀ պետականության ու «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպության անկյուններով, դիտողական ու ինքնաշեն պարագաների առկայությամբ: Դպրոցներն ունեն հարուստ գրադարան: Դիտարկումները ցույց են տվել, որ այդպիսի անկյուններ կան շրջանների համարյա բոլոր դպրոցներում[133]:

Ըստ «Լուսարար» թերթի 2015թ. 8-րդ համարում տպագրված՝ թերթի գլխավոր խմբագիր Սվետլանա Խաչատրյանի հաղորդումների, 2014-2015 ուս.տարվա մարտի 22-ին ՀՀ ԿԳ նախարար Ա.Աշոտյանը հանդիպում ունեցավ ԼՂՀ կրթության ոլորտի աշխատողների հետ:

Ա. Աշոտյանի նախաձեռնությամբ Արցախում անցկացվեց կարևոր միջոցառում՝ «Կրթություն առանց խտրականության»՝ Բոլոնիայի համատեքստում միջազգային խորհրդաժողովը, ինչի արդյունքում ԼՂՀ-ն հայտ է ներկայացրել Եվրոպական կրթական գործընթացին մասնակցելու: Անկախ նրանից, թե ինչ որոշում կընդունվի, կարևորվում է այն, որ մեկ անգամ ևս բարձրաձայնում ենք չճանաչված պետության ժողովրդի միջազգային իրավունքի մասին: Երկու հայկական հանրապետությունների համագործակցության արդյունքում իրականացվել են մի շարք ձեռնարկումներ, ինչպիսին են նյութատեխնիկական աջակցության, դպրոցական, բուհական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրման և արդիական նշանակություն ունեցող այլ ծրագրեր:

Նախարար Ա. Աշոտյանը իր զեկուցման մեջ նաև նշեց, որ 2011-2014 ուս.տարում ՀՀ ներառական կրթության համակարգի ներդրման քաղաքականությունը արժանացավ միջազգային բարձրագույն գնահատականի՝ միջազգային մրցանակի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: ՀՀ ԿԳ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների մեկ այլ լրջագույն նախաձեռնություն վերաբերում էր պարտադիր 12-ամյա կրթության անցմանը: Կառավարությունը այդ օրինագիծը ներկայացնելով նպատակ ուներ նախևառաջ բարձրացնել նվազագույն կրթական ցենզը՝ շեմը: Այս բարեփոխման մեջ իր տեղն ունի նաև մասնագիտական կրթական համակարգը՝ քոլեջը և ուսումնարանը, որովհետև չի պարտադրվում 12-ամյա հանրակրթություն, այլ պահանջվում է 12-ամյա միջնակարգ կրթություն, որի 3-րդ աստիճանը կարող է իրականացվել ուսումնարանների և քոլեջների հենքի վրա: Դա նաև հնարավորություն կտա այն երեխաներին, որոնք հանրակրթությունից առանձնապես չեն փայլում, սովորել արհեստագործական ուսումնարանում ու ստանալ համապատասխան մասնագիտություն[134]:

Ա. Աշոտյանը մասնակցել է նաև ԼՂՀ ԿԳ նախարարության խորհրդակցությանը, որին մասնակցում էին շրջանային կրթության բաժինների վարիչները, գլխավոր մասնագետները, դպրոցական տեսուչները, տնօրենները և այլ անձինք:

Խորհրդակցությունում զեկուցումով հանդես եկավ ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը: Նախարարը ներկայացրեց վերջին երկու տարում (2014-2016թթ.) հանրապետության կրթական համակարգում ունեցած ձեռքբերումներն: Նա մատնանշեց, որ ներկայումս հանրապետությունում, որպես գերակա ուղղություն, ավագ դպրոցի զարգացման խնդիրներն են իրականացվում: Տեխնիկական հագեցվածության, մասնագետներով ապահովման, ընդհանուր բնույթի մի շարք կազմակերպական հարցեր կգտնվեն նախարարության ուշադրության կենտրոնում:

Հանրապետությունում գործում են 240 կրթական հաստատություններ, որոնցից 5-ը՝ ավագ դպրոցներ, 31-ը՝ արտադպրոցական ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ ՄՊՍԿ-ներ, մարզադպրոցներ, արվեստի, երաժշտական դպրոցներ: Տարեցտարի ընդլայնվում է նաև դրանց ցանցը, շրջանային արտադպրոցական հաստատություններում ավելանում է ըստ բնակավայրերի ենթաշրջանային խմբակների քանակը:

Նախարարը իր զեկուցման մեջ նաև նշեց, որ 2014-2015 ուս.տարում հանրապետության դպրոցներում 1-ին դասարան կընդունվեն 2800 երեխա: Սա ամենաբարձր ցուցանիշն է վերջին 20 տարվա (1995-2015թթ.) ընթացքում: Դիտարկումները ցույց են տալիս, որ հետագա տարիներին էլ աճի միտում կլինի: 2015-2016 ուս.տարում Ստեփանակերտի դպրոցների 1-ին դասարան ընդունվել են 1050 երեխա: Այդ ուսումնական տարում շարունակվել են կրթական համակրգի բարեփոխումները ըստ կրթական աստիճանների: Հանրապետության 143 հանրակրթական դպրոցներ օգտվում են համացանցից, իսկ 2008-2009 ուս.տարում՝ 62 դպրոցներ: Դպրոցներում գործում է «dasaran.am» ծրագիրը՝ դարձյալ ըստ համացանցային ընդգրկվածության: Դրական գործունեություն է նկատվում այն առումով, որ առարկայագետ ուսուցիչները տիրապետում են համակարգչին, ինչպես նաև ծնող-ուսուցիչ կապն է ապահովվում:

ԼՂՀ ԿԳՆ և ՀՀ ԿԳՆ համատեղ ջանքերով ստեղծվել է միասնական դպրոցական ցանց, այսինքն Արցախի կրթական համակարգը միանալու է Հայաստանի ընդհանուր համակարգին և ապահովվելու են ուսումնական հաստատությունների փոխակերպումն ու կապը, կառավարումը:

ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը զեկուցման մեջ ներկայացրեց նաև վերջին երկու տարում (2014-2015թթ.) հանրապետության կրթական համակարգում կատարված փոփոխությունները: Նախարարի զեկուցման մեջ բերված փաստերը հիմնավորված են ըստ շրջանային կրթության բաժինների ներկայացրած հաշվետվությունների տվյալների:

Ակսպես, օրինակ՝ վերոնշյալ ուսումնական տարում Մարտակերտի շրջանի 37 հանրակրթական դպրոցների 70 տոկոսը հիմնանորոգված և նորակառույց դպրոցներ են, որտեղ սովորում են 3664 աշակերտ, դասավանդում 864 ուսուցիչ: Դպրոցներին կից գործում են 7 մասնաճյուղեր: Շրջանում 34 դպրոցներ ունեն համակագչային կաբինետներ, իսկ 106 առարկայական կաբինետները, այդ թվում ռազմական, կահավորված են ժամանակակից սարքավորումներով[135]:

ԼՂՀ ԿԳ նախարարությանը ներկայացրած՝ Մարտունու շրջվարչակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Զ. Ղուլյանի հաշվետվությունից («Լուսարար», 2015թ. թիվ 29)[136] տեղեկանում ենք, որ 2014-2015 ուս.տարում շրջանում գործել են 36 հանրակրթական դպրոցներ՝ 7 մասնաճյուղերով, որոնցից 24-ը՝ միջնակարգ (2-ը՝ հոսքային), 12-ը՝ հիմնական դպրոցներ՝ 368 դասարան համակազմով և 3595 սովորողներով: Դասարան-կոմպլեկտների միջին խտությունը կազմել է 9-77-10 աշակերտ: Դպրոցներում կան 1291 աշխատողներ, որից 878-ը՝ ուսուցիչներ: Շրջանում դպրոցաշինությունը լայն թափ է ստացել: Հիմնականում ավարտվել են Նոր շենի միջնակարգ և Ծովատեղի ու Կարմիր շուկայի հիմնական դպրոցների նորակառույց շենքերի շինարարական աշխատանքները: Դպրոցներն ապահովված են համակարգիչներով, տպիչ սարքերով, լաբորատոր սարքավորումներով, 24 դպրոցներ ունեն համակարգչային կաբինետներ:

2014-2015 ուս.տարում շրջանի դպրոցներում գործել են 35 համակարգչային,

104 առարկայական կաբինետներ և 117 մեթոդմիավորումներ, որոնք հիմք են հանդիսացել ուսումնական գործընթացը բարելավելու համար:

Կրթության բաժնի վարիչը իր հաշվետվության մեջ նշում է մի կարևոր հարցի մասին. դպրոցներում շատ աշակերտներ, օգտվելով իրենց իրավունքից, շարունակում են ուսումը ավագ դասարաններում, սակայն առանց սովորելու նպատակի: Նման աշակերտների հայտնվելը ավագ դասարաններում խոչընդոտում է սովորելու ցանկություն ունեցող աշակերտներին և բացասաբար է անդրադառնում ուսման որակի ու առաջադիմության վրա: Այս հույժ կարևոր հարցը քննարկվել է ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում (2014թ. մարտի 18-ին) և հանձնարարվել շրջանային կրթության բաժինների վարիչներին, նախարարության գլխավոր մասնագետներին՝ տեղերում ծանոթանալ և կանոնակարգել, այսինքն ստուգել այն աշակերտների հնարավորությունները, ովքեր ունակ են սովորելու ավագ դասարաններում: Անշուշտ, նման ստուգումները տվել են իրենց արդյունքները. ավագ դասարաններում բարձրացել է սովորողների ուսման առաջադիմությունը, ինչպես նաև՝ դպրոցի և այդ տիպի դպրոցներում դասավանդող ուսուցիչների հեղինակությունը հասարակության մեջ (ի դեպ, նշենք, որ բարձրացված հարցի մասին նմանատիպ կարծիքներ են արտահայտել նաև մյուս շրջանների կրթության բաժինների վարիչները):

Կրթական համակարգի վերափոխումների նման վիճակում են գտնվում նաև Հադրութի, Ասկերանի, Շուշիի և մյուս շրջանները: Օրինակ, 2014-2015 ուս.տարում Հադրութի շրջանի 26 հանրակրթական դպրոցները համարյա հիմնանորոգված են և կառուցվել են 10-ից ավելի նոր դպրոցական շենքներ: Ինչպես նշել ենք, անցած ուսումնական տարվա համեմատությամբ, 22 դպրոցներ ունեն համակարգչային, 39-ը՝ առարկայական կաբինետներ: Դպրոցներում սովորողների թիվը անցած ուս.տարվա (1993 աշակերտ) համեմատ ավելացել է 32-ով, դասավանդող ուսուցիչների թիվը պակասել է 18-ով (անցած ուս.տարում՝ 534): Շրջանում գործում են նաև երաժշտական, արվեստի և սպորտի դպրոցներ: Համեմատաբար Ասկերանի շրջանում դպրոցների քանակը ավելացել է 7-ով (33 դպրոց), 26 դպրոցներ ունեն համակարգչային կաբինետներ: Դպրոցներում սովորում են՝ անցած ուս.տարվա համեմատ (2258) 2294 աշակերտ, դասավանդում 678 ուսուցիչներ:

Շուշիի շրջանում դպրոցների քանակը նույնն է՝ ինչպես անցած ուս.տարում: Միայն ավելացնենք, որ 2015-2016 ուս.տարում Շուշի քաղաքում արդեն գործում էր «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանը, որն իր կառուցվածքով, շենքային պայմաններով, մասնագիտություններով, ուսումնական պլաններով, ուսումնառության առանձնահատկություններով գործելու է ֆրանսիական մոդելով: Ուրախալի է այն հանգամանքը, որ 9-րդ դասարանի շրջանավարտների սակավության պայմաններում այստեղ կարողացել են համալրել պահանջվող 60-ի հասնող դիմորդների քանակը:

Իրենց գործունեությունը շարունակել են նաև մյուս երկու՝ Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանները: Թեպետ այստեղ էլ սովորողների թերահամալրում կա, սակայն հիմնական մասնագիտությունների գծով դիմորդներ ապահովվել են:

Որոշակի փոփոխություններ են կատարվել նաև Քաշաթաղի և Շահումյանի շրջանների, մայրաքաղաքի կրթության ոլորտներում: Երկու շրջաններում 2014-2015 ուս.տարում դպրոցների, աշակերտների և ուսուցիչների քանակական կազ-

մը չի փոխվել. միայն ավելացել են համակարգչային կաբինետները: Քաշաթաղում 51 հանրակրթական դպրոցներ ունեն 122 առարկայական և 39 համակարգչային, ռազմական կաբինետներ՝ կահավորված ժամանակակից սարքավորումներով, իսկ Շահումյանի շրջանում գործող 16 դպրոցներն ունեն 32 առարկայական և 12 համակարգչային կաբինետներ: Մայրաքաղաքում գործող կրթական հաստատությունները համալրվել են ժամանակակից համակարգչային սարքավորումներով:

Այսպիսով՝ 2015թ. տվյալներով, հանրապետության հանրակրթական տարբեր տիպի դպրոցների մեծ մասը ապահովվել է նվազագույն թվով համակարգիչներով կամ համակարգչային դասարաններով և դրան զուգահեռ ընթանում են նաև համացանցային աշխատանքները: Հանրապետությունում դպրոցաշինությունը մշտապես գտնվում է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այսպես՝ 2014-2015 ուս.տարում 5 դպրոցական նոր շենքեր են կառուցվել՝ Ստեփանակերտի թիվ 1, 6, Ասկերանի շրջանի Աստղաշենի, Մարտակերտի շրջանի Չափարի, Քաշաթաղի շրջանի Արտաշավիի միջնակարգ դպրոցները: Իսկ 2015-2016 ուս.տարում կառուցվել է 6 դպրոցական շենք: Վերակառուցման աշխատանքներ են ընթանում Ստեփանակերտի թիվ 9, Միջնավանի, Թալիշի, Հադրութի շրջանի Մեծ Թաղերի, Տողի, Մարտունու շրջանի Սոսի, Խնուշինակի և այլ դպրոցներում: Այս գործընթացն ավելի մեծ թափ է առնում նաև 2015-2016 ուս.տարում: Հանրապետության համարյա բոլոր դպրոցներն ունեն հարմարավետ շենքային պայմաններ, ապահովված են անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով[137]:

Սակայն, ցավոք սրտի, նորից Բաքվի ռազմատենչ քաղաքականության պատճառով Արցախի Հանրապետությունում 2016թ. ապրիլի 2-ին սկսվեցին լայնամասշտաբ ռազմական գործողությունները, Մարտակերտի, Հադրութի, Մարտունու շրջաններում ավերվեցին դպրոցական շենքեր և դպրոցներում ուսումնական պարապմունքների կազմակերպման համար բավականին մեծ դժվարություններ ստեղծվեցին: Սակայն քառօրյա պատերազմից հետո ԼՂՀ կառավարության կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ՝ կրթական հաստատությունների և այլ ոլորտների աշխատանքների վերականգնման անհետաձգելի միջոցառումների վերաբերյալ: Շրջանային վարչակազմերի անձնուրաց աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում վերանորոգվեցին դպրոցական շենքերը և պատշաճ մակարդակով կազմակերպվեցին սովորողների ուսումնադաստիարակչական, արտադասարանական աշխատանքները (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

3. ՀՀ և ԼՂՀ կրթության միասնական քաղաքականությունն ու զարգացման միտումները

Ինչպես նշեցինք աշխատության նախորդ բաժնում, Արցախը (1991թ. սեպտեմբերի 2-ին) և Հայաստանը(1991թ. սեպտեմբերի 21-ին) ձեռք բերեցին քաղաքական անկախություն և, համեմատած նախորդ տասնամյակների հետ, նշանակալից հաջողությունների հասան տնտեսության, գիտության, մշակույթի ու կրթության բնագավառներում: Հայաստանը և Արցախը հնարավորություն ստացան միասնաբար լուծելու իրենց առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները: Նախկին ԽՍՀՄ-ի կողմից Հայաստանի նկատմամբ և հատկապես Ադրբեջանի իշխանությունների կողմից՝

Ղարաբաղի հայության նկատմամբ ու վարչահրամայական մեթոդներով կառավարվող տնտեսությունից և ամբողջովին քաղաքականացված կրթական համակարգից անցումն ազատականի, նորանկախ Հայաստանի Հանրապետությունում և նորաստեղծ ԼՂ Հանրապետությունում արմատապես փոխվեցին ոչ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քաղաքական կյանքը, հանրապետության կառավարման համակարգը, այլև հրատապ խնդիր դարձավ նոր միասնական կրթական համակարգի ստեղծումն ու զարգացումը, ինչպես նաև կրթության միասնական քաղաքականության իրականացումը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի դաստիարակումն է[138]:

Ըստ «Կրթության մասին» օրենքի պահանջների, պետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը[139]:

Վերլուծությունները ցույց տվեցին, որ անկախություն ձեռք բերելուց հետո առաջին հինգ տարիները(1991-1995թթ.) Հայաստանում և նորաստեղծ Արցախի Հանրապետությունում բոլոր կրթական հաստատությունների համար առաջացել էին բավականին լուրջ դժվարություններ: Ստեղծված անբարենպաստ պայմաններում Հայաստանի և Արցախի կրթական հաստատությունները իշխանությունների հոգատարության շնորհիվ կարողացան 1991-1995թթ. ընկած ժամանակահատվածում պահպանել իրենց գոյությունը, ստեղծել անցումնային շրջանին բնորոշ կրթական կանոնակարգեր, նպաստել կրթական համակարգի օրենսդրական հենքի ստեղծմանը, ինչպես նաև վերականգնել նախկինում գործող միջկրթական հաստատությունների կապերն ու ստեղծել նոր, ժամանակին համահունչ կապեր: 90-ական թվականների սկզբին Հայաստանի կրթական համակարգի վերափոխման վերջին փուլը միտված է Հայաստանում, ինչպես նաև Արցախում հանրակրթության նոր որակի ձևավորմանը և համակարգի միջազգային ինտեգրմանը՝ ինքնավարության հիմքի վրա: Նորանկախ երկու հանրապետությունների կրթական հաստատություններում փոխվեց հումանիտար, ազգային, բնապահպանական առարկաների դասավանդման ուղղվածությունը, որը միտված է բազմակողմանի զարգացած առաջադեմ ու հայրենանվեր մասնագետի կրթության ու դաստիարակության, ազգային մտածելակերպով ու նկարագրով օժտված քաղաքացու ձևավորմանը: Առաջադրված ծրագրային հիմնադրույթների գլխավոր լեյտմոտիվն է թոթափել կրթական համակարգում տասնամյակների լճացումը (հատկապես ԼՂ ինքնավար մարզի կրթական համակարգում) և ձգտել կրթական նոր համակարգի զարգացմանը: Խնդիր դրվեց բուհերը վերածել համալսարանների ոչ միայն ձևով ու կառուցվածքով, այլև բովանդակությամբ ու էությամբ, իսկ միջնակարգ մասնագիտական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում արմատապես վերափոխել թե կառուցվածքը և թե կրթության բովանդակությունը, ինչը հնարավորություն կտա կազմակերպելու կրթադաստիարակչական գործընթացը՝ առանց սահմանափակելու ուսուցչի ստեղծագործական ազատ գործունեությունը:

Վերլուծությունները ցույց տվեցին, որ ԼՂՀ կառավարության 1995-1998թթ.-ին ընդունած սխալ որոշումները (նկատի ունենք երկու որոշումները) բացասաբար են անդրադարձել կրթության համակարգի վրա: Փաստորեն կրթության բնագա-

վառում պետական ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով նախադպրոցական հիմնարկները փակվեցին, որով կրթական ծրագրի ընդհանուր շղթայից լրիվ անջատվեց նախադպրոցական կրթությունը: Կրթական համակարգի զարգացման վրա առավել բացասական ազդեցություն ունեցավ 1998թ. նոյեմբերի 10-ին ԼՂՀ կառավարության ընդունած «Համայնքի սեփականության գույքի ցանկը հաստատելու մասին» սխալ որոշումը, որի համաձայն՝ հանրապետության պետական կրթական հաստատություններն ընդգրկվեցին համայնքների սեփականության գույքի ցանկում:

Հարկ է նշել նաև դրական կողմը, որ պատերազմական պայմաններում և հետպատերազմյան ժամանակաշրջանում (1991-1998թթ.), կրթության բնագավառում պետական քաղաքականությունը միտված էր կրթության համկարգում որոշակի բարեփոխումների իրականացմամբ՝ ավերված դպրոցական շենքերի վերանորոգում, վերաբնակեցված շրջաններում (Քաշաթաղում, Շահումյանում) նոր դպրոցների բացում, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում (դպրոցներն ապահովել գույքով, սարքավորումներով): Հանրակրթական բնագավառում նշանակալից դեր ուեցավ 1996թ. ՀՀ և ԼՂՀ կառավարությունների կողմից պետական հանրակրթական հաստատությունների օրինակելի կանոնադրության հաստատումը, որի համաձայն դպրոցին իրական հնարավորություն տրվեց տարբերակված, հոսքային դասարաններ բացելու և կադրային համալրման հարցերում: Սակայն 1997թ. ՀՀ և ԼՂՀ կառավարությունների ընդունած նոր որոշումներով որոշ փոփոխություններ են կատարվել դպրոցական օրինակելի կանոնադրության մեջ, և ամբողջությամբ վերանայվել են հանրակրթական հաստատության կառավարման և ֆինանսավորման վերաբերյալ բաժինները: Խորհուրդների միջոցով ներմուծվել է կառավարման նոր ձև: Եվ այսպես, 1998թ. հոկտեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ վերը հիշատակված նույն թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ հանրակրթական դպրոցները հանձնվել են համայնքների կառավարմանը: Սակայն անցած մի քանի ամիսները վկայեցին, որ նման որոշումը սխալ է և հազիվ թե կարողանա իրեն արդարացնել:

Ի դեպ, նշենք, որ 1998թ. որոշման համաձայն, դպրոցների հաստիացուցակում կրճատվել է արտադասարական աշխատանքների գծով կազմակերպչի հաստիքը, որի հետևանքով արտադասարանական միջոցառումների քանակը խիստ կրճատվել է, որը նույնպես բացասական է անդրադառնում սովորողների դաստիարակության վրա:

Ինչպես տեսնում ենք, հանրապետության կրթական համակարգը փոփոխությունների լուրջ կարիք ունի: Հատկապես անհետաձգելի հարց է դպրոցները որակյալ կադրերով ապահովելը: Այդ հարցը հանգամանորեն քննարկվեց ԼՂՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 10-ի ընդլայնված նիստում, որին մասնակցում էին հանրապետության կրթական հաստատությունների, շրջվարչակազմերի ղեկավարները, համայնքապետերը, դպրոցների տնօրենները և այլ անձինք: Ելույթ ունեցողները նշեցին, որ հապճեպությունն ու սխալ որոշումները կարող են անշտկելի հետևանքներ թողնել՝ կաթվածահար անելով կրթական հաստատությունները, խարխլելով անգամ պետության հիմքերը: Մանավանդ որ այսօր գյուղական համայնքները դեռևս ինքնուրույն կայացած համարել չի կարելի և գյուղապետարանները չունեն համապատասխան մասնագետներ, որ կարողանան իմանալ դպրոցը, օժանդակել նրան և վերահսկել նրա գործունեությունը: Բուռն

քննարկումներից հետո կառավարությունը ընդունեց որոշում (թիվ 146[140]), որի համաձայն դպրոցները հանվեցին համայնքային սեփականության գույքի ցանկից և հանձնվեցին կրթության շրջանային բաժինների ենթակայությանը, վերականգնելով նախկին (1991-1997թթ.) կարգավիճակը, միաժամանակ առանձնացվեցին միջին և ավագ դպրոցներում սխալ ձևով կոմպլեկտավորված դասարանները:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 1999թ.-ից սկսած ԼՂ Հանրապետության կրթական համակարգը շոշափելի նվաճումներ ունեցավ: Արդեն հանրապետությունում գործում էր կրթական կայուն համակարգ՝ սկսած նախադպրոցական օղակից, մինչև բարձրագույն՝ բուհական և հետբուհական մասնագիտական կրթություն: Յուրաքանչյուր աստիճանում իրականացվում է պետական քաղաքականություն, որն ուղղված է նրան, որպեսզի կրթական համակարգն ունենա զարգացման այն աստիճանը, որն անհրաժեշտ է մեր հանրապետության զարգացման համար:

Ըստ պաշտոնական տվյալների, «Հանուն միասնական կրթության համակարգի պահպանման, զարգացման ու միասնական քաղաքականության իրականացման» հիմնահարցի շուրջ քննարկումներ եղան 1999թ. նոյեմբերի 30-ին երկու հանրապետությունների ԿԳ նախարարությունների համատեղ խորհրդակցությունում, որը տեղի ունեցավ ԼՂՀ կառավարության նիստերի դահլիճում, և մասնակցում էին հանրապետության ղեկավարները, հանրակրթության ոլորտի պատասխանատուները, Հայաստանի Հանրապետության ԿԳ նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի պատվիրակությունները՝ նախարար Էդուարդ Ղազարյանի գլխավորությամբ: Խորհրդակցության նպատակն էր կանխել կրթության համակարգի անկումը(1991-1998թթ.), հնարավորինս պահպանել նրա լավագույն ավանդույթներն ու ձեռքբերումները և միաժամանակ նախադրյալներ ստեղծել նրա հետագա զարգացումն ապահովելու համար: Խորհրդակցությունում քննարկվեց նաև դպրոցաշինության հարցը, որը պետության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է: Հիրավի, հանրապետության հիմնախնդիրներից մեկը դպրոցաշինությունն է, որը գտնվում է իշխանությունների ուշադրության կենտրոնում և այդ ուղղությամբ 2000թ.-ից հանրապետության տարբեր համայնքներում լայնածավալ շինարարական աշխատանքներ են ընթանում: Ըստ նախարարության պաշտոնական տվյալների (1994-2003թթ.), վերանորոգվել է 50-ից ավելի դպրոց, կառուցվել 22 դպրոցական շենքեր:

Այդ ժամանակահատվածում երկու հանրապետությունների ԿԳ նախարարությունների կողմից մշակվեցին և հաստատվեցին մի շարք կարևորագույն պետական փաստաթղթեր՝ «Կրթության մասին» օրենքը, «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը և այլն:

Հանրակրթական ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որը պետք է ընթանա ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացման ճանապարհով: Այս միտումով էլ 2003թ. ապրիլի 4-ին Երևանում՝ ՀՀ կրթական բարեփոխումների կենտրոնում (այժմ՝ Կրթության ազգային ինստիտուտ) «Մեկ միասնական դաշտ՝ մեկ միասնական քաղաքականություն» թեմայով կազմակերպվեց սեմինար, որին հրավիրված էր նաև Արցախի պատվիրակությունը՝ ԼՂՀ մշակույթի և սպորտի նախարար Արմեն Սարգսյանի գլ-

խավորությամբ: Պատվիրակության կազմում էին փոխնախարար Ս.Ասրյանը, նախարարության գլխավոր մասնագետներ, կրթության շրջանային բաժինների վարիչներ, դպրոցների տնօրեններ և ՀՀ կրթական բարեփոխումների Արցախի մասնաճյուղի տնօրեն Բելա Բաբայանը:

Սեմինարին զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը: Նա մատնանշեց, որ Արցախի կրթական համակարգը ամբողջությամբ ներառված է Հայաստանի կրթական համակարգի մեջ և իրականացվում է նոր կրթական համակարգի միասնական քաղաքականություն: Հետևաբար, ՀՀ և Արցախի կրթական համակարգի պատասխանատուների համատեղ մասնակցությամբ սեմինարի հրավիրումը պայմանավորված է ոլորտներին առնչվող հարցերում փորձի փոխանակման, ընդհանուր չափանիշների ձևավորման հետ, միասնական քաղաքականության և մեկ միասնական կրթական դաշտում աշխատելու հրամայականով: Նախարարը նաև շեշտեց, որ համաձայն լինելով մի բանում, որ ՀՀ-ն և ԼՂՀ-ն երկու ինքնուրույն պետական կազմավորումներ են, հետևաբար կրթական համակարգում դա «ընդունելի չէ» այն պատճառով, որ մեկ ընդհանուր դաշտում ենք աշխատում, մեկ ընդհանուր համակարգի մեջ և այն բոլոր փոփոխությունները, այն տրամաբանությունը, որով պատկերացվում է ՀՀ կրթական համակարգի զարգացումը, այդ նույն տրամաբանությունը պետք է լինի նաև ԼՂՀ-ում: Նախարարը ամենայն պատասխանատվությամբ հայտարարեց, որ իրենք ևս շատ բան ունեն սովորելու Արցախից: Հատկապես հանրակրթությունում, նրա խորին համոզմամբ, դաստիարակության բլոկը շատ ավելի լավ է դրված Արցախում, ինչպես նաև ուսուցիչների սերնդափոխությունը որոշակիորեն պահպանվել է և հանրակրթությունը որոշակիորեն ցնցումների չի ենթարկվել[141]:

Սեմինարում Հայաստանի և Արցախի կրթական համակարգերի հիմնախնդիրների շուրջ մի շարք ելույթներից հետո Լ. Մկրտչյանը ներկայացրեց կրթության քաղաքականության իրականացման ծրագիրը (հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական, նախադպրոցական, արհեստագործական, բարձրագույն և այլ հաստատությունների) ըստ ժամանակացույցի հաշվեգրված ընդհուպ մինչև 2003-2010թթ., այսինքն՝ համաձայն ծրագրի դրույթների, ՀՀ-ում և ԼՂՀ-ում վերջնականապես ձևավորվում է մեկ միասնական կրթական քաղաքականություն առաջիկա 7-8 տարիների համար:

Ներկայացնելով միասնական կրթական քաղաքականության ծրագրի նշանակությունը, ԼՂՀ ԿՄՍ նախարար Ա. Սարգսյանը իր ելույթում մատնանշեց, որ յուրաքանչյուր տարվա վերջում հնարավոր է ունենալ այդ ծրագրի արժևորումը՝ որ տարում ինչ է սպասվում: Եվ այնպիսի ամուր իրավական և ֆինանսական դաշտ է ստեղծվել, որ անկախ որևէ փոփոխությունից ու վարչական լուծումներից, այս ծրագիրը պետք է շարունակվի, որովհետև այն դառնում է ռազմավարական լուրջ քայլ Հայաստանի և Արցախի կրթական համակարգը որակական մի վիճակից մեկ այլ վիճակի դուրս բերելու համար:

Ա. Սարգսյանը նաև ընդգծեց, որ միասնական քաղաքականության ընդունված ծրագրի պահանջներին համապատասխան երկու հանրապետությունների կրթության նախարարություններում պետք է աշխատանքները տարվեն **երեք բլոկով՝ հանրակրթություն, միջին մասնագիտական կրթություն,** որն առավել թույլ մասն է (Հայաստանում և Արցախում), որ դեռևս չկա մատուցված ժամանակացույց և **բարձրագույն կրթություն,** որտեղ արդեն առկա է ամբողջական ռազմավարությունը և մնում է այն վերածել գործնական ծրագրի: Եվ այդ ծրագրում առաջին խն-

դիրը կրթական համակարգի որակի ապահովումն է: Ուրեմն՝ եթե Հայաստանը ինտեգրվում է Եվրոպական կրթական տարածքին, պետք է ունենա եվրոպական չափորոշիչներին համարժեք կրթական համակարգ: Իսկ քանի որ Արցախը Հայաստանի անբաժան հատվածն է և իրականացնում է միևնույն կրթական քաղաքականությունը, ապա նույնպես պետք է ունենա այդ չափորոշիչներին համարժեք կրթական համակարգ: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում եվրոպական չափորոշիչներին համապատասխան նոր կրթական համակարգի ձևավորումը ենթադրում է ըստ էության բովանդակային շատ լուրջ փոփոխություններ հանրակրթության ոլորտում:

Ներկայացնելով Արցախի կրթական քաղաքականությունը, նախարար Ա.Սարգսյանը կանգ առավ մի քանի հիմնախնդիրների վրա.

Առաջին՝ ուսուցչության վերապատրաստում մի քանի փուլով: Վերապատրաստում մասնագիտական, մեթոդիկայի, համակարգիչների, ինֆորմացիոն տեխնոլոգիաների իմաստով: Այս իմաստով լուրջ քայլ է արվել Արցախում բարեփոխումների կենտրոնի (ներկայիս Կրթության ազգային ինստիտուտի) մասնաճյուղ բացելու առումով, այն պետք է դառնա մի օղակ երկու նախարարությունների միջև ծրագրային ու տեսչական աշխատանքներ դնելու և դրանք համահայկական կրթական դաշտի վրա լուծել փորձելու առումով:

Երկրորդ՝ առարկայական չափորոշիչների արմատական վերափոխում այս նոր ծավալի պայմաններում, որը ենթադրում է ազգային պետական չափորոշիչների ըստ էության ձևավորում:

Երրորդ՝ մեթոդական գրականության հրատարակումը Արցախում: Դեռևս պատշաճ մակարդակի վրա չի գտնվում, սակայն Արցախում կա մանկավարժական միտք, որը ՀՀ-ի մանկավարժական մտքի մեջ համալիր չի արտացոլվում: Հիմնական խնդիրներից մեկն էլ դրանց միաձուլումն է:

Չորրորդ՝ միասնական առարկայական ծրագրերի և առարկայական չափորոշիչների, հենքային ուսումնական պլանների ստեղծում՝ բարեփոխվող դպրոցի պահանջներին համապատասխան:

Հինգերորդ՝ Հայաստանում և Արցախում դեռևս գիտելիքների միասնական համակարգ մեր կրթական համակարգում չկա:

Անդրադառնալով այդ հարցին, ՀՀ ԿԳ նախարարն ընդգծեց, որ անգամ 20-միավորանոց համակարգը կամայական է գործում: Դպրոցներում 5-միավորանոց համակարգը ավարտականում առանց որևէ հիմքի դառնում է 20: Գնահատման չափորոշիչների մեջ չկա հստակություն: Խնդիր է դրվել Հայաստանում և Արցախում շտկել այդ թերությունները, գնահատման համակարգը նույն տրամաբանությամբ ու նույն չափորոշիչներով պիտի լինի՝ կրտսեր դպրոցից սկսած, մինչև հետբուհական կրթությունը: Եվ անընդհատ իր մեջ պետք է ներառի նորանոր պահանջներ, որոնք ավելանում են կրթության որակի խորացմանը զուգընթաց:

Վերն ասվածից գալիս ենք այն համոզման, որ անկախությունից հետո երկու հանրապետությունների կրթական համակարգում ճիշտ է իրականացվում միասնական քաղաքականությունը, և վերոնշյալ հիմնախնդիրներն առկա են և Հայաստանում, և Արցախում: Անկախությունից հետո Հայաստանում և Արցախում երկու նախարարությունները ստեղծել են այնպիսի պայմաններ, որոնք կարող են կրթական համակարգում ապահովել առաջընթացը միջազգային չափորոշիչներին համահունչ: Իսկ ի՞նչ ենք հասկանում միջազգային չափորոշիչներ ասելով: Այսինքն՝ այնպիսի վիճակ, երբ մեր կրթական համակարգի յուրաքանչյուր աստի-

ճանի ավարտական արդյունքը ընդունելի լինի աշխարհի բոլոր երկրների համար և աշխարհի որևէ երկրում իր կրթական որակը զարգացնելու նախապայման լինի: Ինչպես նախարար Լ.Մկտչյան է մատնանշում.«Այսինքն՝ մենք պետք է բացվենք աշխարհին, ընդունենք աշխարհի զարգացման ընդհանուր օրինաչափությունները և կարողանանք համոզել, որ մեր ազգային կրթական առանձնահատկությունները համահունչ են աշխարհում տեղի ունեցող ընդհանուր գործընթացներին»[142]:

Կրթությունը Հայաստանում և Արցախում դիտվում է որպես ազգային անվտանգության բաղադրիչ, որպես երկրի զարգացման ու հզորացման կարևոր գործոն ու երաշխիք: Ելնելով վերը շարադրվածից, այժմ դիտարկենք երկու հանրապետություններում կրթության միասնական քաղաքականության իրականացման ուղղությունները.

1. Հայաստանում և Արցախում հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական ունակությունների զարգացումն է, հայրենասեր քաղաքացու դաստիարակումը, որը կտիրապետի մտային գործողությունների տարբեր տեսակների ու կունենա ակտիվ կենսահիմք.

2. Հայաստանում և Արցախում հանրակրթական հաստատությունները պետք է ունենան քաղաքականություն և համակարգված հայեցակարգեր, իրենց միասնական պլանների, ծրագրերի և որակավորումների համապատասխանության ապահովման համար պետք է ստանձնեն պարտավորություն որակի մշակույթի զարգացման վերաբերյալ, պետք է իրականացնեն որակի շարունակական բարձրացման ռազմավարություն:

3. Կրթության քաղաքականության գլխավոր նպատակն է ապահովել մշտական համապատասխանություն թողարկվող շրջանավարտների գիտական երաշխավորությունների տեխնոլոգիաների, մշակված մեթոդիկաների որակի և պետության, հասարակության պահանջների մեջ: Որակը պետք է դառնա այն կարևորագույն բնութագրությունը, որը ներազդում է յուրաքանչյուր կրթօջախի ամբողջ գործունեության վրա, իսկ վերջինս ուղղված է իր բարօրությանը՝ սովորողին, ծնողին, գործատուին, պետությանը և հասարակությանը:

4. Հայաստանում և Արցախում հանրակրթական դպրոցներում բոլոր սովորողները, անկախ կրթության կազմակերպման ձևից, ստանում են պարտադիր հենքային կրթություն: Դպրոց ընդունված երեխաների ճնշող մեծամասնությունը կստանա հիմնական և ավագ դպրոցի կրթություն:

5. Հանրակրթական դպրոցի բարեփոխումների պահանջներին համահունչ կամրապնդվի կրտսեր և միջին դպրոցը, և արդյունքում՝ սովորողների մեծ մասը, ցուցաբերելով միջինից բարձր առաջադիմություն, ամուր հիմքեր կստեղծվի հետագա ուսումնառությունը 12-ամյա ավագ դպրոցում և բուհում:

6. Անկախ պետության քաղաքական կարգավիճակից՝ ԼՂՀ ԿԳ նախարարության մշակած ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան, մտավոր ընդունակություններով օժտված դպրոցականներին հնարավորություն է ընձեռվում պարբերաբար մասնակից դառնալ շրջանային, հանրապետական (Արցախի և Հայաստանի) միջազգային մրցույթ-օլիմպիադաներին ու ստուգատեսներին: Դա առավելապես վերաբերում է բնագիտական առարկաներին, նաև մարզական միջոցառումներին, որոնց ուղղությամբ ղարաբաղցի դպրոցականները, մասնավորապես խորհրդային իշխանության տարիներին, բարձր արդյունքներ էին ցուցաբերում:

7. Արցախի կրթական հաստատություններում օգտագործվում են մանկավարժական գիտության ներկայիս նվաճումները, ինչպես նաև տեղի և Հայաստանի Հանրապետության լավագույն ուսուցիչների փորձը:

8. Հանրակրթական դպրոցի ուսուցիչները հնարավորություն են ունենում բարձրացնել իրենց որակավորումը: Հայաստանի կրթության ազգային ինստիտուտի համապատասխան մասնագետները և Արցախի բուհերի լավագույն դասախոսները, փորձառու վաստակաշատ մանկավարժները դասընթացներ, սեմինարներ են կազմակերպում ՀՀ ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղում: Նմանատիպ գործընթացների իրականացմամբ կրթական հաստատություններում աշխատող ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կարողանում է օգտվել համակարգիչներից ու ժամանակակից տեխնիկական ուսումնական այլ միջոցներից:

9. Հանրապետությունում դպրոց-հասարակություն-ընտանիք կապի ու դրանով պայմանավորված՝ համագործակցության ապահովումն ու ամրապնդումը: Ուսուցման արդյունավետությունը հնարավոր է ապահովել, եթե գործընկերային ու համագործակցային հարաբերություններ կան դպրոցի, ընտանիքի, սովորողների, ուսուցիչների և ծնողների միջև: Սա հրամայական պահանջ է նաև ժամանակակից կրթական գործընթացի մարդասիրական կողմը ապահովելու համար և, անկասկած, նպաստում է սովորողների ընդունակությունների ավելի խոր բացահայտմանն ու դրսևորմանը և այլն:

Ինչպես նշել ենք, հանրակրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որը պետք է ընթանա ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացմամբ: Այս առումով կարևորվում է հանրապետությունում անցումը 12-ամյա կրթության, որի ապահովման ուղղությամբ իրականացվում է առարկայական նոր չափորոշիչներին համապատասխան ծրագրերի ու դասագրքերի ներդրում, որոնք լիարժեք են(իհարկե՝ երբեմն լինում են նաև թերություններ) և ընդունվում են մասնագետների կողմից: Այդ գործընթացում առավել կարևոր հիմնախնդիր է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը, որն ավելի բարդ և տևական աշխատանք է, ինչին նպատակաուղղված է կրթության համակարգի կառավարման մարմինների, դպրոցների մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը:

Այդ հիմնախնդրի շուրջ քննարկումներ եղան 2008թ. ապրիլի 21-23-ին ԼՂՀ կառավարության նիստերի դահլիճում կայացած ընդլայնված խորհրդակցությունում, որին մասնակցում էին ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը՝ նախարար Լևոն Մկրտչյանի գլխավորությամբ, բուհերի ռեկտորները, ԼՂՀ ԿԳ նախարարության պատասխանատուները, կրթության շրջանային բաժինների վարիչները, գլխավոր մասնագետները, տեսուչները, դպրոցների տնօրենները և այլ անձինք[143]: Հանդիպումը, որը նախաձեռնել էր ԼՂՀ կառավարությունը, նպատակաուղղված էր կրթական համակարգի առկա վիճակի, հետագա ծրագրերի քննարկմանը և կրթական այնպիսի քաղաքականության մշակման ուղղությամբ առաջարկությունների ներկայացմանը, որը կապահովի երկրի անվտանգությունն ու տնտեսական զարգացումը:

Քննարկումները հիմնականում ծավալվեցին երեք հարցերի ուղղությամբ: **Առաջինը,** բնականաբար, ավագ դպրոցի հարցն էր: Համակարգում արդեն ընթանում էին մեծ փոփոխություններ, շրջանառվում էր ավագ դպրոցի գաղափարը: Ինչպես պետք է իրագործվեն դրանք՝ հաշվի առնելով Արցախի բնակավայրերի աշ-

խարհագրությունը: **Երկրորդ՝** միասնական քննությունները. որքանով են դրանք հիմք հանդիսանալու ոչ պետական բուհերում ընդունելության համար: **Երրորդ** և հիմնական հարցը վերաբերում էր բարձրագույն ուսումնական համակարգին: Բովանդակային առումով քննարկումներն ու առաջարկություններն ընթացան երկու հանրապետությունների միասնական կրթական համակարգի համագործակցության և իրականացվող բարեփոխումների ծրագրերի շուրջ:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 2010-2011 ուսումնական տարվա մարտի 18-ին ԼՂՀ ԿԳ նախարարության ընդլայնված խորհրդակցությունում վերստին քննարկել է երկու հանրապետությունների նախարարությունների միասնական կրթական քաղաքականության իրականացման հիմնախնդիրը: Խորհրդակցությանը մասնակցում էր նաև ՀՀ ԿԳ նախարության պատվիրակությունը: Հանդիպման հիմնական նպատակը միասնական կրթական համակարգում համագործակցային բարեփոխումների իրականացումն է, հիմնախնդիրը՝ անցումը 12-ամյա ուսուցման համակարգին (հետագայում՝ պարտադիր), ավագ դպրոցի կայացումը:

ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանի խոսքով՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետության կրթական ոլորտների խնդիրները համահունչ են, մոտեցումները՝ նույնը, ընդհանուր քաղաքականությունը՝ համադրելի, որովհետև ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև ստեղծված հարաբերությունների շրջանակներում ձևավորվել է ընդհանուր հայկական կրթական տարածք: Երկու հանրապետությունների կրթական համակարգերի պատասխանատուների ջանքներն ուղղված են միևնույն նպատակին՝ կրթական բարեփոխումների իրականացմանը՝ 12-ամյա կրթության անցմանը, ուսումնական նոր ծրագրերի, պլանների, դասագրքերի պատրաստմանը, դասընթացների կազմակերպմանը, ինչպես նաև ավագ դպրոցների տնօրենների վերապատրաստմանը, հավաստագրերի հանձնման քննությունների կազմակերպմանը: Օրինակ՝ ՀՀ ԿԳ նախարությունում կազմակերպվել են 1600 տնօրենների վերապատրաստման հավաստագրերի հանձնման քննություններ, որից 400-ը ստացել են անբավարար գնահատական, և նրանք չվերընտրվեցին իրենց պաշտոնում: Նման վերապատրաստման դասընթացներ և քննություններ պետք է կազմակերպվեն նաև Արցախում[144]: Իհարկե, վերապատրաստման դասընթացների կազմակերպման ու քննությունների անցկացման նպատակը այդ տնօրենների չվերընտրվելը չէր, այլ կրթական ցենզը բարձրացնելը: Ակնհայտ է, որ գիտելիքով զինված տնօրենն իրականում դպրոցի հաջողության գրավականն է:

ԼՂՀ ԿԳ նախարար Վ. Խաչատրյանը իր զեկուցման մեջ մատնանշեց. «Որպես առավել կարևորող հիմնախնդիր է համարվում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, որի ապահովումը բարդ և տևական գործընթաց է, ինչին նպատակաուղղված է կրթության պետական կառավարման մարմինների և համակարգի մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը: Այս համատեքստում ավագ դպրոցների համակարգի ստեղծումն անհրաժեշտ նախապայման էր: Հայաստանում առաջին պիլոտային ավագ դպրոցները սկսեցին գործել 2008թ.-ից, իսկ 2009թ.-ից անցան լայնածավալ ավագ դպրոցների ցանցի ստեղծման: Նույնը կատարվեց նաև ԼՂՀ-ում: Այս բարեփոխումները Հայաստանում և Արցախում սկսվեցին տնտեսական համեմատաբար վերելքի պայմաններում: 2010-2011 ուս.տարում ԼՂՀ-ում ստեղծվեցին 3 ավագ դպրոցներ (Ստեփանակերտում՝ 2, Մարտակերտում՝ 1) և ավագ դպրոցի 5 հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցներ: 2012թ.-ին նախատեսվել էր ընդլայնել ավագ դպրոցների ցանցը՝ են-

թաշրջանային ավագ դպրոցների ստեղծմամբ, սակայն որոշակի դժվարությունների և թերահավատության պատճառով այն չիրականացավ և առաջիկայում քննարկման կներկայացվեն այլ մոտեցումներ: Նախարարության կողմից ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ ավագ դպրոցների լիարժեք գործունեության համար, նրանց են տրամադրվել նոր գույք՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մասնակիորեն՝ աշխարհագրության կաբինետների սարքավորումներ, նյութեր ու այլ դիտողական պարագաներ, դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ, ստեղծվել են ժամանակակից համակարգչային-տեղեկատվական կաբինետներ: Վերապատրաստվել են այդ դպրոցներում դասավանդող ուսուցիչները, դպրոցների տնօրեններն ու փոխտնօրենները»[145]:

Որոշ անդրադարձ կատարենք վերը հնչեցված միտքը պարզաբանելու համար: Հանրակրթական դպրոցներում կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունները ցույց են տվել, որ ավագ և հոսքային դպրոցների ստեղծումը դրանց առաջին նախապայմաններն են: Սակայն միանշանակ չի կարելի արձանագրել, որ 12-ամյա կրթությունը, ավագ և հոսքային դպրոցների ստեղծումը որոշակիացրին այն հարցի պատասխանը, թե որքանով է արդյունավետ աշխատանք տարվում հոսքային ուսուցման ուղղությամբ: Բերենք կոնկրետ օրինակ: Ինչպես 2012-2013 ուս.տարում, այնպես էլ 2013-2014 ուս.տարում հանրապետության շրջաններում դպրոցների համալիր ստուգման արդյունքներով պատկերը հետևյալն էր: Մինչ ստուգումներ անցկացնելը դպրոցներում առաջադիմությունը 80-100 տոկոս էր, որակը՝ 35-70 տոկոս, իսկ ստուգման արդյունքում առաջադիմությունը 46-52 տոկոս էր, որակը՝ 12-35 տոկոս: Սա խոսում է դպրոցներում գնահատականների արհեստական բարձրացման մասին, որ ուսուցիչները նման ձևով գնահատելով՝ զբաղվում են ինքնախաբեությամբ, և քանի որ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչությունը 5-6 տարին մեկ է կարողանում համալիր ստուգումներ իրականացնել դպրոցներում, դա նույնպես պարարտ հող է ստեղծում որոշ անբարեխիղճ ուսուցիչների համար: Կրթության պետական տեսչությունը, շրջանի կրթության լավագույն մասնագետները ուսուցիչներին ցույց են տալիս մեթոդական օգնություն, կազմակերպում սեմինարներ ուսման որակի և օբյեկտիվ գնահատման ու առաջադիմության բարձրացման ուղղությամբ: Համալիր ստուգումների արդյունքները մանրամասնորեն քննարկվում են օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում:

Ըստ վերլուծությունների, շրջաններում աստիճանաբար կանոնակարգվում է ավագ դպրոցներում հոսքային դասարաններ ընդունելու կարգը, որը կատարվում է սովորողների ընտրությամբ, կանոնակարգվում է նաև 2-րդ կիսամյակում 12-րդ դասարանցիների դպրոց հաճախելու կարգը: Ավագ դպրոց ընդունվում են այն աշակերտները, ովքեր ի վիճակի են հաղթահարել նախատեսված հարցաշարը, որպես ընդունելության քննություն:

Քննարկվող հիմնահարցի հետ կապված՝ նպատակահարմար ենք գտնում նաև համառոտակի ներկայացնել «Կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ կրթության բնագավառում պետական միասնական քաղաքականության խնդիրները և 5-րդ հոդվածով սահմանված՝ պետական քաղաքականության սկզբունքները:

Ըստ նշված օրենքի պահանջների՝ կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության խնդիրներն են՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է

կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն.

- կրթական հաստատություններում կրթության որակի ապահովում.
- պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում շրջանավարտ մասնագետների պատրաստմանն աջակցելը.
- միջազգային կրթական համագործակցության զարգացմանն ու դրա ինտեգրմանը նպաստելը.
- կրթական հաստատություններում մասնագիտական կրթության համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը միջազգային ասպարեզում.
- ՀՀ և Արցախի Հանրապետության կրթական հաստատություններում ուսուցման որակի գնահատման չափանիշների ներդրումը.
- կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթի ապահովում.
- ՀՀ և Արցախի Հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- պետական ուսումնական հաստատություններում (հանրակրթական դպրոցներում) ուսուցումը անվճար է.
- ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն.
- Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով, «Լեզվի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան և այլն...[146]:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- կրթությունը նպատակաուղղված է հանրակրթական դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու, ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը.
- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.
- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին.
- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.
- **սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանը և Հայաստանի Հանրապետության հետ ընդհանուր ուսումնագիտական դաշտի ստեղծմանն աջակցելը.**
- Կրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափա-

նիշներին համապատասխանությունը, ինչպես նաև **միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.**

- **ուսումնական հաստատություններում** ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.
- **պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.**
- Հայաստանի Հանրապետության և **Արցախի Հանրապետության կրթական** ծրագրերի փոխհամաձայնեցումը և այլն...[147]:

Ի մի բերելով վերոշարադրյալ հիմնահարցերի քննական վերլուծությունները, կարևորում ենք նաև նշել, որ կրթական միասնական քաղաքականության իրականացման անհրաժեշտ միջոց է նաև երկու հանրապետությունների կրթական հաստատություններում մանկավարժական գիտության ներկայիս նվաճումների, առաջավոր փորձի օգտագործումը, ինչպես նաև ուսուցման կազմակերպման ձևերի արմատական վերակառուցումը, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ պատշաճ մակարդակով աշխատանք տանելը, սովորողներին միջազգային մրցույթ-օլիմպիադաներին ու ստուգատեսներին մասնակից դարձնելը՝ ոլորտում ընդգրկելով լավագույն մասնագետներին:

Այսպիսով, ելնելով վերը շարադրվածից, կարող ենք հստակ ձևակերպել, որ քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ-ում և Արցախի Հանրապետությունում՝ 90-ական թվականներից սկսած, կրթության բնագավառում իրականացվում է հստակ մշակված միասնական քաղաքականություն, որի նպատակը կրթական հաստատություններում կրթության որակի ապահովումն ու բարելավումն է, միասնական կրթական դաշտում կրթական ծրագրերը ճկուն դարձնելը, ժամանակի հետ համընթաց այլ երկրներում ճանաչելի դարձնելը և, վերջապես, այն համապատասխանեցնելը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայի պահանջներին:

4. ԼՂՀ կրթական համակարգի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանում և Արցախում՝ 90-ական թվականներին (1991-1998թթ.) սոցիալ-տնտեսական ծանր վիճակով պայմանավորված, կրթության ոլորտում առաջացել են բազմաբնույթ հիմնախնդիրներ, որոնցից ամենաէականը հետևյալն են՝

- կրթական հաստատություններում սովորողների կրթության որակի ապահովումը, ներկայացվող միասնական պահանջների փոփոխություններն ընդհանուր կրթության զարգացման համակարգում.
- կրթության պետական ֆինանսավորումը և կրթության բնագավառում բարենպաստ հարկային քաղաքականությունը.
- օրենսդրության անկատարություն, ենթաօրենսդրական ակտերի բացակայություն և օրենքների թերկիրառում.
- նյութատեխնիկական և ուսումնամեթոդական անբավարար հիմքը և հետագա տարիներին բարենպաստ պայմանների ստեղծումը.
- համակարգի անարդյունավետ գործառություն.
- կրթության կառուցվածքի և բովանդակության անհամապատասխանություն շուկայական հարաբերությունների պահանջներին և այլն:

Նպատակահարմարությունից ելնելով՝ ամենաէական համակարգային հիմնախնդիրները դիտարկենք առանձին առանձին:

Կրթական հաստատություններում սովորողների կրթության որակի ապահովումը, ներկայացվող միասնական պահանջների փոփոխություններն ընդհանուր կրթության զարգացող համակարգում

Հանրակրթության զարգացման դիտարկվող արդի փուլում կրթական քաղաքականության գլխավոր խնդիրը կրթության որակի ապահովումն է՝ նրա արդյունավետության բարձրացման հիման վրա, պահպանելով սովորողների գիտելիքների մատչելիությունը և համապատասխանումը հասարակության և պետության արդիական ու հեռանկարային պահանջմունքներին: Չնայած Արցախի կրթական համակարգն ունի հարուստ պատմություն և մասնագիտական կրթությունը ձևավորված բնագավառ է, անշուշտ, այսօր ընթացող բարեփոխումների պահանջներին համապատասխան այն արդիականացման ու կատարելագործման խնդիր ունի և չպետք է թույլ տալ, որ այն համահունչ չլինի կրթության, տնտեսության և սոցիալական ոլորտի համար կադրերի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջներից, և ժամանակակից դպրոցում կրթություն ստացած և բուհն ավարտած շրջանավարտների պատրաստման որակը պետք է բավարարի հասարակության ու պետության պահանջմունքները:

Ելնելով վորոհիշյալից՝ հարկ է նշել, որ ներկայումս Արցախում կրթության զարգացումը սերտորեն կապված է հասարակության զարգացման հետ: Հիրավի, դա պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝

- արտադրության աճով, որի կազմակերպման համար հիմնականում պահանջվում են բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող որակյալ մասնագետներ կայուն գիտելիքներով.
- գիտատեխնիկական տեղեկատվության կտրուկ աճով.
- տեխնոլոգիաների արագ նորացմամբ, բարոյական մաշվածության վիճակում գտնվող արտադրական հզորությունների արագ փոփոխման ճանապարհով.
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն օգտագործմամբ:

Այժմ Հայաստանում և Արցախում, ինչպես աշխարհի շատ երկրներում, ձգտում են ձեռք բերել այնպիսի կրթություն և մասնագիտություն, որը թույլ կտա մրցունակ լինել աշխատանքի համաշխարհային շուկայում՝ ժամանակակից պայմաններում դա կարևորագույն մի գործոն է, որին կարելի է հասնել կրթական համակարգի ձևավորման և կառավարման դեպքում: Այս նպատակով Հայաստանում և Արցախում կրթական ազգային համակարգերը անցում են կատարում միասնական ընդհանուր կրթական ծրագրերի որակի ստանդարտների ներդրմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ներկայումս Հայսատանում և Արցախում ժամանակակից կրթական համակարգը իր էությամբ տարբերվում է նախորդ տասնամյակներում (նկատի ունենք 90-ական թվականները) գոյություն ունեցող համակարգից: Չնայած այդ շրջանում կրթության ոլորտում իրականացված բարեփոխումներին, այնուհանդերձ, կրթական հաստատություններում կրթության որակը քիչ է տարբերվում նախորդից:

Ըստ մեր վերլուծությունների՝ կարևորում ենք նշել, որ Հայաստանի և Արցախի պատմամշակութային և սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող զգալի

փոփոխությունները, անշուշտ, հասարակության կողմից նոր, բովանդակային հարցադրումներ են առաջադրվում մասնագիտական բարձր պատրաստություն ստացած մանկավարժին, հետևաբար՝ մանկավարժական ուսումնական հաստատություններին: Դա նշանակում է, որ հանրակրթական դպրոցների շրջանավարտների մասնագիտական մակարդակը բարձր է:

Հանրակրթական դպրոցներում կատարած վերլուծությունները հիմք են տալիս հետևություններ անել, որ ուսուցման բովանդակության և տեխնոլոգիաների բնագավառներում նորացման որոնումները դեռևս դուրս չեն գալիս ապագա մասնագետների պատրաստման առկա սահմաններից և, իհարկե, չեն բերում արմատական բարեփոխումներ: Գտնում ենք, որ Հայաստանում և Արցախում կրթության ներկայիս գործող համակարգն իր գերատեսչական մշակմամբ և ծավալներով կհամապատասխանի ժամանակակից դպրոցի պահանջներին, եթե վերացվեն ուսուցման ու դաստիարակության գործընթացները խոչընդոտող առկա թերությունները: Դրանցից նշենք մի քանիսը.

1. հանրակրթության բովանդակության, ձևերի ու մեթոդների նորացման գործընթացներում հումանիտար և տեխնոլոգիական ուղղությունների անհավասարակշռությունը.

2. կրթության հիմնախնդիրների ոչ բավարար մշակվածություն՝ պայմանավորված ուսուցման մեջ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման անկատարությամբ.

3. կրթական հաստատություններում դիմորդների ընտրության, մասնագիտական կողմնորոշման անկատարությունը..

4. մանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման, ֆինանսավորման անկատարությունը[148] և այլն:

Հարկ է նշել, որ Արցախում կրթության ֆինանսավորման և դրա արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունեն կրթական գործընթացի կազմակերպումը, կառավարումն ու պլանավորումը: Այդ գործընթացները պետք է հիմնված լինեն վերափոխելու և բարելավելու այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝

1. կրթության համապատասխանեցումը պետության, տնտեսության և հասարակության պահանջներին.

2. կրթական համակարգի արդյունավետության բարձրացումը և շուկայի պահանջարկին առավել ճկուն արձագանքումը.

3. կրթության դերի բարձրացումը.

4. կրթության ծախսերի աճը և դրա հետ կապված պետական միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

5. կրթության որակի նկատմամբ մշտապես աճող պահանջների բավարարումը:

Այսպիսով, կրթության համակարգի հետագա զարգացման, դրա արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ապահովել կրթական հաստատությունների՝ որպես գիտության, արտադրության և ուսուցման միասնական կենտրոնների, ձևավորումը:

Կրթության զարգացման համար կարևոր նշանակություն ունի կրթական հաստատությունների սոցիալական պաշտպանվածության ապահովումը: Այդ նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- կրթական հաստատությունների (դպրոցներ, միջնակարգ մասնագիտական հաստատություններ, քոլեջներ, վարժարաններ) գործունեության ազատու-

մը բոլոր տեսակի հարկերից, տուրքերից.

- այն ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեության խրախուսումը, որոնք ներդրումներ են կատարում կրթության ոլորտում.
- կրթական գործընթացի կազմակերպման ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով.
- կրթության համակարգի աշխատողների, սովորողների սոցիալական պաշտպանվածության բարձրացումը, աշխատավարձերի, կրթաթոշակների (նկատի ունենք քոլեջներ, վարժարաններ, պարարվեստի և սպորտի դպրոցներ) ինդեքսավորման համակարգի կիրառումը.
- անապահով ընտանիքներից սովորողների պաշտպանվածության ուղղությամբ համապատասխան մեխանիզմների մշակումը և այլն:

Այս բոլոր պահանջներին համապատասխան կրթության վերակառուցումը, որակի բարձրացումը, իհարկե, կպահանջեն նաև ֆինանսական նոր, ավելի արդյունավետ համակարգի կիրառում: Ընդ որում՝ թույլ կտան նաև իրականացնել միասնական, ավելի նպատակային արդյունավետ ֆինանսավորում:

Կրթության պետական ֆինանսավորումը և կրթության բնագավառում բարենպաստ հարկային քաղաքականությունը.

Անկախությունից հետո ԼՂ Հանրապետության կրթական համակարգի պետական ֆինանսավորման արդի կառուցվածքը դեռևս կրում է խորհրդային նորմերի ազդեցությունը, չնայած փոփոխվում է շուկայական հարաբերությունների զարգացմանը համընթաց: Հայտնի է, որ խորհրդային տարիներին կրթության ոլորտում ֆինանսատնտեսական հարաբերություններն իրականացվում էին ուղղակի պետական կառավարմամբ, որն արտահայտվում էր կրթական հաստատությունների ներդրմանն ու արտադրական և տնտեսական գործունեությանը պետական մարմինների ուղղակի միջամտությամբ: Տնտեսական հարաբերությունների համակարգը հիմնվում էր միասնական համապետական սեփականության բազայի վրա: Հանրակրթական հաստատությունների, ինչպես մյուս բյուջետային հիմնարկների ֆինանսավորումն իրականացվում էր նախահաշվային կարգով: Նախահաշիվը իրենից ներկայացնում էր ֆինանսական պլան՝ ըստ հոդվածների: Հատկացվող միջոցների ընդհանուր ծավալը որոշվում էր՝ կախված կապիտալ վերանորոգման կամ կապիտալ շինարարության պլանների ցուցանիշներից: Բյուջետային ծախսերի նախահաշվով ստացված և մինչև տարվա վերջը չօգտագործված միջոցները հետ էին գանձվում պետական բյուջե:

Հայաստանում և Արցախում կրթության ֆինանսավորման կառուցվածքում հանրակրթության մասնաբաժինը 1996թ. համեմատությամբ (41 տոկոս) 2000թ. աճել է մինչև 72 տոկոս՝ գերազանցելով եվրոպական միջին ցուցանիշը (70 տոկոս)[149]: Սակայն հարկ է նշել, որ հանրակրթության բյուջետային հատկացումներն ավելացվում են ոչ թե կրթության ընդհանուր բյուջեի հաշվին, այլ մյուս մակարդակների ֆինանսավորման անընդհատ կրճատման հաշվին: Այսպես՝ նախադպրոցական համակարգի պետական ֆինանսավորումը 1991թ.-ից աստիճանաբար կրճատվել է, իսկ 1997թ.-ից ընդհանրապես դադարեցվել:

Պետությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը՝ նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով: Պետական բյուջեից պետական ուսումնական հաս-

տատության ֆինանսավորումն իրականացվում էր պետական պատվերի սեփականություն հանդիսացող գույքի պահպանության, վճարի և այլ ձևերով: Պետական ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում են Հայաստանի և Արցախի կառավարությունները՝ մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով: Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից հատկացումների կրճատման:

Կրթության ֆինանսավորման Արցախի վերջին տարիների փորձի ուսումնասիրություններից պարզվում է, որ հանրակրթական հաստատություններում բյուջետային ֆինանսավորումը կամ օժանդակությունը մեծ տեսակակար կշիռ ունի, չնայած այն հանգամանքին, որ որոշ կրթական հաստատություններում ուսման դիմաց ստացվող վճարները ևս խիստ կարևոր են հաստատության գործունեությունն ապահովելու համար: Ներկայումս Արցախի կրթական հաստատություններում ուսման դիմաց ստացվող վճարները այն ֆինանսական միջոցներն են, որոնք բյուջետային միջոցներից նվազագույն հատկացումների պայմաններում հնարավոր են դարձնում հաստատության գոյատևումը: Միևնույն ժամանակ, չպետք է անտեսել այն հսկայական ֆինանսական միջոցների դերը, որոնք գործում են մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգում սովորողներից գանձվող վճարներից:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրթական համակարգի անցումնային և կայունացման շրջափուլերում (1991-1995թթ. և 1996-2000թթ.) համակարգը ֆինանսավորվել է իրական պահանջարկից զգալիորեն պակաս: Այսպես, վերջին տարիներին կրթության պետական ֆինանսավորումը տատանվում էր 2,5 տոկոսի շրջանակներում, որը կազմում է միջազգային ցուցանիշի մոտավորապես կեսը:

Բացի բյուջետային հատկացումների սղությունից, պետական բյուջեի կառուցվածքում կրթության մասնաբաժինը ևս բավականին փոքր է, չնայած վերջին տարիներին ունի աճի միտում: Կրթության պետական ֆինանսավորումը կազմում է ընդհանուր բյուջեի 11 տոկոսը, որն զգալիորեն ցածր է միջազգային ցուցանիշներից:

Համակարգի ֆինանսական ծանր վիճակը սրվում է նաև այն պատճառով, որ պետական բյուջեի մասին ԼՂ Հանրապետության օրենքներով կրթության համար նախատեսված պետական միջոցների մի մասը չի հատկացվում՝ առաջացնելով տարեցտարի կուտակվող պարտքեր, իսկ վճարումներն էլ կատարվում են պարբերական ուշացումներով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի և Արցախի կրթության ֆինանսավորման համակարգը ներկայումս գտնվում է համակողմանի բարեփոխումների գործընթացում, որի հիմնական ուղղություններն ամրագրված են ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի և ԼՂՀ կառավարության օգոստոսի 22-ի արձանագրային որոշումներով հավանություն ստացած Հայաստանի և Արցախի կրթության ֆինանսավորման ռազմավարության դրույթներում: Ռազմավարությամբ նախատեսվում էր բարեփոխել կրթության ֆինանսավորման համակարգը:

Օրենսդրության անկատարություն, ենթաօրենսդրական ակտերի բացակայություն և օրենքների թերկիրառում

«Կրթության մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքներն ընդունելիս արդեն գործում էին երկու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, սոցիալ-տնտեսական, ֆինանսական, հարկային քաղաքականության իրականացումն ապահովող մի շարք կարևորագույն օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և Հայաստանի և Արցախի քաղաքացիական օրենսգիրքը: Ուստի օրենքի առանձին դրույթներ փաստորեն հարմարեցվել են արդեն իսկ գործող օրենսդրությանը (նկատի ունենք մինչև 1999թ.):

Կրթական քաղաքականության լիարժեք իրականացմանը խոչընդոտում են նաև օրենքների և ենթաօրենսդրական ակտերի թերկիրառումը, որոնց կիրառման մեխանիզմների անկատարությունը կամ բացակայությունը, առանձին օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ժամանակին չընդունումը, ինչպես նաև օրենսդրական դաշտում առկա հակասությունները թողնում են իրենց բացասական հետևանքները: Այդ ժամանակաշրջանում հանրապետության օրենսդրությունը չէր ապահովում «Կրթության մասին» ՀՀ օրենքով հռչակված և երաշխավորված՝ կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն (4-րդ հոդված, 1-ին կետ): Առանձնահատուկ դժվարություն են հարուցում օրենքների կիրառման և իրավական ակտերի կատարման որակը, ինչպես նաև ուսումնական գործընթացում ընդգրկված սուբյեկտների իրավունքների պաշտպանության վերահսկման գործուն մեխանիզմների բացակայությունը:

Այսպիսով՝ օրենսդրական դաշտի ընդլայնումը, հստակեցումը և օրենսդրությունը ըստ կարգի կիրարկումը դարձել են առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիր, որն իր լուծումը ստացավ 2000-2005թթ.:

Նյութատեխնիկական և ուսումնամեթոդական անբավարար հիմքը և հետագա տարիներին բարենպաստ պայմանների ստեղծումը

Ինչպես հայտնի է, ռազմական գործողությունների հետևանքով հանրապետությունում ավերվել կամ վնասվել է շուրջ 100 դպրոց: Դրանց մի մասը վերականգնվել է 1994-2000թթ.: Սկսած 2001թ.-ից, հանրապետությունում լայնածավալ շինարարական աշխատանքներ են տարվել դպրոցաշինության բնագավառում, կառուցվել և հիմնանորոգվել են 130-ից ավելի դպրոցներ: Բարերարների, Համահայկական հիմնադրամի և պետական բյուջեի միջոցներով կառուցվել են տիպային դպրոցական շենքեր, կահավորվել գույքով ու անհրաժեշտ սարքավորումներով: Համարյա կրթական բոլոր հաստատությունները համալրվել են գույքով՝ կահավորանքով, լաբորատոր սարքավորումներով, փորձանյութերով:

Համակարգի անարդյունավետ գործառություն

Ուսումնական հաստատությունների ծանր վիճակը պայմանավորված է ոչ միայն հատկացվող ֆինանսական միջոցների անբավարարությամբ, այլև դրանց ոչ արդյունավետ օգտագործմամբ:

Նույնիսկ տնտեսության զարգացման և պետական եկամուտների կանխատեսելի ավելացման դեպքում հարաճուն բյուջետային միջոցները չեն բավարարի կրթության նվազագույն կարիքները, եթե համակարգում էական ռացիոնալացում չիրականացվի: Այդ են վկայում համակարգի առկա վիճակը բնութագրող հիմնա-

կան ցուցանիշները՝

- սովորող-մանկավարժ հարաբերակցությունը.
- օժանդակ և վարչական կազմի մեծ թվաքանակը.
- թերհամալրված դասարանների և խմբերի թիվը.
- թերբեռնված մանկավարժական կազմի թվաքանակը.
- ուսումնական հաստատությունների անհամաչափ բաշխումը հարապետությունում, հատկապես խիստ բնակեցված վայրերում իրար մոտ տեղակայված դպրոցների մեծ թիվը.
- թերբեռնված հաստատությունների զգալի քանակը.
- նեղ մասնագիտացված (հատուկ, օժանդակ, գիշերօթիկ), կրթական տարբեր ծրագրեր իրականացնող (միջին և բարձրագույն մասնագիտական) հաստատությունների խիստ կենտրոնացումը (հիմնականում մայրաքաղաքում):

Լրացուցիչ խնդիրներ կան նախամասնագիտական (արհեստակցական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում.

- ուսուցանվող մասնագիտությունների կրկնություն և անհամապատասխանություն հաստատությունների պրոֆիլին.
- հաստատությունների և մասնագիտությունների անհամաչափ բաշխում՝ ըստ տարածքների, անհամապատասխանություն տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններին ու զարգացման հեռանկարներին:

Ռացիոնալացման անհրաժեշտություն կա ինչպես կրթության համակարգում ամբողջությամբ վերցրած (հաստատությունների և մասնագիտությունների վերաբաշխում), այնպես էլ յուրաքանչյուր հաստատության ներսում (սովորող-մանկավարժ հարաբերակցություն, ուսումնական խմբի համալրում և այլն):

Կրթության կառուցվածքի և բովանդակության անհամապատասխանությունը շուկայական հարաբերությունների պահանջներին

Կրթության կառուցվածքը վերադասավորման և վերակազմավորման շրջան է ապրում: Կառուցվածքային հիմնախնդիրներ կան ինչպես միջնակարգ, այնպես էլ մասնագիտական կրթության բնագավառներում:

Ծրագրային ծանրաբեռնվածության, սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառման և զբաղվածության հիմնախնդիրը լուծելու անհրաժեշտությունը թելադրում է անցում 10-ամյա դպրոցից 11-ամյայի, ներկայումս՝ 12-ամյա: Հիմնական ընդհանուր կրթությունը չի ապահովում շրջանավարտների հետագա ուսումնառությունը և սոցիալական հարմարումը: Այս առումով առաջանում է հանրակրթության չափորոշիչի, առարկայական ծրագրերի ու դասագրքերի փոփոխման և ուսումնական նյութերի վերաբաշխման անհրաժեշտություն՝ 12-ամյա դպրոցին համապատասխան:

Կրթության բովանդակության նորացման արագ աճն ապահովում է ժողովրդավարացող հասարակության հոգևոր, տնտեսական ու սոցիալական առաջընթացը, քաղաքացու ձևավորումը, քաղաքացիական հասարակության կայացումը և իրավական պետության ստեղծումը:

Ներկայացված հիմնախնդիրներից յուրաքանչյուրն իր բաժինն ունի կրթության որակի՝ որպես կրթության իրականացման վերջնարդյունքի անկման մեջ:

Կրթության ներկա որակն ապահովում է՝

- անձի սոցիալական բավարար իրացում.
- ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի և

քաղաքացու ձևավորում.

- աշխատուժի հանրակրթական և մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն.

- գիտության զարգացման համար պատշաճ հիմքի ստեղծում:

Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով՝ դիտարկենք նաև կրթության համակարգի զարգացման հեռանկարները:

Կրթությունը հասարակական կյանքի գերակա ոլորտ է, որը ոչ միայն զգայուն կերպով արձագանքում է նրա հրատապ և հեռանկարային խնդիրներին, այլև ուղղակիորեն և ակտիվորեն ներգործում է կյանքի մյուս ոլորտների զարգացման վրա՝ պայմանավորելով դրանց առաջընթացը: ԼՂ Հանրապետությունում կրթությունը դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման երաշխիք: Հանրապետության կրթական համակարգի զարգացումը, անկասկած, ընթանում է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին համահունչ ու պետք է ապահովի անհրաժեշտ մրցունակություն, հետևաբար, նաև համաշխարհային կրթական համակարգին ինտեգրվելու հնարավորություն: Իսկ դրա համար կրթական ոլորտը պետության համար, անկասկած, պետք է ունենա գերակա նշանակություն:

ԼՂ Հանրապետության կրթական համակարգի զարգացման ռազմավարությունը արտահայտում է ժամանակակից քաղաքականության թելադրած կրթության ոլորտի զարգացման հետևյալ միտումները.

1. Կրթության համընդհանուր լինելը:

2. Կրթության հետագա հումանիտարացումը և նրա մշակութային ուղղվածության բարձրացումը:

3. Կրթության ոլորտի ինտեգրումն այլ ոլորտների հետ՝ պահպանելով նրա սոցիալական պահանջը և ավելի բարձրացնելով նրա քաղաքացիական գործառույթների դերը:

4. Կրթության հումանիտարության, տեղեկատվական, էկոլոգիական դերի բարձրացումը, որի համար անհրաժեշտ է.

ա/ բարձրացնել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին,

բ/ կրթական նոր տեխնոլոգիաներով ապահովել ուսումնական հաստատությունները և համապատասխան պայմաններ ստեղծել դրանց զարգացումն ապահովելու համար,

գ/ հարստացնել կրթության համակարգի նյութատեխնիկական բազան՝ այն համապատասխանեցնելով ներկայիս բարձր պահանջներին,

դ/ իրականացնել 12-ամյա կրթությունը, ընդլայնել ավագ դպրոցների ցանցը,

ե/ պետական առարկայական ծրագրերի վերանայումն այն նպատակով, որ դրանք ակտիվորեն ձևավորեն սովորողների տրամաբանական, վերլուծական մտածողությանը, արդյունավետ հաղորդակցման հմտություններ, ինքնուրույն սովորելու կարողություններ և այլն:

Համաձայն կրթության զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2015թթ.)՝ նախատեսվում է.

- հանրապետության դպրոցականները կստանան պարտադիր 12-ամյա կրթություն,

- հիմնական կրթություն կստանա դպրոց ընդունված երեխաների առնվազն 80 տոկոսը,

- տարրական դպրոցն ավարտողների 70 տոկոսից ավելին կցուցաբերի միջինից բարձր առաջադիմություն, ինչն ամուր հիմք կհանդիսանա հիմնական դպրոցում ուսումնառության համար,

- հանրապետության դպրոցների սովորողները պետք է կարողանան միջազգային մրցույթներում, ստուգատեսներում բարձր արդյունքների հասնել բնագիտական առարկաներից,

- ուսուցիչների համակարգում կաճի տղամարդ ուսուցիչների թիվը,

- սովորողների, ուսուցիչների, ծնողների միջև կհաստատվեն գործընկերային, համագործակցային հարաբերություններ, ինչը կնպաստի կրթական գործընթացի մարդասիրական բնույթի ապահովմանը, երեխաների ընդունակությունների և հնարավորությունների բացահայտմանն ու դրսևորմանը և այլն:

Այսպիսով, վերլուծությունները ցույց տվեցին, որ Հայաստանը և Արցախը, գտնվում են միասնական կրթական դաշտում, և դա հնարավորություն է տալիս Արցախի կրթական համակարգի զարգացումն իրականացնել Հայաստանի կրթական համակարգի զարգացմանը համահունչ և հնարավորություն է ստեղծում ինտեգրվելու համաշխարհային կրթական համակարգերին:

5. ՀՀ և ԼՂՀ կրթական համակարգերի միասնական կառավարման հիմնախնդիրները համահայկական կրթադաշտում

Հայաստանի պետական կառավարման ներկայիս համակարգը ձևավորվել է նախկին խորհրդային համակարգի հիմքի վրա և իր վրա կրել անցման շրջանի տնտեսության զարգացման հիմնախնդիրների կնիքը: Վերջինս նախ արտահայտվել է ճյուղային նոր կառույցների ստեղծմամբ, որոնք բացակայում էին Խորհրդային Հայաստանում: Դրա հետ մեկտեղ, շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան տեղի են ունենում այդ կառույցների բովանդակային փոփոխությունների և կառավարման կազմակերպման կառուցվածքների նոր ձևավորումներ: Նորաստեղծ Արցախի Հանրապետության կառավարման համակարգը ձևավորվել է Հայաստանի պետական կառավարման համակարգի հիման վրա, և պետական կառավարման կառուցվածքային փոփոխություններն ընթացել են միասնական քաղաքականության և ռազմավարական առաջնահերթությունների տեսքով:

Հայաստանի և Արցախի պետական միասնական կառավարման համակարգի բարեփոխումների հիմնական նպատակն էր պետական կառավարման մարմինների կողմից հանրային (պետական) ծառայությունների մատուցման որակի և մատչելիության բարձրացումը, դրանց վարչական կառավարման կառուցվածքային մոդելների մշակումը, պետական ծառայության համակարգի ստեղծումը և զարգացումը, միասնական որոշումների ընդունման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությունը, պետական կառավարման մարմինների, այդ թվում՝ կրթության և գիտության կառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը:

Կրթության կառավարումը օբյեկտիվորեն պայմանավորված երևույթ է, որը կյանքի է կոչված համակարգի գործունեության օրինաչափություններով և փոխադարձ կապերով, այսինքն՝ կառավարումը տարաբնույթ կազմակերպվածության հասարակարգերի գործառույթ է, որն ապահովում է նրանց որոշակի կառուցվածքի գործունեության ռեժիմի պահպանումը, նրանց ծրագրերի և նպա-

տակների իրագործումը:

Հայաստանի և Արցախի միասնական կրթական համակարգերի հիմնական առաջադրանքը երեխաներին պետք է լինի արդյունավետ կրթություն ստանալն ու քննադական-վերլուծական մտածել սովորելը: Ուսանողները, նոր ինֆորմացիայի բախվելիս, պետք է կարողանան այն մտածված, հետևողական և քննադական վերլուծության ենթարկել: Նրանք պետք է ի զորու լինեն ինքնուրույն ու անկախ մտածել նոր ինֆորմացիայի և գաղափարների մասին ու գործեն ըստ այդմ: Այդ դեպքում նրանց ստացած նոր տեղեկատվությունն իրապես օգտակար և գործնականում արդյունավետ կդառնա:

Հիմնական արտաքին շահառուն, որն ունի պաշտոնական իշխանություն և ազդեցություն կրթության ոլորտում, ՀՀ ԿԳ նախարարությունն է, Արցախի Հանրապետությունում՝ ԼՂՀ ԿԳ նախարարությունը, որը կրթության լիազորված պետական մարմին է և, գտնվելով միասնական կրթական համակարգի մեջ, կրթության բնագավառում իրականացնելով պետական միասնական քաղաքականություն, պատասխանատու է կրթության պետական քաղաքականության ռազմավարության մշակման և իրականացման համար:

ԿԳ նախարարությունը հանդիսանում է նաև կրթական հաստատությունների ֆինանսավորման աղբյուրը և իրականացնում է վերահսկողական և աուդիտի գործունեություն: Հայտնի է, որ Խորհրդային Հայաստանում կրթության կառավարումը կենտրոնացված էր ԽՍՀՄ կառավարության ձեռքում և խստորեն վերահսկվում էր վերջինիս կողմից, իսկ Լեռնային Ղարաբաղի կրթության կառավարումը՝ Ադրբեջանի կառավարության կողմից: Նախարարության լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, հանրապետության նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, ՀՀ կառավարության որոշումներով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով: ԿԳ նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան: Իհարկե, ԼՂՀ-ն ինքնուրույն է իր գործունեության հիմնական ոլորտները որոշելիս, բյուջեն սահմանելիս և տնօրինելիս, սակայն կրթության ոլորտը կառավարելիս հիմք են ընդունվում ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության ընդունած որոշումները, Սահմանադրության դրույթները և Ազգային ժողովի ընդունած օրենքները, կրթության մասին օրենքներն ու հրահանգները:

Հայաստանի և Արցախի ԿԳ նախարարությունների միասնական քաղաքականության և կրթության ոլորտի կառավարման նպատակներն ու խնդիրներն են հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդումը, կրթության և գիտության համակարգի բնականոն գործունեության ապահովումը, կրթության բնագավառի հիմք հանդիսացող ազգային դպրոցի գլխավոր նպատակի՝ մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորման ապահովումը: Ինչպես նաև կրթության և գիտության բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, նշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն:

Հայաստանի և Արցախի ԿԳ նախարարություններն իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով[150] և միջազգային պայմանագ-

րերով: ԿԳ նախարարները միասնաբար իրականացնում են նախարարությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և փոխհամաձայնությամբ պատասխանատու են լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար: Հայաստանում և Արցախում ԿԳ նախարարը հաշվետու է հանրապետության նախագահին, կառավարությանն ու վարչապետին:

Երկու հանրապետությունների ԿԳ նախարարներն իրենց իրավասության սահմաններում, օրենսդրությամբ սահմանված կարգով, միասնաբար ընդունում են գերատեսչական իրավական ակտեր և փոխհամաձայնությամբ ղեկավարում նախարարության ընթացիկ և հեռանկարային գործունեությունը(ինչպես նշված է «Հայաստանի հանրապետության կրթության զարգացման 2001-2005թթ և 2011-2015թթ. պետական ծրագրերը հաստատելու մասին» օրենքում), պատասխանատու են նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

Հայաստանի և Արցախի ԿԳ նախարարություններն իրենց նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են հետևյալ գործառույթները՝

ա/ կրթության և գիտության բնագավառների վերաբերյալ ՀՀ իրավական ակտերի նախագծերի ու կրթության և գիտության բնագավառներում Հայաստանի և Արցախի քաղաքականության մշակում,

բ/ կրթության և գիտության բովանդակային և կառուցվածքային բարեփոխում, դրանց առաջանցիկ զարգացման ապահովում,

գ/ կրթության և գիտության հեռանկարային ու նպատակային, ինչպես նաև միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրերի մշակում ու դրանց իրականացման կազմակերպում,

դ/ կրթական հաստատությունների գործունեության արդյունավետության գնահատում, այդ հաստատությունների զարգացման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և դրանց իրականացման խթանում,

ե/ համակարգի կրթական հաստատությունների ու նախարարության առանձնացված ստորաբաժանումների միջազգային կապերի զարգացմանը նպաստումը, նախարարության իրավասության տակ մտնող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը սահմանված կարգով մասնակցություն,

զ/ կրթության և գիտության զարգացման հարցերով ՀՀ պետական և Արցախի Հանրապետության կառավարական մարմինների ու կազմակերպությունների, Հայ Առաքելական եկեղեցու, ինչպես նաև օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,

է/ սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ցույց տրվելիք օգնության կազմակերպում,

ը/ կրթության որակի ապահովման գործընթացի կառավարում Հայաստանի և Արցախի կառավարությունների ԿԳ նախարարությունների կողմից:

Հայաստանում և Արցախում կրթությունն ավանդաբար բարձր մակարդակ է ունեցել: Այսօր էլ պետական և ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության որակի ապահովումը, զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը:[151]

Կրթությունը, լինելով պետական և հասարակական կյանքի կարևորագույն բնագավառ, մշտապես պետության ուշադրության կենտրոնում է: Ինչպես արդեն նշվել է, «Կրթության մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքներով հանրապետությունում երաշխավորվում է կրթության բնագավառի՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոնի, առաջանցիկ զարգացումը:

Սակայն կրթությունը՝ որպես ազգային անվտանգության պահպանման կարևորագույն երաշխիք, դեռևս անհրաժեշտ չափով հասու չէ բնակչության լայն զանգվածներին: Հասարակությունում մինչ այժմ գերիշխում է կարոտախտը խորհրդային ուսուցման անվճար համակարգի նկատմամբ, և պետության կողմից հասարակությանն առաջարկվող անվճար ուսուցումը ոչ վաղ անցյալում ընդունելի պայմաններ էր ստեղծում կրթություն ստանալու համար:

Մանկավարժագետ Ն.Հարությունյանը մատնանշում է, որ յուրաքանչյուր երկրի կրթական համակարգ պետք է արտացոլի նրա կոնկրետ մշակույթային ավանդույթները՝ միաժամանակ հաշվի առնելով շուկայական տնտեսությամբ ընթացող զարգացած երկրների կրթության ոլորտում խնդիրների լուծման փորձը[152]:

Կրթության համակարգի կառավարման գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների առաքելությունն է ապահովել և պաշտպանել Հայաստանի և Արցախի սահմանադրություններով և «Կրթության մասին» օրենքներով[153] սահմանված՝ Հայաստանի և Արցախի քաղաքացիների կրթության իրավունքի իրականացումը՝ ձևավորելով համակողմանի ներդաշնակ զարգացած, սոցիալապես գործուն քաղաքացիական ինքնագիտակցություն ունեցող հայրենասեր սերունդ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-2016ԹԹ.)

1.Կրթության ոլորտի բարեփոխումների գործընթացը ԼՂՀ-ում և այդ միտումով ՀՀ ԿԳ նախարարության հետ համագործակցային հիմնախնդիրները

Անկախության ձեռք բերելուց հետո Հայաստանը և Արցախի նորաստեղծ հանրապետությունը քաղաքական, գաղափարական, տնտեսական և մշակութային նոր իրադրությունում կրթությանը ներկայացրին բոլորովին այլ պահանջներ, որն էլ անհրաժեշտ էր դարձնում կրթության ոլորտում ոչ միայն պահպանել լավագույն ավանդույթները, այլև ապահովել կրթության նոր որակ և մշակել զարգացման հեռանկարներ: Կրթության համակարգում կատարվեցին աստիճանական փոփոխություններ, որոնք պայմանավորված էին Հայաստանի և Արցախի քաղաքական նոր իրավիճակով, տնտեսավարման համակարգով, համաշխարհային ընկերակցության մեջ ինտեգրման գործընթացով: Սակայն նշենք, որ անկախության առաջին տարիներին Հայաստանում և Արցախում կրթության համակարգի վերափոխումը պայմանավորված էր երկու հանգամանքով, համակարգային՝ խորհրդային համակարգի թերությունների վերացում, և արտահամակարգային՝ կրթությանը ներկայացվող նոր պահանջների բավարարում: Եվ վերջապես չկար այն հասարակական, սոցիալ-տնտեսական հիմքը (նկատի ունենք 1991-1993թթ.), որին համապատասխանեցվել էր կրթությունը: Պատահական չէին ՀՀ և Արցախի անկախացումից հետո կրթական համակարգում տեղի ունեցող զգալի փոփոխությունները՝ նոր օրենքներ, նորմատիվ ակտեր, որոնք փոխեցին կրթական համակարգի վարչարարությունը: Դրա հետ մեկտեղ, երկար ժամանակ կրթության դաշտում չկային հստակ մշակված բարեփոխումների ռազմավարություն (1991-1998թթ.), միասնական քաղաքականություն:

Հանրապետության կրթության համակարգի կայունացման փուլում (1995-2000թթ.) կատարված և կատարվող փոփոխությունների գերնպատակը կրթության որակի ապահովումն ու բարելավումն է, կրթական ծրագրերը դարձնել ճկուն, ժամանակին համընթաց, ճանաչելի այլ երկրներում և վերջապես համապատասխանեցնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աշխատաշուկայի պահանջներին: Ասվածից եզրակացնենք, որ բարեփոխումները կոչված են մեզ առաջ տանելու, ասել է թե՝ կրթության ընդհանուր որակը բարձրացնելու:

Փաստագրական նյութերի վերլուծությունների հիման վրա այժմ պարզաբանենք, թե անցյալ դարի 90-ական թվականների սկզբներին ինչպիսին էր իրավիճակը ԼՂ Հանրապետության կրթության ոլորտում, և որոնք էին բարեփոխումների իրականացման դժվարությունները և խոչընդոտները: Նկատի ունենք 1991-1998 թվականներին:

Ինչպես արդեն նշել ենք աշխատության նախորդ բաժնում, Հայաստանում կրթության համակարգի վերափոխումների գործընթացը սկսվել է 1990 թվականից, իսկ Արցախում ավելի ուշ՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում: Ակնհայտ է, որ պատերազմական տարիներին ամբողջովին ավերվել կամ լրջորեն վնասվել են դպրոցական շենքերը: Հանրապետության շրջաններում ողբալի վիճակում

էին դպրոցական լաբորատորիաները, կաբինետները, ընդհանրապես չկար նյութատեխնիկական բազա: Խնդիր կար երկկոմպլեկտ դասարաններում դասավանդման հետ, հատկապես վերաբնակեցված շրջանների դպրոցներում մասնագետների խիստ պակաս էր զգացվում: Ուսուցիչները հաճախ էին դժգոհում դասարաններում աշակերտների միջին խտությունից, երբեմն առարկայական ծրագրերի ու դասագրքերի անհամապատասխանությունից:

Ուսումնասիրություններից հետո պարզվեց, որ հետպատերազմյան շրջանում (1994-1998թթ.) հանրապետության կրթական համակարգում ընթացող որոշ բարեփոխումների վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական-քաղաքական իրավիճակը, այլև ԼՂՀ կառավարության կողմից ընդունված ոչ ճիշտ որոշումները (1995-1998թթ.), հատկապես 1998թ. նոյեմբերի 10-ի որոշումը, որի համաձայն գյուղական դպրոցներն ընդգրկվեցին համայնքի սեփականության գույքի ցանկում, և կրթության բաժինները ցած դրեցին իրենց լիազորությունները, որը խիստ բացասական հետևանք թողեց համակարգի բարեփոխումների վրա:

Քննարկվող ժամանակաշրջանում ԼՂՀ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներն արգելակող հիմնական պատճառներից են.

ա) պետության ֆինանսական դժվարությունները, որոնք թույլ չեն տալիս անհրաժեշտ ներդրումներ կատարել նոր ուսումնածրագրային նյութեր մշակելու, հաստատությունները ժամանակակից գույքով և սարքավորումներով հագեցնելու, դասավանդման գործընթացում առավել որակյալ մասնագետներ ներգրավելու, մասնագետներ վերապատրաստելու համար:

բ) բարեփոխումների լուրջ խոչընդոտ են հանդիսանում նաև սոցիալական խնդիրները: Ուսումնական հաստատությունների ռացիոնալացումը գործազուրկ դարձրեց մեծ թվով մանկավարժների, որոնք չեն կարող աշխատանք գտնել որևէ այլ բնագավառում: Պետությունը դեռևս չի կարողանում լուծել գործազուրկների սոցիալական հարցերը: Հետևաբար, դրանց բանակի ավելացումը ավելի կխորացնի սոցիալական հիմնախնդիրները: Այդ իսկ պատճառով կրթական համակարգի բարեփոխումների այն միջոցառումները, որոնք կարող են բերել նման հետևանքների առաջացմանը, պետք է իրականացվեն ոչ թե կտրուկ, այլ աստիճանաբար:

գ) բարեփոխումների լուրջ խոչընդոտ է նաև օրենսդրական անկատարությունը: Պետական կրթական քաղաքականության և կրթական համակարգի զարգացման ծրագրերի բացակայությունը երկար ժամանակ թույլ չէր տալիս սկսել համակարգի իրական բարեփոխումները, իսկ դրա առանձին փուլերի համար ընդունվող նորմատիվներն ու կանոնակարգերը որոշ խնդիրների ժամանակավորապես լուծում էին տալիս, սակայն ողջ համակարգի տեսանկյունից բերում էին հիմնախնդիրների խորացման: Մինչև կրթության մասին օրենքի ընդունումը կրթական համակարգը կանոնակարգվում էր կրթական քաղաքականության հայեցակարգերով, և շարունակում էին գործել դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ընդունված կարգերը, որոնք պետք է ժամանակավորապես հիմք ծառայեին կրթական համակարգի բարեփոխումների և հետագա զարգացման համար: Սակայն պարզ դարձավ, որ դրանք չեն կարող բավարարել առկա իրավիճակին՝ արդեն իսկ հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով, և դրանց զգալի մասն այժմ կենսունակ չէ: Հասարակության զարգացման համար կարևորագույն օրենքներից մեկը՝ «Կրթության մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքն ընդունվեց Ազգային Ժողովի կողմից 1999 թվականի ապրիլի 14-ին (Արցախում՝ 2000թ.):

Օրենքը սահմանեց կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կրթական իրավունքի պետական երաշխիքները, կրթական համակարգի հիմնական կառուցվածքային տարրերը՝ կրթական ծրագրերը, դրանց նպատակներն ու իրականացման եղանակները, կրթության ձևերը, ուսումնական հաստատությունների տիպերն ու կարգավիճակները, կրթական համակարգի կառավարման բնագավառում տարբեր մարմինների իրավասությունները, կրթական համակարգի տնտեսական հիմքերը, սոցիալական երաշխիքները: Միաժամանակ օրենքը բավարար հիմքեր դրեց կրթական համակարգի կառուցվածքային վերափոխումների համար:

Կրթության բարեփոխումների նպատակով առաջին անգամ 1998թ.-ին տրվել է «Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների» վարկային ծրագիրը գիտության ոլորտին, որը կազմում է շուրջ 15 մլն դոլար (ՀՀ և ԼՂՀ):

Կրթության հիմնական բարեփոխումներն իրականացվեցին հենց այս համաձայնագրի կնքումից հետո: Այն հնարավորություն տվեց համաշխարհային բանկի տրամադրած ֆինանսական միջոցներով իրականացնել տարբեր ուղղություններով բարեփոխումների ծրագրեր, որը ՀՀ և ԼՂՀ կառավարությունները ֆինանսավորելու հնարավորություն չունին:

Կրթության ոլորտում կառավարության կողմից իրականացված քաղաքականությունն ուղղված է եղել կրթության որակի, մատչելիության և արդյունավետության բարձրացմանը, օրենսդրական դաշտի կատարելագործմանը, ուշադրության կենտրոնում է եղել կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը՝ որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական: Խնդրի իրագործումն ապահովվել է համակարգի աստիճանական բարեփոխման միջոցով:

Այսպիսով, ԼՂՀ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների դժվարություններն ու խոչընդոտող հիմնական գործոններն են՝

- հանրակրթական դպրոցների շենքային անբարենպաստ պայմանները,
- անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությունը,
- պետական անհրաժեշտ ֆինանսավորման սահմանափակությունը,
- որակյալ մանկավարժական կադրերի վերապատրաստման խնդիրը, իսկ իրականացվող կրթական բարեփոխումներն էլ ավելի են կարևորում ուսուցչի դերը,
- պետական կրթական չափորոշիչների մշակման խնդիրը,
- նոր ուսումնական ծրագրերի, դասագրքերի հրատարակման խնդիրը,
- կրթական նոր մոտեցումներ, նոր մեթոդներ լիարժեքորեն չեն մտնում դպրոց և այլն:

Մեր կրթական համակարգը, կրթության նախարարությունը ունե՞ն, արդյոք, հիշյալ խնդիրների շուտափույթ լուծման բավարար հնարավորություններ: Հարկ է նշել, որ 1998 թվականին ԼՂՀ ԿԳ նախարարությունը շատ քիչ հնարավորություններ ուներ, իսկ պատճառները ակնհայտ են: Փաստորեն 1994-1998 թվականներին Հայաստանում և Արցախի նորաստեղծ հանրապետությունում կրթության համակարգում բարեփոխումներն այլ ուղղություն ունեցան (այդ մասին արդեն նշել ենք նախորդ բաժնում): Սակայն նշենք, որ 1996թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը նշանակալի դեր ունեցավ այն առումով, որ դպրոցները դեռևս աշխատում էին նախկին կանոնադրությամբ, և դա ժամանակավորապես կասեցվեց: Բացի այդ, 1997 թվականին Հայաստանի կառավարության որոշմամբ որոշ փոփոխություններ են կատարվել դպրոցական օրինակելի կանոնադրության մեջ: Նույն

թվականի մայիսի 20-ից Հայաստանում և Արցախում իրականացվում է «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» վարկային ծրագիրը, որը շարունակվում է հետևյալ ուղղություններով՝

- պետական հանրակրթական հաստատությունների համակարգի կառավարման հետագա ապակենտրոնացում,
- դպրոցների կառավարման և ինքնակառավարման նորմատիվային իրավական հիմքի կատարելագործում,
- հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր եղանակի ներդրում, բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- ներդպրոցական կառավարման ժողովրդավարացում և անցում դպրոցական խորհրդի միջոցով կառավարման,
- մանկավարժական և վարչական կադրերի որակավորման բարձրացում,
- հանրակրթական դպրոցների ապահովում հիմնական ուսումնական ծրագրերով, դասագրքերով և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանում և Արցախի Հանրապետությունում 1988 թվականից հանրակրթության համակարգում ընթանում են բարեփոխումներ, որոնք ընդգրկում են հանրակրթության կառուցվածքը, բովանդակությունը, կառավարումը և ֆինանսավորումը: Ընդ որում այդ գործընթացը սկզբնական շրջանում ներառելով կառուցվածքային բարեփոխումները՝ 1998 թվականից նպատակաուղղված է կրթության բովանդակային խնդիրների լուծմանը:

ԼՂ Հանրապետության կրթության համակարգում ընթացող բովանդակային բարեփոխումներն ընդգրկում են երեք հիմնական փուլ՝

1.1995-2002թթ. արմատական կառուցվածքային բարեփոխումներ և բովանդակային բարեփոխումների համար հիմքերի ստեղծում:

2.2003-2008թթ. բովանդակային բարեփոխումներ և կառուցվածքային բարեփոխումների շարունակում:

3.2009-2015թթ. հանրակրթության ոլորտում ընթացող արմատական բովանդակային բարեփոխումներ:

Առաջին փուլում (1998-2002թթ.) բարեփոխումները նպատակաուղղված էին.

- ապահովել պետական կրթական հաստատությունների համակարգերի կառավարման հետագա ապակենտրոնացումը,
- խթանել դպրոցի կառավարման գործում համայնքի մասնակցությունն ու օժանդակությունը,
- բարձրացնել դպրոցի կողմից բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը,
- ապահովել ներդպրոցական կառավարման ժողովրդավարացումը և անցումը խորհուրդների միջոցով կառավարմանը,
- կատարելագործել դպրոցների կառավարման և ինքնակառավարման նորմատիվ իրավական բազան,
- մշակել հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր՝ ըստ աշակերտների թվաքանակի (ամբողջական գումարի հատկացմամբ) կարգ:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից,[154] 1999-2002թթ. հանրապետությունում արդեն մշակված էր կրթական համակարգի բարեփոխումների համակարգի ծրագիր («Հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագիր»), որն ուներ ռազմավարական նշանակություն:

Հարկ է նշել, որ մինչև ֆինանսավորման և կառավարման նոր ընթացակարգերի կիրառումը Հայաստանում և Արցախում հանրապետական մասշտաբով կառավարության կողմից որոշում կայացվեց իրականացնել փորձնական ծրագիր: Հանրակրթության համակարգի ապակենտրոնացումը, ներառյալ կառավարման և ֆինանսավորման նոր կարգերի ներդրումը, սկսվեց 1998-1999 թվականներին ՀՀ և ԼՂՀ կառավարությունների մի քանի որոշումների ընդունմամբ, մասնավորապես 1999 թվականին հաստատված՝ «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրով», որի իրականացումը նախատեսվում էր երեք տարի, մինչև 2002 թվականը: Ինչպես նշեցինք, այդպիսի ծրագիր հաստատվեց նաև ԼՂՀ կառավարության 1999թ. մարտի 20-ին ընդունած որոշմամբ:

Փորձնական ծրագրի նպատակներն էին՝

- գնահատել հանրակրթական համակարգի բարեփոխումների հնարավորությունները, իրականացումների հնարավորությունները և մեխանիզմները,
- ստեղծել նպաստավոր և խթանող պայմաններ հանրակրթության արդյունավետության բարձրացման համար,
- փորձարկել հանրակրթության բարեփոխումների շրջանակում առաջարկվող նորամուծությունները, մասնավորապես կառավարման ապակենտրոնացման, դպրոցների ըստ աշակերտների թվի ֆինանսավորման, դպրոցների ինքնավարության բարձրացման մեխանիզմների արդյունավետությունն ու կենսունակությունը,
- հաշվի առնել փորձնական ծրագրից քաղված դասերը՝ բարեփոխումների ծրագրի հիմնական փուլի կատարելագործման համար:

Ըստ ծրագրի առանձնացված են հանրակրթության համակարգի ռազմավարության հետևյալ հիմնական ուղղությունները՝

ա) կառուցվածքային,

բ) ֆինանսատնտեսական,

գ) հանրակրթական հաստատությունների ինքնուրույն կազմակերպահրավական կարգավիճակ[155]:

Այս բնագավառներում նախատեսվող բարեփոխումները ներառում են հանրակրթության կառավարման աստիճանական ապակենտրոնացումը և դպրոցների ինքնակառավարման աճը, անցումը ֆինանսավորման նոր՝ ըստ աշակերտների թվաքանակի համակարգի: Այսինքն դպրոցի ֆինանսավորման նոր մեխանիզմը ենթադրում է տնտեսագիտական հոդվածներով ֆինանսավորման հին ձևից անցում ամբողջական գումարով ֆինանսավորման հաշվարկված ըստ հաստատության սովորողների թվի՝ ֆինանսավորման նոր կարգի կիրառումը: Ուսումնասիրությունների հիման վրա ասվածը պարզաբանենք ավելի մանրամասնորեն:

Հանրապետության դպրոցները վերակազմավորվել են իրավական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպությունների, որոնք ղեկավարվում են խորհուրդների կողմից: Խորհուրդներում ներկայացված են ինչպես համայնքը կամ գործադիր իշխանության մարմինը, այնպես էլ մանկավարժական կոլեկտիվը և ծնողական համայնքը:

Դպրոցների մեծ մասն անցել են ֆինանսավորման (բացի այն դպրոցներից, որոնք գտնվում են սահմանամերձ գոտում և ֆինանսավորվում են աշակերտների թվից անկախ) նոր եղանակի՝ ըստ աշակերտների թվի ամբողջական գումարի հատկացմամբ՝ միջոցների օգտագործման առաջնային ուղղությունների որոշումը թողնելով դպրոցական խորհրդին:

Դպրոցների այս կարգավիճակը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ տնօրինելու միջոցները, դրանք ուղղորդելու կոնկրետ խնդիրների լուծմանը, ձևավորելու և ինքնուրույն տնօրինելու արտաբյուջետային միջոցները:

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման նոր կարգի կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն կատարել էական խնայողություններ, նպատակային օգտագործել սեփական բյուջեն, այլև ապահովում է համայնքի և ծնողների կողմից միջոցների ծախսման վերահսկողությունը: Ֆինանսական հարցերի լուծման գործում մեծացել է դպրոցների ինքնուրույնությունը: Դպրոցներից շատերում տնտեսված սուղ միջոցներով նույնիսկ կատարվել են վերանորոգման աշխատանքներ, բարեկարգվել է դպրոցի տարածքը, ձեռք են բերվել նոր գույք և սարքավորումներ, բարձրացվել են աշխատավարձերը և այլն:

Անբավարար ֆինանսավորումը կրթության համակարգի ճգնաժամային իրավիճակի գլխավոր պատճառներից է: Թեև շուկայական հարաբերությունների արմատավորման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շնորհիվ վերջին տարիներին անկումը կասեցվել է և նույնիսկ արձանագրվել որոշ աճ, բայց ՀՆԱ-ի (համախառն ներքին արդյունք) ցածր մակարդակը դեռևս պահպանվում է: Այդ պատճառով պետական բյուջեն, հետևաբար նաև կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման բացարձակ չափը, շատ փոքր է:

Կրթական համակարգը ֆինանսավորվում է իրական պահանջարկից զգալիորեն պակաս: Այսպես, վերջին տարիներին (1998-2000թթ.) կրթության պետական ֆինանսավորումը տատանվում է ՀՆԱ-ի 78 տոկոսի շրջանակներում: Բացի բյուջետային հատկացումների սղությունից, պետական բյուջեի կառուցվածքում կրթության մասնաբաժինը ևս բավականին փոքր է, չնայած վերջին տարիներին ունի աճի միտում: Այսպես, 2001թ. կրթության պետական ֆինանսավորումը կազմում էր ընդհանուր բյուջեի 14,3 տոկոսը, որը փոքր-ինչ բարձր է ՀՀ ցուցանիշներից (11 տոկոս)՝ պայմանավորված ԼՂՀ-ում կրթության համակարգի աշխատողների համեմատաբար բարձր աշխատավարձով, սակայն զգալիորեն ցածր է միջազգային ցուցանիշից: Ի հավելումն նշենք նաև, որ դպրոցն ունենալով ինքնուրույն կազմակերպահրավական կարգավիճակ՝ իրավաբանական անձի կարգավիճակ, դարձել է շահույթի նպատակ չհետապնդող, հանրակրթական ծրագիր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք, բանկային հաշիվ, առանձնացված գույք և կարող է իրականացնել իրավաբանական անձին հատուկ և օրենքին չհակասող գործառույթներ: Համաձայն իր կանոնադրության՝ դպրոցին տրված է նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք, որից ստացած շահույթը պետք է նպատակաուղղի դպրոցի կանոնադրական նպատակների իրականացմանը:

Փաստագրական նյութերի վերլուծության հիման վրա պարզաբանենք նաև կրթական համակարգի բարեփոխումների առաջին շրջափուլում (1998-2002թթ.) կրթական հաստատությունների կառավարման ապակենտրոնացման, խորհուրդների ստեղծման, համակարգի արդյունավետության բարձրացման ու օպտիմալացման հիմնախնդիրը:

Ինչպես նշեցինք, փորձնական ծրագրի իրականացման առաջին տարում, դպրոցների և՛ համայնքային, և՛ շրջանային կառավարման դեպքում փորձնական ծրագրում ընդգրկված դպրոցներում ստեղծվեցին կառավարման կոլեգիալ մարմիններ՝ դպրոցական խորհուրդներ: Դպրոցների կառավարման ժողովրդավարացման, կառավարման մեջ համայնքի և ծնողների ներգրավումն ապահովելու,

արտաբյուջետային միջոցների ներգրավմանը նպաստելու, ֆինանսական միջոցների օգտագործման թափանցիկությունը մեծացնելու, հաշվետվական ու վերահսկողական համակարգերը հստակեցնելու և ուժեղացնելու հարցերում խորհուրդներին տրվեցին մեծ դեր և համապատասխան լիազորություններ: Համաձայն հաստատված կարգի՝ խորհրդի անդամների թեկնածություններ առաջադրեցին դպրոցի մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը և վերադաս մարմինը, ընդ որում, խորհրդի անդամների թվաքանակի բաշխումը կատարվեց համապատասխանաբար:

Դիտարկումները ցույց տվեցին, որ կրթության համակարգի անցումային շրջանում (1991-1996թթ.) եթե ստեղծված անբարենպաստ պայմանները խիստ բացասաբար անդրադարձան համակարգի արդյունավետության վրա, և աշակերտների թվաքանակի շարունակական անկմանը և պետական ֆինանսավորման կտրուկ նվազմանը զուգահեռ դպրոցների և ուսուցիչների թիվն աճեց, և նման վիճակը հանգեցրել էր պետական միջոցների անարդյունավետ օգտագործմանը, ապա կայունացման շրջանում (1998-2002թթ.) կարևորվում էր համակարգի արդյունավետության բարձրացումը և օպտիմալացումը:

Օպտիմալացումը նախատեսվեց իրականացնել երկու մակարդակում՝ ներդպրոցական և միջդպրոցական:

1.Ներդպրոցական մակարդակում այն ներառում է՝

- թերկոմպլեկտավորված դասարանների վերակոմպլեկտավորում, խիստ թերկոմպլեկտավորված դասարանների դեպքում երկկոմպլեկտ և եռկոմպլեկտ դասարանների ստեղծում,
- վարչատնտեսական աշխատակազմի և ուսուցիչների թվաքանակի նվազեցում և դրանց օպտիմալ թվի սահմանում,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերակցության օպտիմալացում՝ սահմանված նորմերի շրջանակում դասարանների խտության բարձրացման և ուսուցիչների ծանրաբեռնվածության մեծացման միջոցով:

2.Միջդպրոցական մակարդակում օպտիմալացումը ենթադրում է դպրոցների միավորում կամ դպրոցի տիպի փոփոխություն: Այն վերաբերում է հիմնականում խիստ բնակեցված, իրար մոտ տեղակայված և մի քանի դպրոցներ ունեցող բնակավայրերին: Միջդպրոցական օպտիմալացման ենթակա չեն առանձնացված և ռազմավարական տեսանկյունից կարևոր բնակավայրերի դպրոցները:

Օպտիմալացման ընթացակարգերը և դրանց ներդրման ուղղությամբ առաջարկությունները մշակվեցին 1998 թվականին, սակայն այդ և հաջորդ մի քանի տարիներին դրանց իրականացման համար դպրոցների կողմից որոշակի գործողություններ չկատարվեցին սուբյեկտիվ (դպրոցի տնօրինության անպատրաստակամություն, անվստահություն, իրականացման եղանակներին անտեղյակություն, ընդիմություն) և օբյեկտիվ (օրենսդրական դաշտի, իրականացման մեխանիզմների և դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի անկատարություն, սոցիալական լարվածություն) պատճառներով: 2000թ.-ին[156] ՀՀ կառավարության կողմից որոշվեց նախ ընդգրկված 3 կրթական գոտիներում փորձարկել օպտիմալացման գործընթացը՝ այն համակցելով կառավարության և ֆինանսավորման նոր կարգի հետ: Համակցման մոտեցումը խիստ արդարացված էր, քանի որ դպրոցների ինքնուրույնությունը ֆինանսատնտեսական հարցերում և ամբողջական թվով ֆինանսավորումը դպրոցներին հնարավորություն էին տալիս ուռճացված հաստիքացուցակներում կատարել հաստիքների կրճատում, միավորել փոքր դասարանները, ազատվել կես հաստիքով

կամ մի քանի ժամով աշխատող ուսուցիչներից, գումարները նպատակաուղղելով ուսուցիչների աշխատավարձի բարձրացմանը կամ դպրոցի այլ կարիքների՝ ըստ իրենց հայեցողության: Լինելով միասնական կրթական դաշտում, օպտիմալացման ընթացակարգերը և դրանց ներդրման ուղղությամբ առաջարկությունները մշակվեցին նաև ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից և համապատասխան ՀՀ կառավարության որոշման՝ նույնպես ԼՂՀ կառավարության կողմից 2000թ.-ից ընդունվեց որոշում՝ հանրապետության մայրաքաղաքում և որոշ շրջաններում փորձարկել օպտիմալացման գործընթացը՝ համակցելով կառավարության ֆինանսավորման նոր կարգի հետ:

Ընդհանուր առմամբ, փորձնական ծրագրի իրականացման երեք տարիների (1999-2002թթ.) արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ առկա էին նշանակալի ձեռքբերումներ և ակնհայտ հաջողություններ, ինչպես նաև դժվարություններ և խնդիրներ, որոնք պահանջում էին հետագա լուծումներ:

Հանրակրթության համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրի հիմնական ձեռքբերումներն էին.

1. Ծրագրում ընդգրկված բոլոր դպրոցներում խորհուրդների ընտրությունների կայացում,

2. Չնայած դպրոցական խորհուրդների՝ որպես դպրոցի կառավարման նոր համակարգի, ամբողջական կայացմանը, որոշակի ժամանակ էր պահանջվում, որպեսզի խորհուրդները սկսեին գործել, և դրանց աշխատանքը գնալով ավելի արդյունավետ է դառնում:

3.Մեծանում էր համայնքի անդամների ու ծնողների մասնակցությունը դպրոցի կառավարման և որոշումների կայացման գործընթացում, ամրանում էին ուսուցիչ-ծնող, դպրոց-ծնող, դպրոց-համայնք կապերը: Որոշ դպրոցներում համայնքի անդամները և ծնողները սկսեցին ակտիվ մասնակցություն ունենալ դպրոցի հիմնահարցերի լուծմանը ոչ միայն ֆինանսապես, այլ նաև սեփական աշխատանքով կամ նյութական միջոցներով:

4.Աճում էր տնօրենների և խորհուրդների անդամների պատասխանատվությունը, կարևորվում խորհրդի առանցքային դերը դպրոցի պահպանման և զարգացման գործում, խորհուրդը և տնօրենը փոխում էին իրենց դիրքորոշումը և վերաբերմունքը գործի նկատմամբ:

5.Բավականին արդյունավետ էին տնօրենների և խորհրդների անդամների վերապատրաստման դասընթացները: Վերապատրաստում անցած տնօրենները ձեռնարկում էին դպրոցի նոր տիպի գործավարում և կառավարում: Նրանք հաճախ հայտնում էին վերապատրաստման դասընթացների հաջորդ փուլերում ընդգրկվելու ցանկություն:

6.Աշակերտների թվով ֆինանսավորման նոր կարգի կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն կատարել էական խնայողություններ, նպատակային օգտագործել սեփական միջոցները, այլև ապահովում է համայնքի և ծնողների կողմից միջոցների ծախսման վերահսկողությունը:

7.Ֆինանսատնտեսական հարցերի լուծման գործում մեծացան դպրոցների ճկունությունը և ինքնուրույնությունը, ֆինանսավորման նոր կարգի անցած դպրոցներից շատերում տնտեսված միջոցներով նույնիսկ կատարվել են վերանորոգման աշխատանքներ, բարեկարգվել են դպրոցի տարածքները, ձեռք են բերվել նոր գույք և սարքավորումներ, բարձրացվել են աշխատավարձերը և այլն:

Քննարկվող ժամանակաշրջանում ԼՂՀ կրթության համակարգում երկու տեսակի բարեփոխումներ են կատարվում: Առաջինը՝ ընթանում է համակարգի

փորձնական ծրագրի իրականացման ուղղությամբ և պետության մենաշնորհով ուսուցիչների աշխատավարձերի բարձրացում, կառուցվածքային դրույքաչափերի փոփոխություն և այլն: Դա դինամիկ կերպով իրականացվում է պետության հնարավորություններին զուգընթաց: Իսկ երկրորդը՝ տեսակի բարեփոխումներ, որոնք սկսվել են կրթության, մշակույթի և այլ ոլորտներում ու բովանդակային են, հենց ԿՄՍ (ներկայիս ԿԳՍ) նախարարության գործառույթն է:

Հայաստանում և Արցախում կրթության համակարգում բովանդակային բարեփոխումների իրականացման հիմքերը ստեղծվել են 1997-1998 թվականներին՝ բարեփոխումների առաջին փուլում: Դրանց շրջանակում վերանայվել են նախկին ուսումնական պլաններն ու ծրագրերը, դասագրքերը (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

Կրթական համակարգի բարեփոխումների **առաջին փուլում՝** ՀՀ կառավարության **2000 թվականի** մայիսի 8-ի, ԼՂՀ կառավարության նույն թվականի մայիսի 12-ի որոշումներով հաստատվել է միջնակարգ ընդհանուր կրթության պետական չափորոշիչը, որի կիրառումը կապահովի հանրակրթության որակի վերահսկումը և նրա պատշաճ մակարդակի ապահովումը: 2002 թվականին ՀՀ և ԼՂՀ կառավարությունների կողմից հաստատվեց հանրակրթական դպրոցների նոր կանոնադրություն: Դպրոցը դարձավ ոչ առևտրային կազմակերպություն՝ ձեռք բերելով ֆինանսահիրավական նոր կարգավիճակ: Եվ այդ շրջանում այն ֆինանսավորվում է մեկ տարով՝ ըստ աշակերտների թվի: Այսինքն դպրոցը տնօրինում է իր բյուջեն:

Այսպիսով, կրթության համակարգի նշված բարեփոխումները, համակարգի զարգացման ուղղություններն իրենց բարերար ազդեցությունն ունեցան հանրակրթական համակարգի հետագա զարգացման վրա:

Հանրապետության կրթական համակարգում ընթացող բարեփոխումների **երկրորդ փուլն ընդգրկում է 2003-2008 թվականները,** որը ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերում նշվում է որպես բովանդակային բարեփոխումներ և կառուցվածքային բարեփոխումների շարունակում:

ԼՂՀ կրթական համակարգը և դրա հետագա զարգացման գործընթացը միաձուլված են ՀՀ կրթական համակարգին և շնորհիվ երկու հայկական պետությունների իշխանությունների ու համապատասխան նախարարությունների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների համագործակցության՝ երկու համակարգերը համաքայլ իրականացնում են կրթության բովանդակային բարեփոխումներ, մասնակից դառնալով Բոլոնիայի գործընթացին՝ ինտեգրվում են համաեվրոպական միասնական կրթական համակարգին:

Հայաստանում և Արցախի Հանրապետությունում կառուցվածքային և բովանդակային բարեփոխումները, սկիզբ առնելով 90-ական թվականներին, լայն թափ ստացան 2000 թվականից հետո, երբ ընդունվեց «Կրթության մասին» օրենքը (այդ մասին տես նախորդ բաժինը), իսկ Հայաստանի Հանրապետությունը, որի հետ Արցախը գտնվում է կրթական նույն տարածքում, պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին: Հանրապետության պետական քաղաքականության հիմքում կրթությունը դիտարկվեց որպես գերակա ուղղություն և կարճ ժամանակահատվածում վերակառուցվեց կրթական ողջ համակարգը՝ նախադպրոցական կրթական աստիճանից մինչև հետբուհական մասնագիտական կրթություն, որն իր զարգացումն ունեցավ հետագա տարիներին, և բավարար հիմքեր ստեղծվեցին բովանդակային բարեփոխումների իրականացման համար:

Հանրակրթության բովանդակային բարեփոխումների հարցը հանգամանորեն քննարկվեց 2003 թվականի ապրիլի 3-ին, բարեփոխումների կենտրոնում (այժմ

Կրթության ազգային ինստիտուտ) հրավիրված սեմինար-խորհրդակցությունում, որին մասնակցում էր նաև ԼՂՀ ԿՄՍ նախարարության պատվիրակությունը՝ նախարար Ա. Սարգսյանի գլխավորությամբ:

ՀՀ և Արցախի կրթական համակարգերի պատասխանատուների համատեղ մասնակցությամբ սեմինարի հրավիրումը պայմանավորված էր ոլորտին առնչվող հարցերում փորձի փոխանակման, ընդհանուր չափանիշների ձևավորման հետ միասնական քաղաքականության, բարեփոխումների իրականացման և մեկ միասնական կրթական դաշտում աշխատելու հրամայականով: ՀՀ ԿԳ նախարար Լ. Մկրտչյանը իր խոսքում նշեց, որ ՀՀ-ն և ԼՂՀ-ն երկու ինքնուրույն պետական կազմավորումներ են, կրթական համակարգում դա «ընդունելի չէ» այն պատճառով, որ մենք ընդհանուր դաշտում ենք աշխատում, մեկ ընդհանուր համակարգի մեջ, և այն բոլոր փոփոխությունները, այն տրամաբանությունը, որով պատկերացվում է ՀՀ կրթական համակարգի զարգացումը, այդ նույն տրամաբանությունը պետք է լինի նաև ԼՂՀ-ում: Հետևաբար, կրթական համակարգում պետք է միասնական իրականացվեն համակարգի բովանդակային բարեփոխումները:

Հանրակրթության ոլորտում ձեռնարկված բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը:

Համաձայն կրթության զարգացման 2001-2008թթ. պետական ծրագրի պահանջների, առաջին խնդիրը որակի ապահովումն է, երկրի պահանջները բավարարող, կենսունակ և միջազգային չափանիշներին համարժեք կրթական համակարգ ունենալը: Դրա ձևավորումը, ըստ էության, նախևառաջ ենթադրում է բովանդակային շատ լուրջ փոփոխություններ, այսինքն՝ պահպանման ռեժիմից հետո, որ հիմնական գերխնդիրն է եղել անկախությունից հետո ընկած ժամանակաշրջանում, պետք է արդեն դնել զարգացման գործոնը: Ստեղծվել են այնպիսի պայմաններ, որոնք ապահովում են առաջընթացը կրթական համակարգում՝ միջազգային չափանիշներին համարժեք: Այսինքն՝ պետք է հասկանալ այնպիսի իրավիճակ, երբ կրթական համակարգի յուրաքանչյուր աստիճանի ավարտական արդյունքը ընդունելի լինի աշխարհի բոլոր երկրների համար և աշխարհի որևէ երկրում իր կրթական որակը զարգացնելու նախապայման լինի: Մեր ազգային կրթական առանձնահատկությունները պետք է համահունչ լինեն աշխարհում տեղի ունեցող ընդհանուր գործընթացներին:

Ինչպես նշել ենք, բարեփոխումների առաջին փուլում, «Կրթության մասին» ԼՂՀ օրենքում (2000թ. ապրիլի 4-ին) ներառվեցին սահմանադրական դրույթներ, և օրենքի կիրառումը որոշակիորեն ուղղորդեց վերափոխվող կրթական համակարգի զարգացումը: Մշակվել և արդեն գործածության մեջ են հանրակրթության ոլորտի բարեփոխումներին նպաստող մի շարք կանոնադրական կետեր:

1999 թվականից հանրակրթական դպրոցներում մշակվել և ներդրվել է դասագրքերի վարձակալության համակարգը, որի նպատակն է աշակերտներին ապահովել ՀՀ ԿԳՆ-ի հաստատած հիմնական առարկաների դասագրքերով, դրանք տրամադրելով վարձակալական հիմունքներով: Ներդրվել է նաև հանրակրթական դպրոցների կառավարման ծրագիրը: Հաստատվել են միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչները, որոնց կիրառումը կապահովի հանրակրթության որակի վերահսկումը և նրա պատշաճ մակարդակի ձեռքբերումը: Անշուշտ, այդ փուլում որոշակի լուծումներ ունեցանք:

Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների երկրորդ փուլում՝ 2002-2003 ուսումնական տարում, արդեն ունենք ամբողջական դասագրքային համակարգ 10-ամյա ուսուցման համար: Եվ դա՝ վարկային ծրագրի շնոր-

հիվ: Դասագրքերի վարձավճարային այդ մեխանիզմը միջազգային մասշտաբով օրինակելի է համարվում և իրեն արդարացրել է նաև մեզ մոտ: Այդ առումով համակարգը կատարել է առավելագույնը, ինչը Հայաստանի Հանրապետության պայմաններում հնարավոր է: Իհարկե, բովանդակային առումով դասագրքերի հարցում երբեմն անհամաձայնություններ կան, և բոլոր դասագրքերը չէ, որ ուսումնական գործընթացում հավանության են արժանացել: Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից, 2002 թվականից արդեն ստեղծվել է դասագրքաստեղծման ազգային հեղինակային դպրոց, և հրապարակի վրա եղած դասագրքերի գոյությունը մրցակցություն է ստեղծում, և առկա դասագրքերը արդյունավետ են և աստիճանաբար հրատարակվում են նորանոր դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ:

Բարեփոխումների երկրորդ փուլը վերաբերում է նաև դպրոցի կառավարմանը կազմակերպչական և ֆինանսական տեսանկյունից, 2004 թվականից արդեն դպրոցներին տրվել են ազատ ինքնավարություն: Դպրոցի տնօրենը կոլեկտիվի հետ ինքն է որոշում, թե ինչ ուղղություններով ծախսի հատկացված գումարները: Պետականից բացի, դպրոցը կարող է ունենալ նաև արտաբյուջետային հաշիվ, որով որոշ իմաստով ինքնուրույն մեխանիզմ է դառնում: Դրա շարունակությունը կազմում է ինքնուրույն կառավարման մեխանիզմը: (Այդ մասին արդեն նշել ենք):

Կրթական համակարգի բարեփոխումների երկրորդ փուլը հիմնականում ուղղված է՝

- հանրակրթության բովանդակության արդիականացմանը, կրթության որակի բարձրացմանը,
- միջազգայնորեն ընդունված կրթական չափանիշներին, ինչպես նաև հասարակության ու տնտեսության արդի պահանջներին Հայաստանի և Արցախի կրթության համակարգերի համապատասխանության ապահովմանը և այլն:

Նախատեսվող բարեփոխումների նոր փուլի իրականացումը սկսվել է 2003 թվականից՝ հետևյալ երեք ուղղություններով.

1.Հանրակրթական պետական կրթակարգի, ուսումնական ծրագրերի և գնահատման համակարգի բարելավում,

2.Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում,

3.Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում:

Հանրակրթության պետական կրթակարգի, ուսումնական ծրագրերի և գնահատման համակարգի բարելավման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների նպատակներն ու խնդիրները հետևյալն են՝

- զարգացնել ազգային կրթական համակարգը,
- ստեղծել և ներդնել հանրակրթության պետական չափորոշիչի, հենքային ուսումնական պլանի, առարկայական ուսումնական ծրագրերի ամբողջական համալիր,
- խթանել աշակերտների տրամաբանական-ստեղծագործական ու վերլուծական մտածողության զարգացումը, ինքնուրույն սովորելու, հմտությունների և ժամանակակից աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխան այլ գործնական որակների, կարողությունների և հմտությունների ձևավորում,
- ներդնել ուսումնական գործընթացի և սովորողների գիտելիքների գնահատման միջազգային չափանիշներին համապատասխան նոր ձևեր և ապահովել դրանց կիրառումը կրթական համակարգի բոլոր օղակներում,

- ապահովել ազգային և միջազգայնորեն ընդունված չափանիշներին չափորոշիչի և առարկայական ծրագրերի համադրելիություն,

- ուսումնական գործընթացում ներդնել դասավանդման ժամանակակից մեթոդներ, կիրառել տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ՝ որպես ուսման և դասավանդման ժամանակակից միջոց և այլն:

Կրթական համակարգում սկսված բովանդակային բարեփոխումները, որոնք միտված են որակի և արդյունավետության բարձրացմանը, մեծապես պայմանավորված են նաև ուսուցման տեխնիկական միջոցների կիրառմամբ: Իհարկե, ժամանակի առումով դրանց շատ կողմերով փոխարինում են համակարգիչները: Հաշվի առնելով հանրակրթական առարկաների ուսուցման գործընթացում համակարգիչները որպես ուսուցման միջոց օգտագործելու հեռանկարները՝ ԿՄՍ նախարարության կողմից 2006թ. երկրորդ կիսամյակը հայտարարվել է համակարգչային պարտուսի ժամանակաշրջան: Դա նշանակում է, որ այդ ժամանակամիջոցում բոլոր առարկաների ուսուցիչները պետք է ստանային համակարգչային գրագիտություն: Այդ նպատակով ուսուցիչների, փոխտնօրենների համար կազմակերպվել են դասընթացներ:

Երկրորդ փուլում բարեփոխումների մյուս ուղղությունը կրթության որակի գնահատման նոր համակարգի ներդրումն է:

- Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 2007 թվականը գիտելիքների միասնական համակարգ մեր կրթական ոլորտում չկար, անգամ 20-միավորանոց համակարգը կամայական է գործում: Դպրոցներում 5-միավորանոց համակարգը ավարտականում առանց որևէ հիմքի դառնում է 20: Գնահատման չափանիշների մեջ չկա հստակություն: Խնդիր է դրվել, որ գնահատման համակարգը նույն տրամաբանությամբ ու նույն չափորոշիչներով պիտի լինի կրտսեր դպրոցից սկսած՝ մինչև հետբուհական կրթությունը: Եվ անընդհատ իր մեջ պետք է ներառի նորանոր պահանջներ, որոնք կրթության որակի խորացմանը զուգընթաց ավելանում են: Հանրակրթության մեջ պահանջը նույնը պետք է լինի, ինչ բարձրագույնում:[157]

Ըստ պաշտոնական փաստաթղթերի տվյալների, 2005թ.-ից սկսած, մշակվել են գնահատման և թեստավորման համակարգի գործունեության սկզբունքները, «Հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության միասնական քննությունների առաջադրանքների (թեստերի) փորձարկման ընթացակարգը» և սովորողների գիտելիքների գնահատման թեստերի նմուշ-օրինակները հանրակրթական 4 առարկաների գծով, իրականացվել է դրանց փորձարկումը Հայաստանի և Արցախի կրթական հաստատություններում:

Ի դեպ, նշենք, որ այս շրջափուլում բարեփոխումների իրականացման հետ կապված ընդունվել են մի շարք իրավական փաստաթղթեր, որոնք ուղենիշ եղան համակարգում ընթացող թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային վերափոխումների համար: Նշենք դրանցից մի քանիսը:

2005թ. ընթացքում միջնակարգ կրթության ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացման, կրթության որակի ապահովման և օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով մշակվել է «Միջնակարգ կրթության մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև ընդունվել է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքը: Վերջինիս արդյունքում սկսվել է կրթության պետական տեսչության ձևավորման գործընթացը:

2005թ.-ին ընդունվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքը, որը կոչված է կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

ՀՀ և ԼՂՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը: Մշակվել է նաև «ՀՀ-ում և ԼՂՀ-ում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունների և 2005-2008թթ. գործողությունների պլանը»: Այս ոլորտի կարևոր ձեռքբերումներից էր արհեստագործական ուսումնարանների վերաբացումը:

Մշակվել և հաստատվել է միջին մասնագիտական կրթության 11 մասնագիտության գծով պետական կրթական չափորոշիչը:

Կրթության բնագավառում բարեփոխումները հիմնականում օրենսդրական կարգավորման ու կանոնակարգման բնույթ են կրել: Կրթության ոլորտի օրենսդրական դաշտի լիարժեք ապահովման և հանրակրթության բարեփոխումների իրականացման գործընթացում առաջընթացի քայլեր էին «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը և դրա հետ կապված մի շարք օրենքներում փոփոխություններ մտցնելու վերաբերյալ ԼՂՀ օրենքները: «Հանրակրթության մասին» օրենքի կիրարկման համար մշակվել և հաստատվել են ենթաօրենսդրական մի շարք փաստաթղթեր, որոնցով կարգավորվել են այնպիսի կարևոր գործընթացներ, ինչպիսիք են հանրակրթական ուսումնական հաստատությունների կարգավիճակի համապատասխանեցումը, մանկավարժական աշխատողների և հաստատությունների ղեկավարների ատեստավորումը, նրանց աշխատանքի ընդունման մրցութային կարգի ներդրումը, ավագ դպրոցների ստեղծման գործընթացի ավարտումը և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2007 թվականից սկսած՝ շարունակվում են հանրակրթական դպրոցի հետևողական բարեփոխումները, որոնք նպատակաուղղված են ոչ միայն դպրոցի, այլև ընդհանուր կրթության որակի բարձրացմանը: Չնայած նշված ժամանակաշրջանում (2003-2008թթ.) բարեփոխումները տվեցին առաջին դրական արդյունքները, սակայն կարևոր և հիմնական ձեռքբերումները եղան ավագ դպրոցի կազմավորման հետ միաժամանակ:

Հանրակրթության ոլորտում ընթացող արմատական, բովանդակային բարեփոխումների **երրորդ փուլն ընդգրկում է 2009-2015 թվականները:** Ինչպես առաջին և երկրորդ փուլերում, այնպես էլ ներկա փուլում բարեփոխումները նպատակային են միայն այն դեպքում, երբ կրթական համակարգը կարողանում է արձագանքել հասարակական փոփոխություններին, որոնց հիմնական ուղղություններն են ժողովրդավարությունը, տեխնոլոգիաների զարգացումը, գլոբալացումը, արագ փոփոխվող աշխարհը և աշխատուժին ներկայացվող նոր պահանջները: Սա նշանակում է, որ մարդը հաճախ է հայտնվում նոր միջավայրում, ուստի մենք պետք է ձևավորենք ուժեղ անհատներ, ովքեր կլինեն պետական մտածողություն ունեցող, ապագա մարտահրավերներին դիմակայելու պատրաստ, համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող, կոնկրետ խնդիրներ լուծող անհատներ: Կրթական համակարգի համար արդի ժամանակաշրջանը կարելի է բնորոշել որպես վերակառուցման կայացման ժամանակաշրջան, իսկ կրթության որակի ապահովումը շարունակում է մնալ որպես հանրակրթության բնագավառի գերխնդիր: Ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ արդյունավետ ու նպատակասլաց աշխատանքների արդյունքում

կունենանք կայացած ավագ դպրոցներ: Այժմ պարզաբանենք, թե ինչ հանգամանքներում են ստեղծվել ավագ և հոսքային դպրոցները և զարգացման ինչպիսի ուղղություններ են ունեցել: Այդ համատեքստում դիտարկենք ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների համատեղ քննարկումներն ու առաջարկությունները ավագ դպրոցների ծրագրերի, դասագրքերի հիմնախնդրի շուրջ:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական փաստաթղթերից, 2008թ. ԼՂՀ կառավարությունը համապատասխան որոշում է կայացրել, որի թիվ 1 հավելվածը իրենից ներկայացնում է ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր: Ծրագրի ներածականում գրված է. «Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլում հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է»: Այս նպատակով սկիզբ է դրվել մի շարք նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսներ, ծրագրամեթոդական ապահովում, նորմատիվ-իրավական դաշտ, ինստիտուցիոնալ համակարգ: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն անցումն է 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել է 2008թ. և ավարտվել 2010-ին: Այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից նախատեսվում էր եռամյա ավագ դպրոցի ներդրումը:

Ռազմավարական առկա ծրագիրն ուղղված է հանրակրթության երրորդ աստիճանում ավագ դպրոցում կրթության որակի և արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը: Ծրագրի ընդունումը կարևոր է, քանի որ ավագ դպրոցը հանդիսանում է «նախամասնագիտական» կրթություն ապահովող հիմնական օղակ, որի գործունեությունից մեծապես կախված են սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: Ինչպես նշված է «Հանրակրթության պետական կրթակարգում», ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի և աշխատանքի շուկա մտնելուն:[158]

Ռազմավարական ծրագրի իրականացումն իրենից ներկայացնում է երեք փուլ: **Առաջին փուլը** վերաբերել է մեկից ավելի դպրոցներ ունեցող բնակավայրերին, որի ընթացքում շրջանում (Մարտունի, Մարտակերտ, Հադրութ) ձևավորվել են երկու հոսքային միջնակարգ դպրոցներ: Օրինակ, Մարտունու շրջանի վարչակազմի կրթության բաժնի վարիչ Գևորգ Սևիկյանը նախարարությանը ներկայացրած իր զեկուցագրում մատնանշում է, որ Մարտունու Նելսոն Ստեփանյանի անվան թիվ 1 և Ճարտարի Ազատամարտիկների անվան թիվ 1 միջնակարգ դպրոցներում ձևավորվել են երեք հոսքեր՝ հումանիտար-հասարակագիտական, բնագիտա-մաթեմատիկական և արհեստագործական, իսկ Մարտակերտում՝ թիվ 1, Հադրութում՝ թիվ 1 դպրոցներում: Հաշվի առնելով, որ Մարտունում գործում է արհեստագործական ուսումնարան, արհեստագործական հոսքը կենտրոնացվել է այստեղ, իսկ մնացած երկուսը արդեն 2009 թվականից գործում են վերոնշյալ դպրոցներում, և համապատասխան ծրագրով ուսուցում է ընթանում: Ռազմավարական ծրագրի իրականացման **երկրորդ փուլում՝ 2009-2010 ուս.տարում,** գյուղական բնակավայրերում, ենթաշրջանային խոշոր դպրոցներում ծրագրված է բացել հոսքային խմբեր, որտեղ կընդգրկվեն հարակից գյուղերի դպրոցների աշակերտները (ովքեր ցանկանում են): Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչի զեկուցագրի տվյալներով՝ շրջանում նման հնարավորություն ստեղծվել են Բերդաշենի դպրոցում, Մարտակերտի շրջանում՝ Հաթերքի դպրոցում, Հադրութի շրջանում՝ Ազոխի դպրոցում՝ հաշվի առնելով բոլոր պայմանները (նյութա-

տեխնիկական բազա, համապատասխան մասնագետներ աշակերտների անհրաժեշտ քանակ և այլն):

Կրթության շրջանային և Ստեփանակերտի քաղաքային բաժինների վարիչների հաշվետվություններից տեղեկանում ենք, որ 2010-2011 ուս.տարում, հաշվի առնելով նախորդ տարվա բացթողումները, խորացված ուսուցմամբ հոսքերից բացի ավագ դպրոցներում կգործեն ընդհանուր հոսքեր (10-րդ և 11-րդ դասարանների համար), ինչը կողմնորոշում չունեցող աշակերտներին հնարավորություն կտա սովորելու նախկին ձևով: Կրթության որակի ապահովման խնդիրն առանձնապես կարևորվում է ավագ դպրոցում, որը հանդիսանում է մասնագիտական կրթության նախաշեմը:

Վերլուծությունները ցույց են տվել, որ 2008 թվականից հանրապետությունում միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

- տարրական դպրոց,
- միջին դպրոց,
- ավագ դպրոց:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները, որոնք կազմում են հիմնական դպրոցը, պարտադիր են սովորողների համար: Ավագ դպրոցը (միջնակարգ դպրոցի ավագ դասարանները, առանձին գործող ավագ դպրոցը համապատասխան կրթական ծրագրով) հանդիսանում է միջնակարգ կրթության երրորդ աստիճանը, որը թեև անվճար է, բայց պարտադիր չէ, իսկ 2015 թվականին ՀՀ ԿԳ նախարարության որոշմամբ (ապրիլ) ավագ դպրոցը դարձավ պարտադիր:

Ռազմավարական ծրագրի **երրորդ և վերջնական փուլը** միասնական ավարտական քննությունների համակարգի վերջնական ձևավորման փուլն է: Այս փուլից հետո արդեն բուհ ընդունվելու համար երեխան միայն մեկ անգամ է քննություն հանձնելու:

Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում կրթական համակարգում արմատական փոփոխություններն իրականացվում էին այն պահից սկսած, երբ Հայաստանը ինտեգրված էր եվրոպական կրթական համակարգին և մի քանի տարիների ընթացքում (2008-2016թթ.) կրթական համակարգում կատարվող արմատական փոփոխությունները պայմանավորված էին այս փաստով՝ եվրոպական կրթահամակարգի ինտեգրմամբ:

Կրթական համակարգի բարեփոխումների հույժ կարևոր պահանջներից մեկը կրթական ծրագրերի, դասագրքերի կատարելագործումն է: 2007-2008 ուսումնական տարում հանրակրթության ոլորտ մուտք գործած ավագ դպրոցի փորձնական ծրագիրը, ինչպես վկայում է կառավարության կողմից 2009թ. հոկտեմբերին ընդունված որոշումը, ամեն նոր ուսումնական տարվա հետ համալրվում է նոր դպրոցներով, որոնց գործունեության արդյունավետությունը լիապես կախված է ոչ միայն դասավանդող ուսուցիչների մասնագիտական հմտությունից, այլև նրանց ձեռքի տակ եղած նոր ծրագրերի, դասագրքերի բովանդակային որակից:

Դասագրքերի շրջանառու հիմնադրամի փոխտնօրեն Գարեգին Գարեգինյանի՝ «Լուսարար»-ին[159] տված հարցազրույցից տեղեկացանք, որ ավագ դպրոցի նոր դասագրքերն ստեղծվում են կրթական պահանջներին ու ծրագրերին համապատասխան: 2009 թվականին մրցույթով անցել են հեղինակների կազմած մաթեմատիկական անալիզի տարրեր, երկրաչափություն և համաշխարհային պատմություն առարկաների դասագրքերը: Նշյալ առարկաների դասագրքերը հրատա-

ռակվել են ոչ միայն ավագ դպրոցի բնագիտական, այլև ընդհանուր հոսքերի համար և սեպտեմբերին մատչելի դարձավ աշակերտների համար: Հայագիտական առարկաների՝ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն դասագրքերը, ինչպես նաև հասարակագիտություն առարկայի դասագիրքը հրատարակվել են պետբյուջեի միջոցներով:

Ըստ վերոնշյալ հիմնադրամի տնօրենների տեղեկությունների, 2009-2010 ուս.տարում, արդեն մրցույթով անցել են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ռուսաց լեզվի, օտար լեզվի դասագրքերը, և սեպտեմբերի 1-ից հրատարակվել են այնպես, որպեսզի ավագ դպրոցներն ապահովվեն դասագրքերով: 2008-2009 ուս.տարում վերահրատարակվել են ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագրքերը, 2010 թվականին՝ 11-րդ դասարանի, որից հետո՝ 12-րդ դասարանի դասագրքերը:

Դասագրքաստեղծման այս ծրագրերն, ըստ էության, նորություն են մեր իրականության մեջ, հատկապես հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցի համար ստեղծվող դասագրքերը: Փորձաշրջանն անցնելուց 1-2 տարի անց բոլոր խնդիրներն ավելի հստակ եղան, իսկ այս փուլում կարևորն այն է, որ դասագրքերը մշակվել են հեղինակներին ուղարկված բոլոր դիտողությունները հաշվի առնելով: Ի դեպ, նշենք, որ տպագրվող բոլոր դասագրքերը հաստատված են ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից և նախատեսված են որպես հիմնական դասագրքեր հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանների և ավագ դպրոցների համար:

Հարկ է նշել, որ նախկին դասագրքերի համեմատ, հոսքային ուսուցմամբ դասագրքերը տարբեր են, օրինակ, հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարբեր առարկաների դասագքերից մեկը նախատեսված է ընդհանուր և հումանիտար հոսքերի համար, դրանով սովորել են նաև բոլոր տասներորդցիները, իսկ մյուսը նախատեսված է բնագիտական և մաթեմատիկական հոսքերի համար: Հասկանալի է, որ դրանք տարբեր են իրենց բովանդակությամբ, մոտեցմամբ և առաջադրանքների բարդության աստիճանով, ասում էր Գ. Գարեգինյանը:

Հարկ է նշել, որ դասագրքերի առաքումը դպրոցներ սկսվել է 2009 թվականի սեպտեմբերից: Գ. Գարեգինյանի խոստովանությամբ, 12-ամյա կրթության համար 2009-2010 ուս.տարում կհրատարակվի 65 անուն դասագիրք, 12-ը՝ ավագ դպրոցի, մնացածը՝ հիմնական դպրոցի համար: Դրանով գրեթե ավարտվում է հիմնական դպրոցի դասագրքերի հրատարակման ծրագիրը, մնում է հաջորդ ուս.տարում հրատարակել 7-րդ դասարանի ռուսաց լեզվի, 9-րդ դասարանի օտար լեզվի և 7-րդ դասարանի ինֆորմատիկայի դասագրքերը: Կարելի է ասել, որ միջին դպրոցի նոր դասագրքերի փաթեթն ամբողջական է, իսկ ավագ դպրոցինը՝ այժմ իսկ համալրվելով, 2014-2015 ուսումնականում կամբողջանա:[160]

Տարեցտարի կատարլեգործվում են ուսումնական ծրագրերն ու դասագրքերը, ինչ մնում է մասնագետներին, պիտի ասել, որ մինչև ավագ դպրոց մտնելը ուսուցիչներն անցնում են հատուկ դասընթացներ, ստուգվում է գիտելիքների մակարդակը և նոր միայն թույլատրվում դասավանդելու ավագ դպրոցում: ԿԳ նախարարության ուշադրության կենտրոնում էին գտնվում ավագ դպրոցի համար բարձր որակի մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը, քանի որ որակյալ մասնագետների աշխատանքով է առաջին հերթին պայմանավորված կրթական համակարգի բարեփոխումների ցանկալի արդյունքի ապահովումը:

Բարեփոխումների իրականացման այս շրջափուլում ի՞նչ առաջընթաց է արձանագրված, արդյունքներն ինչի՞ մասին են խոսում: Իհարկե, առաջնային հիմ-

նախնդիրը 12-ամյա ուսուցմանն անցնելն է: Այն ունի երեք հիմնական փուլ: Մուտքերը, ըստ դպրոցի աստիճանների, հետևյալն են.

Տարրական դպրոցի մուտք (1-4-րդ դասարան): Այն արդեն սկսվել է 2006-2007 ուս.տարում՝ 6 տարեկաններն արդեն հաճախում են 1-ին դասարան: Հրապարակի վրա են 1-ին դասարանի դասագրքերը՝ մայրենին ու մաթեմատիկան և դրանց չափորոշիչները: Երկրորդ մուտքը՝ հիմնական դպրոցի մուտք, որն սկսվում է 5-րդ դասարանից: Ուսումնական առարկաների մուտք, որը սկսվել է 2007-2008 ուս.տարում:[161] Դա բնագիտական և հասարակագիտական առարկաների չափորոշիչների ու ծրագրերի մուտքն է հանրակրթական դպրոց: Ուսումնական տարում արդեն հաստատվել են դրանց չափորոշիչները, համապատասխան դասագրքերը ներկայացնել մրցույթի: Բնագիտական բլոկում՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն: Հասարակագիտական բլոկում՝ հայոց պատմություն, հայոց լեզու, գրականություն, հասարակագիտություն, ինչպես նաև «Ես և շրջակա աշխարհը» (տարրական դասարանում) և «Հայրենագիտություն» (2-րդ դասարանում): Երրորդ փուլը սկսվել է 2008-2009 ուս.տարում: Արդեն ձևավորվել է աշխատանքային խմբի մրցութային կազմը, մշակվել են չափորոշիչները և ծրագրերի նախագծերը: Դրանք օտար լեզուներն են, ֆիզկուլտուրան, աշխատանքը, կեպարվեստը: 2008-2009 ուս.տարում ավարտվել է չափորոշիչների և ծրագրերի մշակման գործընթացը: Խոսքը վերաբերում է հիմնական 9-ամյա դպրոցին:

Փաստագրական նյութերի վերլուծությունները ցույց են տվել, որ նշված ուս.տարում նորամուծություններից հատկանշական է 9-րդ դասարանների ընդգրկումը միասնական քննակարգի մեջ՝ հայոց լեզու, մաթեմատիկա և հայոց պատմություն առարկաներից: Այս հանգամանքը վերջապես հնարավորություն տվեց ձերբազատվել բարձր դասարաններում հարկադրաբար թույլ աշակերտներ ունենալու հեռանկարից, դրանով հանդերձ, ավելի շատ ժամանակ և ուշադրություն հատկացնել ընդունակ ու նախասիրություններ ունեցող աշակերտներին:

Գաղտնիք չէ, որ աշակերտների և ծնողների մեծ մասը հաճախ անհատական պարապմունքները գերադասում են դասերից, որում մեղքի իր որոշ բաժինն ունի դպրոցը, որը պետք է կարողանա բավարարել աշակերտների կրթական պահանջներն ու մեծ տեղ հատկացնել նրանց նախասիրություններին: Սրանք բարեփոխվող կրթական համակարգի այն հիմնական նպատակներն են, որոնք առավել շոշափելի կդառնան ավագ դպրոցի կազմավորմամբ, երբ միևնույն դասարանում կսովորեն նույն նախասիրություններն ունեցող ընդունակ աշակերտներ, ինչն ուսուցչին հնարավորություն կտա ճիշտ և նպատակասլաց մոտեցում ցուցաբերելով առավել արդյունավետ օգտագործել դասաժամը:

Պաշտոնական տվյալների համաձայն, 2009-2010 ուս.տարվա վերջում հանրապետության շրջաններում քննություն են հանձնել 90-ից ավելի միջնակարգ դպրոցների 11-րդ դասարանն ավարտած 1212 շրջանավարտներ, որոնցից միասնական քննություններին մասնակցել են 822 հոգի, 124 շրջանավարտներ մասնակցել են վերաքննություններին:[162] Արդյունքում 16 հոգի դուրս են մնացել ուսումնական հաստատություններից և ատեստատ չեն ստացել: 9-րդ դասարանի ավարտական քննություններին մասնակցել են հանրապետության 126 դպրոցների 2456 աշակերտներ, որոնցից 136-ը ստացել են անբավարար գնահատականներ (չեն անցել շեմային բալը) և օգոստոսի 20-30-ը պետք է հանձնեն վերաքննություն: Ըստ դպրոցների տնօրենների տվյալների, վերաքննությունը դպրոցներում

անցել է նախարարության կողմից խիստ վերահսկողությամբ, և բավարար գնահատական են ստացել 118-ը: Ասել, թե բարձր ցուցանիշներ են գրանցված, սխալ կլինի, բայց ընդհանուր առմամբ արդյունքն օրինաչափ է: Հարկ է նաև նշել այն հանգամանքը, որ վերոնշյալ ուսումնական տարում Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում 9-րդ դասարանը գերազանց ավարտած շրջանավարտների թիվը հասնում է 18-ի, իսկ Շուշիի շրջանում՝ 4-ի, մայրաքաղաքում՝ 12-ի:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետության հանրակրթական համակարգում իրականացվող բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկը 12-ամյա ուսուցման անցնելն է, երկրորդը՝ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են կրթության բովանդակության կատարելագործմանը: Կրթական համակարգում և մասնավորապես ավագ դպրոցում առկա հիմնախնդիրներն ամփոփված են ստորև բերված կետերում:

1.Գործող ուսումնական պլանը (նկատի ունենք 2007-2008թթ.) ճկուն չէ, այն թույլ չի տալիս սովորողին լիարժեք բավարարել իր հետաքրքրությունները և կատարել ուսումնական առարկաների ընտրություն՝ ըստ իր նախասիրությունների և պահանջների:

2.Դպրոցի կողմից տրված ուսումնական և բուհական ընդունելության համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների անհամապատասխանությունը հանգեցնում է կրթությունը շարունակելու բարդության:

3.Ավագ դպրոցում դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակավորումը բավարար չէ որակյալ ավագ կրթություն ապահովելու համար: Միջնակարգ դպրոցներում միջին և ավագ դասարանների ուսուցիչները հիմնականում նույն անձինք են: Հիմնական և ավագ դպրոցներում դասավանդող ուսուցիչների որակավորմանը ներկայացվող պահանջները նույնն են: Ավագ դասարաններում հաճախ դասավանդում են ուսուցիչներ, որոնք չունեն մասնագիտական բարձր որակավորում:

4. Առանձին դպրոցների ավագ դասարաններում սովորողների սակավաթվության պատճառով չի ապահովվում կրթական ծրագրերի (հոսքերի) բազմազանություն, մինչդեռ միջնակարգ դպրոցի շրջանավարտների զգալի մասը նախընտրում է շարունակել կրթությունը միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթության հաստատություններում, հետևաբար, դպրոցի ուսումնական պլանը պետք է սովորողներին հնարավորություն ընձեռի ստանալ մասնագիտական կրթությունը շարունակելու համար անհրաժեշտ գիտելիքներ՝ ըստ իրենց նախասիրությունների: Այս խնդիրները մասնակիորեն փորձում են լուծել առանձին մասնագիտացված վարժարաններն ու կրթահամալիրները, բայց դրանք չեն կարող բավարարել պահանջարկը:

5. Հանրակրթական բոլոր մակարդակներում մեկ սովորողի հաշվով ֆինանսավորումը նույնն է, չնայած նրան, որ որքան բարձրանում է կրթության աստիճանը, այդքան ավելի շատ ֆինանսական միջոցներ են պահանջվում:

6. Ավագ դպրոցներն այսօր մեծամասնորեն չեն իրականացնում հոսքային ուսուցում՝ տնտեսագիտական, իրավագիտական, արվեստի, ռազմագիտական, մարզական և այլ հոսքերի ուսուցում: Իր ուսումնական խնդիրներով ավագ դպրոցն այսօր քիչ է տարբերվում հիմնական դպրոցից: Թվարկված հիմնախնդիրներից կարելի է եզրակացնել, որ 2009-2010 ուսումնական տարում, դեռևս ավագ դպրոցը չի իրականացնում իր հիմնական նպատակը՝ մասնագիտական կողմնո-

որոշումը և նախնական մասնագիտական կրթություն տալը:

Ուստի 2011-2012 ուս.տարվանից ստեղծվել է առավել արդյունավետ առանձին գործող դպրոցների համակարգ, որն ապահովված է համապատասխան ֆինանսավորմամբ, մանկավարժական կադրերով, նյութատեխնիկական բազայով, որտեղ առաջարկվել է կրթական ծրագրերի բազմազանություն: Հիմնավորենք կոնկրետ օրինակներով:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2008թ. օգոստոսի 5-ի «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական և փորձնական ծրագրերին հավանություն տալու մասին» որոշման և հաշվի առնելով ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների կողմից ներկայացված առաջարկությունների, ավագ դպրոցների համակարգի ներդրման առաջին փուլում ԿԳ նախարարության կոլեգիայի նիստի որոշմամբ ավագ դպրոցներ են բացվել Ստեփանակերտում (թիվ 8, թիվ 11), Ասկերանում (թիվ 1), Մարտակերտում (թիվ 1), Մարտունիում (թիվ 1), Հադրութում (թիվ 1), Շուշիում (թիվ 1) և Ճարտար համայնքում: Նշենք, որ 2012-2013 ուս.տարում Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցի ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար դպրոցը գործել է ընդհանուր ավագ դպրոցի կարգավիճակով, իսկ հայերենով ուսմամբ 10-րդ և հետագա դասարանների սովորողները ընդգրկվել են թիվ 8 ավագ դպրոցում: Որպես ինքնուրույն ավագ դպրոց շարունակել է գործել Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը: Իսկ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների արհեստագործական հոսք ընտրած սովորողների ուսուցումը իրականացվել է Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2009-2010 ուսումնական տարում Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցում 1-ին դասարանցիների ընդունելություն չի իրականացվել և ինքնուրույն ավագ դպրոցի է վերածվել աստիճանաբար՝ հնարավորություն ընձեռելով ավարտելու մինչև 9-րդ դասարանը, իսկ թիվ 11 դպրոցի բոլոր դասարանները միավորվել են թիվ 10 միջնակարգ դպրոցին, և թիվ 11 դպրոցը գործել է որպես ինքնուրույն ավագ դպրոց՝ գործող դպրոցի շենքում, իսկ 2010-2011 ուսումնական տարում՝ նորակառույց շենքում:

Վերոնշյալ երկու ավագ դպրոցներում (թիվ 8 և թիվ 11) սովորողների ընդգրկվածությունն ավելացնելու դեպքում նախատեսվել է ստեղծել երրորդ ավագ դպրոց թիվ 1 նորակառույց դպրոցում՝ 2011-2012 ուսումնական տարում:

Ավագ դպրոցների արդյունավետ գործունեության ապահովման համար կարևորվում է որակյալ մասնագետ ուսուցիչների ընտրությունը, որը հնարավորինս ապահովվել է և նրանց համար ըստ կիսամյակների կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

ԼՂՀ ԿԳ նախարարության տեղեկագրում նշված տվյալների[163] համաձայն, ավագ դպրոցների ստեղծման երկրորդ փուլը կայացել է 2010-2011 ուսումնական տարում, և միանշանակ ձևավորվել է ավագ դպրոցների ցանցը: Այս փուլում ընդգրկվել են Քաշաթաղի և Շահումյանի շրջանների դպրոցները, ինչպես նաև մյուս շրջանների առավել խոշոր դպրոցների բազայի վրա ենթաշրջանային ավագ դպրոցները, իսկ սակավաթիվ սովորողներով ծայրամասային դպրոցների 12-ամյա ուսուցման ծրագրեր իրականացվել են ընդհանուր տիպի միջնակարգ դպրոցներում:

Երկրորդ փուլում ավագ դպրոցների ստեղծման գործընթացը պահանջել է

առավել խորը ուսումնասիրություններ, որի հետևանքով ընտրվել են ամենաօպտիմալ պայմանները: Ավագ դպրոցների ստեղծման հիմնախնդրին է միտված 2009թ. օգոստոսի 23-ին ԼՂՀ կառավարության ընդունած որոշումը, որի համաձայն 2009-2010 ուսումնական տարում ստեղծվեցին 3 ավագ դպրոցներ և ավագ դպրոցի 5 հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցներ: ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստի որոշմամբ (2010թ. ապրիլի 20-ին) նախատեսվել էր 2011-2012 ուս.տարում ընդլայնել ավագ դպրոցների ցանցը՝ ենթաշրջանային ավագ դպրոցների ստեղծմամբ: Նախարարության կողմից ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ ավագ դպրոցների լիարժեք գործունեության համար, նրանց են տրամադրվել նոր գույք, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության կաբինետների սարքավորումներ, դիտողական պարագաներ, դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ, ստեղծվել են ժամանակակից համակարգչային-տեղեկատվական կաբինետներ: Վերապատրաստվել են այդ դպրոցներում դասավանդող ուսուցիչները, դպրոցների տնօրեններն ու փոխտնօրենները:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ աստիճանաբար կանոնակարգվում է ավագ դպրոցների հոսքային դասարանների սովորողների ընդունելությունը, այն կատարվում է սովորողի ընտրությամբ, և եթե 2009 թվականին ոչ ճիշտ ընտրության պատճառով 165 աշակերտների ստիպված տեղափոխեցին արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ. կամ ընդհանրապես նրանք դուրս մնացին միջնակարգ կրթությունից, իսկ 2010 թվականին մի մասն էլ տեղափոխվեց ավագ դպրոցների ընդհանուր հոսքեր, ապա այս նկատառումներով 2010-2011 ուս.տարում հոսքային ուսուցմամբ ընդգրկվեցին 488 սովորողներ, որը 188-ով պակաս է 11-րդ դասարանների հոսքային ուսուցմամբ սովորողների թվից: Ընդհանուր առմամբ հանրապետության ավագ և հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցներում ընդգրկված են 1308 սովորողներ, որը կազմում է 10-11-րդ դասարաններում սովորողների 33 տոկոսը:

«Լուսարար» թերթի 2012թ. թիվ 33-ում տպագրված՝ ԿԳ նախարար Ս. Ասրյանի հարցազրույցում հանգամանորեն ներկայացվում են ավագ դպրոցի կարգավիճակը և առաջարկությունները: Համոզիչ փաստերով նախարարը նշեց, որ կապված դպրոցներին կարգավիճակ տալու հետ՝ 2009-2010 ուս.տարում վերացվեց «տարրական դպրոց» հասկացությունը, վերջիններս որպես մասնաճյուղ կցվեցին մոտակա գյուղերի դպրոցներին: Դպրոցներից երեքը 2011-2012 ուս.տարում առանձնացված ավագ դպրոցներն են (երկուսը՝ Ստեփանակերտում, մեկը՝ Շուշիում): Առկա են նաև հոսքային ուսուցմամբ հինգ միջնակարգ դպրոցներ շրջկենտրոններում և Ճարտար համայնքում: Մնացածը միջնակարգ կամ հիմնական դպրոցներ են, որտեղ ուսուցումն իրականացվում է ընդհանուր հոսքի ծրագրերին համապատասխան: Ավագ դպրոցներում տարվում է հոսքային ուսուցում, և այն, որ դա կատարվում է երեխաների ընտրությամբ, որ յուրաքանչյուր աշակերտ հիմնական դպրոցն ավարտելուց նաև կարողանում է ստանալ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն՝ իրողություն է: Անշուշտ, ավագ դպրոցը միանգամից չի կայանում: Նախարարի խոստովանությամբ՝ ավագ դպրոցների տնօրենների, մանկավարժական կոլեկտիվների, ծնողների և աշակերտների հետ հանդիպումներում դրական տեղաշարժ է արձանագրվել: Օրինակ, եթե սկզբնական շրջանում երեխաները համատարած տեղափոխվում էին ավագ դպրոց, ապա 2012-2013 ուս.տարում այդպես չէր: Այդ ժամանակ 50-60 տոկոսից էլ քիչ մասը գնաց ավագ դպրոց, քանզի շատերը գիտակցում են, որ այնտեղ պահանջներն ավելի խիստ են: Եվ նախընտրում են միջին մասնագիտական կամ արհես-

տագործական հաստատությունները, իսկ որոշներն էլ ընդհանրապես դուրս են մնում համակարգից: 2012-2013 ուս.տարվա ընդունելության արդյունքները վկայում են ավագ դպրոցի առավելության մասին: Այսպես, եթե ավագ դպրոցի շրջանավարտների թիվը կազմել է ընդհանուր շրջանավարտների 40%-ը, ապա բուհ ընդունվածների մեջ նրանք կազմել են 65%: Այստեղից հետևում է, որ ավագ դպրոցն ուսման որակի, գիտելիքների հաղորդման յուրացման առումով շահեկան վիճակում է: Սակայն նշենք, որ այստեղ էլ խնդիրներ կան: Այսպես, ավագ դպրոցների ստեղծմամբ, ցավոք, չդադարեց կրկնուսուցման գործընթացը, այն գործում է զուգահեռ:

2012-2013 ուսումնական տարվա նոյեմբերի 10-ին ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների համատեղ քննարկումները նպատակաուղղված էին երկու հանրապետությունների կրթական համակարգում բարեփոխումների իականացմանը:[164] ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանն իր ելույթն սկսեց Արցախում կրթական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունից՝ հիմնվելով այն իրողության վրա, որ միևնույն կրթական դաշտում գտնվելը պարտադրում է ՀՀ-ում ընդունված որոշումներն Արցախում տեղայնացնել, իհարկե, որոշակի վերապահումներով: Իսկ որ կրթության ոլորտի բարեփոխումներն անհրաժեշտ են, ինքնին հասկանալի է: Որպես ինքնուրույն անկախ պետություն ձևավորվելուց հետո ՀՀ-ում առաջին խնդիրը եղավ կրթության ոլորտի բարեփոխումները: Նույնն էլ՝ Արցախում:

Բարեփոխումների հիմնական առանցքը գերակա ոլորտ հանդիսացող հանրակրթությունն է: Ներդրվեցին նոր ծրագրեր, նոր դասագրքեր, չափորոշիչներ, կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ. նախ կատարվեց անցում 11-ամյա, ապա՝ 12-ամյա ուսուցման, ինչն իննքստինքյան առաջ է բերում օրենսդրական բնույթի խնդիրներ:

Խորհրդակցությունում ունեցած իր զեկուցման մեջ ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը մատնանշեց, որ հանրապետության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներն արդեն անցել են լուրջ փորձաշրջան, և անժխտելի փաստ է, որ այն ունեցել է և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Համակարգում իրականացվող փոփոխություններ կատարելու մասին որոշումը թե կրթական համակարգի աշխատողների և թե՛ հասարակության կողմից ընդունվեց տարբեր կերպ, կային դրական և բացասական արձագանքներ: Կրթական ոլորտի պատասխանատուների և երկրի ղեկավարության կողմից կատարվել են ուսումնասիրություններ, փորձ է արվել հնարավորինս մատչելի դարձնել և պատրաստել դպրոցների ուսուցիչներին՝ արագ և ճիշտ յուրացնելու իրականացվող փոփոխությունները:

Ինչպես նշվեց, բարեփոխումներն սկսվեցին լուրջ դժվարություններով: Իրականացվող ծրագիրը մտցնելուն զուգահեռ սկսեց աշխատանք տարվել կրթական ոլորտի աշխատողների հետ, նախապատրաստել, դասընթացների միջոցով ուսուցանել և որակավորել ուսուցիչներին՝ աշխատելու նոր պահանջներին համապատասխան: Ասել, թե հեշտ ու հարթ անցավ այդ անցումը, կամ մենք լրիվությամբ պատրաստ էինք, չեմ կարող, բայց որ անհրաժեշտությունը կար, և արդեն զգալի ձեռքբերումներ ունենք, ակնհայտ է, ասաց նախարարը:[165]

Նախարարը միաժամանակ համեմատական վերլուծություններ կատարելով, նշեց, որ եթե համեմատում ենք խորհրդային և մեր ժամանակների կրթական համակարգերը, դպրոցների աշխատանքը, տեսնում ենք, որ տարբերությունը բավական մեծ է, և անժխտելի փաստ է, որ խորհրդայինն ավելի շատ առավելություններ ուներ: Բարեփոխումների դժվարություններին առնչվեցինք ընթացքում, որոնք, սակայն, կարողանում ենք հերթով հաղթահարել: Անշուշտ, ոլորտում ար-

մատական փոփոխությունների անհրաժեշտությունը կար, ուստի կարելի է ասել, որ սա կարևոր քայլ էր: Այլ հարց է, թե ինչքանով էինք պատրաստ դրան: Այդ անհրաժեշտությունը բխում է համաշխարհային զարգացման պահանջից, որին համահունչ պիտի քայլեինք նաև մենք, ասել է թե՝ առաջ ընթանանք ժամանակի շնչով: Բայց այստեղ պետք է հաշվի առնվեն մեր ներուժն ու կարողությունները, ազգային առանձնահատկությունները: Այսօր զուգահեռաբար գործում են ավագ և հիմնական դպրոցները, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր պահանջներն ու գործունեության շրջանակները: Ժամանակն է, որ կարողանանք հասկանալ մի պարզ ճշմարտություն, աշակերտը դպրոց պետք է հաճախի սովորելու, գիտելիք ձեռք բերելու համար: Այս գիտակցումը պետք է ունենա առաջին հերթին ծնողը, դասավանդող առարկայագետ ուսուցիչը, ինչը հնարավորություն կտա մատաղ սերնդին ճիշտ տնօրինել ժամանակը և ժամանակին կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում:[166]

Նախարարի խոստովանությամբ՝ յուրաքանչյուր նոր ուսումնական տարում հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները առնչվում են նոր բարեփոխումների և հարկ է լինում էլ ավելի լարված սկսել ուսումնական տարին, աշխատել բաց չթողնել և ոչ մի նորույթ: Թե որքանով են իրականացվող բարեփոխումները նպաստում ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ ու արդյունավետ կազմակերպմանը՝ դա, իհարկե, երևում էր մանկավարժների աշխատանքի ընթացքում: Այսպես, 2011-2012 ուսումնական տարվա հիմնական նորույթն առարկաների չափորոշիչների և ծրագրերի վերանայման ու բեռնաթափման գործընթացն է: Ինչպես հայտնի է, այդ գործընթացը՝ բեռնաթափման մասին առարկաները, վաղուց հրապարակի վրա է՝ սկսած այն պահից, երբ խոսք եղավ 12-ամյա կրթական համակարգին անցնելու մասին:

Խորհրդակցությունում ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը՝ ներկայացնելով հանրապետության կրթական համակարգի առկա վիճակը, առավելություններն ու թերությունները, նաև ներկայացրեց իր առաջարկությունները, որոնք քննարկումներից հետո լիովին ընդունվեցին և դպրոցների տնօրեններին հանձնարարվեց գործածության մեջ դնել առաջարկությունները:

Նկատի ունենք հետևյալը.

1.Հաշվի առնելով մեր երկրամասի առանձնահատկությունները, առաջին դասարան ընդունել մինչև սեպտեմբերի 1-ը 5 տարեկանը լրացած երեխաներին՝ նրանց պարտադիր ուսուցումը կազմակերպելով մանկապարտեզում կամ դպրոցում, ապահովելով նախադպրոցական ավագ խմբի որոշ պայմաններ: Նման մոտեցման շնորհիվ 12-ամյա միջնակարգ դպրոցի ավարտման տարիքը մեկ տարով կնվազի, դպրոցը կավարտեն 17 տարեկանում: Փորձը ցույց է տալիս, որ նախադպրոցական խմբում երեխաները տետրում արդեն թվաբանական գործողություններ են կատարում, նախադասություն գրում: Հետևաբար, հնարավոր է, որ այդ տարիքում երեխաները գրաճանաչությանը ևս տիրապետեն: Ելակետը սեպտեմբերի 1-ն է, որ 5 տարեկանը լրացած լինի, բայց երեխաների մի մասն իրականում 5,5 տարեկան կլինի: Եվ սա պայմանականորեն համարվում է առաջին դասարան: Ընդ որում, երեխաները մանկապարտեզներից չեն հանվում և բոլոր դպրոցներում պարտադիր նախադպրոցական խմբեր են ստեղծում:

2.Հաշվի առնելով, որ գյուղերում դեռևս չի հաջողվում ավագ դպրոցներ բացել, իսկ երեխաները նման պատրաստվածություն չեն ստանում, և բուհական ընդունելության ժամանակ հայտնվում են ոչ մրցակցային պայմաններում ավագ դպրոցների շրջանավարտների համեմատությամբ, նախարարը առաջարկում է

ստեղծել ենթաշրջանային դպրոց-կենտրոններ, որոնցում 10-րդ և 11-րդ դասարաններում սովորողների համար շաբաթը 1-2 օր, 12-րդ դասարաններում սովորողների համար երկու օր կազմակերպել ավագ դպրոցի հոսքային առարկաների ծրագրերին համապատասխան խմբային պարապմունքներ: Հիմնական պարապմունքներին հինգ օր հատկացնելով և մեկ օր ենթաշրջանի որևէ առաջավոր դպրոցներից մեկում կենտրոնացնելով ու նրանց նախընտրած առարկաներից խորացված գիտելիքներ տալով՝ որոշ չափով կվերացվի այդ տարբերությունը:

3.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնական տարում արդեն պարտադիր է միջնակարգ կրթության օրենսդրական պահանջը, որի մեջ մտնելու են նաև արհեստագործականը և միջին մասնագիտական կրթությունը, և 10-միավորային համակարգում բոլորը գնահատական են, այդ թվում՝ «1»-ը, «2»-ը, «3»-ը, ավելորդ է դառնում «բավարար», «անբավարար» գնահատական հասկացությունը, մանավանդ որ գործող գնահատման համակարգում չկա «անբավարար»-ը: Պետք է ազատության սկզբունքը գործի, երեխային գիտելիք տալ, ոչ թե պահանջել, որ նա անհրաժեշտ գնահատականն ստանա: Հետևաբար, սովորողներին դասարանից դասարան փոխադրելու համար սահմանափակում չմտցնել ու 1-3 միավորներով նույնպես թույլատրել փոխադրել հաջորդ դասարան, և միայն ծնողի և սովորողի ցանկությամբ ու մանկխորհրդի որոշմամբ թողնել նույն դասարանում դասընթացը կրկնելու: Այսինքն գնահատականը՝ որպես խթանման միջոց, պետք է վերանա, ուղղակի պետք է առաջանա ուսում ստանալու պահանջ:

4.Վերացնել 9-րդ դասարանի ավարտական և 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունները, քանի որ գործող գնահատման համակարգով կիսամյակային և տարեկան գնահատականների նշանակման պահանջները, արտաքին ստուգումները հիմք են հանդիսանում սովորողների տարեկան օբյեկտիվ գնահատման համար, և դրանց հիման վրա կարելի է իրականացնել ավագ հոսքային դասարանների, արհեստագործական, միջին մասնագիտական հաստատությունների ընդունելություն:

Առաջարկությունն ընդունվելու դեպքում պետք է փոփոխություններ կատարվեն «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» օրենքներում:

Խորհրդակցությունում քննարկվեց նաև դպրոցների կարգավիճակի հարցը: Այսպես, վերլուծությունները ցույց են տվել, որ հանրապետությունում դեռևս չլուծված խնդիր է մնում դպրոցների կարգավիճակը: Օրինակ, 2006թ. կառավարությունը որոշում է ընդունել 33 դպրոցներ վերածնակերպել որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն ՊՈԱԿ-ներ: Սակայն այդ խնդիրը չի իրականացվել հիմնականում այն առումով, որ դպրոցներին ինքնուրույնություն տալը նախարարությունը դեռ վաղ է համարում ֆինանսատնտեսական խնդիրներ լուծելու տեսակետից: Ուսումնական տարում (2012-2013 ուս.տարի) հանրապետությունում միայն 3 առանձնացված ավագ դպրոցներ են գործում որպես ՊՈԱԿ-ներ, որպես իրավաբանական անձ նրանք ունեն իրենց ինքնուրույն հաշվեկշիռը: Հաշվի առնելով, որ դպրոցների հիմնական մասը փոքրաթիվ է, և ինքնուրույն ֆինանսական գործունեություն ծավալելն ինչ-որ տեղ ոչ ճիշտ է, հետևելով կառավարության կողմից ընդունված՝ «Արտադպրոցական կրթության մասին» նոր օրենքին (2012թ. մարտ), որով արտադպրոցական հիմնարկներին տրվում է պետական հիմնարկի կարգավիճակ՝ նախկին որոշմամբ տրված ՊՈԱԿ-ի փոխարեն, նույն ձևով հանրակրթական դպրոցներին կարելի է տալ պետական հիմնարկի կարգավիճակ և ֆինանսական գործընթացներն իրականացնել կենտրոնացված ձևով՝ կրթության բաժինների միջոցով: Այսինքն՝ մեծաթիվ սովորողներով ուսումնական

հաստատություններին տալ ՊՈԱԿ-ի, մյուսներին՝ պետական հիմնարկի կարգավիճակ:

Ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, բարեփոխումների ներկա փուլում կրթության զարգացման որեևէ ծրագիր, մշակված հայեցակարգեր չեն կարող ինքնանպատակ լինել, դրանք ունեն իրենց առաքելությունը: Կրթությունն այսօր մեր հանրապետության համար անվտանգության խնդիր է: Արցախի դպրոցականը պետք է լուրջ ուշադրություն դարձնի ազգային պետական մտածողությանն ու գործելակերպին և ձգտի ձեռք բերել նման մտածողություն, աշխատի շարունակական կրթության ձեռքբերման ուղղությամբ: Կրթական բարեփոխումներն առաջադրում են ուսուցման նոր ծրագրերի, մեթոդների կիրառում, քանի որ առանց այդ բարեփոխումների հնարավոր չէ զարգացում ապահովել:

Ըստ պաշտոնական տվյալների, 2013-2014 ուս.տարվա ապրիլի 18-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում կարևոր իրադարձություն էր, նախարար Ս. Ասրյանը և «dasaran.am» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ Սուրեն Ալոյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որով տրվեց Արցախի դպրոցները կրթական ծրագրին միանալու մեկնարկը: Սա առաջին անգամ ՀՀ ԿԳ նախարարության հետ համագործակցության շրջանակներում հերթական համատեղ քայլն է արվում: ՀՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ կրթական ծրագրին Հայաստանի 1400 դպրոցների հետ միացան նաև Արցախի 90 հանրակրթական դպրոցներ, ապագայում կմիանան մյուս հանրակրթական հաստատությունները:

Ըստ կրթական ծրագրի հեղինակ Ս. Ալոյանի պարզաբանումների, կրթական ծրագիրը տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով հնարավորություն է տալիս բարձրացնել դպրոցների կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս կայքի միջոցով հետևել աշակերտների հաճախելիությունը և առաջադիմության ցուցանիշներին, վերահսկել դպրոցի գործունեությունը: Դիտարկումները ցույց են տվել, որ 350 ծնողների շրջանում, որոնք «dasaran.am»-ի միջոցով հետևում են իրենց երեխաների առաջադիմությանը և հաճախելիությանը, ցույց են տվել, որ դպրոցից երեխաների բացակայությունները նվազել են 22 տոկոսով, առաջադիմությունը բարձրացել է 19 տոկոսով:[167]

Կրթական ծրագիրը երկու հիմնական ուղղություն ունի: Մեկը էլեկտրոնային մատյանն է, որի շրջանակներում աշխատում են տնօրենները, ուսուցիչները, աշակերտները, ծնողները: Մյուսը երեխաներին նոր գիտելիքներ տալն է տարբեր առարկաներից: Այդ նպատակով կիրառվում են կրթելու նորարարական մեթոդներ՝ էլեկտրոնային ինտելեկտուալ և զարգացնող խաղեր: Բացի այդ, կազմակերպվում են տարաբնույթ օլիմպիադաներ և մրցույթներ, որոնք նույնպես խթանում են գիտելիք ստանալու՝ երեխաների ձգտումը: Կրթական ծրագրով ամեն օր թարմ տեղեկություն է տրվում աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին: Մի խոսքով, աշակերտների ձեռքի տակ մի հանրագիտարան է:

Հավաստի տվյալների համաձայն, կրթական այս ծրագիրն աշխատում է մեծ ծանրաբեռնվածությամբ, ավելի քան 830 հազար օգտատեր ունի, որից 350 հազարը՝ աշակերտներ, 36 հազարը՝ ուսուցիչներ, ամեն օր 120-150 հազար մարդ է օգտվում դրանից: Ծրագրի ներդրման շրջանակներում «dasaran.am» կրթական ծրագրի աշխատանքային թիմը Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում իրականացրեց Արցախի դպրոցների ներկայացուցիչների վերապատրաստման գործընթացը:[168]

ԼՂՀ կրթական համակարգում իրականացվող բովանդակային բարեփոխումների երրորդ փուլում նորամուծություն էր նաև նոր ուսումնական ռազմավարական (ՆՈՒՌ) ծրագրի իրականացումը: Արցախում հանրահայտ հապավում դարձավ ՆՈՒՌ-ը՝ նոր ուսումնական ռազմավարությունը, որը հանրապետության կրթական համակարգում ներդրվեց արգենտինահայ բարերար էդուարդ էռնեկյանի հովանավորությամբ՝ 2010-2011 ուս.տարում, իսկ թարմացված և ընդլայնված ներկայացավ 2012-2013 ուսումնական տարում: Սկզբնական շրջանում ՆՈՒՌ ծրագիրն իրականացվում է մայրաքաղաքի դպրոցներում, մեկ աշակերտին՝ մեկ համակարգիչ ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2013-2014 ուս.տարում[169] այդ ծրագրում ընդգրկել նաև հանրապետության շրջկենտրոնների դպրոցները՝ նշված ուս.տարվանից դպրոցականների նոր տեխնոլոգիաների հիմունքներին ծանոթացնելու և այդ աշխատանքներին ներգրավելու համար մի շարք միջոցառումներ են իրականացվել, հատկապես ռոբոտիքսի՝ ռոբոտաշինության հիմունքներին աշակերտներին հաղորդակից դարձնելու ուղղությամբ:

2012-2013 ուսումնական տարում համարյա փոխվել են 5-9-րդ դասարանների ծրագրերն ու դասագրքերը, իրականացվում է նաև բեռնաթափման խնդիրը, այսինքն դասագրքերը համապատասխանեցվում են թեթևացած ծրագրերին, ինչը կունենա իր դրական ազդեցությունը: Նախարարության նախաձեռնությամբ ձեռք են բերվել նաև մեթոդական ուղեցույցներ, ուսուցչի ձեռնարկներ, 1-ին և 2-րդ դասարանների մայրենիի և ռուսերենի ուսուցման աշխատանքային տետրեր: «Իմ գրադարանը» շարքը համալրվել է ևս 17 անուն գրականությամբ: Դրանք հիմնականում հայ և համաշխարհային դասականների ծրագրային երկերն են (մանրամասն կլուսաբանվի հաջորդ բաժնում):

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք հանգել հետևյալ եզրակացության. ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության կրթական համակարգում ընթացող բովանդակային, բարեփոխումների անհրաժեշտությունը թելադրված էր երկու հիմնական պատճառներով՝ համակարգի ներքին արդյունավետությունը, կրթության որակը բարձրացնելու և արտաքին արդյունավետությունը՝ միջազգային ինտեգրումն ապահովելու խնդրով: Բացի այդ, կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությունն ու ձեռքբերումները պայմանավորված են նաև նրանով, որ համակարգում բարեփոխումները իրականացվում են ըստ նախապես կազմված աշխատանքային պլանի, որը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների կողմից հաստատված «Բարեփոխումների ժամանակացույցի հետ: Դրանք ընդգրկում են կրթական համակարգի բոլոր ոլորտները և փոխադարձաբար կապված ու պայմանավորված են միմյանցով: Բարեփոխումների երեք շրջափուլերում ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի, ուսումնական գործընթացի կազմակերպման՝ վերանայման ու իրականացման աշխատանքների, ուսման որակի բարձրացման և ներդպրոցական կյանքի հետ կապված այլ հարցեր մանրամասնորեն, վերլուծաբար կներկայացվի աշխատության հաջորդ բաժնում:

2.Հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու որակի բարձրացումը կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխան

Արցախի կրթական համակարգի պատմության զարգացման այս շրջանը (1991-2016թթ.) նշանավոր է ոչ միայն այն վիթխարի նվաճումներով, որոնք ձեռք են բերվել կրթական նոր համակարգի ձևավորման, դպրոցական ցանցի ընդլայնման, աշակերտության թվի աճի, ուսուցչական կազմի քանակական ու որակական բարելավման, դպրոցաշինության համակարգում ընթացող բարեփոխումների բնագավառում, այլև հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների նորովի պլանավորման, արդյունավետ կազմակերպման ու արմատական բարելավման ասպարեզում:

Մեր տրամադրության տակ եղած փաստագրական հարուստ նյութերը, կրթական հաստատություններում կատարած ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում պատմաքննական և մանկավարժական վերլուծության ենթարկել հանրապետության կրթական համակարգի ամբողջական պատմության հետ կապված հետևյալ հարցերը.

1.Հանրակրթության բովանդակության հիմնախնդիրները, չափորոշչի կառուցվածքային տարրերը, ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի վերափոխումը բարեփոխումների պահանջներին համապատասխան.

2.Հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքների նորովի պլանավորումը, արդյունավետ կազմակերպումն ու որակի բարձրացումը.

3.Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը (բանակ-դպրոց կապի ամրապնդման ուղղությունները):

2.1.Հանրակրթության բովանդակության հիմնախնդիրները, չափորոշչի կառուցվածքային տարրերը, ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի վերափոխումը բարեփոխումների պահանջներին համապատասխան

Անկախության վերականգնումից հետո ՀՀ-ում և ԼՂՀ-ում ձևավորվում է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն: Մեր կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգային փոփոխությունները, բացի ազգային առանձնահատկություններից, պայմանավորված են նաև համամարդկային զարգացումներին բնորոշ էթնոմշակութային, սոցիալական, ժողովրդագրական և աշխարհաքաղաքական գործոններով:

Արդի հասարակության զարգացման միտումներն ու գործոնները հրատապ են դարձրել ՀՀ-ում և Արցախում կրթության ժամանակակից կարգը բարեփոխել և այդ նպատակով հանրակրթության հայեցակարգային պատկերացումները, քաղաքականությունը, բովանդակությունը նորովի սահմանելու և կրթության կազմակերպման սկզբունքները ճշգրտելու անհրաժեշտությունն ու իրագործումը:

Ակնհայտ է, որ հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Հենց այս տեսանկյունով էլ կրթության բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման կազմակերպման ավանդական մոտեցումների ճշգրտում:

Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հան-

ռակրթության բովանդակության և ուսումնական գործընթացի կազմակերպման բարեփոխումը պայմանավորված է նաև հետևյալ հիմնախնդիրների առկայությամբ:

Կրթական համակարգի բարեփոխումների անցումային շրջանում (1991-1998թթ.) կրթության բովանդակությունը պետք է բարեփոխվի, սակայն կային որոշակի դժվարություններ՝

- գործող չափորոշիչները, առարկայական ծրագրերն ու դասագրքերը, գնահատման համակարգը ժամանակակից կրթական պահանջներին մասամբ են համապատասխանում,
- թերի է կրթության մասին օրենսդրությունը, հստակորեն կանոնակարգված չեն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, հասարակության և անհատի միջև հարաբերությունները,
- չափից դուրս կարևորվում են սովորողին տեղեկատվության հաղորդումը և նրա կողմից փաստերի մտահղացումը, բավարար ուշադրություն չի դարձվում նրա կարողությունների և հմտությունների զարգացմանը,
- կրթության բովանդակությունը ներկայացված է մեծ թվով առարկաներով, ուսումնական նյութը պարունակում է անհիմն կրկնություններ, անբավարար է իրականացվում բովանդակության ինտեգրումը,
- ուսումնական ծրագրերը հրահանգչական բնույթ են կրում և խրախուսում են ուսուցչի և դասագրքի՝ որպես գիտելիքի միակ աղբյուրի դեր,
- կրթության բովադակային պահանջները բարդ են և ուղղված են բարձր առաջադիմություն ունեցողներին,
- բավարար չափով չեն օգտագործվում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները և ուսուցման մեթոդները,
- սովորողների ուսումնական բեռնվածությունը չափազանց մեծ է, իսկ կրթության բովանդակային պահանջները բարդ են և ուղղված են բարձր առաջադիմություն ունեցողներին,
- թույլ է ուսումնական գործընթացների դաստիարակչական ուղղվածությունը,
- կրթության համակարգը հաշվի չի առնում գյուղի առանձնահատկությունները,
- առաջին դասարան ընդունվող երեխաների համար ապահովված չեն դպրոցին նախապատրաստվելու հավասար պայմաններ,
- հանրակրթությունը չի ապահովում շրջանավարտի սահուն անցումը դպրոցից մասնագիտական ուսումնական հաստատություն և այլն:

Առկա հիմնախնդիրները լուծելու համար հրատապ է դառնում Հայաստանի և Արցախի հանրակրթության բովանդակության վերափոխումը: Կարելի է արձանագրել, որ կրթական համակարգի բարեփոխումների տարբեր փուլերում կրթության բովանդակությունը և եղանակները փոփոխվել են նպատակների փոփոխությանը համընթաց: Կյանքի պահանջների հետ զուգընթաց փոփոխվել ու կատարելագործվել են հանրակրթական դպրոցների ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը, ուսուցման ձևերն ու մեթոդները՝ պայմանավորված ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, մշակույթի, գիտության զարգացման մակարդակով և այլ հանգամանքներով: Ուրեմն՝ հանրակրթական դպրոցի կրթության բովանդակությունը կախված էր կյանքի պահանջներից, անցյալի ավանդույթներից, մանկավարժական կադրերի գիտելիքների մակարդակից, դպրոցների տիպից և աստիճանից, նպատակներից ու խնդիրներից և այլ հանգամանքներից:

Ըստ մեր դիտարկումների, կրթության բովանդակության երեք մակարդակ կա. ա) բովանդակություն, որը մշակված է չափորոշիչներով, պլաններով, ծրագրերով, դասագրքերով, բ) բովանդակություն, որը մատուցում է ուսուցման գործընթացը, գ) բովանդակություն, որը յուրացվում է: Հետևաբար, հանրակրթության բարեփոխումների իրականացման հիմնական ուղղություններից մեկը կրթության բովանդակության կատարելագործումը և արդիականացումն է, և դրանով է պայմանավորված հանրակրթական դպրոցի աշխատանքի արդյունավետությունը: Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ կրթության բովանդակության անհարկի, հաճախ նույնիսկ կամայական փոփոխությունները (1991-1998թթ.) ուսումնական գործընթացում ստեղծում են հեղհեղուկ վիճակ, որն անասելի վնաս է պատճառում կրթության գործի կազմակերպմանը: Այդ շրջանում ուսումնական պլանների, ծրագրերի և դասագրքերի լրջորեն չպատճառաբանված և հաճախակի դարձած փոփոխություններն անվստահության մթնոլորտ են ստեղծում մանկավարժների շրջանում, որոնք էլ կորցնում են հավատը դրանցով արդյունավետ աշխատելու հնարավորության նկատմամբ:

Վերլուծությունները ցույց են տվել, որ կրթության բովանդակության ողջ համակարգը կանոնակարգվում է (1999 թվականից սկսած) ՀՀ և ԼՂՀ մի շարք օրենքներով՝ «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» և այլն, որոնք ամբողջությամբ սահմանում են կրթության բովանդակության հետ կապված մի շարք կարևոր հասկացություններ, օրինակ՝ «Հանրակրթության պետական չափորոշիչ», «Կրթության բովանդակություն», «Հանրակրթական ծրագրեր», «ուսուցիչ» և այլն: Կրթության բովանդակությունը ամբողջությամբ հասկանալու համար փորձենք պարզաբանել հանրակրթության պետական չափորոշչի կառուցվածքային տարրերը կամ ուղղակի սահմանել հանրակրթության պետական չափորոշիչը: Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝

- ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները,
- շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և ուսումնական բնագավառների,
- հենքային ուսումնական պլանը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները,
- սովորողների գնահատման ձևերը, սանդղակը և հաշվառման կարգը:

Այսպիսով, կրթության բովանդակությունը կանոնակարգող հանրակրթության պետական նորմատիվ փաստաթուղթ է, որը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, կրթական ծրագրերի առավելագույն ծավալը՝ ըստ կրթական մակարդակների, շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների կայունացման փուլում (1996-2002թթ.) հանրակրթական դպրոցի առջև ծառացած նոր խնդիրներին համապատասխան լուրջ փոփոխություններ կատարվեցին նաև կրթության բովանդակությունում: Այս առումով նշանակալից դեր ունեցան ԼՂՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական հաստատության ժամանակավոր տիպային կանոնադրու-

թյուն հաստատելու մասին» և 1999թ. նոյեմբերի 10-ի «Համայնքների սեփականության գույքի ցանկ սահմանելու մասին» որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշումները, քանի որ մինչ այդ դպրոցներն աշխատում էին ժամանակավոր, մասնակիորեն ուժը կորցրած կանոնադրությամբ:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ ԼՂՀ ԿԳ նախարարությունում, մշակվել ու արդեն գործածության մեջ են դրված հանրակրթության ոլորտի բարեփոխումներին նպաստող մի շարք կանոնադրություններ ու կարգեր:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ նշված դպրոցական օրինակելի կանոնադրության համաձայն, հանրակրթական դպրոցների նոր ուսումնական պլաններն ու ծրագրերը (իսկ մինչև այդ դպրոցներում գործում էին նախկին ուսումնական պլաններն ու ծրագրերը) գործածության մեջ են մտնում 1999-2000 ուս.տարում:

Ստորև ներկայացվում է ԼՂՀ միջնակարգ պետական հանրակրթական դպրոցի 1999-2000 ուս.տարվա առաջին տիպային ուսումնական պլանը:[170]

Աղյուսակ 6

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ

Ուսումնական առարկաներ	Նախ. խումբ	Շաբաթական ժամաքանակը		
		I	II	III
Հայոց լեզու	6	10	9	8
Ռուսաց լեզու	-	-	4	4
Օտար լեզու	-	-	-	2
Մաթեմատիկա	6	5	5	5
Երգ-երաժշտություն	-	2	1	1
Աշխատանք	-	1	1	1
Ֆիզկուլտուրա	-	2	2	2
Կերպարվեստ	-	1	1	1
Քրիստոնեական կրոն	-	1	1	1
Դպրոցական պարտադիր	-	2	2	2
Ընդամենը	12	24	26	27

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամաքանակը				
	IV	V	VI	VII	VIII
Հայոց լեզու	8	3	3	3	3
Գրականություն	-	3	3	3	3
Ռուսաց լեզու	4	3	3	3	3
Օտար լեզու	2	2	2	2	2
Աշխարհագրություն	-	2	2	2	2
Ընդհանուր պատմություն	-	2	2	2	2

Հայ ժողովրդի պատմություն	-	2	2	2	2
Մաթեմատիկա	5	5	-	-	-
Հանրահաշիվ	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	2	2	2
Հայրենի բնություն	1	-	-	-	-
Ֆիզիկա	-	-	-	2	2
Քիմիա	-	-	-	2	2
Կենսաբանություն	-	2	2	2	2
Երգ-երաժշտություն	1	-	-	-	-
Աշխատանք	1	2	2	1	-
Գծագրություն	-	-	-	-	1
ՆԶՊ	-	-	-	-	1
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2
Կերպարվեստ	1	-	-	-	-
Քրիստոնեական կրոն	1	1	1	1	1
Դպրոցական պարտադիր	2	2	2	2	2
Ընդամենը	28	31	31	34	35

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամաքանակը	
	IX	X
Հայոց լեզու	2	2
Գրականություն	4	4
Ռուսաց լեզու	3	3
Օտար լեզու	2	2
Ընդհանուր պատմություն	1	1
Հայ ժողովրդի պատմություն	2	2
Աշխարհագրություն	1	-
Հանրահաշիվ, երկրաչափություն	5	5
Ֆիզիկա	4	4
Աստղագիտություն	-	1
Քիմիա	2	1
Կենսաբանություն	2	1
Ինֆորմատիկա	1	1
Ֆիզկուլտուրա	2	2
ՆԶՊ	2	1
Քրիստոնեական կրոն	1	1
Դպրոցական պարտադիր	1	2
Ընդամենը	35	33

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամաքանակը	
	IX	X
Հայոց լեզու	2	2
Գրականություն	2	2
Ռուսաց լեզու	2	2
Օտար լեզու	2	2
Ընդհանուր պատմություն	1	1
Հայ ժողովրդի պատմություն	1	1
Աշխարհագրություն	1	-
Հանրահաշիվ, երկրաչափություն	4	4
Ֆիզիկա	2	2
Աստղագիտություն	-	1
Քիմիա	1	1
Կենսաբանություն	1	1
Ինֆորմատիկա	1	1
Ֆիզկուլտուրա	2	2
ՆԶՊ	2	1
Քրիստոնեական կրոն	1	1
Մասնագիտական հիմունքներ	3	3
Մասնագիտություն	6	4
Դպրոցական պարտադիր	1	2
Ընդամենը	35	33

Պարզաբանում

Մասնագիտություն և մասնագիտության հիմունքներ առարկաների դասերին թույլատրվում է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում աշակերտների թիվը 20 և ավելի է:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ[171]
(վարժարանային հոսքով դասարանների)

Ուսումնական առարկաներ	Ֆիզմաթ. հոսք		Բնագիտական հոսք		Տնտեսագիտական հոսք		Հումանիտար հոսք	
	IX	X	IX	X	IX	X	IX	X
Հայոց լեզու	2	2	2	2	2	2	3	3
Գրականություն	3	2	2	2	3	3	5	5
Ռուսաց լեզու	2	2	2	2	3	3	3	3
Օտար լեզու	2	2	2	2	3	3	2	2
Ընդհանուր պատմություն	1	1	1	1	1	1	2	2
Հայ ժողովրդի պատմություն	2	2	2	2	2	2	2	2

Աշխարհագրություն	1	-	1	-	2	2	1	-
Հանրահաշիվ, երկրաչափություն	6	6	5	5	5	5	4	4
Ֆիզիկա	5	5	4	4	2	1	2	1
Աստղագիտություն	-	1	-	1	-	1	-	1
Քիմիա	2	2	3	3	1	1	1	1
Կենսաբանություն	2	1	3	2	1	1	1	1
Ինֆորմատիկա	1	1	1	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2
ՆԶՊ	2	1	2	1	2	1	2	1
Քրիստոնեական կրոն	1	1	1	1	1	1	1	1
Պետություն և իրավունք	-	-	-	-	1	1	1	1
Կիրառական տնտեսագիտություն	-	-	-	-	1	1	-	-
Դպրոցական պարտադիր	1	2	2	2	2	1	2	2
Ընդամենը	35	33	35	33	35	33	35	33

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ՌՈՒՍԵՐԵՆ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամաքանակը									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Ռուսաց լեզու	8	8	8	8	3	3	3	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	3	3	3	3	-	3
Հայոց լեզու	3	5	4	4	3	3	3	3	2	2
Հայ գրականություն	-	-	-	-	2	2	2	2	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	5	5	5	5	5	5	5	5	5	5
Հայրենի բնություն	-	-	-	1	-	-	-	-	-	-
Երգ-երաժշտություն	2	1	1	1	-	-	-	-	-	-
Աշխատանք	1	1	1	1	2	2	1	-	-	-
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	2	2
Կերպարվեստ	1	1	1	1	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	2	2	1	-
Պատմություն	-	-	-	-	4	4	4	4	3	3
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	4	4
Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	2	2	2	2	2	1
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	-	-	1	1
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	1	-	-

ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	2	1
Քրիստոնեական կրոն	1	1	1	1	1	1	1	1	1	1
Դպրոցական պարտադիր	2	2	2	2	1	1	1	1	1	1
Ընդամենը	25	26	27	28	32	32	35	36	37	34

Ծանոթություն. Հայոց լեզվի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

1999-2000 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՏԻՊԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր դպրոց տիպային պլանի հիման վրա, դպրոցական պարտադիր ժամաքանակի տնօրինմամբ մշակում է տվյալ ուս.տարվա իր ուսումնական պլանը: Պարտադիր պետական ժամաքանակում փոփոխություն կարող է կատարել միայն նախարարությունը:

Ուսումնական պլանը երկու բաղկացուցիչ մաս ունի՝ պարտադիր պետական, պարտադիր դպրոցական: Ուս.պլանի դպրոցական պարտադիր ժամաքանակի տնօրինման նախասիրական պարապմունքների կազմակերպման (որպես վճարովի ծառայություն) և դպրոցում օտար լեզվի ընտրության կարգերը սահմանվում են նախարարության կողմից հաստատված կանոնակարգով:

Ուս.տարին դպրոցում սկսվում է սեպտեմբերի 1-ին, նրա տևողությունը նախապատրաստական խմբերում և առաջին դասարաններում 30 շաբաթ է, իսկ մյուս դասարաններում՝ 34 շաբաթ:

Պետական կրթական ծրագրերով ամրագրված գիտելիքների նվազագույնի յուրացումը կրտսեր դպրոցի (3-րդ դասարան) և միջին դպրոցի (8-րդ դասարան) ավարտական դասարաններում գնահատվում է փոխադրական և ավարտական, իսկ ավագ դպրոցի ուսումնառության ավարտին՝ պետական քննություններով: Դպրոցում գործում է գիտելիքների գնահատման 5-բալանոց համակարգ: Փոխադրական և ավարտական, ինչպես նաև պետական քննությունների ժամանակ կարող են գործածվել գրավոր հարցարաններ գնահատման 20-բալանոց համակարգով: Դասի տևողությունը 45 րոպե է, իսկ ձմեռային շրջանում (դեկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը)՝ 40 րոպե:

Ուս.տարին բաղկացած է չորս քառորդից: Յուրաքանչյուր քառորդի վերջում տրվում են արձակուրդներ, աշնանային՝ հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը ներառյալ, ձմեռային՝ դեկտեմբերի 24-ից հունվարի 10-ը ներառյալ, գարնանային՝ մարտի 25-31-ը ներառյալ: Նախապատրաստական խմբերում և առաջին դասարաններում արձակուրդները երկարաձգվում են. աշնանայինը՝ մինչև նոյեմբերի 8-ը, ձմեռայինը՝ մինչև հունվարի 17-ը, իսկ գարնանային արձակուրդները սկսվում են մարտի 18-ից: Ուս.տարին ավարտվում է մայիսի 25-ին, իսկ նախապատրաստական խմբերում և առաջին դասարաններում՝ մայիսի 16-ին:

Դասարանի սովորողների թիվը կրտսեր և միջին դպրոցներում սահմանվում է 25-30, ավագ դպրոցի ընդհանուր և արհեստագործական դասարաններում՝ 20-25, իսկ վարժարանային ծրագրով աշխատող դասարաններում՝ 15-20: Նախնական զինվորական պատրաստության ծրագիրը սովորողները կարող են յուրաց-

նել ինչպես նախաբանակային պատրաստության ճամբարներում, այնպես էլ գործող ձևով:

Օտար լեզվի ուսուցիչ չլինելու դեպքում ժամերը թույլատրվում է օգտագործել միացյալ դասարան-կոմպլեկտների որոշ առարկաներ առանձին դասավանդելու համար:

Եթե դասարանում աշակերտների թիվը 25-ից ավելին է, կրտսեր դպրոցում ռուսաց լեզու (հայոց լեզու՝ ռուսերեն ուսուցմամբ դպրոցներում), օտար լեզու, միջին դպրոցում նաև հայոց լեզու և գրականություն առարկաների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի: Միջին դպրոցում աշխատանք առարկայի դասաժամերին դասարանը բաժանվում է երկու խմբի (տղաների և աղջիկների), եթե դասարանի աշակերտների ընդհանուր թիվը 12 և ավելի է:

Ավագ դպրոցներում հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու, ինֆորմատիկա, ինչպես նաև ֆիզկուլտուրա (եթե տղաների և աղջիկների թիվը առանձին-առանձին 8-ից ավելի է) առարկաների դասերին թույլատրվում է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում աշակերտների թիվը 25-ից ավելի է:

Միջին դպրոցի 5-րդ և 6-րդ դասարաններում երգ-երաժշտություն առարկային դպրոցական պարտադիր ժամերից հատկացնել 1-ական ժամ, իսկ այդ առարկայի մասնագետ-ուսուցիչներ չունենալու դեպքում ժամերը հատկացնել այլ առարկաների: 8-րդ դասարանում դպրոցական պարտադիր ժամերից մեկ ժամ հատկացնել աշխարհագրությանը՝ ԼՂՀ աշխարհագրության ուսուցման համար:

Նկատի ունենալով 1999-2000 ուս.տարում հանրակրթական դպրոցում հանրահաշվի դասագրքերի նոր տարբերակների մուտքը, նպատակահարմար է դպրոցական պարտադիրից 1-ական ժամ 6-8-րդ դասարաններում հատկացնել հանրահաշիվ առարկային:

Միջին և ավագ դպրոցներում ընդհանուր և հայոց պատմությունների համաժամանակյա ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարել նշված առարկաների դասացանկում:

4-րդ դասարանում «Դու մեր վաղվա օրն ես» և 5-րդ դասարանում «Իմ փոքրիկ մոլորակը» դասընթացները պարապում է տվյալ դասարանի գրականության ուսուցիչը՝ գրականությանը հատկացված ժամերի հաշվին:

Նախապատրաստական խմբերում ծնողների ցանկությամբ՝ որպես վճարովի ծառայություն, բժշկամանկավարժական պահանջներին համապատասխան կարող են կազմակերպվել ճանաչողական, խաղային, զվարճալիքի և այլ լրացուցիչ պարապմունքներ:

Միջնակարգ պետական հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի պարտադիր ժամաքանակի տնօրինման կարգը

1.Հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական պարտադիր ժամաքանակը բաշխելիս դպրոցն առաջնորդվում է տիպային ուսումնական պլանի պարտադիր պետական ու ԼՂՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորած առարկայացանկով:

Ծանոթագրություն. Նախարարության երաշխավորած առարկայացանկի մեջ են մտնում կիրառական տնտեսագիտությունը, տրամաբանությունը, պետությունն և իրավունքը, հոգեբանությունը, գրաբարը, մարդու իրավունքներ և ժողովրդավարությունը, բնագիտությունը, 5-6-րդ դասարաններում՝ երգ-երաժշտությունը: Նախարարության երաշխավորած առարկայացանկի մեջ դպրոցը կարող է ավե-

լացնել նոր առարկա՝ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, նախարարության թույլտվությամբ:

2.Տնօրենը դպրոցական պարտադիր ժամաքանակի բաշխումը կատարում է մանկխորհրդի որոշմամբ՝ ելնելով դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, դասագրքերով, ծրագրերով ապահովվածությունից և այլ պայմաններից:

3.Դպրոցական պարտադիր առարկայացանկը ամրագրվում է դպրոցի ուս.պլանում և դասացուցակում:

4.Եթե դպրոցական պարտադիր բաղկացուցիչ ժամաքանակը տրամադրվել է ուսումնական պլանի պետական պարտադիրում ընդգրկված առարկայացանկին, ապա դասարանը կիսելու հարցը կարգավորվում է «Պարզաբանումներում» սահմանված կարգով:

Նախասիրական ժամաքանակի տնօրինման մասին

Հանրակրթական հաստատությունում նախասիրական ժամաքանակը տնօրինվում է որպես վճարովի ծառայություն՝ ԼՂՀ պետական հանրակրթական հաստատություններում լրացուցիչ կրթական, մշակութային, լուսավորչական և մարզական վճարովի ծառայությունների կազմակերպման կարգի համաձայն:

Օտար լեզվի ընտրության կարգը

1.Հանրակրթական դպրոցներում, որպես կանոն, անհրաժեշտ է պահպանել արդեն ընտրած օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն):

2.Միջին դպրոցներում երրորդ (ռուսերենից և հիմնական օտար լեզվից բացի) օտար լեզուն կարելի է դասավանդել վճարովի հիմունքներով:

3.Դպրոցը օտար լեզվի դասավանդումը կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ նախարարության որոշմամբ, եթե առկա են տվյալ դպրոցի մանկավարժական խորհրդի և կրթության շրջանային բաժնի առաջարկությունները:

4.Դպրոցն անգլերեն լեզվի կամ որևէ օտար լեզվի դասավանդման կարող է անցնել նախարարության թույլտվությամբ:

Վերոնշյալ կանոնադրության պահանջներին համապատասխան վերանայվել են խորհրդային դպրոցի ուսումնական պլանները, ծրագրերը և դասագրքերը: ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների առաջատար մասնագետների նախաձեռնությամբ մշակվել են նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, որոնց պահանջներին համապատասխան կազմվել են նոր դասագրքեր: Առարկայական ծրագրերի վերանայումը հիմնականում իրականացվել է «կոմունիստական և սոցիալիստական» գաղափարախոսությունից ձերբազատման, հայագիտական ու հայրենասիրական առարկաների ներմուծման ու խորացման, ինչպես նաև հասարակական նոր հարաբերություններից բխող առարկաների ներմուծման ուղղությամբ: Ծրագրերի վերանայման ժամանակ չեն դրվել դրանց մեթոդական և գաղափարախոսական նորացման խնդիրները: Վերանայված ծրագրերի հիման վրա իրականացվել է նոր դասագրքերի հրատարակման և հանրապետության դպրոցներին բաշխման ծրագիր:

Դասագրքերի ծրագրերի նպատակներն ու խնդիրներն էին՝

-հանրապետության դպրոցների յուրաքանչյուր աշակերտի ապահովել հիմնական դասագրքերով՝ վերացնելով դպրոցներում առկա դասագրքերի մեծ պակասը (դեֆիցիտը),

-բարեփոխել և արդիականացնել հանրակրթության ուսումնական ծրագրերը, հիմնական դասագրքերն ու ուսուցչի ձեռնարկները՝ միաժամանակ բարելավելով դասագրքերի արտադրական որակը և իջեցնելով դրանց գինը,

-հիմք դնել իրական պահանջարկի վրա հիմնված դասագրքերի հրատարակման կայուն համակարգի,

-ծրագրի իրականացման ընթացքում ստեղծել դասագրքերի վերարտադրման մեխանիզմ՝ ապահովելով ծրագրի հարատևությունը,

-ծրագրի ավարտին ապահովել դասագրքերի հետագա հրատարակման համար անհրաժեշտ գումարների վերականգնումը և հիմնել դասագրքաստեղծման ինքնաֆինանսավորվող և հարատևող համակարգ,

-վերացնել դասագրքերի հրատարակման պետական մենաշնորհը՝ նպաստելով այդ բնագավառում ազատ շուկայական հարաբերությունների և մրցակցության ստեղծմանը,

-նպաստել դասագրքերի ազգային շտեմարանի ստեղծմանը և այլն:

Հայաստանում դասագրքերի ենթածրագրի նախագծումը սկսվել է դեռևս 1996 թվականին: Ծրագրի նախագծման ընթացքում որդեգրվել էր դասագրքերի ծրագրի բոլոր մանրամասները լայն հասարակական քննարկման ներկայացնելու քաղաքականություն՝ ընդգրկելով շահագրգիռ նախարարությունները, վարչակազմերը, այդ թվում ԼՂՀ ԿԳ նախարարությունը, կրթության շրջանային, քաղաքային բաժինները, դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները: Ծրագրի իրագործման պլանը քննարկվել է ոչ միայն համապատասխան պետական գերատեսչություններում, այլև Հայաստանի և Արցախի դպրոցների տնօրենների, դպրոցական կոլեկտիվների, ծնողական համայնքների, ինչպես նաև բոլոր հրատարակչությունների և տպարանների հետ:

Ընդհանրացնելով ծրագրի իրականացման ուղղությամբ հինգ տարիներին (1998-2002թթ.) կատարված աշխատանքները, կարելի է ասել, որ շնորհիվ որդեգրված միասնական քաղաքականության, այն է՝ նրա բոլոր մանրամասների քննարկումը շահագրգիռ կողմերի հետ, ապահովվել է դասագրքերի ծրագրի ընդունումը հասարակության կողմից, ինչի վառ ապացույցն է ծնողների, ուսուցիչների և աշակերտների կողմից ծրագրին աջակցությունը:

ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերի տվյալների համաձայն, բարեփոխումների առաջին փուլում՝ հինգ տարվա (1998-2002թթ.) ընթացքում, հրատարակվել և դպրոցներին են տրվել 112 անուն մոտ 6074900 հատ դասագիրք, և 134000 հատ ուսուցչի ձեռնարկ:[172]

1998 թվականից ԼՂ Հանրապետության բոլոր դպրոցներում ներդրվել և հետագա տարիներին հաջողությամբ գործում է դասագրքերի համակարգը: Մշակվել և ներդրվել է նաև դասագրքերի վարձակալության համակարգ: Իսկ 1999-2000 թվականներին վերսկսվել է մանկավարժներին և աշակերտներին հասցեագրված մի շարք պարբերականների («Լուսարար», «Բնագետ», «Մաթեմատիկա», «Դպրոցում», «Ռուսաց լեզուն Հայաստանում», «Մանկավարժական միտք» և այլն) հրատարակումը: Վերոնշյալ պարբերականներում մասնագետներն իրենց հոդվածներում գնահատում են նոր ուսումնական ծրագրերի, դասագրքերի արդյունավետությունը:

Հանրակրթական դպրոցների նոր ուսումնական պլաններն ու ծրագրերը պահանջում էին, որ հատուկ ուշադրություն դարձվի բնական և հասարակական գիտություններին, նպատակ ունենալով բարձրացնել և ընդարձակել սովորողների հասարակական-քաղաքական և հանրակրթական գիտելիքները, միաժամանակ

մեծ տեղ տան սովորողների պրակտիկ գործունեությանը, դասավանդումը կապել կյանքի ու պրակտիկայի հետ, բարձրացնել նրանց հետաքրքրությունն ու ակտիվությունը ուսման նկատմամբ:

Վերոնշյալ ուսումնական պլանների վերլուծությունը ցույց է տվել, որ դպրոցների ուսումնական պլանում իրենց արտացոլումն են գտնում պետական, ազգային և կրթական հաստատությունների նպատակային բաղադրամասերը՝ դպրոցների կրթական գործունեության ուղղվածությունը, կրթության բովանդակության այն մասը, որում ներկայացված են ընդհանուր, պետական, ազգային, մշակութային նշանակություն ունեցող ուսումնական առարկաները՝ հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը (հայ ժողովրդի և ընդհանուր), քրիստոնեական կրոնը, մաթեմատիկան, ֆիզիկան, ռուսաց լեզուն, աշխարհագրությունը և այլն: Ուսումնական պլաններում պատշաճ տեղ է հատկացվում նաև նախասիրական պարապմունքներին՝ ըստ տնօրինության ընտրության:

Կրթական բարեփոխումների առաջին փուլում՝ ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 8-ի և ԼՂՀ կառավարության նույն թվականի մայիսի 12-ի որոշումներով հաստատվել է միջնակարգ ընդհանուր կրթության պետական չափորոշիչը, որի կիրառումը կապահովի հանրակրթության որակի վերահսկումը և նրա պատշաճ մակարդակի ապահովումը: Կրթության զարգացման ծրագրի (2001-2005թթ.) պահանջների համաձայն, ՀՀ կառավարության 2002թ. մարտի 16-ի և ԼՂՀ կառավարության նույն թվականի ապրիլի 10-ի որոշմամբ հաստատվեց 2002 թվականի հանրակրթական դպրոցների նոր կանոնադրություն: Նոր կանոնադրության համաձայն, հանրակրթական դպրոցների ուսումնական պլաններում որոշակի փոփոխություններ կատարվեցին: Այդ ուսումնական պլանները համեմատաբար հանդիսանում էին օրինակելի, և ԿԳ նախարարությունը շրջանային կրթության բաժիններին, դպրոցների տնօրեններին հանձնարարում է մանկավարժական խորհուրդներում փոփոխություններ կատարել՝ հաշվի առնելով տեղական պայմանները:

Ստորև տալիս ենք ԼՂՀ հանրակրթական դպրոցների 2002-2003 ուս.տարվա տիպային ուսումնական պլանը.

Աղյուսակ 7

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ (2002-2003 ՈՒՍ.ՏԱՐԻ)[173]

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամաքանակը									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Հայոց լեզու	10	9	8	4	3	3	3	3	2	2
Գրականություն	-	-	-	4	3	3	3	3	4	4
Ռուսաց լեզու	-	4	4	4	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	5	5	5	5	5	-	-	-	-	-
Երգ-երաժշտություն	2	1	1	1	-	-	-	-	-	-
Կերպարվեստ	1	1	1	1	-	-	-	-	-	-
Բնություն	-	-	-	1	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	1	1	-	-	-	-

Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	1	1	1	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	1	1	-	-
Ընդհանուր պատմություն	-	-	-	-	2	2	2	2	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	2	2	2	2	-	-
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	3	3
Իրավունք	-	-	-	-	-	-	-	1	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	3	3	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	2	2	2	2	2
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	1	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	3	4	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	2	2	2	2	2	1
Աշխատանք	1	1	1	1	2	2	1	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	2
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	2	2
Դպրոցական պարտադիր	2	2	2	3	2	2	2	2	1	2
Ընդամենը	23	25	26	28	31	31	33	36	34	34
Նախասիրական		-	-	-	-	-	2	2	2	2

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1.Տարրական և միջին դպրոցներում աշակերտների խտությունը դասարանում 25-30 է:

2.Տարրական դպրոցում (1-3-րդ դասարաններ), եթե դասարանում աշակերտների թիվը 25-ից ավելի է, ռուսաց լեզու (հայոց լեզու՝ ռուսերեն ուսուցմամբ դպրոցներում), օտար լեզու, միջին դպրոցում նաև հայոց լեզու և գրականություն առարկաների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի: Միջին դպրոցում աշխատանք առարկայի դասաժամերին դասարանը բաժանվում է երկու խմբի (տղաների և աղջիկների), եթե դասարանի աշակերտների ընդհանուր թիվը 12 և ավելի է:

3.Ավագ դպրոցում (9-10-րդ դասարաններ) աշակերտների միջին խտությունը ընդհանուր և արհեստագործական դպրոցների դասարաններում 20-25 է, իսկ վարժարանային ծրագրով աշխատող դասարաններում՝ 15-20:

Հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու, ինֆորմատիկա, ինչպես նաև ֆիզկուլտուրա (եթե տղաների և աղջիկների թիվը առանձին-առանձին 8-ից ավել է) առարկաների դասերին թույլատրվում է դասարանը բաժանել երկու խմբի, երբ դասարանում աշակերտների թիվը 25-ից ավելի է:

4.Միջին դպրոցի 7-րդ, 8-րդ դասարանում դպրոցական պարտադիր ժամերին 2 ժամ հատկացվում է ՀՀ աշխարհագրության հետ համատեղ ԼՂՀ աշխարհագ-

ության ուսուցման համար:

5.Դպրոցական պարտադիր ժամանակի 1 ժամը 1-6-րդ դասարաններում տրվում է քրիստոնեական կրոն առարկային:

Միջին դպրոցում ընդհանուր պատմության և հայոց պատմության համաժամաքանակ թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներն իրավունք ունեն մասնակի փոփոխություններ կատարել նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված ընդհանուր ժամաքանակը:

Իսկ ինչպիսին է ուսումնական պլանում սահմանված դպրոցական պարտադիր-նախասիրական ժամաքանակի տնօրինման կարգը:

Դպրոցական պարտադիր ժամաքանակի տնօրինման կարգը դպրոցներում հետևյալ պատկերն է ներկայացնում.

1.Հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական պարտադիր ժամաքանակը բաշխելիս դպրոցն առաջնորդվում է տիպային ուսումնական պլանի պարտադիր պետական ու ԼՂՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորած առարկայացանկով:

Դպրոցական պարտադիր ժամաքանակը հատկացվում է տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված և նախարարության կողմից երաշխավորված առարկայացանկում ընդգրկված առարկաներին:

2.Նախարարության երաշխավորած առարկայացանկի մեջ են մտնում ինֆորմատիկայի հիմունքներ, կիրառական տնտեսագիտություն, կյանքի հմտություններ, բնապահպանություն, էկոլոգիա, տրամաբանություն, Հայ Առաքելական եկեղեցու պատմություն, հոգեբանություն, գրաբար, Հայկական հարցի պատմություն, բարոյագիտություն, մշակույթի պատմություն առարկաները: Նախարարության երաշխավորած առարկայացանկին, անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, նախարարության թույլտվությամբ, դպրոցը կարող է ավելացնել նոր առարկա:

Երաշխավորված առարկայացանկի առարկայական ծրագրերը համաձայնեցվում են կրթության և գիտության նախարարության հետ:

3.Տնօրենը դպրոցական պարտադիր ժամաքանակի բաշխումը կատարում է մանկխորհրդի որոշմամբ՝ ելնելով դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, դասագրքերով, ծրագրերով ապահովվածությունից և այլ պայմաններից:

4.Դպրոցական պարտադիր առարկայացանկը ամրագրվում է դպրոցի ուսպլանում և դասացուցակում:

5.Եթե դպրոցական պարտադիր բաղկացուցիչ ժամաքանակը տրամադրվել է ուսումնական պլանի պետական պարտադիրում ընդգրկված առարկաներին, ապա դասարանը կիսելու հարցը կարգավորվում է «Պարզաբանումներում» սահմանված կարգով:

6.Դասարանը «Պարզաբանումներում» սահմանված կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև նախարարության երաշխավորած առարկայի պարապմունքների ժամանակ:

7.«Իրավունք» ուսումնական բնագավառի մեջ մտնում են հետևյալ առարկաները. 8-րդ դասարանում՝ «Մարդու իրավունքներ», 9-րդում՝ «Քաղաքացիական կրթություն», 10-րդում՝ «Պետություն և իրավունք»:

Նախասիրական պարապմունքի ժամաքանակը դպրոցներում պլանավորվում են հետևյալ չափանիշներով.

Նախասիրական ժամաքանակի տնօրինման մասին

1.Նախասիրական պարապմունքներին հատկացվող ժամաքանակից 1 ժամը կրթության շրջանային (քաղաքային) բաժնի վարիչի կողմից դպրոցի տնօրենի համաձայնությամբ բաշխվում է փորձառու մասնագետ ուսուցիչներին՝ հատուկ կարողություններով և ընդունակություններով սովորողներին տվյալ առարկայից խորացված գիտելիքներ տալու և առարկայական օլիմպիադաներին նրանց նախապատրաստելու նպատակով:

2.Մեկական ժամ նախասիրականի հաշվին 7-10-րդ դասարաններում հատկացվում է «Հայ Առաքելական եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնասիրմանը:

Աղյուսակ 8

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ (ՀՈՍՔԱՅԻՆ) ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ԴՊՐՈՑԻ (ՎԱՐԺԱՐԱՆԻ) (2002-2003 ՈՒՍ.ՏԱՐԻ)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը	
	IX	X
Հայոց լեզու	2	2
Գրականություն	2	2
Ռուսաց լեզու	2	2
Օտար լեզու	2	2
Պատմություն	2	2
Իրավունք	1	1
Հանրահաշիվ	2	2
Երկրաչափություն	2	2
Աշխարհագրություն	1	-
Ֆիզիկա	2	2
Աստղագիտություն	-	1
Քիմիա	2	1
Կենսաբանություն	2	1
Ինֆորմատիկա	1	1
Ֆիզկուլտուրա	2	2
ՆԶՊ	1	2
Հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակ	8/10	7/10
Ընդամենը	34/36	32/35
Նախասիրական	2	2

Ծանոթություն.

1.Ավագ դպրոցում հանրակրթական ընդհանուր ուսուցումը կազմակերվպում է Հավելված 1-ով:

2.Ավագ դպրոցում հոսքային ուսուցումը կազմակերպվում է Հավելված 2-ով: Տարբերակված ուսուցման հոսքեր են սահմանվում ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական և արհեստագործական հոսքերում: Դպրոցը, մանկավարժական խորհրդի որոշմամբ, հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացված ժամաքանակը բաշխում է հոսքային ուսուցումն ապահովող առարկաների վրա, ինչպես նաև կարող է հատկացնել տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված՝ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված առարկաների ուսուցմանը:

3.Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակը տրվում է մասնագիտական դասընթացներին:

4.Դպրոցը (վարժարանը) ուսպլանի աշխատանքային ուսուցմամբ կազմակերպմանը հատկացվող ժամաքանակը բաշխելիս առաջին կիսամյակում առաջնորդվում է Ասպրանով, իսկ երկրորդ կիսամյակում՝ հայտարարված ժամաքանակով:

Ելնելով ուսումնասիրության բնույթից, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև հատուկ հանրակրթական (օժանդակ) դպրոցի 2002-2003 ուստարվա պլանը:

Աղյուսակ 9

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
Հատուկ հանրակրթական (օժանդակ) դասարանի
(2002-2003 ուս.տարի)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը							
	I	II	III	IV	V	VI	VII	VIII
Հայոց լեզու և ընթերց.	9	9	9	9	8	8	8	7
Ռուսաց լեզու	-	-	2	2	2	2	3	3
Մաթեմատիկա	5	5	5	5	5	5	5	5
Ծանոթություն շրջակա աշխարհին	-	-	-	-	2	2	2	2
Սոցկենցաղային կողմնորոշում	-	-	-	-	2	2	2	2
Զրույցներ պատմությունից	-	-	-	-	1	1	2	2
Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	2	2	2	2
Կերպարվեստ	1	2	1	1	-	-	-	-
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2
Երգ-երաժշտություն /ռիթմիկա/	2	2	2	2	-	-	-	-
Աշխատանք	2	2	2	2	2	2	2	2
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1

Դպրոցական պարտադիր	1	1	1	2	2	2	2	2
Ընդամենը	22	22	24	25	29	29	32	33
Շտկողական հատուկ մանկավարժական պարապմունքներ	2	2	2	2	2	2	2	2

Պարզաբանում.

Հատուկ հանրակրթական (օժանդակ) դպրոցում 8-րդ դասարաններում սահմանված կարգով անցկացվում են որակավորման ստուգումներ ու պետական ավարտական քննություններ:

Շտկողական հատուկ մանկավարժական ժամերը հատկացվում են բուժական ֆիզկուլտուրային և լոգոպեդական աշխատանքներին:

Աղյուսակից երևում է, որ ի տարբերություն հանրակրթական դպրոցի 1999-2000 ուս.տարվա տիպային ուսումնական պլանի, նոր՝ 2002-2003 ուսումնական պլանի մեջ մտցվեցին նոր առարկաներ՝ բնություն (4-րդ դասարան, 1 ժամ), բնագիտություն (5-6-րդ դասարաններում մեկական ժամ), Հայաստանի աշխարհագրություն (7-րդ դասարան, 1 ժամ), պատմություն (9-րդ դաս., 3 ժամ, 10-րդ դասարան, 3 ժամ), իրավունք (8-րդ դասարան, 1 ժամ, 9-րդ դասարան, 1 ժամ, 10 -1 ժամ): Եթե նախորդ ուսումնական պլանի մեջ մտցվել է քրիստոնեական կրոն (9-10-րդ դասարաններում 1-ական ժամ, մասնագիտական հիմունքներ (մասնագիտություն, 9-րդ դասարան, 6 ժամ, 10-րդ դասարան, 4 ժամ), ապա նոր ուսումնական պլանում նշված առարկաները հանվել են: Որոշակի տարբերություն կա նաև ըստ դասարանների ընդհանուր ժամաքանակի մեջ՝ 1-2 ժամաքանակով (տես՝ աղյուսակ 1, 2):

Ինչպես նշել ենք նախորդ բաժնում, հանրակրթության բարեփոխումների երկրորդ փուլում (2003-2008թթ.) իրականացվում են բովանդակային բարեփոխումներ, որոնց հիմնական ուղղությունը կրթության բովանդակության վերափոխումն է: Այս շրջափուլում կրթության բովանդակության վերանայման հիմնահարցերի քննարկման ժամանակ (ՀՀ ԿԳ նախարարությունում և ԼՂՀ ԿԳՆ-ում) մասնագետների մեծ մասը անդրադառնում է ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի բովանդակության վերանայման անհրաժեշտությանը, ուսուցիչների որակավորման բարձրացմանը, ուսուցման գործընթացում ուսուցչի և դասագրքերի փոփոխվող դերերին, նոր առարկաների ներմուծմանը: Նույնիսկ 11-12-ամյա ուսուցման համակարգին անցնելու հիմնավորումներից մեկը հանրակրթության բովանդակության նորացման անհրաժեշտությունն է: Համեմատաբար վերանայվել են ուսումնական պլանները:

ԼՂՀ ԿԳ նախարարությունում և հանրակրթական դպրոցներում կատարած ուսումնասիրության հիման վրա ներկայացնենք 2003-2004 ուսումնական տարում դպրոցներում գործող տիպային ուսումնական պլանների՝ հենքային ուսումնական պլանի, բաղադրիչները, առարկայացանկի ձևավորման հիմնական սկզբունքները, առարկայացանկը և նախատեսվող ժամաքանակը՝ ըստ կիսամյակների:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից, հենքային ուսումնական պլանը՝ ըստ պետական, դպրոցական, նախասիրական բաղադրիչների և ուսուցման տարիների, սահմանում է սովորողների շա-

բաթական առավելագույն բեռնվածությունը և ուսումնական բնագավառներին հատկացվող տարեկան ժամաքանակները:

Հենքային ուսումնական պլանը կազմված է երեք բաղադրիչներից՝

ա) պետական,

բ) դպրոցական,

գ) նախասիրական:

Հենքային ուսումնական պլանի **պետական բաղադրիչում** ներառվում են միայն կրթակարգով սահմանված ուսումնական բնագավառները և դրանց համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները:

Դպրոցական բաղադրիչը սահմանում է այն ժամաքանակը, որ տնօրինում է դպրոցը՝ օգտվելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված առարկաների ցանկից, հաշվի առնելով տեղական պայմանները, համայնքի կարիքները, ծնողների և սովորողների ցանկությունները, դպրոցի հնարավորությունները:

Դպրոցական բաղադրիչը հիմնական դպրոցում կազմում է պետության կողմից ֆինանսավորվող տարեկան ժամաքանակի 8%-ը, ավագ դպրոցի ընդհանուր հոսքում՝ 12%-ը, իսկ ավագ դպրոցի մասնագիտական հոսքում՝ 41%-ը:

Ազգային փոքրամասնությունների (նկատի ունենք ռուսական դպրոցների) դպրոցների (դասարանների) ուսումնական պլաններում դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակն ամբողջությամբ կամ մասամբ կարող է տրամադրվել ազգային լեզվի, գրականության, պատմության, մշակույթի և արհեստների ուսուցմանը:

Նախասիրական բաղադրիչը նախատեսված է որպես սովորողի (նրա ծնողի) կամավոր ընտրությամբ վճարովի, լրացուցիչ կրթական ծառայություն՝ ուսումնական առարկաների և դասընթացների պետական և դպրոցական պարտադիր առարկայական ծրագրերում չընդգրկված թեմաների կամ առարկայացանկում չընդգրկված առարկաների ուսումնասիրության համար:

Նախասիրական պարապմունքները պետք է կազմակերպվեն դպրոցի կողմից հաստատված ուսումնական ծրագրերով:

Հիմնական դպրոցի հենքային ուսումնական պլանը ապահովում է.

1.տարրական դպրոցից սահուն անցում միջին դպրոց և գիտելիքների, կարողությունների, հմտությունների ու արժեքների անհրաժեշտ մակարդակ՝ ավագ դպրոցում արդյունավետ ուսուցման համար.

2.սովորողի տարիքային անցումային փուլերով պայմանավորված հոգևոր, մտավոր ու ֆիզիկական կարողությունների և արժեքային համակարգի զարգացում.

3.յուրաքանչյուր սովորողի ուսումնական-հետազոտական կարողությունների, նպատակային պլանավորման և ծրագրման ստեղծագործական ունակությունների ձևավորում.

4.յուրաքանչյուր սովորողի՝ պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների ամբողջական ձեռքբերման պայմաններ և իր հետագա գործունեության տեսակն ինքնուրույն ընտրելու հնարավորություն.

5.աստիճանական անցում ինտեգրված ուսուցումից առարկայական ուսուցման և այլն:

Ստորև ներկայացնում ենք հիմնական դպրոցի հենքային ուսումնական պլանի 2003-2004 ուս.տարվա ընդհանուր ժամաքանակը.

Աղյուսակ 10

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԵՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
(տարեկան ժամաքանակներով)

	Տարրական դպրոց				Միջին դպրոց					Ընդ.
Ուս. բնագավառ/ դասարան	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	I-IX
Պետական բաղադրիչ										
Հայոց լեզու, գրականություն	210	256	272	272	238	204	170	170	170	1962
Օտար լեզուներ	-	64	136	170	170	170	170	170	170	1220
Մաթեմատիկա	120	128	136	136	170	170	170	170	170	1370
Ինֆորմատիկա և ՏՀՏ	-	-	-	-	-	34	34	34	34	136
Բնական գիտություններ	-	32	34	68	68	102	170	204	204	815
Հասարակական գիտություններ					68	102	136	204	204	781
Արվեստ	180	128	102	102	68	34	34	-	-	456
Տեխնոլոգիա					34	34	68	-	-	328
Ֆիզ. կրթ., ՆԶՊ և անվտ. կենս.	90	64	68	68	68	68	68	68	102	664
Դպրոցական բաղադրիչ										
Ընտրովի առարկաներ	-	32	68	68	68	102	102	102	102	644
Ընդամենը	600	704	816	884	952	1020	1122	1122	1156	8376
Նախասիրական բաղադրիչ										
Նախասիրական պարապմունքներ	30	32	34	34	68	68	102	102	102	572

Ավագ դպրոցի հենքային ուսումնական պլանը ապահովում է՝

1.յուրաքանչյուր սովորողի ընդհանուր հանրակրթական պատրաստվածություն.

2.սովորողի հետագա ուսումնառության և աշխատանքային գործունեության համար հիմքերի ստեղծում.

3.ընդհանուր հոսքերում ուսումնական բնագավառների ներդաշնակ և ամբողջական ուսուցում.

1.յուրաքանչյուր մասնագիտական հոսքի համար առարկաների ցանկի արդյունավետ ընտրություն և ժամաբաշխում:

Ավագ դպրոցի համար երաշխավորվում է մասնագիտական հոսքերի հետևյալ ցանկը՝

ա) ֆիզիկամաթեմատիկական.

բ) տեղեկատվական տեխնոլոգիաների.

գ) բնագիտական (տարբեր մասնագիտացումներով).

դ) սոցիալ-տնտեսագիտական.

ե) հումանիտար.

զ) բանասիրական.
է) մանկավարժական.
ը) արվեստների.
թ) պաշտպանության և սպորտի.
ժ) արհեստագործական (նախամասնագիտական).
ժա) գյուղատնտեսական:

Յուրաքանչյուր ավագ դպրոց ըստ իր հնարավորությունների և պայմանների կարող է ընտրել երաշխավորված մասնագիտական հոսքերից մեկը կամ մի քանիսը: Երաշխավորված ցանկից դուրս նոր հոսքի բացումը թույլատրվում է միայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով:

Ավագ դպրոցի ընդհանուր հոսքի հենքային ուսումնական պլաններն ըստ տարեկան և շաբաթական ժամաքանակների տրված են համապատասխանաբար աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 11

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՍՔԻ ՀԵՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
(տարեկան ժամաքանակներով)

Ուս. բնագավառ/ դասարան	X	XI	XII	X-XII
Պետական բաղադրիչ				
Հայոց լեզու, գրականություն	170	170	170	510
Օտար լեզուներ	170	170	170	510
Մաթեմատիկա	136	136	136	408
Ինֆորմատիկա և ՏՀՏ	34	34	34	102
Բնական գիտություններ	238	238	238	714
Հասարակական գիտություններ	170	170	170	510
Ֆիզ. կրթ., ՆԶՊ և անվտ. կենս.	102	102	102	306
Դպրոցական բաղադրիչ				
Ընտրովի առարկաներ	136	136	136	408
Ընդամենը	1156	1156	1156	3468
Նախասիրական բաղադրիչ				
Նախասիրական պարապմունքներ	102	102	102	306

Վերոնշյալ հենքային ուսումնական պլաններում առարկայականի ձևավորման հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները՝

ա) հանրակրթական քաղաքականության միասնականության ապահովումը.

1.կրթության շարունակականության, հաջորդայնության և ամբողջականության ապահովումը.

2.դպրոցի ինքնուրույնությունը հաշվի առնելը.

3.հանրակրթության գործընթացում սովորողի, ծնողի և համայնքի մասնակցության ապահովումը.

4.կրթական ավանդույթների շարունակականության և հայոց պետության սոցիալ-տնտեսական, ռազմավարական զարգացումների ապահովումը.

5.չափորոշիչով նախատեսված բովանդակային պահանջների կատարման ապահովումը.

6.արդի աշխարհում Հայաստանի և հայ ժողովրդի տեղի ու դերի, նրա պատմամշակութային առանձնահատկությունների, ազգային հոգեբանության, ձգտումների և մտածելակերպի.

7.սովորողների ուսումնական բեռնվածության կարգավորումը և դասավանդվող առարկաների արդյունավետ քանակի ապահովումը.

8.ուսումնական նյութի ամբողջականության ապահովումը և անհարկի կրկնությունների բացառումը, ինտեգրման տարբեր մոտեցումների կիրառումը.

9.ուսումնական բնագավառների, դպրոցի տարբեր աստիճանների նպատակների, սովորողների տարիքային և աշխարհընկալման առանձնահատկությունների հաշվի առնելը և այլն:

Ինչպես արդեն նշել ենք, «Կրթական բարեփոխումների ընթացքը ՀՀ-ում և ԼՂՀ-ում» թեմայով 2002-2003 ուսումնական տարվա ապրիլի սկզբին սեմինար-խորհրդակցություն է կազմակերպվել Երևանում՝ ՀՀ կրթական բարեփոխումների կենտրոնում, որին հրավիրված էր նաև Արցախի կրթական համակարգի պատվիրակությունը՝ նախարար (ԿՄՍ) Արմեն Սարգսյանի գլխավորությամբ: Երկու հանրապետությունների ԿԳ նախարարությունների համատեղ մասնակցությամբ սեմինար-խորհրդակցության հրավիրումը միտված էր բարեփոխումների նոր փուլում կրթության ոլորտին առնչվող հարցերի համակողմանի քննարկման (այդ մասին նշել ենք նախորդ բաժնում), ինչպես նաև նոր ուսումնական պլանների, ծրագրերի մշակմանը: ՀՀ ԿԳ նախարար Լ. Մկրտչյանը իր ելույթում շեշտեց, որ ՀՀ-ն և ԼՂՀ-ն երկու ինքնուրույն պետական կազմավորումներ են, սակայն գտնվում են մեկ ընդհանուր համակարգի մեջ՝ միասնական կրթական դաշտում, հետևաբար, պետք է ունենանք միասնական ուսումնական պլաններ, ծրագրեր: Բուռն քննարկումներից հետո առաջարկվեց ընդհանուր հենքային ուսումնական պլանների հիման վրա կազմել նոր՝ 2003-2004 ուս.տարվա ուսումնական պլան և որոշ փոփոխություններով համապատասխանեցնել տեղական պայմաններին:

Այժմ ներկայացնենք հանրակրթական դպրոցի, տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող (դպրոցի) վարժարանի, ռուսերեն ուսուցմամբ դպրոցի ուսումնական պլանները.

Աղյուսակ 12

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
պետական հանրակրթական դպրոցի
(2003-2004 ուս.տարի)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Հայոց լեզու	10	9	8	4	3	3	3	3	2	2
Գրականություն	-	-	-	4	3	3	3	3	4	4
Ռուսաց լեզու	-	4	4	4	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	5	5	5	5	5	-	-	-	-	-
Երգ-երաժշտություն	2	1	1	1	-	-	-	-	-	-
Կերպարվեստ	1	1	1	1	-	-	-	-	-	-
Բնություն	-	-	-	1	-	-	-	-	-	-

Բնագիտություն	-	-	-	-	1	1	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	1	1	1	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	1	1	-	-
Ընդհանուր պատմություն	-	-	-	-	2	2	2	2	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	2	2	2	2	-	-
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	3	3
Իրավունք	-	-	-	-	-	-	-	1	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	3	3	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	2	2	2	2	2
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	1	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	4	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	2	2	2	2	2	1
Աշխատանք	1	1	1	1	2	2	1	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	2
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	2	2
Դպրոցական պարտադիր	2	2	2	3	2	2	4	3	3	3
Ընդամենը	23	25	26	28	31	31	35	36	36	35
Նախասիրական		-	-	-	-	-	2	2	2	2

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Դպրոցական պարտադիր ժամաքանակի տնօրինման կարգը

1.Հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական պարտադիր ժամաքանակը բաշխելիս դպրոցն առաջնորդվում է տիպային ուսումնական պլանի պարտադիր պետական ու նախարարության երաշխավորված առարկաներով:

Դպրոցական պարտադիր ժամաքանակը հատկացվում է տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված և (կամ) նախարարության կողմից երաշխավորված առարկայացանկում ընդգրկված առարկաներին:

2.Նախարարության երաշխավորած առարկայացանկի մեջ են մտնում ինֆորմատիկայի հիմունքներ, կիրառական տնտեսագիտություն, կյանքի հմտություններ, բնապահպանություն, էկոլոգիա, տրամաբանություն, ֆերմերային գործ, հայոց եկեղեցու պատմություն, հոգեբանություն, գրաբար, Հայկական հարցի պատմություն, բարոյագիտություն, մշակույթի պատմություն առարկաները:

3.Նախարարության երաշխավորած առարկայացանկին, անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, նախարարության թույլտվությամբ, դպրոցը կարող է ավելացնել նոր առարկա:

Երաշխավորված առարկայացանկի առարկայական ծրագրերը համաձայնեցվում են նախարարության հետ:

4.Տնօրենը դպրոցական պարտադիր ժամաքանակի բաշխումը կատարում է

մանկխորհրդի որոշմամբ՝ ելնելով դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, դասագրքերով, ծրագրերով ապահովվածությունից և այլ պայմաններից:

5.Դպրոցական պարտադիր առարկայացանկը ամրագրվում է դպրոցի ուսպ-լանում և դասացուցակում:

Աղյուսակ 13

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող
ավագ դպրոցի (վարժարանի)
(2003-2004 ուս.տարի)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը	
	IX	X
Հայոց լեզու	2	2
Գրականություն	2	2
Ռուսաց լեզու	2	2
Օտար լեզու	2	2
Պատմություն	2	2
Իրավունք*	1	1
Հանրահաշիվ	2	2
Երկրաչափություն	2	2
Աշխարհագրություն	1	-
Ֆիզիկա	2	2
Աստղագիտություն	-	1
Քիմիա	2	1
Կենսաբանություն	2	1
Ինֆորմատիկա	1	1
Ֆիզկուլտուրա	2	2
ՆԶՊ	1	2
Հոսքային ուսուցման կազմակերպմանը հատ-կացվող ժամաքանակ	10	10
Ընդամենը	36	35
Նախասիրական	2	2

* «Իրավունք» ուսումնական բնագավառի մեջ մտնում են հետևյալ առարկա-ները. 8-րդ դասարանում՝ «Մարդու իրավունքներ», 9-րդում՝ «Քաղաքացիական կրթություն», 10-րդում՝ «Պետություն և իրավունք»:

Աղյուսակ 14

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
ռուսերեն ուսուցմամբ հանրակրթական դպրոցի (դասարանի)
(2003-2004 ուս.տարի)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամաքանակը									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Ռուսաց լեզու	8	8	8	8	3	3	3	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	2	2	2	2	3	3
Հայոց լեզու	3	5	4	4	3	3	3	3	2	2
Հայ գրականություն	-	-	-	-	2	2	2	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	5	5	5	5	5	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	3	3	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	2	2	2	2	2
Բնություն	-	-	-	1	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	1	1	-	-	-	-
Երգ-երաժշտություն	2	1	1	1	-	-	-	-	-	-
Աշխատանք	1	1	1	1	2	2	1	-	-	-
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	2	2
Կերպարվեստ	1	1	1	1	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	2	2	1	-
Հայոց պատմություն	-	-	-	-	2	2	2	2	-	-
Ընդհանուր պատմություն	-	-	-	-	2	2	2	2	-	-
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	3	2
Իրավունք	-	-	-	-	-	-	-	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	4	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	3	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	2	2	2	2	2	1
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	-	-	1	1
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	1	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	2
Դպրոցական պարտադիր	1	2	2	3	1	1	2	2	2	3
Ընդամենը	23	25	26	28	31	31	35	36	36	35
Նախասիրական	-	-	-	-	-	-	2	2	2	2

Ծանոթություն՝

1.Ռուսերենով ուսուցմամբ դպրոցում հայոց լեզվի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

2.ԼՂՀ պետական հանրակրթական միջնակարգ դպրոցի 2003-2004 ուս.տար-

վա ուսումնական պլանի բոլոր պարզաբանումները և դրանց հավելվածները տարածվում են սույն ուսումնական պլանի վրա:

Աղյուսակից երևում է, որ նախորդ և նոր ուսումնական պլաններում նախատեսվող առարկաները համարյա մնացին անփոփոխ, սակայն առարկաներին հատկացվող ժամերը փոխվել են որոշ դասարաններում: Այսպես, օրինակ, 2002-2003 ուս.տարվա ուսումնական պլանում դպրոցական պարտադիր առարկաներին հատկացվել են. 7-րդ-8-րդ դասարաններում՝ 2-ական ժամ, 9-ում՝ 1 ժամ, 10-րդում՝ 2 ժամ, իսկ նոր ուսումնական պլանում՝ 7-րդ դասարանում՝ 4 ժամ (2-ով ավելի): 8-րդում՝ 3 ժամ, 9-րդում՝ 3 ժամ, 10-րդ դասարանում՝ 3 ժամ: Որոշակի տարբերություն կա նաև ընդհանուր ժամաքանակում: Նախորդ ուսումնական պլանում 7-րդ դասարանում՝ 33 ժամ, 9-րդ-ում՝ 34 ժամ, 10-րդ դասարանում՝ 34 ժամ, 2003-2004 ուսումնական պլանով՝ 7-րդ դասարանում՝ 35 ժամ, 9-րդում՝ 36 ժամ, 10-րդ դասարանում՝ 35 ժամ: Որոշ փոփոխություններ են կատարվել նաև տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող դպրոցի (վարժարանի) ուսումնական պլանում: Եթե 2002-2003 ուսպլանում հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվել է 9-րդ դասարանում՝ առաջին կիսամյակում 8 ժամ, 2-րդում՝ 10 ժամ, 10-րդ դասարանում՝ 1-ինում 7 ժամ, 2-րդում՝ 10 ժամ, ապա 2003-2004 ուսումնական պլանում 9-րդ դասարանում՝ 2 կիսամյակներում՝ 10 ժամ, նույնը նաև 10-րդ դասարանում: Նշենք, որ ռուսերեն ուսուցմամբ հանրակրթական դպրոցի 1-10-րդ դասարանների ուսումնական պլանում (2002-2003 և 2003-2004 ուս.տարում) փոփոխություն չի կատարվել:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ հանրակրթական դպրոցի 2003-2004 ուսումնական տարվա 1-10-րդ դասարանների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, դասագրքերը չեն փոխվել մինչև 2007-2008 ուս.տարին: Միայն որոշակի փոփոխություն է կատարվել ընդհանուր պարտադիր և նախասիրական առարկաների ժամաքանակում: Իսկ, որո՞նք են նոր ուսումնական պլանների և որոշ առարկաների ծրագրերի վերանայման իրական նախադրյալները:

Այսպես՝ հանրակրթության պետական կրթակարգը, որը սկսել է գործել 2006-2007 ուս.տարվանից, ապահովում է 12-ամյա ուսուցումը: Նոր կրթակարգն իր թերություններով հանդերձ, առկա հիմնախնդիրները լուծելու և միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու համար անհրաժեշտ փաստաթուղթ է: Ճիշտ է, հանրակրթության ողջ բնագավառը կարիք ունի մի ամբողջական փաստաթղթի, որը կկանոնակարգի այն:

2006-2007 ուս.տարում մեր կրթական համակարգը 12-ամյա ուսուցման անցնելու համար դեռ պատրաստ չէր, քանի որ այստեղ ունեինք առավել առաջնային հիմնախնդիրներ, որոնց լուծմամբ միայն հնարավոր կլիներ անցնել դրան:

Եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելը, որն իր արտացոլումն է գտել կրթության մասին համապատասխան փաստաթղթերում, պետական կրթակարգում, դոկտրինայում, արդեն տալիս է իր պտուղները: 12-ամյա կրթական համակարգին անցնելն արդեն իսկ առաջին քայլն է այդ ճանապարհին, որ սկսում է իրականություն դառնալ:

2006 թվականի սեպտեմբերի 1-ից Հայաստանում նախապայմաններ ստեղծվեցին անցնելու 12-ամյա կրթության, և այն առաջընթաց է արձանագրել հետագա տարիներին:

Անցումը 12-ամյա կրթության շատ մշակված, արդեն իսկ կրթակարգով ամ-

րագրված ծրագիր է: Այն ենթադրում է հետևյալ քայլերը՝ տևողությունը շուրջ 6 տարի է, առաջին 3 տարիները նվիրվել են տարրական և միջին դպրոցի, իսկ հաջորդ 3 տարիները՝ ավագ դպրոցի ծրագրային փոփոխություններին: Բոլոր փուլերում ներդրումը կատարվում է տարբեր սկզբունքներով: Առաջին 3 տարիների ընթացքում ըստ առարկաների ներգրվեցին ուսումնական պլաններ, ծրագրեր և դասագրքեր: Հաջորդ 3 տարիները՝ 2009 թվականից սկսած, նվիրվեցին ավագ դպրոցի կառուցմանը: Ավագ դպրոցը ըստ կրթակարգի եռամյա է. այդ ժամանակ ծրագրերը ներդրվեցին ըստ դասարանների: Այսինքն՝ ավագ դպրոցի առաջին՝ 10-րդ դասարանը ստացավ ծրագրային, դասագրքային ողջ փոփոխությունը, հաջորդ 2 տարում 11-րդ և 12-րդ դասարանները ստանում են համապատասխան պլաններ, ծրագրեր: Այսօրվա 10-ամյա դպրոցը շուրջ 50 ժամով ավելի է ծանրաբեռնված, քան 12-ամյա դպրոցը:

Հանրակրթական դպրոցներում կատարած ուսումնասիրությունների հիման վրա վերլուծաբար ներկայացնենք 2007-2009 թվականներին դպրոցների ուսումնական պլանները՝ ըստ ուսումնական տարիների:

Աղյուսակ 15

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2007-2008 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

Միջնակարգ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը										
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
Մայրենի /հայոց/ լեզու	7*	8*	9	8	7*	6*	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3*	2*	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2*	3*	3	4	4
Ռուսաց լեզու	-	2	4	4	4	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	-	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4*	4*	5	5	5*	5*	-	-	-	-	-
Երգ-երաժշտություն	2	1	1	1	1	-	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	-	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1*	-	-	-	-	-	-	-	-	-
Բնություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2*	1	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1*	1*	1	1	1	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	1	1	-	-
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1*	2	1*	2	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5*	2	1.5*	2	-	-
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3
Հայրենագիտություն	-	-	-	-	1*	-	-	-	-	-	-
Իրավունք**	-	-	-	-	-	-	-	-	1	1	1

Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1*	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3*	3*	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2*	2*	2	2	2
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1*	1*	-	-	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2*	2	2	4	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	1*	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2*	2	2	2	1
Աշխատանք	2	2	1	1	1	2	2	1	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	-	1	1	2
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	2	2	2	2	2	2	2
Դպրոցական բաղադրիչ	-	2	3	3	3	3.5	3	3.5	2	2	2
Ընդամենը	20	23	26	27	31	30	34	34	36	36	35
Նախասիրական	-	-	-	-	-	-	-	2	2	2	2

Ծանոթություն.

* Նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով:

** «Իրավունքը» ներկայացվում է հետևյալ առարկաներով. 9-րդ դասարանում՝ «Մարդու իրավունքներ», 10-րդում՝ «Քաղաքացիական կրթություն», 11-րդում՝ «Պետություն և իրավունք»:

Օրինակելի ուսումնական պլանները նախատեսված են 2007-2008 ուսումնական տարվա համար:

Ուսումնական պլաններն ունեն երեք պետական պարտադիր, դպրոցական պարտադիր (դպրոցի ընտրությամբ) և նախասիրական կրթության (աշակերտի ընտրությամբ) բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և ֆինանսավորվում են պետական բյուջեից: Յուրաքանչյուր հանրակրթական դպրոց օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, պարտադիր դպրոցական բաղադրիչով սահմանված ժամանակի տնօրինմամբ մշակում է տվյալ ուս.տարվա իր ուսումնական պլանը:

Պետական պարտադիր բաղադրիչով սահմանված ժամանակում փոփոխություն կարող է կատարվել միայն ԿՄՍ նախարարության համաձայնությամբ՝

ա) արտակարգ ընդունակություններ ունեցող աշակերտների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

բ) երկհամակազմ (երկկոմպլեկտ) դասարանների առկայության դեպքում,

գ) թերբեռնված դասարաններում կամ սահմանված կարգով երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում,

դ) սահմանված կարգով երաշխավորված մանկավարժական գիտափորձ իրականացնելու համար:[174]

Աղյուսակ 16

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ (ՀՈՍՔԱՅԻՆ) ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ (ՎԱՐԺԱՐԱՆԻ) 10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը	
	X	XI
Հայոց լեզու	2	2
Գրականություն	2	2
Ռուսաց լեզու	2	2
Օտար լեզու	2	2
Պատմություն	2	2
Հայոց եկեղեցու պատմություն	1	1
Իրավունք	1	1
Հանրահաշիվ	2	2
Երկրաչափություն	2	2
Աշխարհագրություն	1	-
Ֆիզիկա	2	2
Աստղագիտություն	-	1
Քիմիա	2	1
Կենսաբանություն	2	1
Ինֆորմատիկա	1	-
Ֆիզկուլտուրա	2	2
ՆՁՊ	1	2
Հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակ	9	9
Ընդամենը	36	35
Նախասիրական	2	2

Ծանոթություն

1.Տարբերակված ուսուցման հոսքեր են սահմանում ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, տնտեսագիտական և արհեստագործական հոսքերը: Այս ցանկը կարող է լրացվել ԿՄՍ նախարարության կողմից:

Դպրոցը, մանկավարժական խորհրդի որոշմամբ, հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացված ժամանակը բաշխում է հոսքային ուսուցումն ապահովող առարկաների միջև, ինչպես նաև կարող է հատկացնել տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված և ԿՄՍ նախարարության կողմից երաշխավորված առարկաների ուսուցմանը:

2.Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակը տրամադրվում է մասնագիտական դասընթացներին:

3.Ուսպլանի նախասիրական պարապմունքներին տրամադրված ժամանակները ենթակա չեն ավելացման:

4.10-րդ դասարանի պարտադիր պետական առարկայացանկում ընդգրկված

բոլոր առարկաների ուսուցումը կազմակերպվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության 9-րդ դասարանի առարկայական ծրագրերով և դասագրքերով:

11-րդ դասարանի պարտադիր պետական առարկայացանկում ընդգրկված բոլոր առարկաների ուսուցումը կազմակերպվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության 10-րդ դասարանի առարկայական ծրագրերով և դասագրքերով:

Աղյուսակ 17

ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ (2007-2008)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը										
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
Ռուսաց լեզու	4	8	8	8	8	3	3	3	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3
Մայրենի /հայոց/ լեզու	3*	3*	5	4	6*	5*	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3*	2*	3	2	2
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	2*	3*	2	2	2
Օտար լեզու	-	-	-	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4*	4*	5	5	5*	5*	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3*	3*	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2*	2*	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	-	1*	-	-	-	-	-	-	-	-	-
Բնություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2*	1	-	-	-	-	-
Երգ-երաժշտություն	2	1	1	1	1	-	-	-	-	-	-
Աշխատանք	2	1	1	1	1	2	2	1	-	-	-
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	2	2	2	2	2	2	2
Կերպարվեստ	2	1	1	1	1	-	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	1	1	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1*	1*	1	1	1	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5*	2	1.5*	2	-	-
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1*	2	1*	2	-	-
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	2
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1*	-	-	-
Իրավունք	-	-	-	-	-	-	-	-	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2*	2	2	4	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	1*	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2*	2	2	2	1
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1*	1*	-	1	1	1

Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	-	1	1	2
Դպրոցական բաղադրիչ	-	2	3	3	1	2.5	1	1.5	1	1	2
Ընդամենը	20	23	26	27	31	30	34	34	36	36	35
Նախասիրական	-	-	-	-	-	-	-	2	2	2	2

Ծանոթություն

* Նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով:

1.Ռուսերենով ուսուցմամբ դպրոցում (դասարանում) հայոց լեզվի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

2.Ազգային փոքրամասնություններով համալրված դպրոցներում (դասարաններում) ռուսաց լեզվին և գրականությանը տրված ժամաքանակից 2-ական ժամ 1-4-րդ դասարաններում, 1-ական ժամ 5-11-րդ դասարաններում կարող են հատկացվել ազգային լեզվին և գրականությանը՝ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

3. 7-րդ և 9-րդ դասարաններում դպրոցները (դասարանները) համաշխարհային պատմությանը հատկացվող ժամաքանակից մեկական ժամ կարող են հատկացվել ազգային պատմության ուսումնասիրմանը՝ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

Աղյուսակ 18

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ[175]

Միջնակարգ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը										
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
Մայրենի	7*	8*	8*	8	7*	6*	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3*	2*	2*	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2*	3*	3*	4	4
Ռուսաց լեզու	-	2*	2*	4	3*	3	3	3*	3	3	3
Օտար լեզու	-	-	2*	2	2*	2	2*	2	2	2	2
Մաթեմատիկա	4*	4*	4*	5	5*	5*	-	-	-	-	-
Երաժշտություն	2*	1*	1*	1	1	-	-	-	-	-	-
Կերպարվեստ	2*	1*	1*	1	1	-	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1*	1*	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2*	2*	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1*	1*	2*	-	1	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	1	-	-
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1*	1*	1*	1*	-	-

Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5*	1.5*	1.5*	1.5*	-	-
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1*	0.5*	0.5	0.5	0.5	-	-
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3
Հայրենագիտություն	-	-	-	-	1*	-	-	-	-	-	-
Իրավունք**	-	-	-	-	-	-	-	-	-	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1*	1*	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3*	3*	3*	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2*	2*	2*	2	2
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1*	1*	1*	-	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2*	2*	2	4	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	1*	2*	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2*	2*	2	2	1
Տեխնոլոգիա	2*	2*	1*	1	1*	2	2	1	-	-	-
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1*	1	1	2
Ֆիզկուլտուրա	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	3	4	1	4	3	3
Ընդամենը	20	23	25	27	29	31	34	34	35	37	36
Նախասիրական	-	-	-	-	-	-	-	2	2	2	2

** Նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով:*

*** «Իրավունքը» ներկայացվում է հետևյալ առարկաներով. 10-րդ դասարանում՝ «Քաղաքացիական կրթություն», 11-րդում՝ «Պետություն և իրավունք»:*

Այս ուսումնական պլանը գործել է նաև 2009-2010 ուսումնական տարում:

Աղյուսակ 19

Տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող ավագ դպրոցի (վարժարանի) 10-11-րդ դասարանների ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը	
	X	XI
Հայոց լեզու	2	2
Գրականություն	2	2
Ռուսաց լեզու	2	2
Օտար լեզու	2	2
Պատմություն	2	2
Հայոց եկեղեցու պատմություն	1	1
Իրավունք	1	1
Հանրահաշիվ	2	2
Երկրաչափություն	2	2

Աշխարհագրություն	1	-
Ֆիզիկա	2	2
Աստղագիտություն	-	1
Քիմիա	2	1
Կենսաբանություն	2	1
Ինֆորմատիկա	1	1
Ֆիզկուլտուրա	3*	3*
ՆԶՊ	1	2
Հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակ	10	10
Ընդամենը	37	35
Նախասիրական	2	2

Ծանոթություն

1.Տարբերակված ուսուցման հոսքեր են սահմանում ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական և արհեստագործական հոսքերը: Այս ցանկը կարող է լրացվել ԿԳ նախարարության կողմից:

Դպրոցը, մանկավարժական խորհրդի որոշմամբ, հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացված ժամաքանակը բաշխում է հոսքային ուսուցումն ապահովող առարկաների միջև, ինչպես նաև կարող է հատկացնել տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված և ԿԳ նախարարության կողմից երաշխավորված առարկաների ուսուցմանը:

2.Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակը տրամադրվում է մասնագիտական դասընթացներին:

3.Ուսպլանի նախասիրական պարապմունքներին տրամադրված ժամաքանակները ենթակա չեն ավելացման:

4.10-րդ դասարանի պարտադիր պետական առարկայացանկում ընդգրկված բոլոր առարկաների ուսուցումը կազմակերպվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության 9-րդ դասարանի առարկայական ծրագրերով և դասագրքերով:

11-րդ դասարանի պարտադիր պետական առարկայացանկում ընդգրկված բոլոր առարկաների ուսուցումը կազմակերպվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության 10-րդ դասարանի առարկայական ծրագրերով և դասագրքերով:

Աղյուսակ 20

Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը										
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	3.5	3*	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	2.5*	3
Մայրենի	3*	3*	5*	4*	6*	5*	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3*	2*	2*	2*	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2*	2*	3*	2*	2

Օտար լեզու	-	-	2*	2*	2*	2*	2*	2*	2	2*	2
Մաթեմատիկա	4*	4*	5	4*	5*	5*	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3*	3*	3*	2.5*	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2*	2*	2*	1.5*	2
Ես և շրջակա աշխարհը	-	1*	1*	2*	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2*	2*	-	-	-	-	-
Երաժշտություն	2*	1*	1*	1*	1	-	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2*	1*	1*	1*	1	1*	2	1	-	-	-
Կերպարվեստ	2*	1*	1*	1*	1	-	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2*	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1*	1*	1.5*	-	1.5*	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1*	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5*	1.5*	1.5*	1.5*	2*	-
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1*	1*	1*	1*	1.5*	-
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	2
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1*	0.5*	0.5	0.5	0.5	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1*	1*	-	-
Պետություն և իրավունք	-	-	-	-	-	-	-	-	-	1*	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2*	2*	2*	3*	4
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Քիմիա	-	-	-	-	-	-	1*	2*	2*	2*	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2*	2*	2*	2*	1
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1*	1*	1*	1*	1	1
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1*	-	-
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1*	1*	1*	2
Ֆիզկուլտուրա	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	3	2	0.5	-	-	3
Ընդամենը	20	23	25	27	29	31	34	34	35	34	36
Նախասիրական	-	-	-	-	-	-	-	2	2	2	2

*Նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով:

Ծանոթություն

1.Ռուսերենով ուսուցմամբ դպրոցում (դասարանում) «Մայրենի» առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

2.Ազգային փոքրամասնություններով համալրված դպրոցներում (դասարաններում) ռուսաց լեզվին և գրականությանը տրված ժամաքանակից 2-ական ժամ՝ 1-4-րդ դասարաններում, 1-ական ժամ՝ 5-11-րդ դասարաններում կարող է հատկացվել ազգային լեզվին և գրականությանը՝ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

3.6-9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ժամաքանակից 0.5-ական ժամ հատկացվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային:

Հանրակրթական միջնակարգ դպրոցի սույն օրինակելի ուսումնական պլանները զգալի նվաճում էին հանդիսանում նախորդ տարիների համեմատությամբ: Վերլուծությունները ցույց տվեցին, որ 2007-2008 ուսումնական տարում հիմնական դպրոցի մուտքը սկսվում է 5-րդ դասարանից, և այդ ուսումնական տարում արդեն սկսվում է նոր առարկաների մուտքը: Դա բնագիտական և հասարակագիտական առարկաների չափորոշիչների ու ծրագրերի մուտքն է հանրակրթական դպրոց: Այդ ուսումնական տարվանից արդեն հաստատվել են դրանց չափորոշիչները, համապատասխան դասագրքերը ներկայացվել մրցույթի, բնագիտական բլոկում՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն: Հասարակագիտական բլոկում՝ հայոց պատմություն, պատմություն, հասարակագիտություն, ինչպես նաև «Ես և շրջակա աշխարհը» (տարրական դատարաններում) և «Հայրենագիտություն»՝ 2-րդ փուլում:

3-րդ փուլը սկսվել է 2008-2009 ուս.տարում: Ձևավորվել է աշխատանքային խմբի մրցութային կազմը, մշակվել չափորոշիչների և ծրագրերի նախագծերը: Դրանք օտար լեզուներն են, ֆիզկուլտուրան, աշխատանքը, կերպարվեստը:

2008-2009 ուս.տարում ավարտվեց 9-ամյա դպրոցի ծրագրերի ու չափորոշիչների մշակման գործընթացը, և այս տեսանկյունով կազմակերպվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Վերոնշյալ աղյուսակների համեմատական վերլուծություններից երևում է, որ 2007-2008 և 2008-2009 ուսումնական տարիների պլանների մեջ կան որոշակի տարբերություններ: Այսպես, օրինակ, 2007-2008 ուս.տարվա պլանի մեջ մտցվեցին հայրենագիտություն, համաշխարհային պատմություն, հասարակագիտություն, ինֆորմատիկա առարկաները: Իսկ 2008-2009 ուս.տարվա ուսումնական պլանում հանվել է «Բնություն» (5 դասարանում՝ 1 ժամ) առարկան, ավելացել է նախորդ պլանում՝ աշխատանք (1-8-րդ դասարաններում) առարկայի փոխարեն «Տեխնոլոգիա» (1-8-րդ դասարաններում) առարկան: Բավականին մեծ տարբերություն կա առարկաներին հատկացված ժամաքանակների միջև: Վերանայված ուսումնական պլանում օտար լեզու առարկան 2007-2008 ուս.տարվա պլանում նախատեսվում է անցնել 4-րդ դասարանում, 2008-2009 ուսպլանում՝ 3-րդ դասարանում, ինֆորմատիկա առարկան առաջին ուս.տարում պլանավորված է 6-7, 9-10-11-րդ դասարաններում, երկրորդ ուս.տարում՝ 6-7, 8 (9 չկա), 10-11-րդ դասարաններում, աշխարհագրություն՝ 1-ինում, 6-10-րդ դասարանում, 2-րդ ուս.տարում (2008-2009) 6-8 և 10-րդ դասարաններում (9-ը չկա), ՆԶՊ առարկան նոր ուսումնական պլանում անցնում են ՆԶՊ և անվտանգության կենսագործունեություն: Մյուս առարկաների ժամաքանակի փոփոխությունները ներկայացված են ծանոթությունում (տես՝ նաև աղյուսակ 6, 9):

Ինչպես նշել ենք նախորդ բաժնում, հանրապետությունում 12-ամյա կրթության իրականացումը սկսվել է 2008 թվականից և նախատեսվում էր ավարտել 2010-ին: Ուրեմն, այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից նախատեսվել է եռամյա ավագ դպրոցի ներդրումը: ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի որոշմամբ նախատեսվել է նաև ռազմավարական ծրագրի իրականացման այս փուլում ենթաշրջանային խոշոր դպրոցներում բացել հոսքային խմբեր, միաժամանակ կազմել ուսումնական պլաններ եռաստիճան դպրոցների համար (այդ մասին արդեն նշվել է):

2010-2011 ուս.տարում, հաշվի առնելով նախորդ տարվա բացթողումները, նախարարության կոլեգիայի նիստում (2010-2011 ուս.տարվա մարտին) որոշվեց խորացված ուսուցմամբ հոսքերից բացի ավագ դպրոցներում մտցնել ընդհանուր հոսքեր 10-րդ և 11-րդ դասարանների համար:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ այս ժամանակահատվածում սկսվել է բովանդակային արմատական բարեփոխումների նոր փուլ, որն ուղղված է հանրակրթության որակի բարձրացմանը:

2010-2011 ուս.տարվանից հանրակրթության ոլորտում իրավիճակը կայունացվել է, և սկիզբ է դրվել զարգացման ծրագրերին, դրանք ուղղված էին կրթության որակի բարելավմանը, կրթության բովանդակության համապատասխանեցմանը հասարակության արդի պահանջներին և միջազգային չափանիշներին: Իսկ դա նշանակում է, որ՝

-շարունակվում է ուսումնական պլանների և ծրագրերի կատարելագործումը,

-դպրոց են մտնում նոր ուսումնական առարկաներ,

-բարելավվում է դպրոցների ուսումնանյութական բազան,

-ձևավորվում է ուսուցիչների կատարելագործման նոր համակարգ,

-վերսկսվել է մանկավարժական մամուլի հրատարակումը և այլն:

Ուսումնական պլանում տեղ են գտել նոր առարկաներ, ինչպիսիք են 5-6-րդ դասարաններում «Բնագիտություն», 8-10-րդ դասարաններում «Իրավունք», որը ներառում է «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» բաղադրիչները, «Կյանքի հմտություններ», «Առողջ ապրելակերպ» առարկաները և հրատարակվել են նոր դասագրքեր:

Այժմ ներկայացնենք 2010-2011 ուս.տարվա վերանայված օրինակելի ուսումնական պլանները.

Աղյուսակ 21

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ[176]

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը										
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	-	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	-	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1

Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	2	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	0.5	0.5[1]	0.5[1]	0.5[1]	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1[1]	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1[1]
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	1[1]	-	-	-
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	3	3	3	3	3	3	3	3	3
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	4	4	2	2	1	3
Ընդամենը	20	23	25	27	29	31	34	35	35	34	34

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Օրինակելի ուսումնական պլանները նախատեսված են 2010-2011 ուսումնական տարվա համար:

Ուսումնական պլաններն ունեն երկու՝ պետական և դպրոցական (դպրոցի ընտրությամբ) բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Յուրաքանչյուր հանրակրթական դպրոց օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ, մշակում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը.

1.Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող աշակերտների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

2) երկհամակազմ (երկկոմպլեկտ) դասարանների առկայության դեպքում,

3) թերբեռնված դասարաններում կամ սահմանված կարգով երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում,

4) սահմանված կարգով երաշխավորված մանկավարժական գիտափորձ իրականացնելու համար:

2.Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1.Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին:

2.Երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի մեջ են մտնում կիրառական տնտեսագիտություն, կյանքի հմտություններ, բնապահպանություն, էկոլոգիա, էներգիայի և ռեսուրսների օգտագործում, ֆերմերային գործ, տրամաբանություն, գրաբար, հայոց եկեղեցու պատմություն (ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր), Հայկական հարցի պատմություն, հոգեբանություն, բարոյագիտություն, մշակույթի պատմություն առարկաները: Երաշխավորված լրացուցիչ առարկայացանկին, անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, նախարարության թույլտվությամբ դպրոցը կարող է ավելացնել նոր առարկա: Երաշխավորված առարկայացանկի ուսումնական առարկաների (դասընթացների) առարկայական ծրագրերը գործածության են երաշխավորվում նախարարության կողմից:

3.Ուսումնական հաստատության տնօրենը ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով նախարարության հանձնարարականներից, ինչպես նաև դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով նախարարության կողմից հանրակրթական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից:

4.Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է դպրոցի ուսումնական պլանում և դասացուցակում:

5.Եթե դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվել է ուսումնական պլանի պետական բաղադրիչում ընդգրկված առարկաներին, ապա դասարանը կիսելու հարցը կարգավորվում է «Հանրակրթական միջնակարգ դպրոցի ուսումնական պլանի պարզաբանմամբ» սահմանված կարգով: Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև նախարարության երաշխավորած «Գրաբար» առարկայի պարապմունքների ժամանակ:

Աղյուսակ 22

Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլան X-XI (10-11-րդ դասարան)

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը	
		X	XI
Հոսքային բաղադրիչ			
Մասնագիտական դասընթացներ[1]		9	13

Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2
	Հայ գրականություն	2	2
	Հայոց պատմություն	2	2
	Օտար լեզու	2	2
	Հասարակագիտություն	2	1
	Ռուսաց լեզու	2	2
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3
	Բնագիտական առարկա[2]	2	1
	Բնագիտական առարկա[2]	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1[3]
	Ֆիզկուլտուրա	3	3
	ՆԶՊ և անվտ. կենսագ.	1	1
	Դպրոցական բաղադրիչ	-	-
Ընդամենը		34	34

Ծանոթություն

1.10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկը ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրերով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրերով:

2.11-րդ դասարանում սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրով, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրով:

3.Մասնագիտական դասընթացների ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը:

4.«Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել Ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (տե՛ս՝ Աղյուսակ 26):

Աղյուսակ 23

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը										
	Տարրական դպրոց				Միջին դպրոց					Ավագ դպրոց	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1
Քիմիա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10

Աղյուսակ 24

ՌՈՒՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	7	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	4^1	4^1	4^1	4^1	4^1	4^1	4^1	4^1
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-

Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	0.5	0.5[1]	0.5[1]	0.5[1]
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1[1]
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	1[1]	-
ՆՀՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	3	3	3	3	3	3	3
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	3	3	1	1
Ընդամենը	20	23	25	27	29	31	34	35	35

Ծանոթություն.

1.Ռուսերենով ուսուցմամբ դպրոցում (դասարանում) «Մայրենի» առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

2.Ազգային փոքրամասնություններով համալրված դպրոցներում (դասարաններում) ռուսաց լեզվին և գրականությանը տրված ժամաքանակից 2-ական ժամ 1-4-րդ դասարաններում, 1-ական ժամ 5-11-րդ դասարաններում կարող է հատկացվել ազգային լեզվին և գրականությանը՝ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

3.6-9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ժամաքանակից 0.5-ական ժամ հատկացվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային:

2010-2011 ուսումնական տարում վերանայված ուսումնական պլաններում որոշակի փոփոխություններ են կատարվել մայրենի, ռուսաց լեզու, Հայաստանի աշխարհագրություն, Հայոց պատմություն, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա և դպրոցական բաղադրիչ առարկաներին հատկացված ժամաքանակում:

Բարեփոխումների այս փուլում հույժ կարևոր պահանջներից մեկը կրթական ծրագրերի, դասագրքերի կատարելագործումն է: Այս ուսումնական տարում ավագ դպրոցի նոր դասագրքերն ստեղծվում են կրթական պահանջներին ու նոր ծրագրերին համապատասխան: Բնագիտական (մաթեմատիկա, մաթեմատիկական անալիզի տարրեր, երկրաչափություն, բնագիտություն, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն), հումանիտար (համաշխարհային պատմություն, ընդհանուր պատմություն, հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, իրավունք) հոսքերի դասագրքերն ու ծրագրերը հրատարկվել են 2009-2010 ուս.տա-

ռում՝ պետբյուջեի միջոցներով: Այսպիսով, 2008-2009 ուս.տարում վերահրատարակվել են ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագրքերը, 2010 թվականին՝ 11-րդ դասարանի, 2010-2011 ուս.տարում՝ 12-րդ դասարանի դասագրքերը, համապատասխանաբար նաև ուսումնական ծրագրերը: Ինչպես նշել է ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը՝ 2010-2011 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (օգոստոսի 26-27-ին) ունեցած իր ելույթում, դասագրքաստեղծման այս ծրագրերն, ըստ էության, նորություն են մեր իրականության մեջ, հատկապես հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցի համար ստեղծվող դասագրքերը: Ի դեպ, նշենք, որ տպագրվող բոլոր դասագրքերը, ծրագրերը հաստատված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից և նախատեսված են որպես հիմնական դասագրքեր հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանների և ավագ դպրոցների համար:

Դիտարկումները ցույց են տվել, որ նախկին դասագրքերի համեմատ (2001-2009թթ.) հոսքային ուսուցմամբ դասագրքերը տարբեր են: Օրինակ, հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր առարկայի դասագրքերից մեկը նախատեսված է ընդհանուր և հումանիտար հոսքերի համար, դրանով սովորել են նաև բոլոր տասներորդցիները, իսկ մյուսը նախատեսված է բնագիտական և մաթեմատիկական հոսքերի համար: Հասկանալի է, որ դրանք տարբեր են իրենց բովանդակությամբ, մոտեցմամբ և առաջադրանքների բարդությամբ: Ինչպես մատնանշում է դասագրքերի շրջանառության հիմնադրամի փոխտնօրեն Գարեգին Գարեգինյանը «Լուսարար» թերթի 2009թ. թիվ 19-ում տված հարցազրույցում, 12-ամյա կրթության համար 2009-2010 ուս.տարում կհրատարակվի ընդհանուր թվով 65 անուն դասագիրք, 12-ը՝ ավագ դպրոցների համար, մնացածը՝ հիմնական դպրոցների համար: 2010-2011 ուս.տարում համարյա ավարտվել է հիմնական և ավագ դպրոցների դասագրքերի և նոր ուսումնական պլանների հրատարակումը: Կարելի է ասել, որ 12-ամյա կրթության օրինակելի նոր ուսումնական պլանները վերանայված հրատարակվել են 2012-2013 ուս.տարում, իսկ ավագ դպրոցի նոր դասագրքերի փաթեթը ամբողջական համալրվել է 2014-2015 ուս.տարում:

Ստորև ներկայացնում ենք հիմնական և ավագ դպրոցների ուսումնական պլանները՝ ըստ ուսումնական տարիների:

Աղյուսակ 25

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ 2011-2012 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ 10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլան. 10-րդ դասարան[177]

Առարկայախումբ	Առարկա	X
Հոսքային բաղադրիչ-1		
Խորացված ուսուցմամբ առարկաներ*	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)-1	7
	Ֆիզիկա-1	4
	Քիմիա-1	4
	Կենսաբանություն-1	4
	Աշխարհագրություն-1	3
	Օտար լեզու-1	3

Հոսքային բաղադրիչ-2		
Հարակից առարկաներ	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	4
	Ինֆորմատիկա	1
	Բնագիտական առարկա**	2
	Բնագիտական առարկա**	1.5
	Բնագիտական առարկա**	1.5
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ		
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2
	Հայ գրականություն	2
	Հայոց պատմություն	2
	Համաշխ. պատմություն	2
	Հասարակագիտություն	2
	Ռուսաց լեզու	2
	Օտար լեզու	2
	Ֆիզկուլտուրա	3
	ՆԶՊ	1
Դպրոցական բաղադրիչ		
Ընտրովի առարկաներ, դասընթացներ		-
Ընդամենը		34
Նախասիրական		2

Ծանոթություն

* Որպես խորացված ուսուցման առարկաներ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա:

** Բնագիտական առարկաներ են համարվում ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը և աշխարհագրությունը:

Աղյուսակ 26

Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլան (10-րդ դասարան)

Առարկայախումբ	Առարկա	X
Հոսքային բաղադրիչ-1		
Խորացված ուսուցմամբ առարկաներ*	Հայոց լեզու-1	2
	Հայ գրականություն-1	3
	Հայոց պատմություն-1	3
	Համաշխ. պատմություն-1	3
	Օտար լեզու-1	3
	Ռուսաց լեզու-1	3
	Աշխարհագրություն-1	3

Հոսքային բաղադրիչ-2		
Հարակից առարկաներ	Համաշխ. պատմություն	2
	Հասարակագիտություն	2
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ		
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3
	Հայոց պատմություն	2
	Ռուսաց լեզու	2
	Բնագիտական առարկա**	2
	Բնագիտական առարկա**	1.5
	Բնագիտական առարկա**	1.5
	Բնագիտական առարկա**	2
	Ինֆորմատիկա	1
	Ֆիզկուլտուրա	3
	ՆԶՊ	1
Դպրոցական բաղադրիչ		
Ընտրովի առարկաներ, դասընթացներ		-
Ընդամենը		34
Նախասիրական		2

Աղյուսակ 27

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ (10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը	
		X	XI
Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)-1	7	8
	Ֆիզիկա-1	4	5
	Քիմիա-1	4	5
	Կենսաբանություն-1	4	5
	Աշխարհագրություն-1	3	5
	Հայոց լեզու-1	2	2
	Օտար լեզու-1[3]	3	5

Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2
	Հայ գրականություն	2	2
	Հայոց պատմություն	2	2
	Հասարակագիտություն	2	1.5
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5
	Բնագիտական առարկա[2]	2	1
	Բնագիտական առարկա[2]	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	-
	Ինֆորմատիկա	1	1[4]
	Օտար լեզու-2[3]	2	2
	Օտար լեզու-3[3]	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1
	Դպրոցական բաղադրիչ	1	1
Ընդամենը		34	34

Ծանոթություն

1.Եթե սովորողը որպես խորացված ուսուցման առարկա ընտրում է մեկ բնագիտական առարկա, ապա 10-րդ դասարանում Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված մնացած բնագիտական առարկաներից մեկը, շաբաթական 2 ժամ, ուսումնասիրվում է բնագիտական հոսքի հարակից առարկաների ծրագրերով, իսկ մյուս երկու բնագիտական առարկաները՝ այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում մեկ բնագիտական առարկայի խորացված ուսուցումը շարունակելու դեպքում մնացած երկու բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է այդ առարկայի՝ բնագիտական հոսքի հարակից առարկայական ծրագրով, իսկ մյուսը՝ այդ առարկայի հումանիտար հոսքի ծրագրով:

2.Եթե սովորողը որպես խորացված ուսուցման առարկա ընտրում է երկու բնագիտական առարկա, ապա Ընդհանուր հանակրթական բաղադրիչում ընդգրկված բնագիտական առարկաներից մյուս երկուսը 10-րդ դասարանում ուսումնասիրվում է այդ առարկաների հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում երկու բնագիտական առարկաների խորացված ուսուցումը շարունակելու դեպքում մնացած մեկ բնագիտական առարկան ուսումնասիրվում է այդ առարկայի հումանիտար հոսքի ծրագրով:

3.Եթե սովորողը խորացված ուսուցման առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է այն առարկաները, որոնց ուսուցման համար ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչով նույնպես նախատեսված է որոշակի ժամաքանակ, ապա այդ ժամաքանակը տրվում է ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին (բացառությամբ Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում «Մաթեմատիկա» առարկայի ժամաքանակի, քանի որ այդ ժամաքանակը ներառված է «Մաթեմատիկա-1» առարկային հատկացված ժամաքանակում):

4.11-րդ դասարանում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրով:

Աղյուսակ 28

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ (10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը	
		X	XI
Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Հայոց լեզու-1	2	2
	Հայ գրականություն-1	3	4
	Հայոց պատմություն-1	3	5
	Համաշխ. պատմություն-1	3	5
	Օտար լեզու-1	3	5
	Ռուսաց լեզու-1	3	3
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2
	Հայ գրականություն	2	3
	Հայոց պատմություն	2	2
	Համաշխ. պատմություն	2	1
	Հասարակագիտություն	2	1.5
	Օտար լեզու	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1
	Ռուսաց լեզու	2	2
Ընդամենը		32	39.5

Աղյուսակ 29

Տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող ավագ դպրոցի (վարժարանի) 11-րդ դասարանի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	XI
Հայոց լեզու	2
Գրականություն	2
Ռուսաց լեզու	2
Օտար լեզու	2
Պատմություն	2
Պետություն և իրավունք	1
Հանրահաշիվ	2
Երկրաչափություն	2
Ֆիզիկա	2
Աստղագիտություն	1
Քիմիա	1

Կենսաբանություն	1
Ինֆորմատիկա	1
Ֆիզկուլտուրա	3*
ՆԶՊ	2
Հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակ	10
Ընդամենը	36
Նախասիրական	2

Ծանոթություն.

1.Տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող ավագ դպրոցը (վարժարանը) 10-րդ դասարանում ուսուցումը կազմակերպում է «12-ամյա ուսուցմամբ հանրակրթական ավագ դպրոցի օրինակելի ուսումնական պլաններով»:

2.Դպրոցը մանկավարժական խորհրդի որոշմամբ հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացված ժամաքանակը բաշխում է հոսքային ուսուցումն ապահովող առարկաների միջև, ինչպես նաև կարող է հատկացնել տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված և նախարարության կողմից երաշխավորված առարկաների ուսուցմանը:

3.Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակը տրամադրվում է մասնագիտական դասընթացներին: Արհեստագործական հոսքի մասնագիտական դասընթացների անվանումները ընտրում է ուսումնական հաստատությունը՝ նախարարության կողմից երաշխավորված մասնագիտությունների ցանկից:

4.Ուսպլանի նախասիրական պարապմունքներին տրամադրված ժամաքանակները ենթակա չեն ավելացման:

5.11-րդ դասարանի պարտադիր պետական առարկայացանկում ընդգրկված բոլոր առարկաների ուսուցումը կազմակերպվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության 10-րդ դասարանի առարկայական ծրագրերով ու դասագրքերով:

Աղյուսակ 30

Ռուսերենի խորացված ուսուցմամբ 1-9-րդ դասարանների ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7*	7*	8*	8*	7*	6*	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3*	2*	2*
Գրականություն	-	-	-	-	-	-	2*	3*	3*
Ռուսաց լեզու	-	4	4	4*	4	4	4	3.5	4
Օտար լեզու	-	-	2*	2*	2*	2*	2*	2*	2
Մաթեմատիկա	4*	4*	4*	4*	5*	5*	-	-	-
Երաժշտություն	2*	1*	1*	1*	1	-	-	-	-
Կերպարվեստ	2*	1*	1*	1*	1	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1*	1*	2*	-	-	-	-	-

Բնագիտություն	-	-	-	-	2*	2*	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1*	1*	2*	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2*
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1*	1*	1*	1*
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5*	1.5*	1.5*	1.5*
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1*	0.5*	0.5	0.5	0.5
Պատմություն	-	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1*	-	-	-	-
Պետություն և իրավունք	-	-	-	-	-	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1*	1*
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3*	3*	3*
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2*	2*	2*
Գծագրություն	-	-	-	-	-	-	-	-	1
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1*	1*	1*	1*
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2*	2*	2*
Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-
Քիմիա	-	-	-	-	-	-	1*	2*	2*
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2*	2*	2*
Տեխնոլոգիա	2*	2*	1*	1*	1*	1*	2	1	-
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1*	1*
Ֆիզկուլտուրա	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*	3*
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	3	3	0.5	1
Ընդամենը	20	23	25	27	29	31	34	34	35
Նախասիրական	-	-	-	-	-	-	-	2	2

Նշված դասաժամերի շրջանակում ուսուցումն իրականացվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության առարկայական ծրագրերով:

Ծանոթություն

1.6-9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ժամանակակից 0.5-ական ժամ հատկացվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային:

Աղյուսակ 31

Տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող ավագ դպրոցի (վարժարանի) 11-րդ դասարանի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	XI
Հայոց լեզու	2
Գրականություն	2
Ռուսաց լեզու	2

Օտար լեզու	2
Պատմություն	2
Պետություն և իրավունք	1
Հանրահաշիվ	2
Երկրաչափություն	2
Ֆիզիկա	2
Աստղագիտություն	1
Քիմիա	1
Կենսաբանություն	1
Ինֆորմատիկա	1
Ֆիզկուլտուրա	3*
ՆԶՊ	2
Հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակ	10
Ընդամենը	36
Նախասիրական	2

Ծանոթություն

1.Տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող ավագ դպրոցը (վարժարանը) 10-րդ դասարանում ուսուցումը կազմակերպում է «12-ամյա ուսուցմամբ հանրակրթական ավագ դպրոցի օրինակելի ուսումնական պլաններով»:

2.Դպրոցը մանկավարժական խորհրդի որոշմամբ հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացված ժամաքանակը բաշխում է հոսքային ուսուցումն ապահովող առարկաների միջև, ինչպես նաև կարող է հատկացնել տվյալ դասարանի առարկայացանկով նախատեսված և նախարարության կողմից երաշխավորված առարկաների ուսուցմանը:

3.Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի հոսքային ուսուցման կազմակերպմանը հատկացվող ժամաքանակը տրամադրվում է մասնագիտական դասընթացներին: Արհեստագործական հոսքի մասնագիտական դասընթացների անվանումները ընտրում է ուսումնական հաստատությունը՝ նախարարության կողմից երաշխավորված մասնագիտությունների ցանկից:

4.Ուսպլանի նախասիրական պարապմունքներին տրամադրված ժամաքանակները ենթակա չեն ավելացման:

5.11-րդ դասարանի պարտադիր պետական առարկայացանկում ընդգրկված բոլոր առարկաների ուսուցումը կազմակերպվում է 11-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության 10-րդ դասարանի առարկայական ծրագրերով ու դասագրքերով:

Վերոնշյալ աղյուսակների վերլուծությունից պարզվում է, որ 2011-2012 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (12-ամյա ուսուցմամբ հանրակրթական դպրոցի) սահմանում են ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ ընդհանուր և տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ու տարեկան ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների (հոսքային, ընդհանուր հանրակրթական, դպրոցական, նախասիրական) և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

Այսպես, օրինակ, ավագ դպրոցի ընդհանուր հոսքի 10-րդ դասարանի ուսում-

նական պլանը տրված է «Միջնակարգ հանրակրթական դպրոցի ուսումնական պլանում» (տե՛ս՝ աղյուսակ 16), հումանիտար հոսքի ուսումնական պլանը՝ աղյուսակ 21-ում, իսկ բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլանը՝ աղյուսակ 20-ում:

Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝ ա) հիմնական-բնագիտամաթեմատիկական, հումանիտար, արհեստագործական, բ) լրացուցիչ-արվեստի, մարզական, ռազմական, գ) ընդհանուր (տե՛ս՝ ծանոթություններ-պարզաբանումներ):

12-ամյա ուսուցմամբ հանրակրթական ավագ դպրոցի ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչները ապահովում են «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչով», առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացումը: Սովորողների պատրաստվածության մակարդակը ավագ դպրոցի ուսումնառության ավարտին (12-րդ դասարան) գնահատվում է պետական ավարտական քննություններով: Դպրոցում գործում է գնահատման 10 միավորային համակարգ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող են կիրառվել նաև գնահատման այլ համակարգեր, որոնք բերվում են 10-միավորային գրանցման: Որակավորման ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվում է գնահատման 10 կամ 20-միավորային համակարգ (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

Գործող ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով կրթության գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար նախարարությունը սահմանում է վեցօրյա ուսումնական շաբաթ 10-րդ և 11-րդ դասարանների համար, հիմնական դպրոցում նույնպես սահմանվում է վեցօրյա ուսումնական շաբաթ (հանգստյան օրը՝ կիրակի):

Այժմ ներկայացնենք վերոնշյալ օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը, տնօրինման կարգն ու բաղադրիչները.

Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.

Ընդհանոր և հոսքային (խորացված) ուսուցման օրինակելի ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական և նախասիրական բաղադրիչներից: Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի(ների) համար նախատեսված ժամաքանակներն՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:

Հոսքային բաղադրիչը կազմված է երկու ենթաբաղադրիչից՝ հոսքային բաղադրիչ-1 (խորացված ուսուցմամբ առարկաներ) և հոսքային բաղադրիչ-2 (հարակից առարկաներ): Հոսքային բաղադրիչներում ընդգրկված առարկաներն ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը:

Դպրոցական բաղադրիչը հոսքային ուսուցման դեպքում ընդգրկում է հետագա մասնագիտական կրթության նախապատրաստմանն ուղղված ընտրովի առարկաներ, դասընթացներ և յուրաքանչյուր առարկայի (դասընթացի) համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակներ: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով տվյալ հոսքի (ենթահոսքի) համար նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցը հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է ընդհանուր հանրակրթական և դպրոցական բաղադրիչներին:

Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հանրակրթական ավագ դպրոցը օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ, մշակում է յուրաքանչյուր հոսքի տվյալ ուս.տարվա ենթահոսքերի ուսումնական պլանները:

10-րդ դասարանում սովորողների շաբաթական ուսումնական պարտադիր նվազագույն բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

2.Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման կարգը

1.Ընդհանուր հոսքում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ դասարանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի մեջ մտնող առարկաներին, իսկ հոսքային ուսուցմամբ դասարաններում՝ նաև հոսքային ուսուցման առարկաներին:

2.Ավագ դպրոցի ընդհանուր և տարբերակված հոսքերի երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի մեջ են մտնում «Գրաբար», «Գրականագիտություն» (գրականության տեսություն), «Արտասահմանյան գրականություն», «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան), «Ճարտասանություն», «Ժամանակակից գրական գործընթաց», «Հայկական հարցի պատմություն», «Հայ մշակույթի պատմություն», «Հնագիտություն», «Հայաստանի պատմական աշխարհագրություն», «Ազգագրություն», «Հայաստանին հարակից երկրների պատմություն», «Կրոնի պատմություն», «Արվեստի պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Կիրառական տնտեսագիտություն», «Տրամաբանության հիմունքներ», «Թվային համակարգեր», «Երկրաչափության հիմունքներ», «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր», «Աստղագիտություն», «Ռադիոտեխնիկա», «Էկոլոգիա», «Կիրառական քիմիա», «Գիտական ճանաչողության հիմունքներ», «Բնական գիտությունները և մաթեմատիկան», «Բնագիտական մտքի պատմություն», «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում», «Տեխնոլոգիա» առարկաները:

Երաշխավորված լրացուցիչ առարկայացանկին, ուսուցման անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, ԿԳ նախարարության թույլտվությամբ դպրոցը կարող է ավելացնել նոր առարկա: Երաշխավորված առարկայացանկի առարկայական ծրագրերը գործածության են երաշխավորվում նախարարության կողմից:

3.Հանրակրթական ավագ ուսումնական հաստատության տնօրենը ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարում է մանկխորհրդի որոշմամբ՝ ելնելով նախարարության հանձնարարականներից, ինչպես նաև դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով ԿԳ նախարարության կողմից հանրակրթական հաստատությունների համար երաշխավորված և այլ ուսումնական գրականության ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման հա-

մար անհրաժեշտ այլ պայմաններից:

4.Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է դպրոցի ուսպլանում և դասացուցակում:

5.Եթե դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվել է ուսումնական պլանի պետական (ընդհանուր հանրակրթական) բաղադրիչում ընդգրկված առարկաներին, ապա դասարանը կիսելու հարցը կարգավորվում է «Հանրակրթական միջնակարգ դպրոցի ուսումնական պլանի պարզաբանմամբ» սահմանված կարգով:

Ինչպես նշել ենք նախորդ բաժնում, ազգային դպրոցի բարեփոխումների նոր փուլում (2009-2015թթ.) պահանջվում է իրականացնել 12-ամյա կրթության համակարգը, որի առավելությունն այն է, որ առանձնապես վերջին դասարաններում ավագ դպրոցում աշակերտները հնարավորություն կունենան ավելի նեղ մասնագիտացում ստանալ և բուհում ուսումը շարունակել ցանկացող աշակերտների համար ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն, ավելի խորությամբ կուսումնասիրվեն մասնագիտական առարկաները: 12-ամյա ուսուցման մեջ ներառվում են 10-11-12-րդ դասարանները: Դա մասնագիտական կողմնորոշման եռամյակ է: Նրանք, ովքեր պետք է սովորեն բուհում, ավագ դպրոցում, պետք է սովորեն մասնագիտական հումանիտար կամ բնագիտական թեքումով: Իսկ եթե երեխան չի ցանկանում ուսումը շարունակել բուհում, պետությունը նրան ևս պարտավոր է տրամադրել մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն: Եվ այստեղ առաջ է գալիս արհեստագործական ավագ դպրոցի ցանցի անհրաժեշտությունը, որն ավելի շատ պետք է հոգա տվյալ քաղաքի, շրջանի պահանջները: Փաստորեն կլինեն երեք կարգի դպրոցներ՝ արհեստագործական, հումանիտար և բնագիտական թեքումով:

Այսպիսին են հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ավագ դպրոցների 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները.

Աղյուսակ 32

Ավագ դպրոցի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-

Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	2	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1[1]	1[1]	1[1]	1[1]	1[1]	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	-
Ֆիզկուլտուրա	3	2	3	3	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	-	-	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	3	2	2	2.5	2.5	2.5	2.5	-	2	6.5
Ընդամենը	20	24	26	27	29	31	34	35	35	34	34	34

Ծանոթություն. *Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան N 1 հիմնական դպրոցում 3-րդ դասարանում «Շախմատ» առարկային հատկացնել 2 ժամ, ֆիզկուլտուրային՝ 2 ժամ և դպրոցական բաղադրիչին՝ 2 ժամ:*

Աղյուսակ 33

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԼԱՆ
(10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
Հոսքային բաղադրիչ				
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)-1	7	8	8
	Ֆիզիկա-1	4	5	8
	Քիմիա-1	4	5	8
	Կենսաբանություն-1	4	5	8
	Աշխարհագրություն-1	3	5	8
	Հայոց լեզու-1	2	2	3
	Օտար լեզու-1[3]	3	5	8

Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ				
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	4
	Բնագիտական առարկա[2]	2	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 34

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ (10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
Հոսքային բաղադրիչ				
Խորացված ուսուցմամբ առարկաներ[1]	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխ. պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1	3	3	3
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ				
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1[3]	1[3]	-
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա[2]	2	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	1	-
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 35

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ (10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
Հոսքային բաղադրիչ				
Մասնագիտական դասընթացներ[1]		9	13	16.5
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ				
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու-1	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա[2]	2	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ և անվտ. կենսագործ.	1	1	-
	Դպրոցական բաղադրիչ	-	-	-
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 36

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ 1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	7	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	4	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-

Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1^1	1^1	1^1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	3	3	3	3	3	3	3
Շախմատ	-	2	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	1	1	1	1.5	1.5	1.5	1.5
Ընդամենը	20	24	26	27	29	31	34	35	35

Աղյուսակ 37

ՌՈՒՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5

Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1^1	1^1	1^1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ և անվտ. կենսագ.	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	-
Ֆիզկուլտուրա	3	2	3	3	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	-	-	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	1	1	-	1.5	1.5	1.5	2	-	0.5	3.5
Ընդամենը	20	24	26	27	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 38

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ[178]

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց					Ավագ դպրոց		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1	1

Քիմիա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

Այժմ վերլուծաբար ներկայացնենք վերոնշյալ ուսումնական պլանների պարզաբանումները: Այսպես, հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններն ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող հաստատությունը, օրինակելի ուսումնական պլանների հիման վրա, դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ, հաստատում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական պլանը:

1.Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,

3) օրենքով սահմանված կարգով երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում,

4) օրենքով սահմանված կարգով երաշխավորված մանկավարժական գիտափորձ իրականացնելու համար:

2.Ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Ընդհանրական պարզաբանումներ»-ում,

2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

3.Ուսումնական պարապմունքները հաստատությունում սկսվում են 2012 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում՝ 2013 թվականի մայիսի 24-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից 12-րդ դասարանների համար:

4.Հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է հաստատությունը, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունում՝ հիմնադիրը: Հաստատությունը, յուրաքանչյուր կիսամյակը սկսելուց առաջ, առնվազն տասնհինգօրյա ժամկետում այդ հարցը համաձայնեցնում է նախարարության հետ:

5.Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է ուսումնական հաստատության պլանի հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

6.Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշիչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

7.Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10-միավորային համակարգ:

8.Ընթացիկ գնահատման ժամանակ կարող են կիրառվել նաև գնահատման այլ համակարգեր, որոնք բերվում են 10-միավորային գրանցման: Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման համակարգերը բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցմամբ:

9.Օրինակելի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցում (այուսհետ՝ Ավագ դպրոց) միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական), ընդհանուր հանրակրթական, դպրոցական և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

10.Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,

2) լրացուցիչ՝ արվեստի, մարզական, ռազմական,

3) ընդհանուր:

11.Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսումնական պլանները ըստ հոսքերի տրված են.

1) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-12 դասարանների ուսումնական պլան»-ում,

2) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում,

3) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում,

4) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (տես՝ Աղյուսակ 30):

12.Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2012 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2013 թվականի մայիսի 24-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ:

13.Պետական Ավագ դպրոցում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է Ավագ դպրոցը, իսկ ոչ պետական Ավագ դպրոցում՝ հիմնադիրը:

Ավագ դպրոցը կիսամյակը սկսելուց առնվազն 15 օր առաջ այդ հարցը համաձայնեցնում է նախարարության հետ:

14.Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշիչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովմանը և այլն:[179]

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերանայված ուսումնական պլանների հիման վրա Հայաստանում և Արցախում իրականացվել է ուսումնական ծրագրերի և նոր դասագրքերի հրատարակման և Ավագ դպրոցներին բաշխման ծրագիրը:

Ուսումնական ծրագրերի հարցը հանգամանորեն քննարկվեց 2012-2013 ուս.տարվա հունիսի 27-ին, ԼՂՀ ԿԳ նախարարության ընդլայնված խորհրդակցությունում, որին ներկա էր նաև ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը: Իր ելույթում ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը մատնանշեց, որ հանրակրթության ոլորտի խնդիրներից մեկն էլ հիմնական և Ավագ դպրոցների ուսումնական ծրագրերի գերհագեցվածությունն է:

Երեխաներին փորձում ենք ավելի շատ գիտելիքներ տալ, բայց իրականում այդ գիտելիքներն այնքան խրթին են ներկայացված և այնքան փոքր ժամաքանակով, որ մեծ խզում է առաջացել ծրագրերով ամրագրված ցանկությունների ու իրականության միջև: Ստացվում է, որ երեխայի մեջ փորձում ենք խցկել անխցկելին: Մանկավարժ-գիտնականների, հոգեբանների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ նրանք համարյա դեմ են դասաժամերի ավելանալուն, քանզի եղած դասաժամերի, վերակառուցման ծրագրերի, դասագրքերի բեռնաթափման, թեթևացման խնդիր կա: Գոնե միջին դպրոցում 5-րդից մինչև 9-րդ դասարան ԼՂՀ ԿԳ նախարարության առաջատար մասնագետները՝ համագործակցելով Հայաստանի ԿԳ նախարարության մասնագետների հետ, փորձում են նոր առարկաներ չմտցնել ուսումնական պլաններում, նոր ժամեր չավելացնել, ճիշտ հակառակը, նոսրացնել ծրագրերը, որպեսզի նյութի մարսելիության աստիճանը երեխաների մոտ բարձրանա: Կրթության բովանդակության վերանայման հիմնահարցերի քննարկման ժամանակ մասնագետների մեծ մասը անդրադառնում է ուսումնական ծրագրերի վերանայման և մատչելիության անհրաժեշտությանը:

Ավագ դպրոցի քառամյա փորձի վերլուծությունը ցույց է տվել, որ Ավագ դպրոցների ստեղծման քաղաքականությունն իրատեսական է: Անշուշտ, հանրակրթության ոլորտի բարեփոխումների հիմնախնդիր հանդիսացող՝ ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները դրական տեղաշարժ են արձանագրում:

Ավագ դպրոցների ուսման առաջադիմության և որակի բարձրացման ուղղությամբ ձեռքբերումները, թերություններն ու հիմնախնդիրները նշելու համար ներկայացնենք որոշակի վերլուծություն:

Ուսումնասիրությունների ժամանակ Ավագ դպրոցների ընդհանուր ցուցանիշները համեմատելով ընդհանուր հոսքի միջնակարգ դպրոցների շրջանավարտների ցուցաբերած արդյունքների հետ՝ նկատել ենք, որ Ավագ դպրոցների շրջանավարտների միասնական քննությունների արդյունքներն անառաջադեմ միավորների համեմատությամբ ցածր է 12 տոկոսով, միջակ միավորները (7-5-13-25), բարձր միավորները 4%-ով բարձր են, լավ միավորները (13-5-17, 25)՝ 4%-ով և գերազանց միավորները (17-5-20)՝ 5%-ով բարձր: Բարձր առաջադիմություն են ցուցաբերել ֆիզմաթ դպրոցը. անառաջադեմ միավորներ՝ 3%, լավ՝ 26%, գերազանց՝ 39%:

Ավագ դպրոցների սովորողների ուսման որակի և խորացված գիտելիքների ցուցանիշների վերլուծության համար ներկայացնենք առարկայական օլիմպիադաներում դպրոցականների ցուցաբերած արդյունքները:

Հանրապետական օլիմպիադայում մրցանակային տեղերը 51 աշակերտնե-

ից 21-ը գրավել են ավագ դպրոցների սովորողները, իսկ գովասանագրերի արժանացած 76 սովորողներից 34-ն Ավագ դպրոցների սովորողներ են, որը կազմում է համապատասխանաբար 41,2% և 44,7%, կամ միջինը՝ 43,3%: Եթե համեմատում ենք Ավագ դպրոցներում սովորողների ընդհանուր ընդգրկվածության հետ՝ 42,1%, ապա ստացվում է, որ ընդամենը 1,2%-ով են ցուցանիշներն ավել և գոհացնում են՝ հաշվի առնելով ավագ դպրոցի պոտենցիալ հնարավորությունները: Ըստ դպրոցների՝ լավագույն արդյունք են ցուցաբերել ֆիզմաթ դպրոցը՝ 9 մրցանակային տեղ, նաև գովասանագիր. մյուսները՝ 3-4 տեղ, 2-3 գովասանագիր:

Հիմնական և Ավագ դպրոցներում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, որակի բարձրացման և այլ հիմնահարցեր վերլուծաբար կներկայացվեն հաջորդ բաժնում:

2.2. Հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու որակի բարձրացումը բարեփոխումների պահանջներին համապատասխան

Անկախություն ձեռք բերելուց հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում վերակառուցումն ու նորացման ալիքն իրենց հորձանուտի մեջ են առել նաև դպրոցը՝ նրա ողջ գործունեությունը: Մեզանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տեղաշարժերն, անշուշտ, պահանջում էին կրթադաստիրակչական նոր փոփոխություններ: Կրթական ոլորտի բարեփոխումների ժամանակաշրջանում ազգային դպրոցը կոչված է դաստիարակելու հասարակության կարիքներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով, համամարդկային և ազգային արժեքներ կրող մարդ և քաղաքացի: Հետևաբար, ի տարբերություն նախորդ տասնամյակների, ազգային նոր դպրոցի կարևորագույն խնդիրն է մատաղ սերնդին տալ հայեցի կրթություն ու դաստիարակություն, խոր ու կայուն գիտելիքներ, նրանց մեջ մշակել հմտություններ ու պրակտիկայում դրանք կիրառելու կարողություններ, ձևավորել գիտական աշխարհայացք: Ինչպես նշել ենք սույն աշխատության առաջին գլխում, նախորդ տասնամյակներին (խորհրդային շրջանում) թեև կրթական համակարգը քաղաքականացված էր, այնուամենայնիվ, առավելությունները շատ-շատ էին, և երեխաների միջին կրթվածության մակարդակը բարձր էր: Ինչևէ, անկախացումից հետո հանրակրթության ոլորտում անհրաժեշտ էր կատարել փոփոխություններ՝ նախորդ համակարգում եղած դրականը պահպանելու սկզբունքից ելնելով, միաժամանակ ձերբազատվելով այն ամենից, ինչն արգելակում է հանրակրթական դպրոցի ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը:

Հայտնի է, որ ԼՂՀ անկախության առաջին տարիներին՝ պատերազմական իրավիճակի (1991-1994թթ.) և հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հետ կապված, հանրակրթության ոլորտում առաջացել են բազմաբնույթ հիմնախնդիրներ: Կրթության ճգնաժամային իրավիճակի գլխավոր պատճառներն են կրթական համակարգի անբավարար ֆինանսավորումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի անբարենպաստ պայմանները, դպրոցաշինության անմխիթար վիճակը (1991-1994թթ), դպրոցներն ապահովված չեն որակյալ մանկավարժական կադրերով (քանի որ մի մասը տեղափոխվել են տարբեր հանրապետություններ), վերաբնակեցված շրջաններնում ուսումնական պարապմունքների կազմակերպման համար ոչ հարմարավետ պայմանների առկայությունը և այլն: Այս ամենն իր բացասական ազդեցությունն է ունենում նաև հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպ-

ման վրա: Նշենք նաև, որ հատկապես բացասական ազդեցություն ունեցան կառավարության կողմից ընդունված սխալ որոշումները (1995-1998թթ)՝ հանրակրթական դպրոցների մտցնումը համայնքների գույքի ցանկը, ուսուցիչների սոցիալական վատթարագույն վիճակը, հաստիքային միավորների կրճատումը: Նշենք նաև, որ պատերազմի տարիներին չնայած կրթական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների անձնվեր աշխատանքին, այնուամենայնիվ, ուսումնական գործում լուրջ թերություններ առաջացան, որոնց հետևանքները գոյատևեցին երկար ժամանակ: Որո՞նք էին այդ դժվարությունները, որ պետք է հաղթահարվեին հետպատերազմյան տարիներին:

Ուսումնական աշխատանքի քիչ թե շատ կանոնավոր ընթացքի համար անհրաժեշտ էր պարապմունքները տանել գոնե երկու հերթով՝ նկուղային պայմաններում, քանի որ դպրոցների մեծ մասն ավերվել էր, իսկ բռնագաղթված դպրոցականների համար պետք է կազմակերպվեին ուսումնական պարապմունքներ: Եվ դրան հասնելու համար պահանջվում էին ոչ քիչ ջանքեր: Իսկ երկրորդ դժվարությունն այն էր, որ դպրոցական շենքերի վերանորոգման աշխատանքները բավականին դանդաղ էին կատարվում, քանի որ երկրի տնտեսության վերականգնման կարիքները շատ էին: Բացի այդ, դպրոցներում ուսուցման հաջողությունն անմիջապես առնչվում էր ուսումնանյութական բազայի առկայության հետ: Այստեղ նույնպես խոչընդոտներն իրենց զգացնել տվին: Լաբորատոր, ուսումնաօժանդակ այլ սարքավորումների մատակարարման գործը դժվարությամբ էր հունի մեջ մտնում:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, պատերազմից հետո մի քանի տարիների ընթացքում հանրակրթական դպրոցի ուսուցչական կազմը մեծ փոփոխության ենթարկվեց: Երկար ժամանակ մանկավարժական գործունեությունն ընդհատած ուսուցիչների հետ անհրաժեշտ եղավ լուրջ աշխատանք տանել՝ նրանց մասնագիտական ու մեթոդական գիտելիքները թարմացնելու և լրացնելու համար:

Կար ևս մի դժվարություն. մի կողմից՝ ծնողների զբաղվածությունն աշխատանքում, մյուս կողմից՝ տնտեսական, կենցաղային գործերին դպրոցում սովորողների չափից ավելի մասնակցությունը թուլացրել էին նրանց հետաքրքրությունն ու մղումը ուսման նկատմամբ: Այդ երևույթի հաղթահարումը չափազանց կարևոր էր կրթական հաստատությունների հետագա զարգացման համար: Ահա այսպիսի պայմաններում սկսվեց հանրակրթական դպրոցների ուսումնական գործունեությունը հետպատերազմյան շրջանում: Ուրեմն, հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքների արդյունավետ և նպատակասլաց կազմակերպումն ամենից առաջ պայմանավորված էր այդ դժվարությունների հաղթահարման հետ:

Ուշագրավ է նշել այն իրական փաստը, որ հետպատերազմյան շրջանում հանրակրթական դպրոցի վաստակաշատ մանկավարժների (Վ. Աղաբեկյան, Ռ. Բաղդասարյան, Ս. Խաչյան, Խ. Բաղդասարյան, Խ. Ղազարյան, Վ. Անտոնյան, Լ. Հարությունյան, Լ. Մարտիրոսյան, Լ. Թումանյան և ուրիշներ) բեղմնավոր գործունեության շնորհիվ հաղթահարվում էին պատերազմի տարիներին ուսումնական աշխատանքի համակարգում տեղ գտած թերությունները և արմատական փոփոխություններ կատարվում ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների մեջ:

Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների առաջին փուլում (1998-2002թթ.) դպրոցականների ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու որակի բարձրացումը դարձել են վերակառուցվող դպ-

րոցի հրատապ հիմնախնդիր: Դպրոցի առաջ դրվել են նոր պահանջներ՝ ուսուցման որակի բարելավումը:

Դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժները, որոնք ունեն դասն արդյունավետ կազմակերպելու ուսանելի փորձ, արդեն գիտակցում են, որ բարեփոխվող դպրոցի պահանջներին համահունչ, ուսուցման ավանդական ձևերով այլևս անհնար է հասնել ցանկալի արդյունքի, սակայն նորի կիրառումն էլ պետք է նպատակային լինի. ըստ այդմ էլ դա կախված է ուսուցչի ստեղծագործական, որոնողական, հետազոտական աշխատանքից: Ուրեմն, վերակառուցվող դպրոցի պահանջներին համահունչ անհրաժեշտ էր, որ ուսուցիչները վերանայեն իրենց ուսումնական գործունեությունը և ամենօրյա աշխատանքը կազմակերպեն կառուցողական մեթոդներով: Կոնկրետ խնդիրներ լուծելու համար երեխաներին պետք է սովորեցնել օգտվել ձեռք բերած գիտելիքներից, կարողություններից, անձնային որակներից, կենսափորձից: Այսինքն՝ ուսուցիչներն ուսուցման տեղեկատվական մեթոդներից պետք է անցում կատարեն դեպի ակտիվ ստեղծագործական գործունեություն:

Ժամանակակից կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը չի նշանակում դասավանդման ավանդական մեթոդների վերացում: Դրանք կդառնան ամբողջի մի բաղկացուցիչ: Մանկավարժական տեխնոլոգիան մեթոդների ու մեթոդական հնարների, ուսումնական գործունեության կազմակերպման ձևերի ու եղանակների ամբողջությունն է, որը հենվում է տեսական գիտելիքների վրա և ապահովում պլանավորված արդյունքները:

Պրակտիկ փորձը ցույց է տալիս, որ ուսուցիչն այսօր դժվարությամբ է հաղթահարում դասերի անցկացման՝ տարիներով փորձված կարծրատիպերը: Նա մշտապես մեծ ցանկություն ունի մոտենալու աշակերտին, ուղղելու նրա սխալները, հուշելու պատրաստի պատասխանը: Այս նույն խնդրին բախվում են նաև աշակերտները. նրանց համար անսովոր է ուսուցչին տեսնել օգնականի, ճանաչողական գործունեության կազմակերպչի դերում: Կրթության ժամանակակից համակարգն ուսուցչին հնարավորություն է ընձեռում նորարարական բազմաթիվ մեթոդների մեջ ընտրել «իրենը» և հետադարձ հայացք ձգել սեփական աշխատանքի փորձին: Ժամանակակից դաս վարելու համար անհրաժեշտ է նորովի իմաստավորել սեփական դիրքորոշումը՝ պարզելով, թե ինչու են անհրաժեշտ փոփոխությունները, և որ ամենակարևորն է՝ «Ինչպես փոխես ինքդ քեզ»:

Չափորոշիչային պահանջների իրագործման նպատակով ուսուցիչը ստեղծում է ուսումնական իրավիճակներ, որտեղ երեխաներն ուսումնական գործունեություն են ծավալում: Դրանց միջոցով նա կարողանում է ուսումնական խնդիրները լուծել ուսումնական այնպիսի իրավիճակներում, երբ աշակերտներն ուսուցչի օգնությամբ դիտարկում են ուսումնասիրվող նյութը, հետազոտելով այն, կատարելով զանազան գործողություններ: Վերլուծում են, վերափոխում, վերաձևակերպում, օգտվում տեղեկատվական աղբյուրներից, խմբավորում, դասակարգում ստացված արդյունքները և այլն: Կատարելով այս ամենը՝ աշակերտները յուրացնում են տվյալ առարկային բնորոշ գործողություններ կատարելու կարողություններ, այսինքն առարկայական գիտելիքներից բացի ձեռք են բերում ճանաչողական և հաղորդակցման բանիմացություն:

Հանրակրթական դպրոցներում կատարած ուսումնասիրությունների և այլ նյութերի վերլուծությունների հիման վրա այժմ փորձենք ցույց տալ, թե կրթական համակարգի բարեփոխումների առաջին փուլում (1998-2002թթ.) դպրոցների տնօրենները, ուսուցիչները, առարկայական մեթոդմիավորումներն ինչպես են

նորովի պլանավորում ու արդյունավետ կազմակերպում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Հանրակրթական դպրոցում սովորողների ուսուցման, դաստիարակության պատասխանատու, բայց պատվաբեր խնդրի հաջող իրականացման գործում վճռական դերը պատկանում է դպրոցի տնօրենին և առարկայագետ ուսուցչին: Ուսուցիչը սովորողների ուսուցման ու դաստիարակության բազմանիստ գործընթացի հիմնական կենտրոնական կազմակերպիչն է: Դասական մանկավարժները ճիշտ են նկատել, որ ուսուցչի մանկավարժական գործունեությունը աշխատանքի ամենադժվար բնագավառներից մեկն է: Այն հաջողությամբ կատարելու համար, առարկան իմանալուց բացի, անհրաժեշտ է կատարելապես տիրապետել աճող սերնդի դաստիարակության տեսությանն ու ուսուցման մեթոդներին, սովորողների ուսումնական աշխատանքները ճիշտ պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու մանկավարժական հնարներին ու միջոցներին:

Այս իմաստով հայ մեծ մանկավարժ Ղ. Աղայանը իրավացիորեն մատնանշում է, որ դպրոցի կրթադաստիրակչական ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարը ուսուցիչն է, որը պետք է գիտակցական ու գիտական բնույթ տա իր աշխատանքին, լինի նախաձեռնող ու ստեղծագործող, խելամտորեն պլանավորի ու արդյունավետ կազմակերպի սովորողների ուսումնական աշխատանքները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի ռեալ հնարավորությունները:

Ուսումնական աշխատանքն այնքան բարդ է, որ ուսուցչից, նույնիսկ ամենափորձված ուսուցչից պահանջում է որոշակի ուժերի գործադրում՝ կազմակերպելու ուսումնական ողջ գործընթացը, հատկապես սովորողնորի ակտիվությունն ու եռանդը, հաղթահարելու ուսուցման դժվարությունները: Այստեղ կարևորում ենք նաև դպրոցի տնօրենի համագործակցությունը մանկավարժական կոլեկտիվի հետ:

Հանրահայտ ճշմարտություն է, որ ուսումնական աշխատանքը դպրոցում արդյունավետ է անցկացվում այն դեպքում, երբ տնօրինության և ուսուցիչների կողմից խելացիորեն է կազմակերպված, իսկ դա պայմանավորված է կոլեկտիվի ստեղծագործական աշխատանքով:

Դպրոցների պրակտիկ փորձի ուսումնասիրումը ցույց է տվել, որ սովորողների ուսումնական աշխատանքները պլանավորվում ու արդյունավետ կազմակերպվում է երեք ուղղությամբ՝ ա) դպրոցի տնօրինության կողմից, բ) ուսուցիչների, գ) առարկայական մեթոդմիավորումների ղեկավարների կողմից, իհարկե, համագործակցելով իրար հետ:

Դպրոցի տնօրենի ախատանքային պլանը կոլեկտիվի գործունեության կառավարման հիմնական միջոցն է: Ուսումնադաստիարակչական գործընթացի հաջողությունները, անշուշտ, կախված են առաջադրված խնդիրների, հեռանկարների, կոլեկտիվի անդամների միջև բաշխված պարտականությունների և աշխատանքների պլանավորումից: Այսինքն, ներդպրոցական կառավարման յուրաքանչյուր օղակ (տնօրինություն), դասվարների, դասղեկների մեթոդմիավորումներ, առարկայական մեթոդմիավորումներ իրենց աշխատանքային օրինակելի պլանում նշում են դպրոցի նպատակները, խնդիրները և հիմնավորում, թե ուսումնական տարում ինչ կրթական դաստիարակչական հարցեր են լուծվելու, ինչ արդյունքների է ձգտում դպրոցը, և որոշում դրանց հասնելու պայմանները: Տնօրինության կողմից մշակված ուսումնական աշխատանքների օրինակելի պլանը քննարկվում է մանկավարժական խորհրդում, համաձայնեցվում կոլեկտիվի հետ և համապատասխանեցվում ԿԳ նախարարության ընդունած կանոնակարգի, դպրոցական կանոնադրությունների պահանջներին:

Ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք, որ հանրապետության դպրոցների տնօրենների (նկատի ունենք Մարտակերտի թիվ 1, 2, Առաջածորի, Հաթերքի, Կուսապատի, Ասկերանի թիվ 1, Նորագյուղի, Բադարայի, Այգեստանի, Խաչենի, Խնածախի, Մարտունու թիվ 1, Ճարտարի (Ղուզե, Գյունե), Թաղավարդի, Սոսի, Գիշու, Հադրութի թիվ 1, Մեծ Թաղերի, Տումու, Ազոխի, Շուշիի թիվ 1, 2, Բերձորի 1, Կովսականի, Ստեփանակերտի թիվ 1, 2, 7, 8, 10, 11 և այլ դպրոցների) կողմից մշակված աշխատանքային պլանում (կիսամյակային և ընդհանուր) ընդգրկված են հետևյալ հիմնական հարցերը.

-դպրոցի կոնկրետ խնդիրների առանձնացումը,

-ուսումնական աշխատանքների կազմակերպման գործընթացում առկա դժվարությունների բացահայտում, որոնց վրա տարվա ընթացքում ուշադրություն դարձնել,

-մանկավարժական կոլեկտիվի համախմբում, որը նպատակաուղղված լինի ուսման որակի բարձրացմանը,

-ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը դպրոցում,

-նորամուծությունների փորձարկման և ներդրման աշխատանքների կազմակերպումը,

-արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը,

-աշխատանք մանկավարժական կադրերի հետ, կատարված աշխատանքի գնահատում և համապատասխանեցում նրա մասնագիտական հնարավորությունների հետ,

-ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

Դպրոցում կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմք ընդունելով դպրոցի տնօրենի աշխատանքային պլանի դրույթները, յուրաքանչյուր ուսուցիչ (դասվար, դասղեկ, մեթոդմիավորման հանձնաժողովի նախագահ) իր համար կազմում է աշակերտների ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման պլան (շաբաթական, կիսամյակային և ուսումնական տարվա), որով և առաջնորդվում է:

Օրինակելի աշխատանքային պլանում նախատեսվում է նաև դպրոցական բազմազան միջոցառումների անցկացում, հաշվի առնելով աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների և դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցումը:

Այժմ կոնկրետ օրինակներով ցույց տանք լավագույն դպրոցների ուսուցիչների կողմից սովորողների ուսումնական աշխատանքների կազմակերպման նախապատրաստումը, անցկացումը և վերլուծումը:

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անվան թիվ 2 դպրոցի տնօրեն Լ. Մարտիրոսյանի խորհրդով մենք ուսումնասիրել ենք լավագույն ուսուցիչներ Ս. Մելքումյանի (1-ին դասարան), Ա. Մելքումյանի (2-րդ դասարան), Զոյա Խաչատրյանի (3-րդ դասարան), Ն. Գաբրիելյանի (3-րդ դասարան), Կ. Իշխանյանի (հայոց լեզվի և գրականության ուսուցիչ) փորձը սովորողների ուսումնական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ: Ի դեպ, նշենք, որ նմանատիպ ուսումնասիրություններ կատարել ենք նաև Մարտակերտի թիվ 1, 2, Կուսապատի, Ասկերանի թիվ 1, Շուշիի թիվ 1, 2 և Շոշ գյուղի միջնակարգ դպրոցներում:[180]

Ծանոթանալով նրանց աշխատանքային պլանին, նկատել ենք, որ ուսուցիչները սովորողների ուսումնական աշխատանքի կազմակերպումը բաժանում են

երկու փուլերի՝ նախապատրաստական և կատարողական (իրագործման):

Նախապատրաստական փուլում կրթական բարեփոխումների պահանջներին և սովորողների ուսումնական հնարավորություններին համապատասխան նրանք սովորողների ուսումնական աշխատանքները պլանավորում են ծրագրային պահանջներին համապատասխան:

1.Ծանոթացում ուսումնական ծրագրերին, ուսումնական ձեռնարկներին, դասագրքերին, մեթոդական գրականությանը: Ուսուցիչն ըստ ամենայնի ուսումնասիրում է դրանց պահանջները, ժամանակակից մանկավարժական, հոգեբանական նորույթները, առաջավոր ուսուցիչների փորձը: Ծանոթանում է նաև մեթոդական ամսագրերում հրապարակված թեմատիկ պլանավորումներին, ապա ըստ դասարանների որոշում դասի տեղը թեմատիկ պլանում: Ելնելով թեմատիկ պլանից՝ ուսուցիչը կազմում է օրացուցային պլան՝ ծրագրային նյութերը բաշխելով կիսամյակի, ուսումնական քառորդների, շաբաթների վրա, նշում դրանց իրացման ժամկետները:

2.Ժամանակակից դիդակտիկայի պահանջների, նորագույն նվաճումների, կրթական համակարգի բարեփոխումների պահանջների, սովորողների ռեալ ուսումնական հնարավորություններին համապատասխան ուսուցման առաջավոր մեթոդների, հնարների, միջոցների ընտրություն և ըստ այդմ՝ դասի խնդիրների պլանավորում:

3.Առանձին սովորողների հետ անհատական պարապմունքի կազմակերպում (անհատական առաջադրանքներ տալ այն սովորողներին, որոնց գիտելիքները կարիք ունեն լրացվելու անհատապես):

4. Տնային առաջադրանքի ձևակերպում և նրա կատարման հրահանգավորում:

Պարապմունքի համար անհրաժեշտ նյութերի և ուսումնական ձեռնարկների նախապատրաստում:

5. Ուսուցման անհրաժեշտ տեխնիկական միջոցների՝ դիտողական պարագաների, դիդակտիկ նյութերի նախապատրաստում, փորձերի, ցուցադրումների, դիաֆիլմերի դիտման նախնական անցկացում:

Աշակերտների ներգրավում կատարվելիք փորձերի, լաբորատոր աշխատանքների և ցուցադրումների նախապատրաստման, ամրապնդման, կրկնության ու տնային աշխատանքի համար վարժությունների նախնական կատարում, ժամանակի խելամիտ ծախսում դասին և տանը:

Նախապատրաստական կազմակերպման աշխատանքի ընթացքում ուսուցիչները որոշ շտկումներ են մտցնում ուսումնական աշխատանքի մշակած պլանում, մանրամասնում են այն, կամ հանում որոշ առաջադրանքներ, որոնք աշակերտներին կարող են դժվարություն հարուցել:

Կատարողական կամ իրագործման փուլում վերոնշյալ և ուրիշ ուսուցիչներ յուրաքանչյուր դասի սովորողների ուսումնական աշխատանքները կազմակերպելու համար կազմում են ամենօրյա դասերի, սովորողների ուսումնական աշխատանքների կազմակերպման պլան, որի մեջ արտահայտվում են հետևյալ տարրերը. դասի անցկացման օրը, ուսումնական հանձնարարությունների կատարման ժամկետը՝ ամիսը, թվականը, թեմատիկ պլանում եղած նրա համարը, դասարանը, դասի կազմակերպման ու անցկացման տեղը, թեմայի անունը, կրթական, դաստիարակչական զարգացման խնդիրները, դասի կառուցվածքի բաղադրամասերը, դասի իրար հաջորդող փուլերը, ըստ փուլերի ժամանակի բաշխումը, ուսումնական նյութի բովանդակությունը, ուսուցչի և աշակերտների աշխատանքի ձևերը (դասի յուրաքանչյուր փուլում), դասի կահավորման տարրերը,

գործադրվող տեխնիկական միջոցները, տնային ուսումնական աշխատանքների հանձնարարումը և այլն:

Իրագործման փուլում կարևոր նշանակություն ունի ուսուցչի կողմից նոր նյութի հաղորդումը: Այն սկսվում է հասկացության ձևակերպումով, նրա իմաստի բացահայտումով: Այնուհետև վերլուծաբար հաղորդվում է ուսումնական նյութի բովանդակությունը: Եթե անհրաժեշտ է, շարադրանքն ուղեկցվում է բացատրություններով, ցուցադրումներով, հաղորդվում են գիտական փաստեր, կատարվում են հիմնավորումներ: Հաղորդման ընթացքում ուսուցիչն առաջնորդվում է ուսուցման սկզբունքներով, գործադրում է համապատասխան մեթոդներ և հնարներ: Օգտագործվում են դիտազննական պարագաներ, տեխնիկական միջոցներ: Նոր նյութի հաղորդման ժամանակ ուսուցիչը առանձնակի ուշադրություն է դարձնում գլխավոր, առանցքային հարցերի վերլուծությանը: Իրագործման փուլում մեծ է նաև գիտելիքների ամրապնդման նշանակությունը: Դրա նպատակն է սովորողներին ավելի խոր յուրացնել տալ նոր նյութը: Ամրապնդման համար առանձնացվում են նյութի գլխավոր հարցերը, որոնք էլ քննարկվում են: Աշակերտներին հնարավորություն է ընձեռվում կրկնակի անգամ ընկալել և իմաստավորել շարադրված նյութը: Ամրապնդման համար գլխավոր ուղիներ կարող են լինել վերլուծությունները, ընդհանրացումները, հաղորդած նյութի վերարտադրումը, խնդիրների լուծումները և այլն:

Կասկած լինել չի կարող, որ դասի հաջողությունն ու արդյունավետությունը պայմանավորված են դասին ուսուցչի, ինչպես նաև աշակերտների նախապատրաստվելուց:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով մայրաքաղաքի Եղիշե Չարենցի անվան թիվ 7 դպրոցի վաստակաշատ մանկավարժների (Ն. Թամրազյանի, Վ. Խաչատրյանի, Ն. Ասրյանի, Ն. Հայրապետյանի և ուրիշների) ուսանելի փորձը, նկատել ենք, որ աշակերտների ուսումնական աշխատանքները պլանավորելիս հաշվի են առնում հետևյալ պահանջները.[181]

- աշակերտների ծանոթությունը առաջիկայում ուսումնասիրության ենթակա նյութերին,
- նույն նյութերին առնչվող լրացուցիչ գրականության ուսումնասիրությունը և կոնսպեկտավորումը,
- որոնումների կազմակերպում (դիտումներ աշխարհագրական հրապարակում, ուսումնափորձնական հողամասում և այլուր),
- փորձերի անցկացում լաբորատորիայում, ուսումնական կաբինետներում և արդյունքների ամփոփում,
- առաջիկայում տրվող տնային առաջադրանքների մասնակի կատարում և այլն:

Այդ ամենն, անշուշտ, հնարավորություն կընձեռի ավելի նպատակային և հիմնավոր դարձնել թեմայի յուրացումը աշակերտների կողմից, նրանց մեջ դասերի նկատմամբ կառաջացնի տրամադրվածություն և իմացական հետաքրքրություն:

Հայտնի է, որ դասը սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման միակ ձևը չէ: Կան ուսումնական աշխատանքի այլ ձևեր, որոնց մեջ տնային աշխատանքն ունի իր յուրահատուկ դերն ու առանձնահատկությունները:

Ապացուցված է, որ ամենահետաքրքիր բացատրված դասը չի կարող ապահովել խոր և կայուն գիտելիքներ և կարողություններ, եթե տանը երեխան չի յուրացրել ու ամրապնդել հաղորդված գիտելիքները: Իսկ յուրացման գործընթացը նկատի ունի անհատական աշխատանք, յուրահատուկ մոտեցում հաղորդված նյութի

նկատմամբ: Այս դեպքում երեխայի մոտ կարող է ձևավորվել ինքնուրույնությունը՝ որպես բնավորության կամային գիծ:

Որ տնային աշխատանքը համարվում է ուսումնական գործունեության ձև, ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ մաս, հայտնի էր անցյալի մանկավարժներին, որոնք կրկին անգամ հաստատել են տնային հանձնարարությունների դերի և նշանակության մասին:

Ուսումնասիրությունների ընթացքում տնօրենների (նկատի ունենք նշված դպրոցների (Լ. Մարտիրոսյան, Ա. Պողոսյան, Ռ. Դադայան), Կուսապատի (Ա. Խաչատրյան), Շուշիի թիվ 1 (Ն. Նալբանդյան) հետ ունեցած զրույցներից տեղեկացանք, որ որոշ ուսուցիչներ, ելնելով դասին աշակերտներին սովորեցնելու դիդակտիկական պահանջներից, նույնիսկ ժխտում են աշակերտներին տնային առաջադրանքներ տալու անհրաժեշտությունը: Իհարկե, նման տեսակետը անհիմն է, քանի որ, նախ, ծրագրային նյութի ուսումնասիրությունը չի կարելի սահմանափակել դասարանում աշխատանքով, հատկապես ավագ դպրոցական տարիքի աշակերտների հետ, և երկրորդ, տնային ուսումնական աշխատանքը մեծ նշանակություն ունի ինքնուրույն մտավոր աշխատանքի հմտությունների, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության զգացումի ձևավորման համար:

Սովորողների ուսումնական աշխատանքի խելացի ու ճիշտ կազմակերպումը, նրա հաջողությունը շատ բանով պայմանավորված է դասարանում ուսումնասիրվող նյութի խոր ու ամբողջական վերլուծմամբ, ընկալմամբ, մտապահմամբ, նրա գիտակցական յուրացմամբ: Ինչ խոսք, որ ամբողջությամբ չյուրացված, չմարսված նյութը անհրաժեշտ չափով չի տպավորվում, չի զարգացնում երեխայի մտածողությունը, ճանաչողական թույլ հնարավորություններ է տալիս ու զրկում նրան համակողմանիորեն դատելու, ինքնուրույն աշխատանքներ կատարելու հնարավորությունից: Որպեսզի տնային աշխատանքն ընթանա նորմալ ու նպատակասլաց, անհրաժեշտ է դասի նախապատրաստական փուլում ճիշտ պլանավորել՝ հաշվի առնելով աշակերտների ռեալ ուսումնական հնարավորությունները: Անհրաժեշտ է նաև յուրաքանչյուր սովորողի ընտելացնել ինքնուրույնությանը, դարձնել աշխատասեր և, որ ամենակարևորն է, սեփական ուժերի նկատմամբ ստեղծել վստահություն: Այդ նկատառումով էլ որպես մեթոդական խորհուրդներ, սույն աշխատության հեղինակները առաջարկում են, որ մանկավարժական փորձուսուցման ժամանակ ուսանողը, ապագա սկսնակ ուսուցիչը առաջնորդվի հետևյալ մանկավարժական պահանջներով.

1. Ուսումնական աշխատանքի համակարգված և նպատակասլաց կազմակերպում: Դասարանում ուսուցիչը ծրագրային նյութը շարադրում է պլանաչափ, համակարգված, պահպանում է փաստերի, երևույթների հաջորդականությունը, ներքին տրամաբանությունը, բացատրում, վերլուծում նյութը, կատարում համեմատություններ, հակադրություններ, անցկացնում զուգահեռներ, իր ասածը հիմնավորում փաստերով ու օրինակներով, լուսաբանում նյութի անհասկանալի կողմերը, պատասխանում առաջարկված հարցերին և զանազան այլ միջոցներով աշակերտների ուղեղում ուսուցվող թեմայի մասին ստեղծում ամբողջական պատկերացում:

Ուսումնական աշխատանքը պլանավորելիս ուսուցիչը հաշվի է առնում նաև աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, ընկալման, իմաստավորման, մտապահման և նյութի վերարտադրման կարողությունները և այլ պահանջներ:

2. Ուսումնական աշխատանքի հանձնարարումը չպետք է լինի դասարանում սովորածի սոսկ կրկնությունը, այն կորցնում է հետաքրքրությունը և աշակերտների շրջանում առաջ բերում անտարբերություն: Անցած նյութի համեմատությամբ տնային հանձնարարությունները պետք է որոշ նորություն լինեն և աշակերտներին լրացուցիչ գիտելիքներ, փաստեր ու տեղեկություններ հաղորդեն ուսուցվող թեմայի վերաբերյալ: Անշուշտ, դա հետաքրքրություն առաջ կբերի, կընդլայնի աշակերտների մտահորիզոնը: Օրինակ, տնային աշխատանքը պետք է հանձնարարել դասի հիմնական մասում, մինչդեռ որոշ ուսուցիչներ հատկացնում են դասի վերջին րոպեներին, երբ իրենց առջև դրված բոլոր հարցերը լուծված են համարում, և այն տրվում է առանց անհրաժեշտ բացատրության: Որոշ ուսուցիչներ, ավելորդ համարելով տնային հանձնարարությունները կամ խուսափելով սկզբնական շրջանում թվացող դժվարություններից, ուղղակի ոչինչ չեն հանձնարարում, լավագույն դեպքում զանգը հնչելուց հետո հայտարարում են խնդրի ու վարժության համարները՝ առանց հաշվի առնելու հանձնարարված աշխատանքի դժվարությունը:

3. Ուսումնական աշխատանքի հաջող կազմակերպման մյուս կարևոր պայմանն այն է, որ ուսուցիչը պետք է լավ մշակի, ընտրի այնպիսի հարցեր, խնդիրներ ու վարժություններ, որտեղ սովորողները կգտնեն իրենց հետաքրքրող «ինչու»-ների պատասխանները: Ուսուցիչը պետք է առարկայի դասավանդման ընթացքում սովորողներին հմտացնի տնային աշխատանքի նախատեսված եղանակներին, նրանց սովորեցնի ինքնուրույն մտածելու ձևերին: Նպատակահարմար է օրվա պլանի մեջ կրճատ գրանցումներով նշել անցումային տեղերը և դրանց մասին սովորողներին զգուշացնել՝ տալով որոշակի ցուցումներ:

Անհրաժեշտ է հետևել, որ յուրաքանչյուր աշակերտ աշխատի համակարգված, կանոնավոր կերպով, պահպանի դպրոցի հանձնարարած ռեժիմը, տնային աշխատանքները միշտ կատարի ինքնուրույն և խստորեն որոշված ժամանակին:

Ուսուցիչը պետք է միշտ ճշտորեն իմանա, թե ինչ դաս է տրված, երբ և ինչպես պիտի կատարի աշխատանքը:

Ուսուցիչը պետք է իր մշտական ուշադրության կենտրոնում պահի աշակերտներին, հատկապես նրանց, ովքեր շատ պասիվ են:

Ուսումնական առաջադրանքները հանձնարարել պարզ, մատչելի ձևով, երբեք չթողնել ոչ մի անհասկանալի, անորոշ բան աշակերտների համար: Նաև ուսուցիչը պետք է կոնկրետ ցուցումներ տա աշակերտներին տնային զանազան առաջադրանքների, աշխատանքի եղանակների մասին.

ա) ինչպես աշխատել դասագրքով,

բ) ինչպես գրի առնել տետրում,

գ) ինչպես կազմել կարդացած պլանը,

դ) ինչպես կատարել ծրագրի այս կամ այն մասի կրկնության աշխատանքը,

ե) ինչպես այս կամ այն նյութը սովորել բերանացի և այլն:

Տնային հանձնարարությունները պլանավորելիս ուսուցիչը պետք է զգուշություն հանդես բերի: Առաջին հերթին դրանք պետք է լինեն պարզ, հստակ, մատչելի և երեխաների ուժերին համապատասխան: Բարդացումը պետք է կատարվի աստիճանաբար, երեխաների համար աննկատ ձևով: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ուշ ընկալող, դանդաղ մտածող և ինքնուրույն աշխատանքներում դժվար կողմնորոշվող աշակերտներին:[182]

Ուսումնական աշխատանքները ոչ միայն պետք է նախապատրաստված ու կազմակերպված հանձնարարվեն, այլև բարեխղճորեն պետք է հետևել դրանց կա-

տարմանը և մշտապես ստուգել արդյունքները, որոշակի ժամկետներում գնահատել: Անտարբերությունը, անհետևողականությունը աշակերտի մեջ կարող են առաջ բերել անպատասխանատվություն: Ավելորդ չէ նշել նաև, որ անիմաստ, անտանելի հանձնարարություններով սովորողներին ծանրաբեռնելը նույնպես վտանգավոր է: Դա կարող է բացասական հետևանքներ ունենալ, հուսահատեցնել, ձանձրացնել աշակերտին և մատնել պասիվության: Պարտադիր չէ, որ ուսուցիչը յուրաքանչյուր դասի վերաբերյալ հանձնարարություն տա: Մանկավարժական հետազոտությունները պարզել են, որ սակավաթիվ հանձնարարություններն ավելի քիչ են վնասում նյութի յուրացմանը, քան աշակերտներին ծանրաբեռնելը:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը, մենք հանգել ենք այն եզրակացության, որ սովորողների ուսումնական աշխատանքների ոչ ճիշտ ծանրաբեռնվածության պատճառները խոչընդոտ են ստեղծում աշակերտների համար:

Իսկ որո՞նք են ծարաբեռնվածության այդ պատճառները: Դրանք են՝

-դասի ժամանակ սովորողների քիչ արդյունավետ մեքենայական աշխատանք,

-սովորողների ինքնուրույն և առանձնապես գրքով աշխատելու անկարողություն,

-սովորողներին ծանրաբեռնելը մեծածավալ վարժություններով, որոնք պահանջում են միայն ժամանակի մեծ կորուստներ և մեքենայական կատարում,

-հրահանգավորումն արհամարհելը և նրա ցածր որակը, որով պայմանավորվում է սովորողների անպատրաստ լինելը հաղթահարելու առաջադրանքների կատարման ժամանակ հանդիպող դժվարությունները,

-առաջադրանքների ծավալի անհավասարաչափ բաշխումն ըստ օրերի, առաջադրանքների յուրաքանչյուր տեսակի կատարման համար սովորողներին անհրաժեշտ ժամանակի վատ իմացումն ուսուցիչների կողմից,

-ուսուցչի վերահսկողության բացակայությունը և այլն:

Ուսումնասիրությունների ընթացքում մենք ուշադրություն ենք դարձրել ուսումնական աշխատանքների նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի ճանաչողական հետաքրքրությունը բացահայտելու խնդրի պարզաբանմանը: Այժմ կոնկրետ օրինակներով հանգամանորեն ցույց տանք մի քանի աշակերտների՝ տնային աշխատանքի վերաբերյալ իրենց օրագրերում գրառված տեղեկությունները:

Այսպես, օրինակ, թիվ 7 դպրոցի 4-րդ դասարանի աշակերտուհի Ա. Մինասյանը սիրում է սովորել, նա ցանկանում է ամեն ինչ իմանալ: «Ես դասերը սիրում եմ, որովհետև դասերի ժամանակ ուսուցչուհու կողմից միշտ հետաքրքիր բան է պատմվում: Եվ դաս սովորելն էլ հետաքրքիր է»,- գրում է նա իր օրագրում: Մեծ մասամբ տնային առաջադրանքները նա կատարում է ուսուցչի տված խորհրդով՝ դասերից հետո: Աշխատում է առանց ընդմիջման, մինչև բոլոր առաջադրանքները կատարելը: Միջին հաշվով դասերը պատրաստելու վրա ծախսում է մոտ երկու ժամ: Խորհրդածելով առաջադրանքի մասին՝ Ա. Մինասյանը լարված վերհիշում է այն բոլորը, ինչ պատմել է դասարանում ուսուցիչը, ինչ հաղորդել են ընկերները: Նրա պատասխանը դասարանում՝ ուսուցչի պատմածի և դասագրքի բովանդակության հաջորդ միացումն է՝ անցյալում ստացած տեղեկությունների ներգրավմամբ:

Այսպիսով, ուսումնական աշխատանքների կազմակերպման մեթոդիկան պետք է համապատասխանի մանկավարժական այն պահանջներին, որոնք ճանաչողական հետաքրքրություն կառաջացնեն առաջադրանքների կատարման նկատմամբ, և սովորողների մեջ կդաստիարակվի պատասխանատվության զգացում:

Մեր կարծիքով, այդ պահանջներն են՝

1. Ուսումնական առաջադրանքները հանձնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում դասարանում սովորողների գիտելիքների և կարողությունների յուրացման մակարդակը,

2. պետք է կարողանալ հաջորդաբար բացահայտել աշակերտի կողմից ուսումնական նյութը հասկանալու մակարդակները,

3. ուսումնական աշխատանքների արդյունքների ստուգման ու գնահատման համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր մակարդակի գիտելիքներ՝ ստեղծագործական տիպի աղյուսակների կազմում, վարժությունների, խնդիրների լուծում և այլն:

4. աշակերտներին մղել կատարելու գիտելիքների բարձր մակարդակ պահանջող առաջադրանքներ,

5. աշակերտների մեջ ձևավորել ճանաչողական, որոնողական աշխատանք կատարելու կարողություններ, ունակություններ, իսկ սովորողների ճանաչողական գործունեության գնահատումը պետք է ունենա և՛ կրթական, և՛ դաստիարակչական նշանակություն և այլն:

Աշակերտների ուսումնական աշխատանքները ստուգելիս ու գնահատելիս կարևոր նշանակություն ունի նաև ուսուցչի կողմից համապատասխան մանկավարժական պայմանների գործադրումը: Դրանք են՝

ա) ուսումնական առաջադրանքների ստուգման ու գնահատման անհատական բնույթը: Սա նշանակում է, որ ուսուցչի կողմից վերահսկողություն է սահմանվում յուրաքանչյուր աշակերտի ուսումնական գործունեության նկատմամբ,

բ) վերահսկողության համակարգվածությունը: Ուսուցիչը մշտապես պարբերաբար ստուգում ու գնահատում է աշակերտների կատարած աշխատանքները, բացահայտում թերությունները և տալիս համապատասխան ցուցումներ,

գ) վերահսկողության օբյեկտիվություն: Սա նշանակում է, որ ուսուցիչը աշակերտների կատարած առաջադրանքները ստուգելիս ու գնահատելիս հեռու է մնում սուբյեկտիվ դատողություններից, եզրակացություններից,

դ) վերահսկողության պահանջների միասնություն: Դա նշանակում է, որ ուսուցիչը սովորողների ուսումնական աշխատանքի նկատմամբ բոլոր աշակերտների աշխատանքները ստուգելիս ու գնահատելիս միասնական մոտեցում է դրսևորում, որը և աշակերտների մոտ ոգևորություն է առաջացնում, նրանց մղում աշխատանքն ավելի արդյունավետ կատարելուն:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է հետևություն անել, որ ուսուցիչների, հատկապես սկսնակների կողմից ճիշտ կազմակերպված ուսումնական աշխատանքն ընտելացնում է սովորողներին բարեխղճորեն ու բարձր պատասխանատվությամբ վերաբերվել իրենց պարտականությունների կատարմանը:

Ուսումնասիրելով ուսուցիչների աշխատանքային պլանները (պլան-կոնսպեկտները, թեզիսները, օրացուցային թեմատիկ պլանները, ծրագրային թեմաների հետ կապված ամսագրային, թերթերի անհրաժեշտ հոդվածների համառոտ վերլուծությունների տետրերը և այլ նյութեր), նկատել ենք, որ ուսուցիչներն իրենց մասնագիտական գիտելիքները հարստացնելու նպատակով օգտագործում են ժամանակակից գիտական տեղեկատվության հնարավորությունները և իրենց հարուստ գիտելիքները, համակողմանի զարգացվածությունը դարձնում սովորողների սեփականությունը, անընդհատ համալրում նրանց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Լավագույն ուսուցիչները չեն բավարարվում ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների պահանջներով, այլ

մշտապես հետևում են իրենց մասնագիտություններով հրապարակի վրա եղած գիտական գրականությանը, նորագույն նվաճումներին, անընդհատ որոնողական ստեղծագործական աշխատանք կատարում մասնագիտական որակի բարձրացման ուղղությամբ:

Յուրաքանչյուր ուսումնական տարում դպրոցների տնօրենները կազմում են ուսուցչական կադրերի ուսուցման պլանը՝ նրանց զարգացման միասնական ծրագրի շրջանակներում՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի մասնագետական մակարդակի փոփոխությունը: Ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման ուղղությամբ բավականին աշխատանք է տարվում դպրոցներում (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

Կրթական համակարգի բարեփոխումների երկրորդ փուլում (2002-2008թթ.) հանրակրթական դպրոցի ուսումնական պլանների ու ծրագրերի, դասագրքերի ուղղությամբ կատարված վերափոխումները պայմաններ ստեղծեցին վերակառուցելու նաև բուն ուսումնական աշխատանքի կազմակերպման ու մեթոդամանկավարժական ձևերն ու միջոցները: Հիմնականում մանկավարժական նոր որոնումներն ընթացել են ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերի, առաջավոր փորձի հայտնագործման և պրակտիկայում կիրառելու ուղղությամբ: Եվ այդ որոնումների ընթացքում դպրոցներում կուտակվել է բավականաչափ հարուստ ու հետաքրքիր փորձ: Ինչպես նշել ենք, պատերազմից հետո, չնայած առաջացած դժվարություններին, կրթական հաստատություններում մանկավարժական կադրերն իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին ուսուցման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը: Այդ եղանակով միայն նրանք հասան սովորողների բարձր առաջադիմության: Հարկ է նաև նշել, որ դպրոցների ուսումնական աշխատանքների վերակառուցումը պահանջում էր նոր աստիճանի վրա դնել սովորողների ուսման որակի բարձրացումը՝ ընտրած մասնագիտության մեջ նրանց խորանալու ձգտումը:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունը[183] վկայում են, որ կրթական համակարգի անցումային և կայունացման շրջափուլերում (1991-2002թթ.) պահպանվում են անհրաժեշտ որոշակիություն և միասնականություն ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման և կազմակերպման գործում, ինչպես նաև պահպանվում են դեռևս խորհրդային շրջանում պարզորոշ սահմանված ուսումնական տարվա, օրվա տևողությունը, պարապմունքների կազմակերպման ձևերը, արձակուրդների օրերի թիվը և այլն: Այդ հարցերը թողնված էին տեղական մարմինների հայեցողությանը: Ուսումնական տարվա սկիզբն ու տևողությունը առանձին շրջաններում որոշվում էին տվյալ շրջանի կլիմայական ու տնտեսական պայմաններով: Նշենք նաև, որ պատերազմական շրջանում դպրոցական շենքերի սակավության պատճառով դպրոցներում բազմահերթ պարապմունքներ էին տեղի ունենում, որոշ շրջաններում (Քաշաթաղում, Շահումյանում) պարապմունքները սկսում էին ոչ թե սեպտեմբերի 1-ին, այլ ուշ, ուսումնական տարին ավարտվում էր մայիսի վերջին կամ հունիսի 10-15-ին: Այդ բոլորը, անշուշտ, ուսման որակի վրա բացասական ազդեցություն էին թողնում:

Բարեփոխումների երկրորդ փուլում (2002-2008թթ.) ԼՂՀ ԿԳ նախարարության հաստատած կանոնակարգով 2002-2003 ուս.տարում հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են տարբեր ձևերով, որոնք նախկինի համեմատ զանազանվում են պարապմունքների ռեժիմով, սովորողների կազմով, արձակուրդներով, ուսուցիչների և սովորողների միջև եղած կապի ձևերով, ինչպես նաև նրանց գործունեության ընդհանուր բնույ-

թով ու առանձնահատկություններով:

ԼՂՀ ԿԳ նախարարության ընդունած (2002թ. մարտին) հանրակրթական դպրոցի նոր կանոնադրության համաձայն սահմանվում էին ուսումնական տարվա և օրվա տևողությունը, պարապմունքների կազմակերպման ձևերը, արձակուրդների օրերը և այլն:

Այսպես, օրինակ, միջնակարգ հանրակրթական դպրոցում դասի տևողությունը 45 րոպե է: Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ է հատկացվում լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

Ուսումնական տարվա ընթացքում 3-11-րդ դասարանների աշակերտներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային 2004-2005 ուս.տարում հոկտեմբերի 25-ից 31-ը ներառյալ, ձմեռային՝ 2006-2008թթ. դեկտեմբերի 27-ից 2011 թվականի հունվարի 9-ը ներառյալ, գարնանային՝ մարտի 21-ից 27-ը ներառյալ: Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տևում են հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 7-ը ներառյալ, ձմեռայինը՝ դեկտեմբերի 27-ից 2011 թվականի հունվարի 23-ը ներառյալ, իսկ գարնանայինը՝ մարտի 21-ից ապրիլի 3-ը ներառյալ: Երկրորդ դասարանցիների արձակուրդները տևում են 2010 թվականի հոկտեմբերի 25-ից 31-ը ներառյալ, դեկտեմբերի 27-ից 2011 թվականի հունվարի 23-ը ներառյալ և մարտի 21-ից 27-ը ներառյալ: Կրթության պետական կառավարման և տարածքային կառավարման լիազորված մարմինները իրենց ենթակայության տակ գտնվող հանրակրթական ուսումնական հաստատությունների համար վերևում սահմանված արձակուրդների ժամկետներում կարող են կատարել փոփոխություններ՝ նախապես համաձայնեցնելով նախարարության հետ:

Ըստ ԿԳ նախարարության հաստատած կանոնակարգի, 180 ժամ բացակայելու դեհքում, «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ տվյալ դասարանի ուսումնական պլանով նախատեսված հինգ առարկաներից անցկացվում են քննություններ, իսկ մյուս առարկաներից՝ ամփոփիչ ստուգողական աշխատանքներ (ֆիզկուլտուրա առարկայից նորմատիվների հանձնում): Քննությունների և ստուգողական աշխատանքների գնահատականները 2-11-րդ դասարանների համար համարվում են տարեկան գնահատականներ:

Որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում կիսամյակային գնահատականներ չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են սույն կետով նախատեսված քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների արդյունքում:

Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում, ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի հրամանով հաստատված կարգի:

Կանոնադրության համաձայն, հանրակրթական դպրոցում դասարանի միջին խտությունը սահմանվում է 25-30 սովորող, տարրական և միջին դպրոցի համար՝ 20-25 սովորող, ավագ խմբերում սովորողների խտությունը չի կարող գերազանցել 10-12-րդ դասարանների համար սահմանված առավելագույն թիվը՝ 30 սովորող:

Կրթական համակարգի բարեփոխումների այս շրջանում հանրակրթական դպ-

րոցներում նորարարություն էր նաև սովորողների առաջադիմության հաշվառումն ու նրանց ուսումնաճանաչողական գործունեության գնահատումը:

Նախ դիտարկենք սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգի անցման առանձնահատկությունները: Աշակերտների ձեռքբերումների գնահատումը միշտ էլ առանձնահատուկ տեղ է ունեցել ուսումնական գործընթացում: Ըստ այն հանգամանքի, թե կրթական գործընթացի արդյունքում աշակերտի ուսումնառությունից ստացված որ որակներն ու նվաճումներն են միավորով գնահատվում, ուսուցիչն ու աշակերտն առավելապես կենտրոնանում են հենց այդ պահանջները բավարարելու վրա: Անհրաժեշտ որակները սահմանվում են կրթակարգով, չափորոշիչով ու առարկայական ծրագրով: Վերջիններիս բովանդակությունը պայմանավորված է կրթությանը ներկայացվող պահանջների սահմանմամն պետական մոտեցումներով և ինտեգրման կրթատարածքով:

Ավանդական դպրոցն ապահովում էր միայն գիտելիքների յուրացումն ու մտապահումը: Այսօր արդեն այդ գիտելիքները վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների, որոնք միտված են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, ստեղծագործական ներուժի բացահայտմանը:

Ուսուցման և ուսումնառության գործընթացը ենթադրում է մշտական հետադարձ կապ, որը հնարավորություն կընձեռի առաջ գնալուց առաջ ստուգել, ճշտել, թե ինչպես և ինչ ճանապարհով որտեղ ենք հասել, ինչ քայլեր կարիք ունեն ճշտվելու, ճշգրտվելու, ինչում ենք հաջողության հասել և դեռ ինչ ունենք անելու, ինչպես և որ ուղղությամբ շարունակել ճանապարհը:

Այս դերը կրթության գործընթացում իրենց վրա են վերցնում ստուգումն ու գնահատումը, որի նպատակը միայն առարկայական գիտելիքների ու կարողությունների որոշակի արդյունքներ բացահայտելը չէ, այլ դրանց ձեռքբերման, ձևավորման ընթացքը: Գիտելիքների ստուգման և գնահատման հիմնախնդիրներն այսօր լուրջ քննարկումների ընթացքում են: Չէ՞ որ գնահատման արդյունքում են բացահայտվում ուսումնական գործընթացի որակը և արդյունքները, պարզվում սովորողների կողմից ծրագրային պահանջների կատարումը:

Ավանդական ուսուցման գործընթացում կարևորվում էր սովորողների յուրացրած տեղեկատվության պաշարը, և գնահատելն ավելի հեշտ էր: Ներկայիս գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և դրանց հիման վրա ուսման որակի վերահսկումն է, որը նպաստում է սովորողների ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը, ինչպես նաև արժեքային որակների բացահայտմանը, որոնց հիման վրա էլ բարելավվում և վերահսկվում է ուսման որակը, որը գնահատելու համար պետք է տեսնենք, թե ինչ, ինչպես, ում ենք սովորեցնում և ինչ է մնում մեր սովորեցրածից:

Գնահատման գործող համակարգը վերափոխման խիստ անհրաժեշտություն ունի, քանի որ չի նպաստում աշակերտների ճանաչողական կարողությունների, հմտությունների զարգացմանը, չի ապահովում ճշգրիտ տարբերակված գնահատում:

Նոր պահանջներով կազմակերպվող ժամանակակից դասերը հարուստ են փոխգործուն և համագործակցային մեթոդներով:

Բայց որքան էլ հարուստ ու բազմազան լինեն դասերը, միևնույն է, ուսուցիչը խանդավառվում է միայն այն ժամանակ, երբ համոզվում է, որ աշակերտների գիտելիքների ստուգման արդյունքում մեծ հաջողությունների է հասել:

Տարիների ընթացքում կուտակած սեփական փորձով եկել եմ (Գ. Հարությունյան) այն եզրահանգման, որ ուսումնական գործունեությունը ստուգելիս և գնա-

հատելիս այն պետք է համեմատել միայն սովորողի նախկին «հաջողությունների» հետ, այսինքն՝ տեսնել նրա սեփական աճը և ոչ թե համեմատել մյուսների հետ: Ստուգման և գնահատման նպատակն է բացահայտել աշակերտի սովորելու կարողությունները, ընդհանուր ընդունակությունների ձևավորումը ուսուցման տարբեր փուլերում՝ աշակերտներին ընդգրկելով իրենց աշխատանքները ստուգելու և գնահատելու գործում: Ինքնագնահատումը համարում եմ գնահատման ամենակարևոր տեսակը:

Ծրագրային նյութի յուրացման ընթացիկ գնահատումն ամենօրյա գործընթաց է ինչպես առանձին սովորողների, այնպես էլ սովորողների խմբի նկատմամբ: Այն ունի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, ուսումնառության դրդապատճառների (մոտիվացիայի) ձևավորման, ինքնաճանաչման, անհատական աշխատանքի ճշտգրտման գործառույթներ:

Ծրագրային նյութի յուրացման ստուգումը և առաջադիմության գնահատումն իրականացնում եմ ստուգման հետևյալ ձևերի կիրառմամբ կամ դրանց զուգորդմամբ.

Տնային աշխատանքի ստուգում

Կարճ ժամանակ պահանջող գրավոր աշխատանք

Բանավոր հարցում

Ծավալուն գրավոր աշխատանք

Թեստային աշխատանք

Ինքնուրույն աշխատանք

Գործնական աշխատանք

Խմբային աշխատանք:[184]

Ուսումնական գործընթացում գնահատում նշանակում է քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքում: Ուստի դա ավելի լայն ընդգրկում ունի, քան չափումը: Ուսուցիչների համար գնահատման նպատակը սովորաբար աշակերտների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է: Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է աշակերտների առջև ծառացած դժվարությունները, փորձում դրանք վերացնել և ապա կատարում յուրացման աստիճանի ստուգում: Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո, ելնելով սովորողների արդեն կուտակած գիտելիքներից, նա ընտրում է ուսուցումը շարունակելու ճիշտ ընթացքը:

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը: Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման ու կատարելագործման նպատակով օգտագործվում են միավորային (նիշային) և ուսուցանող (ոչ նիշային) գնահատման արդյունքները:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի

գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, ընթերցանության և այն հասկանալու որակը, կիսամյակային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Այսպիսով, գնահատումն ունի երկու գլխավոր նպատակ՝

ունենալ քանակական տվյալներ աշակերտի ձեռքբերումների մասին,

ուսումնական գործընթացում գնահատման միջոցով նպաստել սովորողի ձեռքբերումների ծավալի մեծացմանն ու որակի բարելավմանը:

Այդ նպատակներն իրագործելու համար կիրառվում են միավորային և ուսուցանող գնահատումներ:

Միավորային գնահատումը ենթադրում է աշակերտի ձեռքբերումների չափում: Ի տարբերություն ֆիզիկական չափման՝ այս դեպքն ունի առանձնահատկություն: Այստեղ գործ ունենք ոչ շոշափելի մեծության՝ «գլխում եղածը» չափելու հետ: Առաջանում է լուրջ խնդիր. ինչպե՞ս չափել և ինչքանո՞վ վստահ լինել, որ չափման արդյունքները հավաստի են: Կարելի է վստահաբար ասել միայն, որ նման չափման արդյունքները չեն կարող կատարյալ լինել: Մյուս կողմից՝ նման չափման անհրաժեշտությունը կա: Մնում է գտնել համեմատաբար հավաստի մեթոդաբանություն: Ոչ ֆիզիկական մեծությունը չափելու գլխավոր պայման է տարբեր տեսանկյուններից այն չափելու հնարավորություններ գտնելը: Չափման տարբեր միջոցներ ունենալը դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ է, որ դրանք լինեն իրագործելի և հավաստի:

Այս համատեքստում կարևոր է ընթացիկ գնահատումների կանոնակարգված և արդյունավետ համակարգ ունենալն ու այն ներդնելը, քանի որ ուսումնական ողջ գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմանը: Գնահատման համակարգի արդյունավետ լինելը կախված է այն բանից, թե որքանով են ճիշտ ընտրված հանրակրթության ոլորտում աշակերտների գիտելիքների, կարողությունների, տրամաբանական մտածողության և արժեքային համակարգի գնահատման ու արժևորման ժամանակակից ձևերը, ստուգման տեսակներն ու միջոցները: Համակարգի կիրառման ծավալները պայմանավորված են երկրի հնարավորություններով, ուսուցչի սոցիալական վիճակով, աշակերտի ձեռքբերումներին գնահատական տալու և արժևորելու ճշգրտությունը կարևորելու քաղաքացիական գիտակցությամբ:

Վերը նշված գնահատման նպատակներից առաջինի առումով մեր հանրապետությունում հանրակրթության ոլորտում ներկայումս գործող միավորային ընթացիկ գնահատման «բանավոր հարցում», «գործնական աշխատանք», «թեմատիկ գրավոր աշխատանք» և «կիսամյակային աշխատանք» ստուգման տեսակների միջոցով պարզվում է աշակերտի ձեռքբերումների քանակական արտահայտությունը:[185]

Միավորային գնահատման տեսակներից պակաս օբյեկտիվ կարող է լինել «բանավոր հարցումը»: Բանավոր հարցման օբյեկտիվացման ուղղությամբ մշակված են մեթոդներ՝ հատկապես լեզուների համար, որոնք մենք դեռևս քիչ ենք գործածում: Միավորային գնահատման գործող համակարգում բանավոր հարցման դերի նվազեցման նպատակով պակասեցվել են բանավոր հարցման պարտադիր նվազագույն քանակը և աշակերտի կիսամյակային գնահատականի վրա դրա ազդեցության չափը:

Միաժամանակ նշենք, որ դա բոլորովին չի նշանակում աշակերտի բանավոր խոսքի նվազեցում: Գնահատման նոր համակարգն ավելի մեծ հնարավորություն է ընձեռում աշակերտին՝ բանավոր արտահայտվելու, քան նախկինը: Այս դեպ-

քում բանավոր հարցումն արվում է հիմնականում ուսուցանելու, այլ ոչ միավորային գնահատման նպատակով: Այս մոտեցումն անհրաժեշտաբար պահանջում է դասապրոցեսի ավանդական կառուցվածքի փոփոխություն՝ ի նպաստ ուսուցման: Դասարանում ուսուցչի՝ որպես կառավարողի, դերը փերափոխվում է սովորողներին ուղղորդողի և օգնողի դերի: Դա կարելի է իրագործել հայտնի հարմար մեթոդներով:

Ուսուցանելն ու ուսումնառությունը բարելավելը գնահատման նոր համակարգի մյուս կարևոր նպատակն է: Այդ նպատակն իրագործելու համար նախատեսվում են աշխատանքներ, որոնց անվանում են ուսուցանող գնահատում կամ գնահատում՝ սովորելու համար:

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքն է, որի էությունը հնարավոր բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է: Ուսուցանող գնահատման նպատակներից են ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում աշակերտի թույլ տված թերըմբռնումների ու սխալների հայտնաբերումը, դրանց վերացումը, ինչպես նաև աշակերտի ձեռքբերումների և հնարավորությունների առկա ու ցանկալի վիճակների միջև ճեղքվածքի վրա ուշադրության սևեռումը:

Ուսուցանող գնահատման միջոցով ճշգրտվում են դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդը: Աշակերտին ըմբռնելի են դառնում ուսման նպատակները, շարունակաբար բացահայտվում է յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի կողմից ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը: Ստացված տվյալների հիմնա վրա մշակվում են գործողությունների հետագա քայլերը՝ ուսուցման և ուսումնառության գործընթացը բարելավելու համար:

Գնահատման այս ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապը: Մեկնաբանությունների և վերլուծությունների միջոցով այն պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների:

Ուսուցանող գնահատման կիրառումն ուսուցչից պահանջում է որակական աշխատանք կատարելու պատրաստակամություն:

Գնահատման նոր համակարգի մեկ այլ առանձնահատկություն է գործնական աշխատանքների նկատմամբ կանոնակարգված վերաբերմունքը:

Հանրակրթության ժամանակակից դերը պայմանավորված է նաև դրա գործնական-կիրառական նշանակությամբ: Ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ գնահատումը ուսուցման արդյունքների բացահայտման գործընթաց է. այն որոշում է կրթակարգով սահմանված պետական չափորոշիչի, դրա համաձայն կազմված առարկայական ու դպրոցական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի պահանջների կատարման մակարդակը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման մակարդակի ստուգումը, արժեքային որակների բացահայտումը և դրանց հիմնա վրա ուսումնական գործընթացի կատարելագործումն ու ուսուցման որակի վերահսկման ապահովումը:

Գնահատումը նպաստում է սովորողի ինքնահաստատմանը և ինքնակատարելագործմանը, բացահայտում է ուսուցման գործընթացում ձևավորված նոր

որակները, կարողություններն ու հմտությունները:

Այժմ պարզաբանենք, թե ինչպես է իրականացվել սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգը՝ գնահատման 10 միավորային համակարգը ԼՂՀ հանրակրթական դպրոցներում:

ԼՂՀ կրթության, գիտության նախարարության հրամանով 2008թ. նոյեմբերի 1-ից Արցախի հանրակրթական դպրոցներում անցում է կատարվում սովորողների գնահատման 10-միավորային սանդղակի:

Գնահատման 10-միավորային համակարգի անցման նպատակն է ավելի ճշգրիտ բացահայտել ու գնահատել սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, քանի որ նախկին 5-միավորային գնահատման համակարգը դրանք լիարժեք չէր ապահովում, ու նաև դա նախատեսված է ԼՂՀ կառավարության 2005թ. ընդունած «Սովորողների գնահատման հայեցակարգի և պետական կրթակարգի մասին» որոշման դրույթներով:[186]

Գիտելիքների գնահատման նոր համակարգին անցումը կատարվում է երեք փուլով: Առաջին փուլում՝ 2008-2009 ուս.տարում, կատարվում է, այսպես ասած, մեխանիկական անցում, այսինքն՝ գնահատումը կատարվելու է 10-միավորային սանդղակով: Ընդ որում, համապատասխան մեթոդական ցուցումներ, թե ուսուցիչներն ինչպես պետք է դա իրականացնեն: Դրանցում նշված են նաև առաջադրանքների տիպերը, թե ինչպիսի բարդություն պետք է պարունակեն և ըստ այդմ՝ ինչ միավորներով պետք է գնահատվեն: Առավելագույն միավորը, հասկանալի է, 10-ն է: Դա նշանակվում է միմիայն այն դեպքում, երբ առաջադրանքը լրիվությամբ կատարվել է, և սովորողները կարողանում են իրենց ստացած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները նաև կիրառել համապատասխան թեմայի շրջանակներում: Բոլոր տեսակի հարցումները, հատկապես հարցարանները, կազմված են այնպես, որ ապահովեն պետական կրթական չափորոշիչներով տվյալ առարկայի համար սահմանված նվազագույն պահանջները: Իսկ արդեն համապատասխան առաջադրանքների կատարումից ելնելով (օրինակ, եթե դրանք կատարված են լիարժեք, էական սխալներ չկան, բայց կան առանձին վրիպումներ և այլն) նշանակում է համապատասխանաբար 7, 8 միավոր, իսկ եթե, ասենք, առաջադրանքների մեջ չկան որոշակի սխալներ, բայց հիմնականում կատարված են, համապատասխանաբար 5,6 միավոր և այլն: Դրական են համարվում 4 և դրանից բարձր միավորները, իսկ 1, 2, 3 միավորները համարվում են անբավարար, 5 միավորային համակարգում բացասական էին համարվում «1-ը և 2»-ը: Փաստորեն ավելացել է նաև «3»-ը: Բացասականը՝ բացասական է, բայց դրանց մեջ էլ կան որոշ նրբություններ, չափանիշներով սահմանվում է, որ եթե աշակերտն ինչ-որ դրական քայլեր է արել, այսինքն՝ թեմայի յուրացման ուղղությամբ որոշ պահանջներ կատարել է, նրան 2 կամ 3 միավոր է նշանակվում (այսինքն՝ առաջընթացի միտում նկատվում է): Իսկ նվազագույն 1 միավորը, հասկանալի է, նշանակվում է, եթե նա ընդհանրապես ոչինչ չի կատարել:

Ըստ ընթացիկ և ամփոփիչ գնահատման մեթոդաբանության, պահանջվում է, որ յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ տվյալ առարկան դասավանդող ուսուցիչն ունենա երեխայի զարգացման ընդհանուր նկարագիրը, այսինքն՝ յուրաքանչյուր կիսամյակում աշակերտն ընթացիկ գնահատականների հետ միաժամանակ նաև ունենալու է այն չափորոշիչներին համապատասխան գնահատումները, որով երևալու է նրա առաջընթացը: Եվ այսպես, նաև տարիների համեմատության կարգով, այսինքն՝ ուսումնառության ողջ ժամանակաընթացքում, արդեն պարզ է լինելու աշակերտի գիտելիքների մակարդակը: Եվ դրանով էլ, բնա-

կանաբար, բնորոշվելու է ուսման որակը: Այսպես, տվյալ դասարանում աշակերտի ունեցած գիտելիքների մակարդակով բնութագրվելու է նաև ուսուցչի կողմից կատարված աշխատանքը: Հիշեցնենք, որ սա վերաբերում է միայն հանրակրթությանը, այսինքն՝ միայն դպրոցում իրականացվող գնահատմանը: Իսկ ավարտական և միասնական քննությունների ժամանակ կիրառվում է 80-միավորանոց համակարգ, որը համարժեքացվում է 20-միավորային համակարգին:

Սովորողների գիտելիքների գնահատման երկրորդ փուլում՝ 2009-2010 ուս.տարում, այս մեթոդաբանությունը կիրառվում է ավագ դպրոցում (11-րդ դասարանում), (2010-2011 ուս. տարում անցան ավագ դպրոցին): Այս փուլում արդեն կոնկրետ խնդիրներ են առաջադրվում. առարկայագետ ուսուցիչը պետք է ունենա երկու տեսակի մատյան. մեկում նշումներ է կատարելու աշակերտին ուսուցանող հարցումների հիման վրա գիտելիքների ստուգման վերաբերյալ, իսկ մյուսում, որ կոչվելու է ամփոփիչ գնահատման մատյան, միավորային գնահատումներով նշվելու է սովորողի գիտելիքների ստուգումը:

Երրորդ փուլում՝ 2010-2011 ուսումնական տարում, գնահատման 10-միավորային սանդղակի մեթոդաբանությունն արդեն գործում է բոլոր դասարանների համար: Փորձը ցույց է տալիս, որ գնահատման 10-միավորային համակարգում ավելի ռեալ են գնահատվում աշակերտի գիտելիքները: Անշուշտ, այս ամենը միայն ու միայն կրթական որակի բարձրացման նպատակ է հետապնդում:

Ուսումնասիրությունների հիման վրա ավելի մանրամասնորեն պարզաբանենք սովորողների գիտելիքների գնահատման համակարգը ժամանակակից դպրոցում:

Գնահատման արդյունքն արտահայտվում է պաշտոնապես ընդունված միավորների սանդղակով՝ գնահատականներով:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումն իրականացվում է 10-միավորանոց համակարգով, խոսքով (խրախուսանք-խթանում) կամ ստուգարքի ձևով:

Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական բանավոր քննությունների արդյունքները գնահատվում են 10-միավորանոց, իսկ գրավոր քննություններինը՝ 20-միավորանոց համակարգով: Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ առանձին առարկաներից (դասընթացներից) անցկացվում է ստուգարք:

10 և 20-միավորանոց համակարգերի և նախկին ավանդական 5-միավորանոց համակարգի համարժեքությունը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. տարվա ընթացքում կիրառվում են ընթացիկ գնահատման խոսքային խրախուսման ձևեր, որոնք նպաստում յեն սովորողի ինքնագնահատման ձևավորմանը:

Առաջին դասարանի յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է աճի դինամիկան ներկայացնող բնութագիր, որի ձևը, լրացման և սովորողների ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) տեղեկացման կարգը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Միավորներով գնահատումը կատարվում է երկրորդ դասարանից սկսած:

Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, ինչը հնարավորություն է ընձեռում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքում երեխայի ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը: Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ:

Հիմնական և միջնակարգ դպրոցն ավարտողները (այդ թվում՝ էքստեռն) անցնում են պարտադիր ամփոփիչ ատեստավորում, որի անցկացման կարգը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Ուսուցման արդյունքում սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների մակարդակը 10-միավորանոց համակագրով գնահատելիս սովորողը վաստակում է 9-10 միավոր, եթե՝

1. կարող է սովորած նյութը ըմբռնել, հիշել, վերարտադրել և այն հմտորեն օգտագործել ոչ միայն ծանոթ, այլ նաև նոր, անծանոթ իրավիճակում,

2. ունակ է լուծելու զանազան խնդիրներ՝ տրամաբանորեն հիմնավորելու և պաշտպանելու իր դիրքորոշումները, դիտելու և բացատրելու տարբեր երևույթներ.

3. կարող է ընդհանրացնել և ամբողջացնել ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, և ի վիճակի է կատարելու քննական համեմատություն սովորածի ու կյանքում տեսածի միջև.

4. կարող է ինքնուրույն ձևավորել և արտահայտել իր վերաբերմունքն ու կարծիքը՝ հանդուրժող և հարգալից վերաբերմունք դրսևորելով այլոց տեսակետների և գաղափարների հանդեպ.

5. դրսևորում է մտածողության բարձր որակներ:

Սովորողը վաստակում է 6-8 միավոր, եթե՝

1. ի վիճակի է սովորած նյութը ամբողջապես ըմբռնելու և վերարտադրելու, դիտելու տարբեր երևույթներ և եզրահանգման գալու, տարբերելու էականը երկրորդականից.

2. ի վիճակի է օգտագործելու ձեռք բերած գիտելիքները, հմտությունները՝ ըստ ծանոթ իրավիճակներում տրամադրված օրինակների, լուծելու ավելի բարդ առաջադրանքներ.

3. ջանասիրաբար կատարում է հանձնարարությունները՝ դրսևորելով կամային հատկություններ.

4. արտահայտում է անձնական վերաբերմունք սովորած թեմաների հանդեպ, բայց ավելի շատ հանդես է գալիս սահմանումների և եզրակացությունների շրջանակում, քան թե վերլուծության, համադրման և վերացարկման:

Սովորողը վաստակում է 4-5 միավոր, եթե՝

1. ծանոթ է հանձնարարված նյութին, ի վիճակի է տարբերելու էականը երկրորդականից, գիտե հիմնական հասկացությունները, կանոնները, կարող է շարադրել խնդրի պայմանները և լուծել ըստ օրինակի.

2. կարող է վերարտադրել նյութը պարզ և հակիրճ ձևով, ինչպես նաև գնահատել այն և հասնել տրամաբանական եզրակացությունների.

3. կարող է օգտագործել ուսուցման գործընթացում տեղեկություն հավաքելու ավանդական մեթոդները, հետևել ուսուցչի հրահանգներին և ավարտին հասցնել (լուծել) առաջադրանքները.

4. ի վիճակի է ինքնուրույն պատասխանելու սովորած նյութերին առնչվող ոչ բարդ հարցերին և բավարար չափով հաղորդակցվելու ու համագործակցելու դասընկերների և ուսուցիչների հետ:

Սովորողը վաստակում է 1-3 միավոր, եթե՝

1. ի վիճակի է ըմբռնելու և ճանաչելու ուսումնական նյութը, բայց կարող է միայն հիշել և վերարտադրել դրա սահմանափակ քանակությունը (40 տոկոսից պակաս), կարող է լուծել առաջադրանքներ՝ ըստ տրամադրված օրինակների և ծանոթ իրավիճակում՝ թույլ տալով որոշակի սխալներ.

2. վերարտադրում է սովորած նյութը չտրամաբանված, դիմացինի համար անընկալելի ձևով, ի վիճակի չէ տարբերելու էականը երկրորդականից, չի հետևում հրահանգներին, ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում առարկայի հանդեպ.

3. ի վիճակի է միայն ուղղորդման արդյունքում արտահայտել իր անձնական վերաբերմունքը, բայց չունի ձևավորված սեփական կարծիք.

4. ցուցաբերում է միջանձնային հարաբերությունների ցածր մակարդակ. չի կարողանում հաղորդակցվել դասընկերների և ուսուցիչների հետ:

Գնահատման այս սանդղակը առավել որոշակիացվում է առարկայական չափորոշիչներում (ծրագրերում)՝ հաշվի առնելով տվյալ առարկայի, գնահատվող ուսումնական նյութի, գնահատման ձևի և նպատակադրման առանձնահատկությունները:

Դիտարկումները ցույց են տվել, որ գնահատման 10-միավորային համակարգը մշակվել, փորձարկվել է և դիտվել որպես առավել արդյունավետ ու նպատակահարմար ժամանակակից դպրոցի զարգացման և բարգավաճման համար:

Նման մոտեցումը նպատակաուղղված է.

1. Բացահայտել գիտելիքների տիրապետման և յուրացման աստիճանը (ուսուցանող գնահատում):

2. Գնահատման տարբեր ձևերի ու տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն ընձեռել սովորողներին՝ առավելագույնս դրսևորել իրենց հնարավորությունները (բարելավված ուսուցում):

3. Իրականացնել ավելի հիմնավորված ուսումնական գործընթաց:

4. Նպաստել սովորողների ինքնաճանաչման և ինքնագնահատման կարողությունների զարգացմանը:

5. Կանոնակարգված գնահատման և չափանիշների հստակեցման շնորհիվ հասնել ուսման նկատմամբ սովորողների առավել մեծ հետաքրքրության դրսևորմանը:

6. Բարձրացնել ուսուցիչների պատասխանատվությունն ու մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Գնահատումը նպատակահարմար է իրականացնել 2 փուլով՝

- ուսուցանող գնահատում,
- ամփոփիչ գնահատում:

Երաշխավորվում է ուսուցանող գնահատումն իրականացնել հետևյալ ձևերով.

ա) բանավոր հարցում. կիրառվում է բանավոր հարցման երկու ձև՝ համառոտ (2 րոպե տևողությամբ) և ծավալուն (4-5 րոպե տևողությամբ).

բ) գործնական աշխատանք. նախատեսվում է տարբեր բնույթի գործնական առաջադրանքների կատարում, որը պետք է իրականացնել թե՛ անհատական, թե՛ խմբային և թե՛ կոլեկտիվ կերպով.

գ) թեմատիկ գրավոր աշխատանք. կարելի է իրականացնել շարադրության, փոխադրության, թելադրության, վարժությունների, թեստերի միջոցով (ցանկալի է յուրաքանչյուր թեմայի վերջում).

դ) կիսամյակային ամփոփիչ աշխատանք, սա իրականացվում է մեկ կամ երկու դասաժամի տևողությամբ. կարելի է իրականացնել ինչպես բազմաբնույթ գրավոր աշխատանքների, այնպես էլ անհատական ռեֆերատների և մշակումների միջոցով:

Կիսամյակային ամփոփիչ գնահատականի ընդհանուր կշռի մեջ իրենց բաժինը պետք է ունենան վերոհիշյալ բոլոր աշխատանքների համար սովորողի ստացած նիշերը:

«Ուսուցանող» գնահատականների և արդյունքների գրանցման համար դպրոցներում հատկացվել է հատուկ մատյան: Գրանցումների հիմք են հանդիսանալու.

ա) տնային աշխատանքները,

բ) գրավորները դասարանում,

գ) բանավոր պատասխանները:

Ամփոփիչ եզրակացություններ տրվելու են կիսամյակում մեկ անգամ:

Ընթացիկ առաջադիմությունն ստուգող բոլոր տեսակի աշխատանքները պետք է գնահատվեն 10-միավորային սանդղակով:

Թույլատրվում է կիրառել նաև գնահատման միավորային այլ սանդղակ, որը պետք է համապատասխանեցվի և գրանցվի 10-միավորային համակարգով, որը տրվում է ստորև.

5-միավորային սանդղակ (1, 2, 2+3-3, 3+/4-4 4+/5), 10-միավորային սանդղակ (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8): Գնահատականների անվանումները. շատ վատ, վատ, անբավարար, բավարար միջին, միջինից բարձր, լավ, շատ լավ:

Դրական գնահատական է հաշվվում «3»-ից բարձրը: Ստուգման և գնահատման չափանիշները կազմելիս պետք է հաշվի առնել աշխատանքի տեսակը, բովանդակությունը: Հինգմիավորային համակարգի հնարավորինս անաչառ ուսուցիչն առանց դժվարության կհարմարվի 10-միավորային սանդղակով գնահատելուն: Պարզապես անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում ուսումնական գործընթացը կազմակերպելիս:

10-միավորային սանդղակը հնարավորություն կտա, որ ուսումնական գործընթացի կարևոր փուլը՝ գնահատումը, իրականացվի հիմնավորված և պատճառաբանված ձևով:

Քննարկվող հիմնահարցի հետ կապված, պարզաբանենք նաև սովորողների գիտելիքների գնահատման սկզբունքներն ու գործառույթները, գնահատման գործընթացը ներքին, արտաքին գնահատման չափանիշներով:

Գնահատման հիմնական սկզբունքներն են՝

ա) արդարությունը,

բ) մատչելիությունը,

գ) հիմնավորվածությունը,

դ) անկողմնակալությունը,

ե) թափանցիկությունը,

զ) հաշվառելիությունը,

է) հավաստիությունը,

զ) համադրելիությունը միջազգային չափանիշներին:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

- յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և կրթության շարունակականության խրախուսումը, սովորողի՝ կրթական մի աստիճանից մյուսին անցման իրավունքի ապահովումը.

- դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը.

- սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի անհրաժեշտության և ծավալի ճշգրտումը.

- սովորողի անձնական որակների ձևավորումը, անհատական վարքագծի բացահայտումը, ինքնագնահատման և հետադարձ կապի ապահովումը.

- մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ապահովումը.
- հանրակրթության չափորոշիչային պահանջների, առարկայական ծարգրերի, դասագրքերի բարեփոխումը և կատարելագործումը.
- հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու համապատասխանեցումը միջազգային չափանիշներին.
- դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը, ուսուցիչ-ծնող, դպրոց-հասարակություն հարաբերությունների կարգավորումը.
- պետական կրթական քաղաքականության միջանկյալ արդյունքների պարբերական վերանայումը՝ ըստ շրջանների և համայնքների:

Գնահատման գործընթացը

Հանրակրթության ոլորտում կիրառվում են ներքին և արտաքին գնահատման ձևեր:

Ներքին գնահատումը ուսումնական գործընթացի արդյունքների բացահայտման այն ձևն է, որը կիրառվում է դասարանում (դպրոցում)՝ դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների և ուսումնականմ գործունեության ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի (դասարանի) ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլև նրա (դասարանի) զարգացման դինամիկան: Առանձնակի կարևորվում են սովորողի՝ իր սեփական և դասընկերոջ ձեռքբերումները գնահատելու, արժևորելու, բացթողումները նկատելու և դրանք վերացնելու ուղղությամբ ջանքեր գործադրելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Ներքին գնահատում է համարվում՝

ա) ինքնագնահատումը. սովորողը ինքն է գնահատում իր գործունեության արդյունքը,

բ) փոխադարձ գնահատումը. սովորողները գնահատում են միմյանց,

գ) անհատական գնահատումը. ուսուցիչը գնահատում է սովորողին՝ նշելով նրա ձեռքբերումները և աճի դինամիկան,

դ) հանձնախմբային գնահատումը. գնահատում է ուսուցիչների խումբը կամ տնօրինության կազմած հանձնաժողովը:

Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին դպրոցում, շրջանում կամ հանրապետության ողջ տարածքում (ազգային գնահատում): Այսպիսի գնահատումն ունի նաև հետազոտական-ճշգրտող նշանակություն՝ ծրագրերի, դասագրքերի, ուսուցման մեթոդների վերանայման առումով:

Արտաքին գնահատման առանձին տեսակ է միջազգային գնահատումը, որն իրականացվում է միջազգային գնահատում կատարող համապատասխան կազմակերպությունների կողմից՝ դրանց կանոնակարգերին համապատասխան:

Ուսուցման գործընթացում ըստ նպատակադրման կիրառվում են՝

1. ախտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում, ճշգրտվում է ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը.

2. ընթացիկ գնահատում. ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը.

3. ամփոփիչ գնահատում. ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը.

4. ձևավորող գնահատում. ճշգրտվում են դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը և դասավանդման մեթոդները.

5. պարտադիր ամփոփիչ գնահատում (ատեստավորում). ստուգվում են հիմնական և ավագ դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները.

6. հետազոտական գնահատում. ուսուցման արդյունքների հետազոտում, այդ թվում՝ ստուգման համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Այս շատ համառոտակի շարադրանքից պարզ երևում է, որ նախորդ տասնամյակների համեմատ լուրջ առաջընթաց է նկատվել նաև սովորողների առաջադիմության հաշվառման, գնահատման գործընթացում, և ի հայտ են բերվում նրանց ուսուցման արդյունքները, բացահայտվում են դրական ու բացասական կողմերը, իսկ մանկավարժական խորհրդի նիստերում նմանատիպ հարցեր քննարկելիս պարզաբանվում են դրանց պատճառները: Ահա թե ինչու ուսուցման առաջադիմությունը բարձր էր հանրակրթական դպրոցներում:

Կրթական համակարգում կատարվող բովանդակային բարեփոխումները նոր մոտեցումներ են թելադրում՝ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այս տեսանկյունով էլ ստեղծագործաբար աշխատող ուսուցչից պահանջվում է արդյունավետ կազմակերպել սովորողների ուսումնական աշխատանքները, դասը վարել ժողովրդավարական ոճով, որպեսզի աշակերտը պասիվ ընկալողից դառնա ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, իսկ ուսուցիչը հրաժարվի սովորեցնողի, վերահսկողի իր դիրքից և որպես գործընկեր աշակերտների հետ մասնակցի որոնողական աշխատանքներին ու նրանց հետ ապրի «հայտնագործման» հրճվանք:

Հանրակրթական դպրոցներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցիչները (նկատի ունենք Ստեփանակերտի թիվ 1, 2, 7, 10, 11 դպրոցների) ժամանակակից դասն այնպես են կազմակերպում, որ աշակերտները ակտիվ մասնակցեն ընկալման ակտիվ, ստեղծագործական գործունեությանը: Նյութի գիտական հաղորդմանը հաջորդում են դիդակտիկ խաղեր (տարրական դասարաններում), կազմակերպվում ֆիզկուլտ-դադարներ:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցական վաղ տարիքի երեխաների հիշողության առանձնահատկությունները՝ դասվարները, դասավանդող ուսուցիչները ուսուցման գործընթացը կազմակերպում են այնպես, որ երեխաներն ամբողջ էությամբ մասնակցեն դասին, իսկ ուսուցիչն ավելի քիչ է խոսում, ցուցադրում, ավելի շատ մասնակից է դարձնում աշակերտներին: Ուսուցիչները դասագործընթացում որոնում-գտնում են դասը կատարելագործելու ուղղությամբ նոր մեթոդներ, հնարներ և դասը դարձնում արդյունավետ:

Այս առումով 2004-2005 ուսումնական տարվա առաջին կիսամյակում համաքաղաքային բաց դաս է կազմակերպվել թիվ 9 հիմնական դպրոցում՝ 3-րդ դասարանում: Դասը վարում էր բազմավաստակ մանկավարժ Լյուդմիլա Ենգիբարյանը, աշխատանքի ուսուցման դասը՝ Սուսաննա Մելքումյանը:

Այդ ուսումնական տարվա սեպտեմբերին հանրակրթական դպրոցներում ուսումնական տարին սկսել են նոր կրթակարգով և ըստ մշակված պետական չա-

փորոշիչների, կրթության եվրոպական ստանդարտներին համապատասխան: Եթե նոր համակարգը դպրոցներից պահանջում է ուսուցման նոր բովանդակություն, ուրեմն անպայման պետք է բարեփոխվեն նաև կրթությանը օժանդակող մյուս բոլոր կառույցները, այդ թվում և փնջային մեթոդմիավորումները: Վերջիններիս աշխատանքների վերակառուցումը ժամանակին է ու խիստ անհրաժեշտ՝ հատկապես անցումային այս հատվածում, ինչով էլ մտահոգված է ԿՄՍ նախարարությունը:[187]

Հայտնի է, որ փնջային մեթոդմիավորումները խորհրդային կրթական համակարգից եկած դրվատելի միջոցառումներից են, որոնք նպաստում են առաջավոր փորձի փոխանակմանը, ուսուցիչների մերձեցմանը և փոխգործակցությանը: Ներկայիս փնջային մեթոդմիավորումները՝ անկախ պետականության շրջանում, ինչպես վաստակաշատ մանկավարժներն են ասում (Լ. Մարտիրոսյան, Ն. Թամրազյան, Ա. Գրիգորյան, Ա. Պողոսյան, Ս. Շահրամանյան, Մ. Բալյան և ուրիշներ), նախկինից շահեկանորեն տարբերվում են: Եթե այն ժամանակ մեթոդմիավորումը սահմանափակվում էր սոսկ առարկայական զեկուցումներով և լիագումար նիստով, ապա ներկայումս փնջի մասնակիցները ծանոթանում են նաև ուսումնական և արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին, կազմակերպում առարկայական օլիմպիադաներ, դիտում դպրոցի առարկայական ուսումնական կաբինետները, լաբորատորիաները, համակարգչային դասարանները, աշակերտների պատրաստած աշխատանքների ցուցադրությունը, տնօրենի օրինակելի կառավարման աշխատանքային պլանները, դասամատյանների գրառումների ճիշտ պահպանումը, ինչպես նաև ներդպրոցական տարաբնույթ միջոցառումների կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքները, որը ուսանելի օրինակ է փնջի մասնակիցների համար:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2000-2001 ուս.տարվանից հանրապետության կրթական հաստատություններում վերստին վերականգնեցին նախկին լավագույն ավանդույթները (ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում մեթոդմիավորումները գործում էին 1960-1980-ական թվականներին)՝ փնջային մեթոդմիավորումները: Դպրոցների փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դա արդյունավետ, օգտակար, հետաքրքիր աշխատանք է նաև հանրակրթական դպրոցի վերակառուցման նոր շրջանում: Այդ մեթոդմիավորումները կատարել են արդյունավետ աշխատանքներ, կազմակերպել են դասալսումներ, բաց և փոխադարձ դասալսումների քննարկումներ, առաջավոր փորձի փոխանակումներ, մանկավարժական ընթերցումներ սկսնակ ուսուցիչների համար, ուսումնական նոր ձեռնարկների, ծրագրերի, մեթոդմանկավարժական հոդվածների քննարկումներ, առաջավոր փորձի ներդնում պրակտիկայում և այլն: Փնջում ընդգրկված դպրոցների առաջատար մասնագետներն ունեն պատասխանատվություն և անկեղծ ու ազնիվ մտահոգություն կրթական ողջ գործընթացի հանդեպ: Փնջային մեթոդմիավորումները կազմակերպում են նաև մեթոդամանկավարժական ընթերցումներ:

Բարեփոխումների այս փուլում հանրապետության կրթական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման հիմնահարցի քննարկմանն էր նվիրված 2005 թվականի դեկտեմբերի 23-ին[188] Ստեփանակերտում կայացած փնջային առարկայական մեթոդմիավորումների նախագահների խորհրդակցությունը, որին մասնակցում էին ԿՄՍ նախարար Կ. Աթայանը, նախարարության առաջատար մասնագետները, շրջանային կրթության բաժինների վարիչները, դպրոցների տնօրենները, դպրոցական տեսուչները

և վաստակաշատ ուսուցիչները: Պետք է նշել, որ ԿՄՍ նախարարության այս ձեռնարկումը՝ մանկավարժական առաջին հավաքը, իր տեսակով եզակի էր նրանով, որ հավաքվել էին ԼՂ Հանրապետության լավագույն մասնագետները, որոնք ունեցել են արդյունավետ դասի անցկացման ուսանելի փորձ: Բացման խոսքում նախարար Կ. Աթայանը պարզաբանեց նմանօրինակ միջոցառման նպատակը՝ կրթության համակարգում պահանջվող բովանդակային բարեփոխումների իրականացումը: Այդ հանգամանքն էլ թելադրել է զրույց-երկխոսության հրավիրել մեթոդմիավորումների նախագահներին որպես առարկայագետ ուսուցիչներ:

Խորհրդակցությունում նախարարը ներկայացրեց կրթական համակարգում առկա մեթոդմիավորման նոր կառուցվածքը՝

-դպրոցի մեթոդմիավորումը տվյալ առարկայից,

-շրջանային մեթոդմիավորումը բոլոր առարկաներից,

-քաղաքային մեթոդմիավորումը տվյալ առարկայից,

-նախարարության կից առարկայական փոքր խորհուրդը (ստեղծվել է 2005թ. սեպտեմբերի 1-ին, դպրոցական առարկաներից,

-մանկավարժության և հոգեբանության ուղղությամբ խորհուրդը:

Նմանատիպ խորհրդակցություններ (սկսած օգոստոսից) եղել են կրթության ոլորտի տարբեր ներկայացուցիչների հետ: Եվ ահա այդ դինամիկան պահանջում էր մի խորհրդակցություն էլ հրավիրել հանրակրթական դպրոցների մեթոդմիավորումների նախագահների, փորձառու մանկավարժների հետ, որոնք, ըստ էության, կրթական գործի ամենապատասխանատու մարդիկ են՝ ուսուցչապետեր, որոնք ոչ միայն իրենք են պարտավորություն ստանձնել իրենց վրա, այլ նաև ճակատագրի բերումով պարտավոր են իրենց կողքին եղած երիտասարդ և ոչ երիտասարդ ուսուցիչներին առաջավոր փորձի մասնագետ դարձնել, իրենց վարպետությունը փոխանցել: (Խորհրդակցությանը մասնակցել են սույն գրքի համահեղինակները՝ Ա.Ա., Գ.Հ.):

Վերոնշյալ խորհրդակցությունում առաջարկվեց, որ փնջային մեթոդմիավորումը դառնա մեթոդամանկավարժական լուրջ կենտրոն, որն ամենամոտը լինի դպրոցներին և հնարավորինս մեթոդական օգնություն ցույց տա ուսուցիչներին, պատասխանի նրանց հետաքրքրող մասնագիտական շատ հարցերին, միաժամանակ կազմակերպի բաց դասեր, առարկայական օլիմպիադաներ և այլ բնույթի միջոցառումներ:

Իսկ թե ինչպիսի աշխատանքներ են կատարել հանրակրթական դպրոցների մեթոդմիավորումները բարեփոխումների այս շրջափուլում (2002-2008թթ.) ցույց են տալիս մեթոդմիավորումների նախագահների, դպրոցների տնօրենների հաշվետվությունները: Բերենք մի քանի կոնկրետ օրինակներ:

Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջանի Առաջածորի հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման նախագահ Նվարդ Աթանեսյանի (2005 թվականին՝ նաև դպրոցի տնօրեն) հաշվետվությունից, տեղեկացանք, որ ենթաշրջանի մեթոդմիավորումը գործում է 2002-2003 ուս.տարվանից: Մեթոդմիավորման մեջ մտնում են Առաջածորի, Վանքի, Ծմակահողի, Գառնաքարի, Շահմասուրի, Քոլատակի, Կիչանի դպրոցները:

Առարկայական փնջային մեթոդմիավորումն իր աշխատանքը պլանավորելիս ուշադրության կենտրոնում է պահում հրատապ խնդիրներ՝ նոր կրթակարգի պահանջներին համապատասխան: Մեթոդմիավորումը պարբերաբար ստուգում է փնջում ընդգրկված դպրոցները, դասալսումների արդյունքները քննարկում մանկավարժական խորհրդի նիստում, անում եզրահանգումներ, հարկ եղած դեպքում

ներկայացնում առաջարկություններ, ընդհանրացնում և երաշխավորում լավագույն դպրոցի փորձը տարածել մանկավարժական կոլեկտիվներում: Այդ ուսումնական տարում շրջանում գործում էին 9 մեթոդմիավորումներ:

Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ռ. Հարությունյանի հաշվետվությունից տեղեկացանք, որ 2005-2006 ուս.տարում հանրակրթական դպրոցները և կրթության շրջանային բաժինը աշխատանքները կազմակերպել են ԿՄՍ նախարարության, շրջվարչակազմի և բաժնի աշխատողների աշխատանքային պլաններին, կառավարության, նախարարության հրամաններին և հանձնարարականներին համապատասխան՝ սահմանված ժամկետներում գործնականորեն ապահովելով դրանց կատարումը, ինչը նկատելի որակական տեղաշարժ է ապահովել ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Որոշակիորեն բարձրացել է շրջանի կրթական համակարգի աշխատողների, մասնավորապես ուսուցիչների, առարկայական մեթոդմիավորումների պատասխանատվությունը, ինչի վկայությունը թերևս կարելի է համարել շրջանի դպրոցականների բարձր ցուցանիշները շրջանային, հանրապետական, համահայկական առարկայական օլիմպիադաներում, ստեղծագործական և ինտելեկտուալ մրցույթներում և այլն: Մասնավորապես հանրապետական օլիմպիադաներում շրջանի թիմի յուրաքանչյուր երրորդ անդամ մրցանակային տեղ է գրավել (7 հոգի), 5 դպրոցական իրավունք է ստացել մասնակցելու հանրապետական առարկայական օլիմպիադաներին, որոնցից 3-ն արժանացել է պարգևատրման: Ստեղծագործական շարադրությունների հանրապետական մրցույթում շրջանի 5 դպրոցական իրավունք է ստացել մասնակցելու հանրապետական եզրափակիչ փուլին:

Ի դեպ, նշենք, որ հետխորհրդային շրջանում ԼՂ Հանրապետությունում առաջին անգամ դպրոցականների առարկայական օլիմպիադայի կազմակերպման ու անցկացման համար (1999թ. հոկտեմբերի 1) ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում ընդունվեց որոշում շարունակել խորհրդային դպրոցի լավագույն ավանդույթները, և հանրակրթական առարկաների նկատմամբ առանձին հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ աշակերտների շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարում հանրապետությունում կազմակերպել ու անցկացնել դպրոցականների առարկայական օլիմպիադաներ՝ շրջանային, քաղաքային, հանրապետական և համահայկական փուլերով, և արդյունքներն ամփոփել ԿԳ նախարարության, շրջանային կրթության բաժինների խորհրդակցություններում և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Հանրակրթական դպրոցների արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, որ առարկայական օլիմպիադաները հիմնականում կազմակերպում ու անց են կացնում առարկայական մեթոդմավորումները: Այսինքն՝ աշակերտներին նախապատրաստում են օլիմպիադայի մրցույթներում գրավելու համապատասխան տեղեր: Օրինակ, Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ է. Պետրոսյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2006-2007 ուս.տարում Մարտունու շրջանի Նոր շենի միջնակարգ դպրոցում կայացավ Աշանի փնջային մեթոդմիավորման նիստը, որն իր մեջ ներառում է Բերդաշենի, Աշանի, Նոր շենի, Վազգենաշենի միջնակարգ և Եմիշճանի, Հացու, Ավդուռի ու Մյուրիշենի ութամյա դպրոցները: Մեթոդմիավորումը գործում էր դեռևս խորհրդային տարիներից: Արցախյան պատերազմի տարիներին ընդհատելով իր գործունեությունը, այն նորից սկսել է գործել 2000 թվականից՝ մեթոդմիավորման նա-

խագահ, հանրապետության վաստակավոր ուսուցիչ, բազմավաստակ մանկավարժ էմիլ Բալայանի նախաձեռնությամբ:[189] Բաց դասեր էին կազմակերպվում հիմնականում երիտասարդ ուսուցիչների կամ տվյալ առարկան նոր դասավանդել սկսած ուսուցիչների մոտ: Փորձառու մանկավարժներ՝ էմիլ Բալայանը, էմմա Գաբրիելյանը, Նաիրա Հովսեփյանը, էմմա Բալայանը բաց դասերի քննարկումների ժամանակ իրենց խորհուրդներով, մեթոդական մոտեցումներով օգտակար եղան, իսկ սկսնակ ուսուցիչներն ընդօրինակեցին նրանց ուսանելի փորձը:

Մեթոդմիավորման մեջ ընդգրկված դպրոցների աշակերտները հայոց լեզու, գրականություն, պատմություն, մաթեմատիկա, ռուսաց լեզու, աշխարհագրություն, կենսաբանություն առարկաների գծով մասնակցել են օլիմպիադային (42 աշակերտ).

1. դպրոցական 1-ին փուլ՝ 2006թ. հունվարի 3-8-ը ժամանակահատվածում (42 աշակերտ),

2. շրջանային (քաղաքային 2-րդ փուլ (22 աշակերտ)՝ փետրվարի 20-ից,

3. հանրապետական 3-րդ փուլ (10 աշակերտ)՝ մարտի 30-ին:

Այդ ժամանակահատվածում Մարտունու թիվ 1, Ճարտարի, Գիշու, Կարմիր շուկայի, Սոսի միջնակարգ դպրոցների մեթոդմիավորումները նույնպես կազմակերպել են առարկայական օլիմպիադաներ, որոնց մասնակցել են՝

-դպրոցական 1-ին փուլում՝ 152 աշակերտ,

-շրջանային, քաղաքային 2-րդ փուլում՝ 94 աշակերտ,

-հանրապետական 3-րդ փուլում՝ 18 աշակերտ:

Մարտունու շրջանի կրթության բաժնի փաստաթղթերից նաև տեղեկանում ենք, որ ավանդույթ է դարձել շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համագործակցությունը ՀՀ դպրոցների կոլեկտիվների հետ, և փոխայցելության ժամանակ կազմակերպվում են բաց դասեր, առարկայական օլիմպիադաներ:

Այսպես, օրինակ, Մարտունի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը համագործակցում է ՀՀ Մարտունու Մելիք Շահումյանցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի կոլեկտիվի հետ: 2007-2008 ուսումնական տարվա նոյեմբերին Մարտունու թիվ 1 դպրոցի տնօրեն Վ. Հայրապետյանի գլխավորությամբ 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտները (թվով 14 հոգի) այցելեցին վերոնշյալ դպրոց: Միջնակարգ դպրոցում կազմակերպվեցին փոխադարձ դասալսումներ, առարկայական օլիմպիադաներ, անցակցվեցին փորձի փոխանակման դասեր, որին մասնակցեցին նաև երկու դպրոցների տնօրենները և (ՀՀ Մարտունու թիվ 1 դպրոցի տնօրեն Խանում Ղազարյան) ուսուցիչները: Վերջում կազմակերպվեցին մտքերի և փորձի փոխանակում, արդյունքների և հետագա համագործակցության քննարկումներ: 2008-2009 ուս.տարվա մարտի 22-26-ը Մարտունու թիվ 1 միջնակարգ դպրոցի պատվիրակությունը, այդ թվում նաև շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Գ. Սևիկյանը, ճանաչողական այցով եղան նաև տարածաշրջանի դպրոցներում, մարզահամալիրներում, նախադպրոցական հիմնարկներում, գեղարվեստի դպրոցում, դիտելով մանկավարժական կոլեկտիվների նախաձեռնությամբ կահավորված առարկայական ուսումնական կաբինետները, լաբորատորիաները, համակարգչային դասարանները, աշակերտների աշխատանքների ցուցադրությունը, և դա մեծ հետաքրքրություն առաջացրեց Արցախի պատվիրակության մոտ:[190]

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ 2007-2008 ուսումնական տարում Հադրութի շրջանի հանրակրթական դպրոցներում

ուսման որակի բարձրացումը համարվեց մանկավարժական կոլեկտիվների առաջնահերթ խնդիր: Ուսումնական տարում դպրոցներում աշխուժություն է նկատվել ուսումնադաստիարակչական աշխատանքների, արտադասարանական, արտադպրոցական միջոցառումների և ռազմահայրենասիրական մրցույթների կազմակերպման գործում: Շրջանի դպրոցներում նպատակաուղղված ու արդյունավետ գործունեություն են ծավալում առարկայական մեթոդմիավորումները: Նրանց նախաձեռնությամբ շրջանային առարկայական օլիմպիադաներին մասնակցել են 190 աշակերտ, որից 27-ը՝ հանրապետական փուլին: Շրջվարչակազմի կրթության բաժնի ուշադրության կենտրոնում է գտնվում սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակությունը, և հաջողությունները ակնհայտ են: Ինչպես նշվում է կրթության բաժնի վարիչի հաշվետվությունում, ամառային արձակուրդների ընթացքում, հուլիսի 27-ից օգոստոսի 6-ը, «Ասպետ» ռազմամարզական ճամբարում հանգստացել են շրջանի 160 պատանիներ, 15 դպրոցականներ մեկշաբաթյա հանգիստ են անցկացրել Շորժայի Սևանի ափամերձ գոտում: Հատուկ կարգավիճակով ընտանիքների 3 երեխաներ իրենց հանգիստն են անցկացրել Հունաստանում:

Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Ա. Ավանեսյանի հաշվետվությունում մատնանշվում է, որ 2007-2008 ուսումնական տարվա առաջին կիսամյակում շրջանի Խնածախի Արմեն Սարգսյանի անվան միջն. դպրոցի տնօրեն Գյուլչորա Արզումանյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ փնջային մեթոդմիավորման լիագումար նիստ, որտեղ ընդհանրացվեցին դասալսումների արդյունքները: Փնջի մեջ մտնում են Այգեստանի, Խնածախի միջնակարգ և Լուսաձորի ու Բերքաձորի 9-ամյա դպրոցները: Տնօրենի նախաձեռնությամբ նշված դպրոցներում կազմակերպվել են բաց դասեր, ինչպես նաև առարկայական օլիմպիադաներ, որոնց մասնակցել են 62 աշակերտներ: Բնագիտական առարկաների գծով 12 աշակերտ մասնակցել է հանրապետական փուլին, որից 4-ը գրավել են երկրորդ տեղերը:

Հանրակրթական դպրոցում սովորողների ունակությունների և կարողությունների, ապագա մասնագիտության նկատմամբ ունեցած հետաքրքրությունների բացահայտման, ինչպես նաև շնորհաշատ աշակերտների հայտնաբերման նպատակով ԼՂՀ ԿԳՆ և Քաշաթաղի շրջանային կրթության բաժնի ղեկավարների նախաձեռնությամբ յուրաքանչյուր ուսումնական տարում կազմակերպվում են դպրոցականների առարկայական օլիմպիադաներ, շարադրությունների ու այլ ստեղծագործությունների, գեղնկարչության ու գեղարվեստական ինքնագործունեության ցուցահանդեսներ ու մրցույթներ, ռազմամարզական միջոցառումներ ու առաջնություններ՝ դպրոցական փուլից մինչև հանրապետական փուլ, ինչպես նաև մասնակցություն Հայաստանի հանրապետական կամ համահայկական փուլերին: Այս ամենին, անշուշտ, մեծապես նպաստում է հանրակրթական դպրոցներում սովորողների անհատական և ստեղծագործության կարողությունների զարգացմանն ուղղված խմբային պարապմունքների կազմակերպումը, ինչպես նաև շրջանում գործող մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնները, մարզադպրոցները, երաժշտական և արվեստի դպրոցները, որոնցում ընդգրկված են շուրջ 720 սովորողներ: Ինչպես նշվում է նախարարության կրթության տեսչության պետ Ս. Արզումանյանի հաշվետվությունում, վերոնշյալ ուսումնական տարում հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի 28 հաղթողներ մասնակցել են Հայաստանի հանրապետական փուլին, որոնցից 13-ը տարբեր առարկաներից ստացել են 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ:[191]

Բարեփոխումների այս շրջափուլում հետաքրքիր ու բովանդակալից, միաժա-

մանակ նպատակաուղղված ու արդյունավետ գործունեություն են ծավալում Ստեփանակերտ քաղաքի դպրոցների մեթոդմիավորումները:

Այսպես, օրինակ, Արցախյան պատերազմի հերոս Աշոտ (Բեկոր) Ղուլյանի անունը կրող թիվ 2 միջնակարգ դպրոցի (տնօրեն Լ. Մարտիրոսյան) հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորումը (նախագահ՝ Ի. Սարինյան), որում ընդգրկված են թիվ 1, 7, 10 դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչները, ըստ պլանի, պատշաճ մակարդակով կազմակերպում են բաց դասեր, սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ: Առարկայագետ ուսուցչուհիների՝ Էլմիրա Առաքելյանի, Գրետա Բարսեղյանի, Ար. Խանումյանի և ուրիշների նախաձեռնությամբ կազմակերպվում են օրինակելի դասեր, օլիմպիադաներ: Նրանց աշակերտները հանրապետական փուլում գրավել են 1-ին և երկրորդ տեղերը, արժանացել նախարարության պատվոգրերի:

Մեթոդմիավորման նախագահ Իրինա Սարինյանը հետագայում իր հուշերում գրում է. «Մեթոդմիավորման անդամները, առարկայագետ ուսուցիչները լավ են գիտակցում, որ դպրոցը հսկայական ուժ է ժողովրդի և հայրենիքի ճակատագիրը կերտելու գործում: Ուստի որոնումներ կատարող, առաջավոր փորձի նկատմամբ հետաքրքրություն դրսևորող մեր ուսուցիչները միշտ ձգտում են ամենօրյա դասը դարձնել ստեղծագործական, կիրառել մանկավարժական նորագույն մեթոդներ, հնարներ դասավանդման գործընթացում: Անժխտելի փաստ է, որ ուսուցման գործընթացում վճռական նշանակություն ունեն ուսուցչի դրսևորած մանկավարժական վարպետությունը, տակտը և համագործակցությունը աշակերտների հետ»:[192] Տեղին է նաև նշել ականավոր մանկավարժ Վ.Ա. Սուխոմլինսկու ուսանելի խորհուրդը ուսուցիչներին. «Աշխատեք ոչ թե սոսկ դասարանի մարդ լինել, այլ սաներիդ սրտի մարդ լինել, այլապես իզուր կլինեն քո դաստիարակության և ուսուցման համար որոնած ուղիները»:[193]

Դպրոցի տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Լ. Մարտիրոսյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ մեթոդմիավորման մեջ ընդգրկված ուսուցիչները լավ են նախապատրաստում աշակերտներին օլիմպիադայում մրցանակային տեղեր գրավելու համար: Այսպես՝ 2007-2008 ուս.տարում քաղաքային օլիմպիադայի 1-ին փուլին (հայոց լեզու, գրականություն, պատմություն, մաթեմատիկա, ռուսաց լեզու, անգլերեն, քիմիա, կենսաբանություն առարկաների գծով) մասնակցել են 30 աշակերտ, իսկ հանրապետական փուլին մասնակցել են 12 աշակերտ, որից 3-ը գրավել են 1-ին տեղ, 4-ը՝ 2-րդ տեղ, 5-ը՝ երրորդ տեղ:

Նախարարության գլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանի հաշվետվությունում արձանագրված է, որ մայրաքաղաքի դպրոցականները ակտիվորեն մասնակցում են նաև համահայկական օլիմպիադաներին: Այսպես, օրինակ, 2007-2008 ուս.տարվա հուլիսի 10-17-ը Ծաղկաձորում մեկնարկեցին հայոց լեզվի և գրականության համահայկական օլիմպիադան և հայագիտական գիտելիքների մրցույթը, որը ՀՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպվում է երկամյա պարբերականությամբ՝ սկսած 2003 թվականից: Օլիմպիադայի կազմակերպման գլխավոր նպատակն էր մայր հայրենիքում և արտերկրում բնակվող հայ երեխաների շրջանում խրախուսել հայոց լեզվի և գրականության պատմության և մշակույթի իմացությունը, օգնել նրանց ճանաչելու հայրենիքը:

«Հայրենասիրությունը սկսվում է հայրենագիտությունից» կարգախոսը սկզբունքային նշանակություն ուներ 12 երկրներից (ԱՄՆ-ից, Բուլղարիայից, Սերբիայից, Էստոնիայից, Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, Ուկրաինայից) ժամանած 133 հայազգի պատվիրակների հա-

մար, նրանց շարքում էր նաև Արցախի պատվիրակությունը՝ 5 հոգուց բաղկացած, այն ներկայացրել է Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան թիվ 9 միջն. դպրոցի պատմության ուսուցչուհի Լորետա Աբրահամյանը: Ինչպես նշում է նա իր հուշատետրում, Արցախի թիմը հանդես եկավ փայլուն ցուցանիշներով՝ առավելագույն 30 միավորից վաստակելով 27,5 , 28,5, 28 միավորներ: Հատկապես շնորհալի աշակերտներ էին Յանա Ավանեսյանը և Ջուլիետա Բախշիյանը (5-րդ դպ.), Մելինե Հայրապետյանը (10-րդ դպ.), Շահանե Մուսայելյանը (ֆիզմաթ դպրոց): Այդ աշակերտները նախապես տրամադրված հարցաշարերի օգնությամբ յուրացրել էին ողջ նյութի ծավալը, ուստի ակնկալիքները մեծ էին: ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանի կողմից նշված աշակերտները պարգևատրվեցին առաջին կարգի դիպլոմով:

ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ստորև ներկայացնում ենք հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքները՝ ըստ ուսումնական տարիների.

ԼՂՀ դպրոցականների 2008-2009 ուս.տարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլն անց է կացվել մարտի 8-ին, Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում, 11 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն, գերմաներեն), պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա): Շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժիններից ստացված տեղեկությունների համաձայն, օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են ստացել 215 դպրոցականներ՝ անցած ուսումնական տարվա 189-ի փոխարեն, որից ըստ հայտերի 18 աշակերտի իրավունք է տրվել մասնակցելու 2 առարկաներից, բայց օլիմպիադային ներկայացել են 200-ը, որից միայն 5 աշակերտ է օլիմպիադային մասնակցել 2 առարկայից:

Օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքները ստուգելու նպատակով ԿԳ նախարարի հրամանով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ ԱրՊՀ համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ:

Հանձնախմբերում ընդգրկվել են նաև նախարարության մասնագետներ, Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների փորձառու ուսուցիչներ:

Գրավոր աշխատանքների ստուգումները սկսվել և ավարտվել են նույն օրը՝ մարտի 8-ին, և արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել և ուղարկվել են կրթության շրջանային բաժիններ: Բողոքարկման օրերին բոլոր դիմողներին հնարավորություն է տրվել ծանոթանալ իրենց գրավոր աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում կատարվել է գրավոր աշխատանքի վերստուգում: Արդյունքում ռուսաց լեզու առարկայից փոխվել է 5 մասնակցի միավորը՝ հօգուտ աշակերտների՝ կապված տեխնիկական հաշվարկների հետ: Ընդհանուր առմամբ, բողոքարկման համար հանձնաժողովին դիմել են օլիմպիադայի 7 մասնակիցներ, որոնց բոլորին էլ օրենքի սահմաններում հնարավորություն է ընձեռվել ծանոթանալ իրենց գրավոր աշխատանքներին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրակրթական դպրոցներում 2008-2009 ուս.տարում տնօրինության, մանկավարժական կոլեկտիվների կողմից որոշակի դրական աշխատանքներ են կատարվել ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, ուսման որակի բարձրացման, առարկայական չափորոշիչների պահանջների կատարման, ուսուցիչների աշխատանքի ու

հանգստի պայմանների բարելավման, մեթոդական աշխատանքների թարմացման, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների աշխուժացման, «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպության ստեղծման, աշակերտական ինքնավարության մարմինների ձևավորման, դպրոց-ընտանիք-հասարակություն կապի ամրապնդման, դպրոցական կարևորագույն փաստաթղթերի ստեղծման, պահպանման ու վարման, ինչպես նաև ներդպրոցական վերահսկողության ուժեղացման ու ԼՂՀ ԿԳ նախարարության, շրջանային կրթության բաժինների ղեկավարների և այլ վերադաս մարմիններից ստացված հրամանների, որոշումների կատարման ուղղությամբ:

Դպրոցների մանկավարժական խորհուրդներում քննարկված հարցերի և արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընդհանուր առմամբ ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանաչափ կազմակերպման գործընթացում տեսանելի են դրական տեղաշարժերը: Ինչպես նշվում է դպրոցների մանկխորհուրդների արձանագրություններում, այդ ուղղությամբ կան նաև բացթողումներ ու ձևական մոտեցումներ, որն ավելի շատ վերաբերում է 2008-2009 ուս.տարվա համադպրոցական աշխատանքների տարեկան պլանների կատարման արդյունքներին: Օրինակ, կրթության շրջանային բաժինների դպրոցական տեսուչների, ինչպես նաև ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից իրականացվել են տարաբնույթ ներքին ստուգումներ: Այսպես, վերոնշյալ ուս.տարում ստուգողական ու թեստային աշխատանքներ են տրվել դպրոցների 5-9 դասարաններում՝ հայոց լեզվից և մաթեմատիկայից, 2-4-րդ դասարաններում՝ մաթեմատիկայից, ստացվել է համապատասխանաբար 80, 70, 78,6 տոկոս միջին առաջադիմություն: Ուսումնական տարում դպրոցների տնօրինության կողմից գրավորներ են տրվել հայոց լեզվից 5-9-րդ դասարաններում, որտեղ միջին առաջադիմությունը կազմել է 78 տոկոս, մաթեմատիկայից այդ նույն դասարաններում՝ 68 տոկոս և ռուսաց լեզվից 3-4-րդ դասարաններում, որտեղ առաջադիմությունը կազմել է 70 տոկոս: Ստուգվել է նաև ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և ինֆորմատիկա առարկաների դրվածքը: Այդ առարկաներից միջին առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 75-87 տոկոս:

Դպրոցականների ստացած գիտելիքների խորության ու կայունության, կրթական առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխանության մասին պատկերացում կազմելու համար ԼՂՀ ԿԳ նախարարության տեսչապետի և շրջանային կրթության բաժնի տեսուչների տեղեկանքից բերենք կոնկրետ օրինակներ հանրակրթական դպրոցի կրտսեր օղակում մայրենիից և մաթեմատիկայից, միջին դպրոցում հայոց լեզվից, մաթեմատիկայից, ռուսաց և օտար լեզուներից, ֆիզիկայից, ինֆորմատիկայից տրված գրավոր աշխատանքների՝ տեսչության արձանագրած արդյունքները: Այսպես, օրինակ, հանրապետության դպրոցներում հայոց լեզվից ստուգողական գրավոր թելադրություն է տրվել 5-9-րդ դասարաններում, որին մասնակցել են յուրաքանչյուր դպրոցում 100-157 աշակերտ: Ընդհանուր առաջադիմությունը միջին հաշվով կազմել է. Մարտակերտում՝ 64 տոկոս, Ասկերանում՝ 62 տոկոս, Մարտունիում՝ 66 տոկոս, Հադրութում՝ 62 տոկոս, Շահումյանում՝ 60 տոկոս, Քաշաթաղում՝ 58 տոկոս, Շուշիում՝ 64 տոկոս, Ստեփանակերտում՝ 68 տոկոս: Ամենից լավ արդյունքները գրանցվել են 7-րդ, 9-րդ դասարաններում, որոնցում առաջադիմությունը և որակը համապատասխանաբար կազմել է 84-86 տոկոս, իսկ մյուս դասարաններում՝ 56-60 տոկոս: Ցածր արդյունքներ են ստացվել 5-րդ դասարաններում (առաջադիմությունը 40):[194]

Տեսչության ու տնօրինության կողմից տրված գրավորների արդյունքների հա-

մեմատությունը ցույց է տալիս, որ տեսչական ստուգումների արդյունքներն ավելի ցածր են, ինչը բնական է, բայց լավ է, որ տարբերությունները շատ մեծ չեն: Դա խոսում է այն մասին, որ սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և ունակությունների ճիշտ գնահատման աշխատանքներում ռեալ տեղաշարժեր կան, բայց դեռևս հաղթահարված չեն ձևականություններն այդ գործում: Դիտարկումները ցույց են տվել, որ մի շարք դպրոցներում միշտ չէ, որ ուսուցիչներն առաջնորդվում են կրթական չափորոշիչի պահանջներով և 10-միավորային համակարգով ընդունված գնահատման նորմերով: Տեսչական ստուգումներն արձանագրել են հանրակրթական դպրոցներում հաճախակի կազմակերպվող տարբեր արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների բարձր մակարդակ:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 2008-2009 ուս.տարվա նոյեմբերի 20-ին տեսչական ստուգումների արդյունքները քննարկվել են նախարարության կոլեգիայի նիստում: Փոխնախարար Ս. Ասրյանը իր ելույթում հանգամանորեն նշել է, որ սույն թվականի հոկտեմբերից մինչև նոյեմբերի 16-ը, շրջանային և քաղաքային կրթության բաժինների հետ համագործակցած ԿԳ նախարարության կրթության պետական տեսչությունը (տեսչության պետ՝ Ս. Արզումանյան) իրականացրել է համակողմանի ստուգումներ դպրոցներում, և արդյունքներն ամփոփվել են մանկավարժական խորհրդի նիստերում, օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում, ինչպես նաև նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստում՝ մասնակից դարձնելով շրջանային, քաղաքային կրթության բաժիններին, դպրոցների տնօրինություններին: Մեկամսյա ստուգումները (հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 18-ը)[195] ցույց են տվել, որ հանրապետության դպրոցներում տնօրինությունների, մանկավարժական կոլեկտիվների կողմից որոշակի դրական աշխատանքներ են տարվել ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, ներդպրոցական աշխատանքների գիտական պլանավորման, ուսման որակի բարձրացման, առարկայական չափորոշիչների պահանջների կատարման, ինչպես նաև արտադասարանական և արտադպրոցական այլ աշխատանքների կատարման ուղղությամբ:

ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության պետ Ս. Արզումանյանը իր հաշվետվությունում անդրադարձավ նաև այդ ուսումնական տարում հանրակրթական դպրոցների մեթոդմիավորումների գործունեությանը: Նա ասաց, որ 2008-2009 ուս.տարում ուսումնասիրելով հանրապետության դպրոցների (ուսումնասիրվել են Ստեփանակերտի թիվ 1, 2, 3, 5, 6, 7 դպրոցների մեթոդմիավորումների աշխատանքները) մեթոդմիավորումների (հումանիտար և բնագիտական) նախագահների հաշվետվությունները, նկատել են, որ կատարում են չափազանց աշխատատար պարտականություններ: Համոզվել են, որ կրթական բարեփոխումները, մուտք գործելով դպրոց, նրան բոլորովին նոր բովանդակություն են տվել և անհրաժեշտություն դարձրել արմատականորեն փոխելու նաև աճող սերնդի կրթությանն ու դաստիարակությանն օժանդակող բոլոր կառույցները, այդ թվում նաև ներդպրոցական առարկայական մեթոդմիավորումների առօրյան:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցների շրջանային մեթոդմիավորման մեջ ընդգրկված էին 7-8 առարկաների 10-12 մասնագետներ, քաղաքի դպրոցներում՝ 14-15 մասնագետներ, որոնց հետ աշխատելով (դասալսումներ, մանկավարժական ընթերցումների կազմակերպում և այլն), ղեկավարները մեթոդական օգնություն են ցույց տալիս նրանց՝ ավելի կատարելագործելու իրենց մանկավարժական գործունեությունը:

Քաղաքում և ընդհանրապես խոշոր դպրոցներում կան առարկայական մեթոդմիավորումներ, որտեղ ավելի հեշտ է աշխատել, քանի որ դրանցում ընդգրկված են միևնույն մասնագիտությունների ուսուցիչներ, իսկ գյուղական դպրոցներում վիճակն այլ է: Ինչպես վերևում նշեցինք, 7-8 առարկաների մասնագետներ ընդգրկված են թե՛ հումանիտար և թե՛ բնագիտական առարկաների ուսուցիչների մեթոդմիավորումներում, ասել է թե՝ այստեղ գործ ունենք միասնացված (ինտեգրված) առարկաների մեթոդմիավորման հետ, որն ունի իր առանձնահատկությունները: Փորձենք պարզաբանել հիմնախնդիրը: Եթե միևնույն առարկաների ուսուցիչների մեթոդմիավորման նախագահը հիմնականում այդ առարկայի ծրագրին ու չափորոշիչին պիտի ծանոթ լինի և ոչ միայն ծանոթ լինի, այլև խորությամբ ու լայնությամբ իմանա, ապա գյուղական դպրոցի միասնացված մեթոդմիավորման նախագահը, բացի իր մասնագիտական առարկայի ծրագրին ու չափորոշիչներին ծանոթ լինելուց ու խորությամբ իմանալուց, պետք է նաև ծանոթ լինի մեթոդմիավորման մեջ ընդգրկված մյուս առարկաների ծրագրերին ու չափորոշիչներին, որպեսզի կարողանա արդյունավետ կազմակերպել մեթոդմիավորման գործընթացը: Այստեղից պարզ հետևություն՝ դպրոցների տնօրենները մեթոդմիավորման նախագահներ են նշանակում այնպիսի ուսուցիչների, ովքեր բազմակողմանիորեն զարգացած են, մեթոդապես պատրաստ, ստեղծագործող, իրենց լավագույն օրինակով մյուսներին վարակող ու իրեն հետևից տանող: Երբեմն պատահում է, որ դպրոցի տնօրենը մեթոդմիավորման նախագահ է նշանակում այնպիսի մասնագետի, որին պետք է նյութապես բավարարի կամ «լավություն» անի, իսկ այդ դեպքում ոչ լիարժեք մասնագետը արդյունավետ չի ղեկավարում մեթոդմիավորման աշխատանքները:

Ուսումնասիրությունները հիմք են տալիս բերել կոնկրետ օրինակներ լավագույն դպրոցների մեթոդմիավորումների արդյունավետ գործունեությունից: Այսպես, օրինակ, Մարտակերտի թիվ 1, Առաջաձորի, Մեծ Շենի, Հաթերքի, Կուսապատի, Ասկերանի թիվ 1, Խանաբադի, Բադարայի, Նորագյուղի, Մարտունու թիվ 1, Ճարտարի, Գիշու, Հաղորտու, Սոսի, Հադրութի թիվ 1, Մեծ Թաղերի, Տողի, Տումու, Բանազորի, Շուշիի թիվ 1, Բերձորի, Քարին տակի և այլ դպրոցների, ինչպես նաև Շահումյանի, Քաշաթաղի շրջանների դպրոցների ներդպրոցական մեթոդմիավորումների աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով անպայման կազմվել է աշխատանքային պլան ամբողջ ուսումնական տարվա համար՝ հաշվի առնելով դպրոցի տնօրենի տարեկան աշխատանքային պլանը, որը հաստատվում է օգոստոսի 25-26-ին հրավիրված մանկավարժական խորհրդի նիստում, իսկ մեթոդմիավորման աշխատանքային պլանը հաստատվում է սեպտեմբերին՝ մեթոդմիավորման առաջին նիստում՝ տնօրինության կողմից: Քանի որ մեթոդմիավորումների համար տպագիր ձեռնարկներ չկան, դրանց նախագահները յուրաքանչյուր ուսումնական տարվա համար առանձնացնում են 36-38-էջանոց ընդհանուր տետր ու այնտեղ ըստ ուսումնական տարիների լրացնում մեթոդմիավորման գործունեությունը:[196]

Ստորև բերում ենք վերոնշյալ դպրոցների մեթոդմիավորումների նախագահների կազմած ընդհանուր տետրի կառուցվածքը.

-մեթոդմիավորման մեջ մտնող ուսուցիչների կազմը,

-մեթոդմիավորման աշխատանքային պլանը,

-մեթոդմիավորման նիստերի արձանագրությունները,

-մեթոդմիավորման անդամ-ուսուցիչների ինքնակրթության անհատական պլաններ և հանձնարարություններ,

-դասալսումներ և այլն:

Մեթոդմիավորումների մեջ մտնող ուսուցիչների մասին տեղեկություններին հատկացվում է համապատասխան բաժին, որտեղ գրված է՝ անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, ստաժը, ինչ առարկա է դասավանդում, ուսումնական ծանրաբեռնվածությունը, հասարակական գործունեությունը, պատվոգրերը, մեթոդմիավորման նիստերին մասնակցելու հաշվառք, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցչի հաշվետվությունը:

Առարկայական մեթոդմիավորումների նախագահների աշխատանքային պլանի մեջ ներառվում են՝

1.Ներածություն, որտեղ ընդհանրացվում է նախորդ ուս.տարվա կատարած աշխատանքի արդյունքը և նշվում նոր ուս.տարվա խնդիրները,

2.Դասալսումներ և փորձի փոխանակման դասեր,

3.Մեթոդամանկավարժական աշխատանք,

4.Աշխատանք երիտասարդ ուսուցիչների հետ,

5.Կապը կրթության համակարգի վերադաս օրգանների հետ,

6.Կապը փնջային մեթոդմիավորման հետ,

7.Մեթոդմիավորման նիստերի օրակարգերը և այլն:

Այս և այլ բնագավառների մասին մեթոդմիավորման նախագահները նախօրոք խորհրդակցում են մեթոդմիավորման յուրաքանչյուր անդամի հետ, հաշվի առնում յուրաքանչյուրի կարծիքը և լրացնում նոր առաջարկություններով, հաստատման ներկայացնում մեթոդմիավորման առաջին նիստում ու դրանով առաջնորդվում:

Մոտիկից ծանոթանալով նշված դպրոցների մեթոդմիավորումների նախագահների կողմից ղեկավարվող փնջային մեթոդմիավորման աշխատանքներին, նկատեցինք, որ մեթոդմիավորումը կարծես մի նոր դպրոց է նրանում ընդգրկված 4-5 դպրոցների ուսուցիչների համար: Բերենք կոնկրետ օրինակ:

Մարտակերտի թիվ 1 դպրոցի մեթոդմիավորման մեջ ընդգրկված են Ն. Հոռաթաղի, Կուսապատի, Գայլաթաղի, Մոխրաթաղի, Մեծ Շենի, Մարտունու թիվ 1, Ճարտարի, Գիշու, Վեսսալու, Խնուշինակի, Ասկերանի միջն. դպրոցի, Խնապատի, Խրամորթի, Նախիջևանիկի, Ուղտասարի, Փառուխի և այլ դպրոցների ուսուցիչներ: Յուրաքանչյուր հերթական միջոցառում դպրոցում վեր էր ածվում տոնի, բաց դռների օրի, որտեղ տարբեր միջոցառումներ էին նախապատրաստում, մեթոդմիավորման ուժերով՝ բաց դասեր, փոխադարձ դասալսումներ, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, գիտամանկավարժական թեմաներով զեկուցումներ, լսած դասերի բազմակողմանի վերլուծություններ և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բովանդակային բարեփոխումների նոր փուլում՝ ավագ դպրոցի ստեղծման շրջանում, հանրակրթական դպրոցներում ավելի է կատարելագործվում ներդպրոցական, միջդպրոցական՝ փնջային, մեթոդմիավորումների աշխատանքները: Դպրոցների, մեթոդմիավորումների հանձնաժողովների ղեկավարների ու առարկայագետ ուսուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվում են ներդպրոցական, փնջային դասալսումներ դպրոցական, շրջանային, քաղաքային և հանրապետական առարկայական օլիմպիադաներ, «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթներ, իրականացվում «Նոր ուսումնական ռազմավարական» (ՆՈՒՌ), «dasaran.am» ծրագրեր, կազմակերպում տարաբնույթ այլ միջոցառումներ:

Ինչպես հայտնի է, 2009-2010 ուսումնական տարին Արցախում սկսվեց կրթական համակարգի բարեփոխումների նոր փուլով՝ ծնվեց եռամյա ավագ դպրոց,

որը գյուղական դպրոցի կառուցվածքին համարյա ոչ մի բացասական հետևանք չպատճառեց, ընդհակառակը, ըստ ԿԳ նախարարի, «Ավագ դպրոցի համար ստացված ծրագրերից ու չափորոշիչներից կօգտվեն ոչ միայն առանձնացված կամ հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցները, այլև ընդհանուր ծրագրով առաջնորդվող միջնակարգ դպրոցները»[197]: Այս ուսումնական տարում, հիմնական և եռամյա ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրմանը և այդ փորձի ներդրմանն ու աշխատանքների խթանմանը նպաստելու են միտված առարկայական և փնջային մեթոդմիավորումները:

Հայտնի է, որ մանկավարժական առաջավոր փորձը նախահիմքն է մասսայական փորձի, որը ժամանակի ընթացքում վերածվում է հիմնարար մեթոդի: Մանկավարժական մեթոդները, նորությունները դժվար են կյանք մտնում, և չի բացառվում նաև, որ որոշ կանխանշված մեթոդներ, չնայած մեծագույն ձգտումներին, կարող են չտալ ցանկալի արդյունք: Բայց առաջավոր մանկավարժական փորձը կարող է պարունակել այնպիսի եզակի ինքնատիպ բաղադրամասեր, որոնք կմտնեն մանկավարժության պատմության արժեքավոր ֆոնդը և կփոխանցվեն սերնդե-սերունդ:

Հանրակրթական դպրոցների մեթոդփնջերի աշխատանքը մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրմամբ չի սահմանափակվում: Այն նպատակաուղղված է նաև սկսնակ ու երիտասարդ ուսուցիչների մեթոդական նախապատրաստվածության բարձրացմանը, ինքնակրթության ապահովմանը, թեմատիկ ուսումնասիրությունների կազմակերպմանը, մեթոդամանկավարժական նորագույն նվաճումներին ծանոթանալուն, ուսումնական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների քննարկմանը, համադպրոցական միջոցառումների, դպրոցական բազմաբնույթ հարցերի շուրջ լսումների, զեկուցումների կազմակերպմանը:

Վերոնշյալ աշխատանքների ապահովման ուղղությամբ արդյունավետ գործունեություն են կազմակերպել հանրապետության հանրակրթական դպրոցներում ձևավորված մեթոդմիավորումները:

Ըստ շրջանների՝ դպրոցները 2012-2013 ուս.տարում խմբավորված են մեթոդփնջերում: Նկատի ունենք հետևյալը.

-Մարտակերտի շրջան՝ 28 դպրոց-9 մեթոդմիավորումներ,
-Ասկերանի շրջան՝ 32 դպրոց-11 մեթոդմիավորումներ
-Մարտունու շրջան՝ 36 դպրոց-13 մեթոդմիավորումներ
-Հադրութի շրջան՝ 30 դպրոց-9 մեթոդմիավորումներ
-Շուշիի շրջան՝ 9 դպրոց-3 մեթոդմիավորում
-Քաշաթաղի շրջան՝ 51 դպրոց-14 մեթոդմիավորումներ
-Շահումյանի շրջան՝ 16 դպրոց-4 մեթոդմիավորում
-Ստեփանակերտի 12 դպրոց-4 մեթոդմիավորում:

Հանրակրթական հաստատությունները խմբավորված են մեթոդմիավորումներում՝ հաշվի առնելով գյուղերի աշխարհագրական դիրքը, հեռավորությունը հենակետային դպրոցներից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոցներում մեթոդփնջերի նախագահները տնօրեններն են, նրանք են ուսումնական տարվա սկզբին կազմում աշխատանքային պլան, որոշում աշխատակարգը և հետևողականորեն իրականացնում նախատեսված բոլոր միջոցառումները: Տնօրենների հաշվետվությունների տվյալների համաձայն, յուրաքանչյուր մեթոդփնջում լսվել և քննարկվել է 57-60 դասաժամ: Ուսումնական բոլոր առարկաներից կատարվել են դասալսում-

ներ և մտքերի փոխանակում, մանկավարժական թեմաներով կազմակերպված սեմինարներում քննարկվել են նաև զեկուցումներ: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել քննարկված որոշ թեմաներ.

-Աշակերտի նկատմամբ ուսուցչի մանկավարժական ճիշտ մոտեցումը՝ որպես ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման և որակի բարձրացման անհրաժեշտ պայման (Մարտակերտի թիվ 1 դպրոցի մեթոդմիավորման փունջ),

-Սովորողների ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման և որակի բարձրացման միտումով դպրոցի և ընտանիքի համագործակցության պայմանները (Հաթերքի մեթոդփունջ),

-Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասին (Ասկերանի թիվ 1 դպրոցի մեթոդփունջ),

-Ուսուցչի մանկավարժական տակտը դասին (Խնձրիստանի մեթոդփունջ)

-Սովորողների հետ ուսուցչի հաղորդակցման ոճը (Մարտունու թիվ 1 դպրոցի մեթոդփունջ),

-Ուսուցչի մանկավարժական ստեղծագործական աշխատանքը դասին (Ճարտարի մեթոդփունջ),

-Ուսուցչի աշխատանքը ծնողների հետ (Հադրութի թիվ 1 դպրոցի մեթոդփունջ),

- Համակարգչային խաղերը՝ ինտեգրված ուսուցման գործընթացում (Շուշիի թիվ 1 դպրոցի մեթոդփունջ),

-Անձի բարոյահոգեբանական դաստիարակության խնդիրները (Սարուշենի մեթոդփունջ),

-Բանակ-հասարակություն-դպրոց կապի ամրապնդման արդյունավետ ուղիները (Քաշաթաղի մեթոդփունջ),

-Ժամանակակից ուսուցման մեթոդները (Շահումյանի շրջանի Քարվաճառի մեթոդփունջ) և այլն:

2012-2013 ուսումնական տարում յուրաքանչյուր շրջանում հանրակրթական դպրոցներում ձևավորված մեթոդփնջերը հրավիրել են 4-5 նիստեր, որտեղ մանրամասն վերլուծվել են դասալսումների արդյունքները, քննարկվել են մանկավարժական և մեթոդական բնույթի թեմաներ: Մեթոդփնջում ընդգրկված փորձառու մանկավարժների ուշադրությունը դասալսման ժամանակ հիմնականում կենտրոնանում է ուսուցչի կողմից դասավանդման, մանկավարժական ներգործության մեթոդների ընտրությանը, իսկ դասերի վերլուծության ժամանակ նախապատվությունը տրվում է աշակերտների պատասխանների խորը և հիմնավոր լինելուն, գիտելիքների որակին, կարողություններին, հմտություններին, ուսուցչի շարադրանքին (գիտականություն, գաղափարականություն, արդիականություն), դասի դաստիարակչական նպատակաուղղվածությանը:

Դիտարկումները ցույց են տվել, որ հանրակրթական դպրոցների մեթոդփնջերի աշխատանքներին մասնակից առարկայագետ ուսուցիչներին մեծապես հետաքրքրում են դասի մեթոդական կողմերը՝ հարցման եղանակների բազմազանությունը, դիտողական պարագաների, տեխնիկական միջոցների օգտագործում, դասավանդման պրոբլեմայնություն, սովորողների ինքնուրույնության և մտածողության զարգացում, աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու և զբաղեցնելու, բանավեճի հրավիրելու ուսուցչի կարողություն, դասավանդվող նյութի ամրապնդման արդյունավետություն և նմանատիպ այլ հարցեր: Քննարկումներն անցնում են գործնական մթնոլորտում, մտցվում են առաջարկությունն-

ներ, առաջիկա հանդիպումների համար նախանշվում են ուղղություններ: Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջանի Կուսապատի դպրոցի մեթոդփնջի նախագահ Ա. Խաչատրյանը (տնօրեն), Ասկերանի շրջանի Սարուշենի դպրոցի մեթոդփնջի նախագահ Ա. Գասպարյանը, կարևորելով դասղեկի աշխատանքի նրբությունները, առաջարկել են ամենամյա մրցույթների ցանկում նախատեսել նաև «Տարվա լավագույն դասղեկ» մրցույթ:

Մեթոդփնջերի աշխատանքի կարևոր բաղկացուցիչ մասն է նաև «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի, աշակերտների ուժերով ցուցադրվող բազմաբնույթ միջոցառումների կազմակերպումը: Այսպես, հանրակրթական դպրոցի սովորողների ուսուցման ու կրթական համակարգի խնդիրներն ամբողջությամբ եղել և մնում են մեր երկրի, ժողովրդի ու պետության գերակա խնդիրը, քանի որ այն ռազմավարական նշանակություն ունի, ինչն էլ նպաստում է գիտելիքների նկատմամբ աշակերտների լուրջ ու խոհեմ վերաբերմունքի խթանմանը:

Ահա այդ որոնումների ճանապարհին էլ ծնվեց «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի անհրաժեշտությունը: Այս մրցույթը խթանում է, որ աշակերտներն էլ ավելի լավ սովորեն, աշխատեն ու հասնեն նոր բարձունքների:

Ըստ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների, 2009-2010 ուս.տարվանից սկսած յուրաքանչյուր ուս.տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում նախարարության, կրթության շրջանային և քաղաքային բաժինների կողմից անցկացվող «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթն արդեն ավանդական դարձավ: Այսպես՝ ԿԳ նախարարության կողմից անցկացվող «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի եզրափակիչ փուլը տեղի ունեցավ 2011-2012 ուսումնական տարվա հոկտեմբերի 31-ին, Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տանը:[198] Մրցույթի փուլերը, ինչպես նախորդ տարիներին, երեք մասից էին: «Ինտելեկտուալ մարաթոն» անվանումը կրող մրցույթի առաջին փուլում նրա մասնակիցները (էլինա Աղաբաբյան, ֆիզմաթ դպրոց, Ա. Շահինյան, Ասկերանի շրջանի Խնապատի մ/դ, էրիկ Թելյան, Մարտակերտի շրջանի Առաջածորի միջնակարգ դպրոց, Ժենյա Հարությունյան, Մարտունու շրջանի Ճարտարի թիվ 1 դպրոց և ուրիշներ, թվով 32 հոգի), պետք է 15 րոպեում լրացնեին դպրոցական ծրագրի շրջանակներում տարբեր առարկաներից 10 հարցերով հարցաթերթիկները և հավաքեին ամենաշատ՝ 20 միավորը:

Մրցույթի երկրորդ մասն ընթացավ «Դե մտածիր» խորագրով: Հանձնաժողովը (ԼՂՀ ԿԳՆ, կրթության շրջանային, քաղաքային բաժինների գլխավոր մասնագետները) յուրաքանչյուր մասնակցի տվեց երեք հարց, որի նպատակն էր վերհանել նրանց ինքնուրույն տրամաբանելու ունակությունը, հնարավորությունը, ինչպես նաև ճանաչողական գիտելիքները հայ մեծանուն գիտնականների, ազգային-ազատագրական պայքարի նվիրյալների, ազգային-պատմամշակութային արժեքների մասին:

Մրցույթի երրորդ մասը «Կրթությունը լույս է», «Սովորելու և ճանաչելու արժեքները», «Ո՞վ է նա՝ 21-րդ դարի աշակերտը», «Իմ դպրոցը և նրա ապագան», «Ուսուցիչը և ազգապահպանությունը» թեմաներով ստեղծագործական շարադրություն գրելն է: Այստեղ նույնպես անգերազանցելի էին ֆիզմաթի, Մարտակերտի թիվ 1, Մարտունու թիվ 1, Հադրութի թիվ 1, Ճարտարի թիվ 1, Ստեփանակերտի թիվ 2, Շուշիի Մուրացանի անվան, Առաջածորի, Հաթերքի, Վաղուհասի, Բերձորի դպրոցների աշակերտները, որոնք արժանիորեն ստացան այս մրցույթի առավելագույն գնահատականը՝ 6 միավոր, և արժանացան բարձր պարգևների:

2012-2013 ուս.տարում «Տարվա լավագույն աշակերտ» շրջանային, քաղա-

քային և հանրապետական մրցույթին ակտիվորեն մասնակցել են Մարտակերտի թիվ 1, Մեծ Շենի, Մաղավուզի, Կուսապատի, Վաղուհասի, Հաթերքի, Ասկերանի, Խնապատի, Այգեստանի, Ճարտարի, Գիշու, Հաղորտու, Սոսի, Մարիամաձորի, Մեծ Թաղերի, Տումու, Տողի, Շուշիի թիվ 1, 2, ինչպես նաև Քաշաթաղի, Շահումյանի շրջանների դպրոցականները: Իսկ քաղաքային փուլում՝ Ստեփանակերտի թիվ 1, 2, հիմնական, թիվ 8, 11 ավագ դպրոցների 12-րդ դասարանների աշակերտները: Շրջանային փուլում հաղթող են ճանաչվել 42, քաղաքային փուլում՝ 9, հանրապետական փուլում՝ 12 աշակերտ: Ի դեպ, նշենք, որ մրցույթում աշակերտներից յուրաքանչյուրին տրվում էր 10 հարցերից բաղկացած թերթիկ, որն աշակերտը պետք է լրացներ 10 րոպեի ընթացքում: Հարցերն ընտրված էին դպրոցական ծրագրից: Լավագույն ճանաչված աշակերտը պարգևատրվում է պատվոգրով: Հանրապետական փուլում հաղթող են ճանաչվել վեց աշակերտներ՝ Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցի աշակերտուհի Անահիտ Պողոսյանը, Վ. Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մարտիրոսյանը, Մարտունու շրջանի Ճարտարի թիվ 1 հոսքային դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Ժենյա Հարությունյանը, Մարտակերտի շրջանի Առաջաձորի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Մերի Բեկնազարյանը, Հադրութի շրջանի Մարիամաձորի միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Հերմինե Արզումանյանը և Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Ավանեսյանը:[199]

Հանրակրթական դպրոցների տնօրենների հաշվետվությունների ուսումնասիրությունից իրազեկ ենք դառնում, որ մեթոդմիավորումների ղեկավարների, փորձառու ուսուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ՝ առարկայական մրցույթ-խաղեր, ցուցահանդեսներ և այլն: Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջանի դպրոցներում կրթադաստիարակչական աշխատանքներին զուգընթաց աշակերտների ինտելեկտի զարգացմանն է ուղղված նաև միտքն ու տրամաբանությունն ակտիվացնող խաղերի կազմակերպումը: 2012-2013 ուս.տարում շրջանի Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոցի աշակերտները մասնակցել են Երևանում անցկացված «Հայ ասպետ» հեռուստախաղին: Լավագույններն արժանացել են պարգևների ու գովասանագրերի: Իսկ «Գիտունիկ» ինտելեկտուալ խաղի շրջանային փուլին մասնակցած 6 թիմերի մեջ լավագույնը ճանաչված՝ Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցի «Ջրաբերդ» թիմը հանրապետական փուլում զբաղեցրել է 2-րդ տեղը:

Փաստագրական նյութերի ուսումնասիրումը ցույց է տվել, որ շրջանի դպրոցականները միշտ էլ աչքի են ընկել ստեղծագործելու ունակությամբ: 2013-2014 ուս.տարում Մայիսյան եռատոնին նվիրված շարադրությունների մրցույթի հանրապետական փուլում 2-րդ տեղն են գրավել Մարտակերտի թիվ 1 միջն. դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լուսիա Գասպարյանը, Վ. Հոռաթաղի միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշկերտուհի Մերի Հարությունյանը և արժանացել գովասանագրերի: Նշենք նաև, որ այդ ուսումնական տարում շրջանի դպրոցականները ակտիվորեն մասնակցել են առարկայական օլիմպիադայի մրցույթներին: Բացի շրջանային փուլից, հանրապետական փուլում լավ են հանդես եկել Մարտակերտի թիվ 1, Վաղուհասի,Հաթերքի, Ն. Այգեստանի, Թալիշի, Ն. Սեյսուլանի, Կոճողոտի, Հաթերքի միջնակարգ դպրոցների աշակերտները: Եվ այդ առումով պետք է նշել բնագիտական առարկաների ուսուցիչներ Նվարդ Վանյանի, Մարինե Պետրոսյանի, Նունե Գասյանի, Ժիրայր Ասոյանի, հումանիտար առարկաների ուսուցիչներ Կարմեն Հարությունյանի (Վաղուհաս), Լուսինե Մնացականյանի

(Մարտակերտի թիվ 1) և այլ ուսուցիչների դրվատանքի արժանի աշխատանքը: 2013-2014 ուս.տարում առաջին անգամ վերոնշյալ դպրոցների շարքում հանրապետական փուլին մասնակցել են նաև Կուսապատի, Կիչանի միջնակարգ դպրոցների աշակերտները:[200] 2013-2014 ուսումնական տարում Մայիսյան եռատոնին նվիրված ստեղծագործական շարադրությունների հանրապետական մրցույթում հաղթող են ճանաչվել մայրաքաղաքի թիվ 1 դպրոցի (2 աշակերտ), թիվ 2 հիմնական դպրոցի (3 աշակերտ), թիվ 11 ավագ դպրոցի (3 աշակերտ), թիվ 8 ավագ դպրոցի (3 աշակերտ), Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի (2 աշակերտ), Հադրութի թիվ 1 հիմնական դպրոցի (1 աշակերտ), Բերձորի միջնակարգ դպրոցի (1 աշակերտ), իսկ շրջանային փուլին մասնակցել են բոլոր դպրոցները, թվով 92 աշակերտներ, որոնցից 36-ը արժանացել են պատվոգրերի:

Վերոնշյալ ուսումնական տարում հանրակրթական դպրոցների աշակերտները տարաբնույթ թեմաներով կազմակերպված մրցույթներում հասել են բարձր արդյունքների: Այսպես, 2009 թվականից սկսած՝ ամեն տարի նոյեմբերին Ռուսաստանի հայերի միությունը և Համաշխարհային հայկական կոնգրեսը, ՀՀ Սփյուռքի և ԿԳ նախարարությունների հետ համատեղ կազմակերպում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով (Հայ-ռուսական դարավոր կապերը, բարեկամություն՝ ուղղված ապագային) ստեղծագործական աշխատանքների մրցույթ ուսանողների և աշակերտների միջև: 2013-2014 ուս.տարում ևս մրցույթի թեման յուրատիպ էր և կրկին մեծ արձագանք գտավ ստեղծագործական հակումներ ունեցող ուսանողության և աշակերտության շրջանում: Մրցույթին մասնակցում էին թվով 200 հոգի Հայաստանի Հանրապետությունից և Արցախից: Արցախի աշակերտները և ուսանողները ևս ցուցաբերեցին բարձր արդյունքներ: Բարձր դասարանների աշակերտները Մանուշակ Առստամյանը (Ստեփանակերտի թիվ 2 դպրոց, «Ռուս ժողովրդի հանդեպ տածած անչառ սիրո դրսևորում»), Մերի Խաչատրյանը (Ավետարանոցի միջնակարգ դպրոց) ստեղծագործական շարադրությունների «Ամենագեղեցիկ պատմվածք» անվանակարգում արժանացել են մրցանակների:

Հանրապետության դպրոցներում տարեցտարի ընդլայնվում են նաև «Գիտունիկ», «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային խաղ-մրցույթները: Եթե 2011-12 ուս.տարում յուրաքանչյուր շրջանից մասնակցել են. Մարտակերտի՝ 140 աշակերտ, Մարտունու՝ 152, Հադրութի՝ 120, Ասկերանի՝ 138, մայրաքաղաքի՝ 168, Շուշիի՝ 96, Քաշաթաղի՝ 186, Շահումյանի՝ 88 դպրոցականներ, ապա 2013-14 ուս.տարում դրանց թիվը, ըստ շրջկենտրոնների, ավելացել է 287 աշակերտների ընդգրկումով, այդ թվում՝ ավագ դպրոցների, ովքեր որոշակի հակումներ ունեն մաթեմատիկայի նկատմամբ: Հաղթողներին տրվում են հատուկ մրցանակներ՝ լավագույն ցուցանիշների համար:[201]

Հանրակրթական դպրոցներում աշակերտները կազմակերպում են «Ոսկե աշուն» «Գովք մեծ ուղուն», «Իմ հայրենի գյուղը», «Հայ զինվորի սխրագործությունը», «Հմուտ ձեռքեր» թեմաներով ցուցահանդեսներ, որտեղ դրսևորվում են լավագույն աշակերտների կարողություններն ու հմտությունները: Այդպիսի ցուցահանդեսներ են կազմակերպվել նաև 2013-14 ուս.տարում, որոնց մասնակցել են Մարտակերտի թիվ 1, 2, Կուսապատի, Մեծ շենի, Հաթերքի, Ասկերանի թիվ 1, Բադարայի, Նորագյուղի, Այգեստանի, Խաչենի, Մարտունու թիվ 1, Ճարտարի, Գիշու, Մաճկալաշենի, Մեծ Թաղերի, Տումու, Բերձորի դպրոցների աշակերտները: Ի դեպ, նշենք, որ ցուցահանդեսները կազմակերպվել են շրջանային, քաղաքային և հանրապետական փուլերով, լավագույններն արժանացել են պատվոգրերի:

Կազմակերպվել են նաև ստեղծագործական շարադրությունների, ասմունքի մրցույթներ՝ նվիրված ԼՂՀ հռչակման 25-ամյակին, Արցախյան շարժման 25-ամյակին, հայ մեծանուն գրողներ Թումանյանին, Իսահակյանին, Դեմիրճյանին, Հովհ. Շիրազին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Մայիսյան եռատոնին: Նշված մրցույթների բոլոր փուլերին էլ ակտիվորեն մասնակցել և մրցանակային տեղեր են զբաղեցրել դպրոցականները՝ պարգևատրվելով կրթության շրջանային բաժնի, ԼՂՀ ԿԳՍ նախարարության, կառավարության, ինչպես նաև պաշտպանության նախարարության կողմից:

Ըստ դպրոցների տնօրենների հաշվետվությունների տվյալների, առարկայագետ ուսուցիչները՝ խորապես տիրապետելով իրենց մասնագիտությանը, կարողանում են սովորողների մեջ ձևավորել ու զարգացնել տրամաբանական, լեզվական մտածողություն, մեծ տեղ են տալիս խմբային աշխատանքներին, մասնագիտական գրականության նորություններին: Այդ առումով նշենք մի քանի կոնկրետ օրինակներ:

Պաշտոնական տվյալներից տեղեկանում ենք, որ հանրակրթական դպրոցների դասվարները բոլոր առարկաներից ունեն տնօրինության կողմից հատստված թեմատիկ պլանավորումներ մայրենիից՝ մայրենիի բոլոր բաղադրատարրերով՝ ինքնուրույն ընթերցանություն, խոսք և հաղորդակցություն, գրավոր աշխատանքներ: Որոշ դպրոցների ուսուցիչներ (Մարտակերտի շրջանի Հաթերքի, Մարտակերտի հ. 1, Կուսապատի, Ասկերանի շրջանի Խնապատի, Ասկերանի հ. 1, Ստեփանակերտի հ. 1, 2, 7, 8, 1, Ճարտարի հ. 1, Մարտունու հ. 1, Գիշու, Հադրութի հ. 1, Մեծ Թաղերի, Տումու և այլն, կազմել էին նաև նոր գնահատմանն առնչվող ժամանակացույցը՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր, գործնական, կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Ժամանակին նշված դպրոցների աշակերտները ձեռք են բերել մասնագիտական ուսումնական ձեռնարկներ: Նախարարությունը ևս բավականին ուսումնաօժանդակ ձեռնարկներ, դիդակտիկ նյութեր և պաստառներ է տրամադրել կրտսեր դպրոցին:

Դպրոցներում կատարած ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք, որ ուսուցիչները դասագործընթացում հետաքրքիր ու արդյունավետ աշխատանքների, աշակերտակենտրոն, չափորոշչահեն ուսուցման դրույթների կիրառմամբ, մանկավարժական սկզբունքների ապահովմամբ աչքի ընկան դասվարներ Մաիլա Ալավերդյանը, Անժելա Գրիգորյանը, Օֆելյա Աթաջանյանը, Ավրորա Գևորգյանը (Ստեփանակերտի հ. 10 հիմն. դպրոց), Հադրութի շրջանից Լաուրա Եղյանը, Ջեմմա Գասպարյանը (Հադրութի հոսքային միջն. դպրոց), Մարտակերտի շրջանից Արմինե Մանուկյանը, Նորա Մնացականյանը, Մալվինա Հարությունյանը (Մարտակերտի հ. 1 հոսքային դպրոց), Իրինա Ասրյանը (Վ. Հոռաթաղի միջն. դպրոց), Ասկերանի շրջանից Միլարա Միրզոյանը, Հրանուշ Աղաբեկյանը, (Սզնեքի միջն. դպրոց, համակազմ դասարան), Ալվարդ Ղահրամանյանը (Խնապատի միջն. դպրոց), Շուշիի շրջանից Մեծ շենի միջն դպրոց, համակազմ դասարան, Ամալյա Ավանեսյանը (Քարին տակի միջն. դպրոց), Մարտունու շրջանից Էլմիրա Մուսայելյանը, Աիդա Գաբրիելյանը, Գայանե Ոսկանյանը (Մարտունու հ. 2 հիմն. դպրոց), Ռազմելա Ադամյանը (Ճարտարի ավագ դպրոց), Գալյա Գրիգորյանը, Արգենտինա Առաքելյանը (Ստեփանակերտի հ. 10 հիմն. դպրոց), Նագրաֆինա Ասրյանը (Մարտակերտի շրջանի Գետավան), Նուրվարդ Անտոնյանը, Նորա Գասպարյանը (Մարտակերտի շրջան, Մատաղիսի միջն. դպրոց) և ուրիշներ: Նրանք զարգացնում են աշակերտների հնչյունային լսողությունը, որն աշակերտի գրավոր և բանավոր խոսքի առանցքն է: Դասերին օգտագործում են խորհրդանշա-

կան զննողականության տարրեր, գծապատկերներ, տեղին են կիրառում վանկակազմական և բառակազմական աշխատանքները, հետաքրքիր են դարձնում բոլոր դասերը: Կարևորում են աշակերտների բանավոր հաղորդակցումը, գրավոր խոսքի զարգացումը, քերականական գիտելիքների ձևավորումն ու մտածողության զարգացմանը միտված աշխատանքները: Վաղուհասի, Հարգոմերի, Կուսապատի, Ստեփանակերտի հ. 1, 2, 7, 11, Ճարտարի, Գիշու, Խնապատի, Շոշի, Ասկերանի հ. 1, Շուշիի հ. 1 և այլ դպրոցներում դասալսումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսուցիչները ճիշտ են կառուցում դասերը, ուսումնասիրել են կրթական առարկայական չափորոշիչները, աշխատում են իրականացնել չափորոշչային միջինը: Մեծ տեղ են տալիս հատկապես սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, նրանց մոտ մարդկային բարձր արժեքների մշակմանը, դասագործընթացում ուսուցիչներն օգտագործում են տարբեր բնույթի աշխարհաճանաչողական տեղեկություններ, որոնք և և հմտորեն կարողանում են հասցնել աշակերտների ընկալունակությանը:

Մարտակերտի կրթության շրջանային բաժնի վարիչ Ժասմեն Դավթյանի հաշվետվության տվյալներով՝ 2013-2014 ուսումնական տարում շրջանի դպրոցներում գործում են ավելի քան 30 մեթոդմիավորումներ (տարրական դասարանների բնագիտական և հումանիտար առարկաների, ֆիզիկական դաստիարակության և զինվորական պատրաստության (զինղեկների, ուսուցիչների), որոնցում ընդգրկված են շուրջ 250 ուսուցիչներ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում հրավիրվում է մեթոդմիավորումների ընդհանուր խորհրդակցություն, որտեղ մեթոդմիավորումների նախագահներն իրենց հաշվետվություններում ներկայացնում են իրենց կատարած աշխատանքների արդյունքները՝ միջփնջային դասալսումներ, մանկավարժական ընթերցումներ, շրջանային, հանրապետական օլիմպիադաների կազմակերպման, աշակերտական մրցույթների («Տարվա լավագույն աշակերտ», «Տարվա լավագույն դպրոց») և այլ տարաբնույթ միջոցառումների կազմակերպման մասին:

Ասկերանի շրջանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2013-2014 ուսումնական տարում շրջանում գործող 33 հանրակրթական դպրոցներն ընդգրկված են 18 մեթոդփնջերում, որոնք համակարգված աշխատանք են տանում. կազմակերպում են պլանային միջոցառումներ, հանդիպումներ փնջի մեջ մտնող դպրոցների մասնակցությամբ, որպեսզի լավագույն փորձը տարածվի սկսնակ և երիտասարդ ուսուցիչների շրջանում: Ուսումնական տարում՝ առաջին և երկրորդ կիսամյակներում, մեթոդփնջերը կազմակերպում են բաց դասեր, սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ և օրինակելի դասերի վերլուծություններ, լավագույն զեկուցումները ներկայացնում ԿԳՆ «Լուսարար» թերթին:

Հետաքրքիր էր «Ծաղկաշատում» (հեղինակ՝ «Լուսարար» թերթի խմբագիր Սվետլանա Խաչատրյան) հոդվածը, որի ընթերցումից տեղեկացանք, որ շրջանի Ծաղկաշատի միջնակարգ դպրոցի մեթոդփնջում ընդգրկված են Խնձրիստանի (որը նաև փնջի հենակետային դպրոցն է (ղեկավար՝ Անահիտ Բալայան), Հիլիսի, Ռևի, Խաչենի դպրոցները: Բաց դաս էր կազմակերպել ուսուցչուհի Նադեժդա Հայրապետյանը 12-րդ դասարանում:[202] Ենթաշրջանն ընդգրկող դպրոցների ներկայացուցիչներից բացի, ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարարության ու կրթության շրջանային բաժնի գլխավոր մասնագետներ:

Ծաղկաշատի դպրոցի ումումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է դպրոցի տնօրեն Անահիտ Կաս-

յանի՝ դպրոցը ղեկավարելու համագործակցության սկզբունքով ու կառավարման արդյունավետ մեթոդներով, և ամենակարևորը, նա դպրոցում ստեղծում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, կարողանում է հաղթահարել հակասություններն ու կոլեկտիվում առաջացած վեճերը և կոլեկտիվի անդամներին տալ տարածայնությունների լուծման համար խորհուրդներ:

Ուսումնասիրությունների ընթացքում ծանոթացանք Նորագյուղում և Խնապատում կազմակերպված մեթոդխորհուրդների աշխատանքներին: Նորագյուղի մեթոդխորհրդում ընդգրկված են չորս դպրոցներ՝ Նորագյուղի, Իվանյանի, Հովսեփավանի և Սարդարաշենի:

Ընդօրինակման դասեր կազմակերպվեցին երկու ուսուցիչների՝ փորձառու Լաուրա Ներսիսյանի (2-րդ դասարան, «Ես և շրջապատի աշխարհը») և սկսնակ՝ Քրիստինե Գրիգորյանի մոտ (11-րդ դասարան-ֆիզիկա): Ուսուցիչները առավել հետաքրքիր կազմակերպեցին դասի առաջին և երկրորդ մասերը՝ ժամանակակից դասին ներկայացվող պահանջներին համապատասխան: Մանկավարժական խորհրդի նիստում (նաև մեթոդմիավորման խորհրդում) լսած դասերի վերլուծության ժամանակ վերոնշյալ ուսուցիչներն ընդգծեցին, որ դասն իրենց համար շատ ուսանելի է և հատկապես վաստակաշատ մանկավարժների արած օգտակար դիտողությունները:

Ամփոփելով քննարկումը, շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբաբյանը խրախուսեց ուսուցիչների աշխատանքը (հատկապես Քրիստինե Գրիգորյանի, Նաիրա Գրիգորյանի՝ հայոց լեզու և գրականություն) և կոչ արեց համախմբել ուժերը մի կարևոր խնդրի շուրջ, այնպես անել, որ մանկավարժության ասպարեզն ընտրեն մեր լավագույն աշակերտները: Կրթության բաժնի վարիչը տնօրեններից պահանջեց, որ նրանք ուշադրությամբ հետևեն ուսուցիչների կողմից dasaran.am-ի ծրագրի կատարմանը:

Մեթոդմիավորումը կարևոր է այն առումով, որ հանրակրթական դպրոցների ուսուցիչները հավաքվում են և միմյանց հաղորդում իրենց մանկավարժական առաջավոր փորձը, դասավանդման մեթոդներն ու եղանակները: Այդ մասին իր հաշվետվությունում նշում է Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի տնօրեն Նազիկ Նալբանդյանը: Ըստ տնօրենի հաշվետվության տվյալների, 2013-2014 ուս.տարում դպրոցում մեթոդփնջի մասնակիցները ավանդաբար կազմակերպեցին տասն առարկաների գծով ընդօրինակման բաց դասեր: Բարձր մակարդակով էին կազմակերպված դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Օլյա Իշխանյանի, Քարին տակի միջնակարգ դպրոցի դասվար Ամալյա Ավանեսյանի, քիմիայից էլմիրա Թևոսյանի, ֆիզիկայից Լիլյա Պողոսյանի, աշխարհագրությունից Լուսինե Պետրոսյանի կազմակերպած դասերը: Բաց դասերի քննարկումները եղան լիագումար նիստում, որտեղ գիտամանկավարժական, մեթոդական զեկուցումներով հանդես եկան նաև ԼՂՀ ԿԳ նախարարության և կրթության շրջանային բաժնի առաջատար մասնագետները, տնօրենները, թոշակառու վաստակաշատ մանկավարժները:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2013-2014 ուսումնական տարում Շուշիի շրջանի բոլոր դպրոցներում փնջային մեթոդմիավորումների կողմից կազմակերպվել են 12 առարկաներից բաց և փոխադարձ դասեր, դասամիջոցառումներ, մանկավարժական ընթերցումներ: Շուշիի Դանիել Ղազարյանի անվան և Լիսագորի միջնակարգ դպրոցներում անց են կացվել մեթոդմիավորման փնջային նիստեր, որտեղ կազմակերպվել են օրինակելի բաց դասեր՝ հատկապես ընդգրկելով երիտասարդ ուսուցիչներին: Համակողմանի քննարկումների ժամանակ բարձր են

գնահատվել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունն ու մանկավարժական վարպետությունը, իհարկե, եղել են նաև դիտարկումներ նոր դասանյութի գիտական շարադրման վերաբերյալ: Բացակայում էին ներառարկայական և միջառարկայական կապերը: Առաջարկվել է լավագույն ուսուցիչների դասավանդման ուսանելի փորձը լուսաբանել «Լուսարար» թերթում:

Փնջային մեթոդմիավորման նախագահ Էմմա Աբրահամյանը (Շուշի քաղաքի թիվ 2 դպրոցի տնօրեն) մեթոդմիավորման նիստում ներկայացրած իր հաշվետվությունում մատնանշել է, որ առարկայագետ ուսուցիչների բաց դասերն ու զեկուցումները վկայում են, որ նրանք պրպտուն միտք ունեն, օգտագործում են անհրաժեշտ գրականություն, մշակում նոր դասանյութը, որոնք դասը մատչելի ու հետաքրքիր են դարձնում: Ուսանելի են նաև բավականին նորություններ պարունակող՝ նրանց գիտականորեն հագեցած և մշակված մեթոդական և մասնագիտական զեկուցումները (դրանք պահպանվում են կրթության շրջանային բաժնի արխիվում):[203]

Շուշիի շրջանի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերից և տնօրենների հաշվետվություններից տեղեկանում ենք, որ 2014-2015 ուս.տարում հերթական անգամ հրավիրված՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական, Մուրացանի անվան ավագ, Դ. Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտական, երաժշտական, Քարին տակի Հ. Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոցների փնջային մեթոդմիավորման նիստը նպատակ ուներ պահպանելով կրթական համակարգի լավագույն ավանդույթները՝ բարելավել ուսումնական գործը նշված դպրոցներում և տարածել առաջավոր փորձը մանկավարժական կոլեկտիվներում:[204] Նշենք նաև, որ շրջանի Եղծահողի, Մեծ շենի միջնակարգ դպրոցներում նույնպես կազմակերպվել են մեթոդմիավորման փնջային նիստեր, որտեղ կազմակերպվել են բաց դասեր, լսվել զեկուցումներ: Նիստերի աշխատանքներին մասնակցել են կրթության և գիտության նախարարության պատասխանատու աշխատողներ Օ.Ասրյանը, Ս. Արզումանյանը և ուրիշներ:

Քաշաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերից և «Լուսարար» թերթի 2013թ. հ. 36-ում տպագրված՝ Հռիփսիմե Բաբայանի (շրջանի Հոչանց դպրոցի դասվար) «Դասաժամն օգտագործվեց արդյունավետ և նպատակային» հոդվածից տեղեկանում ենք, որ շրջանի դպրոցներում պատշաճ մակարդակով են կազմակերպվում ուսումնական պարապմունքները, ուսուցիչները կիրառում են ուսուցման ժամանակակից մեթոդները, կազմակերպում փոխանակման դասեր:

Այսպես, օրինակ, 2012-2013 ուսումնական տարվա դեկտեմբերի 1-ին Բերձորի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցում 4-րդ դասարանի աշակերտները առաջին անգամ տեսականը գործնականի հետ համադրելով (լաբորատոր փորձեր), ցույց տվեցին իրենց գիտելիքները «Ես և շրջակա աշխարհը» առարկայից (ուսուցչուհի՝ կրթության բաժնի տարրական դասարանների գծով տեսուչ Սիրվարդ Թամազյան): Միջփնջային փորձի փոխանակման դասին ներկա էին Քարեգահի, Սոսի, Հոչանցի և Բերձորի հ.1,2 դպրոցների դասվարները: Ուսուցչուհին դասն սկսեց գրավիչ մուտքով՝ պտտվող մոլորակի լուրերով նշելով օրվա խորհուրդը, ձմռան առաջին օրը՝ դեկտեմբերի 1-ը: Հին դասի ընթացքում օգտագործեց ուսուցման արդյունավետ մեթոդներ (ընկալում, իմաստավորում, ամրակայում (ԽԻԿ) և հարցման, զրույցի, համագործակցային), հնարներ ու միջոցներ, ապահովելով աշակերտների ակտիվությունը, հարցերի ու առաջադրանքների միջոցով ստուգեց աշակերտների կողմից հին նյութի յուրացման մակարդակը:

Նոր դասանյութի շարադրման ընթացքում ուսուցչուհին խթանում էր սովորողների ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացումը և ճանաչողական հետաքրքրությունները, միաժամանակ դասարանում ստեղծում բարենպաստ հոգեբանական մթնոլորտ:

Ուսուցչուհին կիրառեց գնահատման ուսուցանող ձևը: Դասը աշակերտակենտրոնն էր և ուսանելի ու արժանի է ընդօրինակման, քննարկման ժամանակ իր ելույթում մատնանշեց կրթության բաժնի բնագիտական առարկաների գծով տեսուչ Ա. Սարգսյանը: Շրջանի կրթության բաժնի հայոց լեզվի և գրականության տեսուչ Արաքսյա Այվազյանի հաշվետվությունից նաև տեղեկանում ենք, որ 2013-2014 ուսումնական տարվա նոյեմբերի 26-ին շրջանի միջփնջային մասնախմբերի ղեկավարները և փորձառու ու սկսնակ ուսուցիչները հրավիրվել էին Բերձորի Վ. Ջատիկյանի անվան հ.2 միջնակարգ դպրոց՝ ականատես լինելու հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Արաքսյա Այվազյանի, Նարինե Թադևոսյանի կազմակերպած օրինակելի բաց դասերին: Հայոց լեզվի, գրականության ուսուցչուհի Ն. Թադևոսյանը 11-րդ դասարանում անցկացնում է «Գոյական» թեմայի ամփոփում: Ըստ տեսուչ Ա. Այվազյանի գնահատման, ուսուցչուհին մոտեցել էր նորովի՝ օգտագործելով ժամանակակից մեթոդներ և հնարներ, համակարգչային տեխնիկա: Դասի նպատակը ստացած գիտելիքների ամրապնդումն ու այդ գիտելիքների համակարգումն էր: Դասը կառուցված էր ԽԻԿ (խթանում, իմաստավորում, կշռադատում) համակարգով: Խթանման փուլում ուսուցչուհին մտագրոհի միջոցով ներկայացրեց թեմայի բովանդակությունը՝ ստեղծելով միջառարկայական, ներառարկայական կապ, իմաստի ընկալման փուլում ամփոփման անցնելով, սկսեց տնային առաջադրանքների պարզաբանումը, կշռադատման փուլում աշակերտները ներկայացրին ուսուցչի պարզաբանած նյութը և վարժությունների միջոցով կատարեցին ինքնուրույն առաջադրանքներ նախօրոք ուսուցչի կազմած տեքստից:

Փնջային մասնախմբի ղեկավարները նմանատիպ ընդօրինակման դասեր են կազմակերպել նաև Կովսականի, Արտաշավի, Նորաշենի, Բազմատուսի և այլ համայնքների միջնակարգ-հիմնական դպրոցներում, և արդյունավետ քննարկում են օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում:[205]

Հարկ է նշել նաև, որ ինչպես հանրապետության մյուս շրջաններում, այնպես էլ Քաշաթաղի շրջանում ավանդույթ է դարձել յուրաքանչյուր ուսումնական տարում հրավիրել դպրոցների տնօրենների խորհրդակցություն: Այսպես, 2014-2015 ուս.տարվա հունվարի 27-ին Բերձորում հրավիրվեց տնօրենների խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև շրջվարչակազմի ղեկավարները, ԼՂՀ ԿԳ նախարարության պատասխանատու աշխատողները: Խորհրդակցությունում քննարկվեցին ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման, առարկայական օլիմպիադաների անցկացման, փնջային մեթոդմիավորումների գործունեության հետ կապված հարցեր: Խորհրդակցությունում տնօրեններին հանձնարարվեց հետևողականորեն վերահսկել ուսումնական պարապմունքների կազմակերպումը և դպրոցների վերանորոգման աշխատանքները և այդ ամենի մասին մանրամասն հաշվետվություն ներկայացնել կրթության բաժին:

Ըստ արժանվույն գնահատելի է շրջանի կրթության բաժնի տեսուչների, տնօրենների, ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից ցույց տված մեթոդական օգնությունն ուսուցիչներին, հատկապես սկսնակ ուսուցիչներին: Այսպես, օրինակ, շրջանի կրթության բաժնի վարիչ Վ. Մովսիսյանի հաշվետ-

վությունում նշվում է, որ 2013-2014 ուսումնական տարում տեսչության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել շրջանի հանրակրթական դպրոցներում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձր է գնահատվել հատկապես Քաշաթաղի թիվ 1, Տիգրանավանի, Այգեհովտի, Ծաղկաբերդի, Հակարիի, Ալաշկերտի, Սարատակի, Մշենի, Ծովքաձորի, Վանի միջնակարգ դպրոցներում: Ստուգումների արդյունքները քննարկվել են մանկավարժական խորհրդի նիստերում և դպրոցների տնօրեններին հանձնարարվել է հետևողական աշխատանքներ տանել նաև վերհանված թերություններն ու բացթողումները վերացնելու համար: Կրթության բաժնի տեսուչների կողմից պարբերաբար այցելություններ են կատարվել համարյա բոլոր դպրոցներն ու նախադպրոցական հաստատությունները: Կազմակերպվել են սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ, մեթոդմիավորման խորհրդակցություններ, փորձառու ուսուցիչների մոտ բաց դասալսումներ՝ երիտասարդ սկսնակ ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով:[206] Նրանց նախաձեռնությամբ դպրոցականները յուրաքանչյուր ուսումնական տարում ակտիվորեն մասնակցում են դպրոցական, շրջանային և հանրապետական օլիմպիադաներին, ստեղծագործական շարադրությունների, մաթեմատիկական խաղերի մրցույթներին և այլ միջոցառումներին: Բերենք կոնկրետ օրինակներ:

ԼՂՀ ԿԳ նախարարության հունվարի 20-ի հրամանի համաձայն, 2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում անցկացվեցին դպրոցական, շրջանային և հանրապետական օլիմպիադաներ հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն, գերմաներեն), աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա առարկաների գծով: Քաշաթաղի շրջանի դպրոցական փուլին մասնակցել են 122 աշակերտ, շրջանային՝ 96, հանրապետական փուլին՝ 16 աշակերտներ: Տարեցտարի մեծանում է օլիմպիադայի ինչպես մասնակիցների, այնպես էլ հաղթողների թիվը, ինչը վկայում է գիտելիքների զարգացման, հետևաբար և ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող նպատակային գործունեության մասին: Դիտարկումները ցույց են տալիս, որ օլիմպիադայում հաղթում են այն աշակերտները, որոնց ուսուցիչները գիշեր-ցերեկ տքնաջան աշխատում են իրենց սաների հետ: Նման ուսուցիչներն, իհարկե, քաղում են իրենց աշխատանքի քաղցր պտուղները՝ վայելելով իսկական մանկավարժին հատուկ մասնագիտական բերկրանքը:

Օլիմպիադայի հանրապետական 3-րդ փուլում հաղթող ճանաչված դպրոցականները և նրանց դասավանդող ուսուցիչները պարգևատրվում են նախարարության դիպլոմներով, գովասանագրերով, պատվոգրերով և դրամական պարգևով: Օլիմպիադայի հաղթողները խրախուսվեցին նաև պետական բարձր մակարդակով՝ արժանանալով ԼՂՀ նախագահի ընդունելությանն ու պարգևատրությանը, որը շարունակական է, իսկ սա նշանակում է, որ պետությունը կարևորում է գիտելիքի դերը երկրի հզորացման գործում:

Շահումյանի շրջանի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանի հաշվետվության տվյալների համաձայն, 2013-2014 ուս.տարում շրջանի 16 դպրոցներում գործում են 20 առարկայական մեթոդմիավորումներ, որոնք ըստ պլանի, բարձր մակարդակով աշխատանք են տանում դպրոցներում ուսումնական գործընթացի բարելավման համար: Մեթոդմիավորումները կազմակերպել են բաց և միջդպրոցական դասալսումներ Քարվաճառի, Մանաշիդի, Եղեգնուտի, Չարեքտարի, Դադիվանքի, Վերին շենի համայնքների միջնակարգ դպրոցներում: 2013-2014 ուսումնական տարում դպրոցներում կազմակերպվել է նաև առարկայական օլիմ-

պիադայի դպրոցական փուլը, փետրվարին՝ շրջանային, որին մասնակցել են 103 աշակերտներ: Դպրոցների աշակերտները նույնպես ակտիվորեն մասնակցել են օլիմպիադայի շրջանային փուլին: Հաղթող ճանաչված 19 աշակերտներ մասնակցել են օլիմպիադայի հանրապետական փուլին, որտեղ Քարվաճառի և Եղեգնուտի դպրոցների աշակերտները (4 հոգի) պարգևատրվել են պատվոգրերով:

Կրթության բաժնի վարիչի հաշվետվությունում նշվում է, որ 2013-2014 ուս.տարում շրջանում կազմակերպվել և անցկացվել է «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթ: Դպրոցների աշակերտները ակտիվորեն մասնակցել են ստեղծագործական շարադրությունների և ասմունքի տարբեր մրցույթների հանրապետական փուլերին, որտեղ Արցախյան շարժմանը նվիրված ասմունքի մրցույթում հաղթող են ճանաչվել 4 աշակերտներ:

2013-2014 ուս.տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում ներկայացրած իր հաշվետվության մեջ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Կ. Մարգարյանը՝ վերլուծելով դպրոցների տնօրենների հաշվետվություններում նշված փաստացի տվյալները, մատնանշեց, որ այդ տվյալները վկայում են, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով են կազմակերվպել մայրաքաղաքի դպրոցներում: Նա հատկապես դրանց շարքում հիշատակեց դպրոցների փնջային մեթոդմիավորումների կատարած աշխատանքները: Ըստ կրթության բաժնի վարիչի տվյալների, վերոնշյալ ուսումնական տարում մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում գործել են 15 քաղաքային առարկայական մեթոդմիավորումներ, որոնց կողմից կատարվել է 835 ժամ դասալսում (նախկինի համեմատ 94-ով ավել), կազմակերպվել քաղաքային 21 բաց դաս և 28 տարաբնույթ միջոցառումներ (սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ, ուսումնաօժանդակ ձեռնարկների քննարկումներ և այլն): Ժամանակին հրավիրվել են մեթոդմիավորման նիստեր, լսվել տեսական և մեթոդական բազմաբնույթ զեկուցումներ, կատարվել քննարկումներ, ցուցաբերվել մեթոդական օգնություն սկսնակ ուսուցիչներին: Կազմակերպված քաղաքային բաց դասերից ուսանելի և ընդօրինակելի էին Կարինե Սարգսյանի (հ.1 հիմնական դպրոց), Լուսինե Արզագուլյանի, Իրա Սարինյանի (հ. 2 հիմնական դպրոց), Արմենուհի Խանումյանի, Գրետա Բարսեղյանի (հ.11 ավագ դպրոց), Գոհար Աղամյանի (հ. 3 հիմնական դպրոց), Ծովինար Բեգլարյանի (ֆիզմաթ դպրոց), Արմեն Հարությունյանի (հ. 5 հիմնական դպրոց) դասերը:[207]

Մայրաքաղաքի հ.2 հիմնական դպրոցի տնօրեն, մեթոդփնջի նախագահ Լ. Մարտիրոսյանը գրառումների իր մատյանում գրում է. դասալսումների քննարկումների ժամանակ առարկայական մասնագետներն անում են իրենց դիտողությունները, առաջարկությունները, կարծիքներ հայտնում դասերի վերաբերյալ, նշում և ընդօրինակելին, և մասնագիտական թերացումները: Քննարկումների, դասալսումների, հանդիպումների արդյունքում մեթոդական օգնության երաշխավորված և արդյունավետ ձևաչափ է համարվում մեթոդփնջերի գործունեությունը: Եղիշե Չարենցի անվան հիմնական դպրոցի տնօրեն, վաստակավոր մանկավարժ, մեթոդփնջի նախագահ Ա. Պողոսյանը իր գրառումներում մատնանշում է, որ մեթոդփնջերի ղեկավարները չշրջանցելով բազմավաստակ ուսուցիչների փորձը, մեթոդփնջերի նիստերին հրավիրում են նաև վաստակաշատ թոշակառու ուսուցիչներին՝ Ա. Միրզոյանին, Մ. Շահնազարյանին, Ա. Պողոսյանին, Ն. Թամրազյանին, Ս. Դավթյանին և շատ ուրիշների:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 2013-2014 ուս.տարում ԿԳ նախարարության, կրթության շրջանային, քաղաքային բաժինների վարիչների

կողմից կազմակերպվում են շրջանային, համաքաղաքային բաց դասեր Մարտակերտի թիվ 1 դպրոցում, Հաթերքում, Առաջաձորում, Ասկերանի թիվ 1, Մարտունու թիվ 1, Գիշու, Ճարտարի, Հադրութի թիվ 1, Տողի, Տումու, Շուշիի թիվ 1, Բերձորի միջնակարգ, Ստեփանակերտի թիվ 2, 10 և ֆիզմաթ դպրոցներում: Մեթոդմիավորումների նախաձեռնությամբ կազմակերպվում են նաև դաս-միջոցառումներ: Բերենք դաս-միջոցառման մի ուսանելի օրինակ, որն ըստ արժանվույն գնահատվեց քաղաքային կրթության բաժնի և ԿԳ նախարարության կողմից: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցի աշակերտների (5-6-րդ դասարանների) մասնակցությամբ 2013-2014 ուս.տարվա հոկտեմբերին տեղի ունեցավ դաս-միջոցառում հայոց պատմություն առարկայից՝ ՀՕ համակարգչի օգտագործմամբ: Նախաձեռնողը վաստակաշատ ուսուցչուհի (հ. 12 դպրոց) Կարինե Դադասյանն էր: Դասի ողջ ընթացքը մի ճանապարհորդություն էր՝ խաղաղությունից պատերազմ, արտագաղթ, ապա նորից խաղաղություն: Թեման «Արտագաղթ»-ն էր: Ուսուցչուհին աշակերտների գիտակցությանը հասցրեց պատերազմի և դրա անմիջական հետևանքի՝ արտագաղթի բացասական նշանակությունը մարդկության համար: Ամբողջ դասընթացը հայրենասիրական վեհ զգացումներ առաջացնելն էր, արտագաղթի հետևանքով առաջացած գաղթականների և սփյուռքահայ նշանավոր գործիչների ներդրումը հայոց կյանքում արժևորելը:

Ուշագրավ է նշել նաև այն փաստը, որ թիվ 12 դպրոցի տնօրեն էլմիրա Գաբրիելյանը, բացի ներդպրոցական, փնջային դասալսումների կազմակերպումից, նաև բարեկամական ամուր կապեր է հաստատում Հայաստանի հանրակրթական դպրոցների հետ, և փոխայցելությունների ժամանակ կազմակերպում է բաց դասեր, մանկավարժական ընթերցումներ, ընդօրինակում առաջավոր փորձը, և նման միջոցառումները նախապայմաններ են ստեղծում սովորողների ուսման որակի բարձրացման համար: Իհարկե, այդպիսի ավանդույթների հիմնաքարը (որը յուրահատուկ էր բոլոր դպրոցներում) դրվեց անկախություն ձեռք բերելուց հետո: Բերենք կոնկրետ օրինակ:

2013-2014 ուսումնական տարվա մարտի 22-ին Ստեփանակերտի թիվ 12 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվին ուրախությամբ դիմավորեցին Երևանի Վ. Համբարձումյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Վլադիմիր Հովհաննիսյանը, Անժելա Ավետիսյանը, Նելլի Նիկողոսյանը, պահեստազորի կապիտան, զինղեկ Վալերի Պոչինսկին: Տնօրենը հյուրերին ծանոթացրեց դպրոցի կյանքին, դասասենյակներին, ուսումնական կաբինետներին, լաբորատորիաներին, համակարգչային կաբինետներին և կազմակերպեց այցելություն ժամանակակից մեթոդներով, տեխնիկական հագեցվածությամբ դաս-պարապմունքներին:

Դպրոցի տնօրեն էլմիրա Գաբրիելյանը իր հուշերում[208] պատմում է, որ «Դրանում համոզվեցինք հաջորդ օրը, երբ պայմանավորվածության համաձայն, մենք՝ առարկայական ուսուցիչներս, ներկայացանք դասալսումներին: Դասը հիմնականում աշակերտակենտրոն էր, կազմակերպված խմբային մեթոդներով, զուգակցված նորը ավանդականին, ինքնատիպ կառուցվածքով: Աշակերտների խոսքը հղկած է, ազատ, կարողանում են կարծիք հայտնել, արտահայտել սեփական տեսակետները»:

Երկու դպրոցների մանկավարժական կոլեկտիվների մտքերի փոխանակումն ու սրտաբուխ զրույցն այսօրվա դպրոցի առջև ծառացած խնդիրների մասին էր՝ առավելապես ուսման հանդեպ սերն ու հետաքրքրությունը կորցնելու միտում ունեցող աշակերտներին դեպի գիրքը, դեպի դպրոցը հետ բերելու, սովորողների ուսուցումն առավել բարձր մակարդակով կազմակերպելու, ուսման բարձր որակ

ապահովելու մասին: Խնդիրներն առկա են երկու դպրոցներում էլ, համատեղ ուրվագծվեցին նոր բնագծեր նվաճելու ուղիները:[209]

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների նոր փուլում (2010-2015թթ.) հանրապետության կրթական հաստատություններում ուսումնական գործընթացում լայն տեղ է տրվում տեղեկատվական նոր տեխնոլոգիաներին: Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, իսկ խոշոր դպրոցներում կան նաև համակարգչային կաբինետներ: Բացի դրանից, նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրեր են իրականացվում: Մասնավորապես ՆՈՒՌ ծրագիրը:

Արցախում հանրահայտ հապավում դարձավ ՆՈՒՌ-ը՝ նոր ուսումնական ռազմավարությունը, որը հանրապետության կրթական համակարգում ներդրվեց արգենտինահայ բարերար Էդուարդ Էռնեկյանի հովանավորությամբ՝ 2009-2011 ուս.տարում: Ինչպես տեղեկացանք ԿԳ նախարարության ծրագրամեթոդական բաժնի փաստաթղթերից, 2011-2012 ուս.տարվա օգոստոսի 6-17-ը Արցախում էին ծրագրի արգենտինյան պատասխանատուները՝ ՆՈՒՌ ծրագրի մաս կազմող «Ֆրուտֆուլ Արմենիա» հիմնադրամի ղեկավար Կոնստանսա Ռուջեն, ծրագրի ղեկավար Սեբաստիա Դյուվալը, անդամներ Լուսինե Յանիկյանը, Հասմիկ Մկրտչյանը:[210]

Ծրագրի հեղինակի խոստովանությամբ, ՆՈՒՌ ծրագրի նպատակն է հանրապետության դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներին տրամադրել մեկական համակարգիչ՝ նպատակ ունենալով նրանց ապահովել ուսուցման ժամանակակից մեթոդներով: Իսկ նրանց ուսուցիչներին տրվելու է մեկական համակարգիչ-լատթուփ: Իսկ դպրոցներում ինտերնետ կապը կապահովի ԼՂՀ կառավարությունը, ինչը ծրագրի գլխավոր ուղղություններից մեկն է: ՄՀՄԵ կրթական ծրագիրը մշակվել է ԱՄՆ Մասաչուսեթսի տեխնոլոգիաների ինստիտուտում: Այն հաջողությամբ համակցել է կառուցողականությունը ժամանակակից դյուրակիր համակարգչի՝ ХО-ի ստեղծման հետ, որը հատուկ նախագծվել ու մշակվել է կրթական նպատակներով:

Նոր ուսումնական տարում համակարգիչներ ստացել են Ստեփանակերտի և Շուշիի կրտսեր դասարանների 3.150 աշակերտներ (որից 2901-ը Ստեփանակերտից), 130 դասվարներ կանցնեն վերապատրաստման դասընթացներ:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Ս. Ասրյանը «Լուսարար» թերթի 2011թ. հ.22-ում նշեց, որ նախատեսված էր ծրագիրը գործարկել սեպտեմբերի 1-ից, սակայն քանի որ համակարգիչները պատվիրված էին Ճապոնիայում, ուստի այնտեղ տեղի ունեցած երկրաշարժի պատճառով ծրագրի իրականացումը մի փոքր ուշացել է:[211]

Ինչպես մատնանշեց Ս. Ասրյանը, ծրագիրը 2011-2012 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում լիարժեք գործել է մի շարք դպրոցներում: Ծրագրի թիրախը տարրական կրթությունն է (քանզի փոքր հասակում երեխայի ուղեղն ունակ է ավելի շատ ինֆորմացիա կլանել).

-բոլոր դպրոցները կապահովվեն լափթուփներով: Ոչ մի երեխա դուրս չի մնա ծրագրից, երեխաները կապահովվեն համացանցով,

-ХО-ն կունենա անվճար և բաց ծրագրային ապահովում, որպեսզի լափթուփը ինքնին աճի և հարմար լինի երեխայի տարիքին,

-լափթուփը պատկանելու է երեխաներին: Նրանք կարող են տանել տուն և օգտագործել, երբ ցանկանան:

Ըստ ծրագրի հեղինակ Արիս Դյուվալի, այդ ծրագիրը գործում է շուրջ 40 երկրներում և այն նախատեսված էր նոր զարգացող երկրների համար, իսկ այժմ օգ-

տագործվում է նաև զարգացած երկրներում: Նախարարության պաշտոնական տեղեկությունների համաձայն, 2012 թվականին ՆՈՒՌ ծրագրով ու համակարգիչներով ապահովվել են հանրակրթական դպրոցների 3.600 աշակերտներ, ինչի շնորհիվ հավասար հնարավորություն ստեղծվեց ուսումնական գործընթացում տեխնոլոգիաների ներգրավման համար:

Ինչպես տեղեկացանք ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից[212], առաջին փուլում (2011-2012 ուս.տարում, ընդգրկվել են Ստեփանակերտի, Շուշիի և Քարին տակի դպրոցների շուրջ 3500 աշակերտներ: 2012-2013 ուս.տարում՝ 1000 առաջին դասարանցի ևս ընդգրկել են: Ի դեպ, նշենք, որ ծրագրի անդամների այս այցի նպատակն էր Արցախում պատրաստել մասնագետներ: Այն բոլոր դպրոցներում, որոնք ունեն ինտերնետային (համացանցային) կապ, և ուսուցիչները մասնակցել են ծրագրի դասընթացներին, ՆՈՒՌ-ը ունի ներկայացուցիչներ, որոնք մասնագիտական ավելի լավ պատրաստվածություն ունեն և պատասխանատու են ծրագրի ներդրմանը դպրոցներում:

Դասընթացների սկզբում հինգ օր ծրագրի մասնակիցները վերապատրաստման դասընթացներ անցկացրին հենց այդ ուսուցիչ-պատասխանատուների հետ: Նախ թարմացվեց նրանց իմացածը, այնուհետև նոր, ավելի բարդ աշխատանքներ կատարվեցին այն նույն ծրագրերով, որ անցյալ տարի էին սովորել ու նաև տեղեկացվեցին իրենց պարտականությունների մասին: Նրանցից էլ կազմեցին թիմ, որը կփոխարինի ՆՈՒՌ-ի անդամներին, երբ ծրագիրն Արցախում ավելի տարածվի: Իսկ տարածումը կախված է ինտերնետային կապից, որի շնորհիվ նաև շրջանների դպրոցները կընդգրկվեն ցանցի մեջ: Եվ որպեսզի ամեն անգամ Արգենտինայից մասնագետները չգան այստեղ, տեղում պատրաստված թիմը շրջաններում կաշխատի ուսուցիչների հետ:

Ուսումնական տարում՝ օգոստոսի 20-28-ը, ՆՈՒՌ ծրագրի դասընթացներ անցկացվեցին 5-րդ դասարանում դասավանդող տարբեր առարկաների ուսուցիչների համար: Նրանք պետք է աշխատեն չորրորդ դասարանն ավարտած, համակարգիչ ստացած երեխաների հետ, որոնք ամռանը պարապ չեն մնացել, «քչփորել» են համակարգչային ծրագրերը: Երբեմն երեխաները համակարգչին ավելի լավ են տիրապետում, քան մեծահասակները, և 5-րդ դասարանի ուսուցիչներն արդեն գիտակցում են, որ պետք է գործ ունենան ՆՈՒՌ ծրագիրը լավ տիրապետող երեխաների հետ:

ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստի (2013թ. 20-ին օգոստոսի) որոշմամբ, 2012-2013 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսից ՆՈՒՌ ծրագրով նախատեսված է, որ ուսումնական տարվա կտրվածքով յուրաքանչյուր դպրոց կազմակերպի բաց դաս (դաս-պրոյեկտ)՝ ՀՕ համակարգիչների կիրառմամբ: Ստեփանակերտի թիվ 2 և թիվ 3 դպրոցներում արդեն անցկացվել են նման դասեր: Հերթականը թիվ 5 դպրոցում էր «Ես և շրջակա աշխարհը» առարկայից: Ներկա էին մայրաքաղաքի դպրոցներից դասվարներ, կրթության բաժնի մասնագետներ, ՆՈՒՌ ծրագրի համակարգող Մարգարիտա Գրիգորյանը: Բաց դասը 4-րդ դասարանում էր՝ դասվար Գոհար Աղաբալյանի մոտ: Թեման «փողն» էր: Ընտրությունը պատահական չէր, այդ տարի հոբելյանական է մեր հայկական դրամի համար, նրա 20-ամյակն է: ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկացանք նաև, որ 2012-2013 ուսումնական տարում ՆՈՒՌ ծրագրի թիմը նորից Արցախում էր՝ նրա ղեկավար Սեբաստիան Արիաս Դյուվալի գլխավորությամբ: Նա ասաց. «Մենք հիմա ավարտին ենք հասցնում ՆՈՒՌ ծրագրի 2013թ. ծրագրի վերջին փուլը, առաջին փուլն այն դպրոցներում, որտեղ արդեն երկու տարի առաջ

իրականացվել է ՆՈՒՌ ծրագիրը»: Այսպիսով, Ստեփանակերտի և Շուշիի (այդ թվում՝ Քարին տակ գյուղի) դպրոցների շուրջ 800 առաջին դասարանցիներ ստացան ՀՕ համակարգիչներ: Իսկ երեք տարվա ընթացքում (2010-2013թթ.) Արցախում ներդրվել է ՆՈՒՌ ծրագիրը՝ 5.500 համակարգիչ:[213]

2012-2013 ուսումնական տարում ՆՈՒՌ-ի ծրագրում ընդգրկվել են նաև հանրապետության բոլոր շրկենտրոնները: Սեբաստիան Դյուվալն ասաց, որ առայժմ համակարգիչներ ստացել են դասավանդող ուսուցիչները, որոնք ամռան ընթացքում նաև վերապատրաստվել են, իսկ երեխաներին համակարգիչները կտրվեն հաջորդ տարվա մարտ-ապրիլ ամիսներին:

Նոր ուսումնական տարում (2013-2014 ուս.տարում), բացի մայրաքաղաքից, բոլոր շրջկենտրոնների դպրոցների 1-4-րդ դասարանների համար գործում էր «Մեկ երեխային՝ մեկ համակարգիչ» ծրագիրը: Չնայած գործընթացում դեռևս կային որոշ թերություններ, բոլոր դեպքերում այն նպաստում էր, որպեսզի առաջին դասարանից սկսած երեխաները տիրապետեն տեղեկատվական տեխնոլոգիաներին ու կարողանան դրանք օգտագործել ուսումնական գործընթացում: 2013-2014 ուս.տարվանից դպրոցներում գործում է «dasaran-am» ծրագիրը, որը ներդրվել է նախորդ ուսումնական տարվա վերջին: Ծրագրի նպատակն է աշակերտների առաջադիմության, նրանց հաճախելիության, ուսուցիչների և ծնողների կապի և ընդհանուր հարաբերությունների, ինչպես նաև դպրոցի կառավարման ավելի արդյունավետ ձևի կիրառումը: Ծրագիրը շարունակական է, նպատակն է նաև ստեղծել համընդհանուր դպրոցական ցանց, որը կմիանա ՀՀ դպրոցական միասնական ցանցին և հնարավոր կլինի օգտվել բոլոր այն էլեկտրոնային պաշարներից ու կրթական ծրագրերից, որոնք անհրաժեշտ են ուսուցման արդյունավետության ապահովման համար:

ՀՀ ԿԳՆ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների համաձայնագրի շրջանակներում իրականացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրեր: Ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում (2013-2014 ուս.տարվա օգոստոսի 23-24) ԿԳ փոխնախարար Միքայել Համբարձումյանը՝ ներկայացնելով հանրակրթական դպրոցներում ՆՈՒՌ ծրագրի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները, միաժամանակ մատնանշեց, որ գործում է նաև «Ռոբոտաշինությունը սկսվում է դպրոցից» ծրագիրը, ուր ուսուցիչներ օգոստոսի 1-29-ը վերապատրաստվել են Երևանի ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկության միության մասնագետների կողմից: Այդ ուսուցիչներին պետք է ապահովել խմբակային ժամերով՝ ռոբոտատեխնիկային երեխաներին ծանոթացնելու նպատակով: Դիտարկումները ցույց են տվել, որ բացի այդ, կատարվում էին փորձարարական աշխատանքներ: 2011-2012 ուսումնական տարում Ասկերանի շրջանի Այգեստանի դպրոցում 5-6-րդ դասարաններում «Ինստիգեյթ այփի» տեխնոլոգիաների ոլորտում աշխատող ձեռնարկության մասնագետների հետ միասին իրականացվեց «Սկրաչ» ծրագրի ուսուցումը, և դպրոցականներն արդեն իրենք են ստեղծում ու մոդելավորում խաղեր:

ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերի տվյալներից տեղեկանում ենք, որ ամեն տարի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում անցկացվում է «Դիջիթեք» ստուգատեսը, որին մասնակցել են նաև Արցախի դպրոցականները: Դրանցում ամենաակտիվը Ստեփանակերտի դպրոցականներն են: Ինչ վերաբերում է համացանցին, Ստեփանակերտի դպրոցներում բոլորը բավարարված են, բայց նպատակային օգտվողները քիչ են:

Եթե 2009-2010 ուսումնական տարում հայալեզու կայքեր, ռեսուրսներ չունե-

ինք, ապա 2012-2013 ուսումնական տարում դրանց քանակը մեծացել է, և ուսուցիչները որոշակի աշխատանքներ ունեն անելու երեխաներին одноклассник-ֆեյսբուքյան վտանգավոր ծուղակներից հեռացնելու և նրանց ուղղորդելու դեպի գիտակրթական կայքեր:

Ուսուցչական խորհրդակցությունում ԿԳ նախարար Ս. Ասրյանը իր ամփոփիչ ելույթում ծրագրային հիմնադրույթների պարունակությամբ հանձնարարականներ տվեց հանրակրթական դպրոցի ուսուցիչներին՝ բարձրացնել ուսման որակը դպրոցներում: Միաժամանակ մատնանշեց, որ ուսուցիչները պետք է տիրապետեն դասավանդման նորագույն մեթոդներին և տեխնիկական միջոցներին:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալներից տեղեկանում ենք նաև, որ 2013-2014 ուսումնական տարվա հոկտեմբերին Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մի խումբ աշակերտներ իրենց ուսուցիչների հետ, ուսումնական նախագծեր իրականացնելու նպատակով, չորսօրյա այցով հերթական անգամ Արցախում էին: Ի դեպ, այս կրթահամալիրն իրականացնում է նաև կրթական այլընտրանքային, հեղինակային ծրագրեր, ակումբային աշխատանքներ, որոնցից է էկոտուրը:[214]

Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցի դահլիճում տեղի ունեցած հավաքույթին ներկա էին ԿԳ նախարարության ղեկավարները, քաղաքի դպրոցների տնօրենները, ուսուցիչները, կրթության շրջանային բաժինների վարիչները, գլխավոր մասնագետները: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի էկոտուր նախագծի ղեկավար Մարթա Ասատրյանն ասաց, որ խումբը, որում ընդգրկված են նաև վրացախոսների ակումբի անդամները, բազմաթիվ նախագծեր է իրականացրել Հայաստանում և Վրաստանում: Արցախ գալու հիմնական նպատակն է տեղի դպրոցականներին ծանոթացնել էկոտուր միջազգային ստուգատեսին, ցույց տալ այն նախագծերը, որոնք նախորդ տարի ճանաչվել են լավագույնը: Էկոլոգիական նախագծերն առօրյայում մեծ տարածում ունեն, և սովորողների միջոցով այդ խնդիրներին լուծում տալը ճիշտ միջոց է:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը՝ հանդես գալով «Լուսարար» թերթի 2014թ. թիվ 35 համարում, նշեց, որ 2012-2013 ուսումնական տարում Ստեփանակերտի դպրոցների աշակերտներից կազմված թիմը փորձնական կարգով մասնակցել է ստուգատեսին և լավ արդյունք ցույց տվել ու շահել ՀՀ Տավուշի շրջանում գտնվող «Զիկատուր» բնապահպանական կենտրոնի համանուն միջազգային ճամբարի ուղեգիրը: Էկոտուրի աջակիցներն են ՀՀ ԿԳՆ և բնապահպանության նախարարությունները: Նպատակն է հասարակության ուշադրությունն ուղղել բնապահպանական խնդիրներին և որոշակի լուծում տալ դրանց ուսումնական նախագծերով:

«Լուսարար» թերթի 2015թ. 3-րդ համարում տպագրված՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Ն. Նալբանդյանի հարցազրույցից տեղեկանում ենք, որ 2014-2015 ուսումնական տարվա հունվարին դպրոցի կոլեկտիվը սիրով ընդունեց Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի՝ «Դիջիթեք-2015»-ին մասնակցելու հրավերը, և հունվարի 28-30-ը մասնակցեցին «Դիջիթեք» շաբաթին: Նախաձեռնությունը նպատակ ուներ ուսումնական գործընթացում խթանել թվային միջոցների արդյունավետ կիրառման փորձն ու ձեռքբերումները, թվային գիտելիքների և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը, քանզի անհնարին է պատկերացնել ժամանակակից դպրոցն առանց անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության: Տնօրենը միաժամանակ մատնանշում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ուսումնական գործընթացին զուգահեռ

պահում և պահպանում են նաև մեր ազգային մշակութային արժեքները (արհեստներ, արվեստներ, ժողովրդական երգ ու պար)՝ դրանք սերունդներին անթերի փոխանցելու նպատակով: Ծրագրով նախատեսված տարբեր ոլորտների ուսանելի փորձ ունեցող մասնագետներ են հրավիրվել դպրոց՝ վարպետության դասեր վարելու նպատակով (համացանցի անվտանգության մասնագետ, ինժեներ, լրագրողներ, նկարիչներ, ոսկերիչ և այլն): Հետաքրքիր անցավ աշակերտների հանդիպումը ՆՈՒՌ ծրագրի հեղինակ Արման Դավթյանի հետ: Մասնակիցները անկաշկանդ երկխոսության մեջ մտան: Աշակերտների տված նրա խորհրդի նշանաբանն է՝ սովորել, սովորել հնարավորինս շատ: Երջանկություն է համարում սիրած աշխատանքով զբաղվելը, իսկ աշխատանքը կյանքն իմաստավորում է բոլոր առումներով:[215]

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2014-2015 ուսումնական տարում հանրապետության կրթական հաստատություններում շատ բան է արվել ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու, սովորողների մասնագիտական կողմնորոշումը բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Խոսքը վերաբերում է առարկայական օլիմպիադաների կազմակերպմանն ու դրանց արդյունքների ընդհանրացմանը, ուսումնական աշխատանքների որակի բարձրացման միտումով համակողմանի ստուգումների անցկացմանն ու արդյունքների քննարկմանը, ավագ դպրոցում ուսուցման արդյունավետության բարձրացման, ուսման մեջ սովորողի հետ մնալու պատճառների բացահայտման, դրանց հաղթահարման ուղիների որոնման, դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդմանը:

Հանրակրթական դպրոցում բարեփոխումների վերջին փուլում (2014-2016թթ.) մանկավարժական կոլեկտիվների ամենակարևոր խնդիրներից մեկը, ինչպես միշտ, եղել և մնում է ուսման որակի բարձրացումը, ուսման մեջ սովորողների առաջադիմության ապահովումը, և այդ միտումով հանրակրթական առարկաների նկատմամբ առանձնակի հետաքրքրություն ցուցաբերած աշակերտների վերհանման, մասնագիտական առարկաների ուսումնասիրման ու նրանց հետ անհատական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը:

Կրթության համակարգում իրականացվող բոլոր բարեփոխումները մեկ նպատակ են հետապնդում՝ կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որն իր գիտելիքներով ու կարողություններով գերազանցի նախորդ սերնդին: Հետևաբար, ուսուցման նպատակն է խթանել աշակերտի մտածողությունը, կատարելագործել նրա ինքնուրույնությունը, հնարավորություն տալ պատկերավոր մտածելու, և որ ամենակարևորն է՝ այդ ամենը գրագետ ձևով ի ցույց դնել: Նման միտում ունեն նաև դպրոցականների առարկայական օլիմպիադաները: Կոնկրետ օրինակներով ցույց տանք, թե ինչպես են կազմակերպվել առարկայական օլիմպիադաները 2014-2015 ուս.տարում:

Առանց վարանման կարող ենք ասել, որ օլիմպիադայի նպատակն է տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:

Համաձայն «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի և «Դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգի» պահանջների, ինչպես նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2014թ. դեկտեմբերի 20-ի հրամանի՝ փետրվարի 21-ից մարտի 9-ը ընկած ժամանակահատվածում շրջանային,

քաղաքային դպրոցներում 14 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն) անց է կացվել ԼՂՀ դպրոցականների 2014-2015 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադա, որի արդյունքներն ամփոփվել են հանրապետական փուլում: Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցին համապատասխան՝ յուրաքանչյուր առարկայի հատկացվել է առանձին օր: Օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են ստացել 373 դպրոցականներ:

Ինչպես տեղեկացանք նախարարության պաշտոնական փաստաթղթերից, 2014-2015 ուսումնական տարվա մայիսին ԼՂՀ ԿԳ նախարարությունն ամփոփել է ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի արդյունքները: Մրցանակների հանձնման արարողությունը տեղի ունեցավ Ստեփանակերտի թիվ 1 հիմնական դպրոցի դահլիճում: Մրցանակակիր աշակերտներին և նրանց ուսուցիչներին շնորհավորել է ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը: Նա կարևորել է առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփումը, որ դրանցով կարելի է եզրահանգել, թե դպրոցներում ինչպես են աշխատում, ինչ սերունդ կա և ինչ է սպասվում ապագայում: Օլիմպիադայի մասնակից 6-9-րդ դասարանների աշակերտներն իրենց գիտելիքները փայլուն դրսևորել են նաև ՀՀ-ում անցկացված օլիմպիադայում:

ՀՀ դպրոցականների օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցած՝ մայրաքաղաքի դպրոցների 27 աշակերտներից մրցանակային 1-ին -3-րդ տեղեր են զբաղեցրել ռուսաց լեզվից՝ Ասյա Առստամյանը, Արման Գրիգորյանը (թիվ 3 դպրոց), օտար լեզվից՝ Տիգրան Վարդանյանը (թիվ 11, 2-րդ տեղ), Աննա Արզումանյանը (թիվ 1), Յուրի Սարգսյանը (ֆիզմաթ) և ուրիշներ (թիվ 2, 5, 7, 10 դպրոցներ): Այս աշակերտների ձեռք բերած հաջողություններում իրենց ներդրումն ունեն ուսուցիչներ Կարինե Ամիրջանյանը և Զոյա Մարտիրոսյանը (թիվ 3), Հասմիկ Սեյրանյանը (թիվ 11), Գայանե Հարությունյանը (թիվ 1), Քրիստինե Մնացականյանը (ֆիզմաթ), Արսեն Հարությունյանը (թիվ 5), Վարուժան Աղաջանյանը (թիվ 10), Գրետա Բարսեղյանը (թիվ 11) և ուրիշներ:

Վերլուծությունները ցույց են տվել, որ նախորդ տարիների համեմատ 2014-2015 ուսումնական տարում ներդպրոցական, շրջանային, քաղաքային և հանրապետական օլիմպիադայի արդյունքները գոհացուցիչ են:

Նախորդ տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է անգլերեն, պատմություն, մաթեմատիկա, հայոց եկեղեցու պատմություն և նախնական զինվորական պատրաստություն առարկաներից:

Ինչպես նախորդ տարիներին, այդ տարում ևս օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքները ստուգելու նպատակով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ ԱրՊՀ համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ:

Գրավոր աշխատանքների ստուգումները բոլոր առարկաներից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել ու ներկայացվել են նախարարին և նույն օրը տեղադրվել նախարարության www.edu.nkr.am կայ-

քում: Օլիմպիադայի 17 մասնակիցներ բողոքարկման օրերին համապատասխան հանձնաժողովին են դիմել հայոց լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, ռուսաց լեզու և ՆՀՊ առարկաներից: Բողոքարկման արդյունքների մասին ևս տեղեկատվություն է տեղադրվել նախարարության վերոնշյալ կայքում:

Օլիմպիադայի արդյունքներն ամփոփվել են կրթության, գիտության և սպորտի նախարարության ընդլայնված խորհրդակցությունում: Նախարարն իր ելույթում մատնանշեց, որ հայոց լեզու, անգլերեն, պատմություն, մաթեմատիկա առարկաներից նախորդ տարվա համեմատ մրցանակային տեղերի քանակը նվազել է, իսկ ռուսաց լեզու, հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն, կենսաբանություն, ֆիզիկա և ՆՀՊ առարկաներից մրցանակային տեղերն ավելացել են: Եթե համեմատելու լինենք դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի վերջին 5 տարվա արդյունքները, ապա պատկերը հետևյալն է, 1-ին և 3-րդ մրցանակային տեղերն ըստ ուսումնական տարիների ավելացել են: Այդ տարում ևս մրցանակային տեղ չունեցանք քիմիա և ինֆորմատիկա առարկաներից: Ի դեպ, նշենք, որ քիմիա առարկայից մրցանակային տեղ չենք ունեցել 2010-2013, 2013-2014 ուսումնական տարիներին ևս:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ մրցանակային տեղերն աճել են Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջանների թիմերի հետ:

Այսպիսով, սովորողների շրջանում առանձնահատուկ նշանակություն և դեր ունի ավանդական առարկայական օլիմպիադաների կազմակերպումը: Շրջանների դպրոցների սովորողների օլիմպիադան կազմակերպվել է 3 փուլով՝ ներդպրոցական, շրջանային և հանրապետական: Շրջանային փուլը կազմակերպվել է 2015թ. փետրվարի 12-14-ը: Օլիմպիադային մասնակցել են յուրաքանչյուր շրջանի միջնակարգ և հիմնական դպրոցների 9-12-րդ դասարանների 254 աշակերտներ, իսկ 11-ը՝ 7-8-րդ դասարանների աշակերտներ: Օլիմպիադան կազմակերպվել է ուսումնական 14 առարկաներից: Հանրապետական փուլին մասնակցել են 42 աշակերտներ, որոնցից մրցանակային տեղեր են զբաղեցրել և առաջին կարգի մրցանակ ստացել 27 աշակերտ, իսկ ակտիվ մասնակցության համար պարգևատրվել են 12 աշակերտներ: Օլիմպիադայի եզրափակիչ փուլի արդյունքներով դիպլոմների և պատվոգրերի արժանացան 24 աշակերտ: Օլիմպիադայի արդյունքները (2015-2016 ուս.տարվա) քննարկվել են ԿԳ նախարարությունում՝ տնօրենների ընդլայնված խորհրդակցությունում:

Հանրապետությունում արդեն ավանդույթ է դարձել դպրոցականների առարկայական օլիմպիադաներում բարձր արդյունքների հասած աշակերտներին պետական բարձր մակարդակով խրախուսելը: Բարի ավանդույթի սկիզբը դրվեց 2012-2013 ուսումնական տարում: Եվ ահա 2014-2015 ուս.տարում՝ օլիմպիադայի ավարտի նախօրյակին, 27 դպրոցականներ հյուրընկալվեցին ԼՂՀ նախագահի նստավայրում և նրա կողմից արժանացան խրախուսանքի և գովասանագրերի ու արժեքավոր նվերների: Այդ նրանք էին, որ առարկայական օլիմպիադայի Հայաստանի Հանրապետության եզրափակիչ փուլում գրավել էին մրցանակային տեղեր կամ արժանացել գովասանագրերի[216]: Առաջին կարգի դիպլոմներ ստացան ՆՀՊ Արցախի թիմը՝ 12 հոգի, ռուսաց լեզու և գրականություն առարկայից՝ Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի աշակերտուհի Անահիտ Բաբայանը, մյուսները գրավել են երկրորդ և երրորդ տեղերը, արժանացել պատվոգրերի:

Ըստ մեր դիտարկումների, մտավոր ներուժը մեր ժողովրդի ամենամեծ հարստությունն է, որը պետք է շարունակաբար զարգացնել ու կատարելագործել: Այդ գործընթացի առանցքային օղակներից է դպրոցը, և պատահական չէ, որ մենք

հատուկ տեղ ենք հատկացնում մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Այս տեսակետից կարևոր դերակատարություն ունեն առարկայական օլիմպիադաների անցկացումը և գերազանց արդյունքների հասած երեխաների բացահայտումն ու խրախուսումը: Նման միջոցառումները կարևոր են նաև կրթության մակարդակը բարձրացնելու, դրական միտումները զարգացնելու և առկա բացերը շտկելու համար:

Փաստագրական նյութերի ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ ինչպես նախորդ ուսումնական տարիներին, այնպես էլ 2014-2015 ուսումնականում, ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչությունը, կարևորելով կրթական համակարգում ընթացող բովանդակային բարեփոխումները, ընդհանուր և թեմատիկ ստուգումները դարձրել է նպատակային և արդյունավետ: Համակողմանի ստուգումների նպատակն է պարզել կրթական ծրագրերի յուրացման աստիճանը, կրթության որակը, պետական կրթական չափորոշիչների պահանջների ապահովումը և աջակցել վերոնշյալ գործընթացների արդյունավետ և որակյալ կազմակերպմանը, բացահայտված խախտումների, սխալների, թերությունների վերացմանը, աշխատանքներում մեթոդական օգնություն ցուցաբերելուն: Ասվածը հիմնավորելու նպատակով բերենք կոնկրետ օրինակներ:

Հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները բարելավելու և ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով 2014թ. օգոստոսին ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանի հրամանով 2014-2015 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում կրթության պետական տեսչության կողմից համակողմանի տեսչավորման են ենթարկվել 63 կրթական հաստատություններ: Այդ թվում՝ հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ՝ 4, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ՝ 3, արհեստագործական ուսումնարաններ՝ 2, հանրակրթական միջնակարգ դպրոցների 16 մասնաճյուղեր: Տեսչավորվել են 2015թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում:

Ի դեպ, նշենք, որ 2011-2012 ուս.տարվանից ԿԳ նախարարության տեսչության կողմից համակողմանի ստուգումների և մեթոդական օգնության ցուցաբերմանը զուգահեռ որակական գնահատականներ են տրվում ստուգման ենթարկված կրթական հաստատությունների ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր, այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման, ինչպես նաև ուսուցանման և ուսումնառության դրվածքներին՝ ելնելով կրթական ու առարկայական չափորոշիչների պահանջներից: Ի՞նչ է ցույց տալիս ստուգումների արդյունքների վերլուծությունը:

Ստուգված դպրոցներից համեմատաբար բարվոք վիճակ կամ նախորդ ստուգումների համեմատությամբ առաջընթաց է արձանագրվել Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան թիվ 8 ավագ (տնօրեն՝ Լ. Գևորգյան), Ա. Ղուլյանի անվան թիվ 2 հիմնական (տնօրեն՝ Լ. Ասրյան), Մարտունու շրջանի Բերդաշենի Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ (տնօրեն՝ Ա. Զարգարյան), Մարտակերտի շրջանի Հաթերքի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ (տնօրեն՝ Ն. Անտոնյան), Ասկերանի շրջանի Աստղաշենի Ժան Անդրյանի անվան միջնակարգ (տնօրեն՝ Ս. Գրիգորյան), Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական (տնօրեն՝ Լ. Հարությունյան), Քաշաթաղի շրջանի Գալինա Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոցի (տնօրեն՝ Մ. Սարգսյան) և այլ դպրոցներում:

Ուսումնական տարվա ապրիլ-հունիս ամիսներին ԿԳ նախարարության և շրջանային կրթության բաժինների տեսչությունների կողմից համակողմանի ստուգման ենթարկվեցին նաև Ստեփանակերտի թիվ 7, Ասկերանի շրջանի Ակնաղբյու-

րի, Բադարայի, Խնապատի, Սզնեքի, Խաչմաչի, Աստղաշենի, Հիլիսի, Մարտակերտի շրջանի Կուսապատի, Դրմբոնի, Պողոսագոմերի, Հարգոմերի, Վաղուհասի, Հաթերքի, Ն.Հոռաթաղի, Վարդաձորի, Մարտունու շրջանի Գիշու, Խնուշինակի, Կաղարծու, Ճարտարի, Ննգու, Նոր շենի, Աշանի, Պառավաթումբի, Հերհերի, Հաղորտու, Շահումյանի շրջանի Քարվաճառի, Չարեքտարի, Քաշաթաղի շրջանի Բերձորի թիվ 1, 2, Հադրութի թիվ 1, Մեծ Թաղերի, Տումու, Տողի, Ազոխի, Բանազուրի և այլ դպրոցների կողմից ուսումնական դաստիարակչական, դպրոցավարության, մեթոդմիավորման, առարկայական հանձնաժողովների, դպրոցների տնօրինության կողմից կազմակերպված դասալսումների ուղղությամբ կատարված աշխատանքները:[217]

Ստուգումներից պարզվել է, որ դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց գիտելիքների, մեթոդական և մասնագիտական պատրաստականության շրջանակներում փորձում են ապահովել սովորողների կրթության և դաստիարակության գործի բավարար մակարդակ, ձգտում դասավանդման ընթացքում օգտագործել նոր մեթոդներ ու հնարներ:

Շրջանների դպրոցների տնօրենների և փոխտնօրենների աշխատանքներն այդ ուղղությամբ գնահատվել է լավ: Նկատի ունենք Ժ. Մարգարյանի (Ակնաղբյուր), Զ. Բեգլարյանի (Խնապատ), Է. Վարդանյանի (Նորագյուղ), Հ. Հարությունյանի (Շոշ), Գ. Արզումանյանի (Խնածախ), Ս. Գասպարյանի (Սարուշեն), Ս. Գրիգորյանի (Աստղաշեն), Կ. Մայիլյանի (Ասկերան), Մ. Մնացականյանի (Խաչմաչ), Ս. Խաչատրյանի (Մարտակերտի շրջանի Կուսապատ), Շահումյանի շրջանի Քարվաճառի, Նոր Վերին շենի, Նոր Բրաջուրի, Նոր Գետաշենի, Նոր Մանաշիդի, Քաշաթաղի շրջանի Բերձորի, Կովսականի, Քարեգահի և այլ դպրոցների տնօրենների կատարած աշխատանքները: Հանրակրթական դպրոցների տնօրենները իրենց դրսևորել են որպես կրթական համակարգի լիարժեք ղեկավարներ՝ իրական լիարժեք մակարդակով, ստեղծագործական մեծ ներուժով, նորամուծություններին արագ արձագանքելու, կրթական ծառայությունների առանձնահատկությունները վերլուծելու ուղղությամբ:

Ստուգման արդյունքները քննարկվել են հանրակրթական հաստատությունների մանկավարժական խորհուրդներում, կրթության շրջանային բաժիններում, ԿԳ նախարարության կոլեգիայում, տրվել համապատասխան առաջարկություններ և հանձնարարականներ: Ստուգումները ցույց են տվել, որ նշված դպրոցների տնօրինությունները և մանկավարժական կոլեկտիվները որոշակի աշխատանք են տարել սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման և բարելավման ուղղությամբ: Կրթօջախներն ապահովված են բոլոր առարկաների ուսումնական ծրագրերով ու պլաններով, ուսուցիչներն ունեն օրինակելի թեմատիկ պլաններ: Բոլոր դպրոցներում պարապմունքներն ընթանում են միահերթ, կայուն աշխատակարգով և կարգացուցակով: Դպրոցները հիմնականում ապահովված են մասնագիտական կրթությամբ մանկավարժ կադրերով: Դպրոցահասակ երեխաներն ընդրգկվել են դպրոց, բավարար է ութամյա պարտադիր կրթության իրականացումը, ինչպես նաև սովորողների հաճախումը: Առանձնապես բավարար հիմքերի վրա է դպրոցների մեթոդական աշխատանքների դրվածքը, ստեղծված են մեթոդական խորհուրդներ 3-4 հոգուց բաղկացած, մեթոդական միավորումներ՝ ըստ մասնագիտությունների:

Դպրոցներում մեծ նշանակություն են տալիս մանկավարժական խորհրդի գործունեությանը՝ նպատակ ունենալով բարձրացնել նրա դերն ու նշանակությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման,

ուսուցիչների ակտիվությունը և մեթոդամանկավարժական պատրաստվածությունը էլ ավելի բարձրացնելու գործում: Մանկավարժական խորհրդի նիստերում համակողմանիորեն քննարկվում են քառորդային արդյունքները, դպրոցի ներքին կյանքին վերաբերող հարցերը, միաժամանակ բացահայտվում են ուսումնադաստիարակչական աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները ծնող պատճառները:

Հանրակրթական դպրոցներում տնօրենների արդյունավետ աշխատանքի և հոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծման շնորհիվ հատկապես լավ է ընթանում համագործակցությունը ուսուցիչների շրջանում: Համատեղ կազմակերպվում են փոխադարձ դասալսումների քննարկումներ, մանկավարժական ընթերցումներ, աշխատանքներ են տարվում առարկայական կաբինետների ստեղծման ուղղությամբ: Բացի այդ, հանրակրթական դպրոցներում ուսման որակի բարձրացմանն են միտված նաև արտադասարանական, արտադպրոցական, հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կազմակերպված բազմաբնույթ միջոցառումները:

2.3 Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը (բանակ-դպրոց կապի ամրապնդման ուղղությունները)

Քննարկվող ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքի կատարելագործմանն ու զարգացմանը զուգահեռ վերակառուցվում են նաև դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական, ռազմահայրենասիրական աշխատանքները: Սկզբնական շրջանում այդ կարևորագույն խնդրի լուծումը, սակայն, կապված էր որոշակի դժվարությունների հետ: Այդ բնագավառում նույնպես զգացվում էին պատերազմական ժամանակների հետքերը: Ընդհանրապես այդ աշխատանքները բարձր մակարդակի վրա դնելու ուղղությամբ ԼՂՀ ԿԳ նախարարության պատասխանատու աշխատողները, կրթության շրջանային, քաղաքային բաժինների վարիչները, դպրոցների տնօրենները բավականին մեծ աշխատանքներ կատարեցին:

ԿԳ նախարարության կոլեգիայի որոշմամբ (2010թ. մարտի 16) դպրոցներում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքում պետք է դրվի.

- նրանց պատրաստումը զինվորական ծառայության,
- սեր բանակի հանդեպ,
- հպարտության բարձր զգացմունքի ձևավորում հայ և ԼՂՀ քաղաքացի լինելու համար,
- հայրենիքի պաշտպանությանը մշտական պատրաստականություն,
- դպրոցում նախնական զինվորական պատրաստության մակարդակի բարձրացում:

Ապահովելով աշակերտների պատրաստականությունը երկրի պաշտպանության գործում, ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է ապահովի (դաստիարակի).

- սեր բանակի հանդեպ,
- հավատարմություն ժողովրդի և զինված ուժերի մարտական և աշխատանքային ավանդույթներին,
- պատասխանատվություն երկրի պաշտպանունակության և զինված ուժերի

մարտական հզորության ամրապնդման գործում,

- աջակցություն ռազմական գիտելիքների ձեռքբերման գործում:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը տարվում է՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Այդ նպատակներին հասնում են ընտանիքի, դպրոցի, հասարակական կազմակերպությունների և զինված ուժերի կազմավորումների համատեղ ջանքերով:

Հայրենիքի պաշտպանի կերպարն անձի մեջ ձևավորվում է դպրոցում ուսանելու ողջ ընթացքում: Դպրոցում ուսումնական ընթացքը բնութագրվում է ուսուցման և դաստիարակության միատեսակությամբ, նրանց դիալեկտիկ փոխհամագործակցությամբ և փոխըմբռնմամբ: Դա ամբողջությամբ վերաբերում է աշակերտների նախնական զինվորական պատրաստությանը, որն իրականացնելով՝ դպրոցը մեծ ներդրում է ունենում զինված ուժերը պատրաստված պատանիներով համալրելու գործում:

Նախնական զինվորական պատրաստության խնդիրները բնորոշվում են ռազմահայրենասիրական դաստիարակության հատուկ նպատակասլացությամբ: Այն իրենից ներկայացնում է մեթոդական ազդեցության կազմակերպված և անընդմեջ գործընթաց աշակերտի ֆիզիկական զարգացածության, զգացմունքի, մտածելակերպի, կամքի և հոգեբանության վրա՝ նպատակ ունենալով նրա մեջ ձևավորել բարոյական բարձր սկզբունքներ, վարքի նորմեր, աշխատանքային, ֆիզիկական և ռազմամասնագիտական համապատասխան պատրաստություն զինված ուժերում անբասիր ծառայության, հայրենիքի պաշտպանության գործում սրբազան պարտքի կատարման համար:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ կապված արտադպրոցական, արտադասարանական միջոցառումների, առարկայական օլիմպիադաների, ռազմամարզական մրցումների կազմակերպման հետ, դրական ազդեցություն են թողնում, և բոլոր ուղղություններով առաջընթաց է արձանագրվում: ԿԳ նախարար Ս. Ասրյանի հաշվետվությունում մատնանշվում է, որ «Իրոք, արդեն ունենք գիտելիքներով օժտված, լավ ձևավորված աշակերտական կազմ, որը հաջողությամբ է հանդես գալիս ներհանրապետական, ՀՀ հանրապետական օլիմպիադաներում, տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մեր երեխաները մասնակցում են մի շարք ծրագրերի:[218] Դրանցից են «Դիջիթեք», «Էկոտուր» միջազգային մրցույթ-ստուգատեսները, ինչպես նաև մի քանի մեծ դպրոցներում «Ինստիգեթ» կազմակերպության օժանդակությամբ ստեղծված խմբակները, որոնց շնորհիվ երեխաները տիրապետում են ռոբոտաշինության հիմունքներին: Հանրապետության շրջաններում, քաղաքներում կազմակերպվեց ամառային դպրոց-ճամբար՝ դպրոցականների ընդգրկումով, որին օժանդակեցին ԵՊՀ ֆիզմաթ, այլ դպրոցների մասնագետները, և երեխաները հանգստանալու հետ միասին կարողացան իրենց գիտելիքները հարստացնել տեղեկատվական տեխնոլոգիաների գծով, ինչպես նաև մաթեմատիկա, ֆիզիկա առարկաներից: Այս գործընթացը շարունակական դարձավ հետագա ուսումնական տարիներին»:

Նախարարը նաև մատնանշում է, որ պատերազմական տարիներին Արցախի ժողովրդի համար ամենածանր փորձությունների ժամանակ, առաջնահերթվել է կրթությունը, որին պարտադիր զուգակցվել է հայրենասիրական դաստիարակությունը: Այս կարևոր բաղադրիչը եղել ու մնում է կրթական խնդիրների առանցքում՝ առավել նպատակասլաց դարձնելով բնագավառի զարգացմանն ուղղված նախաձեռնությունները:

ԼՂՀ իշխանությունները՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, տարեցտարի ավելի շատ ներդրումներ են կատարում այս ոլորտում, որի իրական արտահայտությունը կրթական հաստատությունների շենքային պայմանների և ուսումնատեխնիկական բազայի և ռազմական կաբինետների շոշափելի բարելավումն է: Տվյալ պայմաններում գերխնդիրը մնում է ուսումնադաստիարակչական աշխատանքների, ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետության բարձրացումը, բանակ-դպրոց-ընտանիք կապի ամրապնդումը, և դրան ուղղված են հանրապետության կրթական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվի ջանքերը:

Հանրապետության կրթական հաստատություններում կատարած ոուսումնասիրությունների հիման վրա կոնկրետ օրինակներով ցույց տանք, թե այդ ուղղությամբ ինչ աշխատանքներ են տարվել շրջանների և մայրաքաղաքի դպրոցներում:

Կրթական համակարգի աշխատողների համար ինչպես միշտ, ներկայումս էլ պատասխանատու խնդիր է դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը: Ակնհայտ է, որ դպրոցի առաջնահերթ խնդիրներից մեկը երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունն է: Դիտարկումները ցույց են տվել, որ այդ ուղղությամբ դպրոցներում շոշափելի հաջողություններ կան:

Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջանի կրթության բաժնի փաստաթղթերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ շրջանի դպրոցներում պատշաճ մակարդակով են կազմակերպվում արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները: Դպրոցականների ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացման միտումով ամրապնդվել է դպրոց-բանակ կապը: Այն իրագործվում է Արցախյան պատերազմի վետերաններերի հետ հանդիպումներով, սպաների կողմից արիության դասերի անցկացումով, այցելությամբ զորամասեր, ռազմամարզական խաղերի անցկացման ձևով: Այս հարցում պետք է արժանին մատուցել կրթության և գիտության, պաշտպանության նախարարություններին, շրջանում տեղակայված գնդի հրամանատարությանը, որոնց օպերատիվ գործունեության շնորհիվ դպրոցների ղեկավարներն ու զինղեկները դժվարությունների չեն առնչվում: 2008 թվականից սկսած՝ շրջանի դպրոցների 11-րդ դասարան փոխադրված տղաների համար կազմակերպվում է հանգստի ռազմամարզական ճամբար: 2012-2013 ուս.տարում շրջանի 75 տասնմեկերորդցիներ իրենց 10-օրյա ամառային հանգիստն են անցկացրել «Ասպետ» ռազմամարզական ճամբարում՝ ֆիզիկապես և հոգեբանորեն նախապատրաստվելով ապագա զինվորական կյանքին՝ ցուցադրելով ռազմագիտության ժամերին ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:

Դիտարկումները ցույց են տվել, որ շրջանի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ռազմագիտության դասավանդումը: Դրա նախապայմաններից է համապատասխան կրթություն և ունակություններ ունեցող զինղեկների, կահավորված կաբինետների, անհրաժեշտ ուսումնանյութական բազայի առկայությունը: Շրջանի 27 միջնակարգ և 9 հիմնական դպրոցներից 22-ում կան ռազմագիտության կաբինետներ, 21-ում՝ զենքի պահպանման սենյակներ: Ռազմամարզական միջոցառումներին, «Արծվիկ» ռազմամարզական մրցույթների շրջանային փուլերին մասնակցել են 6-7 դպրոցների թիմեր, և լավագույները արժանացել են ԼՂՀ ԿԳ և պաշտպանության նախարարությունների համապատասխան խրախուսանքների:

Շրջանի 38 դպրոցներում շարունակվել է համագործակցությունը զորամիավորումների հետ: Օրինակ, Մարտակերտի թիվ 1 դպրոցի բարձր դասարանների աշակերտների (տղաների) համար ամսական 2-3 օր պարապմունքներ են անցկացվում Մարտակերտի N զորամասում, նույնը՝ Մատաղիսի, Թալիշի, Մաղավուզի բարձր դասարանների տղաների համար՝ Մատաղիսի N զորամասում:[219] Աշակերտները հանգամանորեն ծանոթանում են զինվորական կյանքին, գիտակցաբար ընտրում հայրենիքի պաշտպանությանը նվիրված գործը, աստիճանաբար ընտելանում տղամարդու կոշտ դաստիարակության չափանիշներին: Նույն ավանդույթները շարունակվում են Մարտունու, Հադրութի, Շահումյանի, Քաշաթաղի շրջանների դպրոցներում:

Մարտունու շրջանի կրթության բաժնի ուշադրության կենտրոնում է գտնվում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Շրջանի դպրոցներում մարզադահլիճների, բաց հրապարակների առկայությունը դպրոցական մարզական թիմերին կամ անհատական մարզաձևերի ներկայացուցիչներին թույլ է տալիս լիարժեք մասնակցել և մրցանակային տեղեր գրավել մրցույթներում:

Շրջանի հանրակրթական դպրոցներում անց են կացվել ռազմամարզական տարբեր մրցույթներ, որոնցում հաղթողները մասնակցել են շրջանային և հանրապետական մրցույթներին և գրավել 2-րդ, 3-րդ տեղեր: Ռազմականացված կրոսվազքի մրցույթում 1-ին տեղեր են գրավել Մարտունու թիվ 1, Ճարտարի միջնակարգ դպրոցների հավաքական թիմերը:

Ամառային արձակուրդների ընթացքում Այգեստանի «Ասպետ» ռազմամարզական ճամբարում իրենց հանգիստն են անցկացրել շրջանի նախազորակոչային տարիքի 110 պատանիներ և 7 զինղեկներ: Ճամբարում գտնվելու ժամանակահատվածում անձնական կարգապահության, մարզական բարձր ցուցանիշերի, ճամբարի հասարակական կյանքին ակտիվորեն մասնակցելու համար մի շարք ասպետականներ պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով: Հաղորտու միջնակարգ դպրոցի զինղեկ Հակոբ Կարապետյանը և Ծովատեղի հիմնական դպրոցի զինղեկ Անդրանիկ Դանիելյանը արժանացել են լավագույն դասակի հրամանատարի կոչման:

Շրջանի կրթության բաժինը համագործակցում է երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ: Մասնավորապես «Հայրենյաց պաշտպան», «Հոգևոր վերածնունդ» կազմակերպությունների և դպրոցներում գործող մանկապատանեկան կազմակերպության միջոցով կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ՝ ուղղված երիտասարդների ռազմահայրենասիրական, բարոյական դաստիարակությանը, նրանց ստեղծագործական, մարզական, ինտելեկտուալ զարգացմանը: Պարբերաբար կազմակերպվում են ինտելեկտուալ մրցույթներ, մարզախաղեր, հայրենասիրական արշավներ շրջանի գյուղեր և այլ վայրեր: Շրջանում գործում է դպրոցականների ամառային հանգստի երկու ճամբար՝ 150 երեխայի ընդգրկմամբ:

Ի դեպ, նշենք, որ Մարտունու շրջանի դպրոցականները համագործակցում են նաև ՀՀ դպրոցականների հետ, կազմակերպում ռազմահայրենասիրական խաղեր, մրցույթներ և այլ բնույթի միջոցառումներ: Այսպես, օրինակ, շրջանի Բերդաշենի, Ճարտարի, Գիշու դպրոցները համագործակցում են ՀՀ Գեղարքունիքի դպրոցների հետ: Փոխայցելությունների ժամանակ կազմակերպվում են բաց դասեր, մանկավարժական ընթերցումներ, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ՝ նվիրված հայոց բանակի հերոսների, ազատամարտիկների սխրագործություններին, Եռատոնին: Ինչպես մյուս շրջանների, այնպես էլ Մար-

տունու շրջանի դպրոցներում ընդլայնվում են «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային խաղ-մրցույթի աշխարհագրությունն ու դպրոցականների մասնակցությունը: Եթե 2012-2013 ուսումնական տարում շրջանի 4 դպրոցների (Գիշու, Ճարտարի, Մարտունու թիվ 1, Քերթի) 140 աշակերտներ են մասնակցել, ապա 2013-2014 ուս.տարում այն կազմակերպվել է հինգ դպրոցներում՝ 3-րդ, 12-րդ դասարանների 287 աշակերտների ընդգրկումով, ովքեր որոշակի հակումներ ունեն մաթեմատիկայի նկատմամբ:[220]

Հարկ է նաև նշել, որ Մարտունու շրջանի դպրոցներում նույնպես որոշակի աշխատանքներ են կատարվել դպրոց-ընտանիք կապի ամրապնդման համար: Այդ գործում իր ուրույն տեղն ունի «dasaran.am» ծրագիրը: Դպրոցներում գործածության մեջ են դրված էլեկտրոնային մատյանները, և ուսուցիչները բարեխղճությամբ իրենց նշանակած օրվա գնահատականները մտցնում են «dasaran.am» կայք, որի արդյունավետությունը 100 տոկոս է: Հաշվի առնելով, որ գյուղերի ընտանիքների մեծ մասն ունի ինտերնետ կապ, տնօրենները մտադիր են այդ կայքը օգտագործել նաև ծնողների հետ հետադարձ կապը սերտացնելու համար:

Հանրակրթական դպրոցներում բանակ-ընտանիք-դպրոց կապի ամրապնդման թեմաներով բազմաթիվ միջոցառումներ և քննարկումներ են անցկացվում, յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործվում է, որպեսզի նվիրյալ սերունդ դաստիարակվի. սերունդ, որ պետք է սրբությամբ պահպանի և զարգացնի արյան գնով ձեռք բերված նվաճումները: Ընտանիք-դպրոց-բանակ եռամիասնության արդյունավետ աշխատանքի շնորհիվ երկիրը կունենա կիրթ, դաստիարակված և հայրենապաշտ սերունդ: Պատահական չէ, որ Եռատոնին հանրապետության բոլոր կրթօջախներում կազմակերպվում են հանդիսավոր միջոցառումներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, Շուշիի ազատագրման և ԼՂՀ պաշտպանության բանակի օրվան: Նմանատիպ միջոցառումների արդյունավետությունը տեսանելի ու շոշափելի է այնտեղ, որտեղ աշխատանքները համակարգվում են վերը նշված երեք օղակների մասնակցությամբ:

Ըստ Հադրութի շրջանի կրթության բաժնի արխիվային տվյալների, յուրաքանչյուր ուսումնական տարվա մայիսի 8-9-ին շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտական, ուսուցչական կոլեկտիվները լինում են ՊԲ զորամասերում, կազմակերպում միջոցառումներ, հանդիպում սպայական կազմի, զինվորների հետ: Հանդիպումներից մեկի մասնակից, Տումու դպրոցի տնօրեն Ա. Խաչատրյանը իր հուշերում գրում է. «Տեսնել էր պետք, թե ինչպիսի հափշտակությամբ, լրջությամբ, հավատով, սիրով էին դպրոցականներն ունկնդրում զինվորականներին՝ նրանց վառվռուն աչքերում, ժպիտ-ծիծաղներում մեր վաղվա լուսավոր ապագան էր երևում»:

Այս համատեքստում N զորամասի հրամանատարը նշեց, որ հայ ժողովրդի տարած հաղթանակներն ավելի իմաստավորվեցին Շուշիի ազատագրմամբ, որը պատմական խոշոր իրադարձություն էր և ցույց տվեց, որ սեփական ուժերով կարող ենք պաշտպանել մեր հայրենի օջախը, մեր հավատը, մարդկային իրավունքներն ու արժանապատվությունը: Շուշիի հաղթանակը նաև ԼՂՀ պաշտպանության բանակի ծննդյան ավետախոսն էր, որն այսօր մեր ժողովրդի հուսալի պաշտպանն է:

Միջոցառման մասնակից սպաները, պատերազմի վետերանները դպրոցականներին կոչ արեցին միշտ վառ պահել հայրենիքի անկախության և ազատության համար իրենց կյանքը զոհաբերած քաջորդիների հիշատակը, նվաճել գիտության բարձունքները, հայրենի երկիրն ավելի բարգավաճ դարձնել, հզորաց-

նել այն, պատրաստ լինել հերթափոխի ընդունմանը՝ զինվորագրվելով Հայոց պանծալի բանակին:

Պաշտոնական տվյալները վկայում են, որ 2015-2016 ուս.տարում շրջանի հանրակրթական դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ Գիտելիքի, գրի և դպրության, Եռատոնին և այլ տոներին նվիրված, ինչպես նաև արիության դասեր ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձի առթիվ: Այսպես, օրինակ, ԼՂՀ ԿԳ և ՊԲ նախարարությունների համատեղ կազմակերպած՝ Եռատոնին նվիրված գրավորների շրջանային փուլին մասնակցել են շուրջ 30 աշակերտներ, որոնցից 10-ի գրավորները ներկայացվել են հանրապետական փուլի ստուգող հանձնաժողովին: Առաջին կարգի դիպլոմների են արժանացել Հադրութի, Մեծ Թաղերի, Տումու, Դրախտիկի, Ծամձորի, Հակակուի, Տողի դպրոցների աշակերտները: Նմանատիպ միջոցառումներ են կազմակերպվել նաև Քաշաթաղի, Շահումյանի շրջանների դպրոցներում:

Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի երաշխիքներից են «Ռազմականացված հնգամարտի», «Մայիսյան եռատոնին նվիրված ռազմականացված կրոսավազքի», «Արծվիկ» ռազմամարզական խաղերի և ՄԿ-74 ինքնաձիգից 11-րդ դասարանի տղաների միջև հրաձգության ներդպրոցական և շրջանային փուլերի նախապատրաստումն ու անցկացումը: «Ռազմականացված հնգամարտի» շրջանային առաջնությանը, որը անցկացվել է մարտի 19-ին Տողի միջնակարգ դպրոցի մարզահրապարակում, մասնակցել են Մեծ Թաղերի, Ազոխի, Տողի, Դրախտիկի, Տումու, Մարիամաձորի, Խծաբերդի, Բանաձորի դպրոցների թիմերը: Հաղթողներին են հանձնվել դիպլոմներ, իսկ գովասանագրեր ստացել են լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները: Առաջին անգամ (2013թ. ապրիլի 26-ին) անցկացվել են հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանցիների ռազմադաշտային պարապմունքներ: Հադրութում և Մեխակավանում տեղակայված զորամասերի հրամանատարների աջակցությամբ և զորամասերի ներկայացուցիչների՝ սպաների և սերժանտների մասնակցությամբ կրակային դաշտերում պարապմունքների անցկացումից հետո սկսվել է հրաձգության մրցությունը: Եվ տղաներն ու աղջիկները համարձակորեն խոցում էին թիրախները:[221]

Ինչպես իր հաշվետվությունում նշում է Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ Անդրանիկ Աբրահամյանը, շրջանի դպրոցներում առավել մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը և այդ գծով կազմակերպվող ՆՁՊ առարկայական օլիմպիադային:

Ըստ բաժնի վարիչի հաշվետվության տվյալների, 2013-2014 ուս.տարվա առարկայական օլիմպիադայի ռազմահայրենասիրական մրցույթ «Ասպետ», Զարթոնք», «Արծվիկ» խաղերի դպրոցական փուլին մասնակցել են 23 դպրոցների 244 աշակերտներ, շրջանային փուլին՝ 174 աշակերտներ: Շրջանի մասշտաբով մասնակիցների թիվը կազմել է ընդհանուր սովորողների 9 տոկոսը: Օլիմպիադայի արդյունքները ցույց են տվել, որ կայուն գիտելիքներ են արձանագրվել Մեծ Թաղերի, Հադրութի թիվ 1, Մարիամաձորի, Տողի, Տումու, Դրախտիկի, Հակակուի դպրոցների աշակերտների մոտ: Հանրապետական փուլին մասնակցել են 9 աշակերտ, գրավել 1-ին և 2-րդ տեղերը:

Շրջվարչակազմի նախաձեռնությամբ կրթության բաժինը կազմակերպել է հանդիսավոր միջոցառում, որի ժամանակ մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտները և նրանց ուսուցիչները (Լ. Մայիլյան, Ար. Աբրահամյան, Ս. Գրիգորյան և ուրիշներ) պարգևատրվել են վարչակազմի պատվոգրով և արժանացել

թանկարժեք նվերների և գովասանքի: ՀՀ եզրափակիչ փուլում բարձր արդյունքներ ապահոված աշակերտներին ու նրանց ուսուցիչներին պարգևատրել են նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարը, հանրապետության նախագահը:

Ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բնագավառ է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հարցը, հայրենիքի պաշտպանությանը նրանց նախապատրաստելը: Բանակը մեր երկրի, հասարակության ուշադրության ամենաարժանի կառույցն է, և նրա հզորությունը կախված է նրանից, թե ինչպիսի սերունդ ենք նախապատրաստում և ինչպիսի երիտասարդներ ենք բանակ ուղարկում: Այս իմաստով Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբալյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2013-2014 ուսումնական տարվա օգոստոսի 4-14-ը շրջանի դպրոցների 6, 8-10-րդ դասարանցիներ 10-օրյա ժամկետում հանգստացել են ռազմամարզական «Ասպետ» ճամբարում: Նրանք կարողացել են ունեցած գիտելիքները ցուցադրել էքստրեմալ պայմաններում, իրենց դրսևորել բազմակողմանիորեն: Ճամբարի տնօրինությունը շնորհակալական նամակ է հղել բաժնին՝ Պատարայի միջնակարգ դպրոցի զինղեկ Հայկ Իսրայելյանը լավագույն դասակի հրամանատար ճանաչվելու կապակցությամբ: Շնորհակալություն է հայտնվել նաև Խաչմաչի, Ավետարանոցի, Սարուշենի, Շոշի միջնակարգ դպրոցների տնօրեններին, զինղեկներին:

ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրի շրջանակներում Ասկերանի, Խնապատի, Նորագյուղի, Իվանյանի, Ակնաղբյուրի, Հարավի, Քռասնու 10 դպրոցականներ օգոստոսի 19-24-ը Ծաղկաձորում մասնակցել են ճամբարի աշխատանքներին:

«Բանակը մեր տունն է, մեր բերդ-ամրոցը» խորագրով շարադրությունների մրցույթին շրջանից մասնակցել են 19 աշակերտներ: Հանրապետական հանձնաժողովը լավագույն շարադրություններ է ճանաչել Խնապատի, Խնածախի, Այգեստանի, Պատարայի, Իվանյանի կրթական հաստատությունների մեկական աշակերտների աշխատանքները:[222]

Ասկերանի միջնակարգ դպրոցի թիմը ակտիվորեն է հանդես եկել «Բրեյնռինգ» ինտելեկտուալ խաղի հանրապետական փուլում: Շրջանի դպրոցականները մասնակցել են մարզական բոլոր միջոցառումներին և հավաքական թիմերով մասնակցել հանրապետական առաջնություններին: Ակտիվորեն են մասնակցել Ասկերանի, Նորագյուղի, Խնապատի, Այգեստանի, Խնձրիստանի, Պատարայի, Ակնաղբյուրի, Իվանյանի, Սարուշենի, Շոշի դպրոցների մարզիկները: Վերոնշյալ ուսումնական տարում շրջանի հանրակրթական դպրոցների հավաքական թիմերը ըստ մարզաձևերի հանրապետությունում գրավել են մրցանակային տեղեր:

Շուշիի շրջանի դպրոցների տնօրենների հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դպրոցներում բարձր մակարդակի վրա է արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման դրվածքը, անց են կացվել «Գիտունիկ» ինտելեկտուալ խաղի և «Լավագույն աշակերտ» մրցույթի շրջանային փուլերը, և ապահովվել է թիմերի մասնակցությունը հանրապետական մրցույթներին: Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Արցախյան շարժման հերոսների հիշատակին, տոն և հիշատակի օրերին: Դպրոցների աշակերտները և Շուշիի մանկական ստեղծագործության կենտրոնի սաները ակտիվորեն մասնակցել են շրջանային և հանրապետական միջոցառումներին: Մեծ ուշադրություն են դարձվում դպրոցականների ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությանը: Դպրոցների տնօրենների հաշվետվություններում նշված է, որ մանկավարժական խորհրդում հաստատված պլանի համաձայն,

աշակերտները ըստ կարգացուցակների՝ հանդիպումներ են ունեցել զորամասերի հետ, ծանոթացել զինվորական կյանքին ու կենցաղին: Շրջանի զինղեկները մասնակցել են Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: 2013-2014 ուս.տարվա ապրիլ ամսին անց է կացվել «Արծվիկ» ռազմամարզական խաղերի շրջանային փուլը, նրանում հաղթող ճանաչված Քարին տակի միջնակարգ դպրոցի թիմը մասնակցել է հանրապետական փուլին: Շրջանի մարզական թիմերը մասնակցել են հանրապետական բոլոր միջոցառումներին և արժանացել պատվոգրերի:

Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների հարուստ ու հետաքրքիր բովանդակությունը, գաղափարական-քաղաքական ուղղվածությունը մեծ չափով նպաստեցին նաև Քաշաթաղի, Շահումյանի վերաբնակեցված շրջանների դպրոցականների մոտ հայրենիքի նկատմամբ սիրո ու պարտքի զգացումի ձևավորմանն ու զարգացմանը:

Քաշաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ ինչպես միշտ, այնպես էլ 2013-2014 ուս.տարվա ընթացքում շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտներն ակտիվ մասնակցություն են ունեցել ԼՂՀ ԿԳ նախարարության կազմակերպած ռազմամարզական, արտադպրոցական միջոցառումներին, մրցույթներին և առարկայական օլիմպիադաներին: ՀՀ և ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել են շրջանի 26 աշակերտներ: 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում ԿԳ նախարարության կողմից անցկացվել են արտաքին ստուգումներ մի շարք առարկաներից, որոնց արդյունքները քննարկվել են դպրոցների տնօրենների խորհրդակցություններում:

Ուս.տարվա ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Այսպես, 2013թ. հոկտեմբերին ՀՀ և ԼՂՀ ԿԳՆ և ՊՆ կողմից Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցին տրամադրվել է ռազմական վարժասարք, որը կարևոր նշանակություն ունի հատկապես շրջանի հյուսիսային թևի դպրոցների 8-12-րդ դասարանցիների կրակային պատրաստվածության որակի բարձրացման համար: Դպրոցներն ապահովված են ուսումնառազմական բազայով, և համապատասխան պայմաններ են ստեղծվում ՆԶՊ առարկայի դասավանդման համար: Հյուսիսային և հարավային թևի դպրոցների աշակերտների կրակային պարապմունքներն անցկացվում են մոտակա զորամասերի օժանդակությամբ: Կրթության բաժնի վարիչի հաշվետվությունից տեղեկանում ենք նաև, որ շրջանի հանրակրթական դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, բաց դասեր, դասախոսություններ՝ նվիրված ՀՀ և ԼՂՀ ազգային հերոսներին, հանդիպումներ ազատամարտիկների, Հայրենական մեծ պատերազմի վետերանների հետ, այցելություններ զորամասեր:

Շրջանի դպրոցների տնօրենների հաշվետվությունից տեղեկանում ենք, որ դպրոցներում աշակերտների նախնական զինվորական պատրաստության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվում են հետևողական աշխատանքներ: Դպրոցներում կազմակերպվել են երկու թիմեր՝ հյուսիսային թևի դպրոցները բացը լրացնում են Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցում տեղադրված վարժավազքի միջոցով: Հարավային թևի դպրոցների աշակերտները կրակային պարապմունքներն անց են կացնում մոտակա զորամասերի օգնությամբ:

Հարկ է նշել, որ շրջանի դպրոցականների և արդեն դպրոցն ավարտած և ներկայումս ծառայող զինվորների հայրենասիրական ոգին գտնվում է բարձր մա-

կարդակի վրա, ինչին ականատես եղան շրջանի մանկավարժական կոլեկտիվներն ու կրթության բաժնի աշխատողները շրջանում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում: Հասկանալով, որ մեր թշնամին սովոր է միայն դավադիր հարձակումների, անհրաժեշտ է, որ մեր ապագա զինվորները միշտ պատրաստ լինեն պաշտպանելու հայրենիքի սահմանները ցանկացած ոտնձգությունից:[223] Այս գործում անմասն չմնացին նաև շրջանի դպրոցների մի շարք ուսուցիչներ, բաժնի աշխատողներ, տնօրեններ և հատկապես դպրոցների զինղեկներ: Նրանք շրջանի վարչակազմի ղեկավարների հետ միասին կանգնեցին սահմանում գտնվող զինվորի կողքին՝ գիտակցելով, որ հայրենիքի պաշտպանությունը բոլորիս սրբազան պարտքն է՝ անկախ հանգամանքից:

Շահումյանի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանի՝ «Լուսարար» թերթի թիվ 33-ում տպագրված «2013-2014 ուս.տարում կատարած աշխատանքների մասին» հաշվետվությունից տեղեկանում ենք, որ շրջանի դպրոցներում հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Ըստ ժամանակացույցի բոլոր դպրոցներում պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված տոնական, հոբելյանական և հիշատակի օրերին: Այսպես, շրջանի դպրոցների 11-14 և 15-18 տարեկան աշակերտների մասնակցությամբ Քարվաճառի միջնակարգ դպրոցում անց է կացվել Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված ասմունքի մրցույթի շրջանային փուլը, որի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներն իրավունք են ստացել մասնակցելու մրցույթի հանրապետական փուլին, որտեղ Բերձորի դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Մարիետա Խաչատրյանը գրավել է 2-րդ տեղը:

Շրջանի դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտների միջև անց է կացվել շարադրությունների արդեն ավանդույթ դարձած ամենամյա մրցույթ՝ ներդպրոցական և շրջանային փուլերով: Լավագույն աշխատանքները ներկայացվել են մրցույթի հանրապետական փուլին: 2014 թվականի հունվարի 20-31-ը շրջանի դպրոցներում մեկնարկեց դպրոցականների առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլը, որի արդյունքներով փետրվարի 12-14-ն անցկացված շրջանային փուլին մասնակցեցին շրջանի 13 դպրոցների (նախորդ տարվա 11-ի փոխարեն) 70 աշակերտներ, նրանցից 14-ը իրավունք ստացավ մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին: Նշված 14 աշակերտներից մեկը՝ Կովսականի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Զվարթ Կարապետյանը, ՆԶՊ առարկայից գրավեց 3-րդ մրցանակային տեղը և իրավունք ստացավ մասնակցելու Հայաստանի Հանրապետությունում անցկացվելիք ՆԶՊ օլիմպիադայի հանրապետական փուլին:[224]

2014թ. մայիսի 5-8-ը Երևանի Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կայացավ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական եզրափակիչ փուլը՝ «Նախնական զինվորական պատրաստություն»-ից: Մասնակցում էին ՀՀ մարզերի թիմերը, այդ թվում Արցախից 12 թիմ: Դպրոցական այս օլիմպիադան Հայաստանում անցկացվում է երրորդ տարին, Արցախում՝ երկրորդ: ԼՂՀ թիմը ձևավորվել է Ստեփանակերտում կայացած օլիմպիադայի հանրապետական փուլում տարբեր մարզաձևերի գծով մրցանակակիր դպրոցականներից: Յոթ հոգուց բաղկացած թիմում ընդգրկված էին 5 տղա, 2 աղջիկ: Թիմը պատրաստել և ղեկավարում էին զինղեկներ, պահեստազորի մայոր Արսեն Հայրապետյանը, (թիվ 2 դպրոց) և պահեստազորի ավագ լեյտենանտ Վարուժան Աղաջանյանը (թիվ 10 դպրոց):

Եվ այսպես, երկրորդ տարին անընդմեջ ՆԶՊ օլիմպիադայում հաղթող ճանաչվեց (շարային պատրաստություն, քաղպաշտպանություն, արգելագոտու հաղթահարում, նռնակի նետում 30մ հեռավորությունից, հրաձգություն վարժասարքից, փամփուշտի արկղի (20կգ-ոց) տեղափոխում դրոշների շրջանցումավազքով, զենքի քանդում-հավաքում և այլ վարժությունների գծով) Արցախի թիմը: Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությանը ներկա էր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, որն էլ կատարեց պարգևատրումը:[225]

«Զինվորի հետ միասին» վերնագրով «Լուսարար» թերթի 2014թ. թիվ 13-ում տպագրված հոդվածում կարդում ենք, որ «Նահանջը փախուստ է: Ցավը հոգուն է մոտ մնում»: Գեներալ Ք. Իվանյանի այս խոսքերն արցախյան զինվորների և Ստեփանակերտի թիվ 1, 2, 7 և 11 դպրոցների ապագա զինակոչիկների նշանաբանը դարձան: Նշված դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված Իվանյանի ծննդյան 85-ամյակին, Արցախյան պատերազմի հերոսների ծննդյան տարեդարձներին, որոնց մասնակցում են Արցախի պաշտպանության բանակի N զորամասի մի խումբ զինվորներ, սպաներ, զորամասի հրամանատարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ՝ մայոր Արմեն Առուշանյանի հրամանատարությամբ: Միջոցառման վերջում կազմակերպվում է ինտելեկտուալ «Զինվորի հետ միասին» վերտառությամբ խաղ: Պետք է նշել, որ նմանատիպ փոխհանդիպումներ հաճախակի են կազմակերպվում մայրաքաղաքի դպրոցներում, ինչը նպաստում է աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից, «Լուսարար» թերթի 2015թ. թիվ 2-ում տպագրված «Համաժողով՝ նվիրված հայրենասիրական դաստիարակությանը» վերնագրով նյութից (հեղինակ՝ թերթի խմբագիր Ս. Խաչատրյան) տեղեկանում ենք, որ 2014-2015 ուս.տարվա հունվարի 16-18-ը Պաշտպանության նախարարության վարչական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները»թեմայով համաժողով, որին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, ԼՂՀ պաշտպանության նախարար Մ. Հակոբյանը, տարբեր գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների, ԼՂՀ ԿԳ նախարարության պատվիրակությունները, դպրոցների տնօրենները և պատասխանատու այլ աշխատողներ:

Համաժողովում ամփոփվեցին հայրենասիրական դաստիարակության ոլորտում 2014թ. պաշտպանական գերատեսչության կողմից իրականացված միջոցառումները, քննարկվեցին ազգային ինքնության և հպարտության զգացումով համակված սերնդի դաստիարակման ուղիներն ու միջոցները:

Համաժողովում վերոնշյալ թեմայով զեկուցողները (ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյան, ԼՂՀ պաշտպանության նախարար Մ. Հակոբյան, ԼՂՀ ԿԳ նախարարության ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայելյան և ուրիշներ) մատնանշեցին, որ ԼՂՀ կրթական հաստատություններում ռազմահայրենասիրական դաստիարակությանը միտված աշխատանքներն ընթանում են հայրենիքի նկատմամբ սիրո և հավատարմության, նրա հզորացման ու բարգավաճման, անկախության ամրապնդման ու մայր հայրենիքի հետ սերտ համագործակցության, և որ ամենակարևորն է, ազգային անվտանգության ապահովման ոգով: Հայոց բանակի մարտունակության բարձրացման մասին իր զեկուցման մեջ Ս. Օհանյանը մատնանշեց, որ զգալով ռազմահայրենասիրական դաստիարակության բնագավառի արդի խնդիրների լուծման հրատապությունը՝ ԼՂՀ ԿԳ ու պաշտպանության նախարարությունների

համագործակցության շրջանակներում իրականացվում են բանակ-դպրոց համատեղ միջոցառումները՝ ուղղված սովորողների նախազորակոչային պատրաստության ու այդ նպատակով ուսումնական հաստատությունների նյութական բազայի համալրման, զինղեկների վերապատրաստման, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրային ապահովման, հատկապես սովորողների կրակային պատրաստության ու դաշտային պարապմունքների իրականացման գործընթացներին:

ԼՂՀ ԿԳ նախարարության ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայելյանը իր ելույթում մատնանշեց, որ զորամասեր կատարվող այցելությունների ընթացքում սովորողները ծանոթանում են զորամասի անցած մարտական ուղուն, լինում են նրա ստորաբաժանումներում, ծանոթանում մարտական տեխնիկային, զինվորների նիստուկացին, կազմակերպվում են համատեղ հանդիպումներ, համերգներ և այլ բնույթի միջոցառումներ:

Սովորողների նախազորակոչային պատրաստության ապահովման գործընթացում կարևոր դեր է կատարում ավանդական դարձած «Արծվիկ» ռազմահայրենասիրական խաղի անցկացումը, որը յուրատեսակ ստուգատես է մասնակից թիմերի կողմից ռազմամարզական, շարային, քաղպաշտպանության, առաջին բուժօգնության և կրակային պատրաստության կարողությունների դրսևորման համար, ինչպես նաև բանակ-դպրոց արդյունավետ կապի վառ օրինակ: Այն անցկացվում է ԼՂՀ ԿԳ նախարարության, պաշտպանության բանակի և արտակարգ իրավիճակների պետական ծառայության համատեղ ջանքերով:

Սովորողների նախազորակոչային պատրաստության գործընթացում կարևոր նշանակություն ունեն ուսումնական հաստատությունների 9-12-րդ դասարանների սովորողների միջև անցկացվող առարկայական օլիմպիադաները, այդ թվում՝ «Նախնական զինվորական պատրաստությունից» (ՆԶՊ): 2013-2014 թվականներին ԼՂՀ դպրոցական առարկայական օլիմպիադայի հաղթող թիմերը մասնակցեցին ՀՀ-ում անցկացված օլիմպիադայի հանրապետական փուլին և թիմային հաշվարկով գրավեցին 1-ին պատվավոր տեղը՝ արժանանալով գլխավոր մրցանակի:

Արտաուսումնական միջոցառումների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի ռազմամարզական ճամբարային առօրյայի կազմակերպումը: Պաշտպանության բանակի և ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության աջակցությամբ կազմակերպվում է «Ասպետ» ռազմամարզական ճամբար, որտեղ իրենց հանգիստն են վայելում հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանների, այդ թվում Լիբանանի, Սիրիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և այլ հաստատությունների 600 պատանիներ: Ճամբարականների առօրյան անցնում է հետաքրքիր ու փոխըմբռնման մթնոլորտում, ճամբարականների հանգիստը զուգորդվում է բանակային կառուցվածքային ու կարգապահական կանոններին համապատասխան պարապմունքներով, ինչը նպաստում է ՆԶՊ-ից ստացած նրանց գիտելիքների հարստացմանն ու մարտական կարողությունների զարգացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրակրթական դպրոցներում զինվորական ղեկավարները նպատակաուղղված աշխատանք են տանում նախազորակոչիկներին դեպի ռազմական գործ կողմնորոշելու ուղղությամբ: Շրջանավարտներից շատերը սովորում են բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում:

Այսպիսով, մեր հանրապետության բանակի էլ ավելի հզորացման, ամրապնդ-

ման ու կատարելագործման ուղղությամբ կարևոր խնդիրներ են դրված հանրակրթական դպրոցի առջև, քանզի դպրոցում է ձևավորվում այն անձը, որը հետագայում դառնալու է հայրենիքի զինվորը, մարտիկը, սպան, բանակի ռազմական տեխնիկան օգտագործողն ու ղեկավարողը: Հետևաբար, երիտասարդ սերնդի ռազմական ուսուցման գործի կազմակերպումը ռազմահայրենասիրական դաստիարակության կարևոր խնդիրներից է: Անկասկած, ազգային բանակի կայացման կարևոր պայմաններից մեկը կիրթ և հատկապես տեխնիկական գրագիտություն ունեցող զինվորական ու սպայական անձնակազմ ունենալն է, որի ապահովումը պայմանավորված է այսօրվա հանրակրթության մակարդակով: Շատ օրինակներով կարելի է ցույց տալ, թե հանրապետության հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները որքան խրախուսելի գործ են կատարում այդ ուղղությամբ: Ուսումնասիրության բնույթից ելնելով, բավարարվենք միայն վերը շարադրվածով:

3. Ներառական կրթության կազմակերպումը ԼՂՀ հանրակրթական դպրոցներում

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կրթության ոլորտում իրականացվող քաղաքականության առաջնահերթ ուղղություններից են ներառական կրթության բաղադրիչների համակողմանի մշակումը, փորձարկումը և իրականացումը հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնումը և այդ համակարգի երեխաների բացահայտման և կրթության մեջ նրանց ներգրավման արդյունավետ համակարգի ձևավորման ուղղությամբ գործողությունների մշակումը և իրագործումը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1999 թվականին ընդունված «Կրթության մասին» օրենքով առաջին անգամ ծնողին տրվեց դպրոցն ընտրելու իրավունքը, արդյունքում հաշմանդամ երեխաների ծնողներից ոմանք նրանց հատուկ դպրոցից տեղափոխեցին հանրակրթական ծրագիր իրականացնող դպրոց, և կրթության կազմակերպման գործընթացում սկսեց շրջանառվել «ներառական կրթություն» հասկացությունը: Այսինքն ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ՝ հանրակրթական դպրոցում:

Ներառական կրթությունը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում նաև զարգացման հատուկ պայմանների կարիք ունեցողների՝ կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է երեխաների բազմազան կարիքներին, օժանդակում ուսումնական-մշակութային կյանքին բոլոր երեխաների մասնակցությանը: Ներառական կրթությունը ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում և մեթոդներում: Այն տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա:

Ներառական ուսուցման ելակետային հասկացությունն այն է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան, որն ունի կենսագործունեության սահմանափակ հնարավորություններ, չի հարմարեցվում հասարակության օրենքներին և պայմաններին, այլ ներառվում է հասարակական կյանք՝ իրեն հատուկ պայմաններով, որը հասարակությունը հասկանում և հաշվի է առնում:[226]

ՀՀ կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն Անահիտ Բախշյանը «Հա-

մընդհանուր ներառական կրթության օրենսդրական հիմքերի կատարելագործման անհրաժեշտությունը» հոդվածում[227] մատնանշում է, որ 2001-2005թթ. «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հսկայական ջանքերի շնորհիվ սկսվեց պիլոտային մի ծրագիր, որի նպատակն էր Հայաստանի Հանրապետությունում տարածել ներառական կրթության գաղափարախոսությունը:[228]

Առաջին պետական փաստաթուղթը, որով կրթության պետական լիազոր մարմինը հայտարարեց ներառական կրթություն իրականացնելու մասին, 2001 թվականին ԿԳ նախարարության, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության և Երևանի թիվ 27 դպրոցի միջև կնքված եռակողմ պայմանագիրն էր, որով այդ դպրոցը ճանաչվեց հանրապետությունում առաջին ներառական դպրոցը: Ըստ ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների, 2003 թվականին Երևանում ևս չորս դպրոցներ հայտարարվեցին ներառական կրթություն իրականացնողներ: Հնգամյա (2001-2005թթ.) այս ծրագրի իրականացման ժամանակ կուտակված փորձի վրա մշակվեց և 2005 թվականին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին» օրենքը, որով ներառական կրթության քաղաքականությունը ստացավ օրենքի ուժ:[229] Օրենքը կառուցվեց պիլոտային ծրագրի դրական արդյունքների վրա: Առաջինն այն էր, որ հասարակության մեջ նստած այն կարծրատիպը, որ հաշմանդամ երեխաների մուտքը հանրակրթական դպրոց կարող է երկուստեք անցանկալի հետևանքներ ունենալ թե՛ հաշմանդամ, թե՛ ոչ հաշմանդամ երեխաների համար, շատ արագ հաղթահարվեց: Հատկապես երեխաների համար, եթե մեծերը հաշմանդամությունը մատնացույց չեն անում, երեխաները միմյանց ընդունում են այնպիսին, ինչպիսին կան և փոքրուց սովորում են համակեցության կանոններն ու դառնում հանդուրժող:

Պիլոտային ծրագրի հաջորդ դրական արդյունքն այն էր, որ կառավարության մշակած կարգով ներառական դպրոցներում ընդգրկված երեխաների կրթությունն սկսեց ֆինանսավորվել բարձրացված չափաքանակով, որը դպրոցներին հնարավորություն տվեց ունենալ բազմամասնագիտական թիմ՝ հատուկ մանկավարժ, հոգեբան ու սոցիալական աշխատող, որոնցից երկուսի՝ հոգեբանի ու սոցիալական աշխատողի ներկայությունը յուրաքանչյուր դպրոցում նախատեսվել էր 2001-2005թթ. կրթության զարգացման պետական ծրագրով, սակայն չէր հաջողվել իրականացնել: Հաջորդ դրական արդյունքը՝ ներառական դպրոցների վերապատրաստված ուսուցիչներն աստիճանաբար ձեռք բերեցին նոր հմտություններ, որոնք միտված էին աշակերտակենտրոն դասավանդման մեթոդներով յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքը գնահատելուն ու այն բավարարելուն: Մյուս դրական արդյունքն այն էր, որ Հայաստանում ամեն տարի կառավարությունն սկսեց ավելացնել ներառական դպրոցների թիվը և ընդունվեց հատուկ կրթության պետական չափորոշիչը թեթև, միջին ու ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար:

Այսպիսով, ներառական կրթությունն այն է, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ընդգրկվում է սովորական հանրակրթական դպրոցում՝ նստելով իր հասակակիցների հետ նույն դասարանում, պարապելով նույն ուսուցիչների մոտ, և անհատական ուսումնական պլանով ստանում իր կարողություններին համապատասխան գիտելիքների պաշար: Հետևաբար, կրթության մեջ ներառումը ենթադրում է՝

1. բոլոր սովորողների կրթական կարիքների հավասար գնահատում,
2. ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումներին սովորողնե-

րի ներգրավվածության աստիճանի բարձրացում,

3. դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և դրա համապատասխանեցում սովորողների բազմազանությանը և առանձնահատկություններին,

4. ուսուցման գործընթացում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր սովորողների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամ և կրթական հատուկ պահանջներ ունեցող սովորողներով),

5. խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռքբերում, որը կոչված է ապահովելու որոշակի սովորողների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ սովորողների համար ավելի մեծ բարեփոխումների ակնկալիքով,

6. սովորողների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,

7. սեփական համայնքում կրթություն ստանալու՝ սովորողների իրավունքի ապահովում,

8. ինչպես դպրոցի աշխատակազմի, այնպես էլ սովորողների համար ուսումնական պայմանների բարելավում,

9. դպրոցների ու համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում և այլն:

Ըստ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին» օրենքի պահանջների՝ ներառական կրթությունը՝

- ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել,
- ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը,
- նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը,
- նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարի իրականացմանը, դինամիկ և զարգացող գործընթացին:

Իսկ ի՞նչ պայմաններում է ներառական կրթությունը կազմակերպվում ԼՂՀ հանրակրթական դպրոցներում:

ԼՂՀ-ում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու և այդ գործում աջակցություն ցուցաբերելու նպատակով 2009-2010 ուսումնական տարվա վերջին Ստեփանակերտում էր ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը, որի կազմում էին հատուկ կրթության բաժնի պետ Նուրիջան Մանուկյանը, Երևանի լսողության խնդիրներ ունեցող երեխաների կրթահամալիրի տնօրեն Աշոտ Ավետիսյանը, բժշկահոգեբանական կենտրոնի տնօրեն Վարդուհի Գադինյանը:[230] Ստեփանակերտի թիվ 9 հիմնական դպրոցում, որտեղ առկա են կրթական առանձնահատկություններ ունեցող երեխաների ուսուցման օժանդակ դասարաններ, Երևանից եկած մասնագետները անց են կացրել դասալսումներ, իսկ թիվ 7 հիմնական դպրոցում սեմինար՝ այդ երեխաներին դասավանդող ուսուցիչների և ծնողների համար: Երևանի հատուկ կրթահամալիրի տնօրեն Ա. Ավետիսյանը սեմինարի մասնակիցներին տեղեկացրեց, որ Հայաստանում կրթական առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ուսուցումն իրականացվում է կամ հատուկ կրթահամալիրում, որն, ի դեպ, միակն է հանրապետությունում, կամ ներառական ձևով: Վերջինս կոչվում է ներառական կրթություն: Դա այն է, երբ կրթական առանձնահա-

տուկ կարիք ունեցող երեխաները սովորում են մյուս երեխաների հետ նույն դպրոցում, նրանց տրվում է հոգեբան, հատուկ մանկավարժ, մի խոսքով՝ մանկավարժական թիմ, որն այդ երեխաների հետ աշխատում է ինչպես դասապրոցեսի ժամանակ, այնպես էլ հետո՝ անհատական ձևով: Հայաստանի ոչ մի հանրակրթական դպրոցում չկա վատ լսողություն ունեցող երեխաների դասարան (ինչպես մեզ մոտ է) կամ տնային ուսուցում: Կրթության այն ձևը, որը Արցախում է իրականացվում, կոչվում է ինտեգրված ուսուցում: Ոչ մի երկրում ուսուցման նման ձև չկա, աշխարհը գնում է դեպի ներառական կրթություն:[231]

Ստեփանակերտի թիվ 9 դպրոցում անցկացված դասալսումներից Երևանի բժշկահոգեբանական կենտրոնի տնօրեն Ա. Ավետիսյանի տպավորությունն այն է, որ այդտեղ սովորող 16 երեխաներից երկու-երեքը միայն կարող են դժվարություններ ստեղծել, իսկ մնացածը ենթակա են սովորելու ընդհանուր դասարաններում՝ չառաջացնելով խնդիրներ: ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում Ավետիսյանը ներկայացրեց, որ Երևանում արդեն 49 ներառական դպրոց կա: Արցախում ևս պետք է նման դպրոցներ բացել: Մանկավարժական կոլեկտիվը պետք է պատրաստ լինի աշխատելու ադպիսի երեխաների հետ: Նախարարը մատնանշեց, որ նրանցից ոմանք ի վիճակի են ատեստավորվել և ստանալ փաստաթուղթ, իրենց ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Հայաստանի հատուկ կրթության բաժնի պետ Ն. Ավետիսյանի զեկուցման նյութի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ Երևանի հատուկ կրթության համալիրն աշխատում է գիշերօթիկ ռեժիմով, ունի բոլոր հարմարությունները: Ուսումնական գործընթացից բացի այստեղ ցուցաբերվում է նաև գիտամեթոդական, մանկավարժական օգնություն Հայաստանի տարածքում եղած բոլոր շահառուների համար՝ ծնողների, ուսուցիչների, ովքեր ունեն լսողության խանգարում ունեցող երեխաներ: Կրթահամալիրում ուսուցանում են հինգ մասնագիտություններ: Դրանք երեխաները սկսում են սովորել 8-րդ դասարանից սկսած՝ հիմնական կրթության հետ միասին, մինչև 10-րդ դասարան: Դրանից հետո երեք տարի ավագ դպրոցում հմտանում են այն մասնագիտության մեջ, որը նախընտրել են: Նմանները դպրոցն ավարտելուց հետո կարողանում են մանր ու միջին բիզնեսում, ինչպես նաև տանը աշխատելով վաստակել իրենց հացը:

Հայաստանի մասնագետներն առաջարկեցին Արցախում նույնպես անցնել կրթության այս ձևին: Դրա համար կա երկու ճանապարհ, կամ այստեղ ունենալ Երևանի լսողության խանգարումներ ունեցող հատուկ կրթահամալիրի մասնաճյուղ, կամ անցնել ներառական կրթության: Կա նաև մեկ այլ տարբերակ. ծնողներն իրենց երեխաներին կարող են ուղարկել կրթահամալիր, որին սկզբունքորեն դեմ չէ կրթահամալիրի ղեկավարությունը (ի դեպ, այստեղ ներկայումս սովորում է արցախցի վեց երեխա, երեքն էլ 2010 թվականին ավարտել և աշխատում են Ղարաբաղում): Սակայն բոլոր ծնողները չէ, որ կհամաձայնվեն գնալ այս քայլին:

ՀՀ ԿԳ նախարարության մասնագետների հետ համագործակցության ծրագրեր մշակվեց և պարտավորություն ձեռք բերվեց այդ գործընթացն առաջիկայում իրականացնել հայաստանյան գործընկերների մասնակցությամբ:

Ըստ ԼՂՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի, «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»: Հետևաբար, յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնական իրավունք և պետք է հնարավորություն ունենա ստանալ և պահպանել գիտելիքների իր համար ընդունելի մակարդակը: Նրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ հետաքրքրություններ և ընդունակություններ: Դրանք հաշվի առնելով,

ԼՂՀ կառավարությունը 2010թ. հոկտեմբերի 22-ին որոշում է ընդունել, որով սահմանված են ներառական կրթության անցման ձևերը, պայմանները: Հիմք ընդունելով «Ներառական կրթության իրականացման մասին» կառավարության որոշումը, ԿԳ նախարարությունը 2010-2011 ուս. տարում ձեռնամուխ եղավ ներառական կրթության իրականացմանը:[232]

Ներառական կրթության կազմակերպման գործընթացը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի՝ նախապատրաստական և իրականացման: Նախապատրաստական փուլում դպրոցի տնօրենը ստանում է ներառական կրթություն իրականացնելու համար ԿԳ նախարարության թույլտվությունը, որպեսզի ապահովի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ սահմանված կարգով կրթական կարիքի գնահատման հանձնաժողովի եզրակացության հիման վրա վկայագիր ստացած սովորողների առկայությունը, ինչպես նաև կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ ու հարմարեցված միջավայր:

Նախապատրաստական փուլում տնօրենն ապահովում է՝

1. ներառական կրթություն իրականացնելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի թույլտվությունը

2. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, սահմանված կարգով բժշկահոգեբանամանկավարժական (ԲՀՄ) հանձնաժողովի եզրակացության հիման վրա վկայագիր ստացած սովորողների առկայությունը.

3. ուսումնանյութական հարմարեցված միջավայր:

Վերոնշյալ պայմանների առկայության դեպքում արդեն դպրոցում պաշտոնապես կազմակերպվում է ներառական կրթություն՝ հետևյալ հաջորդականությամբ.

1. Ներառական կրթություն կազմակերպելու համար վերապատրաստման գործուղված մասնագետը (մասնագետները), որի վրա ժամանակավորապես կամավորության սկզբունքով դրվում է դպրոցում ներառական կրթությունը համակարգողի պարտականությունը, դպրոցի բուժաշխատողի հետ ուսումնասիրում է սովորողների բժշկական գործերը (Ձև 26) և առանձնացնում այն սովորողների գործերը, ովքեր ունեն մտավոր զարգացման, լեզվական, լսողական, տեսողական, հոգեբանական, հենաշարժական կամ այլ խնդիրներ:

Այս փուլում պետք է քննարկել նաև դպրոցի բոլոր ուսուցիչների կարծիքները, քանի որ կարող են լինել սովորողներ, որոնց բժշկական գործերում այս կամ այն պատճառով չի գրանցվել այդ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Հայտնաբերված սովորողների բժշկական գործերն առանձնացվում են:

2. Ներառական կրթությունը համակարգողի պարտականությունները կատարող անձը դպրոցի տնօրենի գիտությամբ և համաձայնությամբ հանդիպում է վերը նշված սովորողների ծնողների (օրինական ներկայացուցչի) հետ, բացատրում իրադրությունը և նրանցից վերցնում գրավոր համաձայնագիր երեխային ներառական կրթության մեջ ընդգրկելու մասին:

Ծնողի անհամաձայնության դեպքում երեխային ԲՀՄ գնահատման ներկայացնել, հետևաբար՝ նաև ներառական կրթության մեջ ընդգրկել չի կարելի:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները (ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ) սահմանված կարգով ներկայանում են ԲՀՄ հանձնաժողով՝ հետևյալ փաստաթղթերով.

ա) սովորողի ծննդյան վկայականի պատճենը,

բ) սովորողի բժշկական գործի (Ձև 26) պատճենը,

գ) սովորողի ծնողի դիմումը:

Երեք և ավելի սովորողների առկայության դեպքում կարելի է ԲՀՄ հանձնաժողովը հրավիրել դպրոց:

4. ԲՀՄ հանձնաժողովի կողմից համապատասխան եզրակացություն ստացած ցանկացած թվով սովորողների առկայության դեպքում դպրոցը կարող է իրականացնել ներառական կրթություն:

5. Դպրոցի տնօրենը սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր է կնքում համապատասխան մասնագետների հետ և ձևավորում բազմամասնագիտական խումբ:

6. Այնուհետև սովորողների գործերը ներկայացվում են պետական լիազորված մարմնի ղեկավարին (շրջվարչակազմին, կրթության բաժնին, քաղաքապետարանին)՝ վկայագրման համար:

Վկայագրման ներկայացնելու համար անհրաժեշտ են՝

ա) դպրոցի տնօրենի դիմումը (շրջվարչակազմին, քաղաքապետին) սովորողին վկայագրելու մասին.

բ) ԲՀՄ հանձնաժողովի եզրակացությունը.

գ) սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումը (շրջվարչակազմին, քաղաքապետին) իր երեխային վկայագրելու մասին.

դ) սովորողի ծննդյան վկայականի պատճենը.

ե) սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) անձնագրի պատճենը:

Յուրաքանչյուր սովորող վկայագրվում է իր բնակության վայրի պետական լիազորված մարմնի (շրջվարչակազմի, քաղաքապետի) կողմից:

7. Երեխային դպրոց ընդունելիս պետք է ուսումնասիրել նրա բժշկական գործը և անհրաժեշտության դեպքում ուղարկել ԲՀՄ հանձնաժողով՝ համապատասխան եզրակացություն ստանալու նպաստով:

8. Դպրոցի տնօրենն ապահովում է համապատասխան ուսումնակրթական միջավայր:

Ներառական կրթության իրականացման երկրորդ փուլում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման կազմակերպման և արձանագրման (անհատական ուսումնական պլաններ) մեխանիզմների մշակման, նրա՝ պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների յորացման, կարողություններ, հմտությունների ձեռք բերման համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով իրականացվում են հետևյալ քայլերը՝

1. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի կրթությունը կազմակերպելու համար բազմամասնագիտական խումբը նախապես իրականացնում է սովորողի դիտարկում և հետազոտում: Աշակերտի դիտարկումը և հետազոտումը կատարվում են դասապրոցեսում, դասամիջոցներին, բակում, անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետը կատարում է տնայց.

2. բազմամասնագիտական խումբը, դպրոցի տնօրենը և սովորողի ծնողը, ելնելով սովորողի կրթական կարիքներից, կազմում են նրա անհատական ուսումնական պլանը (ԱՈՒՊ): Ըստ սովորողների կրթական պահանջների՝ ձևավորվում են համապատասխան խմբեր.

3. բազմամասնագիտական խմբի անդամները կազմում են սովորողների հետ կատարվող անհատական և խմբային աշխատանքների ժամանակացույցները (գրաֆիկները), որոնց համաձայն յուրաքանչյուր մասնագետ իրականացնում է իր գործունեությունը:

4. դպրոցի տնօրենը՝

ա) պետական կրթական չափորոշիչներին, ծրագրերին և սովորողի ԱՈՒՊ-ին համապատասխան ապահովում է սովորողի որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանները.

բ) ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է ներառված սովորողների սնունդը.

գ) անհրաժեշտության դեպքում ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվում է ներառված սովորողների տեղափոխումը տնից դպրոց և դպրոցից տուն (դպրոցի սեփական փոխադրամիջոցով կամ ֆիզիկական, իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա).

դ) ներառված մտավոր խնդիրներ ունեցող սովորողի ուսումնական չափորոշիչների և ծրագրերի յուրացման արդյունքների հիման վրա իրականացվում է դասարանից դասարան նրա տեղափոխումը:

Աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով շատ կարևոր է բազմամասնագիտական խմբի և մանկավարժական կոլեկտիվի փոխհարաբերությունների և համատեղ աշխատանքի կազմակերպումը: Անհրաժեշտ է դպրոցի ողջ մանկավարժական համակազմին ծանոթացնել ներառական կրթության նպատակներին և բովանդակությանը՝ պարբերաբար կազմակերպելով սեմինար-պարապմունքներ: Սեմինար-պարապմունքները կազմակերպում և անցկացնում են բազմամասնագիտական խմբի անդամները (կարող են հրավիրվել այլ մասնագետներ):

Ներառական կրթության համակարգը պետք է շարունակաբար համագործակցի տնօրենի ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալների, ինչպես նաև առարկայական մեթոդմիավորումների նախագահների հետ: Դասվարների և դասղեկների հետ պետք է լինի մշտական համագործակցություն՝ յուրաքանչյուր սովորողի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով:

«Կրթության մասին» ԼՂՀ օրենքի, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքի (2010թ. դեկտեմբեր) և «Հանրակրթության պետական կրթակարգի» հիման վրա աշխատանքները պլանավորվում, համակարգվում և վերահսկվում են ուսումնական հաստատության տնօրենի կողմից: Տնօրենը, կախված երեխաների կրթական կարիքներից, կատարում է մանկավարժական կադրերի ընդունելություն և տեղաբաշխում: Որոշում է աշխատողների պաշտոնային պարտականությունները, ստեղծում պայմաններ նրանց մասնագիտական վարպետության, որակավորման բարձրացման համար: Ներառական կրթության արդյունավետ կազմակերպման համար ստեղծվում են գործընկերային հարաբերություններ ծնողների, մանկավարժների, այդ թվում դպրոցների սովորողների և ուսուցիչների միջև:

Ինչպես տեղեկացանք ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից, 2010-2011 ուս.տարում նախարարությունը հաստատել է այն դպրոցների ցանկը, որոնք պետք է իրականացնեն ներառական կրթություն: Համաձայն կառավարության որոշման, նախարարության կողմից կատարվել են կազմակերպչական որոշակի աշխատանքներ ներառական կրթության անցնելու ուղղությամբ: Դեռևս 2009-2010 ուսումնական տարվա վերջին նախարարության հրավերով Արցախ էին ժամանել Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի մասնագետները՝ տնօրեն Վարդուհի Կատինյանի գլխավորությամբ, և պայմանավորվածություն էր ձեռք բերվել ներառական կրթության վերաբերյալ կա-

տարվելիք աշխատանքների շուրջ: Կրթության, գիտության նախարարության մասնագետների հետ կենտրոնի մասնագետները եղել են հանրապետության շրջաններում, հանդիպումներ ունեցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, նրանց ծնողների, ուսուցիչների հետ, ուսումնասիրություններ, գնահատումներ կատարել ու նշել այն կրթական ծրագրերը, որոնցով պետք է առաջնորդվեն այդ կարգի երեխաների կրթությունն իրականացնելիս: Հանրապետությունում 2009-2010 ուս.տարում այդ երեխաների թիվը 320 էր:[233]

Ըստ պաշտոնական տվյալների, 2010թ. օգոստոսի 23-27-ը Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի մասնագետները՝ տնօրեն Վարդուհի Կատինյանի գլխավորությամբ, վերապատրաստումներ անցկացրին այն ուսուցիչների հետ, որոնք պետք է աշխատեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ: Վերապատրաստման դասընթացներին մասնակցող ուսուցիչները սոցիալական մանկավարժներ են, հոգեբաններ, հատուկ մանկավարժներ: Նրանք աշխատում են տվյալ դպրոցում այն մանկավարժների և դպրոցների ղեկավարների հետ, որոնցում կան կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Այդ թիմում (սոցիալական մանկավարժը, հոգեբանը, հատուկ մանկավարժը) առնվազն երեք հոգի են ընդգրկված, նրանց շուրջ հավաքվում են դասավանդող ուսուցիչը, ծնողը, բուժաշխատողը, բոլոր այն մարդիկ, ովքեր գործ են ունենում այդ երեխաների հետ: Թիմը հիմնական ուսուցիչների հետ միասին պարապմունքների ժամանակ և դասերից հետո այդ երեխաների հետ աշխատանք է տանում նրանց կարիքներին, պահանջներին համապատասխան: Տարբեր երեխաներ ունեն տարբեր կարողություններ ու հնարավորություններ: Նրանց հետ մանկավարժները աշխատում են անհատական ուսումնական պլանով: Դպրոցի ղեկավարությունը, ԿԳ նախարարության գլխավոր մասնագետները մեթոդապես օգնում են մանկավարժներին՝ ճիշտ մեթոդի ընտրություն կատարելու, երեխայի գիտելիքի սահմանը ճիշտ դնելու: Փորձը ցույց է տվել, որ 9-րդ հիմնական դպրոցում ճիշտ է դրվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գիտելիքների գնահատման, կարողությունների սահմանը և ճիշտ է կազմակերպվում նրանց հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքը, և երեխաները հաստատ ձեռք են բերում այնքան գիտելիք, որքան ունակ են:

ԼՂՀ ԿԳ նախարարությունը համապատասխան միջոցներ է ձեռնարկում և նպաստավոր պայմաններ ստեղծում, որպեսզի արդյունավետ կազմակերպվի նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը: Ինչպես գիտենք, յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք և պետք է հնարավորություն ունենա ստանալ և պահպանել գիտելիքների իր համար ընդունելի մակարդակը: Ըստ մանկավարժ հոգեբանների վերլուծությունների տվյալների, յուրաքանչյուր երեխա ունի յուրահատուկ հետաքրքրություններ, ընդունակություններ և ուսումնական պահանջներ: «Կրթությունը բոլորի համար»[234] կարգախոսը մեր ժամանակներում, հիրավի, դարձել է հրամայական, որի համար էլ ԿԳ նախարարությունը մշակել է կրթության նոր համակարգեր իրականացնելու կրթական ծրագրեր՝ հաշվի առնելով սովորողների պահանջների ու հետաքրքրությունների բազմազանությունը: ԿԳ նախարարությունը՝ որդեգրելով այս քաղաքականությունը և կարևորելով գործընթացի էությունը, 2010-2011 ուս.տարվա հունիս ամսում իրականացրեց Երևանի բժշկամանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն Վ. Կատինյանի

գլխավորած հանձնաժողովի կողմից ԼՂՀ հանրակրթական դպրոցների տնային ուսուցման պայմաններում կրթություն ստացող շուրջ 400 աշակերտների ուսումնասիրման և գնահատման գործընթացը՝ նպատակ ունենալով նման երեխաներին ընդգրկել ներառական (անհատական) կրթության մեջ, իսկ 96-ի ուսուցումն իրականացվում է տնային պայմաններում:

Ստորև ներկայացնում ենք ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից մշակված կանոնակարգը ներառական կրթության իրականացման մասին (14-ին հունիսի, 2011թ.):

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգը սահմանվում է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի զ) կետին համապատասխան և կարգավորում է ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների և մանկավարժական գործընթացի մասնակիցների իրավահարաբերությունները:

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունում ներառական կրթությունն իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար՝ նրանց զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու, մյուս սովորողների հետ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություն ընձեռելու նպատակով:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ընդունելությունը ներառական կրթություն իրականացնող հաստատություն կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարության 2007 թվականի օգոստոսի 24-ի N60/Ա հրամանով հաստատված կարգին համապատասխան:

4. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթությունը իրականացվում է հանրակրթական չափորոշիչներով և ծրագրերով, իսկ դրանց յուրացման անհնարինության դեպքում՝ նաև հատուկ կրթության չափորոշիչներով և ծրագրերով:

5. Ներառական կրթություն իրականացնող հաստատության միևնույն դասարանի համակազմում միաժամանակ կարող են ընդգրկվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2-3 երեխա՝ ըստ կրթական կարիքների բարդության, ընդ որում դրանք կարող են լինել թե՛ միևնույն, թե՛ տարբեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

6. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցումն իրականացվում է յուրաքանչյուր սովորողի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմված անհատական ուսուցման պլանի (այսուհետ՝ ԱՈՒՊ) հիման վրա:

7. ԱՈՒՊ-ը կազմվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաստատություն ընդունվելուց մեկ ամիս անց, մեկ ամսվա ընթացքում: Հաստատությունից հաստատություն տեղափոխվելիս ԱՈՒՊ-ը սովորո-

ղի անձնական գործերի հետ միասին ներկայացվում է ընդունվող հաստատություն:

8. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման ժամանակ կարող է կիրառվել առաջադիմության գնահատման այլընտրանքային համակարգ, ըստ որի բացահայտվում և ԱՈՒՊ-ում գրանցվում է սովորողի զարգացման առաջադիմությունը, ճշտվում են նրա հետ տարվող անհատական աշխատանքների բովանդակությունը և ծավալը:

9. ԱՈՒՊ-ը կազմվում է ներառական կրթությանն աջակցող մասնագետների՝ սովորողի հետ աշխատող ուսուցիչների, հատուկ և սոցիալական մանկավարժների, հոգեբանի կողմից:

10. Ուսուցիչները, հատուկ և սոցիալական մանկավարժները, հոգեբանը հաստատությունում իրենց աշխատանքային պարտականությունները կատարում են յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունների շրջանակներում:

11. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթական կարիքը բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից ենթակա է գնահատման յուրաքանչյուր 2 տարին մեկ, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հաստատման նպատակով: Ծնողի և ուսումնական հաստատության դիմումի համաձայն՝ սովորողի կրթական կարիքը կարող է վերագնահատվել ավելի վաղ ժամկետներում:

12. ԱՈՒՊ-ը հիմք է հանդիսանում տվյալ հաստատությունում կիրառվող գիտելիքների հաշվառման և գրանցման, ինչպես նաև գնահատման փաստաթղթերը վարելու և սովորողին դասարանից-դասարան փոխադրելու համար:

13. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ուսուցման գործընթացը պարտադիր ներառում է երեխայի կողմից նրա դասարանի դասացուցակով նախատեսված ուսումնական պարապմունքների ոչ պակաս, քան 80%-ի մասնակցությունը:

14. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ԱՈՒՊ-ով նախատեսված լրացուցիչ պարապմունքները կազմակերպվում են տվյալ օրվա դասերի ավարտից հետո, սակայն ոչ պակաս, քան 30 րոպե անց: 30 րոպե տևողությամբ ընդմիջումն օգտագործվում է երեխայի սնունդը կազմակերպելու համար:

15. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի հատուկ մանկավարժական լրացուցիչ պարապմունքների գրաֆիկը ամրագրվում է սովորողի ԱՈՒՊ-ում:

16. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից բաղկացած առանձին դասարանների ձևավորումն արգելվում է:

17. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ընդգրկվածության վերաբերյալ տվյալներն արտացոլվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված ձևի տարեկան հաշվետվության մեջ:

Հարկ է նշել այն փաստը, որ ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը զգալի աշխատանք է կատարում կրթություն առանձնահատուկ պայմանների կա-

ոիք ունեցող երեխաների հետ աշխատող ուսուցիչների համար, կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ, բարձրացրել նրանց մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածությունը: Այդ նպատակով ՀՀ-ից հրավիրում են համապատասխան մասնագետներ՝ դասավանդելու դասընթացներում: Նրանց օգնությամբ կազմակերպվել է նաև այդ ուսուցիչների գործուղումը Երևան՝ ինչպես քաղաքի համապատասխան ուսումնական կենտրոնում վերապատրաստվելու, այնպես էլ հատուկ դպրոցում աշխատող ուսուցիչների փորձն ուսումնասիրելու նպատակով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2010-2011 ուս. տարվա սեպտեմբերի 1-ից ներառական կրթություն է իրականացվում Ստեփանակերտի թիվ 1, 2, 9, Ասկերանի միջնակարգ, Իվանյանի, Մարտակերտի թիվ 2, Մարտունու թիվ 2, Հադրութի, Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցներում, որոնցում նման կարգի սովորողների հետ աշխատում են հատուկ և սոցիալական մասնագետներ, հոգեբաններ: Դպրոցներում կահավորվել են համապատասխան ուսումնական և ժամանցի համար հագեցված կաբինետներ, ինչպես նաև լուծվել սնունդ տալու հարցը: Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանի հաշվետվության տվյալների համաձայն, կրթություն ստանալու իրավունքից օգտվել են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 64 երեխաներ, որոնց ուսուցումը 2011-2012 ուս.տարում կազմակերպվել են տնային պայմաններում, իսկ 45-ը ներառվեցին Մարտակերտի թիվ 1, Դրմբոնի, Վանքի, Քոլատակի, Կոճողուտի, Ն. Մարաղայի, Ն. Հոռաթաղի, Վ. Հոռաթաղի, Ն. Սեյսուլանի, Առաջածորի, Հաթերքի, Մաղավուզի միջնակարգ և Ծմակահողի, Մարտակերտի թիվ 2 հիմնական դպրոցների, Խնկավանի մասնաճյուղի համապատասխան դասարաններում, որոնց հետ, ըստ անհատական ուսումնական պլանների, համապատասխան աշխատանքներ են տարվել: 2011-2012 ուսումնական տարում Մարտունու շրջանի 20 դպրոցներում ընդգրկված են եղել համապատասխանաբար ներառական կրթության 32, և տնային ուսուցմամբ 11 աշակերտներ, իսկ դրանց թիվը ավելացավ 2014-2015 ուս.տարում: Ներառական կրթության 54, տնային ուսուցմամբ 22 աշակերտներ, համեմատաբար մյուս շրջաններում՝ ներառական կրթության աշակերտների քանակը այստեղ շատ է: 2013-2014 ուս.տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 6 աշակերտ ավարտել է 9-րդ դասարանը, որոնք, ըստ նշված օրենքի, ազատվել են քննություններից և ստացել կրթության վկայական: Շրջանում համապատասխան մասնագետների կողմից բավարար աշխատանքներ են տարվել ներառական կրթությունն արմատավորելու ուղղությամբ, կազմակերպվել են դաս-միջոցառումներ, երեխաների սեփական գործերի ցուցահանդես, մասնագետները հաճախել են շրջանի բոլոր դպրոցները, որտեղ իրականացվում է ներառական կրթությունը:

2011-2012 ուսումնական տարում Հադրութի շրջանի կրթության բաժնի մասնագետների կողմից բավարար աշխատանքներ են տարվել ներառական կրթության կազմակերպման ուղղությամբ: Շրջանի մի շարք դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկված են 48 երեխաներ: Դասավանդող ուսուցիչներին ուսումնական տարվա ընթացքում մեթոդական օգնություն են ցույց տալիս բաժնի մասնագետները: Վերջիններս լինում են դպրոցներում, հանդիպում ինչպես դասավանդող ուսուցիչների, այնպես էլ ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաների և նրանց ծնողների հետ: Երեխաների մի մասի ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում, իսկ մնացածների ուսուցումը՝ դպրոցներում, իրենց հասակակիցների հետ միասին:

Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբալյանի հաշվետվությունում նշվում է, որ շրջանում ներառական կրթություն իրականացվում է 2011-2012 ուս. տարվանից, սկզբնական շրջանում դպրոցներում ընդգրկվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 38 երեխաներ, իսկ 2013-2014 ուս. տարում դրանց թիվը հասել է 62-ի: Բաժնի վարիչը նաև մատնանշում է, որ 2014-2015 ուսումնական տարում ուսումնասիրվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ նախկինում գնահատված 60 աշակերտներ, որոնց մոտ ծնողների, ուսուցիչների կողմից նկատվել են տարբեր շեղումներ (տեսողական, խոսքի և վարքի խանգարումներ): Նման երեխաների կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովումը (սնունդ, թեթևացված ծրագրային պահանջներ) և համատեղ ուսուցումը հանրակրթական դպրոցներում վկայում են նրանց շահերի, հավասարազոր իրավունքների պաշտպանության մասին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, 2012-2013ուս.տարում Շուշիի դպրոցներում ընդգրկված են եղել ներառական կրթության 16 և տնային ուսուցման 22 աշակերտներ, որոնցից 6 աշակերտներ ավարտել են 9-րդ դասարանը, իսկ 2013-2014-ին 10 աշակերտ ըստ օրենքի պահանջների ազատվել են քննություններից և ստացել 9-ամյա կրթության վկայական: Իսկ Քաշաթաղի շրջանի 51 դպրոցներից 22-ում 2012-2013 ուս. տարում ընդգրկված են եղել ներառական կրթության 52 և տնային ուսուցման 44 աշակերտներ, 2013-2014 ուս.տարում 34 աշակերտներ ավարտել են 9-րդ դասարանը, ազատվել քննություններից: Համեմատաբար, Շահումյանի շրջանի դպրոցներում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների թիվը շատ քիչ է: Ներառական կրթության դպրոցներում վերոնշյալ ուս.տարում ընդգրկված են եղել 24, իսկ տնային պարապմունքներում՝ 33 աշակերտներ: Ուսումնական տարում 9-ամյա կրթության վկայական են ստացել 10 աշակերտներ:[235]

Ներառական կրթության կազմակերպման նախապատրաստական փուլում պարտադիր գործընթաց է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի բժշկահոգեբանամանկավարժական գնահատումը: Ամեն տարի նման կարիք ունեցող երեխաների գնահատումն իրականացվում է ՀՀ բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի կողմից, բայց 2013-2014 ուս. տարում Ստեփանակերտում՝ ԳԹԿ-ում (Գիտաթեստավորման կենտրոն) ստեղծվել է կարիքի գնահատման բաժին, որն էլ այդ աշխատանքներն իրականացրել է և այդ ուսումնականում շուրջ 200 աշակերտ ընդգրկվել է ներառական կրթության բաժնում, 98 հոգի՝ տնային ուսուցման համակարգում:

Ըստ պաշտոնական տվյալների, 2013-2014 ուսումնական տարվա նոյեմբերի 21-ին ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը անցկացրեց շրջանների հանրակրթական դպրոցների տնօրենների սեմինար-խորհրդակցություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման կարգի վերաբերյալ: Առաջին խորհրդակցությունն անցկացվեց Մարտունում, այնուհետև հանրապետության մյուս շրջաններում: ԼՂՀ ԳԹԿ-ի տնօրեն Յու. Քարամյանը խոսեց հանրակրթական դպրոցներում ներառական կրթության կազմակերպման մասին, ըստ որի, վերջինս ենթադրում է ոչ միայն ընդհանուր հայեցակարգի սահմանում և ընդունում, այլև համապատասխան գործողությունների հստակ պլանավորում:

Ըստ պաշտոնական տվյալների, 2014-2015 ուսումնական տարում ԳԹԿ-ի կողմից հետազոտության են ենթարկվել մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 113 երեխաներ,

որոնցից 19 աշակերտի հետ ուսուցումը կազմակերպվում է անհատական ծրագրով՝ տնային պայմաններում, 94 աշակերտ ներառվում է մասսայական դասարաններում, իսկ 8 աշակերտ ընդգրկված է հ.9 դպրոցում գործող խուլ-համրերի դասարաններում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 74 երեխայի ուսուցման գործընթացը կազմակերպվում է հ.1,2 և 9 հիմնական դպրոցներում, որտեղ շարունակում են տարվել նպատակային աշխատանքներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու համար:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցների կոլեկտիվների, հատկապես այդ ուղղությամբ աշխատող մասնագետների՝ հատուկ մանկավարժների, հոգեբանների և սոցմանկավարժների ջանքերի շնորհիվ երեխաներն արդեն իսկ իրենց զգում են որպես կոլեկտիվի լիարժեք անդամ և ընդունվում ընկերների կողմից, որն էլ ամենակարևորն է:

Այսպիսով, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն իրականացնող հանրակրթական դպրոցների թիվը հանրապետությունում տարեցտարի աճում է, մայրաքաղաքի և շրջանների շուրջ 62 դպրոցներ ապահովում են կրթությունից դուրս մնացած առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ԼՂՀ սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված կրթության իրավունքի իրացումը: Բնական է, որ այս պայմաններում ընդլայնվում է նաև ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների տնօրենների, դասավանդող ուսուցիչների պարտականությունների և պատասխանատվության շրջանակը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում վերապատրաստման դասընթացներում զարգացնել թե՛ տնօրենների և թե՛ մասնագետների (հոգեբան, մանկավարժ, հոգեբան-բժիշկ, սոց-մանկավարժ) գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև նրանց կառավարչական հմտությունները ներառական կրթության կազմակերպման և իրականացման գործում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ներառելով հանրակրթության մեջ՝ դպրոցների տնօրեններն ու դասավանդող ուսուցիչները անհրաժեշտ պայմաններ են ստեղծում պետական չափորոշիչներին համապատասխան նրանց գիտելիքները գնահատելու և ուսման որակն ապահովելու համար: Ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք նաև, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցի տնօրենը կարողանում է ապահովել դպրոցի ողջ անձնակազմի և ներառական կրթությունը կազմակերպող աշխատանքային թիմի արդյունավետ համագործակցությունը:

Հարկ է նշել նաև այն փաստը, որ 2014-2015 ուս.տարում ԼՂՀ ԿԳ նախարարության որոշմամբ շարունակվել են երեխաների հետազոտման աշխատանքները՝ ներգրավելով նաև մանկապարտեզի երեխաներին: Նախատեսվում է մանկապարտեզներում ներառական խմբերի ստեղծում:

Հանրապետությունում նախադպրոցական տարիքի երեխաների ներառական կրթությունն իրականացվում է այն սկզբունքով, որ այդ հասակի բոլոր երեխաները կարող են հաճախել մանկապարտեզ: Ընդունելի են երեխաների տարբերությունները, տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն: Այն նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի իրականացմանն ու կազմակերպմանը: Մանկապարտեզում

թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների նկատմամբ ցուցաբերում են հատուկ ուշադրություն և անհատական աջակցություն՝ կրթությանը հավասար հնարավորություններով մասնակցելու իրավունքն ապահովելու համար, ստեղծում նրանց կարողություններին, հմտություններին ու կարիքներին համապատասխան առանձնահատուկ պայմաններ:

Կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ կստիպի ուսուցիչներին, դաստիարակին կիրառել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում:

Դիտարկումները ցույց են տվել, որ դաստիարակը չի սահմանափակվում պատրաստի ուսումնական նյութերով, այլ ստեղծում է հետաքրքրաշարժ նյութեր՝ հաշվի առնելով թեթև հետամնացություն ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններն ու կարիքները: Ուսումնաօժանդակ նյութերի ընտրությունը կատարվում է երեխայի կարիքը հաշվի առնելով:

Ուսումնական նյութերի ճիշտ, տեղին, չափավոր և նպատակային օգտագործումը կարևոր նշանակություն ունի երեխայի զարգացման համար:

Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները դժվարանում են կատարել նույնիսկ խոսքային գործողություններ, քանի որ ցածր մակարդակի վրա են նրանց իմացական հետաքրքրությունը, ինքնահսկումը, ինքնագնահատումը: Մեթոդական ճիշտ աշխատանքի դեպքում ուսումնառության առաջին իսկ տարում հնարավոր է այս թերությունները վերացնել որոշակի խաղերի և խաղ-վարժությունների միջոցով: Միաժամանակ զարգացնող վարժությունները պետք է կատարվեն պարբերաբար, այլապես անօգուտ կլինեն: Խաղի միջոցով զարգանում է երեխայի խոսքը, փոխվում կամային վարքը: Խաղերը մեղմացնում են թերարժեքության բարդույթը, հեշտացնում ուսումնական նյութի յուրացումն ու ամրապնդումը, եթե դրանք համապատասխանում են սովորողի հետաքրքրություններին: Այդ մասին մեզ տրամադրած իր հուշերում գրում է Ստեփանակերտի թիվ 2 մանկապարտեզի դաստիարակ Ա. Խաչատրյանը:

Ուսուցման նախապատրաստման գործընթացում կարևոր նշանակություն ունի խաղի, ինչպես նաև մանկական գործունեության արդյունավետ ձևերի զարգացումը: Դա հիմք է տալիս նախապատրաստվելու հաջորդ առաջատար ձևին՝ ուսումնական գործունեությանը:

Հետազոտելով Ստեփանակերտի թիվ 1,2 մանկապարտեզների սահմանափակ կարողություններով 5-6 տարեկան նախադպրոցականների մեծամասնության խաղային գործունեության զարգացման մակարդակը՝ պարզեցինք, որ այն լիարժեք զարգացած չէ: Նրանց խաղը հիմնականում իրենից ներկայացնում է միայն տարրական գործողություններ առարկաների, խաղալիքների հետ: Օրինակ, Ա. Լյուդմիլան (մտավոր հետամնաց խոսքի ընդհանուր թերզարգացում, 7տ.) միայն կերակրում էր տիկնիկին, Ս. Էրիկը (6տ.) անընդհատ իրար կողքի էր շարում խորանարդիկները: Նրանք չէին խաղում դերերով: Նրանց խաղը, որպես կանոն, միապաղաղ էր, միևնույն գործողությունների կրկնություն:

Երեխաների մյուս մասը նույնպես կատարում էր խաղային գործողություններ: Սակայն այս դեպքում առկա էր գործողությունների հաջորդականություն, որը որոշ չափով համապատասխանում էր իրականությանը: Այս երեխաների խաղում դեռևս առկա չէին սոցիալական հարաբերություններն ու մարդկանց գործառույթները:

Մենք հատկապես կարևորել ենք արդյունավետ գործունեության տարատե-

սակներից մեկը՝ կառուցողական գործունեությունը: Դա երեխաների համար բավականին հետաքրքիր, պրակտիկ գործունեության ձև է, քանի որ վերջում ստացվում է իրական արդյունք: Կառուցողական գործունեությունը երկու փուլով՝ հատկորոշվում է մտահղացում և իրականացում: Մտահղացման փուլում մտածում և պլանավորում են, պատկերացնում վերջնական արդյունքը, բաղադրամասերը, հաջորդ փուլում իրականացնում են մտահղացումը:

Ինչպես պարզեցինք, երեխաների մեծամասնությունը խորանարդիկները անիմաստ դասավորում է իրար վրա՝ առանց պատկերացնելու և պլանավորելու վերջնական արդյունքը: Մյուսները կառուցում են պարզ կառույցներ (տնակ, աշտարակ, բուրգ) միայն մեծ խորանարդիկներով: Նրանք դժվարանում են պլանավորել գործողությունների հաջորդականությունը, ստեղծել սյուժետային կոմպոզիցիաներ, աշխատել թղթով, բնական նյութերով:

Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հաստատություններ՝ տարբերակված ծրագրերով մսուր-մանկապարտեզներ և մանկապարտեզներ: Հատուկ նախապատրաստվելու կարիք ունեցող երեխան հաճախում է ներառական մանկապարտեզ:

Նախադպրոցական հաստատություններում ուսուցումը տարվում է հիմնականում խաղային մեթոդներով և նպատակաուղղված է՝

* երեխայի ֆիզիկական, հուզական և մտավոր զարգացմանը,
* մայրենի լեզվով հաղորդակցվելու կարողությունների զարգացմանը,
* տարրական վարվեցողության կանոններին ծանոթացմանը:

Մանկական հասակում երեխայի կյանքում կարևոր դեր ունի մայրը: Նա է սովորեցնում և բավարարում երեխայի պահանջմունքները: Աստիճանաբար երեխայի պահանջմունքների շրջանակն ընդլայնվում է, և նրա համար կարևոր նշանակություն են ձեռք բերում նաև հայրը և ընտանիքի մյուս անդամները: Խաղային գործունեության զարգացմանը զուգահեռ երեխան սկսում է ձեռք բերել ընկերներ, որոնք նույնպես դառնում են նշանակալի մարդիկ նրա կյանքում, քանի որ հաճույք է ստանում նրանց հետ շփվելիս: Խաղի միջոցով երեխաները բացահայտում են, որ ուրիշները կարող են ունենալ այլ զգացմունքներ, ցանկություններ, սովորում են ընկերանալ, համագործակցել, զիջել:

Մանկապարտեզում երեխայի համար ի հայտ է գալիս մի նոր հեղինակություն՝ դաստիարակը, որը միշտ հանդես է գալիս հոգատարություն ցուցաբերողի և սովորեցնողի դերում: Երեխան հարմարվում է այն պայմաններին ու պահանջներին, որոնք առաջադրվում են դաստիարակների կողմից: Այս հարցում կարևոր դեր ունեն ոչ միայն նախադպրոցական հաստատությունները, այլև ծնողները: Նրանք նույնպես կարող են և պետք է լուրջ մասնակցություն ունենան այս գործընթացին:

Դաստիարակների նպատակային հանդիպումները ծնողների հետ ոչ պաշտոնական բնույթ են կրում: Նման հանդիպումներն արժեքավոր են այն իմաստով, որ բավարարում են և՛ ծնողների, և՛ դաստիարակների, և՛ երեխաների բազմաթիվ պահանջները: Դաստիարակներին հնարավորություն է տրվում քննարկել երեխայի պահվածքին, առաջադիմությանը վերաբերող հարցեր, իսկ ծնողները ներկայացնում են իրենց դիտարկումները, կիսում մտահոգությունները և անում առաջարկություններ: Այս հանդիպումների ընթացքում դաստիարակներն ու ծնողները համատեղ քննարկում են իրենց հուզող հիմնախնդիրները, մշակում դրանց լուծման կոնկրետ եղանակները: Յուրաքանչյուր երեխայի համար անհատական նպատակներ են սահմանվում, և ծնողները տրամադրում են անհրաժեշտ

տեղեկություններ ընտանիքում կիրառվող մոտեցումների վերաբերյալ: Հանդիպումները տարեկան 3-5 անգամ տևում են 30-40-ական րոպե:

Որպեսզի ծնողի համար պարզ լինի, թե կարո՞ղ է, արդյոք, իր երեխան հաղթահարել մանկապարտեզի, իսկ հետագայում՝ դպրոցի պահանջները, անհրաժեշտ է որոշել երեխայի մտավոր զարգացման մակարդակը: Ներկայումս մասնագետների մեծամասնության կարծիքով՝ զարգացման սահմանափակ կարողություններով երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստվածության գնահատումը պետք է կատարել մեկ-երկու տարի շուտ: Դա հնարավորություն կտա ավելի հեշտ լուծել առկա խնդիրները, կազմակերպել շտկողական աշխատանքներ և պարզել, թե ինչ տիպի (ներառական, հատուկ, սովորական) հանրակրթական դպրոցում է նպատակահարմար կազմակերպել երեխայի ուսուցումը:

Այսպիսով, քննարկվող հիմնահարցը պահանջում է հատուկ ուսումնասիրություն, սակայն մեր հետազոտության բնույթից ելնելով, բավարարվենք միայն վերը շարադրվածով:

4. Ուսուցչական խորհրդակցությունները և կոնֆերանսները, մանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը (1992-2016թթ.)

Արցախի դպրոցի պատմության տարբեր շրջաններում (5-րդ դարից մինչև 20-րդ դարի 80-ական թվականները (այդ մասին արդեն նշվել է սույն աշխատության առաջին և երկրորդ հատորներում), ինչպես նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1992-2016թթ.) մանկավարժական կադրերի պատրաստման հիմնախնդիրը մշտապես մտահոգել է հայ ժողովրդին, նրա մտավորականությանը, կրթական գործի կազմակերպիչներին, քանի որ բանիմաց ուսուցչի աշխատանքով է պայմանավորված ազգի ոչ միայն ներկան, այլև ապագան և, որպես արդյունք, ժողովրդի հետագա զարգացումն ու բարգավաճումը: Ինչպիսին ուսուցիչն է, այնպիսին էլ հասարակությունն է՝ այս սկզբունքով են առաջնորդվել արցախահայ դպրոցի մանկավարժության ասպարեզի գործիչները դպրոցի զարգացման բոլոր պատմաշրջաններում, ընդհուպ մինչև մեր օրերը: Կարևորելով ուսուցիչների պատրաստման անհրաժեշտությունը՝ նրանք պահանջում էին հատուկ ուշադրություն դարձնել այդ հրատապ խնդրին:

20-րդ դարի 90-ական թվականների սկզբին Արցախը ձեռք բերեց իր անկախությունը, և նոր դպրոցի կազմավորման շրջանում արմատական փոփոխություններ կատարվեցին ամբողջ կրթական համակարգում: Ազգային նոր դպրոցի կարևորագույն խնդիրն է մատաղ սերնդին տալ հայեցի կրթություն ու դաստիարակություն, խոր ու կայուն գիտելիքներ: Ուստի նորաստեղծ հանրապետության առաջին տարիներին կրթական համակարգում, հատկապես դպրոցական ոլորտում, հույժ կարևոր հարցերից մեկը եղավ մանկավարժական որակյալ կադրեր ունենալը, առանց որոնց անհնար է ապահովել ուսման բարձր որակ: Նախատեսված բարեփոխումները թղթի վրա կմնան այնքան ժամանակ, քանի դեռ կրթական համակարգն ապահովված չէ որակյալ կադրերով: Ուստի ամենից առաջ առաջնակարգ և վարպետ ուսուցչի ձևավորում է հարկավոր: Իսկ չէ՞ որ ուսուցիչը գլխավոր գործող անձն է դպրոցում: Կրթության և դաստիարակության որակն ու արդյունավետությունը բացարձակապես կախված են նրա մասնագիտական մակարդակից, վարպետությունից, բարձր գաղափարայնությունից:

Վերակառուցվող դպրոցի նոր ժամանակներում, երբ տեղի է ունենում տեխնոլոգիաների անընդմեջ զարգացում, ուսուցչի աշխատանքի համար անբավարար

են ավանդական գիտելիքները, մասնագիտական գիտությունների հիմունքներին առնչվող կարողություններն ու հմտությունները: Անշուշտ, ուսուցչից պահանջվում են խոր գիտելիքներ, մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն: Նկատենք մի շարք կարևոր հանգամանք ևս. ազգային դպրոցի կազմավորման նոր շրջանում ուսուցիչների մեթոդական պատրաստվածության աստիճանի, մասնագիտական և դասավանդման որակների մասին իրատեսական տեղեկատվություն ստանալը մեծ նշանակություն ունի և կարևոր ցուցանիշ է ինչպես ուսուցման գործընթացի արդյունավետության գնահատման ու բարձրացման, այնպես էլ ուսուցիչների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման համար: Հետևաբար, հանրապետությունում կրթական բարեփոխումների իրականացումը և ուսուցչի դերի փոփոխումը դարձան օրվա հրամայական:

Հանրակրթական դպրոցների համար մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման հիմնախնդիրը լայն քննարկման առարկա դարձան հատկապես ԼՂՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների առաջին փուլում (1992-1995թթ.):

Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակը, հետպատերազմյան շրջանում մշակութային կյանքում, կրթական համակարգում նկատվող տեղաշարժերը խթանեցին նաև ժողովրդի գաղափարական զարթոնքը: Որոշակիորեն աշխուժացավ դպրոցաշինությունը, առաջ քաշվեցին բազմաթիվ կրթական խնդիրներ, որոնց շարքում շարունակում էր անչափ կարևոր ու հրատապ մնալ ուսուցչական կադրերի պատրաստման ու վերապատրաստման խնդիրը, որը գտնվում էր կրթական գործիչների ուշադրության կենտրոնում:

Ինչպես նշել ենք աշխատության 2-րդ գլխի 2-րդ բաժնում, անկախության առաջին տարիներին, պատերազմական պայմանների և սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ կապված, կրթության ոլորտում առաջացել են բազմաբնույթ հիմնախնդիրներ: Կրթության ճգնաժամային իրավիճակի գլխավոր պատճառներից մեկը ուսուցչական որակյալ կադրերի պակասն էր, հատկապես վերաբնակեցված շրջաններում, քանի որ ուսուցիչներից շատերը տեղափոխվել էին Հայաստան կամ այլ հանրապետություններ: Անշուշտ, այս ամենը բացասական ազդեցություն է ունենում դպրոցներում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման վրա:

Հանրապետությունում մանկավարժական կադրերի խնդիրը լուծելու համար ԼՂՀ ԿԳ նախարարության և կրթության շրջանային մարմինների ձեռնարկումները լայն ծավալ են ընդունում, այսինքն մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով վերաբացվում են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի, Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի բազայի վրա հիմնադրվեց Արցախի պետական համալսարանը (ԱրՊՀ), և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստվել ինչպես դպրոցների, այնպես էլ հանրապետության տնտեսության, մշակույթի և տարբեր ճյուղերի համար:

ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ զգալի չափով համալրել ուսուցչական կադրերի պակասը, և արդեն 1992-1993 ուս.տարում ուսուցիչների թիվը հասնում էր 1996-ի, որոնցից շատերը ավարտել են Հայաստանի բուհերը, ԱրՊՀ և միջնակարգ մասնագիտական հաստատությունները: Ինչպես նշվել է աշխատության երկրորդ հատորում,

Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցներն ուսուցչական կադրերով ապահովելու գործում ժամանակին կարևոր դեր են խաղացել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, հետագայում Արցախի պետական համալսարանը և պետական հավատարմագրված «Գրիգոր Նարեկացի» (1996թ.), «Մեսրոպ Մաշտոց» (1996) համալսարանները:

Ըստ պաշտոնական տվյալների,[236] 1992-1993ուս.տարում (ապրիլի 20-ին) հրավիրված ԿԳ նախարարության խորհրդակցությունում (որին մասնակցում էին կրթության քաղաքային, շրջանային բաժինների վարիչները, 100-ից ավելի վաստակաշատ մանկավարժներ, կառավարության պատասխանատու աշխատողներ) նորանշանակ նախարար Նելլի Ոսկանյանը (1992-1995թթ.) իր զեկուցման մեջ մատնանշեց, որ պատերազմական ծանր վիճակում հանրակրթական դպրոցներն ուսուցչական կադրերով ապահովելու համար անհրաժեշտ է մի շարք միջոցառումներ ձեռնարկել.

ա) բռնագաղթված շրջանների (Շահումյանի, Մարտակերտի և այլ վայրերի) դպրոցների ուսուցչական հիմնական կազմի օգտագործում,

բ) միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր կուրսերի լավ սովորող ուսանողների ներգրավումը վերաբնակեցված շրջանների դպրոցների ուսուցչական աշխատանքի մեջ,

գ) Հայաստանի Հանրապետությունից ուսուցչական կադրերի հրավիրում,

դ) ուսուցչական նոր կադրերի պատրաստում, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, նրանց մանկավարժական մեթոդական, մասնագիտական պատրաստության մակարդակի բարձրացում:

Այդ հարցերին մեծ ուշադրություն դարձրեց ԼՂՀ ընդհանուր ուսուցչական խորհրդակցությունը, որը հրավիրվեց 1993թ. օգոստոսի 26-29-ը: Օրակարգում ներառված հարցերից էին.

- դպրոցների նյութական բազայի բարելավումը,
- ուսումնական կաբինետների ստեղծումն ու կահավորումը,
- դպրոցները դասագրքերով ու ծրագրերով ապահովումը,
- ուսուցիչների համար մանկավարժական դասընթացների կազմակերպումը,
- վերաբնակեցված շրջաններում ուսուցիչների նյութական վիճակի բարելավումը,
- դպրոցներում արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպումը և այլն:

Համանման հարցեր քննարկվեցին նաև հանրապետության շրջաններում, Ստեփանակերտում հրավիրված (1993թ. օգոստոսի 24-30-ը) օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ԿԳ նախարարության պատասխանատու աշխատողները: Մայրաքաղաքում տեղի ունեցած խորհրդակցությանը մասնակցում էին Երևանից հրավիրված անվանի մանկավարժներ, պրոֆեսորներ Արամ Աբրահամյանը, Արամ Բալյանը, Մելքում Մելքումյանը, Միշա Մանուկյանը և ուրիշներ: Իրենց ելույթներում նրանք անդրադարձան ուսուցիչների որակավորման, շարունակական կրթության հիմնախնդիրներին, առաջարկեցին որպեսզի Արցախի դպրոցների ուսուցիչները մասնակցեն նաև Երևանի բուհերում կազմակերպվող վերաորակավորման դասընթացներին: Իր զեկուցման մեջ պրոֆեսոր Արամ Աբրահամյանը նշեց, որ ինչպես միշտ, այնպես էլ ազգային դպրոցի զարգացման նոր շրջանում, դպրոցին հարկավոր են և՛ տեսական, և՛ գործնական, և՛ հոգեբանական, և՛ մեթոդական ման-

կավարժական պատրաստվածություն ունեցող մասնագետներ: Միայն գրագետ և բանիմաց ուսուցչի աշխատանքի շնորհիվ ազգը կարող է բարգավաճել, ունենալ և՛ գրագետ բժիշկներ, և գրողներ, և՛ արվեստագետներ, պատմաբաններ, տարբեր ոլորտների որակյալ մասնագետներ:

Պրոֆեսոր Արամ Բալյանը առաջարկեց ուսուցիչների վերապատրաստման համար Արցախի պետական համալսարանում, ԿԳ նախարարության կից գործող ծրագրամեթոդական կենտրոնում կազմակերպել ամառային մանկավարժական դասընթացներ, որտեղ դասախոսություններով հանդես գալու համար Հայաստանից հրավիրել լավագույն մասնագետների:

Նպատակահարմար ենք գտնում այստեղ ներկայացնել Արամ Բալյանի կազմած ռեֆերատների թեմատիկան (համառոտ), որը հանձնարարվել է 1993-1994 ուս.տարում կազմակերպված (հունիսի 20-30-ը) մանկավարժական դասընթացների մասնակից ուսուցիչներին: Ա. Բալյանի կազմած թեմատիկայի մի օրինակ պահպանվում է սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանի մոտ, որը այն ժամանակ մանկավարժական ֆակուլտետի դեկանն էր:

Ստորև ներկայացնում ենք ռեֆերատների թեմատիկան մանկավարժություն առարկայից.

1. ուսուցիչ-դաստիարակին ներկայացվող մանկավարժական պահանջները,
2. մանկավարժական գործունեության առանձնահատկությունները,
3. ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասին,
4. ուսուցչի մանկավարժական տակտը դասին,
5. ուսուցիչ-դաստիարակի ստեղծագործական աշխատանքը,
6. ուսուցիչ-դաստիարակի ինքնակրթությունը, որպես մանկավարժական վարպետության ձևավորման միջոց,
7. սովորողների հետ ուսուցչի հարաբերությունների և ոճի մանկավարժական նպատակահարմարությունը,
8. ուսուցչի վարպետությունը սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործում,
9. ուսուցչի մանկավարժական մշակույթը դասին,
10. ուսուցչի մանկավարժական տակտը սովորողների գիտելիքների գնահատման ժամանակ,
11. հեղինակության դերն ու նշանակությունը ուսուցիչ-դաստիարակի աշխատանքում և այլն:

Պրոֆեսորներ Ա. Աբրահամյանը, Մ. Մանուկյանը մշակել են ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը, որը հավանության է արժանացել ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում, իսկ փոխնախարար Ս. Ասրյանը ստանձնել է վերապատրաստման դասընթացները կազմակերպելու պարտականությունները: Չնայած հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, կառավարությունը հնարավորինս նպաստավոր պայմաններ է ստեղծել, պետական բյուջեի միջոցներով պարբերաբար դասընթացներ կազմակերպել շրջկենտրոնների, և մայրաքաղաքի կրթական հաստատություններում:

ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվային փաստաթղթերի տվյալների համաձայն՝ 1993-1994 ուս.տարում ԿԳ նախարարության ծրագրամեթոդական կենտրոնում կազմակերպված՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցել են օգոստոսի 1-20-ը, տարրական դասարանների 54 ուսուցիչներ, 20-30-ը՝ 5-8-րդ դասարանների (հայոց լեզու և գրականություն, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա և այլ առարկա-

ներ) 86 ուսուցիչներ, օգոստոսի 1-12-ը՝ 9-10-րդ դասարանների 44 ուսուցիչներ բոլոր առարկաներից:[237] ԿԳ նախարարության առաջատար մասնագետների նախաձեռնությամբ մանկավարժական դասընթացներ են կազմակերպվել նաև Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Քաշաթաղի, Շահումյանի շրջաններում, որին մասնակցել են 200-ից ավելի ուսուցիչներ:

Մանկավարժական դասընթացների ծրագրերն ունեին երեք բաժին՝ ա) մանկավարժական-հոգեբանական, բ) մասնագիտական առարկաների, գ) կազմակերպչական-վարչական: Դասընթացներում դասախոսել են ԱրՊՀ դասախոսներ Ա. Ավանեսյանը, Գ. Հարությունյանը (սույն գրքի հեղինակներ), Ա. Մխիթարյանը, Ս. Խանյանը, Ս. Դադայանը, Վ. Հակոբյանը, Ս. Պետրոսյանը, Ռ. Հովսեփյանը, Վ. Բալայանը, Վ. Միրզոյանը, ինչպես նաև կրթության շրջանային բաժինների գլխավոր մասնագետները: Այդ ժամանակաշրջանում (1997-1998թթ.) հանրապետության ուսուցիչների վերապատրաստման բաժինը ղեկավարում էր ԿԳ նախարարության ծրագրամեթոդական կենտրոնի տնօրեն Բահատուր Դավթյանը: Վերապատրաստության գիտական, մանկավարժական, մասնագիտական և ծրագրային խնդիրների լուծումը դրվել է կրթության, գիտության նախարարության գիտամեթոդական բաժնի վրա, որը ղեկավարում էր ԱրՊՀ ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Մելս Մինասյանը, իսկ կրթության շրջանային բաժիններում այդ բաժինները ղեկավարում էին դպրոցական տեսուչները: ԿԳ նախարարությունը (նախարար՝ Հենրիկ Գրիգորյան, 1995-1996թթ.) այդ առթիվ մշակած իր հրահանգում հանգամանորեն նշել է գիտամեթոդական օղակներից յուրաքանչյուրի (մայրաքաղաքում և շրջկենտրոններում) անելիքները ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման ուղղությամբ՝ շեշտը դնելով հատկապես մանկավարժական-մեթոդական խնդիրների քննարկման, իհարկե, նաև համալիր ծրագրերի վրա: Նախարարությունը սահմանել է ուսուցիչների վերապատրաստման ավելի ճկուն ու տևական կարգ, որի համաձայն՝ վերապատրաստության կենտրոնական մարմին է համարվել ծրագրամեթոդական կենտրոնը: Այն պիտի գործեր ԿԳ նախարարության գիտամեթոդական բաժնի հետ սերտորեն համագործակցած:

1996-1997 ուս.տարում ԿԳ նախարարության կատարած աշխատանքների մասին (նախարար Համլետ Ասրյանի հաշվետվությունից)[238] տեղեկանում ենք, որ ստեղծվել է ուսուցիչների վերապատրաստման երկու հիմնական ձև, մեկն իրականացվել է դպրոցական աշխատանքներին զուգընթաց՝ մեթոդամիավորումների, շրջմանկխորհուրդների և դպրոցների մանկավարժական խորհուրդների, որոնց նպատակն է բացահայտել ուսուցիչների վերարակավորման պահանջմունքները, ամրապնդել մասնագիտության նկատմամբ նրանց սերն ու հավատը, մյուսը՝ ամառային հատուկ դասընթացների միջոցով: Վերոնշյալ ուս.տարում կազմակերպվել են շրջանային, քաղաքային վերապատրաստման դասընթացներ, որոնց տևողությունը ըստ մասնագիտական խմբերի եղել է 10-20 օր, իսկ տարրական դասարանների դասվարների համար՝ մեկ ամիս: Ընդհանուր առմամբ ուսումնական տարում վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 450-ից ավել ուսուցիչներ:[239]

Ըստ պաշտոնական տվյալների, 1998-1999 ուսումնական տարվա օգոստոսյան ուսուցչական կոնֆերանսում (1999թ. օգոստոսի 26-28-ին, Ստեփանակերտի մշակույթի պալատում) քննության հատուկ նյութ դարձավ նաև ուսուցիչների վերապատրաստման խնդիրը, և այդ առթիվ ընդունվել է ուսուցիչների, տնօրենների պատրաստման դասընթացները պարբերաբար կազմակերպելու մասին համապատասխան որոշում: Ուշադրության է արժանի որոշման այն կետը, որտեղ աս-

ված է. «Ուսուցչական վերապատրաստման դասընթացները պետք է լինեն արձակուրդից դուրս և հաշվվեն իբրև աշխատանք: Կարելի է արձակուրդն ընդհատումներով անել այն ուսուցիչների համար, որոնք պետք է վերապատրաստվեն»:[240] Ուսուցչական կոնֆերանսում ընդունված որոշման մեկ այլ կետում նշվում է, որ կրթության շրջանային, քաղաքային բաժինները պետք է միջոցներ ձեռնարկեն դպրոց վերադարձնելու այն լավագույն ուսուցիչներին, ովքեր ինչ-ինչ պատճառներով ոչ իրենց մասնագիտությամբ աշխատում են այլ հիմնարկներում:

Ուսուցչական կոնֆերանսում զեկուցումով հանդես է եկել ԼՂՀ ԿԳ նախարար Համլետ Գրիգորյանը (1999-2002թթ.): Նախարարության մի շարք ձեռնարկումների շնորհիվ, ասել է նա, տարեցտարի սկսել է աճել ուսուցչական կադրերի քանակը: Արդեն 1998-1999 ուս.տարում հանրապետությունում գրեթե բոլոր ուսուցիչները հանրակրթական դպրոցներում աշխատում էին իրենց մասնագիտությամբ, հատկապես վերաբնակեցված շրջանների դպրոցներում: Նախարարը մանկավարժական կադրերի կատարելագործման և վերապատրաստման գործում կարևորեց մանկավարժական մամուլի դերը, որի ծրագրային հիմնական խնդիրն է համակողմանիորեն լուսաբանել հանրակրթական դպրոցների գործունեությունը, առաջավոր փորձը, նպաստել ուսուցիչների մասնագիտական ու մեթոդական մակարդակի բարձրացմանը, օժանդակել Արցախի, Հայաստանի և Սփյուռքի կրթօջախների կապերի սերտացմանը, քարոզել ու տարածել ճանաչված մանկավարժների ուսանելի փորձը, ուշադրության կենտրոնում պահել ազգային դպրոցի լավագույն ավանդույթները: Նախարարության կարևոր ձեռնարկումներից մեկն էլ եղավ մանկավարժական առաջին պարբերականի (նկատի ունենք անկախության տարիներին, իսկ առաջին մանկավարժական պարբերականը՝ «Հայկական աշխարհ» ամսագիրը, հրատարակվել է 1874թ. Շուշիում)՝ «Լուսարար» թերթի հրատարակումը, որի անդրանիկ համարը լույս է տեսել 1999թ. սեպտեմբերին: Էջերում զետեղվող մեթոդական, ուսուցողական, տեսական բնույթի հրապարակումները ներկայացնում են մեր հանրապետության մտավորական ընտրախավի ներուժը: «Լուսարար»-ի միջոցով ուսուցիչները հնարավորություն են ունենում տեղեկանալու հանրապետության տարբեր կրթօջախներում աշխատող շատ բարձրակարգ մանկավարժների մասին, որոնց հրապարակային ելույթները (թերթում տպագրված գիտամեթոդական հոդվածները) արժեքավոր ու շահեկան են երիտասարդ մանկավարժական կադրերի համար:

Շրջանային ուսուցչական խորհրդակցություններում (1999թ. օգոստոսի 20-30-ին Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում, Շահումյանում, Քաշաթաղում) «Ուսուցիչների մանկավարժական-մեթոդական, մասնագիտական մակարդակի բարձրացման մասին» զեկուցում է տվել ԿԳ փոխնախարար Սլավա Ասրյանը: Նա մատնանշել է, որ դպրոցները մանկավարժական որակյալ կադրերով ապահովելու միտումով նախարարությունը արդեն պլանավորել է ուսուցիչների թափուր տեղերի համար մրցույթի կազմակերպումը: Ըստ հայտարարված մրցույթների, ծայրամասային գյուղերի դպրոցները համալրվելու են որակյալ մասնագետներով: Փոխնախարարը նաև մատնանշեց, որ մանկավարժական կոլեկտիվների առաջ խնդիր է դրվում լուրջ ուշադրություն դարձնել տեղական մասնագետների պատրաստման վրա, սովորողներին կողմնորոշել դեպի այն մասնագիտությունները, որոնց կարիքը տվյալ տարածաշրջանն ունի: Հարկ է նշել նաև այն կարևոր արտոնությունների մասին, որ տրվում էին համայնքներ գործուղված ուսուցիչներին: Օրինակ, կառավարության կողմից սահմանված արտոնությունների համաձայն՝ դրույքի 50 տոկոսի չափով աշխատավարձ ունեցողներին բնակա-

ռանի վարձը տրվում է գյուղական բնակավայր գործուղված մասնագետներին:[241]

Օգոստոսյան խորհրդաժողովներում քննարկված հարցերից մեկն էլ աշակերտների մասնագիտական պատրաստվածության մասին էր: Նրանց համար դպրոցներում պետք է ստեղծվի այնպիսի միջավայր, որտեղ կաշխատեն հմուտ ուսուցիչներ, որոնք կկարողանան նպատակաուղղել երեխաների աշխատանքը: Փոխնախարարը առաջնահերթ է համարում ուժեղացնել շրջանավարտների կողմնորոշումը մանկավարժական մասնագիտության նկատմամբ, որպեսզի լավագույն երեխաներն ընտրեն մանկավարժի մասնագիտությունը: Ըստ Ասրյանի հաղորդած տվյալների, 1999-2000 ուսումնական տարում նախարարությունը պլանավորել է ուսուցիչներ գործուղել Երևան՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու: Օրինակ, 2000-2001 ուս.տարում Հայաստանի մանկավարժական բուհերում (ՀՊՄՀ, ՊՄի, ԳՊՄ-ի, Երևանի պետհամալսարանի մանկավարժության ֆակուլտետում, Երևանի լեզվաբանական համալսարանում և այլ բուհերում) սովորում էին 200-ից ավելի Արցախի տղաներ և աղջիկներ, իսկ վերապատրաստման դասընթացներին (հունիս-օգոստոս ամիսներին) մասնակցում են 30-ից ավելի ուսուցիչներ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետությունում մանկավարժական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ համեմատաբար լայն աշխատանք է տարվել հատկապես 2000-2005 թվականներին: Մանկավարժական կադրեր են պատրաստում պետական և ոչ պետական հավատարմագրված, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև պետական համալսարանի (ԱրՊՀ) մագիստրատուրան, որը պատրաստում է նաև կրթության կազմակերպիչներ, մանկավարժական գործունեության յուրացումն իրականում տեղի է ունենում հետբուհական կյանքում: Ուսուցչական կադրերի որակի բարձրացումը չափազանց կարևոր էր: Այդ կապակցությամբ ԿԳ նախարարության, կրթության բաժինների առջև խնդիր էր դրվում մի կողմից հետևողականորեն բարձրացնել ուսուցիչների կրթական մակարդակը ամենամյա դասընթացների, շարունակական կրթության միջոցով, մյուս կողմից՝ ավելի բարձր հիմքի վրա դնել հանրապետության բուհերի մանկավարժական խմբերի ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքները, որպեսզի շրջանավարտները կարողանան լուծել բարեփոխվող դպրոցի առջև դրված խնդիրները:

ԿԳ նախարարության ծրագրամեթոդական կենտրոնի տնօրեն Բ. Դավթյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ ամենամյա մանկավարժական ընթերցումներ են կազմակերպվում շրջկենտրոններում և մայրաքաղաքում: Իսկ առաջին հանրապետականն մանկավարժական ընթերցումները («Բարեփոխվող դպրոց, ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարում» խորագրով) կազմակերպվել է 2000-2001 ուս.տարում՝ մարտի 27-28-ը: Մանկավարժական ընթերցումների նպատակն է բացահայտել հանրակրթության հետագա զարգացմանն ուղղված գիտամանկավարժական ու մասնագիտական ակտիվ գործունեություն ծավալելու ընդունակ ստեղծագործող ու գործնական կարողություններով օժտված մանկավարժ-մասնագետներին, ուսումնասիրել, ընդհանրացնել ու տարածել կրթական բարեփոխումների գործընթացին նպաստող առաջավոր մանկավարժական ու մասնագիտական միտքն ու նվաճումները:

ԿԳ նախարարության խորհրդակցությունում հանրապետական մանկավարժական ընթերցումների արդյունքները ընդհանրացնելիս փոխնախարար Ս. Ասր-

յանը մատնանշել է, որ մանկավարժական դասընթացները պետք է լինեն փորձարարական և վարժանքի այն դաշտը, որտեղ նպատակաուղղված իրագործեն ինքնավերլուծության, ինքնաճանաչման և ինքնավերափոխման խնդիրները: Այս ամենի իրականացման համար ԿԳ նախարարությունը մշակել է ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման նոր հայեցակարգ, որի պահանջների համաձայն՝ ուսուցչի մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման ձևերն ու բովանդակությունը պետք է որոշվեն այն գործունեության առանձնահատկությամբ և պահանջարկով, որը պետք է իրականացնի ուսուցիչը:[242]

Ուսուցչի որակավորման նոր հայեցակարգում նշվում է, որակավորումը. դա՝

1. Լրացուցիչ ուսուցում է, որը պայմանավորված է տվյալ պաշտոնում մասնագետի աշխատանքի բովանդակության և բնույթի փոփոխությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարում դպրոցի տնօրենը պետք է կազմի ուսուցչական կադրերի ուսուցման պլանը զարգացման միասնական ծրագրի շրջանակներում՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի մասնագիտական մակարդակի փոփոխությունը: Այնուհետև պետք է ընտրվեն այն ուսուցիչները, որոնք ներգրավվելու են վերապատրաստման մեջ՝ դպրոցում առկա կադրերի բացը լրացնելու նպատակով:

2. Համապատասխան գիտական և մասնագիտական գործունեության ոլորտում գիտելիքների կանոնավոր լրացում, խորացում: Վերապատրաստումը կարող է բարելավել աշխատանքի նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքը, ստեղծել դրական միջանձնային հարաբերություններ, ամրապնդել մասնագիտության նկատմամբ նրանց սերն ու հավատը:

3. Կիրառել գործունեական և կազմակերպագործունեական ձևեր ուսուցիչների ուսուցման կազմակերպման համար: Այս միտումով դպրոցի տնօրենը պետք է զրուցի վերապատրաստումն ավարտած ուսուցիչների հետ, պարզի բարելավվե՞լ են արդյոք նրանց մասնագիտական հմտությունները, կարողությունները, իմացական որակները, համեմատի ուսուցման արդյունքները սկզբնական խնդիրների և ուսուցման պլանի հետ, իր համար բացահայտի այն դրականը, որը ձեռք են բերել նրանք, և գրի առնի նրանցից յուրաքանչյուրի պատասխանները:

4. Դպրոցների տնօրենները պետք է ապահովեն ուսուցիչների կողմից այն մեթոդիկաների յուրացումը, որոնք անհրաժեշտ են հատուկ դիդակտիկական նյութերի կազմման համար: Ուսուցման որակի բարելավման հարցում մեծ դեր ունի ուսուցիչը՝ իբրև ուսուցման գործընթացի պլանավորող և կազմակերպող: Մեր օրերի դպրոցի և մասնավորապես ուսուցիչների ամենակարևոր խնդիրներից մեկը շարունակում է մնալ ուսման մեջ սովորողների առաջադիմության ապահովումը:

Ուսուցիչների պրակտիկ փորձի վերլուծությունը ցույց է տվել, որ ժամանակակից դպրոցի ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն հասկանալի բացատրել ուսումնական նյութը, այլ նաև կազմակերպել տվյալ նյութի յուրացման համար անհրաժեշտ գործընթացը: Պատկերացումը այն մասին, որ ուսուցիչը աշակերտների համար միայն տեղեկատվության աղբյուր է, արդեն չի բավարարում: Ուսուցչի դերը այլ նշանակություն է ձեռք բերում, մասնավորապես՝ աշակերտներին ուսուցչի գործունեության ոլորտի օբյեկտից հարկավոր է փոխարկել ուսումնական նյութի յուրացման համար անհրաժեշտ և սեփական գործունեության ոլորտի սուբյեկտի: Որովհետև աշակերտի ուսուցումը և զարգացումը կատարվում է միայն նպատակաուղղված ուսումնական գործունեության ընթացքում:

Ուսման և ուսուցման յուրաքանչյուր գործընթացի կազմակերպման սկզբում

ուսուցիչ-կազմակերպիչը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

1. Ի՞նչ պետք է ուսուցանվի: Ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա նյութը:

2. Ուսուցչի և աշակերտի ո՞ր միասնական գործունեության ժամանակ կյուրացվի այն:

3. Ինչպե՞ս պետք է կազմակերպել այդպիսի գործունեությունը:

Դպրոցների տնօրենների գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի այն, որ կարողանան ուսուցիչների համար ձևակերպել, թե ինչ է իրենից ներկայացնում գործունեությունը, որն, օրինակ, ուղղված է նյութի տեսական մասի յուրացմանը, հաղորդակցման ընդհանուր կարողությունների ձևավորմանը և այլն: Ինչպե՞ս է այն իրականացվում, ինչպե՞ս է կազմակերպվում: Այդ խնդրի լուծումը պայմանավորված է ոչ թե բովանդակության ընտրությամբ, այլ ուսուցման միջոցներով ու ձևերով: Միայն այն պայմանի դեպքում, երբ ուսուցիչներն իրենք նպատակ կդնեն, իրենք կաշխատեն նպատակադրման սխեմայով, պլանավորելով և իրականացնելով գործունեությունը, որն ուղղված է ինչ-որ մի խնդրի լուծմանը, իրենք կկազմակերպեն մյուսների համանման գործունեությունը և հետո յուրաքանչյուր դեպքի համար ընտրված աշխատանքային միջոցների ու ձևերի հարցում անդրադարձ վերլուծություն կկատարեն, այդ դեպքում միայն նրանք իրական պատկերացում, գիտելիքներ կունենան այդ ամենի վերաբերյալ:

2002-2003 ուս.տարում մանկավարժական կադրերի վերապատրաստման ու մասնագիտական կատարելագործման աշխատանքները, որոնք համատեղ կատարում են ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունները, բարձր հիմքի վրա են դրված: ՀՀ կրթության ազգային ինստիտուտը մշակել է մանկավարժական կադրերի վերապատրաստման ու մասնագիտական կատարելագործման հայեցակարգը և կրթության զարգացման ռազմավարության, մասնավորապես կադրային քաղաքականության հարցերը:

Հայաստանի ԿԳ նախարարությունը միշտ էլ թիկունք է եղել ԼՂՀ ԿԳ նախարարությանը, և 2000 թվականից որակապես նոր աստիճանի է հասել միասնական կրթական դաշտում սերտ համագործակցությունը: Ուսուցիչների վերապատրաստման խնդիրը միշտ էլ եղել է ՀՀ ԿԳ նախարարության ուշադրության կենտրոնում: Եվ այս նպատակով 2001թ.[243] Արցախում բացվեց ՀՀ կրթության բարեփոխումների կենտրոն, հետագայում (2004թ.)՝ ՀՀ կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, որը պետք է դառնար մի օղակ՝ երկու հանրապետությունների նախարարությունների միջև ծրագրային ու տեսչական աշխատանքներ դնելու և դրանք համահայկական կրթական դաշտի վրա լուծել փորձելու առումով: Ըստ ԿԱԻ-ի մշակած պլանի, մասնաճյուղի գործունեության տարիներին մեթոդական գրականության հրատարակումը Արցախում, պետք է դրվի պատշաճ մակարդակի վրա: Հիմնական խնդիրներից մեկն էլ ՀՀ մանկավարժական մտքի և Արցախի մանկավարժական մտքի միաձուլումն է, այսինքն Արցախի մանկավարժական միտքը համալիր ձևով պետք է արտացոլվի ՀՀ մանկավարժական մտքի մեջ: Պետք է ստեղծել համահայկական մանկավարժական մտքի կառուցվածք:

ՀՀ կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացների (առաջին դասընթացները կազմակերպվել են 2002-2003 ուսումնական տարում՝ երեք փուլում, հունիս-հուլիս և օգոստոս ամիսներին) նպատակն է օգնել ուսուցիչներին հարստացնելու առարկայական գիտելիքները, հատկապես մեթոդական զինանոցը, և հղկել մանկավարժական վարպետությունը: Խիստ օգտակար են նորովի կազմակերպված

վերապատրաստման դասընթացները, որոնք պատասխանում են այսօրվա ուսուցչին հետաքրքրող հարցերին. ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս, ի՞նչ մեթոդներով ու հնարներով, ի՞նչը և ինչպե՞ս գնահատել:

Առաջին վերապատրաստման դասընթացներին (ուսումնական տարվա հունիսի 1-20-ը), մասնակցում էին մայրաքաղաքի, հանրապետության շրջանների հանրակրթական դպրոցների տարրական դասարանների 86 ուսուցիչներ, հուլիս ամսին՝ 5-8-րդ դասարանների 66 ուսուցիչներ, օգոստոս ամսին՝ 9-11-րդ դասարանների 58 ուսուցիչներ: Դասընթացների ղեկավարները՝ հայոց լեզվի և գրականության խմբի ղեկավար Արտո Մարտիրոսյանը, աշխարհագրության՝ Ա. Պողոսյանը, պատմության՝ Շ. Հայրիյանը և ուրիշներ) մատնանշում են, որ խմբերի հետ աշխատելիս նկատելի էր մասնակիցների խանդավառությունը: Սակայն պետք է նշել մի կարևոր հանգամանք. ուսուցիչները ցանկանում էին հստակ դասապլանների հիման վրա համոզվել, թե որ մեթոդն ինչպես է աշխատում: Ուստի դասընթացներն այնպես էին կազմակերպվում, որ ուսուցիչները որպես մասնակիցներ ներգրավվեն իսկական ուսումնառության մեջ՝ իրենց վրա զգալով նոր մոտեցումների, մեթոդների ու հնարների ներգործությունը: Արդյունքում ստեղծվում էին կոնկրետ դասարաններ:

Դասընթացի առաջին օրը շատ դասվարներ թերահավատորեն էին նայում գործի լրջությանը: Սակայն ավարտին նրանք անգամ չէին ուզում բաժանվել և մեկ օրը քիչ էին համարում նման կարևոր միջոցառման համար: Իսկ երբ անդրադարձան նրանց ակնկալիքներին, պարզվեց, որ ստացել են իրենց հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները:[244]

Ուշագրավ է նշել այն փաստը, որ դասընթացների ավարտից հետո կազմակերպվում էին մանկավարժական ընթերցումներ, որին մասնակցում էին նաև երիտասարդ սկսնակ ուսուցիչները:

Նրանք հավաքվում էին աշխատելու, մեթոդամանկավարժական լավագույն փորձն ընկալելու, իրենց նվաճումները հաղորդելու: Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ այս տեսակետից զեկուցումներն անչափ բովանդակալից էին: Այստեղ կային առանձնահատուկ պայմաններում կրթության կազմակերպման առումով շատ նոր մտքեր, և լավագույն փորձի տարածման այս ձևը բարենպաստ ազդեցություն էր ունենում դպրոցի, կրթական համակարգի հետագա գործունեության վրա:

Ինչպես տեղեկացանք ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Բելա Բաբայանի հաշվետվությունից,[245] ուսուցիչների վերապատրաստման դասընթացներն իրականանում են ըստ ծրագրային ժամաքանակի, լինում են ընդհանրական և իրադրական բնույթի արտադրությունից չկտրված, իրականանում են մոդուլներով: Վերապատրաստման գործընթացը նպատակաուղղված է մասնագիտական բնագավառում մանկավարժական գիտության նվաճումներին, ուսուցման ու գնահատման նորագույն տեխնոլոգիաներին ուսուցիչներին ծանոթացմանը: Մասնաճյուղի տնօրենի հաշվետվությունում նաև նշում է, որ յուրաքանչյուր ուսումնական տարում երկու ամիսը մեկ անգամ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ են կազմակերպում: Նկատենք, որ եթե նախկինում առարկայական մասնագետները պարտադիր հիմունքներով էին ներկայանում, պատճառներ որոնում չմասնակցելու վերապատրաստման դասընթացներին, ապա այսօր նրանք դա սիրով են անում, նույնիսկ կամավոր մասնակցության ցանկություն հայտնում՝ լավ գիտակցելով, որ դա նույնպես ավելացնում է մրցունակ կադր լինելու երաշխիքները: Այսպես, օրինակ, եթե 2003-2004 ուս.տարում վերապատ-

ռաստման դասընթացներին մասնակցում էին 112 ուսուցիչներ, ապա 2005-2006 ուս.տարում 140-ից ավելի ուսուցիչներ՝ 6 մասնագիտությունների գծով՝ հայոց լեզու, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա: Այս դասընթացներին հաջորդել են սեմինար-պարապմունքները: Դասընթացները բարձր մակարդակով անցկացրին Հայաստանի ԿԳ նախարարության գլխավոր մասնագետները, բուհերի (ԵՊՀ, ՀՊՄ անվանի գիտնականները:

Դասընթացների ավարտին ուսուցիչները հանձնեցին ավարտական ստուգարք և ստացան համապատասխան վկայականներ:[246]

«Լուսարար» թերթի 2005թ. թիվ 25-ում տպագրված («Վերապատրաստման դասընթացները հաջողված էին» հոդվածից տեղեկանում ենք, որ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ հանրապետության հանրակրթական դպրոցների հայոց լեզվի և գրականության 24 ուսուցիչներ մեկամսյա գործուղումով (2005թ. նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 14-ը) մեկնել են Երևան՝ մասնակցելու Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում կազմակերպվող արևմտահայ լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին: Մայր Հայաստանի հետ քիչ շփված երիտասարդ ուսուցիչները ուսանողի հրճվանքով, մեծագույն պատասխանատվությամբ ու սիրով էին մասնակցում թե՛ դասախոսություններին, թե՛ մշակութային բազմաբնույթ քննարկումներին ու միջոցառումներին: Դասընթացների մասնակից, Շուշիի Մուրացանի անվան միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ս. Ալեքսանյանը իր հուշերում պատմում է, որ դասախոսություններն այնքան կարևոր ու հագեցած էին, որ համարյա բացակայություններ չունեցան: Հաճախ դասախոսության պահին պոռթկում էին բուռն ծափահարություններ: Անջնջելի տպավորություն թողեցին դոցենտ Սերժ Սրապիոնյանի, դոկտոր-պրոֆեսորներ Սամվել Մուրադյանի, Սուրեն Դանիելյանի, Լաուրա Ասատրյանի և մյուսների գրեթե բոլոր դասախոսությունները:[247] Այդ դասընթացների նպատակն է, որ ԼՂՀ հանրակրթական դպրոցի ուսուցիչները նույնպես իրենց դպրոցների համապատասխան դասարաններում լրացուցիչ դասավանդեն «Սփյուռք» կենտրոնի ծրագրերով ու դասագրքերով:

«Չնայած ուղղագրության շուրջ ծավալված անհամաձայնությանը և հարուցած դժվարություններին՝ մեկ ամսվա ընթացքում ապրեցինք, տեսանք, ճանաչեցինք, սովորեցինք այնքան բան, շփվեցինք հայ մշակույթի բազում շերտերին այնքան շատ, որ, ուսուցիչներից շատերի խոստովանությամբ, չէր եղել ուսումնական կյանքի ամենահագեցած տարիներին»: Ահա թե ինչպես են արտահայտվել այդ մասին արցախցի երիտասարդ ուսուցիչները՝ Նանար Լազարյան (Մարտակերտի շրջանի Վանքի միջն. դպրոց). «Մենք հիացած ենք խորքային դասախոսություններով», Սուրայա Ղազարյան (Ասկերանի շրջանի Խանաբադի միջն. դպրոց). «Մեկամսյա դասընթացները մեր առջև բացեցին և սփյուռքահայ, և արևմտահայ գաղտնի պարտեզներ, տպավորությունը շատ մեծ է, բոլոր ուսուցիչներս միակամ ողջունեցինք «Մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ ուղղագրություն» կարգախոսով»:[248]

Պաշտոնական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ ԼՂՀ ԿՄՍ նախարար Կ. Աթայանը կոլեգիայի նիստում ընդհանրացրեց ուսուցիչների վերապատրաստման դասընթացի արդյունքները, ընդգծեց դասընթացի բարձր մակարդակը, միաժամանակ մատնանշեց, որ պարբերաբար պետք է կազմակերպվեն նմանատիպ վերապատրաստման դասընթացներ Արցախում, մայր Հայաստանում: Նախա-

րարն ընդգծեց, որ Հայաստանի Հանրապետության և Արցախի ուսուցիչները պետք է իրենց տեր զգան արևմտահայ գրական արժեքներին:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ 2005-2006 ուսումնական տարվա սեպտեմբերին ԼՂՀ ԿՄՍ նախարարության հրավերով Արցախում էին գտնվում ՀՀ կրթության ազգային ինստիտուտի մասնագետները: Նպատակն էր վեց տարեկանների ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով անցկացնել մեկշաբաթյա վերապատրաստման դասընթացներ: Ութ-հոգանոց պատվիրակության կազմում էին տարրական կրթության հարցերով զբաղվող գլխավոր մասնագետ, 12-ամյա դպրոցի հայոց լեզվի չափորոշիչային ծրագրի հանձնաժողովի անդամ Կարինե Թորոսյանը, մրցույթով հաղթած «Այբբենարան», «Մայրենի 1», «Մաթեմատիկա.1» դասագրքերի հեղինակ Վաչագան Սարգսյանը, գլխավոր մասնագետ Ֆրիդա Երիցյանը, Ռուբեն Սարգսյանը, ինչպես նաև մեթոդիստ-ուսուցիչներ Կարինե Չիբուխչյանը, Ելենա Զիլավյանը, Սուսաննա Գրիգորյանը և ուրիշներ:

Դասընթացներին մասնակցեցին հանրապետության բոլոր շրջանների դպրոցների (Քաշաթաղի համար անցկացվեց տեղում) վեց տարեկան առաջին դասարանցիների շուրջ 170 ուսուցիչներ: Դրանք կազմակերպվեցին Ստեփանակերտի թիվ 7 միջնակարգ դպրոցում:

Դասընթացների նպատակի և արդյունավետության մասին կարդում ենք ԿԱԻ-ի գլխավոր մասնագետ Ռուբեն Սարգսյանի՝ «Լուսարար» թերթի 2006թ. թիվ 19-ում տված հարցազրույցում: «Վեց տարեկանների դպրոց գալը համարվում է 12-ամյա կրթության իրականացման կարևոր քայլերից մեկը, բնական է, եթե առաջին կարևոր քայլը բարձր մակարդակով չկազմակերպվեց, այս կարևոր գործընթացն իր բացասական դրսևորումները կունենա: Դրա համար էլ ԿԱԻ-ի կրթական ծրագրերի գրասենյակը, ԼՂՀ ԿՄՍ նախարարությունը բոլոր ջանքերը գործադրում են, որպեսզի վեց տարեկանների ուսուցումը պատշաճ մակարդակով կազմակերպվի: Մեր խմբի հիմնական ծրագրերն են՝ մեկշաբաթյա ընթացքում ներկայացնել մի շարք հարցեր, որոնք վերաբերում են այդ տարիքի երեխաների ընդունելությանը, հոգեբանական, ֆիզիկական զարգացմանը, դասաժամերին և մի շարք այլ առանձնահատկություններ ներկայացնելուն»:[249]

«Լուսարար» թերթի 2007թ. 19-րդ համարում տպագրված՝ Աիդա Պետրոսյանի (Մարտունու շրջանի Սոսի միջն. դպրոց, մաթեմատիկայի ուսուցիչ) «Դասընթացները հաջողված են» վերնագրով հոդվածից տեղեկանում ենք, որ 2006-2007 ուսումնական տարվա օգոստոսի 30-ին ավարտվեցին ԼՂՀ ԿՄՍ նախարարության կողմից բարձր մակարդակով կազմակերպված՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները: Դասընթացները վերահսկում էին նախարարության գլխավոր մասնագետներ Ռայա Մուսայելյանը, Ալինա Մինասյանը:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցում էին Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, Քաշաթաղի, Շահումյանի շրջանների 60 դպրոցների հայոց լեզվի, գրականության, պատմության, մաթեմատիկայի և ֆիզիկայի, աշխարհագրության, տարրական դասարանների, քիմիայի և կենսաբանության ուսուցիչները: Առաջին խումբը՝ հուլիսի 10-ից 20-ը, երկրորդ խումբը՝ օգոստոսի 20-30-ը:

Վերոնշյալ առարկաներից դասախոսություններով հանդես եկան Երևանից հրավիրված դասախոսներ Զաբելա Զուրաբյանը (հատուկ մանկավարժություն), Հայկուհի Հարությանյանը (մաթեմատիկա), Արամ Աբրահամյանը (մանկավարժություն), ԱրՊՀ-ից Արպատ Ավանեսյանը (ֆիզիկա), Ս. Պետրոսյանը, Ա. Ներսիս-

յանը (մաթեմատիկա), Գուրգեն Բաղդասարյանը (հայոց լեզու և գրականություն), Ա. Մխիթարյանը (հոգեբանություն), Վ. Միրզոյանը (քիմիա-կենսաբանություն) և ուրիշներ:[250]

Ըստ պաշտոնական տվյալների, 2007թ. ապրիլի 30-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԿՄՍ-ի աշխատողների 1-ին համագումարը, որին մասնակցում էին կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ասպարեզից ընտրված 300 պատվիրակներ (այդ թվում սույն գրքի հեղինակներ Ա. Ավանեսյանը, Գ. Հարությունյանը) և հրավիրվածներ ՀՀ-ից: Նախարար Կ. Աթայանը հանգամանալից ներկայացրեց ԼՂՀ կրթական համակարգում իրականացված բարեփոխումները, ունեցած ձեռքբերումները: Նախարարը նշեց, որ 2008-2009 ուսումնական տարում հանրապետության հանրակրթական դպրոցների 500 ուսուցիչներ անցել են վերապատրաստման մեկամսյա դասընթացներ: Մինչև ատեստացիոն գործընթացներն սկսելը, ուսուցիչների հիմնական մասը անցել է մեկամսյա դասընթացներ և ձեռք բերել մասնագիտական կայուն ու խոր գիտելիքներ: Նախարարը նաև մատնանշեց, որ հանրակրթական դպրոցի ուսուցիչներն աշխատում էին 2005-2008թթ. համար կազմված «Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը» միասնական թեմայի վրա: Դպրոցներում ուսուցիչների ինքնակրթությունը իրականացվում է երեք ուղղություններով՝ մանկավարժական, մասնագիտական և ընդհանուր զարգացածության: Ուսուցիչների ինքնակրթությանը մեծ ուշադրություն է դարձվում նաև դպրոցներում: Ուսուցչական կոլեկտիվներն աշխատում են «Համալիր (կոմպլեքս) մոտեցում ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդիրներին» նշանաբանով: Ուսուցիչների ինքնակրթության մշակումները պահվում են մեթոդմիավորումների նախագահների մոտ: Դպրոցներում ուսուցիչների հետ տարվող մեթոդական աշխատանքները գտնվում են փոխտնօրենների ուշադրության կենտրոնում: Նրանք պահում են հատուկ թղթապանակ՝ «Մանկավարժություն բոլորի համար» վերնագրով, որտեղ կարելի է գտնել տարբեր թեմաներից մշակումներ և զեկուցագրեր:

Կրթության, մշակույթի և սպորտի փոխնախարար Ս. Ասրյանի զեկուցման («Ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման հիմնախնդիրները») մեջ ընդգծվում է, որ հանրապետության կրթական հաստատություններում շարունակվում է ուսուցիչների մեթոդամանկավարժական աշխատանքի համակողմանի կատարելագործման գործընթացը: Հարստացել է այդ աշխատանքների խոհանոցի տեսականին: Դասի դասական տիպերի հետ միասին փորձառու ուսուցիչները մշակում և օգտագործում են նաև ոչ ստանդարտ դասերի տեսականին: Նախարարությունում 2008թ.-ից ձևավորվել է նաև հանրակրթության պետական տեսչությունը, որը լուրջ օղակ է ոչ միայն ստուգումներ անցկացնելու, այլև ուսուցիչներին մեթոդապես օգնելու համար: Այն նպաստում է ուսման որակի բարձրացման հարցերի լուծմանը: Իսկ մեթոդական օղակի հարցերի վիճակը բավականին լուրջ է: Ի դեմս կրթության ազգային ինստիտուտի Արցախի մասնաճյուղի՝ առկա է այդ օղակը, և իրեն դրսևորում է այնպես, որ մանկավարժական հանրությունը ընդունում և լսում է, առաջավոր փորձի հետ կապված սպասվելիք առաջարկություններն իրականություն են դառնում այդ օղակի միջոցով: Անշուշտ, ՀՀ կրթության ազգային ինստիտուտի անմիջական օժանդակությամբ այնտեղ ևս բարեփոխումներ են կատարվում, աշխատում են ճանաչված մեթոդիստներ, իրենց գործի իսկական վարպետներ: Ս. Ասրյանը նաև մատնանշեց, որ հանրապետության դպրոցներում աշխատում են 3.258 ուսուցիչներ, որոնցից բարձրագույն կրթություն ունի մանկավարժական կազմի 85 տոկոսը (2.687), թերի բարձրագույն՝ միջին մասնագիտական կրթություն՝ 12 տոկոսը (370), ընդհանուր միջնակարգ կրթու-

թյուն՝ 3 տոկոսը (101): Ուսուցիչների 5,3 տոկոսը չունի մանկավարժական կրթություն: Մանկավարժներից 2488-ը (79 տոկոսը) կին են, 670-ը՝ տղամարդ: Փաստորեն ստացվում է, որ շատ դպրոցներում սովորողների ուսուցման և դաստիարակության գործն ընթանում է գրեթե առանց տղամարդու մասնակցության: Մինչդեռ անվիճելի է, որ նույնիսկ աղջիկների դաստիարակության գործում տղամարդու դերը խիստ կարևոր է:

Փոխնախարարը իր զեկույցում անդրադարձավ նաև մանկավարժական կադրերի աշխատանքի համակարգված և մշտական գնահատման հիմնախնդրին: Արդարացի գնահատումը դրականորեն է անդրադառնում ուսուցչի դրդապատճառների, մասնագիտական աճի ու զարգացման վրա: Այս առումով Ս. Ասրյանը անհրաժեշտ է համարում շարունակել նախկին լավագույն ավանդույթները: Այսինքն՝ առարկայական խոր պատրաստություն ունեցող, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին բացահայտելու, նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը տարածելու, հասարակության մեջ ուսուցչի հեղինակության բարձրացման նպատակով կազմակերպել ու անցկացնել «Տարվա լավագույն տնօրեն», «տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթներ, որոնց նպատակն է կարևորել կրթության առաջնայնությունը, բացահայտել, ընդհանրացնել, խրախուսել և տարածել հանրակրթական դպրոցների ուսուցիչների լավագույն մանկավարժական փորձը, բարձրացնել նրանց դերն ու նշանակությունը հասարակության մեջ:

Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով, նպատակահարմար ենք գտել բերել մի քանի կոնկրետ օրինակներ: Այսպես, 2007-2008 ուս.տարում Մարտունու շրջկենտրոնի թիվ 1 դպրոցի դասվար Էլզա Խաչատրյանը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ՝ 2007թ. մրցույթի արդյունքներով առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետությունը» անվանակարգում: Նշված ուսուցչուհու մոտ կազմակերպվել է բաց դաս, որին ներկա էին շրջանի կրթության բաժնի, ԼՂՀ ԿԳ նախարարության գլխավոր մասնագետները Ռ. Մուսայելյանը, Ս. Հովսեփյանը, Ա. Պետրոսյանը և դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, մեթոդմիավորման հանձնաժողովի անդամները: Դասի թեման՝ «Միշտ հին ու նոր իմ Հայաստան», ենթաթեման՝ «Հայոց աշխարհ», տրամադրող էին և հետաքրքիր, գրում է իր օրագրում Մարտունու շրջվարչակազմի ԿՄՍ բաժնի մասնագետ Մանուշ Հովսեփյանը: Ուսուցչուհու վարած ավանդական և նոր մեթոդներով դասը հիացրեց բոլորին՝ հատկապես երեխաները կարողանում էին ինքնուրույն վերլուծել, դատողություններ անել, տրամաբանել, կապակցված խոսք կառուցել՝ եռափուլ համակարգի միջոցով (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում (ԽԻԿ) և անկաշկանդ արտահայտում իրենց մտքերը:[251] Այդ ուսումնական տարում «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի արդյունքներով հաղթողներ են ճանաչվել Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցը, Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ դպրոցը «Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար» անվանակարգում:

«Լուսարար» թերթի 2008 թվականի թիվ 1-ում տպագրված՝ վաստակաշատ մանկավարժ Ջամիլ Մարտիրոսյանի «Նոր հպարտություն» հոդվածում նշվում է, որ «Տարվա լավագույն դպրոց» 2007թ. մրցույթի արդյունքներով «Ուսումնական գործընթացի բարձր որակ ապահովելու համար» անվանակարգում հաղթող է ճանաչվել Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցը:

Վերոնշյալ ուսումնական տարում «Տարվա լավագույն մանկավարժական

փորձ» մրցույթում առանձին անվանակարգով հաղթող են ճանաչվել հ.2 հիմնական դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Լուսինե Արզագուլյանը և հ.10 հիմնական դպրոցի երգ-երաժշտության ուսուցչուհի Լեսմոնյա Համբարձումյանը: 2008-2009 ուս.տարում «Տարվա լավագույն դպրոց» մրցույթում հաղթող է ճանաչվել Ստեփանակերտի հ. 2 դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում հաղթող է ճանաչվել Նորագյուղի միջն. դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Սիլվա Ենգիբարյանը:

Հարկ է նշել, որ ուսուցչական խորհրդակցությունների, կոնֆերանսների և համագումարների հրավիրումն ուներ նախևառաջ բացառիկ նշանակություն, քանի որ դրանցում ուսուցչությունը արտահայտում է իր վերաբերմունքը կրթության համակարգում իրականացվող բարեփոխումների, ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, կիրառվող ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ: Համագումարի ավարտից հետո կազմակերպված սեմինարներում առարկայագետ ուսուցիչները քննարկում և որոշում են նոր դպրոցի զարգացման չլուծված հարցերը, ուսուցման ու դաստիարակության կարևոր խնդիրները, մեթոդամանկավարժական հիմնահարցերը և այլն:

Ի դեպ, նշենք, որ ուսուցչական խորհրդակցությունները, կոնֆերանսներն ու համագումարները նախկինում և մեր ժամանակներում օգնել են պրոպագանդելու մանկավարժական առաջադիմական գաղափարներն ու բարեկարգ դպրոցների առաջավոր փորձը: Ուսուցչական խորհրդակցություններում, համագումարներում զեկուցողներ ու ելույթ ունեցողներ Անահիտ Պողոսյանը (Ստեփանակերտի հ. 7 դպրոցի տնօրեն), Անահիտ Հակոբյանը (հ.10 դպրոցի փոխտնօրեն), Ամալյա Ստեփանյանը (հ. 1 դպրոցի ուսուցչուհի), Ռիմա Մելքումյանը (հ. 6 դպրոց), Իրա Ավանեսյանը (Ն ՊՍԿ-ի դաստիարակ, Մարինե Գրիգորյանը (հ. 1 մանկապարտեզ) և շատ ուրիշներ, արտահայտվեցին ինչպես ընդհանուր համակարգին վերաբերող, այնպես էլ իրենց կրթօջախներում առկա խնդիրների մասին և արեցին առաջարկություններ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետությունում ուսուցիչների վերապատրաստման դասընթացները բավականաչափ ակտիվ ընթացք ստացան սկսած 2008 թվականից: Հայտնի է, որ 2008-2009 ուս. տարին նշանավորվեց հանրակրթության մեջ ավագ դպրոցի ներդրմամբ, որի պարտադիր պահանջներից մեկն ուսուցիչների վերապատրաստումն է:[252] Ուսումնական տարվա նախաշեմին ԼՂՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ յոթ առարկաների գծով (հայոց լեզու և գրականություն, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, համակարգչային գործ) ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստումներ էին իրականացվել: Հոկտեմբերի 24-ից սկսած յոթօրյա վերապատրաստումները ռուսաց, օտար լեզուների ուսուցիչների և դպրոցի տնօրենների համար դրանց շարունակությունն էին: Վերապատրաստումներ անցկացնելու համար ԼՂՀ ԿԳՆ հրավերով Արցախ էին ժամանել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) և ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի առաջատար մասնագետներ:

Վերապատրաստման դասընթացները կարևորվում են նաև այն հանգամանքով, որ որոշ առարկաների գծով ուսումնական նոր ծրագրերից բացի, չկան նոր դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ, և դասընթացները, իհարկե, կօգնեն ուսուցիչներին ճիշտ կողմնորոշվելու դասավանդման գործընթացում իրականացնելու ծրագրային պահանջները:

Ինչպես իր հաշվետվության մեջ նշում է վերապատրաստման դասընթացների

ղեկավար, ԼՂՀ ԿԳ նախարարության գլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանը, Ուսուցիչների վերապատրաստումներն ընթանում են երեք ուղղությամբ՝ մասնագիտական՝ առարկա-դասավանդման մեթոդաբանություն, գնահատման՝ նորագույն ձևեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ: Իսկ տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստումներն ընթանում են ավագ դպրոցի կառավարման ուղղությամբ: Վերապատրաստումներն իրականացնող՝ ՀՀ-ում 2004թ. ընդունված հանրակրթության պետական կրթակարգի մշակման աշխատանքային խմբի ղեկավար և Ավագ դպրոցի տնօրենի վերապատրաստման ծեռնարկի չորս հեղինակներից մեկը հանդիսացող՝ ՀՀ կրթության ազգային ինստիտուտի դասախոս Կարեն Մելքումյանը ՀՀ ԿԳՆ գլխավոր մասնագետ Սամվել Պողոսյանի հետ դասընթացների մասնակիցներին ծանոթացրեց ավագ դպրոցի կառավարման առանձնահատկություններին: Վերապատրաստման դասընթացների ավարտին տնօրենների հետ ունեցած հարցազրույցի ընթացքում Կ. Մելքումյանն ասաց (այդ մասին իր հուշերում գրում է Կուսապատի դպրոցի տնօրեն Անյուտա Խաչատրյանը), որ տնօրեններին, ուսմասվարներին (փոխտնօրեններին) վերապատրաստում են, որպեսզի նրանք կարողանան աշխատել իրենց ուսուցիչների հետ՝ նրանց սովորեցնելու ինչպես մշակել դպրոցի զարգացման ծրագիրը, ծանոթացնել առկա օրենսդրական դաշտին: Ճիշտ է, Արցախում դեռևս չի ընդունվել «Հանրակրթության մասին» օրենքը (կառավարության որոշմամբ այն ներկայացվել է Ազգային ժողովի հաստատմանը, բայց, ելնելով նրանից, որ Արցախը ՀՀ-ի հետ գտնվում է միևնույն կրթական դաշտում, սույն օրենքի հիմնական դրույթները նույնական կլինեն նաև ԼՂՀ-ում: Կ. Մելքումյանը, Ս. Պողոսյանը սույն օրենքի մշակման հեղինակներն են, և նպատակահարմար գտան վերապատրաստման դասընթացների մասնակիցներին ծանոթացնել նաև օրենքից բխող նորմատիվ ակտերին, կարգերին, որոնք պատրաստվում են ներկայացնել Ազգային ժողովի հաստատմանը:[253] Ի դեպ, նշենք, որ 2009թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ կառավարության նիստում հաստատվել էր «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը և ներկայացվել Ազգային ժողովի հաստատմանը: Այն հաստատվել է 2010թ. ապրիլին: Մշակվել են նաև այս օրենքից բխող ենթաօրենսդրական մի շարք փաստաթղթեր, ինչպիսիք են «Հանրակրթության պետական չափորոշիչը», «Հանրակրթական ուսումնական հաստատության նոր կանոնադրությունը», «Տնօրենների ընտրության կարգը», «Ուսուցիչների ատեստավորման կարգը» և այլն:

«Լուսարար» թերթի 2009թ. թիվ 30-ում տպագրված՝ թերթի խմբագիր Ս. Խաչատրյանի «Հերթական վերապատրաստումներ» հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ 2008-2009 ուսումնական տարվա հուլիսի 6-11-ը ԼՂՀ ԿԳ նախարարության և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի ԼՂՀ մասնաճյուղի համատեղ ուժերով անցկացվեցին վերապատրաստման դասընթացներ նախադպրոցական հիմնարկների տնօրենների և դաստիարակների ու հանրակրթական դպրոցների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների գծով փոխտնօրենների հետ:

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի ատեստավորման և վերապատրաստման բաժնի գլխավոր մասնագետ Ասյա Հովհաննիսյանի հաշվետվությունում նշված է, որ նմանատիպ վերապատրաստման առաջին դասընթացները կազմակերպվել են 2006-2007 ուս.տարվա օգոստոսին: Նախկին վերապատրաստման եռօրյա դասընթացները 18 ժամ էր, իսկ այս մեկն (2008-2009 ուս. տարվան) ավելի ընդարձակ ծրագրով՝ հնգօրյա 30 ժամով:[254]

ԼՂՀ-ում մասնագետ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման

գործընթացի կատարելագործման և ատեստավորման միջոցով հանրակրթության ոլորտում աստիճանաբար բարելավվել է նրանց որակական կազմը: Ըստ նախարարության պաշտոնական տվյալների, 2009-2010 ուս. տարում Երևանի կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղում վերապատրաստվել են 542 մանկավարժներ, որոնցից 50-ը՝ դպրոցների և մանկապարտեզների ղեկավարներ: Վերապատրաստման դասընթացի մասնակիցներ Նազիկ Նալբանդյանը (Շուշիի Մուրացանի անվան միջն. դպրոցի տնօրեն), Լյուդմիլա Սիմոնյանը (Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի դասվար), Լարիսա Ներսիսյանը (Ստեփանակերտի թիվ 2 ոչ պետական մանկապարտեզի վարիչ), Հայկանուշ Դավթյանը (Բերձորի թիվ 2 միջն. դպրոցի պատմության ուսուցիչ) և ուրիշներ իրենց հուշերում (նշված ուսուցիչներն իրենց հուշերը տրամադրել են սույն գրքի հեղինակներին) գրում են, որ դասընթացների ավարտից հետո մայրաքաղաքի թիվ 2 դպրոցում կազմակերպվել են մանկավարժական ընթերցումներ, իսկ շրջաններում՝ շրջվարչակազմի կրթության բաժնում: Մանկավարժական ընթերցումների թեման կրում էր «Որակը՝ որպես կրթության գործընթացի հիմնաքար» խորագիրը: Ընթերցումները շարունակում են հետապնդել մեկ նպատակ՝ բացահայտել հանրակրթության հետագա զարգացմանն ուղղված գիտամանկավարժական ու մասնագիտական ակտիվ գործունեություն ծավալելու ընդունակ, ստեղծագործական ու գործնական կարողություններով օժտված մանկավարժ մասնագետին, ուսումնասիրել ու տարածել կրթական բարեփոխումների գործընթացին նպաստող առաջադեմ մանկավարժական ու մասնագիտական ստեղծագործական միտքն ու նվաճումները: Մանկավարժական ընթերցումների կազմակերպմամբ ԼՂՀ ԿԳ նախարարությունն իր առջև մանկավարժական, գիտական մտքի դաշտի ստեղծման խնդիր է դնում: Սա թերևս մեր ուսուցչության մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության և գիտական ներուժի բացահայտման միջոց է: Այն ենթադրում է ուսուցչի ինքնակրթության մասնագիտական ու անձնային որակների կատարելագործում:

Մանկավարժական ընթերցումներին մասնակցել են հանրապետության դպրոցների փորձառու և սկսնակ ուսուցիչները, կրթական համակարգի այլ մասնագետներ: Նշենք ընթերցումների թեմաներից մի քանիսը.

- ստեղծագործական որոնումներ կրթության բնագավառում (նոր մեթոդներ),
- ուսուցման մեթոդների ընտրության և որակի բարձրացման խնդիրների շուրջ,
- դաստիարակչական աշխատանքների հիմնախդնիրները,
- ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները՝ որպես ուսուցման արդյունավետության միջոց,
- ուսումնական գործընթացի արդիականացում, կամ համակարգիչը դպրոցում,
- ուսման նկատմամբ հետաքրքրությունների դաստիարակումը՝ որպես գիտելիքների յուրացման միջոց և այլն:

Ըստ մեր դիտարկումների, նկատել ենք, որ մանկավարժական ընթերցումների ժամանակ երբ ուսուցիչները պատմում են իրենց փորձի մասին, շեշտը դրվում է գիտականորեն հիմնավորված մանկավարժական ստեղծագործական որոնումների վրա, կարևորվում է այդ ուղղվածությունն ունեցող մանկավարժական մտքի զարգացումը:

Մանկավարժական ընթերցումների կազմակերպումը ազգանվեր աշխատանք է, քանի որ այն օգնում է հաստատել.

- նվիրյալ, բանիմաց և վարպետ ուսուցիչների հեղինակությունը,
- հայկական կրթօջախների աշխատանքի արդյունքների երբեմնի բարձր մակարդակը,
- հասարակության գիտակցության մեջ հանրակրթական դպրոցը որպես ազգային մեծագույն արժեք ճանաչելը:

Այս ամենը, մանկավարժական ընթերցումների գերխնդիրն ու գերագույն նպատակը լինելով հանդերձ, փաստում է նաև այդ ընթերցումների վերականգնման կարևորությունը:

Մանկավարժական ընթերցումների կազմակերպումը ներառում է մի քանի իրար հաջորդող փուլեր.

-դպրոցական մանկավարժական ընթերցումներ,
-համայնքային մանկավարժական ընթերցումներ,
-շրջանային մանկավարժական ընթերցումներ,
-հանրապետական մանկավարժական ընթերցումներ:

Առաջին երեքը սովորաբար անց են կացվում երկու ուսումնական տարին մեկ անգամ, չորրորդը՝ երեք ուսումնական տարին մեկ անգամ:

Դպրոցական մանկավարժական ընթերցումների նպատակն է եղած կոնկրետ պայմաններում ուսուցիչներին մղել հասնելու ոչ թե ցանկացած լավ, այլ լավագույն արդյունքների:

Հանրահայտ է, որ ուսումնական ծրագրերը ներկայացնում են գիտելիքների և հմտությունների այն մակարդակը, որը համարվում է նորմացույցային պահանջ, այլ ոչ թե երաշխավորություն, որը ուսուցիչը կարող է կատարել կամ չկատարել իր հայեցողությամբ:

Ստեղծագործական մոտեցում կարելի է համարել նորմացույցային պահանջների կատարման արդյունավետ ուղիների որոնումը, դրանցից լավագույնի գիտականորեն հիմնավորված ընտրությունը:

Ստեղծագործական աշխատանքի նախաձեռնություն ցուցաբերող ուսուցիչը իր սեփական արդյունքներով և անձնական օրինակով ձեռք է բերում սոցիալական մեծ արժեքավորություն: Հանրահայտ ճշմարտություն է՝ միայն ստեղծագործող ուսուցիչը կարող է դաստիարակել ստեղծագործող աշակերտ:

Ստեղծագործական որոնումների արդյունքում ուսուցիչը կառուցում է իր սեփական մեթոդական համակարգը, ինչը, զարգացած մտածելակերպ ունեցող աշակերտներ դաստիարակելու հետ միասին, ճանաչվում է որպես դպրոցական մանկավարժական ընթերցումների արդյունքը բնութագրող կարևորագույն ցուցանիշ:

Համայնքային մանկավարժական ընթերցումների նպատակն էր ընդհանրացնել դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքները, ընդգծելով այդ ուղղությամբ տարվող որոնումներից լավագույնները: Դրանք ուսուցիչներին նպատակաուղղում էին դպրոցական մանկավարժական ընթերցումներում ընդունված ցուցանիշներով կողմնորոշվելուն:

Այդ մանկավարժական ընթերցումների ժամանակ հատուկ տեղ էր հատկացվում դպրոցների տնօրենների և ուսմասվարների ընթերցումներին: Դրանք ամփոփում էին տնօրենների և ուսմասվարների կողմից ուսուցիչների ստեղծագործական աշխատանքին աջակցելու գործունեությունը, նպաստում այդ գործունեության ծավալմանը:

Այսօր, երբ ուսուցիչների սոցիալական պայմանները մեր հանրապետությունում շատ հեռու են բավարար մակարդակից, դպրոցների տնօրենները և ուսմաս-

վարները (փոխտնօրենները) հարկադրված են հատուկ ուշադրության արժանացնել հասարակության համար մեծ արժեք ներկայացնող, ստեղծագործող ուսուցիչներին: Տնօրենների և ուսմասվարների համար կազմակերպվող մանկավարժական ընթերցումների նպատակը դրան աջակցելն է:

Շրջանային մանկավարժական ընթերցումների ժամանակ հատուկ տեղ է հատկացվում նաև նախադպրոցական հիմնարկներում աշխատողների ընթերցումներին: Այդ ընթերցումները նպատակաուղղված էին նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության նկատմամբ միասնական մոտեցումներ ապահովելուն, առաջավոր փորձին ծանոթացնելուն և այն ներդնելուն:

Հանրապետական մանկավարժական ընթերցումները միշտ էլ եղել են փորձառու ուսուցիչներին մեծարելու, նրանց կողմից մշակված և իրենց արդարացրած մեթոդական հնարներին ուսուցիչներին ծանոթացնելու լավագույն միջոց:

Այդ ընթերցումները երկու ուսումնական տարիների ընթացքում ուսուցիչների ուշադրությունը բևեռում էին հանրապետությունում գերակա մանկավարժական խնդրի լուծման վրա: Դրանով իսկ օգնում էին միավորել հանրապետության ուսուցիչների ստեղծագործական աշխատանքի արդյունքները որոշակի խնդրի լուծման ուղղությամբ:

Հանրապետական մանկավարժական ընթերցումների նյութերի ժողովածուները տարիներ ի վեր եղել են ուսուցիչների սեղանի գիրքը և մանկավարժական առարկայական միավորումների ուղեցույցը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետությունում մանկավարժական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ լայն աշխատանք է տարվել հատկապես 2011-2014 թվականներին: Այսպես, օրինակ, եռամյա ավագ դպրոցի անցման շրջանում աճում էր կրտսեր (տարրական), միջին (հիմնական) և ավագ դպրոցական ցանցը, ավելանում էր դասարանների և աշակերտների թիվը, բարեփոխումների պահանջներին համահունչ փոփոխվում էին նաև ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը: Միաժամանակ առկա էր ուսուցչական որակյալ կադրերի պահանջ: Այն բավարարելու համար ԿԳ նախարարության կողմից մի շարք ձեռնարկումներ իրագործվեցին: Այսպես, հանրակրթական դպրոցներում ուսման որակի բարձրացման, մանկավարժական կադրերի մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության առավել բարձր մակարդակի ապահովման նպատակով ԿԳ նախարարության նախաձեռնությամբ իրականացվում են մանկավարժական կադրերի վերապատրաստման, ինչպես նաև ծայրամասային գյուղական բնակավայրերի դպրոցները մասնագետ ուսուցիչներով ապահովման աշխատանքներ:

Փաստագրական տվյալները վկայում են, որ 2010-2011 ուս.տարում մասնագետ ուսուցիչների պահանջարկը առկա էր հատկապես Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում, որոշ չափով՝ Հադրութի շրջանի ծայրամասային գյուղերում: Բարձրորակ ուսուցչական կադրերի պահանջարկի չբավարարումը կապված էր այդ գյուղերում ուսուցիչներին բնակարաններ տրամադրելու անհնարինությամբ: Հարկ է նշել, որ հանրապետության շրջանների դպրոցները մանկավարժական մասնագետներով համալրմանը մեծապես նպաստեց մանկավարժին այլ վայր գործուղելու մասին ԼՂՀ կառավարության որոշումը (2010թ. մարտին 16-ին), որի կիրառմամբ վերոնշյալ ուսումնական տարում աշխատանքի են ուղարկվել 65 ուսուցիչներ, իսկ 2011-2012 ուս.տարում՝ 96 ուսուցիչներ, որոնք անցել են վերապատրաստման դասընթացները:

Մասնագետ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման գործընթա-

ցի կատարելագործման և 2011 թվականից սկսած ատեստավորման միջոցով աստիճանաբար հանրակրթության ոլորտում զգալիորեն բարելավվեց մասնագետների որակական կազմը: Ուսուցիչների վերապատրաստման նպատակով 2010-2012թթ. հատկացվել է 15մլն դրամ գումար:[255]

Եթե 2010-2011 ուս. տարում վերապատրաստվել են 493 մանկավարժներ, որոնցից 115-ը՝ դպրոցների և մանկապարտեզների ղեկավարներ, 44-ը՝ միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ուսուցիչներ և վարպետներ, 35-ը՝ ներառական կրթության հատուկ և սոցիալական մանկավարժներ, հոգեբաններ, ապա 2012-2013 ուս.տարում անցկացվեցին նախաատեստավորման վերապատրաստումներ՝ 848 ուսուցիչների մասնակցությամբ: Վերապատրաստումներ իրականացվեցին նաև ներառական կրթության ասպարեզում:

ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների համաձայն, 2012-2013 ուս.տարվա հոկտեմբերի 23-27-ը Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 14 մասնագետներ Ստեփանակերտի հ. 2 դպրոցում «Նեթբուքն ինձ ընկեր» ծրագրով վերապատրաստման դասընթացներ անցկացրին դասվարների համար: Շուրջ 160 արցախցի ուսուցիչների նրանք պատմեցին տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ դասուսուցումը կազմակերպելու իրենց փորձի մասին:

Վերապատրաստումներն ընթացել են հիմնականում երեք ուղղությամբ՝ դասվարական աշխատանք, երաժշտությունը կրտսեր դպրոցում և ուրախ օտար լեզուն կրտսեր դպրոցում: Նույն այդ ժամանակ համալիրի ուսուցիչների մեկ խումբ էլ աշխատում էր «Գանձասար» ճամբարում, որտեղ իրականացնում էին ակումբային աշխատանք: Կրթահամալիրի ուսուցիչները տեղադրել էին աստղացուցարան՝ որպես դասարան, ուսումնական լաբորատորիա և աշխատում էին արցախցի դպրոցականների հետ: Աշխատանքներին հետևում էին «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը և ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը: Ի դեպ, նշենք, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը փորձարարական դպրոց է: Այն առանձնանում է կրթության մեջ ՏՀՏ-ի օգտագործման մեծ փորձով, ինչու չէ՝ նաև հաջողություններով:

Ստեփանակերտում գտնվելու օրերին կրթահամալիրի վերապատրաստող ուսուցիչները գործնականում ներկայացրին նոր տեխնոլոգիաների կիրառման, ուսումնական նյութերի ստեղծման, ուսուցման արդյունքների գրանցման համար անհրաժեշտ նախնական հմտությունները, ուսուցման մեջ ՏՀՏ-ների կիրառման իրենց փորձը:

Նոյեմբերի 21-25-ը իրականացվեց արցախցի դասվարների վերապատրաստման 2-րդ փուլը: Ստեփանակերտի դպրոցների շուրջ տասը դասվարներ տեղում՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, ծանոթացան իրենց գործընկերների աշխատանքին: Խումբը կազմվել էր առաջին փուլի արդյունքներով: Այս փուլի խնդիրը վերապատրաստող և վերապատրաստվող գործընկեր դասվարների վիրտուալ տարածքի ստեղծումն էր, ինչը հնարավորություն կտա նյութերի փոխանակման և առցանց քննարկումների:[256]

Արցախցի ուսուցիչների խոսքով՝ գործընկեր դասվարների հետ համատեղ աշխատել են կրթահամալիրի կրտսեր դպրոցների դասարաններում, ծանոթացել սովորողների և ուսուցիչների կողմից դասարանում և տանը թվային միջոցներն օգտագործելու նրանց փորձին: Ստեփանակերտի հ.2 դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը պատմում է, թե ինչպես են միասին ծրագրել ուսումնական օրը,

կատարել անցած օրվա վերլուծությունը: Վերապատրաստման ընթացքում դասվարները ստեղծել են իրենց և դասարանների բլոգները, նրանց տպավորությամբ՝ սկզբում ամեն ինչ դժվար է թվացել, բայց հետո հասկացել են, որ իրենց վրա աշխատելու դեպքում կունենան նույնպիսի հմտություններ:[257]

Վերապատրաստման դասընթացներին դասվարներին հատկապես ուսանելի էր շաբաթվա վերջում զուգահեռ դասարանների ուսուցիչների կողմից միասին հաջորդ շաբաթվա դասերի պլանավորումը: Միջառարկայական կապն է շատ լավ գործում: Նրանք ականատես են եղել, թե ինչպես է միևնույն թեման նույն օրն անցկացվում տարբեր առարկաների ուսուցիչների կողմից, համոզվել, թե ինչքան շատ են աշխատում ուսուցիչներն իրենց վրա, որոնք օրվա մեծ մասն անցկացնում են դպրոցում:

Դասվարների համար չափազանց հետաքրքիր էր կրթահամալիրի մասնագետների կողմից տեղեկատվական համակարգերի օգտագործումը դասուսուցման մեջ: Ուսուցիչները խոստովանեցին, որ դրանց օգտագործումը պարզապես անհրաժեշտություն է: Ուսուցիչն ունի իր բլոգը, որտեղ տեղադրում է տվյալ օրը կատարած աշխատանքները, տնային հանձնարարությունները, և հիվանդության պատճառով աշակերտի դասերից բացակայությունը նրան դուրս չի թողնում ուսումնական գործընթացից:

Վերոնշյալ ուսումնական տարում 848 ուսուցիչներ վերապատրաստվել և ատեստավորվել են, որոնցից 63-ը վերապատրաստվել են «Նոր ուսումնական ռազմավարություն» (ՆՈՒՌ) ծրագրի շրջանակներում (հիմնականում ընդգրկվել են շրջկենտրոնների դասվարներ և ինֆորմատիկայի ուսուցիչներ): 168 ուսուցիչներ վերապատրաստվել են շախմատ առարկայի գծով, 35-ը՝ որպես մանկապարտեզների և նախադպրոցական խմբերի դաստիարակներ և ղեկավարներ:

ՀՀ ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Մխիթար Գևորգյանի հաշվետվության տվյալների համաձայն, 2012-2013 ուս.տարվա մարտի 17-26-ը Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցում անցկացվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Հանրապետության շրջաններից ու մայրաքաղաքից մասնակցում էին շուրջ 200 ուսուցիչներ՝ 12 մասնագիտությունների գծով: Նրանք ուսուցիչների այն առաջին խումբն էին, որ ատեստավորման նպատակով ներկայացվել էր վերապատրաստումների :

ԼՂՀ ԿԳ նախարարության հրավերով վերապատրաստման դասընթացներն իրականացնում էին ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) 39 մասնագետներ:[258] Դասընթացները համակարգող՝ ՀՀ ԿԱԻ-ի վերապատրաստումների բաժինը ղեկավարող գլխավոր մասնագետ Գրիգոր Առստամյանի տեղեկացմամբ՝ ատեստավորումն անցկացվում է ընթացակարգով՝ մեկ փուլով: Այն կարելի է երեք ենթափուլի բաժանել: Առաջին՝ երբ տնօրենները շրջանային հանձնաժողովին ներկայացնում են 20 տոկոսի չափով ուսուցիչներ: Երկրորդ ենթափուլը 80-ժամյա այս վերապատրաստումներն էին, իսկ երրորդ փուլը լինելու է հանրապետական հանձնաժողովի գործունեությունը: Շրջանային հանձնաժողովը երկու տիպի որոշում է կայացնում. տվյալ ուսուցիչը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում: ԼՂ հանրապետական հանձնաժողովը դարձյալ երկու որոշում է կայացնում տարակարգ շնորհել կամ չշնորհել: Այս ամբողջ գործընթացը կոչվում է պարզ ընացակարգ, այսինքն՝ փաստաթղթային ատեստավորում: Վերապատրաստված ուսուցչին տրվում է վկայական, որն ուժի մեջ է վեց ամսից: Նա այդ վկայականի պատճենը հանձնում է շրջանային հանձնաժողովին: Հանրապետական հանձնաժողովը շնոր-

հում է չորս տարակարգ, ամենաբարձրը չորրորդն է: Յուրաքանչյուր տարակարգ ունի իր չափանիշը: Այսպես, չորրորդ տարակարգին հավակնողը պետք է ունենա առնվազն գիտությունների թեկնածուի աստիճան: Տարակարգ շնորհելիս հանձնաժողովը հաշվի է առնում ուսուցչի աշխատանքի արդյունքները, մամուլում տպագրված հոդվածները և այլն: Ըստ ԼՂՀ ԿԳՆ գործող կանոնակարգի, հինգ տարվա մեջ (2011-2015թթ.) բոլոր ուսուցիչները, տարեկան նրանց 20 տոկոսը, պետք է ատեստավորվեն հետևյալ չափանիշներով.

Համակարգող մասնագետի գնահատմամբ՝ տնօրենները հիմնականում պետք է ճիշտ ներկայացնեն ուսուցիչներին, բացառությամբ մի քանի դեպքերի: Մեկ տարուց պակաս ստաժ ունեցող ուսուցիչը չի ներկայացվում ատեստավորման, նա պետք է ունենա առնվազն երեք տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ, որից վերջին մեկ տարին աշխատած լինի տվյալ դպրոցում: Նախարարության կոլեգիայի նիստի որոշմամբ տարիքային առումով սահմանափակումներ չկան, բայց տրամաբանականն այն է, որ նախաթոշակային տարիքի ուսուցիչներին իմաստ չկա ուղարկել վերապատրաստումների, քանի որ պետությունը փող է ծախսում տվյալ ուսուցչի վրա, և գերադասելի է, որ վերապատրաստվեն նրանք, ովքեր դեռ երկար ժամանակ կաշխատեն դպրոցում:

Վերապատրաստման դասընթացները կազմակերպողների հաշվետվությունների ուսումնասիրությունից նկատելի է դառնում, որ նրանք հիմնականում գոհ էին ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունից և մեթոդական գիտելիքներից: Վերապատրաստման դասընթացների մասնակիցները՝ Ս. Բաղդասարյան (Վանքի միջն. դպրոց), Սլավիկ Արզումանյան (Քաշաթաղի Զորավանի միջն. դպրոց), Լուսինե Մելքումյան (աշխարհագրության քաղաքային մեթոդմիավորման նախագահ), Կարմեն Հարությունյան (Վաղուհասի միջն. դպրոցի պատմության ուսուցիչ), Սպարտակ Հակոբյան (Գետավանի միջն. դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ և ուրիշներ) իրենց հուշերում գրում են, որ «դասընթացները շատ արդյունավետ են, դպրոցում մի բան կփոխվի դեպի լավը: (Վերոնշյալ ուսուցիչներն իրենց հուշերը տրամադրել են հեղինակներին): Վաղուց ենք սպասում ատեստավորմանը, որպեսզի մասնակցենք և տարակարգ ստանանք: Անշուշտ, այդպիսի մասնագիտական օժանդակություն մշտապես ունենալու դեպքում կհասնենք ավելի բարձր արդյունքների»:

Հանրակրթության մասին ԼՂՀ օրենքը (2010թ. ապրիլին) սահմանում է հինգ տարին մեկ ուսուցիչների պարտադիր ատեստավորում, որը նախատեսված է իրականացնել պարզ և բարդ ընթացակարգով:

Պարզ ընթացակարգն իրականացվում է փաստաթղթային ատեստավորման եղանակով՝ ուսուցչի ատեստավորման (շրջանային) հանձնաժողովի կողմից, իսկ բարդը՝ թեստավորման և հարցազրույցի եղանակով, ուսուցչի ատեստավորման հանրապետական հանձնաժողովի կողմից:

Յուրաքանչյուր տարի ուսումնական հաստատության ուսուցիչների մեկ հինգերորդը ենթակա է լինելու ատեստավորման՝ ըստ ուսումնական հաստատության տնօրենի հաստատած ժամանակացույցի: Ատեստավորման տարածքային հանձնաժողովը յուրաքանչյուր ուսուցչի համար կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին,

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և ենթակա է որակավորման տարակարգի շնորհման,

3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և ենթակա է որակավորման տարակարգի իջեցման,

4) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

ԿԳ նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստում (2015թ. ապրիլին) նախարարը վերլուծաբար ներկայացրեց նաև որակավորման չափանիշները և իր առաջարկությունները: Նախարարը նշեց, որ ուսուցչի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորման չափանիշը որակավորման տարակարգն է, որը որակավորման յուրաքանչյուր աստիճանում սահմանվելու է երեք մակարդակներով:

Ուսուցչի որակավորման տարակարգերի բնութագրիչները սահմանվում են՝ հիմք ընդունելով ուսուցչի մասնագիտական գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների և ունակությունների ծավալը, ստեղծագործական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքի ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարգևատրումները, համապատասխան մրցույթներին մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները և այլն):

Ուսուցիչների որակավորման ստուգման ձևերի ճիշտ և իրատեսական արդյունքները կթելադրեն այն ուղիները, որոնք այսօր կնպաստեն ուսուցիչների առկա որակների կատարելագործմանը:

Ուսումնասիրությունների և ուսուցիչների ու տնօրենների հարցազրույցների վերլուծությունների հիման վրա սույն աշխատության հեղինակներն առաջարկում են ուսուցիչների որակավորման ու ատեստավորման նոր տարբերակ (սանդղակ), որը կարելի է հետագայում օգտագործել ուսուցիչների ատեստավորման ժամանակ: Այն ընդգրկում է որակավորման 3 աստիճան, որտեղ 3-րդ աստիճանն ամենաբարձրն է: Առաջին մակարդակի ապահովումը պարտադիր է ուսուցիչների ատեստավորման առաջին փուլի ժամանակ՝ «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշման կայացման համար:

Ուսուցիչների որակավորման ներկայացված բնութագրիչներն իրենց մեջ ներառում են երեք ոլորտներ՝ բովանդակային, գործընթացային և անձնային, այսինքն.

- այն, ինչ պետք է իմանա ուսուցիչը իր մասնագիտական պարտականություններից ելնելով,

-ինչպես պետք է նա կիրառի այդ գիտելիքները իր մասնագիտական գործունեության ընթացքում,

- անձնային ինչ որակներ պետք է նա ունենա, որպեսզի իր գիտելիքներն ու հմտությունները ապահովեն առավելագույն արդյունավետ գործունեություն:

Նշված ոլորտներն ընդգրկում են.

1. Գիտելիքների ոլորտ.

դասավանդվող առարկայի տեսության իմացություն,

1. սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների իմացություն,

2. գործող օրենսդրական փաստաթղթերի, առարկայական չափորոշիչների ծրագրերի իմացություն,

3. դասավանդման մեթոդաբանության, նորարարական մեթոդների, ռազմավարությունների իմացություն:

2. Կարողությունների ոլորտ

1. ուսումնադաստիարակչական գործընթացը պլանավորելու կարողություն.
2. իր մասնագիտական գործունեությունը պլանավորելու, նախագծելու և մեթոդական ծրագրեր մշակելու կարողություն,
3. ուսումնադաստիարակչական գործընթացը հայտորոշելու, դիտարկելու, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն,
4. դասարանում դրական բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու և սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու կարողություն,
5. մանկավարժական խնդիրները և կոնֆլիկտները ճկուն լուծելու կարողություն,
6. սովորողների կառուցողական, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդները կիրառելու կարողություն,
7. սովորողների ուսուցման նկատմամբ մոտիվացիայի (դրդապատճառների) բարձրացման կարողություն,
8. սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեությունը խթանելու և զարգացնելու կարողություն,
9. ստեղծագործական-հետազոտական գործունեություն իրականացնելու կարողություն:
10. համակարգչային հմտությունների առկայություն և ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի միջոցների ակտիվ կիրառում,
11. ինքնակրթության և կատարելագործման պլանավորում և իրագործում,
12. սեփական գործունեությունը, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները վերլուծելու, գնահատելու և շտկելու կարողություն:

3.Անձնային որակների ոլորտ

1. սովորողների, գործընկերների և ծնողների հետ հաղորդակցվելու և համագործակցելու հմտությունները,
2. օպտիմալ հուզականությունը, դրական դիրքորոշումը սովորողների և իր աշխատանքի նկատմամբ:

ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի որոշումների, հանրակրթական դպրոցների տնօրենների հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ինչպես 2005-2009թթ. «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի, այնպես էլ 2010-2014 թվականների ծրագրի շրջանակներում ուսումնական ծրագրերի, գնահատման նոր համակարգի՝ համագործակցային մեթոդների, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները դասապրոցեսում օգտագործելու և այլ ուղղություններով հանրապետության ուսուցիչների մեծամասնությունը վերապատրաստվել է: Չնայած արձանագրված շոշափելի առաջընթացին, դասավանդման և ուսումնառության որակի էական բարելավմանը միտված՝ ուսուցիչների վերապատրաստման գործընթացը շարունակական բարելավման անհրաժեշտություն ունի, հատկապես «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցիչների:

Ինչպես տեղեկացանք «Լուսարար» թերթի 2014թ. համար 33-ում տպագրված՝ «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» ուսանող Արգին Նի-

կոլյանի հարցազրույցից («Վերապատրաստվեցին «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցիչները»), 2013-2014 ուսումնական տարվա նոյեմբերի 3-ից մինչև 15-ը Մարտունու հ .2 հիմնական դպրոցում շրջանի հանրակրթական դպրոցների «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների համար «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամը, Հայ կրթական հիմնարկության օժանդակությամբ, Հայ օգնության ֆոնդի հովանավորությամբ իրականացրել է վերապատրաստման դասընթացներ, որոնց նպատակն էր իրազեկել ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին, նորամուծություններին, բարձրացնել ուսուցիչների կրթական, մասնագիտական մակարդակը: Դասընթացները վարել է «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» ուսանող Արգին Նիկոլյանը: Հարցազրույցում նա նշեց, որ ԳՏՏԿ-ի նպատակն է՝ պատրաստել աշխատաշուկայում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պահանջարկ ունեցող մասնագետներ, աջակցել վերոհիշյալ բնագավառում շուկայի զարգացմանն ու ընդլայնմանը, միջազգային և տեղական ներդրումների համար գրավիչ պայմանների ձևավորմամբ բարձրացնել բնագավառի աշխատողների զարգացման հնարավորությունները՝ խթանելով հասարակական բոլոր ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, և վերջապես հնարավորություն տալ ապակենտրոնացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների շուկան, Երևանից դեպի մարզեր, Արցախ՝ նպաստելով երկրի տնտեսության առաջխաղացմանը:

2013-2014 ուսումնական տարում «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» ծրագրում ընդգրկված էին նաև Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի և Շուշիի շրջանների դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչները: Վերոնշյալ դասընթացները կազմակերպվել են նաև 2014-2015 ուս.տարում, որին մասնակցել են նաև Քաշաթաղի, Շահումյանի շրջանների, Ստեփանակերտի դպրոցների ուսուցիչները: Շրջկենտրոններում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին ուսուցիչներին ավելի շատ հնարավորություն է տրվել զարգացնել գործնական հմտությունները առանձնապես նոր ծրագրերի կիրառման մեջ, ինչը հետագայում թույլ կտա կատարելագործել «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման մեթոդիկան:

Վերապատրաստում անցած ուսուցիչներին հանձնում են Հայ կրթության հիմնարկության կողմից իրականացվող «Ինֆորմատիկա» առարկայի վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտելու մասին վկայականներ, ինչպես նաև վերապատրաստման մասնակից դպրոցները Հայ կրթական հիմնարկության կողմից ստանում են 20-ական համակարգիչ և տպիչ սարք:[259]

«Լուսարար» թերթի 2014թ ապրիլի 14-ի համարում տպագրված հոդվածում («Վերապատրաստվեց ուսուցիչների հերթական խմբաքանակ», հեղինակ Ս. Խաչատրյան) կարդում ենք, որ 2014-2015 ուսումնական տարվա մարտի 15-24-ը ԼՂ Հանրապետության հանրակրթական դպրոցների հերթական խմբաքանակը, 720 ուսուցիչներ, նախաատեստավորման վերապատրաստումներ անցան Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում: Դասընթացներն անցկացրին ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) մասնագետները, ինչպես նաև ԿԱԻ-ի Արցախի մասնաճյուղի համապատասխան 6 մասնագետներ: Վերապատրաստումներն անցկացվեցին 13 առարկաների գծով՝ 28 խմբերում: Վերապատրաստումներն ընթացան երեք ուղղությամբ, առարկայական, մասնագիտական՝ 60 ժամ, տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ 12 ժամ, օրենսդրություն՝ 8 ժամ:

Վերապատրաստումների տրամաբանական շարունակությունն ու ատեստավորումը անցկացվեց նաև օգոստոսին պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային ուսումնասիրության հիման վրա: Այնուհետև ցանկացողները, ըստ ԿԳ նախարարության սահմանած կարգի, կարող են դիմել հանրապետական հանձնաժողով՝ տարակարգ ստանալու համար:

ՀՀ ԿԱԻ-ի մասնագետների շարքում կային ուսումնական դասագրքերի, ձեռնարկների ու ծրագրերի հեղինակներ, և դասընթացները լավ առիթ էին հեղինակ-ուսուցիչ երկխոսության: Այսպես, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը՝ գրականության դասագրքերի հեղինակը, արդեն երեք տարի է, ինչ մասնակցում է վերապատրաստումներին: Ուսուցիչները հարց բարձրացրին դասագրքերի նյութերի ծավալի, ծրագրին որոշ անհամապատասխանության և այլ մտահոգությունների շուրջ: Պրոֆեսորը իր զարմանքն ու վրդովմունքը հայտնեց այն կապակցությամբ, որ Հայաստանում 7-9-րդ դասարաններում անցնում են նոր դասագրքերով, իսկ Արցախում՝ հին: Խոսելով դասագրքաստեղծման գործընթացում տեղ գտած թերությունների մասին, նա նախ այն միտքը հայտնեց, որ ընդհանրապես դասագրքերից դժգոհություններ միշտ եղել են, բայց պետք է այնպես անել, որ առավելություններն անթերի լինեն:

Հանրապետության դպրոցները լավագույն մասնագետներով ապահովելու լուրջ խթան հանդիսացավ նաև ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը: Այդ կապակցությամբ ԿԳ նախարարության կրթության շրջանային բաժինների կողմից վերահսկվում էին մանկավարժական կադրերի ընտրության և նշանակման գործում մի շարք դպրոցներում թափուր աշխատատեղերի համար կայացած մրցույթները: Այսպես, օրինակ, 2013-2014 ուսումնական տարում Մարտակերտի շրջանի 16 դպրոցներում 14 առարկաներից հայտարարված մրցույթների արդյունքում 23 ուսուցիչներ ընդունվել են աշխատանքի, Մարտունու շրջանում 22 դպրոցներից 20 ուսուցիչներ, Հադրութի շրջանում 12 դպրոցներից 14, Ասկերանի շրջանում 18 դպրոցներից 16, Շահումյանի շրջանում 10 դպրոցներից 12, Քաշաթաղի շրջանում 28 դպրոցներից 24, Շուշիի շրջանում 6 դպրոցներից 8 ուսուցիչներ: Բացի այդ, դպրոցների տնօրենների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարում կրթության շրջանային բաժիններին, ԿԳ նախարարության մրցության հանձնաժողովներին է ներկայացվում վերապատրաստման դասընթացներն ու ատեստավորումն անցած ուսուցիչների ցուցակը, որի հիմնա վրա էլ հանձնաժողովը որոշում է տարակարգը:[260]

Մեր ուսումնասիրության արդյունքների վերլուծությունները ցույց են տվել, որ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությանը, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացմանը մեծապես նպաստել են նաև պարբերաբար հրավիրվող գիտաժողովները, խորհրդակցությունները, ԿԳ նախարարության առաջատար մասնագետների հանդիպումները ուսուցիչների հետ, արձակուրդներին կազմակերպվող դպրոցական, շրջանային, քաղաքային և հանրապետական մանկավարժական ընթերցումներն ու քննարկումները, առաջ քաշված հիմնարար դրույթները, որոնք բովանդակային առումով ելակետ են դարձել մանկավարժական կոլեկտիվների համար: Օրինակ, հանրապետության կրթության ոլորտի աշխատողների օգոստոսյան խորհրդակցություններում ամփոփվում են տվյալ ուսումնական տարում կատարված աշխատանքները, լայնորեն քննարկվվում են հաջորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղղություններն ու խնդիրները, այդ միտումով ընդհանրացվում առա-

ջավոր փորձը, որոնցում առանցքայինը ավագ դպրոցների կայացման հիմնախնդիրներն են, ինչպես նաև կրթության բոլոր աստիճաններում ուսման որակի ու արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ուսուցչի մասնագիտական որակի բարձրացմանը հատկապես նպաստում են ինքնակրթությունն ու ստեղծագործական աշխատանքը: Այդ նպատակով էլ հանրակրթական դպրոցների գրադարանները յուրաքանչյուր տարի համալրվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հրատարակվող առարկայական ամսագրերով, մեթոդական, մանկավարժական ու այլ գրականությամբ, ինչպես նաև ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից հրատարակվող «Կրթությունը և գիտությունը Արցախում» ամսագրով, «Լուսարար» թերթով ու այլ մեթոդական գրականությամբ:

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է հանգել այն եզրակացության, որ հանրակրթական դպրոցն այսօրվա կառուցվածքով առավել արդյունավետ կարող է իրականացնել իր կրթական նպատակներն ու խնդիրները, շեշտակիորեն բարձրացնել ուսուցման որակը, թեթևացնել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, աշակերտին հնարավորություն տալով նկատելի չափով բավարարել իր կրթական պահանջներն ու հետաքրքրությունները, եթե ապահովված է իրենց առարկաներին խորապես տիրապետող առարկայագետ ուսուցիչներով: Ահա թե ինչու ԼՂՀ ԿԳ նախարարությունը, շրջանային, քաղաքային կրթության բաժիններն ու դպրոցների տնօրենները մանկավարժական կադրերի հանդեպ նոր և ավելի խիստ պահանջներ են դնում: Հատկապես այսօրվա ավագ դպրոցը պահանջում է ուսուցչից ոչ միայն մասնագիտական խոր գիտելիքներ ու կարողություններ, այլ նաև մեթոդական պատրաստվածության բարձր որակ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. ԼՂՀ (Արցախի) կրթական համակարգի ձևավորման ու զարգացման փուլերը և հեռանկարները (պատմաքննական վերլուծություն)

ա) Հասկացություն կրթական համակարգի մասին

Կրթական համակարգ ասելով պետք է հասկանալ ուսումնադաստիարակչական հիմնարկների(նախադպրոցական, հանրակրթական, միջնակարգ, բարձրագույն և արտադպրոցական) այն ամբողջությունը, որոնք կեսագործում են տվյալ պետության քաղաքականության հիմնական սկզբունքները (դրույթները) երկրի լուսավորության բնագավառում:

«Կրթության մասին» ԼՂՀ օրենքի հոդված 8-ում նշված է. «ԼՂՀ կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարնիների փոխկապակցված ամբողջությունն է»[261]:

Ի՞նչ է «կրթական համակարգ» հասկացությունը:

Աշխարհում ամեն ինչ համակարգված է(սիստեմավորված): Այդ համակարգերը տարբեր ձևերի են: «Համակարգ» հասկացությունն իր արմատներով գնում է դեպի անտիկ փիլիսոփայության խորքերը: Անտիկ ժամանակներից սկսած փիլիսոփաները փորձել են բացահայտել «համակարգ» հասկացության բովանդակությունը: Այսպես, օրինակ, օբյեկտիվ աշխարհի համակարգվածության մասին գիտականորեն հիմնավորված պատկերացումները ելակետային դարձան երկու տեսությունների երևան գալով, որոնք(իդեալական և մատերիալիստական) բացահայտեցին հասարակական և կենսաբանական համակարգերի կառուցվածքի և զարգացման արմատական օրինաչափությունները: Դեռևս Արիստոտելի ժամանակներից սկսած փիլիսոփաներին հետաքրքրել են «համակարգ» հասկացության ամբողջ էությունը, նրա իմացության բացահայտման միջոցների հարցերը, և տարբեր ժամանակներում գիտնականների կողմից տարբեր ձևերով է մեկնաբանվել այդ հասկացությունը:

Հասարակության զարգացման նոր շրջանում՝ 20-րդ դարում, արդեն գիտնականների կողմից մշակվում են համակարգված մոտեցման տեսությունը և համակարգված վերլուծության պրակտիկան՝ կապված «արհեստական համակարգերի» գործնական կառուցման հետ:

Այսօր սոցիալ-տնտեսական նոր պայմաններում անհրաժեշտություն է դառնում կառավարման գործընթացի նկատմամբ համակարգային մոտեցման կիրառումը կրթության համակարգի կառավարման կատարելագործման նպատակով:

Կրթության համակարգը կարելի է դիտարկել որպես բազմաթիվ փոխկապակցված կրթադաստիարակչական կառույցների ու բաղադրամասերի ամբողջություն, որը ենթարկվում է աճող սերնդի և մեծահասակների կրթության, ուսուցման և դաստիարակության նպատակներին:

Դպրոցը՝ որպես ամբողջական կառուցվածքային համակարգ, բաղկացած է մի շարք ենթահամակարգերից, որոնցից են ուսուցման համակարգը, դաստիարակության համակարգը, աշխատանք մանկավարժական, աշակերտական կոլեկտիվների, ծնողների հետ, արտադասարանական աշխատանքներ և այլն:

Այսպիսով, կրթության համակարգը փոխգործակցվող կրթական ծրագրերի և պետական կրթական ստանդարտների տարբեր մակարդակի և ուղղության, տարբեր մակարդակի կրթական հաստատությունների տիպերի և ձևերի, կրթության կառավարման օրգանների միասնությունն է: Կրթության համակարգն արտացոլում է երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկությունները:

բ) Արցախի կրթական համակարգի ձևավորման ու զարգացման փուլերը (պատմական ակնարկ)

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության ներկայիս համակարգի հիմքը դրվել է Արցախի դպրոցի պատմության առաջին շրջանում՝ 5-ից 19-րդ դարերում: Աբգար Մովսիսյանը իրավացիորեն մատնանշում է, որ մինչև 19-րդ դարը Հայաստանում և Արցախում կրթական համակարգի հիմք են կազմել հայ դպրոցի ու մանկավարժության ասպարեզի գործիչներ Անանիա Շիրակացու, Հովհաննես Սարկավագի, Գրիգոր Մագիստրոսի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և ուրիշ շատ գործիչների մանկավարժական ուսմունքները,[262] որոնց վրա էլ ձևավորվել է կրթության համակարգը: Նրանք են մշակել դպրոցական ուսումնական ծրագրերը, պլանները, կանոնադրությունները: Հայեցի կրթություն տվող դպրոցի հիմնադրման ելքը հանդիսացավ հայ գրերի գյուտը, որին հաջորդեց ազգային մշակույթի վերելքը Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածներում: Մեծն Մաշտոցը և նրա աշակերտները Հայաստանի գավառներում ու գյուղերում բացեցին հայագիր դպրոցներ: Այդ դպրոցները բացվեցին Հայոց Վռամշապուհ արքայի հրամանագրով՝ ունենալով պետական կարգավիճակ: Մեսրոպ Մաշտոցի ստեղծած դպրոցներում ուսուցումը տարվում էր անվճար: Դպրոցների ստեղծումով սկիզբ դրվեց նաև դասագրքաստեղծման աշխատանքներին:

5-10-րդ դարերում Հայաստանում և Արցախում կրթության համակարգը ընդգրկում էր տարրական, հոգևոր մասնավոր, ինչպես նաև մասնագիտական դպրոցները: 6-րդ դարում ականավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը բացում է իր փիլիսոփայական դպրոցը, այնուհետև 7-րդ դարում Անանիա Շիրակացին բացում է առաջին մասնագիտական բնագիտամաթեմատիկական դպրոցը, որի համբավը տարածվում է Հայաստանի սահմաններից դուրս, իսկ 8-րդ դարում հայտնի էր Սահակադուխտ Սյունեցու բացած տնային երաժշտական մասնավոր դպրոցը Գառնիում: 10-15-րդ դարերում հանդես եկան նոր տիպի միջին և բարձրագույն կրթություն տվող մի շարք նշանավոր դպրոցներ, ինչպիսիք են Անիի իմաստասիրաց(դպրոց-ուսումնարան), Սանահինի, Հաղպատի, Հաղարծինի, Խոր Վիրապի, Նարեկա վանքի, Կիլիկիայի և այլ բազմաթիվ դպրոցներ:

19-րդ դարի սկզբին Ռուսաստանին միանալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Հայաստանի, ինչպես նաև Արցախի կրթական, մշակութային կյանքի զարգացման համար: Դարի առաջին կեսին հայ կրթական համակարգի զարգացումը տեղի էր ունենում յուրահատուկ բարդ ու հակասական պատմական, քաղաքական և մշակութային իրադրության մեջ՝ բազմապիսի գործոնների

ազդեցության տակ: Առաջին գործոնն այն էր, ինչ մենք ստացել ենք հայ դպրոցի հարուստ և ուսանելի անցյալից: Երկրորդն այն է, որ Արցախը Արևելյան Հայաստանի հետ միասին վերջնականապես ազատվեց թուրք-պարսկական դարավոր լծից և միացավ Ռուսաստանին, որի շնորհիվ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ նոր դպրոցի կազմավորման ու զարգացման համար: Երրորդը՝ դպրոցական նոր համակարգն իր բոլոր կողմերով սկսում է տարբերվել նախորդ դարերի դպրոցական համակարգից թե իր կրթական բովանդակությամբ և թե ներքին կյանքով, և չորրորդը՝ հայ մշակույթի, լուսավորության ու դպրոցի զարգացումն սկսում էր ոչ միայն բուն Հայաստանի, այլև Ռուսաստանի, ռուսահայ համայնքի,հայ լուսավորչական թեմերի(Վրաստան, Նոր Նախիջևան, Աստրախան, Շամախի, Արցախ) և այլ հայաշատ վայրերի մշակութային կենտրոնների հետ սերտորեն կապակցված:

Արևելյան Հայաստանի, Արցախի հոգևոր, մշակութային կյանքում, կրթական համակարգում որակական մեծ փոփոխություններ են կատարվում հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին: Ժամանակի պահանջներին համահունչ կատարելագործվում է կրթության բովանդակությունը, բացվում են նոր տիպի դպրոցներ, ուսումնարաններ, մասնագիտական ուսումնական հաստատություններ:

19-րդ դարում Հայաստանի և Արցախի կրթական համակարգում ներառված էին հետևյալ կրթական հաստատությունները:

Դարի առաջին կեսին Երևանում և Շուշիում գործում էին՝

- եկեղեցական-ծխական դպրոցներ,
- տարրական դպրոցներ(նաև մասնավոր),
- ուսումնարաններ,
- գավառային պետական(ռուսական տիպի) ուսումնարաններ,
- հոգևոր ուսումնարաններ,
- թեմական դպրոցներ(միջն.մասնագիտ.դպրոցներ), բարձրագույն տիպի դպրոցներ,
- Մոսկվայի Լազարյան ճեմարան,
- Թբիլիսիի Ներսիսյան դպրոց[263]:

Դարի երկրորդ կեսին Երևանում և Շուշիում գործում էին՝

- օրիորդաց դպրոցներ,
- թեմական դպրոցներ,
- երկդասյան դպրոցներ,
- ռեալական ուսումնարաններ,
- էջմիածնի Գևորգյան ճեմարան,
- ուսուցչական սեմինարիա(Երևանում),
- առևտրական ուսումնարան(Երևանում),
- օրիորդաց ուսումնարան(Երևանում):

Ժամանակակից կրթական համակարգի հիմքը դրվել է Հայաստանի առաջին հանրապետության տարիներին(1918-1920թթ.), այդ թվում նաև Արցախում, այնուհետև զարգացել խորհրդային իշխանության օրոք:

Լուսժողկոմի որոշմամբ 1920թ. դպրոցը տարանջատվեց եկեղեցուց(այսինքն մինչ այդ դպրոցները կոչվում էին եկեղեցական-ծխական) և դարձավ աշխարհիկ: 1920-1930 թթ. կրթական համակարգի զարգացման և բարեփոխումների շնորհիվ վերացավ զանգվածային անգրագիտությունը: Խորհրդային տարիներին ստեղծվեց կրթական հզոր, խիստ կենտրոնացված կառավարմամբ պետական կրթա-

կան համակարգ, որի մեջ ներառվում էին հետևյալ կրթական հաստատությունները.

- նախադպրոցական(մսուր-մանկապարտեզներ, նախակրթարաններ),
- հանրակրթական(տարրական, ոչ լրիվ՝ միջնակարգ),
- պրոֆտեխնիկական ուսումնարաններ,
- միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ (տեխնիկումներ, ուսումնարաններ),
- բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ (ինստիտուտներ):
- համալսարան:

Այդ ուսումնական հասատությունների կրթության բովանդակության իրացման շնորհիվ ապահովվում էր հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտական, մշակութային առաջընթացը:

Մինչև Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ անկախացումը, խորհրդային շրջանում կրթության համակարգի կառավարման այդ ժամանակաշրջանին (1920-1988թթ.) բնորոշ էին՝

- դպրոցական համակարգի կայուն ֆինանսավորումը, դպրոցաշինության զարգացումը,
- կրթության մատչելիությունը բոլոր խավերի երեխաների համար (տարրական, ոչ լրիվ, միջնակարգ և բարձրագույն),
- դպրոցի նյութատեխնիկական բազայի հագեցվածությունը,
- դպրոցի պարապմունքների անընդհատությունը, կայուն ռեժիմի և դասացուցակի առկայությունը,
- արտադասարանական և արտադպրոցական կրթության և դաստիարակության հնարավորությունը,
- ուսուցչի բարձր հեղինակությունը, նրա նյութական համեմատաբար բավարար վիճակը, որի շնորհիվ բարձր էին դպրոցների կադրային ապահովվածությունը, տղամարդ ուսուցիչների զգալի քանակի առկայությունը,
- ուսուցումը միջնակարգ և պետական ուսումնական հաստատություններում անվճար էր,
- կրթության համակարգի միասնականությունը և այլն:

Կրթության համակարգը զարգանում էր գիտականորեն մշակված պլանների ու ծրագրերի հիման վրա: Իհարկե, դրա հետ մեկտեղ գոյություն ունեին կրթական համակարգի կառավարման մի շարք էական հիմնախնդիրներ ու բացթողումներ:

Հանրահայտ ճշմարտություն է այն, որ կրթական համակարգը միշտ էլ արտացոլել է այն փոփոխությունները, որոնք կատարվում են հասարակության մեջ և կոչված են բավարարելու նրա պահանջները: Խորհրդային կրթական համակարգի առավելությունն այն էր, որ երեխաների կրթվածության միջին մակարդակը անհամեմատ բարձր էր: Սակայն պետք է ասել, որ կրթական համակարգում կրթության ազգային-մշակութային բովանդակությունը սահմանափակվում էր, որն արտահայտվում էր հատկապես հումանիտար առարկաների դասավանդման ժամանակ: Բոլոր ծրագրերն ու մեթոդիկաները միասնականացված էին և տրվում էին մեկ միասնական կենտրոնից՝ Մոսկվայից, իսկ Լեռնային Ղարաբաղի համար՝ Ադրբեջանի լուսավորության նախարարության կողմից՝ մի քիչ էլ խեղաթյուրված ձևով: Այդ մոտեցումը բավականին դժվարացնում էր դասավանդումը դպրոցներում, ուսումնական հաստատություններում, սահմանափակում ազգային գաղա-

փարախոսությունը, ինչպես նաև ուսուցչի ստեղծագործական ազատ գործունեությունը: (Այդ մասին մանրամասն նշված է աշխատության առաջին (2014թ.) և երկրորդ (2015թ.) հատորներում):

Անկախություն ձեռք բերելուց հետո ԼՂ Հանրապետությունում վերափոխվեց նախկին կրթական համակարգը՝ պահպանելով անցյալի լավագույն ավանդույթները: Արցախի նորաստեղծ հանրապետության կրթական համակարգը կառուցված է Հայաստանի կրթության համակարգի ձեռքբերումների, կենսունակ ավանդույթների և կրթադաստիարակչական փորձի հիման վրա՝ միջազգային կրթության համակարգին ինտեգրվելու հեռանկարներով:

ԼՂՀ կրթության համակարգը ներառում է կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև հետբուհական, և գործում է գլխավորապես բյուջետային նպատակային ֆինանսավորման շնորհիվ: Հանրապետությունում գործում են նաև ոչ պետական ուսումնական հաստատություններ, որոնց գործառության կանոնակարգումը դրանք աստիճանաբար ներառում է կրթության միասնական համակարգ: Հայաստանում և Արցախում, անկախ կազմակերպաիրավական ձևերից, գոյություն ունի կրթության մեկ միասնական համակարգ, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է, և որ բոլոր աստիճանները միավորված են հաջորդականության կապով, բոլոր քաղաքացիներին հնարավորություն է տրված մի աստիճանից անցնել մյուս՝ ավելի բարձր աստիճանի:

ԼՂ Հանրապետության կրթական համակարգում ներառվում են հետևյալ տիպի ուսումնական հաստատությունները.

1. նախադպրոցական
2. հանրակրթական(տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ-ավագ ընդհանուր)
3. նախնական մասնագիտական(արհեստագործական)
4. միջին մասնագիտական
5. բարձրագույն մասնագիտական
6. հետբուհական մասնագիտական
7. լրացուցիչ կրթություն, այդ թվում՝ արտադպրոցական կրթություն(դաստիարակություն):

Օրենքով նախադպրոցական, տարրական ընդհանուր, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթկան ծրագրերը կարող է իրականացնել յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ առանց սահմանափակման, առանց հավաստագրման:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ կրթական ծրագրեր կարող են իրականացնել նաև ոչ ուսումնական հաստատություններում:

1. Նախադպրոցական կրթությունն իրականացվում է երեք տիպի հաստատություններում՝

Վաղ(մինչնախադպրոցական) և նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Պետությունը պայմաններ է ստեղծում ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ տարբերակված ծրագ-

ներով մսուր-մանկապարտեզներ, որոնց հիմնական խնդիրներն են.

1. վաղ (մինչնախադպրոցական) և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը,

2. մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը,

3. տարրական կարողությունների զարգացումը,

4. վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը,

5. հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացում ձևավորելը,

6. աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը,

7. դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

Մսուր-մանկապարտեզները և մանկապարտեզները տարբերակվում են ըստ տարիքային խմբերի քանակի և երեխաների այդտեղ գտնվելու ժամանակի: Վաղ (մինչնախադպրոցական) և նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության հիմնարկների հիմնական տիպը՝ ժ.9-ից 12-ը աշխատող և երեխաների ներքոհիշյալ տարիքային խմբեր ունեցող մանկապարտեզներն են.

ա) 2-3 ամսականից մինչև 1 տարեկան երեխաների՝ վաղ տարիքի երեխաների առաջին խումբ,

բ) 1-ից մինչև 2 տարեկան երեխաների՝ վաղ տարիքի երեխաների երկրորդ խումբ,

գ) 2-ից 3 տարեկան երեխաների՝ փոքրերի առաջին խումբ,

դ) 3-ից 4 տարեկան երեխաների՝ փոքրերի երկրորդ խումբ,

ե) 4-ից 5 տարեկան երեխաների՝ միջին խումբ,

զ) 5-ից 6 տարեկան երեխաների՝ ավագ խումբ:

Երեխաների թվաքանակից կախված թույլատրվում է տարբեր տարիքի երեխաներով խմբերի, այդպիսի խմբերով, ինչպես նաև միակոմպլեկտ, երկկոմպլեկտ, եռկոմպլեկտ խմբով մսուր-մանկապարտեզների և մանկապարտեզների գործունեությունը: Բազմակոմպլեկտ խմբերով մսուր-մանկապարտեզներում և մանկապարտեզներում կազմակերպվում են զուգահեռ տարիքային խմբեր:

Հանրապետությունում այժմ գոյություն ունեն հատուկ նշանակության նախադպրոցական հիմնարկներ հենաշարժողական ապարատի, ինտելեկտի (մտավոր), տեսողական, լսողական, խոսքի խանգարումներ ունեցող երեխաների համար: Մանկատները և նախադպրոցական մանկատները նախատեսված են որբ, լքված և անապաստան կամ այն երեխաների համար, որոնց դաստիարակությունը ընտանիքում ամենատարբեր պատճառներով իրականացնելն անհնար է կամ դժվար: Մանկատներում երեխաները գտնվում են ծննդյան օրից մինչև 3 տարեկանը, նախադպրոցական մանկատներում՝ 3-ից մինչև 7 տարեկանը: Հանրապետությունում այժմ գործում են պետական և մասնավոր նախադպրոցական հաստատություններ: Բոլոր նախադպրոցական հաստատությունները, անկախ կազմակերպահրավական ձևից, ենթակայությունից, տիպից, վաղ (մինչնախադպրոցական) և նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակությունն իրականացնում են «Նախադպրոցական կրթության համալիր ծրագրով»: Նախադպրոցական հաստատությունները մինչև 1999թ. հանձնված էին տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք համայնքների տարածքներում հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան աջակցում էին

պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ ԼՂ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում նաև նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը: Նախադպրոցական հաստատություններում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, դաստիարակության ծրագրի իրականացումը վերապահված են կրթության քաղաքային, շրջանային, բաժիններին:

2. Հանրակրթական դպրոց:

«Կրթության մասին» ԼՂՀ օրենքի 18-րդ հոդվածում նշված է, որ հանրակրթության նպատակը քաղաքացիների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է[264]: Հանրակրթության հիմնական խնդիրներն են.

1. սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը,

2. համամարդկային և ազգային աժեքներին հաղորդակից, ազգային, մշակութայի ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը,

3. սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր իրականացնումը:

Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով՝

1. տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ),

2. միջին (հիմնական) դպրոց (5-9-րդ դասարաններ),

3. ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

ա) Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը,

բ) ուսումնական արդյունավետ գործունեություն ծավալելու և առողջ մանկություն ապահովելու համար անհրաժեշտ մտավոր, հոգեկան և ֆիզիկական կարողությունների զարգացում,

գ) պատմական, բնագիտական և մաթեմատիկական տարրական գիտելիքների յուրացումը,

դ) արվեստի բնագավառի որոշ տարրերի վերաբերյալ տարրական պատկերացումների ձևավորումը,

ե) ճանաչողական, ստեղծագործական, ինքնադրսևորման և ինքնագնահատման ունակությունների զարգացումը,

զ) ուսումնական, աշխատանքային, սոցիալ-կենցաղային և խաղային գործունեության ընթացքում համագործակցման, հաղորդակցման տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը,

է) միջին դպրոցում սովորելու համար անհրաժեշտ պատրաստվածության, ընդհանուր զարգացման որոշակի մակարդակի ապահովումը:

Տարրական դպրոցի հիմնական խնդիրը ուսումնական գործունեություն իրականացնելու (սովորել սովորելու) ունակ երեխայի ձևավորումն է:

Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի,

աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը: Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը:

բ) Միջին դպրոցի կրթության նպատակն է՝

1. մարդու, բնության և հասարակության վերաբերյալ գիտելիքների համակարգի հիմքերի յուրացման ապահովումը.

2. ազգային և համամարդկային առավել նշանակալից սոցիալական-մշակութային արժեքների մասին պատկերացումների ձևավորումը.

3. հայոց լեզվի հիմնական կանոնների և օրինաչափությունների իմացության և գրավոր ու բանավոր գրագետ հաղորդակցվելու հմտությունների յուրացման ապահովումը.

4. հայոց պատմության, այդ թվում՝ հայկական մշակույթի, Հայոց եկեղեցու և համաշխարհային պատմության նշանակալի փաստերի, իրադարձությունների, հասարակական երևույթների վերաբերյալ գիտելիքների յուրացման ապահովումը.

5. հաղորդակցման տարրական մակարդակ ապահովող առնվազն երկու օտար լեզուների ուսուցումը.

6. մաթեմատիկական գիտելիքների համակարգի հիմքերի յուրացման ապահովումը.

7. համաշխարհային արդի հիմնախնդիրների իմացության ապահովումը.

8. ճանաչողության բարձրակարգ մեթոդների հիմունքներին տիրապետելը.

9. ստեղծագործական, գեղարվեստական, հետազոտական գործունեության, ինքնակազմակերպման, առողջ ապրելակերպի, սոցիալական, համագործակցային և հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացման ապահովումը.

10. արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողության ձևավորումը,.

11. տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ հոգեկան և ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովումը.

12. բարոյաէթիկական, գեղագիտական արժեքային համակարգի առավել խորքային հարաբերությունների ձևավորումը, այդ թվում՝

ա) ազգային պատկանելության, տվյալ հասարակության անդամ լինելու լիարժեք գիտակցումը,

բ) իր անձի, շրջապատող մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության բարձրացումը,

գ) իր անհատականության կարևորումն ու գիտակցումը,

դ) իր՝ որպես հասարակության անդամի ու քաղաքացու, պարտականությունների և իրավունքների գիտակցումը,

ե) համամարդկային, ազգային, սոցիալական, քաղաքական և հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի դրսևորումը:

Միջին դպրոցի հիմնական խնդիրը յուրաքանչյուր սովորողի ուսումնահետազոտական և աշխատանքային որոշակի գործունեություն իրականացնելու կարողությունների ձևավորումն է:

Միջին դպրոցում կրթությունը պետք է նպատակաուղղվի գիտելիքների, կարո-

ղությունների, հմտությունների և արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովմանը, որն անհրաժեշտ է ավագ դպրոցում, նախամասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու կամ աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվելու համար:

Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված(հոսքային) ուսուցում:

գ) Ավագ դպրոցի(10, 11, 12-րդ դասարաններ) կրթության նպատակն է.

1. գիտական հետազոտության մեթոդների կիրառմամբ մարդու, բնության և հասարակության վերաբերյալ գիտելիքների համակարգի հիմքերի յուրացման և այդ ոլորտներում ձեռքբերումների ու առկա հիմնախնդիրների ուսումնասիրման կազմակերպումը.

2. ազգային և համամարդկային մշակութային արժեքների և քաղաքակրթությունների ընդհանրական իմացության ապահովումը.

3. երկու օտար լեզուներով հաղորդակցվելու կարողության ապահովումը.

4. սովորողների մտագործունեության բարձր մակարդակի ապահովումը, իրադարձությունների և երևույթների վերլուծություն կատարելու կարողությունների և հմտությունների ձևավորումը.

5.սովորողների ստեղծագործական երևակայության զարգացման, ինքնուրույն որոշումների կայացման, ինքնագնահատման, ինքնաիրացման, ինքնակատարելագործման, ինքնատիրապետման հմտությունների ձևավորման ապահովումը.

6. սոցիալական հարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու, մարդկանց հետ շփվելու և գործնական, ճկուն փոխհարաբերություններ հաստատելու, հասարակական խմբերում ներգրավվելու կարողությունների և հմտությունների ձևավորման ապահովումը.

7. հաղորդակցական(այդ թվում՝ ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործմամբ) կարողությունների և հմտությունների տիրապետման, քաղաքական մշակույթի պահանջների իմացության ապահովումը.

8. առողջ ապրելակերպի, հոգեկան և ֆիզիկական կատարելության հասնելու կամքի, ինքնազարգացման ունակությունների և հմտությունների ձևավորման ապահովումը.

9. արժեքային վերաբերմունքի և դիրքորոշման ձևավորումը, այդ թվում՝

ա) հետագա ուսման, ապագա մասնագիտության ընտրության հարցում գիտակցված մոտեցումը,

բ) զինծառայության անհրաժեշտության կարևորումը և ընդունումը,

գ) ցանկացած հանրօգուտ աշխատանքի արժևորումը,

դ) ընտանեկան կյանքի կարևորության և ընտանիքի նկատմամբ նվիրվածության գիտակցումը,

ե) սեփական հնարավորությունների և կարողությունների դրսևորման, իր իրավունքների իրացման և արարքների ու գործողությունների համար պատասխանատվություն և կամք ցուցաբերելու գիտակցումն ու կարևորումը:

Ավագ դպրոցը հանրակրթության ավարտական աստիճանն է, որը կոչված է ապահովելու սովորողի գործունեության կազմակերպման, գործառնական գրա-

գիտությունն ու կարողությունները և սոցիալական հարմարունակությունը (ադապտացիան), նպաստելու նրա հասարակական ու քաղաքացիական ինքնորոշմանը:

Ավագ դպրոցի հիմնական խնդիրը յուրաքանչյուր սովորողի և շրջանավարտի ուսումնահետազոտական հմտությունների խորացումը, ինչպես նաև նպատակային պլանավորման և ծրագրման գործունեություն իրականացնելու կարողությունների ձևավորումն է:

Ավագ դպրոցում կրթությունը պետք է նպատակաուղղվի մասնագիտական կրթություն ստանալու կամ ինքնուրույն կյանքի ու գործունեության անցնելու համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Այդ նպատակին հասնելու համար ավագ դպրոցում, ըստ հնարավորությունների, կիրառվում է տարբերակված ուսուցում(ընդհանուր և(կամ) մասնագիտական հոսքով)[265]:

Պետական միջնակարգ հանրակրթական դպրոցներին զուգահեռ հանրապետությունում գործում են առանձին առարկաների (մայրենի լեզվի և գրականության, ռուսաց և օտար լեզուների, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և այլ) խորացված ուսումնասիրման դպրոցներ կամ այդպիսի դասարաններ ունեցող(տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող) դպրոցներ, որտեղ առանձին առարկաներ ուսումնասիրվում են խորացված ծրագրով և շատ ժամաքնակներով՝ պարտադիր ուսումնասիրելով տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագրերով դրանց ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաները, չափորոշիչներով նախատեսված բովանդակային պարտադիր նվազագույնը:

Հանրապետությունում գործում են նաև գիշերօթիկ միջնակարգ հանրակրթական դպրոցներ՝ անապահով ընտանիքների, միայնակ մայրերի, ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների երեխաների համար: Այս դպրոցներում երեխաները ապրում, սովորում և մասնակցում են հանրօգուտ աշխատանքներին:

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն:

Նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթական ծրագիրը իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև, լիցենզիայի առկայության դեպքում, անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում): Ուսուցանվող նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների ցանկը, ինչպես նաև հիմքը (հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր) սահմանում է ԼՂՀ կառավարությունը:

Հայտնի է, որ խորհրդային տարիներին ԼՂԻՄ-ում երիտասարդությանը արտադրության և ժողտնտեսության տարբեր ճյուղերում աշխատանքի նախապատրաստման նպատակով գործում էր ութամյա և միջնակարգ կրթության բազայի վրա, ուսման մեկից մինչև երեք տարի տևողությամբ քաղաքային և գյուղական միջնակարգ պրոֆտեխնիկական և տեխնիկական ուսումնարանների համակարգ: Պրոֆտեխնիկական և տեխնիկական ուսումնարանների սովորողները պրակտի-

կաների ժամանակ կատարած աշխատանքների համար ստանում էին աշխատավարձ, կրթաթոշակ, անվճար սնունդ, հատուկ համազգեստ, կարիքավորներն ապահովվում էին հանրակացարանով: Միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարանները՝ լուծելով որակյալ բանվորական կադրերի պատրաստման խնդիրը, կոչված էին նաև երկրում ընդհանուր միջնակարգ կրթություն իրականացնելուն: «Կրթության մասին» օրենքով ուսումնական հաստատությունների վերոնշյալ տիպերը նախատեսված չլինելու պատճառով դրանք աստիճանաբար սկսեցին մարել և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացվում է ավագ արհեստագործական դպրոցում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ազգային ժողովի կողմից 2006թ. սեպտեմբերի 27-ին ընդունված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքը հնարավորություն է ընձեռում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համակարգի վերականգնման և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացման համար:

Պետությունը պայմաններ է ստեղծում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության և զարգացման համար:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1. քաղաքացիների՝ մասնագիտական կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը,

2. ժամանակակից քաղաքացու ձևավորման, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրության ու զարգացման, աշխատանքի շուկայում մրցունակության և սոցիալական գործունեության ապահովումը,

3. ուսանողի և ունկնդրի մասնագիտական գիտելիքների և հմտությունների համապատասխանության ապահովումը տնտեսության ու աշխատանքի շուկայի պահանջներին,

4. կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդականությունը և շարունակականությունը,

5. արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կառավարման թափանցիկությունն ու կոլեգիալությունը,

6. արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության մատչելիությունը, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների տրամադրման և ներառման միջոցով,

7. ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և վերահսկելիությունը,

8. սոցիալական գործընկերների հետ համագործակցությունը և այլն[266]:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներն են՝

- ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը,

- ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապա-

ռակայնության ապահովումը,

- բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը,

- ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը,

- քաղաքացիների՝ ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված մասնագիտական կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը և այլն:

4. Միջին մասնագիտական կրթության նպատակը առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ **քոլեջներում և ուսումնարաններում,** որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական ու նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթական ծրագրեր: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթությունը կազմակերպվում է հիմնական ընդհանուր և միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթության բազայի վրա, առկա և հեռակա ձևերով, երկուսից հինգ տարի ուսման տևողությամբ: Միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների, ինչպես նաև հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա և հեռակա ձևով ուսուցանվող միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հստատում է ԼՂՀ կառավարությունը: Հանրապետությունում այժմ գործում են շուրջ 5 պետական և 4 մասնավոր(ոչ պետական) մանկավարժական, գյուղատնտեսական, երաժշտական, բժշկական և այլ քոլեջներ ու ուսումնարաններ, որոնք իրականացնում են միջին մասնագիտական կրթական ծրագիր միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթության բազայի վրա և միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ հիմնական ընդհանուր կրթության բազայի վրա՝ զուգակցված միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթության հետ և առանց այդ կրթության զուգակցման:

Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները և դրանց մասնագիտությունները, ինչպես նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների բժշկական մասնագիտությունները պարտադիր անցել են պետական հավատարմագրման գործընթաց, որը պետության կողմից պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումն է: ԼՂՀ ԿԳ նախարարությունում հաստատվել են միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական չափորոշիչներ՝ շրջանավարտների կրթական մակարդակի և որակավորման գնահատման հիմքերը ու կազմակերպվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման գործընթաց:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տված ավարտական փաստաթղթերում՝ դիպլոմում, նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտական հավատարմագրված լինելու փաստը: Եվ այդպիսի ավարտական փաստաթուղթը պարտադիր պայման է հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու, պետական մարմիններում և բյուջետային հիմնարկներում աշխատանքի անցնելու համար:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաև հասարակական հավատարմագրում, որը հասարակա-

կան հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին և պահանջներին մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության որակական չափանիշների համապատասխանության ճանաչումն է:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին հնարավորություն է ընձեռվում կրթությունը շարունակելու բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությունների բարձր կուրսերում:

5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

Ըստ ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2005թ. մայիսի 25-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի[267], բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերապատրաստումն է, միջնակարգ (լրիվ) ընդհանուր և միջին մասնագիտական (միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ապահովող) կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը:

Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերի ձևով (առկա, հեռակա, դրսեկություն), կազմակերպահրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ: ՀՀ-ում սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորման աստիճանները: Բարձրագույն մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման աստիճանին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 16-ի «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» որոշմամբ հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչով: Չափորոշիչի պահանջների պահպանումը պարտադիր է ՀՀ-ում գործող բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Օրենքը «բակալավրի» որակավորմամբ մասնագետների ուսուցման համար սահմանում է ուսման առնվազն չորս, «դիպլոմավորված մասնագետի» համար՝ առնվազն հինգ, «մագիստրոսի» համար՝ առնվազն մեկ տարի: Բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագիրը յուրաքանչյուր մասնագիտության գծով սահմանում է ուսումնասիրվող առարկաների անվանացանկը՝ ըստ սովորողների ուսումնառության կազմակերպման տեսակների՝ դասախոսություն, սեմինար պարապմունք, լաբորատոր և գործնական աշխատանք, ինչպես նաև ուսումնական և արտադրական պրակտիկաները և ինքնուրույն ու անհատական աշխատանքները: Հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը ապահովում է մասնագիտական առարկայական չափորոշիչներով նախատեսված՝ համաշխարհային մարդկային համարժեք ընդհանուր և մասնագիտական գիտելիքներով օժտված անձի, հասարակության կատարելագործման և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող հայ անհատի ու քաղաքացու ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը, սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը: Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչը սահմանում է բարձրագույն մասնագիտական ուսումնական

հաստատության սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, կրթական ծրագրի բովանդակային պարտադիր նվազագույնը և բարձրագույն կրթությամբ շրջանավարտներին ներկայացվող որակական (ընդհանուր) պահանջները:

ԼՂ Հանրապետությունում գործում են բարձրագույն մասնագիտության պետական և ոչ պետական բուհեր: Համալսարան՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը իր բնույթին համապատասխան և օրենքով սահմանված կարգով կրթության պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցված մասնագիտությունների գծով կարող է իրականացնել նաև հանրակրթական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Օրինակ՝«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանը և Շուշիի տեխնոլոգիական համալսարանը իրականացնում են միջնակարգ(լրիվ ընդհանուր), միջին մասնագիտական(քոլեջ), բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր:

ԼՂՀ-ում հետբուհական կրթության(մագիստրատուրա և ասպիրանտուրա) նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է: Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- մարդու և քաղաքացու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը,
- կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդականությունը և շարունակականությունը,
- մրցունակությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը,
- եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանների համատեղելիությունը և դիպլոմների ճանաչելիության ապահովումը,
- ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը,
- հայազգի օտարերկրյա քաղաքացիների (սփյուռքի համար), ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագիտական պատրաստումը և որակավորման բարձրացումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են.

- պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստմանն աջակցելը,
- միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստելը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը միջազգային ասպարեզում,
- Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում ուսուցման որակի ներքին(ներբուհական) ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային(եվրոպական) չափանիշների ներդրումը,
- հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:

6. Լրացուցիչ կրթություն, այդ թվում՝ արտադպրոցական կրթություն (դաստիարակություն):

Լրացուցիչ կրթություն՝ արտադպրոցական դաստիարակություն իրականացնող համակարգը ներառում է մարզական, գեղագիտական, մանկապատանեկան և տեխնիկական ստեղծագործական դպրոցներ և կենտրոններ:

Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են քաղաքացիների և հասարակության կրթական պահանջմունքների բավարարման նպատակով: Մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում լրացուցիչ կրթության հիմնական խնդիրն անձի մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն է: Լրացուցիչ կրթությունն իրականացվում է հանրակրթական, մասնագիտական, լրացուցիչ կրթության ուսումնական և արտադասարանական դաստիարակության հաստատություններում, ինչպես նաև անհատական մանկավարժական գործունեության միջոցով:

ԼՂՀ կառավարության որոշումներով տարբեր կրթական ծրագրեր իրականացնելու իրավունք է վերապահվել մի շարք ոչ ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների: Դրանցից որոշները, ապահովելով կրթական գործունեության լիցենզիայի պայմանները և պահանջները, Կրթության և գիտության նախարարության կողմից ստացել են կրթական գործունության լիցենզիա և իրականացնում են կրթական գործունեություն:

2. Հայաստանի և Արցախի Հանրապետության կրթության համակարգի միասնական կառավարման գործառույթների, սկզբունքների ու մեթոդների գիտամանկավարժական վերլուծությունը

Հայաստանի և Արցախի անկախացման ժամանակաշրջանում քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքում կատարված վերափոխումները, անցումը շուկայական տնտեսության և ժողովրդավարական հասարակության, իրենց ուղղակի ու անմիջական ազդեցությունն ունեցան հասարակության մյուս կառույցների, այդ թվում՝ կրթության համակարգի գործունեության վրա: Կրթության համակարգի հետագա զարգացումն առանց վերափոխման անհնար է: Հասարակության անդամին, նրա կրթական և մասնագիտական գործունեությանը նոր պահանջներ են ներկայացվում: Այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջացել վերանայել կրթության համակարգի գործունեությունը և նրա կառավարումը սո-

ցիալ-մշակութային նոր պայմաններում: Այսօր պետական և ազգային կարևորագույն խնդիր են համարվում կրթության համակարգի պահպանումը և զարգացումը, գիտական կառավարումը, միջազգային չափանիշներին նրա համապատասխանեցումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը[268]:

Կրթության համակարգի կառավարման գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների առաքելությունն է՝ ապահովել և պաշտպանել ՀՀ և Արցախի Հանրապետության սահմանադրություններով և «Կրթության մասին» օրենքով[269] սահմանված՝ ՀՀ և Արցախի Հանրապետության քաղաքացիների կրթության իրավունքի իրականացումը՝ ձևավորելով համակողմանի և ներդաշնակ զարգացած, սոցիալապես գործուն քաղաքացիական ինքնագիտակցություն ունեցող հայրենասեր սերունդ: Կրթության համակարգի կառավարումը ենթադրում է ռազմավարության, մարտավարության մշակում՝ հիմնված ազգային կրթական ավանդույթների վրա: Կրթությունը ստեղծում է միջավայր, որում պահպանվում և փոխանցվում են ժողովրդի մշակութային ժառանգությունը, փորձն ու արժեքները, ձևավորվում է ազգային ինքնագիտակցություն:

Որպես պետական և հասարակական կառույց, կրթության համակարգը ենթադրում է կառավարման որոշակի օրինաչափությունների, ձևերի առկայություն:

Կառավարման համեմատ՝ ղեկավարումն ավելի լայն բովանդակություն ունի: Ղեկավարումը լուծում է ռազմավարական, իսկ կառավարումը՝ մարտավարական խնդիրներ: Կառավարումն օբյեկտիվորեն պայմանավորված երևույթ է, որը կյանքի է կոչված համակարգի գործունեության օրինաչափություններով և փոխադարձ կապերով, այսինքն՝ կառավարումը տարբեր բնույթի կազմակերպվածության համակարգերի գործառույթն է, որն ապահովում է նրանց որոշակի կառուցվածքի գործունեության ռեժիմի պահպանումը, նրանց ծրագրերի և նպատակների իրագործումը[270]:

Քանի որ կառավարման գործընթացում կառավարվող և ղեկավարվող ենթահամակարգերը նպատակաուղղված և պլանավորված ձևով փոխազդում են, կարող ենք ասել, որ կառավարումը կառավարող և կառավարվող համակարգերի նպատակաուղղված համագործակցությունն է օպտիմալ արդյունքների հասնելու նպատակով:

Այսպիսով՝ կրթական համակարգի կառավարումը նպատակաուղղված, կազմակերպող, կարգավորող ներգործությունն է իր համակարգաստեղծ տարրերի գործունեության վրա:

Կրթական համակարգի կառավարումը կոչված է ապահովելու կառավարվող օբյեկտներում իրականացվող գործընթացների նպատակաուղղվածությունն ու կազմակերպվածությունը: Համակարգի կառավարման նպատակները կարող են իրականացվել հատուկ կառավարչական այնպիսի խնդիրների լուծման միջոցով, ինչպիսիք են ենթահամակարգերի հետ կապված նպատակների, բարեփոխումների ծրագրերի, պլանների իրականացումը, պարտավորությունների և պարտականությունների բաշխումը համակարգի և ենթահամակարգերի միջև, նրանց գործառության համար անհրաժեշտ ֆինանսատնտեսական պայմանների ստեղծումը, համընդհանուր արժեքների ձևավորումը, աշխատանքների ընթացքի վերահսկումը:

ՀՀ և Արցախի Հանրապետության կրթության կառավարման հիմնական նպատակն է[271] կառավարման ենթահամակարգերի ուսումնասիրության հիման վրա հասնել նրանց աշխատանքի այնպիսի կազմակերպման, այդ ենթահամակարգե-

րի ներսում տարրերի այնպիսի փոխկապակցվածության և արտաքին միջավայրի հետ այնպիսի փոխազդեցության կառուցմանը, որ այդ ենթահամակարգերի գործունեության արդյունքները լինեն լավագույնը, հանգեցնեն գործունեության նպատակին:

ՀՀ և Արցախի ԿԳ նախարարությունները, մարզային, շրջանային և համայնքային կրթության բաժիններն իրագործում են միասնական կրթության համակարգի կառավարումը: Կառավարման կենտրոնական մարմինները մշակում են շարունակական կրթության հայեցակարգը և զարգացման ռազմավարությունը: Կառավարման բովանդակությունն արտացոլվում է կառավարման գործառույթներում, սկզբունքներում ու մեթոդներում: Ելնելով վերոգրյալից, գիտական գրականության ուսումնասիրության հիման վրա փորձենք տալ հիմնահարցի գիտամանկավարժական վերլուծությունը:

Հենվելով կրթության համակարգի, այդ թվում նաև դպրոցի կառավարման մեթոդաբանության տեսական մշակումների հիմնական դրույթների(Յու.Վ.Վասիլև, Վ.Պ.Զինչենկո, Վ.Ս.Լոզին և ուրիշներ), մանկավարժական կառավարման գործընթացը հետազոտողների եզրակացությունների (Յու.Կոնարժեվսկի, Վ.Ս.Լազարև), ինչպես նաև ժողովրդական կրթության համակարգի կառավարման հիմունքները հետազոտողների(Ս.Մովսիսյան, Լ.Ասատրյան, Ա.Կարապետյան, Մ.Ասատրյան և ուրիշներ) դրույթների և ժամանակակից կրթության կառավարման հայեցակարգերի վրա, փորձենք պարզաբանել «գործառույթ» հասկացության մասին տարբեր կարծիքները, կառավարման գործառույթների տեսակները, գործընթացը և դիտարկել նաև մեր եզրահանգումները:

Գիտական գրականության մեջ «գործառույթ» հասկացությունը մեկնաբանվում է որպես գործունեության տեսակ կամ պարտականություն, մի մասը՝ գործունեության շրջանակ: Ելնելով կառավարման վերաբերյալ տեսությունների վերլուծությունից, պրոֆեսոր Լ.Ասատրյանը նշում է, որ «գործառույթ» ասելով պատկերացնում ենք գործողությունների այն ամբողջությունը, որն իր մեջ բովանդակում է կառավարչական գործունեության որևէ տեսակ և լուծվում են այդ գործունեության որոշակի խնդիրները[272]:

Գրականության վերլուծությունը հնարավորություն է տալիս կառավարման գործառույթներից առանձնացնել հետևյալ տեսակները՝ պլանավորման, կանխատեսման, կազմակերպման, վերահսկողության, կառավարման համակարգման (կորդինացման), վերլուծության և այլն:

Օրինակ՝ մանկավարժագետ Վ.Պ.Սերգեևան[273] նշում է կառավարչական չորս գործառույթներ՝

- վերլուծություն,
- նպատակադրություն և պլանավորում,
- կազամակերպական գործունեություն,
- վերահսկում և կարգավորում:

Ըստ նրա, յուրաքանչյուր գործառույթի իրականացման արդյունքում լուծվում է որևէ կառավարչական խնդիր որոշակի ժամանակահատվածում և տեղում իրական հնարավորությունների պարագայում:

Մանկավարժագետ Լ.Ասատրյանի[274] կարծիքով՝ կառավարման գործառույթներն են՝

- կանխատեսման,
- պլանավորման,

- վարչական կազմակերպական,
- կազմակերպման,
- վերլուծման,
- կոորդինացման,
- կարգավորման,
- հաղորդակցման,
- վերահսկման և այլն:

Առանձնացվող վերոնշյալ գործառույթների բազմազանությունը պայմանավորված է նրանով, որ կախված կառավարվող օբյեկտների առանձնահատկություններից՝ նրանց հանդեպ կարող են իրականացվել տարբեր կառավարչական գործողություններ:Բացի դրանից, բարդ գործառույթների իրականացումը՝ պլանավորումը, կազմակերպումը, համակարգումը, վերահսկողությունը, ղեկավարումը իրականացվում են մի շարք գործողությունների կատարման միջոցով, որոնք նույնպես համարվում են գործառույթներ:

Օրինակ՝ հանրակրթական դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում զարգացման պլանավորումը պահանջում է վերլուծություն, կանխատեսում, գնահատում, որոշումների ընդունում: Վերահսկողության գործառույթը կարող է ներառել հաշվետվության գնահատման, որոշումների ընդունման գուծառույթներ:

Կախված կառավարման յուրաքանչյուր օղակի գործառական(ֆունկցիոնալ) պարտականություններից՝ կառավարման գործառույթները տարբեր բովանդակություն ունեն:

Ըստ մեր վերլուծությունների՝ կարելի է ենթադրել, որ պլանավորման գործառույթը հիմք է հանդիսանում կառավարման մյուս գործառույթների իրականացման համար: Ցանկացած պլանավորում հիմնված է այն համոզման վրա, որ ապագան կարելի է բարելավել միայն ներկայում համապատասխան փոփոխություն կատարելով: Պլանավորման գործառույթը ենթադրում է կրթության համակարգի, ուսումնական հաստատության նպատակների և այդ նպատակներին հասնելու մեթոդների, ձևերի ու միջոցների արդյունավետ ընտրություն[275]: Կրթության համակարգի արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայման է հիմնավորված և հեռանկարային նպատակների առկայությունը: Պլանավորումը կատարվում է ըստ բովանդակության և ըստ ժամանակի: Ըստ բովանդակության պլանավորմամբ սահմանվում են յուրաքանչյուր ենթահամակարգի գործունեության խնդիրները: Ժամանակային պլանավորմամբ որոշվում են այդ խնդիրների իրականացման ժամկետներն ու հաջորդականությունը:

Պլանավորման գործառույթը իրականացնելիս նախ անհրաժեշտ է որոշել, թե ինչպիսի վիճակում է գտնվում կառավարվող համակարգը, որոշվում են գործունեության նպատակները՝ հաշվի առնելով հնարավոր խոչընդոտներն ու արգելքները: Համաձայնեցվում են ընթացիկ պլանավորումն ու հեռանկարային կանխատեսումները: Պլանավորման միջոցով համակարգը կարողանում է հարմարվել արտաքին միջավայրի փոփոխական իրավիճակին:

Համակարգային մոտեցումն ապահովում է հեռանկարային կանխատեսման և ընթացիկ պլանավորման համատեղումը, կանխատեսումների և պլանների համաձայնեցումը կառավարման բոլոր մակարդակներում:

Անհրաժեշտ է, որպեսզի նպատակները լինեն որոշակի, իրական և հասանելի՝ նախատեսելով միջավարի հնարավոր փոփոխությունները: Լինելով որոշակի՝

նպատակը միաժամանակ կատարողին այդ նպատակի իրականացման ուղիների ընտրության ազատություն պետք է ընձեռի՝ խթանելով, ակտիվացնելով նրա գործունեությունը: Կրթության համակարգում յուրաքանչյուր որակ ունի իրեն բնորոշ նպատակներ, որոնք բխում են կրթության ընդհանուր նպատակից և կապված են միմյանց:

Դիտարկումները ցույց են տվել, որ ՀՀ և Արցախի կրթության և գիտության նախարարությունները կազմել են զարգացման հեռանկարային ծրագրեր, որոնցում վերլուծվում են կրթության համակարգի յուրաքանչյուր որակի առկա վիճակը և հիմնախնդիրները: Զարգացման ծրագրում նշվում են կրթության համակարգի զարգացման միտումները, բարեփոխումների ուղղությունները: Մասնավորեցվում են նպատակները, խնդիրները, դրանց իրականացման ժամկետները և ծրագրի ֆինանսական ապահովման հետ կապված խնդիրները: Կրթության նախարարությունը պարբերաբար տեղեկացվում է կառավարման յուրաքանչյուր օղակի ընթացիկ գործունեության մասին, պայմաններ է ստեղծում, որպեսզի յուրաքանչյուր օղակ, առաջնորդվելով ընդհանուր ծրագրով, պլանավորի իր գործունեությունը:

Ինչպես նշվել է, ուսումնական հաստատությունների առջև դրված նպատակները պետք է համապատասխանեն պետության կրթական քաղաքականությանը: Ն.Ա.Զայցևան նշում է, որ յուրաքանչյուր ուսումնական հաստատության ղեկավարություն սահմանում է նպատակներ՝ կապված սովորողների առանձնահատկությունների, տվյալ տեղամասի բնակչության պահանջմունքների, կենսագործունեության, մշակութային մակարդակի հետ[276]:

Ուսումնասիրություններից[277] պարզվում է, որ դպրոցներում, ուսումնական հաստատություններում կազմվում և հաստատվում է զարգացման պլան, որն իր մեջ ներառում է նախատեսված ժամանակամիջոցում դպրոցի, ուսումնական հաստատության խնդիրները, սովորողների հնարավոր քանակը, մանկավարժական նորարարությունների ներդրման հեռանկարները, մանկավարժական կադրերի պահանջը, մանկավարժական կադրերի որակավորման խնդիրները, նյութատեղնիկական հիմքի համալրման հարցերը, մանկավարժների ու սովորողների սոցիալական պաշտպանվածության հարցերը և այլն: Կազմվում են մոտակա, միջակա և հեռանկարային պլաններ: Մշակվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանին համապատասխան բյուջե: Կազմվում են նաև ընթացիկ պլաններ յուրաքանչյուր ուսումնական տարվա և քառորդի համար:

Պլանավորման գործառույթը ենթադրում է նաև կանխատեսում: Այն կառավարման կարևորագույն գործառույթներից է: Նրա շնորհիվ են կանխատեսվում կրթության համակարգի զարգացման և կառավարման ոլորտների բոլոր փոփոխությունները, բարեփոխումները, ռազմավարության նախագծումը՝ կապված հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական պայմանների հետ: Կրթության համակարգը պետք է կարողանա ոչ միայն արագ և արդյունավետ արձագանքել արտաքին միջավայրի փոփոխություններին, այլև կանխատեսել այդ փոփոխությունների միտումները: Հանրակրթության ոլորտում իր աշխատանքները պլանավորում է ոչ միայն ղեկավարը, այլև կոլեկտիվի յուրաքանչյուր աշխատող: Կոնկրետ գործունեությունը սկսվում է իրականացվել կազմակերպման գործառույթով:

Կազմակերպումը կառավարող և կառավարվող ենթահամակարգերի պարտականությունների և իրավունքների փոխհամաձայնեցված համակարգի կառու-

ցումն է: Այս գործառույթը հատուկ է յուրաքանչյուր կառավարման համակարգի և իրականում հանդես է գալիս որպես նրա որակական հատկություն: Կազմակերպական գործառույթի կատարման ընթացքում որոշվում է, թե ով պետք է կատարի կոնկրետ աշխատանքը, տրվում են առաջադրանքներ և լիազորություններ:Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ առանց կազմակերպման անհնար է կառավարել հանրակրթական համակարգը և նրա կառուցվածքային մասերը: Այդ առումով կազմակերպումը հանդես է գալիս որպես յուրաքանչյուր կառավարման համակարգի գործունեության հիմնարար պայման: Այս գործառույթն է որոշում, թե ում հետ, ինչ պայմաններում, ինչ պարտականություններ ունի համակարգը, որոնց իրականացման արդյունքում լուծվում է խնդիրը:

Ուսումնասիրելով ԼՂՀ ԿԳ նախարարության հաշվետվությունները, համապատասխան փաստաթղթերը, նկատել ենք, որ ԼՂՀ ԿԳ նախարարությունը կազմակերպում է տեղեկատվական փոխազդեցությունը կառավարման տարբեր օղակների միջև, հասարակությանը մշտապես տեղեկացնում կրթության համակարգի վիճակի, ծառացած խնդիրների, զարգացման միտումների մասին: Կառավարման այդ օղակն է կազմակերպում կրթության ոլորտի ֆինանսավորման, նյութատեխնիկական և կադրային ապահովման, կադրերի որակավորման բարձրացման և վերավորակավորման աշխատանքները: Մեր համոզմամբ, կազմակերպման գործառույթի ճիշտ իրականացման համար մեծ նշանակություն ունեն ղեկավարի հոգեբանական, մասնագիտական որակները, հաղորդակցման մշակույթը, նրա գործունեությունը ղեկավարի դերում և ազդեցությունը առանձին մարդկանց ու խմբերի գործունեության վրա: Այս տեսակետից յուրաքանչյուր ուսումնական հաստատության ղեկավար պետք է կարողանա ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնցում աշխատակցի պահանջմունքների բավարարումը կհանգեցնի առաջադրված նպատակների իրականացմանը:

Կազմակերպական գործառույթի իրականացումը նաև ենթադրում է գիտակցորեն կազմակերպված այնպիսի գործունեություն, որը պայմանավորված կերպով առաջադրում է կոնկրետ նպատակներ և կիրառում նրան հասնելու տարբեր միջոցներ: Հենց կառավարչական գործողությունների կարգավորումն ու կազմակերպումն է, որ կառավարման համակարգին տալիս է որակական որոշակիություն, թույլատրում նրա կառուցվածքային մասերի միջև պահպանել անհրաժեշտ հավասարակշռություն, ապահովում ինչպես ամբողջ համակարգի, այնպես էլ բաղադրամասերի նպատակաուղղված գործունեությունը:

Ուսումնական հաստատություններում, դպրոցներում կազմակերպական գործառույթի իրականացումը պայմանավորված է այնպիսի խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են ուսումնադաստիարակչական իննովացիոն(նորարար) գործընթացների արդի խնդիրները՝ վերահսկման և ստուգման իրականացումը, կադրերի վերավորակավորումը, դասագրքերի, մեթոդական գրականության տպագրությունը, տեղեկատվության ապահովումը և այլն: Կառավարման համակարգում կազմակերպական գործառույթի կարևոր նշանակությունն այն է, որ այն՝

- հաստատում է կառուցվածքային բաղադրամասերի միջև փոխադարձ կապն ու կարգը,
- ապահովում է յուրաքանչյուր մասի գործունեությունը առանձին և համակարգինը՝ որպես մեկ ամբողջություն,
- թույլ է տալիս առավել արդյունավետ օգտագործել սուբյեկտի կառավարչական ներգործության որակական առանձնահատկությունները և յուրահատկու-

թյունը օբյեկտների գործունեության վրա,

• ամուր հիմք է ծառայում ներդպրոցական կառավարման և նոր որակի անցման համար՝ դառնալով ուսումնադաստիարակչական գործընթացի ղեկավարման գլխավոր լծակը:

Կրթական հաստատություններում կազմակերպման գործառույթը ենթադրում է նաև ընդունված որոշումների իրականացում կոնկրետ մարդկանց՝ ուսուցիչների, սովորողների, ծնողների և հասարակության ներկայացուցիչների կողմից: Յուրաքանչյուր աշխատակցի գործունեության մեջ առկա է կազմակերպչական որոշակի բաղադրամաս: Կազմակերպական գործառույթն ընկած է մյուս բոլոր գործառույթների հիմքում, քանի որ դրանցից յուրաքանչյուրի համար որոշակի աշխատանքներ են կազմակերպվում:

Կրթական համակարգի գործառույթներից է վերահսկողությունը, որը մշտապես ուղեկցում է ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացմանը, սովորողների գործունեությանը, նրանց անձի և կոլեկտիվի ձևավորման գործընթացներին: Ուսումնական հաստատություններում, դպրոցներում վերահսկման միջոցով բացահայտվում են կառավարման գործընթացում թույլ տրված բացթողումներն ու սխալները, նպատակի և ստացված արդյունքի միջև տարբերությունները, վեր են հանվում դրանց առաջացման պատճառներն ու պայմանները: Վերահսկողությունը պարբերաբար իրականացվում է կառավարման գործընթացի բոլոր փուլերում: Որպեսզի վերահսկողությունը գործուն և արդյունավետ լինի, այն պետք է ակտիվ լինի: Անհրաժեշտ է, որպեսզի վերահսկողության պարբերականությունն այնպիսին լինի, որ թույլ չտա առաջ եկած շեղումների հետագա զարգացումը: Վերահսկողության միջոցով կարելի է կանխատեսել և կանխել հնարավոր շեղումները մինչև դրանց ի հայտ գալը:

Վ.Ա.Ռյազանովան[278] նշում է, որ կրթական համակարգում կիրառվում են վերահսկողության բազմազան տեսակներ՝ նախնական, ընթացիկ, ընդհանրացնող, անձնական, համընդհանուր, պետական և եզրափակիչ վերահսկողություն: Նախնական վերահսկողությունը վերաբերում է նյութական, ֆինանսական պաշարներին և մարդկային ներուժին: Նախնական վերահսկողությունը թույլ է տալիս կանխատեսել սխալներն ու շեղումները: Ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է ենթահամակարգերի գործունեության ընթացքում: Այն թույլ է տալիս և գնահատել դրանց գործունեությունը, և սխալների դեպքում անհապաղ ուղղումներ կատարել: Ընդհանրացնող վերահսկողությունն իրականացվում է գործունեության ծավալուն փուլերի ավարտից հետո: Անձնական վերահսկողությունը ուսումնական հաստատության տարբեր օղակներում մանկավարժական կադրերից որևէ մեկի (հանրակրթության ոլորտում որևիցե մեկ դպրոցի ղեկավարի) աշխատանքի համալիր ստուգումն է: Այն իրականացվում է պլանային կարգով, որպեսզի գնահատվի ուսուցչի (դպրոցում՝ տնօրենի) կողմից իր պարտականությունների կատարումը, բացահայտվեն ձեռքբերումներն ու թերությունները և նպաստի սխալների վերացմանը և ունենա խթանիչ ազդեցություն: Համընդհանուր վերահսկողությունն անցկացման ձևով համարվում է համալիր ընդհանրացնող: Այն նախատեսում է կրթության և գիտության նախարարության ենթահամակարգերի, կրթական հաստատությունների կոլեկտիվների կատարած աշխատանքի բազմակողմանի ստուգում, թերությունների բացահայտում և հետագայում նրա վերացման ուղիների մշակում: Պետական վերահսկողությունը կրթական համակարգում իրականացվում է ուսուցիչ-աշակերտ, դպրոցի ղեկավարներ-ուսուցիչ-

ներ, կրթության բաժին-դպրոցի ղեկավարներ, ուսուցիչներ, ԿԳ նախարարություն-շրջժողկրթբաժին-քաղժողկրթբաժին-դպրոցներ հարաբերակցություններով: Սա նշանակում է, որ ուսուցիչը վերահսկում է աշակերտներին, դպրոցի ղեկավարները՝ ուսուցիչներին, ժողկրթբաժինը՝ դպրոցների ղեկավարներին և ուսուցիչներին, ԿԳ նախարարությունը՝ ժողկրթբաժինների գործունեությունը: Եզրափակիչ վերահսկողությունը կրթական համակարգում իրականացվում է, երբ հանրակրթության բոլոր օղակներում աշխատանքները կատարված են ուսումնական տարվա վերջին: Եզրափակիչ վերահսկողության իմաստը այն է, որ պարզվի նպատակին հասնելու աստիճանը, հավաքվեն անհրաժեշտ տեղեկություններ՝ հետագայում աշխատանքներն էլ ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Կրթության և գիտության նախարարությունը վերահսկում է կառավարվող ենթահամակարգերի գործունեությունը՝ խթանելով դրանց ինքնահսկողությունը, պատասխանատվություն կրելով թե իր և թե ենթահամակարգերի գործունեության համար: Կրթության և գիտության նախարարությունը վերահսկում է պետական չափորոշիչների և կրթական ծրագրերի իրականացման աստիճանն ու որակը, սովորողների առաջադիմության մակարդակը, կրթական հաստատությունների ֆինանսական գործունեությունը, ընտանիքի և հասարակության համատեղ աշխատանքի արդյունավետությունը և այլն: Կառավարման այս օղակն է մշակում և հաստատում կրթական ցուցանիշները, որոնք թույլ են տալիս վերահսկել կրթության համակարգի գործունեությունը: Կրթական ցուցանիշներն անհրաժեշտ են կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները գնահատելու համար: Կրթության նախարարությունը վերահսկման միջոցով միաժամանակ բացահայտում է կրթական համակարգում առկա բացթողումներն ու սխալները, վերլուծում դրանք, վեր հանում դրանց առաջացման պատճառներն ու պայմանները: Միջոցներ են ձեռնարկվում կրթության համակարգի հետագա զարգացումն ապահովելու համար:

Ի մի բերելով վերոշարադրյալը, նշենք, որ կառավարման գործառույթներն իրականացվում են պարբերաբար կամ անհրաժեշտության ծագման դեպքում: Որոշակի գործառույթի կատարման յուրաքանչյուր ձեռնարկման դեպքում լուծվում է կառավարչական խնդիրը: Բացի այդ, կառավարման գործառույթի և կառավարչական խնդրի միջև էական տարբերություն կա: Գործառույթի բովանդակությունը որոշվում է միայն նրանով, որ պետք է արվի այն, ինչ պահանջվում է, իսկ խնդրի բովանդակությունը դրանից զատ ներառում է նաև պայմաններ, որոնց առկայությամբ իրականացվում է գործառույթը տվյալ ժամանակ և տվյալ տեղում (ինչ է հանձնարարված): Այսինքն՝ կառավարման խնդիրը որոշակի ժամանակահատվածում և որոշակի տեղում որևէ կառավարչական գործառույթի իրականացման համար պահանջվածի և դրա համար առկա հնարավորությունների (պայմանների) հարաբերակցությունն է:

Կառավարման գործառույթների վերլուծությունից հետևում է, որ դրանք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, լրացնում են մեկը մյուսին: Օրինակ, պլանավորման գործառույթը լայն իմաստով իր մեջ ներառում է նպատակների մշակում, կանխատեսում, աշխատանքների իրականացման կազմակերպում և այլն: Կառավարման տեսության մեջ վերահսկողությունը դիտարկվում է որպես պլանավորման գործառույթի բաղադրամաս, որովհետև վերահսկողությունն առանց պլանի անհնար է, և պլանը, որը հետագայում չի ամրակայվում վերահսկողությամբ, ձևական բնույթ է կրում: Պլանավորումը իր մեջ ներառում է կառա-

վարման բոլոր գործառույթները և հանդես է գալիս որպես դրանց անհրաժեշտ բաղադրամաս՝ կառավարմանը տալով կազմակերպվածության անհրաժեշտ աստիճան:

Այսպիսով, ՀՀ-ում և Արցախում անցումնային շրջանում մեծ կարևորություն է ստացել կրթության համակարգի կայունությունն ու զարգացումն ապահովելու խնդիրը, քանզի տնտեսական ու քաղաքական շրջադարձների հետևանքով ազգի հոգևոր կյանքում կայունությունն ու շարունակականությունը պահպանվում են կրթության համակարգի արդյունավետ գործունեության միջոցով: Կրթության բնագավառում ներդրումը տնտեսական հասարակական գործընթացի գրավականն է: Կառավարման համակարգի առջև դրված խնդիրները ճիշտ լուծում կստանան, եթե կառավարվող համակարգը և յուրաքանչյուր ենթակա համակարգ լիովին իրականացնեն իրենց գործառույթները՝ նպաստելով կրթական համակարգի զարգացմանը: Անհրաժեշտ է, որ ոչ միայն ԿԳ նախարարությունը, այլև կրթության համայնքային, շրջանային և մարզային բաժինները, ուսումնական հաստատությունները կարողանան արդյունավետ լուծել առկա խնդիրները: Հետևաբար, կառավարման գործառույթների ճշգրիտ և լրիվ կառավարումը հնարավորություն կտա ապահովել ողջ կրթական համակարգի առաջընթացն ու զարգացումը:

Կրթական համակարգի միասնական կառավարման վերոնշյալ գործառույթների հետ սերտորեն կապված են կառավարման ելակետային դրույթները՝ սկզբունքներ, որոնք ունեն և օբյեկտիվ, և սուբյեկտիվ բնույթ, ինչը ղեկավարից պահանջում է լուրջ, կշռադատված վերաբերմունք նրա նկատմամբ, որպես գործողության ղեկավարություն:

Մանկավարժական գրականության և այլ փաստաթղթերի համակողմանի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում վերլուծաբար ներկայացնել նաև կրթական համակարգի կառավարման սկզբունքները: Մանկավարժագետ Վ.Պ.Սերգեևան իրավացիորեն նշում է, որ «Կառավարման սկզբունքները կառավարչական գործառույթների իրագործման հիմնարար գաղափարն է. սկզբունքները կառավարման օրինաչափությունների արտացոլումն են»[279]: Անդրադառնալով հիմնահարցի քննարկմանը, պրոֆեսոր Լ.Ասատրյանը բնորոշում է, որ դպրոցի կառավարման մեջ «սկզբունք» ասելով պետք է հասկանալ այն ընդհանուր դրույթը, որը կրթության և դաստիարակության նպատակի իրականացման ելակետն է, կազմում է կառավարման գործողությունների ու ընդհանուր համակարգի հիմքը և որին հետևելով ավելի արդյունավետ է դառնում կառավարման գործընթացը[280]:

Գիտական գրականության ուսումնասիրումը ցույց տվեց, որ մանկավարժ գիտնականները կառավարման սկզբունքների դասակարգման վերաբերյալ տարբեր մոտեցումներ ունեն: Այսպես, օրինակ, Վ.Սերգեևան նշում է կրթական համակարգի կառավարման չորս սկզբունքներ՝

- մանկավարժական համակարգի կառավարման ժողովրդավարացում և մարդասիրական մոտեցում,
- կառավարման մեջ համակարգվածություն և ամբողջականություն,
- կենտրոնացման և ապակենտրոնացման լավագույն համադրում,
- Կառավարման գիտական հիմնավորում[281]:

Պրոֆեսոր Ն.Հարությունյանը գտնում է, որ կրթական հաստատության կառավարման սկզբունքների թվին պետք է դասել՝

- թափանցիկության կամ բաց լինելու սկզբունք,
- ամբողջականության,
- կոլեգիալ որոշումներ ընդունելու,
- մշակութահարմարության,
- ինքնորոշման,
- ուղղորդման,
- անընդհատության,
- բազմազանության,
- հեռանկարով կողմնորոշման,
- արդյունավետության,
- նորարարության և այլն[282]:

Լ.Ասատրյանի բնորոշմամբ, դպրոցի կառավարման համակարգում իրականացվում են ժողովրդավարացման, մարդասիրական, գործողությունների համաձայնեցվածության, մանկավարժական կոլեկտիվի հաստատուն կազմի, գիտականության, նպատակաուղղվածության և պլանայնության, բացահայտության, կոլեկտիվիզմի սկզբունքները[283]: Մենք համամիտ ենք վերը նշված հեղինակների հետ գիտականորեն հինավորված տեսակների հարցում, սակայն ընդհանրացնելով կրթության կառավարման համակարգի սկզբունքների դասակարգման վերաբերյալ տարբեր մոտեցումները՝ ՀՀ և Արցախի հանրակրթության ոլորտը հաջողությամբ կառավարելու տեսանկյունից մեր կողմից կարևորվել և վերլուծվել են ներքոբերյալ սկզբունքները՝

- հումանիստական և ժողովրդավարական սկզբունք,
- գործընթացային ուղղվածության սկզբունք,
- համակարգայնության և ամբողջականության սկզբունք,
- նպատակաուղղվածության և պլանայնության սկզբունք,
- կրթական հաստատության գործունեության բոլոր ուղղությունների անընդհատ կատարելագործման սկզբունք,
- միանձնյա և կոլեգիալ որոշումների փոխկապակցվածության սկզբունք,
- գիտականության և գիտական նվաճումների մանկավարժական առաջավոր փորձի ներդրման սկզբունք,
- փաստերի հիման վրա որոշումների ընդունման սկզբունք,
- կրթական հաստատությունների հետ գործընկերային հարաբերությունների պահպանման սկզբունք և այլն:

Վերոնշյալ կառավարման սկզբունքները ճկուն են և փոփոխական՝ կապված կառավարման համակարգի կազմակերպության կառուցվածքի տեսակի, նպատակների, գործողությունների, կոլեկտիվի կազմի և այլ հանգամանքների հետ: Անշուշտ, նշված և մեր կողմից առաջարկված կառավարման սկզբունքները բխում են ՀՀ և Արցախի Հանրապետության կրթական քաղաքականությունից և պայմանավորված են դպրոցի, ուսումնական հաստատության յուրահատկությամբ:

Ըստ Վ.Ս.Լազարևի տեսակետի[284], ժողովրդավարական սկզբունքը սերտորեն կապված է հումանիստական սկզբունքի հետ և միմյանց տարանջատել երբեմն հնարավոր չէ: 20-րդ դարի ականավոր գրող, մանկավարժ Յանոշ Կորչակը (Հենրիկ Հոլդշմիթը) մատնանշում է, որ մարդասիրական սկզբունքները կկայանան իբրև կրթության գործընթացը կառավարող արդյունավետ երաշխիք՝ նպաստելով կրթության գործընթացի ժողովրդավարական կառավարմանը, եթե պահպանեն

որոշակի կանոններ՝ երեխայի իմացական աշխատանքը, իրավունքները հարգելը, աճի դժվար գործը վերահսկելը: «Երեխաները, ինչպես և մեծերը, պետք է ապրեն դժվարությունների հաղթահարման, իրենց աշխատանքով ձեռք բերած հաղթանակի բերկրանքը[285]: Նրանք պետք է զգան անհաջողության կսկիծը և նորից ձգտեն հաղթանակի: Դաստիարակը պետք է սիրի երեխաներին, ապացուցի գործով[286]: Ականավոր մանկավարժի առաջարկած դաստիարակության մարդասիրական սկզբունքները(երեխային անպայման աջակցելու և օգնելու, դաստիարակի սերը իր սաների նկատմամբ, երեխայի անձը հարգելն ու պահանջներ ներկայացնելը և այլն) թելադրում են հատուկ պայմաններ դրանց կարիքն ունեցող, կենսաբանորեն առողջ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության գործը իրավահավասար պայմաններում կազմակերպելու համար:

Հայաստանի և Արցախի անկախության հռչակումից հետո կրթական հաստատություններում այս սկզբունքի կիրառումը թույլ տվեց առաջին անգամ իրագործել պետության պարտավորությունների տրամաբանությունից անցում դեպի հանրային փոխադարձ պարտավորությունների տրամաբանություն, որը նկատելի է թե կրթության կառավարման, թե ֆինանսավորման, թե կրթության նոր բովանդակության ստեղծման տեսանկյունից: Այդ սկզբունքը ենթադրում է հաղորդակցման բարձր մշակույթ, մտքերի անկաշկանդ փոխանակում, կրթության ոլորտում ծագած խնդիրների լուծման մեջ փոխադարձ շահագրգռվածություն, որտեղ կառավարման սուբյեկտը հանդես է գալիս ոչ թե ստուգող կամ վերահսկիչ, այլ խելացի ղեկավար, որը կոլեկտիվի անդամներին տալու և նրանցից սովորելու շատ բան ունի: Այս պարագայում և հաղորդակցումը, և միջանձնային հարաբերությունները կկառուցվեն իսկական ժողովրդավարական հիմքի վրա: Օրինակ, դպրոցի ղեկավարությունը պետք է կարողանա կոլեկտիվին նպատակաուղղել նորովի մտածելու դպրոցի մասին, չսահմանափակվել սեփական հետաքրքրությունների շրջանակով, այլ իր աշխատանքը դիտել կոլեկտիվ աշխատանքին մասնակցի դիրքերից: Կառավարման այս սկզբունքը ենթադրում է ամբողջ կրթական համակարգի ժողովրդավարացում:

Հայաստանի և Արցախի անկախ պետական կարգավիճակը, բնականաբար, նոր խնդիրներ առաջադրեց կրթությանը: Հենց այս փուլում էլ կարևորվում է կրթական համակարգում ժողովրդավարական և հումանիստական սկզբունքների կիրառումը: ՀՀ առաջին սահմանադրության (1995թ. դեկտեմբեր) 35-րդ հոդվածով[287] ամրագրվեց յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը և այն, որ միջնակարգ կրթությունը պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում անվճար է: Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական կրթությունը պետության պահանջարկով պարտադիր է բոլորի համար: Հետևաբար, պատկերացնել ՀՀ և Արցախի կրթական համակարգի կառավարումը՝ առանց վերոնշյալ սկզբունքների, կարծում ենք, անհնար է:

Կրթության համակարգի կառավարման մեջ **գործընթացային ուղղվածության սկզբունքի** իրականացումը հնարավորություն է տալիս ստանալ ավելի կանխատեսելի արդյունքներ, նպատակահարմար օգտագործել պաշարները (և նյութական, և մարդկային), հասկանալ մասնագիտական պատրաստության գործընթացների հնարավորությունները և առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է ընձեռում կանխատեսել հեռանկարային նպատակներն ու խնդիրները, կանխել մեծ թվով սխալներ, խելամտորեն օգտագործել մասնագետների պատ-

ռաստման համար նախատեսված ժամանակը, հստակ համաձայնեցնել կրթական հաստատության շահերը, կոլեկտիվի կազմի հնարավորությունները և սովորողների պահանջները:

Կրթական հաստատությունների կառավարման համակարգում **գործողությունների համաձայնեցվածության սկզբունքը** ենթադրում է կառավարվող սուբյեկտների կառավարչական գործողությունների միջև անհրաժեշտ համաչափության պահպանում և ճիշտ հարաբերակցություն՝ հաշվի առնելով նրանց օրգանական փոխկապակցվածությունն ու համաձայնեցվածությունը, քանի որ կառավարվող օբյեկտների վրա սուբյեկտների նպատակաուղղված և համակարգված ներգործությունը կարելի է իրականացնել միայն նրանց գործողությունների լիովին համաձայնեցման և միասնականացման դեպքում: Այս առումով մանկավարժագետ Վ.Գ.Աֆանասևը իրավացիորեն մատնանշում է, որ «այդ որոշակի համաձայնեցվածությունը բաղադրամասերի ձգտումն է մեկը մյուսին, նրանց միմյանցից կախվածության առանձնահատուկ բնույթը, որն ապահովում է համակարգի դինամիկ հավասարակշռությունը»[288]:

Նպատակաուղղվածության և պլանայնության սկզբունք: Ըստ Լ.Ասատրյանի բնորոշման, այս սկզբունքը որոշում է դպրոցի կառավարման պլանավորման գործառույթը՝ այն դարձնելով ներդպրոցական կառավարման կենտրոնական օղակը[289]: Ինչպես նշվել է, պլանավորումը կառավարման կազմակերպման, կարգավորման և կոորդինացման գործառույթների հիմքն է: Այն գործողություն է, որի կատարման արդյունքում կանխատեսվում են ապագա արդյունքները, որոշվում է, թե ինչ գործողություն, ինչ հերթականությամբ և ինչ ժամանակահատվածում պետք է կատարվի և ով պետք է կատարի: Այսինքն, որոշակիացվում է ապագա գործողության նպատակը: Նպատակաուղղվածության սկզբունքն իրականացվում է դպրոցի գործունեության գիտական պլանավորման միջոցով:

Հանրակրթական դպրոցն իրականացնում է դաստիարակության հասարակական նպատակն ու խնդիրները՝ միաժամանակ բավարարելով կոնկրետ անհատի զարգացման և կատարելագործման պահանջմունքները: Հետևաբար, մանկավարժական գործընթացի ամենաէական հատկանիշը նպատակաուղղվածությունն է: Աննպատակ, տարերային մանկավարժական գործընթացը չի կարող լուծել կրթադաստիարակչական լուրջ խնդիրներ: Ուրեմն, դպրոցի տարերային կառավարումը, խճճվելով հակասությունների մեջ, կվտանգի աճող սերնդի դաստիարակությունը, դրանով իսկ կրթության պետական քաղաքականության իրականացումը:

Կրթական հաստատության **գործունեության բոլոր ուղղությունների անընդհատ կատարելագործման սկզբունքի** իրականացումը նախատեսում է հանրակրթական դպրոցում, բուհում[290] կրթական գործընթացի նորարարական կատարելագործում, որը դառնում է ոչ միայն կառավարման սկզբունքների, այլև յուրաքանչյուր աշխատակցի, ուսուցչի, աշակերտի, դասախոսի, ուսանողի նպատակ, ինչպես նաև գործընթացների արդյունավետության մշտական մեծացում: Բուհի յուրաքանչյուր դասախոսի աշխատանքի համար ապահովվում է մասնագիտական-մանկավարժական կատարելագործման հնարավորություն, միջոցներ են սահմանվում նորարարական գործընթացների կառավարման համար[291]:

Դպրոցում այդ սկզբունքի իրականացումը հնարավորություն է տալիս որոշել գործընթացի՝ ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման և նյութատեխնիկական, ուսումնամեթոդական միջոցներով ապահովման կատարելա-

գործման իրական նպատակները, մանկավարժական կոլեկտիվի աշխատակիցներին և աշակերտներին ներգրավելու գործընթացների անընդհատ կատարելագործմանը: Կրթական հաստատության կենսագործունեության բոլոր հարցերի գծով ընդունվող որոշումների արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե որքանով են դրանք հիմնավորված ու որքանով են հաշվառված օբյեկտիվ տեղեկատվության վերկուծության արդյունքները:

Կրթական համակարգի կառավարման միանձնյա և կոլեգիալ որոշումների փոխկապակցվածության սկզբունքը ենթադրում է ինքնագործունեություն և նախաձեռնության զարգացում կրթական գործընթացին մասնակից բոլոր օղակներում, նպաստում է բաց քննարկումներ կազմակերպելուն, համատեղ որոշումների ընդունմանը: Ըստ մանկավարժագետ Ն.Հարությունյանի բնորոշման, սույն սկզբունքի անհրաժեշտությունը պայմանավորված է.

առաջին՝ նրա սոցիալական բնույթով,

երկրորդ՝ այն փաստով, որ ամեն մի մանկավարժ կոնկրետ մանկավարժական հանրություն է ներկայացնում,

երրորդ՝ ուսուցչի և մանկավարժական կոլեկտիվի, ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների բովանդակությամբ և դինամիկայով:

Ուսումնադաստիարակչական գործընթացի կոլեգիալությունը մանկավարժական կրթության համատեքստում վերաբերում է.

առաջին՝ մասնագիտական կրթության գործընթացի կազմակերպման տիրույթին,

երկրորդ՝ ապագա ուսուցչի անձի կայացմանը, ինչպես նաև ստացված արդյունքների չափանիշներին և բովանդակային կողմին[292]:

Ըստ առաջին ասպեկտի, մանկավարժական կրթության փաստերն ու երևույթները վերլուծվում և բացատրվում են կոլեգիալ եղանակով, երբ կրթական գործընթացի սուբյեկտները համատեղ ընդունում են որոշումներ, մշակում նորմեր և կանոններ:

Երկրորդ մոտեցումը պայմանավորված է ուսումնադաստիարակչական գործունեության բովանդակությամբ, որը հաշվի է առնում այն հանգամանքը, թե որքանով են մանկավարժական(և այլ մասնագիտությունների գծով) սուբյեկտները կարողանում գործել կոլեգիալ, շփվել մասնագիտական-մանկավարժական ոլորտում:

Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ դպրոցի ղեկավարը պետք է ունենա անհրաժեշտ պատրաստվածություն և արդյունավետ կազմակերպի մանկավարժական կոլեկտիվի աշխատանքները, կարողանա համախմբել կոլեկտիվին ընդհանուր նպատակի շուրջ, ինչպես Ա.Խրիմյանն է նշում, ինչը չի կարելի անել այն դեպքում, երբ դպրոցի ղեկավարը չունի կառավարելու ձիրք[293]:

Հանրությանը և դպրոցական մանկավարժական կոլեկտիվին հաշվետու լինելու հանգամանքը ստիպում է դպրոցական խորհրդին լինել զգոն, պահանջել դպրոցի ղեկավարից պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել ուսուցչական կոլեկտիվին, միաժամանակ հնարավորություն է տալիս ուսուցիչներին և ծնողական կոմիտեին անմիջականորեն մասնակցել կրթօջախի գիտական կառավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով բոլոր հարցերի քննարկմանը ու կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին: Այս սկզբունքի կայացմանն են ուղղված ահա այս սլաքները՝ Ուսուցիչ=Ծնող=Հանրություն, որոնք մակերևույթի վրա ներառ-

ված սոցիալական տարբեր խմբեր մասնակցում են դպրոցական գործընթացին, դրան տալիս սոցիալական ուղղվածություն[294]: Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը, ուսումնական հաստատության խորհուրդը, ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը, դպրոցում՝ մանկավարժական խորհուրդը, գործադիր մարմինը, որոնց լիազորությունները սահմանվում են համապատասխան ուսումնական հաստատության կանոնադրությամբ[295]:

Հանրակրթական դպրոցի կառավարման մյուս **սկզբունքը աշխատանքի գիտական կառավարումն է և առաջավոր փորձի ներդրումը պրակտիկայում:** Այս սկզբունքը ելնում է աշխատանքի գիտական կազմակերպման հրատապ պահանջից:

Հանրակրթական դպրոցի ճիշտ և արդյունավետ կառավարումն անհնարին է առանց կառավարման օբյեկտի, նրա զարգացման օրինաչափությունների խոր իմացության: Գիտական կառավարման սկզբունքը պահանջում է կառավարման համակարգի ձևավորում նորագույն գիտական մոտեցումներով, որտեղ ղեկավարը պետք է տիրապետի գործող օրենսդրությանը, կարողանա հասկանալ և վերլուծել հասարակության զարգացման օբյեկտիվ միտումները, մանկավարժական համակարգի զարգացման արդի մոտեցումները, ընդունի որոշումներ գիտական կանխատեսումների հիման վրա, գտնի արդյունավետ լուծման ճանապարհներ՝ բազմաբևեռ վերլուծությունների արդյունքում: Մանկավարժագետ Լ.Ասատրյանը նշում է, որ կանխատեսումն օգնում է գիտականության դիրքերից ընդհանրացնելու ձեռք բերածը, մշակելու իրական, ընթացիկ, տարեկան և հեռանկարային պլանները՝ մանկավարժական կոլեկտիվին նպատակամղելով իրագործելու այն, նոր ուղիներ է բացում սովորողների ուսուցման ու դաստիարակության մակարդակի բարձրացման համար[296]:

Գիտական կառավարման սկզբունքի մյուս պահանջը վերաբերում է հանրակրթական դպրոցի և ուսումնական հաստատության կառավարման փորձի ճիշտ վերլուծությանն ու ընդհանրացմանը, դպրոցի իրավիճակի դիագնոստիկային (ախտորոշմանը), որի հիման վրա կարելի է վստահորեն ուրվագծել դպրոցի գործունեության հեռանկարները, հանգամանորեն և ճիշտ պլանավորել դպրոցի գործունեությունը:Սույն սկզբունքի կարևոր պահանջ է ուսումնական հաստատության կառավարման համակարգում գիտության հիմնարար արժեքներ և նորագույն նվաճումներ ներդնելը: Այս պահանջի իրականացումն առաջին հերթին կապված է մանկավարժական գիտության զարգացման և նրա նվաճումների ներդնելու հետ:

Ուսումնական հաստատության կառավարման սկզբունքներից են նաև փաստերի հիման վրա որոշումների ընդունման, կրթական հաստատությունների հետ գործընկերային հարաբերությունների պահպանման[297], բազմազանության, ինքնորոշման, անընդհատության[298], կոլեկտիվիզմի, բացահայտության[299], դպրոցի կառավարմանը համալիր մոտեցման[300] և այլ սկզբունքներ, որոնք գիտականորեն լուսաբանված են ներքոբերյալ և այլ աշխատություններում:

Կրթական համակարգի կառավարման վերոնշյալ սկզբունքների հետ սերտորեն կապված են նաև կառավարման մեթոդները՝ ուսումնական հաստատության ղեկավարի գործունեության ուղիների ու եղանակների այն համակարգը, որի միջոցով իրականացվում են ուսումնական հաստատության գործունեության կազմակերպման կոնկրետ խնդիրները:

Գիտական գրականության ուսումնասիրումը ցույց է տվել, որ մի շարք հեղինակներ առաջ են քաշում կրթական համակարգի կառավարման մեթոդների դասակարգման և խմբավորման խնդիրը: Ոմանք առաջարկում են առանձնացնել երկու խումբ մեթոդներ. **կառավարման մեթոդներ** և **ղեկավարման մեթոդներ:** Առաջին մոտեցումը հիմնված է կառավարման և ղեկավարման մեթոդների նույնականացման վրա: Դրանք դիտարկվում են որպես աշխատանքային գործունեության ընթացքում կառավարվող օբյեկտների վրա կառավարող սուբյեկտների կազմակերպված ներգործության միջոցներ: Երկրորդ դեպքում ղեկավարման մեթոդները դիտարկվում են կառավարման գործընթացում ենթակաների կամ կոլեկտիվի՝ որպես կոնկրետ կառավարվող համակարգի, ներգործության միջոցներ: Օրինակ, Վ.Գ.Աֆանասևը այն կարծիքին է, որ պետք է առանձնացնել կառավարման մեթոդները ղեկավարման մեթոդներից: Ըստ նրա, կառավարման մեթոդը կառավարման համակարգի մեկ օղակի ներգործության եղանակն է մյուսների վրա՝ նախանշված նպատակներին հասնելու համար: Ղեկավարման մեթոդները այդ նպատակները կենսագործող, իրականացնող, մարդկանց վրա ազդելու ուղիներն ու եղանակներն են[301]:

Ս.Ն.Կնյազևի[302] մոտեցմամբ, ղեկավարման մեթոդներից (համոզման, պարտադրման, խթնման և կարգադրման) կարող են օգտվել կառավարչական գործընթացի ոչ բոլոր մասնակիցները, այլ միայն այն ղեկավարները, որոնք ունեն համապատասխան լիազորություններ: Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ հեղինակները թույլ են տալիս առնվազն տրամաբանական սխալ, քանի որ ղեկավարումը կառավարումից զատ, նրանից դուրս գոյություն չունի: Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ ուսումնական հաստատության կառավարման բոլոր օղակները ենթադրում են ղեկավարություն, այսինքն՝ ղեկավարի մանկավարժական ներգործություն հաստատության կառավարման խնդիրներն իրականացնող մարդկանց վրա: Ուրեմն, կառավարման և ղեկավարման գործընթացները միասնական են և միմյանց բացառել չեն կարող:

Գիտական գրականության մեջ Մ.Ի.Կոնդակովան[303] «կառավարում» հասկացությունը պարզաբանելով նկատի ունի ուսումնական հաստատության վարչարարական մեթոդները՝ հրամաններ, մեթոդական հանձնարարականներ և այլն: Սակայն պարզ է, որ վարչարարությունը տվյալ ուսումնական հաստատության գործառույթն է և կիրառվում է ղեկավարման համակարգում: Այդ կերպ, խթանման մեթոդները կարող են կիրառվել կրթական համակարգի կառավարման վերադաս մարմինների(հանրապետության կառավարության, կրթության և գիտության նախարարության, շրջանային և քաղաքային կրթության բաժինների) կողմից համակարգի լավ աշխատողներին պարգևատրելու, պատվավոր կոչումներ շնորհելու և այլ ձևերով: Հետևաբար, վերոնշյալ հեղինակների կողմից առաջարկված մեթոդների երկու խումբն էլ, թե վարչարարական և թե խթանման մեթոդները, պետք է ընդգրկվեն կրթական համակարգի կառավարման ամբողջ համակարգում, այդ թվում՝ ներուսումնական հաստատության (դպրոց, քոլեջ, վարժարան, ուսումնարան, բուհ) ղեկավարման ոլորտում: Միանգամայն պարզ է նաև, որ մեթոդների նշված տեսակները դեռևս բավական չեն կրթական համակարգի կառավարման գործառույթներն իրականացնելու համար: Ըստ այդմ էլ, մեր կարծիքով, կրթական համակարգի կառավարման մեթոդները կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի.

1. վարչարարական մեթոդներ՝ հրաման, հրահանգավորում, առաջադրանք,

մեթոդական հանձնարարականներ և այլն,

2. խթանման մեթոդներ՝ խրախուսանք, պարգևատրում, աշխատանքի և կենցաղի պայմանների բարելավում, որակավորման բարձրացման և առաջքաշման հեռանկարների ստեղծում, հարկադրանքի և պատժի մեթոդներ և այլն,

3. տեղեկատվության հավաքման, վերլուծության և գնահատման մեթոդներ՝ դիտում, զրույց, փորձի ուսումնասիրություն և տարածում, գիտափորձ, խորհրդակցություններ, սեմինարներ, ժողովներ և այլն,

4. վերահսկման և կարգավորման մեթոդներ, ստուգումներ, հաշվետվություններ, ինքնահաշվետվություններ և այլն:

Մեթոդների առաջարկվող այս համակարգը ելնում է կրթական համակարգի կառավարման սկզբունքներից, գործառույթներից, սակայն ներկայացվող մեթոդների խմբավորումը, իհարկե, չի կարելի համարել անփոփոխ, նկատի ունենալով հետևյալ պատճառները.

առաջին՝ կառավարման տեսությունը անընդհատ փոփոխվում ու զարգանում է, մանկավարժագետների, համակարգի ոլորտի առաջատար մասնագետների ու ղեկավարների կողմից կատարվում են նոր՝ առաջավոր փորձի բացահայտումներ, որոնց հիման վրա կատարելագործվում են ընդհանրապես կառավարման նշված և այլ մեթոդները, և չի բացառվում, որ կստեղծվեն նաև այլ մեթոդներ:

երկրորդ՝ ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխություններին, հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին զուգընթաց, անշուշտ, փոփոխման է ենթակա նաև ուսումնական հաստատությունների կառավարման համակարգը, որը նույնպես կարող է առաջացնել կառավարման մեթոդների փոփոխման և զարգացման խնդիր:

Առավել կարևորը մեթոդների համակարգում այն է, որ դրանք կիրառվեն նպատակային, հիմնավորված, չափակշռված, միմյանց հետ սերտ կապի պայմաններում:

Բոլոր դեպքերում վերոնշյալ մեթոդների կիրառումը հանրակրթական դպրոցի, ուսումնական հաստատության կառավարման գործընթացում կարող է շոշափելի արդյունք տալ, եթե ապահովվեն հետևյալ պայմանները՝ օբյեկտիվությունը, գիտական հիմնավորվածությունը, հստակությունը, համակարգվածությունը, դաստիարակչական և ուսուցողական ուղղվածությունը, համապատասխան իրավական և բարոյական նորմերը[304]:

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է սահմանել, որ ուսումնական հաստատության կառավարման որևէ մեթոդի էությունը կազմում է ղեկավարի գործունեության բնույթը ենթակաների կամ ուսումնադաստիարակչական գործընթացի վրա, որը պայմանավորված է նրա որոշակի նպատակների և դրանց իրականացման համար կիրառվող միջոցների փոխներգործությամբ, որի շնորհիվ էլ բարձրանում է կառավարչական գործունեության արդյունավետությունը:

Այսպիսով՝ ի մի բերելով վերոշարադրյալը, հարկ է նշել, որ կրթական համակարգի կառավարման նշված և այլ մեթոդները(կազմակերպչական, իրավական, կառուցվածքային, ներածնային, միջանձնային և այլն), որոշվում են հանրակրթական դպրոցի, ուսումնական հաստատության նպատակներով, խնդիրներով, կառավարման գործառույթներով, սկզբունքներով ու բովանդակությամբ: Կրթական համակարգի կառավարումը, հատկապես սկզբունքների ու մեթոդների ընտրության տեսակետից, պահանջում է ստեղծագործական մոտեցում և կարող է արտացոլել նրա կերպարի քաղաքացիական և մասնագիտական բնութագիրը, ղե-

կավարման ոճի առանձնահատկությունները:

Որպես ընդհանրացում նշենք, որ Հայաստանի և Արցախի կրթական համակարգի կառավարման գործում կան ընդհանուր միասնական կառավարման գործառույթներ, սկզբունքներ ու մեթոդներ, որոնք բնորոշ են երկու հանրապետություններին, հետևաբար, վստահորեն ընդգծենք, որ դրանց լուծման ուղիները որոնելիս պետք է հաշվի առնել նաև նրանց առանձնահատկությունները և միաժամանակ հենվել միմյանց աջակցելու ու իրար հետ համագործակցելու վրա, քանի որ արցախահայությունը հայ ժողովրդի անբաժանելի մասն է կազմում և իր անգնահատելի դերն է կատարում հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում և այլ ոլորտներում:

3. Ներդպրոցական կառավարման համակարգը: Դպրոցների տնօրենների կազմակերպական գործունեությունը (առաջավոր փորձի վերլուծություն)

ա) Հասկացություն ներդպրոցական կառավարման համակարգի մասին

Հանրակրթկան դպրոցի առջև դրված խնդիրների հաջող կատարումը նշանակալից չափով կախված է նրա գործունեության կառավարման մակարդակից: Այսինքն, դպրոցի կառավարումը, որպես սոցիալական կառավարման ձև, առաջին հերթին ենթադրում է մի խումբ մարդկանց (տնօրեն, փոխտնօրեններ, ուսուցիչներ, ծնողներ) նպատակաուղղված ներգործությունը աշակերտների գիտակցության և վարքի վրա, այնուհետև ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտների հետ ունեցած կապի և նրանց փոխներգործության ու դերի ուսումնասիրումը կառավարչական գործընթացի կատարելագործման նպատակով: Հենց դրանում է իրագործվում ներդպրոցական աշխատանքների սուբյեկտիվ և օբյեկտիվ սկզբունքների դիալեկտիկական միասնությունը, քանի որ ռեալ իրականության մեջ մանկավարժական աշխատանքների կառավարումն ընթանում է բոլոր նշված կողմերի փոխներգործության, հասարակական կյանքի կառավարման այլ ձևերի հետ ուումնադաստիարակչական աշխատանքների համակարգի կապի և միջավայրի պայմանների ազդեցության արտացոլման պայմաններում:

Այսօր հանրակրթական դպրոցի գործունեության բարեփոխումը պահանջում է ուսումնադաստիարակչական աշխատանքի նկատմամբ կիրառել գիտական, սոցիալ-հոգեբանական կառավարման մոտեցում: Կառավարել դպրոցը նշանակում է նպատակադրված ներազդել մանկավարժական կոլեկտիվի վրա և նրա միջոցով ապահովել դպրոցականների լիարժեք զարգացումը: Ներդպրոցական կառավարում ասելով հասկանում ենք դպրոցական կոլեկտիվի գործունեության կազմակերպման և նպատակաուղղման գործընթաց: Նրա էությունն է կենսագործել պետական իշխանության և կառավարման մարմինների որոշումներն ու կարգադրությունները դպրոցի մասին, իրականացնել հիմնական և ավագ դպրոցի 12-ամյա կրթությունը, բարձրացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը:

Հանրակրթական դպրոցում կառավարման գործընթացն, ըստ էության, ունի երեք հիմնական բաղադրիչ մաս: **Առաջին մասը** բովանդակությունն է, նպատակի և խնդիրների որոշումը և համապատասխան գործողությունների պլանավորումը:

Երկրորդ մասը նպատակի և խնդիրների կենսագործման կազմակերպումն է, ուժերի բաշխումը, միջոցների և մեթոդների ընտրությունը: **Երրորդ մասը** աշխատանքի արդյունավետության գնահատումը, վերահսկումն է, ուսումնասիրումը և վերլուծումը անհրաժեշտ տեղեկության հիման վրա:

Ելակետ ունենալով ներդպրոցական կառավարման հիմնական նպատակը և խնդիրները՝ դպրոցի տնօրենը կազմակերպում է մանկավարժական կոլեկտիվի գործունեությունը, կատարում կադրերի ընտրություն և տեղաբաշխում, ստեղծում անհրաժեշտ պայմաններ աշխատողների գիտամանկավարժական մակարդակը և որակավորումը բարձրացնելու համար, իրականացնում վերահսկողություն ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման գաղափարական-քաղաքական ուղղվածության, աշակերտների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների որակի և վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների բովանդակության ու ընթացքի նկատմամբ, կազմակերպում է աշխատանք աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, կատարում է մանկավարժական անձնակազմի հրահանգավորումը, կարգավորում է մեթոդական աշխատանքը դպրոցում և աշակերտների ուսումնական ծանրաբեռնվածությունը, նպատակաուղղում է աշակերտական ինքնավարության գործունեությունը, աջակցություն է ցույց տալիս դպրոցի աշակերտական և մյուս ինքնագործ կազմակերպություններին, կազմակերպում է դպրոցի աշխատանքը ծնողների և հասարակայնության հետ, ուղղություն է տալիս ծնողական կոմիտեի աշխատանքներին, սահմանում է դպրոցի ներքին կարգապահական կանոնները և աշխատողների պարտականությունները՝ աշխատանքային օրենսդրության և դպրոցի կանոնադրության համապատասխան, ապահովում է դպրոցի աշխատանքային ներքին կարգապահության, սանիտարահիգիենիկ ռեժիմի, աշխատանքի տեխնիկայի անվտանգության կանոնների պահպանման կենսագործումը, դպրոցի աշխատանքի մասին հաշվետվություն տալիս համապատասխան կազմակերպություններին, հանդես է գալիս հասարակական կազմակերպություններում և ազգաբնակչության առջև, խրախուսում է դպրոցի աշխատողներին ու աշակերտներին:

Կառավարման այդ գործընթացը գլխավորում է դպրոցի տնօրենը(մանրամասն կնշվի հաջորդ բաժնում): Այդուհանդերձ, ներդպրոցական կառավարման մեջ խոշոր դեր են խաղում տնօրենի տեղակալը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով, արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, տնօրենի օգնականը՝ տնտեսական գծով, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները: Այդպիսով, ներդպրոցական կառավարումը տնօրենի գլխավորությամբ իրականացնում են դպրոցի ղեկավար կազմը, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները, որոնք կազմում են կառավարման օղակները: Ինչպես այս օղակները, այնպես էլ կառավարման խնդիրները կազմում են ներդպրոցական կառավարման կառուցվածքի մի մասը, իսկ մյուս մասը՝ կառավարման աշխատանքի տեսակներն ու մեթոդները[305]:

Այժմ համառոտակի բնութագրենք ներդպրոցական կառավարման տեսակները:

Մանկավարժական գրականության մեջ կան տարբեր մոտեցումներ ներդպրոցական կառավարման տեսակների մասին: Ոմանք ընդունում են աշխատանքի երկու հիմնական տեսակ[306], ոմանք էլ երեք խումբ տեսակներ՝ որոշման ընդունումը, դրա կատարման կազմակերպումը և հաղորդագրության կապերի իրակա-

նացումը[307]: Գոյություն ունեն նաև այլ տեսակներ, որոնք նույնպես լրիվ չափով չեն արտացոլում դպրոցի կառավարման համակարգը: Այդ վիճակը բացատրվում է ոչ միայն նրանով, որ այդ ուղղությամբ քիչ հետազոտություն է կատարվել մանկավարժության մեջ, այլև նրանով, որ հարցի լուծման մեջ դրսևորվում է միակողմանի մոտեցում. մի դեպքում հիմք է ընդունվում միայն դպրոցի ներքին կյանքը, հատկապես ուսումնադաստիարակչական գործընթացը, մյուս դեպքում՝ դպրոցի կառավարման ընդհանուր ֆունկցիաները: Այնինչ, անհրաժեշտ է, որ ներդպրոցական կառավարման գործառույթները որոշվեն՝ հիմք ունենալով ինչպես դպրոցի կառավարման ընդհանուր գործառույթները, այնպես էլ դպրոցի ներքին կյանքը: Այսպիսով՝ հաշվի է առնվում, նախ, այն հանգամանքը, որ դպրոցի ներքին կյանքը յուրահատուկ դինամիկ համակարգ է՝ կապված շրջապատի հետ, այնուհետև՝ որ դպրոցի կառավարման համընդհանուր գործառույթները անխուսափելիորեն իրենց արտահայտությունն են գտնում ներդպրոցական կյանքում: Օրինակ, կազմակերպումը կառավարման այն առավել ընդհանուր տեսակն է, որով ստեղծվում են հստակ հարաբերություններ սուբյեկտի և օբյեկտի, ինչպես նաև դպրոցի տարբեր օղակների միջև՝ ընդհանուր նպատակին հասնելու համար: Կազմակերպման գործառույթի էությունն է՝ ապահովել աշխատողների ուժերի ռացիոնալ բաշխումը, նրանց պարտականությունների որոշումը, աշխատանքի գիտական կազամերպումը և դպրոցում ներքին կարգուկանոնի սահմանումը: Պլանավորման գործառույթն արտահայտում է դպրոցի, նրա բոլոր օղակների գործունեության պլանային բնույթը: Վերահսկողության գործառույթն արտահայտում է ուսումնադաստիարակչական գործընթացի սիստեմատիկ ուսումնասիրման, վերլուծման, աշակերտների ուսուցվածության և դաստիարակվածության աստիճանի որոշման, այդ մասին հավաստի տեղեկատվության հավաքման, ամփոփման և հետևությունների մշակման աշխատանքում: Այդ միջոցներով բացահայտվում են մանկավարժական աշխատանքի արդյունավետության մակարդակը, նրա թերություններն ու դժվարությունները, որոշվում դրանց պատճառները և հաղթահարման ուղիները: Ըստ էության, մանկավարժական գործընթացի վերլուծությունը դպրոցում հանդես է գալիս որպես այդ գործընթացի վերահսկողություն և նրա գիտական կառավարման հիմնական գործոն: Դպրոցի կառավարման գործառույթները, սկզբունքներն ու մեթոդները հանգամանորեն լուսաբանված են նախորդ բաժնում, այստեղ միայն համառոտակի դիտարկվում է՝ կապված քննարկվող հիմնահարցի հետ:

Վերը շարադրվածից պարզ երևում է, որ ներդպրոցական կառավարման կառուցվածքի մեջ մտնում են ուսումնադաստիարակչական գործընթացի կազամերպման, պլանավորման, վերահսկման, որոշման ընդունման, կոորդինացման, կարգավորման, տեղեկատվության կապերի ստեղծման, ուսուցիչների գիտամանկավարժական մակարդակի բարձրացման և ուսումնանյութական պայմանների պահովման ընդհանուր և առանձնահատուկ տեսակները:

Ներդպրոցական կառավարումը, ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Ղույումչյանը, որպես ենթահամակարգ, ելնում է դպրոցի կառավարման պետական համակարգի պահանջներից, նպատակից ու խնդիրներից, իրականացնում է կառավարման ընդհանուր և հատուկ գործառույթներ (ֆունկցիաներ)[308]:

Մանկավարժագետներ Վ.Լազարևը, Վ.Լեբեդևը և ուրիշներ կառավարման գործընթացն անվանում են գործողությունների հաջորդականություն, որն իրականացվում է կառավարվող սուբյեկտի կողմից, և որի արդյունքում ձևավորվում և

փոփոխվում է կառավարվող օբյետը: Նրանք միաժամանակ նշում են,որ կառավարման գործընթացը կրում է պարբերաշրջանային բնույթ, որը պետք է հասկանալ որպես չորս հիմնական գործողությունների փակ հաջորդականություն՝ պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում, որոնք իրականացվում են զուգահեռ և հաջորդական ձևով:

Այսօր ներդպրոցական կառավարման խնդիրներն են համարվում դպրոցի զարգացման գործընթացը, կադրերի ճիշտ ընտրության իրականացումը, նրանց գործունեության գնահատումը, արդյունավետ աշխատանքը և կոլեկտիվում բարոյահոգեբանական բարյացակամ մթնոլորտի ստեղծումը, համագործակցումը միջավայրի հետ և այլն:

Այժմ համառոտակի բնութագրենք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները ներդպրոցական կառավարման համակարգում:

Որպես ներդպրոցական կառավարման սուբյեկտներ հանդես են գալիս դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, համայնքի ներկայացուցիչներից և դպրոցի մանկավարժական կոլեկտիվից կազմված խորհուրդները, որոնց անդամներն առաջին հերթին որպես անձ, ունեն իրենց հոգեկան կառուցվածքն ու որակները:

Միաժամանակ ներդպրոցական կառավարման սուբյեկտները հանդես են գալիս որպես կառավարման օբյեկտներ կրթության համակարգի աշխատանքները կոորդինացնող վերին օղակների նկատմամբ:

Սակայն դպրոցի կառավարման ժամանակակից միտումները ենթադրում են նրա մեծամասշտաբ ինքնավարության աստիճանական զարգացում: Նախկին կենտրոնացված համակարգն աստիճանաբար փոխարինվում է ինքնակառավարման և համայնքների կողմից դպրոցների կառավարման համակարգով:

Ներդպրոցական կառավարման սուբյեկտային կապը երևան է գալիս այն դեպքում, երբ ղեկավարությունը և ուսուցչական կոլեկտիվը նրանում հանդես են գալիս որպես ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու կառավարման սուբյեկտներ: Այդ ժամանակ աշակերտական կոլեկտիվը հանդես է գալիս որպես կառավարման օբյեկտ:

Միաժամանակ սուբյեկտները և մանկավարժական գործընթացի կառավարման սուբյեկտային կողմը, մեծ դեր կատարելով նրա գործնական իրականացման մեջ, չեն ավարտում և ամբողջացնում կառավարչական գործունեության բովանդակությունը, քանի որ այն ներկայանում է և որպես սուբյեկտիվային, և օբյեկտիվային կողմերի ամբողջություն:

Կառավարման օբյեկտ է համարվում այն կողմը, որին ուղղված է որոշակի գործողություն: Կառավարման համակարգում որպես օբյեկտ և օբյեկտվային կողմ պետք է հասկանալ ներգործության առարկան:

Ներդպրոցական կառավարման օբյեկտները ընդհանրապես ուսուցիչներն ու աշակերտներն են, որոնք ունեն գիտակցություն, հոգեբանություն, զգացմունքներ, մտքեր, երևակայություն, պատկերացումներ, վարք, որոնց նկատմամբ էլ կազմակերպվում, ուղղվում է կառավարչական գործընթացը:

Եթե գործնական կառավարման օբյեկտները վերը նշվածներն են, ապա տեսական կառավարման օբյեկտը ուսումնադաստիարակչական գործընթացն է և այն պայմանները, որոնց կիրառմամբ այն ավելի արդյունավետ է դառնում:

Ներդպրոցական կառավարման գործընթացը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով, որոնց վերաբերում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ազգային մտածողությունը, խառնվածքը, մշակույթը, ժողովրդագրական կա-

ռուցվածքը, տնտեսական զարգացման և ազգաբնակչության կառուցվածքը, ազգաբնակչության գրագիտության մակարդակը, դպրոցի նյութատեխնիկական բազան:

Այսինքն՝ օբյեկտիվ գործոնները կազմում են սոցիալական այն միջավայրը, որտեղ գործում է դպրոցը: Ի տարբերություն ներդպրոցական մանկավարժական կառավարման սուբյեկտների՝ օբյեկտների հարցը քիչ է լուսաբանված, այնքանով, որ մի դեպքում որպես օբյեկտներ հանդես են գալիս ուսուցիչներն ու աշակերտները, մյուս դեպքում նրանք համարվում են ակտիվ սուբյեկտներ և դաստիարակչական գործընթացի կազմակերպիչներ ու նրա վրա ներգործողներ:

Այսպիսով, ներդպրոցական կառավարման համակարգում գործում է սուբյեկտ-օբյեկտ փոխներգործության գործընթացը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերով հանդերձ: Ինչպես նշեցինք, դպրոցի կառավարման սուբյեկտնրն են դպրոցի տնօրենը և նրա տեղակալները, մանկավարժական կոլեկտիվը, հասարակության ներկայացուցիչները(ծնողները, հոգաբարձուները և այլն):

Դպրոցի տնօրենը «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի դրույթներն համապատասխան միանձնյա պատասխանատվություն է կրում դպրոցի գործունեության բոլոր կողմերի համար (ուսումնադաստիարակչական գործընթացներ, ֆինանսատնտեսական գործունեություն և այլն):

Տնօրենը նաև հաստատում է դպրոցի ուսումնական ընդհանուր պլանը, ապահովում մանկավարժական կադրերի ճիշտ ընտրությունը, իրականացնում վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների կողմից գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման նկատմամբ, ապահովում է դպրոցի աշխատանքային կարգապահությունը և սանիտարահիգիենիկ ռեժիմը:

Տնօրենը առանց խորհրդի թույլտվության չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք:

Տնօրենը կարող է ունենալ տեղակալներ (փոխտնօրեններ): Փոխտնօրեններին պաշտոնի է նշանակում կամ պաշտոնից ազատում է տնօրենը: Տնօրենի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է տնօրենի տեղակալը՝ տնօրենի հրամանով:

Դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը (փոխտնօրենը)՝

1. պատասխանատու է տվյալ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների գիտելիքների համար,

2. վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը,

3. հրահանգավորում է ուսուցիչներին, դասղեկներին, կազմակերպում մեթոդական աշխատանքը, կազմում դասացուցակը,

4. ղեկավարում է առարկայական մեթոդմիավորումների աշխատանքը, ընդհանրացնում ուսուցիչների դրական աշխատանքի փորձը:

Դպրոցի տնօրենի՝ դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը՝

1. կազմակերպում և ղեկավարում է սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները,

2. ապահովում է դպրոցի և ընտանիքի կապն ու համագործակցությունը,

3. կազմակերպում է սովորողների ազատ ժամանակը, միջոցներ է ձեռք առնում սոցիալապես անապահով երեխաներին օգնելու համար,

Դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքների գծով տեղակալը՝

1. պատասխանատու է հաստատության շենքի և նրա գույքի պահպանման, ուսուցման գործընթացի նյութատեխնիկական ապահովման, սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար,

2. միջոցներ է ձեռնարկում ամրապնդելու և հարստացնելու նյութատեխնիկական բազան:

Դպրոցի տնօրենի գործունեության չափանիշների, իրավունքների ու պարտականությունների, աշխատանքային պլանի և նրա իրականացման փուլերի մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում:

բ) Դպրոցի տնօրենի կազմակերպական գործունեությունը (առաջավոր փորձի վերլուծություն)

Հասարակությանը, ծնողներին դպրոցի ստեղծագործական կառավարմանը մասնակից դարձնելու, բոլոր օղակների հետ կապն ամրացնելու գլխավոր դերը պատկանում է տնօրենին:

Ըստ դպրոցների տնօրենների աշխատանքային պլանի ուսումնասիրության, տնօրենի կազմակերպական գործունեությունը ներառում է՝

1. յուրաքանչյուր աշխատակցի տեղի և դերի որոշումը,

2. կոլեկտիվի անդամների, բոլոր աշխատակիցների միջև աշխատանքի հստակ բաժանումը և նրանց պատասխանատվության բարձրացումը,

3. աշխատանքի կատարման ժամանակահատվածի կանոնակարգումը,

4. աշխատանքը կատարող անձանց միջև ադյունավետ կապի ապահովումը,

5. անհրաժեշտ կազմակերպական հարաբերությունների համակարգի ստեղծումը,

6. ընդունած որոշումների կատարման վերահսկողությունը:

Տնօրենի խնդիրն է կոլեկտիվի գործունեությունը նպատակաուղղել մանկավարժական խնդիրների լուծմանը, կանոնադրական և ներքին կարգապահական պահանջների կատարմանը, բարյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոցի տնօրենի կազմակերպական գործընթացը կառուցվում և մեթոդաբանական մշակման է ենթարկվում երեք փոխկապակցված փուլերով:

Այժմ պրակտիկ փորձի վերլուծությունների հիման վրա դիտարկենք Ստեփանակերտի թիվ 2, 7, 10, 11 դպրոցների տնօրենների (Լ.Մարտիրոսյան, Ա.Պողոսյան, Ս.Շահրամանյան, Ա.Գրիգորյան) գործունեության երեք փոխկապակցված փուլերը, միաժամանակ ներկայացնենք նաև մեր առաջարկությունները:

Առաջին փուլ: Ըստ տարեկան պլանի, տնօրենը ստեղծագործական խմբի հետ մշակում է ուս.տարվա աշխատանքների նպատակն ու խնդիրները: Դրանք կարող են լինել ընթացիկ պլանների, հուշագրերի, կառուցվածքային գծապատկերների տեսքով:

Այս փուլի էությունը ստեղծագործական խմբի ստեղծումն է: Այն օգնում է որո-

նելու և գտնելու մանկավարժական խնդիրների իրականացման արդյունավետ ձևեր, կազմակերպելու անհրաժեշտ տեղեկատվության ամփոփումը:

Երկրորդ փուլ: Մշակված ծրագրերի կատարման հստակ ժամկետի և միջոցների, կատարող անձանց որոշակի փոխհարաբերությունների ճշգրտում:

Այս փուլի խնդիրները որոշվում են մանկավարժական խորհրդի նիստերի, խորհրդակցությունների, ժողովների, քննարկումների ժամանակ:

Երրորդ փուլ: Տնօրենի ղեկավարությամբ մանկավարժական կոլեկտիվը, անդամները, աշխատակիցները և ծնողները միավորվում են ծրագրերի կատարման մեջ:

Այս փուլում կարևորվում է աշխատանքի կատարման արդյունավետության բարձրացման նպատակով խթանիչ միջոցների օգտագործումը: Տնօրենները ամեն կերպ ձգտում են նպաստավոր պայմաններ ստեղծել, գնահատել յուրաքանչյուր աշխատակցի կատարածը, գտնել հնարավորություններ, հետևել աշխատանքի ընթացքին:

Տնօրենը ավագ մանկավարժների հետ միասին մշակում է օրինակ, չօգտագործած կազմակերպական կատարողական համակարգ՝ ինչի՞ պետք է հասնել, ի՞նչ պետք է անել և կարելի՞ է անել, ե՞րբ, ո՞վ:

Ուսուցիչներին հանձնարարությունները կարող են լինել անընդմեջ կամ հազվադեպ: Երկու դեպքում էլ պետք է հստակ նշվեն կատարման ժամկետը, անձը և այլ տվյալներ՝ վերահսկման մեջ ներգրավելով փոխարինող անձանց: Մեր կարծիքով, աշխատանքի գիտական կազամկերպման համար տնօրենը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի, պլանավորի, վերլուծի, հստակեցնի և հաստատուն դարձնի աշխատաժամանակը, անընդհատ բարձրացնի կատարողների մասնագիտական որակները: Ինչպես նաև աշխատաժամանակի 60-65 տոկոսը(օրական 3,5-4 ժամ) տնօրենը պետք է հատկացնի կրթադաստիարակչական աշխատանքների մակարդակի բարձրացմանը:

Տնօրենի կողմից աշխատաժամանակի ոչ նպատակային օգտագործման պատճառ կարող են հանդիսանալ.

- նպատակների և խնդիրների հստակ չլինելը, գլխավոր խնդրի չառանձնացնելը, անձնական պլանի բացակայությունը, ավագ մանկավարժի կողմից աշխատանքների ընթացքը չվերահսկելը,
- որոշումների ոչ հստակ ձեակերպումները, ծանրաբեռնվածությունը, փոքր հարցերի հարակցումը, կադրերի ոչ լիարժեք կատարելագործումը, աշխատանքը գրագետ վերլուծելու ուսուցիչների անկարողությունը,
- կազմակերպական հարցերի, պարտականությունների ոչ ճիշտ բաժանումը, տեղեկատվության պակասը, մանկավարժական գործընթացի վերահսկմանն անպատրաստ լինելը,
- խորհրդակցությունների, նիստերի շատ լինելը, դրանք ղեկավարել չկարողանալը, ըստ էության հակիրճ խոսելու անկարողությունը, քննարկումներին նախապատրատված չլինելը:

Դպրոցի ղեկավարի՝ որպես կառավարողի, գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը նրա գաղափարական, քաղաքական և մասնագիտական մակարդակների բարձրացման ուղղությամբ աշխատանքն է:

Օրինակ, մանկավարժագետները (Ա.Աբրահամյան, Մ.Մանուկյան, Հ.Մախչանյան, Ս.Մովսիսյան և ուրիշներ) հետևյալ հատկանիշներով են բնութագրում լավ և վատ կառավարողներին:

Վատ կառավարողներ

1. կարևոր են հիմնարկության արտաքին տեսքը, կարգուկանոնը, մաքրությունը,
2. անհանգստանում են իրերի համար,
3. գտնում են, որ մարդկանց չպետք է վստահել, և որ նրանք անկարող են ու անվստահելի,
4. ոտնահարում են մարդկանց արժանապատվությունն ու պատիվը,
5. իրենց դրականորեն չեն գնահատում,
6. ցանկանում են վերահսկել բոլորին,
7. ամեն բան ծածուկ են անում:

Լավ կառավարողներ

1. կարևորում են գործընկերների ներքին հոգեվիճակը, այսինքն՝ նրանց զգացմունքները, համոզմունքները, կարծիքը, արժեքավորումը,
2. անհանգստանում են մարդկանց համար,
3. գտնում են, որ մարդկանց կարելի է վստահել, որ նրանք ընդունակ են ու վստահելի,
4. պաշտպանում են մարդկային արժանապատվությունն ու պատիվը,
5. իրենք իրենց վերաբերվում են դրականորեն,
6. ցանկանում են ազատվել բոլորին վերահսկելուց,
7. ունեն հեռուն գնացող պլաններ,
8. ամեն բան բացեիբաց են անում և այլն:

Դպրոցների պրակտիկ փորձի ուսումնասիրումը ցույց է տվել, որ լավ տնօրենը հենվում է ուսուցիչների և աշակերտների համագործակցության վրա: Հենց այդ համագործակցությունն էլ համարվում է ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը, որի հիման վրա էլ ձևավորվում է դպրոցական կոլեկտիվը:

Դպրոցի տնօրենի աշխատանքի ոճի բարոյահոգեբանական գծերը պայմանավորված են նրա անհատական առանձնահատկություններով, գիտելիքների մակարդակով և գործնական որակներով: Այսպես, օրինակ, դպրոցի կառավարման մեջ այսօր տարբերվում են կոլեկտիվի հետ աշխատելու մի շարք ոճեր՝

- ավտորիտար (հրահանգչական),
- ժողովրդավարական (կոլեգիալ),
- լիբերալ (ազատ),
- խառը,
- վարչական,
- նրբազգաց կառավարման,
- համընդգրկուն,
- գործարար:

Կոլեկտիվը կառավարելու **ավտորիտար ոճին** հատուկ է որոշումների միանձնյա ընդունումը՝ որպես հիմք ունենալով անձնական փորձը, հաշվի առնելով կամ չառնելով կոլեկտիվի անդամների կարծիքը:

Կառավարման այս ոճի շնորհիվ անչափ բարձր է կոլեկտիվի վրա ներգործելու օպերատիվությունը, բայց այս ոճի գլխավոր թերությունը մանկավարժական կոլեկտիվի անբավարարվածությունն է իր ստեղծագործական կարողությունները լիարժեք չօգտագործելու առումով:

Այդ տիպի ղեկավարները կտրված են կոլեկտիվից և ենթականերին պահում են որոշակի հեռավորության վրա, որոնք նրա համար միայն կատարողներ են: Այդ ոճի ղեկավարների գործունեության մեջ գերիշխում են վարչական մեթոդները՝ հրաման, նկատողություն, զգուշացում և այլն, նրանք ընդունում են ենթականերին խթանելու միայն երկու ձև՝ նյութական պարգևատրում, խրախուսում և վարչական տույժ:

Ղեկավարի այդ տիպին բնորոշ են որոշումների անառարկելիությունը, դիտողություն ստանալը, ենթակաների՝ սեփական կարծիք ունենալու անհանդուրժողականությունը: Նրանք կարծում են, որ ուսուցիչները լիովին հասու չեն մասնակցելու դպրոցի կառավարմանը:

Այս պարագայում այդպիսի կոլեկտիվում առաջ են գալիս հիասթափություն, ընկճվածություն և փոխադարձ արգահատանք ոչ միայն տնօրենի, այլև միմյանց նկատմամբ:

Ժողովրդավարական ոճի ղեկավարներին հատուկ է որոշումների ինքնուրույն ընդունումը, որը, սակայն, մշակում է ենթակաների հետ, որը և խթանում է նրանց ակտիվությունը: Ժողովրդավարական ոճի կառավարում իրականացնող ղեկավարները պետք է խորապես իմանան հոգեբանություն և կառավարման տեսություն, որպեսզի կարողանան ենթակաների վրա ներգործելու ճիշտ մեթոդ ընտրել:

Լիբերալ ոճի ղեկավարները խուսափում են հակասություններից, ամբողջովին վստահում են բոլորին, դպրոցի առջև ծառացած խնդիրների, ներդպրոցական հարցերի լուծման, ծրագրերի մշակման գործում ենթականերին տալով լիարժեք ազատություն, իրեն թողնելով միայն ներկայացուցչական գործառույթը: Այդ ոճով կառավարվող կոլեկտիվում ղեկավարների և աշխատողների միջև գոյություն ունեն ընկերական, բարյացակամ հարաբերություններ, փոխադարձ ապրումակցման ձգտում և ուշադրություն:

Ինչպես ցույց են տվել հոգեբանական հետազոտությունները, ղեկավարման այս ոճը, որը հիմնված է ենթակաների հետաքրքրությունների շահերի ու կարծիքների վրա, առավել արդյունավետ է:

Այսպես, օրինակ՝ Վ.Ս.Լազարևը և այլոք նշում են, որ «այդ ոճի հիմք է ծառայում ենթակաների ընկալման հետևյալ մոդելը.

- մարդկանց մեծ մասն իր աշխատասիրությամբ ձգտում է աշխատանքում բարձր արդյունքների և լիարժեք ինքնուրույնության հասնել,
- ղեկավարը կարող է ամբողջությամբ հենվել իր աշխատակիցների բանականության և մասնագիտական կարողությունների վրա և հնարավորություն ընձեռել ինքնուրույնաբար կատարելու իրենց աշխատանքը,
- աշխատողներն իրենց ղեկավարից սպասում են միայն որակյալ աշխատանքի համար պայմանների ստեղծում:

Լիբերալ ոճի թուլությունն այն է, որ ղեկավարը չափազանց մոտ տարածության վրա է գտնվում իր ենթակաների նկատմամբ, իսկ հաճախ էլ այդ տարածությունը բացակայում է, որը և բերում է ղեկավարման մեթոդների սահմանափակման:

Խառը ոճը ճկուն ոճ է, որը փոփոխվում է՝ կախված կոնկրետ իրավիճակից: Այն իր մեջ ներառում է ավտորիտար և ժողովրդավարական ոճերի ուժեղ կողմերը:

Վարչական ոճը հիմնված է միանձնյա ղեկավարության և կառավարման վարչական մեթոդների գերակշիռ սկզբունքի վրա: Այդ ոճերը հաճախ համեմատվում

են ավտորիտարի հետ:

Սոցիալական կառավարման մեջ այս ոճը կիրառողներին անվանում են «մերկ վարչարարներ», արտադրության մեջ՝ «տեխնոկրատներ»: Այս ոճով աշխատող ղեկավարը պահանջկոտ է, զերծ է ավելորդ զգացմունքայնությունից, նրա համար առաջնայինը ոչ թե մարդկային հարաբերություններն են, այլ աշխատանքը և նրա վերջնական արդյունքը, նա ունի պետական մտածողություն: Բացի այդ, լինում են նաև նրբազգաց, գործարար և ղեկավարման այլ ոճեր[309]:

Վերը բերված ոճերը կառավարչական գիտելիքներն ու կարողությունները խնդրառում են դպրոցի համար ղեկավար կադրերի պատրաստման նոր համակարգի ստեղծումը, քանի որ նրանց որակավորման բարձրացման ներկա կարճաժամկետ համակարգը հիմնվում է նրանց տարերայնորեն ձևավորված գործնական փորձի վրա: Ցանկացած մակարդակի ղեկավարի պաշտոնում նշանակվելը չի ենթադրում դիպլոմի (սերտիֆիկատ) առկայությունը, որը վկայում է նրանց՝ այդ պաշտոնում նշանակվելու մասնագիտական պատրաստվածության մասին:

Ղեկավար կադրերի պատրաստումն ու նշանակումը ենթադրում են ղեկավար կադրերի ձևավորման բարդ գործընթաց՝ մասնագիտական ընտրություն և ընդհանուր պատրաստվածություն, հենքային կառավարչական կրթություն՝ դիպլոմի ստացումով, պաշտոնի նշանակում, որակավորման սիստեմատիկ բարձրացում, ուսուցման և որակավորման բարձրացման ավարտին անկախ փորձաքննություն, ատեստացիայի և գործունեության արդյունքներով նյութական խրախուսում, համակարգված ինքնակրթություն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցի կառավարման մեջ տնօրենի և նրա տեղակալների կողմից կիրառվում են վերահսկողության բազմաբնույթ ձևեր ու մեթոդներ(իհարկե, տարբեր դպրոցներում տարբեր ձևերով):

Այսպես՝ օրինակ, **դպրոցի տնօրենը վերահսկում է՝**

1. աշխատանքային օրենսդրության համաձայն մանկավարժական կոլեկտիվի (ավագ դաստիարակ, բուժանձնակազմ, տնտեսվար) աշխատանքները,
2. աշակերտների ունակությունների, կարողությունների, գիտելիքների որակը,
3. մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը,
4. ուսումնական կաբինետներում դիդակտիկ նյութերի պահպանությունը, մեթոդական գրականության ապահովումը,
5. փաստաթղթերի վարման կարգը, ծնողների հետ համագործակցությունը,
6. ֆինանսատնտեսական գործունեությունը,
7. ուսուցիչների աշխատանքը՝ իր հայեցողությամբ:

Դասվարը, դասղեկը վերահսկում է.

1. տարբեր տարիքային խմբերում կրթադաստիարակչական աշխատանքների վիճակը,
2. ծրագրի կատարումը, մանկավարժական աշխատանքում կիրառվող նորույթները,
3. օրացուցային պլանների, փաստաթղթերի վարումը,
4. աշակերտների ուշագրավ աշխատանքների պահպանումը,
5. դասարանում դասավանդող ուսուցիչների կատարելու գործը:

Տնօրենը վերահսկում, իրականացնում է երեք փուլով.

1. փաստերի, տեղեկատվության հավաքում՝ բացահայտելով ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակը,

2. հավաքած նյութերի վերլուծում ու գնահատում,

3. տվյալ տարիքային խմբում կոնկրետ բարեփոխիչ միջոցառումների պլանավորում:

Վերահսկումը դպրոցում իրականացվում է՝ ելնելով աշխատանքի ամսական պլաններից: Կարելի է կազմել ժամանակացույց, նշելով ստուգվողի ազգանունը, ստուգման նպատակը, տեսակը, գործունեության կամ ռեժիմային պահի տեսակը, մեթոդները, ստուգման արդյունքները:

Մինչ ստուգումը ուսուցիչների հետ անց են կացվում զրույցներ, որոնց ընթացքում բացահայտվում է, թե նրանք ինչպես են պատկերացնում ծրագրային պահանջները, ինչ են կարդում, ուսումնասիրում, աշխատանքում ինչ դժվարություններ կան: Նման զրույցը օգնում է ճշգրտելու ստուգման նպատակը, հետագա աշխատանքը:

Վերահսկման ձևերն են՝ **նախազգուշական, ընդհանուր (ֆրոնտալ), թեմատիկ, համեմատական, ամփոփիչ, գործադրիչ:**

Նախազգուշական ստուգման խնդիրն է այս կամ այն թերության կանխարգելումը: Դա կարող է լինել ուսուցչի, դասվարի, դասղեկի պարապմունքի կամ որևէ այլ միջոցառման նախապատրաստվածություն: Կարելի է օգտագործել զրույցի, խորհրդատվության և այլ մեթոդներ:

Ընդհանուրը մի քանի օրվա ընթացքում որևէ դասարանում կրթադաստիարակչական աշխատանքի ստուգումն է: Դա հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել կատարվածի մասին, հնարավորություն ունենալ խորապես վերլուծելու, ամփոփելու այն, որոշելու օգնության ուղղությունը: Բացահայտվում են նույն դասարանում աշխատող ուսուցիչների աշխատանքի հաջորդականությունն ու օրգանական կապը, պահանջների միասնականությունը:

Դա ստուգման ձև է, որը հնարավորություն է ընձեռում զարգացնելու երեխաների համակողմանի դաստիարակությունը, ուսումնասիրվում են դաստիարակության և ուսուցման հարցերը, մանկավարժական փաստաթղթերը, սովորողների աշխատանքները, դիտարկվում են ռեժիմային պահերը, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, երեխա-երեխա փոխհարաբերությունները, երեխաների հետ տարվում են անհատական և խմբային զրույցներ, դրանց ընթացքում ի հայտ է գալիս սաների դաստիարակվածության և ընդհանուր զարգացման մակարդակը:

Թեմատիկը ծրագրի որևէ բաժնի կատարման ստուգումն է: Օրինակ՝ ինչպես են շտկվում նշված թերությունները, վերացվում թերացումները, ինչպես է իրականացվում խորհրդատվությունը, օգտագործվում աշխատանքի առաջավոր փորձը:

Ստուգման այս ձևը կարելի է կիրառել մեկ կամ մի քանի դասարաններում կամ ընդհանրապես բոլոր դասարաններում: Արդյունքների մասին տեղեկացվում է նաև դաստիարակը: Վերահսկման այս ձևը կարևոր է կոլեկտիվի ուշադրությունը որևէ խնդրի վրա կենտրոնացնելու համար: Արդյունքները քննարկվում են համապատասխան խորհուրդներում: Լինում են նաև համեմատական, ամփոփիչ, կիրարկիչ կամ գործադրիչ վերահսկողության ձևեր, որոնք նպատակաուղղված են երևան հանելու կոլեկտիվի կամ առանձին ուսուցչի կատարած աշխատանքը որոշակի ժամանակահատվածում:

Ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա համառոտակի բնութագրենք նաև վերահսկմանը ներկայացվող պահանջները:

Դրանք են՝

1. Տնօրենը պետք է ոչ միայն ստուգի աշխատանքի վիճակը, այլև իրականացնի ուսումնակրթադաստիարակչական աշխատանքի բոլոր ուղղություններով համակարգված վերահսկում,

2. վերահսկման ժամանակ կարևոր է ոչ միայն փաստաթղթերի ամրագրումը, այլև բացթողումների բացահայտումը, դրանց վերացման արդյունավետ միջոցները,

3. վերահսկումը գործնական կլինի ժամանակին իրականացնելու դեպքում,

4. պետք է պարզել ուսումնադաստիարակչական աշխատանքով բացթողման պատճառը ծնող պայմանները՝ գնահատելով կոլեկտիվի բոլոր անդամների մանկավարժական աշխատանքը, այլ ոչ թե սահմանափակվելով առանձին փաստերով,

5. վերահսկումն ավարտվում է տվյալների ամփոփմամբ,

6. անպայման պետք է կատարել վերահսկման արդյունքների հիման վրա մշակված միջոցառումները:

Վերահսկման գործընթացին ներկայացվող պահանջներն են՝

1. մշտական վերահսկողություն՝ ըստ նախապես մշակված ժամանակացույցի,

2. ուսումնադաստիարակչական բոլոր ուղղությունների ներառում,

3. կոլեկտիվի անդամների ընդգրկում,

4. տնտեսական և մեթոդական լուրջ նախապատրաստվածություն,

5. մանկավարժական աշխատանքի բոլոր ուղղությունների կապի ու փոխազդեցության ապահովում,

6. վերահսկման իրականացման համալիր ձևերի և մեթոդների կիրառում՝ կախված մանկավարժական աշխատանքի նպատակից, բովանդակությունից, ուսուցիչների որակավորումից, կոլեկտիվի անդամների փոխհարաբերությունից,

7. վերահսկման հաջորդականության պահպանում՝ նախապատրաստում, անհրաժեշտ տեղեկությունների հավաքում, վերլուծում, ժամանակացույցի, հուշաթերթի մշակում, ստուգման անցկացում, կոլեկտիվում արդյունքների ամփոփում, որոշումների կատարման ստուգում և այլն:

Այսպիսով, վերահսկումը դպրոցի կառավարման ամփոփիչ կարևորագույն գործոնն է: Այն ծառայում է կառավարման հետադարձ կապի իրականացմանը: Դպրոցի տնօրենը պետք է կանխորոշի դպրոցի զարգացման ուղիները, կայացնի հեռանկարային ճիշտ որոշումներ: Անշուշտ, դպրոցում աշխատանքի վիճակի դրվածքի բացահայտման գլխավոր միջոցը համարվում է վերահսկումը:

Հանրակրթական դպրոցներում կատարված ուսումնասիրությունների հիման վրա համառոտակի ներկայացնենք նաև դպրոցի տնօրենի աշխատանքային պլանը և նրա իրականացման փուլերը:

Դպրոցի տնօրենի աշխատանքային պլանի բովանդակության մեջ ներառվում է՝

1. դպրոցի տնօրենի՝ ուսումնական տարվա աշխատանքային պլանը և նրա իրականացման փուլերը,

2. դպրոցի տնօրենի շաբաթական ուսումնական պլանը,

3. դպրոցի զարգացման հեռանկարային պլանի մշակումը:

Հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելու գործառույթը հատուկ է դպրոցի աշխատակազի յուրաքանչյուր անդամին, անկախ այն բանից, ուսուցիչ է, թե տեղակալ (փոխտնօրեն), դասվար,

դասղեկ, լաբորանտ, թե գրադարանավար: Նրանցից յուրաքանչյուրը պլանավորում է իր աշխատանքը, սակայն դպրոցի ուսումնադաստիարակչական ողջ գործընթացի պլանավորումը(ընթացիկ, տարեկան և հեռանկարային) իրականացնում է տնօրենը: Սա նրան հնարավորություն է տալիս նախանշել նպատակները (ի՞նչ են ուզում անել), որոշել իրագործման մեխանիզմը (ինչպե՞ս ենք անելու), պարզել հնարավոր աջակիցների շրջանակը (ո՞ւմ հետ կարելի է համագործակցել, ովքե՞ր են աջակցելու): Ասում են՝ լավ պլանավորումը գործի կեսն է:

Սակայն կա նաև մի ուրիշ կարևոր հանգամանք. պլանները(հեռանկարային, կիսամյակային, ամսական, առարկայական մասնախմբերի, դասղեկական և այլն) կազմելուց և հաստատելուց հետո դրանք թղթի վրա էլ կմնան, եթե չմշակվի դրանց կատարման ընթացքին հետևող կանոնավոր գործող կարգը:

Ուսումնասիրությունների ընթացքում[310] նկատել ենք, որ դպրոցում ամեն ամիս քննարկվում է նախորդ ամսին պլանավորված աշխատանքների և տնօրենի՝ նույն ժամանակահատվածի համար տրված հանձնարարությունների կատարման վիճակը, նշվում թերացման պատճառները, անհրաժեշտության դեպքում դրանք հետաձգվում են, ապա միայն կազմվում է նոր աշխատանքային պլան:

Տնօրենի ամենաանհրաժեշտ հատկանիշներից մեկը համարում ենք հաղորդակցվելու գերազանց կարողությունը: Չէ՞ որ մարդկանց հետ աշխատելու հմտությունը կախված է նրանց լսելու և արձագանքելու ունակությունից:

Հաղորդակցությունն ամենօրյա գործընթաց է և, ինչպես հաճախ նշվում է մասնագիտական գրականության մեջ, տեղի է ունենում տարբեր մակարդակների վրա և տարբեր ենթահամակարգերում: Հաղորդակցվելով ամենատարբեր մարդկանց հետ՝ տնօրենը հստակեցնում է իր ղեկավարած դպրոցի նպատակները, ընթացակարգերը, կանոնները, լուսաբանում նրա առանձնահատկությունները և էությունը: Չափազանց կարևոր է նաև, որ դպրոցի բոլոր օղակները, ինչպես նաև ծնողական համայնքը, տեղյակ լինեն առկա մտահոգացումներին և նորություններին: Վերոնշյալ դպրոցների տնօրենների փորձի ուսումնասիրությունը մեզ համոզել է, որ միայն այս կերպ կարելի է հասնել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման:

Այսօր բարեփոխվող դպրոցի պայմաններում զգալիորեն փոխվել են տնօրենի դերը և պարտականությունները:Ավանդական դպրոցում տնօրենը վարչական գործառույթ է իրականացնում: Արդյունավետ աշխատող տնօրենները (Լ.Մարտիրոսյան, Ստեփանակորտի թիվ 2 դպրոց, Ռ.Դադայան, թիվ 1 դպրոց, Ա.Պողոսյան, թիվ 7 դպրոց, Ա.Գրիգորյան, թիվ 11 ավագ դպրոց, Լ.Հովհաննիսյան, թիվ 3 հիմնական դպրոց, Վ.Ղազարյան, թիվ 5 հիմնական դպրոց, Վ.Ղահրամանյան, թիվ 6 հիմնական դպրոց) պատասխանատու են դպրոցում ուսումնադաստիարակչական, մանկավարժական կոլեկտիվի և ուսումնաօժանդակ անձնակազմի, տնտեսական մասի աշխատանքների պլանավորման, կազմակերպման և վերահսկման աշխատանքների իրականացման համար: Նշված և շատ այլ դպրոցների (Մեծ Թաղերի, Բերձորի, Ճարտարի, Գիշու, Տողի, Տումու, Շոշի, Կուսապատի, Հաթերքի և այլն) տնօրենները մանկավարժական հմտությամբ առաջնորդում և վերահսկում են դպրոցում իրականացվող աշխատանքները:

Մանկավարժական հայտնի ճշմարտություն է, որ հանրակրթական դպրոցի գործունեության պլանավորումը դպրոցի առջև դրվող նպատակների և խնդիրների սահմանումն է, դրանց իրականացմանն ուղղված համապատասխան ծրագրե-

րի և ռազմավարության մշակումը:

Ելակետ ունենալով այս ուղեցույցի դրույթը, դպրոցի տնօրենն իր աշխատանքային պլանը մշակելիս հիմք է ընդունում հանրակրթության ոլորտում, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում իրականացվող բարեփոխումները և որոշում դպրոցի հիմնական խնդիրները տվյալ ուսումնական տարում, այդ խնդիրների իրականացման միջոցներն ու մեթոդները, աշխատանքի կատարման հաջորդականությունը և ժամանակացույցը:

Տնօրենի տարեկան աշխատանքային պլանի մշակման հիմքերն են՝

1. «Կրթության մասին» ՀՀ, ԼՂՀ օրենքները, դպրոցի մասին կառավարության, կրթության և գիտության նախարարության որոշումները,

2. կրթության կառավարման մարմինների կարգադրություններն ու հանձնարարականները,

3. մանկավարժական գիտության նորագույն նվաճումները,

4. տվյալ դպրոցի զարգացման հեռանկարային պլանը, նախորդ ուսումնական տարվա արդյունքները:

Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի տնօրեն Լ.Մարտիրոսյանը մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ ասաց, որ դպրոցի տնօրենը տարեկան պլանի մշակումը կատարում է ընթացիկ ուսումնական տարվա վերջում և այն ավարտում, երբ ամփոփվում են ուսումնական տարվա արդյունքները: Այդ աշխատանքում ներգրավվում են դպրոցի ղեկավար կազմը, հասարակական կազմակերպությունների ղեկավարները և ուսուցիչները: Դպրոցների տնօրենների աշխատանքային պլանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պլանի մշակման աշխատանքն ունի երեք փուլ՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքների և դպրոցի աշխատանքները բարելավելու մասին կոլեկտիվի առաջարկությունների ամփոփումն ու վերլուծումը, նոր ուսումնական տարվա խնդիրների և դրանց իրականացման ուղիների ու եղանակների որոշումը, **պլանի նախագծի** մշակումը, քննարկումը և հաստատումը մանկավարժական խորհրդում: Դպրոցի տարեկան պլանի կարևոր հատկանիշներն են կոնկրետությունը, գործնականությունը և պարզությունը, այն չպետք է լինի ծավալուն և մանրամասնություններով ծանրաբեռնված:

Տարեկան պլանն ունենում է երկու մաս: **Առաջին մասը** պլանի ներգործությունն է, որտեղ շատ համառոտակի վերլուծվում են նախորդ ուսումնական տարվա հիմնական արդյունքները և շարադրվում նոր ուսումնական տարվա գլխավոր խնդիրները: **Երկրորդ մասը** կազմում են այն կոնկրետ միջոցառումները, որոնց կիրառումը պետք է ապահովի դպրոցի առջև դրված խնդիրների լուծումը: Պլանում այդ միջոցառումները համախմբվում են ըստ դպրոցի գործունեության հիմնական բնագավառների և նշվում ժամանակագրական հաջորդականությամբ, ընդ որում ցույց են տրվում յուրաքանչյուր միջոցառման բովանդակությունը, կատարման ժամկետը և կատարող պատասխանատու անձը:

Ուսումնասիրությունների հիման վրա համառոտակի ներկայացնենք դպրոցի տնօրենի (Ս.Շահրամանյանի, Ստեփանակերտի, թիվ 10 հիմնական դպրոց, Ա.Գրիգորյանի, թիվ 11 ավագ դպրոց, Ա.Գրիգորյանի Վաղուհասի միջնակարգ դպրոց, Ա. Խաչատրյանի, Կուսապատի միջն. դպրոց, Ն. Առստամյանի, Վ. Հոռաթաղի միջն. դպրոց) տարեկան աշխատանքային պլանում ընդգրկված մի քանի հարցերի բովանդակությունը: Դրանք են՝

1. ուսումնական աշխատանքների պլանավորումը և դրանց իրականացման փուլերը,

2. մանկավարժական խորհրդի աշխատանքների պլանավորումը և դրանց իրականացման փուլերը,

3. դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդումը, ծնողների հետ տարվող աշխատանքների պլանավորումը,

4. մանկավարժական կադրերի մասնագիտական որակի բարձրացումը, մանկավարժական կադրերի գնահատումը և այլն:

Պարզաբանենք այդ հարցերի բովանդակությունը:

Ուսումնական աշխատանքների պլանավորումը և նրա իրականացման փուլերը: Դպրոցի գործունեության պլանավորման հիմնական ձևը ուսումնական աշխատաքների պլանավորումն ու արդյունավետ կազմակերպումն է: Հիմնահարցի քննարկումը դիտարկենք դպրոցի պրակտիկ փորձից վերցրած կոնկրետ օրինակների հիման վրա՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այսօր բուհի շրջանավարտը վաղը ղեկավարելու է դպրոցը, այդ տեսանկյունով էլ նա պետք է ծանոթ լինի դպրոցի պրակտիկ փորձին, տնօրենի աշխատանքային պլանի հիմնադրույթներին, նրա առանձնահատկություններին:

Հիմնավորենք կոնկրետ օրինակներով: Ինչպես վերոնշյալ, այնպես էլ Ստեփանակերտի թիվ 2, 7 դպրոցների տնօրենների ուսումնական աշխատանքային պլանների բովանդակությունն ուսումնասիրելով, հարցազրույց ենք ունեցել տնօրենների հետ:

Այսպես, օրինակ, Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անվան թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Լ.Մարտիրոսյանի ուսումնական տարվա աշխատանքային պլանին ծանոթանալիս մենք հարցազրույց ունեցանք նրա հետ՝ պարզելու համար, թե ինչ սկզբունքներով է պլանավորել տվյալ ուսումնական տարում կատարվելիք ուսումնադաստիարակչական աշխատանքները: Տնօրենը այսպես պարզաբանեց:

- Դպրոցի աշխատանքների պլանը մանկավարժական կոլեկտիվի գործունեության կառավարման հիմնական միջոցն է: Մշակել դպրոցի պլանը, նշանակում է որոշել դպրոցի նպատակները, խնդիրները, մտածել, թե ուսումնական տարվա առանձին փուլերում և վերջում կրթական և դաստիարակչական ինչ հարցեր են լուծվելու, ինչ արդյունքների է ձգտում հասնել դպրոցը, որոշել դրանց հասնելու պայմանները, որոշել, թե կոլեկտիվի յուրաքանչյուր անդամ երբ, ինչ պետք է անի այդ խնդիրների լուծման համար և այլն: Այս հարցերի պատասխանները տրվում են դպրոցի աշխատանքների պլանավորման մեջ: Դպրոցի աշխատանքների հիմքը կրթադաստիարակչական նպատակներն են, այսինքն՝սպասվող այնպիսի արդյունքները, որոնք համապատասխանում են կրթական հաստատության պահանջներին, նրա կոլեկտիվի անդամների մոտիվացիային և նշված ժամանակահատվածում դրանք իրականացնելու հնարավորություններին: Դպրոցում ընթացող համատեղ աշխատանքի ընթացքում ընդհանուր, բոլորի կողմից ընդունված և համաձայնեցված նպատակները համարվում են մանկավարժական կոլեկտիվի կազմակերպվածության, համախմբվածության, միասնականացված ընդհանուր գործունեության անհրաժեշտ պայմաններ: Այսինքն՝ նպատակը հանդես է գալիս կազմակերպողի, համախմբողի, միասնականացնողի դերում:

Դպրոցի կառավարման աստիճանական ապակենտրոնացումը, նրա ոչ առևտրային կազմակերպություն դառնալն այսօր առավել ևս նպաստեցին նպատակադրության ինքնուրույնությանը՝ հաշվի առնելով աշակերտական կոլեկտիվի ուսումնական և կրթական նոր ծառայությունների պահանջմունքները, միկրոմիջավայրի առանձնահատկությունները, կրթական նոր ծրագրերը, ուսման որա-

կի և գիտելիքների գնահատման նոր չափանիշները: Պլանավորման մեջ, հատկապես նպատակների պլանավորման մեջ, կարևոր է դպրոցի առջև ծառացած սկզբունքային և տեխնիկական հարցերի հավասարակշռվածությունը: Սակայն դպրոցի գլխավոր նպատակը մնում է անձի ընդհանուր դաստիարակության գործընթացի պալանավորումն ու նրա իրականացումը: Դպրոցի աշխատանքների պլանավորման արդյունավետությունն ապահովվում է որոշակի նախադրյալների առկայության պայմաններում:

Հատուկ ձևակերպված նպատակներ՝

- պլանավորման պահին դպրոցի աշխատանքների մակարդակի իմացություն,
- մանկավարժների ակտիվ գործունեություն, որը պետք է նպատակամղված լինի դպրոցի առջև ծառացած խնդիրների իրագործման միջոցների և պայմանների ստեղծմանը, որը հնարավորություն է տալիս նոր, ավելի բարձր մակարդակով իրականացնելու դպրոցի աշխատանքները:
- նախընթաց փուլի աշխատանքների արդյունքների հանգամանալից վերլուծություն:

Պատահական չէ, որ ընդհանուր դպրոցական տարեկան պլանի նախագծի կազմումը սկսվում է ուսումնական տարվա վերջին քառորդից, երբ իմի են բերվում, քննարկվում ու վերլուծվում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները և արդեն հստակ երևում են ուսուցման և դաստիարակության մեջ ձեռքբերումներն ու թերությունները:

Նշենք նաև, որ Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցի տնօրեն Վալերիկ Սահակյանի ուսումնական տարվա աշխատանքների պլանում ընդգրկվում են հետևյալ հիմնական հարցերը՝

1. դպրոցի կոնկրետ խնդիրների առանձնացում,
2. դպրոցական գործի էական դրույթների վերլուծություն, դժվարությունների, հարցերի բացահայտում, որոնց վրա տարվա ընթացքում պետք է ուշադրություն դարձնել,
3. նշված առաջադրանքների կատարման միջոցառումների ցանկի մշակում,
4. ժամկետների և պատասխանատուների նշանակում,
5. ընդունած որոշումների կատարման, վերահսկողության և արդյունքների ամփփում,
6. բաց և փոխադարձ դասալսումների կազմակերպում, արդյունքների վերլուծություն, գնահատում, թերությունների բացահայտում ու վերացում,
7. դպրոցի ուսումնական պլանների ճշգրտում,
8. ուսումնական պարապմունքների արդյունավետ կազմակերպում դասացուցակին համապատասխան,
9. մանկավարժական կոլեկտիվին կրթության համակարգում եղած նորությունների ծանոթացում,
10. վերահսկողության իրականացում ուսումնական աշխատանքներում և այլն:

Դպրոցի աշխատանքային պլանում տնօրենը հատուկ ուշադրություն է հատկացնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման արդյունավետությանը՝ հիմնական և ավագ դպրոցի կրթության իրականացման համար:

Պլանը կազմվում է սեպտեմբերի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Պլանի նախապատրաստումը իրականացվում է մի քանի փուլերով:

Առաջին փուլում կատարվում է անցած տարվա արդյունքների ամփոփում, նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրում, պլանի ընդհանուր հայեցակարգի մշակում, առաջատար օղակների առանձնահատկությունների, նպատակների, խնդիրների, մանկավարժական պայմանների և նրանց իրականացման ուղիների ու միջոցների որոշակիացում: Այդ փուլի իրականացումը սկսվում է ուսումնական տարվա վերջում:

Երկրորդ փուլում կատարվում է կոնկրետ միջոցառումների ընտրություն, որոնք ապահովում են առաջադրված խնդիրների կատարումը, նշվում են միջոցառումների անցկացման ժամկետները, նրանց կատարման պատասխանատուները, վերահսկման մեթոդներն ու ձևերը: Միջոցառումների անցկացման ժամանակացույցը կարող է լինել ըստ օրերի կամ ըստ շաբաթների: Այդ փուլը պլանի ձևավորումն է՝ որպես փաստաթուղթ:

Պլանի համաձայն դպրոցի ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները պետք է սկսվեն օգոստոս ամսից և ավարտվեն քննարկմամբ օգոստոսի վերջին կայանալիք մանկավարժական խորհրդի նիստում: Պլանի կազմման պատասխանատվությունը անձամբ կրում է տնօրենը:

Երրորդ փուլում տնօրենը խմբագրում է աշխատանքների պլանը, ներկայացնում այն մանկավարժական կոլեկտիվի քննարկմանը: Կոլեկտիվի հավանությունը ստանալուց հետո տնօրենը հաստատում է դպրոցի ուսումնական տարվա աշխատանքների պլանը և կազմակերպում նրա իրագործման գործընթացը:

Համառոտակի ներկայացնենք նաև Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Պողոսյանի տարեկան աշխատանքային պլանի կառուցվածքը, որից բխում են ընթացիկ, կիսամյակային և, իհարկե, նաև զարգացման հեռանկարային պլանի դրույթները: Տնօրենի տարեկան աշխատանքնային պլանը բովանդակում է յոթ հիմնական բաժիններ (ներկայացնում ենք շատ համառոտակի).

Առաջին բաժին՝ ներածություն. անցած (2011-2012) ուս.տարվա աշխատանքների կարճ վերլուծությունը և նոր ուս.տարվա(2012-2013) խնդիրները.

ա) ուսուցման գործընթացի կազմակերպումը դպրոցում,

բ) նորամուծությունների փորձարկման և ներդրման աշխատանքներ,

գ) արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ,

դ) աշխատանք մանկավարժական կադրերի հետ, ուսուցչի աշխատանքի ռացիոնալ կազմակերպում,

ե) դպրոցի համատեղ աշխատանքը ծնողների, արտադպրոցական հիմնարկների հետ,

զ) ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը,

է) դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը,

ը) դպրոցի աշխատանքներն արձակուրդներին:

Այս բաժինը սկսվում է ուսուցման և դաստիարակության նպատակների որոշմամբ, իսկ հետո նշվում են նրանց իրականացմանն ուղղված միջոցառումները, թվարկվում այն միջոցները, որոնք պայմաններ են ստեղծում ուսուցման ու դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման համար:

Կատարվում է ուսուցման տեխնիկական միջոցների բաշխումը ըստ կաբինետների, դասերի, նախապատրաստական պարապմունքների, խմբակների, թեմատիկ պլանների կազմման, ուսուցիչների կողմից նորմատիվային փաստաթղթերի

և ուսումնական ծրագրերի ուսումնասիրման:

Դպրոցի աշխատանքների այս բաժինը պլանավորելիս տնօրենը հաշվի է առնում կրթության բովանդակության նկատմամբ ընդհանուր պահանջները, որոնք սահմանված են ուսումնական ծրագրերով, իսկ ուսումնական նյութի ուսումնասիրման ծավալը նշված է թեմատիկ պլաններում:

Այսինքն՝ հիմնական ուշադրությունը բևեռում է ոչ թե ընդհանուր դրույթների կրկնությանը, այլ տվյալ դպրոցի պայմաններում ուսուցման կատարելագործման կոնկրետ ուղիների որոշմանը: Այստեղ նախատեսվում են այն հարցերը, որոնք կապված են սովորողների մեջ ուսուցման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի դաստիարակման, նրանց ճանաչողական հետաքրքրությունների զարգացման, նախասիրական պարապմունքների կազմակերպման, առարկայական օլիմպիադաների, մրցույթների, էքսկուրսիաների կազմակերպման հետ (այդ ոլորտում դպրոցը հասել է մեծ հաջողությունների): Նախանշվում են նաև դպրոցի զարգացման գործընթացի ուղիները:

Տնօրենի աշխատանքային պլանի **երկրորդ բաժնում** դիտարկվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարումը:

Այս բաժնում կատարվում է դպրոցի անցած ուսումնական տարվա կարևոր տեսանկյունների վերլուծություն, առաջադրվում են նոր ուսումնական տարվա խնդիրները՝ կրթության ազգային ծրագրին և հայեցակարգին համապատասխան, նշվում են այն մանկավարժական գիտահետազոտական թեմաները, որոնց վրա աշխատում է կամ պետք է աշխատի դպրոցի մանկավարժական կոլեկտիվը: Վերլուծության ժամանակ շոշափվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են սովորողների գիտելիքների որակը և դաստիարակվածության մակարդակը, դասավանդման և դաստիարակչական միջոցառումների մակարդակը, ուսուցիչների որակավորումը, վերամասնագիտացումն ու ատեստացիան, ընդհանուր մեթոդական աշխատանքները, թվարկվում են չլուծված խնդիրները:

Այս բաժնում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դպրոցում կազմակերպվող արտադասարանական և արտադպրոցական բազմաբնույթ աշխատանքների կազմակերպմանը:

Նշվում է սովորողների հետ տարվող արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների համակարգը՝ ըստ դաստիարակության հիմնական ուղղությունների, նախատեսվում է ընդհանուր դպրոցական բազմազան միջոցառումների անցկացում՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները և դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցման սկզբունքները: Դպրոցականների արտաուսումնական և արտադպրոցական գործունեության բոլոր ձևերը պետք է ուղղված լինեն նրանց բարոյական, աշխատանքային, հոգևոր դաստիարակությանը, բնաճանաչողական, բնապահպանական ընդունակությունների, բնության նկատմամբ խնայողական վերաբերմունքի, կարողությունների ձևավորմանը, գեղագիտական ու ֆիզիկական զարգացմանը:

Հատկապես մանրակրկիտ աշխատանք է պահանջում էկոլոգիական դաստիարակության կազմակերպումը: Մեր կարծիքով՝ յուրաքանչյուր դպրոցում պետք է ստեղծել սովորողների բնաճանաչողական, բնապահպանական, հայրենագիտական աշխատանքների միասնականացված համակարգ:

Երրորդ բաժնում բնութագրվում են ուսումնադաստիարակչական գործընթացի վերահսկողության կազմակերպման ձևերը, տեսակները, սկզբունքներն ու մեթոդները:

Վերահսկողությունը՝ որպես կառավարման կարևորագույն գործառույթ, իրականացվում է «Կրթության մասին» օրենքի դրույթների, դասավանդման ու դաստիարակության, ուսման որակի և սովորողների գիտելիքների գնահատման, ուսումնական ծրագրերի իրագործման նպատակով:

Այս բաժինը ձևավորվում է գծապատկերով. տարին բաժանվում է կիսամյակների, կիսամյակները՝ ամիսների, ամիսները՝ շաբաթների:

Գծապատկերում նշվում են վերահսկողության նպատակը, դասարանները, խմբակները, նախասիրական պարապմունքները, ինչպես նաև միջոցառման համար պատասխանատու անձինք, ստուգման ձևերը:

Ստուգման հիմնական նպատակը դպրոցի առջև դրված խնդիրների իրականացումն է:

Ստուգման ձևերն են՝

ա) պլանների, դասամատյանների, խմբակների և նախասիրական պարապմունքների մատյանների ստուգում,

բ) ստուգողական աշխատանքների անցկացում,

գ) սովորողների բանավոր հարցումներ, անկետավորում, դասապարապմունքների դիտում, մասնակցություն խմբակներին և նախասիրական պարապմունքներին, դաստիարակչական միջոցառումներին, դասասենյակների սանիտարահիգիենիկ պայմանների ստուգում, դասագրքերի շահագործման և ուսուցման տեխնիկական միջոցների վիճակի ուսումնասիրում և այլն:

Տնօրենի տարեկան աշխատանքային պլանի **չորրորդ բաժնում** բնութագրվում են մանկավարժական կադրերի տեղաբաշխումը և պարտականությունների բաժանումը:

Պլանում որոշակիացվում են ուսուցիչների ծանրաբեռնվածությունը, դասարանների ղեկավարների ընտրությունը, խմբավարները և նախասիրական պարապմունքների ղեկավարները, կաբինետների վարիչները, մեթոդական և դասղեկական միավորումների ղեկավարները:

Պլանում նախատեսվում են մանկավարժական և դասղեկական որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումները՝ մանկավարժական առաջավոր փորձի, նոր տեխնոլոգիաների, դիդակտիկական նոր համակարգերի, ուսուցման ակտիվ մեթոդների ուսումնասիրում և ընդհանրացում, նոր առարկաների գծով ատեստացիայի անցկացում, մանկավարժական գիտամեթոդական աշխատանք երիտասարդ ուսուցիչների հետ, ուսուցիչների ինքնակրթության համար պայմանների ստեղծում, ուսուցիչների ստեղծագործական որոնումների խթանում և այլն:

Այս բաժնի կառուցվածքային մաս են կազմում մանկավարժական խորհրդի նիստերի անցկացման գրաֆիկը, տնօրենին կից խորհրդակցությունները և այլն:

Հինգերորդ բաժնում բարեփոխվող դպրոցի պահանջներին համապատասխան բնութագրվում են դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման և մեթոդական աշխատանքները:

Այսինքն՝ բաժնում տեղ են զբաղեցնում ուսուցիչների վերապատրաստման և վերամասնագիտացման հարցերը, դպրոցի մեթոդական միավորումների աշխատանքը, դասալսումները, մանկավարժական խորհրդի աշխատանքային խնդիրները, ուսուցիչների մասնակցությունը կրթական ծրագրերի շտկմանը, միջդպրոցական մեթոդական միավորումների աշխատանքներին, մանկավարժական ընթերցումներին, մեթոդական համաժողովներին: Նշվում են ուսուցիչների ինք-

նակրթության համար նախատեսված և մանկավարժական փորձի ընդհանրացման թեմաները և այլ հարցեր:

Դպրոցի տարեկան աշխատանքնային պլանի վերջին բաժիններում բնութագրվում են ընտանիքի, հասարակության, մշակութային հաստատությունների հետ դպրոցի համատեղ աշխատանքը, դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության կառավարումը և ներդպրոցական կյանքին առնչվող այլ հարցեր:

4. Դպրոցի կառավարման իրավական հիմքերը (դպրոցի գործունեության և զարգացման օրենսդրական բազան)

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանում և Արցախի նորաստեղծ հանրապետությունում արմատական փոփոխություններ տեղի ունեցան ոչ միայն հասարակական կյանքի լորտներում, այլ նաև կրթական հաստատությունների կառավարման համակարգում: Կրթական հաստատություններում բարեփոխումների իրականացման համար ամուր հիմք հանդիասացած նորաստեղծ հանրապետության «Ազգային ժողովի» կողմից ընդունված օրենքները, կառավարության, կրթության, գիտության նախարարության որոշումները, որոնք զուտ ազգային ուղղվածություն ունեն:

1999թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության, 2000թ. Լեռնային Ղարաբաղի հանրապետության Ազգային ժողովի կողմից առաջին անգամ ընդունվեց «Կրթության մասին» օրենքը, որն իրավական հիմքեր ստեղծեց դպրոցի կառավարման համար: Օրենքով սահմանվեց կրթության բնագավառում առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապանդման կարևորագույն գործոն:

Այսպիսով, կրթության համակարգը որպես մի ներդաշնակ ամբողջականություն իր իրավական ձևակերպումն ու իմաստավորումը ստացավ «Կրթության մասին» (2000թ. մարտի 15-ին), «Միջին մասնագիտական կրթության մասին» (2006թ. սեպտեմբերի 27-ին) և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին»(2005թ. մայիսի 25-ին) Ազգային ժողովի կողմից ԼՂՀ օրենքների ընդունմամբ: Այդ օրեքներով սահմանվեցին կրթության համակարգը և կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:

Օրենքով նշվում է, որ դպրոցի գործունեության նորմատիվ-իրավական բազան իր մեջ ներառում է օրենսդրական և կանոնադրական այն ակտերը, որոնք ընդունվում են օրենսդրական մարմինների և գործադիր իշխանությունների կողմից: Օրենքում նշվում են նաև դպրոցի գործունեության օրենսդրության խնդիրները:

Դրանք են՝

- ԼՂ Հանրապետության քաղաքացիների Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը,
- իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև,
- կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը,

• կրթության զարգացմանը միտված՝ կրթական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատության օրենսդրական ամրագրումը, հաստատության հիմնախնդիրների, իրավունքների սահմանումը, ինչը հնարավորություն է տալիս էականորեն ընդլայնել ուսումնական հաստատության ֆինանսավորման աղբյուրների շրջանակը:

Դպրոցի կառավարման իրավական հիմքերը օրենքում դիտարկվում են որպես դպրոցի գործունեության ընդհանուր օրենսդրական բազա և նրա արտացոլումը դպրոցի կանոնադրության մեջ, ինչպես նաև իրավական նորմերը, որոնք կարգավորում են դպրոցի տնտեսական և աշխատանքային հարաբերությունները: Առաջին անգամ դպրոցն իրավասություններ ձեռք բերեց ինքնուրույնաբար լուծելու իրեն վերաբերող հարցերի լայն շրջանակը: Սովորողներին և նրանց ծնողներին իրավունք տրվեց դպրոցի ընտրություն կատարելու: Ձևավորվեցին ոչ պետական ուսումնական հաստատություններ՝ դպրոցներ, վարժարաններ, քոլեջներ, բուհեր: Այսինքն վերացվեց կրթության համակարգում պետության երկարամյա մենաշնորհը, ճանապարհ բացվեց տարբեր տեսակների և ձևերի ուսումնական հաստատությունների համար:

Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ սահմանադրությունները և «Կրթության մասին» օրենքները երաշխավորում են ՀՀ և ԼՂՀ քաղաքացիների կրթություն ստանալու իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դասակարգից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

Պետությունը քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով բարձրագույն կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմաններ:

Պետական հանրակրթական դպրոցների առաջինից երրորդ դասարանների աշակերտներին պետական բյուջեի միջոցների հաշվին պետությունը անվճար ապահովում է դասագրքերով, բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի, իսկ սոցիալական անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

Դպրոցի կառավարման իրավական հիմքերը կամ դպրոցի գործունեության նորմատիվ -իրավական բազան իր մեջ ներառում է հետևյալ դրույթները.

1. <u>Դպրոցի ստեղծման և լիցենզավորման իրավական հիմքերը:</u> Այս բաժնում նշվում է, որ ուսումնական հաստատությունը ստեղծվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ: Հարաբերությունները դպրոցի և նրա հիմնադրի միջև կարգավորվում են նրանց միջև կնքվող հիմնադրային պայմանագրով: Պայմանագիրը պետք է հստակ սահմանի կողմերի փոխադարձ պարտավորությունները, նրանց պատասխանատվությունն այդ պարտավորությունների կատարման նկատմամբ:

Օրենքը սահմանում է կրթական հաստատության ստեղծման և գործունեության կանոնակարգը: Նոր ստեղծվող դպրոցի գրանցումը իրականացվում է հայտի ներկայացմամբ:

Ուսումնական հաստատությունը ստեղծված է համարվում հիմնադրի (հիմնադիրների) կողմից նրա կանոնադրությունը հաստատվելուց և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո:

Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը նրա հիմնադրի

(հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:

Կանոնադրության պահանջները պարտադիր են ուսումնական հաստատության և նրա հիմնադիրների համար:

Ուսումնական հաստատության կանոնադրությունում նշվում են հաստատության անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գտնվելու վայրը, գործունեության առարկան և նպատակները, կառավարման կարգը, տվյալներ մասնաճյուղերի վերաբերյալ, գույքի ձևավորման աղբյուրները, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը, ուսումնական հաստատության լուծարման դեպքում՝ գույքի տնօրինման կարգը:

Գրանցման պահից դպրոցը ստանում է իրավաբանական անձի իրավունք և կարող է իրականացնել ֆինանսատնտեսական գործունեություն՝ ուղղված կրթական գործընթացի նախապատրաստմանն ու իրականացմանը:

Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիան տրվում է ուսումնական հաստատությանը հետևյալ պահանջների բավարարման դեպքում՝

ա) հիմնական մանկավարժական կազմ,

բ) լաբորատոր բազա և ուսումնական տարածք,

գ) ուսումնամեթոդական ապահովում,

դ) գրադարանային-տեղեկատվական համակարգ,

ե) ուսումնաարտադրական պրակտիկայի բազա:

Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Բոլոր այդ պայմանների գնահատման համար պետական կառավարման մարմնի կողմից ստեղծվում է փորձաքննական հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են կառավարման համապատասխան մարմինների ներկայացուցիչներ, բժիշկներ, շինարարներ և այլն:

Կրթական գործընթացի բովանդակությունը, կազմակերպումն ու մեթոդիկան փորձաքննության առարկա չեն համարվում:

Լիցենզիայում փաստվում են վերահսկողական նորմատիվները, սովորողների համակարգի սահմանային չափը, լիցենզիայի ուժի մեջ լինելու ժամանակահատվածը:

Դպրոցի կողմից պայմանների պահպանման վերահսկողությունն իրականացնում է լիցենզիա տվող մարմինը:

Պայմանների խախտումը կարող է հանգեցնել լիցենզիայի ժամանակից շուտ դադարեցման:

2. <u>Կրթական այլ հաստատությունների հավատարմագրման և ատեստավորման իրավական հիմքերը:</u> «Կրթության մասին» օրենքում նշվում է, որ ՀՀ-ում և ԼՂՀ-ում միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների: Հավատարմագրման կարգը, չափանիշները և ժամկետները հաստատում է ՀՀ կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայությամբ:

Պետական հավատարմագրումն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ անկախ ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից, ուսումնական հաստատության և նրանց սովորողների ատեստավորման վորաբերյալ եզրակա-

ցության հիման վրա:

Պետական հավատարմագրման պայման է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովումը:

Ուսումնական հաստատության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների(կրթահամալիրների, մասնաճյուղերի) կրթական գործունեությունը լիցենզավորում, իսկ այդ ստորաբաժանումները և դրանց մասնագիտությունները հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ օրենքով սահմանված կարգով:

Պետական հավատարմագրման վկայականը հաստատում է ուսումնական հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագրերի մակարդակը, դրանց բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Լիցենզիա և պետական հավատարմագրման վկայական շնորհելու կամ այդ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» ՀՀ և ԼՂՀ օրենքներով սահմանված կարգով և չափով:

3. <u>Պետական վերահսկողությունն ուսման որակի նկատմամբ:</u> Դպրոցների լիցենզավորման, ուսման որակի պետական վերահսկողության և մասնագիտությունների հավատարմագրման համար եզրակացություն տալու նպատակով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ստեղծում է լիցենզավորման և հավաստագրման ծառայություն: Ծառայության կանոնադրությունը հաստատում են ՀՀ և ԼՂՀ կառավարությունները:

Լիցենզավորման և հավաստագրման ծառայությունը պարբերական ատեստավորումների արդյունքով կարող է կրթության պետական կառավարման լիազորված մարմնին զեկուցագիր ներկայացնել լիցենզավորման, ուսման որակի պետական կրթական չափորոշիչների պահանջները չապահովելու վերաբերյալ:

Զեկուցագրի ներկայացման համար կարող է հիմք ծառայել սովորողների (ծնողների) ընդհանուր ժողովի որոշումը կամ լիցենզավորման և հավատարմագրման ծառայության պաշտոնական ներկայացումը սովորողների ատեստավորման բացասական արդյունքի վերաբերյալ:

Զեկուցագրի հիման վրա կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած որոշումը դպրոցը կարող է բողոքարկել դատարանում:

4. <u>Դպրոցի կառավարման իրավական կարգավորումը:</u> Կրթության մասին ՀՀ և ԼՂՀ օրենքները պետական ոչ առևտրային կազմակերպությունները և «ՀՀ պետական հանրակրթական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության հաստատումը էական փոփոխություններ մտցրին կրթական համակարգի և, մասնավորապես, ներդպրոցական կառավարման մեջ:

Նշված օրենքով և կանոնադրությամբ սահմանվեցին կրթական հաստատությունների կառավարման կարևորագույն սկզբունքները՝ ժողովրդավարական և պետական-հասարակական բնույթը: Բավականին երկար ժամանակ հասարակությունը գործնականում զրկված էր դպրոցների կառավարմանը մասնակցելուց, և բոլոր հարցերը լուծվում էին տարբեր մակարդակների պետական ծառայությունների կողմից:

Դպրոցի կանոնադրությունը համարվում է կարևորագույն իրավական փաս-

տաթուղթ, որը դպրոցի վրա մեծ պատասխանատվություն է դնում: Յուրաքանչյուր իրավաբանական սխալ կարող է դպրոցին կանգնեցնել անախորժությունների առջև:

Այս օրենքով և կանոնադրությամբ սահմանափակվեցին տարբեր մակարդակների կառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները: Հանրապետական մակարդակով լուծվում են ռազմավարական բնույթի հարցեր, որոնք որոշում են կրթության ոլորտում պետական քաղաքականությունը, կրթության զարգացման հանրապետական ծրագրերը, կրթական հաստատությունների ստեղծման, վերակազմավորման, լուծարման կարգի սահմանումը, պետական կրթական չափորոշիչների հանրապետական բաղադրիչի բացահայտումն ու սահմանումը, լիցենզավորման կարգի սահմանումը և այլն:

Իրավունքների մեծ մասը տրվեց դպրոցներին՝ ըստ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության:

Դպրոցի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով: Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների՝ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրով նախատեսված կառավարման և ֆինանսավորման նոր կարգի անցման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 444 որոշմամբ հաստատված ժամանակացույցի, իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ՝ առարկայական մեթոդական միավորումներ:

Համայնքի ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում, որպես խորհրդատվական մարմին, ձևավորվում է ծնողական խորհուրդ, կարող են ձևավորվել նաև հոգաբարձուներ և այլ խորհուրդներ:

Դպրոցի հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Դպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) դպրոցի հիմնադրումը,

բ) դպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) դպրոցին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ) դպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

ե) դպրոցի կառավարման համակարգի սահմանումը,

զ) դպրոցի վերակազմակերպումը և լուծարումը,

է) ՀՀ և ԼՂՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված հարցերի լուծումը:

Լիազորված մարմինն իրականացնում է հաստատության ընդհանուր կառա-

վարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Լիազորված պետական մարմինը՝

ա) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) վերահսկողություն է իրականացնում դպրոցի գործունեության նկատմամբ,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում դպրոցի գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է դպրոցի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում հաստատության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը (եթե հաստատությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին),

ը) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Դպրոցի սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության արտադրած և ձեռք բերած գույքից:

Դպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրության համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումնից հետո մնացած գույքի:

Դպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

Դպրոցը չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու իրավունք:

Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:

Դպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնարկի սեփականությունն են:

Դպրոցը ՀՀ և ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:

Դպրոցին ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

Դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) ՀՀ և ԼՂՀ կառավարությունների կողմից սահմանված կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ՀՀ, ԼՂՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,

գ) ՀՀ և ԼՂՀ օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործողություններից ստացված միջոցները:

5. <u>Դպրոցի ավարտական փաստաթղթերը:</u> Դպրոցի ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնվում է համապատասխան փաստատթուղթ (վկայական, ատեստատ):

Ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք են ստանում հավատարմագրվելուց և լիցենզավորումից հետո:

Պետական նմուշի ավարտական փաստաթուղթը հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայման է:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածով և ԼՂՀ Սահմանադրության 41-րդ հոդվածով սահմանվեց կրթության բնագավառում ՀՀ կառավարության և ԼՂՀ կառավարության իրավասությունը, 37-րդ հոդվածով՝ պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ բոլոր տեսակի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը չեն կարող հակասել ԼՂՀ Սահմանադրությանը և օրենքներին ու իրենցից բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին: Ամրագրելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ԼՂՀ Սահմանադրությունը դրանով իսկ սահմանում է նաև կրթության ոլորտում առաջացող հարաբերությունների իրավական հիմքերը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1991-2016ԹԹ.)

Ուսումնասիրության հետ կապված արխիվային հարուստ նյութերի, ժամանակակիցների և առանձին գործիչների հուշերի և այլ փաստագրական նյութերի համակողմանի ուսումնասիրումն ու պատմահամեմատական վերլուծությունները հիմք են հանդիսացել աշխատության այս բաժնում համառոտակի ներկայացնել ԼՂՀ կրթական գործի կազմակերպիչների գործունեությունը:

Ժամանակագրական առումով ներկայացվում է ԼՂՀ կրթության, գիտության (մշակույթի և սպորտի) նախարարների, փոխնախարարների, նախարարության առաջատար մասնագետների, շրջանային, քաղաքային կրթության բաժինների վարիչների, վաստակավոր մանկավարժների բեղուն գործունեությունը: Նպատակահարմար ենք գտել ուսումնասիրության ժամանակ վերհանել նաև այն փաստը, թե ովքեր էին արցախահայ դպրոցի և մանկավարժության ասպարեզի անվանի գործիչները, որոնք՝ սկսած 1988-ի Շարժման տարիներից մինչև ԼՂՀ կայացման գործընթացը, իրար հաջորդող քաղաքական ծանր պայմաններում հաղթահարելով բազում դժվարություններ, բեղուն գործունեություն են ծավալել Լեռնային Ղարաբաղում՝ նպաստելով մարզի (1988-1990թթ.), այնուհետև ԼՂՀ (1991թ. սեպտեմբերի 2-ին) կրթական համակարգի զարգացմանը:

1.ԼՂՀ կրթության, գիտության (մշակույթի և սպորտի) նախարարների և փոխնախարարների գործունեությունը (1991-2016թթ.)

Աշխատության առաջին հատորում (2014թ. էջ 183-303) և երկրորդ հատորում (2015թ. էջ 249-313) պատմագիտական աղբյուրների, արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա համառոտակի ներկայացվել է Արցախի կրթական գործի կազմակերպիչների արգասավոր գործունեությունը 5-րդ դարից մինչև 20-րդ դարի 80-ական թվականները՝ Արցախյան շարժումը: Որպես ուսումնասիրության տրամաբանական շարունակություն, նպատակահարմար գտանք աշխատության երրորդ հատորում նույնպես ներկայացնել քննարկվող ժամանակաշրջանի (1991-2016թթ.) կրթական գործի նվիրյալ գործիչների բեղուն գործունեությունը: Մեր ձեռքի տակ եղած հավաստի փաստագրական նյութերը մեկ անգամ ևս հաստատում են այն իրական փաստը, որ թե՛ Արցախյան շարժման տարիներին, և թե՛ ազատ, անկախ Արցախի Հանրապետության ժամանակաշրջանում նրանք ոչ միայն բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ծավալել կրթական հաստատություններում, հանրակրթության տարբեր օղակներում, այլև արցախահայության համար դժնդակ տարիներին կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում, և նրանցից շատերը ակտիվորեն մասնակցել են 88-ի Շարժմանն ու Արցախի ազատագրական պայքարին, երկրամասի հասարակական, քաղաքական աշխատանքներին, նվիրվել հայրենիքի պաշտպանությանն ու ազգային նպատակների իրականացմանը:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի նորաստեղծ հանրապետության կրթական գործի նշանավոր գործիչներից է Արցախյան շարժման հայտնի կազմակերպիչ **Վիգեն Հայրապետյանը:** Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթության բաժինը ղեկավարել է 1986-1990 թվականներին, իսկ երբ արցախահա-

յությունը ձեռք բերեց անկախություն ու վերակերտեց իր ազգային պետականությունը, անվանի հասարակական-քաղաքական, կրթական գործիչը ԼՂՀ կրթական համակարգը ղեկավարեց մինչև 1992 թվականը: Արցախի կրթական նշանավոր գործիչն ունի հարուստ և ուսանելի կենսագրություն:

Ծնվել է 1933թ. Ստեփանակերտ քաղաքում, ուսուցչի՝ մարզժողկրթբաժնի վարիչ Սուրեն Հայրապետյանի ընտանիքում:

Գերազանց գնահատականներով ավարտելով Ստեփանակերտի թիվ 3 ռուսական դպրոցը (1952թ.), ուսումը շարունակում է Երևանի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում և ավարտելուց հետո (1956թ.) մանկավարժական աշխատանքի անցնում Շուշի քաղաքի ռուսական դպրոցում՝ որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ, իսկ այնուհետև՝ ուսմասվար:

Վ. Հայրապետյանի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը, որպես ուսուցիչ, ուսումնական մասի վարիչ, տնօրեն և մարզժողկրթբաժնի վարիչ (1986-1992թթ.) ծավալվում է 1960-1980-ական թվականներին և Արցախի պետականակերտման շրջանում:

Փաստագրական նյութերի և այլ աղբյուրների, ժամանակակիցների հուշերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ հայրենասեր մանկավարժը՝ երկրամասի հայեցի կրթություն տվող դպրոցի զարգացման նվիրյալը, մեծ ջանքեր է գործադրել Ստեփանակերտ քաղաքի կրթօջախներում հավուր պատշաճի բարձրացնելու ֆիզիկամաթեմատիկական առարկաների դասավանդման դրվածքը: Նա դասավանդում է Ստեփանակերտի բաներիտ դպրոցում (1959-1962թթ.), թիվ 5 դպրոցում (1962-1964թթ.), միաժամանակ եղել է ուսմասվար: Այնուհետև մարզժողկրթբաժնի վարիչ Հ. Օհանջանյանի հրամանով նշանակվել է Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի ուսմասվար, իսկ Սարգիս Արամյանի հրամանով՝ նշված դպրոցի տնօրեն (1984-1986թթ.), կրթության Ստեփանակերտի քաղաքային բաժնի վարիչ (1984-1986թթ.): Իսկ 1986թ. սեպտեմբերի 1-ին փոխարինում է թոշակի անցած մեծ ուսուցչապետին՝ մարզժողկրթբաժնի վարիչ Ս. Արամյանին, և ղեկավարում մինչև 1992թ.: Նրա համարձակությունն ու խիզախությունը դրսևորվեց Արցախյան շարժման տարիներին:

Հայտնի է, որ այն ժամանակներում Հայաստան տանող ճանապարհը բռնող Արցախի մտավորականը և նույնիսկ իր պապենական հողում Հայաստան ասելիս ենթակա էր պատժի, որովհետև հայոց Արցախին տիրություն անող ազերիների, մարզի ադրբեջանամետ ղեկավարների ամենատես հայացքի տակ էր:

Ահա այդ պայմաններում նա իր ժողովրդի հետ էր, առանձնապես դժվարին է եղել նրա աշխատանքը կրթության մարզային բաժնի վարիչ աշխատելու տարիներին, և այդ ժամանակներից է սկսվել Ղարաբաղյան շարժումը, իսկ Շարժման ուղնուծուծը մտավորականությունն էր և ինքը՝ Հայրապետյանը, որոնք քայլում էին առջևից՝ ծանրութեթև անելով ամեն մի քայլ, հավասարակշռված ղեկավարում համակարգը: Այդ նրա սթափ ղեկավարության շնորհիվ է, որ համակարգը ճեղքվածք չտվեց, դպրոցը գործեց, ուսուցչական կոլեկտիվներն աշխատեցին, հայկական դպրոցների քանակը կարճ ժամանակում ավելացավ: Ճակատագիրը նրա կյանքը դասավորել է բնության շնորհած ընդունակություններին համապատասխան, և առանց չարաշահելու նա իր ընդունակություններն օգտագործել է ի շահ երկրամասի կրթական գործի:

Հայրենասեր գործիչը նշված պաշտոնում աշխատկել է մինչև թոշակի անցնելը: Երկրամասի կրթության ոլորտում իր անձնուրաց ծառայությունների համար Վ. Հայրապետյանը արժանացել է մեծ հարգանքի և պարգևների: Նրա ամբողջ կեն-

սագրությունը բարեգործություն է և ուսանելի այսօրվա սերնդի համար:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության նախարարության փորձի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում նույնպես ձևավորվեց Կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ 1992 թվականի ապրիլի 14-ին ԼՂՀ կառավարության ընդունած որոշման համաձայն: Ձևավորվեցին նաև նախարարության առանձին բաժիններ:

Հավաստի աղբյուրների տվյալների համաձայն՝ 1992 թվականի սեպտեմբերի 1-ից ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունը ղեկավարում էր **Նելլի Ոսկանյանը** (1992-1995թթ.): Ծնվել է 1952թ. Բաքու քաղաքում, բանվորի ընտանիքում: Տեղում միջնակարգ կրթություն ստանալուց հետո (1959-1967թթ.) տեղափոխվում է Ղարաբաղ, որտեղ ստանում է բարձրագույն մանկավարժական կրթություն Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում (1977-1982թթ.): Հետագայում հեռակա կարգով ստանում է նաև իրավաբանական ու քաղաքագիտական կրթություն:

1972-1992 թվականներին աշխատել է տարբեր տեղերում՝ որպես ուսուցիչ, աշխատել է Ստավրոպոլի երկրամասում (1977-1978թթ.), 1978-1989 թվականներին՝ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմում, 1989-1992 թվականներին ղեկավարել է Ստեփանակերտի նախադպրոցական հիմնարկներից մեկը: Իսկ 1992թ. սեպտեմբերի 1-ին նշանակվել է ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, որտեղ աշխատել է մինչև 1995թ.:[311] Աշխատելով տարբեր բնագավառներում, Ն. Ոսկանյանն իրեն դրսևորել է որպես լավագույն մասնագետ և հմուտ կազմակերպիչ: ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնավարումը համընկնում է այն շրջանին, երբ նորանկախ հանրապետությունում պատերազմի տարիներին հանրակրթական դպրոցի առաջ նոր, չափազանց լուրջ խնդիրներ դրվեցին, հատկապես վերաբնակեցման շրջանում (այդ մասին արդեն նշվել է աշխատության 1-2-րդ գլուխներում): Կրթության բարելավմանն ուղղված ԿԳՄՍ նախարարության որոշումների իրագործման գլխավոր պայմաններից մեկը դպրոցները բարձրորակ մանկավարժական կադրերով ապահովելն էր, ինչպես նաև սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ մակարդակով կազմակերպումը:

Իր գործունեության երեք տարիներին Ն. Ոսկանյանը բավականին մեծ աշխատանք կատարեց հանրապետության կրթական հաստատություններում ուսումնական պարապմունքներն անխափան կազմակերպելու ուղղությամբ: Այդ հարցը պարբերաբար քննարկում էր ԿԳՄՍ նախարարության կոլեգիայի նիստերում, հանրապետական, շրջանային, քաղաքային ուսուցչական խորհրդակցություններում, կոնֆերանսներում, ինչպես նաև կրթության շրջանային, քաղաքային բաժինների վարիչների, դպրոցական տեսուչների, դպրոցների տնօրենների խորհրդակցություններում:

Ինչպես տեղեկացանք նախարարի 1992-1993 ուս. տարվա հաշվետվությունից (գրված է ռուսերեն, 16 էջ), նախարարության ընդլայնված խորհրդակցությունում (1993թ. մարտի 16-ին մասնակցում էին կրթության շրջանային բաժինների վարիչները, տեսուչները, նախարարության պատասխանատու աշխատողները), Ն. Ոսկանյանը՝ իր զեկուցման մեջ ներկայացնելով հանրապետության կրթական հաստատությունների ուսումնական աշխատանքների կազմակերպման, ուսումնանյութական բազայի վիճակը և պատերազմական պայմաններում հանրակրթության մասին կառավարության, նախարարության որոշումների կենսագործումը, մատնանշում է, որ առաջնահերթ խնդիրն է ստեղծված ծանր պայմաններում

պատշաճ մակարդակով կազմակերպել հանրակրթական դպրոցների կանոնավոր աշխատանքը և ապահովել դպրոցական հասակի բոլոր երեխաների ընդգրկումը դպրոցներում, հատկապես վերաբնակեցված Քաշաթաղի, Շահումյանի, Մարտակերտի շրջաններում: Նախարարը հատկապես հույժ կարևոր հարց էր համարում այդ ծանր օրերին մանկավարժական կոլեկտիվների ուժերով դպրոցական շենքերի վերանորոգումը գյուղական վայրերում, ինչ-որ չափով ուսումնական պարապմունքների համար բարենպաստ պայմանների ստեղծումը (այդ մասին արդեն նշվել է աշխատության 2-րդ գլխում):

Չնայած ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնավարության շրջանում Ն. Ոսկանյանը կարճատև գործունեություն է ծավալել, սակայն մոտիկից ծանոթանալով նրա կատարած աշխատանքներին վերաբերող փաստագրական նյութերին, կարող ենք ասել, որ նա յուրահատուկ աշխատասեր անձնավորություն էր, գործին անմնացորդ նվիրված: Անշուշտ, այն ժամանակվա պայմաններում նրա կատարած անբասիր աշխատանքը պետք է ըստ արժանվույն գնահատել:

Հետագա տարիներին Նելլի Ոսկանյանը եղել է հատուկ կրթահամալիրի տնօրեն (Երևանում՝ 1995-1997թթ.), Շուշիի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ (1997-1998թթ.), Փախստականների վերաբնակեցման հարցերով բաժնի վարիչ (1999-2001թթ.), ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական, աշխատել է նաև այլ պաշտոններում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնում աշխատել է (1995-1996թթ.) կրթական գործի կազմակերպիչ **Հենրիկ Գրիգորյանը** (1937-1996թթ.): Ավարտել է Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում (1955-1960թթ.):

Ուսանողական տարիներին անչափ աշխատասեր, ընտրած մասնագիտությունից բացի նաև մանկավարժական մասնագիտության նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունը նրան մղում է ինստիտուտն ավարտելուց հետո ընտրել նաև երկրորդ՝ մանկավարժի մասնագիտությունը, և այդ միտումով էլ ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմկենսաբանական բաժինը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Հերհերի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ:

Նրա ժամանակակիցներն իրենց հուշերում գրում են. «Համարձակ, անչափ աշխատասեր, ինչպես ասում են՝ անխոնջ և անտրտունջ մանկավարժ էր Հենրիկ Գրիգորյանը»: «Իր գործունեության տարիներին,- իր հուշերում գրում է վաստակաշատ մանկավարժ Վլադիմիր Անտոնյանը,- լավ իմանալով դպրոցավարությունը, միշտ մասնակի ստուգումների էր ենթարկում դպրոցների տնօրենների առօրյա դպրոցավարական գործունեությունը և արդյունքները քննարկում շրջանի կրթության բաժնի ընդլայնված խորհրդի նիստում, որին մասնակցում էին դպրոցների տնօրեններն ու ուսմասվարները»: Որպես այդ խորհրդակցության մասնակից, Անտոնյանը մատնանշում է, որ նա տնօրեններից պահանջում էր մանրամասն ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստերում քննարկված դասալսումների, աշակերտների ուսման առաջադիմության, արտաուսումնական, արտադասարանական միջոցառումների կազմակերպման, ուսուցիչներին վերապատրաստման դասընթացներում ընդգրկելու ուղղությամբ կատարված աշխատանքները: Միաժամանակ Վ. Անտոնյանը մատնանշում է, որ տոկոսամոլության մասին, որ այն ժամանակներում աշխատանքի գլխավոր չափանիշն էր, լսել անգամ չէր ուզում: Օբյեկտիվ և միայն օբյեկտիվ գնահատականներ էր պահանջում ուսու-

ցիչներից: Եթե դպրոցական տեսուչները ստուգումներ էին անցկացնում դպրոցներում և արդյունքները գոհացուցիչ չէին, շատ խիստ կվարվեր ցածր առաջադիմություն տված ուսուցիչների և տնօրենների հանդեպ, և նման հարցերը պարբերաբար քննարկվում էին օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում, իհարկե, խրախուսում էր նաև լավագույն ուսուցիչներին:

Շրջանավարտների, կրթության բաժնի արխիվային փաստաթղթերի (Հ. Գրիգորյանի, դպրոցների տնօրենների և տեսուչների հաշվետվությունները և այլ նյութեր) ուսումնասիրությունը և ժամանակակիցների հետ ունեցած մեր հարցազրույցները վերստին հաստատում են այն ճշմարիտ փաստը, որ Հ. Գրիգորյանի գործունեության տարիներին շրջանի կրթական համակարգում որակական փոփոխություններ են կատարվել, հատկապես բարձրացել է շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության որակը:

Հետագա տարիներին Հ. Գրիգորյանը եղել է Ստեփանակերտի քաղաքային կրթության բաժնի վարիչ (1976-1982թթ.), ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ինտիտուտի տնօրեն (1989-1995թթ.), ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար (1995-1996թթ.): Հենց նա հանրապետության դպրոցների սեղաններին դրեց «Կրթությունը և գիտությունը Արցախում» անդրանիկ ամսագիրը:

Հետպատերազմյան շրջանում՝ 1996-1999 թվականներին, ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը ղեկավարել է դպրոցի պրակտիկայում ֆիզիկայի ճանաչված ուսուցիչ **Համլետ Ասրյանը:**

Ծնվել է 1947թ. հունվարի 1-ին, Ասկերանի շրջանի Վերին Ղլիժբաղ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Ասկերանի 8-ամյա դպրոցում (1954-1962)թթ., այնուհետև ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում, որն ավարտելուց հետո հանրապետության կրթության նախարարության ուղեգրով աշխատել է (1968-1971թթ.) Մեղրու շրջանի Ագարակի միջնակարգ դպրոցում, որպես ֆիզիկայի ուսուցիչ: Այնուհետև մարզժողկրթբաժնի վարիչ Ս. Արամյանի հրավերով տեղափոխվում է Ստեփանակերտ, աշխատանքի անցնում ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում (1972-1975թթ.)՝ որպես ֆիզիկայի և աստղագիտության մեթոդկաբինետի վարիչ, համատեղության կարգով դասավանդում նաև Ստեփանակերտի թիվ 7 միջնակարգ դպրոցում:

Մարզժողկրթբաժնի վարիչ Ս. Արամյանի հրամանով 1975 թվականի սեպտեմբերից նշանակվում է մարզային կրթության բաժնում՝ ֆիզիկայի գծով դպրոցական տեսուչ, այնուհետև 1968թ. փետրվարից մինչ 1996թ. սեպտեմբերը ղեկավարել է Ստեփանակերտի քաղգործկոմի ժողկրթության, հետագայում (1992-1996թթ.)՝ կրթության և մշակույթի բաժինը:

Գնահատելով Հ. Ասրյանի մանկավարժական պրակտիկ փորձը, կազմակերպչական ընդունակությունները, հանրապետության ղեկավարությունը նրան նշանակում է ԼՂՀ ԿԳ նախարար (1996թ. սեպտեմբերի 1-ից), ուր աշխատում է չորս տարի և անգնահատելի ծառայություն մատուցում հանրապետության կրթական համակարգին:

Կրթության քաղաքային, շրջանային բաժինների վարիչների հաշվետվությունների ուսումնասիրությունից[312] պարզվել է, որ Հ. Ասրյանը իր պաշտոնավարության շրջանում մեծ աշխատանք է կատարել հանրապետության կրթական համակարգի անցումային, կայունացման շրջանում մի շարք բարեփոխումներ իրակա-

նացնելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, նրա նախաձեռնությամբ ընդլայնվել է ութամյա, միջնակարգ դպրոցների, մանկապարտեզների ցանցը, ծավալուն շինարարական աշխատանքներ են տարվել գյուղական դպրոցներում, նորոգվել և հիմնանորոգվել են շուրջ 60 դպրոցներ, կահավորվել անհրաժեշտ սարքավորումներով, բարձրացել է նաև դպրոցներում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ու նպատակայնությունը: Իհարկե, ապահովել է նաև դպրոցների ինքնուրույնությունն իրենց եկամուտների (դպրոցամերձ հողմասերից և այլ աղբյուրներից) և ծախսերի պլանավորման հարցում, խթանել մրցակցությունը դպրոցների միջև, ինչպես նաև տարբերակված մոտեցում է ցուցաբերել դպրոցների նկատմամբ:

Օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում (ի դեպ, նշենք, որ ԿԳ նախարար Հ. Ասրյանը իր գործունեության տարիներին մասնակցել է ուսուցչական գրեթե բոլոր խորհրդակցություններին) ներկայացնելով հանրապետության կրթական հաստատությունների վիճակը, ձեռքբերումներն ու թերությունները, նախարարը կրթության շրջանային, քաղաքային բաժինների վարիչների, տնօրենների խնդիրն էր համարում ստեղծված դժվարությունների, թերությունների հաղթահարման համար ողջ մանկավարժական կոլեկտիվների, հանրակրթության ոլորտի աշխատողների համախմբումը, առողջ հոգեբանական մթնոլորտի ստեղծումը կոլեկտիվներում: Իր պրակտիկ փորձից ելնելով, նախարարը մայրաքաղաքի ուսուցչական խորհրդակցությունում (1994-1995 ուս. տարվա օգոստոսի 25-26-ին, որին ներկա է եղել նաև սույն գրքի համահեղինակը՝ Գ.Հ.)[313] մատնանշել է, որ դպրոցի տնօրենը պետք է կոլեկտիվը ղեկավարի համագործակցային սկզբունքով, կոլեկտիվում ստեղծի առողջ մթնոլորտ, որ յուրաքանչյուր ուսուցիչ արդյունավետ աշխատի, բարձրացնի ուսման որակը, միաժամանակ զբաղվի ստեղծագործական ակտիվ աշխատանքով, սիրով նվիրվի մանկավարժական գործունեությանը:

Կրթության նվիրյալ գործիչը եղել է երիտասարդ սկսնակ ուսուցիչների խորհրդատուն, պահանջկոտ, սկզբունքային, աշխատողների լավագույն ցուցանիշները գնահատող: Իր կարճատև գործունեության տարիներին Հ. Ասրյանը ցանկալի արդյունքների է հասել ժողովրդավարական ոճով կառավարելու շնորհիվ:

Ուսումնասիրելով ԿԳ նախարարի հաշվետվությունները, նախարարության կոլեգիայի նիստերում քննարկված հարցերի արձանագրությունները, նկատել ենք, որ նախարարը՝ ունենալով տարիների մանկավարժական հարուստ փորձ, առանձնապես մեծ ուշադրություն էր դարձնում հանրապետության դպրոցներում արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների՝ պարբերաբար դպրոցական էքսկուրսիաների, մշակութամասսայական միջոցառումների, մանկավարժական կոլեկտիվների ընկերական հանդիպումների, միջդպրոցական (փնջային) դասալսումների (վերականգնել նախկին ավանդույթները) շրջանային, քաղաքային և հանրապետական օլիմպիադաների, ստեղծագործական շարադրությունների և այլ բնույթի միջոցառումների արդյունավետ կազմակերպմանը:

Հետագա տարիներին Հ. Ասրյանը շարունակել է իր պրակտիկ մանկավարժական գործունեությունը մայրաքաղաքի դպրոցներում, մինչև թոշակի անցնելը:

Ըստ արժանվույն են գնահատվել Հ. Ասրյանի մանկավարժական աշխատանքը, ծառայությունները դպրոցի և հասարակության առջև, պարգևատրվել է կառավարության, ԿԳ նախարարության պատվոգրերով ու գովասանագրերով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից էր Արցախյան շարժման

ակտիվ մասնակից **Համլետ Գրիգորյանը:** Ծնվել է 1941թ. սեպտեմբերի 17-ին, Մարտունու շրջանի Հերհեր գյուղում՝ ուսուցչի ընտանիքում:

Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1948-1958թթ.), ուսումը շարունակել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում և այն ավարտել 1961 թվականին: Աշխատանքի է անցել շրջանի Սոսի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1961-1964թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զինծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում և ավարտել 1969 թվականին, անցել աշխատանքի Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում, 1979-1981 թվականին՝ թիվ 5 դպրոցում և համատեղության կարգով դասավանդել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում:

Մանկավարժական աշխատանքին զուգահեռ մշտապես զբաղվել է ստեղծագործական աշխատանքով: 1981 թվականին պաշտպանել է գիտական թեզ մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայից և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: 1981թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնում: 1984թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1990թ. ընտրվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և աշխատել կրթության ու գիտության մշտական հանձնաժողովում:

1992թ. ընտրվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և մինչև 1995թ. աշխատել որպես ԼՂՀ Գերագույն խորհրդի կրթության, գիտության, լեզվի, մշակույթի և լրատվության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ նախագահության անդամ:

Հանրապետության ղեկավարությունը՝ գնահատելով Հ. Գրիգորյանի ծառայությունները Արցախյան շարժման և պատերազմական տարիներին (ձերբակալվել և կալանքի է վերցվել երեք անգամ Պյատիգորսկի, Սարատովի և Բաքվի բանտերում) և երկրամասի կրթական համակարգին, նրան նշանակեց (1999թ. սեպտեմբերի 1-ին) ԼՂՀ կրթության և գիտության նախարար:

Պաշտոնավարման շրջանում (1999-2002թթ.) Հ. Գրիգորյանի գիտամանկավարժական հարուստ փորձն ու կարողությունները և համարձակ քայլերը հնարավորություն ընձեռեցին հանրապետության կրթական համակարգում մի շարք վերափոխումներ իրականացնել: Հայտնի է, որ մինչև նրա գործունեության շրջանը հանրակրթական դպրոցներն ընդգրկվեցին (1998 թվականի նոյեմբերի 10-ին՝ կառավարության որոշմամբ) համայնքի սեփականության գույքի ցանկում: Պաշտոնավարման հենց առաջին իսկ օրը նորանշանակ նախարարը համարձակ քայլ կատարեց՝ կառավարության առաջ հարց դրեց. վերացնել այդ թյուրիմացությունը և դպրոցները հանել գյուղապետարանների ենթակայությունից: Եվ ահա ԼՂՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 10-ի որոշումով դպրոցները հանվեցին գյուղական համայնքների սեփականության գույքի ցուցակից և հանձնվեցին շրջանային կրթության բաժինների ենթակայությանը՝ վերականգնելով նախկին կարգավիճակը:[314]

Ինչպես վկայում են պաշտոնական փաստաթղթերը, ժամանակակիցների հուշերը (ԿԳ նախարարության գլխավոր մասնագետ Բահատուր Դավթյանի հուշերը), 1999 թվականից սկսած՝ Արցախի կրթական համակարգում եղան նաև հիշարժան իրադարձություններ, որոնք իրենց բարերար ազդեցությունն ունեցան ուսուցման գործընթացի որակի բարձրացման վրա: Այսպես, օրինակ, ԼՂՀ ԿԳ նախարարության կարևոր ձեռնարկումներն էին հանրակրթական համակարգի բա-

ռեփոխումների փորձնական ծրագրի և ժամանակացույցի ընդունումն ու իրականացումը, դպրոցական մանկապարտեզների ցանցի ընդլայնումը, մանկավարժական պարբերականի՝ «Լուսարար» թերթի հրատարակումը (այդ մասին նշվել է նախորդ բաժնում), դպրոցներում հարմարավետ շենքային պայմանների ստեղծումն ու համակարգիչներով ապահովումը, հանրապետական մանկավարժական ընթերցումների կազմակերպումը, առարկայական մեթոդմիավորումների գործունեության նախկին ավանդույթների շարունակումը, առարկայական օլիմպիադաների կազմակերպումը, երկրամասի վաստակաշատ մանկավարժների գործունեությունն ու տարիների վաստակը գնահատելու միտումով «XX դարի Արցախի լավագույն մանկավարժները» խորագրով գրքի հրատարակումը և այլ բազմաբնույթ միջոցառումների կազմակերպումը, որոնք նպաստեցին դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանն ու որակի բարձրացմանը:

Հետագա տարիներին Հ. Գրիգորյանը շարունակել է գիտամանկավարժական աշխատանքը Արցախի պետական համալսարանում՝ որպես ռեկտոր (2002-2008թթ.), ամբիոնի վարիչ, մեթոդմիավորման հանձնաժողովի նախագահ, գիտխորհրդի մշտական անդամ, և այսօր էլ շարունակում է աշխատել մայր բուհում:

Հավուր պատշաճի է գնահատվել նվիրյալ մանկավարժ-գիտնականի աշխատանքը, նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման, կառավարական պարգևների ու մեդալների:

Փաստագրական տվյալների համաձայն, 2002-2004 թվականներին ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունը ղեկավարել է Արցախյան շարժման ակտիվիստ, ազատագրական պայքարի մասնակից, պատմաբան **Արմեն Սարգսյանը:**

Ծնվել է 1963թ. հունվարի 2-ին, Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1980թ.), ուսումը շարունակել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում և ավարտել (1985թ.) գերազանցությամբ, աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում, որպես պատմության, աշխարհագրության ուսուցիչ, միաժամանակ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, իսկ 1988-1992 թվականներին՝ նույն դպրոցի տնօրեն: Ինչպես տեղեկացանք դպրոցի պատմությանը նվիրված փաստաթղթերից (ձեռագիր 16 էջ), մանկավարժական գործունեության ընթացքում իր առարկային խորապես տիրապետող պատմության ուսուցիչը՝ Ա. Սարգսյանը, սաներին հայրենասիրական վեհ գաղափարներով ու բարձր ոգով դաստիարակելու նպատակով կազմակերպել է արիության դասեր, հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների հետ, էքսկուրսիաներ, կատարել պեղումներ Ամարասի, Կուսաբերդ-Աղջկաբերդ հնավայրերում, հայտնաբերել բազմաթիվ հնադարյան աշխատանքային գործիքներ (քարե, բրոնզե, պղնձե իրեր) և այլ իրեր, համալրել դպրոցի պատմության և աշխարհագրության կաբինետը:

Արցախյան պատերազմի տարիներին Ա. Սարգսյանը եղել է հայրենի գյուղի ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար, կենաց ու մահվան տարիներին մասնակցել թեժ մարտերին, և մնում էր մանկավարժ, հրացանի հետ ամուր էր պահում գրիչը: Մարտական ծառայությունների համար Ա. Սարգսյանը պարգևատրվել է «Արիության համար» մեդալով, «Անդրանիկ Օզանյան», «Մարշալ Բաղրամյան» շքանշաններով:

Հետպատերազմյան շրջանում բավականին լայն են եղել Ա. Սարգսյանի գոր-

ծունեության շրջանակները՝ Արցախի պետական համալսարանի դասախոս (1993-1995թթ.), Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն (1995-1997թթ.), ԼՂՀ մշակույթի վարչության պետ (1997-1998թթ.), ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար (1998-2002թթ.), ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար (2002-2004թթ.): ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, կրթության, գիտության և մշակույթի մշտական հանձնաժողովի նախագահ (2005-2016թթ.):

Իր գործունեության տարիներին հանդիպելով մանկավարժական կոլեկտիվների, դպրոցականների, ուսանողների հետ, որպես խորագիտակ, ազգի դարավոր պատմությանը, Ա. Սարգսյանը հայրենասիրության հուր է բորբոքել սաների, ուսանողների հոգում, նրանց հետ խորապես հաղորդակից լինելով Արցախյան գոյամարտում մեր ժողովրդի տարած հաղթանակներին: Նրա խոսքը նաև հեռուստահաղորդումների ժամանակ հագեցած էր և կատարյալ: Ելույթներն ու զեկուցումները ունկնդիրներին մատուցվում էին գիտական և գաղափարական բարձր մակարդակով:

Բացի վերոնշյալից, Ա. Սարգսյանը պարգևատրվել է նաև կառավարական պատվոգրերով ու մեդալներով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի նվիրյալ կազմակերպիչներից էր հասարակական-քաղաքական գործիչ, Ազգային ժողովի նախագահ **Աշոտ Ղուլյանը:** Ծնվել է 1965թ. Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղում՝ ծառայողի ընտանիքում: Գերազանց գնահատականներով ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1982թ.) և ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Երկրորդ կուրսն ավարտելուց հետո ծառայել է (1984-1986թթ.) Խորհրդային բանակի շարքերում: 1986 թվականին զորացրվել է և ուսումը շարունակել Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության բաժնում, որն ավարտել է առաջին կարգի դիպլոմով և աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ:

1992 թվականի ապրիլից մինչև դեկտեմբեր ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակի շարքերում: Նույն թվականին աշխատել է նաև ԼՂՀ Գերագույն խորհրդում՝ որպես արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի ավագ փորձագետ: Իսկ 1993-2000 թվականներին եղել է ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի օգնական (1993-1994թթ.), ԼՂՀ ԱԳՆ Սփյուռքի և երկկողմ հարաբերությունների բաժնի վարիչ (1995-1998թթ.), ԼՂՀ ԱԳՆ քաղաքական վարչության պետ, այնուհետև՝ նախարարի տեղակալ (1998-2001թթ.), «Ժողովրդավարական Արցախի միություն» հասարակական-քաղաքական կազմակերպության համանախագահ (2001-2002թթ.), ԼՂՀ արտգործնախարար (2002-2004թթ.), ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար (2004-2005թթ.): 2005 թվականից առայսօր ԼՂՀ Ազգային ժողովի նախագահն է:

Զբաղեցրած բոլոր պաշտոններում Ա. Ղուլյանը իրեն դրսևորել է որպես գործին գիտակ անձնավորություն, ընդգծված կերպով սկզբունքային է, հստակ պատկերացնում է քաղաքական գործը, աշխատանքում դրսևորում պետական գործչին բնորոշ, առանձնահատուկ նրբություններ: Այսօր էլ Աշոտ Ղուլյանը մեծ պատասխանատվությամբ է կրում քաղաքական գործչի բարձր կոչումն ու Ազգային ժողովի նախագահի պաշտոնը: Կոլեկտիվում նրան ճանաչում են որպես համեստ, անչափ պարզ, բարի, անհիշաչար, բայց յուրաքանչյուր աշխատողի

նկատմամբ պահանջկոտ. ահա նրա կերպարի բնորոշ գծերը:

Իր անբասիր աշխատանքի համար արժանացել է կառավարական պատվոգրերի ու մեդալների:

ԼՂՀ կրթական համակարգի նվիրյալ գործիչներից է ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի քարտուղար, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական պարբերականի պատասխանատու քարտուղար **Կամո Աբայանը:** Ծնվել է Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: 1976թ. ավարտել է Ավետարանոցի միջնակարգ և Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտին կից հեռակա ֆիզիկատեխնիկական դպրոցները: 1981թ. գերազանցությամբ ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: 1981-ից մինչև 1991թ. համատեղությամբ աշխատել է Ավետարանոցի դպրոցում: 1985թ. նշանակվել է ուսուցիչների կատարելագործման ԼՂ ինստիտուտի ֆիզիկայի և աստղագիտության կաբինետի վարիչ: 1981-ից աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնում, այնուհետև՝ Արցախի պետական համալսարանում: Եղել է ընդհանուր տեխնիկական ֆակուլտետի դեկանը: 1995թ. նշանակվել է ԼՂՀ կադրերի վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտի տնօրեն, այնուհետև՝ ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի փոխնախարար: 1997թ. ապրիլից եղել է ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի գիտական քարտուղարը: 2005թ. հուլիսից մինչև 2007թ. սեպտեմբերը եղել է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար: Նրա գործունեությունը համընկնում է հանրապետության կրթական համակարգում բովանդակային բարեփոխումների իրականացման շրջանի հետ, բարեփոխումներ, որոնք միտված էին կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը:

Իր գործունեության տարիներին նախարարը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել ԼՂ Հանրապետության բոլոր շրջաններում, մայրաքաղաքում, կրթական համակարգի տարբեր օղակների, ինչպես նաև համայնքների ու հասարակական-քաղաքական միավորումների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների նպատակը կրթական համակարգի մանկավարժական բանակին, մշակույթի ու սպորտի աշխատողներին մատուցել նորովի աշխատելու գաղափարը և կամաց-կամաց դրան զուգահեռ ներկայացնել պահանջներ:

Պաշտոնավարման շրջանում նախարարի առաջին ձեռնարկումը բացօթյա մարզահրապարակների կառուցման, բարեկարգման մասին էր, որի արդյունքներն արդեն տեսանելի են: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ ամեն տարի գործընթացն ընթացքի մեջ է եղել: Մյուս միջոցառումներն են դպրոցների հիմնանորոգումն ու նոր դպրոցական շենքերի կառուցումը, սանմաքրման, աշակերտական այգիների հիմնադրումը, ուսումնափորձնական հողամասերի կարգավորումը և դրանք իրենց նպատակին ծառայեցնելը, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումն ու վերահսկումը: Ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, հանրապետության շատ դպրոցներ արդեն նոր այգիներ են հիմնադրել և շատերում էլ հետաքրքիր գործընթացներ են ծավալվել: Վկայակոչենք Ասկերանի շրջանի Խնապատի դպրոցի տնկարանը: Ի դեպ, նշենք, որ հետագայում մյուս դպրոցները օգտվել են վերջինիս հնարավորությունից: Կ. Աբայանը կարևորում է նաև այն փաստը, որ եթե մենք խոսում ենք ընդհանուր կրթական բարեփոխումների և ընդհանրապես այսօրվա դպրոցի մասին, այն պետք է կարողանա նաև եզրեր գտնել շուկայական տնտեսության հետ: Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն, պլանավորելով աշխատանքները, պետք է լրա-

ցուցիչ աղբյուրներ որոնի դրսից և հովանավորներ, և այնպես անի, որ կարողանա աշխատանքը նյութականացնել դպրոցի կարիքների համար:

ԿԳ նախարարի ձեռնարկումներից կարևոր է նշել նաև ուսուցման կաբինետային համամկարգին անցումը, աշխարհագրական հարթակների ստեղծումը դպրոցներում, ինչպես նաև դպրոցներում ուսուցիչների համար համակարգչային պարտուսի կազմակերպումը, քանի որ 21-րդ դարի դպրոց ասելով պետք է հասկանալ թվային ու էլեկտրոնային տեխնոլոգիաների մուտք դպրոց և ոչ թե պարզապես մեխանիկական մուտք (որպես առարկա դասավանդել): Մի խոսքով, համակարգչային պարտուսն այսօրվա կարևորագույն պահանջներից է, և մեր մանկավարժական կոլեկտիվները ձեռնամուխ են եղել դրա իրականացմանը:

ԼՂՀ ԿՄՍ նախարարության նախաձեռնությամբ 2006թ. ապրիլին հրավիրվեց ոլորտի աշխատողների առաջին համագումարը: Համագումարում լուրջ վերլուծության է ենթարկվել հանրապետության 15-17 տարվա կրթական համակարգի վիճակը՝ ձեռքբերումներն ու բացթողումները, ինչպես նաև կարևորագույն հարցերից մեկը՝ դպրոց-ընտանիք-հասարակություն եռամիասնության կայունությանը ապահովումը:

Նախարարն իր զեկուցման մեջ հանգամանորեն նշեց, որ կրթական գործն, ըստ էության, հնարավոր է իրականացնել, եթե դպրոցը փորձենք առանձնացնել հասարակությունից և այնտեղ կոշտ կանոններ մտցնենք: Դպրոցը եթե չի համագործակցում ընտանիքի ու հասարակության հետ, դատապարտված է: Այնտեղ հնարավոր չէ կրթադաստիարակչական արդյունավետ գործունեություն ծավալել: Այդ իսկ պատճառով նախարարության կողմից առաջին քայլերն արդեն արված են գրեթե բոլոր շրջաններում: Վարչակազմերի հետ համատեղ նախարարությունը նիստեր է գումարել, որոնք հրավիրված են եղել համայնքների ղեկավարները (ՏԻՄ), դպրոցի և մարզամշակութային ոլորտների պատասխանատուները, և կոնկրետ խնդիրներ են առաջադրվել՝ արդյո՞ք այդ համայնքներն իրենց պարտականությունները կատարում են դպրոցի, մշակույթի օջախի հանդեպ:

Նախարարության ձեռնարկումներից մեկն էլ ենթաշրջանների մի քանի դպրոցների փնջային-մեթոդմիավորման կառույցի ստեղծումն է, նրա արդյունավետ աշխատանքի կազմակերպումը, ինչպես նաև դպրոցներում գիտամեթոդական և փորձարարական աշխատանքների ծավալումը: Այսպես, օրինակ, նախարարության տեսչական ստուգումների արդյունքների ընդհանրացման հիման վրա հանրապետության 8 դպրոցների (Մարտակերտի թիվ 1, Ասկերանի թիվ 1, Մարտունու թիվ 1, Հադրութի թիվ 1, Շուշիի Խ. Աբովյանի անվան, Ստեփանակերտի թիվ 1) փորձարարական կարգավիճակ է տրվել՝ յուրաքանչյուր շրջանից և Ստեփանակերտից՝ մեկական, ու հանձնվել այն թեմատիկան, որով նրանք պետք է առաջնորդվեն: Անշուշտ, սա շատ կարևոր նախաձեռնություն է, որովհետև մանկավարժությունը կենդանի գիտություն է, թեկուզ պահպանողական են համարում, և դպրոցում յուրաքանչյուր նորամուծություն պետք է անպայման անցնի փորձարկման փուլը, որից հետո միայն կրի համընդհանուր բնույթ:

Նախարար Կ. Աթայանի գործունեության և բովանդակային բարեփոխումների իրականացման մասին մանրամասն նշվել է աշխատության 2-րդ գլխում: Սակայն նշենք մի առավելություն ևս, որ հատուկ էր մյուս նախարարներին, պաշտոնավարման շրջանում նախարարը շրջանցել է հանրապետության շրջվարչակազմերի կրթության բաժինները, եղել հատկապես ծայրամասային դպրոցներում, անմիջականորեն ծանոթացել կրթադաստիարակչական դրվածքին: Իսկ շրջկենտրոններում հանդիպել շրջվարչակազմերի ղեկավարության և համայնքների ու

դպրոցների ղեկավարների հետ: Ներկայացնելով շրջաններ կատարվող այցերի նպատակն ու գլխավոր խնդիրը, նախարարը ընդգծել է, որ դպրոցը ոչ միայն կրթում-դաստիարակում է տվյալ բնակավայրի աճող սերնդին, այլև հանդիսանում է այն առանցքը, որի շուրջ ամբողջանում են թե հոգևոր, և թե սոցիալ-տնտեսական խնդիրները: Նախարարը նշել է, որ գյուղական վայրերում դպրոցը մեկուսացված չի կարող լուծել իր առջև դրված խնդիրները, որովհետև դպրոցը գյուղական հոգևոր կրթական կյանքի գլխավոր բաղադրիչն է: Ուրեմն անհրաժեշտ է ամրապնդել դպրոց-ընտանիք-հասարակություն կապը:

Նախարարը՝ շեշտադրելով Շահումյանի շրջանի որոշ վերականգնվող գյուղերի առանձնահատկությունները, դարձյալ կանգ առավ դպրոց-համայնք-ընտանիք համագործակցության վրա: Շատ դպրոցներ դեռևս հեռու են գոնե նվազագույն չափանիշներով բավարարված լինելուց: Բացակայում են թե շենքային անհրաժեշտ պայմանները, թե նյութատեխնիկական բազան և թե որակյալ կադրային ներուժը: Հանդիպման ժամանակ նախարարը նշեց, որ նման պայմաններում արժե նշել ուսուցչական որոշ հատվածի նվիրված աշխատանքը: Օրինակ, Նոր Գետաշենի միջնակարգ դպրոցում ուսուցիչն իր ձեռքով էր պատրաստել դիտազննական պարագաները: Հանդիպելով մանկավարժական կոլեկտիվի հետ, խորհրդի նիստում ԿՄՍ նախարարը կարևորեց ուսուցչի պատասխանատվությունը կրթադաստիարակչական գործում:

Ըստ պաշտոնական տվյալների, 2007-2012 թվականներին ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը ղեկավարել է Արցախյան ազատագրական պայքարի ակտիվ մասնակից, Պաշտպանության բանակի գեներալ-մայոր **Վլադիկ Խաչատրյանը:** Ծնվել է 1961 թվականի հունվարի 21-ին, Մարտակերտի շրջանի Դամիրլու գյուղում՝ Հայրենական պատերազմի հաշմանդամի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի տարրական դպրոցում, այնուհետև ավարտել (1978թ.) Կուսապատի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում, որը և ավարտել է 1982թ., գործուղվել աշխատելու շրջանի Չայլվի միջնակարգ դպրոցում, որպես ֆիզիկայի ուսուցիչ, միաժամանակ վարել հեռակա դպրոցի (այն ժամանակ բոլոր շրջաններում գործում էին երեկոյան և հեռակա բաժիններ) վարիչի պաշտոնը (1983-1986թթ.):

1988թ. փետրվարից եղել է գյուղի ինքնապաշտպանական ջոկատի անդամ, 1992թ. մարտ ամսին Չայլվի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարի հրամանով տեղափոխվել է հրետանու ստորաբաժանում: 1992թ. հունիսին Գենդարա կոչվող տեղամասում մարտի ժամանակ վիրավորվել է աջ ոտքից: Ապաքինվել է նույն թվականի օգոստոսին: 1992թ. սեպտեմբերին նշանակվել է դիվիզիոնի հրամանատար: 1993թ. հունիսին՝ Մարտակերտի պաշտպանական շրջանի հրետանու պետ: 1993թ. հուլիսի 23-ին Լեռնարխի համար մղվող մարտում վիրավորվել է աջ ոտքից: Ապաքինվելուց հետո 1994թ. ապրիլի 7-ին ՊԲ հրամանատարի հրամանով նշանակվել է ՊԲ հրետանու վարչության շտաբի պետ: 1996թ. հուլիսին ՊԲ հրամանատարի հրամանով տեղափոխվել և նշանակվել է Հինգերորդ պաշտպանական շրջանի հրետանու պետ: 1997թ. հունվարի 31-ին նշանակվել է հրետանային գնդի թիվ 47, 455 զորամասի հրամանատար: 1999թ. նշանակվել է ՊԲ հրետանու վարչության պետ: 2000թ. հունվարի 12-ին նշանակվել է ՊԲ հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ մինչև 2007թ. սեպտեմբերի 25-ը: Նույն թվականի հոկտեմբերի 1-ին նշանակվել է ԼՂՀ ԿԳ նախարար:

Վ. Խաչատրյանի գործունեության տարիներին (2007-2012թթ.) հանրապետության կրթական համակարգը զարգացման վերելք ունեցավ, առանձնապես մեծ թափ ստացավ դպրոցաշինությունը: Կրթական համակարգում, որպես առաջադեմ ձև, սկսեց արմատավորվել համակարգչային ուսուցման կաբինետային համակարգը: Բարեփոխումների իրականացման նոր փուլում (2008-2012թթ.) նախարարության մշակած կրթական համակարգի զարգացման ծրագրի ռազմավարական հիմնական ուղղություններն էին՝

1.Կրթության որակի գնահատման նոր համակարգի ներդրումը:

2.Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրի մշակումն ու իրականացումը և անցումը 12-ամյա հանրակրթական համակարգին: Նախարարության մշակած պլանի համաձայն, գործընթացն սկսվել է 2008 թվականից:

3.Ըստ ռազմավարական ծրագրի պահանջների, նախարարությունը նախատեսում էր շրջաններում ավելացնել հոսքային միջնակարգ դպրոցները:

4.Նախամասնագիտական, արհեստագործական հաստատություններում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը:

5.Ավագ դպրոցների մասնագետների համար վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպումը, և դասընթացներին Հայաստանից հրավիրված լավագույն մասնագետների ընդգրկումը:

6.Ավագ դպրոցների, արհեստագործական ուսումնարանների սովորողների (հոսքային դասարանների) ընդունելությունը բուհ, աստիճանաբար կանոնակարգումը՝ ըստ սովորողի նախասիրության:

7.Բարձրացնել հանրակրթական դպրոցների բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը և նպատակայնությունը:

8.Ապահովել ներդպրոցական համակարգի կառավարման ժողովրդավարացումը:

9.ԿԳ նախարարության տեսչության, կրթության շրջանային բաժինների դպրոցական տեսուչների կողմից համակողմանի ստուգումների, դասալսումների արդյունքների քննարկում ուսուցչական խորհրդակցություններում և թերությունների բացահայտում, նման մասնագետների վերարտակավորման դասընթացների կազմակերպում, սակայն այն չդիտարկել որպես պատիժ անբավարար աշխատանքի համար, այլ այնպես անել, որ յուրաքանչյուր ուսուցիչ գիտակցի իր մասնագիտական բացը: Այդ մասին նախարարը պարբերաբար նշել է օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում (սույն գրքի համահեղինակ Գ.Հ.-ն ներկա է եղել 2008թ. օգոստոսի 24-26-ին Ստեփանակերտում կայացած ուսուցչական խորհրդակցությանն ու մանկավարժական ընթերցումներին, որի մանկավարժության բաժինը ղեկավարել է): Նկատի ունենալով, որ աշխատության 2-րդ գլխում Վ. Խաչատրյանի կատարած չորս տարիների աշխատանքի մասին հանգամանորեն նշվել է, բավարարվենք շարադրվածով:

ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական գործողություններին մասնակցելու, սխրագործություններ ցուցաբերելու համար Վ.Խաչատրյանը պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Մարտական գործողություններին ակտիվ մասնակցության և հետագա ծառայության համար պարգևատրվել է նաև ՀՀ «Վարդան Մամիկոնյան» շքանշանով, «Արիություն» և «Մարտական ծառայություն» մեդալներով, ինչպես նաև «Մարշալ Բաղրամյան», «Գարեգին Նժդեհ» 1-ին և 2-րդ կարգի շքանշաններով, «Անբասիր ծառայության համար», «Մխիթար Գոշ» մեդալներով:

20-րդ դարի 80-90-ական թվականներին արցախահայ դպրոցի պրակտիկայում ճանաչված երախտաշատ մանկավարժների պատվավոր անունները (Սարգիս Արամյան, Արամ Մարտիրոսյան, Արմո Ներսիսյան, Վլադիմիր Գրիգորյան, Ամերկո Հովհաննիսյան, Սամվել Ղուկասյան, Պավել Անդրյան, Լազր Թումանյան և ուրիշներ) արդյունավետ դասն անցկացնելու նրանց ուսանելի փորձը և խորհուրդները իմաստության օրինակ են եղել կրթության համակարգի ներկայիս, հատկապես ավագ սերնդի մանկավարժների համար, ովքեր տարիներ առաջ բախտ են ունեցել աշխատել նրանց հետ, իսկ հիմա նրանց հայրենանվեր գործի շարունակողներն են: Դրանց շարքում իր բազմամյա մանկավարժական արգասավոր գործունեությամբ և անբասիր աշխատանքով (որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրենի տեղակալ, նախարարության կրթության վարչության պետ, փոխնախարար, ԼՂՀ ԿԳ նախարար) արժանի տեղ ունի ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, կրթության, գիտության և սպորտի նախարար **Սլավիկ Ասրյանը՝** կրթական համակարգի նշանավոր մի գործիչ, ով իր աշխատանքային գործունեության ավելի քան 45 տարիների ընթացքում իր (որից 38 տարի ղեկավար պաշտոնում) եռանդն ու գիտելիքները, տարիների մանկավարժական հարուստ փորձն անմնացորդ նվիրաբերել է արցախահայ կրթական համակարգի զարգացմանը, աճող սերնդի կրթության ու դաստիարակության, ուսուցիչների մասնագիտական ու մեթոդամանկավարժական վարպետության բարձրացման շնորհակալ գործին:

Դժվարություններով լի բարդ կյանքի փառավոր ուղի է անցել վաստակաշատ մանկավարժը՝ Սլավիկ Ասրյանը:

Ծնվել է 1949 թվականի դեկտեմբերի 25-ին, Հադրութի շրջանի Մոխրենես գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1964 թվականին ավարտել է Թաղոտի ութամյա, 1966 թվականին՝ Տողի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտը, որն ավարտել է 1970 թվականին՝ մաթեմատիկայի ուսուցչի որակավորմամբ, և աշխատանքի ընդունվել Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1971 թվականի մայիսի 14-ից մեկ տարվա ժամկետով ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում և զորացրվելուց հետո տեղափոխվել քաղաք Ստեփանակերտ ու աշխատանքի անցել թիվ 5 երկարօրյա, իսկ 1975 թվականի սեպտեմբերի 1-ից՝ թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1977-1990 թվականներին աշխատել է որպես թիվ 1 դպրոցի տնօրենի տեղակալ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով, 1990-1993 թվականներին՝ Ստեփանակերտի քաղգործկոմի կրթության բաժնում՝ որպես բաժնի վարիչի տեղակալ, 1993-1997 թվականներին՝ ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես կրթության և գիտության վարչության պետ: 1997-2002, 2007-2012 թվականներին աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության, 2002-2007 թվականներին՝ ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի պաշտոններում:

ԼՂՀ նախագահի 2012 թվականի ՆՀ-53-Ա հրամանագրով նշանակվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնում, իսկ 2015 թվականի հուլիսի 4-ի ՆՀ-68-Ա հրամանագրով՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի պաշտոնում:

Իր գործունեության տարիներին Ս. Ասրյանը բավականին մեծ աշխատանք է կատարել հանրապետության կրթական համակարգում մի շարք բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, պաշտոնավարման առաջին

տարում «Լուսարար» թերթի 2012թ. թիվ 33-ում[315] տպագրված հարցազրույցում Ասրյանը ներկայացրեց ավագ դպրոցի կարգավիճակը և առաջարկությունները: Առաջարկում է, որ վերացվի տարրական դպրոց հասկացությունը և նրա փոխարեն մասնաճյուղեր կցվեն միջնակարգ դպրոցներին: Նրա անմիջական նախաձեռնությամբ 2012-2013 ուս. տարում հանրապետության շրջկենտրոններում բացվում են հոսքային ուսուցմամբ դպրոցներ, իսկ 2013-2014 ուս. տարում նման դպրոցներ բացվում են նաև Շուշիում, Ճարտարում, Քաշաթաղի շրջանի Կովսականում:

2014թ. Ստեփանակերտում կայացած ուսուցչական խորհրդակցությունում (օգոստոսի 26-28-ին, որին մասնակցում էին նաև կրթության շրջանային բաժինների վարիչները, տնօրենները) Ասրյանը հանգամանորեն ներկայացնելով հանրապետության կրթական համակարգի առկա վիճակը, առավելություններն ու թերությունները, նաև ներկայացրեց իր առաջարկությունները, որոնք լիովին ընդունվեցին: Նախարարը առաջարկեց ստեղծել ենթաշրջանային դպրոց-կենտրոններ, որոնցում 10-րդ և 11-րդ դասարաններում սովորողների համար շաբաթը 1-2 օր, իսկ 12-րդ դասարաններում՝ 2 օր կազմակերպել ավագ դպրոցի հոսքային առարկաների ծրագրերին համապատասխան խմբային պարապմունքներ: Նա նպատակահարմար է գտնում վերացնել նաև 9-րդ դասարանի ավարտական և 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների նշանակման պահանջները, արտաքին ստուգումները պետք է հիմք հանդիսանան գործնական, միջին մասնագիտական հաստատությունների ընդունելության համար:

ԼՂՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ առաջին անգամ ՀՀ ԿԳ նախարարության հետ համագործակցության շրջանակներում Արցախի 90 հանրակրթական դպրոցները մուտք գործեցին Dassaran-am կրթական ծրագիրը (այդ մասին մանրամասն նշվել է 2-րդ գլխի 1-ին բաժնում): Նախարարության պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունից տեղեկացանք, որ Ս. Ասրյանի գործունեության շրջանում հանրակրթական դպրոցներում տարեցտարի ընդլայնվում են առարկայական օլիմպիադաների (շրջանային, քաղաքային և հանրապետական), «Գիտունիկ», «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային խաղ-մրցույթները, մեթոդմիավորումների, մեթոդփնջերի արդյունավետ գործունեությունը, որի արդյունքները պարբերաբար քննարկվում են նախարարության կոլեգիայի նիստերում կամ հանրապետության դպրոցների տնօրենների խորհրդակցություններում:[316]

Ուսանելի են նաև ուսուցչական խորհրդակցություններում, նախարարության արտագնա նիստերում (բոլոր շրջանների դպրոցներում) կրթական հաստատությունների ղեկավարների, դպրոցականների, ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպումների ժամանակ (որոնց մասնակցել են սույն գրքի հեղինակները) Ս. Ասրյանի բավականին նորություններ պարունակող, գիտականորեն հագեցած և մշակված մեթոդական և մանկավարժական զեկուցումները և առաջարկությունները: Նկատի ունենալով, որ այդ մասին արդեն նշվել է աշխատության 2-րդ գլխում, բավարարվենք վերը շարադրվածով:

Ս. Ասրյանի բեղմնավոր, ստեղծագործական որոնումներով հագեցած աշխատանքը նպատակաուղղված էր հասունացող սերենդի կրթության, դաստիարակության, համակարգի բոլոր կողմերի կատարելագործման, մասնագետների պատրաստման, որակի կառավարման նոր հայեցակարգերի մշակման, կրթության ոլորտի մասնագետների պատրաստման որակի բարձրացման, մանկավարժական կադրերի աշխատանքի օբյեկտիվ գնահատման, կրթության համակարգի

զարգացման հիմնական ուղղությունների մշակմանն ու իրականացմանը: Նրա գործուն մասնակցությունը սիրած գործին անսահմանորեն նվիրվածության մի դրական օրինակ էր, որ լիովին կարող է որպես տիպար ծառայել երիտասարդ սկսնակ ուսուցիչների, կրթական համակարգը կառավարողի համար՝ անկախ նրա անձնական նպատակադրությունից, պրոֆեսիոնալ հետաքրքրություններից, զբաղմունքներից և հասարակական դիրքից:

Իր երկարամյա և անբասիր աշխատանքի համար Ս. Ասրյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1986թ. օգոստոսի 20-ի հրամանագրով պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, ԼՂՀ նախագահի 2009թ. հոկտեմբերի 3-ի հրամանագրով արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

1. ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարարների գործունեությունը

ԼՂՀ կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից է վաստակաշատ մանկավարժ **Բահատուր Դավթյանը:** Ծնվել է 1937թ. Հադրութի շրջանի Քարինգ (Արփագետիկ) գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև ավարտել հարևան Հին Թաղերի միջնակարգ դպրոցը (1956թ.), ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում և ավարտել 1961թ., աշխատանքի անցել Շամխորի շրջանի Նյազգեր հայկական գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ: 1963-1969 թվականներին դասավանդել է Հադրութի շրջանի Դոլանլարի, Բանաձորի, Արևշատի, Ոսկեվազի, Ասկերանի շրջանի Խանաբադի միջնակարգ դպրոցներում:

Գնահատելով Բ. Դավթյանի մանկավարժական տաղանդն ու պրակտիկայում արդեն ճանաչված մասնագիտական պատրաստվածությունը, մարզժողկրթբաժնի վարիչ Ս. Արամյանը նրան նշանակում է (1969թ.) Ստեփանակերտի կրթության բաժնի դպրոցական տեսուչ, իսկ 1975-1976 թվականներին՝ Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն:

Բավականին լայն են եղել Բ. Դավթյանի գիտամանկավարժական գործունեության շրջանակները՝ ԼՂԻՄ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի կաբինետի վարիչ (1976-1978թթ.), մարզժողկրթբաժնի դպրոցական տեսուչ (1978-1989թթ.), մարզժողկրթբաժնի վարիչի տեղակալ (1989-1992թթ.), ԼՂՀ ԿԳ նախարարի տեղակալ (1992-1994թթ.), ԱրՊՀ ռեկտոր (1994-1995թթ.), ԼՂՀ կադրերի վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտի տնօրեն (1995-1998թթ., ԿԳՆ կից ստեղծված ծրագրամեթոդավորման կենտրոնի տնօրեն (1999-2004թթ.), «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր (2004-2013թթ.) և այլն:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հանրակրթության ոլորտում մեծ հեղինակություն ունեցող անվանի մանկավարժ Բ. Դավթյանի կատարած անուրանալի աշխատանքների մասին, որպես գործընկեր և ականատես, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Ա. Պողոսյանը իրավացիորեն մատնանշում է, որ կրթական համակարգի հմուտ ղեկավարի ու խորիմաստ մտահղացումների, ստեղծագործական ու ջանադիր գործունեության շնորհիվ մեր հանրապետության դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են միջփնջային փորձնական դասալսումներ, մանկավարժական ընթերցումներ, գիտագործնական սեմինարներ:

Մանկավարժական, կրթական համակարգի ղեկավարման նվիրական աշխատանքին զուգահեռ գրել և հրատարակել է չորս տասնյակից ավելի գիտական, մանկավարժական, մեթոդական ու գործնական նշանակության հոդվածներ, ուղեցույցներ, ձեռնարկներ: Հեղինակ է նաև «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ» (Ստ., 2001թ.), «Դաս հայրենյաց» գրքերի: Ներկայումս էլ Բ. Դավթյանը աշխատում և ստեղծագործում է ՀՀ ԿԱ-ի Ստեփանակերտի մասնաճյուղում, որպես գլխավոր մասնագետ:

Վաստակաշատ մանկավարժի բոլորանվեր պրակտիկ և ստեղծագործական աշխատանքը բարձր է գնահատվել մեր հանրապետության ղեկավարների կողմից՝ արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման, իսկ խորհրդային շրջանում պարգևատրվել «Աշխատանքային արիության համար» մեդալով և կառավարական պատվոգրերով:

Արմեն Յուրիկի Սարգսյանը ծնվել է 1968թ. սեպտեմբերի 19-ին, Հադրութի շրջանի Պլեթանց գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: 1983թ. ավարտել է տեղի ութամյա, 1985թ. Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը: 1987-1989թթ. ծառայել է Խորհրդային բանակում, ծառայությունն ավարտելուց հետո ընդգրկվել Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ջոկատներում: 1992թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը, 1996թ. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նպատակային ասպիրանտուրան: 1998թ. ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ղեկավարությամբ «Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2000թ.՝ դոցենտի կոչում: 1996 թվականից դասավանդում է Արցախի պետական համալսարանում, 1999-2011թթ. զբաղեցրել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը՝ 1998-2000թթ. ղեկավարելով նաև ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության ԼՂՀ մասնաճյուղը: 2011թ. նշանակվել է ԱրՊՀ գիտքարտուղար, 2012թ.՝ ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար, 2015թ.՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար: Հեղինակ է մեկ տասնյակից ավելի գիտական աշխատությունների ու ժողովածուների և շուրջ 60 գիտական հոդվածների, որոնց մեծ մասը վերաբերում է Ղարաբաղի բարբառին և բանահյուսությանը: Մասնակցել է ԼՂՀ-ում, ՀՀ-ում, ՌԴ-ում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում կազմակերպված մի շարք միջազգային գիտաժողովների: 2008թ. Ստեփանակերտում կազմակերպել է միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովը: 2010թ. ԱրՊՀ ռեկտոր Ս. Դադայանի հետ ԱրՊՀ-ում հիմնադրել է ազգագրական թանգարան՝ նվիրաբերելով իր անձնական հարուստ հավաքածուն: ԱրՊՀ ուսանողների օգնությամբ, ըստ «Հայերենի բարբառագիտական նյութերի հավաքման ծրագրի» կազմել է Ղարաբաղի բարբառի շուրջ քսան խոսվածքների վկայագրերը և հանձնել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտին:

Միքայել Բահատուրի Համբարձումյանը ծնվել է 1966 թվականի հունվարի 16-ին՝ Հադրութի շրջանի Բանաձոր գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ստեփանակերտի թիվ 7 միջնակարգ դպրոցում: 1984 թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա, ինֆորմատիկա և ֆիզիկա» մասնագիտությամբ: Սովորելու տարիներին աշխատել է պատանի բնասերների մարզային կայանում՝ որպես պատանի կինոսիրողների խմբակի ղեկավար: Ինստիտուտն ավարտել է 1992 թվականին:

1985-1987 թվականներին ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո մինչև 1990 թվականը շարունակել է պատանի բնասերների մարզային կայանում աշխատել որպես պատանի կինոսիրողների խմբակի ղեկավար:

1990 թվականին որպես ավագ լաբորանտ աշխատել է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում: 1991 թվականին տեղափոխվել և նշանակվել է նույն ինստիտուտի ֆիզիկայի կաբինետի վարիչի պաշտոնում:

1992 թվականից մասնակցել է Արցախյան պատերազմին: 1995 թվականին ընտրվել է ԼՂՀ ԱԺ պատգամավոր, էկոնոմիկայի, ֆինանսների և բյուջեի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 1997-1998 թվականներին ԱԺ աշխատակազմում զբաղեցրել է տեխնիկական բաժնի վարիչի պաշտոնը:

1999 թվականին տեղափոխվել է ՌԴ Սարատով քաղաքը, որտեղ «Ուսպեխ-Վոլգա» ՓԲԸ-ում աշխատել է որպես տեխնիկական մենեջեր: Աշխատել է մինչև 2005 թվականը, ապա վերադարձել Ղարաբաղ:

2005 թվականից աշխատանքի է անցել Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանում՝ որպես դասախոս:

2006 թվականից աշխատանքի է անցել ՀՀ ԿԱԻ Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես ինֆորմատիկայի մասնագետ:

2011 թվականի հուլիսի 1-ին նշանակվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչի պաշտոնում:

2012 թվականի նոյեմբերին նշանակվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ:

2. ԼՂՀ կրթության, գիտության նախարարության բարձրակարգ մասնագետների գործունեությունը

Մեր ձեռքի տակ եղած փաստագրական նյութերը և այլ աղբյուրներ հնարավորություն են ընձեռել մեզ համառոտակի ներկայացնել նաև ԿԳ նախարարության գլխավոր մասնագետների կենսագրական տվյալները, քանի որ աշխատության առանձին բաժինների հիմնահարցերը լուսաբանելիս հանգամանորեն նշվել են նաև հանրակրթական դպրոցներում ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով նրանց կատարած աշխատանքները՝ փորձնական դասալսումների, մանկավարժական ընթերցումների կազմակերպումը, քննարկումները մանկավարժական խորհրդի նիստերում, առարկայական մեթոդմիավորումների աշխատանքային պլանի մշակումը և նրանց իրականացման ուղիների ու միջոցների որոշակիացումը, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում մեթոդամանկավարժական մասնագիտական զեկուցումներով հանդես գալը, առարկայական օլիմպիադաների կազմակերպման ուղղությամբ մեթոդական ուղեցույցների մշակումը և այլն:

ԼՂՀ կրթության, գիտության նախարարության ավագ սերնդի (Բ. Դավթյան, Ա. Պողոսյան, Ն. Բաղդասարյան, Շ. Հայրիյան, Մ. Մինասյան և ուրիշներ) լավագույն մասնագետների շարքում ուրույն տեղ ունի վաստակաշատ մանկավարժ **Օնիկ Ասրյանը:** Ծնվել է 1946թ. փետրվարի 22-ին, Մարտունու շրջանի Եմիշճան գյուղում: 1953թ.ընդունվել է տեղի 7-ամյա դպրոցը և ավարտել 1960 թվականին: Այնուհետև ուսումը շարունակել է Բաքվի թիվ 10 և 177 դպրոցներում ու 1964թ. ավարտել միջնակարգը: Նույն թվականին ընդունվել է Բաքվի մանկավարժական

ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը, որն ավարտել է 1968 թվականին և օգոստոսին գործուղվել Դաշքեսանի շրջանի Բանանց գյուղի միջնակարգ դպրոցը՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Նույն թվականի նոյեմբերին զորակոչվել է Խորհրդային բանակի շարքերը և մեկ տարի ծառայելուց հետո զորացրվել: Մինչև 1975թ. սեպտեմբերը աշխատել է Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

1975թ. սեպտեմբերին նշանակվել է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնում, աշխատել է մինչև 1999թ. ապրիլը: 1999թ. ապրիլից աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում՝ որպես առաջին կարգի մասնագետ, իսկ 2000թ. ապրիլից առ այսօր՝ որպես բաժնի պետ:

Մանկավարժական երկարամյա և բեղմնավոր աշխատանքում փայլուն հաջողությունների համար Օ. Ասրյանը արժանացել է կառավարական պարգևների, գովասանագրերի, իսկ 2008թ.՝ ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Հանրապետության դպրոցի պրակտիկայում ճանաչված պատմության լավագույն մասնագետ է **Մանվել Մխիթարյանը:** Ծնվել է 1963 թվականի հոկտեմբերի 27-ին Ստեփանակերտ քաղաքում՝ բանվորի ընտանիքում: 1968 թվականին ընդունվել և 1979 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1979 թվականի սեպտեմբերից մինչև 1980 թվականի մայիսը աշխատել է Ղարմետաքսկոմբինատում՝ որպես բանվոր: 1980 թվականին ընդունվել, իսկ 1984 թվականին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Նույն թվականին ուղեգրվել է Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոց՝ որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ: 1986-89 թվականներին աշխատել է նույն դպրոցում՝ որպես արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 1989 թվականին նշանակվել է ուսումնական մասի գծով տնօրենի տեղակալ և այդ պաշտոնում աշխատել մինչև 1995 թվականը: 1990-91 թվականներին մասնակցել է Արցախյան ազատագրական պայքարին, իսկ 1992 թվականի հուլիսից մինչև 1994 թվականի հոկտեմբեր ամիսը՝ ծառայել ԼՂՀ ՊԲ 4-րդ պաշտպանական շրջանում՝ որպես հրաձիգ: 1995 թվականի փետրվարի 1-ից նշանակվել է Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել մինչև 1999 թվականի սեպտեմբերը: 1999 թվականի սեպտեմբերի 1-ին ընդունվել է աշխատանքի ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչությունում, հետագայում՝ որպես գլխավոր մասնագետ: ԼՂՀ կրթության և մշակույթի նախարարությունների միավորումից հետո 2004 թվականի հոկտեմբերի 10-ից աշխատել է հուշարձանների պահպանության և ուսումնասիրման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2007 թվականի հոկտեմբերին վերոնշյալ նախարարության լուծարումից հետո աշխատանքի է ընդունվել ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչությունում՝ որպես նախնական մասնագիտական (արհեստագործական) և նախադպրոցական կրթության տեսչավորման բաժնի վարիչ: 2012 թվականի փետրվարի 22-ին նշանակվել և առ այսօր աշխատում է որպես ԿՊՏ պետի տեղակալ, հանրակրթության տեսչավորման բաժնի վարիչ (ավագ պետական տեսուչ):

Գիտելիքների հարուստ պաշար, մանկավարժական հստակ կեցվածք ունի

Գայանե Գրիգորյանը: Ծնվել է 1957թ. սեպտեմբերի 10-ին, Մարտունու շրջանի Աշան գյուղում :

1964-1974թթ. սովորել և ավարտել է հայրենի գյուղի դպրոցը, 1974-1978թթ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը գերազանցության դիպլոմով:

1978թ. ուղեգրվել է Վարդաշենի շրջան և մինչև 1982թ. մասնագիտությամբ աշխատել Վարդաշենի միջնակարգ դպրոցում: 1982-1988թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում նախ՝ ժամավճարով մանկավարժության ամբիոնում, այնուհետև որպես լեզվագրական ֆակուլտետի քարտուղար:

1989-1997թթ. մասնագիտությամբ աշխատել է Ստեփանակերտ քաղաքի թիվ 10 և 11 միջնակարգ դպրոցներում:

1997թ. նոյեմբերից առ այսօր որպես գլխավոր մասնագետ աշխատում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում: 2007 թվականից սկսած՝ նախարարության կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում մասնակցել է տարեկան շուրջ 20 հանրակրթական ուսումնական հաստատության տեսչավորմանը:

Իր անբասիր աշխատանքի համար ԼՂՀ նախագահի 2015թ. սեպտեմբերի 1-ի հրամանագրով պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Աննա Պետրոսյանը հանրապետության դպրոցի պրակտիկայում ճանաչված է որպես տարրական կրթության մեթոդիստ-մանկավարժ, տարրական դասարանների ուսուցչի խորհրդատու և դասի որակի ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ մշտական ստեղծագործական որոնումներ կատարող իր մտահղացումները պարբերական մամուլում լուսաբանող, մանկավարժագետ հետազոտող:

Ծնվել է 1969 թվականի հոկտեմբերի 12-ին, Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղում:

Միջնակարգ կրթությունն ստացել է Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա բաժինը, որն ավարտել է 1991 թվականին:

1988 թվականից սկսել է իր աշխատանքային գործունեությունը Ակնաղբյուրի մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

1991 թվականից որպես դասվար աշխատել է ծննդավայրի՝ Ջրաղացների 8-ամյա դպրոցում:

1995 թվականից կադրերի վերապատրաստման և ատեստավորման հանրապետական ինստիտուտի տարրական կրթության կաբինետի վարիչն էր:

1999 թվականից ԼՂՀ կրթության և գիտության նախարարության տարրական կրթության մասնագետ է:

2006 թվականից նույն նախարարության կրթության պետական տեսչության ստեղծմամբ պայմանավորված՝ կրթության պետական տեսուչ է: Համակարգում է Արցախի հանրակրթական դպրոցներում տարրական ուսուցման հիմնադրույթները:

Համատեղությամբ աշխատում է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում՝ որպես դասախոս: Ուսանողների մեծամասնությունը հաղթող են ճանաչվում դպրոցներում անցկացվող՝ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթներում և աշխատում որպես դասվար:

Պաշտպանել է թեկնածուական թեզը, մանկավարժական գիտությունների թեկնածու է: Երևանի կրթության ազգային ինստիտուտի կողմից լավագույն հոդվածի համար պարգևատրվել է պատվոգրով:

2001 թվականին հրատարակել է «Գրավոր աշխատանքների ձեռնարկ 1-4-րդ դասարանների համար» գիրքը, իսկ 2016թ.՝ ուսումնամեթոդական ձեռնարկ՝ «Գեղարվեստական ստեղծագործությունների դասավանդման առանձնահատկությունները տարրական դասարաններում» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկ և տասնյակ գիտամեթոդական հոդվածներ:

Ելիզավետա Միրզոյան: Ծնվել է Ստեփանակերտ քաղաքում, 1954թ. նոյեմբերի 26-ին: 1971թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1973թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ավարտել այն 1978թ.: Միաժամանակ ավարտել է նույն համալսարանի արվեստագիտության բաժինը՝ ստանալով արվեստագետի որակավորում: 1978թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և աշխատանքի նշանակվել Մուրացանի անվան քաղաքային գրադարանում՝ որպես գրադարանի վարիչ: Նույն թվականից էթիկա և էսթետիկա է դասավանդել Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում:

1985թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1985-1989թթ. համատեղությամբ աշխատել է ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնում՝ որպես հայոց լեզվի դասախոս:

1997-1998թթ. աշխատել է Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 2000թ. «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում ճանաչվել է մայրաքաղաքի հայոց լեզվի և գրականության լավագույն ուսուցիչ: 2000-2002թթ. եղել է մայրաքաղաքի «Հայոց լեզվի և գրականության» առարկայական մեթոդմիավորման նախագահ: 2005թ. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների լեզուն» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակ է տասնյակ գիտական հոդվածների և աշխատությունների:

2013 թվականից աշխատում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կրթության պետական տեսչությունում՝ որպես պետական տեսուչ, հայոց լեզվի և գրականության մասնագետ: 2014-ին ԼՂՀ ԿԳՍ նախարարության կողմից պարգևատրվել է պատվոգրերով և հուշամեդալներով:

Յուրա Մովսեսի Խաչատրյան: Ծնվել է 1951 թվականին, Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղում: Ավարտելով Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգը՝ հետագայում երկար տարիներ դասավանդել է նույն դպրոցում: Ավարտել է Ստեփանակերտի նախկին մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցում, շրջժողկրթբաժնում, Ստեփանակերտի թիվ 10, թիվ 1 հիմնական և թիվ 8 ավագ դպրոցներում: Ներկայումս ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում աշխատում է որպես ԿՊՏ տեսուչ: 10 տարի անընդմեջ մասնակցել է Խորհրդային Միության «Математика в школе» ամսագրի մրցութային խնդիրների լուծմանը:

2000թ. ապրիլին Ստեփանակերտում կայացած «Բարեփոխվող դպրոց, ուսումնադաստիարակչական գործընթաց և կառավարում» թեմայով առաջին մանկավարժական ընթերցումների հանրապետական փուլում «Միևնույն խնդրի

լուծումը տարբեր եղանակներով» ստեղծագործական աշխատանքի համար արժանացել է առաջին կարգի մրցանակի: Մաթեմատիկա առարկայից ճանաչվել է 2001-2002 ուսումնական տարվա մայրաքաղաքի լավագույն ուսուցիչ: 2007թ. հոկտեմբերի 9-ին պարգևատրվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի պատվոգրով՝ անբասիր աշխատանքի, մայրաքաղաքին մատուցած ծառայությունների և Ստեփանակերտի օրվա առթիվ: Հայրենիքի հանդեպ իր պարտքն է կատարել մեզ պարտադրված պատերազմում: 2011թ. պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Տիգրան Ստեփանի Պետրոսյան: Ծնվել է 1974թ. հոկտեմբերի 22-ին, Ստեփանակերտ քաղաքում, ծառայողի ընտանիքում: 1991 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի 10-րդ դասարանը: 1991 թվականին ընդունվել է Արցախի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Աշխարհագրություն և դաստիարակչական աշխատանքի մեթոդիկա» բաժինը, որն ավարտել է 1996թ.: 2000 թվականի սեպտեմբերին 2-րդ մասնագիտություն ստանալու նպատակով ընդունվել է ԱրՊՀ հումանիտար ֆակուլտետի «Նախազորակոչային և ֆիզիկական դաստիարակություն» բաժնի հեռակա երկրորդ կուրս և ավարտել 2004 թվականին: 1992 թվականի սեպտեմբերից մինչև 1997 թվականի մայիսի 18-ը ծառայել է ՊԲ-ում որպես հրետանավոր: Ծառայությունը վերջացնելուց հետո 1997 թվականի սեպտեմբերից մինչև 2004 թվականի սեպտեմբերի 6-ը աշխատել է Ստեփանակերտի թիվ 12 դպրոցում՝ որպես աշխարհագրության և ռազմագիտության ուսուցիչ: 2004 թվականի սեպտեմբերից մինչև այժմ աշխատում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության տեսչավորման բաժնում՝ որպես պետական տեսուչ: 2005 թվականից առ այսօր համատեղությամբ աշխատում է ԱրՊՀ աշխարհագրության ամբիոնում:

Օսիպով Ռուբեն Ալեքսանդրի: Ծնվել է 1961թ. ապրիլի 29-ին, Սամարղանդ քաղաքում, մտավորականի ընտանիքում: 1978թ. ավարտելով Սամարղանդի թիվ 30 միջնակարգ դպրոցը, ընդունվել է Սամարղանդի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և 1983թ. ստացել ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում: 1984թ. գործուղվել է նույն քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոց, աշխատել նախ որպես ջոկատավար, այնուհետև ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ: Միաժամանակ կատարել է հասարակական հանձնարարություններ, եղել է դպրոցի կոմերիտական կազմակերպության քարտուղար, արիկոմի նախագահ, Ուզբեկստանի Հանրապետության ուսուցիչների արհմիությունների 1-ին համագումարի պատգամավոր: Մի քանի տարի ռուսաց լեզվի և գրականության առարկայական մեթոդմիավորման նախագահն էր, նույն առարկայից շրջանային օլիմպիադաների հանձնաժողովի նախագահը:

1995թ. հունվարի 2-ին նշանակվել է տարրական դպրոցի փոխտնօրեն, իսկ 1996թ. մայիսի 14-ից՝ դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 1997թ. մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում ձեռք բերած հաջողությունների համար Սամարղանդի Սիամի շրջժողկրթբաժնի կողմից նրան շնորհվել է բարձրագույն մանկավարժական կարգ:

2001թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և 2002թ. ապրիլին աշխատանքի անցել ԼՂՀ կրթության և գիտության (այժմ կրթության, գիտության և սպորտի) նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ, 2007 թվականից՝ որպես կրթության պետական տեսուչ:

2014թ. ԼՂՀ անկախության օրվա առթիվ պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Բեյբուդ Մելքումյան: Ծնվել է 1961թ. մարտի 22-ին, Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղում, մանկավարժի ընտանիքում:

Սկզբնական կրթությունը ստացել է 1968-1976թթ. Մաճկալաշենի 8-ամյա դպրոցում: Կրթությունը շարունակել է ԼՂՀ Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոցում՝ այն ավարտելով 1978 թվականին:

Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը և ավարտել 1982 թվականին՝ ֆիզիկայի ուսուցչի որակավորումով:

Նույն թվականին ուղեգրվել է Մարտունու շրջանի Ղավախանի 8-ամյա դպրոց՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

1983-1985 թվականներին աշխատել է Մարտունու շրջանի Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես կազմակերպիչ, այնուհետև ուսումնական մասի վարիչ:

1985թ. օգոստոսին ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ:

1985-1989թթ. բնակարան ստանալու նպատակով աշխատել է «Հայտրանսգազ» շինարարամոնտաժային վարչությունում՝ որպես բանվոր:

Արցախյան գոյապայքարին մասնակցել է՝ սկսած 1991 թվականից, իսկ ՊԲ շարքերում ծառայել մինչև 2010 թվականի սեպտեմբերը՝ զբաղեցնելով հրետանային մարտկոցի հրամանատարի, հրետանային դիվիզիոնի, մոտոհրաձգային գումարտակի, Ք. Իվանյանի անվան ՌՄՎ-ի, հրաձգային գումարտակի հրամանատարների անձնակազմի հետ տարվող դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալների պաշտոնները:

2011 թվականի հունվարից մինչև 2014 թվականի մայիսը ծառայել է ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայության Ստեփանակերտի փրկարարական վարչության բնակչության և տարածքների պաշտպանության բաժնի պետի պաշտոնում (փոխգնդապետի կոչումով): Համատեղության կարգով 2012-2013 ուս.տարում աշխատել է Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցում՝ որպես ռազմագիտության ուսուցիչ:

2014 թվականի ապրիլին անցել է երկարամյա ծառայության թոշակի:

2014 թվականի մայիսից առ այսօր աշխատում է ԼՂՀ ԿԳ նախարարությունում, սկզբում որպես պետական տեսչության շախմատի մասնագետ, 2015թ. օգոստոսից՝ նախարարության պետական տեսչության նախնական մասնագիտական (արհեստագործական) և նախադպրոցական կրթության բաժնի վարիչ (ավագ պետական տեսուչ), համատեղության կարգով աշխատում է Ստեփանակերտի թիվ 7 հիմնական դպրոցում՝ որպես շախմատի ուսուցիչ:

Պարգևատրվել է «Մարտական ծառայության», «Գարեգին Նժդեհ» մեդալներով, Ռազմամարզական վարժարանի 10-ամյակին նվիրված հուշամեդալով, բազմիցս արժանացել է շնորհակալագրերի, պատվոգրերի, արժեքավոր նվերների:

Գարիկ Գաբրիելյան: Ծնվել է 1962 թվականի հունիսի 7-ին, Ասկերանի շրջանի Խանցք գյուղում:

Տարրական կրթությունը ստացել է տեղի տարրական դպրոցում, իսկ միջնակարգը՝ Բաղարայի դպրոցում: 1979 թվականին ընդունվել և 1983 թվականին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը: 1983 թվականին ուղեգրով աշխատանքի է անցել Ասկերանի շրջանի Շոշի միջնակարգ դպրոցում, որպես մաթեմատիկայի, այնուհետև նաև ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսուցիչ: 2015 թվականի սեպտեմբերին աշխատանքի է անցել ԼՂՀ ԿԳՍ նախարարությունում՝ որպես կրթության պետական տեսուչ:

Սուսաննա Հովսեփյան: Ծնվել է 1963թ. մայիսի 23-ին, Մարտունու շրջանի

Կարմիր շուկա ավանում՝ ծառայողի ընտանիքում:

1970 թվականին ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» ֆակուլտետը և ավարտել 1984 թվականին:

1984 թվականին աշխատանքի է ընդունվել Կարմիր շուկայի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար, համատեղության կարգով աշխատել է Թաղավարդի, Կալերի ութամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Աշխատանքը շարունակել է մինչև 1990 թվականը: 1991 թվականի մարտի 1-ից աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի ԿՎԱՀ-ում՝ որպես գրադարանավարուհի, այնուհետև որպես կադրերի բաժնի տեսուչ: 1996 թվականին նշանակվել է ԿՎԱՀ-ի ժողստեղծագործության ազգագրության կաբինետի մեթոդիստ:

Կաբինետը լուծարվելու պատճառով տեղափոխվել և աշխատանքի է ընդունվել երիտասարդության պալատում՝ որպես ժողստեղծագործության և ազգագրության կաբինետի մեթոդիստ: 1997 թվականի դեկտեմբերի 2-ից աշխատանքի է ընդունվել ԿՎԱՀ-ի տարրական ուսուցման կաբինետում՝ որպես մեթոդիստ:

2002 թվականին նշանակվել է ծրագրամեթոդական և նախադպրոցական բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

2004 թվականի հոկտեմբերի 1-ից համարվել է քաղծառայող և նշանակվել տեսչության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

2008 թվականի մայիսի 15-ից առ այսօր աշխատում է ԿԳՍՆ աշխատակազմի ԿՊՏ հանրակրթության տեսչական բաժնի պետական տեսչությունում՝ որպես պետական տեսուչ:

Նունե Գրիգորյան: Ծնվել է 1966թ. հոկտեմբերի 1-ին, Ստեփանակերտում, ծառայողի ընտանիքում: Նախնական կրթությունը 1972-1982թթ. ստացել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում:

1983-1984թթ. աշխատել է սանէպիդկայանում՝ որպես բանվոր:

1984թ. աշխատել է գյուղատնտեսական տեխնիկումում՝ որպես լաբորանտ:

1984թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ԸՏԱ և ֆիզիկա բաժինը, 1989-ին ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը:

1989-1995թթ. աշխատել է ֆիզմաթ դպրոցում՝ որպես դաստիարակչուհի:

1995թ. մինչ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 11 միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցչուհի:

2001-2004թթ. աշխատել է Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնում՝ որպես տեսուչ:

2004թ. ընդունվել է աշխատանքի ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես ծրագրամեթոդական և նախադպրոցական բաժնի գլխավոր մասնագետ:

2007թ. մինչ այսօր աշխատում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության պետական տեսչության տեսուչի պաշտոնում:

Կարինե Փաթյան: Ծնվել է 1982թ. Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում, մանկավարժի ընտանիքում: 1999թ. ոսկե մեդալով ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների բաժինը՝ անգլերենի մասնագիտությամբ: 2003թ. ավարտել է բակալավրիատը և աշխատանքի անցել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի (անգլերենի) ուսուցչուհի և աշխատել մինչև 2012թ. օգոստոսը: 2005-2007թթ. ընդունվել և գերազանցությամբ ավարտել է նույն բաժնի մագիստ-

ռատուրան, միաժամանակ աշխատել Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում: 2008թ. ընդունվել է ԱրՊՀ ասպիրանտուրայի առկա բաժինը և ավարտել 2011թ., աշխատելով թեկնածուական ատենախոսության վրա՝ «Հաց և ջուր հասկացությունների լեզվաճանաչողական հայեցակերպը անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ» թեմայով: Տպագրել է չորս գիտական հոդվածներ: 2014թ. հոկտեմբերին պաշտպանել է ատենախոսուբուն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ԼՂՀ ԳՄ անդամ է 2012-ից: Ունի տպագրված բանաստեղծությունների գրքույկ, բազմաթիվ թարգմանություններ: ՀՀ ԳՄ անդամ է 2016 թվականից:

2012-2013թթ. աշխատել է ԼՂՀ ԳՄ-ում՝ որպես արտերկրի հետ կապերի բաժնի վարիչ:

2013թ. առ այսօր աշխատում է ԼՂՀ ԿԳՍՆ պետական տեսչությունում՝ որպես անգլերենի պետական տեսուչ: 2014 թվականից համատեղության կարգով դասավանդում է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում՝ որպես դասախոս:

Վերա Հայրիյան: Ծնվել է 1956թ. սեպտեմբերի 30-ին: Սկզբնական կրթությունը ստացել է 1963թ., ավարտել 1974թ. և ընդունվել Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետի քիմիայի բաժինը և ավարտել 1978թ.: 1986թ. աշխատել է ԼՂՀ պատանի բնասերների կայանում՝ որպես խմբակավար, նաև Ստեփանակերտի թիվ 5 միջնակարգ դպրոցում՝ որպես լաբորանտ: 1989թ. Ստեփանակերտի «Ագատ» կենտրոնում աշխատում էր որպես գիտաշխատող: 1991 թվականից՝ Ստեփանակեպտի թիվ 5 միջնակարգ դպրոցում քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի: 1993թ. նույն դպրոցում արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն է եղել: 2001թ. նշանակվել է քիմիա առարկայի մասնախմբի նախագահ Ստեփանակերտ քաղաքում: 2014 թվականից առ այսօր աշխատում է ԼՂՀ ԿՊ տեսչությունում՝ որպես տեսուչ: Համամկարգում է Արցախի հանրակրթական դպրոցներում քիմիա և կենսաբանություն առարկաների դասավանդման հիմնադրույթները:

2000թ. հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն մանկավարժ» մրցույթում, իսկ 2011-2012 ուս. տարում՝ որպես քիմիայի և կենսաբանության լավագույն ուսուցչուհի ՀՀ ԿԳՆ կողմից պարգևատրվել պատվոգրերով ու գովասանագրերով:

Քրիստինա Իսրայելյան: Ծնվել է 1974թ. Ստեփանակերտում:

1991 թվականին ավարտել է քաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Արցախի պետական համալսարանի «Ընդհանուր տեխնիկական առարկաներ, հաշվողական տեխնիկա և ինֆորմատիկա» բաժինը, որն ավարտել է 1996 թվականին:

1996թ. սեպտեմբերից մինչև 2008թ. մարտը աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ որպես ինֆորմատիկայի ուսուցչուհի:

Համատեղության կարգով դասավանդել է նաև Ստեփանակերտի «Էրուդիտ» մասնավոր ռուսական դպրոցում և Ստեփանակերտի պարարվեստի քոլեջում:

2004-2008 թվականներին ղեկավարել է Ստեփանակերտ քաղաքի դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների մեթոդմիավորումը:

2008թ. մարտից աշխատանքի է անցել ԼՂՀ ԿԳ նախարարությունում՝ որպես կրթության պետական տեսչության հանրակրթության բաժնի պետական տեսուչ, որտեղ էլ առ այսօր աշխատում է և համատեղության կարգով դասավանդում Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցում:

3.ԼՂՀ կրթության շրջանային բաժինների վարիչների գործունեությունը (1991-2016թթ.)

Աշխատության երկրորդ հատորում (2015թ., էջ 276-312) ներկայացրել ենք ԼՂԻՄ կրթության շրջանային բաժինների վարիչների գործունեությունը 1923-1988 թվականներին: Լինելով ուսումնասիրության թեմայի տրամաբանական շարունակությունը, նպատակահարմար ենք գտել ժամանակագրական կարգով ներկայացնել նաև կրթության բաժինների վարիչների գործունեությունը ԼՂ Հանրապետության հռչակման նախօրյակին (1988-1991թթ.) և նորօրյա պետականության շրջանում (1991-2016թթ.):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության կրթական գործի կազմակերպման բնագավառում ակտիվ աշխատանք էին ծավալում նաև կրթության շրջանային բաժինների վարիչները: Մեր ձեռքի տակ եղած արխիվային հարուստ փաստագրական նյութերը, պարբերական մամուլում տպագրված բազում հոդվածները, ժամանակակիցների հուշերը և այլ աղբյուրներ հնարավորություն են ընձեռել մեզ ըստ շրջանների ներկայացնել կրթական գործի կազմակերպիչների՝ շրջվարչակազմերի կրթության բաժինների վարիչների ազգանվեր գործունեությունը: Մեր ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ավագ սերնդի վաստակաշատ մանկավարժների (Ռ. Բաղդասարյան, Ս. Խաչյան, Խ. Ղազարյան, Մ. Բալյան, Մ. Շահնազարյան, Ս. Դավթյան, Բ. Դավթյան, Ա. Միրզոյան և ուրիշներ) հուշերն ու նամակները, պարբերական մամուլում նրանց մասին գրված հոդվածները և այլ նյութեր: Այս առումով էլ հնարավորինս աշխատել ենք թեկուզ և համառոտակի ընդհանուր պատկերացում տալ նրանց գործունեության մասին:

ա) Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի ներկայիս վարիչ Ժասմեն Դավթյանի, վաստակաշատ մանկավարժ Սեդրակ Խաչյանի (Վաղուհասի միջն. դպրոցի ուսուցիչ) մեզ տրամադրած՝ «Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատած անձանց պաշտոնավարման ժամանակահատվածը՝ սկսած 1988 թվականից» ցուցակում և առանձին հուշերում ժամանակագրական կարգով ներկայացվում են շրջանի կրթության բաժնի վարիչների պաշտոնավարման ժամանակաշրջանը և աշխատած տարիների գործունեությունը: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև նրանց կենսագրական տվյալները, որը ուսանելի կլինի ներկա երիտասարդ սկսնակ ուսուցիչների համար:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1988-2016թթ.) Մարտակերտի կրթության շրջանային բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են **Ռաֆայել Բաղդասարյանը** (1988-1994թթ.), Յուրի Եդիգարյանը (1994թ. փետրվարի 18-ից մինչև 1996թ. հոկտեմբերի 3-ը, 1996թ. ապրիլի 15-ից 1996թ. օգոստոսի 24-ը, և 1998թ. սեպտեմբերի 21-ից 2006թ.), Գառնիկ Իսրայելյանը (1996թ. հոկտեմբերի 3-ից 1996թ. ապրիլի 15-ը), Սմբատ Սանթրյանը (1996թ. օգոստոսի 24-ից 1998թ. սեպտեմբերի 21-ը և 2006թ. հունվարի 17-ից 2006թ. փետրվարի 10-ը), Ռուբեն Հարությունյանը (2006թ. փետրվարի 10-ից 2008թ. հունվարի 22-ը), Ժասմեն Դավթյանը (2008թ. հունվարի 29-ից առ այսօր):

Մարտակերտի շրջանի կրթական համակարգի պատմության մեջ իր արժանավոր տեղն ունի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Ռաֆայել Բաղդասարյանը (1930թ.): Նախնական կրթու-

թյունը ստացել է հայրենի Գյուլաթաղ (Վարդաձոր) գյուղի յոթնամյա դպրոցում (1938-1945թթ.), այնուհետև գերազանցությամբ ավարտել Կուսապատի միջնակարգ դպրոցը (1948թ.), ուսումը շարունակել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտական ֆակուլտետի քիմիա-կենսաբանություն բաժնում: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը, մանկավարժական աշխատանքի է անցնում հայրենի գյուղի կրթօջախում՝ որպես քիմիա-կենսաբանության ուսուցիչ, ուսմասվար:

1952-1960թթ. Բաղդասարյանը հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալում, եղել է «Սոցիալիզմի ուղիով» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար (1952-1953թթ.), ԼԿԵՄ Մարտակերտի շրջկոմի քարտուղար (1953-1957թթ.), Մարտակերտի շրջխորհրդի գործկոմի քարտուղար (1957-1961թթ.): Նա հատկապես բեղմնավոր գործունեություն է ծավալել 1960-1980-ական թվականներին:

Ռ. Բաղդասարյանը շուրջ 35 տարի եղել է ղեկավար պաշտոններում: Հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը և նշանակվել Ճանյաթաղի ութնամյա դպրոցի տնօրեն (1961-1964թթ.), այնուհետև աշխատանքի է հրավիրվել կրթության շրջանային բաժին, որտեղ որպես դպրոցական տեսուչ, մեթոդկաբինետի վարիչ, շրջանի լուսավորության աշխատողների արհկոմի նախագահ աշխատել է 1964-1988թթ.:

Իր հուշերում (1974-1978թթ.) Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Ռաֆայել Ահարոնյանը՝ անդրադառնալով Ռ. Բաղդասարյանի գործունեությանը, գրում է, որ բազմամյա գործունեության տարիներին բազմավաստակ մանկավարժը զբաղեցրած բոլոր պաշտոններում իրեն դրսևորել է որպես գործին գիտակ, սկզբունքային, շրջանի կրթական գործի անցյալին ու ներկային քաջ տիրապետող անձնավորություն:[317]

Ռ. Բաղդասարյանը շարունակում է բեղմնավոր մանկավարժական գործունեությունը նաև Արցախյան շարժման տարիներին: Այդ դժնդակ օրերին նա մնաց իր հայրենի օջախում, կանգնած լինելով իր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և անգնահատելի ծառայություն ունեցավ շրջանի կրթական համակարգի զարգացման բնագավառում: Նրա ղեկավարությամբ կրթության շրջանային բաժինը (1988-1994թթ.) դպրոցների մանկավարժական կոլեկտիվները (որոնց մի մասը գտնվում էին վերաբնակեցված վայրերում) այդ ծանր օրերին ամեն ինչ անում էին աճող սերնդի ուսուցման ու դաստիարակության գործը արդյունավետ կազմակերպելու, բռնագաղթված ընտանիքների երեխաների կարիքները հոգալու, ծնողազուրկ երեխաներին պարտադիր դպրոց ընդգրկելու ուղղությամբ:

Բաժնի վարիչը լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկեց վերաբնակեցված վայրերում դպրոցներն ուսուցիչներով ապահովելու համար: Այդ մասին Վաղուհասի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Կարմեն Հարությունյանը (այն ժամանակ՝ 1990-1992թթ., Վաղուհասի միջնակարգ դպրոցը գործում էր Ստեփանակերտում) իր հուշերում գրում է, որ Ռ. Բաղդասարյանի եռանդուն գործունեության շնորհիվ շրջանի առաջավոր ուսուցիչները պատվով կատարեցին իրենց պարտականությունները մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ:[318]

Ռ. Բաղդասարյանի գործունեության տարիներին կրթության շրջանային բաժինը մեծ ուշադրություն է դարձրել նաև ուսուցչական կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը: Ուսուցչությունը ակտիվորեն մասնակցեց դպրոցի վե-

ռակառուցման գործին: Պարբերաբար հրավիրվում էին շրջանային ուսուցչական խորհրդակցություններ, որտեղ քննարկվում էին դպրոցները մանկավարժական բարձրորակ կադրերով ապահովելու, ներդպրոցական կյանքին վերաբերող, ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու և այլ հարցեր:

Մարտակերտի շրջանի կրթական համակարգի զարգացման գործում մեծ ծառայություն ունի մաթեմատիկայի ճանաչված ուսուցիչ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Յուրա Եդիգարյանը:** Ծնվել է 1943թ. Մաղավուզ գյուղում, 1943 թվականին ընդունվել է նույն գյուղի միջնակարգ դպրոցը և 1959թ. ավարտել այն:

1959-1962թթ. սովորել և ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մեխանիզացիայի բաժինը: 1968թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը:

1968-1970թթ. աշխատել է Մաղավուզի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, 1970-1976թթ. ուսումնական մասի վարիչ, 1976-1992թթ.՝ դպրոցի տնօրեն: 1993թ. հուլիսից մինչև 1998թ. հոկտեմբերը եղել է Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի տեղակալը, իսկ 1998-2006թթ. եղել է կրթության բաժնի վարիչը:

Յու. Եդիգարյանը բազմիցս հանդես է եկել մարզային և հանրապետական մանկավարժական ընթերցումներում: Նրա ղեկավարած դպրոցը եղել է մարզի և հանրապետության հենակետային դպրոցներից մեկը: Ուսումնասիրել և Մաղավուզի միջնակարգ դպրոցում արմատավորել է երկարացված օրվա դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման փորձը և հասել շոշափելի հաջողությունների: Նրա ղեկավարած դպրոցի երկարացված օրվա ութ խմբերում սովորող մոտ 250 աշակերտ սնվել է դպրոցի օժանդակ տնտեսությունից ստացված եկամուտների հաշվին: Աշխատանքային ուսուցման և դաստիարակության, սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշման բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար Մաղավուզի դպրոցը ներկայացվել է ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսին, որտեղ Եդիգարյանը արժանացել է արծաթե մեդալի, իսկ դպրոցի մի շարք ուսուցիչներ՝ ցուցահանդեսի մասնակցի պատվավոր կոչման:[319]

Կրթության բաժինը ղեկավարելու տարիներին Յու. Եդիգարյանը իրեն դրսևորել է որպես սկզբունքային, գործիմաց, նախաձեռնող և կրթական գործի հմուտ կազմակերպիչ: Նա եղել է նաև երիտասարդ ուսուցիչների խորհրդատուն, բայց պահանջկոտ, սկզբունքային, աշխատողների լավագույն ցուցանիշները գնահատող: Բացառում էր կառավարման միակողմանիությունը և պահպանում համաձայնեցվածության (համագործակցության) կառավարման սկզբունքը, ընտրում իր ենթակաների վրա ներգործելու ճիշտ մեթոդը:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ Յու. Եդիգարյանի գործունեության տարիներին համեմատաբար ավելացել է շրջանի հանրակրթական դպրոցների թիվը: Շրջանում պարբերաբար կազմակերպվում էին մանկավարժական ընթերցումներ, մեթոդմիավորման հանձնաժողովների խորհրդակցություններ՝ դպրոցներում ուսման որակը բարձրացնելու, ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու, առաջավոր ուսուցիչների փորձը մասսայականացնելու նպատակով:

Շուրջ կեսդարյա մանկավարժական գործունեության ընթացքում երեք տաս-

նամյակ աշխատել է ղեկավար պաշտոններում (որպես ուսմասվար, տնօրեն, դպրոցական տեսուչ, շրջժողկրթբաժնի վարիչի տեղակալ, բաժնի վարիչ) իրեն դրսևորել է որպես հմուտ կազմակերպիչ և զբաղեցրած բոլոր պաշտոններում աշխատել բարեխղճորեն, արդարացիորեն նվաճել մանկավարժական կոլեկտիվների սերն ու հարգանքը:

Այսօր էլ Յու. Եդիգարյանը մեծ պատասխանատվությամբ է կրում ուսուցիչ-դաստիարակի բարձր կոչումը: Իր անբասիր աշխատանքի համար նա արժանացել է «ԽՍՀՄ լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել է «Աշխատանքի արիության համար» մեդալով, արժանացել է քսաներորդ դարի Արցախի լավագույն մանկավարժի կոչման:

Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչի պաշտոնում շատ կարճատև գործունեություն է ծավալել շրջանի Մոխրաթաղ գյուղի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն **Գառնիկ Իսրայելյանը** (1996 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 1996թ. ապրիլի 15-ը), իսկ տարբեր ժամանակներում կրթության բաժինը երեք տարի (1996-1998թթ. և 2006թ. հունվարի 17-ից փետրվարի 10-ը) ղեկավարել է շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված ֆիզիկայի ուսուցիչ **Սմբատ Սանթրյանը:** Ծնվել է 1959թ. Մարտակերտում: 1976թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը, որն ավարտել է 1982թ.:

1982-1985թթ. աշխատել է Մարտակերտի շրջանի Ումուբլուի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ, հետագայում՝ որպես տնօրենի տեղակալ:

1985-1990թթ. աշխատել է որպես «Գիտելիք» ընկերության պատասխանատու քարտուղար:

1990-1992թթ. աշխատել է Մարտակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրենի տեղակալ:

1992-1995թթ. ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի լիազոր ներկայացուցիչն էր Մարտակերտ քաղաքում:

1996-1998թթ. Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչն էր, նաև ղեկավարել է 2006 թվականին: Իր պաշտոնավարման ժամանակաշրջանում ցուցաբերել է նախաձեռնողականություն և շրջանի բազմաթիվ դպրոցներում որպես օտար լեզու գերմաներենը փոխարինել անգլերեն լեզվով՝ հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների մուտքը դպրոցներ, ինչպես նաև անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի դերը գնահատելով, դրանով իսկ անգնահատելի ծառայություն մատուցել շրջանի կրթական համակարգին, մասնավորապես օգտվել է այլընտրանքային ծառայության մասին օրենքից՝ շրջանի դպրոցներն ապահովելով անգլերեն լեզվի և կերպարվեստի ուսուցիչներով:

1998-2003թթ. Մարտակերտի շրջանի կենսաթոշակային ապահովագրության տարածքային կենտրոնի տնօրենն էր:

2004-2005թթ. Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավար էր: Լինելով հեռատես ղեկավար, իր պաշտոնավարման շրջանում ռազմավարական ծրագիր է մշակել շրջանի զարգացման համար՝ բոլոր ոլորտների առումով, և՛ գյուղատնտեսության, և՛ արդյունաբերության զարգացման, և՛ կոմունիկացիաների, և՛ մատաղ սերնդի դաստիարակության:

Փաստագրական նյութերից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Մարտակերտի շրջանի կրթության բաժինը տարբեր ժամանակներում, շուրջ 12 տարի (1977-1986թթ. և 2006-2008թթ.), ղեկավարել է վաստակաշատ մանկավարժ, շր-

ջանի Մոխրաթաղ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, մաթեմատիկայի ուսուցիչ **Ռուբեն Հարությունյանը:**

Իր գործունեության տարիներին բաժնի վարիչը բավականին մեծ աշխատանք է կատարել շրջանի դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու գործում: Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի արխիվում պահպանվող՝ Ռ.Հարությունյանի հաշվետվությունների, ուսուցչական խորհրդակցություններում ունեցած զեկուցումների[320] և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունից իմանում ենք, որ բաժնի վարիչը առաջնային է համարել ծայրամասային գյուղերի դպրոցները բարձրորակ կադրերով ապահովելը (ինչպես խորհրդային շրջանում՝ 1977-1986 թվականներին, այնպես էլ 2006-2008 թվականներին), նրանց մեթոդամանկավարժական, մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացումը: Նման բնույթի և դպրոցի ներքին կյանքին վերաբերող այլ հարցեր պարբերաբար քննարկվել են շրջանային ուսուցչական խորհրդակցություններում: Այդ մասին իր հուշերում վկայում է նաև Կուսապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Անյուտա Խաչատրյանը:[321] Վաստակաշատ ուսուցչուհին նաև պատմում է, որ շրջվարչակազմի կրթության բաժնի ընդլայնված խորհրդակցություններում (յուրաքանչյուր ուսումնական տարվա հունվարին և օգոստոսին) իրենց հաշվետվություններով հանդես էին գալիս դպրոցների տնօրենները, մեթոդմիավորման հանձնաժողովների նախագահները, նշում նաև թերությունները: Խորհրդակցություններում պարբերաբար քննարկվում էին տնօրենների հաշվետվությունները, դասալսումների, շրջանային, քաղաքային, հանրապետական օլիմպիադաներում, ստեղծագործական շարադրությունների, ինտելեկտուալ մրցույթներում աշակերտների առաջադիմության արդյունքները:

Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի հիմնական դպրոցի տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Նաիրա Առստամյանը (25 տարի է, ինչ ղեկավարում է դպրոցը) իր հուշերում ակնածանքով է խոսում Ռ. Հարությունյանի գործունեության մասին, նշում է, որ, երկարամյա պաշտոնավարման շրջանում շրջանի կրթական համակարգում հայտնի դեմք լինելով, նա իր կազմակերպչական և մասնագիտական փորձն անմնացորդ փոխանցում էր երիտասարդ ուսուցիչներին: Շրջանային ուսուցչական կոնֆերանսներում հանդես էր գալիս մեթոդամանկավարժական ընթերցումներով՝ շեշտը դնելով հանրակրթական դպրոցներում ուսման որակի բարձրացման վրա:[322]

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շրջանի հանրակրթական դպրոցների վերակառուցման աշխատանքները, կրթական համակարգում բարեփոխումները հաջողությամբ իրականացվեցին և նախկին լավագույն ավանդույթները շարունակվեցին կրթական գործի հմուտ կազմակերպիչ **Ժաստեն Դավթյանի** գործունեության տարիներին:

Ծնվել է ՀՀ Կապան քաղաքում՝ 1960թ. փետրվարի 20-ին:

1967-1977թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Կապանի Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի քիմիա-կենսաբանություն բաժինը, որն առկա ուսուցմամբ ավարտել է 1982 թվականին՝ կարմիր դիպլոմով:

1982-1985թթ. աշխատել է Մարտակերտի շրջանի Ումբլուի (ներկայիս՝ Ականաբերդ) միջնակարգ դպրոցում՝ որպես կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի: 1985-1986թթ. աշխատել է Ներքին Հոռաթաղի պրոֆտեխուսումնարանում՝

որպես քիմիայի դասատու: 1986թ. մինչև շրջանի բնակչության բռնատեղահանումը աշխատել է կրթության բաժնում՝ որպես քիմիայի և կենսաբանության մեթոդիստ: 1992-1993թթ. աշխատել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի ուսուցչուհի: 1993-1994թթ. Ստեփանակերտի Զառիհ բաղ տեղամասում գործող դպրոցի տնօրենն էր: Մարտակերտի ազատագրումից հետո տեղափոխվել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոց՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի: 2008-ից առ այսօր աշխատում է Մարտակերտի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի պաշտոնում:

Ժ. Դավթյանի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ շրջանի կրթության համակարգում արձանագրվել են մի շարք դրական տեղաշարժեր: Ընդլայնվել է հանրակրթական դպրոցների ցանցը (27 մ/դ, 8 հ/դ և 6 մասնաճյուղ), դպրոցներում գործում է ուսուցման կաբինետային համակարգ, կան համակարգչային դասասենյակներ, ժամանակին ավարտվել են դպրոցների հիմնանորոգման աշխատանքները, պարբերաբար կազմակերպվում են մանկավարժական կոլեկտիվների հանդիպումներ ՀՀ դպրոցների կոլեկտիվների հետ: Համագործակցությունը հնարավորություններ է ընձեռել անցկացնել փորձի փոխանակման դասեր: Դպրոցներում ուսման որակի բարձրացումը համարվում է մանկավարժական կոլեկտիվների առաջնահերթ խնդիրը: Այդ և նման այլ հարցեր քննարկվում էին շրջանային ուսուցչական խորհրդակցություններում և լավագույն ուսուցիչների կատարած աշխատանքները գնահատվում ըստ արժանվույն (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

Իր անբասիր աշխատանքի համար Ժասմեն Դավթյանը 2002թ. շրջանում ճանաչվել է կենսաբանության լավագույն ուսուցչուհի, 2006թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, իսկ 2016 թվականի հոկտեմբերին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

բ) Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերի տվյալների[323] համաձայն, 1988-2016 թվականներին կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են Էդիսոն Սերգեյանը (1982-1993թթ.), Սլավա Պետրոսյանը (1993-1994թթ. և 1998-2008թթ.), Ռուբեն Իշխանյանը (1994թ. ժամանկավոր աշխատել է 4 ամիս), Սերգեյ Արզումանյանը (1994-1996թթ.), Զյուլետա Ավետիսյանը (1996-1998թթ.), Սլավա Պետրոսյանը (1998-2008թթ.) Գեորգի Սևիկյանը (2008-2012թթ.), Զորիկ Ղուլյանը (2012 թվականից առ այսօր):

Մարտունու շրջանի կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից է **Էդիսոն Սերգեյանը:** Ծնվել է 1939թ. Մարտունու շրջանի Սոս գյուղում: Գերազանցությամբ ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1957թ.), ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը և ավարտել 1963 թվականին, ու անցել մանկավարժական աշխատանքի: Երեք ամիս աշխատելով գյուղի դպրոցում, 1963 թվականի նոյեմբերի 29-ին զորակոչվում է բանակ և ծառայում մինչև 1964 թվականը:

Զորացրվելուց հետո աշխատանքի է անցնում Մարտունու շրջժողկրթբաժնում, որպես դպրոցական տեսուչ (1965-1972թթ.): Այնուհետև աշխատում է Մարտունու կուսշրջկոմում (1972-1977թթ.), շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ և քարտուղար: 1982-1993 թվականներին եղել է Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչ, 1994-1988թթ. շրջանային կրթության բաժնում, որպես մշակույթի բաժնի վարիչ, իսկ 1999թ. առ այսօր աշխատում է կրթության բաժնում՝ որ-

պես գլխավոր մասնագետ:

Է. Սերգեյանի նախաձեռնությամբ շրջանի կրթական համակարգում մեծ փոփոխություններ կատարվեցին հատկապես 1991-1993 թվականներին: Ընդլայնվեց դպրոցների ցանցը, վերանորոգվեց և հիմնանորոգվեցին 10-ից ավելի դպրոցներ, դպրոցները ապահովված էին ուսումնական պլաններով, ծրագրերով, դասագրքերով, դպրոցներում արդեն գործում էին մեթոդմիավորումների նախապատրաստման և անցկացման կանոնները՝ պահպանելով նախկին ավանդույթները, դպրոցներն ապահովեցին բարձրորակ մանկավարժական կադրերով, բարձրացվեց սովորողների ուսման առաջադիմությունը, լուրջ ուշադրություն էր դարձվում գյուղական դպրոցներում վերանորոգման աշխատանքներին և այլն:

Սերգեյանի գործունեության տարիներին բարձրացավ նաև դպրոցներում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ու նպատակայնությունը: Իհարկե, ապահովվել է նաև դպրոցների ինքնուրույնությունն իրենց եկամուտների (դպրոցամերձ հողամասերից) և ծախսերի պլանավորման հարցում, խթանվել է մրցակցությունը, տարբերակված մոտեցում է ցուցաբերվել դպրոցների նկատմամբ:

Հիրավի, աշխատելով շրջանի կրթական համակարգում և տարբեր բնագավառներում, Է. Սերգեյանը իրեն դրսևորել է որպես լավագույն մասնագետ և հմուտ կազմակերպիչ: Նրա բեղմնավոր աշխատանքը բարձր է գնահատվել, արժանացել է մի շարք պատվոգրերի և գովասանագրերի:

1994-1996 թվականներին Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում շատ կարճատև գործունեություն են ծավալել Ռուբեն Իշխանյանը (ծնված 1938թ.): Ժամանակավոր նշանակվել է կրթության բաժնի վարիչ (1.09.1994թ. - 28.11.1994թ.), մասնագիտությամբ մաթեմատիկ է, Սերգեյ Արզումանյանը (ծնված 1956թ.), 1994թ. նշանակվում է կրթության բաժնի վարիչ մինչև 1996թ.: Օգոստոսի 2-ից Ս. Արզումանյանը ազատվում է վարիչի պաշտոնից ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու կապակցությամբ:

Մարտունու շրջանի կրթության բաժինը շուրջ 12 տարի ղեկավարել է Սլավա Պետրոսյանը: Ծնվել է 1952թ. Մարտունի ավանում: 1971թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկա ֆակուլտետում: 1973թ. տեղափոխվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ և ավարտում ֆիզմաթ ֆակուլտետը 1976թ.:

1975-76 ուս. տարում աշխատել է Ճարտարի միջնակարգ և Մարտունու 8-ամյա դպրոցներում: 1976-77թթ. եղել է զինվորական ծառայության մեջ, 1977-87թթ. աշխատել է կրթության շրջբաժնում, որպես մեթոդկաբինետի վարիչ, 1981թ.՝ բաժնի վարիչի պաշտոնակատար: 1985-92թթ. աշխատել է Մարտունու միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնում: 1992-94թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում: 1993թ. դեկտեմբերից մինչև 1994թ. օգոստոսը աշխատել է որպես կրթության բաժնի վարիչ: 1994թ. օգոստոսից մինչև 1998թ. դեկտեմբերը աշխատել է Մարտունու շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ: 1998թ. դեկտեմբերից մինչև 2008թ. օգոստոսի 11-ը աշխատել է որպես Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ:

Նրա գործունեության տարիներին շջանի կրթության ոլորտում բավականին մեծ աշխատանք կատարվեց:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ երկրորդ անգամ նշանակվելով շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում (1998թ. դեկտեմբերի 1-ին), օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում

(1998-1999 ուս. տարվա օգոստոսի 24-26-ին) ծավալուն զեկուցումով («Շրջանում կրթության համակարգի վերակառուցման հիմնական ուղղությունները») հանդես եկավ Ս. Պետրոսյանը: Ներկայացնելով շրջանի կրթական համակարգում ունեցած ձեռքբերումները, հատկապես մատնանշեց թերությունները, որն առկա է կրթական համակարգում: Նա համարձակորեն նշեց, որ շրջանի կրթական համակարգի վրա իր բացասական ազդեցությունն է թողել 1998թ. նոյեմբերի 10-ին ԼՂՀ կառավարության ընդունած որոշումը «Դպրոցները համայնքի սեփականության գույքի ցանկում ընդգրկելու մասին»: Փաստորեն շրջանի կրթության բաժինը ցած դրեց իր լիազորությունները, որը խիստ բացասական հետևանք թողեց դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների վրա:[324]

Վաստակաշատ մանկավարժ էմիլ Բալայանը իր հուշերում պատմում է, որ Ս. Պետրոսյանի գործունեության տարիներին շրջանի դպրոցներում բարձր հիմքերի վրա դրվեցին ուսումնադաստիարակչական աշխատանքները, պարբերաբար կազմակերպվում էին միջփնջային դասալսումներ, կազմակերպվում էին «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն աշակերտ» շրջանային, քաղաքային օլիմպիադայի մրցույթներ, ռազմահայրենասիրական խաղեր, մրցույթներ և տարաբնույթ այլ միջոցառումներ: Կրթության բաժնի վարիչը հատկապես լուրջ ուշադրություն էր դարձնում դպրոցական տեսուչների կողմից համակողմանի ստուգումների ժամանակ բացահայտված թերությունների վրա, տնօրեններից խստորեն պահանջում ժամանակին վերացնել բացահայտված թերությունները (այդ մասին նշվել է աշխատության երկրորդ գլխում): Հարկ է նաև նշել, որ կրթության բաժնի խորհրդակցությունում, որին մասնակցում էին նաև բոլոր տնօրենները, ԼՂՀ ԿԳ նախարարության մասնագետները, պարբերաբար քննարկվում էին տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ տնօրենների կողմից կատարված աշխատանքները, իհարկե, նաև գնահատվում ու խրախուսվում էին լավագույն տնօրենների կազմակերպչական ու հետևողական աշխատանքները:

Իր բազմամյա գործունեության տարիներին մաթեմատիկայի լավագույն մասնագետ Ս. Պետրոսյանը պարբերական մամուլում անընդմեջ հանդես է եկել մաթեմատիկայի ուսուցման մասին բազմաբնույթ հոդվածներով, որոնք ըստ արժանվույն են գնահատվել ուսուցիչների կողմից: Նրա աշխատանքը գնահատվում էր նաև նրանով, որ երկար տարիներ նրա աշակերտները միշտ հաղթող են ճանաչվել քաղաքային, հանրապետական, համամիութենական օլիմպիադաներում և արժանացել պատվոգրերի:

1998-2008 թվականներին Մարտունու շրջանի կրթության բաժինը նորից ղեկավարում է Ս. Պետրոսյանը, իսկ 2008 օգոստոսի 12-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերը, շրջանի կրթության բաժինը ղեկավարել է **Գեորգի Սևիկյանը** (ծնված 1949թ.), որը շրջանի դպրոցի պրակտիկայում ֆիզիկայի ճանաչված ուսուցիչ է, միաժամանակ երկար տարիներ եղել է շրջանի ֆիզիկայի մեթոդմիավորման նախագահ, կազմակերպել միջփնջային դասալսումներ:

Որպես կրթության բաժնի վարիչ, մեծ աշխատանք է տարել շրջանում 12-ամյա կրթության իրականացման ուղղությամբ: Հարկ է նաև նշել, որ նրա պաշտոնավարման տարիներին շրջանի կրթության համակարգում զգալի փոփոխություններ կատարվեցին մասնագետների պատրաստման, որակի կառավարման համակարգում:

Մարտունու շրջանի կրթության բաժինը 2012 թվականից առ այսօր ղեկավարում է Զորիկ Ղուլյանը: Ծնվել է 1966թ. նոյեմբերի 6-ին Մարտունու շրջանի Քերթ

գյուղում: 1984թ. ավարտել է Քերթի միջնակարգ դպրոցը: 1985-87թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: 1987թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը և այն ավարտել 1992թ.:

Արցախյան շարժմանը մասնակցել է առաջին օրվանից մինչև մեր օրերը: 1990-91 ուս. տարում դասավանդել է Քերթի միջնակարգ դպրոցում, որպես պատմության ուսուցիչ:

2005-2008թթ. աշխատել է որպես Քերթի համայնքի ղեկավար, 2008-2012թթ.՝ որպես Մարտունու մշակույթի և երիտասարդության կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն:

գ) Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հադրութի շրջանի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչների շարքում կարևոր տեղ է գրավում 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, մանկավարժական-տեսական բազում հոդվածների հեղինակ, ուսուցիչների խորհրդատու **Անդրանիկ Աբրահամյանը:** Նպատակահարմար ենք գտնում համառոտակի ներկայացնել նաև նրա ուսանելի մանկավարժական գործունեությունը՝ զուգակցելով Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնավարության շրջանում (1973-1981թթ.) և 1988-2005 թվականների գործունեության հետ, ինչպես նաև նրա մանկավարժական ուսանելի խորհուրդները սկսնակ ուսուցիչներին:[325] Շուրջ 25 տարուց ավել նա ղեկավարել է կրթության բաժինը: Նրա նախաձեռնությամբ բավականին մեծ աշխատանքներ են կատարվել շրջանի կրթական համակարգում, և այդ առումով թե՛ խորհրդային շրջանում և թե՛ մեր ժամանակներում բաժինը հանրապետությունում մշտապես եղել է առաջավորների շարքում:

Նա ծնվել է Հադրութի շրջանի Արփագետիկ գյուղում (1933թ.): Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում (1941-1948թթ.), այնուհետև ավարտել է Հին Թաղերի միջնակարգ դպրոցը (1949-1952թթ.) և ընդունվել (1952թ.) Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: Գերազանց գնահատականներով ավարտելով երկամյակը, 1953թ. սեպտեմբերի 1-ին աշխատանքի է անցել շրջանի Արևշատի յոթնամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Չնայած նշված դպրոցում նա դասավանդել է ընդամենը մեկ ուսումնական տարի (1953-1954 ուս.տարի), բարձր դասարանների աշակերտների ուժերով կարողացել է ստեղծել և կահավորել հայոց լեզվի և գրականության կաբինետ, և այդ նախաձեռնությունը ուսանելի օրինակ է ծառայել նաև մյուս ուսուցիչների համար:

Ա. Աբրահամյանը 1954-1957թթ. ծառայել է խորհրդային բանակում և զինվորի իր պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար արժանացել հրամանատարական կազմի խրախուսանքին ու գովասանագրերին: Հետագայում այդ մասին գրում է իր հուշերում:[326]

Ծառայությունն ավարտելուց հետո Ա. Աբրահամյանը վերադառնում է հայրենի երկրամաս և շարունակում մանկավարժական գործունեությունը: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն աշխատել է Արևշատի, Դոլանլարի, Արփագետիկի, Խծաբերդի և Պետրոսաշենի (Ղոշախաչ) յոթնամյա-միջնակարգ դպրոցներում: Միաժամանակ հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատելու տարիներին վաստակա-

շատ մանկավարժի ստեղծագործական որոնումների և հետևողական աշխատանքի շնորհիվ բավականին մեծ փոփոխություններ կատարվեցին կրթության ոլորտում: Ինչպես տեղեկացանք 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ (նաև ԼՂՀ վաստակավոր մանկավարժ) Խորեն Ղազարյանի հուշերից,[327] Ա. Աբրահամյանի պաշտոնավարման շրջանում դպրոցին ներկայացվող նոր պահանջներին ու խնդիրներին համապատասխան վերակառուցվեցին ուսումնական, արտաուսումնական, արտադասարանական աշխատանքների կազմակերպման եղանակներն ու ձևերը: Կրթության վերակառուցման նոր փուլում բաժնի ղեկավարը առաջնահերթ խնդիր համարեց ուսուցման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը, ինչպես նաև ուսուցչի առաջավոր փորձի բացահայտումն ու տարածումը մանկավարժական կոլեկտիվներում: Օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում ունեցած ծավալուն զեկուցման մեջ մանրամասնորեն ընդհանրացրել է.

ա) շրջանի դպրոցներում տարվող աշխատանքները, կոնկրետ օրինակներով նշել է մի շարք դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ դեռևս գոյություն ունեցող թերությունները,

բ) դպրոցական տեսուչների վերահսկողության և ստուգման ձևերը, բացթողումները:

Ինչպես նշում են ժամանակակիցները, շրջժողկրթբաժնի վարիչը իր զեկուցման վերջում խորհրդակցության մասնակիցներին (226 ուսուցիչներ, տնօրեններ, դպրոցական տեսուչներ) հանձնարարում է դպրոցի վերակառուցման նոր փուլում շրջանի հանրակրթական դպրոցներում իրականացնել նշանակալից բարեփոխումներ՝

1.Դպրոցներում ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը պետք է համապատասխանի տվյալ առարկայի ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակին:

2.Նախասիրական (ֆակուլտատիվ) պարապմունքներին, առարկայական խմբակներին ընդգրկել լավագույն մասնագետներին, որպեսզի նախապայմաններ ստեղծվեն աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման համար:

3. Փոխադարձ, բայց և համադպրոցական դասալսումներին անպայման մասնակից դարձնել դպրոցական տեսուչներին, թոշակառու վաստակաշատ մանկավարժներին և արդյունքների վերլուծությունն ընդհանրացնել մանկավարժական խորհրդի նիստում:

4.Դպրոցական տեսուչները, տնօրենների հետ համագործակցելով յուրաքանչյուր ուսումնական տարվա մարտ-ապրիլ ամիսներին պետք է հրավիրեն հայոց լեզվի և գրականության, պատմության և աշխարհագրության, մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների շրջանային խորհրդակցություն, որտեղ պետք է քննության առնվեն տվյալ առարկայի դասավանդման դրվածքը, առաջավոր փորձի օգտագործումը ուսուցման նոր մեթոդների, հնարների, մեթոդմիավորման աշխատանքների հետ կապված այլ հարցեր:

Ուսուցչական խորհրդակցությունների մասնակիցներ, շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված ուսուցիչներ Գուրգեն Ստեփանյանը (Թաղուտ), Միքայել Բալյանը (Մեծ Թաղեր) և ուրիշներ[328] իրենց հուշերում գրում են, որ հարգված ուսուցչի, տնօրենի, շրջժողկրթբաժնի ղեկավարի՝ Ա. Աբրահամյանի բարոյական կերպարը և առաջադրած ծրագրային դրույթները տարիներ շարունակ ուղենիշ են եղել շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար:

Երկարամյա մանկավարժական բեղուն գործունեության և անբասիր աշխա-

տանքի համար Ա. Աբրահամյանը արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Հադրութի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժինը 2005 թվականից առ այսօր ղեկավարում է **Էդիկ Պետրոսյանը:** Ծնվել է 1953թ. Քյուրաթաղ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 8-ամյա դպրոցում (1960-1968թթ.), այնուհետև ավարտել Ուխտաձորի միջնակարգ դպրոցը (1970թ.), ծառայել խորհրդային բանակի շարքերում (1971-1973թթ.):

Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո հեռակա կարգով ուսումը շարունակել է ԵրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում, միաժամանակ աշխատել շրջանի պիոներական տանը՝ որպես տնօրեն:

1986թ. մինչև 1988թ. աշխատել է ժողկրթության բաժնում որպես դպրոցական տեսուչ: 1988թ. մինչև 1992թ.՝ Թաղասեռի 8-ամյա դպրոցի տնօրեն:

1992-1995թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում: Ակտիվորեն մասնակցել է պատերազմական գործողություններին, եղել է գումարտակի քաղղեկ:

1995-1996թթ.՝ Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի փոխտնօրեն:

1996-2005թթ.՝ տնօրեն: 2005թ. առայսօր Հադրութի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչն է:

Մանկավարժական բնագավառում անբասիր գործունեության և ձեռք բերած հաջողությունների համար ԼՂՀ կառավարությունը նրան պարգևատրել է մի շարք մեդալներով և շքանշաններով: 2005թ.՝ «Արիություն», 2007թ.՝ «Վաչագան Բարեպաշտ», 2012թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

դ) Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Ասկերանի շրջանի կրթության բաժնի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 1988-2016 թվականներին կրթության բաժինը ղեկավարել են Պավել Կասյանը (1988-1992թթ.), Արվիդ Ավանեսյանը (1992-2012թթ.) և Շահեն Աղաբաբյանը (2012 թվականից առ այսօր), (խորհրդային շրջանի կրթության բաժնի ղեկավարների գործունեության մասին խոսվել է աշխատության երկրորդ հատորում):

Պավել Կասյանը ծնվել է 1952թ. հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղում: Տարրական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 8-ամյա դպրոցում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել են Ասկերան և նա միջնակարգ կրթությունը ստացել տեղի միջնակարգ դպրոցում: 1970թ. ընդունվել և 1974թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1974թ. Մարտակերտի շրջանի Զրաբերդի 8-ամյա դպրոցից՝ 1974-1975 ուս.տարում որպես մաթեմատիկայի ուսուցիչ, իսկ 1978-1982թթ.՝ նաև ուսմասվար:

1982թ. մարտի 9-ից տեղափոխվել է Ասկերանի շրջժողկրթբաժին՝ որպես աշխատանքային ուսուցման գծով տեսուչ, այնուհետև՝ մաթեմատիկայի ուսուցման գծով տեսուչ:

1988-1992թթ. աշխատել է ժողկրթության շրջբաժնի վարիչի պաշտոնում, իսկ 1992-1997 թվականներին նշված բաժնում աշխատել է որպես դպրոցական տեսուչ: 1997-2001 թվականներին աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում՝

որպես մաթեմատիկայի ուսուցիչ, և հիվանդության պատճառով անցել է կենսաթոշակի:

Արվիդ Ավանեսյանը ծնվել է 1962 թվականի հունվարի 3-ին Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղում: 1970-1980 ուսումնական տարում ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը:

Ավարտելուց հետո աշխատանքի է անցել շրջանի Փառուխի տարրական դպրոցում: 1984-1985 ուսումնական տարում տեղափոխվել է Խանաբադի միջնակարգ դպրոցը և աշխատել իր մասնագիտությամբ:

1988թ. սեպտեմբերի 12-ին աշխատանքի է նշանակվել ժողկրթության Ասկերանի շրջանային բաժնում՝ որպես աշխատանքի ուսուցման և մասնագիտական կողմնորոշման գծով տեսուչ:

1992թ. ապրիլի 29-ին նշանակվել է ժողկրթության բաժնի վարիչ:

1996թ. հունիսի 1-ից մինչև 1997թ. մարտի 1-ը աշխատել է «Վրեժ» ՓԲԸ-ում: 1997թ. մարտի 1-ից նորից նշանակվել է կրթության շրջանային բաժնի վարիչ: Այդ պաշտոնում աշխատել է մինչև 2012թ. փետրվարը:

Արվիդ Ավանեսյանը կրթական գործի գիտակ է, բանիմաց, լավագույն կազմակերպիչ, համախմբող, ոգևորող և ղեկավարած կոլեկտիվներին ստեղծագործական աշխատանքի մղող: Նորի, առաջադիմականի պաշտպան է ու ջատագով: Նա կրթական համակարգի լավագույն ավանդույթների պահապանն է, կրողն ու շարունակողը: Արվիդ Ավանեսյանը խելացի մանկավարժ է, խորապես տիրապետում է իր առարկային, դասավանդման մեթոդներին ու հնարներին:

Շահեն Աղաբաբյան: Ծնվել է 1957թ. օգոստոսի 15-ին, Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում, կոլտնտեսականի ընտանիքում:

1964-1965 ուս. տարում ընդունվել է Խնապատի միջնակարգ դպրոցի առաջին դասարանը, 1971-1972 ուս. տարում տեղափոխվել է Ստեփանակերտի N 1 գիշերօթիկ դպրոց և 1974 թվականին ավարտել այն:

1975թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը և 1979 ավարտել այն՝ ստանալով ֆիզիկայի ուսուցչի որակավորում:

1979թ. աշխատանքի է անցել Խնապատի միջնակարգ դպրոցում՝ որպես երկարօրյա խմբի դաստիարակ, այնուհետև՝ ֆիզիկայի ուսուցիչ: 1984թ. նշանակվել է նույն դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

1988-1991թթ. դպրոցի տղամարդ ուսուցիչների հետ համատեղ նախաձեռնել և աջակցել է Ղարաբաղյան շարժմանը:

1992թ. անդամագրվել է գյուղում ձևավորված ինքնապաշտպանական ջոկատին և մասնակցել պաշտպանական մարտերին: 1992թ. սեպտեմբերին զորակոչվել է ԼՂՀ ՊԲ հակաօդային պաշտպանության գունդ, սկզբից որպես մարտական մեքենայի օպերատոր, հետագայում՝ հրամանատար:

1993թ. նշանակվել է 4-րդ ՊՇ Ասկերանի գնդի հակաօդային պաշտպանության պետ, մինչև մարտական գործողությունների ավարտը:

1994թ. հոկտեմբերին զորացրվել է և վերականգնվել Խնապատի միջնակարգ դպրոցի ուսմասվարի պաշտոնում:

1995թ. մայիսին նշանակվել է Ասկերանի շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ, հետագայում՝ որպես բաժնի վարիչի տեղակալ:

1996-1997թթ. նշանակվել է կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ,

իսկ 1997թ. բաժնի վերակազմավորման արդյունքում նշանակվել մշակույթի, երիտասարդության հարցերի բաժնի վարիչ:

2012 թվականի մարտից դարձյալ ստանձնել է կրթության բաժնի վարիչի պաշտոնը, որտեղ և աշխատում է առ այսօր:

Որպես Արցախյան շարժման և մարտական գործողությունների մասնակից՝ ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիություն» մեդալով ու պատվոգրերով:

ե) Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Արխիվային փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ տարբեր ժամանակներում Ստեփանակերտի քաղգործկոմի (քաղաքապետարանի) կրթության բաժինը ղեկավարել են կրթական համակարգի նշանավոր գործիչներ Հենրիկ Գրիգորյանը (1976-1982թթ.), Վիգեն Հայրապետյանը (1982-1986թթ.), Համլետ Ասրյանը (1986-1996թթ.), Կառլեն Մարգարյանը (1997-2016թթ.): Նկատի ունենալով, որ կրթական գործի վերոնշյալ կազմակերպիչների մասին արդեն նշվել են աշխատության 4-րդ գլխի 1-ին բաժնում, այստեղ միայն ներկայացնում ենք Կառլեն Մարգարյանի գործունեությունը պաշտոնավարման երկու տասնամյակում (1997-2016թթ.):

Վաստակաշատ մանկավարժ, կրթական գործի փորձառու կազմակերպիչ **Կ. Մարգարյանը** ծնվել է 1953թ., ապրիլի 27-ին, Ստեփանակերտի շրջանի (ներկայումս Ասկերանի շրջան) Սզնեք գյուղում: Ութամյա կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում, միջնակարգ կրթությունը՝ Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում:

1971թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի լեզվագրական ֆակուլտետը և 1975թ. ավարտելով այն, ստացել հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

Կառլեն Մարգարյանը աշխատանքային գործունեությունն սկսել է 1975թ. սեպտեմբերի 1-ից Սզնեքի 8-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, մանկավարժական գործունեությունը շարունակել է նույն շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում:

Կրթության շրջանային բաժինը՝ հաշվի առնելով նրա մասնագիտական ու մանկավարժական պատրաստվածությունը, 1984թ. տեղափոխել է բաժին՝ նշանակելով դպրոցական տեսուչի և հետո՝ մեթոդկաբինետի վարիչի պաշտոններում: 1989թ. կրթության նախկին մարզային բաժնի կողմից տեղափոխվել և նշանակվել է Ստեփանակերտի քաղգործկոմի կրթության բաժինը՝ նախ որպես մեթոդկաբինետի վարիչ, իսկ հետագայում որպես բաժնի վարիչի տեղակալ: 1994-1995թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում, 1995-97թթ. աշխատել ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում՝ որպես մասնագետ, իսկ 1997թ. հունվարի 13-ից առ այսօր աշխատում է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնում՝ վարիչի պաշտոնում:

Կ. Մարգարյանի կազմակերպչական աշխատանքների շնորհիվ մայրաքաղաքի դպրոցների մանկավարժական կոլեկտիվները լուրջ աշխատանք էին տանում: Այսպես, օրինակ, ուսուցչական հունվարյան և օգոստոսյան խորհրդակցություններում, դպրոցների տնօրենների, մեթոդմիավորման ուսուցիչների խորհրդակցություններում պարբերաբար քննարկվում էին դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման, մանկավարժական կադրերի վերապատրաստման (հատկապես ավագ դպրոցների), դպրոցական կարգապա-

հության ու վերահսկողության, մանկավարժական կադրերի աշխատանքի գնահատման, առաջավոր փորձի տարածման, առարկայական օլիմպիադաների, ինտելեկտուալ խաղերի մրցույթի, մանկավարժական ընթերցումների կազմակերպման և կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների հետ կապված բազմաբնույթ այլ հարցեր:[329]

Իր մանկավարժական հարուստ փորձով և տեսական ու մասնագիտական պատրաստվածությամբ, մեկն էր ժամանակաշրջանի ճանաչված այն մանկավարժներից (Օ. Ասրյան, Ս. Արզումյանյան, Ս. Դավթյան, Ա. Խաչատրյան, Խ. Ղազարյան, Ռ. Բաղդասարյան, Է. Բալայան և շատ ուրիշներ), ովքեր իրենց անդուլ ստեղծագործական աշխատանքով, պրպտուն որոնումներով նորություն մտցրին դպրոցի պրակտիկայում:

Կ. Մարգարյանը կաբինետային ղեկավար չէր: Իր գործունեության 20 տարիներին եղել է բոլոր դպրոցներում, դասալսումներ ունեցել սկսնակ ուսուցիչների մոտ, իր պրակտիկ փորձը փոխանցել նրանց, մասնակցել մանկավարժական խորհրդի նիստերին, քննարկվող հարցերի շուրջ իր ծանրակշիռ խոսքն ասել: Այդ մասին իրենց հուշերում պատմում են մայրաքաղաքի դպրոցների տնօրեններ Լաուրա Մարտիրոսյանը (թիվ 2 հիմնական դպրոց), Աիդա Գրիգորյանը (թիվ 11 ավագ դպրոց), Անահիտ Պողոսյանը (թիվ 7 հիմնական դպրոց) և ուրիշներ:[330]

Նրա բեղմնավոր, ստեղծագործական որոնումներով հագեցած աշխատանքը նպատակաուղղված էր հանրակրթական դպրոցներում սովորողների կրթության և դաստիարակության համակարգի բոլոր կողմերի կատարելագործմանը:

Կ. Մարգարյանի երկարամյա անբասիր աշխատանքը բարձր է գնահատվել ԼՂՀ իշխանությունների կողմից, բազմիցս արժանացել է ԼՂՀ կառավարության և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրերի, ինչպես նաև խրախուսվել մեդալներով և արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման.

զ) Շուշիի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Փաստագրական տվյալների համաձայն, ժամանակագրական կարգով Շուշիի կրթության բաժինը ղեկավարել են դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժներ Գեորգի Քարամյանը (1992-1993թթ.), Անահիտ Գաբրիելյանը (1993-1998թթ.), Իրինա Սարգսյանը (1999-2000թթ. և 2010-2016թթ.), Ռուզան Բոզիյանը (2001-2006թթ.), Վյաչեսլավ Գաբրիելյանը (2006-2010թթ.):

Արցախյան ազգային-ազատագրական շարժման հենց առաջին օրերին Շուշիում գործող հայկական կրթօջախները՝ ենթարվկելով նոր փորձությունների (Ադրբեջանի ավազակախմբերի կողմից ավերել էին դպրոցական շենքեր) աշակերտների հետ տեղահանվում են Ստեփանակերտ (1988-1993թթ.):

Շուշին ազատագրվելուց հետո (1992թ. մայիսի 9-ին) մանկավարժական կոլեկտիվները 1993թ. սեպտեմբերի 1-ից պարապմունքները վերսկսեցին որոշ չափով վերանորոգված կրթօջախների կամարների տակ:

Մտավոր զարթոնքի նոր ժամանակներում հասարակության կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին հաղորդակից լինելով, նորաստեղծ հայկական կրթական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների տնօրենների նախաձեռնությամբ շարունակվեցին նախկին լավագույն ավանդույթները և պատշաճ մակարդակի վրա դրվեց աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործը: Փաստացի նյութերը վկայում են, որ իրոք բաժնի վարիչները շրջանի կրթական համակարգի զարգացմանը անգնահատելի ծառայություն են մատուցել:

Հայտնի է, որ մինչև զինադադարը հանրապետության շրջաններում, հատկապես Շուշիում, բավականին մեծ դժվարություններ են ստեղծվել թե՛ հասարակական կյանքում և թե՛ ուսումնական հաստատություններում: Եթե հանրապետության մյուս շրջաններում ու քաղաքներում ինչ-որ չափով բարենպաստ պայմաններ են եղել ուսումնական գործընթացը շարունակելու համար, ապա շատ ծանր վիճակում էին հայտնվել Շուշիի հայկական կրթական հաստատությունները:

Կրթության բաժնի վարիչների նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ կարճ ժամկետում (1994-2000թթ.) հաղթահարվեցին դժվարությունները (անհրաժեշտ էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական նոր ծրագրերն ու պլանները, վերանորոգել դպրոցական ավերված շենքերը, դպրոցներն ապահովել նյութական բազայով, բարձրորակ կադրերով և այլն) և հնարավորինս ստեղծվեցին հարմարավետ պայմաններ ուսումնադաստիարակչական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար:

Կրթության բաժնի վարիչների ակտիվ գործունեության և կազմակերպչական հմուտ աշխատանքի շնորհիվ շրջանի կրթական համակարգում արմատական վերափոխումներին համընթաց նորովի վերակառուցվում ու բարեփոխվում է կրթական հաստատությունների ներքին կյանքը (այդ մասին նշվել է աշխատության երկրորդ գլխում, այստեղ ներկայացնենք միայն կրթության բաժնի վարիչների կենսագրությունը):

Շուշիի շրջանի կրթության բաժնի առաջին վարիչն է եղել **Գեորգի Քարամյանը:** Ծնվել է 1953թ. Ստեփանակերտի շրջանի Ջամիլու գյուղում՝ ծառայողի ընտանիքում:

1970թ. ավարտել է Բաքու քաղաքի թիվ 163 միջնակարգ դպրոցը:

1974թ. ավարտել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի՝ ֆիզիկայի ֆակուլտետը:

1974-1976թթ. աշխատել է Ասկերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ:

1976թ. աշխատել է Շուշիի թիվ 2 դպրոց-ինտերնատում (գիշերօթիկ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ):

1977-1978թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1978-1987թթ. աշխատել է Շուշիի շրջանի կրթության բաժնում՝ որպես տեսուչ:

1987-1990թթ. աշխատել է կուսակցության Շուշիի շրջանային կոմիտեում՝ որպես հրահանգիչ:

1992-1993թթ. աշխատել է Շուշիի շրջանի կրթության բաժնում՝ որպես բաժնի վարիչ, իսկ 1993-1998թթ. Շուշիի արհեստագործական ուսումնարանի տնօրենի պաշտոնում:

2008-2012թթ. աշխատել է Շուշիի շրջանի Եղծահողի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն:

2012-2013թթ. Շուշիի շրջանի Քիրսավանի միջնակարգ դպրոցի տնօրենն էր:

Անահիտ Գաբրիելյանը ծնվել է 1958թ. Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի Ախունդովի անվան ռուսաց լեզվի և գրականության ինստիտուտը և 1980-ին գերազանց գնահատականներով ավարտել այն: Հանրապետության մի շարք դպրոցներում, էջմիածնի մշակութալուսավորչական տեխնիկումի Ստեփանակերտի մասնաճյուղում, Շուշիի ժողհամալսարանում դասավանդել է ռուսաց լեզու: Աշխատել է «Կարմիր

դրոշ» շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ: 1992 թվականից տեղափոխվել է քաղաք Շուշի և աշխատանքի անցել շրջվարչակազմում՝ որպես քարտուղար, 1993-ից շրջժողկրթբաժնում որպես վարիչի տեղակալ, ապա՝ վարիչի պաշտոնակատար: 1998 թվականից Շուշիի քաղաքապետարանի քարտուղարն է:

Հեղինակ է «Կարոտախտ» և «Շուշի՝ մոխիրներից հառնող փյունիկ», նաև անտիպ գրքերի և տասնյակ հոդվածների: Տպագրվել է «Գարնանային նվագներ» և «Գրական Արմավիր» տարեգրքերում: Զբաղվում է լրագրողական աշխատանքով:

Իրինա Սարգսյանը ծնվել է 1964թ. հոկտեմբերի 9-ին, Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում: 1980թ. ավարտել է Մուշկապատի ութամյա դպրոցը և կրթությունը շարունակել Մարտունու միջնակարգ դպրոցում, որը ավարտել է 1982թ.: Նույն տարում ընդունվել է Բաքվի Ախունդովի անվան ռուսաց լեզվի և գրականության ինստիտուտը: 1987թ. ավարտելով ինստիտուտը, աշխատանքի է անցել Մուշկապատի միջնակարգ դպրոցում, որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1988թ. եղել է դպրոցի արհմիության նախագահ: 1990թ. նույն դպրոցում աշխատել է որպես ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1991թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և աշխատել քաղժողկրթբաժնում՝ որպես մեթոդիստ: 1993թ. տեղափոխվել է Շուշի և աշխատանքի անցել ԼՂՀ ՊՊԿ Շուշիի շրջանի լիազոր ներկայացուցչի ապարատի բնակկենցաղային և սոցիալական բաժնի առաջին կարգի հրահանգչի պաշտոնում: Նույն թվականի դեկտեմբերի 7-ին նշանակվել է նույն բաժնի վարիչ: 1999թ. ապրիլի 1-ից աշխատել է որպես Շուշիի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ: 2001թ. օգոստոսի 21-ին տեղափոխվել է կրթության բաժնի գլխավոր տեսուչի պաշտոնին:

Ռուզաննա Բոզյանը ծնվել է 1966թ. հունվարի 25-ին Ստեփանակերտում:

1983թ. ավարտել է Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Բաքվի Ախունդովի անվան ռուսաց լեզվի և գրականության ինստիտուտը: 1988թ. ավարտելով ինստիտուտը, աշխատանքի է անցել Շուշիի շրջանի Եղցահողի ութամյա դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

1993-1995թթ. աշխատել է որպես Եղցահողի միջնակարգ դպրոցի տնօրեն:

1995-1998թթ՝ Եղցահողի մանկապարտեզի վարիչ:

1998-2001թթ՝ Եղցահողի միջնակարգ դպրոցի տնօրեն:

2001-2006թթ. աշխատել է որպես Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ:

2006-2008թթ.՝ Ստեփանակերտի թիվ 6 միջնակարգ դպրոցում՝ որպես փոխտնօրեն:

2008թ. աշխատում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում՝ որպես ԿԳ վարչության հանրակրթության բաժնի վարիչ:

Վյաչեսլավ Գաբրիելյանը ծնվել է 1960թ. հունվարի 19-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1976թթ. ավարտել է քաղաքի Ե. Չարենցի անվան թիվ 7 դպրոցը:

1976-1977թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 91 շինվարչությունում, որպես բանվոր: 1977-1978 ուս. տարում ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետը և 1982թ. ավարտել՝ ստանալով պատմության ուսուցչի որակավորում:

1982-1989թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 11 (ներկայիս թիվ 5) դպրո-

ցում, որպես պատմության և աշխարհագրության ուսուցիչ, 1989-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 5 դպրոցում, որպես ուսուցիչ, միաժամանակ ընտրվել որպես Ստեփանակերտ քաղաքի ժողկրթության և գիտության աշխատողների արհմիության նախագահ: 1992-1994թթ. աշխատել է ԼՂՀ ՊՊԿ-ում, որպես փախստականների տեղաբաշխման հարցերի գծով մասնագետ: 1994թ. հունվարի 7-ին նշանակվել է Շուշիի շրջանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ և այդ պաշտոնում աշխատել մինչև 1999թ.:

1999թ. ապրիլի 1-ից ընտրվել ու նշանակվել է Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի տնօրեն մինչև 2006թ.:

2006թ. նոյեմբերի 27-ին ընդունվել է աշխատանքի, որպես Շուշիի շրջվարչակազմի աշխատակազմի ԿՄՍ բաժնի վարիչ մինչև 2010թ. օգոստոսի 17-ը: 2010թ. սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Շուշիի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնում՝ որպես տեսուչ:

ԼՂՀ նախագահի հրամանով Արցախի ազգային-ազատագրական շարժման ժամանակ ունեցած ծառայության համար պարգևատրվել է «Արիություն» մեդալով:

2010 թվականից առ այսօր Շուշիի շրջանի կրթության բաժինը վերստին ղեկավարում է Իրինա Սարգսյանը:

է) ԼՂՀ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի կրթության բաժինը ձևավորվել է 1994թ. հուլիսին:

Կրթության բաժնի առաջին վարիչ է նշանակվել **Ռուբեն Սամվելի Օհանջանյանը,** ով պաշտոնավարել է մինչև 1998թ. մարտն ընկած ժամանակահատվածը:

Ծնվել է Երևանում 1951թ. օգոստոսի 5-ին: Ավարտել է Երևանի թիվ 125 միջնակարգ դպրոցը: 1970թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և ավարտել 1975թ.:

1975-1976 ուս.տարում աշխատել է Հրազդանի շրջանի Արզական գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ և ուսմասվար: 1976-1980թթ. աշխատել է «Գիտելիք» ընկերության Երևանի քաղաքային կազմակերպությունում՝ որպես ռեֆերենտ:

1980-1994թթ. աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ և ավագ գիտաշխատող:

1981-1983թթ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտում եղել է փորձնակ-հետազոտող, որտեղ 1985թ. պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուական թեզը՝ «Ազգագրություն» մասնագիտությամբ:

1994-98թթ. աշխատել է որպես ԼՂՀ Քաշաթաղի շրջանի ժողկրթության բաժնի վարիչ: Այդ տարիներին պարգևատրվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի «Արցախ» երկու հուշամեդալով (պարգևը հանձնել է ԼՂՀ Գերագույն խորհրդի քարտուղար Վլադիկ Հակոբյանը՝ Քաշաթաղի վերաբնակեցման առաջին տարում չորս դպրոց բացելու համար):

Ռ. Օհանջանյանի աշխատանքային գործունեության ընթացքում շրջանում բացվել է 31 հանրակրթական ուսումնական հաստատություն:

Կարեն Մարտունու Գրիգորյանը ծնվել է 1961թ. ապրիլի 19-ին, Կիրովականում:

1978թ. ավարտել է Վ. Տերյանի անվան միջնակարգ դպրոցը:

1983թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան ինստիտուտի պատմաաշ-

խարհագրական ֆակուլտետի պատմություն և պետության իրավունքի բաժինը:

1983-1985թթ. ծառայել է խորհրդային բանակի սահմանապահ զորքերում:

1985-1986թթ. աշխատել է «Ուրարտու» ԱՄ՝ որպես ինժեներ-տեխնոլոգ:

1986-1988թթ. աշխատել է Երևանի ԼԿԵՄ Շահումյանի շրջկոմում՝ որպես հրահանգիչ:

1988-1994թթ. աշխատել է Երևանի թիվ 191 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար:

1990-1995թթ. եղել է Երքաղխորհրդի և Շահումյանի շրջխորհրդի պատգամավոր:

1994թ. տեղափոխվել է Մոսկվա և նշանակվել «Սոնար» ՍՊԸ-ում՝ որպես մարկետինգի և իրավական հարցերի գծով գլխավոր տնօրենի տեղակալ:

1998թ. մարտ ամսից Կարեն Գրիգորյանը նշանակվել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ, իսկ 2004-2008թթ. աշխատել որպես կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ:

2006թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

ՀՀ ԿԳ նախարարի կողմից արժանացել է ոսկե հուշամեդալի:

Կ. Գրիգորյանի աշխատանքային գործունեության ընթացքում շրջանում բացվել է 13 հանրակրթական և մեկ նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Վարդան Լեռնիկի Բաղդասարյանը ծնվել է 1973թ. դեկտեմբերի 24-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում: 1990թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1990-1992թթ. սովորել է էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1997թ. ավարտել է ԵրՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը՝ ստանալով միջազգայնագետ-պատմաբանի որակավորում:

1997-1999թթ. զորակոչվել է բանակ և անցել այլընտրանքային ծառայության ԼՂՀ Շահումյանի շրջանի Ականաբերդ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1999թ. ծառայությունն ավարտելուց հետո որոշել է մնալ և շարունակել մանկավարժական գործունեությունը:

2000թ. փետրվարի 1-ին նշանակվել է Շահումյանի շրջանի վարչակազմի կրթության բաժնի վարիչ և համատեղության կարգով դասավանդել Քարվաճառի միջնակարգ դպրոցում:

2001թ. դեկտեմբերի 10-ին նշանակվել է շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ:

Աշխատանքային գործունեության մոտ 4 տարիների ընթացքում Շահումյանի շրջանում բացվել են 10 հանրակրթական դպրոցներ:

2003թ. նոյեմբերի 1-ից աշխատանքի է անցել ԼՂՀ արտգործնախարարությունում՝ որպես քաղաքական վարչության 3-րդ քարտուղար:

2005թ. փետրվարի 1-ին ստացել է «Կցորդ» դիվանագիտական աստիճան:

2007թ. մարտի 1-ից տեղափոխվել է աշխատանքի ՀՀ ԱԳ նախարարության Սփյուռքի հետ կապերի գործակալությունում:

2008թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2010թ. դեկտեմբերի 1-ը աշխատել է որպես Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի վարիչ:

Արտուշ Վարուժանի Մխիթարյանը ծնվել է 1973թ. մայիսի 16-ին, ՀՀ Շիրակի մարզի (նախկին Արթիկի շրջանի) Սպանդարյան գյուղում:

1979-1990թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1991-1992թթ. սովորել և ավարտել է Արագածի թիվ 77 պրոֆտեխուսումնարանը՝ ստանալով ավտոէլեկտրասարքավորումներ վերանորոգող փականագործի որակավորում:

1996թթ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի իրավագիտություն բաժինը: 1996-1997թթ. ծառայել է հայոց բանակում:

1998-ին տեղափոխվել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաք:

1999-2008թթ. աշխատել է շրջանի ոստիկանության բաժնում՝ որպես անձնագրային ծառայության պետ, բաժնի պետի տեղակալ:

2008-2010թթ. աշխատել է որպես շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ:

2010- 2011թթ. աշխատել է կրթության բաժնի վարիչ:

Վարդուշ Սարգսի Մովսիսյանը ծնվել է 1975թ. սեպտեմբերի 22-ին, ՀԽՍՀ Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում: 1992թ. ավարտել է Մալիշկայի թիվ 2 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմություն և աշխարհագրություն ֆակուլտետի պատմության բաժինը:

1996թ. ավարտելով ինստիտուտը, աշխատանքի է անցել Մալիշկայի թիվ 2 դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: 1998թ. ընտանիք կազմելով տեղափոխվել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ գյուղ և նշանակվել նորաբաց դպրոցի դասվար և պատմության ուսուցչուհի:

2001թ. ընտանիքով տեղափոխվել է քաղաք Բերձոր և աշխատանքի անցել թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և աշխարհագրության ուսուցչուհի:

2010թ. սեպտեմբերի 1-ին նշանակվել է կրթության բաժնի վարիչի տեղակալ, իսկ 2011թ. հունիսի 23-ից՝ բաժնի վարիչի պաշտոնակատար:

2011թ. հոկտեմբերի 11-ից առ այսօր աշխատում է կրթության և սպորտի բաժնի վարիչ:

Աշխատանքային գործունեության ընթացքում բացվել են 4 հանրակրթական (Հերիկի, Ծոբաձորի, Բազմատուսի, Կերենի) և 2 նախադպրոցական (Մոշաթաղի և Կովսականի) ուսումնական հաստատություններ:

Մեծ ուշադրություն է դարձվել դպրոցները մասնագետ մանկավարժներով ապահովելու, ինչպես նաև ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ: 2011-2016թթ. ընթացքում շրջանի աշակերտները աչքի են ընկել բազմաթիվ հանրապետական մրցույթներում և միջոցառումներում, հատկապես ասմունքի բնագավառում՝ կրթության բաժնի առաջատար մասնագետ Արաքսյա Այվազյանի տքնաջան աշխատանքի շնորհիվ:

Վ. Մովսիսյանը 2010թ. պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի գլխավոր մասնագետները

Դավիթ Սայադի Դավթյան: Ծնվել է 1960թ. օգոստոսի 13-ին, ՀՀ Կոտայքի մարզի գ. Գառնիում: 1977թ. ավարտել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1983թ. ավարտել է ԵՐՄԻ մաթեմատիկայի ֆակուլտետը:

1983-1985թթ. աշխատել է Գառնիի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

1985-1997թթ. նշանակվել է փոխտնօրեն դաստիարակչական աշխատանքների գծով:

1997թ. ընտանիքով տեղափոխվել է Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաք և աշխատանքի անցել կրթության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

1997թ. նոյեմբերի 11-ին նշանակվել է Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն:

1998թ. սեպտեմբերից մինչև 1999թ. աշխատել է կրթության բաժնում՝ որպես գլխավոր մասանգետ:

Զոհրաբ Բուրաստանի Ըռքոյան: Ծնվել է 1958թ. ՀՀ Մարտունու շրջանի Գեղհովիտ գյուղում, բանվորի ընտանիքում:

1966թ. ընդունվել և 1974թ. ավարտել է Գեղհովիտի Ալ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը և ընդունվել Երևանի մեքենաշինական տեխնիկում: Ավարտել է 1978թ. պոլիգրաֆ մեքենաների տեխնիկ-տեխնոլոգի մասնագիտությամբ:

1978թ. վերադարձել է Գեղհովիտ, աշխատանքի ընդունվել գյուղի սովխոզում:

1980թ. փետրվարին տեղափոխվել է Երևան և աշխատանքի ընդունվել քաղաքային էլեկտրատրանսպորտի վարչության նորոգման մեխանիկական գործարանում՝ որպես փականագործ-գործիքագործ:

1985-1991թթ. ընդունվել և սովորել է Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետում (երեկոյան բաժին):

1988-1994թթ. մասնակցել է ՀՀ և Արցախի սահմանների պաշտպանական և ազատագրական մարտերին, ռեպորտաժներով հանդես եկել ՀՀ լրատվական միջոցներով (թերթեր, ռադիո):

1991-1996թթ. աշխատել է ՀԽՍՀ Մասիսի շրջանի Նորամարգ Մասիսի թիվ 2 և Մասիսի կայարանի միջնակարգ դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1996թ. մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը աշխատել է Երևանի պետհամալսարանի պաշտոնաթերթի («Երևանի համալսարան») պատասխանատու քարտուղար:

1996թ. սեպտեմբերից 2010թ. աշխատել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնում (2004թ. ապրիլի 1-ից՝ վարչության)՝ որպես առաջատար մասնագետ, այնուհետև գլխավոր մասնագետ-բաժնի պետի տեղակալ:

ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով, ունի պատվոգրեր ՀՀ ԵԿՄ, ՀՀ ԿԳ և ԼՂՀ ԿՄՍ նախարարությունների կողմից:

2008թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր բաժնի վարիչի պարտականությունները կատարել է Զոհրաբ Ըռքոյանը:

ը) Շահումյանի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Բաղդասարյան Վարդան Լեռնիկի. ծնվել է 1973թ. դեկտեմբերի 24-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում: 1980-1990թթ. հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը:

1990-1992թթ. սովորել է էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1992թ. տեղաբոխվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Միջազգային հարաբերություններ» բաժինը, որն ավարտել է 1997թ.՝ ստանալով միջազգայնագետ-պատմաբանի որակավորում:

1997-1999թթ. զորակոչվել է այլընտրանքային զինծառայության՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի Ակնաբերդի միջնակարգ դպրոց՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1999թ. ծառայությունն ավարտելուց հետո (նույն շրջանում) շարունակել է մանկավարժական գործունեությունը:

2000թ. փետրվարի 1-ին նշանակվել է Շահումյանի շրջվարչակազմի ԿՄՍ բաժնի վարիչ:

2003թ. սեպտեմբերի 15-ին ազատվել է ԿՄՍ բաժնի վարիչի պաշտոնից:

Խաչատրյան Սվետլանա Մամիկոնի. ծնվել է 1972թ. հունիսի 15-ին, Մարտակերտի շրջանի Այգեստան (Չայլու) գյուղում:

1979-1989թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո երկու տարի աշխատել է գյուղի մսուր-մանկապարտեզի ավագ խմբում՝ որպես դաստիարակ:

1991թ. ընդունվել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի «Մանկավարժություն և հոգեբանություն» ֆակուլտետի նախադպրոցական բաժինը:

1995թ. համալսարանի գործուղմամբ աշխատանքի է անցել Շահումյանի շրջանի Ակնաբերդի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար:

1996թ. հունվարի 1-ից նշանակվել է նույն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, իսկ 1999թ. նշանակվել է նույն դպրոցի տնօրեն:

2002-2007թթ. սովորել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնում:

2003թ. սեպտեմբերի 15-ին նշանակվել է Շահումյանի շրջանի վարչակազմի ԿՄՍ բաժնի վարիչ:

2010թ. օգոստոսի 2-ին ազատվել է կրթության բաժնի վարիչի պաշտոնից:

Վարդանյան Խորեն Սուրիկի. ծնվել է 1974թ. հունվարի 3-ին, ՀԽՍՀ Կամոյի շրջանի Բատիկյան (ներկայիս Գեղարքունիքի մարզ Գանձակ) գյուղում: 1990թ. արծաթե մեդալով ավարտել է Բատիկյանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1991-1996թթ. սովորել է ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետում և ստացել մաթեմատիկայի ուսուցչի որակավորում: 2010 թվականից առ այսօր ղեկավարում է Շահումյանի շրջանի կրթության բաժինը:

4. ԼՂՀ ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտի, ՀՀ կրթության Ազգային ինստիտուտի ԼՂՀ մասնաճյուղի տնօրենների, վերապատրաստման դասընթացների կազմակերպիչների գործունեությունը (1991-2016թթ.)

Ինչպես նշել ենք աշխատության երկրորդ հատորում, մինչև 1960-ական թվականները Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կրթությամբ կադրերի պատրաստումը և վերապատրաստումը սկզբում կատարվում էր հատուկ մանկավարժական թեքում ունեցող երկրորդ աստիճանի (9-ամյա) դպրոցներում, Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1922-1938թթ.), իսկ այնուհետև՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում (1939-1953թթ.): Այդ տարիներին մարզի հանրակրթական դպրոցները որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու խնդրի իրականացումը հիմնականում դրվեց 1938-1939 ուս.տարում սեպտեմբերի 1-ին հիմնադրված երկամյա մանկավարժական ինստիտուտի վրա, իսկ այդ ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալեցին ԼՂԻՄ-ի կրթա-

կան գործի նշանավոր կազմակերպիչներ Արշավիր Քամալյանը, Առաքել Առաքելյանը, Գուրգեն Էդիլյանը, Գրիգոր Գրիգորյանը, Սարգիս Աբրահամյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Թեմուր Ամիրջանյանը, Արսեն Խաչատրյանը և ուրիշներ:[331]

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներն ուսուցչական որակյալ կադրերով արպահովելու նպատակով վերոնշյալ և ուրիշ կրթական նշանավոր գործիչների նախաձեռնությամբ Ստեփանակերտում, շրջանային կրթության բաժիններում պարբերաբար կազմակերպվում են ուսուցիչների վերապատրաստման տասնօրյա կամ մեկամսյա դասընթացներ:

Մանկավարժական կադրերի վերապատրաստման խնդիրը լուծելու համար ԼՂԻՄ ժողկրթբաժնի (մարզժողկրթբաժնի) և նրա տեղական օրգանների ձեռնարկումները լայն ծավալ են ընդունում: Բարձրորակ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում բացվում են ոչ միայն միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլև ուսուցչի որակի բարձրացման նաև մի այլ հաստատություն՝ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ: Մանավանդ երկամյա մանկավարժական ինստիտուտը փակվելուց հետո մարզում չկար բարձրագույն ուսումնական հաստատություն (1953-1969թթ.): Մեծ դժվարությամբ մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մի մասը կարողանում է մասնակցել Երևանի մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտին (ՄԳԻ) կից գործող ՈՒԿԻ վերապատրաստման դասընթացներին: Մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանի հաշվետվություններից[332] տեղեկանում ենք, որ 1954-1958թթ. Երևանի ՈՒԿԻ դասընթացներին մասնակցել են մարզի դպրոցների 96 ուսուցիչներ, իսկ 1959-1962թթ.՝ 122 ուսուցիչներ: Մարզային և շրջանային կրթության բաժիններում կազմակերպված դասընթացներին (1954-1962թթ.) մասնակցել են 864 ուսուցիչներ, որոնցից 522-ը տարրական դասարանների ուսուցիչներ էին: Դրանց թվում կային նաև միջնակարգ մասնագիտական կրթություն ստացած թոշակառու ուսուցիչներ, որոնք ժամանակին հնարավորություն չեն ունեցել ստանալ բարձրագույն կրթություն:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից նաև տեղեկանում ենք, որ ԼՂ մարզժողկրթբաժնի 1963թ. օգոստոսի 14-ի կոլեգիայի նիստի որոշմամբ սեպտեմբերի 16-ին բացվում է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը (ՈՒԿԻ):

Առաջին տնօրենը եղել է Վլադիմիր Գրիգորյանը (1963-1967): Ի դեպ, նշենք, որ ՈՒԿԻ-ն իր հիմնադրման օրից գրավել է մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների սերն ու համակրանքը, և կարող անձինք, թե ՈՒԿԻ տնօրենի հորդորանքով և թե սեփական նախաձեռնությամբ բազմաթիվ նվերներ են տվել՝ մասնագիտական գրքեր, ուսումնական ձեռնարկներ, հայ գրողների, մանկավարժների դիմանկարներ, իսկ Հայաստանի մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտը, նրան կից գործող ՈՒԿԻ-ն նորաստեղծ ԼՂԻՄ ՈՒԿԻ գրադարանին են նվիրել 196 տեսակի գրքեր, ձեռնարկներ, ֆիզիկայի և մաթեմատիկայի, քիմիայի և կենսաբանության, հայոց լեզվի և գրականության նոր ձևավորված կաբինետներին՝ անհրաժեշտ սարքավորումներ:

ՈՒԿԻ-ի հիմնադրման առաջին տարում, 1963-1964թթ. ուս.տարվա հուլիս-օգոստոս ամիսներին, կազմակերպվում են երկշաբաթյա, մեկամսյա վերապատրաստման դասընթացներ մարզի դպրոցների հայոց լեզվի և գրականության, պատմության, քիմիա-կենսաբանության և տարրական դասարանների ուսուցիչների համար: Այդ մասին իր հուշերում պատմում է դասընթացների մասնակից,

Ասկերանի (այն ժամանակ՝ Ստեփանակերտի) շրջանի Դահիրավի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ժորա Աբրահամյանը (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ):

Հետագա տարիներին ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը ղեկավարել են մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված երախտաշատ մանկավարժներ Արմո Ներսիսյանը (1968-1972թթ.), Սոկրատ Իսրայելյանը (1973-1976թթ.), Վազգեն Սարգսյանը (1978-1989թթ.):

Փաստագրական նյութերից, ժամանակակիցների հուշերից (Բ. Դավթյան, Ա. Պողոսյան, Ս. Դավթյան և ուրիշներ) տեղեկանում ենք, որ ՈՒԿ-ի վերոնշյալ տնօրենները իրենց բեղուն գործունեության տարիներին ինստիտուտի գիտակրթական գործունեության մեջ (այդ ժամանակաշրջանում այնտեղ նաև գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել) բովանդակային բարեփոխումներ են իրականացրել.

1.Համագործակցելով Հայաստանի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրինության հետ և հիմք ընդունելով նրանց տարիների առաջավոր փորձը, կոլեկտիվի փորձառու մանկավարժների նախաձեռնությամբ բացում են ուսումնական կաբինետներ՝ ըստ մասնագիտությունների. հայոց լեզվի և գրականության, ֆիզիկայի և մաթեմատիկայի, պատմության, աշխարհագրության, քիմիա-կենսաբանության, ռուսաց լեզվի, աշխատանքի ուսուցման և այլ առարկաների (17 ուսումնական կաբինետ) և կահավորում անհրաժեշտ սարքավորումներով:

2.Տնօրինության աշխատանքային պլանի համաձայն և համագործակցելով մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների հետ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կիսամյակային արձակուրդների (տասնօրյա) և ամառային արձակուրդների՝ հուլիս-օգոստոս ամիսներին:

3.ՈՒԿԻ խորհրդում կանոնադրության համաձայն մշակվում է դասընթացների կազմակերպման պլանը, որը քննարկվել ու հաստատվել է մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում: Այն մշակելիս հիմք են ընդունել Երևանի գիտահետազոտական ինստիտուտին կից գործող ՈՒԿԻ ավագ գիտաշխատող Լևոն Վարդունու (Ճարտարից) մշակած կանոնադրության դրույթները, որի համաձայն ուսուցիչների վերապատրաստումը կարող է բարելավել աշխատանքի նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքը, ստեղծել դրական միջանձնային հարաբերություններ, ամրապնդել մասնագիտության նկատմամբ նրանց սերն ու հավատը:

4.ՈՒԿԻ-ի աշխատանքային պլանի համաձայն՝ յուրաքանչյուր ուսումնական տարում կազմակերպվում են մարզի դպրոցների, նաև Ադրբեջանի հայկական դպրոցների ուսուցիչների և տնօրենների մեկամսյա վերապատրաստման դասընթացներ: Դասավանդում էին Ա. Ներսիսյանը, Ս. Ղուկասյանը, Ս. Թամրազյանը, Շ. Մարտիրոսյանը, Թ. Ամիրջանյանը, ինչպես նաև մարզժողկրթբաժնի վարիչ Ս. Արամյանը, դպրոցական տեսուչներ Բ. Դավթյանը, Գ. Ուլուբաբյանը և ուրիշներ:

5.Յուրաքանչյուր ուսումնական տարում տնօրենների նախաձեռնությամբ ինստիտուտի բարձրորակ մասնագետները դասալսումներ էին անցկացնում մարզի հայկական դպրոցներում, մեթոդական օգնություն ցույց տալիս ուսուցիչներին: Ինստիտուտի փորձառու մանկավարժները ուսուցիչների համար կազմում էին օրինակելի պլան-կոնսպեկտներ, վարում փորձնական դաս՝ մասնակից դարձնելով հատկապես սկսնակ ուսուցիչներին: Բացի այդ, նրանք կազմում էին նաև դասվարի, դասղեկի աշխատանքային օրինակելի և մեթոդմիավորումների աշխատանքային պլաններ: Նրանք օգնություն էին ցույց տալիս ուսուցիչներին,

կազմակերպում մանկավարժական ընթերցումներ, հրավիրում խորհրդակցություններ, քննարկում դասը արդյունավետ կազմակերպելու ուսուցչի փորձը, ներկայացնում օրինակելի դասի վերլուծությունը, միաժամանակ դպրոցների գրադարաններին նվիրում մեթոդական գրքեր, ուղեցույցներ, ուսումնական ծրագրեր և իրենց կազմած օրինակելի դասի պլան-կոնսպեկտը, դասղեկի աշխատանքային պլանը, իսկ դպրոցի տնօրեններին՝ իրենց մշակած կիսամյակային և տարեկան աշխատանքային, դպրոցի զարգացման հեռանկարային պլանները:

Այս ավանդույթները շարունակվել են նաև հետագա տարիներին՝ ԼՂՀ կադրերի վերապատրաստման և ատեստավորման հանրապետական ինստիտուտում, կրթության, գիտության նախարարության կից ստեղծված ծրագրամեթոդական կենտրոնում և ՀՀ ԿԱԻ Ստեփանակերտի մասնաճյուղում:

Ինչպես հիշատակվեց վերևում, ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը գործել է 1963-1989 թվականներին, իսկ նրա լուծարումից հետո, վերանվանվել է ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտ (1989-1995թթ.): Նորաստեղծ ինստիտուտի տնօրեն է նշանակվել Ստեփանակերտի քաղաքային կրթության բաժնի վարիչ Հենրիկ Գրիգորյանը (նրա գործունեության մասին նշվել է սույն գլխի 1-ին բաժնում): 1996-1998 թվականներին այդ կառույցը անվանվում է ԼՂՀ կադրերի վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտ, և այն ղեկավարում է կրթական գործի նշանավոր կազմակերպիչ Բահատուր Դավթյանը: 1998թ. դեկտեմբերի 31-ին ինստիտուտի լուծարումից հետո ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմում ստեղծվել է ծրագրամեթոդական, տեսչավորման, ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման վարչություն, որը ղեկավարում էր Բ. Դավթյանը (1998-2002թթ.), որոշ ժամանակ այն կատարել է ուսուցիչների[333] կատարելագործման ինստիտուտի ֆունկցիաները:

Ինստիտուտի գործունեության ընթացքում (1989-2002թթ.) տարբեր տարիների աշխատել են լավագույն, մեր դպրոցի պրակտիկայում անուն հանած մասնագետներ-մեթոդիստներ Շահեն Մարտիրոսյանը, Սամվել Ղուկասյանը, Թեմուր Ամիրջանյանը, Վարդան Արզումանյանը, Նիկոլայ Բաղդասարյանը, Զավեն Բաբայանը, Սուրեն Թամրազյանը, Նիկոլայ Բաբայանը, Ժորա Գրիգորյանը, Թամարա Ծատրյանը, Ալեքսանդր Գասպարյանը, Ամերիկո Հովհաննիսյանը և ուրիշներ (նրանց գործունեության մասին նշվել է աշխատության 2-րդ հատորում, 2015թ. էջ 317-328):

Անդրադառնալով ԿԱԻ-ի ԼՂՀ մասնաճյուղի պատմությանը, նշենք, որ 1999թ. ՀՀ-ում ստեղծվել էր «Կրթական բարեփոխումների կենտրոն» ՊՓԲԸ: Նպատակը անցումն էր 12-ամյա կրթակարգին, դպրոցներում ուսման որակի բարձրացումը, ուսուցիչներին մեթոդական և մանկավարժական օգնություն ցուցաբերելը: Անհրաժեշտություն կար նախօրոք ուսուցիչների հետ քննարկել նոր կրթակարգի չափորոշիչները, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները և թեմատիկ պլանները: Արդեն սեղանին էր 12-ամյա կրթակարգի հայեցակարգը: Կարևոր էր, որպեսզի Արցախի ուսուցիչների հոծ բանակը ևս մասնակիցն ու հեղինակը լիներ գործընթացների՝ ելնելով այն պարզ հրամայականից, որ մայր Հայաստանն ու Արցախը գործում են միևնույն կրթական դաշտում:

Այդ իսկ նպատակով ԼՂՀ-ում կրթության կառավարման և ոլորտի բովանդակային կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակման, ինչպես նաև Արցախում մանկավարժների վերապատրաստումները կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀՀ ԿԳ նախարարի 2002թ. ապրիլի 19-ի թիվ 115

հրամանով ԼՂՀ-ում ստեղծվեց «Կրթական բարեփոխումների կենտրոն» ՓԲԸ-ի ԼՂՀ մասնաճյուղը: Այն ՀՀ ԿԳՆ ԿԲԿ տնօրենի 2004թ. փետրվարի 26-ի թիվ 16-Ա հրամանով վերանվանվեց «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ԼՂՀ մասնաճյուղի:

ՀՀ ԿԳՆ ԿԲԿ ՊՓԲ ընկերության տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանը 2002թ. ապրիլի 19-ի հրամանով ԿԲԿ ՓԲԸ ԼՂՀ մասնաճյուղի տնօրեն նշանակեց Բելա Բաբայանին, որն էլ կառույցը ղեկավարեց մինչև 2006թ. օգոստոսը:

Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել մասնաճյուղի տնօրենների գործունեությունը:

Բելա Արկադիի Բաբայանը ծնվել է 1959թ. նոյեմբերի 3-ին Ստեփանակերտ քաղաքում: 1976թ. ավարտել է Ստեփանակերտի Մ. Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1980թ. գերազանցությամբ ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը՝ ստանալով կարմիր դիպլոմ:

1984-1990թթ. աշխատել է «Սովետական Ղարաբաղ» («Ազատ Արցախ») թերթի խմբագրությունում, սկզբից որպես սրբագրիչ, հետագայում՝ որպես պատասխանատու քարտուղարի տեղակալ:

1990-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, իսկ 1992-1993թթ. ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդում:

1993-1995թթ. Երևանում ուսումնառել է սկզբից Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի, իսկ հետագայում ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, զուգահեռաբար աշխատելով ՀՀ պատմության պետական թանգարանում, որպես ավագ գիտաշխատող:

1995թ. ապրիլի 30-ին անցկացված ԼՂՀ 2-րդ գումարման Գերագույն խորհրդի ընտրություններում թիվ 17 ընտրատարածքից ընտրվել է խորհրդարանի պատգամավոր:

1995թ. ընտրվել և մինչև 2000թ. աշխատել է Գերագույն խորհրդի (1996թ. ԼՂՀ Ազգային ժողովի) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ:

2001թ. նշանակվել է Ստեփանակերտի փոխքաղաքապետ: 2002-2006թթ. աշխատել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի (Կրթության ազգային ինստիտուտ) Արցախի մասնաճյուղի տնօրեն: 2006-2008թթ. Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարն էր: 2008 թվականի մարտից աշխատում է ԼՂՀ Նախագահի աշխատակազմի քարտուղարության քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի գլխավոր մասնագետ:

Պարգևատրված է ԼՂՀ կառավարության պատվոգրով:

Ինչպես տեղեկացանք Բ. Բաբայանի հաշվետվությունից[334], նախնական շրջանում մասնաճյուղն աշխատանքները սկսեց 2 հաստիքով՝ տնօրեն և գործավար, շուտով այն համալրվեց մինչև 20-ի:

«Կրթական բարեփոխումների կենտրոն» ՓԲԸ-ի ԼՂՀ մասնաճյուղի հիմնումը ի սկզբանե անհրաժեշտ է դիտարկել որպես ՀՀ ԿԳ նախարարության և անձամբ «Կրթական բարեփոխումների կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն, բ.գ.թ. Վիկտոր Մարտիրոսյանի հայրենանվեր և ազգանպաստ գործունեության արդյունք:

Կենտրոնը՝ լինելով պետական բաժնեմասով ընկերություն, հիմնականում գոյատևում էր միջազգային կրթական ծրագրերին, գրանտներին իր մասնակցու-

թյամբ: Մայր կենտրոնը իր շահույթների հաշվին Արցախում հիմնադրեց ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղը: Մայր կենտրոնը և կազմակերպչական, և՛ ֆինանսական, և՛ գիտակրթական մեծ աջակցություն էր ցուցաբերում մասնաճյուղին:

Սկզբից մասնաճյուղը գործում էր չափազանց անհարմար շենքային պայմաններում, սակայն կարճ ժամանակ անց այն ԼՂՀ ԿԳ նախարարության օժանդակությամբ տեղակայվեց նախկին ԼՂԻՄ ուսուցիչների կատարելագործման և որակավորման ինստիտուտի շենքում՝ հիմնականում հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ շենքում կար և գործում էր նախկին ինստիտուտի հարուստ գրադարանը՝ շուրջ 16.200 կտոր մասնագիտական և հանրամատչելի գրքային ֆոնդով, ինչպես նաև կար գործող համակարգչային կաբինետ՝ շուրջ 10 համակարգիչներով: Այստեղ տեղակայված էին նաև ԼՂՀ ԿԳՆ հանրակրթության վարչությունը և նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագրությունը:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ այն ժամանակվա ԼՂՀ ԿԳ նախարարությունը մեծ ներդրում ուներ կենտրոնի կազմավորման, կայացման և բնականոն գործունեության ապահովման գործում: Ստեղծման առաջին իսկ օրվանից ԼՂՀ ԿԳՆ գործընկերային, կառուցողական հարաբերություններ ուներ կենտրոնի հետ, իսկ կենտրոնի ամենօրյա աշխատանքները համակարգում էր փոխնախարար Ս. Ասրյանը: Կենտրոնը ի սկզբանե իր առջև դրել էր հետևյալ խնդիրները՝

1.Նոր՝ 12-ամյա կրթակարգի հիման վրա կազմակերպել ուսուցիչների վերապատրաստումներ հանրակրթական բոլոր առարկաների գծով

2.Մայր կենտրոնի օժանդակությամբ վերապատրաստել և ունենալ տեղական դասախոսական կազմ

3.Արցախի ուսուցիչների հոծ բանակին մասնակից անել նոր դասագրքերի, չափորոշիչների, թեմատիկ պլանների և ծրագրերի քննարկումներին:

Հանրապետության ամբողջ տարածքում աշխատելու համար մասնաճյուղն իր կոորդինատներ-համակարգողներն ունեցավ Մարտունիում, Հադրութում, Քարվաճառում և Քաշաթաղում:

2002թ. վերջին մայր կենտրոնից դասախոսական մեծ բանակ՝ ԿԱԻ փոխտնօրեն ֆ.գ.թ. Գ. Մելիքյանի գլխավորությամբ, ժամանեց Արցախ՝ վերոնշյալ խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել բ.գ.դ. Դ. Գասպարյանի (հայոց լեզու և գրականություն), Է.Այվազյանի (մաթեմատիկա), Ա. Ասլանյանի (հայոց լեզու և գրականություն), Վ.Պարսամյանի (հայոց պատմություն), Ֆ. Երիցյանի (տարրական ուսուցման մեթոդիկա), ֆ.գ.թ. Գ. Մելիքյանի (ֆիզիկա) և այլոց ջանքերը:

Մայրաքաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցը դիտվեց որպես բազային դպրոց: Հիմնականում աշխատում էին 90-ժամյա՝ երկշաբաթյա և 60-ժամյա ծրարգերով: Մայր կենտրոնի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն՝ աշխատում էին գարնանային և աշնանային արձակուրդների օրերին, եթե անհրաժեշտություն էր լինում՝ ամբողջ տարվա ընթացքում: Վերապատրաստումներն ավարտվում էին ստուգարքներով և ուսուցիչներին տրվում էր վկայական:

ՀՀ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի արխիվային տվյալների համաձայն, 2002-2005թթ. վերապատրաստվել են հիմնականում հանրապետության բոլոր շրջանների ուսուցիչները՝ թվով 1878 մասնակից:[335]

Տեղական դասախոսական կազմը, որ վերապատրաստվեց Երևանից ժամանած մասնագետների օժանդակությամբ, հիմնականում համալրված էր ԱրՊՀ, «Մեսրոպ Մաշտոց» և «Գրիգոր Նարեկացի» համալսարանների դասախոսներով, ինչպես նաև ԿԳՆ ու թոշակի անցած, բայց գործունյա փորձառու ուսուցիչներով:

2005թ. ԼՂՀ «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարեց մրցույթ՝ Արցախում առաջին անգամ քաղծառայողների վերապատրաստումներ կազմակերպելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնաճյուղը տիրապետում է վերապատրաստումներ կազմակերպելու գործիքակազմին, ԱրՊՀ-ի հետ մասնակցեց մրցույթին և հաղթեց:

Առաջին վերապատրաստումները հավուր պատշաճի կազմակերպելու համար մասնաճյուղի տնօրեն Բ. Բաբայանը Երևանում հանդիպեց ինչպես մայր ինստիտուտի, այնպես էլ Կառավարման ակադեմիայի և Քաղծառայության խորհրդի նախագահության հետ: Քաղծառայողների վերապատրաստման թեմատիկ ծրագրերը բաղկացած էին 3 մասից՝ քաղծառայության հիմունքներ, սահմանադրական իրավունք և կառավարչական հմտություններ ու կարողություններ: Վերոթվյալ դասընթացների համար Արցախ հրավիրվեցին Կառավարման ակադեմիայի 3 դասախոսներ, ի.գ.թ. Արտակ Հարությունյանը (քաղծառայության հիմունքներ), ի.գ.թ. Արտակ Ասծատրյանը (սահմանադրական իրավունք) և ֆ.գ.թ. Վիլիկ Եդիգարյանը (կառավարչական հմտություններ և կարողություններ):

ԼՂՀ ՔԾ խորհրդի կողմից հաստատված ծրագրերի և ժամանակացույցի համաձայն, 2005թ. օգոստոս (գլխավոր պաշտոնների քաղծառայողներ), սեպտեմբեր (առաջատար պաշտոնների քաղծառայողներ) և նոյեմբեր (կրտսեր պաշտոնների քաղծառայողներ) ամիսներին կազմակերպվեցին առաջին վերապատրաստումները: 2005թ. օգոստոսից նոյեմբեր վերապատրաստվեցին հանրապետության պետական կառավարման համակարգի 174 գլխավոր, 162 առաջատար և 184 կրտսեր պաշտոնների շուրջ 520 քաղծառայողներ:

ՀՀ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի կողմից կազմակերպված առաջին վերապատրաստումների արդյունքներով անցկացվեցին սոցիոլոգիական հարցումներ, որոնք, ի դեպ, շարունակվում են առ այսօր), որոնց արդյունքներով հարցվողները բարձր գնահատեցին վերապատրաստումները, ինչպես բովանդակային, այնպես էլ կազմակերպչական առումներով: Կատարված աշխատանքը բարձր գնահատանքի արժանացավ և ԼՂՀ Նախագահի աշխատակազմի, և ԼՂՀ ՔԾ խորհրդի կողմից:

ԿԱԻ-ն իր գործունեության ընթացքում սերտ համագործակցության մեջ էր ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների, ԱրՊՀ-ի, «Մեսրոպ Մաշտոց», «Գրիգոր Նարեկացի» պետհամալսարանների, որակավորման ինստիտուտի նախկին փորձառու և վաստակավոր ուսուցիչների հետ, ինչպես նաև ԼՂՀ կառավարության, հանրապետության պետական հիմնարկների, հանրակրթական դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ: Արժե հիշատակել, որ մայրաքաղաքի ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչները վերապատրաստվել են ԼՂՀ ռուսական համայնքի ֆինանսական օժանդակությամբ:

ԿԱԻ-ի մասնագետները հաճախակի վերապատրաստումներ էին անցնում ՀՀ ԿԱԻ-ում: 2004թ. գարնանը Գորիս քաղաքում կազմակերպվել էին Կրթության ազգային ինստիտուտի բոլոր մասնաճյուղերի տնօրենների երկշաբթյա վերապատրաստումներ: ԿԱ ինստիտուտի կայացման գործում մեծ են ինստիտուտի առաջին աշխատողներ Ս. Պողոսյանի (գրադարանավար), Ե. Ավանեսյանի (գլխ. հաշվապահ), Ա. Մարտիրոսյանի (տարրական ուսուցման մեթոդիկա), Ռ. Դանիելյանի (ֆիզիկա), Ա. Ղուլյանի (հայոց լեզու և գրականություն), Գ. Ավետիսյանի (քիմիա և կենսաբանություն), Բ. Դավթյանի (ֆիզիկա), Շ. Հայրիյանի (հայոց պատմություն), Կ. Մելքումյանի (մաթեմատիկա), Կ. Գևորգյանի (նախապատրաստական ուսուցում) և այլոց ներդրումները:

2006 թվականից առ այսօր ՀՀ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղը ղեկավարում է Մխիթար Գևորգյանը: Ծնվել է 1968թ. Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և ԱրՊՀ պատմաբանասիրական ֆակուլտետի «Պատմություն» բաժինը: Բուհն ավարտելուց հետո աշխատանքի է անցել նույն համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնում՝ որպես կաբինետի վարիչ, ապա՝ դասախոս:

Այնուհետև աշխատանքի է անցել ԼՂՀ ԿՄՍ նախարարությունում՝ որպես արտադպրոցական և երիտասարդության հարցերի բաժնի պետ: Հեղինակ է մի շարք գրքերի, գիտական հոդվածների:

2006թ. մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում ԿԱԻ-ի ԼՂՀ մասնաճյուղը գործունեություն է իրականացրել Արցախի կրթական ոլորտի բովանդակային և մեթոդական սպասարկման, հանրակրթական դպրոցների փոխտնօրենների, առարկայական ուսուցիչների, դասղեկների, ինչպես նաև նախադպրոցական հաստատությունների տնօրենների և դաստիարակների մասնագիտական զարգացման և նախաատեստացիոն վերապատրաստումների, սեմինարպարապմունքների և խորհրդատվությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ: Սեմինար-պարապմունքներ են անցկացվել 1140 մասնակիցների հետ: Վերապատրաստման դասընթացները միտված են եղել մասնակիցներին զինելու մանկավարժական, մեթոդական, մասնագիտական, տեղեկատվական տեխնոլոգիայի և օրենսդրական գիտելիքներով, դրանց կիրառման հմտություններով:

Սեմինար-պարապմունքները և խորհրդատվությունները նվիրված էին կոնկրետ ուսումնական թեմաներին և ուսումնական գործընթացներին:

Մասնաճյուղը աշխատանք է տարել նաև դպրոցների գրադարանավարների վերապատրաստման ուղղությամբ:

Գրադարանավարների վերապատրաստման դասընթացի բովանդակությունը ներառել է գրադարանավարության ոլորտի զարգացմանն ուղղված թեմաներ, ընդգծվել է գրադարանի դերն ու նշանակությունը ուսուցման արդիականացման գործում: Մասնաճյուղն իրականացրել է առարկայական ուսուցիչների համակարգչային գրագիտության զարգացման դասընթացներ, որոնք նպատակ են հետապնդել զարգացնելու ուսուցիչների հետազոտական, տեղեկատվական, կառավարման և կիրառման հմտությունները:

Նշված տարիներին մասնաճյուղը իրականացրել է դասագրքերի, նաև ուսումնական գրականության մշտադիտարկումներ:

Շրջանառության մեջ դրված դասագրքերի մշտադիտարկման արդյունքում արվել են համապատասխան մասնագիտական առաջարկություններ, դիտողություններ վերահրատարակվող դասագիրքը բարելավելու համար:

Մասնաճյուղը բավականին աշխատանք է տարել դասագրքերի փորձաքննության և գնահատման նոր համակարգի ներդրման ու կիրառման ուղղությամբ:

Մասնաճյուղի մասնագետները պարբերաբար մասնակցել են Արցախում և նրա սահմաններից դուրս կազմակերպվող կոնֆերանսներին և սեմինարներին:

Կառույցի աշխատողների կողմից հրատարակվել են բազմաթիվ մասնագիտական, մեթոդական ձեռնարկներ և ուղեցույցներ, որոնք միտված են եղել ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Մասնաճյուղը համագործակցել է կրթական ծրագրեր իրականացնող մի շարք շահագրգիռ կառույցների հետ. ԼՂՀ ԿԳՍ նախարարություն, ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոն, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Ստեփանակեր-

տի ներկայացուցչություն, ԱՅԲ հիմնադրամ և այլն:

Վերոնշյալ ժամանակահատվածում մասնաճյուղի կողմից վերապատրաստվածների ընդհանուր քանակը կազմել է 3100, որոնց դասընթացների ավարտին տրվել են համապատասխան վկայականներ:

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է ենթադրել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (հատ. 2,2015թ. էջ 313) և ԼՂ Հանրապետությունում մանկավարժական կադրերի վերապատրաստման այդ հաստատությունը տարբեր ժամանակներում (1963-1989, 1990-2001 և 2002-2016 թվականներին) արգասավոր գործունեություն է ծավալել բարձրորակ մանկավարժական կադրերի վերապատրաստման պահանջը բավարարելու նպատակով: Այդ հաստատության տարեգրության (1963-2016թթ.) ժամանակի հարափոփոխ ընթացքի մեջ միշտ էլ փոխվել են բարենպաստ և անբարենպաստ ժամանակները խորհրդային շրջանում և մեր անկախության օրերին:

Անշուշտ, ուսուցչական կադրերի վերապատրաստման և ատեստավորման հաստատության կոլեկտիվը՝ ի սկզբանե և մեր ժամանակներում հաղթահարելով բազում դժվարություններ, հավատարիմ է մնացել իր սկզբունքներին և բարձր պատասխանատվությամբ կատարել հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման առաքելությունը:

5. ԼՂՀ վաստակավոր մանկավարժների գործունեությունը

Աշխատության երկրորդ հատորում (2015թ., էջ 329-374) ներկայացվել է ԼՂԻՄ-ի վաստակաշատ մանկավարժների գործունեությունը 1923-1988 թվականներին: Որպես հետազոտության թեմայի տրամաբանական շարունակություն, նպատակահարմար գտանք սույն աշխատության այս բաժնում, թեկուզև համառոտակի, ընդհանուր պատկերացում տալ նաև քննարկվող ժամանակաշրջանի (1991-2016թթ.) մեր հանրապետության վաստակավոր մանկավարժների գործունեության մասին: Ի դեպ, նշենք, որ նրանցից շատերի գործունեությունը ընդգրկում է խորհրդային և ԼՂՀ անկախ պետականության ժամանակաշրջանը:

Իրենց երկարամյա մանկավարժական արգասավոր գործունեության տարիներին վաստակավոր մանկավարժները՝ շարունակելով Արցախի երախտաշատ մանկավարժների (Առաքել Առաքելյանի, Լևոն Վարդունու, Արշավիր Քամալյանի, Սուրեն Հայրապետյանի, Սարգիս Աբրահամյանի, Սարգիս Արամյանի, Արամ Մարտիրոսյանի և ուրիշների) լավագույն ավանդույթները (ունեցել են արդյունավետ դասի անցկացման ուսանելի փորձ, միշտ կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և անգնահատելի ծառայություն ունեցան Արցախի գիտության, կրթական համակարգի զարգացման բնագավառում), մանկավարժական աշխատանքում ղեկավարվել են բարոյականության սկզբունքով, սիրելով աճող սերդնին և իրենց ընտրած մասնագիտությունը: Բացի այդ, ակտիվորեն մասնակցել են Արցախյան շարժմանն ու ազատագրական պայքարին, ծավալել նաև հասարակական-քաղաքական գործունեություն:

Վաստակավոր մանկավարժներից շատերը, որոնք երկար տարիներ ղեկավարել են կրթական հաստատությունները, ԼՂՀ ԿԳ նախարարությունը, նախարարության առանձին բաժինները, կրթության շրջանային, քաղաքային բաժինները, արել են իրենցից կախված ամեն հնարավորը՝ սովորողների կրթության, դաստիարակության կրթական համակարգի զարգացման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար: Աշխատանքային տարիներին նրանց (նկատի ունենք նախարա-

ության աշխատողներին, դպրոցների տնօրեններին) հաջողվել է համախմբել, ղեկավարել մանկավարժական կոլեկտիվները, օբյեկտիվորեն գնահատել յուրաքանչյուր ուսուցչի կատարած աշխատանքը՝ համապատասխանեցնելով նրա մասնագիտական հնարավորությունների հետ, պահպանելով պարգևատրումների արդարությունը, իսկ դա կարևոր պայման է ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Անշուշտ, մանկավարժական կադրերի աշխատանքի համակարգված և մշտական գնահատումը դրականորեն է անդրադառնում ուսուցչի մասնագիտական աճի ու զարգացման վրա: Վաստակավոր մանկավարժների պրակտիկ մանկավարժական փորձի ուսումնասիրումը վկայում է այն իրական փաստը, որ բազմամյա գործունեության տարիներին իրենց գործին նվիրված մանկավարժները ազնվորեն մնացել են բարձր ու վեհ, միշտ մարդկային օրինականության պայմաններում:

Ահա այս միտումով էլ բազմաբովանդակ վաստակ ունեցող մանկավարժների տարիների անբասիր աշխատանքը ըստ արժանվույն է գնահատվել մեր հանրապետության ղեկավարների, ԿԳ նախարարության կողմից, նրանք պարգևատրվել են կառավարական պատվոգրերով, մեդալներով, արժանացել հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Արխիվային հարուստ նյութերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակակիցների, այսօր մեր շարքերում ստեղծագործական, լրագրողական, մանկավարժական գործունեություն ծավալող շատ ուսուցիչների և շրջանավարտների՝ մեզ տրամադրած բազմաթիվ նամակների ու հուշերի համակողմանի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել ներկայացնել 100-ից ավելի վաստակավոր մանկավարժների, ինչպես նաև տարվա լավագույն ուսուցիչների, տնօրենների ազգանվեր ու անխոնջ մանկավարժական գործունեությունը, որը, անշուշտ, ուսանելի կլինի այսօրվա հանրակրթության ոլորտում աշխատողների և գալիք սերունդների համար:

Հանրապետության հետագա հզորացումը, նրա երաշխավորված ապագան մեծապես կախված են կրթական համակարգի արդյունավետ աշխատանքից, որի երաշխավորողը առարկայագետ ուսուցիչն է, որը խորապես պետք է տիրապետի այն գիտությանը, որի վրա կառուցվում է իր կողմից դասավանդվող առարկան: Իհարկե, նորը հայտնագործելու լաբորատորիան դպրոցն է, ուսուցչի գործունեության մշտական վայրը, նա պետք է խորը թափանցի իր սաների ներաշխարհը ու մտածի, թե ինչպես անել, որպեսզի և ուսուցումը, և դաստիարակությունը արդյունավետ լինի: Անշուշտ, ազգային դպրոցի կրթադաստիարակչական ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարը ուսուցիչն է, որը պետք է մշտավառ ոգևորությամբ նվիրված լինի մանկավարժական ու հասարակական աշխատանքին:

Այդպիսի ուսուցիչների նվիրական աշխատանքը բարձր է գնահատվել 2005 թվականին՝ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ և ԼՂՀ Նախագահ Արկադի Ղուկասյանի հրամանագրով մի խումբ ուսուցիչների շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1988-2016թթ.) Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և ԼՂ Հանրապետության կրթական համակարգի նվիրյալ գործիչներից, մեթոդիստ մանկավարժներից և երիտասարդ սկսնակ ուսուցիչներից շատերը երկրամասի կրթության ոլորտում բեղմնավոր գործունեության և անբասիր աշխատանքի համար արժանացել են ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչմանը: Ժամանակագրական կարգով ներկայացնենք նրանց կենսագրական տվյալները:

Լեռնային Ղարաբաղի դպրոցի ու մանկավարժական ասպարեզի նվիրյալ գործիչներից է անվանի գրող, բանաստեղծ, վաստակաշատ մանկավարժ **Լևոն Հարությունյանը** (1928-2002թթ.): Գերազանց գնահատականներով ավարտելով հայրենի Աշան գյուղի միջնակարգ դպրոցը (1946թ.), ուսումը շարունակում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում (1946-1948թթ.), այնուհետև բարձրագույն կրթություն ստանում Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1948-1952թթ.): Առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը, Լ. Հարությունյանը մանկավարժական աշխատանքի է անցնում Մարտունու շրջանի Եմիշճանի յոթնամյա դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո (1957թ.) աշխատում է կոմերիտշրջկոմում, որպես քարտուղար, սակայն մանկավարժական մասնագիտության նկատմամբ ունեցած բուռն հետաքրքրությունը նրան ստիպում է վերստին աշխատելու հայրենի կրթօջախում, ազնվորեն նվիրվելու մատաղ սերնդի դժվարին, բայց սուրբ ու պատվավոր գործին: Շուրջ չորս տասնամյակի բեղմնավոր գործունեության տարիներին (որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն Աշանի, Եմիշճանի, Մյուրիշենի, Խերխանի, Բերդաշենի, Թաղավարդի դպրոցներում) գրած իր հուշերում վաստակաշատ մանկավարժը նշում է. «Տարիների աշխատանքային փորձը ինձ մշտապես հուշում է, որ ամեն մի ուսուցիչ պետք է միշտ կողմնորոշի աշակերտներին, սեր առաջացնի նրանց մեջ աշխատանքի և աշխատանքի մարդկանց հանդեպ, որպեսզի ամեն մի աշակերտ հենց դպրոցական նստարանից սիրի հայրենի երկիրը, մտերմանա հողին, զգա բույրն ու դերը բարիքներ ստեղծելու ճանապարհին: Ուսուցիչը պետք է նմանվի այն շռայլ սերմնացանին, որը երջանկության հունդեր է ցանում մատաղ սերնդի հոգիներում՝ գալիքն էլ ավելի գեղեցիկ ու բարեկեցիկ դարձնելու համար:[336]

Վաստակաշատ մանկավարժի գործունեությանը վերաբերող փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ դասալսումների արդյունքները վերլուծելիս ուսուցիչներին խորհուրդ էր տալիս, որ դասը պետք է կառուցել մանկավարժորեն ու մեթոդապես ճիշտ, գիտական խոր հագեցածությամբ: Աշակերտներին հետաքրքրում են միայն ուսուցիչների այն դասերը, որոնք ունեն խոր բովանդակություն: Այդ տեսակետից ավելի է մեծանում ուսուցչի դերը, քանի որ նա է դասերի կազմակերպիչը:

Իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին Հարությունյանը դասը արդյունավետ կազմակերպելու ուսանելի փորձի, ներդպրոցական կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցերի (դպրոցի տնօրենի աշխատանքային պլանի, դպրոցի մեթոդմիավորումների աշխատանքների, դասվարների, դասղեկների աշխատանքային պլանների և այլ հարցերի) վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել շրջանային, մարզային թերթերում, «Սովետական դպրոց», «Խորհրդային մանկավարժ», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրերում:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Լ. Հարությունյանը զբաղվել է նաև ազգագրական աշխատանքով, հրատարակել է «Նշխարներ» (1991) ժողովածուն: Այդ ուղղությամբ շուրջ 100-ից ավելի հոդվածների հեղինակ է, ՀՀ մանկավարժական ընկերության կողմից պարգևատրվել է «Ստեղծագործական աշխատանքի համար» կրծքանշանով և դիպլոմով:

Նրա բազմամյա մանկավարժական վաստակը գնահատվել է նաև ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից, արժանացել մի շարք գովասանագրերի, պատվոգրերի և 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի կոչման, իսկ 2005թ. Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյա հոբելյանական տարում արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Մարտակերտի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժներից է **Սուրեն Առաքելյանը:** Ծնվել է 1929 թվականին, շրջանի Չլդրան գյուղում: Ավարտելով տեղի յոթնամյա դպրոցը՝ կրթությունը շարունակել է Առաջածորի միջնակարգ դպրոցում: 1948-50թթ. սովորել է Ստեփանակերտի ուսուցչական երկամյա ինստիտուտում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի միջնակարգ դպրոցում: 1954թ. առ այսօր աշխատում է Չլդրանի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Ս. Առաքելյանը իր աշխատանքային գործունեությանը զուգակցել է կրթությունը՝ 1962-66թթ. ուսանելով Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում:

1966թ. ղեկավարել է Չլդրանի միջնակարգ դպրոցը: Նրա ղեկավարության տարիներին դպրոցը ձեռք է բերել լավագույն կրթօջախի համբավ, թողարկել ոսկե մեդալակիր շրջանավարտներ:

Ս. Առաքելյանի մանկավարժական գործունեությունն ուղղված է մի նպատակի՝ բարձր գիտականություն, բարոյական անաղարտություն և ազգային արժեքների պահպանություն: Այսօր էլ Ս. Առաքելյանն իր գործունեությամբ նպաստում է հայապահպանությանն ու ազգային միասնությանը: Ս. Առաքելյանը ճանաչվել է Ադրբեջանի Հանրապետության ժողկրթության գերազանցիկ: 2005թ. արժանացել է ԼՂ Հանրապետության վաստակավոր մանակվարժի բարձր կոչման:

Լեռնային Ղարաբաղի դպրոցի պրակտիկայում ճանաչված փորձառու մանկավարժներից է **Օֆելյա Հայրապետյանը:** Ծնվել է 1932թ. Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1955թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ԼՂԻՄ մարզժողկրթբաժնի հրավերով եկել է Արցախ և գործուղվել աշխատելու Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Մեկ տարի հետո տեղափոխվել է Ստեփանակերտի թիվ 5 միջնակարգ դպրոց՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի և ուսումնական մասի վարիչ:

1960-2000թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում և շուրջ 10 տարի՝ որպես փոխտնօրեն:

2000թ. կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տեղափոխվել է ԼՂՀ կրթության նախարարություն, աշխատել որպես ռուսաց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ, միաժամանակ շարունակել մանկավարժական գործունեությունը թիվ 3 միջնակարգ դպրոցում: Երկար տարիներ եղել է Ստեփանակերտ քաղաքի առարկայական մեթոդմիավորման նախագահ:

2002-2009թթ. որպես ավագ դասախոս աշխատել է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում:

1970թ. պարգևատրվել է «Լուսավորության գերազանցիկ» կրծքանշանով:

1987թ. արժանացել է «Աշխատանքի վետերան» մեդալի, իսկ 2005թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Ասկերանի շրջանի հանրակրթական դպրոցներում բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել **Զինավոր Գրիգորյանը:** Ծնվել է 1932թ. մայիսին, Նորագյուղում: Գերազանց գնահատականներով ավարտել է հայրենի գյուղի

միջնակարգ դպրոցը և ընդունվել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, որտեղ և գերազանցությամբ ավարտել (1951թ.) և անցել է մանկավարժական աշխատանքի Նորագյուղի ութնամյա դպրոցում, որպես զինղեկ և ֆիզկուլտուրայի ուսուցիչ: 1952-1954թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում և զորացրվելուց հետո աշխատել շրջանի Խանաբադի, Ղշլաղի, Նորագյուղի դպրոցներում (1954-1958թթ.), իսկ 1962 թվականից՝ Նորագյուղի միջնակարգ դպրոցում:

Բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետի հեռակա բաժնում: 1971-1973 թվականներին շրջանի դպրոցների պատանիների հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության գծով կազմակերպված մրցույթում ճանաչվել է հաղթող և պարգևատրվել «Սոցմրցությունում հաղթող» կրծքանշանով: 1974թ. ԱդրՍՍՀ լուսավորության նախարարության և հանրապետության արհմիութենական կազմակերպության կողմից պարգևատրվել է պատվոգրով: 1983թ. ԽՍՀՄ կազմավորման և ՀամլԿԵՄ 60-ամյակի կապակցությամբ սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության գծով անցկացված հանրապետական ստուգատեսում ճանաչվել է հաղթող և պարգևատրվել ԱդրԽՍՀ լուսավորության նախարարության պատվոգրով: Դպրոցի «Փայլակ» և «Արծվիկ» թիմերը միշտ էլ մասնակցել են շրջանային մրցումներին և տարբեր մարզաձևերում գրավել մրցանակային տեղեր: Մարզգործկոմի 1987թ. մարտի 30-ի որոշմամբ արժանացել է «Աշխատանքի վետերան» մեդալի:

1997թ. «Արծվիկ» թիմը մասնակցել է հանրապետական մրցումներին և գրավել 3-րդ տեղը: Այնուհետև հաջորդ հինգ տարիներին թիմը շրջանի անունից մասնակցել է հանրապետական մրցումներին և գրավել 3-րդ մրցանակային տեղը:

2000թ. ճանաչվել է շրջանի տարվա լավագույն զինղեկ: 2001թ. նույնպես շրջանում ճանաչվել է որպես լավագույն ուսուցիչ (զինղեկ), պարգևատրվել նաև կառավարության պատվոգրով: 2005թ. սեպտեմբերին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Շուշիի շրջանի նվիրյալ մանկավարժներից է **Վարդի Գրիգորյանը:** Ծնվել է 1936թ. դեկտեմբերին, շրջանի Մեծ Խերխան գյուղում՝ կոլտնտեսականի ընտանիքում: 1945-1952թթ. սովորել է Եղցահող գյուղի յոթնամյա դպրոցում: 1952-1956թթ. սովորել և ավարտել է Շուշի քաղաքի մանկավարժական ուսումնարանը: 1957-1963թթ. հեռակա կարգով սովորել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, միաժամանակ աշխատել գյուղի յոթնամյա դպրոցում՝ նախ որպես դասվար, ապա որպես պատմության ուսուցչուհի:

Թե՛ ուսումնառության տարիներին և թե՛ աշխատանքի ժամանակ ուժ ու եռանդ չի խնայել գիտելիքներ ձեռք բերելու և դրանք սաներին մատուցելու գործում: Թոշակառու մանկավարժը՝ չկտրելով կապը դպրոցի հետ, շարունակում է իր մասնագիտական փորձը հաղորդել երիտասարդ մանկավարժներին: 2005թ. սեպտեմբերին ԼՂՀ Նախագահի 232 հրամանագրով արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Շուրջ 50 տարվա մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ունեցել (որից 20 տարի եղել է դպրոցի տնօրեն) 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Սվետլանա Դավթյանը:** Ծնվել է 1937թ. ապրիլի 7-ին, Ստեփանակերտ քաղաքում, ծառայողի ընտանիքում:

1954թ. Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը ավարտելով՝ ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը և 1953թ. ավարտել հայոց լեզվի, գրա-

կանության և պատմության ուսուցչի մասնագիտությամբ:

1959թ. սեպտեմբերից աշխատանքի է անցել Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում՝ որպես դաստիարակչուհի, 1960-1974թթ. նույն դպրոցում դասավանդել է հայոց լեզու և գրականություն:

1974թ. գիշերօթիկ դպրոցը փակվելուց հետո մանկավարժական կոլեկտիվի հետ տեղափոխվել է նորաբաց թիվ 9 դպրոցը: 1975թ. սեպտեմբերին տեղափոխվել է թիվ 1 միջնակարգ դպրոց, որտեղ որպես ուսմասվար աշխատել է 1975-1999թթ.:

1999-2007թթ. աշխատել է Ստեփանակերտի «Էրուդիտ» ռուսական վարժարանում՝ որպես հայոց լեզվի, գրականության և հայ ժողովրդի պատմության ուսուցչուհի:

2006թ. առայսօր աշխատում է Արցախի ժողովրդավարական կուսակցության քաղաքային խորհրդում՝ որպես Ստեփանակերտի քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ:

Հավուր պատշաճի է գնահատվել ճանաչված ուսուցչուհու մանկավարժական աշխատանքը: Արժանացել է (1972թ.) «ԱդրԽՍՀ ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանի, իսկ 2005 թվականին՝ ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն է ծավալել իր գործին նվիրված մանկավարժ **Ալբերտ Խաչատրյանը:** Ծնվել է 1937թ. Բաքու քաղաքում: 1938թ. ընտանիքով տեղափոխվել են Շուշի: 1952թ. ավարտել է Շուշիի յոթնամյա դպրոցը:

1952-56թթ. սովորել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում:

1956-1960թթ. աշխատել է Շուշիի թիվ 2 գիշերօթիկ դպրոցում՝ որպես ուսուցիչ-դաստիարակ, 1962թ. սեպտեմբերից մանկավարժական ուսումնարանում (այժմ Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջ)՝ որպես մանկավարժության և հոգեբանության դասախոս:

1964-1970թթ. մանկավարժական գործունեությանը զուգահեռ սովորել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի հեռակա բաժնում:

1990-1993թթ. աշխատել է էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկումի Ստեփանակերտի մասնաճյուղի վարիչ:

1993թ.՝ Շուշիի մշակութալուսավորական տեխնիկումի տնօրեն, 1994-1997թթ.՝ ուսուցիչ:

1997-2009թթ.՝ Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի տնօրեն:

Ա. Խաչատրյանը աշխատանքի վետերան է, «Հավերժի ճամփորդը» և «Շուշիի մանկավարժական ուսումնարան» գրքերի և մանկավարժական մի շարք հոդվածների հեղինակ է: 2003-2010թթ. Ա. Խաչատրյանը ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լիցենզավորման և հավատարմագրման, բարձրագույն պարգևների և պատվավոր կոչումների շնորհման հանձնաժողովների անդամ էր: Պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով, 2005թ. արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Յուրահատուկ աշխատասեր անձնավորություն էր և նվիրյալ մանկավարժ **Իրա Ավետիսյանը:** Ծնվել է 1947թ. հունվարի 21-ին, Մարտունու շրջանի Սոս գյուղում:

1964թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» ֆակուլտետը:

1963թ. ավարտելով ինստիտուտը, աշխատանքի է անցել Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավարուհի:

1970-1993թթ. աշխատել է որպես դասվար նախ գիշերօթիկ, ապա թիվ 9 միջնակարգ դպրոցում: 1987-1992թթ. թիվ 9 դպրոցում աշխատել է որպես փոխտնօրեն:

1993թ. սեպտեմբերի 1-ին տեղափոխվել է թիվ 2 միջնակարգ դպրոցը, որտեղ աշխատել է որպես դասվար և փոխտնօրեն:

Իր 42 տարվա մանկավարժական գործունեության (որից 19-ը՝ փոխտնօրեն) ընթացքում բազմիցս հանդես է եկել մեթոդամանկավարժական զեկուցումներով, կազմակերպել է օրինակելի դասեր, բազմաթիվ տարբեր միջոցառումներ, եղել է դասվարների դպրոցական և քաղաքային մեթոդխորհրդի նախագահ:

Բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով: 1986թ. նրան շնորհվել է «Ավագ ուսուցիչ» կոչում, 2003թ. արժանացել է քաղաքի «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչմանը, իսկ 2005թ. պարգևատրվել է ԼՂՀ կառավարության պատվոգրով և նույն թվականին էլ ԼՂՀ Նախագահի հրամանագրով արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Նաիրա Թամրազյանը Արցախի ճանաչված մտավորականներից է, հայոց լեզվի և գրականության հեղինակավոր ուսուցիչներից մեկը:

Ծնվել է 1947թ. Արցախի անվանի մանկավարժներ Սուրեն Թամրազյանի և Արմիկ Արամյանի ընտանիքում: 1966թ. ավարտել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:

1970թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում և շուրջ 45 տարի որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել այնտեղ:

Ն. Թամրազյանը ղեկավարել է Ստեփանակերտ քաղաքի մայրենի լեզվի և գրականության առարկայական մեթոդմիավորումը: Նրան երաշխավորել և ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում դասավանդելու իրավունք է տվել ՀՀ ԿԳ նախարարության ԿԲ կենտրոնը:

Ն. Թամրազյանը 2000-2001թթ. ուսումնական տարում ճանաչվել է որպես հանրապետության հայոց լեզվի և գրականության լավագույն ուսուցիչ:

Անխոնջ, պրպտուն մտքի տեր ուսուցչուհին մշտապես հանդես է գալիս թերթերում ու ամսագրերում, սեմինար-պարապմունքներում, համաժողովներում: ԼՂՀ կրթության և սպորտի նախարարության կողմից երաշխավորվել և որպես ուսումնական օժանդակ ձեռնարկ 2003թ. լույս է տեսել Ն. Թամրազյանի կազմած «Հայոց լեզվի հարանունների ուղղագրական-բացատրական բառարանը», այն արժանացել է պետական մրցանակի: Ն. Թամրազյանը մայրենիի այն եզակի նվիրյալներից է, ով հասարակական կյանքի բոլոր տատանումների ժամանակ էլ իր սաների մեջ սեր է դաստիարակել դեպի հայոց լեզուն և գրականությունը՝ մայրենի մշակույթի հիման վրա մատաղ սերնդի մեջ դաստիարակելով հայրենասիրության բարձր գաղափարներ: Նրա հեղինակած «Սիրել տալով մայրենին՝ նաև դաստիարակում ենք» և «Հարանունների ուսուցումը դպրոցում» հանրապետական մանկավարժական ընթերցումները Արցախում լավագույնն են ճանաչվել:

Շատ մտավորականների նման հայրենասեր ուսուցչուհին ևս կանգնած է եղել

Արցախյան շարժման ակունքներում: Հայրենասիրությամբ ու նվիրումով տոգորված նրա սաներն ու որդիները մարտնչել են հայրենի Արցախի անկախության ու ազատության համար, իսկ այսօր էլ նրանք լծված են Արցախի պետականաշինության վեհ գործին:

2005թ. Ն. Թամրազյանը արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Իր գործին անմնացորդ նվիրված մանկավարժ է **Սուսաննա Գաբրիելյանը:** Ծնվել է 1947թ. օգոստոսի 22-ին, Մարտակերտ ավանում: 1954-55 ուս.տարում սովորել է Չայլվի միջնակարգ դպրոցում և ավարտել 1965թ: Նույն տարում ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանություն ֆակուլտետը, որն ավարտել է 1970թ. ու աշխատանքի անցել Չայլվի միջնակարգ դպրոցում: 1971թ. ամուսնանալով տեղափոխվել է Ասկերան: 1971-72 ուս.տարվանից աշխատում է Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի: Արցախյան պատերազմի ժամանակ՝ աշխատել է Ասկերանի շրջանի Դահրավի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն: Հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի շրջանային փուլում:

Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով և բազում դիպլոմներով ու պատվոգրերով: 2005թ. արժանացել է հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Իր ողջ մանկավարժական բեղուն գործունեության ընթացքում **Լարիսա Ղազարյանը** մշտապես աչքի է ընկել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակությանն ուղղված ազգանպաստ գործով: Հարգված մանկավարժի ու կրթության անխոնջ մշակի բազմաթիվ շրջանավարտներից են նաև Շուշիի մանկավարժական ուսումնարանի սաները, որոնցից շատերը մասնակցել են Արցախյան ազատագրական պայքարին և այսօր աշխատում են մեր հանրապետության կրթության և այլ ոլորտերում:

Ծնվել է 1932թ. Վրաստանի Ախալքալաքի շրջանի Ձակ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի ութամյա դպրոցում: 1954թ. ընդունվել է Ախալքալաքի մանկավարժական ուսումնարանը, այն ավարտել 1958թ.: Նույն թվականին ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը, 1963թ. գերազանցությամբ ավարտել այն:

Նույն թվականին գործուղվել և աշխատել է Շուշի քաղաքի թիվ 2 գիշերօթիկ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1967-2008թթ. աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում: 1997-2002թթ. միաժամանակ աշխատել է Շուշիի ժողովրդական համալսարանի պրոռեկտոր:

2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Մարտակերտի շրջանի կրթական համակարգի հմուտ կազմակերպիչներից է **Զավեն Շահբարյանը:**

Ծնվել է 1933թ. Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում, ստացել մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչի որակավորում:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1956թ. Ադրբեջանի Շամխորի շրջանի Մարտունի գյուղում: Շուրջ կեսդարյա մանկավարժական գործունեության ընթացքում Զ. Շահբարյանը իր սերնդակից շատ ուսուցիչներից տարբերվել

է եռանդուն աշխատասիրությամբ ու անմնացորդ նվիրվածությամբ: Ո՛չ ժամանակները, ո՛չ էլ սերունդների հերթափոխությունը կարծես չեն ազդում Զ. Շահբարյանի գործունեության վրա, այսօր էլ նրա հետ շարունակում են հաճույքով աշխատել երիտասարդ մանկավարժները, նրա նակխին աշակերտները:

Տարիներ շարունակ Առաջածորի միջնակարգ դպրոցում աշխատելով որպես փոխտնօրեն՝ աճեցրել է մանկավարժների մի քանի սերունդ, իր գիտելիքներն ու հարուստ փորձը փոխանցել նրանց: Զ. Շահբարյանի մանկավարժական գործունեությունը կապված է նաև ենթաշրջանի դպրոցների հետ: Զ. Շահբարյանը արժանացել է մի շարք գովասանագրերի ու դիպլոմների, ճանաչվել Մարտակերտի շրջանի XX դարի լավագույն մանկավարժ: Իր ծանրակշիռ վաստակի համար նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում:

Հադրութի շրջանի դպրոցներում մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ունեցել հմուտ ու բազմափորձ մանկավարժ **Արփիկ Խասապետյանը:** Ծնվել է 1948թ. հունվարի 30-ին, շրջանի Մեծ Թաղեր գյուղում:

1955-1966թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, որի 11-րդ դասարանն ավարտելուց հետո անմիջապես աշխատանքի է անցել գյուղի դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար:

Ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի հեռակա բաժինը և ավարտել 1972թ.:

1969-1991թթ. աշխատել է շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես գրական աշխատող, բաժնի վարիչ, իսկ վերջին 11 տարիներին՝ որպես խմբագիր: Եղել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ:

1991թ. սեպտեմբերին աշխատանքի է ընդունվել Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և աշխատել մինչև թոշակի անցնելը:

2005թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման, պարգևատրվել նաև «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: 2000-2005 թվականներին եղել է ԼՂՀ 3-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր:

Կյանքի ուսանելի ուղի անցած վաստակաշատ մանկավարժ **Ռիտա Պողոսյանը** ծնվել է 1954թ. Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղում: 1971 թվականին գերազանց գնահատականներով ավարտել է Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցը: 1971 թվականին ընդունվել, 1976թ. ավարտել է ՍՄԻ մաթեմատիկայի ֆակուլտետը: 1971-1974թթ. աշխատել է որպես ջոկատավար, համատեղելով ուսման հետ:

1974-1987թթ. աշխատել է որպես դաստիարակ երկարօրյա խմբում: 1987թ. թիվ 9 դպրոցում աշխատել է որպես դասվար:

Տարիներ շարունակ եղել է տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ, 1996-1997թթ. ուս.տարում 0.5 հաստիքով աշխատել է նաև որպես փոխտնօրեն:

2004-2005թթ. ուս.տարվանից աշխատել է ԿՍՄՁ քաղաքային բաժնի արտահաստիքային մեթոդիստ:

2002թ. պարգևատրվել է ԼՂՀ ԿԳՆ պատվոգրով: 2003թ. պարգևատրվել է ԼՂՀ ԿՄՍ պատվոգրով: 2004թ. պարգևատրվել է ԼՂՀ ԿՄՍ նախարարության պատվոգրով: 2005թ. հունիսին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Հայրենասեր ու տաղանդաշատ մանկավարժների շարքերում ուրույն տեղ է գրավում անվանի մանկավարժ **Իրա Սարինյանը:** Ծնվել է 1956թ. Ասկերանի շր-

ջանի Սեյդիշեն (այժմ Խաչեն) գյուղում:

Գյուղի 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո սովորել է հարևան Խնձրիստան գյուղի միջնակարգ դպրոցում, որն էլ գերազանց գնահատականներով ավարտել է 1972 թվականին: Նույն թվականին ընդունվել և 1976 թվականին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը՝ ստանալով հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

1976 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը աշխատել է Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1977 թվականի ապրիլի 1-ից ընդունվել է աշխատանքի Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ջոկատավար, իսկ նույն թվականի սեպտեմբերի 1-ից՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում անընդմեջ աշխատել է մինչև 2009 թվականի սեպտեմբերի 1-ը, հետո տեղափոխվել Ստեփանակերտի թիվ 11 դպրոցը, որտեղ էլ աշխատում է առ այսօր:

Երկար տարիներ եղել է թիվ 2 միջնակարգ դպրոցի գրքասերների ընկերության նախագահ, մանկավարժական խորհրդի քարտուղար, խմբագրել է «Մանկավարժ» պատի թերթը: 1992-2004թթ. ղեկավարել է դպրոցի հայոց լեզվի և գրականության առարկայական հանձնաժողովի աշխատանքները, իսկ 2010 թվականից ղեկավարում է քաղաքային մասնախմբի աշխատանքները: Աշխատանքային գործունեության ընթացքում պարգևատրվել է մի շարք պատվոգրերով:

1986 թվականին Ի. Սարինյանն արժանացել է կառավարական բարձր պարգևի՝ Աշխատանքային փառքի 3-րդ աստիճանի շքանշանի:

1991թ. նոյեմբերին ժողովրդական կրթության Ստեփանակերտի քաղաքային բաժնի ուսումնական կաբինետի մեթոդական խորհուրդը ընդհանրացրել է նրա մանկավարժական աշխատանքի փորձը: Ուսուցիչների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներում կարդացել է դասախոսություններ և վարել սեմինարներ:

2005թ. ընդգրկվել է ԼՂՀ ԿՄՍ նախարարությանը կից ստեղծված հայոց լեզվի և գրականության գիտամեթոդական խորհրդի կազմում: Այժմ ԼՂՀ ԿԳ նախարարության ուսուցիչների որակավորման տարակարգեր շնորհող հանձնաժողովի անդամ է:

2005թ. հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի կապակցությամբ նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

2009թ. մասնակցել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացներին և անցել մասնագիտական գիտելիքների և կարողությունների ստուգում:

2014թ. մասնակցել է ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հանրակրթական ուսումնական հաստատության արտեստավորման ենթակա ուսուցիչների համար իրականացված վերապատրաստման դասընթացին:

Նրա աշակերտները մասնակցում են տարաբնույթ ստեղծագործական մրցույթների, օլիմպիադաների՝ նվաճելով մրցանակային տեղեր: 2016թ. նրա աշակերտուհին՝ Մանե Սարգսյանը, հայոց լեզվից կազմակերպված օլիմպիադայի հանրապետական փուլում գրավել է առաջին տեղը՝ արժանանալով ՀՀ ԿԳՆ առաջին կարգի դիպլոմի:

Ի. Սարինյանը բազմիցս կազմակերպել է դպրոցական և քաղաքային բաց դասեր: Կազմակերպել է դաս-միջոցառումներ՝ «Ոսկեղենիկ մեր մայրենին», «Իմ հայրենի Ստեփանակերտ», «Սիրելի ուսուցիչ», «Հայրենյաց պաշտպան», «Մայիսյան եռատոն», «Մուրացան հայրենասերը» և այլն:

2014թ. նրան շնորհվել է ուսուցիչների որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

2015թ. դեկտեմբերին ԼՂՀ ԿԳՆ պետական տեսչության կողմից իրականացված համակողմանի ստուգման արդյունքներով նրա աշխատանքը գնահատվել է «գերազանց»:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցի պրակտիկայում ճանաչված լավագույն մանկավարժներից է **Ռոմելա Դադայանը:**

Ծնվել է 1951 թվականին, Ադր ԽՍՀ Շամախու շրջանի Մադրասա ավանում՝ ծառայողի ընտանիքում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ աշխատանքի է ընդունվել ծննդավայրի դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար: 1969թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, 1975թ. ավարտել նույն ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը:

1973 թվականից ապրում է Լեռնային Ղարաբաղում: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի աշխատել է Չայլվի միջնակարգ դպրոցում, հետո՝ Ստեփանակերտի թիվ 4 մսուր-մանկապարտեզում, օժանդակ գիշերօթիկ դպրոցում:

1979 թվականից աշխատել է թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես արտադասարանական աշխատանքների կազմակերպիչ: 1988 թվականից դպրոցի փոխտնօրենն է: 1994թ. մարտ ամսից նշանակվել է նույն դպրոցի տնօրեն, աշխատել մինչև 2015թ. մայիսի 21-ը: Ռ. Դադայանի ղեկավարման տարիներին կառուցվել են դպրոցի երկու նոր մասնաշենքերը:

Հեղինակ է «Ազդականչը՝ 13» և «Իմ հավերժող կրթօջախ» գրքույկների, «Հայոց լեզու և գրականություն» (2007) և «Հայոց լեզու» (2013) ուսումնամեթոդական ձեռնարկների համահեղինակ է:

Ունի մանկավարժական գործունեության 44 տարվա ստաժ:

2005թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

2005թ. «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ է:

Ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի 4-րդ, 5-րդ և 6-րդ գումարումների պատգամավոր:

Պարգևատրվել է ԼՂՀ ԿԳ նախարարության և քաղաքապետարանի պատվոգրերով, «Արցախի Հանրապետության 20-ամյակ» հուշամեդալով, «Վարչապետի հուշամեդալով», «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Հարուստ կենսափորձով, իր գործին նվիրյալ մանկավարժ է **Լյուդմիլա Շաքարյանը:** Ծնվել է 1956թ. Ասկերանի շրջանի Սեյդիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղում մանկավարժների ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ութամյա դպրոցում, այնուհետև գերազանց գնահատականներով ավարտել Խնձրիստանի միջնակարգ դպրոցը և ուսումը շարունակել ԵՊՀ քիմիական ֆակուլտետում: Այն ավարտել է 1978 թվականին և աշխատանքի անցել շրջանի Կարմիր գյուղի ութամյա դպրոցում որպես քիմիա-կենսաբանության ուսուցչուհի:

1979թ. նոյեմբերին նշանակվել է Բալուջայի միջնակարգ դպրոցի արտադասարանական աշխատանքների գծով կազմակերպիչ և միաժամանակ Մեհտիշենի 8-ամյա դպրոցի քիմիայի ու կենսաբանության ուսուցչուհի:

1991-1992 ուս.տարում համատեղության կարգով աշխատել է նաև Խնածախի

միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի:

1992թ. դեկտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան թիվ 7 դպրոցում:

Աշխատած դպրոցներում ղեկավարել է քիմիա-կենսաբանության մասնախումբը: Մեթոդական, մասնագիտական օգնություն է ցույց տվել մասնախմբի անդամներին:

2006թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել է Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն:

2000թ. ապրիլի 13-14-ին մասնակցել է հանրապետական առաջին մանկավարժական ընթերցումներին և ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել պատվոգրի:

«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլի արդյունքներով լավագույն ուսուցիչ ճանաչվելու համար Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից 2000թ. հոկտեմբերի 5-ին պարգևատրվել է պատվոգրով:

2004-2005 ուս.տարում կազմակերպված «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի ժամանակ արժանացել է մրցանակի և քաղաքային փուլում ճանաչվել քիմիայի լավագույն ուսուցիչ:

Նույն թվականին աշխատանքում ունեցած հաջողությունների, հայոց գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ ԼՂՀ կառավարության կողմից պարգևատրվել է պատվոգրով:

2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Վազգեն Սարգսյան: Ծնվել է 1931թ. Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղում: Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և ավարտելով 1955թ., անցել մանկավարժական աշխատանքի:

1955-1957թթ. աշխատել է Դաշքեսանի շրջանի Վարդաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1957-1967թթ. աշխատել է Խանաբադի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, 1967-1974թթ. աշխատել է Ասկերանի շրջանի կրթության բաժնում՝ որպես դպրոցական տեսուչ:

1978թ.՝ Ստեփանակերտի շրջանի կրթության բաժնի վարիչ: 1978-1989թթ.՝ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի տնօրեն:

1989-1996թթ. աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում, որպես դպրոցի տնօրեն:

ԱդրԽՍՀ լուսավորության գերազանցիկ է: 2006թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Էդուարդ Մուսայելյան: Ծնվել է 1943թ. Շուշիի շրջանի Հին շեն գյուղում, ուսուցչի ընտանիքում: Հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը ավարտել է գերազանցությամբ, ընդունվել Բաքվի մանկավարժական ինստիտուտի կենսաբանության և քիմիայի ֆակուլտետը և ավարտել 1961-1962 ուս.տարում:

Մուսայելյանի աշխատանքային գործունեությունը սկսվել է 1962թ.: Նույն տարվա սեպտեմբերից մինչև 1963թ. օգոստոս աշխատել է ԼՂՀ ներքին գործերի համակարգում՝ որպես բուժակ:

1962-1966թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքում:

1966-1975թթ. մարզային համաճարակային կայանում աշխատել է որպես սանիտարական բժշկի օգնական, 1976թ.՝ Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում որպես անատոմիա և ֆիզիոլոգիայի դասատու, 1975-1979թթ. արհմիությունների մարզային խորհրդում բուժաշխատող, 1978-1984թթ.՝ բժշկական ու-

սումնարանում ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրեն, 1989-1994թթ.՝ տնօրեն, 2004թ. առայսօր աշխատում է բժշկական ուսումնարանում՝ որպես փոխտնօրեն: 2006թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Նինա Ղուկասյան: Ծնվել է 1931թ. Բաքու քաղաքում: Միջնակարգն ավարտել է Արմենիքենդի հայկական դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետում (1953թ.), որպես անգլերենի ուսուցիչ աշխատել է Ստեփանակերտի թիվ 1,2,8 միջնակարգ դպրոցներում:

Աշխատել է նաև որպես փոխտնօրեն թիվ 8 միջնակարգ դպրոցում: Նշված դպրոցում աշխատել է մինչև թոշակի անցնելը (1989թ.): Աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես հմուտ մանկավարժ և մասնագետ:

Պարգևատրվել է մի շարք պատվոգրերով: 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ռիմա Խաչյան: Ծնվել է 1931թ. ԱդրԽՍՀ Զաքաթալա քաղաքում: Միջնակարգն ավարտելուց հետո (ռուսական դպրոցում) ընդունվել է Բաքվի Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը:

Բուհն ավարտելուց հետո մասնագիտությամբ աշխատել է Ստեփանակերտի թիվ 3,4,,8 դպրոցներում (1950-1973թթ.): 1970-1973թթ. թիվ 8 միջնակարգ դպրոցի տնօրեն էր:

1973-1992թթ. զբաղեցրել է ԼՂ մարզգործկոմի քարտուղարի պաշտոնը:

Բազմիցս խրախուսվել ու պարգևատրվել է պատվոգրերով: 2006 թվականին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Սերգեյ Խաչատրյան: Ծնվել է 1933թ. Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում: Հայրենի գյուղի միջնակարգն ավարտելուց հետո (1950թ.) ընդունվել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը և այն ավարտել 1956թ.: Մանկավարժական աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Իր աշխատանքային բազմամյա գործունեության ընթացքում նա սեր է առաջացրել աշակերտների մեջ դեպի ֆիզկուլտուրան ու սպորտը: Նրա սաներից շատերը դարձել են նշանավոր մարզիկներ և Արցախյան բանակի արժանի զինվորներ:

Տարիների նրա անբասիր աշխատանքը բարձր է գնահատվել, 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լազր Թումանյան: Ծնվել է 1931թ. Գորիսում: Ավարտելով միջնակարգ դպրոցը (1949թ.), ընդունվում է Երևանի պետական համալսարանի մեխմաթ ֆակուլտետը և ավարտում (1955թ.) առաջին կարգի դիպլոմով:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1965 թվականից: Աշխատել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Թումանյանը մի շարք գրքերի հեղինակ է: Նրա «Երկրաչափության կառուցման խնդիրներ հարթության վրա» գիրքը լույս է տեսել 1977 թվականին: 1996-ին՝ «Երկրաչափական խնդիրներ և դրանց լուծումները», 1997թ. «Դպրոցական մաթեմատիկայի հիմնական բանաձևեր, նրանց հետևանքները և որոշ հարցեր», 2002թ. լույս է տեսել «Կառուցման խնդիրներ և լուծման տարբեր եղանակներ» գիրքը, 2005թ. «Նույն խնդիրների լուծման տարբեր մոտեցումներ» գիրքը:

2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Բահատուր Դավթյան: Ծնվել է 1937թ. Հադրութի շրջանի Արփագյադուկ (Քարինգ) գյուղում: Նկատի ունենալով, որ Բ. Դավթյանի կենսագրականը ներկայացվել է աշխատության 4-րդ գլխի 1-ին բաժնում, այստեղ նշենք, որ նրա բազմամյա

վաստակը ըստ արժանվույն է գնահատվել, 2006թ. արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Արկադի Գրիգորյան: Ծնվել է 1933թ. Ասկերանի շրջանի Բալուջա (Այգեստան) գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում:

1957թ. ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը: 1957-1969թթ. աշխատել է Այգեստանի միջնակարգ դպրոցում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ:

1969-1974թթ. աշխատել է Ասկերանի կրթության բաժնում՝ որպես մեթոդկաբինետի վարիչ, դպրոցական տեսուչ:

1984-1995թթ. աշխատել է Այգեստանի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն: Ադր ՍՍՀ լուսավորության գերազանցիկ է, 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Բորիս Բաղրյան: Ծնվել է 1930թ. Ստեփանակերտի (այժմ Ասկերանի) շրջանի Ավետարանոց (Չանախչի) գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը (1957թ.) և անցել մանկավարժական աշխատանքի հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում:

Աշխատանքային գործունեությունը սկսել է հայրենի Չանախչի (Ավետարանոց) գյուղի դպրոցում: Այնուհետև աշխատել է Խնածախի, Ստեփանակերտի, Կրկժան թաղամասի դպրոցներում: Հիմնական աշխատանքային գործունեությունը ծավալել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որտեղ աշխատել է նաև որպես ուսմասվար և տնօրեն: Աշխատել է նաև Ստեփանակերտի թիվ 9 և թիվ 10 միջնակարգ դպրոցներում: Եղել է նաև Ստեփանակերտի քաղաքապետարանի «Ստեփանակերտ» թերթի խմբագիր ու տեղակալ:

Ըստ արժանվույն է գնահատվել նրա բազմամյա մանկավարժական գործունեությունը, 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ռոզալյա Բաղդասարյան: Ծնվել է 1929թ. Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է մայրաքաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը:

1950-1956թթ. այնուհետև նաև 1961-1963թթ. աշխատել է որպես մարզժողկրթբաժնի մեթոդիստ, 1956-1961թթ. ռուսաց լեզու և գրականություն է դասավանդել Երևանի թիվ 61, իսկ 1964-1972թթ.՝ Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցներում: Միաժամանակ 1964-1966թթ. եղել է քաղժողկրթբաժնի դպրոցական տեսուչ, իսկ 1973-1976թթ.՝ Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցի տնօրեն:

1976-1990թթ. աշխատել է կուսակցության ԼՂ մարզկոմում:

Անբասիր աշխատանքի համար արժանացել է կառավարական պարգևների, իսկ 2006 թվականին՝ ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Կոլյա Բաղդասարյան: Ծնվել է 1934թ. Ասկերանի շրջանի Սարդարաշեն գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվում է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը և ավարտելուց հետո (1958), որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատում շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցում:

1963թ. եղել է Սարդարաշենի դպրոցի փոխտնօրեն, 1964-1980թթ.՝ Ասկերանի շրջժողկրթբաժնի տեսուչ: 1980-1986թթ. որակավորման ինստիտուտում տեսուչ, իսկ 1986-2000թթ.՝ հայոց լեզվի կաբինետի վարիչ:

Հավուր պատշաճի է գնահատվել նրա բեղմնավոր մանկավարժական գործունեությունը, 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ռիմա Բազինովա: Ծնվել է 1931թ. ԱդրԽՍՀ Աղստաֆա քաղաքում: Տեղի ռուսական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության բաժինը: Բուհն ավարտելուց հետո 1955թ. ռուսաց լեզու և գրականություն է դասավանդել Ինքնավար հանրապետության Ուզունթալայի միջնակարգ, իսկ 1956-1957թթ.՝ Հադրութի միջնակարգ դպրոցներում: Այնուհետև մինչև 1992թ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում, 1977-1987թթ. նույն դպրոցի փոխտնօրենն էր: 1993-1997թթ. ռուսաց լեզու և գրականություն է դասավանդել ԱրՊՀ-ում, 1997-1999թթ.՝ Մոսկվայի հումանիտար համալսարանի Ստեփանակերտի ներկայացուցչությունում, 1997թ. առ այսօր դասավանդում է Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում:

Բազմամյա մանկավարժական վաստակի համար 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Նիկոլայ Բաբայան: Ծնվել է 1935թ. Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում: Հայրենի գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետը և ավարտում 1957թ.:

1957թ. աշխատել է հայրենի գյուղում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ, որտեղից էլ զորակոչվել է խորհրդային բանակ: 1966թ. նշանակվել է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի քիմիայի կաբինետի վարիչ:

1970թ. տեղափոխվել է մարզժողկրթբաժին և աշխատել որպես դպրոցական տեսուչ: Մինչև 1993թ. աշխատել է ԼՂՀ ԿՄՍ նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ, հանրապետական օլիմպիադաներին մասնակցած նրա 23 աշակերտներից 16-ը գրավել են մրցանակային տեղեր, իսկ 4-ը մասնակցել է համամիութենական օլիմպիադային և գրավել 2-րդ տեղը:

1987թ. արժանացել է ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի:

2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Գրետա Ավետիսյան: Ծնվել է 1936թ. Ասկերանի շրջանի Կարմիր գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության բաժինը և ավարտելուց հետո (1959) աշխատանքի անցնում Շուշիի շրջանի Հին շենի Կիրովի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի:

1965-1968թթ. դասավանդել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1968-1998թթ.՝ Ստեփանակեպտի Ե. Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում: Եղել է Ստեփանակերտի քիմիա-կենսաբանության առարկայական հանձնաժողովի նախագահ և միաժամանակ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կողմից առաջադրվել է որպես մեթոդիստ հասարակական հիմունքներով, որի մոտ ինստիտուտի շատ ուսանողներ անց են կացրել իրենց մանկավարժական պրակտիկան:

Մինչև թոշակի անցնելը աշխատել է մայրաքաղաքի դպրոցներում: Լավագույն աշխատանքի համար պարգևատրվել է պատվոգրերով, իսկ 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ազնիվ Աղաբեկյան: Ծնվել է 1917թ. Ստեփանակերտի շրջանի (այժմ Ասկերանի) Ակնաղբյուր գյուղում: Միջնակարգն ավարտել է Բաքվի թիվ 8 դպրոցում, իսկ 1936թ.՝ Բաքվի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը:

1937թ. Ստեփանակերտի թիվ 4 դպրոցում սկսել է մանկավարժական գործունեությունը, այնուհետև տեղափոխվել Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպ-

րոցը և աշխատել է մինչև թոշակի անցնելը:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում նա ունեցել է իր սաների գործունեությունը կազմակերպելու կարողություն, սեր է ներարկել դեպի իր դասավանդած առարկան:

Անբասիր աշխատանքի համար ԼՂ մարզգործկոմի կրթության բաժնի կողմից պարգևատրվել է պատվոգրերով ու գովասանագրերով:

2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Զոյա Իսկանդարյան: Ծնվել է 1948թ. Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: Գերազանցությամբ ավարտել է միջնակարգը, այնուհետև՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1974թ. առայսօր աշխատում է Հաթերքի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, իսկ 1994 թվականից նույն դպրոցի տնօրենն է: Լավ է տիրապետում առարկային. նրա աշակերտներից շատերը հաջողությամբ հանդես են եկել առարկայական օլիմպիադաներում, ստեղծագործական շարադրությունների մրցույթներում և գրավել առաջնակարգ տեղեր: Ենթաշրջանի փնջի նախագահն է, մեծ աշխատանք է տանում երիտասարդ մանկավարժների գաղափարական մեթոդմանկավարժական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Զ. Իսկանդարյանը ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացվել է խրախուսանքի, իսկ 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Վազգեն Գասպարյան: Ծնվել է 1934թ. Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո 1960թ. ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

Որպես ուսուցիչ աշխատել է Ասկերանի, Խանաբադի, Խրամորթի, Ստեփանակերտի թիվ 1,9 և 8 միջնակարգ դպրոցներում, վերջին երկու դպրոցներում՝ նաև որպես փոխտնօրեն, իսկ 1969-1977թթ.՝ Ասկերանի շրջժողկրթբաժնի, 1995-2006թթ.՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՄՍ բաժինում՝ որպես մասնագետ: Գերազանց տիրապետում է առարկային, այն մատուցում գիտականորեն և հետաքրքիր հնարքներով: Հեղինակ է 4-րդ, 5-րդ, 8-րդ դասարանների գիտամեթոդական օժանդակ ձեռնարկների: Մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Վ. Գասպարյանին շնորհվել է (2006թ) ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Էլմիրա Գաբրիելյան: Ծնվել է 1948թ. Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում:

1970թ. առայսօր աշխատում է Բերդաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Դասապրոցեսը կազմակերպում է նորագույն պահանջներով, նրա աշակերտները հաջողությամբ հանդես են եկել առարկայական օլիմպիադաներում, ստեղծագործական շարադրությունների մրցույթներում և գրավել առաջնակարգ տեղեր: «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի հանրապետական փուլի «Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություն զարգացնելու» անվանակարգում հաղթող է ճանաչվել: Մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար է. Գաբրիելյանը 2006թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ասկերանի շրջանի կրթության բնագավառում սիրված ու արժանիորեն հարգված մաթեմատիկայի ուսուցիչ էր, (25 տարի շարունակ դպրոցի տնօրեն:

Արմո Մկրտչյան: Ծնվել է 1946թ. հոկտեմբերի 25-ին, Խրամորթ գյուղում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը (1963թ.), ուսումը շարունակել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում այն գերազանցությամբ ավարտել (1967թ.) ու անցել մանկավարժական աշխատանքի Շամխորի շրջանի Նյուզգեր գյուղի հայկական ութամյա դպրոցում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Աշխատանքին զուգահեռ սովորել և ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը:

1970թ. աշխատել է Խրամորթի միջնակարգ դպրոցում՝ որպես լաբորանտ և մաթեմատիկայի ուսուցիչ:

1976թ. նշանակվել է Խրամորթի միջնակարգ դպրոցի ուսմասվար:

1985թ. սեպտեմբերին նշանակվել է դպրոցի տնօրեն, միաժամանակ դասավանդել մաթեմատիկա:

Ակտիվորեն մասնակցել է Արցախյան շարժմանը: 1992 թվականի հունվարի 31-ին, երբ թուրք ազերիները մտան գյուղ, ավերեցին գյուղն ու դպրոցը, Արմո Մկրտչյանի նախաձեռնությամբ ուսումնական պարապմունքները կազմակերպվեցին Խոջալու բնակավայրում:

Սկզբում պարապմունքները կազմակերպել էր այժմյան զինվորական հոսպիտալում, այնուհետև Խոջալուի բնակելի շենքում: 1997թ. Խրամորթի դպրոցի շենքը վերանորոգելուց հետո գյուղի բնակիչների մի մասը տեղափոխվեց, և պարապմունքներն սկսվեցին վերանորոգված դպրոցում:

Արմո Մկրտչյանի ջանքերով Խրամորթի միջնակարգ դպրոցին կից բացվեցին մասնաճյուղ դպրոցներ Ուղտասարում, Աղդամի (Ակնա) տարածքում, Տիգրանակերտում, Փառուխում և Արմենակավանում:

Երկարամյա անբասիր մանկավարժական աշխատանքի համար պարգևատրվել է կառավարական պատվոգրերով, իսկ 2006թ. արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Էվելինա Ոսկանյան: Ծնվել է 1941թ. Մարտունու շրջանի Ղավախան գյուղում: 1960-1961 ուս. տարում աշխատանքի է ընդունվել և առայսօր աշխատում է Մարտունու թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: 1968թ. ավարտել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի տարրական բաժինը: 1981թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով: 1986թ. արժանացել է «Մեթոդիստ-ուսուցիչ» կոչման: 2005-ին նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Գեորգի Ալավերդյան: Ծնվել է 1928թ. Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղում: 1953թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Հադրութի միջնակարգ դպրոցում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ: Արժանացել է ԱդրՀՍՀ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, «Ուսուցիչ-մեթոդիստ» կոչման, 2005-ին՝ «ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ» կոչման:

Ռոմելա Ավագյան: Ծնվել է 1936թ. Ստեփանակերտում: 1943թ. ընդունվել է քաղաքի թիվ 3 ռուսական միջնակարգ դպրոցը և 1953-ին ավարտել այն: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և 1958-ին ավարտել ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչի որակավորումով: 1958թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 3 դպրոցում՝ որպես դասվար, ուր աշխատել է մինչև 1960թ. սեպտեմբերը: 1960-1998թթ.

աշխատել է թիվ 8 դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի, իսկ 1983-1993թթ. եղել է նույն դպրոցի ուսմասվարը:

1991թ. սեպտեմբերից աշխատում է Ստեփանակերտի «Էրուդիտ» վարժարանում՝ որպես ուսմասվար և մաթեմատիկայի ուսուցչուհի:

Ռաֆայել Գասպարյան: Ծնվել է 1931թ. Ստեփանակերտում: 1951թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1952-ին ընդունվել և 1956-ին ավարտել է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի և մաթեմատիկայի բաժինը: 1956-ին ավարտելով ինստիտուտը՝ աշխատանքի է անցել Հադրութում: 1958-ին տեղափոխվել է Ստեփանակերտ և աշխատանքի անցել թիվ 3 դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ և ուսմասվար: 1977 թվականից աշխատել է թիվ 8 դպրոցում՝ որպես ուսուցիչ, հետագայում՝ ուսմասվար: 1994 թվականից աշխատանքի է անցել Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ և առայսօր աշխատում է այնտեղ:

Ռաֆայել Գասպարյանը առանց ջանք ու եռանդ խնայելու տարիներ շարունակ կրթել ու դաստիարակել է մատաղ սերունդներին՝ անշահախնդրորեն նվիրվելով իր աշխատանքին, որի համար 2005թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Սվետլանա Գևորգյան: Ծնվել է 1940թ. Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1957թ. ընդունվել է Երևանի պտեհամալսարանի օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն բաժինը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես անգլերեն լեզվի ուսուցիչ: Առայսօր աշխատում է նույն դպրոցում:

Կարողանում է սովորողների մոտ սեր և հետաքրքրություն առաջացնել ուսումնական առարկայի նկատմամբ: Նրա սաներից տասնյակ շրջանավարտներ ընտրել են սիրած ուսուցչուհու մասնագիտությունը:

2000 և 2001 թվականներին ճանաչվել է շրջանի տարվա լավագույն ուսուցիչ, իսկ 2005-ին արժանացել հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչման:

Վիգեն Հայրապետյան: Ծնվել է 1933թ. Ստեփանակերտ քաղաքում: 1941-1951թթ. սովորել է թիվ 3 միջնակարգ դպրոցում: 1952թ. ընդունվել և 1965-ին ավարտել է Երևանի Ժդանովի անվան ռուսական պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետը: 1956թ. աշխատել է Շուշիի ռուսական միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1959-ին տեղափոխվել է Ստեփանակերտ, 1959-1961թթ. աշխատել է թիվ 5 միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: 1961թ. աշխատանքի է անցել նորաստեղծ երկարօրյա դպրոցում՝ որպես ուսուցիչ, հետագայում ուսմասվար: 1964թ. տեղափոխվել է թիվ 8 դպրոց՝ որպես ուսուցիչ և ուսմասվար: 1976թ. նշանակվել է թիվ 8 դպրոցի տնօրեն՝ 1980-ին ժողովրդական կրթության քաղբաժնի վարիչ, 1985թ.՝ ժողովրդական կրթության մարզային բաժնի վարիչ և նույն պաշտոնում աշխատել մինչև թոշակի անցնելը: 2005թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Մարտունու շրջանի կրթական գործի նշանավոր գործիչներից է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Էմիլ Բալայանը:** Ծնվել է Մարտունու շրջանի Աշան գյուղում 1938թ. նոյեմբերի 27-ին, մանկավարժի ընտանիքում: Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1954թ.), ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխմաթ ֆակուլտետը, երկրորդ կուրսից տեղափոխվել Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և ավարտել

1959թ. ու անցել մանկավարժական աշխատանքի շրջանի դպրոցներում:

Սկզբում որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ աշխատել է Եմիշճանի, Հաղորտու դպրոցներում, այնուհետև հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն: Շուրջ 10 տարի (1978-1988թթ.) ղեկավարել է Մարտունու թիվ 1 միջնակարգ դպրոցը:

Երկարամյա մանկավարժական բեղմնավոր գործունեության համար արժանացել է Ավագ ուսուցչի պատվավոր կոչման (1978), Ադր ԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման (1978):

Նրա աշխատանքային փորձը ուսումնասիրվել և ընդհանրացվել է ԼՂԻՄ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի կողմից՝ 1976-1986 թվականներին:

Հայրենասեր մանկավարժը ակտիվորեն մասնակցել է Արցախյան շարժմանը, որի համար 9 ամիս տանջանքի է ենթարկվել Բաքվի բանտերում: Ինչպես իր հուշերում[337] պատմում է է. Բալայանը, հրաշքով՝ փոխանակությամբ ազատվել է բանտից և շարունակել մանկավարժական գործունեությունը Աշանի դպրոցում, 2015-2016 ուս.տարում՝ «Գրիգոր Նարեկացի» համալսարանում, որպես մաթեմատիկայի դասախոս:

Նրա երկարամյա մանկավարժական գործունեությունը ըստ արժանվույն գնահատվել է ԿԳ նախարարության կողմից, արժանացել մի շարք պատվոգրերի, ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (2008-2016թթ.) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով շուրջ 60 ուսուցիչներ արժանացել են ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Համառոտակի ներկայացնենք նրանց կենսագրականը:

Միշա Միքայելյան: Ծնվել է 1932թ. Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում:

Սկզբում սովորել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, ապա տեղափոխվել Հարգոմեր և 1953 թվականին ավարտել տեղի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը և ավարտել 1958թ.: Սովորելու տարիներին, սկսած 3-րդ կուրսից, մաթեմատիկա է դասավանդել Երևանի թիվ 41 դպրոցում:

Համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Ստեփանակերտի շրջանի Շոշի միջնակարգ դպրոցում: 1959թ. հունվարից տեղափոխվել է Հարգոմերի միջնակարգ դպրոցը, իսկ սեպտեմբերից՝ Վաղուհասի: 15 տարի եղել է Վաղուհասի դպրոցի տնօրենը: 1974թ. նշանակվել է Խնկավանի ութնամյա դպրոցի տնօրեն և մաթեմատիկայի ուսուցիչ, որտեղ 16 տարի աշխատել է միայն տնօրեն: Այժմ էլ շարունակում է մաթեմատիկա դասավանդել նույն դպրոցում:

Մ. Միքայելյանը հաճախակի հանդես է եկել շրջանային և հանրապետական մանկավարժական ընթերցումներում: Մշտապես տպագրվել է «Մաթեմատիկա վ շկոլե» և «Ֆիզիկան և մաթեմատիկան դպրոցում» ամսագրերում, ունի 40-ից ավելի հոդվածներ խնդիրների և վարժությունների լուծման վերաբերյալ: Մեթոդամանկավարժական թեմաներով և առաջարկություններով հանդես է եկել նաև շրջանային և հանրապետական պարբերական մամուլում: Երկար տարիներ եղել է կրթության շրջանային բաժնի արտահաստիքային տեսուչ և մեթոդիստ:

Մանկավարժության ասպարեզում երկար տարիների բեղմնավոր աշխատանքի համար արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստ» կոչման, իսկ 2008թ.՝ ԼՂՀ վաս-

տակավոր մանկավարժի կոչման:

Սեդա Փիրումյան: Ծնվել է 1924թ. Ասկերանի շրջանի Ավետարանոց (Չանախչի) գյուղում:

1942թ. ավարտել է Բաքվի թիվ 9 միջնակարգ դպրոցը: 1950թ. ընդունվել և 1952թ. ավարտել է անգլերենի դասընթացները, ապա ընդունվել Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի անգլերենի բաժինը (հեռակա), ստացել միջնակարգ դպրոցի անգլերեն ուսուցչի որակավորումը:

1953-1981թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես անգլերենի ուսուցչուհի: Համալսարանի բացման առաջին իսկ օրվանից նրան հրավիրել են աշխատելու որպես անգլերենի ուսուցչուհի:

Աշխատանքային տարիների ընթացքում Սեդա Փիրումյանը թողարկել է բազմաթիվ շրջանավարտներ: Նրա առաջավոր փորձը ուսումնասիրվել և տարածվել է օտար լեզվի ուսուցիչների շրջանում:

Սեդա Փիրումյանը 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Վարդանուշ Կասյան: Ծնվել է 1925թ. հոկտեմբերի 15-ին, Շուշիի շրջանի Հին շեն գյուղում:

Տեղի միջնակարգն ավարտելուց հետո 1940թ. ընդունվել է Շուշիի մանկավարժական տեխնիկումը: Ավարտելուց հետո 1943թ. սեպտեմբերից մինչև 1991թ. մայիսի 15-ը աշխատել է Շուշիի շրջանի Եղցահողի և Հինշենի միջնակարգ դպրոցներում՝ որպես տարրական դասարանների դասվար:

1992-1995թթ. աշխատել է Հին շենի միջնակարգ դպրոցում, որպես տարրական դասարանների դասվար:

ԼՂՀ Նախագահի հրամանագրով 2008թ. հոկտեմբերի 4-ին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Անդրանիկ Աբրահամյան: Ծնվել է 1933թ. Հադրութի շրջանի Արփագետիկ գյուղում (նրա գործունեության մասին նշվել է նախորդ բաժնում):

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի 7-ամյա դպրոցում: 1952թ. ավարտել է Հադրութի շրջանի Հին Թաղերի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտը:

1954թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 10-ը աշխատել է Արևշատի 7-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1959թ. ընդունվել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի բանասիրական ֆակուլտետը և այն ավարտել 1964 թվականին: Ունի նաև կուսակցական բարձրագույն կրթություն:

1964 թվականից մինչև 1973 թվականը աշխատել է կուսակցության Հադրութի շրջկոմում՝ որպես հրահանգիչ և կազմբաժնի վարիչ:

1973թ. մարտից մինչև 1981թ. օգոստոսը աշխատել է կրթության շրջանային բաժնի վարիչ:

1981թ. մինչև 1987թ. աշխատել է Հադրութի ռադիոհաղորդումների խմբագիր-կազմակերպիչ:

1989թ. մինչև 2005թ. աշխատել է կրթության, մշակույթի և սպորտի շրջանային բաժնի վարիչ:

Ակտիվորեն մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը և մարտական գործողություններին: Եղել է շրջանային խորհրդի անդամ, պատերազմական տարիներին ստեղծված էվակուացիոն խմբի նախագահ: Բռնագաղթի ենթարկված Արևշատի, Բանաձորի, Առաքելի, Խանձաձորի, Այգեստանի երեխաների ուսուցումը (1991-

1993թթ.) կազմակերպել է Հադրութ քաղաքում:

1977թ. մանկավարժական անբասիր աշխատանքի համար արժանացել է Ադր ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի:

2001թ. ճանաչվել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

2003թ. պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

2008թ. հոկտեմբերի 4-ի հրամանագրով նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Ռիմա Ամիրջանյան: Ծնվել է 1936թ. Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում: 1937թ. նրանց ընտանիքը տեղափոխվեց Շուշի քաղաք, որտեղ միջնակարգ կրթություն է ստացել ինտերնացիոնալ դպրոցում: Ավարտելով դպրոցը, ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1960 թվականին գերազանցությամբ ավարտելով ինստիտուտը, աշխատանքային գործունեությունը սկսել է Շուշիի թիվ 2 գիշերօթիկ նորաբաց դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի, ապա՝ փոխտնօրեն:

1974-1985 թվականներին մաթեմատիկա է դասավանդել Շուշիի մանկավարժական ուսումնարանում, ապա նորից տեղափոխվել Խ. Աբովյանի անվան դպրոցը և աշխատել որպես փոխտնօրեն:

1987 թվականի սեպտեմբերից աշխատել է Շուշիի շրջժողկրթբաժնում, դպրոցական տեսչի պաշտոնում:

1988 թվականին շուշեցիները բռնագաղթեցին Ստեփանակերտ, որոնց թվում և թիվ 2 միջնակարգ դրպրոցը, որտեղ նորից նշանակվեց փոխտնօրեն:

1992 թվականին Շուշիի ազատագրումից հետո դպրոցը տեղափոխվեց հայրենի քաղաք, իսկ Ռ. Ամիրջանյանն անցավ կենսաթոշակի: Աշխատանքային գործունեության ժամանակ վարել է ակտիվ հասարակական-քաղաքական աշխատանք:

Ընտրվել է Շուշիի երկու գումարումների քաղաքային խորհրդի պատգամավոր և բազմիցս՝ ժողովրդական դատարանի ատենակալ:

Հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության համար պարգևատրվել է ԼՂԻՄ ժողկրթության խորհրդի «1973թ. Ադր ԽՍՀ սոցիալիստական մրցության հաղթող» կրծքանշանով և բազմաթիվ պատվոգրերով:

2008 թվականի հոկտեմբերի 4-ին Ռ. Աղաջանյանին շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Բազմավաստակ մանկավարժ **Նազիկ Նալբանդյանը** մեծ երախտիք ունի հանրապետության կրթական համակարգի զարգացման գործում: Նա ծնվել է 1949թ. սեպտեմբերի 27-ին, Մարտակերտի շրջանի Կիչան գյուղում, կոլտնտեսականի ընտանիքում:

1956-1961թթ. սովորել է Կիչանի 8-ամյա դպրոցում:

1961թ. տեղափոխվել է Շուշի, 1964-ին ավարտել տեղի թիվ 2 գիշերօթիկ դպրոցի 8-րդ դասարանը և նույն թվականին ընդունվել Շուշիի մանկավարժական տեխնիկումի դպրոցական բաժինը, որն էլ գերազանցությամբ ավարտել է 1968-ին:

1977թ. հեռակա կարգով ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը:

1968-1981թթ. դասավանդել է Շուշիի թիվ 2 գիշերօթիկ, 1981-1992թթ.՝ Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցներում:

1992-1994թթ. Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում աշխատել է որպես ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1994-

2001թթ.՝ տնօրեն, 2001-2009թթ. Մուրացանի անվան և 2009-2014թթ. Աբովյանի անվան դպրոցներում՝ որպես տնօրեն:

1991թ. օգոստոսին իր ջանքերով և կոլեկտիվի աջակցությամբ պահպանվել է 1988-ին Շուշիից Ստեփանակերտ տեղահանված՝ Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը:

1999թ. հոկտեմբերին մասնակցել է ՀՀ Ծաղկաձոր քաղաքում կազմակերպված միջազգային գիտաժողովի աշխատանքներին՝ լիագումար նիստում հանդես գալով «Կառավարման նոր մեթոդների և ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրման հիմնախնդիրները» թեմայով: Նրա կողմից արված առաջարկները, որոնք համահունչ էին բարեփոխվող դպրոցի հիմնախնդիրներին, ընդունվել են գիտաժողովի մասնակիցների կողմից:

2000-2003թթ. մասնակցել է «Բարեփոխվող դպրոց, ուսումնադաստիարակչական գործընթաց, նոր որակ» խորագրով կազմակերպված հանրապետական մանկավարժական ընթերցումներին, 2002թ. հուլիսի 23-25-ին՝ «Ղարաբաղի կանայք՝ հանուն խաղաղության և խաղաղ համակեցության» խորագրով գիտաժողովին:

21 տարի եղել է Շուշիի շրջանի 4 դպրոցների (Շուշիի Խ. Աբովյանի անվան, Մուրացանի անվան, Դանիել Ղազարյանի անվան, Քարին տակի) փնջային մեթոդմիավորման նախագահ:

Երեք անգամ (27.09.09թ., 08.05.02թ., 27.09.04թ.) պարգևատրվել է Շուշիի շրջվարչակազմի պատվոգրով (մանկավարժական ասպարեզում երկարամյա բեղմնավոր գործունեության համար), իսկ 2015-ին՝ շնորհակալագրով (մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած մեծ ավանդի, ինչպես նաև շրջանի հասարակական-քաղաքական կյանքում ծավալած ակտիվ գործունեության համար):

29.12.04թ. ԼՂՀ ԿՄՍ-ի կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթին մասնակցելու համար:

03.06.2005թ. ԼՂՀ կառավարության կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ աշխատանքում ձեռք բերած հաջողությունների համար, հայոց գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ:

Արժանացել է ՀՀ գրողների միության մրցանակին՝ որպես հրապարակախոս: 2008-ին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Հետագա տարիներին Ն. Նալբանդյանը պարգևատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պատվոգրով՝ մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, ինչպես նաև նախազորակոչային պատրաստությունների գործում ունեցած ներդրման համար, «ՀՀ զինված ուժերի 20 տարի» հոբելյանական մեդալով: ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրով՝ մայր կրթօջախ վերադառնալու 20-ամյակի և կրթության բնագավառում ակտիվ գործունեության համար:

2013թ. նոյեմբերին պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրով՝ դպրոցում Խ. Աբովյանի անվան թանգարանի մասնաճյուղ բացելու առիթով և մեծ լուսավորչի ժառանգությունը սերունդներին փոխանցելու համար:

ՀՀ ԿԳ նախարարության շնորհակալագրով՝ «Խ. Աբովյանն իմ կյանքում» խորագրով շարադրությունների մրցույթում՝ լավագույն աշխատանք ներկայացնելու համար:

ԼՂՀ վարչապետի մեդալով՝ ԼՂՀ-ին մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար:

80-ից ավելի մանկավարժական, մեթոդական, դաստիարակչական, հայրենասիրական, քաղաքական հոդվածների հեղինակ է:

Ռոմելա Թովմասյան: Ծնվել է 1949թ. օգոստոսի 25-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում:

Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելով 1966թ.՝ ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժինը:

1970թ. ավարտելով ինստիտուտը՝ աշխատանքի է անցել հայրենի գյուղում:

1973թ. տեղափոխվելով Ստեփանակերտ՝ աշխատել է ժողկրթության համակարգի համարյա բոլոր օղակներում՝ սկսած մանկապարտեզից, մինչև համալսարան:

1974-1976թթ. աշխատել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում՝ համատեղության կարգով աշխատելով նաև երեկոյան հեռակա դպրոցում:

1976-1993թթ. աշխատել է թիվ 2 դպրոցում՝ 1980 թվականից ղեկավարելով հայոց լեզվի և գրականության առարկայական հանձնաժողովը:

1993-1995թթ. քաղժողկրթբաժնում աշխատել է որպես տեսուչ՝ շարունակելով համատեղության կարգով աշխատել ԱրՊՀ տնտեսագիտական բաժնում՝ որպես հայոց լեզվի դասախոս: 1995թ. իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և սկսել դասավանդել թիվ 1 դպրոցում:

Իր գործունեության ընթացքում բազմիցս խրախուսվել է պատվոգրերով, 2012թ. արժանացել «Տաշիր» հիմնադրամի դրամական պարգևին:

2003թ. արժանացել է հանրապետության «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչման:

2006թ. պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն պարգևով՝ ոսկե հուշամեդալով:

2003-2012թթ. ղեկավարել է Ստեփանակերտ քաղաքի հայոց լեզվի և գրականության առարկայական մեթոդմիավորումը:

2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ասկերանի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ է **Զավեն Բեգլարյանը:** Ծնվել է 1957թ. սեպտեմբերի 2-ին, շրջանի Խանաբադ (այժմ՝ Խնապատ) գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցը և ուսումը շարունակել ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում: Սակայն ընտանեկան պայմանների հետ կապված, տեղափոխվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի նույն ֆակուլտետը, ավարտում 1974 թվականին ու անցնում մանկավարժական աշխատանքի:

1974 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը աշխատել է Քռասնու ութամյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1975 թվականի հունվարից մինչև ուսումնական տարվա վերջը աշխատել է Ստեփանակերտի հեռակա միջնակարգ դպրոցում՝ որպես կոնսուլտկետի վարիչ:

1975-1976թթ. ուս.տարում աշխատել է Բալուջայի (այժմ Այգեստան) միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

1976 թվականի սեպտեմբերից մինչև 1980 թվականի մարտը աշխատել է Խանաբադի միջնակարգ դպրոցում՝ ուսմասվարի, հետագայում տնօրենի պաշտոնում, մինչև կենսաթոշակի անցնելը:

Բեղուն ու նվիրված աշխատանքի համար Զ. Բեգլարյանը 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման, իսկ 2013թ. նրա ղեկավարած դպրոցը «Տարվա լավագույն դպրոց» մրցույթում, ուսուցման կաբինետային լավագույն համակարգ անվանակարգում հաղթող է ճանաչվել՝ արժանանալով նախարարության մրցանակին:

Վերա Խաչատրյան: Ծնվել է 1954թ., ունի բարձրագույն կրթություն, ռուսաց լեզվի և գրականության մասնագետ է: Ունի 40 տարվա մանկավարժական ստաժ:

1990թ. առ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 7 դպրոցում, որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

2000 թվականից հանդիսանում է քաղաքի հիմնական դպրոցների ռուսաց լեզվի և գրականության քաղաքային մեթոդմիավորման նախագահը:

Վ. Խաչատրյանը գերազանց տիրապետում է առարկային, դասապրոցեսը կազմակերպում է նորագույն մեթոդներով, բազմիցս կազմակերպել է համաքաղաքային ընդօրինակման դասեր և արժանացել բարձր գնահատականի:

Նա ակտիվորեն է մասնակցում քաղաքի հասարակական կյանքին՝ կազմակերպելով հետաքրքիր միջոցառումներ:

2000թ. «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլում ճանաչվել է ռուսաց լեզվի լավագույն ուսուցչուհի:

2005թ. ԿՄՍԶ կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ դպրոցականներին ռուսաց լեզվի առարկայական օլիմպիադայի քաղաքային փուլին լավ նախապատրաստելու համար:

2007թ. հոկտեմբերի 9-ին Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից պարգևատրվել է Ստեփանակերտի օրվա առթիվ:

2007-2008թթ. ուս.տարվա լավագույն մանկավարժական փորձի մրցույթի քաղաքային փուլում ճանաչվել է հաղթող և պարգևատրվել պատվոգրով:

2007-2008 ուս. տարվա «Լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի հանրապետական փուլում ճանաչվել է հաղթող «Աշակերտների մեջ առարկայի նկատմամբ հետաքրքրություն զարգացնելու կարողություն» անվանակարգում և ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից պարգևատրվել պատվոգրով և դրամական պարգևով:

2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Միքայել Գասպարյան: Ծնվել է 1922թ. Հադրութի շրջանի Հին Թաղեր գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1938 թվականին ընդունվել է Հադրութի մանկավարժական տեխնիկումը և ավարտել 1941-ին: 1941-1945 թվականներին մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմի ավարտից հետո վերադարձել է հայրենի գյուղ և սկսել դասավանդել գյուղի միջնակարգ դպրոցում: Մանկավարժական գործունեությանը զուգահեռ նա ուսանել է Ստեփանակերտի երկամյա ինստիտուտում, ապա Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության բաժնում: Միքայել Գասպարյանը հանրապետությունում պատմության լավագույն մասնագետներից է: Նրա սաներից շատերը ստացել են բարձրագույն կրթություն, դարձել բարձրակարգ մաս-

նագետներ, մանկավարժներ ու գիտնականներ:

2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Էլմիրա Ափանց: Ծնվել է 1941թ. Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը:

Էլմիրա Ափանցի մանկավարժական գործունեությունը սկսվել է 1966 թվականին, երբ աշխատանքի է անցել Մարտակերտի թիվ 2 դպրոցում՝ որպես դասվար:

1972 թվականին Էլմիրա Ափանցը արժանացել է լուսավորության գերազանցիկի կոչմանը:

Շուրջ 42 տարվա մանկավարժական գործունեության ընթացքում նա մնացել է որպես Մարտակերտի և հարակից գյուղերի տարրական մասի դասվարների խորհրդատուն՝ հայտնի իր մասնագիտական արհեստավարժությամբ, կազմակերպվածությամբ ու պահանջկոտությամբ:

Մանկավարժական ասպարեզում ցուցաբերած լավագույն աշխատանքի համար 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Օնիկ Ասրյան: Ծնվել է 1946թ. Մարտունու շրջանի Եմիշճան գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում: (Նրա մասին արդեն նշվել է սույն գրքի 2-րդ մասում):

Կրթության ոլորտում ունեցած ծանրակշիռ ավանդի համար բազմիցս պարգևատրվել է ժողկրթբաժնի, ԼՂՀ կառավարության, կրթության և գիտության նախարարության պատվոգրերով, իսկ 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Գուրգեն Հայրապետյան: Ծնվել է 1933թ. Շուշիի շրջանի Հին շեն գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում:

Գուրգեն Հայրապետյանը Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո (1955թ.) գործուղվել է ԼՂԻՄ: Տասնմեկ տարի Ստեփանակերտի թիվ 2 և թիվ 9 դպրոցներում աշխատել է որպես տնօրեն: Ֆիզիկայի բարձրակարգ մասնագետի ջանքերով թիվ 2 միջնակարգ դպրոցում ստեղծվել է ժամանակակից լաբորատորիա, ինչի շնորհիվ դպրոցը դարձել է հենակետային: Տարիներ շարունակ ֆիզիկայի ճանաչված մասնագետին է վստահվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի փորձուսուցման ղեկավարման աշխատանքը:

Խորհրդային տարիներին նրան շնորհվել են «Գերազանցիկ ուսուցիչ», «Ուսուցիչ-մեթոդիստ» կոչումները:

«20-րդ դարի լավագույն մանկավարժ» մրցույթի քաղաքային փուլի արդյունքներով ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ»:

Ուսուցիչների խորհրդակցություններում և մանկավարժական խորհրդի նիստերում նա մշտապես հանդես է եկել գիտամեթոդական զեկուցումներով: Գ. Հայրապետյանի աշակերտները հանրապետությունում և այլուր ճանաչված մասնագետներ են, գիտական աստիճան ու կոչում ունեցողներ: Մեծ է նրա ավանդը նաև Արցախյան ազատագրական շարժման մեջ:

Բարձր է գնահատելով բեղմնավոր մանկավարժական գործունեությունը,

2008թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լաուրա Ջիվանշիրյան: Ծնվել է 1947թ. Ասկերանի շրջանի Վարդաձոր (Փիրջամալ) գյուղում: Ավարտել է (1969թ.) Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետը:

Լաուրա Ջիվանշիրյանի մանկավարժական գործունեությունը սկսվել է 1969 թվականից, երբ սկսել է դասավանդել Մարտունու միջնակարգ դպրոցում: 1971-1972 ուսումնական տարում դասավանդել է Ճարտարի (Ղուզե Կալեր) միջնակարգ դպրոցում, 1972-1973 ուս.տարուց մինչև 1977-1978 ուս.տարիները աշխատել է Մաճակալաշենի ութամյա դպրոցում՝ համատեղելով ուսումնական մասի վարիչի և քիմիայի կենսաբանության ուսուցչուհու աշխատանքը:

1978 թվականից առ այսօր դասավանդում է Մարտունու շրջանի Սոս գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ աշխատանքի էր անցել նախ որպես կազմակերպիչ, ապա քիմիայի ու կենսաբանության ուսուցչուհի:

Ակնհայտ են քիմիայի և կենսաբանության ուսուցչուհու պատրաստած սաների հաջողությունները շրջանային ու հանրապետական օլիմպիադաներում: Նրա աշակերտներից ոմանք էլ մասնակցել են նաև համահայկական օլիմպիադաներին:

Մանկավարժական գործունեության մեջ դրսևորած արդյունավետ աշխատանքի ու նվիրվածության համար Լ. Ջիվանշիրյանը 2002թ. արժանացել է «Մարտունու շրջանի կենսաբանության լավագույն ուսուցիչ» կոչմանը, իսկ 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լարիսա Ներսիսյան: Ծնվել է 1948թ. Ասկերանի շրջանի Սզնեք գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգը, այնուհետև՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը:

Լարիսա Ներսիսյանի աշխատանքային գործունեությունը սկսվել է 1971 թվականից, երբ նա որպես դաստիարակչուհի աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 դպրոցում, այնուհետև մսուր-մանկապարտեզներում: 1975 թվականից մինչև 1990 թվականը աշխատել է թիվ 3 մսուր մանկապարտեզում՝ որպես վարիչ:

1990թ. մինչև 1992 թվականը աշխատել է Ստեփանակերտի կրթության քաղաքային բաժնում՝ որպես տեսուչ-մեթոդիստ:

Արցախյան պատերազմից հետո, 1995 թվականին, Ստեփանակերտում բացել է մասնավոր մսուր-մանկապարտեզ, որտեղ առ այսօր աշխատում է տնօրենի պաշտոնում:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման և նախադպրոցական դաստիարակության իրականացման համար բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով ու արժանացել խրախուսանքի: 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Անահիտ Քոսակյան: Ծնվել է 1964թ. Երևան քաղաքում: Ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-ինֆորմատիկայի ֆակուլտետը:

Անահիտ Քոսակյանը իր մանկավարժական գործունեությունը սկսել է 1988 թվականից, երբ աշխատանքի է անցել Արտաշատի թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցչուհի: 1995թ. տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել թիվ 159 ավագ դպրոցում:

1998թ. ընտանիքով տեղափոխվել է Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքը և աշխատանքի անցել թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար:

2006թ. մինչև օրս աշխատում է նույն դպրոցի տնօրենի պաշտոնում: Լավագույն աշխատանքի համար 2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լյուդմիլա Սիմոնյան: Ծնվել է 1945թ. Ստեփանակերտ քաղաքում: Բարձրագույն կրթությունը ստացել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետում (1970թ.):

Լյուդմիլա Սիմոնյանը մանկավարժական գործունեությունը սկսել է 1970 թվականից, երբ աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար, որտեղ և աշխատել է մինչև 2008 թվականը: 2008-2009 ուսումնական տարում աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

Խորհրդային տարիներին ընդունվել է Ադրբեջանական ԽՍՀ ուսուցիչների համագումարի պատգամավոր:

1961-1973 թվականներին ուսուցչական աշխատանքին զուգահեռ աշխատել է տարբեր մարմիններում: Այդ ընթացքում Լ. Սիմոնյանը իրեն դրսևորել է որպես հմուտ մանկավարժ ու մասնագետ, պարգևատրվել տարբեր պատվոգրերով:

Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում աշխատելու ժամանակ՝ 1981 թվականին, պարգևատրվել է ատեստավորման մարզային հանձնաժողովի պատվոգրով: 1984 թվականին պարգևատրվել է Ադրբեջանական ԽՍՀ լուսավորության մինիստրության պատվոգրով: Լ. Սիմոնյանը երկար տարիներ ղեկավարում է տարրական դասարանների մեթոդմիավորման աշխատանքները՝ իր փորձը փոխանցելով սկսնակ ուսուցիչներին:

2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Նուրվարդ Մանվելյան: Ծնվել է 1936թ. Ասկերանի շրջանի (նախկին Ստեփանակերտի) Կարմիր գյուղում: Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը և այն ավարտելուց հետո, 1960 թվականին, աշխատանքի անցել Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղի մանկապարտեզում՝ որպես վարիչ:

1960-1961 ուսումնական տարում Նուրվարդ Մանվելյանը աշխատանքի է անցել Մարտունու թիվ 2 ութամյա (միջնակարգ) դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, որտեղ էլ աշխատել է մինչև 2008 թվականը: Շուրջ երեսուն տարի եղել է ուսումնական մասի վարիչ: Մանկավարժական երկարամյա գործունեության ընթացքում նա իրեն դրսևորել է որպես հմուտ մանկավարժ ու բանիմաց մասնագետ:

Բարձր է գնահատվել Ն. Մանվելյանի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը, 2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Սլավիկ Մելքումյան: Ծնվել է 1935թ. Բաքու քաղաքում: Ավարտել է Արմենիքենդի հայկական միջնակարգ դպրոց, ապա ընդունվել Երևանի ֆիզկուլտինստիտուտ, որն ավարտել է 1957 թվականին՝ աշխատանքի անցնելով Ստեփանակերտի թիվ 1 գիշերօթիկ դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ և դաստիարակ: 1974-ից տեղափոխվել է Ստեփանակերտի թիվ 9 միջնակարգ դպրոց, 1995թ.՝ թիվ 2 միջնակարգ դպրոց: 1998-2000թթ. աշխատել է թիվ 7 միջնակարգ

դպրոցում, իսկ 2000 թվականից առ 2008թ. սեպտեմբեր աշխատել մայրաքաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցում:

2000-2006թթ. զբաղեցրել է Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի ֆիզկուլտուրայի մեթոդմիավորման նախագահի պաշտոնը: 1979-1980թթ. եղել է մարզի չեմպիոն ՊԱՊ համալիրի բազմամարտի գծով, մասնակցել հանրապետական առաջնությունների: 1987թ. նրան շնորհվել է «Ավագ ուսուցիչ» կոչում:

1988թ. ապրիլին ԼՂ մարզային խորհուրդը նրան պարգևատրել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

Արժանացել է Ստեփանակերտի ԿՄՍ բաժնի պատվոգրերի և դիպլոմների, իսկ 2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Միքայել Խաչյան: Ծնվել է 1941թ. Հադրութի շրջանի Հախուլու (Հարթաշեն) գյուղում: Ստանալով միջնակարգ կրթություն էդիլլվի (Ուխտաձորի) դպրոցում՝ 1961 թվականին զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը և ծառայությունն ավարտելուց հետո 1962 թվականին ընդունվել Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը, այն ավարտել 1967 թվականին:

Աշխատանքի է անցել Հադրութի շրջանի Բանաձորի 7-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1968-1969 ուսումնական տարուց մանկավարժական գործունեությունը շարունակել է Ուխտաձորի միջնակարգ դպրոցում:

Շուրջ 20 տարի լինելով դպրոցի տնօրեն՝ ջանք ու եռանդ չի խնայել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը բարձր հիմքերի վրա դնելու համար:

Միքայել Խաչյանը որպես տնօրեն կարողացել է աճեցնել մանկավարժների մի սերունդ, որոնք այժմ իրենց գործունեությունն են շարունակում Ուխտաձորի միջնակարգ դպրոցում և շրջանի ու հանրապետության տարբեր կրթօջախներում:

Այսօր էլ բազմավաստակ մանկավարժն իր գիտելիքներն է փոխանցում մատաղ սերնդին:

2003 թվականին արժանացել է ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրին: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ նա ստեղծագործում է, բազմաթիվ բանաստեղծությունների և պատմվածքների հեղինակ է: Վերջերս հրատարակվել է նրա «Կյանքի գույները» գրքույկը:

Շուտով ընթերցողների սեղանին կդրվի Մ. Խաչյանի «Մենք և պատերազմը» պատմվածքների ժողովածուն:

2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր ուսուցչի կոչում:

Գոհար Դանիելյան: Ծնվել է 1942թ. Ստեփանակերտ քաղաքում՝ արհեստավորի ընտանիքում:

Սկզբնական կրթությունն ստացել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1959թ.:

1964թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի տարրական ուսուցման ֆակուլտետը:

1965-2008թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես տարրական դասարանի ուսուցչուհի, 1991 թվականից՝ նաև փոխտնօրեն:

Ուսումնական գործունեության ընթացքում աչքի է ընկել աշխատասիրությամբ, կարգապահությամբ և բանիմացությամբ, բազմիցս պարգևատրվել է

պատվոգրերով, խրախուսվել կրթության և գիտության նախարարության կողմից:

2008թ. բեղմնավոր աշխատանքի համար նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Հադրութի շրջանի կրթական համակարգի զարգացման գործում մեծ ծառայություն ունի 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Խորեն Ղազարյանը:**

Ծնվել է 1928թ. Հադրութի շրջանի Տումի գյուղում: 1951 թվականից ծառայել է խորհրդային բանակում, զորացրվել 1954-ին: 1955թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը և այն ավարտելուց հետո աշխատանքի անցել Հադրութի շրջանի տարբեր դպրոցներում:

Աշխատելով Աղբուլաղի (Ակնաղբյուրի) դպրոցում՝ նախաձեռնել է դպրոցական նոր շենքի կառուցումը, որն ավարտին է հասցվել 1963 թվականին: Այդ տարիներին ուսումնասիրել է գյուղի և դպրոցի պատմությունը, հավաքել բազմաթիվ հնություններ, պատմական փաստաթղթեր ու դպրոցի սենյակներից մեկում ստեղծել պատմության թանգարան՝ հայրենագիտական հարուստ նմուշներով:

1990 թվականին լույս է տեսել Խորեն Ղազարյանի «Ակնաղբյուր-Աղբուլաղ» գիրքը, որը շրջանի դպրոցներում պատմության ուսուցիչների կողմից օգտագործվում է որպես մեթոդական ուղեցույց Հադրութի շրջանի պատմությունն ուսումնասիրելու համար:

Նրա տնօրինության տարիներին դպրոցի կոլեկտիվը ճանաչվել է լավագույնը ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման ուղղությամբ:

Տարբեր տարիների ղեկավարել է Հադրութի շրջանի Դոլանլարի, Բլութանի, Էդիլլվի, Ակնաղբյուրի, Տումու միջնակարգ դպրոցները:

Մշտապես մասնակցել է մանկավարժական ընթերցումներին և միակն է եղել պատմության բնագավառում: Նրա զեկուցումները, հոդվածները պահպանվել են ուսուցիչների որակավորման կենտրոնում, օգտագործվել որպես առաջավոր փորձի ուղեցույցներ:

Որտեղ էլ աշխատել է Խորեն Ղազարյանը, վայելել է շրջապատի հարգանքը: Գործունյա է, մարդամոտ, հոգատար, պրպտող:

«Տումի» պատմաաշխարհագրական ակնարկների գրքի հեղինակն է: Այդ գրքի համար արժանացել է Եղիշեի անվան մրցանակի:

Պարգևատրվել է մեդալներով, պատվոգրերով:

Ժողովրդական կրթության գերազանցիկ է, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ: 2008թ. շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Հայկանուշ Դավթյան: Ծնվել է 1952թ. ՀՀ Սպիտակի շրջանի Լուսաղբյուր գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգը, այնուհետև Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Հայկանուշ Դավթյանը իր մանկավարժական գործունեությունը սկսել է 1973 թվականից՝ աշխատանքի անցնելով Երևանի թիվ 163 միջնակարգ դպրոցում, հետագայում որպես պատմության ուսուցչուհի նույն դպրոցում: 1998 թվականից մանկավարժի աշխատանքը շարունակվում է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որտեղ աշխատանքի է անցնում որպես պատմության ուսուցչուհի:

Հայկանուշ Դավթյանը բազմիցս արժանացել է կրթության քաղաքային, շրջանային բաժինների խրախուսանքներին, պատվոգրերին և շնորհակալագրերին:

2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Շահեն Հայրիյան: Ծնվել է 1933թ. Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: Սկզբում ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1953թ.), բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետում:

Շահեն Հայրիյանի մանկավարժական գործունեությունը սկսվել է 1953-1954 ուս.տարում, երբ աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Մաղավուզի միջնակարգ դպրոցում: 1962 թվականից մինչև 1964 թվականը աշխատել է Շուշիի թիվ 2 գիշերօթիկ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1964-1972թթ. վարել է նույն գիշերօթիկ դպրոցի փոխտնօրենի պաշտոնը: 1972 թվականի փետրվարի 11-ից մինչև 1976 թվականի սեպտեմբերի 7-ը զբաղեցրել է Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնը: 1976-1986 թվականներին աշխատել է կուսակցության ԼՂ մարզային կոմիտեում, 1968-1988թթ. եղել է կուսակցության ԼՂ մարզկոմի քաղլուսավորության տան վարիչ: 1988թ. հունվարի 8-ից մինչև հունիսի 26-ը աշխատել է ԼՂԻՄ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում՝ որպես հայոց լեզվի և գրականության մեթոդիստ: 1988-1991թթ. աշխատել է Հատուկ կառավարման կոմիտեում՝ որպես ժողովրդական կրթության և մշակույթի սեկտորի վարիչ: 1991-1994թթ. աշխատել է Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնում: 1994-1999թթ. աշխատել է ԼՂ ԿՎԱՀ-ում՝ որպես դպրոցավարության կաբինետի մեթոդիստ, վարիչ: 1999-2003թթ. աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ, 2003թ. ՀՀ ԿԳ նախարարության կրթական բարեփոխումների Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 2001-2010թթ. աշխատել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում:

2008թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Շուրջ կեսդարյա բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել **Սուրեն Առստամյանը** Ասկերանի շրջանի դպրոցներում: Ծնվել է շրջանի Բադարա գյուղում, 1934 թվականի փետրվարի 3-ին:

1941թ. ընդունվել է գյուղի միջնակարգ դպրոցը և այն ավարտել 1951 թվականին:

1952թ. ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը: 1956թ. ավարտել է ինստիտուտը և աշխատանքի անցել Ասկերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1959թ. տեղափոխվել է ծննդավայր և դպրոցում երեք տարի աշխատել որպես ջոկատավար: Այնուհետև նույն դպրոցում աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ մինչև 1989 թվականը:

1989թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել է Պատարայի միջնակարգ դպրոցի ուսմասվար և աշխատել մինչև 1990թ. մարտի 1-ը: 1990թ. մարտի 1-ից նշանակվել է տնօրեն և աշխատել մինչև 1996թ.: 1996թ. մայիսի 26-ին, համաձայն մարզժողկրթբաժնի թիվ 50 հրամանի (ատեստացիայի արդյունքներով) Ս. Առստամյանին շնորհվել է «Ավագ ուսուցիչ» կոչում:

2009թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժ կոչումը:

Արցախի կրթական համակարգի զարգացման գործում անգնահատելի ծառա-

յություն է մատուցել տաղանդաշատ մանկավարժ **Անուշավան Պողոսյանը:** Ծնվել է 1936թ. փետրվարի 12-ին, Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում:

Միջնակարգը հայրենի գյուղում ավարտելուց հետո (1953թ.) ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը և առաջին կարգի դիպլոմով ավարտել պատմաաշխարհագրական ֆակուլտետը 1957 թվականին:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1957թ.՝ աշխատելով Ասկերանի շրջանի Խրամորթի, Նախիջևանիկի միջնակարգ դպրոցներում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ և ավագ ջոկատավար:

Աշխատանքային գործունեության ընթացքում Ա. Պողոսյանը իրեն դրսևորել է որպես առարկային խորապես տիրապետող և նվիրված մանկավարժ, դասերը վարում էր խանդավառությամբ, ստեղծագործաբար կիրառելով ժամանակակից դասին ներկայացվող պահանջներն ու մեթոդները, բարձրացնելով դասի արդյունավետությունը:

70-ական թվականներին Ա. Պողոսյանի ղեկավարած թիվ 2 դպրոցի մանկավարժական կոլեկտիվն աշխատում էր մեծ վերելքով, դպրոցի առջև դրված էին սովորողների պարտադիր 8-ամյա կրթության ու դաստիարակության խնդիրներ: Իրենց ստեղծագործական աշխատանքով աչքի էին ընկնում Ահարոն Բալայանը, Լենա Ալավերդյանը, Արշավիր Միրզոյանը, Լազր Թումանյանը, Էլա Դավթյանը, Էռնա Դանիելյանը և ուրիշներ: Շնորհիվ Ա. Պողոսյանի և շնորհաշատ ուսուցիչների, դպրոցը դարձել էր ոչ միայն քաղաքի, այլ նաև մարզի հենակետային դպրոց, որտեղ անց էին կացվում մարզային ու հանրապետական նշանակության մեթոդամանկավարժական բնույթի միջոցառումներն ու հավաքները:

Ահա թե ինչու 1979թ. ԽՍՀՄ լուսավորության նախարարության հանձնախումբը ուսումնասիրել և ընդհանրացրել է դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման առաջավոր փորձը և այն քննարկել նախարարության ազգային դպրոցների կառավարման խորհրդում, նրան արժանացրել «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի: Ընտրվել է ուսուցիչների համամիութենական 3-րդ համագումարի պատգամավոր:

Երկարամյա մանկավարժական գործունեության տարիներին անվանի մանկավարժը բարեխղճորեն կատարել և ներկայումս կատարում է իր առաքելությունը, որի համար հավուր պատշաճի է գնահատվել նրա արգասավոր մանկավարժական գործունեությունը: Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, կառավարական բազմաթիվ մեդալներով, ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների պատվոգրերով, իսկ 2009թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Շուշիի շրջանի կրթական համակարգում նվիրյալ մանկավարժներից է **Էմմա Ավետիսյանը:**

Ծնվել է 1946թ. նոյեմբերի 13-ին, Գերանբոյ քաղաքում՝ ծառայողի ընտանիքում: 1953թ. հաճախել է Մեծշենի (Ղարաղշլաղի) 8-ամյա դպրոցը: 1964թ. ավարտել է Հին շենի (Կիրովի) միջնակարգ դպրոցը: 1965թ. ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժություն և մեթոդիկա բաժինը, այն ավարտել 1969թ.: 1969-1970 ուս.տարում աշխատանքի է ընդունվել Մեծշենի ութամյա դպրոցում՝ որպես տարրական դասարանների դասվար և առ այսօր

աշխատում է նույն կրթօջախում:

2002-2005 թվականների երկարատև մանկավարժական գործունեության համար պարգևատրվել է պատվոգրով և հուշանվերով: Իսկ 2009թ. հոկտեմբերի 3-ին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լեռնային Ղարաբաղի, ներկայիս Արցախի կրթության նշանավոր գործիչներից է **Սոս Արզումանյանը:** Նրա արգասավոր գիտամանկավարժական (դասավանդել է նաև ԱրՊՀ-ում), ստեղծագործական որոնումներով հագեցած աշխատանքը նպատակաուղղված էր հանրապետության կրթական համակարգի զարգացմանն ու դպրոցականների կրթության և դաստիարակության համակարգի բոլոր կողմերի կատարելագործմանը:

Սոս Արզումանյանը ծնվել է 1951թ. հունվարի 23-ին, Հադրութի շրջանի Հին Թաղեր գյուղում, ուսուցչի ընտանիքում:

1968 թվականին գերազանցությամբ ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի բաժինը:

1972 թվականին ավարտելով ինստիտուտը՝ աշխատանքի է նշանակվել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ և 1972-1977թթ. աշխատել է որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1973-1974թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում:

1977 թվականին ամուսնացել և ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ, որտեղ ապրում և աշխատում է մինչև օրս:

1977թ. սեպտեմբերից մինչև 1979թ. փետրվար ամիսը աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնում՝ որպես լաբորանտ:

1979թ. փետրվարից մինչև 1989թ. սեպտեմբերը աշխատել է Ստեփանակերտի քաղգործկոմի կրթության բաժնում որպես դպրոցական տեսուչ:

1987-1989 թվականներին համատեղության կարգով աշխատել է նաև որպես ճյուղային արհմիության աշխատողների քաղաքային խորհրդի նախագահ:

1994թ. սեպտեմբերի 12-ին աշխատանքի է նշանակվել ԼՂՀ ուսուցիչների վերապատրաստման ու կատարելագործման ինստիտուտում՝ որպես դպրոցավարության կաբինետի վարիչ, որտեղ աշխատել է մինչև 1995թ. սեպտեմբերի 26-ը:

1995թ. սեպտեմբերի 26-ից աշխատում է ԼՂՀ ԿԳ նախարարությունում, սկզբում որպես մասնագետ, 1997թ. ապրիլից մինչև 2004թ. փետրվարը՝ հանրակրթության վարչության պետ, 2004թ. փետրվարից մինչև 30.09.2007թ. բարձրագույն և միջին մասնագիտական կրթության բաժնի վարիչ, իսկ 2007 թվականի հոկտեմբերի 1-ից առ այսօր՝ ԼՂՀ ԿԳՍ նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության պետի պաշտոնում:

1985 թվականին պարգևատրվել է Ադր ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանով, անբասիր աշխատանքի համար բազմիցս արժանացել է պատվոգրերի, պարգևատրվել ԱրՊՀ 40-ամյակին և Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված հուշամեդալներով, իսկ 2010 թվականին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Մայրաքաղաքի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժներից է **Ժաննա Բալայանը:** Ծնվել է 1954թ. հոկտեմբերի 7-ին, Ստեփանակերտ քաղաքում՝ ծառայողի ընտանիքում:

1961-1971թթ. սովորել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1971թ. ընդունվել և 1975թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1976թ. ժամանակավոր աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես կարգավար, նաև թիվ 4 մսուր-մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

1976թ. սեպտեմբերից աշխատանքի է անցել հատուկ դպրոց-ինտերնատում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի, 1977թ. ապրիլից՝ Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

1993թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել է դպրոցի տնօրենի՝ դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ, իսկ 1994 թվականից՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: 2015 թվականից «Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենն է:

2009թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման: Պարգևատրվել է պատվոգրերով՝ դպրոցի 80-ամյակի կապակցությամբ և ռուսաց լեզվի օլիմպիադաներին աշակերտներ պատրաստելու համար:

Նաիրա Առստամյան: Ծնվել է 1953թ. փետրվարի 8-ին, Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում, մտավորականի ընտանիքում:

1969-1970 թվականներին սովորել է Առաջածորի միջնակարգ դպրոցում և ավարտել՝ պարգևատրվելով ոսկե մեդալով:

1970-1974 թվականներին սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում և ավարտել գերազանց գնահատականներով:

1974 թվականի սեպտեմբերին գործուղվել է աշխատելու Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, նաև՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ:

1979 թվականի դեկտեմբերին նշանակվել է նույն դպրոցի տնօրեն: Առ այսօր (2015թ.) աշխատում է նույն պաշտոնում:

Նաիրա Առստամյանը մանկավարժական գործունեությունը համատեղել է հասարակական գործունեության հետ: Տարիներ շարունակ եղել է պրոպագանդիստ, ժողովրդական ատենակալ, գյուղական խորհրդի պատգամավոր, ընտրական հանձնաժողովի նախագահ, ակտիվորեն թղթակցել է Արցախի և ՀՀ թերթերին ու ամսագրերին, զեկուցումներով, ելույթներով հանդես եկել տարբեր նիստերում, առաջարկություններ արել ծրագրերի, դասագրքերի փոփոխման, ավագ դպրոցների ստեղծման, երեխաների դաստիարակության, դպրոցավարության մի շարք հարցերի առնչությամբ:

Ղեկավարել է ենթաշրջանի փնջային մեթոդմիավորումը: Մանկավարժական փորձը սիրով փոխանցել է երիտասարդ ուսուցիչներին:

2000թ. մասնակցել է «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և ճանաչվել շրջանի հայոց լեզվի և գրականության Մարտակերտի շրջանի լավագույն ուսուցիչ:

2000թ. ճանաչվել է 20-րդ դարի Արցախի լավագույն ուսուցիչ:

2005թ. պարգևատրվել է վարչապետի պատվոգրով՝ աշխատանքում ձեռք բերած հաջողությունների, հայոց գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ:

2009թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում՝ մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար և Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Սլավիկ Ասրյան: Ծնվել է 1949թ. Հադրութի շրջանի Մոխրենիս գյուղում: Նրա կենսագրությունը և մանկավարժական գործունեությունը ներկայացվել է աշխատության 4-րդ գլխի 1-ին բաժնում: Միայն նշենք, որ 2009թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Գալյա Գրիգորյան: Ծնվել է 1949թ. Առաջաձոր գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, բարձրագույնը՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժնում (1975թ.):

Նույն թվականի սեպտեմբերի 1-ից, երբ աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Թբղլու գյուղի տարրական դպրոցում՝ որպես ուսուցչուհի: Թբղլու գյուղի միջնակարգ դպրոցում աշխատել է մինչև 1972 թվականը: 1973 թվականին տեղափոխվել է Ստեփանակերտ և աշխատանքի ընդունվել թիվ 5 երկարօրյա դպրոցում: 1982 թվականից աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 10 միջնակարգ դպրոցում՝ որպես դաստիարակ: 1985 թվականից առայսօր աշխատում է նույն դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի:

Գալյա Գրիգորյանը Ղարաբաղի ուսուցչական ու մանկավարժական հասարակայնության մեջ հայտնի է որպես մասնագիտական բարձր արհեստավարժություն ունեցող մանկավարժ: Իր երկարամյա աշխատանքի ընթացքում բազմիցս արժանացել է տարբեր գովասանքների ու պարգևատրումների:

2007 թվականին «Տարվա լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի հաղթող է ճանաչվել, իսկ 2009թ. արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Հրանուշ Հարությունյան: Ծնվել է 1932թ. Մարտակերտ քաղաքում: Ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, բարձրագույն կրթություն ստացել Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժնում:

Հրանուշ Հարությունյանը 1954-1956 թվականներին աշխատել է Միրբաշիրի շրջանի Բեգում-Սարովի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և աշխարհագրության ուսուցչուհի: 1956-1961 թվականներին աշխատել է Մարտակերտի կոմերիտշրջկոմում՝ որպես բաժնի վարիչ:

1961 թվականի սեպտեմբերից աշխատանքի է անցել Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի, որտեղ էլ աշխատել է մինչև 2008 թվականը:

Հրանուշ Հարությունյանը ակտիվ մանկավարժական գործունեության համար պարգևատրվել է մի շարք պատվոգրերով ու մեդալներով: 1986 թվականին պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով, 1979 թվականին՝ սոցմրցության հաղթողի կրծքանշանով: 2005 թվականին պագևատրվել է ԼՂՀ կառավարության պատվոգրով: 2009թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Արտեմ Մուսայելյան: Ծնվել է 1934թ. Մարտունու շրջանի Սոս գյուղում: Ավարտել է ծննդավայրի միջնակարգը, բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի

Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի և աստղագիտության բաժնում:

1957 թվականից մինչև 1999 թվականը աշխատել է Սոսի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի և աստղագիտության ուսուցիչ:

1984-1999 թվականներին զբաղեցրել է Սոսի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնը՝ համատեղելով ֆիզիկայի դասավանդումը:

1963 թվականին Մուսայելյանն արժանացել է «Ադր ԽՍՀ ժողկրթության գերազանցիկի» կրծքանշանի:

Նա մեծ տեղ տվել սերունդների հայրենասիրական դաստիարակությանը: Արցախյան շարժման ակտիվիստներից է: 2009թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Մարտունու շրջանի հանրակրթական դպրոցներում բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, մարզի (այժմ ԼՂՀ) կրթական գործի զարգացմանը նվիրված մի շարք աշխատությունների, 20-ից ավելի ուսումնամեթոդական աշխատությունների հեղինակ **Միքայել Բեգլարյանը** (1926թ.): Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Քարահունջ գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1938թ.), այնուհետև ավարտել է շրջանի Սոս գյուղի միջնակարգ դպրոցը (1943թ.), ուսումը շարունակել (1943-1945թթ.) Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, ավարտել առաջին կարգի դիպլոմով (1945թ.) և աշխատանքի անցել Խերխանի յոթամյա դպրոցում, որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար: Որպես տնօրեն աշխատել է (1948-1950թթ.) Մաճկալաշենի յոթամյա և Սոսի միջնակարգ դպրոցներում:

Մ. Բեգլարյանը բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել հատկապես 1950-1970-ական թվականներին: Տնօրենի պաշտոնում աշխատել է Հերհերի, Քերթի, Սոսի միջնակարգ դպրոցներում: Վաստակաշատ մանկավարժը եղել է նաև (1953-1956թթ.) Մարտունու շրջանի կրթության բաժնի դպրոցական տեսուչ, մեթոդկաբինետի վարիչ: Երկար տարիներ Բեգլարյանը ղեկավարել է շրջանի պատմության և աշխարհագրության ուսուցիչների մեթոդական հանձնաժողովը, ինչպես նաև շրջանի դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի ստուգման՝ կրթության դպրոցական տեսուչների հանձնաժողովը:

Մեծ է Բեգլարյանի դերը դպրոցաշինության ասպարեզում: Որ դպրոցում նա աշխատել է, վերանորոգել է դպրոցական շենքը, ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ ուսումնական կաբինետների, կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների համար: Նախաձեռնել է նաև աշխատանքներ՝ 1941-1945թթ. Մեծ Հայրենականում հայրենի գյուղից զոհվածների հիշատակին հուշարձան կառուցելու, ինչպես նաև Քերթ գյուղում տիպային դպրոցական շենքի կառուցման նախաձեռնողներից մեկն է:

Իր բազմամյա հասարակական ակտիվ գործունեության համար արժանացել է «Ադր ԽՍՀ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, 2002թ. ԼՂՀ ԿԳ նախարարության գովասանագրերի ու պատվոգրերի, իսկ 2009 թվականին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ասկերանի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված **Արմեն Ավանեսյանը**

ծնվել է 1928թ. ապրիլի 3-ին, Դահրավ գյուղում, 1941թ. ավարտել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցը և ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Այնուհետև ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը (1945թ.), աշխատանքի անցել Բադարայի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն:

Դասավանդել է նաև Խնձրիստանի միջնակարգ դպրոցում: Դասավանդմանը զուգահեռ 30 տարի ղեկավարել է պատմության ուսուցիչների շրջանային սեկցիան՝ լավագույն փորձն ու մասնագիտական բարձր կարողությունները փոխանցելով ուսուցիչներին: Մանկավարժության ասպարեզում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, արժանացել «ԽՍՀՄ ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանի:

2006 թվականին պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, իսկ 2009-ին արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Արմեն Ավանեսյանը երկար տարիներ զբաղեցրել է նաև Դահրավ համայնքի ղեկավարի պաշտոնը և ակտիվ գործունեություն ծավալել Արցախյան ազատագրական շարժման ժամանակ:

Աշակերտների նկատմամբ ունեցած անհուն սեր,ը մասնագիտության անթերի իմացությունը օգնեցին երիտասարդ ուսուցչուհուն՝ **Անահիտ Հայրապետյանին,** նվիրվելու դպրոցին, աշակերտներին: Ծնվել է 1965թ. մայիսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում:

1982թ. ավարտել է թիվ 3 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1987թ. ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի որակավորմամբ:

1987թ. աշխատել է ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Ստեփանակերտ քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցի ռուսական և հայկական բաժիններում, դասավանդել է նաև «Մեսրոպ Մաշտոց», «Գրիգոր Նարեկացի» համալսարաններում: Ստացել է գովասանագրեր և պատվոգրեր, աշակերտներին ռուսաց լեզվի առարկայական օլիմպիադաներին նախապատրաստելու, մրցույթներին, բաց դասերին, մանկավարժական ընթերցումներին մասնակցելու համար: Առանձին դասերի անցկացման մեթոդիկայի վերաբերյալ մի քանի հոդվածներ և հանձնարարականներ տպագրվել են «Լուսարար» թերթում և համացանցի կայքերում: Պարբերաբար անցել է որակավորման դասընթացներ և հանձնել ստուգարքներ: 2009թ. մասնակցել է ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման դասընթացներին և բարձր միավորներով անցել մասնագիտական գիտելիքների և կարողությունների ստուգում:

2010թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

2010-2016թթ. աշխատում է Երևանի թիվ 2 ավագ դպրոցում:

Ալեքսանդր Պողոսյանը ծնվել է 1929թ. օգոստոսի 1-ին, Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղում:

1947թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգը, ապա՝ Ստեփանակերտի մանկավարժական երկամյա ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը:

Ծառայել է խորհրդային բանակում:

Ուխտաձորի միջնակարգ դպրոցում աշխատելու տարիներին ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետը և հեռակա կարգով ավարտել 1963թ.:

Ալ. Պողոսյանը երկար տարիներ ղեկավարել է դպրոցի կոլեկտիվը՝ աշխատելով որպես ուսմասվար և տնօրեն: Նա ակտիվորեն մասնակցել է դպրոցական և հասարակական կյանքին, ստացել ավագ ուսուցչի կոչում:

Աշխատելու տարիներին աջակցել է գյուղում դպրոցական տիպային շենքի կառուցման գործին:

Ակտիվորեն մասնակցել է մանկավարժական ընթերցումներին: Նրա սաները բազմիցս հաղթող են ճանաչվել շրջանային և մարզային առարկայական օլիմպիադաներում:

Արցախյան շարժման թեժ օրերին նա ակտիվորեն ներգրավվել է ստորագրահավաքների կազմակերպման, ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման գործին:

2010թ. Ա. Պողոսյանին շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Նկատի ունենալով, որ **Է. Պետրոսյանի** գործունեությունը ներկայացվել է սույն գլխի 3-րդ բաժնում, այստեղ ներկայացնենք մյուսների կենսագրությունը:

Լյուբա Մայիլյան: Ծնվել է 1966թ. Հադրութում, արհեստավորի ընտանիքում:

1973թ. հաճախել և 1983թ. ավարտել է Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել և 1987թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1987թ. մինչև 1989թ. աշխատել է Պլեթանցի 8-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1989թ. աշխատանքի է ընդունվել Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

2007թ. դեկտեմբերին «Լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթում ճանաչվել է հաղթող և արժանացել «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչման:

2011թ. հոկտեմբերի 3-ին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

2015թ. հունվարի 16-ին պարգևատրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալով:

Կառլեն Մարգարյան: Ծնվել է 1953թ.: Նկատի ունենալով, որ Մարգարյանի գործունեության մասին արդեն նշել ենք աշխատության 4-րդ գլխի 3-րդ բաժնում, այստեղ նշենք, որ 2011թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Ադելաիդա Օհանջանյան: Ծնվել է 1952թ. Մարտունու շրջանի Եմիշճան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Գիշու միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Գիշու միջնակարգ դպրոցում, սկզբում լաբորանտ, ապա քիմիայի ուսուցչուհի: 1978-1982 թվականներին համատեղությամբ աշխատել է գյուղի մանկապարտեզում, որպես վարիչ: 1986 թվականից

առ այսօր Ադելաիդա Օհանջանյանը աշխատում է Գիշու միջնակարգ դպրոցի փոխտնօրենի պաշտոնում:

Ակնհայտ են Օհանջանյանի մասնագիտական կարողությունների բարձր մակարդակն ու մանկավարժական եռանդը: Նրա կրթած սաները մասնակցել են շրջանային և հանրապետական առարկայական օլիմպիադաներին, գրավել առաջնակարգ տեղեր: Նրա ուսանած աշակերտներից շատերն ընտրել են իրենց ուսուցչի մասնագիտությունը՝ դառնալով քիմիայի ուսուցիչներ:

Մանկավարժը լիարժեքորեն տիրապետում է իր առարկային, մեթոդների զինանոցին, քիմիայի ուսուցիչների շրջանային մեթոդխորհրդի ղեկավարն է:

Բարձր է գնահատել Ա. Օհանջանյանի մանկավարժական գործունեությունը, 2011թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Լյուդմիլա Բարսեղյան: Ծնվել է 1950թ. Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է միջնակարգը 1967թվականին, բարձրագույնը (1980) Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում:

Մանկավարժական աշխատանքով սկսել է զբաղվել 1975թ. թիվ 4 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի, այնուհետև՝ թիվ 5 դպրոցում որպես ջոկատավար: 1978թ. թիվ 10 դպրոցում աշխատանքի է անցել որպես դասվար: 1979թ. սեպտեմբերի 14-ից նա որպես տնօրեն աշխատանքի է անցել Ստեփանակերտի պիոներների տանը, իսկ 1982 թվականին՝ մարզգործկոմում որպես քարտուղար:

1987 թվականից նա, որպես տեսուչ, աշխատել է Ստեփանակերտի ժողկրթբաժնում:

1994թ. սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է «Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում:

Աշխատանքային ողջ գործունեության ընթացքում Բարսեղյանը նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ է կատարել իր պարտականությունները: Նա աչքի է ընկնում կազմակերպչական մեծ ունակություններով ու ղեկավարման հմտություններով:

Մեծ է նրա դերը մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության, մշակութային կյանքի զարգացման գործում: Նա ունի ակտիվ հասարակական կենսադիրք և վայելում է երեխաների, համակարգի աշխատողների և հասարակայնության սերն ու հարգանքը:

Անբասիր աշխատանքի համար 2012թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Էդիկ Պետրոսյան: Ծնվել է 1953թ. Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում:

Էդիկ Պետրոսյանի աշխատանքային գործունեությունը սկսվել է 1981 թվականից, երբ աշխատանքի է անցել Հադրութի շրջանի «Մահսուլ» կամավոր սպորտընկերությունում՝ որպես նախագահ: 1982 թվականին նշանակվել է Հադրութի պիոներների տան տնօրեն: 1986 թվականին աշխատանքի է անցել շրջժողկրթբաժնում՝ որպես դպրոցական տեսուչ: 1988 թվականից մինչև 1992 թվականը Թաղասեռի ութամյա դպրոցի տնօրենն էր:

Էդիկ Պետրոսյանն իր մասնակցությունն է ունեցել Արցախյան պատերազմին:

1992 թվականից մինչև 1995 թվականը ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում՝ որպես Հադրութի գումարտակի հրամանատարի քաղգծով տեղակալ:

1995 թվականին նշանակվել է Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի փոխտնօրեն, 1996 թվականից՝ տնօրեն: 2005 թվականի հունվարից աշխատում է Հադրութի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ:

Աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես կարող, ունակ և հմուտ ղեկավար: Նա իրա բաժին նեդրումն է ունեցել Հադրութի շրջանում կրթական գործը պահանջվող մակարդակով կազմակերպելու, կրթական բարեփոխումներն իրականացնելու գործում: Մանկավարժական բեղուն գործունեության համար 2012թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Նիկոլայ Սաղյան: Ծնվել է 1941թ. Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: Հայրենի գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտի քիմիա և կենսաբանության ֆակուլտետը և ավարտելուց հետո (1962թ.) աշխատանքի անցել Չափարի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ:

1972-1984, 1993-1997, 1999-2006 թվականներին աշխատել է Չափարի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնում:

Աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես գործին նվիրված, խորը գիտելիքներ ունեցող մանկավարժ:

Շուրջ կես դար է, ինչ Սաղյանը կրթում և դաստիարակում է մատաղ սերնդին: Նրա սաները տարիներ շարունակ իրենց փայլուն գիտելիքներով մրցանակային տեղեր են գրավել դպրոցականների առարկայական օլիմպիադաների շրջանային և հանրապետական փուլերում:

Նիկոլայ Սաղյանն առ այսօր աշխատում է Չափարի միջնակարգ դպրոցում: Նա ունի կազմակերպչական և ստեղծագործական բարձր որակներ, որով և մանկավարժական կոլեկտիվին մղում է ակտիվ աշխատանքի: Խստապահանջ է, սկզբունքային ու հետևողական:

Մանկավարժության ասպարեզում ունեցած ծառայությունների համար 2012թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Սաշա Ավանեսյան: Ծնվել է 1953թ. Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը (1972թ.)՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում:

1974թ. որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Քերթի միջնակարգ դպրոցում: 1976 թվականի սեպտեմբերի 1-ից տեղափոխվել է Մուշկապատի 8-ամյա դպրոց՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ և ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն:

39 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչն առ այսօր աշխատում է դպրոցում:

1986-1988թթ. զբաղեցրել է դպրոցի տնօրենի պաշտոնը: 1989 թվականին ստացել է ավագ ուսուցչի կոչում: Սաշա Ավանեսյանի մանկավարժական գործունեության պտուղներն ակնհայտ են: Նրա մասնագիտական արհեստավարժությունը դրական ազդեցություն ունի ոչ միայն դպրոցի կոլեկտիվի, այլև շրջանի

երիտասարդ ուսուցիչների վրա: Մասնակցել է հանրապետական երկրորդ մանկավարժական ընթերցումներին «Եռանկյունաչափական հավասարումների և անհավասարումների լուծումը» թեմայով և գրավել երրորդ մրցանակային տեղը: Աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես հմուտ մանկավարժ ու մասնագետ: Մասնագիտական վարպետությանը զուգակցվել մարդկային այնպիսի բարձր հատկանիշներ, ինչպիսիք են ազնվությունը, համեստությունը, պատասխանատվության բարձր զգացումը, սկզբունքայնությունը:

2013թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է վաստակավոր մանկավարժի կոչում:

Սուսաննա Ներսեսյան: Ծնվել է 1954թ. սեպտեմբերի 15-ին, Հադրութի շրջանի Թաղուտ գյուղում, մանկավարժի ընտանիքում:

1971թ. գերազանց գնահատականներով ավարտելով Տողի միջնակարգ դպրոցը՝ նույն տարում ընդունվել և 1975թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը՝ ստանալով մաթեմատիկայի ուսուցչի որակավորում: Ավարտելով ինստիտուտը՝ աշխատանքի է անցել հայրենի գյուղի հիմնական դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

1977թ. ընտանիքով տեղափոխվում է Ստեփանակերտ՝ մշտական բնակության: Նախ աշխատում է Ասկերանի շրջանի Լեռնավանի, ապա՝ քաղաքի թիվ 5 դպրոցներում, իսկ 1987-2008թթ.՝ թիվ 10 միջնակարգ դպրոցում՝ փոխտնօրենի պաշտոնում:

2008թ. տեղափոխվում է Վ. Ջհանգիրյանի անվան նորաստեղծ թիվ 11 ավագ դպրոց, սկզբում որպես մաթեմատիկայի ուսուցիչ, հետո՝ փոխտնօրեն:

2010թ. նոյեմբերի 1-ից նշանակվում է ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն, որտեղ և աշխատում է առ այսօր:

Սուսաննա Ներսեսյանը կրթադաստիարակչական գործի, կրթական բարեփոխումների ակտիվ ջատագով է: Նրան բնորոշ գլխավոր առանձնահատկություններից են ազնվությունը, սկզբունքայնությունն ու աշխատասիրությունը, պահանջկոտությունը իր և ենթակաների նկատմամբ, ձեռք բերածով չբավարարվելը, ինչպես նաև պատասխանատվության բարձր զգացումը:

Սուսաննա Ներսեսյանը բազմիցս մեծարվել ու գնահատվել է պատվոգրերով ու շնորհակալագրերով, իսկ 2014թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Ժորա Մարգարյան: Ծնվել է 1954 թվականի օգոստոսի 1-ին, Ասկերանի շրջանի Ակնաղբյուր (նախկինում՝ Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ) գյուղում: 1971 թվականին ավարտել է Խանաբադի միջնակարգ դպրոցը:

Ավարտելով այն և ստանալով մաթեմատիկայի ուսուցչի որակավորում՝ 1981 թվականի սեպտեմբերի 1-ից սկսել է աշխատել Ղարաբուլաղի ութամյա, ապա միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

1992թ. մայիսին համալրել է Արցախի կամավորական ջոկատները, ապա՝ Արցախյան բանակի շարքերը:

1994 թվականի օգոստոսին զորացրվել է՝ նշանակվելով Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրեն, և առ այսօր աշխատում է այդ պաշտոնում: 2013 թվակա-

նի հոկտեմբերի 5-ին արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման: 2014 թվականի օգոստոսին հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է ԼՂՀ վարչապետի հուշամեդալին:

Համիկ Սեյրանյան: Ծնվել է 1959 թվականին հունվարի 11-ին, Երևան քաղաքում, 1976 թվականին ավարտելով Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետը և 1981 թվականին ավարտելով, աշխատանքի անցել Ստեփանակերտի թիվ 5 դպրոցում՝ որպես անգլերենի ուսուցչուհի:

1982 թվականից մինչև 1994 թվականն աշխատել է Ստեփանակերտի թիվ 10 միջնակարգ դպրոցում:

1997 թվականին հրավիրվել և որպես դասախոս աշխատանքի է անցել ԱրՊՀ օտար լեզուների ֆակուլտետում: Նույն թվականից դասավանդել է նաև ԱրՊՀ-ին կից գործող քոլեջում:

2009 թվականից աշխատանքի է անցել Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցում:

Հ. Սեյրանյանը ղեկավարում է դպրոցի անգլերենի առարկայական հանձնաժողովի աշխատանքները:

Նրա աշակերտները օլիմպիադայի քաղաքային, հանրապետական և ՀՀ-ի եզրափակիչ փուլերում միշտ էլ գրավել են մրցանակային 1-ին և 2-րդ տեղերը, որի համար էլ նա բազմիցս պարգևատրվել է կրթության քաղաքային բաժնի, ԿԳՍ նախարարի և ԼՂՀ Նախագահի կողմից:

2014 թվականի հոկտեմբերի 3-ին նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Անահիտ Պողոսյան: Ծնվել է 1963թ. սեպտեմբերի 28-ին, Ստեփանակերտ քաղաքում, ծառայողի ընտանիքում:

1980թ. ավարտել է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցը, 1988թ. ավարտել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը գերազանցության դիպլոմով:

1989թ. սեպտեմբերին աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում, որպես երկարօրյա խմբի դաստիարակչուհի, 1992թ. որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1992թ. դեկտեմբերին նշանակվել է դպրոցի արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն: Արցախյան գոյամարտի թեժ պահին աշակերտների հետ մեկտեղ այցելություններ է կազմակերպել Շուշիի գումարտակ և Ստեփանակերտ քաղաքում տեղակայված գումարտակները՝ գեղարվեստական-երաժշտական հայրենաշունչ ծրագրերով:

1993թ. սեպտեմբերին նշանակվել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: 2006թ. մարտից աշխատում է որպես դպրոցի տնօրեն:

2008թ. ԱրՊՀ խորհրդի անդամ է, 2013թ.՝ ԱրՊՀ խորհրդի քարտուղար:

2008թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի մենեջմենթի համալսարանի իրավագիտություն բաժինը:

ԼՂՀ դպրոցականների հայոց լեզվի և գրականության առարկայական օլիմպիադային աշակերտներին լավ պատրաստելու և աշակերտներին մոտ ստեղծա-

գործական կարողություններ զարգացնելու համար տարբեր ուսումնական տարիների պարգևատրվել է ԿԳ նախարարության, քաղաքապետի, ԿՍ բաժնի պատվոգրերով ու նվերներով, մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած հաջողությունների և բանակ-հասարակություն կապը ամուր պահելու համար պարգևատրվել է ՀՀ ՊՆ, ԼՂՀ ՊՆ պատվոգրերով, ինչպես նաև թանկարժեք նվերներով:

2009թ. մարտին մասնակցել է ՀՀ Ազգային ժողովում կազմակերպված գիտաժողովին և հանդես եկել «Հայրենասիրական դաստիարակության դերն ու նշանակությունը դպրոցականների դաստիարակության գործում» թեմայով:

2009թ. Ե. Չարենցի անվան թիվ 7 դպրոցը հանրապետությունում ճանաչվել է որպես տարվա լավագույն դպրոց:

Անահիտ Պողոսյանը ԱրՊՀ 40-ամյակի առթիվ պարգևատրվել է «ԱրՊՀ-40» հուշամեդալով: Հանրապետությանը մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար 2012թ. պարգևատրվել է ԼՂՀ վարչապետի հուշամեդալով:

2013թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով նրան.շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

2014թ. ԼՂՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության կողմից պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն» մեդալով:

Նատաշա Պողոսյան: Ծնվել է 1958թ. Մարտակերտ քաղաքում: 1976թ. ավարտել է շրջկենտրոնի թիվ 1 միջնակարգ դպրոցը, աշխատանքի ընդունվել Մարտակերտի թիվ 3 մսուր-մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: 1978-1982թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, գերազանց գնահատականներով ավարտել լեզվագրական ֆակուլտետը:

1982-1985թթ. աշխատել է Մարտակերտի շրջանային պիոներական տանը՝ որպես մեթոդիստ:

1985-1986 ուս.տարում աշխատել է շրջկենտրոնի գիշերօթիկ միջնակարգ դպրոցում:

1986-1992թթ. զբաղեցրել է Մարտակերտի լուսաշխատողների շրջանային տան տնօրենի պաշտոնը: Համատեղության կարգով հայոց լեզու և գրականություն է դասավանդել հեռակա երեկոյան դպրոցում:

1992-1996թթ. բռնագաղթից հետո ապրել է Ռուսաստանի Դաշնությունում:

1996թ. առ այսօր աշխատում է Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Տարիներ շարունակ դպրոցում վարել է հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման աշխատանքը: Առարկայական օլիմպիադաներում և ստեղծագործական շարադրությունների մրցույթներում իր աշակերտների ունեցած հաջողությունների համար բազմիցս արժանացել է պատվոգրերի:

2011թ. պարգևատրվել է ԼՂՀ վարչապետի հուշամեդալով: 2013թ. ԼՂՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ և ֆինանսական միջոցներով հրատարակվել է Նատաշա Պողոսյանի «Ուսուցչուհի իմ թղթապանակը» մեթոդական ձեռնարկը: Մանկավարժական և մեթոդական հոդվածներն ընթերցողին ծանոթ են ոչ միայն «Լուսարար» թերթի, այլ նաև Հայաստանում տպագրվող «Անդին» ամսագրի էջերից:

2013թ. «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում ԼՂՀ ԿԳ նախարարության

կողմից պարգևատրվել է «Լավագույն ավանդույթների պահպանումը և նորարարությունը մանկավարժության մեջ» անվանակարգում հաղթելու համար:

2014թ. շնորհվել է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

2014թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Գեորգի Սևիկյան: Ծնվել է 1979 թվականի հուլիսի 27-ին, Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Աշանի միջնակարգ դպրոցում: 1966թ. ավարտելով միջնակարգ դպրոցը, ընդունվել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի բաժինը և այն ավարտել 1970թ.:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1970թ., գործուղվել Դաշքեսանի միջնակարգ դպրոցը՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

1971-1972թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում:

1972թ. նշանակվում է Մարտունու միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ, որոշ ժամանակ անց՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 1976-1978թթ.՝ Մարտունու ութամյա դպրոցի տնօրեն: 1978-1988թթ. Մարտունու միջնակարգ դպրոցում ֆիզիկայի ուսուցիչ:

1989-1998թթ. շրջժողկրթբաժնի մեթոդկաբինետի վարիչ (ընդմիջումով): 1993-1997թթ. 3-րդ ՊՇ զինծառայող՝ կապի պետի տեղակալ: 1999-2001թթ. Մարտունու թիվ 2 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն: 2001-2008թթ. կրթության բաժնի մասնագետ, գլխավոր մասնագետ: 2008թ. օգոստոս-2012թ. դեկտեմբեր՝ Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ:

2013-2015թթ. կրթության բաժնի վարիչի տեղակալ:

2015թ. հոկտեմբեր՝ Հադրութի շրջանի Բանաձորի դպրոցի ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

Դպրոցում աշխատելու տարիներին եղել է ֆիզիկայի ուսուցիչների շրջանային մեթոդմիավորման նախագահ, ակտիվ մասնակցություն է ունեցել ֆիզիկայի ուսուցիչների գիտաժողովներին, սեմինար-խորհրդակցություններին, մարզային և հանրապետական մանկավարժական ընթերցումներին:

Բարձր է գնահատվել Գ.Սևիկյանի բազմամյա աշխատանքը: Արժանացել է Ուսուցիչ-մեթոդիստի (1984թ.), ԼՂՀ վաստակավոր մանկավարժի (2014թ.) կոչումներին:

Արկադի Թովմասյան: Ծնվել է 1948թ. Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում:

Արկադի Թովմասյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 1970 թվականից՝ աշխատելով կրթության և մշակույթի տարբեր օջախներում: 1987 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1981 թվականից աշխատում է Արցախի մայր բուհում, 2012 թվականից առ այսօր մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչն է: 1996 թվականին ստացել է Արցախի պետական համալսարանի դոցենտի, իսկ 2012 թվականին՝ պրոֆեսորի կոչում: 1998-2002 թվականներին աշխատել է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարարի, 2002-2008 թվականներին՝ ԼՂՀ կրթության, մշակույթի և

սպորտի նախարարության վարչության պետի պաշտոններում: Հեղինակ է մի շարք գրքերի և տասնյակ գիտական հոդվածների: ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակի կրկնակի դափնեկիր է, պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Մանկավարժական անբասիր աշխատանքի համար 2014թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Լենա Գրիգորյան: Ծնվել է 1945թ. Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգն ավարտել է մայրաքաղաքի թիվ 7 դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1971թ.):

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1974 թվականից՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ամբիոնում: 1987 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1993 թվականին ստացել է Արցախի պետական համալսարանի դոցենտի, իսկ 2009 թվականին՝ պրոֆեսորի կոչում: Հեղինակ է մի շարք գրքերի և տասնյակ գիտական հոդվածների, որոնց մեծ մասը նվիրված է հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններին:

Լենա Գրիգորյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգընթաց ծավալել է նաև հասարակական գործունեություն: Նա Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից է:

2014թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Շուրջ 36 տարի բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել երկրամասի կառավարման համակարգում՝ Ռայա Մուսայելյանը: Աշխատելով տարբեր բնագավառներում, նա իրեն դրսևորել է որպես լավագույն մասնագետ, համեստ, հայրենասեր և հմուտ կազմակերպիչ: Աշխատանքի ընթացքում վայելել է կոլեկտիվի և իր սաների հարգանքը՝ շնորհիվ իր նախաձեռնությունների և բոլորանվեր աշխատանքի: Նվիրական աշխատանքին զուգահեռ մշտապես զբաղվել է մասնագիտական ստեղծագործական աշխատանքով և մեթոդամանկավարժական հոդվածներով հանդես եկել մամուլում:

Ռայա Մուսայելյան: Ծնվել է 1958 թվականի հունիսի 17-ին, Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում, մանկավարժի ընտանիքում: 1975թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը:

1975-1979թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատել է Թաղավարդի Ա.Գրաշու անվան միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: 1988թ. տեղափոխվել է Ստեփանակերտ, աշխատանքի անցել թիվ 5 դպրոցում, իսկ 1990թ. տեղափոխվել է թիվ 8 դպրոց:

2000թ. հունիսի 30-ից աշխատել է հանրապետության կրթության և գիտության նախարարի օգնականի պաշտոնում, 2002թ. դեկտեմբերի 2-ից՝ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության և գիտության վարչության ծրագրամեթոդական և նախադպրոցական բաժնի վարիչի, 2007թ.՝ հանրակրթության և գիտության վարչության պետի պաշտոններում՝ շարունակելով համատեղության կարգով աշխատել նաև Ստեփանակերտի թիվ 8 դպրոցում:

Պարգևատրվել է կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև կառավարության մի շարք պատվոգրերով:

2015թ. հոկտեմբերին 3-ի նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Իրինա Գրիգորյան: Ծնվել է Ստեփանակերտում, 1952թ.: 1974 թվականին ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժինը, մանկավարժական աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ և ուսմասվար: 1992թ. տեղափոխվել է կրթության նախարարություն և աշխատել որպես մեթոդիստ: 1993թ. նշանակվել է թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսմասվար: 1999թ. հիմնադրել է «Էրուդիտ» մասնավոր դպրոցը, որը ղեկավարել է մինչև 2008 թվականը: 2009թ. նշանակվել և առ այսօր աշխատում է որպես թիվ 3 պետական մանկապարտեզի տնօրեն:

Իրինա Գրիգորյանը նաև «Արցախի դիվանագիտական ինստիտուտ» հասարակական կազմակերպության ղեկավարն է:

Աշխատանքի հանդեպ նվիրվածության, պահանջկոտության, մարդկային վեհ հատկանիշների, կազմակերպչական ընդգծված ունակությունների շնորհիվ նա վայելում է գործընկերների ու սաների սերն ու հարգանքը: 2015թ. նրան շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Արեգա Իշխանյան: Ծնվել է 1954թ. Ասկերանում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը և ավարտելուց (1976թ.) անցել մանկավարժական աշխատանքի՝ որպես անատոմիայի և ֆիզիոլոգիայի դասախոս Ստեփանակերտի բժշկական քոլեջում, որտեղ աշխատում է առ այսօր: 1980 թվականից ղեկավարում է քոլեջի նախակլինիկական գծով ցիկլային հանձնաժողովը: 1987 թվականին արժանացել է ավագ ուսուցչի կոչման: Գործունեության շուրջ քառասուն տարիների ընթացքում Արեգա Իշխանյանը իրեն դրսևորել է որպես մասնագիտական բարձր կարողություններով օժտված բանիմաց ու պատասխանատու աշխատող, հոգատար մանկավարժ, ազնիվ ու հայրենասեր քաղաքացի և արժանացել իր սաների ու գործընկերների հարգանքին:

Մանկավարժական բեղմնավոր աշխատանքի համար 2015թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Սիդա Գրիգորյան: Ծնվել է 1963թ. Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է մայրաքաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցը, իսկ 1984թ.՝ Ստեփանակերտի մանակվարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1984 թվականին աշխատանքի է անցել լուսավորության աշխատողների մարզային տանը՝ որպես հրահանգիչ-մեթոդիստ: 1985-1990թթ. աշխատել է թիվ 10 միջնակարգ դպրոցում՝ որպես դաստիարակ, ջոկատավար, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն: Այնուհետև տեղափոխվել է Ստեփանակերտի թիվ 11 միջնակարգ դպրոց և սկսել աշխատել որպես պատմության ուսուցչուհի, իսկ 1998թ. նշանակվել է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1999 թվականից առ այսօր այդ դպրոցի տնօրենն է: Աշխատանքի հանդեպ նվիրվածության, պահանջկոտության, մարդկային վեհ հատկանիշների, կազմակերպչական ընդգծված ունակությունների շնորհիվ նա

վայելում է մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների սերն ու հարգանքը, ունի ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Ժասմեն Դավթյան: Ծնվել է 1960թ. Կապան քաղաքում: Նկատի ունենալով, որ Ժ. Դավթյանի գործունեության մասին նշվել է 4-րդ գլխի 3-րդ բաժնում, միայն նշենք, որ 2016թ. ԼՂՀ Նախագահի հրամանով արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Աշոտ Ապրեսյան: Ծնվել է 1962թ. Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգն ավարտել է թիվ 2 դպրոցում, բարձրագույնը՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում:

Աշոտ Ապրեսյանը մանկավարժական գործունեությունը սկսել է 1986 թվականից՝ աշխատանքի անցնելով Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1992-1996 թվականներին զինվորագրվել է արցախյան բանակին: 1997-1998 ուսումնական տարում աշխատել է Ստեփանակերտի թիվ 6 միջնակարգ դպրոցում: 1998-2005 թվականներին աշխատել է թիվ 1 միջնակարգ դպրոցում: 2005 թվականից առ այսօր աշխատում է Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ:

Ա. Ապրեսյանը մանկավարժական գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես հմուտ մանկավարժ, ազնիվ ու խստապահանջ մասնագետ:

Նա մշտապես հետևում է ֆիզիկայի բնագավառի մեթոդամանկավարժական նորություններին՝ դրանք տեղայնացնելով ու դրանց մասին պատմելով իր սաներին: Աշոտ Ապրեսյանը բարձր պատասխանատվությամբ է կատարում իր առջև դրված խնդիրները: 2016թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Թամարա Բաղդասարյան: Ծնվել է 1954թ. Հադրութի շրջանի Թաղասեռ գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում: 1979 թվականին ավարտել է Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը և աշխատանքի անցել Թաղասեռ գյուղի մանկապարտեզում՝ որպես վարիչ:

1980թ. նշանակվել է Թաղասեռի 8-ամյա դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն, միաժամանակ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1982 թվականին նշանակվել է նույն դպրոցի տնօրեն ու աշխատել մինչև 1988 թվականը:

1988 թվականից անցել է կուսակցական աշխատանքի:

1992թ. սեպտեմբերին նշանակվել է Թաղասեռի միջնակարգ դպրոցի տնօրեն և աշխատել մինչև 1996 թվականը:

1996 թվականից առ այսօր աշխատում է Թաղասեռի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես բանիմաց աշխատող: 2016թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Սվետլանա Սարգսյան: Ծնվել է 1955թ. Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգն ավարտել է մայրաքաղաքի թիվ 3 դպրոցում, բարձրագույնը՝ Պյատիգորսկ քաղաքի լեզվաբանական ինստիտուտում:

Սվետլանա Սարգսյանը մանկավարժական գործունեությունը սկսել է 1972

թվականի սեպտեմբերից, երբ աշխատանքի է անցել Ասկերանի շրջանի Խանցք գյուղում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի: 1978 թվականի սեպտեմբերից մինչև 2008 թվականի սեպտեմբերը աշխատել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցչուհի և փոխտնօրեն: 2008 թվականից առ այսօր աշխատում է թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցչուհի:

Փորձառու ուսուցչուհին իր փորձը սիրով է փոխանցում մասնագետ գործընկերներին ու սկսնակ ուսուցիչներին, նրա սաները մշտապես առաջնակարգ տեղեր են զբաղեցնում առարկայական օլիմպիադաներում: Մանկավարժական գործունեության ընթացքում նա աչքի է ընկել ստեղծագործականությամբ, մանկավարժական ոգևորությամբ և արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Մելիք Վարդանյան: Ծնվել է 1931թ. հունվարի 24-ին, Հադրութի շրջանի Ջրակուս գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, իսկ Հողերի միջնակարգ դպրոցն ավարտել է 1947թ.:

Ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը և աշխատանքի անցել Ջրակուսի 8-ամյա դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ: 1982թ. մինչև 1999թ. Մ. Վարդանյանը աշխատել է որպես դպրոցի տնօրեն: Նա իր անսպառ եռանդով, մարդկային հատկանիշներով վայելել է ինչպես իր սաների, այնպես էլ համագյուղացիների սերն ու հարգանքը:

Վաստակաշատ ուսուցիչը օժտված է երկնային հատուկ տաղանդով: Նրա ստեղծած ինքնաշեն ստեղծագործությունները բազմիցս արժանացել են մրցանակների, իսկ կազմակերպած ցուցահանդեսները՝ գովասանքի:

1976թ. Մ. Վարդանյանը ինքնուս նկարիչների առաջին համամիութենական փառատոնում հաղթող է ճանաչվել և պարգևատրվել մեդալով:

ԼՂԻՄ կրթության բաժնի կողմից 1974 և 1987թթ. պարգևատրվել է սոցմրցության հաղթողի կրծքանշաններով, իսկ 1985թ.՝ երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների համար՝ ժողովրդական կրթության պատվոգրով:

1991-2001թթ. երկարամյա անբասիր աշխատանքի և արցախյան ապրելակերպն արտացոլող տեխնիկական ցուցահանդեսներում ներկայացրած ստեղծագործությունների համար և ծննդյան օրվա կապակցությամբ պարգևատրվել է պատվոգրերով:

2002թ. մայիսի 29-ին կերպարվեստի և տեխնիկական ստեղծագործությունների հանրապետական մրցույթին ակտիվորեն մասնակցելու համար պարգևատրվել է պատվոգրով: 2016թ. նրան շնորհվել է ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ պատվավոր կոչում:

6.ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչների գործունեությունը

2005-2016 թվականներին ԼՂՀ նախագահներ՝ Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի հրամանագրերով ԼՂՀ գիտության վաստակավոր կոչում է շնորհվել Արցախի պետական համալսարանի 14 դասախոսների, որոնցից շատերն այսօր ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորներ են, ԼՂՀ գիտական կենտրոնի տնօրեն, կրթության գիտության և սպորտի փոխնախարար և համատեղության կարգով դասավանդում են նաև մայր բուհում:

Ըստ փաստագրական տվյալների, ժամանակագրական կարգով ներկայացնենք նրանց գործունեությունը:

Սոկրատ Աղալարի Խանյան: Ծնվել է 1930թ. Հադրութի շրջանի Աղբուլաղ (Ակնաղբյուր) գյուղում: Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, ավարտել (1953թ.) առաջին կարգի դիպլոմով, աշխատանքի անցել Բաքվի «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմագրությունում: 1962-1965թթ. սովորել է մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի ասպիրանտուրայում:

1965թ. պաշտպանել է գիտական թեզ՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1965-1969թթ. դասավանդել է Բաքվի մանկավարժական ինստիտուտում: 1969թ. առ այսօր աշխատում է Արցախի մայր բուհում: Տարբեր տարիների եղել է ֆակուլտետի դեկան և ամբիոնի վարիչ:

Հեղինակ է գիտական մենագրությունների և հոդվածների: 1958 թվականից գրողների միության անդամ է, հրատարակել է բանաստեղծությունների 15 ժողովածու: 1991թ. ունի պրոֆեսորի կոչում: 2002թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով բ.գ. դոկտորի գիտական աստիճան: Գիտամանկավարժական, գրականագիտական գործունեության տարիներին Ս. Խանյանը գրել և հրատարակել է շուրջ չորս տասնյակից ավելի գրականագիտական, ռազմահայրենասիրական, մեթոդական աշխատություններ, բուհական դասագրքեր, ձեռնարկներ, 100-ից ավելի հոդվածներ, հուշապատումներ, ակնարկներ, բանաստեղծությունների ժողովածուներ, մտորումներ և մշակութային կյանքին վերաբերող բազմաբնույթ հոդվածներ: Այսօր էլ 87-ամյա գիտնական-մանկավարժը շարունակում է իր ստեղծագործական աշխատանքը՝ ընթերցողի սեղանին դնելով նոր գրքեր ու ձեռնարկներ:

Հավուր պատշաճի է գնահատվել ճանաչված գիտնական-գրականագետի, մանկավարժի, արգասավոր գործունեությունը: 2005թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Համլետ Վաղարշակի Գրիգորյան: Ծնվել է 1941թ. Մարտունու շրջանի Հերհեր գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում՝ 1969թ.:

1969-1981թթ. մասնագիտությամբ աշխատել է Ստեփանակերտի թիվ1 և 5 միջնակարգ դպրոցներում, միաժամանակ համատեղության կարգով՝ մանկավարժական ինստիտուտում: 1981թ. ստացել է մ.գ.թ. գիտական աստիճան, 1984թ. նրան շնորհվել է դոցենտի, 2001թ.՝ պրոֆեսորի կոչում: 1981 թվականից մինչև 1999 թվականը աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (ԱրՊՀ) մաթեմատիկայի ամբիոնում: 1999-2000թթ. ԼՂՀ կրթության և գիտության նախարարն էր, իսկ 2002-2008թթ.՝ Արցախի պետհամալսարանի ռեկտորը: Շուրջ 3 տասնյակ գիտամեթոդական հոդվածների և աշխատությունների հեղինակ է: 2004թ. մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի 32-րդ ասամբլեայի նիստերին:

Կրթության և գիտության ոլորտներում ունեցած ակնառու հաջողությունների համար Հ. Գրիգորյանը պարգևատրվել է «Մերսոպ Մաշտոց» շքանշանով:

2006թ. արժանացել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Սերգեյ Ալեքսանդրի Գրիգորյան: Ծնվել է 1925թ., Ասկերանի շրջանի Սառնաղբյուր գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձ-

ռագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում (1951թ.):

1966թ. հոկտեմբերից մինչև 1982թ. հուլիս ամիսը աշխատել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնում՝ ավագ դասախոսի պաշտոնում: 1982թ. հուլիսից մինչև 1989թ. փետրվարը աշխատել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում: Հաշվի առնելով նրա երկարամյա գիտական մանկավարժական գործունեությունը և ղեկավարչական մեծ փորձը, 2000թ. ապրիլին նրան շնորհել են ամբիոնի պրոֆեսորի կոչում:

Ըստ արժանվույն է գնահատվել Ս. Գրիգորյանի բազմամյա գիտամանկավարժական գործունեությունը, 2006թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Գուրգեն Խաչատուրի Բաղդասարյան: Ծնվել է 1926թ. Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1953թ.):

Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում, իսկ 1962թ.՝ Բաքվի թիվ 30 միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1962թ. դասախոսական աշխատանք է կատարում նախ Բաքվի մանկավարժական ինստիտուտում, այնուհետև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, իսկ հետագայում՝ ԱրՊՀ-ում:

Բանասիրական գիտությունների թեկնածու է, 1982թ.՝ դոցենտ: 1982-1988թթ. եղել է բանասիրական ֆակուլտետի դեկան, 2002թ.՝ պրոֆեսոր: Մի շարք գրքերի հեղինակ է: Հրատարակվել են «Արցախի բարբառի բառարան»-ի 1-ին և 2-րդ հատորները:

2006թ. արժանացել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Արզիկ Մարտիրոսի Մխիթարյան: Ծնվել է 1946թ. Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղում: Միջնակարգն ավարտել է Հաթերքի դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

Ավարտելուց անմիջապես աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1969 թվականին հրավիրվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ՝ որպես հոգեբանության դասախոս, որտեղ աշխատում է առ այսօր: Հանրապետության դատական համակարգի հոգեբան-փորձագետն է: 36 գիտական հոդվածների, աշխատությունների հեղինակ է: Նրա «Կինը և զինված հակամարտությունը Արցախում» գիրքը տպագրվել է 2001թ., «Անմահության ճանապարհով» գիրքը՝ 1997թ.: 1998 թվականին միջնակարգ դպրոցների համար նախատեսված հոգեբանության դասագրքի համահեղինակ է, իսկ 2009թ. հրատարակել է նրա «Ընդհանուր հոգեբանություն» բուհական դասագիրքը:

Բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության տարիներին (1969-2016թթ.) Ա. Մխիթարյանը եղել է մայր բուհի (ԱրՊՀ) ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ, մշտական՝ գիտխորհրդի,մեծ խորհրդի անդամ: Նա Արցախյան շարժման ակտիվիստներից է, եղել է «Կռունկ»-ի անդամ: Այսօր էլ շարունակում է իր դասախոսական (համատեղության կարգով), հասարակական-քաղաքական գոր-

ծունեությունը: ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր է, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ:

Ա. Մխիթարյանը մանկավարժական անբասիր աշխատանքի, հասարակական-քաղաքական ասպարեզում ունեցած ծառայությունների համար արժանացել է մի շարք մեդալների, պատվոգրերի, իսկ 2007թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Ստեփան Կոստիի Պետրոսյան: Ծնվել է 1948թ. Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում (1971թ.):

Ստեփան Պետրոսյանը մանկավարժական գործունեությունը 1971թ. սկսել է Արցախի պետական համալսարանից: 1984թ. պաշտպանելով գիտական թեզ՝ ստացել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1988թ. ԽՍՀՄ ԲՈՀ-ի որոշմամբ նրան շնորհվել է դոցենտի կոչում: 2002 թվականից գլխավորում է ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնը: Այդ տարիների ընթացքում ուսումնական, գիտական և կազմակերպչական աշխատանքների բարելավման ուղղությամբ ձեռք բերած հաջողությունների համար նրա գլխավորած ամբիոնը երեք անգամ արժանացել է ԱրՊՀ պատվոգրի: Ս. Պետրոսյանը հեղինակ է 40-ից ավելի գիտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական հոդվածների և մի քանի գրքերի: Միայն 2006-2008թթ. լույս տեսան նրա հեղինակած «Մաթեմատիկական անալիզի դասախոսություններ» գրքի երեք մասերը և «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի լրացուցիչ գլուխներ: Դասավանդման հիմնախնդիրներ» գիրքը:

Գիտամանկավարժական 37 տարիների ընթացքում Ս. Պետրոսյանն իր ներդրումն է ունեցել մանկավարժների և այլ մասնագետների պատրաստման գործում:

Մեծ է Ս. Պետրոսյանի վաստակը ԼՂՀ կրթական համակարգում: Նա իր գիտամանկավարժական գործունեության տարիներին անբասիր աշխատանքի համար արժանացել է մի շարք պատվոգրերի, իսկ 2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Անահիտ Միքայելի Աթայան: Ծնվել է 1948թ. Մարտունու շրջանի Աշան գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղի դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժնում:

Անահիտ Աթայանը 1969 թվականին աշխատանքի է անցել Նոր շենի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1974 թվականի ապրիլին աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի դասախոս: 1986 թվականի ապրիլին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2001-ին նրան շնորհվել է հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտի կոչում:

Նույն թվականին աշխատանքում ցուցաբերած հաջողությունների համար պարգևատրվել է ԼՂՀ կառավարության պատվոգրով:

1974 թվականից առ այսօր աշխատում է Արցախի պետական համալսարանում՝ որպես գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, 2008 թվականից այդ ամբիոնի վարիչն է:

Մի շարք գիտական հոդվածների ու գրքերի հեղինակ է:

Բարձր է գնահատվել Ա. Աթայանի տարիների բեղմնավոր գործունեությունը, 2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Օֆելյա Ենոքի Բաբայան: Ծնվել է 1947թ. Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Միջնակարգն ավարտել է հայրենի գյուղում, բարձրագույնը՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում:

Օֆելյա Բաբայանի աշխատանքային գործունեությունը սկսվել է 1969 թվականից, երբ աշխատանքի է անցել Մարտունու և Հադրութի կոմերիտշրջկոմներում՝ որպես բաժնի վարիչ, քարտուղար, ապա Հադրութի շրջանային ռադիոհաղորդումների կազմակերպիչ: 1974 թվականից առ այսօր աշխատում է Արցախի պետական համալսարանում: 1988 թվականին ՀՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որոշ ժամանակ անց արժանացել դոցենտի, իսկ 2006 թվականին՝ պրոֆեսորի կոչման: Դասավանդում է գրաբար, արևմտահայերեն: 2002 թվականից հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է: Զբաղվում է գրաբարի և Արցախ-Ղարաբաղի բարբառի, ռուսերենի առնչության, ժամանակակից հայոց լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի հարցերով: Հեղինակ է մոտ քառասուն գիտական հոդվածների ու գրքերի: Գիտական զեկուցումներով հանդես է եկել լեզվաբանների միջազգային և հանրապետական տասնյակ գիտաժողովներում: Պարգևատրվել է ԱրՊՀ 30-ամյակի հուշամեդալով և ԼՂՀ կառավարության պատվոգրով, իսկ 2008թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ստեփան Վաղարշակի Դադայան: Ծնվել է 1947թ. Շուշի քաղաքում: Միջնակարգն ավարտել է տեղի հայկական դպրոցում, բարձրագույնը՝ Սարատովի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ 1974 թվականին:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1974 թվականին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, որտեղ աշխատել է որպես կոմերիտկազմակերպության քարտուղար և ընդհանուր պատմության դասախոս:

1987-1989 թվականներին նույն ուսումնական հաստատությունում աշխատել է որպես պատմության ֆակուլտետի դեկան:

1989-1990 թվականներին աշխատել է ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեում՝ որպես գաղափարախոսական բաժնի վարիչ՝ միաժամանակ ծավալելով դասախոսական գործունեություն:

1989 թվականի նոյեմբերին ընտրվել է ԼՂ Ազգային խորհրդի անդամ և մասնակցել Երևան քաղաքում տեղի ունեցած՝ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի և ԼՂ Ազգային խորհրդի համատեղ պատմական նիստին:

1992-1995 թվականներին աշխատել է Արցախի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնում: 1998-2000 թվականներին աշխատել է համալսարանի ժողտնտեսության ֆակուլտետի դեկանի պաշտոնում: 2000-2008 թվականներին Ստեփան Դադայանը զբաղեցրել է

ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը: 2002 թվականին ստացել է ԱրՊՀ պրոֆեսորի կոչում: 2008 թվականին ընտրվել է Արցախի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում:

Հեղինակ է երեք գրքերի, ավելի քան չորս տասնյակ գիտական և գիտահրապարակախոսական հոդվածների:

Մեծ է Ս. Դադայանի ներդրումը Արցախի գիտական հանրույթի ձևավորման և բարձրագույն կրթության դաշտում կրթական բարեփոխումների իրականացման գործում:

Ըստ արժանվույն է գնահատվել նրա գիտամանկավարժական գործունեությունը, 2012թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ալեքսանդր Մովսեսի Խաչատրյան: Ծնվել է 1949թ. Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1973 թվականից՝ աշխատանքի անցնելով ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում: 1981 թվականին ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, իսկ 2001 թվականին՝ դոկտորի գիտական աստիճան: 2003 թվականից մինչև 2008 թվականը աշխատել է որպես Արցախի պետական համալսարանի գիտական քարտուղար՝ միաժամանակ դասավանդելով ճարտարագիտության ամբիոնում: 2005 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում: 2009 թվականից ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի վարիչն է: Նրա ղեկավարությամբ մեկ ասպիրանտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Հեղինակ է մեկ ուսումնական ձեռնարկի և տասնյակ գիտական հոդվածների:

2014թ. Ա. Խաչատրյանին շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Գեորգի Հրանտի Սահակյան: Ծնվել է 1956թ. Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է մայրաքաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցը, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում:

Գեորգի Սահակյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 1978 թվականից՝ աշխատանքի անցնելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: 1989-1994թվականներին աշխատել է որպես Երևանի ֆիզիկամաթեմատիկական դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի, 1994-1998 թվականներին՝ թիվ 3 դպրոցի տնօրեն, 1997-2001 թվականներին՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր: 2001-2005-2009-2013 թվականներին եղել է Արցախի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչը, 2005-2009 թվականներին՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանը: 2013 թվականից առ այսօր ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն է: 2003 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2005 թվականին՝ դոցենտի կոչում: Հեղինակ է մի շարք մենագրությունների, ձեռնարկների և ուղեցույցների, տասնյակ գիտական հոդվածների, 2014թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Արպատ Սանջանի Ավանեսյան: Ծնվել է 1944թ. Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Գերազանցությամբ ավարտել է (1960թ.) հայրենի գյուղի միջնակարգ

դպրոցը, առաջին կարգի դիպլոմով՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1965-1968 թվականներին աշխատել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: 1990 թվականին նշանակվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն, 1992 թվականին՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ռեկտոր: 2005 թվականին ընտրվել է ԼՂՀ ԱԺ պատգամավոր, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի, 2010 թվականին՝ ֆինանսաբյուջետային և տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի, 2015 թվականին՝ արտադրության և արտադրական ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովի նախագահ: Ունի տեխնիկական գիտությունների թեկնածուի և մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճաններ, պրոֆեսորի գիտական կոչում: Հեղինակ է տասնյակ գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների: Մի շարք համալսարանների պատվավոր դոկտոր է:

Արգասավոր է եղել բազմավաստակ գիտնական-մանկավարժի, հասարակական-քաղաքական գործչի ավելի քան 50 տարվա գործունեությունը: Գիտելիքների հարուստ պաշարը, մանկավարժական հստակ կեցվածքը, աշխատանքային հարուստ փորձը, գիտակրթական համակարգի ղեկավարին հատուկ պահանջկոտությունը և կոլեկտիվի յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ բարությունը և չափավորությունը միշտ էլ ուսանելի են եղել իր ղեկավարած կոլեկտիվի բոլոր աշխատողների համար: Այսօր էլ Ա. Ավանեսյանը շարունակում է թե՛ գիտամանկավարժական և թե՛ հասարակական-քաղաքական աշխատանքը:

Ահա այդ ասպարեզներում ունեցած մեծ ծառայությունների համար նա արժանացել է ՀՀ և ԼՂՀ կառավարությունների բարձր պարգևների, պատվոգրերի, իսկ 2015թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: (Ա.Ավանեսյանի կենսագրականը գրել է սույն գրքի համահեղինակ Գրիգորի Հարությունյանը):

Ալբերտ Գարեգինի Ալեքսանյան: Ծնվել է 1950թ. Բաքու քաղաքում: Միջնակարգն ավարտել է տեղի ռուսական դպրոցում: Բարձրագույն կրթություն ստանալով Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտում, աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող և ավագ գիտաշխատող: 1991-1993թթ. աշխատել է ՀՀ բարձրագույն կրթության զարգացման պրոբլեմների գիտահետազոտական կենտրոնում: 1993 թվականին հրավիրվել և առ այսօր աշխատում է ԱրՊՀ ֆիզիկայի ամբիոնում (դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ): 1982թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 2007թ.՝ դոկտորի գիտական աստիճան: Ամերիկայի Միացյալ Նահանգների էլեկտրոնիկայի նյութերի հետազոտողների միության անդամ է: Ալբերտ Ալեքսանյանը տասնյակ գիտական, գիտամեթոդական, ուսումնաօժանդակ աշխատությունների, հոդվածների և ձեռնարկների հեղինակ է: Մասնակցել և զեկուցումներով հանդես է եկել մի շարք միջազգային գիտաժողովներում: Նրա ղեկավարությամբ մեկ հոգի պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Ա. Ալեքսանյանի բեղմնավոր գործունեությունը բարձր է գնահատվել, և 2015թ. արժանացել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Արմեն Յուրիկի Սարգսյան: Ծնվել է 1968թ. Հադրութի շրջանի Պլեթանց գյու-

ղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1992 թվականին՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը, 1996 թվականին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ: 1998 թվականին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2000 թվականին՝ դոցենտի կոչում: 1996 թվականից դասավանդում է ԱրՊՀ-ում: 1998-2000 թվականներին համատեղությամբ ղեկավարել է ՀՀ կառավարության առընթեր լեզվի պետական տեսչության ԼՂՀ մասնաճյուղը: 2000-2011 թվականներին զբաղեցրել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի, 2011-2012 թվականներին՝ գիտքարտուղարի պաշտոնը: 2012 թվականից առ այսօր ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարարն է:

Հեղինակ է գիտական, ուսումնամեթոդական շուրջ 7 տասնյակ աշխատությունների, ժողովածուների, հոդվածների, որոնց մեծ մասը վերաբերում է Արցախի բարբառին, բանահյուսությանը, ազգագրությանը: Տարբեր երկրներում մասնակցել է մեկ տասնյակից ավելի միջազգային գիտաժողովների: 2008 թվականին Ստեփանակերտում կազմակերպել է միջազգային հայերենագիտական 8-րդ գիտաժողովը:

Ըստ արժանվույն է գնահատվել Սարգսյանի գիտամանկավարժական գործունեությունը, 2016թ. նրան շնորհվել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

7. ԼՂՀ հանրակրթական դպրոցի տարվա լավագույն ուսուցիչների, տնօրենների գործունեությունը

Ուսումնասիրության բնույթից ելնելով, նպատակահարմար գտանք աշխատության այս բաժնում համառոտակի ներկայացնել նաև մանկավարժական ասպարեզում ցուցաբերած գերազանց ծառայությունների համար «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթներում հաղթող ճանաչված ուսուցիչների, տնօրենների գործունեությունը: Կարծում ենք, նրանց բազմամյա մանկավարժական հարուստ փորձը ուսանելի կլինի երիտասարդ սկսնակ ուսուցիչների համար:

Վարդուհի Գաբրիելյան: Ծնվել է 1950թ. Ստեփանակերտ քաղաքում:

1957թ. ընդունվել և 1967 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1968թ. ընդունվել և 1972 թվականին ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը:

1972-1975թթ. որպես անգլերենի ուսուցչուհի աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում: 1974-1976թթ. աշխատել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում: 1976թ. աշխատանքի է ընդունվել թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1980թ. ընտրվել է մարզխորհրդի պատգամավոր:

1995 թվականից դասախոսում է նաև Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերենի ամբիոնում:

Վարդուհի Գաբրիելյանը մեթոդական մի շարք ձեռնարկ-գրքերի («Kinds of Questions in English», 2007, «Ժամանակակից անգլերենի գործնական քերականություն (շարահյուսություն)»՝ երաշխավորված ԵրՊՀ ռոմանագերմանական բա-

նասիրության ֆակուլտետի գիտխորհրդի կողմից, «Ժամանակակից անգլերենի գործնական քերականություն (վարժություններ)»՝ երաշխավորված ԱրՊՀ գիտխորհրդի կողմից 2014թ.) և բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Վաստակաշատ մանկավարժի փորձը տարածելու նպատակով ԼՂՀ որակավորման ինստիտուտը 1994թ. բրոշյուր է հրատարակել:

2000 թվականին մասնակցել է «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և ճանաչվել Ստեփանակերտ քաղաքի օտար լեզվի (անգլերեն) տարվա լավագույն ուսուցիչ՝ պարգևատրվելով Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի պատվոգրով:

Վարդուհի Գաբրիելյանը պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով (2005թ.), պատվոգրերով, շնորհակալագրերով:

Վալտենա Տոնյան: Ծնվել է 1957թ. օգոստոսի 19-ին Ստեփանակերտ քաղաքում, 1965թ. ընդունվել և 1975թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1976թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի քիմկենսաբանության բաժինը և ավարտել 1981թ.: 1981-1982 ուս.տարում աշխատել է Ասկերանի շրջանի Նախիջևանիկի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիա-կենսաբանության ուսուցչուհի:

1984թ. սկսած աշխատել է Ստեփանակերտ քաղաքի երեկոյան դպրոցում՝ որպես քիմիա-կենսաբանության ուսուցչուհի, 1992թ. մինչ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում, որպես քիմիայի ուսուցչուհի:

Արժանացել է մի շարք գովասանագրերի, պատվոգրերի, շնորհակալագրերի, իսկ 2001-2002 ուս.տարում ճանաչվել է քաղաքի լավագույն ուսուցչուհի քիմիայից:

Վարուժան Աբելի Աղաջանյան: Ծնվել է 1972թ. փետրվարի 18-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1988թ. ընդունվել է Երևանի Մարշալ Բաբաջանյանի անվան ռազմամարզական վարժարանը, 1992թ. ավարտել այն: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ՆՁՊ և ֆիզկուլտուրայի բաժինը, 1996թ. ավարտել այն: 1992թ. մինչև 1995թ. հունվար ամիսը ծառայել է Պաշտպանության բանակում, մասնակցել պատերազմին: 1995 թվականից աշխատում է Ավ. Իսահակյանի անվան թիվ 10 դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, 2003թ. առ այսօր՝ որպես զինղեկ: 2006թ. ԼՂՀ ՊՆ-ի, ՊԲ-ի հրամանատարի կողմից ճանաչվել է «Տարվա լավագույն երիտասարդ զինղեկ»: 2015թ. պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» գերատեսչական մեդալով և պատվոգրով:

Մայիլյա Ալավերդյան: Ծնվել է 1961թ. հուլիսի 3-ին, Ներքին Սզնեք գյուղում: 1982թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Տարրական կրթության մեթոդիկա և մանկավարժություն» ֆակուլտետը, որն էլ ավարտել է 1987թ.: 1989թ. առ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 10 դպրոցում՝ որպես դասվար: 2004թ. արժանացել է «Տարվա լավագույն դասվար» կոչման:

Սիլվա Գրիգորյան: Ծնվել է 1955թ. մայիսի 24-ին: 1978թ. ավարտել է Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների բաժինը: 1988-2006թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 10 դպրոցում՝ որպես անգլերենի ուսուցչուհի: 2004թ. արժանացել է «Տարվա լավագույն անգլերենի ուսուցչուհի» կոչման:

Անահիտ Մեսրոպյան: Ծնվել է 1965թ. մարտի 24-ին, Ստեփանակերտ քաղաքում:

1982թ. ավարտել է թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1987թ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1996-1998թթ. աշխատել է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի թիվ 1 դպրոցում՝ որպես դասվար: 1998թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և թիվ 2 դպրոցում սկսել աշխատել որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

2012թ. ՄՊՍԿ մեթոդիստ էր, 2014թ. քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի մեթոդիստ, 2016թ. բաժնի առաջին կարգի մասնագետ՝ համատեղելով թիվ 2 դպրոցում ուսուցչի աշխատանքը:

Իր մանկավարժական գործունեությանը զուգընթաց կատարում է նաև հասարակական աշխատանք: Մասնակցել է ՀՀ Սփյուռքի կենտրոնում կազմակերպված արևմտահայերեն դասընթացներին և հումանիտար հոսքում դասավանդել արևմտահայերեն:

2009-2010թթ. «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի քաղաքային փուլում «Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում հաղթող է ճանաչվել:

Արժանացել է մի շարք գովասանագրերի, պատվոգրերի, շնորհակալագրերի:

Էլեոնորա Ղազարյան: Ծնվել է 1956թ. հոկտեմբերի 25-ին, Բաքու քաղաքում, 1964 թվականին ընդունվել և 1974 թվականին ավարտել է Բաքվի թիվ 47 միջնակարգ դպրոցը:

1978 թվականին ավարտել է Բաքվի Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտը և ստացել ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1978-1979 ու.ստարում՝ Ասկերանի շրջանի Խաչմաչ գյուղում: 1979 թվականին տեղափոխվել է նույն շրջանի Ջամիլլուի ութնամյա դպրոցը:

1982-1983 թվականներին աշխատել է Ստեփանակերտի թիվ 4 մանկապարտեզում՝ որպես նախապատրաստական խմբի դաստիարակչուհի:

1984-1985 ուս.տարում ռուսաց լեզու և գրականություն է դասավանդել Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1985-1994 թվականներին աշխատել է Ստեփանակերտի թիվ 10 միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի, 1994 թվականի սեպտեմբերից առ այսօր՝ թիվ 11 միջնակարգ, իսկ 2009 թվականից արդեն ավագ դպրոցում:

2000 թվականին հաղթող է ճանաչվել «Լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլում, իսկ 2005 թվականին՝ «Լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի հանրապետական փուլում:

2001, 2004, 2005 թվականներին պարգևատրվել է քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պատվոգրով՝ աշակերտներին առարկայական օլիմպիադայի քաղաքային փուլին լավ նախապատրաստելու համար:

2002 թվականից ղեկավարում է ռուսաց լեզվի և գրականության քաղաքային մասնախմբի աշխատանքները:

2003 թվականին հանրապետական 2-րդ մանկավարժական ընթերցումներում արժանացել է 2-րդ կարգի մրցանակի:

Նորայր Ավետիսյան: Մարտունու շրջանի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչներից է, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ: Գրող, հրապարակախոս Նորայր Ավետիսյանը ծնվել է 1934թ. Հաղորտի գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո 1951 թվականին ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Գերազանցությամբ ավարտելով ինստիտուտը, աշխատանքի է անցել Մարտունու «Դեպի կոմունիզմ» շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես պատասխանատու քարտուղար: 1954-1957թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1957թ. հունվարից Ն. Ավետիսյանը աշխատանքի է անցել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ ավարտել է (1957-1962թթ.) Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը:

Երկարամյա մանկավարժական գործունեության տարիներին (1957-2007թթ.), աշխատել է որպես հայրենի գյուղի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, փոխտնօրեն, տնօրեն, կրթության շրջանային բաժնի դպրոցական տեսուչ, ղեկավարել է նաև շրջանի հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորումը, միաժամանակ եղել է կրթության շրջանային բաժնի խորհրդի անդամ, ղեկավարել կրթության բաժնի կողմից դպրոցների համալիրային ստուգման հանձնաժողովը:

Բազմամյա մանկավարժական գործունեությանը զուգահեռ շուրջ կես դար Ն. Ավետիսյանը կատարել է լրագրողական ու ստեղծագործական աշխատանք: Պարբերական մամուլում տպագրվել են 100-ից ավելի գիտամեթոդական, մանկավարժական հոդվածներ: ԼՂՀ ԿԳ նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի 1999-2012 թվականների համարներում կարդում ես Ն. Ավետիսյանի հետաքրքիր հոդվածները: Իսկ ԼՂՀ գրողների միության «Եղիցի լույսում», ՀՀ ԳՄ «Գրական թերթում» պարբերաբար տպագրվում էին նրա պատմվածքներն ու մանրապատումները: Նա հեղինակ է մեկ տասնյակ գեղարվեստական ստեղծագործությունների: Որպես գրողների միության անդամ (ՀՀ և ԼՂՀ) արժանացել է Եղիշեի անվան մրցանակի, իսկ բազմամյա մանկավարժական գործունեության տարիների անբասիր աշխատանքի համար՝ կառավարական պարգևների:

Նունե Բեգլարյան: Ծնվել է 1964թ. հուլիսի 19-ին, Ասկերան ավանում:

1971թ. ընդունվել և 1981թ. ավարտել է Ասկերանի միջնակարգ դպրոցը: Ուսումնառության տարիներին ցուցաբերել է հետաքրքրություն մաթեմատիկա, ֆիզիկա առարկաների նկատմամբ:

1981թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետը և 1986թ. ավարտել այն:

1986-1994թ. աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ:

1994թ.-ից առ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 2008թ. նույն դպրոցում նշանակվել է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն՝ միաժամանակ դասավանդելով մաթեմատիկա:

2006-2007 ուս.տարում հաղթել է «Լավագույն մանկավարժական փորձ», «Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետությունը» անվանակարգով մրցույթի քաղաքային փուլում և պարգևատրվել պատվոգրով:

Լաուրա Մարտիրոսյան: Ծնվել է 1958 թվականին մարտի 8-ին Հադրութի շրջանի Զրաբերդ (Մյուլքուդարա) գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1975թ. ավարտել է Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան թիվ 9 դպրոցը, 1981թ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1981-1993թթ. աշխատել է Ասկերանի շրջանի Խանաբադի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: 1993թ. առ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում:

2000թ. արժանացել է հանրապետությունում առաջին անգամ անցկացված մրցույթի «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչմանը քաղաքային և հանրապետական փուլերում, 2002թ. մարտին նշանակվել դպրոցի տնօրեն: Հեղինակել է տարբեր թեմաներով 50-ից ավելի հոդվածներ, արժանացել ՀՀ մշակույթի նախարարության, ԼՂՀ կառավարության, ԼՂՀ ԿԳ նախարարության, Հայաստանի և ԼՂՀ պաշտպանության նախարարությունների պատվոգրերի, ԼՂՀ պաշտպանության նախարարի և ԱԿԱ հասարակական կազմակերպության հուշամեդալների: 2015թ. մասնակցել է «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթին, հաղթել քաղաքային փուլում և հաղթող ճանաչվել հանրապետական փուլի «Ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր մակարդակ» անվանակարգում, պարգևատրվել ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրով:

Լյուդմիլա Սիմոնյան: Ծնվել է 1945թ. դեկտեմբերի 13-ին, Ստեփանակերտ քաղաքում:

1964թ. ավարտել է թիվ 3 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Ադրբեջանի պետական համալսարանը, բայց ընտանեկան պայմաններից ելնելով՝ ստիպված էր թողնել կրթությունը: Երեք ամիս անց ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտը, ստացել տարրական դասարանների ուսուցչի որակավորում:

1966-1970թթ. եղել է կոմերիտկազմակերպության քարտուղար:

1970թ. հունվարից 2008 թվականը աշխատել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար:

1988թ. նշանակվել է նույն դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն:

1982-2008թթ. նշանակվել է տարրական օղակի մեթոդմիավորման նախագահ:

Ադրբեջանի ուսուցիչների 4-րդ համագումարում պարգևատրվել և խրախուսվել է ձեռքի ժամացույցով:

1986թ. նոյեմբերի 26-ին արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստ» կոչման: Պարգևատրվել է բազում պատվոգրերով: 2008թ. հոկտեմբերի 4-ին պարգևատրվել է ԼՂՀ «Լավագույն ուսուցիչ» մրցանակով:

Ալվինա Ասրյան: Ծնվել է 1961թ. հուլիսի 13-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1968-1978թթ. ընդունվել և ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցը:

1978-1982թթ. աշխատել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում՝ որպես ֆիզիկայի կաբինետի լաբորանտ:

1979-1984թթ. ընդունվել և ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական

ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը՝ ստանալով տարրական դասարանների ուսուցչի որակավորում:

1982թ. մարտին նշանակվել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցի ավագ ջոկատավար: 1985թ. նույն դպրոցում նշանակվել է դաստիարակ, իսկ 1986թ.՝ դասվար:

2008թ. սեպտեմբերից առ այսօր աշխատում է թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար:

2000թ. հոկտեմբերին «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում քաղաքային փուլի արդյունքներով ճանաչվել է տարվա լավագույն ուսուցիչ:

2012-2013թթ. արժանացել է ՀՀ «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից հատուկ գնահատանքին:

Մայրաքաղաքի թիվ 8 դպրոցի կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի **Իրա Թադևոսյանը** 2007թ. մասնակցել է «Համակարգիչը դասապրոցեսին» մրցույթին և ճանաչվել տարվա լավագույն ուսուցիչ:

2012 թվականին ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի լավագույն ուսուցիչ, իսկ հանրապետական փուլում հաղթող է ճանաչվել «Առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար» անվանակարգում:

2013 թվականին ստացել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

Իրա Թադևոսյանը ծնվել է Ստեփանակերտ քաղաքում, 1973թ. սեպտեմբերի 9-ին, բանվորի ընտանիքում:

1980-1990 թվականներին սովորել է Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել և 1995թ. ավարտել է ԱրՊՀ ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի բաժինը:

Մանկավարժական գործունեությունն սկսել է 1993 թվականից, աշխատել Ասկերանի շրջանի Խանածախ գյուղում, մայրաքաղաքի թիվ 10 միջնակարգ դպրոցում, Քաշաթաղի շրջանի Քարեգահ գյուղում: 2002 թվականից աշխատում է Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի, 2015թ.՝ նաև որպես փոխտնօրեն:

Մայրաքաղաքի թիվ 3 դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի **Լիլիթ Հարությունյանը** 2002 թվականին ճանաչվել է Ստեփանակերտի «Տարվա լավագույն երիտասարդ ուսուցչուհի»:

Ստելլա Պողոսյան: Ծնվել է 1971 թվականի մայիսի 1-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1978-1988թթ. ընդունվել և մեդալով ավարտել է թիվ 8 միջնակարգ դպրոցը:

1988-1993թթ. ընդունվել և ավարտել է Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

1990-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի հերթափոխային դպրոցում՝ որպես լաբորանտ: 1992-1993թթ. աշխատել է երեկոյան դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1993թ. աշխատանքի է անցել թիվ 8 դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի:

2008թ. դպրոցի ռուսական բաժնի հետ տեղափոխվել է թիվ 3 միջնակարգ դպրոց և առ այսօր աշխատում է այդ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Մանկավարժական գործունեության ընթացքում պարգևատրվել է քաղաքապետարանի և ԿԳՍ նախարարության կողմից 13 պատվոգրերով:

2012թ. ապրիլի 10-ին անցկացված «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի քաղաքային փուլում «Ուսուցչի անձնական օրինակը՝ որպես ուսուցման արդյունավետ կազմակերպման գործոն» անվանակարգում հաղթող է ճանաչվել և պարգևատրվել քաղաքապետարանի կողմից:

2000-2001 ուս.տարում Ստեփանակերտի թիվ 5 դպրոցի ուսուցիչներ **Անիվարդ Հայրապետյանը և Վերա Հայրիյանը** մասնակցել են «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և քաղաքային փուլում ճանաչվել հաղթող: Ա. Հայրապետյանը՝ պատմության առարկայից, Վ. Հայրիյանը՝ քիմիա առարկայից:

2002-2003 ուս.տարում դպրոցի տնօրեն **Ռազմիկ Պետրոսյանը** մասնակցել է «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթին և հանրապետական փուլում ճանաչվել հաղթող:

2002-2003 ուս.տարում քաղաքային փուլում «Տարվա լավագույն ուսուցիչ» է ճանաչվել ռուսաց լեզվից **Անահիտ Թավադյանը,** աշխարհագրությունից՝ **Վերա Ավագիմյանը,** իսկ տարվա լավագույն դասվար է ճանաչվել **Ռենա Օհանյանը:** Ռ.Օհանյանը 2003թ. մասնակցել է նաև հանրապետական մանկավարժական երկրորդ ընթերցումներին և ճանաչվել հաղթող:

2010թ. ՆՀՊ առարկայի ուսուցիչ **Արսեն Հարությունյանը** մասնակցել է «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթին և հանրապետական փուլում ճանաչվել հաղթող:

2011թ. դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի **Լաուրա Հովսեփյանը** ԼՂՀ վարչապետի կողմից պարգևատրվել է հուշամեդալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար:

2012թ. դպրոցի դասվար **Գոհար Պողոսյանը** մասնակցել է «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթին և քաղաքային փուլում արժանացել «Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգին:

2012թ. դպրոցը մասնակցել է «Տարվա լավագույն դպրոց» մրցույթին և արդյունքների ամփոփումով հանրապետական փուլում ճանաչվել հաղթող:

Թերեզա Ղարախանյան: Ծնվել է 1963թ. հուլիսի 17-ին, Ստեփանակերտ քաղաքում, ծառայողի ընտանիքում: 1970թ. ընդունվել է թիվ 1 դպրոցի առաջին դասարանը, որն ավարտել է 1980թ.: Նույն տարում ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1984թ. ավարտել է ինստիտուտը՝ ստանալով հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1984թ. սեպտեմբերից Ստեփանակերտի մարզժողկրթբաժնին կից «Պատանի զբուսաշրջիկների կայան»-ում որպես խմբակավար՝ համատեղելով հայոց լեզվի և գրականությ ան աշխատանքը Ստեփանակերտի թիվ 1, այնուհետև թիվ 8 միջնակարգ դպրոցներում:

1985թ. հոկտեմբերից տեղափոխվել է քաղժողկրթբաժնին կից «Սպորտդպրոց»՝ որպես տեսուչ-մեթոդիստ՝ համատեղելով աշխատանքը թիվ 8 միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1988թ. տեղափոխվել է թիվ 8 միջնակարգ դպրոց: 2003-2004թթ. ուսումնական տարուց նշանակվել է նույն դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանք-

ների գծով տնօրենի տեղակալ:

2013թ. տեղափոխվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժին՝ որպես գլխավոր մասնագետ՝ համատեղելով ուսուցչի աշխատանքը թիվ 8 դպրոցում:

Աշխատանքային գործունեության ընթացքում պարգևատրվել է քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի, կրթության և գիտության նախարարության պատվոգրերով և շնորհակալագրերով:

2006-2007 ուս.տարում «Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցում մասնակցել է «Լավագույն դպրոց» մրցույթին և արժանացել «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք» անվանակարգին:

2010-2011 ուս.տարում «Լավագույն դպրոց» մրցույթում թիվ 11 դպրոցը հաղթող է ճանաչվել և արժանացել «Տարվա լավագույն դպրոց» մրցանակին:

Վլադիմիր Խաչատրյան: Ծնվել է 1953թ. փետրվարի 8-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1976թ. ավարտել է թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1985թ. ավարտել է Խարկովի ռազմատեխնիկական ուսումնարանը:

Ջինղեկի պաշտոնում աշխատում է 2003 թվականից: Աշակերտների ռազմահայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով անց է կացրել բազմաբնույթ միջոցառումներ և մասնակցել տարբեր ռազմահայրենասիրական մրցումների:

2003, 2009-2010թթ. դարձել է քաղաքային և հանրապետական ռազմախաղերի հաղթող: Ընդհանուր առմամբ պատրաստել է հանրապետության 42 չեմպիոն տարբեր ռազմամարզական մարզաձևերից: Նրա սաները պատվով են կատարում իրենց պարտքը բանակում՝ որպես զինվոր: Տասնյակ աշակերտներ ՊԲ և ԱԾ սպաներ են, 4 շրջանավարտ սովորում են ռազմական ուսումնական հաստատությունում:

2014թ. ճանաչվել է «Լավագույն զինղեկ» մրցույթի հաղթող:

Ադելինա Հովսեփյան: Ծնվել է 1946թ. օգոստոսի 26-ին Հադրութում: 1964թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցը:

1969թ. ավարտել է Բաքվի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ուսմանը զուգահեռ աշխատել է երիտասարդ աշխատողների երեկոյան դպրոցում՝ որպես լաբորանտ:

1969թ. վերադարձել և աշխատանքի ընդունվել Շուշիի ռուսական դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

1970-2010թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

Խրախուսվել է պատվոգրերով, իսկ 1996-2010թթ. արժանացել Ստեփանակերտ քաղաքի լավագույն ուսուցչի կոչման:

Լյուբա Միքայելյան: Ծնվել է 1961թ. ապրիլի 1-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1978թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի քիմիա-կենսաբանություն բաժինը, որն ավարտել է 1983թ.:

1983թ. նոյեմբերից աշխատանքի է ընդունվել թիվ 8 մանկապարտեզում, որպես գործավար, այնուհետև որպես դաստիարակչուհի: 1986թ. տեղափոխվել է թիվ 3 մանկապարտեզ, աշխատել որպես դաստիարակչուհի:

1987-1993թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 21 պրոֆտեխուսումնարա-

նում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի: 1994-1995թթ. աշխատել է ԱՐՊՀ-ում՝ որպես լաբորանտ, համատեղելով աշխատանքը թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1994-2014թթ. աշխատել է թիվ 2 դպրոցում: 2004-2014թթ. կենսաբանության քաղաքային մեթոդմիավորման նախագահն է եղել: 2002-2003 ուս.տարում արժանացել է կենսաբանության լավագույն ուսուցչի կոչման: Նրա աշակերտները բազմիցս մասնակցել են քաղաքային և հանրապետական օլիմպիադաներին և գրավել առաջնակարգ տեղեր, որի համար քաղաքապետարանի կրթության բաժնի և Կրթության ու գիտության նախարարության կողմից արժանացել է մի շարք գովասանագրերի ու շնորհակալագրերի:

2014թ. օգոստոսի 5-ից մինչև 2015թ. հունվարի 28-ը աշխատել է ՄՊՍԿ-ում, որպես մեթոդիստ, համատեղելով այն թիվ 1 դպրոցում՝ որպես կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի: Այժմ աշխատում է Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնում՝ որպես մասնագետ:

Լուսինե Արզանգուլյան: Ծնվել է 1975թ. սեպտեմբերի 15-ին, Բաքվում, բանվորի ընտանիքում:

1952թ. ընդունվել է և 1997թ. ավարտել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության բաժինը:

1995թ. ընդունվել է աշխատանքի Ստեփանակերտի թիվ 5 միջնակարգ դպրոցում՝ որպես աշխարհագրության ուսուցչուհի:

1998թ. տեղափոխվել է թիվ 2 միջնակարգ դպրոցը, որտեղ աշխատում է առ այսօր:

Արժանացել է պատվոգրերի Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի կողմից.

ա) 2009թ.՝ ԼՂՀ դպրոցականների աշխարհագրության առարկայական օլիմպիադայի քաղաքային փուլին աշակերտներին լավ նախապատրաստելու համար,

բ) 2010թ.՝ «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի քաղաքային փուլում «Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետությունը» անվանակարգում հաղթելու համար,

գ) 2015թ. «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի «Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություններ առաջացնելու» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար,

դ) 2015թ. թանգարանների միջազգային օրվան նվիրված «Պատանի բնագետ» միջքաղաքային դպրոցական առաջին օլիմպիադայում 1-ին տեղը զբաղեցնելու համար:

Լյուդմիլա Հովհաննիսյան (Կարապետյան): Ծնվել է 1958 թվականի հունիսի 8-ին, Մարի քաղաքում՝ մտավորականի ընտանիքում: 1960 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Ստեփանակերտ:

1975 թվականին գերազանց գնահատականներով ավարտել է թիվ 3 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանը: Նույն տարում ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը, որտեղ ուսանելու տարիներին արժանացել է լենինյան թոշակի:

1979 թվականին ինստիտուտը ավարտելով գերազանց գնահատականներով,

աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

1989թ. փետրվարին նշանակվում է 11-րդ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1992 թվականի հունիսին՝ այդ դպրոցի տնօրեն: 1993-1995թթ. աշխատել է քաղաքային կրթության բաժնում, որպես գլխավոր մասնագետ:

1995թ. օգոստոսի 9-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հրամանով նշանակվում է քաղաքի թիվ 8 դպրոցի տնօրեն (թիվ 8 դպրոցը ղեկավարել է մոտ 13 տարի):

2008 թվականին ԼՂՀ վարչապետի որոշմամբ թիվ 8 միջնակարգ դպրոցի ռուսական բաժնի աշակերտական և ուսուցչական կոնտինգենտները տեղափոխվել են Ա. Գրիբոյեդովի անվան թիվ 3 միջնակարգ դպրոց, որի տնօրեն է նշանակվել Լ. Հովհաննիսյանը:

Մանկավարժական գործունեության ընթացքում արժանացել է տարբեր մրցանակների, պատվոգրերի և պարգևների:

2005թ. ԼՂՀ վարչապետի կողմից պատվոգրով՝ աշխատանքում ձեռք բերած հաջողությունների, հայոց գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ:

2014թ. ԼՂՀ պաշտպանության նախարարի կողմից՝ ԼՂՀ ազգային ազատագրական շարժման 25-ամյակի հուշամեդալով:

2015թ. ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների կոորդինացման համառուսական հանձնաժողովի կողմից հոբելյանական մեդալով:

2015թ. ԼՂՀ Նախագահի կողմից «Երախտագիտություն» մեդալով:

2016թ. «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի քաղաքային փուլում հաղթող է ճանաչվել:

Լյուդմիլա Բեգլարյան: Ծնվել է 1956թ., ունի բարձրագույն կրթություն, դասվար է՝ 41 տարվա մանկավարժական ստաժով:

1988թ. առ այսօր աշխատում է Ստեփանակերտի թիվ 7 հիմնական դպրոցում:

Նա ժամանակակից ստեղծագործող ուսուցչուհի է, գերազանց տիրապետում է իր մասնագիտությանը, անընդհատ զարգացնում է իր մասնագիտական հմտություններն ու վարպետությունը:

Դպրոցի տարրական օղակի մեթոդմիավորման նախագահն է: Բարյացակամ ու հոգատար վերաբերմունք է ցուցաբերում երիտասարդ ուսուցիչների նկատմամբ, նրանց ցույց տալիս մասնագիտական և մեթոդական օգնություն: Ակտիվ մասնակցություն է ունենում դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Կազմակերպել է համաքաղաքային դաս-միջոցառումներ, ընդօրինակման դասեր, որոնք գնահատվել են գերազանց:

Լ. Բեգլարյանը ստեղծագործող ուսուցչուհի է, գրել է մանկավարժական հոդվածներ, քնարական բանաստեղծություններ:

ԼՂՀ ԿԳ նախարարության պատվերով Լյուդմիլա Բեգլարյանի հեղինակությամբ տպագրվել է «Սովորենք սովորեցնել» մեթոդական ձեռնարկը և տարածվել հանրապետության դպրոցներում:

2010թ. Լ. Բեգլարյանը արժանացել է քաղաքի «Լավագույն ուսուցիչ» կոչման՝

«Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգով:

2011թ. ճանաչվել է հանրապետության Լավագույն ուսուցիչ «Ուսուցչի անձնական օրինակը՝ որպես ուսուցման արդյունավետ կազմակերպման գործոն» անվանակարգով:

2014 թվականին «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին հաղթող է ճանաչվել:

Նարինե Արզումանյան: Ծնվել է 1971թ. ապրիլի 1-ին, Հադրութի շրջանի Ազոխ գյուղում: 1988 թվականին ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիայի և կենսաբանության ֆակուլտետը:

1993-1995թթ. աշխատել է Հադրութի շրջանի Ազոխ գյուղում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի:

1995-1998թթ. համատեղության կարգով աշխատել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում՝ որպես քիմիայի ուսուցչուհի, մարզադպրոցում՝ որպես սեղանի թենիսի մարզիչ:

1998-2005թթ. դարձյալ համատեղության կարգով աշխատել է գյուղատնտեսական տեխնիկումում և թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ դասավանդելով քիմա:

2005-2011թթ. շարունակել է աշխատել թիվ 3 դպրոցում, իսկ 2011թ. մինչև հիմա աշխատում է թիվ 3 և ֆիզմաթ դպրոցներում՝ որպես քիմիայի ուսուցչուհի:

Քիմիայի և կենսաբանության առարկայական օլիմպիադաների քաղաքային և հանրապետական փուլերին աշակերտներին լավ նախապատրաստելու համար, խրախուսվել է պատվոգրերով 2008թ. ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել է պատվոգրի՝ անաղարտ հայերենով դասավանդման համար:

2011թ. «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի քաղաքային փուլում «Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետությունը» անվանակարգում հաղթելու համար արժանացել է պատվոգրի:

Սիրվարդ Թամազյան: Ծնվել է 1963 թվականի մայիսի 4-ին, Լոռու մարզի Աքորի գյուղում:

1980-1981 ուս.տարում ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը բարձր առաջադիմությամբ:

1977-1980 թվականներին միաժամանակ սովորել է Երևանի Յու. Ֆուչիկի անվան պատանի ժուռնալիստների «Փոքր ակադեմիայում», ստացել լրագրողի որակավորում:

Դպրոցն ավարտելուց հետո Թումանյանի շրջժողկրթբաժնի շրջանային պիոներական տանը նշանակվել է ասմունքի խմբակի ղեկավար: 1981 թվականից մինչև 1983թ. աշխատել է Աքորու միջնակարգ դպրոցում՝ որպես երկարօրյա խմբի դաստիարակ:

1984թ. նշանակվել է Աքորու միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար և աշխատել մինչև 2000թ.:

2001 թվականին տեղափոխվել է Քաշաթաղի շրջան, աշխատանքի անցել Բերձորի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Համատեղության կարգով աշխատել է նաև Բերձորի մանկապարտեզում:

2006թ. մրցութային կարգով ԿՄՍԵ վարչությունում ընդունվել է աշխատանքի՝ որպես առաջատար մասնագետ: 2006 թվականից առ այսօր աշխատում է Բերձո-

րի միջնակարգ դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի:

Ըստ արժանվույն է գնահատվել վաստակաշատ մանկավարժի բեղմնավոր գործունեությունը, նա արժանացել ԼՂՀ պետական պարգևների, ԿԳ նախարարության գովասանագրերի: Երեք տասնյակից ավելի մանկավարժական հոդվածների հեղինակ, և նրա մասին գրված բազում հոդվածները վկայում են, որ նա պետք է արժանանար «Տարվա լավագույն ուսուցիչ» կամ «Վաստակավոր մանկավարժ» պատվավոր կոչմանը:

Ջեմմա Ավետիսյան: Ծնվել է 1952թ. Մարտունի ավանում: 1969թ. ավարտում է միջնակարգ դպրոցը, իսկ 1972թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը և աշխատանքի անցնում Մարտունու ութամյա դպրոցում՝ որպես ջոկատավար, միաժամանակ դասավանդում հայոց լեզու և գրականություն երեկոյան միջնակարգ դպրոցում:

Կրթության և աշխատանքի զուգորդման տարիները նրա համար ստեղծում են կյանքի և մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հնարավորություն՝ քանի որ նա շրջապատված էր ճանաչված հմուտ մանկավարժներով (Սամսոն Ավետիսյան, Օֆելյա Գրիգորյան, Աթանես Դադալյան, Աշխեն Առուշանյան):

1976թ. Ջ. Ավետիսյանն աշխատում է Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Արցախյան շարժման տարիներին Ջ. Ավետիսյանը Մարտունու շրջանի առաջամարտիկներից էր, որի խոսքը պարզ ու համոզիչ էր, նա իր հետևից տանում էր շատ- շատերին:

1995թ. Ջ. Ավետիսյանը նշանակվում է Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ: Հետպատերազմյան տարիները բազում դժվարություններ էին ստեղծել նաև կրթական համակարգում: Հմուտ մանկավարժը կարողանում է անել հնարավորը՝ մանավանդ երիտասարդ կադրերի հետ տարվող աշխատանքում և հասնում որոշակի հաջողությունների:

1997-2015թթ. Ջ. Ավետիսյանը Մարտունու թիվ 1 ավագ միջնակարգ հոսքային դպրոցի փոխտնօրենն էր:

ԼՂՀ կառավարությունը բարձր է գնահատել նրա ծառայությունները և 2010թ. պարգևատրել «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված ամենամյա մրցույթի արդյունքում 2013-2014 ուս.տարում «Աշակերտներին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար» անվանակարգում Ջ.Ս. Ավետիսյանը արժանացել է «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչման:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼՂՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1991-2016ԹԹ.)

1.ԼՂՀ նախադպրոցական կրթական համակարգը (1991-2016թթ.)

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անկախությանը հաջորդած առաջին տարիներին՝ մինչև զինադադարը (1991-1994թթ.), պատերազմի տարիներին հանրապետության կրթության բնագավառը հայտնվեց կաթվածահար վիճակում, առաջացան բազմաթիվ խնդիրներ, որոնք արմատական լուծումներ էին պահանջում: Իհարկե, հանրապետության ճգնաժամը բացասականորեն անդրադարձավ նաև կրթության համակարգի վրա: Այդ ժամանակահատվածը նորաստեղծ հանրապետությունում կրթական համակարգի գոյատևման, դեռևս խորհրդային տարիների ձեռքբերումների պահպանման շրջանն էր, որը համարվում էր կուռ միասնական համակարգ՝ նախադպրոցական հաստատություններից՝ մինչև բուհական համակարգ: Այդ ժամանակահատվածում որոշակի առաջընթաց կար միայն դպրոցական համակարգում:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ վիճակագրական տարեգրքի (1995-1999թթ.) տվյալներից, 1991-1992թթ. հանրապետությունում գործում էին 155 դպրոցներ, մարտական թեժ պահերին՝ 113 դպրոցներ (այդ մասին նշվել է 1-ին գլխում): Այդ ժամանակաշրջանում[338] գործում էին 40-ից ավելի մանկապարտեզներ, իսկ 1988-1990 թվականներին՝ 92 մանկապարտեզ: Սակայն 1992 թվականին նախադպրոցական հիմնարկների գործունեությունը փաստորեն դադարեցվել էր: Իսկ նախադպրոցական համակարգի վերացման հետևանքով չէին ապահովվում նախադպրոցական և տարրական կրթության հաջորդականությունն ու շարունակականությունը, աճում էր դպրոց ընդունված երեխաների մտավոր զարգացման մակարդակների տարբերությունը:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկացանք, որ 1994թ. փետրվարի 16-ին նախարարության կոլեգիայի նիստում անչափ կարևորվում է նաև նախադպրոցական կրթության հարցերի քննարկումը՝ ընդլայնել նախադպրոցական հաստատությունների ցանցը և ապահովել որակյալ մասնագետներով: Ըստ փաստագրական տվյալների[339], 1995-1996 ուս.տարում հանրապետությունում գործում էին 7 ոչ պետական նախադպրոցական հիմնարկներ:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների համաձայն, 1999-2000 ուս.տարում հանրապետությունում նախադպրոցական կրթական համակարգը չէր գտնվում պետական հովանու ներքո, այն սահմանափակվում էր ոչ պետական 7 մանկապարտեզներով, որոնցից 3-ը գտնվում էր Ստեփանակերտում, 2-ը՝ Մարտունիում, 1-ը՝ Մարտակերտում և 1-ը՝ Շուշիում: Դրանց մի մասը մասնակիորեն գոյատևում էր հանգանակությունների հաշվին: Ինչպես հայտնի է, նախապատերազմյան շրջանում գործող 81 նախադպրոցական հիմնարկները մտցված էին համայնքների գույքի ցանկի մեջ, սակայն 2000թ. ոչ մի համայնք նյութապես ի զորու չէր վերաբացելու մանկապարտեզներ: 2002 թվականի տվյալներով, հանրապետությունում գործում էին 15 ոչ պետական մանկապարտեզներ: Միայն 2002 թվականին Ստեփանակերտ քաղաքում ստեղծվել էր պետական հատուկ մանկապար-

տեզ՝ 50 երեխաների ընդգրկմամբ: Նախադպրոցական հիմնարկների թիվը 1991թ. համեմատությամբ (92) նվազել էր 80 տոկոսով: Ի դեպ, նշենք, որ 1991թ. նախադպրոցական հաստատություններ է հաճախել 6073 երեխա, իսկ 2003 թվականին՝ ընդամենը 788: Մինչդեռ երեխան անպայման պետք է մանկապարտեզ հաճախի, որն իրականացնում է նախադպրոցական կրթության ծրագիրը, զարգացնում նրա հոգևոր և մտավոր աշխարհը, նախապատրաստում դպրոցին, և վերջապես՝ մանկապարտեզում երեխայի համար ստեղծվում է միջավայր, որի պայմաններում դաստիարակչական աշխատանքը դրական արդյունք է տալիս:

Ըստ «ԼՂՀ կրթական համակարգի զարգացման 2000-2010թթ. ժամանակաշրջանի ծրագրի» պահանջների (իսկ հնգամյա ծրագիրը ընդունվել է 1999-2004 թվականներին), նախադպրոցական կրթության բնագավառում նախատեսվում է սկսած 2002-2003 ուս.տարվանից 10 տարվա ընթացքում աստիճանաբար վերականգնել մանկապարտեզները՝ հենվելով նախկինում գործողների վրա, ընդլայնել նախապատրաստական խմբերը՝ դրանք դարձնելով նախապատրաստական դասարաններ: Այդ ուսումնական տարում հանրապետության 106 դպրոցներում նախադպրոցական խմբերի թիվը 84 է[340], դասարանակոմպլեկտների թիվը՝ 1537, այդ թվում մայրաքաղաքում՝ 338, Մարտունու շրջանում՝ 341, Մարտակերտի շրջանում՝ 301, Ասկերանի՝ 263, Հադրութի՝ 196, Շուշիի՝ 67, Քաշաթաղի՝ 10, Շահումյանի՝ 21:[341]

Հանրապետության մանկապարտեզներում պարբերաբար կազմակերպվում են նպատակային միջոցառումներ, բաց պարապմունքներ, որոնք այս կամ այն կերպ նպաստում են երեխաների աշխարհայացքի ձևավորմանն ու ընդլայնում նրանց հետաքրքրությունների շրջանակը: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի մանկապարտեզների (թիվ 1, տնօրեն Ժ. Ձաքարյան, թիվ 2. տնօրեն Լ. Ներսիսյան, Սոսե մանկապարտեզի տնօրեն Լ. Սահակյան և այլն) տնօրենների հաշվետվությունների ուսումնասիրությունից հայտնի դարձավ, որ բազմաբնույթ միջոցառումներ էին կազմակերպվում, հատկապես շատ հուզիչ էր մանկապարտեզների ավարտական տոնահանդեսը, յուրաքանչյուրը մի յուրօրինակ դաս էր՝ համեմված երգ ու պարով: Ավագ խմբի սաները հրաժեշտ տվին մանկապարտեզին՝ խոստանալով, որ բարձր կպահեն մանկապարտեզի պատիվը, դպրոցում կլինեն աշխատասեր ու ջանասեր, կսովորեն գերազանց: Երեք մանկապարտեզներն էլ ճաշակով էին կահավորված, օրվա խորհուրդը հիշեցնող պաստառներով՝ «Մենք դպրոց ենք գնում», «Դեպի պայծառ ապագան», «Մնաս բարով»: Դիտարկումները ցույց տվեցին, որ երեխաներն իրոք շատ բան են սովորել մանկապարտեզում, ընկերացել են թվերի ու երկրաչափական պատկերների հետ, կարող են նաև հաշվել ռուսերեն, անգլերեն: Երեխաների սրտաբուխ արտասանությունը ոգեկոչում է հայրենասիրություն ու անձնվիրություն, բարություն ու պարզություն, սեփական արժեքները գնահատելու կարողություն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2008-2009 ուսումնական տարում ավելանում է մանկապարտեզների թիվը: Եթե 2005-2006թթ. հանրապետությունում գործում էր 28 մանկապարտեզ, որից 12-ը՝ պետական, ապա 2009-2010 ուս.տարվա տվյալներով՝ հանրապետությունում գործում էր 25 պետական մանկապարտեզ: 2010 թվականին մանկապարտեզներում ավելացել են 23 խմբեր, որոնցում ընդգրկվել են շուրջ 700 երեխաներ:[342]

ԼՂ Հանրապետության կրթական համակարգի կայացման շրջափուլում (2006-2008թթ.) հանրակրթության մեջ իրականացվող բարեփոխումները հուշում են, որ լուրջ ուշադրություն պետք է դարձվի նաև նախադպրոցական կրթությանը: Խնդի-

ը ոչ միայն ցանցի ընդլայնումն է, այլև այն համապատասխան մասնագետներով ապահովումը:

ԼՂՀ ԿԳ նախարարությունը հետևողական աշխատանքներ է տանում այս ուղղությամբ, նախադպրոցական հիմնարկներն ապահովվում են ծրագրային, մեթոդական գրականությամբ, կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ, քննարկումներ: Նպատակը մեկն է՝ առաջնորդվել մեկ ծրագրով և իրականացնել մեկ քաղաքականություն:

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից (հաշվետվություններ, ԿԳՆ կոլեգիայի նիստերի արձանագրություններ, տեսչապետերի հաշվետվություններ և այլն) տեղեկանում ենք, որ 2007-2008 ուսումնական տարվա օգոստոսի 18-ին հանրապետության նախադպրոցական օղակի աշխատողների համար Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում կազմակերպվեցին հերթական սեմինար-պարապմունքներ (առաջին պարապմունքը տեղի ունեցավ 2006-2007 ուս.տարվա օգոստոսի 10-ին):

Դրանք անցկացրին Բեյրութից ժամանած մանկավարժները, որոնք այստեղ էին գործուղվել Հայ օգնության միության կենտրոնական վարչության հովանավորությամբ՝ ԿԳ նախարարության հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածությամբ:[343]

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՕՄ-ը մեծ ներդրում ունի ԼՂՀ-ում մանկապարտեզների, հանրակրթական դպրոցների ցանցի ձևավորման գործում: Այսպես, ՀՕՄ-ի հովանավորությամբ հիմնանորոգվել են 10-ից ավելի դպրոցներ: 2007-2008 ուս.տարում նրա հովանավորությամբ հանրապետությունում արդեն գործում էին 12 մանկապարտեզներ, իսկ ընդհանուր առմամբ նշված ուս.տարում ԼՂՀ-ում գործում էր 35 մանկապարտեզ, որից 14-ը՝ պետական: Նշենք, որ միայն 2008-2009 ուս.տարում հանրապետությունում բացվել է պետական 9 մանկապարտեզ, այն էլ հիմնականում գյուղական բնակավայրերում: Ըստ վիճակագրական տվյալների, 2008-ի պետբյուջեի հատկացումներն այս ոլորտին 2.7 անգամ գերազանցում են 2007 թվականի մակարդակը: Մանկապարտեզներն ուշադրության կենտրոնում են ոչ միայն քանակի, այլև որակի առումով: Այդ հարցին լուրջ ուշադրություն է դարձնում ԿԳ նախարարությունը:

Նախարարությունը անհրաժեշտ աշխատանքներ է տանում հանրակրթության այս օղակի մասնագետների հետ, մասնավորապես նրանց ապահովելով մեթոդական-ծրագրային գրականությամբ, փոխադարձ պարապմունքների լսումներ, քննարկումներ կազմակերպելով:

Ինչպես նշվում է ԿԳՆ նախադպրոցական բաժնի վարիչ Ս. Այվազյանի հաշվետվությունում,[344] 2007-2008 ուսումնական տարում հանրապետության մանկապարտեզների վարիչները հյուրընկալվեցին Ստեփանակերտի թիվ 2 մանկապարտեզում՝ ներկա գտնվելու մաթեմատիկայի և աշխատանքի բաց պարապմունքներին: Մանկապարտեզի վարիչ Լարիսա Ներսիսյանի ջանքերով այս մանկական օջախը պահպանեց իր գոյությունը ամենադժվար օրերին և շարունակեց մնալ օրինակելի նախադպրոցական հիմնարկ (չնայած մասնավոր), և 2009-2010 ուսումնական տարում այն պետականացվեց: Բաց պարապմունքներին իրենց գործին նվիրված դաստիարակչուհիները՝ Նինա Մանգասարյանը (մաթեմատիկայից) և Ռոմելա Իսախանյանը (աշխատանքից) հիանալի և ուսանելի պարապմունքներ անցկացրին:

Վերոնշյալ ուսումնական տարում հատկապես խիստ էր դրված ավագ խմբերի հարցը՝ դպրոցին դրանց պատրաստ լինելու առումով: Հարց է դրվել կոմպլեկտա-

վորել ավագ խմբերը՝ անկախ երեխաների քանակից: Նախարարության նախադպրոցական և արտադպրոցական բաժինը բոլոր մանկապարտեզներին բաժանել է ավագ խմբերի ծրագրային փաթեթը: 2009-2010 ուսումնական տարում կազմակերպվել են սեմինար-պարապմունքներ մանկապարտեզների վարիչների համար՝ ՀՀ-ից ժամանած մասնագետների մասնակցությամբ:

ԼՂՀ ԿԳ նախարարությունը 2008-2009 ուս.տարվանից պարբերաբար կազմակերպում է նախադպրոցական հաստատությունների դաստիարակների, տնօրենների համար վերապատրաստման դասընթացներ ՀՀ կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղում, ինչպես նաև շրջանային կրթության բաժիններում: Նախարարությունը պարբերաբար կազմակերպում է նման հավաքներ, ցուցադրական պարապմունքներ և փոխայցելություններ, առաջավոր փորձը բացահայտելու և գործնականում ներդնելու համար:

ԼՂՀ-ում 12-ամյա կրթության համակարգին անցնելու կարևորագույն հարցերից է ուսման մեկնարկային տարիքը: Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից նախադպրոցական կրթության օղակը շատ կարևոր դեր է խաղում: Բնական է, որ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ է տանել նախապատրաստական աշխատանքներ: Իսկ դրանք տարվում են մանկապարտեզում:

Անշուշտ, ավելի շատ կարևորվում է հատկապես մանկապարտեզի ավագ խմբերի հարցը՝ դպրոցական ուսմանը նախապատրաստելու առումով, որն էլ պետք է կատարվի որոշակի ծրագրով, որոշակի մեթոդներով և, իհարկե, որոշակի մանկավարժական կադրերի պատրաստվածության միջոցով: Մշակելով մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) ծրագիրը (Երևան, 2008թ.), հեղինակները, ի տարբերություն նախկին ծրագրերի, կատարել են որոշակի բարեփոխումներ, նախադպրոցական կրթության չափորոշիչների հիման վրա հաշվի են առվել այդ տարիքի երեխային ներկայացվող ընդհանուր կրթական պահանջները: Ի դեպ, նշենք, որ մանկապարտեզի նոր ծրագիրը բնական է, հիմնված է նախկին ծրագրի մանկավարժական սկզբունքների վրա:[345]

Հաշվի առնելով 12-ամյա կրթությանն անցնելու յուրահատկությունները, այն, որ հանրակրթական դպրոցի 1-ին դասարան են ընդունվում 5,5-6 տարեկան երեխաներ, առավել կարևորվում են հանրապետությունում նախադպրոցական ցանցի վերականգնումը և հետագա ընդլայնումը: 2011 թվականին հանրապետությունում գործում էին 40 մանկապարտեզներ, որից 24-ը՝ պետական: Պետությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում նաև Հայ օգնության միության հովանավորությամբ գործող 8 մանկապարտեզների: Ըստ նախարարության վիճակագրական տվյալների, 2010-2011 ուսումնական տարում վերաբացվեցին բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Վանք գյուղում կառուցված մանկապարտեզը, Բեյզ-Մեթըլս ընկերության կողմից վերակառուցված Ստեփանակերտի թիվ 2 մանկապարտեզը: Հայ օգնության միության ենթակայությամբ գործող՝ Ասկերանի շրջանի Այգեստանի և Շուշիի շրջանի Քարին տակի մանկապարտեզները վերակազմավորվեցին պետական մանկապարտեզների: Այս գործընթացը շարունակական է, առանձնակի ուշադրություն է դարձվել Ստեփանակերտ քաղաքում նոր մանկապարտեզների ստեղծմանը, որը պայմանավորված է նախկին թիվ 4 մանկապարտեզի տեղը նոր մանկապարտեզի և թիվ 6 ու թիվ 11 դպրոցների շենքերի կառուցմամբ ազատված շենքերը որպես մանկապարտեզներ օգտագործմամբ:

ԼՂՀ ԿԳ նախարարության նախադպրոցական կրթության բաժնի պետ Ս. Այ-

վազյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցին նախապատրաստելու նպատակով դպրոցներին կից գործում էին 25 նախապատրաստական խմբեր՝ 519 երեխաների ընդգրկմամբ: Նախադպրոցական կրթության ապահովման նպատակով նախարարության, կրթության շրջանային բաժինների ղեկավարների կողմից լուրջ ուշադրություն է դարձվել նաև այդ հաստատություններում ղեկավար և մանկավարժական աշխատողների ընտրությանը, նրանց մասնագիտական կարողությունների բարձրացմանը, ինչպես նաև մանկապարտեզների նյութական հագեցվածությանը, ուսումնամեթոդական օժանդակությանը, ավագ խմբերում կրթական նոր ծրագրերի ներդրմանը:[346]

«Լուսարար» թերթի 2011թ. թիվ 22-ում տպագրված՝ ԿԳ փոխնախարար Ս. Ասրյանի հետ (ներկայումս՝ նախարար) հարցազրույցում («Նախադպրոցական կրթությունը ուշադրության կենտրոնում») նշվում է, որ հանրակրթության ոլորտում կրթական բարեփոխումների կարևորագույն ծրագրի 12-ամյա ուսուցման ապահովման խնդիրների իրականացման գործընթացում կարևորվում է դպրոցի սովորողների նախապատրաստման խնդիրը, որի իրագործման նախապայմանը երեխաների նախադպրոցական կրթության ապահովումն է, որի արդյունավետությունը պայմանավորված է հանրապետությունում նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ մանկապարտեզների կայուն ցանցի առկայությամբ:

Նախադպրոցական ցանցի մասին պատկերացում կազմելու համար փորձենք համեմատական վերլուծություններ կատարել և ցույց տալ, թե ինչ կարգավիճակում էր գտնվում նախադպրոցական ցանցը մինչև 1990 թվականը, Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին (1991-1994) և հետպատերազմյան շրջանում՝ 1994-2000 թվականներին, և կրթական համակարգի արմատական բարեփոխումների շրջափուլում՝ 2010-2012 թվականներին:

Ինչպես արդեն նշվել է, մինչև 1990 թվականը (1988-1990թթ.) ԼՂԻՄ-ում գործում էր 49 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված էր 466 երեխա: Պատերազմի ժամանակ ավերվել էր մանկապարտեզների շենքերի մեծ մասը, իսկ մի մասն էլ օգտագործվում էր այլ նպատակներով: Մարզի շրջաններում գործող 11 մանկապարտեզ գտնվում էին օկուպացված տարածքում (Մարտակերտում, Շահումյանում, Հադրութում):

Ստեփանակերտի 18 նախադպրոցական հաստատություններում ընդգրկված էր 2,550 երեխա, իսկ ներկայումս գործում է 5 մանկապարտեզ, 846 երեխաների ընդգրկմամբ, մնացած 14 մանկապարտեզների շենքերի մի մասն ավերվել է, մյուս մասը զբաղեցրել են այլ հաստատություններ:

Ավելի անմխիթար վիճակում են գտնվում գյուղական վայրերի մանկապարտեզների շենքերը, որոնք պատերազմի ժամանակ մեծամասամբ վառվել են կամ հիմնովին ավերվել, իսկ քիչ թե շատ կանգուն շենքերում տեղավորվել են այլ հիմնարկներ: Հանրապետության շրջաններում հիմնականում գործում են մեկ կամ երկու խմբանոց մանկապարտեզներ: Հայ օգնության միության 8 մանկապարտեզներում ընդգրկված են 373 և Հայ Ավետարանչական ընկերակցության 4 մանկապարտեզներում՝ 293 երեխաներ:[347]

Նախադպրոցական կրթության նկատմամբ պետական քաղաքականության իրականացման շնորհիվ 2007թ. հանրապետությունում գործում էր 5 պետական մանկապարտեզ: Եթե 2007թ. բացվել էր չորս մանկապարտեզ, ապա 2008-2009 թվականներին, կառավարության ծրագրի համաձայն, բացվեց 18 մանկապարտեզ, և 2009-2010 ուս.տարում հանրապետությունում գործում էին 23 պետական

մանկապարտեզներ: Ըստ պաշտոնական տվյալների, 2010-2011 ուս.տարում մանկապարտեզներ բացվեցին Մարտակերտի շրջանի Վանք, Մարտունու շրջանի Գիշի, Խնուշինակ համայնքներում, ինչպես նաև Հադրութի, Քաշաթաղի, Շահումյանի շրջկենտրոններում, Շուշի քաղաքում: 2010-2011 ուս.տարում հանրապետությունում գործում էին 26 պետական մանկապարտեզներ, որոնցում ընդգրկված էին 1968 երեխաներ, և ընդհանրապես նախատեսվում էր ընդլայնել ԼՂՀ պետական բյուջեի միջոցներով պետական մանկապարտեզների ցանցը: Օրինակ, 2010-2011 ուս.տարում Մարտունու շրջանում գործել են 8 պետական (իսկ 2007թ.՝ 3) և 1 ոչ պետական մանկապարտեզ՝ 22 խմբերով, 603 երեխայի ընդգրկումով և Մարտունու թիվ 1, Գիշու, Թաղավարդի, Խնուշինակի, Քերթի դպրոցներին կից նախապատրաստական խմբերը՝ 118 երեխաների ընդգրկումով:[348] Նախադպրոցական հիմնարկների ուսումնանյութական բազայի (հենքի) հարստացման ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տանում շրջանի վարչակազմը, ԼՂՀ կառավարությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Դաս-պարապմունքների, երեխաների հանգստի կազմակերպման գործընթացը նախադպրոցական հիմնարկներում բավարար հիմքերի վրա է, մանկապարտեզների տնօրենները լուրջ աշխատանքներ են տանում խմբերում սանիտարահիգիենիկ լավ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Շրջանում նախադպրոցական ցանցի զարգացման հեռանկար համարվեցին 2010-2011 ուս.տարում նոր խմբերի ավելացումը Մարտունու թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզներում, նախադպրոցական նոր հիմնարկների բացումը Խնուշինակ, Սպիտակաշեն և Վազգենաշեն համայնքներում: Հարկ է նշել, որ նշված մանկապարտեզներն ունեն հարմարավետ շենքային պայմաններ:

Փաստագրական նյութերից տեղեկացանք, որ «Մանկապարտեզները՝ ուշադրության կենտրոնում» թեմայով ԿԳ նախարարությունը կազմակերպում էր խորհրդակցություններ: Այսպես, օրինակ, 2011-2012 ուս.տարվա հունվարի 20-ին Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցում անցկացվեց հանրապետության նախադպրոցական հաստատությունների աշխատողների խորհրդակցություն, որը վարում էր փոխնախարար Ս. Ասրյանը: Խորհրդակցությանը մասնակցում էին կրթության բաժինների վարիչները, մանկապարտեզների վարիչները, դաստիարակները, բժշկական աշխատողները, ինչպես նաև կառավարության ֆինանսական վերահսկողության վարչության պատասխանատու աշխատողներ:

Խորհրդակցությունում ունեցած իր զեկուցման մեջ փոխնախարարն ընդգծեց, որ եթե 2007-2008 ուս.տարում հանրապետությունում գործում էր ընդամենը 5 պետական մանկապարտեզ, ապա 2009-2010 ուս.տարում այդ թիվը հասցվեց 24-ի: Ուսումնական տարվա վերջին շահագործման են հանձնվել Ստեփանակերտի թիվ 2, Վանքի «Սոսե», Այգեստանի և Քարին տակի մանկապարտեզների շենքերը: Խորհրդակցությունում նախարարության նախադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանը վերլուծաբար ներկայացրեց նախադպրոցական համակարգում կատարվող բարեփոխումները: Միաժամանակ նշեց, որ գործող մանկապարտեզներում աշխատում են 370 հոգի, որից 149-ը՝ մանկավարժ, իսկ 41 տնօրեններից միայն 12 ունի համապատասխան կրթություն:[349]

Խորհրդակցության վերջում սեմինարների արդյունքները ամփոփելիս Ս. Ասրյանը վերստին մատնանշեց, որ հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից նախադպրոցական հաստատությունների ավագ և հանրակրթական դպրոցներում գործող նախապատրաստական խմբերում տարվող աշխատանքները շատ կարևոր դեր են խաղում, դրանք եղել և մնում են ուսուցման և դաստիարա-

կության հաջորդական շղթայի առաջին կարևորագույն օղակը:

Այս տեսանկյունով հետպատերազմյան շրջանում առաջնային էին համարվում ոչ միայն հանրակրթական դպրոցների ցանցի ընդլայնումը, շենքերի հիմնանորոգումը, այլև նախադպրոցական հաստատությունների վերաբացումը, որոնք գործում էին նախապատերազմյան շրջանում, և նախադպրոցական տարիքի երեխաների կրթության դաստիարակության պատշաճ կազմակերպումը: Կրթության շրջանային, քաղաքային բաժինների, ԿԳ նախարարության փաստաթղթերի ուսումնասիրությունից հայտնի է դառնում, որ թե՛ ղեկավարները, գլխավոր մասնագետները, և թե՛ նախադպրոցական հաստատությունների դաստիարակները, տնօրենները առավելագույնս կարևորում են երեխային դպրոցին նախապատրաստելու գործընթացը, ինչը նշանակում է հարստացնել նրանց բառապաշարը, զարգացնել խոսքն ու տրամաբանությունը, ծանոթացնել շրջապատող աշխարհին, ձևավորել կոլեկտիվ գործունեություն վարելու ունակություն, նախապատրաստել սպասվելիք դպրոցական միջավայրին: Մի խոսքով, նախադպրոցական տարիքի ցանկացած երեխայի համար պետք է ապահովել զարգացման այնպիսի մակարդակ, որը թույլ կտա նրան լինել հաջողակ դպրոցում:

Մանկավարժահոգեբանական գրականության մեջ նշվում է, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության անմիջական խնդիրը նրանց ընդունակությունների ու ստեղծագործական ներուժի զարգացումն ու գիտելիքների, կարողությունների արժեքային համակարգի ձևավորումն է: Ինչպես մատնանշում է պրոֆեսոր Արամ Բալյանը «Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր»[350] աշխատությունում, այս տարիքը համարվում է արագ ու արդյունավետ զարգացման, անհատականության ու նախասիրությունների ձևավորման տարիք, ուստի պահանջվում է յուրահատուկ ուշադրություն դաստիարակչուհիների կողմից՝ ինքնամոռացումի հասնող ջանասիրությամբ կազմակերպել ու անցկացնել պարապմունքները: Այս առումով ուսումնասիրելով Ստեփանակերտի թիվ 1, 2 և 7 դպրոցների նախապատրաստական խմբերի ուսուցիչների կազմակերպած դաս-պարապմունքները,[351] նկատել ենք, որ յուրաքանչյուր դաստիարակչուհի միշտ ձգտում է պարապմունքները կազմակերպել արդյունավետ և ամեն օր նորարար լինել, հարստացնել դասավանդման եղանակները, որոնումներ կատարել, տեսական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա ստեղծագործաբար մշակել պարապմունքը կազմակերպելու այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության: Այս իմաստով տեղին է նշել ականավոր մանկավարժ Վ.Ա. Սուխոմլինսկու ուսանելի այն խորհուրդը, որ «Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի՝ մյուս առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատի աշխարհը: Կարդացեք երեխայի համար՝ շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, դա կատարեք այնպես, որ կյանքի այս պատառիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույներով»:[352]

Ստեփանակերտի թիվ 1, 2, 7 դպրոցներում գործող նախապատրաստական խմբերի փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել բերել փորձառու դաստիարակչուհիների կողմից բաց պարապմունքների արդյունավետ կազմակերպման, փորձի փոխանակման մի քանի կոնկրետ օրինակներ:

Այսպես, օրինակ, ԼՂՀ ԿԳ նախարարության և քաղաքապետարանի կրթության բաժնի պատասխանատուները, վերոնշյալ դպրոցների տնօրենները Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի նախապատրաստական խմբում (դասվար՝ Հասմիկ Բալա-

յան) կազմակերպեցին բաց պարապմունք մաթեմատիկայից: Պարապմունքի թեման էր «Յոթ թիվը և թվանշանը», նպատակը՝ ծանոթացում յոթ թվանշանին, ցույց տալ յոթի ստացումը, բացահայտել կազմությունը և ամրապնդել անցած նյութը:

Խմբասենյակում երեխաների ազատ գործողության համար ստեղծված էր բազմամակարդակ ու հարմարավետ առարկայական զարգացնող միջավայր, կային դիտողական պարագաներ՝ նկարներ, թվաքարտեր, պաստառներ, նյութեր երկրաչափական պատկերներից, գրենական պիտույքներ, խաղալիքներ: Դաստիարակչուհին նախապես մտածել էր պարապմունքի կառուցվածքի և ընթացքի մասին: Ընդհանրապես երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար շատ կարևոր է պարապմունքի բովանդակությունը: Այս տեսակետից կարելի է ասել, որ պարապմունքը շատ հետաքրքիր էր ու հաջողված: Դասավանդման մեթոդները խթանում էին երեխաների հետաքրքրությունների և երևակայությունների զարգացումը, իսկ այս ամենը, անշուշտ, կօգնի նրանց դպրոցում հաջողությամբ յուրացնելու մաթեմատիկական գիտելիքները: Բացի նշվածից, մայրաքաղաքի թիվ 2, 7 դպրոցներում գործող նախապատրաստական խմբերում (թիվ 2 դպրոց՝ Գրետա Մարտիրոսյան, «գրաճանաչություն», թիվ 7 դպրոց՝ Նելլի Սաֆարյան «Գեղարվեստական խոսք»), դաստիարակչուհիների աշխատանքի արդյունավետությունն էլ հենց պայմանավորված է նման պարապմունքների անցակացմամբ: Գովելի է, դաստիարակչուհիների հուզական աջակցությունը խրախուսանքի խոսքով, ժպիտով, հայացքով, մանկավարժական վարպետությունն ու տակտը:[353]

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական փաստաթղթերից տեղեկացանք, որ 2012-2013 ուս.տարվա հաշվետվության մեջ ԿԳ նախարար Ս. Ասրյանը մանրամասն ներկայացրեց հանրապետության կրթական համակարգի ընդհանուր բնութագիրը: Նա մատնանշեց, որ հանրակրթության ոլորտում բոլոր պահանջներն էլ կարևոր են, առավել ևս կարևոր է նախադպրոցական հաստատությունների ցանցի ընդլայնումն ու կահավորումը: Այդ առումով էլ նախարարության կողմից որոշակի աշխատանք է կատարվել: Ստեփանակերտի տասը դպրոցներում ստեղծվեցին համապատասխան պայմաններ՝ ուսումնական պարապմունքներն արդյունավետ կազմակերպելու համար, իսկ երեք դպրոցներում (թիվ 2,9,10) լիարժեք մանկապարտեզային հարմարություններ՝ 9-ժամյա տևողությամբ, քնելու, սնվելու ռեժիմով, ութ նման կարգի խումբ՝ 5-6 տարեկան երեխաներ դաստիարակվում ու կրթվում են այդ դպրոցներում: Մնացածներում 6-ժամյա տևողությամբ նախադպրոցական խմբեր են, որոնցում մեկանգամյա սնունդ է տրվում: Կա նաև 27 խումբ, որից 23-ն էլ գործում են շրջաններում, որտեղ երեխաները թեթևացած ռեժիմով ստանում են նախադպրոցական կրթություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2010 թվականի համեմատ հանրապետությունում մանկապարտեզների ցանցն անընդհատ ընդլայնվել է, և 2012-2013 ուսումնական տարում գործում էր 43 մանկապարտեզ, որից 29-ը պետական էր, իսկ 2014-2015 թվականներին շահագործման է հանձնվել 6 մանկապարտեզ, կահավորված գույքով ու սարքավորումներով:[354]

Նախարարը հավաստի տվյալների հիման վրա նշեց, որ հանրապետությունում շոշափելի հաջողություններ են արձանագրվել նախադպրոցական կրթության ոլորտում: Այսպես, 2010-2012թթ. կառուցվել են 2, 2014թ.՝ 3 մանկապարտեզներ Մարտակերտի շրջանի Հաթերք, Ասկերանի շրջանի Հարավ, Հադրութի շրջանի Մարիամաձոր, Մարտունու շրջանի Ճարտար, Քաշաթաղի շրջանի Կովսական, Մոշաթաղ համայնքներում: Մանկապարտեզների նկատմամբ հետևյալ

մոտեցումն է ցուցաբերվում, եթե փոքր թվով երեխաներ են ընդգրկվում մանկապարտեզում, ավելորդ ֆինանսական միջոցներ չծախսելու նպատակով այն գործելու է դպրոցին կից, իսկ 2 և ավելի խմբեր ունեցող մանկապարտեզները գործելու են ինքնուրույն: 2013-2014թթ. շահագործման են հանձնվել Ստեփանակերտում 3, Հադրութի շրջանի Տումի, Մարտակերտի շրջանի Հարգոմեր գյուղերի մանկապարտեզների նոր շենքերը:

Այսպիսով, 2014-2015 ուս.տարում հանրապետությունում ունեինք 45 մանկապարտեզ, որից 30-ը՝ պետական: Մանկապարտեզներում ընդգրկված էին 3495 երեխաներ 62 նախադպրոցական խմբերում, որոնք գործում էին դպրոցներին կից (1455 երեխաներ), որը 2012-2013 ուս.տարվա համեմատությամբ 336-ով ավել է:[355]

Վերոնշյալ տարում կառուցվել է Քաշաթաղի շրջանի Կովսականի մանկապարտեզի շենքը, որտեղ ընդգրկված էր 52 երեխա: Նոր ուսումնական տարում կառուցվել են 2 մանկապարտեզի շենք Մարտունիում, 3-ը՝ Հադրութում: Նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը միայն առանձնացված մանկապարտեզներով չի սահմանափակվում: ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը օգոստոսի 25-ին ուսուցիչների հետ հանդիպման ժամանակ «Նոր ուսումնականը՝ կրթական բարեփոխումների իրականացման հաջորդական տարի» խորագրով զեկուցման մեջ նշեց, որ 2012-2013 ուսումնական տարում այս ուղղությամբ կատարված են որոշակի աշխատանքներ: Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում ստեղծվեցին նախադպրոցական տարիքի ավագ խմբի երեխաների համար խմբեր, որը մեծ դեր խաղաց մանկապարտեզների բեռնաթափման և ավելի շատ երեխաներ ընդգրկելու առումով: Վերոնշյալ ուսումնական տարում նշված խմբերում ընդգրկվել են շուրջ 770 երեխաներ: Մայրաքաղաքի բոլոր դպրոցներում ստեղծվել են նախադպրոցական խմբեր, որոնցում ընդգրկվել է 920 երեխա:

«Լուսարար» թերթի 2015թ. թիվ 8 համարում տպագրված՝ քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Կ. Մարգարյանի հաշվետվության մեջ մատնանշվում է, որ 2014-2015 ուս.տարվա մարտի 16-ից-18-ը քաղաքապետարանի ԿՄ բաժնի նախաձեռնությամբ անցկացված սեմինար-պարապմունքներին մասնակցում էին Ստեփանակերտի դպրոցներին կից գործող նախապատրաստական խմբերի դաստիարակները: Սեմինար-պարապմունքների դասալսումներն ապացուցեցին, որ այսօրվա սերունդը դաստիարակության և կրթության համար ունի բոլոր հնարավորությունները, իսկ դաստիարակները հնարավորություն ունեցան ծանոթանալու ժամանակակից մեթոդներին: Սեմինար-պարապմունքի նպատակը փորձի փոխանակումն ու համագործակցությունն է[356]:

Ծանոթանալով փորձառու դաստիարակների կողմից պարապմունքների անցկացման մեթոդներին, նկատել ենք, որ նորը միշտ կառուցվում է հնի ու ավանդականի վրա: Յուրաքանչյուր պարապմունք (խոսքի զարգացում, մայրենի լեզու, մաթեմատիկա, նկարչություն, ծեփ, երաժշտություն...) հագեցած էր, կիրարկվում էին համապատասխան դիտողական պարագաներ, հանելուկներ, արտահայտիչ արտասանություն, ֆիզկուլտդադարներ: Դաստիարակները հիմնականում գործածում էին խաղային մեթոդը (խաղ-վարժություններ, խաղ-առաջադրանքներ...), և այս մեթոդների միջոցով ամրապնդում ու խորացնում էին երեխաների պատկերացումներն ու գիտելիքները:

Ըստ գլխավոր մասնագետ Ա. Մեսրոպյանի նկատառումների,[357] փորձի փոխանակման նպատակով անցկացված նման դասալսումները նպատակային ու արդյունավետ էին, և դրանք պետք է շարունակական լինեն:

2015թ. ապրիլի 16-ին «Լուսարար» թերթի թիվ 8-9 համարներում տպագրված՝ ԿԳ նախարար Ս. Ասրյանի հարցազրույցում մատնանշվում է, որ նախադպրոցական կրթության կարևոր խնդիրներից մեկը երեխաներին դպրոցին նախապատրաստելն է: Նախադպրոցական ավագ խմբի երեխաները հաջորդ տարի լինելու են առաջին դասարանցիներ, ուստի մանկապարտեզի դաստիարակների խնդիրն է երեխաներին լավ նախապատրաստել դպրոցին: «Մանկապարտեզ-դպրոց-հասարակություն» թեմայով նախարարը զեկուցումով հանդես եկավ 2014-2015 ուս.տարվա սեպտեմբերին Ստեփանակերտի թիվ 3 մանկապարտեզում տեղի ունեցած խորհրդակցությունում, որին մասնակցում էին հանրապետության մանկապարտեզների տնօրենները, դաստիարակները, կրթության շրջանային բաժինների վարիչները: Սեմինար-խորհրդակցությանը հրավիրված էին նախադպրոցական խմբերի սկսնակ դաստիարակները, ինչպես նաև դպրոցների դաստիարակները: Այն կազմակերպել էին թիվ 3 մանկապարտեզի տնօրեն Իրինա Գրիգորյանը և նախադպրոցական կրթության բաժնի պետ, գլխավոր մասնագետ Անահիտ Մեսրոպյանը: Սեմինար-պարապմունքների հիմնական նպատակն էր փորձի փոխանակումն ու սերտ համագործակցությունը:

Մանկապարտեզում կազմակերպել էին բաց պարապմունքներ՝ «Ընտանի կենդանիներ» (դաստիարակ՝ Իրինա Հայրապետյան), «Իմ ընտանիքը» (Անահիտ Հակոբյան), «Մի նկարի պատմություն» (Լիանա Ղահրամանյան), «Վայրի կենդանիներ» (Ալյոնա Դավթյան) և այլ թեմաներով: Դրանք ոչ միայն մանկավարժների՝ իրարից սովորելու պարապմունքներ էին, այլև կարելի է որակել որպես սեմինար-պարապմունքներ կամ մանկավարժական դասեր, ինչու չէ՝ վերապատրաստման դասընթացներ սկսնակների համար, որ անցկացրեց մանկապարտեզի տնօրեն Ի. Գրիգորյանը: Բերենք նրա խորհուրդներից մի քանիսը, որ նա քննարկումների ժամանակ տվեց սկսնակ մանկավարժներին. «Պարապմունքների մեծ մասը խաղերի միջոցով անցկացրեք, որպեսզի երեխաների հետ շատ անմիջական լինեք: Չպետք է գոռալ երեխայի վրա, պատժել: Միայն սիրով կարելի է երեխաներին դաստիարակել: Երբ դաստիարակը սիրում է, երեխան կրկնակի է վարձահատույց լինում իր սիրով: Սերը օգնում է, որ երեխան շուտ ընկալի դաստիարակի տվածը և ձևավորվի որպես լավ անձնավորություն» ...

Սեմինար-խորհրդակցության վերջում նախարար Ս. Ասրյանը իր հավաստի փաստերով նշեց, որ 2014-2015 ուսումնական տարում համարյա բոլոր շրջանների հանրակրթական դպրոցների մեծամասնությունում գործում են նախադպրոցական խմբեր, և դա հնարավորություն է ընձեռում իրականացնել պարտադիր նախադպրոցական կրթությունը: Նախադրպրոցական հիմնարկներում դաստիարակներին, ինչպես դպրոցներում ուսուցիչներին, աշխատանքի են ընդունում մրցույթով: 2015-2016 թվականներին հանրապետությունում արդեն կգործեն 47 մանկապարտեզներ, որից 32-ը՝ պետական, 62-ը՝ նախադպրոցական խմբեր, որից 5-ը՝ մանկապարտեզային պայմաններում: Իսկ «Լուսարար» թերթի 2016թ. թիվ 26-ում տված հարցազրույցում նախարարը նշեց, որ 2016թ. սեպտեմբեր ամսում, հանրապետությունում գործում էր 51 մանկապարտեզ, որոնցից 36-ը պետական, 8-ը ՀՕՄ-ի «Սոսե», 4-ը Հայ Ավետարանչական ընկերակցության, 1-ը ոչ պետական մանկապարտեզներ են: Դրանցից բացի, հանրապետությունում գործում են 65 նախադպրոցական խմբեր:

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է ենթադրել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1991-2016թթ.) կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջափուլերում դպրոցական համակարգում արմատական վերափո-

խումներին (դպրոցական ցանցի ընդլայնում, դպրոցաշինության աննախընթաց վերելք, կրթական նոր ծրագրերի մուտքը դպրոց և այլն) զուգընթաց ունեցանք նաև շոշափելի ձեռքբերումներ նախադպրոցական կրթական համակարգում:

Այժմ արխիվային տվյալների, փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ընձեռած հնարավորությունների հիման վրա ներկայացնենք նախադպրոցական կրթական համակարգի ընդհանուր պատկերը՝ ըստ ԼՂՀ վարչատարածքային շրջանների:

1. Մարտակերտի վարչատարածքային շրջանի մանկապարտեզների գործունեությունը

Ըստ Մարտակերտի շրջանի կրթության բաժնի տեղեկատվության, 2012-2013 ուսումնական տարում շրջանում գործել են 7 պետական (Մարտակերտի թիվ 1, Հաթերքի, Մատաղիսի, Թալիշի, Առաջածորի, Վանքի, Մեծ շենի) և հովանավորի միջոցներով՝ Չափարի ու Մարտակերտի Ժանպազյանի անվան մանկապարտեզները: Ընդհանուր առմամբ բոլոր մանկապարտեզներում նախնական կրթություն ու դաստիարակություն են ստանում 587 երեխաներ, այսինքն շրջանի 3-ից 5 տարեկան 1169 երեխաների 50 տոկոսը, որն, իհարկե, հուշում է, որ այս օղակը դեռևս կայացման փուլում է:

Որպես այլընտրանք՝ շրջանի Մաղավուզի, Վ. Հոռաթաղի և Ն. Հոռաթաղի, Վաղուհասի, Չլդրանի, Կուսապատի միջնակարգ դպրոցներին կից ԿԳ նախարարի թույլտվությամբ գործել են նախադպրոցական խմբեր՝ 86 սաների ընդգրկմամբ: Համայնքների ղեկավարների կողմից առաջարկվել է նոր ուսումնական տարում Ն. Սեյսուլանի, Ն. Մարաղայի դպրոցներում ևս բացել նախապատրաստական խմբեր, հաշվի առնելով 5 տարեկան 22 երեխաների առկայությունը: Շարունակվում են մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքները Հարգոմերում: Համայնքների ղեկավարները կրթության բաժնին առաջարկել են մանկապարտեզներ բացել Կոճողոտում, Վաղուհասում, Ն. Հոռաթաղում, քանի որ համայնքներում առկա են նախադպրոցական տարիքի համապատասխանաբար 28 և 71 երեխաներ և դպրոցական նախկին շենքեր: 2014-2015 ուս.տարում շրջանում ընդլայնվել է նախադպրոցական ցանցը:

Ստորև ներկայացնում ենք շրջանում գործող մանկապարտեզների համառոտ պատմությունը:

«Վանքի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի գործունեությունը

Մարտակերտի շրջանի Վանքի դպրոցի տնօրեն Ֆլորա Բաղրամյանի շնորհիվ 2001թ. սեպտեմբերի 1-ին բացվում է դպրոցին կից նախադպրոցական մի խումբ, որտեղ աշխատում են դաստիարակ Ծովինար Լազարյանը և խոհարար Ժուլետա Օհանյանը: Երեխաները կրթություն և դաստիարակություն են ստանում սուղ ու խոնավ պայմաններում: Շենքը, որտեղ կրթվում էին երեխաները, վթարային պայմաններում էր գտնվում: Սակայն դպրոցի տնօրեն Ֆ. Բաղրամյանը, դաստիարակն ու խոհարարը ջանք ու եռանդ չէին խնայում գյուղի ապագա սերունդներին գիտելիքներով ապահովելու համար:

Տասը երկար ու ձիգ տարիներ նրանք իրենց եռանդը ներդրեցին ապագա սերունդների կրթությանն ու դաստիարակությանը՝ մինչև տեղափոխվեցին նորակառույց, եվրոպական ստանդարտներին համապատասխան մանկապարտեզ: 2010թ. հոկտեմբերի 18-ին տեղափոխվեցին «Վանքի պետական մանկապար-

տեզ» ՊՈԱԿ-ի նորակառույց շենքը, որ կառուցել էր մեծ բարերար, հայրենասեր Լևոն Հայրապետյանը: 2010թ. հոկտեմբերի 18-ից մինչև 2011թ. հուլիսի 6-ը մանկապարտեզի տնօրեն էր Մարիամ Ստեփանյանը, իսկ 2011-ից առ այսօր տնօրինում է Լուսինե Բաղրամյանը:

Մանկապարտեզը կառուցված է 120 երեխայի համար, սակայն մանկապարտեզ են հաճախում 100 երեխա: Մանկապարտեզն ունի 28 աշխատող: Դաստիարակներն ունեն բարձրագույն կրթություն: Մանկապարտեզում բարձր մակարդակով անց են կացվում ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները: Առաջնորդվում են պետական չափորոշիչներով, բոլոր խմբերում կան մեթոդական գրքեր: Մանկապարտեզում անց են կացվում հետևյալ միջոցառումները. «Հրաժեշտ մանկապարտեզին», «Գիտելիքի օր», «Նոր օր», «Նոր տարի և Սուրբ Ծնունդ», «Մկրտություն», «Զատիկ», «Մարտի 8-ը», «Մրգահանդես» և այլն: Մանկապարտեզի աշխատողները ավագ խմբի երեխաների հետ ամեն տարի հունվարի 6-ին այցելում են Ստեփանակերտի թիվ 1 գիշերօթիկ մանկատուն: Մանկատուն են այցելում աշխատողների, ծնողների նվերներով և երեխաների հանդեսներով: 2015թ. ապրիլի 24-ի իրիկնադեմին Վանքի պետական մանկապարտեզի աշխատակազմը տնօրենի գլխավորությամբ կազմակերպեցին ջահերթ դեպի Գանձասար, քայլում էին ոտքով, «Հիշում և պահանջում ենք» կարգախոսով: Յուրաքանչյուրի ձեռքին վառված էր մեկական ճրագ: Եկեղեցու բակում դաստիարակները ներկայացրին իրենց կազմակերպած միջոցառումը, և վերջում մոխիր դարձրին թուրք փաշաների նկարները:

Տարվա ընթացքում մանկապարտեզում անց է կացվել մանկավարժական խորհրդի չորս նիստ: Տարբեր խմբերում անց են կացվել օրինակելի պարապմունքներ: Մանկապարտեզում ծնողական կոմիտեի կապը առկա է, ժամանակին անց են կացվում ծնողական ժողովներ: Մանկապարտեզում երեխաներին կրթում ու դաստիարակում են ծրագրերին համապատասխան չափորոշիչներով: Մանկապարտեզ հաճախող երեխաների տրանսպորտի հարցերի լուծումն ապահովում էր Լևոն Հայրապետյանը: Վանքի պետական մանկապարտեզը գտնվում է շրջանի վարչակազմի, կրթության բաժնի ուշադրության կենտրոնում, ցուցաբերվում է անհրաժեշտ մեթոդական օգնություն՝ առավել կրթված և հմուտ սերունդ դաստիարակելու համար:[358]

Առաջաձոր գյուղի մանկապարտեզը բացվել է 1977թ. նոյեմբերին: Մանկապարտեզն ուներ մեկ խումբ, որում ընդգրկված էին տարբեր տարիքի 34 երեխաներ: Մանկապարտեզի վարիչ էր նշանակվել Մանյա Մարտիրոսյանը: Նա ուներ միջնակարգ մասնագիտական կրթություն, մանկապարտեզում աշխատել է մինչև 1986թ.: 1986թ. սեպտեմբերից վարիչ է նշանակվել Նունե Թևոսյանը և աշխատել մինչև 1992 թվականը: 1992 թվականից նրան փոխարինել է Իրա Զաքարյանը, որի աշխատանքային գործունեությունը տևել է մինչև 1994թ.: Այդ ժամանակահատվածը համընկել է պատերազմական գործողությունների հետ, որի պատճառով մանկապարտեզի գործունեությունն ընդհատվել է:

Գյուղում մանկապարտեզը վերաբացվել և գործում էր 2009 թվականի սեպտեմբերից՝ ԼՂՀ կառավարության որոշման համաձայն: Տնօրեն է նշանակվել Մարինե Ասծատրյանը: Մանկապարտեզը նախատեսված էր մեկ խառը խմբի համար:

Մանկապարտեզը զբաղեցնում է դպրոցի շենքի առաջին հարկի մի մասը, որը վերանորոգվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆրանսիական «Էտամ» ընկերության կողմից: Գույքի մի մասը տրամադրվել է «Էտամ» ընկերության կողմից, մի մասը ձեռք է բերվել պետական բյուջեի հաշվին, Կրթության և

գիտության նախարարության աջակցությամբ:

Հաստատությունում հաստիքացուցակով նախատեսված էր 22 հաստիք 8 աշխատողի համար, իսկ հիմա կա 9 հաստիք 7 աշխատողի համար: Մանկապարտեզն ունի յոթամյա գործունեություն: Այդ ընթացքում կրթօջախ է ընդունվել 108 երեխա, որից 70-ը հաճախել է դպրոց: Այժմ մանկապարտեզում ընդգրկված է 25 երեխա, որից 8-ը նոր ուսումնական տարում կհաճախի դպրոց: Մանկապարտեզը գործում է կանոնադրության համաձայն, առաջնորդվում կրթական համալիր ծրագրով, որի ծրագրային փաթեթը տրամադրվել է կրթության և գիտության նախարարության կողմից:[359]

1988-ից մինչև 1992-ը այսինքն մինչև Թալիշ գյուղի բռնագաղթը, գործել է մանկապարտեզ, ուր հաճախել է 40-50 երեխա: Տեղեկությունների համաձայն, մանկապարտեզի տնօրեն է եղել Ագնեսա Սարգսյանը (կրթությունը՝ միջին մասնագիտական), 10 տարվա աշխատանքային ստաժով: Իսկ դաստիարակ է եղել Արաքսյա Զաքարյանը, որն աշխատել է 1995 թվականից մինչև գյուղի բռնագաղթը:

2008-2016թ. ապրիլը գործում է «Թալիշի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը:

2008թ. մինչև 2010թ. գործել է որպես 2-խմբանոց, իսկ 2010թ. մինչ 2016թ.՝ մեկ խառը խմբանոց, ուր հաճախում են համայնքի 3-5 տարեկան երեխաները:

2008թ. առ այսօր մանկապարտեզի տնօրեն է Փիրուզա Քոչարյանը:[360]

2.Մարտունու վարչատարածքային շրջանի մանկապարտեզների գործունեությունը

Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Զորիկ Ղուլյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2013-2014 ուս.տարում շրջանում գործել են պետական հովանավորությամբ 8 և ոչ պետական մանկապարտեզներ՝ 27 խմբերով, 659 երեխայի ընդգրկմամբ: Ալիբալիի, Գիշու, Թաղավարդի, Խնուշինակի, Քերթի դպրոցներին կից նախապատրաստական խմբերը՝ 64 երեխաներով: Նախադպրոցական հիմնարկների ուսումնանյութական հենքի հարստացման ուղղությամբ լուրջ աշխատանքներ է տանում ԼՂՀ ԿԳ նախարարությունը:

Շրջանի մանկապարտեզներում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են բարձր մակարդակով, և այդ միտումով էլ յուրաքանչյուր ուս.տարում դաստիարակներին ներկայացնում են «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին, հաղթող ճանաչվածներին պարգևատրում են պատվոգրերով ու գովասանագրերով: Իսկ դա նշանակում է, որ դաստիարակները զբաղվում են ինքնակրթությամբ և իրենց աշխատանքում հասնում բարձր ցուցանիշների:

Կրթության բաժնի վարիչի հաշվետվության տվյալների համաձայն, յուրաքանչյուր ուս.տարում բաժնի տեսուչների և ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից պարբերաբար ստուգումներ են անցկացվում, դրականը գնահատելով, եղած թերությունները վերացվում են անմիջապես: Երիտասարդ սկսնակ դաստիարակների համար կազմակերպվում են նաև սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ:[361]

Ըստ մանկապարտեզի տնօրենների ներկայացրած տվյալների, 2013-2014 ուս.տարում դաս-պարապմունքները կատարելագործելու նպատակով անց է կացվել 75 պարապմունք Մարտունու թիվ 1, 2, Ճարտարի, Կ. Շուկայի, Գիշու մանկապարտեզներում: Բոլոր մանկապարտեզներում ճիշտ և ժամանակին կազմակերպվում է «Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառումը: 2014-2015թթ. դպ-

ոցների առաջին դասարան են հաճախել մանկապարտեզների թողարկած 194 երեխաներ:

«Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի գործունեության պատմությունը (1988-2015թթ.)

Մարտունի քաղաքի մանկապարտեզը գործում է 1988 թվականի ապրիլի 1-ից: Այն ուներ 12 խումբ, որոնցում ընդգրկված էր 280 երեխա:

1991-1993թթ. մանկապարտեզի նկուղներում գործում էր ռազմական հոսպիտալը, որտեղ շատ կյանքեր են փրկվել: Մանկապարտեզը գործել է նաև պատերազմի տարիներին՝ 3-4 խմբերով: Մոնթե Մելքոնյանը միշտ կրկնել է. «Դիրքերում պետք է գիտենան, որ երեխաները այստեղ են, կարտոշկում»: Այդպես էր մանկապարտեզի ծածկանունը, որպեսզի դիրքերը չզիջեին: Այդ ամենի վկայությունն է նկուղին փակցված հուշատախտակը:

1996թ. մանկապարտեզների լուծարման պատճառով մանկապարտեզը անցել էր «Սևակ-1» կոոպերատիվի ֆինանսական օգնության և հովանավորության տակ:

2000-2009թթ. մանկապարտեզին օգնեց Հայ Ավետարանչական ընկերությունը:

2012թ. հունիսի 9-ից Մարտունու շրջվարչակազմի (ղեկավար՝ Ն. Սողոմոնյան) թիվ 66 որոշման համաձայն՝ մանկապարտեզը անվանակոչվեց «Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան պետական մանկապարտեզ»: Իր գործունեության ժամանակ մանկապարտեզը ճանաչվել և լավ է գնահատվել ոչ միայն շրջանում, այլ նաև հանրապետությունում:

Փորձի փոխանակման նպատակով մանկապարտեզում կազմակերպվել են բազում բաց պարապմունքներ շրջանում գործող մանկապարտեզների դաստիարակների համար:

2009թ. «ՊՈԱԿ մանկապարտեզների խմբասենյակների արտաքին տեսքի ձևավորում» մրցույթին ակտիվորեն մասնակցելու համար մանկապարտեզը պարգևատրվել է պատվոգրով: Նույն թվականի հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված նախադպրոցական ուսումնական հաստատությունների միջև անցկացված գեղարվեստական մրցույթ-փառատոնում մանկապարտեզը գրավեց առաջին տեղը:

2011թ. ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների ձեռքի աշխատանքների մրցույթ-ցուցահանդեսին ակտիվ մասնակցության համար մանկապարտեզը պարգևատրվել է պատվոգրով:

2013թ. Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված՝ ԼՂՀ նախադպրոցական դաստիարակների միջև հայտարարված կերպարվեստի աշխատանքների մրցույթում «Արցախյան հորովել» անվանակարգում Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան պետական մանկապարտեզը հաղթող ճանաչվեց:

2015թ. Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված՝ ԼՂՀ մանկապարտեզների դաստիարակների միջև գեղարվեստական մրցույթում մանկապարտեզը գրավեց 2-րդ տեղը:

Նույն թվականի գարնանը դաստիարակների և կոլեկտիվի մյուս անդամների մասնակցությամբ կազմակերպվեցին բեմականացումներ՝ «Կիկոսի մահը», «Կարմիր գլխարկը» և տիկնիկային թատրոն «Երեք խոզուկները», որոնք արժանացան հանդիսատեսի հավանությանը: Հանդիսատես ծնողներից մի քանիսն

իրենց մեծ գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեցին «Ամարաս» թերթի միջոցով:

Մանկապարտեզի դաստիարակներից երեքը արժանացել են նաև «Հանրապետության լավագույն դաստիարակ» կոչման:

1.Գայանե Յուրիի Ազիզյան (2009թ.)

2.Հասմիկ Արտոյի Մկրտչյան (2010թ.)

3.Էմմա Մելսիկի Երեմյան (2011թ.):

Գայանե Ազիզյանը և Էմմա Երեմյանը ներկայումս աշխատում են այլ հաստատություններում՝ վարիչի և տնօրենի պաշտոններում:

Մարտունու թիվ 1 մանկապարտեզի գործունեությունը

Մարտունու թիվ 1 մանկապարտեզը բացվել է 1974թ. և գործում է մինչև այսօր: Ժամանակին տիպային շենք էր իր բոլոր հարմարություններով: Մանկապարտեզն ուներ 6 խումբ, որից 2 խումբը մսուրային էր, երեխաների քանակը կազմում էր 250, աշխատողների քանակը՝ 65: Պատերազմից հետո մանկապարտեզը սկսեց գործել: Ուներ մի խառը խումբ և 3 դաստիարակներ: «Ղարաբաղ գոլդի» շնորհիվ ավելացավ 3 խումբ, և մանկապարտեզը գոյատևեց մինչև 2008թ. մարտի 1-ը: 2008թ. մարտի 1-ին դարձավ պետական և կրճատվեց մի խումբ:

2014թ. մանկապարտեզի տնօրեն նշանակվեց Մարտունու թիվ 2 մանկապարտեզի լավագույն դաստիարակ էմմա Երեմյանը: Երեմյանի տնօրինության օրոք մանկապարտեզը ծաղկուն շրջան ապրեց: Հույսով ու հավատով լցվեցին աշխատողները՝ հույս ունենալով, որ կարող է մի օր էլ մանկապարտեզը տեսնեն բարեկարգ ու վերանորոգված շենքում: Երեմյանի ջանքերի շնորհիվ 2015 թվականի օգոստոսից սկսեցին մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները, արդեն վերանորոգված են խոհանոցը, լվացքատունը, երկու խմբասենյակներ սանհանգույցներով: Տնօրենի ջանքերի շնորհիվ բարերարների օգնությամբ ձեռք են բերվել ամբողջ մանկապարտեզի խաղալիքներ բոլոր խմբերի համար:

Ճարտարի Ղուզե կալեր գյուղի մանկապարտեզը սկսել է գործել 2008թ. փետրվարի 1-ից: Լ ՂՀ կառավարության հունվարի 29-ի թիվ 38 որոշմամբ ստեղծվել է «Ղուզե Ճարտարի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը: ՊՈԱԿ-ի տնօրեն է նշանակվել Լուսիկ Հարությունյանը: Նույն թվականի փետրվարի 22-ին հաստատվեց նաև «Ղուզե Ճարտարի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ -ի կանոնադրությունը: Այնուհետև շրջվարչակազմի ղեկավարի մեկ այլ որոշման համաձայն, շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի վարիչ Ս. Պետրոսյանին հանձնարարվեց «Ղուզե Ճարտարի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Հարությունյանին թույլատրել իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ մանկապարտեզի նորմալ աշխատանքն ապահովելու համար: Մանկապարտեզում 2008թ. մինչև 2011թ. սեպտեմբերի 1-ը գործում էր 2 խումբ՝ 50 երեխայի ընդգրկմամբ: Ընդհանուր հաստիքների քանակը կազմում էր 9:

2011թ. հունիսի 28-ին տեղի ունեցավ Ղուզե Ճարտարի պետական մանկապարտեզի նորակառույց շենքի հանդիսավոր բացման արարողությունը: Սկսեց ավելանալ երեխաների քանակը (մինչև 80-87): Հաշվի առնելով այս փաստը, կառավարությունը նպատակահարմար գտավ մանկապարտեզին տրամադրել ևս 2 խումբ և ավելացնել հաստիքների քանակը:

Մարտունու շրջվարչակազմի ղեկավարի 2014թ. դեկտեմբերի 23-ի որոշման համաձայն՝ Ճարտարի քաղաքային համայնքի հանրակրթական դպրոցների և

նախադպրոցական հիմնարկների անունները շարադրվեցին նոր խմբագրությամբ: Մանկապարտեզը վերանվանվեց «Ճարտարի էմանուել դը Լաբառի անվան թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ: Անվանափոխության հետ կապված փոխվեց նաև մանկապարտեզի կանոնադրությունը, ինչպես նաև կնիքն ու դրոշմակնիքը:

Մանկապարտեզի դաստիարակչուհիներ Գայանե Հայրումյանը, Առլետա Պողոսյանը մասնակցել են «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին (2012թ. և 2015թ.) և հանրապետական փուլի արդյունքներով հաղթող ճանաչվել:

Գյուլնե Ճարտարի մանկապարտեզի գործունեությունը

Գյուլնե Ճարտարի մսուր-մանկապարտեզի գործունեությունը սկսվել է 1980թ. հունվարի 1-ից: Այն գործում էր Ճարտարի «Կոմունիզմ» կոլտնտեսության անմիջական աջակցության շնորհիվ: Գործում էր 4 խումբ՝ 120 երեխայի ընդգրկմամբ: Մսուր-մանկապարտեզի առաջին տնօրենն էր վաստակաշատ մանկավարժ Ռիմա Պողոսի Շաքարյանը: Աշխատանքային կոլեկտիվում կար 28 աշխատող:

1983թ. մսուր-մանկապարտեզը մտցվեց պետական հաշվեկշռի մեջ: 1990թ. Ռիմա Շաքարյանին փոխարինեց Լուսիկ Միքայելի Հարությունյանը: Արցախյան շարժման տարիներին մանկապարտեզը գործում էր անխափան, կարճատև դադարներով՝ կապված հրետակոծության հետ:

1994թ. մանկապարտեզի տնօրեն նշանակվեց Սեդա Հարությունյանը, ով աշխատեց մինչև 1996թ. հունվարի 1-ը, մանկապարտեզը լուծարվելու պատճառով:

2008թ. մարտի 1-ին բացվեց Ճարտարի մանկապարտեզը՝ ՊՈԱԿ-ի կարգավիճակով, տնօրեն նշանակվեց Սեդա Հարությունյանը, ով մինչև օրս ղեկավարում է կոլեկտիվը: Վերաբացվելուց հետո կոլեկտիվում աշխատում էր 14 աշխատող, 2 խմբով՝ 50 երեխայի ընդգրկմամբ:

2015թ. հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, համագյուղացի Վոլոդյա Ավագյանի անմիջական ջանքերով և հովանավորությամբ բացվեց Ճարտարի Ներսես Ավագյանի անվան թիվ 1 մանկապարտեզը, նախատեսված 100 երեխայի համար:

Սոսի պետական մանկապարտեզի գործունեությունը

Առաջին անգամ Սոս գյուղի մանուկների համար մանկապարիեզն իր հյուրընկալ դռներն է բացել 1976 թվականի հունվարին: 1976 թվականին մանկապարտեզի տնօրեն է աշխատել Էլեոնորա Գրիգորյանը:

1977թ. մանկապարտեզում գործում էր 1 խառը և 1 մսուրային խմբեր, մանկապարտեզը դարձել էր մսուր-մանկապարտեզ: Աշխատողների թիվը հասնում էր 21-ի, երեխաներինը՝ 65-70:

1976-1991թթ. մանկապարտեզը գործել է բնականոն ընթացքով: 1992թ. պատերազմի թեժ պահերին մանկապարտեզը չէր գործում: Այդ ժամանակ Արշավիր Ղահրամանյանի գլխավորությամբ գործող ազատամարտիկների կամավորական ջոկատը ապաստանել էր մանկապարտեզի շենքում, իսկ շենքի նկուղը ծառայում էր որպես հոսպիտալ:

1993թ. մայիսի 1-ին գյուղական խորհրդի երաշխավորությամբ Սոսի մսուր-մանկապարտեզի վարիչ է նշանակվել նույն մանկապարտեզի դաստիարակ Նաիրա Մանգասարյանը:

1995թ. երբ լուծարվեցին բոլոր մանկապարտեզները, փակվեց նաև Սոսի մսուր-մանկապարտեզը: 3 ամիս անց նորից սկսեց գործել՝ այս անգամ արդեն

Օլեգ Գրիգորյանի ղեկավարությամբ գործող կոլեկտիվ տնտեսության հովանավորության ներքո: Գործեց միայն մեկ խառը խումբ՝ 30 երեխայի, 6 աշխատողի ընդգրկմամբ: Երեխաներն անվճար հաճախում էին մանկապարտեզ, իսկ աշխատողները վարձատրվում էին աշխօրով: Հիմնականում մանկապարտեզ էին հաճախում զոհված, վիրավոր ազատամարտիկների և բազմազավակ ընտանիքների երեխաները:

Կոլեկտիվ տնտեսության հովանու ներքո մանկապարտեզն իր գոյությունը պահպանեց 3 տարի: 1998թ. քայքայվեց կոլեկտիվ տնտեսությունը, և մանկապարտեզը կրկին կանգնեց անդունդի եզրին:

1999թ. 1 տարի ժամկետով մանկապարտեզին օգնեց Օլեգ Եսայի Եսայանը՝ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահը: Կարճ ժամկետով մանկապարտեզին օգնեց սոսեցի երևանաբնակ Սերժիկ Անդրեյի Քոչարյանը:

1999-2004թթ. մանկապարտեզը գործեց գյուղական համայնքի հովանավորության ներքո:

2004թ. դպրոցին կից բացվեց 1 նախապատրաստական խումբ՝ 1 դաստիարակի հաստիքով, որին վարձատրում էր ժողկրթբաժինը: Մանկապարտեզը գործում էր 6-օրյա աշխատանքային ռեժիմով՝ մինչև ժամը 2-ը:

2007թ. ֆրանսիացի բարերար Միշել Տանկրեգը օգնեց մանկապարտեզին, կոշտ և փափուկ գույք նվիրեց:

2008թ. Արցախ աշխարհում ազդարարվեց պետական մանկապարտեզների վերականգնման սկիզբը: 2008թ. փետրվարի 22-ի պետական որոշման համաձայն «Սոսի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի տնօրեն նշանակվեց Նաիրա Սերգեյի Մանգասարյանը: Մանկապարտեզում սկսեց գործել 2 խումբ՝ 50 երեխաների, 12 աշխատողների ընդգրկմամբ:

Նոր մանկապարտեզի շենքը կառուցվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

2012թ. սեպտեմբերի 25-ին «Սոսի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի տնօրեն նշանակվեց նույն մանկապարտեզի դաստիարակ Նախշուն Ստեփանյանը:[362]

2015թ. փետրվարի 23-ին կոլեկտիվը տեղափոխվեց նորակառույց մանկապարտեզ:

«Սոսի պետական մանկապարտեզի» վաստակավոր մանկավարժների կենսագրականը.

Նաիրա Մանգասարյանը ծնվել է 1954թ. Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում՝ ուսուցչի ընտանիքում:

1972-1976թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն բաժնում: Ավարտել է 1976թ. և աշխատանքի ընդունվել Մաճկալաշենի մանկապարտեզում՝ որպես վարիչ:

1977թ. աշխատանքի է ընդունվել Սոսի մսուր-մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

1993-2008թթ. աշխատել է Սոսի մսուր-մանկապարտեզի վարիչ:

2008-2012թթ. աշխատել է «Սոսի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի տնօրեն: 2005թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

2012թ. սեպտեմբերի 25-ից առ այսօր աշխատում է «Սոսի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ում՝ որպես դաստիարակ:

Ժաննա Նիկոլայի Մինասյանը ծնվել է 1949թ. Մարտունու շրջանի Հերհեր գյուղում:

1968-1969թթ. սովորել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում:

1969-1970թթ. աշխատել է Կոլխոզաշենի 8-ամյա դպրոցում՝ որպես դասվար:

1976-2012թթ. աշխատել է «Սոսի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ում՝ որպես դաստիարակչուհի: 2012թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

«Մաճկալաշենի պետական մանկապարտեզի» գործունեությունը

ԼՂՀ Մարտունու շրջանի Մաճկալաշենի մանկապարտեզը բացվել է 1971թ.: Մարտունու շրջժողկրթբաժնի կողմից վարիչ է նշանակվել Նաիրա Ղևոնդյանը: Գործում էր 1 խառը խումբ՝ 27 երեխայի ընդգրկմամբ:

1974թ. մանկապարտեզի վարիչ է աշխատել Նաիրա Մանգասարյանը, 1997թ.՝ Վիկտորյա Դոլուխանյանը: 1991թ. առ այսօր՝ Լյուբա Մանասյանը:

1983թ. մանկապարտեզում ավելացավ նաև մսուրային խումբ՝ 15 երեխայի ընդգրկմամբ:

1988 թվականին՝ Արցախյան շարժման տարում մսուր-մանկապարտեզը չդադարեցրեց իր գործունեությունը:

1996 թվականին «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախագահ, Մաճկալաշեն գյուղի պատվավոր անդամ Գուրգեն Մելիքյանը մանկապարտեզը ապահովեց անհրաժեշտ պարագաներով, որպեսզի այդ հերոս գյուղի երեխաների առօրյան անցնի ավելի ուրախ և հետաքրքիր: 2000թ. Գուրգեն Մելիքյանի աջակցությամբ վերանորոգվեց մանկապարտեզի շենքը ժամանակակից պահանջներին համապատասխան:

2004թ. մանկապարտեզը տնօրինեց դպրոցը: Դպրոցի նախադպրոցական խումբը գործում էր մանկապարտեզում:

ԼՂՀ կառավարության 2008թ. հունվարի 29-ի թիվ 38 որոշմամբ ստեղծվել է «Մաճկալաշենի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որտեղ գործում է 1 խառը խումբ՝ 20 երեխայի, 9 աշխատողի ընդգրկմամբ: Մանկապարտեզի աշխատանքները սկսեց հնգօրյա աշխատանքային շաբաթով, ներքոհիշյալ մանկավարժների աշխատակազմով:

1.Դաստիարակ Անահիտ Բաբայան

2.Երաժշտական ղեկավար Միրա Մելքումյան:

2008թ. մարտից առ այսօր աշխատանքային գործունեության ընթացքում մանկապարտեզը նշանակալից հաջողություններ է ունեցել: Կատարվեցին վերանորոգման աշխատանքներ ժամանակակից պահանջներին համապատասխան: Ստեղծված են նորմալ պայմաններ երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման և առողջության ամրապնդման համար:[363]

Մարտունու շրջանի Կարմիր շուկայի մանկապարտեզի գործունեությունը

Առաջին մանկապարտեզն իր աշխատանքը սկսեց 1930 թվականին, գինու գործարանին պատկանող բանվորական շենքում, որտեղ մանկապարտեզին հատկացրին երեք սենյակ: Մանկապարտեզի առաջին վարիչը Վարյա Հայրումյանն էր: Հետագայում որպես վարիչներ աշխատել են Անահիտ Գասպարյանը, Նինա Լալայանը, Արզիկ Բախտամյանը, Նատաշա Ահարոնյանը: Տարիների ընթացքում Կարմիր շուկա ավանը դարձավ բազմամարդ և 1971թ. շահագործման հանձնվեց մանկապարտեզի նոր, տիպային շենք՝ նախատեսված 150 երեխաների համար, և վարիչ նշանակվեց Շարմաղ Բալայանը, ով այդ պաշտոնում աշխատել է մինչև 1986 թվականը: Այդ տարիներին մանկապարտեզ էին հաճախում

140-150 երեխաներ Կարմիր շուկայից և հարևան Թաղավարդ-Կալերից: Մանկապարտեզի կոլեկտիվը բաղկացած էր 30 հոգուց:

1986-1991թթ. մանկապարտեզի տնօրեն է աշխատել Նոնա Գրիգորյանը: Պատերազմական գործողությունների պատճառով 1991թ. մինչև 1993թ. մարտ ամիսը գյուղի մանկապարտեզը չէր աշխատում: Այդ տարիներին շենքը գործում էր որպես հոսպիտալ: 1993թ. մարտին շենքը հրետակոծությունից ավերվում է, և հոսպիտալի անձնակազմը տեղափոխվում է ուրիշ շենք: Նույն ամսում կրթության շրջանային բաժնից կարգադրություն է ստացվում մանկապարտեզի վերաբացման մասին: Վերջապես 1993թ. հունիսի 1-ին վերաբացվեց մանկապարտեզը, և այնտեղ սկսեցին հաճախել 100 երեխաներ: Շրջափակման մեջ գտնվող Արցախում շատ դժվար էր լուծել սննդի հարցը: Այս խնդրի լուծման գործում օգնության հասան մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողները և Կարմիր շուկայի գումարտակի հրամանատար Առուշան Բաղասյանը, ով զինվորների բաժնից հնարավորության սահմաններում բաժին էր հասցնում նաև երեխաներին: Անմոռանալի էր նաև մանկապարտեզի կոլեկտիվի աշխատանքը. թուք են հավաքել, դոշաբ եփել և օգտագործել շաքարավազի փոխարեն: Թեյի տերևների փոխարեն օգտագործել են կոլեկտիվի ուժերով հավաքված մասուրը: Մանկապարտեզն ունի շատ ազատ տարածք, որն այդ տարիներին բանջարանոցի էին վերածել կոլեկտիվի անդամները: Գոյատևեց մանկապարտեզը մինչև 1995թ. վերջը: 1996թ. հունվարին լուծարվեցին Ղարաբաղի բոլոր մանկապարտեզները, այդ թվում նաև Կարմիր շուկայի պետական մանկապարտեզը:

1998թ. վերաբացվեց մանկապարտեզը: 2004թ. մանկապարտեզի շենքը վերանորոգվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից:

2004թ. մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը կազմակերպվեց վերանորոգված մասնաշենքում՝ 50 երեխայի ընդգրկմամբ: Հիսուն երեխայի սննդի, ինչպես նաև տասնհինգ աշխատողների աշխատավարձի և մնացած բոլոր հարցերը մինչև 2008թ. հոգում էր «Ղարաբաղ Գոլդ» ընկերությունը, որի ղեկավարն էր վարչապետ Արայիկ Հարությունյանը: 2008թ. Կարմիր շուկայի մանկապարտեզը ստացավ պետական կարգավիճակ: Նույն թվականի հոկտեմբերի 1-ին մանկապարտեզում ավելացավ ևս մեկ խումբ, և երեխաների քանակը 50-ից հասավ 75-ի:

Ներկա դրությամբ մանկապարտեզը, ուր հաճախում է 75 երեխա, աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով և ութժամյա ռեժիմով:[364]

Բերդաշենի մանկապարտեզի գործունեությունը

Մարտունու շրջանի Բերդաշենի (նախկին Ղզղալայի) մսուր-մանկապարտեզը բացվել է 1972թ. օգոստոսին: Մարտունու շրջժողկրթբաժնի կողմից վարիչ է նշանակվել Արփիկ Բալասանյանը:

Մսուր-մանկապարտեզում գործող երեք խմբերում ընդգրկված էին 100-120 երեխաներ: Բալասանյանի ղեկավարությամբ մսուր-մանկապարտեզն աշխատել է մինչև 1986թ. մարտի 1-ը: Այնուհետև Մարտունու շրջժողկրթբաժնի կողմից մսուր-մանկապարտեզ ի վարիչ է նշանակվել Ռաիսա Պողոսյանը:

Բերդաշենի մսուր-մանկապարտեզն աշխատել է մինչև 1992թ. հունվար ամիսը:

Արցախյան գոյապայքարի հետևանքով 1992թ. հունվարի 31-ից, համաձայն վարիչ Ռաիսա Պողոսյանի հրամանի (թիվ 34 առ 31.01.1992թ.) անորոշ ժամանակով փակվել է մսուր-մանկապարտեզը:

Արցախյան պատերազմի տարիներին լրիվությամբ ավերակների է վերածվել հին մանկապարտեզի շենքը և շուրջ 17 տարի գյուղում չկար մանկապարտեզ::

ԼՂՀ կառավարության, Մարտունու շրջվարչակազմի որոշմամբ 2007թ. օգոստոսի 2-ից վերաբացվեց գյուղի մանկապարտեզը՝ «Բերդաշենի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը, 2 խմբի համար:

Մանկապարտեզի տնօրեն նշանակվեց Լիլիա Ասրյանը: Շենքում վերանորոգման աշխատանքներ էին ընթանում սկզբնական շրջանում՝ 2007թ. նոյեմբերի 1-ից, աշխատանքները կազմակերպվեցին Բերդաշենի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում, որի նախապատրաստական խումբը վերակազմավորվեց որպես մանկապարտեզի ավագ խումբ (դաստիարակ՝ Զարիհե Սողոմոնյան): Դպրոցում աշխատանքները շարունակվեցին մինչև վերանորոգման ավարտը՝ 2008թ. մարտը:

Երկար տարիների ընդմիջումից հետո կրկին մանկապարտեզի նախկին շենքն իր դռները բացեց փոքրիկների առաջ, որն անգնահատելի նվեր եղավ ԼՂՀ պետական մարմինների կողմից:

2008թ. մարտի 17-ից նորաբաց շենքում մանկապարտեզն իր աշխատանքներն սկսեց հնգօրյա աշխատանքային շաբաթով, 9-ժամյա աշխատանքային ռեժիմով:

Մանկապարտեզի տնօրենն է Լիլիա Ասրյանը:

2011թ. հունվարի 17-ից ԼՂՀ Մարտունու շրջվարչակազմի որոշմամբ մանկապարտեզն անվանակոչվել է ԼՂՀ-ում ճանաչված, 30 տարի անընդմեջ Բերդաշենի Կիրովի անվան կոլտնտեսության հմուտ ղեկավար, հարազատ ծննդավայրի մեծ նվիրյալ Սիմոն Սողոմոնյանի անվամբ:

«Բերդաշենի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿԸ-ը վերանվանվել է «Բերդաշենի Սիմոն Սողոմոնյանի անվան պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ:

2008թ. մարտի 17-ից առ այսօր մանկապարտեզը նշանակալից հաջողություններ է ունեցել: ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից հայտարարված «Խմբասենյակների արտաքին տեսքի ձևավորում և կահավորում» մրցույթի հանրապետական փուլում առաջնակարգ տեղ գրավելու համար 2009թ. մանկապարտեզը պարգևատրվել է ԼՂՀ ԿԳ նախարարության 2-րդ կարգի դիպլոմով, գեղարվեստական մրցույթի շրջանային փուլում՝ Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի կողմից՝ պատվոգրով:

Այսօրվա դրությամբ մանկապարտեզ են հաճախում 55 երեխաներ, որոնցից 17-ը 5-6 տարեկան երեխաներ են:

Ժամանակակից պահանջներին համապատասխան ստեղծված են նորմալ պայմաններ երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման և առողջության ամրապնդման համար: Մանկապարտեզի կոլեկտիվը շարունակում է հետևողական ու սիստեմատիկ աշխատանքները՝ առաջնորդվելով մանկապարտեզի կանոնադրության և «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հադրութի շրջանի մանկապարտեզների գործունեությունը

2007թ. մայիսի 4-ին Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավար Վ. Գևորգյանի թիվ 38 որոշմամբ հաստատվել է «Ազոխի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

2007թ. սեպտեմբերի 11-ին Հադրութի շրջանի Ազոխ գյուղում բացվեց «Ազոխի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Մանկապարտեզի տնօրեն նշանակվեց Ստեփանակերտի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի շրջանավարտ Նելլի Սուրենի Բաբայանը:

Մանկապարտեզն ունեցել է երկու խումբ՝ ավագ և միջին, որոնցում ընդգրկված էին 40 երեխա: Մանկապարտեզում աշխատում էին 12 հոգի:

2012թ. մայիսի 10-ից «Ազոխի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար է նշանակվել Գորիսի Ա. Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժնի շրջանավարտ Մարինա Վաղարշակի Ասրյանը:

2012թ. հոկտեմբերի 15-ի Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավար Վ.Գևորգյանի որոշման համաձայն երեխաների թվի կրճատման պատճառով կրճատվել է մեկ խումբ:

2015թ.հուլիսի 1-ից «Ազոխի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն է նշանակվել Մարինա Ասրյանը:

Այժմ մանկապարտեզում գործում է մեկ խառը խումբ՝ 24 երեխաների ընդգրկմամբ, 10 աշխատողներով:

Դրախտիկի պետական մանկապարտեզի գործունեությունը

ԼՂՀ կառավարության 2013թ. մայիսի 30-ի որոշման և Հադրութի շրջանի վարչակազմի 2013թ. հունիսի 14-ի թիվ 39 կարգադրության համաձայն ստեղծվել է «Դրախտիկի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ, և այս կազմակերպությունն ունի իր կանոնադրությունը, աշխատանքի կանոնները:

2013թ. հուլիսի 1-ից «Դրախտիկի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի տնօրեն է նշանակվել Արմինե Մեժլումյանը, և աշխատում է առ այսօր: Տնօրենն ունի բարձրագույն կրթություն, ավարտել է ԱրՊՀ «Կենսաբանություն» բաժինը:

«Դրախտիկի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ն ունի մեկ խառը խումբ, որտեղ ընդգրկված են 3-6 տարեկան երեխաներ:

Աշխատակազմը բաղկացած է 12 հոգուց: Ունի մեկ դաստիարակ և մեկ երաժշտական ղեկավար:

2013-2014 ուս.տարում դաստիարակը մասնակցել է «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին և գրավել առաջին տեղը:

Առաքելի մանկապարտեզի գործունեությունը

1989թ. սեպտեմբերից Հադրութի շրջանի Առաքելում գործում էր «Արևիկ» պետական մանկապարտեզը, որի տնօրենն էր Ն. Ղահրամանյանը՝ բարձրագույն կրթությամբ: Մանկապարտեզն ուներ 24 սան: Բռնագաղթի պատճառով 1991թ. մայիսի 25-ից դադարեցվեց մանկապարտեզի գործունեությունը: Բռնագաղթից հետո 1996թ. սեպտեմբերին Ֆրանս-Ղարաբաղ կազմակերպության հովանավորությամբ գյուղում բացվեց «Բողբոջ» մանկապարտեզը, տնօրեն նշանակվեց Ն. Ղահրամանյանը: Մանկապարտեզն ուներ 12 սան և գործում էր մինչև ժամը 14.00-ն: 2003թ. Ֆրանս-Ղարաբաղ կազմակերպության լուծարումից հետո մանկապարտեզը դադարեցրեց իր գործունեությունը: Մի քանի ամիս մանկապարտեզը հովանավորվեց «Երկիր» հասարակական կազմակերպության անդամ Պր. Արաբյանի, այնուհետև կազմակերպության պատասխանատու ներկայացուցիչ Պր. Ս. Արծրունու կողմից:

2004-2006թթ. մանկապարտեզը հովանավորվեց ՀԲԸՄ (Հայկական բարեգործական ընդհանուր միություն) անդամ Անի Բոյաջյանի (Լոս-Անջելես) կողմից և ու-

ներ 25 սան: Դրանից հետո մեկ տարի մանկապարտեզը հովանավորվեց «Երկիր» հասարակական կազմակերպության պատասխանատու ներկայացուցիչ Ս. Արծրունու կողմից: Մի քանի ամիս կոլեկտիվն աշխատեց առանց վարձատրության (հովանավորները դարձան աշխատողներ): 2008թ. օգոստոսին մանկապարտեզը դարձավ պետական, ուներ 25 սան, որը և գործում է մինչև օրս: Այժմ մանկապարտեզն ունի 34 սան: 2011թ. հուլիսին մանկապարտեզը տեղափոխվեց նոր շենք, որը կառուցվել է երևանաբնակ համագյուղացի հովանավորների կողմից:

Մանկապարտեզի գործունեության ընթացքում տնօրենը միշտ եղել է Ն.Ե. Ղահրամանյանը:

Ասկերանի վարչատարածքային շրջանի մանկապարտեզների գործունեությունը

Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբալյանի հաշվետվությունից (ներկայացրել է 2014թ. օգոստոսի 24-ին կայացած ուսուցչական խորհրդակցությունում) տեղեկանում ենք, որ 2013-2014 ուսումնական տարում շրջանում գործել են պետական հովանավորության 7 և ոչ պետական 2 մանկապարտեզներ՝ 28 խմբերով, 454 երեխայի ընդգրկմամբ: Իսկ 5 դպրոցներին կից գործել են նախադպրոցական խմբեր, յուրաքանչյուրում 38-42 երեխաներով: Ինչպես մյուս շրջաններում, այնպես էլ Ասկերանի շրջանի մանկապարտեզներում նյութական բազան բավարարելու նպատակով ԿԳ նախարարությունը բավականին մեծ աշխատանք է տանում, և այդ օղակը մշտապես գտնվում է ուշադրության կենտրոնում:

Ըստ բաժնի վարիչի և մանկապարտեզների տնօրենների հաշվետվությունների, բոլոր մանկապարտեզներում նախարարության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել և կազմակերպվել բաց դաս-պարապմունքներ, որոնց արդյունքը շատ բարձր էին, և այդ մասին մանրամասն նշվում է կրթության բաժնի հաշվետվությունում, որը տպագրվել է «Լուսարար» թերթի 2014թ. թիվ 22 համարում:[365]

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Ասկերանի մանկապարտեզի գործունեությունը 2000-2015թթ.

Արցախյան պատերազմից հետո 1999-2000թթ. Ասկերան քաղաքում սկսեց գործել Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության գրասենյակի մասնաճյուղը, որը զբաղվում էր բարեգործական գործունեությամբ Ասկերանի շրջանում: 2003-2004թթ. գրասենյակի հովանավորության ներքո սկսեց գործել մանկապարտեզ, որը տիպային էր, նախատեսված 60-70 երեխայի համար (3-4տ) և ուներ երկու խումբ: Յուրաքանչյուր խումբ ուներ ննջասենյակ, խաղասենյակ, հանդերձարան, սանհանգույց, լվացարան, խոհանոց, բուժկետ, պահեստ և բավականին մեծ խաղահրապարակ:

Յուրաքանչյուր խումբ նախատեսված է 35 երեխայի համար, ունի մեկական դաստիարակ, որոնք ունեն բարձրագույն կրթություն և աշխատանքային փորձ, մեկական դայակ՝ միջին մասնագիտական կրթությամբ և աշխատանքային փորձով, որոնք սիրով ու պատասխանատվությամբ էին կատարում իրենց գործը: Մանկապարտեզն ապահովված էր համապատասխան կրթական ծրագրերով և ուսումնական ձեռնարկներով, դիդակտիկ նյութերով, խաղալիքներով: Մանկապարտեզը, որի տնօրենն է Անահիտ Դանիելյանը, առաջնորդվում է ռեժիմով և հաստատված սենդակարգով: Երեխաներն օրվա ընթացքում սնվում են 3 անգամ:

Յուրաքանչյուր խումբ առաջնորդվում է տնօրենի կողմից հաստատված դասացուցակով, ունի հանգստի, քնի ժամ: Երեխաներն իրենց առօրյան անց են կացնում կահավորված, լուսավոր, մաքուր, անվտանգ ու հարմարավետ պայմաններում և մանկապարտեզ են հաճախում մեծ սիրով: Ամեն տարի կազմակերպվում են հանդեսներ՝ Ոսկե աշուն, Ամանոր, Սուրբ Զատիկ... Ավարտական հանդես, որտեղ երեխաները ցույց են տալիս իրենց ունակությունները: Մասնակցում են մրցույթների թե՛ շրջանային և թե՛ մարզային, և միշտ էլ գրավում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը, արժանանալով պատվոգրերի և մրցանակների:

Մանկապարտեզը ամեն տարի ունենում է թողարկում՝ դպրոց է ուղարկվում 25-30 թվաքանակով երեխա և նույն քանակով կատարում ընդունելություն:

Շրջանի Խնապատ գյուղի նախադպրոցական հիմնարկը գործում է 1950-ական թվականներից: 1988թ. մանկապարտեզի վարիչն էր Դեզդեմոնյա Հարությունյանը: Այդ ժամանակահատվածում մանկապարտեզում գործում էր 3 խումբ: Արցախյան գոյամարտի ժամանակ համայնքում ժամանակավորապես դադարեցվեց մանկապարտեզի գործունեությունը:

1995թ. վերաբացվեց մանկապարտեզը և վարիչ նշանակվեց Նաիրա Մարտիրոսյանը: Մանկապարտեզը գործեց մեկ ուսումնական տարի: Ֆինանսական իրավիճակից ելնելով՝ 01.01.1996թ. ԼՂՀ ժողկրթության գիտության և սպորտի նախարարության թիվ 156 «Մ» հրամանով փակվեց մանկապարտեզը:

2008թ. հոկտեմբերի 1-ից վերաբացվեց «Խնապատի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը՝ մեկ խմբով, 18 երեխայով և 9 աշխատողով: Մանկապարտեզի տնօրեն նշանակվեց Լուսինե Մանվելյանը:

2009թ. հուլիսին Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի աջակցությամբ «SPFA» բարեգործական կազմակերպության կողմից մանկապարտեզը վերանորոգվեց, և համայնքի երեխաների աճի հետ կապված՝ նպատակահարմար էր բացել ևս մեկ խումբ: 2013թ. հունվարի 1-ից բացվեց կրտսեր երկրորդ խումբը, որտեղ ընդգրկված էր 20 երեխա: Մանկապարտեզում հաճախակի են կազմակերպվում միջոցառումներ՝ նվիրված մայրության, գարնան և գեղեցկության տոներին («Ոսկե աշուն», «Եռատոն», «Ամանոր», «Սուրբ զատիկ», «Հայոց բանակ», «Հրաժեշտ մանկապարտեզին»): Մանկապարտեզում անց են կացվում բաց պարապմունքներ, էքսկուրսիաներ, վիկտորինաներ:

Խաչենի պետական մանկապարտեզի գործունեությունը

1965 թվականի հոկտեմբերին մանկապարտեզի վարիչ նշանակվեց Լարիսա Մանգասարյանը, աշխատեց մինչև 1992 թվականի հոկտեմբերը:

1992 թվականի նոյեմբերին մանկապարտեզի վարիչ նշանակվեց Ալինա Առստամյանը, երեխաների քանակը կազմում էր 45: Մանկապարտեզ հաճախել են Առաջածորի, Կիչանի, Չլդրանի և Մարտակերտ քաղաքի երեխաները:

1996 թվականի հունվարի 1-ին մանկապարտեզը փակվեց: 2007 թվականի դեկտեմբերին ԼՂՀ կառավարության և SPFA ֆրանսիական բարեգործական կազմակերպության աջակցությամբ մանկապարտեզը վերաբացվեց: Շենքը նորակառույց է, նախատեսված 20 երեխայի համար:

Նորակառույց շենքում մանկապարտեզի վարիչ նշանակվեց Ալինա Արամայիսի Առստամյանը:

Խնձրիստանի մանկապարտեզի գործունեությունը

1988 թվականից Խնձրիստանի մսուր-մանկապարտեզի վարիչ է աշխատել Անահիտ Բալայանը: Մանկապարտեզում այդ ժամանակ գործում էր երեք խումբ, հաճախում էր 75 երեխա, աշխատում էր 16 աշխատող:

1996 թվականին ԼՂՀ ԿԳ նախարարության որոշմամբ լուծարվում են հանրապետության նախադպրոցական հիմնարկները:

2007 թվականի մայիսին Խնձրիստանում վերաբացվում է մանկապարտեզը՝ Հայ Օգնության Միության Ֆրանսիայի Կապույտ Խաչի օգնությամբ:

2007 թվականին ՀՕՄ-ի ատենապետուհին եղել է Նելլի Ղուլյանը, նրա առաջարկով և խնդրանքով Ֆրանսիան տաքուկ օջախ է ստեղծել Խնձրիստանում:

2007 թվականի մայիսին մանկապարտեզ էր հաճախում 55 երեխա, երկու խմբերն ունեին 9 աշխատող:

2008 թվականին մանկապարտեզի ավագ խմբի սաները մասնակցել են շրջանում երգի-պարի մրցույթին, զբաղեցրել երրորդ տեղը և արժանացել պատվոգրի:

2015-2016 ուս.տարում մանկապարտեզ են հաճախել 50 երեխա, գործել է երկու խումբ, դրանցում աշխատում էին 9 հոգի:

Այգեստանի մանկապարտեզի գործունեությունը

1988թ.-ին Այգեստան համայնքում սովխոզտեխնիկումի ֆինանսավորմամբ գործում էր երեք խմբանոց մսուր-մանկապարտեզ՝ Գյուլչորա Գրիգորյանի տնօրինությամբ, 15 աշխատողներով:

1993թ. ապրիլից մանկապարտեզը սկսեց գործել Ասկերանի շրջժողկրթբաժնի ֆինանսավորմամբ, մինչև 1995թ. դեկտեմբերի 30-ը:

2000թ. մայիսի 8-ին Այգեստան համայնքում ստեղծվեց մանկական հիմնարկ բարեգործական հիմունքներով՝ Հայ Օգնության Միության հովանավորությամբ, որը կրում էր Սոսե մայրիկի անունը: Սկզբնական շրջանում մանկապարտեզում գործում էր 3 խումբ և հաճախում էին թվով 67 սան: 2010թ. ապրիլի 1-ից կառավարությունը իր վրա վերցրեց մանկապարտեզի հոգսերը, և առ այսօր մանկապարտեզը գործում է պետական հիմունքներով: 2016թ. մանկապարտեզում գործում էր երկու խումբ, հաճախում էր 55 սան և ուներ 10 աշխատող:

Այգեստանի պետական մանկապարտեզի տնօրենն է Անահիտ Բարսեղյանը:

Այգեստանի տարվա լավագույն դաստիարակների կենսագրականը

Նատալյա Հայրապետյանը ծնվել է 1976թ. Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղում:

1983թ. ընդունվել է գյուղի միջնակարգ դպրոցը և ավարտել 1993թ.:

1993թ. ընդունվել է Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի նախադպրոցական բաժինը: Ավարտելուց հետո ընդունվել է աշխատանքի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար:

2000թ. մայիսի 8-ին ընդունվել է աշխատանքի ՀՕՄ-ի Այգեստանի «Սոսե» մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի, առ այսօր աշխատում է Այգեստանի պետական մանկապարտեզում, որպես դաստիարակչուհի:

Ն. Հայրապետյանը 2015թ. հոկտեմբերի 5-ին «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի հանրապետական փուլում հաղթող է ճանաչվել:

Նարինե Վազգենի Գասպարյանը ծնվել է 1974թ. օգոստոսի 13-ին Ստեփանակերտում:

1981թ. ընդունվել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը և ավարտել 1991թ.:

1981թ. ընդունվել է Շուշիի մշակութալուսավորական տեխնիկումի «Գրադարանային գործ» բաժինը և 1993թ. ավարտել այն:

1992թ. ընդունվել է աշխատանքի Այգեստանի պետական մսուր-մանկապարտեզում, որպես դաստիարակչուհի:

2012թ. ավարտել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Տարական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժինը: 2012թ. հոկտեմբերի 5-ին Ն.Գասպարյանը «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի հանրապետական փուլի արդյունքներով «Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում հաղթող է ճանաչվել:

Ավետարանոցի պետական մանկապարտեզի գործունեությունը

Ավետարանոց գյուղում մանկապարտեզը գործում էր դեռևս 1960 թվականից: Գործել է մինչև 1990-1991 թվականները, երբ անձնակազմը համալրված էր մասնագետներով, մանկապարտեզի վարիչն էր Էլլադա Բաղդասարյանը: Նա ուներ մասնագիտական կրթություն, ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժինը: Մանկապարտեզն իր ծաղկմանը հասավ նրա գործունեության ժամանակ:

1990-1991 թվականներին դադարեցվեց մանկապարտեզի աշխատանքը և շենքը տրվեց ֆիդայիներին և Արցախյան շարժման մասնակիցներին, օգտագործվում էր որպես հավաքատեղի:

1994-1996 թվականներին նորից սկսեց գործել մանկապարտեզը, այս անգամ արդեն ամբողջովին փոխվեց նախկին անձնակազմը: Սկսեցին աշխատել զոհված ազատամարտիկների այրիներ: Մանկապարտեզը տնօրինում էր զոհված ազատամրատիկի այրի Լուսինե Հայրապետյանը, իսկ դաստիարակ էր Սահականուշ Մնացականյանը: Մանկապարտեզը շարունակեց գործել մինչև 1998 թվականը:

2000 թվականից դպրոցին կից սկսեց գործել նոր մանկապարտեզ: Դպրոցի տնօրեն Արզանյանի աջակցությամբ գործում էր 1 խառը խումբ, որն ընդգրկում էր 20 երեխա, աշխատում էր 2 դաստիարակ՝ Սիլվա Վանիի Հայրապետյանը և Արև Էդիկի Առստամյանը: Մանկապարտեզի ծախսերը հոգում էին ծնողները՝ յուրաքանչյուր երեխայի համար 2000 դրամ և միաժամանակ մատակարարելով գյուղատնտեսական մթերքներ: Մանկապարտեզը գործում էր դպրոցին կից, հատկացված էր 1 դասարան, ճաշարան և կաբինետ, որոնք գործում էին սանիտարական նորմալ պայմաններում: Այսպես շարունակվեց մինչև 2008թ. հոկտեմբերի 1-ը, երբ մանկապարտեզին տրվեց պետական և ոչ պետական կազմակերպության կարգավիճակ: Մանկապարտեզի տնօրեն նշանակվեց Նանար Պետրոսյանը: 2009թ. տնօրեն նշանակվեց Սիլվա Սարգսյանը:

Մանկապարտեզը շարունակում էր գործել դպրոցին կից շենքում, ուներ 1 խումբ՝ 25-30 երեխաների ընդգրկմամբ: 2010թ. ֆրանսահայ բարերար Ժակ Մաթոսյանի աջակցությամբ վերանորոգվեց մանկապարտեզի խոհանոցը և ապահովվեց համապատասխան գույքով: Մինչև 2015թ. օգոստոսի 6-ը մանկապարտեզն իր աշխատանքները շարունակեց դպրոցին կից շենքում:

2015թ. օգոստոսից մանկապարտեզը տեղափոխվեց նոր շենք, որը կառուցվել է Գերմանիայի հայ գործարարների միության և պետական աջակցությամբ: Գերմանահայ բարերարներն են Մուրատ Աքյուզը, Պետրոս Ազատյանը, Ալֆանտ Պետրոսյանը:

Մանկապարտեզը 2-խմբանոց է՝ նախատեսված 50-60 երեխաների համար:

Այն մեծ է ու հարմարավետ, ունի խաղահրապարակ, առանձին ննջարաններ ու խաղասենյակներ: 2015թ. նոյեմբերի 1-ից բացվեց երկրորդ խումբը՝ 25 երեխաների ընդգրկմամբ:

Ակնաղբյուրի (Ղարաբուլաղի) մանկապարտեզի գործունեությունը

Ասկերանի շրջանի Ակնաղբյուր (նախկինում Ղարաբուլաղ) գյուղում համայնքային մանկապարտեզը հիմնադրվել է 1975թ. հոկտեմբերի 1-ին: Այն մասուր-մանկապարտեզ էր, ուր հաճախում էին 1,5-6 տարեկան երեխաները: Մանկապարտեզ էին հաճախում 45-50 սանիկներ: Այն տեղակայված էր գյուղական փոստի նախկին բաժանմունքում: Հետո այն տեղափոխվեց ութամյա դպրոցի նախկին շենքը, որտեղ գործեց մինչև 1995թ.: 1995թ. հետպատերազմյան ծանր կացության պատճառով փակվեց մանկապարտեզը:

2005թ. սեպտեմբերի 1-ից Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցին կից բացվեց նախադպրոցական հիմնարկ, որը համալրվեց նախադպրոցական տարիքի երեխաներով: Այն գործեց մինչև 2008թ. նոյեմբերի 1-ը: 2008թ. նոյեմբերի 1-ին ԼՂՀ կառավարության որոշման համաձայն բացվեց «Ակնաղբյուրի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը, որը գործում է առ այսօր: Մանկապարտեզում, որը տեղակայված է միջնակարգ դպրոցում, գործում է 1 խումբ: Այն համալրում են շուրջ 20 սանիկներ: Ունի 7 աշխատող: Մանկապարտեզի տնօրենն է Բելա Իսրայելյանը: 2005թ. նա արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Ստեփանակերտի մանկապարտեզների գործունեությունը

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության տվյալների համաձայն, մայրաքաղաքում գործում է 11 մանկապարտեզ, որից 8-ը պետական է: Հաշվետվության մեջ նաև նշվում է, որ 2012-2013 ուս.տարում մայրաքաղաքի թիվ 9 և թիվ 10 դպրոցներում գործում են նախադպրոցական խմբեր՝ օրական 9 ժամ տևողությամբ: Դրանց զուգահեռ կան նաև 6-ժամյա տևողությամբ խմբեր, ինչպես նշված, այնպես էլ մյուս դպրոցներում՝ թիվ 1, 3, 4, 5, 6, 7, 12, որոնցում կընդգրկվեն մինչև 5 տարին լրացած երեխաները: Մանկապարտեզներից համապատասխան տարիքի երեխաները հանվել են, նրանց փոխարինել են 2-4,5 տարեկանները, և հնարավորություն է ստեղծվել ընդգրկելու դրանց կարիքն զգացող երեխաներին: Ըստ պաշտոնական տվյալների, 2012-2014 թվականներին Ստեփանակերտի Հայկական և Ստեփգես թաղամասերում կառուցվել են 2 մանկապարտեզի շենք, իսկ շրջաններում 4-ը, և այդ գործընթացը շարունակվել է հետագա տարիներին:[366]

Ստեփանակերտի թիվ 1 պետական մանկապարտեզի գործունեությունը

Ստեփանակերտի թիվ 1 պետական մանկապարտեզը ստեղծվել է 2001թ. օգոստոսի 31-ի «Ստեփանակերտ քաղաքում մանկապարտեզ հիմնադրելու մասին» թիվ 239 որոշմամբ:

2001-2012թթ. մանկապարտեզի տնօրենն էր Լիդա Սիմոնյանը: 2002թ. տվյալներով՝ մանկապարտեզն ուներ 19 աշխատող, որից չորսը՝ դաստիարակներ: Ուներ ընդամենը երեք խումբ՝ 52 երեխաների ընդգրկմամբ: 2003թ. բացվեց չորրորդ խումբը (25 երեխայով):

Այժմ «Ստեփանակերտի թիվ 1 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունե-

ցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր: Հիմնարկն ունի իր կանոնադրությունը՝ հաստատված Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից 2007թ. մարտի 27-ին:

2012թ. մանկապարտեզի տնօրենն է Ժանետա Զաքարյանը:

Մանկապարտեզ հաճախում են 3-5 տարեկան երեխաները: Գործում է 5 խումբ՝

1.(01) «Ծիածան» խումբը,

2.(02) «Զանգակ» խումբը,

3.(03) «Արևիկ» խումբը,

4.(04) «Արևիկ» խումբը,

5.(05) «Աստղիկ» խումբը:

2015-2016թթ. ուսումնական տարում երեխաների ընդհանուր քանակը հասնում էր 167-ի, որոնք ընդգրկված էին 5 խմբերում՝ 2 կրտսեր և 3 միջին:

Աշխատողների թիվը՝ 30, որից ինը՝ դաստիարակ: Բոլոր դաստիարակներն ունեն աշխատանքային մեծ փորձ և բազմիցս քաղաքապետարանի կողմից պարգևատրվել են պատվոգրերով.

1.2003թ. Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված փառատոնին մասնակցելու համար քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի կողմից ստացել են պատվոգիր,

2.2009թ. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրվել են պատվոգրով «Մանկապարտեզների խմբասենյակների արտաքին տեսքի ձևավորում» թեմայով մրցույթին մասնակցելու համար,

3.2009թ. «Ոսկե աշուն» փառատոնին մասնակցելու համար ստացել են պատվոգիր:

Մանկապարտեզի դաստիարակները բացի ամենօրյա ծրագրերին համապատասխան պարապմունքներից, կազմակերպում են տարբեր միջոցառումներ, օրինակ, Աշնան տոն, մրգահանդես, Նոր տարվա հանդես, Հացի տոն, Համբարձման տոն, Մաթեմատիկայի աշխարհում, մայրությանը նվիրված տոներ:

Թիվ 1 մանկապարտեզը բազմիցս մասնակցել է քաղաքային և հանրապետական մրցույթներին և գրավել առաջին և երկրորդ տեղերը:

4.2013թ. թիվ 1 մանկապարտեզին, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված, ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների միջև կերպարվեստի աշխատանքների մրցույթում երկրորդ տեղը գրավելու համար շնորհվել է դիպլոմ,

5.2014թ. ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների ձեռքի աշխատանքների մրցույթում առաջին տեղը գրավելու համար շնորհվել է դիպլոմ,

6.2015թ. ԼՂՀ մանկապարտեզների դաստիարակների միջև գեղարվեստական մրցույթում երկրորդ տեղը գրավելու համար շնորհվել է դիպլոմ:

Մանկապարտեզի տարվա լավագույն դաստիարակի համառոտ կենսագրությունը

Թիվ 1 մանկապարտեզի դաստիարակ Սուսաննա Բահատուրի Իսրայելյանը 2010թ. մասնակցել է «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին և 2010թ. հոկտեմբերի 5-ին Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից պարգևատրվել «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլում հաղթող ճանաչվելու համար:

Նույն թվականին պարգևատրվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարու-

թյան կողմից հանրապետական փուլում հաղթող ճանաչվելու համար:

Ս. Իսրայելյանը ծնվել է 1960թ. փետրվարի 27-ին Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղում, մանկավարժների ընտանիքում:

1978թ. ավարտել է Երևանի Ա. Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանի «Նախադպրոցական դաստիարակություն» բաժինը և ստացել դաստիարակի որակավորում: Անմիջապես աշխատանքի անցնելով Ստեփանակերտի թիվ 10 մանկապարտեզում՝ որպես դաստիարակ, աչքի է ընկել իր աշխատասիրությամբ:

1993թ. աշխատել է թիվ 10 դպրոցում, որպես դասվար, իսկ 2001թ. տեղափոխվել է Ստեփանակերտի թիվ 1 մանկապարտեզ և առ այսօր աշխատում է որպես դաստիարակ:

2014թ. թիվ 1 մանկապարտեզի դաստիարակ Ժաննա Միքայելի Ավանեսյանը մասնակցել է «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին, քաղաքային և հանրապետական փուլերում հաղթող ճանաչվել ու պարգևատրվել Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Ծնվել է 1958թ. դեկտեմբերի 5-ին, Ստեփանակերտ քաղաքում: Դպրոցն ավարտել է 1974 թվականին, իսկ 1977թ. ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և մեթոդիկա» բաժինը: Ավարտելով այն, 1983-1986թթ. աշխատել է թիվ 8 մանկապարտեզում՝ որպես դաստիարակ:

1989թ. նույն մանկապարտեզում աշխատել է որպես մեթոդիստ: 2001թ. առ այսօր աշխատում է թիվ 1 մանկապարտեզում՝ որպես դաստիարակ: Բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով:

«Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի գործունեության համառոտ պատմությունը (1988-2015թթ.)

1983 թվականի ապրիլի 18-ին բացվել է Ստեփանակերտ քաղաքի թիվ 3 մսուր-մանկապարտեզը: Մանկապարտեզում տնօրեն է նշանակվել Լարիսա Պարգևի Ներսիսյանը: Նա որպես տնօրեն աշխատել է մինչև 1990 թվականի սեպտեմբերի 10-ը:

1990 թվականի սեպտեմբերի 10-ին թիվ 3 մսուր-մանկապարտեզի տնօրեն է նշանակվել Ծովինար Բաղդասարյանը՝ մինչև 1993 թվականի հունվարի 14-ը:

Հաշվի առնելով հանրապետության քաղաքական իրավիճակը, քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզի շենքը անցել է հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի տնօրենության տակ: Այդ իսկ պատճառով այն տեղափոխվել է թիվ 3 մսուր-մանկապարտեզի շենքը: Կապված դրա հետ, Լիդա Սիմոնյանին՝ քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզի տնօրենին, համաձայն Ստեփանակերտի ժողկրթության բաժնի հրամանի, տեղափոխում և 1993 թվականի հունվարի 16-ին նշանակում են թիվ 3 մսուր-մանկապարտեզի տնօրեն:

1994 թվականի հոկտեմբերի 1-ին լուծարվում է թիվ 3 մսուր-մանկապարտեզը:

Ի կատարումն ԼՂՀ կառավարության թիվ 1995 թվականի մայիսի 12-ի կարգադրության՝ Ստեփանակերտ քաղաքի թիվ 2 մանկապարտեզի շենքը անհատույց հատկացվում է բռնագաղթված քաղաքացիների և մարդասիրական օգնության պետական վարչությանը: 1995 թվականի հուլիսի 1-ից լուծարվում է թիվ 2 մսուր-մանկապարտեզը:

1995թ. հուլիսի 1-ից կապված թիվ 2 մսուր-մանկապարտեզի լուծարման հետ, մանկապարտեզի վարիչ Լարիսա Ներսիսյանին տեղափոխում են թիվ 2 մսուր-

մանկապարտեզ և նշանակում նույն մանկապարտեզի վարիչ:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ և «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 13-րդ հոդվածների համաձայն՝ ԼՂՀ կառավարությունը (15 հունիսի 2010թ.) որոշեց ստեղծել «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ:

2010 թվականի հուլիսի 1-ին մանկապարտեզի տնօրեն է նշանակվում Լարիսա Ներսիսյանը: Նա տնօրինել է մինչև 2013 թվականի նոյեմբերի 14-ը:

Մանկապարտեզն ունի տարբեր անվանումներով 12 խումբ, որոնցում ընդգրկված են 635 երեխա.

խումբ թիվ 1 «Մանչուկ»
խումբ թիվ 2 «Շուշան»
խումբ թիվ 3 «Պինգվին»
խումբ թիվ 4 «Փաթիլ»
խումբ թիվ 5 «Թիթեռ»
խումբ թիվ 6 «Ծիծեռնակ»
խումբ թիվ 7 «Զատիկ»
խումբ թիվ 8 «Արծիվ»
խումբ թիվ 9 «Ծիածան»
խումբ թիվ 10 «Արևիկ»
խումբ թիվ 11 «Կակաչ»
խումբ թիվ 12 «Կարկաչ»:

2013 թվականի նոյեմբերի 14-ից մանկապարտեզի տնօրեն է նշանակվում Նինա Լազարյանը, որտեղ որպես փոխտնօրեն աշխատել է 2010թ. հուլիսի 5-ից մինչև 2013թ. նոյեմբերի 13-ը: Ունի բարձրագույն կրթություն և 26 տարվա մանկավարժական ստաժ:

Մանկապարտեզի փոխտնօրենի պաշտոնում աշխատում է Վեսմիրա Գաբրիելյանը:

Մանկապարտեզում աշխատում են 36 շնորհաշատ դաստիարակներ, երաժշտական ղեկավարներ, պարուսույցներ, ֆիզ. հրահանգիչներ, լոգոպեդ և հատուկ մանկավարժ: Նրանց շնորհիվ մանկապարտեզն արժանացել է մի շարք պատվոգրերի և պարգևների:

1.2011թ. «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ն արժանացել է դիպլոմի՝ ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների ձեռքի աշխատանքների մրցույթ-ցուցահանդեսում առաջին տեղը գրավելու համար:

2.2012թ. «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ն արժանացել է դիպլոմի՝ ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների միջև հայտարարված կերպարվեստի աշխատանքների մրցույթ-ցուցահանդեսում 2-րդ տեղը գրավելու համար:

3.2013թ. «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ն արժանացել է պատվոգրի՝ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների միջև հայտարարված կերպարվեստի աշխատանքների մրցույթում «Հոգևոր Արցախ» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար:

4.2015թ. «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել է դիպլոմի՝ երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մանկապարտեզների դաս-

տիարակների միջև հայտարարված գեղարվեստական մրցույթում առաջին տեղը գրավելու համար: Միևնույն ժամանակ դիպլոմի է արժանացել դաստիարակչուհի Ռենա Վալերիկի Բարխուդարյանը «Լավագույն ասմունքող» անվանակարգում առաջին տեղը գրավելու համար:

2015թ. «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլում լավագույնն է ճանաչվել դաստիարակչուհի Ռամելա Իսախանյանը:

Մանկապարտեզում միշտ կազմակերպվում են բաց պարապմունքներ և տոնական օրերին նվիրված միջոցառումներ:

Մանկապարտեզի տարվա լավագույն դաստիարակի կենսագրականը

Վեսմիրա Կարապետի Գաբրիելյանը ծնվել է 1954թ. փետրվարի 16-ին Ստեփանակերտում: 1961թ. հաճախել է քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոց: Դպրոցն ավարտել է 1971թ.: Նույն թվականին ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժինը: Ուսումնարանը ավարտել է 1973թ.:

1974թ. ապրիլից աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 21 պրոֆտեխուսումնարանում՝ որպես գրադարանավարուհի:

1975թ. դեկտեմբերից տեղափոխվել է Ստեփանակերտի թիվ 4 մսուր-մանկապարտեզ՝ որպես դաստիարակչուհի և աշխատել մինչև 1980թ. փետրվարը:

1980թ. փետրվարին տեղափոխվել է թիվ 3 մանկապարտեզ և աշխատել մինչև 1983թ.:

1983թ. հուլիսից աշխատանքի է անցել թիվ 7 մսուր-մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: Աշխատել է մինչև 1993թ. փետրվարի 2-ը:

1999թ. մարտի 5-ից մինչև 2000թ. հուլիսը աշխատել է Մուրացանի անվան քաղաքային գրադարանում:

2006թ. նոյեմբերից աշխատանքի է անցել Ստեփանակերտի սեփականաշնորհված թիվ 2 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

2010թ. սեպտեմբերից հիմնական աշխատանքի է անցել «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ում՝ որպես դաստիարակչուհի: 2014թ. հունվարի 14-ին նշանակվել է նույն մանկապարտեզի փոխտնօրեն և աշխատում է առ այսօր:

2012թ. արժանացել է «Տարվա լավագույն դաստիարակ» կոչման:

Ստեփանակերտի թիվ 3 մանկապարտեզի գործունեությունը

Ստեփանակերտի նախկին «Տաթև» մասնավոր մանկապարտեզը, որի տնօրենն էր Զ. Դադայանը, 2009թ. կառավարության որոշմամբ դարձել է «Ստեփանակերտի թիվ 3 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ, որը տեղափոխվել է նոր շենք և տնօրեն է նշանակվել Ի.Վ. Գրիգորյանը: Մանկապարտեզն ունի 3 տարվա պատմություն, և նրա աշխատակիցները տեղափոխվել են նախկին մասնավոր մանկապարտեզից և համալրվել նոր աշխատակիցներով: Այժմ մանկապարտեզն ունի 30 աշխատակից և 243 երեխա: Մանկապարտեզը այդ տարիների ընթացքում ձևավորել է շատ ավանդույթներ:

Ամեն տարի կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպաստում են երեխաների հայեցի դաստիարակությանը: Միջոցառումները կազմակերպվում են ճաշակով և բարձր մակարդակով՝ շնորհիվ աշխատակիցների քրտնաջան աշխատանքի:

Այս տարիների ընթացքում մանկապարտեզը հյուրընկալել է բարձր մակարդակի հյուրերի, պետական և հոգևոր այրերի: Նրանք միշտ հիացած են գնացել

երեխաների ելույթներից և կազմակերպվածությունից: Մանկապարտեզի աշխատակիցները պարբերաբար արժանանում են պարգևների, շնորհակալագրերի ինչպես քաղաքապետարանի, ԿԳ նախարարության, կառավարության, այնպես էլ մանկապարտեզի տնօրինության կողմից: Մանկապարտեզի աշխատանքը հասել է այն մակարդակին, որ արդեն դպրոցներից դրական արձագանքներ են լսվում շրջանավարտների պատրաստվածության և ծրագրերի լավ յուրացման մասին: Յուրաքանչյուր տարի մանկապարտեզը թողարկում է մոտ 60 շրջանավարտ:

Չնայած մանկապարտեզի պայմանները չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին, նրա անձնակազմը անում է ամեն ինչ՝ սաների առօրյան, սնունդը, ուսումը, դաստիարակությունը և հանգիստը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Մանկապարտեզում ավանդույթ է դարձել բաց պարապմունքների անցկացումը, որոնց նպատակը փորձի փոխանակումն է և սկսնակ կադրերի վերապատրաստումը: 2014-2015 ուսումնական տարվա վերջում անց է կացվել «Հրաժեշտ մանկապարտեզին» հանդեսը, որին մասնակցում էին բարձրաստիճան անձինք՝ ԿԳ նախարարը, քաղաքապետարանի կրթության բաժնի ղեկավարը, դպրոցների տնօրեններ, դաստիարակներ և այլոք:

2011թ. մանկապարտեզի երաժշտության ղեկավար **Իրինա Փիրումյանը** «Տարվա լավագույն երաժշտության ղեկավար» մրցույթին մասնակցել ՝և գրավել է պատվավոր 1-ին տեղը և՛ քաղաքային, և՛ հանրապետական փուլերում:

2013թ. մանկապարտեզի դաստիարակ **Նվարդ Բաղդասարյանը՝** մասնակցելով «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին, և՛ քաղաքային, և՛ հանրապետական փուլում գրավել է 1-ին տեղը և արժանացել պարգևատրման:

2015թ. մանկապարտեզի տնօրեն **Իրինա Գրիգորյանին** շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Մանկապարտեզը պարգևատրության է արժանացել նաև մի քանի անգամ քաղաքապետարանի կողմից՝ քաղաքի օրվա, ինչպես նաև կրթության քաղաքային բաժնի կողմից՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Ստեփանակերտի թիվ 4 մանկապարտեզի գործունեությունը

«Ստեփանակերտի թիվ 4 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ը ստեղծվել է 2015թ. փետրվարի 17-ին և ունի 10 աշխատող:

Մանկապարտեզն առաջնորդվում է կրթության նախարարության կողմից հաստատված ծրագրով, իրականացվում են միջոցառումներ՝ նվիրված տոն օրերին:

Մանկապարտեզն ունի մեկ գործող մասնաշենք, որը նախատեսված է մեկ խմբի համար (40 երեխա), բայց ներկայումս երեխաների քանակը հասնում է 72-ի: Մանկապարտեզի վարիչի պաշտոնավարման ժամանակաշրջանն է 17 փետրվարի 2015թ. առ այսօր:

Մանկապարտեզի տնօրենն է Նարինե Միքայելյանը:

Ստեփանակերտի թիվ 5 պետական մանկապարտեզի գործունեությունը

Ստեփանակերտի թիվ 5 պետական ոչ տիպային մանկապարտեզը գործում է Սարոյան 1 հասցեում գտնվող բնակելի շենքի առաջին հարկում: Մանկապարտեզն իր գործունեությունը սկսել է Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Ա. Գրիգորյանի N295/Ն առ 25.05.2015թ. որոշման համաձայն: Առաջին իսկ մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ միաձայն որոշվել է մանկապարտեզին տալ «Մանուկների մոլորակ» անվանումը:

«Մանուկների մոլորակում» գործում է երեք խումբ, որտեղ կրթվում ու դաստիարակվում են 3-ից 5 տարեկան 120 երեխա: Մանկապարտեզն ունի երաժշտական դահլիճ, բուժկետ, լվացքատուն, պահեստ, համապատասխան սարքավորումներով խոհանոց և, իհարկե, հարմարավետ բակ՝ 3 տաղավարով: Խմբասենյակները մեծ են ու լուսավոր, կահավորված ժամանակին համապատասխան կահույքով ու խաղալիքներով:

Մանկապարտեզում աշխատում են երիտասարդ, բանիմաց ու նվիրված, համապատասխան կրթությամբ թվով 5 մանկավարժներ, բարձրագույն կրթությամբ 3 դայակ:

2015-2016թթ. ուս.տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք տոնական միջոցառումներ՝ Հացի փառատոն, Սուրբ Ծննդյանը և Ամանորին նվիրված ցերեկույթ, Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված այցելություն Կենտրոնական պաշտպանական շրջանի N զորամաս և զինվորական հոսպիտալ: Զատկի տոնին նվիրված տոնական միջոցառմանը հրավիրված էր Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու քահանա Տեր Մինասը: Մայիսյան եռատոնին նվիրված ցերեկույթին ներկա էին ծնող-վետերաններ: Հունիսի 1-ին Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված տոնական քաղաքային միջոցառմանը նույնպես «Մանուկների մոլորակի» սանիկներն իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան:

1.ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի գործունեությունը

Հայ Օգնության Միության «Սոսե» մանկապարտեզների ծրագիրը Արցախում ՀՕՄ-ի ամենամեծ և հաջողված ծրագրերից է:

Միության Կենտրոնական վարչության որոշմամբ 1996թ. սկսվեցին Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքները նախկին թիվ 6 մանկապարտեզի տարածքում: 1998 թվականի ապրիլից մանկապարտեզը սկսեց գործել, իսկ պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1998 թվականի հունիսի 1-ին: Բացմանը ներկա են եղել շուրջ 100-ից ավելի հրավիրյալներ, որոնց թվում ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության անդամներ, բարերարներ, հովանավորներ, պաշտոնական այրեր:

ՀՕՄ-ի ջանքերով բացված մանկապարտեզը նպատակ ուներ ոչ միայն նյութական և բարոյական աջակցություն ցույց տալ Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, այլ նաև նպաստել նրանց մանկահասակ երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներին: Առաջին տարիներին մանկապարտեզ էին հաճախում զոհված ազատամարտիկների երեխաներ, որոնց դաստիարակության և խնամքի աշխատանքներով զբաղված էին 15 աշխատողներ՝ մեծամասնությամբ զոհված ազատամարտիկների այրիներ: 1998 թվականի սեպտեմբերից առ այսօր մանկապարտեզի տնօրենն է Ազգային հերոս Աշոտ Ղուլյանի այրին՝ Նելլի Ղուլյանը:

ՀՕՄ-ի Կենտրոնական Վարչության ֆինանսավորմամբ և ղեկավարությամբ, ՀՕՄ-ի Արցախի միավորի անմիջական հսկողությամբ և աջակցությամբ, մանկապարտեզի աշխատողների նվիրված և սրտացավ վերաբերմունքի շնորհիվ «Սոսե» մանկապարտեզը շատ կարճ ժամկետում աչքի ընկավ ԼՂՀ նախադպրոցական հիմնարկների շարքում և դրանով իսկ արդարացրեց ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության և հովանավորների սպասումներն ու հույսերը:

«Սոսե» մանկապարտեզի օրինակով որոշվեց ընդլայնել «Սոսե» մանկապարտեզների ցանցն Արցախում, տարիների ընթացքում նրանց թիվը հասցնելով 12-ի, հիմնականում Արցախի վերաբնակեցված և սահմանամերձ համայնքներում՝ Այգեստանում, Մեծ Թաղերում, Ավդուռում, Տողում, Հաղորտիում, Ակնաբերդում, Աշանում, Քարին տակում, Շուշիում, Քարեգահում, Խնձրիստանում:

2007թ. օգոստոսին ՀՕՄ-ի «Սոսե» մանկապարտեզների գործունեությունը արդյունավետ կազմակերպելու համար ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության կողմից համակարգող նշանակվեց Արտեմիս Գրիգորյանը:

Սկսած 2000-2001 ուսումնական տարուց, ՀՕՄ-ի Արցախի Միավորի վարչության որոշմամբ մանկապարտեզի երեխաների ընդունելության կարգերի մեջ մտցվեցին փոփոխություններ և մանկապարտեզն իր գրկում կարող էր ընդունել Արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների, սակավակարող և բազմազավակ ընտանիքներից երեխաներ: Մանկապարտեզի երեխաներն ըստ տարիքային առանձնահատկությունների ընդգրկված էին սկզբում երեք, իսկ հետագայում չորս խմբերում: Մանկական այս օջախում գործում են հաստատված օրվա կարգացույցը և պարապմունքների ցանկը, որոնց պահպանման և իրականացման հսկողությունը իրականացնում է տնօրենը:

Մանկապարտեզն իր կրթադաստիարակչական գործունեությունն իրականացնում է՝ առաջնորդվելով ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հատուկ ծրագրերով:

Մանկապարտեզը՝ կրելով հայ հերոս կնոջ կերպարն արտացոլող Սոսե մայրիկի անունը, աշխատողներին ավելի է պարտավորեցնում լինել պատասխանատու և նվիրված իրենց վստահված շատ կարևոր գործին, բազմավաստակ ու փորձառու մանկավարժներն անում են հնարավորինը՝ որպեսզի երեխաները հաճախեն միջնակարգ դպրոցներ գիտելիքների որոշակի պաշարով և պատրաստ լինեն դիմակայելու դպրոցների նոր պահանջներին:

Երեխաների պատշաճ կրթության և դաստիարակության համար ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները, ուսուցման նոր մեթոդներով, նորամուծությունների միջոցներով ուսուցանվում են մայրենի լեզու, մաթեմատիկա, էկոլոգիա, երաժշտություն և ծրագրով նախատեսված այլ առարկաներ:

Ծրագրային պարապմունքներից բացի կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, ՀՀ-ում և ԼՂՀ-ում ընդունված բոլոր տոն և հիշատակի օրերի մասին տեղյակ են պահվում երեխաները: Արդեն ավանդույթ է դարձել դաստիարակների ժրաջան աշխատանքի շնորհիվ ազգային և հոգևոր տոների նշումը երեխաների մասնակցությամբ: Երեխաների ամառային հանգիստը ճիշտ ու նպատակային կազմակերպելու համար չորրորդ տարին է, ինչ մանկապարտեզում անց է կացվում «Երեխաների առողջության պահպանման միամսյակ» ծրագիրը «Առողջ մանուկ, առողջ սերունդ, առողջ ազգ» կարգախոսով: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են բազմաբնույթ հանդիպումներ, այցելություններ, բժշկական ստուգայցեր, սպորտային և նկարչության մրցույթներ: Այս ամենը նպաստում է երեխաների հայրենասեր և հայեցի դաստիարակմանն ու առողջ ապրելակերպի ապահովմանը:

«Սոսե»-ի սանիկները մանկապարտեզ են հաճախում հատուկ համազգեստով, որոնց ձեռքբերման համար հոգացել են ՀՕՄ-ի ԱՄՆ Արևմտյան ափի ընկերուհիները:

2008թ. մեծ շուքով տոնվեցին մանկապարտեզի գործունեության 10, իսկ 2013-ին՝ 15-ամյակները: Միջոցառումները յուրօրինակ հաշվետվություն էին տարիների կատարած աշխատանքների: Միջոցառումներին նոր շունչ հաղորդեց շրջանավարտների մասնակցությունը, որոնք հանդես եկան իրենց կազմակերպած գրական-գեղարվեստական հանդեսով: Շրջանավարտներից շատերը մասնակցել և հաջողությունների են հասել հանրապետությունում և նրա սահմաններից դուրս կազմակերպված տարբեր օլիմպիադաներում և սպորտային միջոցառումներում: Այսօր սանիկների մեծ մասը լավ մասնագետներ են և իրենց ներդրումն ունեն հայրենիքի զարգացման և բարգավաճման գործում: Նրանք նաև ստանձնել են հայրենիքի սահմանները անառիկ պահելու գործը և, ցավոք սրտի, անցած տարվա օգոստոսին սահմանագծում մի քանի հոգի վիրավորվեցին, մահացու վերք ստացավ էրիկ Գասպարյանը:

Մանկապարտեզի համբավն էլ ավելի մեծացավ, երբ 2009-2010 ուսումնական տարում ԼՂՀ ԿԳ նախարարությունը կազմակերպեց «Լավագույն դաստիարակ» մրցույթը, որին մասնակցեց և մրցանակային տեղ գրավեց մանկապարտեզի դաստիարակչուհի Նունե Ծատրյանը:

ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված «ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների ձեռքի աշխատանքներ» մրցույթ-ցուցահանդեսում մանկապարտեզը մեկ անգամ գրավեց 3-րդ տեղը, 2 անգամ՝ 2-րդ տեղը, իսկ 2013-2014թթ. ուսումնական տարում՝ պատվավոր առաջին տեղը և արժանացավ նախարարության հատուկ դիպլոմին և դրամական խրախուսանքին:

Ընդհանրապես մանկապարտեզն ակտիվորեն մասնակցում է հանրապետության և մայրաքաղաքի մասշտաբով կազմակերպվող մրցույթ-միջոցառումներին: Դրա վկայությունն են «Սոսե»-ին շնորհված բազում շնորհակալագրերն ու պատվոգրերը:

2010թ. մարտին ԱՄՆ Նյու-Յորք քաղաքից սկսվեց ՀՕՄ-ի 100-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, որն իր տրամաբանական ավարտն ունեցավ Արցախում, 2010թ. հոկտեմբերին:

«Սոսե» մանկապարտեզները՝ լինելով ՀՕՄ-ի՝ Արցախում իրականացվող ամենամեծ ծրագիրը, իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան միջոցառմանը, որի պաշտոնական մասից հետո բեմահարթակ բարձրացան «Սոսե»-ի սանիկները: Նրանք իրենց երգ ու պարով, արտասանությամբ ոգևորեցին: Բարձր է գնահատվել և արժեվորվել ՀՕՄ-ի գործունեությունն Արցախում: ԼՂՀ Նախագահի հրամանագրով կառույցը 2010թ. պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Ուրախալի փաստ է, որ մանկապարտեզի աշխատանքներին իրենց մասնակցությունն են ցուցաբերում նաև տեղացի բարերարները, տարբեր կազմակերպություններ: Դրա վառ ապացույցն էին մանկապարտեզի բակի, շենքի արտաքին մասի նորոգման աշխատանքները և նոր կահույքի ձեռքբերումը (բարերար Մանվել Դավթյան): «Արցախ ՀԷԿ»-ի կողմից երեխաները ստացան նոր տարվա նվերներ: Բարերարներից բացի մեծ ակտիվություն ցուցաբերեցին նաև ծնողներն ու ՀՕՄ-ուհիները:

2014-2015 ուսումնական տարում մանկապարտեզը տվեց իր 18-րդ թողարկումը, այս տարիների ընթացքում մանկապարտեզ են հաճախել 1220-ից ավելի երե-

խաներ, որոնց մեջ մանկապարտեզը ներարկել է առողջ ու բարի սերմեր, որոնք տարիներ հետո կծլարձակեն, և Ազատ ու Անկախ Արցախը կունենա խելացի, հայրենասեր, առողջ հոգով երջանիկ սերունդ:

1.Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Ստեփանակերտի մանկապարտեզի գործունեությունը

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հակոբ և Լիդիա Բաղդիկյանների անվան մանկապարտեզը սկսեց գործել 2002-2003թթ.: 2003-2007թթ. գործում էր 2 խումբ, որտեղ ընդգրկված էին 60-70 երեխա: 2008թ. մանկապարտեզում սկսեց գործել երրորդ խումբը: Մանկապարտեզը տիպային է, նախատեսված 115-120 երեխայի համար (3-5տ): Յուրաքանչյուր խումբ ունի ննջասենյակ, խաղասենյակ, հանդերձարան, սանհանգույց, լվացարան: Մանկապարտեզն ունի խոհանոց, բուժկետ, պահեստ և բավականին մեծ խաղահրապարակ: Մանկապարտեզը ոչ պետական է, համագործակցում է պետական կրթական համակարգի հետ: Ապահովված է համապատասխան կրթական ծրագրերով և ուսումնական ձեռնարկներով, դիդակտիկ նյութերով, խաղալիքներով: Մանկապարտեզը առաջնորդվում է ռեժիմով և պետականորեն հաստատված սննդակարգով: Երեխաները օրվա ընթացքում սնվում են 3 անգամ: Յուրաքանչյուր խումբ առաջնորդվում է տնօրենի կողմից հաստատված դասացուցակով, ունի հանգստի, քնի ժամ: Երեխաներն իրենց առօրյան անց են կացնում կահավորված, լուսավոր, մաքուր, անվտանգ ու հարմարավետ պայմաններում և մանկապարտեզ են հաճախում մեծ սիրով: Ամեն տարի կազմակերպվում են հանդեսներ՝ Ոսկե Աշուն, Ամանոր, Սուրբ Ձատիկ... Ավարտական հանդես, որտեղ երեխաները ցույց են տալիս իրենց ունակությունները և շնորհները: Մասնակցում են մրցույթների թե՛ քաղաքային և թե՛ հանրապետական, և միշտ էլ գրավում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը, պետության և գրասենյակի կողմից արժանանալով պատվոգրերի և մրցանակների: Մանկապարտեզը ամեն տարի ունենում է թողարկում՝ դպրոց է ուղարկվում 50-60 թվաքանակով երեխա և նույն քանակով կատարում ընդունելություն:

Շուշիի վարչատարածքային շրջանի մանկապարտեզների գործունեությունը

Շուշիի շրջանի կրթության բաժնի վարիչ Իրա Սարգսյանի 2013-2014 ուս.տարվա հաշվետվության տվյալների համաձայն, շրջանում գործող 3 մանկապարտեզներից մեկը գործում է Քարին տակ գյուղում (պետական կարգավիճակով՝ 28 երեխաներով), 2-ը՝ Շուշիում՝ Ավետարանչական կազմակերպության հովանավորությամբ՝ 70 երեխաների ընդգրկմամբ և ՀՕՄ-ի հովանավորությամբ՝ 58 երեխաների ընդգրկմամբ: Խ. Աբովյանի անվան հիմնական և Դ. Ղազարյանի անվան դպրոցներում գործել են նախապատրաստական խմբեր՝ համապատասխանաբար 28 և 17 երեխաների ընդգրկմամբ:

Շուշիի ՀԱԸ մանկապարտեզի գործունեությունը

1993թ. Շուշիի շրջվարչակազմի ղեկավար Ս.Հ. Բաբայանի նախաձեռնությամբ Շուշիում բացվել է մանկապարտեզ, որի տնօրեն է նշանակվել **Համեստ Հակոբյանը:**

Մանկապարտեզի առաջին հովանավորներն են եղել Վլադիմիր Կասյանը, Միքայել Խաչատրյանը, Շուշիի գնդի հրամանատար Վաչագան Իշխանյանը, ՀԱԵ

Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Սարտիրոսյանը, ՀՀ նախկին գյուղնախարար Վլադիմիր Մովսիսյանը, Երևան քաղաքի ալրաղացի կոմբինատի տնօրեն Գևորգ Դավթյանը, «Արցախբանկ» ՓԲԸ կառավարիչ Կամո Ներսիսյանը և «Էկիլիբր» ֆինանսական կազմակերպությունը:

1996թ. պետական աջակցության դադարեցումից հետո մանկապարտեզը վերանվանվել է «Գայանե» ՍՊԸ մանկապարտեզ, որի աշխատողները որոշ ժամանակ աշխատել են բարեգործական հիմունքներով: Շուրջ 75 երեխաների հաճախումը դարձել է վճարովի:

1998թ. մանկապարտեզը հովանավորել է Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը:

1999թ. մանկապարտեզ է հաճախել շուրջ 70 երեխա:

2004թ. մանկապարտեզը կապիտալ վերանորոգվել է:

2008թ. մանկապարտեզի արևելյան մասում կառուցվել է խաղահրապարակ:

2012-ին խաղահրապարակին կից կառուցվել է մեկ այլ, ավելի մեծ խաղահրապարակ, որը նախատեսվել է ոչ միայն մանկապարտեզի, այլև հարևան թաղամասերի երեխաների համար:

Քարին տակ գյուղի մանկապարտեզի գործունեությունը

1988 թվականից մինչև 1991 թվականը Քարին տակի մանկապարտեզը գործել է պետական հիմունքներով:

1991-1992թթ. գյուղի շրջափակման և պատերազմական գործողությունների պատճառով մանկապարտեզը դադարեցրել է իր գործունեությունը:

1993-1994 թվականներին մանկապարտեզը հովանավորել է Երևանի Նորքի զանգվածի վարչական շրջանի ղեկավար Մկրտիչ Մինասյանը:

1955-1998թթ. մանկապարտեզը գործել է բարերարներ Ջորջ և Մերի Նաջարյանների հովանավորությամբ:

1998-2001 թվականներին գյուղում չի գործել մանկապարտեզ:

2001 թվականի դեկտեմբերից մինչև 2010 թվականի փետրվարի 1-ը ՀՕՄ-ի միջոցներով գյուղում գործել է երկու խմբանոց մանկապարտեզ, որի հովանավորը եղել է ամերիկահայ բարերար, Չիկագո քաղաքի բնակիչ Արմեն Թոփուզյանը:

ԼՂՀ կառավարության 2010 թվականի մարտի 31-ի N150-Ն որոշման համաձայն, Քարին տակ գյուղում ստեղծվել է «Քարին տակի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ կազմակերպությունը, որը գործում է առ այսօր:

Մանկապարտեզի տնօրենն է **Մանուշ Պետրոսյանը:**

ՀՕՄ-ի Շուշիի «Սոսե» մանկապարտեզի գործունեությունը

Մանկապարտեզը բացվել է 2004թ. սեպտեմբերի 29-ին, ամերիկահայ բարերարներ **Էդվարդ և Վերժինե Մսրլյանների** կողմից:

Հեռավորը՝ Կալիֆոռնիայի հայկական ընտանիքը, որոշել էր նեցուկ լինել Շուշիի երեխաներին: Սա նրանց առաջին քայլը չէր: Նրանք արդեն հովանավորում էին Ախուրյանի «Մոր և մանկան» հիվանդանոցի մանկատան կարիքների մեծ մասը, ինչպես նաև ՀՀ ազգային Ակադեմիայի որոշ գիտական հանձնաժողովների ծախսերը: «Տիգրան Մեծ» մեծածավալ գիտական աշխատությունների տպագրության գործընթացը հովանավորելու և այլ գործերի համար պարգևատրվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից: Եվ ահա Էդվարդը՝ հիացած լինե-

լով Շուշիի գեղատեսիլ վայրերով, գնեց մի առանձնատուն ու որոշեց նրա դատարկությունը լցնել մանուկների զվարթ ճիչով ու ծիծաղով:

Լինելով ոչ տիպային մանկապարտեզ, այն ունի երկու խումբ՝ «Արևի շողիկ» և «Ցորենի հատիկ»: Մանկապարտեզ են հաճախում 3-6 տարեկան երեխաներ: Մինչ այսօր մանկապարտեզն իր գիրկն է ընդունել շուրջ 400 երեխաների: Նրանցից 345-ը սովորում են Շուշիի կրթական հաստատություններում, իսկ 55-ը հաճախում են մանկապարտեզ: Մանկապարտեզի առաջին շրջանավարտները ավագ դպրոցի 12-րդ դասարանցիներ են:

Մանկապարտեզն ունի 11 աշխատակից: Բացման օրվանից այն ղեկավարում է Աննա Պարգևի Մինասյանը:

Մանկապարտեզի երեխաները ակտիվորեն մասնակցում են քաղաքային և շրջանային միջոցառումներին:

Քաշաթաղի վարչատարածքային շրջանի մանկապարտեզների գործունեությունը

«Բերձորի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի պատմությունը

Բերձորի մանկապարտեզը բացվել է 1997թ.: Տնօրեն է նշանակվել Անահիտ Շիրինյանը: 2000-2001թթ. տնօրենի պաշտոնակատար էր նշանակվել Հայկուշ Գրիգորյանը, 2004թ.՝ Նունե Յակովի Սիմիդյանը:

2006թ. տնօրեն է նշանակվել Գայանե Սարգիսյանը, իսկ 2011թ.-ից առ այսօր տնօրինում է Իննա Լևոնի Բաբայանը:

Մոշաթաղի պետական մանկապարտեզ

Մոշաթաղի պետական մանկապարտեզը հիմնադրվել է 2014թ.: Բացման օրից մինչ օրս մանկապարտեզի տնօրեն է աշխատում Համեստ Հակոբյանը:

Մանկապարտեզը հանդիսանում է շրջանի հյուսիսային թևի միակ նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

Կովսականի պետական մանկապարտեզ

Կովսականի պետական մանկապարտեզը հիմնադրվել է 2015թ.: Մանկապարտեզի տնօրեն է նշանակվել Նունե Արմենի Սարգսյանը, այնուհետև՝ Լարիսա Կառլենի Ավետյանը, ով աշխատում է մինչ օրս:

Մանկապարտեզը հանդիսանում է շրջանի հարավային թևի միակ նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

Շահումյանի վարչատարածքային շրջանի մանկապարտեզների գործունեությունը

ԼՂՀ Շահումյանի շրջանի Եղեգնուտ համայնքի Վիգեն Զաքարյանի անվան մանկապարտեզը վերակառուցվել է 2004թ.՝ ՀՅԴ Կանադայի Պատանեկան միության հովանավորությամբ: Շենքում եղել է որոշակի գույք՝ մանկական սեղաններ, աթոռներ, կախիչներ, պահարաններ և խաղալիքներ:

2009թ. փետրվարից սկսվել է գույքի համալրումը: Պետության կողմից մանկապարտեզին տրամադրվել են ննջասենյակի կահույք, խոհանոցի սպասք՝ իր բոլոր պարագաներով:

Մանկապարտեզն ունի մեկ խառը խումբ, հաճախում են 1.5-6տ երեխաներ:

Պետությունը ֆինանսավորում է երեխաներին երեք անգամ տրամադրվող սնունդը:

2009թ. փետրվարի 10-ից տնօրեն է նշանակվել Վեներա Սարուխանյանը:

Մանկապարտեզն ունի հինգ աշխատող՝ դաստիարակ, դաստիարակի օգնական, խոհարար, պահակ, հաշվապահ:

ՀՕՄ-ի Ակնաբերդի «Սոսե» մանկապարտեզը՝ երկու խմբով, ինը հաստիքով բացվել է 2004թ. մայիսին՝ Հայ Օգնության Միության ԱՄՆ Արևմտյան շրջանի հովանավորությամբ, անվճար հիմունքներով:

2007թ. առ այսօր՝ երեխաների թվի նվազեցման հետ կապված, գործում է մեկ խումբ, յոթ հաստիքով: Շենքը վերանորոգելուց բացի ֆինանսապես, գույքով, դաստիարակչական միջոցներով, խաղալիքներով մանկապարտեզը հովանավորվում է ՀՕՄ-ի Արևմտյանի շրջանի ընկերուհիների կողմից:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՕՄ-ի Արևմտյան շրջանի ամենամեծ առաքելությունն այն է եղել, որ բացման օրից մինչ այսօր երեխաները հաճախում են մանկապարտեզ անվճար հիմունքներով:

2004-2007 ուսումնական տարիներին տարեկան հաճախել են 38 երեխա, 2007-2008 ուսումնական տարում՝ 28 երեխա, 2008-2010 ուսումնական տարիներին՝ 30 երեխա, 2010-1016 ուսումնական տարիներին՝ 33 երեխա:

Մինչ այսօր մանկապարտեզ են հաճախել նախադպրոցական տարիքի թվով 400 երեխաներ ինչպես Ակնաբերդ, այնպես էլ հարևան Հաթերք և Զագլիկ գյուղերից: Հայ Օգնության Միության Կենտրոնական վարչությունը, Արցախի միավորի վարչությունը մշտապես քաջալերել են և գնահատանքի արժանացրել մանկապարտեզի աշխատակազմին իրենց ազգանպաստ աշխատանքի և մանուկներին հայեցի դաստիարակության համար: Լինելով վերաբնակեցված և բազմազավակ ընտանիքներով գյուղ, այնպես է եղել, որ մի ընտանիքից 5-6 երեխա հաճախել է մանկապարտեզ:

Մանկապարտեզի կոլեկտիվը տարիներ ի վեր մեծ պատասխանատվությամբ և բարեխղճորեն է կատարում իր պարտականությունները:

Բացման օրից առ այսօր մանկապարտեզի տնօրենն է Վիոլետա Հակոբյանը:

2.ԼՂՀ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների գործունեությունը (1991-2016թթ.)

Արտադպրոցական դաստիարակությունն իրականացնող համակարգը ներառում է մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնները: Ըստ պաշտոնական տվյալների (30), նրանց թիվը 1991 թվականի համեմատությամբ (25 հաստատություն) նվազել է 16 տոկոսով, իսկ դրանցում ընդգրկվածների թիվը՝ 59 տոկոսով: 2001-2002 ուս.տարում հանրապետությունում գործում էին ընդամենը 6 արտադպրոցական հաստատություններ:

Մանկական ստեղծագործության կենտրոններում գործում են 213 խմբեր, ավելի քան 2,5 հազար սովորողների ընդգրկմամբ, այդ թվում՝ Ստեփանակերտում՝ 68, Ասկերանի շրջանում՝ 25, Մարտակերիտի՝ 50, Մարտունու՝ 20, Հադրութի՝ 20, Շուշիի շրջանում՝ 30 խումբ:[367]

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 2003թ. հանրապետությունում գործում էին 5 մանկապատանեկան կենտրոններ Ստեփանակերտում, Շու-

շիում, Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում, Ասկերանում: Նախատեսվում էր նաև կենտրոններ բացել Քաշաթաղի, Շահումյանի շրջաններում: Ինչպես վկայում է ԼՂՀ ԿՄՍ նախարարության արտադպրոցական վարչության պետ Ս. Այվազյանը, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններում կազմակերպվում են ցուցահանդեսներ, որտեղ ներկայացվում են սաների ձեռքի աշխատանքի լավագույն նմուշները: Դրանք սաների խայտաբղետ մտահղացումների, ակտիվ փնտրտուքների և ստեղծագործական ձգտումների արդյունք են: Կազմակերպված ցուցահանդեսը դիտողներին համոզում է, որ այստեղ առկա են ստեղծագործելու բոլոր նախադրյալները: Անշուշտ, ստեղծագործության կենտրոններում սաների հետ տարվող արդյունավետ աշխատանքները հիմնված են կոլեկտիվների աշխատողների, տնօրենների և խմբակավարների հոգեկան տրամադրվածության ու նվիրվածության վրա: Բայց ուսուցողական պարապմունքները, ինչպես ցույց են տվել մեր դիտարկումները, ծառայեցին իրենց նպատակին՝ փորձի փոխանակման միտումով:

Արտադպրոցական աշխատանքների կազմակերպման լավագույն օջախ է ՄՊՍԿ-ն, որտեղ ավելի քան 1250 դպրոցականներ դասերից հետո մեծ սիրով ու հաճույքով են հաճախել շուրջ 100 տարբեր խմբակներ: Արտադպրոցական այս հաստատությունը ստեղծագործ աշխատանքով իր համբավն է ունեցել նույնիսկ հանրապետությունից դուրս և տարեցտարի ձեռքբերումներ է ունենում՝ ավելացնելով նորանոր խմբակների պահանջարկը:

Ըստ պաշտոնական փաստաթղթերի տվյալների, 2005թ. օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում ԼՂՀ ԿՄՍ նախարար Կ. Աթայանն իր զեկուցման մեջ նշեց, որ պետք է գործեն մանկապատանեկան կազմակերպությունները և պատշաճ մակարդակով կազմակերպվեն աշխատանքները: Կ. Աթայանը իրավացիորեն նշեց, որ այսօր ոլորտից դուրս է մնացել խմբային (կոլեկտիվ) դաստիարակությունը: Իսկ այդպիսի դաստիարակություն իրականացնելու համար պետք է գործեն մանկապատանեկան խմբեր ու կազմակերպություններ: Այդ առումով նախկին պիոներական ու կոմերիտական կազմակերպություններից շատ բան ունենք ընդօրինակելու: Եվ նախարարին առաջարկեց ստեղծել նոր կազմակերպություններ, ընդգրկել բոլոր աշակերտներին, տարիքային առանձնահատկություններին համապատասխան ստեղծել կանոնադրություն և այդ կազմակերպությունների համար ընտրել մեր ժամանակներին համահունչ անվանումներ՝ մանկապատանեկան կազմակերպություններ, որոնց ստեղծումը հրատապ խնդիր է:[368]

Մանկապատանեկան կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունը միշտ էլ օրակարգային է եղել կրթադաստիարակչական թեմաներով քննարկումներում: Նման կազմակերպության ստեղծման գաղափարը միշտ էլ պաշտպանություն է գտել ստորին օղակներում, և թերևս այդ հանգամանքը հաշվի առնելով՝ ԿՄՍ նախարարությունը նախաձեռնել է մանկապատանեկան դպրոցական կազմակերպության ստեղծումը: Այդ նպատակով մշակվել է կանոնադրություն և այն քննարկվել ու հաստատվել է ապրիլին կայացած ուսուցչական համագումարում:

Ըստ պաշտոնական տվյալների, 2010-2011 ուսումնական տարում Մարտակերտի շրջկենտրոնում գործել է մանկապատանեկան կենտրոն՝ 36 խմբակներով, 380 սաներով, Մարտունու 23 խմբակներում ընդգրկված էին 230 աշակերտներ:

Հադրութի շրջանում մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը արդեն երկու տարի է, ինչ շնորհաշատ աշխատանքներ է կատարում, և պատահա-

կան չէ, որ 2006թ. ցուցանիշներով հանրապետությունում ճանաչվեց «Տարվա լավագույն մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն»: Հաջողության միակ գաղտնիքն այն է, որ տնօրեն Վերա Ահարոնյանն աշխատողների ընտրության մեջ անչափ օբյեկտիվ է:

Հադրութի կրթության շրջանային բաժնի վարիչի հաշվետվության մեջ նշվում է, որ 2013-2014 ուս.տարում Հադրութի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում գործել է 25 խմբակ՝ 313 սովորողների ընդգրկմամբ: Բացի Հադրութից՝ նմանատիպ խմբակներ են գործել նաև Տողի, Քյուրաթաղի համայնքներում: Կենտրոնում բացվել են «Գորգագործություն» և «Գոբելեն» խմբակներ: Երեխաների հաճախումը, ըստ տնօրենի տեղեկատվության, ավելացել է 50 տոկոսով: Հանրապետությունում կայացած ցուցահանդես-մրցույթում մի շարք խմբավարներ արժանացել են խրախուսանքի, դրամական պարգևների: Մայիսի 16-ից 18-ը խմբակի անդամները Երևանում մասնակցել են «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» խորագրով նկարների ցուցահանդեսին: Մասնակցել են նաև Շուշիի նորաբաց պատկերասրահում կազմակերպված ցուցահանդեսին, և 6 նկարներ արժանացել են պատվոգրերի ու նվերների:

Ըստ տնօրենների տեղեկատվության, Կենտրոնի «Պատանի նկարիչ» և «Գեղանկարչություն» խմբակների նկարիչների գործերը ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից (8 լավագույն նկար) ուղարկվել են ՀՀ ԿԳ նախարարություն՝ գեղագիտական ազգային կենտրոն: «Ոսկե աշուն» ամանորյա տոնական համերգներին ու տարբեր միջոցառումներին մասնակցել են «Նորաձևության թատրոն» և «Պարախումբ» խմբակի սաները:

Ամառային արձակուրդներին կենտրոնում գործել է ստեղծագործական ճամբար:

Այդ ուսումնական տարում Ասկերանի շրջանում գործել է «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ 35 խմբակներով, 380 դպրոցականներով:

Շուշիի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ի. Սարգսյանի հաշվետվության տվյալների համաձայն, Շուշիի շրջանում 2013-2014 ուս.տարում գործել է մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն՝ 23 խումբ-խմբակներով՝ 230 աշակերտների ընդգրկմամբ:

Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի հաշվետվության մեջ նշվում է, որ 2013-2014 ուսումնական տարում շրջանում գործել է մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն՝ 35 խմբակներում 420 սովորողների ընդգրկմամբ: Խմբակները գործել են Կենտրոնում և 8 դպրոցներում՝ դպրոցականների նախասիրություններին համահունչ, մշակութային ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանն ու գեղագիտական դաստիարակությանը նպաստելու նպատակով:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարությունը և «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն քանի տարի է կազմակերպում են համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-ցուցահանդես, որին մասնակցում են նաև Սփյուռքի և Արցախի մանկապատանեկան կենտրոնների երեխաները: «Լուսարար» թերթի 2013թ. թիվ 35-ում Անահիտ Ըռքոյանը (Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի 3-րդ կուրսի ուսանողուհի) «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» հոդվածում մատնանշում է, որ

ուրախալի է, որ բազմաթիվ աշխատանքներ էին ներկայացրել Ստեփանակերտի, Քաշաթաղի, Մարտակերտի, Հադրութի, Մարտունու շրջանների երեխաները: Հադրութի շրջանից հիմնականում Տողի արվեստի դպրոցի սաների գեղանկարներն էին, որոնցով մանուկները ներկայացրել են հայրենի երկիրը, իրենց կենցաղը, շրջապատը: Մարատ Ղազարյանը (15 տարեկան) և Դավիթ Իվանյանը պատմական անցյալի հերոսներից անդրադարձել են Եսայի Աբու Մուսեին, իսկ 13 տարեկան Անի Ղազարյանը պատկերել է հայկական պարը («Պարը»): Միլենա Իվանյանը (15տ) պատկերել է բերքահավաքը: Քաշաթաղի շրջանը ներկայացնում էր Բերձորի արվեստի և սպորտի դպրոցը: Այս կրթօջախի սաները, այդ թվում՝ Քնարիկ Հակոբյանը («Սուրբ Գևորգ»-10տ), Գայանե Ըռքոյանը («Խոսում են քարերը»-10տ), Վարսենիկ Ըռքոյանը («Ազատագրված Քաշաթաղը»-10տ) և ուրիշներ ներկայացրել էին Քաշաթաղի շրջանի բնաշխարհը, մարդկանց, հուշարձանները: Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի սաներից Սեդա Գրիգորյանը պատկերել է իր տատին, Արզնի Խաչատրյանը («Տատս»-14տ), Ալինա Գալստյանը («Սարերի պես կանգուն»-17տ) նկարներով պատկերել են իրենց հայրենակիցներին, իսկ Ստեփանակերտի 11-րդ դպրոցի սան Ալյոնա Հակոբյանը (13տ): Մրցույթի կազմակերպիչ Հենրիկ Իգիթյանի անունը կրող գեղագիտական ազգային կենտրոնի տնօրեն Լևոն Իգիթյանը ցուցադրված բոլոր աշխատանքները տպագրել է ալբոմում:

Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի գործունեությունը

«Մարտակերտի Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է 1995թ. հունիսի 5-ին՝ որպես «Մանկական ստեղծագործության տուն» (դեկորատիվ-կիրառական արվեստի ստուդիա՝ կրելով նկարիչ-քանդակագործ, Արցախյան ազգային-ազատագրական պայքարում զոհված, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Ա. Ղարիբյանի անունը): Այնուհետև 1998թ. կրթության շրջբաժնի 25.08.98թ., հրամանով վերամիավորվում է մանկական ստեղծագործության տունը, և մարզադպրոցը վերանվանվելով որպես «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն»:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 3-ի «ԼՂՀ պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» պետական հիմնարկները վերակազմակերպելու մասին» թիվ 17 որոշման՝ Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը վերակազմակերպվում է որպես «Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության:

Ստեղծման պահից առ այսօր Կենտրոնի տնօրենն է Ռիմա Իզմայիլյանը:

1995 թվականից գործող Կենտրոնն ունի իր փառավոր ուղին: Իր գործունեության ընթացքում մեծ հաջողություններ ու ձեռքբերումներ է ունեցել:

Հիմնադրվելով բռնագաղթից հետո, շատ խոչընդոտների ու դժվարությունների է հանդիպել, սակայն միշտ էլ պատվով է հաղթահարել դրանք:

Կենտրոնն իր գործունեությունը կազմակերպում է Մարտակերտի շրջվարչակազմի կողմից հաստատված կանոնադրության պահանջներին ու գործառույթներին համապատասխան: Ունի լիազորված մարմնի կողմից կազմված ու հաս-

տատված հաստիքացուցակ և դրույքաչափեր:

Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում գործում են 35 խմբակներ, 420 սաների ընդգրկմամբ: Խմբակները գործում են և Կենտրոնում, և շրջանի գյուղերի դպրոցների բազայի վրա: Խմբակները բազմաբնույթ են՝ ասմունք, երգ, պար, նկարչություն, փորագրություն, ուլունքագործություն, մաքրամ, գոբելեն, հմուտ ձեռքեր, թատերական, լրագրողական, պատանի բնասեր, կարուձև: Տարին երկու անգամ Մարտակերտի ՄՊՍԿ-ում կազմակերպվում են հաշվետու միջոցառումներ՝ գրական-գեղարվեստական, երաժշտական ցերեկույթներ և ցուցահանդեսներ, որոնց մասնակցում են նաև գյուղերում գործող խմբակների սաները:

Կենտրոնի առօրյան հագեցած է տարաբնույթ միջոցառումներով: Ավանդաբար կազմակերպվում են մայրության և գեղեցկության օրվան, մայիսյան Եռատոնին, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, Արցախյան գոյամարտի հերոսներին նվիրված երեկոներ, մրցույթներ և ցուցահանդեսներ:

Շրջկենտրոնում և շրջանի գյուղերում գործող խմբակները հիմնականում կոմպլեկտավորվում և համալրվում են համապատասխան մասնագիտություն ունեցող շնորհալի կադրերով, որոնք լավ գիտեն իրենց անելիքները և որոնց անբասիր աշխատանքի արդյունքներն են մեր սաների շրջանային և հանրապետական տարբեր մրցույթներից բերած բազմաթիվ դիպլոմները, պատվոգրերն ու մրցանակները:

ՀՀ կրթության և գիտության նախարարության գեղագիտության ազգային կենտրոնի կողմից կազմակերպված համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոներին մասնակցելով, Կենտրոնի սաները արժանացել են պատկերագրքերի և ՀՀ կրթության և գիտության նախարարության շնորհակալագրի:

«Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» հոբելյանական ծրագրի շրջանակներում 2012 թվականին ՀՀ մշակույթի նախարարությունը Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի և «Զանգակ» հրատարակչության հետ համատեղ կազմակերպել է «Ես գիրք եմ ստեղծում» խորագրով գրքի նկարազարդման մրցույթ, որտեղ ՀՀ և ԼՂՀ գեղարվեստի դպրոցների նկարելու շնորհ ունեցող բազմաթիվ երեխաների շարքերում էին նաև Կենտրոնի սաները, որոնցից Կարեն Ափանցը, Ալեսիա Սահակյանը և Հենրի Իսրայելյանը ՀՀ մշակույթի նախարարության կողմից արժանացան մրցանակների:

Շրջանի մշակութային կյանքում իրենց ակտիվությամբ առանձնանում են ոչ միայն Կենտրոնի սաները, այլ նաև խմբակավարները, որոնց գեղեցիկ աշխատանքները մեծ ուշադրության են արժանանում ոչ միայն շրջանում, այլև շրջանից դուրս:

«Արցախի բնաշխարհը և հուշարձաններն՝ իմ պատկերացմամբ» թեմայով պատանի նկարիչների մրցույթ-ցուցահանդեսում Կենտրոնի սան Ալեսիա Սահակյանը 2-րդ տեղը գրավելու համար կրթության նախարարության կողմից արժանացել է դիպլոմի և նվերի, իսկ նկարչության խմբակավար Լուսինե Մանասյանը՝ դրամական պարգևի և դիպլոմի:

Մշակույթի նախարարության կողմից կազմակերպված Հաղթանակի տոնին, ԼՂՀ ՊԲ կազմավորման և Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձին նվիրված

«Շուշիի հրեշտակը» խորագրով ձեռքի աշխատանքների մրցույթում Կենտրոնի խմբակավարներ Ջեմմա Նավթալյանը ասեղնագործությունից գրավել է 3-րդ տեղը, իսկ Մարիամ Նազարեթյանը ուլունքագործությունից 1-ին տեղը և արժանացել համապատասխան գովասանագրերի և դրամական պարգևների:

Կենտրոնում հրատարակվում են «Ինչուիկ», «Գիտունիկ», «Ջանգակ» փոքրիկ ամսագրերը՝ լրագրողական սաների ստեղծագործություններով, որոնց խմբավարն է Մարտակերտի շրջվարչակազմի կողմից «Բարեխիղճ աշխատանքի և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի ստեղծման 20-ամյակի կապակցությամբ» պատվոգրի արժանացած Բելա Սահակյանը: Նման պատվոգրի են արժանացել նաև վաստակավոր և լավագույն խմբակավար Գրիգորի Վանյանը և Կենտրոնի տնօրեն Ռիմա Իզմայիլյանը:

Կենտրոն հաճախած երեխաներից ոմանք, որոնք նաև ստացել են վկայականներ, իրենց հետագա գործունեությունը շարունակել են համապատասխան հաստատություններում:

Վարդան Բաղալյանը, Ալյոնա Անտոնյանը՝ ավարտելով երաժշտական ուսումնարանը, դասավանդում են երաժշտական դպրոցում, Սուրիկ Բաղունցը, Սարո Բաղալյանը, Լուսինե Գալստյանը, Սմբատ Բաղդասարյանը, Սերոբ Մամունցը՝ ավարտելով Արցախի պետական համալսարանի նկարչության և գծագրության բաժինը, այժմ դասավանդում են տարբեր հաստատություններում: Գենադիկ Առուշանյանը (թատերական խմբակ)՝ ավարտելով Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի ստուդիան, աշխատում է նույն թատրոնում՝ որպես դերասան: Սաներից Ալինա Գալստյանը (նկարչություն) սովորում է ԱրՊՀ-ի նկարչության և գծագրության բաժնում: Շուշան Հարությունյանը և Նունե Միրզոյանը իրենց ուսումը շարունակում են Հայաստանի գեղարվեստի ակադեմիայի դիզայներական բաժնում, Հեղինե Գյուրջյանը սովորում է Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտում:

Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի աշխատանքները նորմալ հիմքերի վրա պահելու համար դեռևս կան խոչընդոտող երևույթներ և դժվարություններ: Որակյալ աշխատանքներ կազմակերպելու համար անհրաժեշտ են շենքային և նյութատեխնիկական պայմաններ: Այսօրվա դրությամբ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի շենքային պայմանները դեռևս չեն բավարարում ժամանակակից պահանջներին: Նյութատեխնիկական բազայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում աշխատանքի վրա: Տնօրինությունը ուշադրության կենտրոնում է պահում մանկավարժական խորհրդի գործունեությունը, ձգտում մշտապես բարձրացնել նրա դերն ու նշանակությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, խմբակավարների պատասխանատվության բարձրացման գործում: Կոլեկտիվը համերաշխ է ու կազմակերպված: Պատշաճ ուշադրություն է դարձնում նաև հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հակահրդեհային, անվտանգության տեխնիկայի պահպանության աշխատանքներին:

Ինչպես վկայում են վերոհիշյալ փաստերը, Կենտրոնը՝ մասնակցելով ԼՂՀ ԿՄՍ նախարարության կողմից կազմակերպված «Տարվա լավագույն մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» մրցույթին, 2004 ուս.տարում գրավել է 2-րդ տեղը, իսկ 2005 ուս.տարում «Տարվա լավագույն մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» մրցույթում հաղթող է ճանաչվել:

Մարտունու մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի գործունեությունը

Համաձայն ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կոլեգիայի առ 18.12.1992թ. N14 որոշման և Մարտունու շրջանի ժողկրթբաժնի առ 01.02. 1993թ. N 554 գրության, պիոներների շրջանային տունը, պատանի բնասերների և պատանի տեխնիկների կայանները միավորվել են մի կառույցում, որն անվանվել է շրջանային մանկական ստեղծագործության տուն, իսկ հետագայում այն վերանվանվել է «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն»: Տարբեր ժամանակներում կենտրոնը ղեկավարել են Ստելլա Բալայանը, Ռիմա Հայրապետյանը, Հրանտ Հովսեփյանը, Մարինե Պետրոսյանը:

Մարտունու մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական, ֆիզիկական զարգացումը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը և կիրառական գիտելիքների ձևավորումը:

Մարտունու ՄՊՍԿ-ն միշտ իր ակտիվ մասնակցությունն է ունենում շրջանի հասարակական-քաղաքական կյանքին. մասնակցում հիշատակի և տոն օրերին կազմակերպվող միջոցառումներին, կազմակերպում ցուցահանդեսներ, մասնակցում ցուցահանդես-մրցույթներին:

ՄՊՍԿ-ում գործում է 35 խումբ, որոնց աշխատանքների արդյունավետ կատարման համար խմբակավարները օժտված են անհրաժեշտ կարողություններով և հմտություններով: Գործող խմբակներն են՝ ասեղնագործություն, ժանյակագործություն, հելունագործություն, շյուղագործություն, կարուձև, մաքրամե, նկարչություն, գոբելեն, թատերական, փափուկ խաղալիքներ, ուլունքագործություն, կարպետ, երգ, հմուտ ձեռքեր: Խմբակները գործում են Մարտունի քաղաքում և շրջանի մի շարք գյուղերում՝ Ճարտարում, Խնուշինակում, Գիշիում, Սպիտակաշենում, Մուշկապատում, Աշանում, Բերդաշենում, Հացիում, Քերթում, Ներքին Ճարտարում, Վազգենաշենում, Շեխերում:

Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը գործում է 1988 թվականից: Տարբեր ժամանակներում ղեկավարել են Մ.Արտաշեսյանը, Վ.Թամրազյանը:

1991-1995թթ.՝ պատանիների և դպրոցականների տան տնօրեն Վոլոդյա Սամվելյանը:

1995-2004թթ.՝ երեխաների ստեղծագործական կենտրոնի տնօրեն Ռաֆիկ Սարգսյանը:

2004-2011թթ.՝ «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ, տնօրեն Վերա Ահարոնյանը և ուրիշներ:

1.Կրթական հաստատության մասնագիտությունների ցանկը
1988-1995թթ. -Ավիամոդելավորում
Տուրիստական-երկրագիտական
Նկարչական
Շախմատ

Երգչախումբ
Լուսանկարչություն:
1995-1997թթ. - պար,
Հրթիռաշինություն
Տուրիզմ
Շախմատ
Երգ-երաժշտություն
Սեղանի թենիս
Գեղանկարչություն
Ուրախներ և հնարամիտներ
Պատանի մաթեմատիկոս:
1998-2004թթ.-ավիահրթիռային
Պար
Գեղանկարչություն
Շախմատ
Բասկետբոլ
Թենիս
Երգ-երաժշտություն
Վոկալ-գործիքային
Ֆուտբոլ
Հմուտ ձեռքեր
Տնարարություն:
2004-2005թթ. Երգչախումբ
Գեղանկարչություն
Հմուտ ձեռքեր
Հագուստի մոդելավորում
Ավիահրթիռային
Թատերական
Պար
Տնարարություն
Ասեղնագործություն
Փայտի գեղարվեստական մշակում
Ասմունք
Հագուստի մոդելավորում
Պատանի նկարիչ
Փայտի գեղարվեստական մշակում
Ասեղնագործություն
Գեղանկարչություն
Երգ
Պար
Ավիամոդելավորում
Գոբելեն
Գորգագործություն
Կարպետագործություն
Ուլունքագործություն
Ազգային գուլպա:

Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում սովորում են 320 աշակերտ:

Ասկերանի շրջանային մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի գործունեությունը

1.Ասկերանի շրջանային ՄՊՍԿ-ի տնօրենի պաշտոնավարության շրջանը

-**Գաբրիելյան Մերի Ռաշիդի** - Ասկերանի շրջանի ՄՊՍԿ ՊՈԱԿ-ի տնօրեն, 2013թ. առ այսօր, բարձրագույն կրթությամբ, 17 տարվա մանկավարժական ստաժով,

-**Հովսեփյան Մարինե Սուրենի** - Ասկերանի շրջանային ՄՊՍԿ-ի տնօրեն է աշխատել 1993-1998թթ.

-**Գաբրիելյան Ալյոշա Գրիգորիի** - Ասկերանի շրջանային ՄՊՍԿ-ի տնօրեն է աշխատել 1998-2000թթ.

-**Յուզբաշյան Բորիկ Գրիգորիի** - Ասկերանի շրջանային ՄՊՍԿ-ի տնօրեն է աշխատել 2000-2002թթ.

-**Եսայան Հասմիկ Բորիկի** - Ասկերանի շրջանային ՄՊՍԿ-ի տնօրեն է աշխատել 2002-2013թթ.:

Կրթական հաստատության մասնագիտության ցանկը՝

Երգ, պար, ասմունք, թատերական, ձեռագործություն, կվիլինգ, շյուղագործություն և հելունագործություն, ֆուրշետ, մաքրամե, գոբելեն, ուլունքագործություն, կարպետագործություն, նկարչություն, ասեղնագործություն, խեցեգործություն, կանգաշի, հայկական խոհանոց:

-Գասպարյան Լիանա Բորիկի - 2000թ. առ այսօր աշխատում է Ասկերանի շրջանային ՄՊՍԿ-ում, որպես փոխտնօրեն, բարձրագույն կրթությամբ, 16 տարվա մանկավարժական ստաժով: Նրա ձեռքի աշխատանքները մրցույթ-փառատոներում գրավել են մրցանակային տեղեր և պարգևատրվել է պատվոգրով Ասկերանի շրջանի վարչակազմի կողմից 2013թ.:

Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի գործունեությունը

Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը ստեղծվել է 1993 թվականին՝ պիոներների տան, պատանի տեխնիկների և պատանի բնասերների կայանների հիման վրա: Արցախյան պատերազմի թեժ տարիներին, ի զարմանք բոլորի, հենց առաջին իսկ կանչով արձագանքել էին 1500 երեխա և պատանի, ովքեր իրենց ծնողների և ուսուցիչների հետ 1993թ. սեպտեմբերի 12-ին եկել էին ընդգրկվելու բազմապրոֆիլ խմբակներում, ըստ իրենց նախասիրությունների: Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը մինչև 1996թ. կոչվում էր Ստեփանակերտի մանկական ստեղծագործական տուն, այնուհետև 1998թ. վերանվանվել է Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի:

1993թ. մինչև 2004թ. Կենտրոնի կարգավիճակը երեք անգամ փոխվել է, պետական բյուջետային կազմակերպությունից դարձել է ՊՓԲԸ, ապա վերականգնվել է որպես պետական բյուջետային կազմակերպություն: 2004 թվականից

Կենտրոնը գործում է որպես ՊՈԱԿ:

Կենտրոնի ստեղծման հենց առաջին օրվանից մինչև 2015թ. մարտի 11-ը տնօրենն էր Լյուդմիլա Անուշավանի Բարսեղյանը (ԼՂՀ 4-րդ, 5-րդ, 6-րդ գումարման Ազգային Ժողովի պատգամավոր, «Վաչագան Բարեպաշտ» մեդալակիր, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ): 2015թ. մարտի 11-ից Լյուդմիլա Անուշավանի Բարսեղյանը ընտրվել է Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի խորհրդի նախագահ:

2015թ. մարտի 18-ից Կենտրոնի գործադիր տնօրեն է նշանակվել Վիլեն Էդուարդի Միքայելյանը (2004 թվականից՝ Կենտրոնի գեղարվեստական գեղանկար):

1993-2014թթ. Կենտրոնի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն էր Նաիրա Վիգենի Նաջարյանը, որը մնացել է Կենտրոնի պատմության մեջ որպես ուսումնադաստիարակչական աշխատանքը բարձր որակով կազմակերպող անձ:

2014թ. սեպտեմբերին Կենտրոնի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն է նշանակվել Քրիստին Գրիգորիի Բալայանը, որը աշխատում է Կենտրոնում 1994 թվականից:

Կենտրոնում գործում է 3 բաժին՝ «Տեխնիկական ստեղծագործություն և կիրառական արվեստ» (բաժնի վարիչ՝ Կատյա Ադամի Գևորգյան, աշխատում է Կենտրոնում 1994թ.), «Կենցաղային էսթետիկա» (բաժնի վարիչ՝ Կարինե Ազատի Գրիգորյան, աշխատում է Կենտրոնում 1993թ.) ու «Երաժշտագեղարվեստական ստեղծագործություն» (բաժնի վարիչ՝ Ռուզաննա Սերգեյի Առստամյան, աշխատում է Կենտրոնում 1998թ.):

Կենտրոնի խմբակները գործում են անվճար հիմունքներով: Գործող 100 խմբակներում, որտեղ դասավանդում են բանիմաց, իրենց գործին նվիրված 84 հմուտ մանկավարժներ, ըստ իրենց նախասիրությունների պարապում են 5-18 տարեկան 1225 երեխա և պատանի: Կենտրոնի խմբակները բազմապրոֆիլ են՝ մաքրամե, գոբելեն, կարուձև, հագուստի մոդելավորում, ժանյակ, կոլաժ, ասեղնագործություն, հյուսվածքագործություն, հուլունքագործություն, փորագրություն փայտի վրա, ռադիոտեխնիկա, էլեկտրատեխնիկա, ավտոմոդելավորում, տեխնիկական մոդելավորում, պատանի նկարիչ, թատերական, երգչախումբ, վոկալ, դհոլ, պարարվեստ և այլ խմբակներ:

Ուսումնական ծրագրերը, ըստ որոնց գործում են խմբակները, մշակվել են Կենտրոնում, որից ելնելով՝ խմբակավարները կազմում են իրենց աշխատանքային պլանները:

Խմբակներում պարապմունքների կազմակերպման որակը ավելի բարձր մակարդակի հասցնելու, խմբակավարների ինքնակրթության և մասնագիտական բարձր ցուցանիշների ձեռքբերման և սաների վերաբերմունքը խմբակի նկատմամբ ավելի լուրջ ու պատասխանատու դարձնելու նպատակով տարեկան երկու անգամ՝ հունվար և հունիս ամիսներին, խմբակ հաճախողները հանձնում են ստուգարքներ, այնուհետև՝ քննություններ, որոնց հիման վրա սաները ստանում են համապատասխան վկայական տվյալ խմբակի լրիվ դասընթացը ավարտելու մասին:

Փորձի փոխանակման և մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով տարվա մեջ, մեկ ամիս ժամկետով, բոլոր խմբակների պարապմունքները հայտարարվում են «բաց» և դրանով իսկ բոլոր խմբակավարներին տրվում է փորձի փոխանակման հնարավորություն:

Ուսումնադաստարակչական գործընթացի կատարելագործման, խմբակավարների մասնագիտական վարպետության բարձրացման նպատակով Կենտրոնում գործում են մեթոդական և գեղարվեստական խորհուրդներ:

Յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսին տնօրենի մոտ՝ փոխտնօրենի, գեղարվեստական ղեկավարի, բաժնի վարիչների մասնակցությամբ կազմակերպվում է հարցազրույց խմբակավարների հետ (ըստ գրաֆիկի), որտեղ խմբակավարները հաշվետվություն են տալիս նախորդ ուս.տարում կատարած աշխատանքի և անելիքների մասին: Այդ փորձը ձեռք է բերվել Սանկտ-Պետերբուրգյան ՄՊՍԿ-ում, և այն տալիս է կոնկրետ դրական արդյունքներ:

Կենտրոնն ունի լավագույն ավանդույթներ՝ «Բաց դռների օր», «Ոսկեհեր աշուն», համերգներ ԼՂՀ ՊԲ տարբեր զորամասերում, համերգներ և ցուցահանդեսներ ծնողների և հասարակության համար, «Ամանորյա շոու-ծրագիր», Հայրենյաց պաշտպանի օրվան, Մայրության, գեղեցկության և գարնանային զարթոնքին, Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումներ (հատուկ ծրագրով), «Խաղերի փառատոն» (ողջ տարվա կտրվածքով, հատուկ ծրագրով), հաշվետու համերգ և Կենտրոնում գործող խմբակների սաների աշխատանքների ընդհանուր ցուցահանդես, ինչպես նաև առանձին խմբակների ու անհատների ցուցահանդեսների կազմակերպում:

Կենտրոնը մշտապես մասնակցում է ԼՂՀ-ում, ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին: Այսպես՝ Կենտրոնի պարային խումբը 1994թ. սեպտեմբերին մասնակցելով ՀՀ-ում կայացած պարային մրցույթ-փառատոնին, արժանացել է Գրան-Պրիի: 1994, 1999, 2001թթ. ԼՂՀ-ում կայացած «Ամադեուս» մրցույթ-փառատոներում Կենտրոնի պարարվեստի խմբերը և երգչախումբը գրավել են մրցանակային տեղեր:

1996թ. մարտին Կենտրոնի երգչախմբին և պարարվեստի խմբերին հատուկ հանձնաժողովի կողմից (մրցույթի արդյունքում) իրավունք է վերապահվել մասնակցելու Ստեբանակերտ-Երևան-Լոս-Անջելես հեռուստամարաթոնին, որտեղ Կենտրոնի սաները ներկայացրել են իրենց բարձր արվեստը ողջ հայությանը:

1996թ. մայիսին Կենտրոնի սաները մեծ շուքով մասնակցել են Երևանում կազմակերպված «Բրաբիոն՝ մանկության ծաղիկ» միջազգային մրցույթ-փառատոնին: Այդ միջոցառման հանդիսավոր արարողության բացման իրավունքը վերապահվել է Կենտրոնի տարբեր խմբակներ ներկայացնող լավագույն սաներին, ովքեր գլխավորել են շքերթը, ներկայացնելով ծաղիկներով պատրաստված Արցախի խորհրդանիշ «Մենք ենք մեր սարերը» պաննոն (Տատիկ-պապիկ):

1998թ. ապրիլին Կենտրոնի երգչախումբը, պարարվեստի 2 խմբերը և վոկալ եռյակը մասնակցել են ՀՀ-ում կայացած՝ Արցախյան գոյապայքարի 10-րդ տարեդարձին նվիրված մրցույթ-փառատոնին, և մեզ համար հաճելի ու շատ կարևորն այն է, որ նշված բոլոր խմբերը զբաղեցրել են մրցանակային 1-ին տեղերը:

1998թ. հունիսին Երևանում, Ա. Խաչատրյան համերգասրահում, Կենտրոնը մեծ համերգով հանդես է եկել Երևանի մտավորականության, երաժշտական աշխարհի նշանավոր գործիչների, կոնսերվատորիայի դասախոսների, ստեղծագործական միությունների ներկայացուցիչների, Երևանի դպրոցների ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների առջև:

ԼՂՀ-ում և ՀՀ-ում կազմակերպվող մրցույթ-փառատոներում բարձր մակարդակ ցուցաբերելու արդյունքում Կենտրոնի երգչախումբը, պարարվեստի խմբե-

ը և վոկալ եռյակը մեծ համբավ են ձեռք բերել: Դրա վառ ապացույցը նաև այն է, որ 1998թ. պարարվեստի խմբերը հրավեր են ստացել Համբուրգի Ռինգ-Ֆյուր Հայմատտանց կազմակերպությունից (ղեկավար՝ Առնոլդ Բիոկեր), իսկ երգչախումբը երկու անգամ պաշտոնական հրավեր է ստացել Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսության «Ուտրենյայա զվեզդա» հաղորդման ղեկավար Իգոր Նիկոլաևի կողմից:

Կենտրոնի երգչախմբի երգացանկն ու կատարումները այնքան են կատարելագործվել, որ այդ բազայի վրա ստեղծվել է ներակայումս գործող «Մռակած» պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ Մարինե Մեսրոպյան):

Մեծ է Կենտրոնի պատանի նկարիչների ներդրումը: Նրանց նկարներով զարդարված են հանրապետության քաղաքների և շրջանների ծննդատները: Պատանի նկարիչների նկարները հասել են մինչև Գերմանիա, Չեխիա, Անգլիա, Հունաստան, Իսպանիա և այլն: Նկարներ են ուղարկվել նաև Բեսլանի երեխաներին:

Կենտրոնի պատանի նկարիչները մասնակցել են «Գրինգո» ցանցի երևանյան հենակետի կողմից կազմակերպված «Հակատեռորի համաշխարհային օր» միջոցառմանը:

Երևանում անցկացված «Նոր շունչ-2005, 2006» համահայկական բազմաոճ պարային մրցույթ-փառատոնին, որին մասնակցել են 103 պարային խումբ, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, անցնելով մինչև երրորդ փուլը, ներկայացնելով չորս պարային ոճ, բոլոր ոճերում էլ գրավել է մրցանակային տեղեր, մեկ առաջին, մեկ երկրորդ և երկու երրորդ կարգի մրցանակներ:

2006թ. սեպտեմբերին պարարվեստի խումբը և վոկալիստները ակտիվ մասնակցություն են ունեցել Գանձասարում կազմակերպված «Կռունկ-2006» հայ էստրադային երգի-պարի փառատոնին:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել նաև «Հայաստանն իմ հայրենիքն է» խորագրով ՀՀ հանրապետական երկրորդ փառատոնին, որտեղ Կենտրոնի սաները (վոկալիստներ և նկարիչներ) զբաղեցրել են մրցանակային տեղեր:

2006թ. հոկտեմբերին «Եգիպտոսն աշխարհի մանուկների աչքերով» մանկական կերպարվեստի միջազգային մրցույթին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Կենտրոնի պատանի նկարիչները:

2008թ. փետրվարի 13-ին Արցախի ազգային-ազատագրական պայքարի 20-րդ տարեդարձի կապակցությամբ Կենտրոնը մեծ շուքով կազմակերպել է տոնական միջոցառում՝ հյուրընկալելով նաև գոյապայքարի մասնակիցներին, արտասահմանյան հյուրերին:

2008թ. մարտին քաղաքապետարանի պատկերասրահում ծնողների և քաղաքի հասարակայնության համար կազմակերպվել է «Երջանիկ մանկություն» խորագրով նկարչական ցուցահանդես, որին մասնակցել են Կենտրոնի 124 սան՝ ներկայացնելով 177 նկար:

«Պատանի նկարիչ» խմբակների ղեկավարների քրտնաջան աշխատանքի շնորհիվ «Հեքիաթների աշխարհում» մանկական համահայկական մրցույթ-փառատոնին ներկայացված 25 երկրների պատանի նկարիչների շարքում կան նաև Կենտրոնի 22 պատանի նկարիչների աշխատանքներ, որոնք էլ բարձր գնահատվելով ընդգրկվել են ՀՀ-ում հրատարակված «Հեքիաթների աշխարհում» գրքում:

Նույն մրցույթ-փառատոնում Կենտրոնի պատանի նկարիչ էրիկ Հովսեփյանը արժանացել է 1-ին մրցանակին:

2008թ. մայիսին Երևանում ՀՀ մշակույթի նախարարության և երգչախմբային միջազգային ասոցիացիայի նախագահ Տիգրան Հեքիքյանի կողմից կազմակերպված «Երգող Հայաստան» մրցույթ-փառատոնին Կենտրոնի երգչախումբը, անցնելով երկու փուլ, զբաղեցրել է 1-ին պատվավոր տեղը (ղեկավար՝ ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ Մարինե Մեսրոպյան):

2008թ. հունիսի 1-ին Դիլիջանում կայացած Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Մանկության մեկ օր» խորագրով համահայկական շքերթ-փառատոնին մասնակցել են Կենտրոնի տարբեր խմբակների լավագույն սաները, իսկ Կենտրոնի «Վոկալ» ստուդիան և պարային միջին խումբը այդ միջոցառմանը ներկայացրել են Արցախը երաժշտական համարներով (Ի. Փիրումյանի «Ստեփանակերտ» երգը և Տ. Բաբայանի «Հայկական ժողովրդական պար ժամանակակից ոճով» պարը):

2008թ. սեպտեմբերին Կենտրոնի պարային ավագ խումբը մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված միջազգային պարային մրցույթին (Հայաստանի 1-ին պարային օլիմպիադայի շրջանակներում), ներկայացնելով ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Ավանեսյանի «Կիլիկիա» պարը, զբաղեցրել է երրորդ պատվավոր տեղը (ժյուրիի կազմում էին տարբեր երկրներից ներկայացուցիչներ, ժյուրիի նախագահն էր Գերմանիայի ներկայացուցիչը): Պարային խումբը հրավիրվել է Մոսկվայում կայանալիք միջազգային պարային մրցույթին:

2008թ. հոկտեմբերին Կենտրոնի 10 պատանի նկարիչների աշխատանքներ ընդգրկվել են «Հայաստանի մանուկների և պատանիների լավագույն ստեղծագործություններ» խորագրով Տարեգրքի մեջ (մրցութային հիմունքներով), դրանով իսկ մտնելով արվեստի պատմություն:

2009թ. ապրիլին Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի պատանի նկարիչները մասնակցել են Հայաստանում կայացած «Ես և տիեզերքը» խորագրով միջազգային նկարչական ցուցահանդեսին: Արդյունքում ներկայացված 30 աշխատանքներից 12-ը գրավել են մրցանակային տեղեր, իսկ դրանց հեղինակները պատիվ են ունեցել մասնակցելու Մոսկվայում կայացած «Ես և տիեզերքը» խորագրով նկարչական ցուցահանդեսին:

2010թ. ԼՂՀ-ում կազմակերպված «Տնջրե» միջազգային փառատոնի մասին հրատարակված գրքում ընդգրկվել է 7 նկար, որից 4-ը՝ Կենտրոնի պատանի նկարիչների աշխատանքներն են (մրցույթի հիման վրա):

Մեր հանրապետությունում արդեն իսկ իր համբավն ունի Կենտրոնի դհոլի խումբը, որն իր կատարումներով հիացնում է մեր հանրապետության հանդիսատեսին՝ շնորհիվ խմբի ղեկավար, ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռոմա Խաչատրյանի:

Թատերական ստուդիան 2011, 2012, 2013թթ. հանդես գալով Երևանում կազմակերպված «Նռան հատիկ» 11-րդ, 12-րդ և 13-րդ մանկապատանեկան թատերական փառատոներին «Ձախորդ Փանոս», «Գիքոր» և «Ալվան ծաղիկ» ներկայացումներով, 3 տարի շարունակ ճանաչվել է լավագույնը (ղեկավար՝ ԼՂՀ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյան):

2012թ. ապրիլին Կենտրոնի վոկալ ստուդիան, մասնակցելով Գյումրիում կայացած երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային 4-րդ մրցույթ-փա-

ռատոնին, գրավել է 2-րդ մրցանակային տեղը:

2012թ. հոկտեմբերին Բելգիայից ժամանած Հ. Անաստասիայի կողմից կազմակերպված «Ամադեուս-2012» մրցույթ-փառատոնում պարային խումբը գրավել է առաջին մրցանակային տեղը և արժանացել ոսկե գավաթի:

2012թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Սանկտ-Պետերբուրգում կայացած «Զոլոտայա Պալմիրա» միջազգային փառատոնի «Պետերբուրժսկայա օսեն» մրցույթում պարարվեստի խումբը արժանացել է 1-ին կարգի մրցանակի և հրավեր ստացել մասնակցելու Վիեննայում և Պրահայում կայանալիք պարային մրցույթներին:

Ավանդական է դարձել Ստեփանակերտ քաղաքի օրվան նվիրված միջոցառումներին Կենտրոնի սաների ակտիվ մասնակցությունը, որին երաժշտագեղարվեստական բաժնի սաները հանդես են գալիս համերգային ծրագրով:

2012թ. հոկտեմբերին Ստեփանակերտ քաղաքի օրվան նվիրված տոնակատարությանը և ցուցահանդեսին ներկայացվել են պատանի նկարիչների 80 նկար և տարբեր ժանրերի 122 ձեռքի աշխատանք, որի համար Կենտրոնի սաները արժանացել են հասարակության համակրանքին:

2013թ. Կենտրոնի պատանի նկարիչների 15 աշխատանք ներկայացվել է ԱՄՆ-ում կազմակերպված նկարների ցուցահանդեսին:

2013թ. հոկտեմբերին Կենտրոնը մասնակցել է Ստեփանակերտ քաղաքի վերանվանման 90-ամյակին նվիրված միջոցառումներին, ներկայացնելով տարբեր ժանրերի ձեռքի աշխատանքների ցուցահանդես, համերգային մեծ ծրագիր: Նույն օրը 50 պատանի նկարիչներ կատարել են պլենարային աշխատանք և արժանացել խրախուսանքի:

2013թ. Կենտրոնի 40 պատանի նկարիչներ մասնակցել են Մանկապատանեկան ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնի շրջանակներում ՀՀ-ի Ռոլան Բիկովի հիմնադրամի կողմից կազմակերպված ցուցահանդեսին:

2013թ. նոյեմբերին Երևանում կայացած «Նավասարդյան խաղեր» հանրապետական երիտասարդական մրցույթին մասնակցել են Կենտրոնի վոկալ կատարողները, պատանի նկարիչները և պարարվեստի խմբերը: Նշանակալիցն այն էր, որ Կենտրոնի սաները այդ մրցույթում մրցել են իրենց ոչ հասակակից պրոֆեսիոնալների հետ.

-վոկալիստ Անի Սաղյանը մրցել է Երևանի Կոմիտասի անվան երաժշտական կոնսերվատորիայի 3-4-րդ կուրսի ուսանողների հետ (արդյունքում գրավել է 3-րդ տեղը)

-վոկալիստ Մարիա Դավթյանը մրցել է Հայաստանի երաժշտական դպրոցների և արդեն իսկ միջազգային մրցույթներում հայտնի դարձած պատանի երգիչների հետ (արդյունքում գրավել է պատվավոր 2-րդ տեղը)

-պատանի նկարիչ Աննա Գրիգորյանը արժանացել է 2 մրցանակի, նույնպես անհավասար պայքարում

-պարարվեստի խումբը, ներկայացնելով «Բալենի» և «Սայաթ-Նովա» լիրիկակակն պարերը, գրավել է 2-րդ մրցանակային տեղը՝ առաջին տեղը զիջելով Երևանի պարարվեստի ուսումնարանի շրջանավարտներին:

2013թ. դեկտեմբերին լրացավ Կենտրոնի 20-ամյակը, որը մեծ շուքով նշվեց քաղաքի հասարակության, ծնողների և գոյապայքարի ազատամարտիկների համար 4 օր շարունակ:

Կենտրոնի 20-ամյակի կապակցությամբ 37 աշխատող պարգևատրվել են պատվոգրերով և թանկարժեք նվերներով կրթության քաղաքային բաժնի, քաղաքապետի, Կրթության և գիտության նախարարության, ԼՂՀ կառավարության կողմից: Կենտրոնի 3 աշխատող՝ բաժնի վարիչներ Կատյա Գևորգյանը, Կարինե Գրիգորյանը և Թատերական ստուդիայի խմբակավար՝ Քաջիկ Հարությունյանը արժանացել են ԼՂՀ վարչապետի հուշամեդալների՝ հայրենիքին մատուցած ծառայության և անբասիր աշխատանքի համար: Ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով նախկին փոխտնօրեն Նաիրա Նաջարյանը և նախկին պարուսույց Ելենա Սարգսյանը (հետմահու) ԼՂՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել են «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, իսկ երգչախմբի ղեկավար Մարինե Մեսրոպյանը և պարուսույց Գարի Ավանեսյանը արժանացել են ԼՂՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

2014թ. ապրիլին «Ասմունք» խմբակի սան՝ Մանուել Մաթևոսյանը Համո Սահյանի 100-ամյակին նվիրված ասմունքի քաղաքային մրցույթում գրավել է 1-ին մրցանակային տեղը, իսկ 2014թ. մայիսին կայացած ասմունքի հանրապետական փուլում՝ 2-րդ տեղը:

2014թ. ապրիլին Արցախում կայացած շախմատի համահայկական մրցաշարի 8-րդ երիտասարդական օլիմպիադայի բացման և փակման արարողությանը նվիրված միջոցառմանը Կենտրոնի սաները հանդես են եկել համերգային մեծ ծրագրով:

2014թ. ապրիլի 7-ին Մայրության և գեղեցկության տոնի առիթով Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի նախաձեռնությամբ Արցախի կանանց համար կազմակերպել է գրական-գեղարվեստական երեկո՝ Հայաստանից ժամանած նշանավոր ասմունքողների մասնակցությամբ:

2014թ. ապրիլի 19-ին բուժաշխատողի օրվա կապակցությամբ Մարտակերտում կազմակերպված միջոցառմանը Կենտրոնի պարարվեստի խումբը և վոկալ խմբի սաները հանդես են եկել երաժշտական համարներով՝ արժանանալով բուժաշխատողների գովասանքին:

2014թ. մայիսին Կենտրոնի պատանի նկարիչները «1 դար և ավելի» խորագրով համահայկական մանկապատանեկան 5-րդ հոբելյանական մրցույթ-փառատոնին ներկայացրել են 33 աշխատանք, և բոլորն էլ ընդգրկվել են Երևանում կայացած ցուցահանդեսին:

2014թ. սեպտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված՝ Փարաջանովի 90-ամյակին նվիրված ցուցահանդեսին մասնակցել է նաև Կենտրոնի «Կոլաժ» խմբակի 11 սան՝ ներկայացնելով 11 աշխատանք, որոնցից 4-ը ճանաչվել է լավագույնը և ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի դահլիճում ցուցադրմանը: Բոլոր աշխատանքների հեղինակները պարգևատրվել են ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից:

2014թ. նոյեմբերին Կենտրոնի պարարվեստի ավագ խումբը մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված միջազգային պարային մրցույթին (Հայաստանի 4-րդ պարային օլիմպիադայի շրջանակներում), ներկայացնելով ԼՂՀ վաստակավոր գործիչ Գ. Ավանեսյանի «Նռներով պարը», և զբաղեցրել առաջին պատվավոր տեղը:

2015թ. օգոստոսին Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի պարարվեստի խումբը և վոկալ կատարողները հանդես են եկել

համերգային ծրագրով Հունաստանում՝ «Արցախ-Հունաստան բարեկամություն-20 տարի» ծրագրի շրջանակներում: Միջոցառումների մի մասը նվիրված էր Հայոց եղեռնի 100-ամյակին: Խմբի ղեկավար, ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր Լյուդմիլա Բարսեղյանը և պոնտոսցիների միության նախագահ Ուրանիա Ֆանտազին պաշտոնական արարողության ընթացքում ծաղկեպսակ խոնարհեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Սիրուս կղզում և Աթենքում Կենտրոնի սաները ցուցադրեցին արցախյան մշակույթը համերգի տեսքով և ցուցահանդեսով, որին ականատես են եղել ոչ միայն հույները, այլև տարբեր երկրներից ժամանած հյուրերը: Եվ նշանակալիցը այն էր, որ այդ համերգը ամբողջովին ցուցադրվել է Հունաստանի կենտրոնական հեռուստատեսությամբ:

2015թ. սեպտեմբերին «Ֆրանսիայի օրերը Արցախում» խորագրով միջոցառմանը 8 պատանի նկարիչ մասնակցել են «Ֆոլիմաժ» անիմացիոն ստուդիայի վարպետության դասընթացներին և արժանացել խրախուսանքի, իսկ նույն փառատոնի շրջանակներում «Կոլաժ» և «Պատանի նկարիչ» խմբակների 50 սաներ մասնակցել են մրցույթին, որոնցից 11-ը գրավել է մրցանակային տեղեր:

2015թ. սեպտեմբերին Կենտրոնի երգչախումբը մասնակցել է Իսպանիայում կայացած միջազգային երգչախմբային մրցույթին ու արժանացել գլխավոր մրցանակի՝ Գրան-Պրիի, կիսելով այն Մոսկվայի Գնեսինի անվան երգչախմբի հետ, և որպես հաղթող հրավիրվել (առանց մուտքավճարի) 2016թ. Իտալիայում կայանալիք երգչախմբային կոլեկտիվների միջազգային մրցույթին:

ԼՂՀ-ում երգչախմբային արվեստի զարգացման և մատաղ սերնդի մեջ դեպի այդ արվեստը համակրանք սերմանելու նպատակով Կենտրոնի երգչախումբը «Մռակած» պետական կամերային երգչախմբի հետ համատեղ մշտապես հանդես է գալիս հասարակության, հատկապես դպրոցականների և ուսուցիչների առջև:

2015թ. «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» IDEA և «Սուրբ Գևորգի եկեղեցու վերականգնման» հիմնադրամների առաջարկով Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնը հրատարակվել է «Քարթլիի Թագուհի Շուշանիկը» վերնագրով ալբոմը, որը ներառում է Հայաստանի, Արցախի և Վրաստանի պատանի նկարիչների լավագույն 176 աշխատանք, որոնցից 12-ը Կենտրոնի սաների աշխատանքներն են:

Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը իր ներդրումն է ունեցել Արցախի համար շատ կարևոր քաղաքական գործում:

2016 թվականի հունվարի 26-ին Ստրասբուրգում կայացած ԵԽԽՎ-ի ձմեռային նստաշրջանում պատգամավորները չընդունեցին բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի «Բռնության աճը Ղարաբաղում և Ադրբեջանի մյուս օկուպացված տարածքներում» զեկույցի հիման վրա պատրաստված բանաձևը: Մինչ նստաշրջանի կայանալը, երբ ամենուր քննարկվում էին հակահայկական զեկույցները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը որոշել էր զեկույցների դեմ իր փոքր, բայց խոսուն մասնակցությունն ունենալ քաղաքական լուրջ ակցիային՝ ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով: Կենտրոնի սաները նկարել էին 50 դրոշ (47-ը՝ Եվրոպայի խորհրդի պետությունների դրոշները, 1-ը՝ ԵԱՀԿ դրոշը, 1-ը՝ Եվրոպայի խորհրդի դրոշը, 1-ը՝ Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության դրոշը): Այդ դրոշներով Կենտրոնի սաները նկարվել են հայկական մշակույթի նշանավոր կոթողներից մեկի՝ հայկական Գանձասար եկեղեցու ֆոնի վրա: Նստաշրջանի նախօրեին նկարը բացիկի տեսքով ուղարկվել է ԵԽԽՎ-ի բոլոր պատգամավորներին:

2016թ. մայիսին Կենտրոնի պարային ավագ խումբը մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված Համահայկական պարային մրցույթին, ներկայացնելով ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Ավանեսյանի «Էլեգիա», «Նռներով պար» և «Կիլիկիա» պարերը, զբաղեցրել 1-ին պատվավոր տեղը և արժանացել մրցույթի հատուկ մրցանակի:

Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը հազարավոր երեխաների համար դարձել է գեղագիտական դաստիարակության դարբնոց:

Կենտրոնի շրջանավարտները հաջողությամբ ուսումը շարունակում և աշխատում են «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտում, պարի պետական համույթում, Արցախի հեռուստատեսությունում, պետական դրամատիկական թատրոնում, մայրաքաղաքում գործող տարբեր մշակութային օջախներում և այլուր:

Կենտրոնի հաջողություններում մեծ ներդրում ունեն ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով նախկին փոխտնօրեն Նաիրա Նաջարյանը, գեղարվեստական ղեկավար Վիլեն Միքայելյանը (ներկայիս գործադիր տնօրենը), բաժինների վարիչներ Կատյա Գևորգյանը, Ռուզաննա Առստամյանը, Կարինե Գրիգորյանը, տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն Կարինե Պետրոսյանը, հանդերձապահ Գայանե Արարատի Բեգլարյանը, գործավար Ռիտա Դունունցը: Մեծ ավանդ ունեն նաև խմբակավարներ Նինա Առստամյանը (մաքրամե), Քրիստինե Բալայանը (ասեղնագործություն), Հրանտ Մնացականյանը (փորագրություն փայտի վրա), Մարինա Մեսրոպյանը (երգչախումբ), Գարի Ավանեսյանը (պարարվեստ), Անահիտ Գաբուզյանը (մանկական երգի թատրոն), Էվելինա Ստեփանյանը (վոկալ), Գայանե Ղարայանը (պարարվեստ), Էռնա Մկրտչյանը (նկարչություն), Գայանե Պետրոսյանը (նկարչություն), Զարինե Սպարտակի Բաբայանը (նկարչություն), Քաջիկ Հարությունյանը (թատրոն), Գայանե Հարությունյանը (վոկալ), Ժաննա Ղազարյանը (կոնցերտմեյստեր), Գայանե Գրիգորիի Բեգլարյանը (գորգ. կարպետ), Ռոմա Խաչատրյանը (դհոլ), Իրինա Փիրումյանը (կոնցերտմեյստեր), Նադեժդա Հակոբյանը (կոնցերտմեյստեր), Նելլի Մուսայելյանը (ասեղնագործություն), Արեգա Ավանեսյանը (ասեղնագործություն), Սուսաննա Աբրահամյանը (հագուստի մոդելավորում), Գարսևան Հարությունյանը (տեխնիկական մոդելավորում), Արմինե Աբրահամյանը (ասեղնագործություն), ինչպես նաև Կենտրոնի նախկին աշխատողներ՝ գեղարվեստական ղեկավար Գագիկ Միրզոյանը, բաժնի վարիչ և «Փորագրություն փայտի վրա» խմբակի խմբակավար Արամ Ծատրյանը, երաժշտագեղարվեստական բաժնի վարիչ Անուշ Ասրիբաբյանը, նկարիչներ Լիանա Քոչարյանը և Ալվարդ Գրիգորյանը, «Երգչախումբ» խմբակի խմբակավար Գայանե Ռենևի Գրիգորյանը, «Հագուստի մոդելավորում» խմբակի խմբակավարներ Ռիմա Մանասյանը և Արծվիկ Վարդանյանը, «Զվարճալի խաղեր» խմբակի խմբակավար Տատյանա Համզոյանը, «Գորգագործություն» խմբակի խմբակավար Օկտյաբրինա Բալայանը, պարուսույց Էլեոնորա Սարումովան, մեթոդիստ Լաուրա Հակոբջանյանը, մանկավարժ-կազմակերպիչ

Նարինե Ղահրամանյանը և ուրիշներ:

Կենտրոնի կայացման գործում մեծ ներդրում են ունեցել և մինչև այժմ էլ վառ հուշեր են թողել Կենտրոնի պատմության մեջ պարուսույցներ Ելենա Սարգսյանը և ԼՂՀ վաստակավոր արտիստ Ռոբերտ Գրիգորյանը, նվագակցող Արթուր Մելքումյանը, տեխնիկական ստեղծագործություն բաժնի վարիչ Սերգեյ Բուդաղյանը, հոգեբան Արմիդա Բաղալովան, խմբակավարներ Ալենա Ալուխանյանը, Արմեն Առաքելյանը, Կառլեն Բաբայանը:

2015թ. հիմնական միջոցառումները նվիրվել էին Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին, 2016թ. նվիրել են ԼՂ Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձին, որը մեծ շուքով նշել են սեպտեմբերի 2-ին, ամփոփելով Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության Կենտրոնի 1993-2016թթ. կատարած աշխատանքը՝ ձեռագործ աշխատանքների և կենդանի ցուցահանդեսի, պլենարային աշխատանքի, ինչպես նաև մեծ համերգային ծրագրի միջոցով, ինչպես նաև «ԼՂՀ հանրապետության հռչակման 25 տարի և կենտրոնի 23 տարի» խորագրով մեծ համերգային ծրագրի միջոցով:

1. Շուշիի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի գործունեությունը

Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը ստեղծվել է 1994թ. սեպտեմբերի 1-ին: Տարբեր տարիների Կենտրոնը ղեկավարել են Նաիրա Պողոսյանը, Ժաննա Պետրոսյանը, Հրայր Ուլուբաբյանը, Ռոբերտ Եսայանը:

01.09.1998թ. Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը (ՄՊՍԿ) միավորվել է Շուշիի մանկապատանեկան մարզադպրոցի հետ, տնօրեն է նշանակվել Սերգեյ Խաչատրյանը:

01.03.2002թ. Շուշիի ՄՊՍԿ-ն առանձնացել է շրջանի մարզադպրոցից և տնօրեն է նշանակվել Արշալույս Այդինյանը, հետագայում՝ Մարինե Խաչատրյանը, Գոհար Մարգարյանը:

Շուշիի ՄՊՍԿ-ի սաներից շատերն են իրենց մասնագիտական կողմնորոշումը ստացել հենց Կենտրոնում, շարունակել ընտրած մասնագիտությունը տարբեր ԲՈՒՀ-երում, միջնակարգ մասնագիտական ուսումնարաններում, իսկ նրանցից ոմանք ավարտելով աշխատանքի են ընդունվել հարազատ օջախում որպես «նկարչություն» և «Դիզայն» խմբակների խմբակավարներ:

Շուշիի ՄՊՍԿ-ն համագործակցում է Ստեփանակերտի ՄՊՍԿ-ի հետ:

ԼՂՀ Շահումյանի շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ

Կենտրոնը կազմավորվել է 2012թ. դեկտեմբերի սկզբներին: Իր գործունեությունը սկսել է նույն թվականի դեկտեմբերի 5-ից: Կենտրոնում ի սկզբանե գործել են 7 խմբակներ՝ «Ձեռագործություն», «Հմուտ ձեռքեր», «Ասմունք», «Կարուձև», «Թատերական», «Դաշնամուր», «Երգ»: Այս խմբերում ընդգրկված են եղել 50 աշակերտներ:

Սկզբնավորման օրից Կենտրոնը տնօրինում է Նելլի Դանիելյանը:

2013-2014 ուս.տարում Կենտրոնում գործել են «Ասեղնագործություն», «Թատերական», «Կարուձև», «Դաշնամուր», «Ժամանակակից պար», «Հմուտ ձեռքեր», «Ասմունք» խմբակները, սաների թիվը եղել է 57, տարեվերջին՝ 65:

Կենտրոնը 2012-2014թթ. ունեցել է 10 աշխատակիցներ՝ հիմնականում մանկավարժական կրթությամբ:

2014թ. Կենտրոնում (սկզբից հասարակական հիմունքներով, այնուհետև վճարովի տարբերակով) բացվել են 2 առարկայական խմբակներ՝ անգլերեն լեզվի և համակարգչային: 2014-2015 ուս.տարում ունեցել են 58, արդեն տարեվերջին՝ 82 սան:

«Ձեռագործություն», «Ասմունք» խմբակները մինչև 2014-2015 ուս.տարին գործել են սկզբից Նոր Բրաջուր, այնուհետև Նոր Կարաչինար համայնքում: 2015-2016 ուս.տարում, հաշվի առնելով շրջանի երեխաների նախասիրությունները, ձևավորել են «Ասմունք», «Դաշնամուր», «Ազգագրական պար», «Ժամանակակից պար», «Գոբելեն», «Համակարգչային» և «Անգլերեն լեզու» խմբակները:

«Ժամանակակից պար» խմբակը վերանվանվել է «Հմուտ ձեռքեր» խմբակի և այժմ գործում է Ծար համայնքում: «Դաշնամուր» խմբակը ժամանակավորապես չի գործում: «Գոբելեն», «Ազգագրական պար» խմբակները գործում են Նոր Խարխափուտ համայնքում:

Խմբակների սաները իրենց գիտելիքները հանրությանն են ներկայացնում հիմնականում միջոցառումների և ցուցահանդեսների տեսքով, օլիմպիադաներին մասնակցելով:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1988-2016ԹԹ.)

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների համառոտ պատմությունը ներկայացնելիս նպատակահարմար գտանք ուսումնասիրվող ժամանակաշրջանը դիտարկել՝ սկսած 1988թ.-ից մինչև 2016թ.: Այն առումով, որ աշխատության առաջին հատորում (2014թ., էջ 355-455) համառոտակի ներկայացվում է Արցախի գավառների(այդ թվում նաև Նուխի գավառի) դպրոցների համառոտ պատմությունը, իսկ երկրորդ հատորում (2015թ., էջ 9-238, 1-3-րդ գլուխներ) ընդհանուր պատկերացում ենք տալիս Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայկական դպրոցների պատմության մասին: Այս հատորում ընդհանուր ձևով ներկայացվում է դպրոցական գործի վիճակը Լեռնային Ղարաբաղում նախապատերազմյան (1920-1940թթ.), Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.) և հետպատերազմյան ժամանակաշրջանում (1946-1988թթ.):

Աշխատության երրորդ հատորում ներկայացնում ենք նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային շրջանների (Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի, Շահումյանի և Ստեփանակերտի) առանձին դպրոցների պատմությունը, նկատի ունենալով, որ դրանով իսկ հնարավոր կլինի ստեղծել Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունը: Այսպիսով, հետազոտության ժամանակաշրջանն ընդգրկում է 1988-2016 թթ: Ի դեպ, Նշենք, որ առանձին դպրոցների պատմությունը շարադրելիս անդրադարձել ենք նաև խորհրդային շրջանի տվյալներին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային կառուցվածքում ընդգրկված են 7 շրջան (նախկին 5-ի փոխարեն), 10 քաղաք (Ստեփանակերտ, Ասկերան, Հադրութ, Մարտակերտ, Մարտունի, Քարվաճառ, Շուշի, Բերձոր, Կովսական, Միջնավան), 289 գյուղ, որից 9-ը ներառված են քաղաքային համայնքների մեջ, 280-ը՝ գյուղական համայնքներում[369]:

Այժմ հավաստի աղբյուրների, դպրոցների տնօրենների, կրթության շրջանային բաժինների կողմից մեզ տրամադրված փաստագրական նյութերի, վաստակաշատ մանկավարժների անձնական արխիվային տվյալների և այլ աղբյուրների հիման վրա ներկայացնենք հանրապետության դպրոցների համառոտ պատմությունը՝ ըստ վարչատարածքային շրջանների: Ի դեպ, նշենք, որ շարադրանքում զետեղված են դպրոցների տնօրենների, թոշակառու մանկավարժների և այլ անձանց տրամադրած ձեռագիր նամակներն ու հուշերը: Հարկ է նաև նշել, որ կրթության շրջանային բաժինների վարիչների կողմից ստացված փաստագրական նյութերում կային բավականին թվով անճշտություններ դպրոցների, աշակերտների, ուսուցիչների քանակական կազմի մասին, նույնիսկ բացակայում էին որոշ դպրոցների մասին տվյալները:

Որպեսզի ամբողջական պատկերացում լինի հանրապետության բոլոր դպրոցների պատմության մասին, հեղինակները իրենց հուշերի, առանձին մարդկանց հետ ունեցած զրույցների և նամակագրական կապերի հիման վրա կարողացել են մոտավոր հաշվումներով պահպանել դպրոցների քանակը՝ ըստ շրջանների, սակայն որոշ դպրոցների պատմության մասին շատ սեղմ փաստագրական տվյալներ են ներկայացվում:

1. Մարտակերտի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.)

Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Ժասմեն Դավթյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության տվյալների համաձայն (տպագրվել է «Լուսարար» թերթում, 2014, թիվ 22)՝ շրջանում գործել են 30 միջնակարգ, 5 հիմնական դպրոցներ և 6 մասնաճյուղեր (41 դպրոց).

1. Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան թիվ 1 միջնակարգ (հոսքային) դպրոցը գործում է 1927թ.-ից: Մինչ Արցախյան պատերազմը դպրոցն ունեցել է 160 ուսուցիչ և 1600-ից ավելի աշակերտներ: 1963թ.-ից դպրոցը կոչվել է Սովետական Միության հերոս, դպրոցի սան Թեմիկ Ավթանդիլյանի անունով: Դպրոցի շրջանավարտների մի զգալի մասը դարձել են գիտնականներ, բժիշկներ, հերոսներ, տարբեր բնագավառի հայտնի մարդիկ, զինվորականներ, իսկ Արցախյան պատերազմի տարիներին զոհված ազատամարտիկներից 150-ը եղել են դպրոցի նախկին սաներ: 1992թ.-ից դպրոցի ուսումնական գործընթացը ընդհանտվել է բնակչության բռնի տեղահանության պատճառով: 1994թ.-ից, երբ վերաբացվել է դպրոցը, այն կոչվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, զոհված ազատամարտիկ Վլադիմիր Բալայանի անունով: 1994-2004թթ. դպրոցը շրջանի ամենամեծ կրթական հաստատությունն էր, որն ուներ 50 ուսուցիչ, 574 աշակերտ, իսկ 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 573 աշակերտ, դասավանդում 54 ուսուցիչ:

Տարբեր ժամանակներում դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Միքայել Պետրոսյանը (1988-1992թթ.), Լիդա Պետրոսյանը (1994-2008թթ.), Ռադիկ Իսրայելյանը (2008-2011թթ.), Լիդա Պետրոսյանը (2011թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բելինսկու անվան թիվ 38 հիմնական դպրոցի հետ: Դպրոցում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ: Առավել ուշադրության են արժանի ինտելեկտուալ խաղերում դպրոցականների գրաված մրցանակային տեղերը: ՀՀ-ում տեղի ունեցած «Հայասպետ» մրցույթում դպրոցի թիմը գրավել է 1-ին տեղը: Դպրոցի աշակերտները պարբերաբար մրցանակային տեղեր են գրավում առարկայական օլիմպիադաներում: Դպրոցն ակտիվորեն համագործակցում է ՊԲ զորամասերի հետ: Կազմակերպվում են արիության դասեր, փոխադարձ այցելություններ:

2. Մարտակերտի Վ.Մինասյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցը. 1963-64 ուս.տարում Մարտակերտի թիվ 2 դպրոցը դարձավ 8-ամյա, որտեղ սովորում էին 156 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ: 1975-76 ուս.տարում դպրոցը դարձավ միջնակարգ: 1988-1991թթ. դպրոցում նվազեց աշակերտների թիվը 60-ով, ուսուցիչներինը՝ 9-ով: Այդ տարիներին դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Արտեմ Սարգսյանը, Հունան Հովհաննիսյանը, Լևոն Սաիյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Էլմիրա Ափանցը, Լենա Գալստյանը, Ռազմիկ Ահարոնյանը, Ռաֆայել Պետրոսյանը, Գառնիկ Իսրայելյանը:

Դպրոցի տնօրեն Վալերի Պողոսյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 1992թ. դպրոցում դադարեցվել են ուսումնական պարապմունքները՝ կապված բռնի տեղահանման հետ:

1994թ., երբ ազատագրվել է Մարտակերտը, դպրոցական շենքում տեղակայված էր Պաշտպանության բանակի ստորաբաժանումներից մեկը:

1994թ. սեպտեմբերին ուսումնական տարին սկսվեց անասնաբուժական-բակ-

տերիոլոգիական կայանի շենքում և մոտակա տներում, իսկ 1997-98 ուս.տարվանից՝ հարազատ դպրոցում: Եթե 1994թ. դպրոցում սովորում էին 66 աշակերտ, ապա 2014-2015 ուս.տարում այդ թիվը հասնում էր 208-ի: Դասավանդում են բարձրագույն կրթությամբ 32 ուսուցիչներ:

Կրթօջախը կրում է դպրոցի շրջանավարտ, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ (հետմահու) Վարդան Մինասյանի անունը: Դպրոցի սաներից «Մարտական խաչ» շքանշանի են արժանացել Լյովա Կարապետյանը (հետմահու), Ռաֆայել Խաչատրյանը (հետմահու), Կարեն Մնացականյանը (հետմահու), Վանիկ Միրզոյանը (հետմահու), գումարտակի հրամանատար Իլիչ Բաղրյանը և ուրիշներ:

Դպրոցի գլխավոր մասնաշենքը 2002թ. ենթարկվել է կապիտալ նորոգման ԿՕՇ-ի կողմից: Դպրոցական գույքը համալրվել է Երևանի Զեյթուն-Քանաքեռ համայնքի, համահայկական հիմնադրամի բարերարներ Արմեն Նավթալյանի և Գուրգեն Ներսիսյանի ծնողների կողմից:

Դպրոցը սիստեմատիկաբար մասնակցում է շրջանում և հանրապետությունում անցկացվող տարբեր մրցույթների և հաճախակի գրավում մրցանակային տեղեր:

Նվիրված ու անբասիր աշխատանքի շնորհիվ ուսուցիչներ Ռուբեն Պետրոսյանին ու էլմիրա Ափանցին շնորհվել է հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչում:

Առանձնապես ուժեղ է դպրոցի կապը Պաշտպանության բանակի Մարտակերտի զորամասի հետ: Հաճախակի են անցկացվում արիության դասեր, ռազմահայրենասիրական միջոցառումներ, այցելություններ զորամաս:

Ըստ դպրոցի տնօրեն Աշոտ Պապիկյանի ներկայացրած տվյալների,

3. Աղաբեկալանջի Վ. Սայիյանի անվան հիմնական դպրոցը 1988-1990թթ. ունեցել է տարրականի կարգավիճակ, 32 աշակերտների և 6 ուսուցչի ընդգրկմամբ: Այդ կարգավիճակով դպրոցը գործել է մինչև 1994թ., իսկ 1994-1996թթ. այն գործել է 8-ամյա դպրոցի կարգավիճակով՝ 56 աշակերտների ընդգրկմամբ, սակայն 1999թ.-ից աշակերտների քանակը նվազելու պատճառով դպրոցը դարձել է Մարտակերտի թիվ 2 դպրոցի մասնաճյուղը: 2000-2003թթ. դպրոցը առանձնացվել է և պահպանվել է տարրական դպրոցի կագավիճակով: Տնօրենն էր Ինարա Սայիյանը:

2006-2009թթ. դպրոցի կարգավիճակը փոխվեց, դարձավ 8-ամյա, իսկ 2010-2011թթ.-ին դպրոցը դարձավ հիմնական: Այդ նույն կարգավիճակով գործում էր նաև 2015-2016թթ.: Դպրոցում սովորում էր 12 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի ԼՂՀ և ՀՀ դպրոցների հետ: Դպրոցի տնօրինությունը կազմակերպում է փոխայցելություններ, հանդիպումներ, դասալսումներ, միջդպրոցական օլիմպիադաներ, հայրենասիրական մրցույթ-խաղեր:

Դպրոցը համագործակցում է Մարտակերտի զորամասի հետ, մասնակցում ռազմահայրենասիրական միջոցառումներին, կազմակերպում այցելություններ զորամաս:

4. Մոխրաթաղի Գարիկ Պողոսյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Մերի Ղուկասյանի ներկայացրած տվյալներից տեղեկանում ենք, որ 1973թ.-ից առայսօր դպրոցի կարգավիճակը միջնակարգ է: 1992թ. դպրոցն անվանակոչվել է Արցախյան պատերազմում գյուղի առաջին զոհ Գարիկ Պողոսյանի անունով և առ այսօր կրում է նրա անունը: Բռնի տեղահանության պատճառով դպրոցը չի

գործել երկու ուս.տարի(1992-1994թթ.), որից հետո՝ 1994-1995 և 1995-1996 ուս.տարիներին, դպրոցի պարապմունքները կազմակերպվել են հարմարեցված շենքում:

1996-1997 ուս.տարվանից առ այսօր դպրոցը գործում է նախկին տիպային շենքում: Այժմ դպրոցը գործում է 37 աշակերտներով, 7 կոմպլեկտով, որից 4-ը երկկոմպլեկտ են: Դասավանդում են 14 ուսուցիչներ:

Դպրոց-բանակ համագործակցությունը սերտ է: Հաճախակի կազմակերպվում են փոխադարձ այցելություններ:

5. Նոր Կարմիրավանի Յա. Գալստյանի անվան հիմնական դպրոցը բացվել է 2006թ. սեպտեմբերի 1-ին՝ վերաբնակեցված Նոր Կարմիրավանի համայնքում: 2006թ. սեպտեմբերի 1-ից առ այսօր դպրոցի տնօրեն է աշխատում Սուսաննա Թևոսյանը: Դպրոցում սովորում է 41 աշակերտ՝ 5 դասարան կոմպլեկտներում, դասավանդում 14 ուսուցիչ:

Դպրոցը բարեկամական կապ ունի ՀՀ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի հետ:Դպրոցում կազմակերպվում են տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ: Դպրոցի «Ռաբունի» թիմը բազմիցս մրցանակային տեղեր է զբաղեցրել շրջանում կազմակերպված ինտելեկտուալ խաղ-մրցույթներում: Դպրոցը սերտորեն համագործակցում է նույն գյուղի տարածքում տեղակայված զորամասի հետ: Կատարվում են փոխայցելություններ:

6. Մատաղիսի միջնակարգ դպրոցը 1988թ.-ից գործում էր Կարո Ներսիսյանի տնօրինությամբ: Շենքը կառուցվել է 1972թ.-ին, ապահովված էր բոլոր հարմարություններով:

1992թ. գյուղը բռնագրավվել է ադրբեջանցիների կողմից:

Գյուղի ազատագրումից հետո, 1995թ. հոկտեմբերի 10-ին, դպրոցը վերաբացվել է: Դպրոցի տնօրեն է նշանակվել Նորա Գասպարյանը: Դպրոցում սովորում է 28 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

2001թ. ապրիլի 30-ին Մատաղիսի միջնակարգ դպրոցը անվանակոչվել է նախկին շրջանավարտ, անվանի գիտնական, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի անունով:

2007թ. սեպտեմբերի 1-ին շահագործման է հանձնվել Տորոնտոյի հայ համայնքի միջոցներով կառուցված դպրոցական նոր շենքը:

2007թ. նոյեմբերի 1-ին միջնակարգ դպրոցի տնօրեն է նշանակվել Գեղամ Աղաջանյանը:

Դպրոցի անվանի շրջանավարտներից են ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վանյա Բարսեղյանը:

Արցախյան ազատագրական պայքարի ժամանակ իրենց կյանքն են զոհաբերել դպրոցի սաներ Վալերիկ Սիմոնյանը, Սուրեն Դավթյանը, Արամայիս Համբարձումյանը:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 84 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: Այդ ուս.տարում դպրոցում գործում էր ազատ ոճի ըմբշամարտի խմբակ: Խմբակի սաները շրջանային և հանրապետական մրցումներում զբաղեցրել են առաջնակարգ տեղեր: Դպրոցն ակտիվորեն համագործակցում է Երևանի թիվ 43 դպրոցի և գյուղում տեղակայված զորամասի հետ:

2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Մատաղիսի միջնակարգ դպրոցը հիմնանորոգվել է Տորոնտոյի հայ համայնքի միջոցներով:

2016-17 ուս.տարում դպրոց է հաճախել 84 աշակերտ: Դպրոցում դասավանդում են 16 ուսուցիչներ:

7. Մաղավուզի Միեր Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը Յուրա Եդիգարյանի տնօրինության շրջանում (1977-1992թթ.) շրջանի լավագույն դպրոցներից մեկն էր: Նրա գործունեության տարիներին դպրոցում բարձր հիմքի վրա էր դրված աշխատանքային դաստիարակությունը: Դպրոցն ուներ մեծ ու հարուստ հողամաս, որից ստացված եկամուտներով դպրոցում գործում էին երկարօրյա խմբեր: Դպրոցում ուսումը տարվում էր կաբինետային համակարգով: 1990-1991թթ. դպրոց էր հաճախում մոտ 300 աշակերտ: Սակայն 1992թ. բնակչության բռնի տեղահանությունից հետո (1992-1994թթ.) դպրոցի շենքը վերածվեց շտաբի և հոսպիտալի:

1994թ., վերադառնալով հայրենի գյուղ, նախկին փոխտնօրեն (1992-1994թթ.) Արամայիս Հովհաննիսյանի ջանքերով վերակառուցվեց գյուղի նախկին գրասենյակը, և 1994թ. սեպտեմբերի 1-ից ուսումնական գործընթացը սկսվեց հարմարեցված մասնաշենքում՝ 55 աշակերտների ընդգրկումով: Տնօրեն նշանակվեց Արամայիս Հովհաննիսյանը: Դպրոցը անվանակոչվեց Արցախյան ազատամարտի նահատակ, դպրոցի նախկին սան Միեր Դանիելյանի անունով: Ըստ դպրոցի տնօրենի տվյալների, 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 92 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

1999թ. դպրոցի տնօրեն է նշանակվել Էլզա Հարությունյանը, 2011թ.-ից՝ Վաչագան Ավանեսյանը:

Դպրոցի անվանի սաներից են կուսակցության ԼՂ մարզային կոմիտեի առաջին քարտուղար Եղիշե Գրիգորյանը, ԵրՊՀ նախկին պրոռեկտոր Հայկազ Ադամյանը, ճարտարագիտական գիտությունների թեկնածու Աբգար Ղազարյանը, բժշկական գիտությունների թեկնածու, վիրաբույժ Արտաշես Հակոբյանը, պրոֆեսոր Լեյնադ Դանիելյանը և ուրիշներ:

2007-2008 ուս.տարվանից դպրոցը բարեկամական կապ է հաստատել Վեդի քաղաքի թիվ 1 դպրոցի հետ:

Ներկայումս դպրոցի շենքը հիմնանորոգված է, Վարնկաթաղում (Մինգրելսկ) ունի մասնաճյուղ, որտեղ սովորում են 14 աշակերտներ, դասավանդում 6 ուսուցիչներ:

Դպրոցում գործում է նախադպրոցական խումբ՝ մանկապարտեզի կարգավիճակով, 20 երեխայի ընդգրկմամբ: 2016-17 ուս.տարում դպրոց է հաճախել 68 աշակերտ, դասավանդել 16 ուսուցիչ:

Բավականին ամուր է դպրոց-բանակ համագործակցությունը, հաճախակի են կազմակերպվում փոխադարձ այցելություններ, ռազմահայրենասիրական միջոցառումներ:

8. Ներքին Հոռաթաղի Գ.Գրիգորյանի անվան դպրոցը. 1989թ. առ այսօր ունի միջնակարգ դպրոցի կարգավիճակ: Մինչև բռնագաղթը դպրոցում սովորել են 200-250 աշակերտներ: Բռնագաղթից հետո, սկզբնական տարիներին, դպրոց են հաճախել 100-110 աշակերտներ. ներկայումս այդ թիվը հասնում է 150-ի, դասավանդում են 24 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրեն Մելանյա Դավթյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 1992թ. հուլիսի 4-ին բռնի տեղահանվել է գյուղի բնակչությունը: Բռնագաղթից վերադառնալուց հետո, 1994թ. սեպտեմբերի 1-ին, գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն է նշանակվում Լավրենտ Մնացականյանը, որը պաշտոնավարել է մինչև 1999թ. օգոստոս ամիսը: 2000թ.-ից առ այսօր դպրոցի տնօրեն է աշխատում Մելանյա Դավթյանը: 2004-2010թթ. դպրոցում սովորում էր 118 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարում՝ 151 աշակերտ, 24 ուսուցիչ:

Այսօր դպրոցը բարեկամական կապեր ունի ՀՀ Տավուշի շրջանի Կոթի գյուղի միջնակարգ, Մարտակերտի թիվ 1 և Կուսապատի դպրոցների հետ: Դպրոցում բարձր մակարդակի վրա է դրված արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման գործընթացը: Դպրոցը մշտապես մասնակցում է տարբեր մրցույթների, օլիմպիադաների և պարբերաբար գրավում մրցանակային տեղեր: 2005թ. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի «Դաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածք» անվանակարգում Ներքին Հոռաթաղի միջնակարգ դպրոցը հանրապետությունում գրավել է առաջին տեղը և արժանացել ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության պատվոգրի ու դրամական պարգևի: Նույն թվականին դպրոցը «Լավագույն մարզական հրապարակ» հանրապետական մրցույթում ևս հաղթող է ճանաչվել և պարգևատրվել պատվոգրով ու մարզական գույքով:

2014թ.-ից դպրոցում գործում է մեկ նախապատրաստական խումբ՝ 14 երեխաների ընդգրկմամբ: 2015թ. շահագործման է հանձնվել դպրոցին կից կառուցված մանկապարտեզը:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, համատեղ միջոցառումներ:

9. Մեծ շենի Կ. Եսայանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Մայկո Մարգարյանի հաշվետվության տվյալների համաձայն,[370] 1988-1992թթ. գյուղում գործել է միջնակարգ դպրոց, որտեղ յուրաքանչյուր ուսումնական տարում սովորել են 100-ից ավելի երեխաներ, դասավանդել 24-26 ուսուցիչներ:

1992թ. հուլիսի 4-ին Մեծ շենը գրավվում է ադրբեջանական զավթիչների կողմից: 1993թ. մարտի 5-ին ավերված ու թալանված գյուղը ազատագրվում է գերեվարությունից, և բնակիչները սկսում են վերադառնալ հայրենի բնակավայր: Նույն թվականի հոկտեմբերին բացվում է տարրական դպրոց՝ երկկոմպլեկտ դասարանով, 13 աշակերտներով, իսկ 1994թ. սեպտեմբերի 1-ից վերաբացվում է միջնակարգ դպրոցը՝ 60 աշակերտներով: Այժմ Մեծ շենի միջնակարգ դպրոցում սովորում են 59 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ:

Դպրոցի շենքը տիպային է, կառուցվել է 2003թ.՝ նախատեսված մոտ 100 աշակերտների համար: 2011թ.-ից դպրոցը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով, համակարգչային դասարանով, կաբինետներով: Ունի կահավորված բակ, մարզադաշտ՝ շնորհիվ գյուղի բարերար, վաստակավոր բժիշկ, դպրոցի նախկին շրջանավարտ Կառլեն Եսայանի: 2011թ. Մեծ շենի միջնակարգ դպրոցն անվանակոչվել է բարերարի անունով:

10. Գյուլաթաղի (այժմ Վարդաձոր) միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Սավադյանը իր հուշերում պատմում է, որ 1988-1990թթ. դպրոցը եղել է միջնակարգ և ունեցել է 120 աշակերտ, 25-ից ավելի ուսուցիչներով: Արցախյան ազատագրական շարժման տարիներին (1992թ.-ից մինչև 1994թ. մարտ ամիսը) դպրոցը չի գործել: Գյուղի ազատագրումից հետո, 1994թ. ապրիլի 1-ից դպրոցը նորից սկսեց գործել: Տնօրեն նշանակվեց Անժելա Սավադյանը:

Ներկայումս դպրոցը կրում է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր, Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար Նորայր Դանիելյանի անունը: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 53 աշակերտ, դասավանդում 13 ուսուցիչ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի Քարվաճառի շրջանի Զուստ գյուղի դպրոցի հետ, որը նույնպես կրում է Նորայր Դանիելյանի անունը:

Դպրոցը համագործակցում է Ն.Հոռաթաղում տեղակայված զորամասի հետ,

պարբերաբար կազմակերպվում են հայրենասիրական բնույթի համատեղ միջոցառումներ:

2014թ.-ից դպրոցը Ճանկաթաղի միջնակարգ դպրոցի մասնաճյուղն է:

11. Ճանյաթաղի դպրոցի արխիվային փաստաթղթերից հայտնի է դառնում, որ 1988-89 ուս.տարում դպրոցում սովորում էր 120 աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ:

1989-1990 ուս.տարում տնօրեն Սլավիկ Մանգասարյանի ակտիվ գործունեության շնորհիվ դպրոցում ձևավորվեցին ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ռուսաց լեզվի կաբինետներ՝ հագեցված ժամանակակից սարքավորումներով: Դպրոցում սովորում էին 135 աշակերտներ, դասավանդում 35 ուսուցիչներ:

1992թ. հուլիսի 4-ին գյուղը բռնի տեղահանվում է, որի արդյունքում դպրոցը ժամանակավոր փակվում է: Գյուղը ազատագրվելուց հետո, 1994թ. փետրվարի 1-ին դպրոցը կրկին բացվում է միջնակարգի կարգավիճակով, 53 աշակերտով և 9 ուսուցիչներով: 1999թ. ապրիլին դպրոցն ունեցել է 53 աշակերտ և 11 ուսուցիչ, իսկ 2004թ.-ին, դպրոցի տնօրեն Ասյա Մանգասարյանի տվյալներով, 57 աշակերտ, 16 ուսուցիչ: Ներկայումս դպրոցում սովորում են 68 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Համահայկական հիմնադրամի և բարերարների նվիրատվությունների շնորհիվ դպրոցը հագեցված է ժամանակակից տեխնիկական միջոցներով, ունի նաև համակարգչային կաբինետ:

12. Նոր Մարաղայի Վ.Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց:

Պատմագիտական աղբյուրները վկայում են, որ 1928թ. Պարսկաստանի Մարաղա գյուղի բնակիչների մի մասը գաղթել են և բնակչություն հաստատել Ջրաբերդի գավառում՝ հիմնելով Մարաղա գյուղը, որն այսօր ազերիների բարբարոսությունների հետևանքով վերածված է ավերակների: 19-րդ դարի 60-ական թվականներին Մարաղա գյուղում բնակվում էր 450-ից ավելի մարդ, ուներ Սուրբ Աստվածածին եկեղեցի, որին կից գործում էր դպրոց՝ 15 աշակերտներով: 1873թ. գյուղում բացվել է եկեղեցական ծխական դպրոց՝ 30 աշակերտներով, որը պահվել է բաքվաբնակ մարաղեցիների հայրենակցական միության միջոցներով:

Խորհրդային տարիներին Մարաղայի միջնակարգ դպրոցում սովորում էր 150-200 աշակերտ, դասավանդում 26-30 ուսուցիչ: 1988-1989 ուս.տարում դպրոցն ուներ 120 աշակերտ, 18 ուսուցիչ:

1992թ. ապրիլի 10-ին Մարաղայի և շրջակա գյուղերի բնակչությունը բռնի տեղահանվեց:

Դպրոցի տնօրեն Լյուբա Գրիգորյանի հաշվետվության համաձայն՝ 1997թ. սեպտեմբերի 1-ից Նոր Մարաղայում բացվեց 8-ամյա դպրոց՝ 20 աշակերտով: Դպրոցի հիմնադիրն է գյուղական համայնքի ղեկավար, երջանկահիշատակ Վ.Համբարձումյանը: 2000թ.-ից դպրոցը կրում է նրա անունը: Դպրոցի տնօրենն էր Մկրտիչ Ասրյանը: Մանկավարժական կոլեկտիվը բաղկացաց էր 8 հոգուց:

2001թ. օգոստոսից դպրոցի տնօրեն է նշանակվել Լյուբա Գրիգորյանը: Այդ ժամանակ դպրոցում սովորում էին 42 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

2004թ. Թեհրանի հայոց թեմի միջնորդությամբ տեր և տիկին Վարուժան և Ալմա Հովհաննիսյանների միջոցներով կառուցվեց նոր դպրոց:

2010թ. դպրոցում սովորում էին 82 աշակերտներ, աշխատում 22 ուսուցիչներ: Դպրոցում գործում էր նախադպրոցական խումբ՝ 13 երեխաների ընդգրկմամբ: Դպրոցը մշտապես գտնվում է բարերարների ուշադրության կենտրոնում: Հա-

մագյուղացի ռուսաստանաբնակ Մարատ Պետրոսյանի միջոցներով վերանորոգվել է դպրոցի շենքը, բարեկարգվել տարածքը, սալիկապատվել բակը, տեղադրվել ջեռուցման նոր համակարգ: Դպրոցին սպրոտային գույք ու ժամանակակից տեխնիկայի միջոցներ են նվիրաբերել բարերարներ Աշոտ Գրիգորյանը, Արթուր Ղուլյանը, երգչուհի Շուշան Պետրոսյանը: Դպրոցին իր աջակցությունն է ցույց տալիս նաև Երևանի առաջնորդության դպրոցի հիմնադիր տնօրեն Սամվել Մովսիսյանը՝ «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոնի» հիմնադիր տնօրեն Ս.Պետրոսյանի միջոցով:

2010թ. հոկտեմբերի 1-ից դպրոցն ունի Նոր Ջրաբերդի մասնաճյուղը:

2014-2015 ուս.տարում դպրոցում գործում էր նախադպրոցական խումբ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի ՀՀ և ԼՂՀ մի շարք դպրոցների հետ, սերտորեն համագործակցում է տարածքում տեղակայված զորամասի հետ:

13. Չայլու (Նոր Այգեստան) գյուղի դպրոցը մինչև Արցախյան պատերազմը եղել է Մարտակերտի շրջանի նշանավոր դպրոցներից մեկը, որն ունեցել է շուրջ 300 աշակերտ, 42 ուսուցիչ: Երկար տարիներ դպրոցը ղեկավարել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Լենա Մարությանը: Դպրոցը գտնվում էր բարեկարգ վիճակում:

1992թ. ապրիլի 19-ին ազերի ավազակախմբերի բարբարոսությունների հետևանքով Չայլվի բնակչությունը տեղահանվեց: Զինադադարից հետո գյուղը վերաբնակեցրել են Խաչենի հովտում և վերանվանել Նոր Այգեստան: Գյուղի դպրոցը սկզբից վերաբացվեց տարրականի կարգավիճակով (տնօրենն էր Լուսինե Միրզոյանը), այնուհետև դարձավ 8-ամյա, հետագայում՝ 2010թ.-ից, միջնակարգ, որտեղ սովորում էր 44 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

14. Հասանղայայի (Նոր Հայկաջուրի) դպրոցը 1988-1990թթ. ունեցել է 210 աշակերտ, 28 ուսուցիչ: Այդ տարիներին դպրոցի տնօրեն է եղել Ա. Համբարձումյանը, իսկ 1990-1992թթ.-ին՝ Վ. Ներսիսյանը: 1992թ. հունիսի 17-ին գյուղը գրավվել է ադրբեջանցիների կողմից: 2003թ.-ին հայկաջուրցիներին վերաբնակեցրել են ազատագրված հարմարավետ տարածքում:

Նոր Հայկաջուրի տարրական դպրոցը բացվել է 2005թ. սեպտեմբերի 1-ից: Դպրոցի վարիչ է նշանակվել Կ. Աթաբեկյանը:

2010թ.-ից դպրոցը կոչվել է հիմնական: Դպրոցի տնօրեն է նշանակվել Ջ. Իշխանյանը: Ներկայումս Նոր Հայկաջուրի դպրոցի տնօրենն է Արման Սարգսյանը: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 38 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է զինված ուժերի ստորաբաժանումների հետ, հաճախ են կազմակերպվում համատեղ միջոցառումներ:

15. Թալիշի միջնակարգ դպրոցի տնօրենի հաշվետվությունում[371] նշվում է, որ 1988-1992թթ. սովորողների թիվը հասնում էր 320-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 38-ի: Դպրոցի եռահարկ շենքն ապահովված էր ժամանակակից պահանջներին համապատասխան հարմարություններով ու շենքային պայմաններով, դասասենյակներով, ուներ լաբորատորիա, հարուստ գրադարան, մարզադահլիճ, ճաշարան:

1992թ. մայիսից դպրոցը դադարել է գործել գյուղի բնակչության բռնի տեղահանության պատճառով: 1994թ. ապրիլին գյուղն ազատագրվել է: Դպրոցը վերաբացվել է 1995թ. հոկտեմբերի 11-ին:

Դպրոցը վերակառուցվել է Հայ Առաքելական եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Մեսրոպ Աշճյանի հովանավորությամբ, տեր և

տիկին Սողոմոնյանների հանգանակությամբ հավաքված գումարով: Մեծ օժանդակություն է ցուցաբերվել նաև ԼՂՀ կառավարության կողմից:

Դպրոցը գործել է մինչև 2016թ. ապրիլ ամիսը: Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ գյուղի բնակչությունը տեղահանվել է: 2016թ. մայիսին Թալիշի բնակիչներին բնակեցրել են Մարտակերտի շրջանի Ալաշան տեղամասում, որտեղ էլ գործում է միջնակարգ դպրոցը՝ 48 աշակերտով և 12 ուսուցիչներով:

16. Կուսապատի Վարուժան Քարյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Խաչատրյանի տեղեկությունների համաձայն՝ 1988-1991թթ. գյուղի դպրոցում սովորում էին 150-ից ավելի աշակերտներ, դասավանդում 26 ուսուցիչներ: Արցախյան պատերազմի դժնդակ տարիներին գյուղի բնակչությունը բռնի տեղահանվեց, դպրոցում դադարեցին պարապմունքները (1992-1993թթ.): Սակայն ուսումնական պարապմունքները կազմակերպում էին Ստեփանակերտի դպրոցներում:

Մարտակերտի շրջանի ազատագրումից հետո գյուղի բնակչության մի մասը վերադարձավ: 1995-2000թթ. դպրոցում սովորում էին 68 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էին 44 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Վ.Գրիգորյանը, Կ.Բաբայանը, Վ.Մաթևոսյանը, Ռ.Ստեփանյանը, Վ.Գևորգյանը, 1999թ.-ից առ այսօր՝ Ա.Խաչատրյանը:

Դպրոցը համագործակցում է Մարտակերտի թիվ 1, 2, Ն. Հոռաթաղի միջնակարգ դպրոցների հետ, կազմակերպվում են փնջային դասալսումներ, արտադասարանական համատեղ միջոցառումներ՝ նվիրված Եռատոնին: Դպրոցը սերտ կապերի մեջ է N զորամասի հետ: Բարձր դասարանների աշակերտները այցելում են զորամաս, ծանոթանում զինծառայողների առօրյային, իսկ ԼՂՀ անկախության օրը՝ սեպտեմբերի 2-ին, սպաները դպրոցում անց են կացնում արիության դասեր:

Դպրոցը 2008թ. հիմնանորոգվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով:

17. Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոցի արխիվային փաստաթղթերի տվյալների համաձայն՝ 1980-ական թվականներին դպրոցը գործում էր 10 դասարան կոմպլեկտով՝ 170 աշակերտների ընդգրկմամբ: Մանկավարժական կոլեկտիվը բաղկացած էր 32 հոգուց: Տնօրենն էր Ա. Գրիգորյանը:

Արցախյան պատերազմի օրերին Մարտակերտի շրջանի ներքին հատվածի մի շարք գյուղերի թվում բռնի տեղահանվեց նաև Սեյսուլանի բնակչությունը: Վերանվանվելով Նոր Սեյսուլան՝ գյուղը ծվարվեց Խաչենի հովտում, Խաչեն գետի ձախ ափին: 1994թ. գյուղում հիմնադրվեց 12 աշակերտով ու 3 ուսուցիչներով դպրոց: 1995թ. առ այսօր դպրոցի տնօրենն է Ա. Մինասյանը:

1996թ. սեպտեմբերի 1-ից Հովտաշենի և Սեյսուլանի ոչ լրիվ միջնակարգ դպրոցները միացվել են, և գործել է Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոցը՝ 9 դասարան կոմպլեկտով, 43 աշակերտով:

2016թ. դպրոցում սովորում էր 85 աշակերտ, դասավանդում 20 ուսուցիչ:[372]

ԼՂՀ-ում և ՀՀ-ում անցակցված օլիմպիադաներում դպրոցի աշակերտները տվել են բարձր արդյունքներ: Նրանց ուսուցիչներն են Արթուր Մինասյանը (հայոց լեզու), Սուրեն Ոսկանյանը (կենսաբանություն), Մարինե Պողոսյանը (աշխարհագրություն), Նունե Միրզոյանը (հայոց լեզու), Արևիկ Սարգսյանը (պատմություն): Դպրոցը համագործակցում է Մարտակերտի թիվ 1, 2, Ն. Մարաղայի, Ն. Այգեստանի միջնակարգ դպրոցների հետ, կազմակերպում միջփնջային դասալսումներ, օլիմպիադաներ, տարաբնույթ միջոցառումներ:

18. Զրաբերդի դպրոցը, որպես Նոր Մարաղայի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ, գործում է 2010թ. հոկտեմբերի 1-ից: Այժմ դպրոցում սովորում են 7 աշակերտ, դասավանդում երկու ուսուցիչ՝ Կնյազ Մելքումյան, Արմեն Մելքումյան:

19. Ծաղկաշենի դպրոցը (մասնաճյուղ) 1988թ. գործել է տարրական դպրոցի կարգավիճակով, որտեղ սովորում էին 21 աշակերտներ, դասավանդում 9 ուսուցիչներ: 1994թ. դպրոցը դարձել է 8-ամյա: Դպրոցն անվանվել է հերոս ազատամարտիկ Ա.Սարգսյանի անունով: Ըստ տնօրեն Նազիկ Սողոմոնյանի ներկայացրած տվյալների, 1997թ. դպրոցում աշխատում էին 12 ուսուցիչներ, սովորում 38 աշակերտներ:

Լեսմոնյա Հայրապետյանի տնօրինության շրջանում (1998թ.), դպրոցը դարձավ տարրական՝ աշակերտների թվաքանակի պատճառով:

2013 թվականից դպրոցը գործում է որպես Ն.Հոռաթաղի Գ.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի Ծաղկաշենի մասնաճյուղ՝ երկու կոմպլեկտ դասարաններով: Դպրոցում աշխատում էին 3 ուսուցիչներ, սովորում 8 աշակերտներ:

20. Մատաղիսի միջնակարգ դպրոցի Տոնաշենի մասնաճյուղը Արցախյան շարժման տարիներին գործում էր որպես տարրական դպրոց: 1992թ. հունիսի 16-ին գյուղի բնակիչները հարկադրաբար լքեցին իրենց բնակավայրը, փակվեց գյուղի դպրոցը: Այն վերաբացվեց 2000թ. սեպտեմբերին՝ վեց աշակերտներով: Դասավանդում էր մեկ ուսուցիչ՝ Ն.Խալափյանը: 2003թ. աշակերտների թիվը հասնում էր 8-ի, դասավանդում էին երկու ուսուցիչներ: 2004թ. դպրոցի վարիչ նշանակվեց Ս.Ավանեսյանը: Մինչև 2012թ. դպրոցը գործում էր տարրականի կարգավիճակով, 2012թ.-ից առ այսօր այն Մատաղիսի Ռ.Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոցի մասնաճյուղն է:[373]

21. Հաթերքի միջնակարգ դպրոց: Փաստագրական նյութերից[374] տեղեկանում ենք, որ 1980-ական թվականներին, մինչև Արցախյան շարժումը, Հաթերքի միջնակարգ դպրոցում սովորում էին 800-900 աշակերտներ, դասավանդում 70 ուսուցիչներ: Դպրոցում գործել են երկարօրյա խմբեր, որոնցում ընդգրկվել են 1-7-րդ դասարանների 250-300 աշակերտներ:

Մանկավարժական աշխատանքում մեծ ավանդ են ունեցել բազմավաստակ, ավագ ուսուցիչներ, որոնցից են հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Վիկտորյա Միրզոյանը, Վաղարշակ Աղաբեկյանը, Հնազանդ Միրզախանյանը, Արփիկ Բաղրյանը, Էլզա Պետրոսյանը, Ծովիկ Հարությունյանը, պատմաբաններ Միքայել Ասրյանը, Անդրանիկ, Ամալյա և Հայկ Այվազյանները, Մուշեղ Մովսիսյանը, աշխարհագրագետներ Տիգրան Ազարյանը, Նիկոլայ Մակյանը, Երվանդ Գրիգորյանը, Ջիվան Աթայանը, Հայկազ և Անահիտ Սարգսյանները, քիմիկոսներ Վազգեն Պողոսյանը, Ժենյա Դավթյանը, քիմբիոլոգիայի ուսուցիչ Մակիչ Մակյանը, մաթեմատիկոսներ Դանիել Դանիելյանը, Նիկոլայ, Արաքսյա և Ա. Հարությունյանները, Ծովինար Խաչատրյանը, Ս.Շինականյանը, Կ. Դանիելյանը, Լևոն Նարիմանյանը, Վահան Սահակյանը, Վիկտորյա Պետրոսյանը, Ծովինար Իսկանդարյանը, Վաչագան Սարգսյանը, ֆիզիկոսներ Ջ. Մարգարյանը (Մեծ շենից), Սուրեն Սաղյանը (Չափարից), Երվանդ Իսկանդարյանը և ուրիշներ:

Դպրոցը գործել է ավտովարորդների պատրաստման թեքումով: Դպրոցում եղել է երկու կահավորված, պահեստամասերով հարուստ ավտոդասարան: Ավտոդպրոցի ուսուցիչներ են աշխատել համապատասխան կրթություն ունեցող ուսուցիչներ (Ռազմիկ Իսկանդարյան և Ռադիկ Գրիգորյան): Ավտոդասարաններում սովորում էին 8-10-րդ դասարանների աշակերտները (տղաներ և աղջիկներ): Տարեվերջին նրանք հանձնում էին քննություններ և ստանում ավտովարորդի վկա-

յական: Ավտովարորդի դասընթացները կազմակերպվում և քննություններն ընդունվում էին շրջանային և մարզային ԴՈՍԱԱՖԻ համապատասխան մասնագետներից կազմված հատուկ հանձնաժողովի կողմից:

Միջնակարգ դպրոցին կից գործել է նաև Մարտակերտի շրջանային թիվ 120 ՊՏՈՒ-ի Հաթերքի մասնաճյուղը՝ 2-4 դասարանների կազմով: Ընդունվում էին 8-րդ դասարանների շրջանավարտները, որոնք ավարտելուց ստանում էին միջնակարգի ատեստատ և համապատասխան մասնագիտություն (տրակտորիստի, վարորդի, ծեփագործի, ծխախոտագործի և այլն): ՊՏՈՒ-ի Հաթերքի մասնաճյուղի տնօրեններ (ավագ վարպետներ) են աշխատել Անուշավան Նարիմանյանը, Ռոբերտ Ավանեսյանը, Աշոտ Իսկանդարյանը: Քննություններն ընդունվում էին շրջանային թիվ 120 ՊՏՈՒ-ի հանձնաժողովի կողմից: Դպրոցը տարեկան շրջանային ու մարզային ՊՏՈՒ-ներին էր ուղարկում 8-րդ դասարանների շրջանավարտներից պլանով նախատեսված 15-20 հոգու:

Արցախյան գոյամարտին ակտիվ մասնակցություն ունեցան դպրոցի նախկին սաները (200), որոնցից 57 քաջորդիներ (այդ թվում դպրոցի աշխարհագրության ուսուցիչ, փոխտնօրեն, ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, հրամանատար, ավագ լեյտենանտ Բարմեն Գրիգորյանը) զոհվեցին: Այժմ դպրոցը կրում է նրա անունը: Գյուղը 57 հերոս նահատակների հիշատակը հավերժացնող հոյակապ հուշահամալիր է կանգնեցրել: Դպրոցի ուսուցչական կոլեկտիվը շարունակում է սովորողներին դաստիարակել հայրենասիրության ոգով, Արցախ աշխարհի համար իրենց կյանքը զոհաբերած 57 հերոս նահատակների օրինակով:

Դպրոցի 1-ին հարկում ստեղծված է «Մահ իմացեալ անմահութիւն է» վահանակը՝ նվիրված գյուղի զոհված ազատամարտիկներին, պետականության անկյուն, «Արցախի հերոսները» վահանակը, որոնք նպաստում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Դպրոցի շենքը տիպային է, երկհարկանի, կառուցվել է 1962թ.: 2007թ. այն հիմնանորոգվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: Դպրոցի շենքը կահավորված է, ապահովված ժամանակակից տեխնիկական միջոցներով ու սարքավորումներով: Պարապմունքները տարվում են առարկայական կաբինետներում: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էին 290-ից ավելի աշակերտներ, դասավանդում 32 ուսուցիչներ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի ՀՀ հանրակրթական դպրոցների հետ: Ամուր է բանակ-դպրոց կապը:

Տարբեր ժամանակներում դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ե.Գրիգորյանը (1962-69թթ.), Վ.Աղաբեկյանը (1969-79թթ.), Վ.Պետրոսյանը (1979-83թթ.), Մ.Աղաջանյանը (1983-93թթ.), Ս.Բաղրյանը (1993-94թթ.), Զ.Իսկանդարյանը (1994-2014թթ.), Ն.Մակարյանը՝ 2014թ.-ից առ այսօր:

22. Զարդախաչի հիմնական դպրոց: 1988թ. Զարդախաչի 8-ամյա դպրոցում սովորում էր 28 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ: 1992թ. գյուղը բռնագրավվեց ադրբեջանցիների կողմից, ավերվեցին ու հրկիզվեցին բնակելի տներն ու շենքերը, այդ թվում նաև դպրոցի շենքը:

1993-94 ուս.տարում ազատագրված գյուղում վերստին բացվեց դպրոցը՝ բնակելի տան հարկի տակ:

1996-97 ուս.տարում ուսումնական պարապմունքները սկսեցին տարվել դպրոցի վերանորոգված շենքում: Աշակերտների թիվը հասնում էր 35-ի: 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 17 աշակերտ, իսկ 2013-2015թթ.՝ 24 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչ:

1993թ.-ից առ այսօր Զարդախաչի Գ.Գասպարյանի անվան հիմնական դպրոցի տնօրենն է Կ.Ոսկանյանը:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է շրջանի դպրոցների ու ԼՂՀ ՊԲ զորամասերի հետ:

23. Զագլիկի միջնակարգ դպրոցի տնօրեն Նիկոլայ Պետրոսյանը իր հուշերում[375] պատմում է, որ 1968թ.-ից Զագլիկ գյուղում գործել է տարրական դպրոց: Գյուղի երեխաները ուսումը շարունակել են հարևան Հաթերք գյուղի միջնակարգ դպրոցում:

1988թ. շահագործման հանձնվեց Զագլիկի 8-ամյա, այնուհետև միջնակարգ դպրոցի շենքը: Տնօրեն նշանակվեց Սամվել Պետրոսյանը:

Ըստ դպրոցի ներկայիս տնօրեն Ս.Հարությունյանի ներկայացրած տվյալների, դպրոցը հիմնանորոգվել է 2011-2012 ուս.տարում: Ներկայումս դպրոց են հաճախում 64 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ, իսկ 2016թ. սեպտեմբերի 1-ից՝ 42 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: Դպրոցում գործում է նաև նախապատրաստական խումբ՝ 14 երեխաների ընդգրկմամբ:

Դպրոցը համագործակցում է ՀՀ և ԼՂՀ մի շարք հանրակրթական դպրոցների, զինված ուժերի ստորաբաժանումների հետ:

24. Չափարի միջնակարգ դպրոց: Չափար գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի 80-90-ական թվականներին: Գյուղի առաջին ուսուցիչը եղել է Սարգիս վարժապետը, որը մինչև 1913թ. դասավանդել է մասնավոր տներում:

1932թ. կառուցվել է գյուղի 4-ամյա դպրոցը: 1937թ.-ին այն վերածվել է 7-ամյակի:

1955թ. դպրոցին կից կառուցվել է նոր մասնաշենք, և 1956-57 ուս.տարվանից գյուղում գործել է միջնակարգ դպրոց:

1960-ական թվականներին դպրոցում սովորում էին 250-270 աշակերտներ:

1992թ. դպրոցում աշակերտների թիվը հասնում էր 96-ի, իսկ 1993-94 ուս. տարում դպրոց էր հաճախում 45 աշակերտ:

2010թ. աշակերտների թիվը նվազեց և հասավ 34-ի:

2014թ. Չափարի մինակարգ դպրոցի շրջանավարտ Վարուժան Գրիգորյանի նախաձեռնությամբ կառուցվել է նոր դպրոցական շենք, որտեղ սովորում էին 64 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ:

25. Գետավանի միջնակարգ դպրոց: Գետավան գյուղում առաջին դպրոցը (տարրական) բացվել է 1958թ.: Վարիչն էր Ա.Օհանջանյանը: 1958-1960թթ. դպրոցում սովորում էր 58 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչ, իսկ 1969-1970թթ.՝ 96 աշակերտ, 15 ուսուցիչ: 1988թ. դպրոցը դարձավ 8-ամյա՝ 187 աշակերտներով, 26 ուսուցիչներով: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ս. Միքայելյանը, Ս. Մարտիրոսյանը, Ն. Ասրյանը, Էլ.Հարությունյանը:

1992թ. հունիսի 4-ին գյուղի բնակիչները բռնագաղթվել են, ուսումնական պարապմունքները անց են կացվել Ստեփանակերտի դպրոցներում: 1993թ. գյուղի ազատագրումից հետո գետավանցիները վերադառնում են հայրենի գյուղ, վարաբացում դպրոցը և շարունակում ուսումնական պարապմունքները:

Դպրոցի տնօրեններ Դավիթ Շիրինյանի (1997-2004թթ.) և Ռ.Գրիգորյանի (2004թ.-ից առ այսօր) օրոք դպրոցում պատշաճ մակարդակի վրա էին ուսումնադաստիարակչական աշխատանքները: Կրթօջախը ապահովված էր բարձրորակ մասնագետներով, ուսումնական և համակարգչային կաբինետներով: 2013-14 ուս.տարում դպրոցում սովորում էր 54, իսկ 2015-16 ուս.տարում՝ 86 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

Դպրոցը սետորեն համագործակցում է ԼՂՀ մի շարք հանրակրթական դպրոցների, զինված ուժերի ստորաբաժանումների հետ:

26. Վաղուհասի Գրիշա Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցում 1988-1992թթ. սովորում էին 122 աշակերտներ, դասավանդում 22 ուսուցիչներ: Այդ տարիներին դպրոցը ղեկավարել են Վ.Առաքելյանը, Դ.Գրիգորյանը, ներկայումս՝ Ա.Գրիգորյանը:

1992թ. հունիսի 4-ին գյուղի բնակիչները բռնագաղթվել են Ստեփանակերտ, որտեղ էլ գործել է դպրոցը 62 աշակերտներով:

1992թ. փետրվարի 12-ին գյուղի ազատագրումից հետո բնակիչները վերադառնում են հայրենի գյուղ և նոր ուսումնական տարվանից վերսկսվում են պարապմունքները: Մինչև 1992թ. ուսումնական պարապմունքները կազմակերպվում էին նախկին դպրոցական շենքում, 1993-1999թթ.՝ գյուղապետարանի շենքում, 1999-2011թթ.՝ նորակառույց ոչ տիպային շենքում, 2011թ.-ից առ այսօր՝ նորակառույց տիպային շենքում: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էին 180 աշակերտներ, դասավանդում 26 ուսուցիչներ:

2004թ.-ից դպրոցն ունի Խնկավանի երկկոմպլեկտ մասնաճյուղ, որտեղ սովորում է 12 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

27. Խնկավան գյուղի դպրոցը (այժմ մասնաճյուղ): Ըստ փաստագրական տվյալների, 1988-1992թթ. դպրոցը գործում էր միջնակարգի կարգավիճակով, որտեղ սովորում էր 126 աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ: Դպրոցի տնօրենն էր Գարիկ Հարությունյանը:

1992թ. գյուղի բնակիչները բռնի տեղահանվում են: Մի մասը տեղափոխվում է Ստեփանակերտ, որտեղ և կազմակերպվում են ուսումնական պարապմունքները: 1993թ., գյուղը ազատագրվելուց հետո, վերաբացվում է դպրոցը, որտեղ սովորում են 22 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 26 աշակերտ: 2014-2015 ուս.տարում աշակերտների թիվը նվազել է: Դպրոցը դարձել է Վաղուհասի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը:

28. Հարությունագոմերի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցը 1988թ. ուներ միջնակարգի կարգավիճակ՝ 140 աշակերտներով:

1992թ. գյուղը բռնի տեղահանվեց, ռմբակոծությունից ավերվեցին բնակելի տների մեծ մասը, դպրոցի շենքն ու այլ շինություններ: 1993թ. Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերի հետ միասին ազատագրվեց նաև Հարությունագոմերը: 1993թ. գյուղի աշակերտները ուսումնական պարապմունքները շարունակեցին հարևան՝ Վերին Հոռաթաղ գյուղի դպրոցում:

1993-94 ուս.տարում պարապմունքները վերսկսվեցին դպրոցին մոտ գտնվող սեփական տներից մեկում, 1994-95 ուս.տարում՝ դպրոցի կիսով չափ նորոգած շենքում:

1995-96 ուս.տարվանից դպրոցը ստացավ 8-ամյակի, 1998-99 ուս.տարվանից՝ միջնակարգի կարգավիճակ՝ 132 աշակերտներով:

2005թ. սկսվել են դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքները: 2011-12 ուս.տարվանից ուսումնական գործընթացը անց է կացվում դպրոցական նոր շենքում, որտեղ կանը լաբորատորիա, առարկայական և համակարգչային կաբինետներ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 74 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

Ամուր է դպրոց-բանակ համագործակցությունը, N զորամասի հետ անց են կացվում հետաքրքիր միջոցառումներ նվիրված ԼՂՀ անկախության, բանակի

կազմավորման, Հայրենյաց պաշտպանի օրերին, Մայիսյան եռատոնին և հիշարժան այլ օրերին: Դպրոցի աշակերտները հաճախակի ներկայանում են զորամաս, ծանոթանում զինվորական առօրյային և այլն:

29. Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցը բացվել է 1951թ.-ին՝ տարրականի կարգավիճակով: Մինչ այդ գյուղի երեխաները հաճախել են հարևան Հարությունագոմերի դպրոցը: Դպրոցի առաջին ուսուցիչ և վարիչ է աշխատել Աշխեն Սարգսյանը, այնուհետև Վարդուշ Անանյանը, Մակիչ Մակյանը:

1961թ.-ին դպրոցը դարձել է 8-ամյա: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Գրետա Համբարձումյանը, Արտեմ Սարգսյանը:

1972թ. գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք:

1989-90 ուս.տարում դպրոցը միջնակարգ էր, ուներ 146 աշակերտ, 22 ուսուցիչ:

1992թ. գյուղը տեղահանվեց: 1993թ. փետրվարին, գյուղի ազատագրումից հետո, Նաիրա Առստամյանի ջանքերով վերաբացվեց դպրոցը՝ 13 աշակերտով, 3 ուսուցիչներով:

2008թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների և Կանադայի Տորոնտո նահանգի հայկական համայնքի ներկայացուցիչների միջոցներով կառուցվել է բոլոր հարմարություններով տիպային դպրոցի շենք՝ նախատեսված 120 աշակերտի համար: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էին 90 աշակերտներ, դասավանդում 20 ուսուցիչներ: Դպրոցում գործում է նախադպրոցական խումբ՝ 12 աշակերտով:

30. Կոճողոտի Ա. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորել են 130-140 աշակերտներ, դասավանդել 26 ուսուցիչներ: Արցախյան պատերազմի ժամանակաշրջանում նվազեց թե աշակերտների և թե ուսուցիչների թիվը՝ պայմանավորված բնակչության բռնագաղթի հետ: Հետպատերազմյան շրջանում (1994-2004թթ.) դպրոցում սովորում էր 91 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

2004թ.-ին դպրոցը հիմնանորոգվել է, իսկ 2007թ.-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով կառուցվել է նոր դպրոցական շենք:

2014-45 ուս.տարում աշակերտների թիվը նվազեց և դարձավ 74:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս դպրոցների հետ, սերտ կապեր ունի զինվորական ստորաբաժանումների հետ:

31. Դրմբոնի Վ. Ջալալյանի անվան միջնակարգ դպրոցի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ գյուղը մինչև 1992թ. բռնագաղթն ունեցել է տիպային դպրոց, որը գյուղի բնակելի տների ու այլ շինությունների հետ միասին թալանվել ու ավերվել է թշնամու կողմից:

Գյուղի ազատագրումից հետո պարապմունքները կազմակերպվում են վաստակաշատ ուսուցիչ Կարո Ղալայանի սեփական տան հարկի տակ(1993-94 ուս.տարում):

2005թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (հովանավորներ, ֆրանսահայ բարերար Զարուհի Ջևելեկյան և Ֆրանսիայի «Հայ համայնք») գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք: Դպրոցը կահավորվել է «Սերժ Թովմասյան» (Ֆրանսիա) ընկերության կողմից: 2005-2006 ուս.տարվա սեպտեմբերի 1-ից առ այսօր դպրոցական պարապմունքները տարվում են դպրոցական նոր շենքում:

2013-14 ուս. տարվանից առ այսօր դպրոցում գործում է Մարտակերտ քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցին կից ազատ ոճի ընբշամարտի խմբակ:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 70 աշակերտ, դասավանդում 15 ուսուցիչ:

Դպրոցն ունի բարեկամական սերտ կապեր ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

32. Պողոսագոմերի Յուրի Առստամյանի անվան հիմնական դպրոցը 1988-1991թթ.-ին 8-ամյա էր, 1991թ.-ից՝ միջնակարգ:

1996թ. դպրոցը անվանակոչվել է նախկին սան, զոհված ազատամարտիկ Յուրի Առստամյանի անվամբ: 2004-2005 ուս.տարում դպրոցն ուներ 38 աշակերտ, 14 ուսուցիչ, իսկ 2013-2014 ուս.տարում՝ 34 աշակերտ, 14 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս դպրոցների հետ, սերտ կապեր ունի նաև ՊԲ ստորաբաժանումների հետ:

33. Չլդրանի միջնակարգ դպրոցի արխիվային նյութերից տեղեկանում ենք, որ գյուղի դպրոցը միջնակարգի կարգավիճակ է ստացել 1954թ.:

1988-1993թթ. դպրոցը ղեկավարել է վաստակաշատ մանկավարժ Արամայիս Առուշանյանը: Այդ տարիներին դպրոցին կից գործել է գիշերօթիկ, որտեղ սովորում էին նաև հարևան Կիչան, Դրմբոն, Պողոսագոմեր, Կոճողոտ գյուղերի աշակերտները: 1988-1990թթ. դպրոցում սովորում էր 200-250 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ, իսկ 2004-2005 ուս.տարում դպրոցն ուներ 92 աշակերտ, 18 ուսուցիչ:

1993-94 ուս.տարում, քանի որ դպրոցի շենքը հիմնահատակ ավերվել էր, պարապմունքները տարվում էին նախկին կոլտնտեսության վարչական շենքում: 1993-1995թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Գայանե Սարուխանյանը, իսկ 1995թ.-ից մինչև 2006թ.՝ Սուրեն Առաքելյանը, որը 2005թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի բարձր կոչման:

2002թ. շվեյցարահայ բարերար Դիգրան Իզմիրլյանի միջոցներով գյուղի նախկին դպրոցի տեղում կառուցվել է երկհարկանի դպրոցական նոր շենք:

2006թ. օգոստոսից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է 2002թ. «Տարվա լավագույն երիտասարդ ուսուցիչ» ճանաչված Դավիթ Լալայանը: Ըստ տնօրենի հաշվետվության տվյալների, 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 75 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ:

2013թ.-ից դպրոցին կից գործում է նախադպրոցական խումբ:

Ամուր հիմքերի վրա է դրված նաև դպրոց-բանակ կապը, համատեղ կազմակերպվում են ռազմահայրենասիրական միջոցառումներ, կատարվում փոխադարձ այցելություններ:

34. Կիչանի Կ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտները Արցախյան շարժման տարիներին թշնամու կողմից գյուղը ավերվելու հետևանքով, ուսում են ստացել Արցախի տարբեր դպրոցներում:

1992թ. Կիչանի ազատագրումից հետո գյուղի բնակչությունը վերադարձավ, վերսկսվեցին դպրոցական պարապմունքները: Դպրոցի տնօրեն Կարինե Ասրյանի մեզ տրամադրած նյութերի համաձայն, այդ տարիներին դպրոցն ուներ 28 աշակերտ, 2000-2004թթ.՝ 60: 2014-15 ուս.տարում դպրոցում սովորում էին 62 աշակերտներ, դասավանդում՝ 14 ուսուցիչներ:

Դպրոցը համագործակցում է Երևան քաղաքի Ռ. Միրոյանի անվան դպրոցի հետ: Ամուր հիմքերի վրա է նաև դպրոց-բանակ համագործակցությունը:

35. Առաջածորի միջնակարգ դպրոց: 1936թ. Առաջածորի յոթնամյա դպրոցը վերածվել է միջնակարգի: Մինչև անցած դարի 60-ական թվականները Առաջածորի դպրոց են հաճախել նաև հարևան Չլդրան, Ղազանչի, Կիչան, Քոլատակ գյու-

ղերի դպրոցականները:

Դպրոցական կյանքի ամենաեռուն շրջանը կարելի է համարել 1970-1990թթ.: Այդ ընթացքում դպրոցը ծեռք է բերել հռչակ: Ավելացել է աշակերտների թիվը (360), պարապմունքները կազմակերպվել են երկու հերթով: 1976թ.-ից ուսումնական պարապմունքները տարվել են նոր, հարմարավետ դպրոցական շենքում:

20-րդ դարի վերջին տասնամյակը ծանր եղավ ինչպես ամբողջ Արցախի, այնպես էլ գյուղի դպրոցի համար: Արցախյան պատերազմի ժամանակաշրջանում, հարկադրված որոշակի ընդմիջումից հետո, 1993թ. մարտին դպրոցը վերսկսել է աշխատանքները: Դպրոցը ղեկավարում էր Լ. Մնացականյանը:

2002թ. հոկտեմբերին դպրոցը նշել է հիմնադրման 100-ամյակը:

2004թ. տվյալներով՝ Առաջաձորի դպրոցում սովորում էր 108 աշակերտ: 2014-15 ուս.տարում դպրոցի աշակերտների թիվը 135 էր, դասավանդող ուսուցիչներինը՝ 24: Դպրոցը համագործակցում է Վանքի, Կիչանի, Չլդրանի դպրոցների հետ, կազմակերպվում են համատեղ դասալսումներ. օլիմպիադաներ և այլ բնույթի միջոցառումներ:

36. Շահմասուրի հիմնական դպրոցը տարրականի կարգավիճակով հիմնադրվել է 1923թ.: Տնօրենն էր 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Աբգար Գրիգորյանը:

1992թ. սեպտեմբերից մինչև 1993թ. փետրվարը դպրոցը փակվել է ռազմաճակատին մոտ լինելու պատճառով գյուղի բնակչությունը տարհանվելու հետևանքով: Դպրոցականների ուսումը կազմակերպվել է Արցախի տարբեր բնակավայրերի դպրոցներում:

1993թ. փետրվարին գյուղի բնակչությունը վերադարձել է և ուսումնական պարապմունքները վերսկսել մասնավոր տներում, քանի որ թշնամու կողմից հրթիռակոծության հետևանքով ավերվել էր նաև գյուղի դպրոցի շենքը:

Դպրոցի ներկայիս տնօրեն Արեգ Ավագյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 1988թ. Շահմասուրի տարրական դպրոցում սովորել են 22 աշակերտներ, դասավանդել 4 ուսուցիչներ: Դպրոցը ղեկավարել է Արշավիր Ավագյանը:

1990թ. դպրոցը վերակազմավորվել է Շահմասուրի 8-ամյա դպրոցի՝ 34 աշակերտներով, 7 ուսուցիչներով, 2006թ.՝ Շահմասուրի հիմնական դպրոցի՝ 27 աշակերտներով, 11 ուսուցիչներով:

2015թ. դպրոցում սովորել են 30 աշակերտներ, դասավանդել 14 ուսուցիչներ:

37. Վանքի Գ.Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցը 1986-2011թթ. ղեկավարել է վաստակաշատ մանկավարժ, տարվա լավագույն տնօրեն ճանաչված Ֆլորա Բաղրամյանը:

Վանքի միջնակարգ դպրոցի շենքը, որը կառուցվել է 1966թ., չէր համապատասխանում ժամանակի պահանջներին: Բարերար Լևոն Հայրապետյանի հովանավորությամբ 2005-2006թթ. կառուցվել է 300 աշակետների համար նախատեսված նոր, տիպային դպրոցական եռահարկ շենք: Ըստ դպրոցի տնօրենի տվյալների՝ 2007-2008 ուս.տարում դպրոցում սովորում էր 116 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 125 աշակերտ, 34 ուսուցիչ:

Ամուր է դպրոց-բանակ կապը, հաճախակի են կազմակերպվում համատեղ միջոցառումներ, արիության դասեր: 2008թ. դպրոցի թիմը մասնակցել է Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող «Հայ ասպետ» մրցույթին և գրավել 2-րդ տեղը: 2009թ. կազմակերպվել է «Հայրենյաց պաշտպան» մրցույթը շրջանի մի շարք գյուղերի դպրոցների միջև:

2000-2001 ուս.տարում շրջանում կազմակերպված «լավագույն ուսուցիչ» մր-

ցույթում հաղթող են ճանաչվել դպրոցի քիմիայի ուսուցիչ Ս.Բաղդասարյանը և մաթեմատիկայի ուսուցիչ Լ.Հակոբյանը:

38. Ծմակահողի Ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի ավան հիմնական դպրոցի տնօրեն Ս.Ավանեսյանի՝ մեզ տրամադրած տեղեկությունների[376] համաձայն, 1970-1989թթ. Ծմակահողի դպրոցը 7-ամյա էր, 1989թ. դարձավ 8-ամյա, 1995թ.՝ միջնակարգ, 2006թ.-ից առ այսօր՝ հիմնական: Տարբեր ժամանակներում դպրոցում սովորել են 50-ից ավելի աշակերտներ: 2012-2013 ուս.տարում աշակերտների թիվը 28 էր, դասավանդող ուսուցիչներինը՝ 14:

2015-2016 ուս.տարում դպրոցում սովորել է 24 աշակերտ, դասավանդել 12 ուսուցիչ: Դպրոցի շենքը բարեկարգ է, ունի կահավորված դասասենյակներ, համակարգչային կաբինետ: Դպրոցին կից գործում է մանկապարտեզ՝ հովանավորների միջոցներով:

Ամուր է դպրոց-բանակ համագործակցությունը: Դպրոցն ունի ռազմահայրենասիրական դաստարակության նշանակության համատեղ միջոցառումների պլան ՊԲ զորամիավորման հետ, պարբերաբար անցկացվում են արիության դասեր, կազմակերպվում փոխադարձ այցելություններ:

39. Գառնաքարի Ա.Մարտիրոսյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Ա.Զաքարյանի տեղեկությունների համաձայն՝ 1988թ. դպրոցը եղել է տարրական, վարիչն էր Օ.Սահակյանը:

1988-89 ուս.տարում դպրոցը դարձավ 8-ամյա:

1988թ.-ից մինչև 1995թ. հունվարը դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ա.Զաքարյանը, 1995թ. հունվարից մինչև 1996թ. սեպտեմբեր՝ Ս.Բաղդասարյանը: 1996թ. մինչև 2011թ. հունվար՝ Տ. Բալասանյանը, 2011թ. հունվարից առ այսօր այդ պաշտոնը զբաղեցնում է Ե.Ավանեսյանը:

2001-2004թթ. դպրոցը վերածվեց տարրականի և դարձավ Վանքի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ, իսկ 2004-2005 ուս.տարում նորից դարձավ 8-ամյա: Դպրոցում սովորում էր 26 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 24 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է հարևան գյուղերի դպրոցների հետ:

40. Քոլատակի միջնակարգ դպրոցում 1988-1991թթ. սովորում էին 126 աշակերտներ, դասավանդում 22 ուսուցիչներ:

Հետպատերազմյան շրջանում (1994-2000թթ.) դպրոցի աշակերտների քանակը նվազել է 52-ով:

Մինչև 1991թ դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Վ.Գաբրիելյանը, 1991-1995թթ.՝ Ա.Մաղաքելյանը, 1995-2011թթ.՝ Թ.Եսայանը: 2011թ. առ այսօր դպրոցի տնօրենն է Վ.Աղասյանը: 2006-2007 ուս.տարում դպրոցում սովորում էին 68 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: Իսկ 2013-2014 ուս.տարում, դպրոցն ուներ 86 աշակերտ, 28 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս դպրոցների հետ, սերտ կապեր ունի հաստատած նաև ՊԲ զորամիավորումների հետ:

41. Թբլղվի տարրական դպրոցի (մասնաճյուղ) տնօրենի պաշտոնում 1988-1994թթ. աշխատել է Շ.Իսրայելյանը, 1994թ.-ից առ այսօր՝ Ն.Իսրայելյանը: 2011թ. սեպտեմբերից դպրոցը ստացել է Քոլատակի միջնակարգ դպրոցի մասնաճյուղի կարգավիճակ: Դպրոցն ունի 11 աշակերտ, 4 ուսուցիչ:

2. Մարտունու վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.)

Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ջորիկ Ղուլյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության[377] տվյալների համաձայն, շրջանում գործել են 40 հանրակրթական դպրոցներ՝ 5 մասնաճյուղերով, որոնցից 21-ը՝ միջնակարգ, 1-ը՝ հոսքային, 13-ը՝ հիմնական, 363 դասարան համակազմով և 3509 սովորողներով: Դպրոցներում դասավանդել են 897 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարում շրջանում գործել են 39 հանրակրթական դպրոցներ:

Կրթության շրջանային բաժնի, դպրոցների տնօրենների կողմից մեզ տրամադրված փաստագրական նյութերի, «Լուսարար» թերթի տարբեր համարներում (2000-2015թթ.) տպագրված հոդվածների և այլ աղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել համառոտակի ներկայացնել շրջանի դպրոցների 1988-2016թթ. ընդհանուր բնութագիրը: Ի դեպ, նշենք, որ ոչ բոլոր դպրոցների տնօրեններն են ներկայացրել տվյալներ դպրոցի համառոտ պատմության մասին: Հեղինակներն իրենց հուշերի հիման վրա գրեցին բաց թողած դպրոցների պատմությունը: Ուստի կարող են լինել նաև որոշ բացթողումներ:

1.Մարտունու Ն. Ստեփանյանի անվան թիվ 1 միջնակարգ (հոսքային) դպրոցը շրջանի լավագույն դպրոցներից մեկն է: 1988-1990թթ. դպրոցում սովորում էին 252 աշակերտներ, դասավանդում 39 ուսուցիչներ:

1987-1992թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Պետրոսյանը, 1992-2011թթ.՝ Վ. Հայրապետյանը, 2011թ.-ից առ այսօր՝ Կ.Պողոսյանը:

Ս.Պետրոսյանը իր հուշերում պատմում է, որ Արցախյան պատերազմի տարիներին (1991-1993թթ.) սովորողների ու դասավանդողների քանակը դպրոցում խիստ նվազել է, սակայն հետագա տարիներին նորից վերականգնվել է թե դպրոցի նախկին վիճակը և թե աշակերտների, ուսուցիչների թվաքանակը: Դպրոցի աշակերտները ակտիվորեն մասնակցում են շրջանային, քաղաքային և հանրապետական օլիմպիադաներին ու տարբեր մրցույթներում, ցուցաբերում բարձր ցուցանիշներ: Ըստ տնօրենի հաշվետվությունների, 2005-2006 ուս.տարում դպրոցում սովորում էին 375 աշակերտներ, դասավանդում 32 ուսուցիչներ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 479 աշակերտ, 38 ուսուցիչ:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է ՀՀ և ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ, ամուր է նաև դպրոց-բանակ համագործակցությունը:

2. Մարտունու Մ. Մաշտոցի անվան թիվ 2 հիմնական դպրոցում 1989-90 ուս.տարում սովորում էին 426 աշակերտներ, դասավանդում 42 ուսուցիչներ: Դպրոցի տնօրեն Ն.Բաբայանը իր հուշերում պատմում է, որ Արցախյան պատերազմի տարիներին (1991-1993թթ.) նվազել էր դպրոցի թե աշակերտների և թե ուսուցիչների թիվը, և քանի որ դպրոցի շենքում տեղակայված էր ՊԲ գումարտակներից մեկը, ուսումնական գործընթացը կազմակերպվում էր բնակելի տան նկուղներում:

1993թ. ուսումնական տարվա սկզբին դպրոցը վերաբացվել է: Տնօրեն է նշանակվել Հ.Ավանեսյանը: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Հ.Գասպարյանը, Է.Մուսայելյանը, Ն.Բաբայանը, 2015թ.-ից առ այսօր՝ Մ.Ջիվանյանը: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 348 աշակերտ, դասավանդում 32 ուսուցիչ:

1997թ. դպրոցի շենքը հիմնանորոգվել է:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ, սերտ կապեր ունի ՊԲ ստորաբաժանումների հետ:

3. Սոսի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորում էր 112 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: Պատերազմի տարիներին նվազել է աշակերտների թիվը, սակայն պատերազմից հետո այն նորից համալրվել է: Ներկայումս դպրոցում սովորում են 136 աշակերտներ, դասավանդում 18 ուսուցիչներ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 185 աշակերտ, դասավանդում 28 ուսուցիչ:

2008թ.-ից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Մանուշ Վանյանը:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են շրջանային, քաղաքային և հանրապետական օլիմպիադաներին, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Ամուր է նաև դպրոց-բանակ կապը. դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ ստորաբաժանման հետ:

4. Մաճկալաշենի Ա. Մելքումյանի անվան միջնակարգ դպրոցը կրում է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր, դպրոցի շրջանավարտ Արմեն Մելքումյանի անունը:

Պատերազմից հետո դպրոցը նորոգվել է, 2002թ.-ին՝ հիմնանորոգվել:

2015-2016 ուս.տարում դպրոցում սովորել են 61 աշակերտներ, դասավանդել 16 ուսուցիչներ:

2013թ.-ից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Մանյա Ավանեսյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը, հաճախակի են կազմակերպվում համատեղ միջոցառումներ, արիության դասեր:

5. Նոր շենի Լ. Հուրունցի անվան միջնակարգ դպրոցում տարբեր ժամանակներում սովորել են 80-100 աշակերտներ: Ներկայումս դպրոցում սովորում են 52 աշակերտներ, դասավանդում 22 ուսուցիչներ:

Դպրոցի շենքը, որը կառուցվել է 1960թ., Արցախյան պատերազմի տարիներին մասնակի ավերվել է: Պատերազմից հետո այն վերանորոգվել է: 2015թ. նոյեմբերի 1-ից դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք՝ ժամանակակից բոլոր հարմարություններով: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 58 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

1989թ.-ից դպրոցն ունի միջնակարգի կարգավիճակ:

Դպրոցը տվել է հայտնի շրջանավարտներ, որոնցից են գրող-հրապարակախոս Լեոնիդ Հուրունցը, ՀՀ ժողովրդական արտիստ Սողոմոն Սեյրանյանը, ճանաչված այլ գործիչներ:

Դպրոցի սաներից 12-ը իրենց կյանքն են զոհաբերել Արցախի ազատագրման գործին:

6. Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցը 1936-1950թթ. եղել է 7-ամյա, 1950-1960թթ.՝ 8-ամյա, 1988թ.-ից առ այսօր՝միջնակարգ: 2014-2015 ուս.տարում դպրոց են հաճախել 94 աշակերտներ, դասավանդել 22 ուսուցիչներ: Դպրոցին կից գործում է մասնաճյուղ՝ 4 կոմպլեկտ դասարաններով, 14 աշակերտներով:

2006թ. առ այսօր դպրոցի տնօրենն է Էսիկո Հարությունյանը:

Դպրոցի շենքը կառուցվել է 1986թ., հիմնանորոգվել 2008թ.: 2014-2015

ուս.տարում դպրոցում սովորում էր 46 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ, սերտ կապեր ունի ՊԲ ստորաբաժանումների հետ:

7. Ծովատեղի հիմնական դպրոցում պահպանվող արխիվային տվյալների համաձայն՝ Վարանդայի մելիքության առաջին դպրոցը բացվել է Քոլիզում (Ծովատեղ գյուղի նախկին անվանումը)՝ 1873թ.-ին և ունեցել 21 աշակերտ: Հետագայում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց՝ 35 աշակերտով: 1925թ.-ին դպրոցը վերաբացվել է Սերգեյ Մելիք Փաշայանի կողմից և մինչև 1968թ. եղել 7-ամյա: Ծովատեղի դպրոցում ուսում էին ստանում նաև հարևան Հերհեր, Սխտորաշեն, Խերխան և այլ գյուղերի երեխաները: Դպրոցում որպես տնօրեններ աշխատել են Սերգեյ Վարժապետը, Միքայել Բեգլարյանը, Ամիր Մինասյանը, Զարմայր Հարությունյանը, Նշան Պետրոսյանը, Սարգիս Գրիգորյանը, Գալյա Փաշայանը: 1996թ.-ից դպրոցում աշակերտների քանակի նվազման պատճառով դպրոցը վերափոխվել է Հերհերի միջնակարգ դպրոցի մասնաճյուղի:

2000թ. սեպտեմբերից Ծովատեղի տարրական դպրոցի վարիչ է նշանակվել Ն.Հայրումյանը: 2003թ.-ից դպրոցը վերակազմավորվել է 8-ամյայի: 2014-2015թթ. դպրոցի տնօրեն է նշանակվել Գ. Աբրահամյանը:

2015-2016 ուս.տարում դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք: Դպրոցում ներկայումս սովորում են 34 աշակերտներ, դասավանդում 9 ուսուցիչներ:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը, հաճախակի են կազմակերպվում համատեղ միջոցառումներ, արիության դասեր:

8. Զարդանաշենի դպրոցը (մասնաճյուղ) 1943-1980թթ. եղել է 8-ամյա: Տնօրենի պաշտոնում այդ տարիներին աշխատել է Զ. Միրզոյանը, որը դպրոցը ղեկավարել է 33 տարի: Այդ տարիներին աշակերտների թվաքանակը հասնում էր 80-ի: Հետագա 4 տարիներին դպրոցի տնօրենն է եղել Ա.Բեգլարյանը:

1980թ. աշակերտների քանակի կտրուկ նվազման պատճառով դպրոցը փակվել է և 1980-81 ուս.տարում երեխաները հաճախել են Թաղավարդի դպրոցը:

1981թ. Զարդանաշենի դպրոցը վերաբացվում է տարրականի կարգավիճակով, վարիչ է նշանակվում Ֆ.Պողոսյանը:

1989թ. դպրոցը դարձավ 8-ամյա, տնօրեն նշանակվեց Ռ.Առստամյանը:

1997թ. դպրոցը նորից դարձավ տարրական և այդ կարգավիճակով գործեց մինչև 2009թ.: 2009թ. դպրոցը դարձավ Թաղավարդի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը, որտեղ սովորում էր 14 աշակերտ, դասավանդում 6 ուսուցիչ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 13 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

9. Ճարտարի Ազատամարտիկների անվան թիվ 1 հոսքային դպրոցում պահվող արխիվային տվյալների համաձայն՝ 1996թ. դպրոցը վերանվանվել է Ճարտարի Ազատամարտիկների միջնակարգ դպրոցի, իսկ 2009թ.-ից՝ Ճարտարի Ազատամարտիկների անվան թիվ 1 հոսքային դպրոցի: 1988թ. տնօրենի պաշտոնում աշխատել է Լեոնարդ Տոնյանը (1988-200թթ.), Օֆելյա Շահրամանյանը (2000-2007թթ.), Աիդա Հովհաննիսյանը (2007-2013թթ.), Լեոնարդ Տոնյանը (2013թ.-ից առ այսօր): Ըստ տնօրենի հաշվետվության տվյալների, 2007-2008 ուս.տարում դպրոցում սովորում էր 226 աշակերտ, իսկ 2015-2016 ուս.տարում՝ 309 աշակերտ, դասավանդում 28 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ, սերտ

կապեր ունի նաև ՊԲ զորամիավորումների հետ, կազմակերպվում են հայրենասիրական բնույթի համատեղ միջոցառումներ, փոխադարձ այցելություններ:

10. Ճարտարի Ա.Ավանեսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցը միջնակարգի կարգավիճակ է ստացել 1969թ.-ց և այդ կարգավիճակով գործել մինչև 2009թ.: 2015թ. դպրոցը վերանվանվել է Ճարտարի Ա.Ավանեսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի (Արցախյան ազատամարտի գյուղի առաջին նահատակ, դպրոցի շրջանավարտ Արա Ավանեսյանի անունով):

1976-1999թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Բաբկեն Սաֆարյանը՝ 1999-2007թթ., Պերճ Գասպարյանը՝ 2007-2012թթ., Հասմիկ Մայիսյանը՝ 2012թ.-ից առ այսօր, Հայկազ Բաղրյանը: 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 147 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ:

Դպրոցի շենքը կառուցվել է 2005թ., հիմնանորոգված է, շրջանավարտ Աշոտ Ջիվանյանի հովանավորությամբ կահավորվել են ուսումնական կաբինետները: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորել են 168 աշակերտներ, դասավանդել 22 ուսուցիչներ:

Դպրոցում պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, գլխավորապես ռազմահայրենասիրական բնույթի, որոնց մասնակցում են նաև շրջանում տեղակայված զորամիավորումների զինծառայողները:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

11. Ճարտարի Հ.Հարությունյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը կրում է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Հովիկ Հարությունյանի անունը:

2010թ.-ից դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք: Դպրոցում սովորում են 112 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 55 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

1975-1988թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Զ.Պետրոսյանը, 1999թ.-ից առ այսօր՝ Մ. Արզումանյանը:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են շրջանային, քաղաքային և հանրապետական օլիմպիադաներին, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Ամուր է նաև դպրոց-բանակ կապը. դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

12. Ճարտարի Ա.Հայրապետյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի տնօրենի տվյալներով՝ 1994-2000թթ. դպրոցում սովորում էին 96 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ: 2016թ. աշակերտների թիվը հասավ 128-ի, ուսուցիչներինը՝ 22-ի: 1998թ.-ից դպրոցը կրում է զոհված ազատամարտիկ, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Արամայիս Հայրապետյանի անունը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ, սերտ կապեր ունի նաև ՊԲ զորամիավորումների հետ:

13. Ճարտարի թիվ 5 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է Ճարտար քաղաքի Ներքին Ճարտար կոչվող տեղամասում, 2011թ.-ին, 110 աշակերտների և 33 ուսուցիչների ընդգրկմամբ: Դպրոցը կառուցվել է պետական միջոցներով:

2016-2017 ուս.տարում դպրոց է հաճախել 139 աշակերտ:

Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Սլավիկ Արզումանյանը:

Դպրոցը իր գործունեության ընթացքում ունեցել է հաջողություններ տարբեր

բնագավառներում: Հինգ տարվա ուսումնառության ընթացքում ունեցել է 20 շրջանավարտ, որից 18-ը ընդունվել են ԲՈՒՀ, նրանցից 2-ը՝ Պարույր Սարգսյանն ու Միեր Ավանեսյանը, բարձրագույն զինվորական կրթություն են ստանում:

2013-2014 ուս.տարում ասմունքի մրցույթում հաղթող է ճանաչվել 9-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Ղուկասյանը: Նա մասնակցել է սփյուռքահայության կողմից Շուշիում կազմակերպված ասմունքի 2-րդ համահայկական փառատոնին և զբաղեցրել մրցանակային տեղ: Նա 2015-2016 ուս.տարում ՀԵՊ առարկայից (ուսուցչուհի՝ Գայանե Գրիգորյան) շրջանային, մարզային փուլերում առաջնակարգ տեղ զբաղեցնելուց հետո մասնակցել է ՀՀ եզրափակիչ փուլին և արժանացել խրախուսանքի:

2014-16 և 2015-16 ուս.տարիներին Աննա Միրզոյանը պատմություն առարկայից (ուսուցչուհի՝ Գայանե Մաթևոսյան) օլիմպիադայի շրջանային և մարզային փուլերում առաջնակարգ տեղ զբաղեցնելուց հետո մասնակցել է ՀՀ եզրափակիչ փուլին և արժանացել խրախուսանքի: 2014-15 ուս.տարում «Կենգուրու» մրցույթում հաղթող է ճանաչվել Արսեն Պողոսյանը, իսկ 2015-16 ուս.տարում՝ Սևակ Բաղրյանը:

2015-16 ուս.տարում դպրոցը ստուգվել է ԼՂՀ պետական տեսչության կողմից: Արդյունքում «լավ» է գնահատվել Գայանե Գրիգորյանի (պատմության ուսուցչուհի), Գարունե Հայրապետյանի (քիմիայի ուսուցչուհի) և Գայանե Մաթևոսյանի (պատմության ուսուցչուհի) կողմից կազմակերպված բաց դասերը, ներդպրոցական միջոցառումները:

Գայանե Մաթևոսյանը 2004թ. «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի հանրապետական փուլում արժանացել է մրցանակի և պարգևատրվել ԿԳՆ կողմից, 2014թ. ԿԳ նախարարության կողմից նրան շնորհվել է 1-ին աստիճանի տարակարգ: Համագործակցում է «Մարտիկ», «Լուսայգ», «Լուսարար», «Ամարաս» թերթերի հետ: Առարկայական օլիմպիադայում իր սաների ցուցաբերած հաջողությունների համար պարգևատրվել է պատվոգրերով ԿԳ և սպորտի նախարարության, Մարտունու շրջվարչակազմի կողմից: Մեծ ավանդ ունի դպրոցում մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում:

Դպրոցում համատեղությամբ աշխատող ֆիզիկայի ուսուցչուհի Իրա Հայրապետյանին 2016թ. ԿԳ և սպորտի նախարարության կողմից շնորհվել է 1-ին աստիճանի տարակարգ:

Դպրոցի ուսուցիչների 97%-ը բարձրագույն կրթությամբ են: Բոլոր ուսուցիչները ատեստավորված են:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Բարձր հիմքերի վրա է դրված հայրենասիրական դաստիարակությունը: Դպրոցը սերտ կապեր ունի հաստատած տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Հաճախակի կազմակերպվում են հայրենասիրական բնույթի համատեղ միջոցառումներ, փոխադարձ այցելություններ:

14. Գիշու միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Ավանեսյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 1988-1990թթ. դպրոցում սովորում էին 300-ից ավելի աշակերտներ: Արցախյան պատերազմից հետո այդ թիվը նվազեց մինչև 228, ուսուցիչներինը՝ 34:

2009-2011թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ գյուղում կառուցվեց դպրոցական նոր շենք՝ բոլոր հարմարություններով:

1963-1992թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Վ.Անտոնյանը, 1992թ.-ից՝ Ա.Ավանեսյանը:

2016-2017 ուս. տարում դպրոց են հաճախել 178 աշակերտներ, դասավանդել 36 ուսուցիչներ:

Դպրոցում գործում է նախադպրոցական խումբ՝ 16 աշակերտներով:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ: 2009թ.-ից Գիշու միջնակարգ դպրոցը բարեկամական կապ ունի Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի հետ: Պարբերաբար փոխայցելություններ կազմակերպել, փոխադարձ դասալսումներ են կազմակերպում:

Ամուր է դպրոց-բանակ կապը, հաճախակի կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, արիության դասեր:

15. Խնուշինակի դպրոցը մինչև 1988թ. գործել է 8-ամյայի կարգավիճակով, 1991թ.-ից դարձել է միջնակարգ: 1985թ.-ց առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Ս.Հակոբյանը: Ըստ տնօրենի տվյալների, 2005-2006 ուս.տարում դպրոցում սովորում էր 127 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ, 2013-2014 ուս.տարում՝ 96 աշակերտ, 16 ուսուցիչ:

1991-2015թթ. դպրոցը տվել է 161 շրջանավարտ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ, սերտ կապեր ունի նաև ՊԲ զորամիավորումների հետ:

16. Հաղորտու հիմնական դպրոց: Անվանի մանկավարժ Նորայր Ավետիսյանի պաշտոնավարման շրջանում (1988-2000թթ.) Հաղորտու միջնակարգ դպրոցը (այժմ՝ հիմնական) շրջանում լավագույն դպրոցներից մեկն էր: Դպրոցում սովորում էին 145-150 աշակերտներ, դասավանդում 24 ուսուցիչներ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 26 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ: Պատշաճ մակարդակի վրա էր ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը: Վաստակաշատ մանկավարժի թողած լավագույն ավանդույթները շարունակվում են նաև հետագայում նրա որդու՝ Հունան Ավետիսյանի տնօրինության շրջանում (2001-2016թթ.):

Շրջանում Հաղորտու դպրոցը հայտնի է իր նշանավոր շրջանավարտներով: Նրանցից է Վիլեն Գրիգորյանը: 1996-1997 ուս.տարում նա ավարտել է Հաղորտու միջնակարգ դպրոցը:

2000թ. նվաճել է Հայաստանի Հանրապետության «Սանդա ուշու»-ի չեմպիոնի կոչումը:

2002թ. Օդեսայում կայացած միջազգային մրցույթում «Կարատե» մարզաձևում գրավել է մրցանակային 3 տեղեր, առաջին տեղի համար ստացել ոսկե մեդալ: Ընդհանուր առմամբ նվաճել է 11 մեդալ, որից 4-ը՝ ոսկե:

Դպրոցը համագործակցում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի հետ: 2009թ. Մեծ Մասրիկի դպրոցի ուսուցիչները այցելել են Հաղորտու միջնակարգ դպրոց, իսկ 2010թ. Հաղորտու դպրոցի ուսուցիչներն են այցելել Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց՝ համագործակցության և փորձի փոխանակման նպատակով:

Դպրոցը համագործակցում է ՊԲ N զորամասի հետ: Տարվա ընթացքում դպրոցականները մի քանի անգամ այցելում են զորամասի մշտական տեղակայման վայր, ծանոթանում զինծառայողներին առօրյային, շփվում զինվորների հետ:

Դպրոցը նորոգվել է 2004թ.:

Դպրոցը բարեկամական կապեր ունի ՀՀ և ԼՂՀ մի շարք դպրոցների հետ:

17. Հերհերի միջնակարգ դպրոց: Ֆրանսահայ բարերարներ Հրաչ և Էլիզաբեթ Սիսեռյանների հովանավորությամբ 2002թ. կառուցվել է դպրոցի նոր շենքը՝ ժամանակակից բոլոր հարմարություններով: Ըստ տնօրեն Ս. Գրիգորյանի տվյալների, 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 110 աշակերտ, 2014-2015 ուս.տարում՝ 78, դասավանդում 18 ուսուցիչներ: 2014թ. դպրոցի շենքը հիմնանորոգվել է:

1988-1997թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ե.Բաղիշյանը, 1997թ.-ից առ այսօր՝ Ս.Գրիգորյանը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ, սերտ կապեր ունի նաև ՊԲ զորամիավորումների հետ:

18. Վարանդայի դպրոցը հիմնվել է 2001թ.: 2001-2008թթ. եղել է Կաղարծու միջնակարգ դպրոցի մասնաճյուղը, 2008թ.-ից առ այսօր Հաղորտու միջնակարգ դպրոցի մասնաճյուղն է՝ 4 դասարան կոմպլեկտով: Դպրոցի տնօրենի պաշտոնում առ այսօր աշխատում է Ն.Ուլուբաբյանը: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 17 աշակերտ, դասավանդում 5 ուսուցիչ:

2012թ. դպրոցի շենքը վերանորոգվել է հայ կրթական հիմնարկության և բարերար Արփիկ Շատիկյանի դրամական միջոցներով:

19. Եմիշճանի Վ.Աբրահամյանի անվան հիմնական դպրոցը 1988-2006թթ. գործել է ութամյա դպրոցի կարգավիճակով: 2006թ. դպրոցը դարձել է 9-ամյա, որտեղ սովորում էին 37 աշակերտներ, դասավանդում՝ 13 ուսուցիչներ:

2015-2016 ուս.տարում դպրոց են հաճախել 22 աշակերտներ, դասավանդել 9 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Լ.Առաքելյանը (1984-1999թթ.), Լ.Սողոմոնյանը (1999-2004թթ.), Լ.Աբրահամյանը (2004թ.-ից առ այսօր):

2005թ. դպրոցը կրում է նախկին շրջանավարտ, զոհված ազատամարտիկ Վազգեն Աբրահամյանի անունը:

2008թ. պետական բյուջեի միջոցներով կառուցվել է դպրոցի նոր շենքը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

20. Մուշկապատի միջնակարգ դպրոցը գործում է 1985թ.-ից: 1988-1990թթ. դպրոցում սովորել են 84 աշակերտներ, դասավանդել 14 ուսուցիչներ: 2005-2006 ուս.տարում դպրոցում սովորում էին 69 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարում դպրոց են հաճախել 55 աշակերտներ, դասավանդել 12 ուսուցիչներ: 1988-1996թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Կ.Գրիգորյանը, 1996թ.-ից առ այսօր՝ Կ.Պետրոսյանը: Դպրոցը նորոգվել է 2005թ.: Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնացում են օլիմպիադաների, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Ամուր է դպրոց-բանակ կապը. դպրոցը ակտիվորեն համագործակցում է գյուղի մոտ տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

21. Թաղավարդի Աշոտ Գրաշու անվան միջնակարգ դպրոցի շենքը կառուցվել է 1984թ.: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Լ.Մուսայելյանը (1988-1999թթ.), Ս.Շահրամանյանը (1999-2006թթ.), Հ.Ալավերդյանը՝ 2006թ.-ից առ այսօր:

Ըստ դպրոցի տնօրենի տվյալների, 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 115 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 125 աշակերտ, 22 ուսուցիչ:

2015-2016 ուս.տարվանից դպրոցը Զարդանաշեն գյուղում ունի մասնաճյուղ: 2001թ.-ից դպրոցում գործում է նախադպրոցական խումբ:

Դպրոցը համագործակցում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի դպրոցների, ինչպես նաև շրջանի հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

22. Հացու հիմնական դպրոցը հիմնականի (9-ամյա) կարգավիճակով գործում է 2008-2009 ուս.տարվանից: 2010-2011 ուս.տարում Հացու դպրոցում սովորում էր 38 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում է 17 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

1988-2016թթ. Հացու դպրոցը ղեկավարել են Ն.Աբրահամյանը (1984-1992թթ.), Է.Ղահրամանյանը (1992-1996թթ.), Ա.Գրիգորյանը (1996թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ, սերտ կապեր ունի նաև ՊԲ զորամիավորումների հետ:

23. Աշանի միջնակարգ դպրոցում 1988թ. սովորել է 93 աշակերտ: Արցախյան պատերազմի տարիներին մեկ տարի դպրոցում պարապմունքներն ընդհատվեցին. դպրոցական շենքը ծառայում էր որպես գումարտակի շտաբ:

1998թ. Ամերիկայում գործող «Անիթա Հովսեփյան» հիմնադրամի ֆինանսական միջոցներով և ԼՂՀ կառավարության աջակցությամբ շահագործման հանձնվեց դպրոցի նորակառույց շենքը՝ անհրաժեշտ բոլոր հարմարություններով: 2005-2006 ուս.տարում դպրոցում սովորում էր 115 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարում՝ 88 աշակերտ, 20 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Լ.Հարությունյանը (1988-1992թթ.), Է.Բալայանը (1992-1995թթ.), Դ.Իշխանյանը (1995-2000թթ.), Մ.Շինդյանը (2000թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ: 1999թ.-ից սերտ համագործակցության մեջ է ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Գլենդերի «Վահան և Անույշ Շամլյաններ» վարժարանի հետ: Ամուր է նաև կապը ՊԲ զորամիավորումների հետ:

24. Թաղավարդ-Կալերի հիմնական դպրոցում 1988-1992թթ. սովորում էր 126 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ: Հետպատերազմյան շրջանում (1994-2004թթ.) նվազել է աշակերտների թվաքանակը (63): 2015-2016 ուս.տարում սովորում էր 51 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում 1988-1994թթ. աշխատել է Հ. Գաբրիելյանը, 1994թ.-ից առ այսօր՝ Մ.Սահակյանը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ, մասնավորապես Գեղարքունիքի մարզի Գեղամավանի միջնակարգ դպրոցների հետ:

Ամուր է նաև դպրոց-բանակ կապը. դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

25. Մյուրիշենի հիմնական դպրոցը 1962թ.-ից գործել է 8-ամյա դպրոցի կարգավիճակով: 1988-1992թթ. դպրոցում սովորում էր 134 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ, 1994-2004թթ.-ին՝ 30 աշակերտ, 12 ուսուցիչ: Իսկ ներկայումս այն գործում է հիմնական դպրոցի կարգավիճակով, որտեղ սովորում են 29 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ: Տնօրենի պաշտոնում աշխատում է Լ.Զաքարյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

26. Վազգենաշենի միջնակարգ դպրոցը գործում է 2001թ.-ից, սկզբում ոչ լրիվ միջնակագ դպրոցի, այնուհետև, 2002թ. սեպտեմբերի 1-ից՝ միջնակարգ դպրոցի կարգավիճակով: 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 64 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: 2012-2013 ուս.տարում պահպանվել է նույն քանակական կազմը, իսկ 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորել են 59 աշակերտներ, դասավանդել 12 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ռ.Պողոսյանը (2001-2004թթ.), Ս.Գրիգորյանը (2005-2012թթ.), Վ.Մեժլումյանը (2012թ.-ից առ այսօր):

Դպրոցի շենքը եռահարկ է, հիմնանորոգված:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնացում են օլիմպիադաների, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

27. Ջիվանիի միջնակարգ դպրոցը 2000-2001թթ. գործել է 8-ամյա դպրոցի կարգավիճակով՝ կցված Շեխերի միջնակարգ դպրոցին: 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 19 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ: 2009թ. դպրոցը ստացել է հիմնականի, 2014թ.-ին՝ միջնակարգի կարգավիճակ, որտեղ սովորում էին 38 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

2000-2001ուս.տարում դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Հ.Ղուլյանը, 2001-2006թթ.՝ Ա.Աբելյանը, 2006-2009թթ.՝ Օ.Ստեփանյանը, 2009թ.-ից առ այսօր՝ Ն.Հարությունյանը:

Դպրոցի շենքը նորակառույց է՝ հարմարավետ պայմաններով: Ներկայումս դպրոցում սովորում են 38 աշակերտներ, դասավանդում 10 ուսուցիչներ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջորագյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է նաև դպրոց-բանակ կապը:

28. Սպիտակաշենի միջնակարգ դպրոցը 1988թ. ուներ 8-ամյակի կարգավիճակ, որտեղ սովորում էին 65 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ: 1989թ. սեպտեմբերի 1-ից դպրոցը ստացել է միջնակարգի կարգավիճակ: 1988թ.-ից առ այսօր դպրոցը ղեկավարում է Շ.Հայրապետյանը: Տնօրենի հաշվետվության տվյալների համաձայն, 1988-1992թթ.-ին դպրոցում սովորում էր 98 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ, 2002-2006թթ.՝ 90 աշակերտ, 14 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի և ՀՀ Գավառի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցների հետ: Ներկայումս դպրոցում սովորում է 56 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Ամուր է նաև դպրոց-բանակ կապը. դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

29. Ավդուռի Ս. Սաֆարյանի անվան հիմնական դպրոցը Արցախյան շարժման տարիներին գործում էր 8-ամյա դպրոցի կարգավիճակով՝ 19 աշակերտների և 8 ուսուցիչների ընդգրկմամբ: 1992թ. մարտից մինչև 1993թ. հունվարը, պատերազմական իրավիճակով պայմանավորված, դպրոցում պարապմունքներն ընդհատվեցին. աշակերտները սովորում էին հարևան գյուղերի դպրոցներում: 1993թ. մարտից դպրոցական պարապմունքները վերսկսվեցին կիսավեր շենքում:

1989թ. սեպտեմբերի 1-ից դպրոցը սկսեց գործել նոր շենքում:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ռ.Պողոսյանը (1987-1999թթ.), Ռ.Գրիգորյանը (1999թ.-ից առ այսօր): 2004-2010թթ. 8-ամյա դպրոցում սովորում

էր 24 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում Ավդուռի հիմնական դպրոցում սովորում էին 18 աշակերտներ, դասավանդում 8 ուսուցիչներ: Դպրոցը համագործակցում է շրջանի Աշանի, Նոր շենի դպրոցների հետ:

30. Ննգու դպրոցը 1980-ական թվականներից գործել է միջնակարգի կարգավիճակով: Դպրոցում տարբեր տարիների սովորել են 100-150 աշակերտներ (1988-1990թթ.):

Դպրոցի տնօրենի պաշտոնում 1993թ.-ից առ այսօր աշխատում է Ն.Գրիգորյանը: Տնօրենի հաշվետվության տվյալների համաձայն, 2004-2010թթ., դպրոցում սովորում էր 56-60 աշակերտ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 38 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի և ՀՀ Գավառի թիվ 5 միջնակարգ դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

31. Կաղարծու միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորել են 112 աշակերտներ, դասավանդել 22 ուսուցիչներ: Հետպատերազմյան շրջանում՝ 1994-2004թթ. դպրոցում սովորում էր 86-90 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: Իսկ 2015-2016 ուս.տարում աշակերտների թիվը 36 է, ուսուցիչներինը՝ 12:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են օլիմպիադաների, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ, համատեղ կազմակերպվում են հայրենասիրական բնույթի միջոցառումներ, փոխայցելություններ:

32. Պառավաթումբի տարրական դպրոցում 2014-2015 ուս.տարում սովորում էր 12 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ: Դպրոցը Կաղարծու միջնակարգ դպրոցի մասնաճյուղն է:

33. Սարգսաշենի միջնակարգ դպրոց: 1961թ.-ից դարձել է 8-ամյա: Այդ նույն տարում կառուցվել է դպրոցի երկհարկանի շենքը: Դպրոցում սովորում էին 150 աշակերտներ, դասավանդում 26 ուսուցիչներ:

1991թ. դպրոցը դարձավ միջնակարգ և այդ կարգավիճակով գործեց մինչև 1995թ.: 1995-2004թթ. դպրոցը կրկին 8-ամյա էր: 2005թ.-ից նորից ստացավ միջնակարգի կարգավիճակ, որը պահպանվում է առ այսօր:

2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 59 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ: Դպրոցի տնօրեն Գ. Սարգսյանի նամակից[378] տեղեկանում ենք, որ դպրոցը տարբեր ժամանակներում ղեկավարել են Ե. Շահրամանյանը, Մ.Մովսեսյանը, Վ.Միրզոյանը, Վ.Դավթյանը, Ա.Արզումանյանը, Ժ.Ստեփանյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական մյուս դպրոցների հետ:

34. Խերխանի հիմնական դպրոցը 1960-ական թվականներին 8-ամյա էր և ուներ 170 աշակերտ: Այդ կարգավիճակով գործել է մինչև 1974թ., որից հետո աշակերտների քանակի կտրուկ անկման պատճառով վերածվել է տարրական դպրոցի, դարձել Ծովատեղի 8-ամյա դպրոցի մասնաճյուղը: 1984-1988թթ. դպրոցը, սովորողներ չլինելու պատճառով, փակվել է, 1988-1989 ուս.տարում վերաբացվել տարրականի կարգավիճակով:

2004թ. դպրոցի շենքը հիմնովին վերանորոգվել է Հայ կրթական հիմնարկության և բարերարներ Էդիկ և Սեդիկ Սիմոնյանների միջոցներով: Դպրոցում սովորում էր 13 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

2006-2007 ուս.տարում դպրոցը դարձավ հիմնական՝ 5 դասարան կոմպլեկտով, որտեղ սովորում էին 26 աշակերտներ: Ներկայումս դպրոցում սովորում են

16 աշակերտներ, դասավանդում 9 ուսուցիչներ:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ:

35. Քարահունջի հիմնական դպրոցի տնօրեն Ա.Լալայանի տեղեկությունների համաձայն՝ 1989-1990 ուս.տարվանից Քարահունջի հիմնական դպրոցը առանձնացել է Քերթի միջնակարգ դպրոցից՝ ստանալով միջնակարգի կարգավիճակ: Դպրոցում սովորում էին 53 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: Տնօրենն էր Ջ.Հայրապետյանը, որը պաշտոնավարել է մինչև 1994թ.: 1995-1996թթ. տնօրենի պաշտոնում աշխատել է Մ.Բեգլարյանը, 1996-1997թթ.-ին՝ Ջ.Ղահրամանյանը, 1997թ.-ից առ այսօր՝ Ա.Լալայանը:

2012-2013 ուս.տարվանից դպրոցի կարգավիճակը փոխվել է հիմնականի:

Դպրոցը համագործակցում է շրջանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղահովիտի թիվ 2 դպրոցների հետ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 18 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է նաև տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

36. Քերթի միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորում էին 150-ից ավելի աշակերտներ, դասավանդում 28 ուսուցիչներ: 1992-1994թթ. նվազել է թե աշակերտների և թե ուսուցիչների քանակը: 2004թ. տվյալներով՝ դպրոցում սովորում էր 112 աշակերտ, 2014-2015 ուս.տարում՝ 96 աշակերտ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2012թ.:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են օլիմպիադաների, տարաբնույթ մրցույթների ու միջոցառումների:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

37. Կարմիր շուկա ավանի միջնակարգ դպրոցը 1965թ. ուներ 8-ամյա դպրոցի կարգավիճակ, որտեղ սովորում էին 120 աշակերտներ, դասավանդում 10 ուսուցիչներ: Տարիների ընթացքում Կարմիր շուկա ավանը դարձավ բազմամարդ և 1970թ. շահագործման հանձնվեց դպրոցական նոր շենք՝ նախատեսված շուրջ 650 աշակերտների համար: Նույն տարում դպրոցը դարձավ միջնակարգ, տնօրեն նշանակվեց Ա.Հովսեփյանը, որը դպրոցը ղեկավարեց մինչև 1990թ.: 1991-2003թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Մ.Սահակյանը, 2003-2008թթ.՝ Ա.Ադամյանը, 2008թ.-ից առ այսօր՝ Է.Բաղասյանը:

2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էին 231 աշակերտներ, դասավանդում 28 ուսուցիչներ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2012թ.:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ: Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են օլիմպիադաների, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ, համատեղ կազմակերպվում են հայրենասիրական միջոցառումներ, փոխայցելություններ:

38. Մամնայի դպրոցը 1930թ.-ից գործել է տարրականի, այնուհետև հիմնականի կարգավիճակով: 2013թ. դպրոցը դարձել է Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Դ.Սահակյանը: Դպրոցում սովորում է 14 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

39. Շեխերի միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորում էր 54 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: 2012-2013 ուս.տարվա տվյալներով՝ աշակերտների թիվը 69 էր, ուսուցիչներինը՝ 23: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 72 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ:

Ներկայումս դպրոցի տնօրենն է Լ. Աղավելյանը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների ու ՊԲ զորամիավորումների հետ:

40. Բերդաշենի Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցը 1988-1990 թթ. ուներ 352 աշակերտ, 36 ուսուցիչ, իսկ 2004-2010թթ.՝ 283 աշակերտ, 26 ուսուցիչ: Աշակերտների քանակը նվազել է 2012-2016թթ.: Դպրոցում սովորում էր 209 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ: Դպրոցը հիմնանորոգվել է 2004թ.: Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների, տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

3. Հադրութի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.)

Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ Էդիկ Պետրոսյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության տվյալների(«Լուսարար», 2014թ., թիվ 22) համաձայն, շրջանում գործել են 18 միջնակարգ և 10 հիմնական դպրոցներ, 2 մասնաճյուղ՝ կցված Մարիամաձորի միջնակարգ և Թաղասեռի հիմնական դպրոցներին: Շրջանի հանրակրթական դպրոցներում սովորում են 1964 աշակերտներ, դասավանդում 544 ուսուցիչներ:

Փաստագրական նյութերի տվյալների հիման վրա ներկայացնենք շրջանում գործող դպրոցների ընդհանուր բնութագիրը:

1. Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ (հոսքային) դպրոցում 1991-1992 ուս.տարում սովորում էր 532 աշակերտ, դասավանդում 42 ուսուցիչ, 1992-1993 ուս.տարում՝ 300 աշակերտ, 34 ուսուցիչ: 2015թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով՝ դպրոցում սովորում են 550 աշակերտներ, դասավանդում 45 ուսուցիչներ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Գ.Պետրոսյանը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը. դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ, համատեղ կազմակերպվում են հայրենասիրական բնույթի միջոցառումներ, փոխայցելություններ[379]:

2. Դրախտիկի Վ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցը 1986թ.-ից գործել է միջնակարգի կարգավիճակով: 1988-1992թթ. դպրոցում սովորում էր 126 աշակերտ, 2004-2005 ուս.տարում՝ 71, դասավանդում 14 ուսուցիչ: 2015-2016 ուս.տարում դպրոցում գործում է 11 դասարան կոմպլեկտ, որտեղ սովորում են 82 աշակերտներ, դասավանդում 19 ուսուցիչներ:

1983թ.-ից դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ս.Ստեփանյանը (1983-1993թթ), Ա.Առուշանյանը (1993-1995թթ.), Ս.Ստեփանյանը (1995թ.-ից առ այսօր):

Դպրոցի շենքը նորակառույց է, տիպային, շահագործման է հանձնվել 2008թ. սեպտեմբերին:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ:

2016թ. հունվարից բարեկամական կապեր ունի Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հետ:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ, հաճախակի կազմակերպվում են փոխայցելություններ, անցկացվում հայրենասիրական դասեր:

3. Ազոխի միջնակարգ դպրոցը 1960թ.-ից գործել է 8-ամյակի, 1967թ.-ից՝ միջնակարգի կարգավիճակով:

1988-1990թթ. դպրոցում աշակերտների թիվը հասնում էր 226-ի: 2000-2005թթ. դպրոցում սովորում էր 111 աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էին 126 աշակերտներ, դասավանդում 28 ուսուցիչներ: 1998թ.-ից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Իլյա Պողոսյանը:

Դպրոցը բարեկամական կապերի մեջ է Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցի հետ: Ազոխի և Խնապատի միջնակարգ դպրոցների ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները հանդիպել են Խնապատում և Ազոխում: Հանդիպման ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ: 1997թ. դպրոցը բարեկամական կապ է հաստատել Լիբանանի հայկական դպրոցների հետ: Աշակերտները փոխանակվել են նկարներով և նամակներով:

1998-2015թթ. ժամանակահատվածում դպրոցում կազմակերպվել են արտադպրոցական և արտադասարանական տարաբնույթ միջոցառումներ և մրցույթներ:

2005թ. հոկտեմբերին դպրոցը պարգևատրվել է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի պատվոգրով՝ բաց տիպի պարզագույն մարզական համալիրների վերանորոգման և նորերի կառուցման աշխատանքները բարձր մակարդակով կատարելու համար:

2005թ. դեկտեմբերին դպրոցը պարգևատրվել է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի պատվոգրով՝ «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի «Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար: 2007թ. դեկտեմբերին դպրոցը պարգևատրվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի պատվոգրով՝ «Մեթոդական աշխատանքների լավագույն դրվածքի համար»:

Դպրոցի աշակերտ Արգինե Պետրոսյանը ճանաչվել է «Լավագույն աշակերտ-2007» մրցույթի հանրապետական փուլի հաղթող:

Ըստ դպրոցի տնօրենի տվյալների, դպրոցն ունեցել է 5 ոսկե, 1 արծաթե մեդալակիրներ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական, Լիբանանի հայկական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը:

4. 1988թ. **Տողի միջնակարգ դպրոցում** սովորում էր 452 աշակերտ, որից միայն 97 աշակերտ էր հայ: Դասավանդում էին 61 ուսուցիչ, որից 15-ը՝ հայ: Հայ դպրոցականներին որոշ առարկաներ (ռուսաց լեզու, ֆիզկուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն, անգլերեն, ադրբեջաներեն) դասավանդում էին ադրբեջանցիներ: Դպրոցի տնօրենն էր Նիյազ Ջահանգիրովը, ուսմասվարը՝ Վլադիկ Ղահրիյանը: 1988թ., Շարժումն սկսվելուց հետո, ելնելով ստեղծված իրավիճակից, երեխաների կյանքը ապահովագրելու նպատակով դպրոցական շենքը միջնորմով բաժանվեց երկու մասի: Հայկական բաժինը ղեկավարում էր տնօրե-

նի պաշտոնակատար՝ ուսմասվար Վ. Ղահրիյանը: Դպրոցի բակում հայ և ադրբեջանցի երեխաների ընդհարումը հակառակ ավարտ ունեցավ, հայի փոխարեն սպանվեց առաջին թուրք դպրոցականը: Երկու բաժնի դպրոցականները զրկվեցին դպրոցական շենքից: Հայ դպրոցականները պարապմունքները վարում էին ուսուցիչների, իսկ հետո մասնավոր տներում: Տնօրենի ջանքերով և կրթության շրջանային բաժնի աջակցությամբ ներգրավելով բարձր դասարանի աշակերտներին՝ գյուղի մանկապարտեզի շենքը համալրվեց դասասենյակներով, և պարապմունքներն անցկացվեցին մանկապարտեզի շենքում:

Դպրոցը միշտ էլ գործում էր, նույնիսկ պատերազմի տարիներին:

1990թ. սեպտեմբերի 1-ին հայկական բաժնի ուսուցիչները փակ գաղտնի քվեարկությամբ դպրոցի տնօրեն են ընտրում Վլադիկ Ղահրիյանին: Ներկա էր կրթության շրջանային բաժնի վարիչ Ա. Աբրահամյանը: Վ. Ղահրիյանը (01.01.1992թ. մինչև 01.09.1992թ.) ծառայել է Տողի ինքնապաշտպանական խմբում: ԼՂՀ ՊԲ-ի կազմավորումից՝ 01.09.1992թ.-ից մինչև 01.09.1994թ. պատերազմի ավարտը նրա շարքերում էր: Նշված ժամանակամիջոցում ժամանակավորապես դպրոցի տնօրեն է աշխատել մաթեմատիկայի ուսուցիչ Արկադյա Արզումանյանը, իսկ ուսմասվար՝ հայոց լեզվի ուսուցչուհի Նաիրա Միքայելյանը: Պատերազմի ավարտից հետո Վլադիկ Ղահրիյանը զորացրվում և անցնում է տնօրենի պարտականությունների կատարմանը: Ղեկավարում է մինչև հիմա:

Ըստ դպրոցի տնօրենի հաշվետվության տվյալների՝ 1996-2004թթ. դպրոցում սովորում էր 112 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 120 աշակերտ, 24 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2007թ.:

5. Տումու Ա.Աբրահամյանի անվան միջնակարդ դպրոցում 1988-1990թթ. սովորում էր 162 աշակերտ, դասավանդում 28 ուսուցիչ: 1994-2004թթ. դպրոցում սովորում էր 124 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ: 2013-2014 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում աշակերտների թիվը 122 էր, դասավանդող ուսուցիչներինը՝ 24: Դպրոցի տնօրենի պաշտոնում 2002թ.-ից առ այսօր աշխատում է Լ.Ավագյանը:

Դպրոցի շենքը կառուցվել է 1977թ., հիմնանորոգվել 2004թ.:

2014թ.-ից դպրոցը վերանվանվել է Տումու Ա.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի:

Դպրոցում գործում է մեկ նախադպրոցական խումբ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ: Բարեկամական կապեր ունի ՀՀ Վանաձորի պետական համալսարանի հետ:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ, հաճախակի կազմակերպվում են փոխայցելություններ, արիության դասեր:

6. Բանաձորի միջնակարգ դպրոցի ներկայիս տնօրեն Կ.Ավետիսյանը իր հուշերում[380] պատմում է, որ դպրոցը 1930-1940թթ. ունեցել է 450 աշակերտ:

Գյուղը ազերիներից ազատագրվեց 1993թ. օգոստոսին: Երեք տարվա դադարից հետո 1994թ. դպրոցը վերսկսեց իր գործունեությունը 9 աշակերտներով և 5 ուսուցիչներով: 2004-2005 ուս.տարում դպրոցում սովորում էր 26 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչ: Իսկ 2014-2015 ուս.տարում սովորում էր 32 աշակերտ:

Դպրոցի շենքը շահագործման է հանձնվել 1995թ., հիմնանորոգվել 2009թ.:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը: Դպրոցը ակտիվորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

7. Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի տնօրեն Բ.Դանիելյանի (դպրոցը ղեկավարել է շուրջ 40 տարի) ներկայացրած տվյալներով, 1960-ական թվականներին դպրոցում սովորում էր 420 աշակերտ: 1988-1990թթ.՝ 296 աշակերտ, 32 ուսուցիչ, իսկ 2004-2005 ուս.տարում՝ 242 աշակերտ, 28 ուսուցիչ:

2014-2015 ուս.տարվա տվյալներով, դպրոցում սովորել են 233 աշակերտ, դասավանդել 26 ուսուցիչներ (14 կոմպլեկտ-դասարաններում):

Դպրոցի շենքը կառուցվել է 1970թ., եռահարկ է, անհրաժեշտ բոլոր հարմարություններով:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ մյուս կրթօջախների հետ:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Հաճախակի կազմակերպվում են հայրենասիրական բնույթի միջոցառումներ, փոխայցելություններ, արիության դասեր:

8. Հին Թաղերի հիմնական դպրոցը գործում է 1927թ.-ից: Ուսումնական առաջին տարում դպրոցը ունեցել է 220 աշակերտ: 1988-1992թթ. դպրոցում սովորում էր 122 աշակերտ, հետպարտերազմյան շրջանում՝ 1994-2004թթ.-ին, 28 աշակերտ, դասավանդում էին 12 ուսուցիչներ: 2013-2014 ուս.տարում դպրոցն ուներ 22 աշակերտ, 9 ուսուցիչ: Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների հետ:

9. Ուխտաձորի Մ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում 1989-1990թթ. սովորել է 51 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ, 2000-2004թթ.՝ 76 աշակերտ, 18 ուսուցիչ, 2012-2014թթ.՝ 32 աշակերտ, 14 ուսուցիչ: 2014-2015 ուս.տարվանից դպրոցում գործում է նախապատրաստական խումբ, որտեղ ընդգրկված են 25 երեխա:

2002թ.-ից դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Ա.Արզումանյանը:

10. Մարիամաձորի Ն. Սայիյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1886թ.-ին, 1988թ.-ից առ այսօր գործում է միջնակարգի կարգավիճակով:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ս. Սեյրանյանը(1988-1991թթ.), Մ. Խաչատրյանը(1991-1993թթ. և 1994թ.-ից առ այսօր), Հ.Հարությունյանը(1993-1994թթ.): 1994-2004թթ. դպրոցում սովորում էր 55 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ, 2013-2014՝ 60 աշակերտ, 18 ուսուցիչ:

2004թ. դպրոցի շենքը վերանորոգվել է բարերարների միջոցներով:

Դպրոցում գործում է նախադպրոցական խումբ՝ 12 երեխաներով:

2013-2014 ուս.տարում դպրոցը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դպրոց» մրցույթում՝ դաստիարակչական աշխատանքների բարձր մակարդակի համար:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Հաճախակի կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, փոխայցելություններ, հայրենասիրության դասեր:

Մարիամաձորի միջնակարգ դպրոցն ունի Ծակուռhw6m մասնաճյուղ:

11. Առաքելի Ս. Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոցը 1989թ.-ից գործում է միջնակարգի կարգավիճակով: 1991թ. պատերազմական իրավիճակի պատճառով դպրոցը փակվեց և ոչ լրիվ միջնակարգի կարգավիճակով վերաբացվեց

1994թ., գյուղի ազատագրումից հետո: Այդ տարիներին գյուղի երեխաները հաճախում էին շրջանի տարբեր դպրոցներ:

1995թ. «Ֆրանս-Ղարաբաղ» կազմակերպության կողմից կառուցվել է ժամանակավոր դպրոցի շենք: Դպրոցական նոր, երկհարկանի շենքը կառուցվել է 2000թ.՝ պետական միջոցներով: Այդ տարում դպրոց են հաճախել 50-ից ավել աշակերտներ, դասավանդել 15 ուսուցիչներ:

2002թ. դպրոցը ստացավ միջնակարգի կարգավիճակ ու վերանվանվեց նախկին սան, Արցախյան ազատամարտի նահատակ Սլավիկ Սեյրանյանի անունով:

1998-2011թթ. դպրոցը ղեկավարել է Կ.Ալեքսանյանը, 2011թ.-ից առ այսօր՝ է.Փաթյանը:

Ներկայումս դպրոցում սովորում են 33 աշակերտներ, դասավանդում 20 ուսուցիչներ:

Դպրոցը հիմնանորոգվել ու կահավորվել է համագյուղացի բարերար, դպրոցի նախկին սան Արարատ Հովհաննիսյանի միջոցներով:

12. Ծամձորի հիմնական դպրոցը: Ինչպես իր հուշերում[381] պատմում է դպրոցի ներկայիս տնօրեն Վ.Ղազարյանը, Արցախյան պատերազմի ժամանակ Ծամձոր գյուղը տարհանվել է: Հրթիռակոծության հետևանքով գյուղի բնակելի ու այլ շենքերի հետ միասին տուժել է նաև դպրոցի շենքը, ոչնչացվել է դպրոցի արխիվը:

Դպրոցը վերաբացվել է 1997թ., ներկայումս գործում է հիմնականի կարգավիճակով: 2014թ. տվյալներով՝ դպրոցում սովորել են 18 աշակերտներ, դասավանդել 10 ուսուցիչներ:

1997-2004թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Պ.Գրիգորյանը, 2005-2011թթ.՝ Ա.Հայրիյանը, 2011-2012թթ.՝ Գ.Գևորգյանը, 2012-2014թթ.՝ Վ.Ղազարյանը, 2014-2015թթ.՝ է.Եսայանը, 2015թ.-ից առ այսօր՝ Ռ.Սահակյանը:

Դպրոցը հիմնանորոգվել է 2001թ., ունի բավարար պայմաններ ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

13. Վարդաշատի հիմնական դպրոցի տնօրեն Ն.Շադյանի (1999թ.-ից առ այսօր) ներկայացրած տվյալների համաձայն[382], 1999-2008թթ. դպրոցում սովորել է 18 աշակերտ, դասավանդել 7 ուսուցիչ:

2008թ. դպրոցը ստացել է հիմնականի կարգավիճակ: Այդ տարում դպրոցում աշակերտների թիվը 16 էր, դասավանդող ուսուցիչներինը՝ 10:

2012թ. տվյալներով՝ Վարդաշատի հիմնական դպրոցում սովորել են 23 աշակերտներ, դասավանդել 14 ուսուցիչներ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 28 աշակերտ, 16 ուսուցիչ:

1990-1993թթ. դպրոցը ղեկավարել է Ս.Ավետիսյանը, 1993-1998թթ.՝ Բ.Սարգսյանը, 1998-1999թթ.՝ Ա.Բաբայանը:

14. Ակնաղբյուրի Վ.Ամիրջանյանի անվան միջնակարգ դպրոցում 2000-2001 ուս.տարում սովորում էր 92 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

2015-2016 ուս.տարում դպրոցում սովորել են 50 աշակերտներ, դասավանդել 20 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ա.Բաղդասարյանը (1988-1991թթ.), Ա.Արզումանյանը (1991-1993թթ.), Լ.Ասրիյանը (1993թ.-ից առ այսօր):

1996թ.-ից դպրոցը կրում է նախկին սան, Արցախյան ազատամարտի նահա-

տակ Վլադիմիր Ամիրջանյանի անունը:

2004թ. դպրոցը շրջանում ճանաչվել է որպես «Տարվա լավագույն դպրոց», իսկ հանրապետությունում՝ «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի հաղթող՝ դաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածքի համար:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ դպրոցների հետ, բարեկամական կապեր ունի ՀՀ էջմիածնի շրջանի Հայաթաղի և Արագածի միջնակարգ դպրոցների հետ:

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ հաճախակի կազմակերպվում են հայրենասիրական բնույթի համատեղ միջոցառումներ, փոխայցելություններ, արիության դասեր:

15. Արևշատի Մ.Զաքարյանի անվան միջնակարգ դպրոցը 1991թ. հրթիռակոծության հետևանքով հիմնահատակ ավերվել է: 1994թ. ուսումնական դասընթացը կազմակերպվել է վերակառուցված շինություններից մեկում: 2011թ. ԼՂՀ կառավարության օժանդակությամբ գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք: Իսկ դպրոցը կոչվել է Արցախյան գոյապայքարի նահատակ Մարատ Զաքարյանի անունով:

2012-2013 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորել են 39 աշակերտներ, դասավանդել 13 ուսուցիչներ: 2014-2015 ուս.տարում աշակերտների թիվը հասել է 35-ի, ուսուցիչներինը՝ 14-ի:

1988-1991թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Յու. Զաքարյանը: Վերաբացումից հետո 1994-2009թթ. դպրոցը ղեկավարել է Լ.Բաղալյանը, 2009թ.-ից առ այսօր՝ Ա.Բաղալյանը:

16. Այգեստանի (Քոչբեկի) Ա.Բալայանի անվան հիմնական դպրոցի աշակերտները 1992-1994թթ., գյուղի տարհանման պատճառով, տեղափոխվել և սովորում էին Հադրութի դպրոցներում: Գյուղում դպրոցը վերաբացվել ու իր գործունեությունն է վերսկսել 1994թ.:

Դպրոցը հիմնանորոգվել է 2008թ.: Նույն թվականից դպրոցը կոչվում է նախկին տնօրեն Ա.Բալայանի անունով:

2012թ. տվյալներով՝ դպրոցում գործում էր 7 դասարան -կոմպլեկտ՝ 38 աշակերտների ընդգրկմամբ: Մանկավարժական կազմը բաղկացած էր 20 ուսուցիչներից: 2013-2014 ուս.տարում դպրոցում սովորում էր 44 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Կ.Բաղդասարյանը (1988-1992թթ.), Ս.Հովհաննիսյանը (1999-2-1996թթ.), Ս.Բաղդասարյանը (1996-2002թթ.), Ա.Բաղդասարյանը (2002թ.-ից առ այսօր):

2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էին 39 աշակերտներ: Գործում էր նախադպրոցական խումբ՝ 12 երեխաներով:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

17. Առաջամուղի Զապել Եսայանի անվան հիմնական դպրոցը: Դպրոցի տնօրեն Կ.Մկրտչյանի տրամադրած նյութերի համաձայն՝ 2004թ. Ֆրանսահայ բարերար Շարլ Ղազարյանի հովանավորությամբ սահմանամերձ Արա-Լեռ ավանում կառուցվել է դպրոցական հարմարավետ շենք: Նույն թվականին դպրոցը սկսել է իր գործունեությունը՝ 25 աշակերտներով:

Սակայն, հաշվի առնելով աշխարհագրական դիրքն ու վտանգավորության

աստիճանը, 2007թ. Արա-Լեռի բնակչությունը տեղափոխվեց նորաստեղծ Առաջամուղ գյուղը: Նույն տարում Թուֆենկյան հիմնադրամի միջոցներով կառուցվեց տիպային դպրոցական շենք՝ անհրաժեշտ բոլոր հարմարություններով:

2015-2016 ուս.տարում սովորում էին 83 աշակերտներ, դասավանդում 20 ուսուցիչներ:

2013թ. դպրոցը թողարկել է իր առաջին 8 շրջանավարտները:

Դպրոցը սերտորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

18. Նորաշենի հիմնական դպրոցը 1988թ. գործել է 8-ամյայի կարգավիճակով: Հետագայում աշակերտների քանակի կտրուկ անկման պատճառով դպրոցը փակվել է ու վերաբացվել 2001թ.՝ տարրական (1-4-րդ դասարաններ) կարգավիճակով՝ 8 աշակերտի ընդգրկմամբ:

2004թ. դպրոցը դարձել է 8-ամյա՝ 8 դասարանով, որոնցում ընդգրկված էր 27 աշակերտ:

2006թ. Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով կառուցվել է դպրոցական շենք՝ 80 աշակերտի համար: Դպրոցը վերանորոգվել ու անհրաժեշտ սարքավորումներով ապահովվել է սփյուռքահայ բարերարների միջոցներով:

2012թ. տվյալներով՝ դպրոցում գործել է 5 դասարան-կոմպլեկտ, որտեղ սովորել են 22 աշակերտներ, դասավանդել 11 ուսուցիչներ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 32 աշակերտ, 12 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ա.Համզոյանը, Թ.Մելքոնյանը, Մ.Ղազարյանը:

19. Խանձաձորի Հ.Այվազյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Ա.Այվազյանի տվյալներով[383]՝ 1988-1991թթ. դպրոցը գործել է բարեկարգ, երկհարկանի շենքում: 1991թ. գյուղը տեղահանվել է, և դպրոցն իր գործունեությունը շարունակել է Հադրութի մանկապարտեզի շենքում:

Գյուղի վերակառուցման շրջանում, 1995-1996թթ., դպրոցը գործել է վագոն-տնակում: 1996թ. դեկտեմբերին շահագործման է հանձնվել դպրոցի նոր շենքը:

1998թ. դպրոցը անվանակոչվել է նախկին սան, Արցախյան գոյամարտի նահատակ, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ Համբարձում Այվազյանի անունով:

Եթե 1988-1990թթ. դպրոցում սովորել է 96 աշակերտ, ապա պատերազմի տարիներին (1992-1994թթ.) այդ թիվը կտրուկ նվազել է, հասնելով 18-ի: 2004թ. աշակերտների թիվը նորից աճել է, հասնելով 24-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 12-ի: 2014թ. տվյալներով՝ դպրոցում սովորել է 28 աշակերտներ, դասավանդել 14 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարում՝ 16 աշակերտ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Ս.Հովհաննիսյանը, Գ.Համբարձումյանը, Լ.Սաֆարյանը: Ներկայումս դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Ա.Այվազյանը:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ հաճախակի կազմակերպվում են հայրենասիրական բնույթի համատեղ միջոցառումներ, փոխայցելություններ, արիության դասեր:

20. Հակակվի հիմնական դպրոցում 1987-1990թթ. սովորում էր 22 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ: Արցախյան պատերազմի տարիներին որոշակի ժամանակով դպրոցը փակվել է և վերաբացվել 1993թ.:

2002թ. դպրոցի կարգավիճակը հիմնական էր: 2004-2010թթ. դպրոցում սովորում էր 35-40 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում սովորում էր 32 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչներ:

1990-1994թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Բախշյանը, 1994-2001թթ.՝ Գ.Շադյանը, 2001թ.-ից առ այսօր՝ Ն.Հայրիյանը:

Դպրոցը համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

21. Քյուրաթաղի միջնակարգ դպրոցում 1988-7990թթ. սովորում էր 86 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ: Արցախյան պատերազմի տարիներին նվազեց թե աշակերտների և թե ուսուցիչների քանակը: Ըստ տնօրեն Ա.Դավթյանի տվյալների, 2004թ. դպրոցում սովորել են 32 աշակերտներ, դասավանդել 14 ուսուցիչներ:

2008թ. դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք:

2014թ.-ից դպրոցի կարգավիճակը միջնակարգ է:

Ներկայումս դպրոցն ունի 58 աշակերտ, 19 ուսուցիչ: Գործում է մեկ նախադպրոցական խումբ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը:

22. Զրակուսի միջնակարգ դպրոցում պահպանվող արխիվային տվյալների համաձայն՝ 1988թ. դպրոցը գործել է 8-ամյայի կարգավիճակով: Միջնակարգի կարգավիճակ ստացել է 2005թ.: Այդ տարում դպրոցում սովորում էր 60 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 44 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Դպրոցի շենքը 2004թ. հիմնանորոգվել է բարերարների միջոցներով:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը սերտորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

23. Մոխրենիսի միջնակարգ դպրոցում 1989թ. սովորում էր 87 աշակերտ: Հետագայում, պատերազմի տարիներին, այդ թիվը նվազեց, դարձավ 16, սակայն պատերազմից հետո ավելացավ ու հասավ 68-ի: Ներկայումս դպրոցն ունի 38 աշակերտ, 14 ուսուցիչ: 1989թ. առ այսօր դպրոցը ղեկավարում է Լ.Ստեփանյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2003թ.:

Դպրոցը համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

24. Թաղուտի միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորում էր 56 աշակերտ, դասավանդում 13 ուսուցիչ: 2004-2010թթ. դպրոցում սովորում էր 52 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

2013-2014 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում էին 32 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ: Գործում էր մեկ նախադպրոցական խումբ՝ 14 երեխաների ընդգրկմամբ:

1988-2000թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Բ.Ներսիսյանը, 2000թ.-ից առ այսօր՝ Լ.Ներսիսյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

25. Կարմրակուճի դպրոցում 1988-1990թթ. սովորում էր 52 աշակերտ, 14 ուսուցիչ: 1994-2004թթ. դպրոցում սովորում էր 18 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ: Ներկայումս դպրոցը Թաղասեռի հիմնական դպրոցի մասնաճյուղն է, ունի 7 աշակերտ, 6 ուսուցիչ:

26. Թաղասեռի միջնակարգ դպրոցը մինչև 1980-ական թվականները գործել է 8-ամյայի կարգավիճակով՝ 98 աշակերտների և 16 ուսուցիչների ընդգրկմամբ: 1980-1990թթ. դպրոցում սովորել է 62 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ:

2012-2013 ուս.տարվա տվյալներով դպրոցում սովորել է 64 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ: Դպրոցը հիմնանորոգվել է 2004թ.: 2002թ.-ից դպրոցը ղեկավարում է Ե.Դավթյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

27. Առաքելի Ս.Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոցը 1988-1990թթ. ուներ 8-ամյայի կարգավիճակ: Դպրոցում սովորում էր 74 աշակերտ, դասավանդում 13 ուսուցիչ:

2000թ. դպրոցը ստացել է միջնակարգի կարգավիճակ: 2002թ.-ից դպրոցը կրթում է Արցախյան ազատամարտի նահատակ, համագյուղացի Սլավիկ Սեյրանյանի անունը:

2000թ. դպրոցը տեղափոխվել է նորակառույց երկհարկանի շենք: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2012թ.:

Վերջին տվյալների համաձայն՝ դպրոցում սովորում են 32 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Բ. Ամիրջանյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցում հատուկ ուշադրություն է հատկացվում երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Պարբերաբար անց են կացվում արիության դասեր, հանդիպումներ զինծառայողների հետ:

28. Խծաբերդի Վ. Գրիգորյանի անվան հիմնական դպրոցը հիմնականի կարգավիճակով գործում է 2004թ.-ից: Դպրոցում սովորում են 62 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ: 2006-2010թթ. դպրոցում սովորում էր 69աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 23 աշակերտ, 12 ուսուցիչ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է համագյուղացի բարերար Ա.Բալայանի հովանավորությամբ:

Դպրոցում ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը:

29. Նորաշենի հիմնական դպրոցը 2006թ.-ից գործում է հիմնականի կարգավիճակով: Տնօրեն Մ.Ղազարյանի տվյալներով՝ ներկայումս դպրոցում սովորում են 44 աշակերտներ, դասավանդում 13 ուսուցիչներ: 2008-2012 ուս.տարում դպրոցում սովորում էր 48 աշակերտ, իսկ 2015 ուս.տարում 36 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

2006-2007թթ. գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

4. Ասկերանի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.)

Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Շ.Աղաբալյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության տվյալների («Լուսարար», 2014թ., թիվ 22) համաձայն, շրջանում գործել են 34 հանրակրթական դպրոցներ, որից 22-ը՝ միջնակարգ, 12-ը՝ հիմնական և 4 մասնաճյուղեր: Շրջանի հանրակրթական դպրոցներում սովորում են 2820 աշակերտներ, դասավանդում 624 ուսուցիչներ:

Փաստագրական նյութերի տվյալների հիման վրա ներկայացնենք շրջանում գործող դպրոցների ընդհանուր բնութագիրը:

1. Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում, ըստ դպրոցի տնօրեն Մարելլա Ավանեսյանի ներկայացրած տվյալների, 1988-1990թթ. սովորել է 156 աշակերտ, դասավանդել 26 ուսուցիչ: Պատերազմի տարիներին նվազել է թե աշակերտների և թե ուսուցիչների քանակը (1991-1994թթ.՝ 86 աշակերտ, 16 ուսուցիչ): Սակայն հետպատերազմյան տարիներին նորից ավելացավ աշակերտների քանակը: 2004-2006թթ. դպրոցում սովորում էր 126, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 289 աշակերտ: Դպրոցում դասավանդում են 28 ուսուցիչներ: Դպրոցում գործում են երկու նախադպրոցական խմբեր՝ 20-ական երեխաներով:

2011-2012 ուս.տարում դպրոցը դարձավ ավագ-հոսքային:

Դպրոցի նորակառույց շենքը շահագործման է հանձնվել 2009թ.:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը սերտորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Պարբերաբար անց են կացվում արիության դասեր, հանդիպումներ զինծառայողների հետ, փոխայցելություններ:

2. Նորագյուղի Վ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն է. Վարդանյանի ներկայացրած տվյալների համաձայն, 2004-2012թթ. դպրոցում սովորում էր 220 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարում դպրոց են հաճախել 218 աշակերտներ: Դպրոցում դասավանդում են 28 ուսուցիչներ: Դպրոցն ունի նախադպրոցական խումբ՝ 26 երեխաների ընդգրկմամբ: Դպրոցի շենքը կառուցվել է 2012թ.: Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

3. Սարդարաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Նունե Սալիկյանի տվյալների համաձայն, դպրոցում 2004-2010թթ. սովորում էր 32-40 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 15 աշակերտ, 9 ուսուցիչ: Դպրոցը հիմնանորոգվել է 2000թ.:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս կրթօջախների հետ:

Դպրոցում ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը:

4. Հովսեփավանի հիմնական դպրոցի տնօրեն Ա.Գրիգորյանի մեզ տրամադրած նյութերից տեղեկանում ենք, որ Հովսեփավան գյուղը հիմնադրվել է 1989թ.՝ Յուրի Ջհանգիրյանի նախաձեռնությամբ: 1998թ. գյուղում բացվել է տարրական դպրոց:

2010թ. դպրոցը ստացավ հիմնականի կարգավիճակ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Ն.Աղաջանյանը, Ա.Էլիբեկյանը: 2012թ.-ից առ այսօր տնօրենի պաշտոնում աշխատում է Ա.Գրիգորյանը:

2013թ. ԼՂՀ կառավարության միջոցներով գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք՝ անհրաժեշտ բոլոր հարմարություններով: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

5. Իվանյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Գ.Ղուլյանը իր հաշվետվությունում նշում է, որ պատերազմական գոտուց տարհանված Խրամորթ գյուղի միջնակարգ դպրոցի երեխաները տեղափոխվեցին Իվանյան (Ասկերանի թիվ 2 թաղամաս) և 1992-1993 ուս.տարում կիսատ թողած ուսումը շարունակեցին կիսավեր շենքերից մեկում: Դպրոցում դասավանդում էին հարևան գյուղերի մանկավարժները:

1997թ. Խրամորթի աշակերտները վերադարձան հայրենի գյուղ, բայց Իվանյանի դպրոցում մնացին 110 աշակերտներ: Կազմավորվեց նոր դպրոց, որն անվանվեց Ասկերանի թիվ 2 դպրոց: Ձևավորվեց 17 հոգուց բաղկացած մանկավարժական կոլեկտիվ: Դպրոցը ղեկավարում էր Յու.Բալայանը:

2001թ. Ասկերանի թիվ 2 թաղամասը վերանվանվեց Իվանյանի համայնք:

2006թ. շահագործման հանձնվեց նորակառույց դպրոցի շենքը: Այդ տարում դպրոցի աշակերտների թիվը հասնում էր 164-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 30-ի:

2012-2013 ուս.տարում դպրոցը ստացավ ավագ դպրոցի կարգավիճակ:

2014-2015 ուս.տարում դպրոց է հաճախել 196 աշակերտ: Դպրոցում գործում են 13 դասարան-կոմպլեկտ և մեկ նախադպրոցական խումբ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցի աշակերտները ակտիվորեն մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարաբնույթ մրցույթների, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը սերտորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Պարբերաբար անց են կացվում արիության դասեր, հանդիպումներ զինծառայողների հետ, փոխայցելություններ:

6. Խնապատի Ա.Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցում 1988-1991թթ. սովորել է 192 աշակերտ, դասավանդել 28 ուսուցիչ: 1992-1993 ուս.տարում դպրոցի աշակերտները ստիպված եղան ուսումը շարունակել տարբեր վայրերում, քանի որ գյուղի բնակիչները տարհանվել էին:

1993թ. մարտին Խնապատի բնակիչները վերադարձան հայրենի գյուղ, և 1993-1994 ուս.տարվա պարապմունքները կազմակերպվեցին հարազատ դպրոցի շենքում:

1997թ. դպրոցը անվանակոչվեց «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, դպրոցի նախկին զինղեկ Արթուր Հայրապետյանի անվամբ:

Դպրոցը հիմնանորոգվել է 2009թ.՝ Սեդրակ Մարտեն հիմնադրամի ֆինանսավորմամբ: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 112 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Պարբերաբար կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, անց են կացվում արիության դասեր, հանդիպումներ զինծառայողների հետ, փոխայցելություններ:

7. Խանցքի Կ.Աբրահամյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն է.Աբրահամյանի 2013-2014 ուս.տարվա հաշվետվությունից տեղեկանում ենք, որ մինչև 1988թ. Խանցքի դպրոցը գործել է տարրականի, 1988թ.-ից՝ 8-ամյայի կարգավիճակով:

1988-1998թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Լ. Մկրտչյանը, 1998թ.-ից առ այսօր՝ է.Աբրահամյանը:

1998թ. դպրոցը կրում է Արցախյան ազատամարտի նահատակ, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Կառլեն Աբրահամյանի անունը: Դպրոցը հիմնանորոգվել է 2003թ.: 2006-2010թթ. դպրոցում սովորում էր 34-40 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 24 աշակերտ, 12 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը:

8. Պատարայի միջնակարգ դպրոցի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1988-1990թթ. դպրոցում սովորում էր 152 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ, 2004-2005 ուս.տարում՝ 105 աշակերտ, 16 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ա.Ավանեսյանը (1962-1990թթ.), Ս.Առստամյանը (1990-1996թթ.), Ռ.Մնացականյանը (1996-2006թթ.), Ա.Ջհանգիրյանը (2006թ.-ից առ այսօր):

2012-2013 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցն ուներ 108 աշակերտ, 18 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 112 աշակերտ, 20 ուսուցիչ:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարաբնույթ մրցույթների ու միջոցառումների, գրավում մրցանակային տեղեր:

Դպրոցում առանձնահատուկ տեղ է հատկացվում երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը սերտորեն համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ: Պարբերաբար անց են կացվում արիության դասեր, հանդիպումներ զինծառայողների հետ, կազմակերպվում համատեղ միջոցառումներ ու փոխայցելություններ:

9. Խրամորթի միջնակարգ դպրոցում մինչև 1990թ. սովորում էր 104 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ:

1991թ. սեպտեմբերին շահագործման հանձնվեց դպրոցական նոր շենքը:

1992-1993թթ. գյուղը տարհանվեց: Դպրոցի աշակերտները ստիպված էին ուսումը շարունակել տարբեր բնակավայրերում:

Խրամորթի ազատագրումից հետո բնակիչները վերադարձան հայրենի գյուղ: Դպրոցի շենքը, ինչպես նաև գյուղի բնակելի և այլ շինությունների մեծ մասը, ավերվել էր հրետակոծությունից: 1995թ. սկսվեցին շինարարական աշխատանքները: Վերակառուցվեց դպրոցի ուսումնական մասնաշենքը և վերսկսվեցին ուսումնական պարապմունքները հարազատ կրթօջախում: Հետագայում դպրոցի շենքը հիմնանորոգվել է:

1995-2010թ. դպրոցը ղեկավարել է Ա. Մկրտչյանը, 2012թ.-ից առ այսօր՝ Ա.Առաքելյանը:

2013-2014 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում են 61 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: Գործում է նախադպրոցական մեկ խումբ՝ 14 երեխաների ընդգրկմամբ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարած-

քում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

10. Խնածախի Ա.Ավագյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Գ. Արզումանյանի տվյալների համաձայն՝ դպրոցը միջնակարգի կարգավիճակով գործում է 1990թ.-ից:

2014-2015 ուս. տարում դպրոցում սովորել է 68 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ: Դպրոցում գործում էին նախադպրոցական խմբեր:

1994թ.-ից դպրոցը կրում է գյուղի ինքնապաշտպանության առաջին ջոկատի հրամանատար, Արցախյան գոյամարտի նահատակ Արմեն Ավագյանի անունը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

11. Այգեստանի միջնակարգ դպրոցի արխիվային տվյալներից[384] տեղեկանում ենք, որ 1988-1990 թթ. Այգեստանի (Բալուջա) միջնակարգ դպրոցը ունեցել է 166 աշակերտ: 2004-2010թթ. դպրոցում սովորում էր 182 աշակերտ, դասավանդում 28 ուսուցիչ:

2015թ. տվյալներով՝ դպրոցում սովորում էր 183 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ:

Դպրոցը տարբեր ժամանակներում ղեկավարել են Ա.Գրիգորյանը (1984-1996թթ.), Է.Գրիգորյանը (1996-1999թթ.), Վ.Վերդյանը (1999թ.-ից առ այսօր):

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են առարկայական օլիմպիադաների, գրավում մրցանակային տեղեր:

Դպրոցում մեծ ուշադրություն է հատկացվում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը: Պարբերաբար կազմակերպվում են արիության դասեր, հանդիպումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ, համատեղ միջոցառումներ ու փոխայցելություններ:

12. Խնձրիստանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Բալայանի մեզ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 1988-1990թթ. դպրոցում սովորում էին 150-ից ավելի աշակերտներ, հետպատերազմյան շրջանում՝ 1994-2004 թթ.՝ 132 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ: 2013-2014 ուս.տարում դպրոցում սովորել է 128 աշակերտ, դասավանդել 24 ուսուցիչ: Դպրոցն ունի երկկոմպլեկտ մասնաճյուղ՝ Հիլիսի դպրոցը:

1988-1996թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ա.Հովհաննիսյանը, 1996թ.-ից առ այսօր՝ Ա.Բալայանը: Դպրոցի շենքը կառուցվել է 2003թ.:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ կապը:

13. Աստղաշենի (Դաշբուլաղի) միջնակարգ դպրոցում 1998-1999թթ. սովորում էր 128 աշակերտ, հետպատերազմյան շրջանում՝ 1994-2004թթ.՝ 70, իսկ 2012-2013 ուս.տարում՝ 67 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ:

2008թ.-ից առ այսօր դպրոցը ղեկավարում է Ս.Գրիգորյանը:

Դպրոցի շենքը նորակառույց է, շահագործման է հանձնվել 2014թ.:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

14. Խաչենի (Սեյդիշենի) Ղ.Աղայանի անվան միջնակարգ դպրոցի արխիվային տվյալների ուսումնասիրությունից հայտնի է դառնում, որ 1988թ.-ից դպրոցը գործել է միջնակարգի կարգավիճակով, որտեղ սովորել են 156 աշակերտներ, դասավանդել 24 ուսուցիչներ: 2004-2010թթ. դպրոցում սովորում էին 45-50 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ, 2014-2015 ուս.տարում դպրոց է հաճախել 47 աշա-

կերտ, դասավանդել 20 ուսուցիչ:

2001թ. գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք՝ անհրաժեշտ բոլոր հարմարություններով:

2012թ.-ից առ այսօր դպրոցը ղեկավարում է Հ. Հայրապետյանը:

2012թ. դպրոցը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի արտադասարանական և «Արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք» անվանակարգում:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ: Բարեկամական կապեր ունի հաստատած ՀՀ Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի և Հ.Թումանյանի անվան թիվ 2 դպրոցի հետ:

Դպրոցը սերտորեն համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ: Պարբերաբար անց են կացվում արիության դասեր, հանդիպումներ զինծառայողների հետ, կազմակերպվում համատեղ միջոցառումներ ու փոխայցելություններ:

15. Դահրավի Հ.Խաչատրյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Ե.Գրիգորյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 1988-1990թթ. դպրոցում սովորել են 92 աշակերտներ, դասավանդել 16 ուսուցիչներ: Հետպատերազմյան շրջանում՝ 1994-2004թթ., 8-ամյա դպրոցում սովորում էր 24 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ: Իսկ 2014-2015 ուս. տարվա տվյալներով՝ հիմնական դպրոցում սովորել է 15 աշակերտ, դասավանդել 9 ուսուցիչ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Ժ.Աբրահամյանը (1983-1991թթ.), Մ.Գասպարյանը (1991-1993թթ.), Զ.Ղարայանը (1993-2003թթ.), Ե.Գրիգորյանը (2003թ.-ից առ այսօր):

Դպրոցը 2003թ. անվանակոչվել է համագյուղացի գրող, պատմավիպասան Հայկ Խաչատրյանի անունով:

2003թ. դպրոցի շենքը հիմնանորոգվել է Լոս Անջելեսի «Հայ կրթական հիմնարկություն» կազմակերպության և բարերար Սերգեյ Բաղդասարյանի հովանավորությամբ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

16. Բերքաձորի հիմնական դպրոցը 1988-1993թթ., պայմանավորված պատերազմական իրավիճակով, չի գործել: Դպրոցը վերաբացվել է 1993թ.՝ տարրականի կարգավիճակով: 2000թ. դպրոցը ստացել է 8-ամյայի կարգավիճակ, որտեղ սովորել է 44 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ:

2000թ. առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Կ.Ալեքսանյանը:

2010թ. կառուցվել է նոր դպրոցական շենք: Ներկայումս դպրոցի կարգավիճակը հիմնական է, սովորում է 30 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

17. Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի տնօրեն Գ.Մեժլումյանի ներկայացրած տվյալներով՝ 1988-1992թթ. դպրոցում սովորել են շուրջ 200 աշակերտներ, դասավանդել 28 ուսուցիչներ:

Արցախյան պատերազմի տարիներին գյուղի բնակչությունը բռնի տեղահանվել է: Աշակերտները ստիպված շարունակել են ուսումը տարբեր բնակավայրերում:

1992թ. գյուղի բնակչության մի ստվար մասը բնակեցվել է ազատագրված Մալիբեկլու գյուղում, որտեղ և հիմնադրվել է դպրոց: 1992-1994թ. այդ դպրոցում սո-

վորել է 38 աշակերտ, դասավանդել 10 ուսուցիչ:

Գյուղի ազատագրումից հետո, 1994թ. վերաբացվել է հարազատ գյուղի դպրոցը՝ 61 աշակերտներով, 10 ուսուցիչներով: Դպրոցի կիսավեր շենքը մասնակի վերանորոգվել է Հրազդանից ժամանած շինարարական ջոկատի կողմից:

2014-2015թթ. տվյալներով՝ դպրոցում սովորել է 70 աշակերտ:

2011թ.-ից դպրոցն ունի մասնաճյուղ Սառնաղբյուր գյուղում՝ 11 աշակերտների և 5 ուսուցիչների ընդգրկմամբ:

2011-2013թթ. դպրոցում գործել է նախադպրոցական խումբ:

Դպրոցը տարբեր տարիների ղեկավարել են Հ.Սարուխանյանը (1980-1988թթ.), Վ.Արամյանը (1989-2011թթ.), Գ.Մեժլումյանը (2012թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարբեր մրցույթների ու միջոցառումների:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ու համատեղ միջոցառումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ:

18. Դաշուշենի հիմնական դպրոցը 1988-1990թթ.-ին գործել է 8-ամյայի կարգավիճակով, որտեղ սովորել են 94 աշակերտներ, դասավանդել 18 ուսուցիչներ:

2014-2015 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորել է 18 աշակերտ, դասավանդել 10 ուսուցիչ: 1995թ. դպրոցի շենքը հիմնանորոգվել է:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

19. Շոշի Ս.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Հ.Հարությունյանի ներկայացրած հաշվետվության տվյալների համաձայն՝ 1988-1990թթ. դպրոցում սովորում էր 150-ից ավել աշակերտներ, դասավանդում 28 ուսուցիչներ: Հետպատերազմյան շրջանում՝ 1994-2004թթ., դպրոցում սովորում էր 85-90 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ: 2011-2012թթ. դպրոցում սովորել է 126 աշակերտ, դասավանդել 20 ուսուցիչ: Այդ ուսումնական տարում դպրոցը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք անվանակարգում: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 95 աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում 1992-1993 ուս.տարվանից առ այսօր աշխատում է Հ. Հարությունյանը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ բարեկամական կապեր ունի Երևան քաղաքի թիվ 39 դպրոցի հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ, արիության դասեր ու համատեղ միջոցառումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ:

20. Կարմիր գյուղի հիմնական դպրոցը 1988-1999թթ. ունեցել է միջնակարգի կարգավիճակ, սովորել են 85-90 աշակերտներ: Ներկայումս դպրոցի կարգավիճակը հիմնական է: Եթե 1994-2004թթ. դպրոցում սովորում էր 34-36 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչներ, ապա 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել է 64 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ: Դպրոցն ունի նախադպրոցական խումբ՝ 14 երեխաների ընդգրկմամբ: Դպրոցը հիմնանորոգվել է 2009թ.:

1988-1991թթ. դպրոցը ղեկավարել է Շ. Մարգարյանը, 1991-1995թթ.՝ Դ.Գրիգորյանը, 1995-1999թթ.՝ Մ.Մխիթարյանը, 1999-2008թթ.՝ Մ.Գաբրիելյանը, 2008թ.-ից առ այսօր՝ Ա.Ստեփանյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի հաստատած ԼՂՀ և ՀՀ շրջանների մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ համագործակցությունը:

21. Սզնեքի միջնակարգ դպրոցը աշակերտների քանակի կտրուկ անկման պատճառով 1982թ. փակվել է: Երեխաները հաճախել են հարևան Կարմիր գյուղի դպրոցը:

1988թ. գյուղում դպրոցը վերաբացվել է տարրականի կարգավիճակով (վարիչ՝ Ս.Միրզոյան): 1991թ. դպրոցը ստացել է ոչ լրիվ միջնակարգի, իսկ 2001թ.-ից՝ միջնակարգի կարգավիճակ՝ 32 աշակերտներով: 2004-2010թթ. դպրոցում սովորում էր 34-36 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել է 22 աշակերտ, դասավանդել 10 ուսուցիչ:

1990-1992թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Շ.Մարգարյանը, 1992-1997թթ.՝ Ա.Մարգարյանը, 1997թ.-ից առ այսօր՝ Մ. Սահակյանը: Դպրոցը հիմնանորոգվել է 2003թ. ԿՕՇ-ի կողմից:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

22. Սարուշենի միջնակարգ դպրոցի տնօրենի հաշվետվության տվյալներից տեղեկանում ենք, որ 1988-1992թթ. դպրոցում սովորում էր 158 աշակերտ, դասավանդում 29 ուսուցիչ: Հետպատերազմյան շրջանում դպրոցում սովորում էր 78-80 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էին 50 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում 2000թ.-ից առ այսօր աշխատում է Ս.Գասպարյանը:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2002թ.՝ Թեհրանի հայոց թեմի կողմից՝ ի հիշատակ ազգային բարերարներ Գևորգ և Հասմիկ Շիշմանյանների:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

23. Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրեն Ժ.Մարգարյանի (դպրոցը ղեկավարում է 1994թ.-ից առ այսօր) տվյալներով՝ 1988-1992թթ. դպրոցում սովորում էին 150-ից ավելի աշակերտներ, դասավանդում 24 ուսուցիչներ: 1994-2004թթ. դպրոցում սովորում էր 108 աշակերտ, դասավանդում 20 ուսուցիչ: Իսկ 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել է 86 աշակերտ, դասավանդել 18 ուսուցիչ:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 82 աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ: Դպրոցը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի «Ուսուցման կաբինետային համակարգ» անվանակարգում: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2000թ.:

Դպրոցը համագործակցում է շրջանի մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ:

24. Ավետարանոցի Ի.Աթայանի անվան միջնակարգ դպրոցում 1988-1992թթ.

սովորում էր 281 աշակերտ, դասավանդում 32 ուսուցիչ, 1994-2004թթ.՝ 2004 աշակերտ: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում են 168 աշակերտներ, դասավանդում 28 ուսուցիչներ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Գ.Պետրոսյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ շրջանների մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ, արիության դասեր ու համատեղ միջոցառումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ:

25. Ուղտասարի հիմնական դպրոցը հիմնադրվել է 2002-2003 ուս.տարում՝ 38 աշակերտներով և 14 ուսուցիչներով:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել է 32 աշակերտ, դասավանդել 15 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ն.Գևորգյանը, Գ.Սահակյանը, Ա.Ասրյանը, Վ.Հակոբջանյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

26. Լուսաձորի հիմնական դպրոցում 2004-2010թթ. սովորում էր 24 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ, իսկ 2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում է 22 աշակերտ, դասավանդում 11 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում տարբեր տարիների աշխատել են Ե.Սարգսյանը, Ռ.Ասծատրյանը, Է.Զաքարյանը, 2013թ.-ից առ այսօր՝ Ս.Մակվեցյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ:

27. Արմենակավանի մասնաճյուղ-դպրոցը: 2001թ. Խաչենի հովտում՝ ադրբեջանցիներից ազատագրված տարածքում, կառուցվեց նոր գյուղ, որը ի պատիվ Արցախյան ազատամարտի նվիրյալ Արմենակ Արմենակյանի անվանվեց Արմենակավան: 2001թ. հիմնադրվեց Արմենակավանի տարրական դպրոցը՝ 11 աշակերտներով(վարիչ՝ Լ.Ջհանգիրյան): Գյուղի զարգացմանը զուգահեռ դպրոցում ավելացավ աշակերտների քանակը: 2004-2005թթ. դպրոցում սովորում էր 17 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ: Դպրոցը ստացավ 8-ամյայի կարգավիճակ:

2007-2012թթ. դպրոցի կարգավիճակը հիմնական էր: Դպրոցում այդ տարիներին սովորել են 18-19 աշակերտներ, դասավանդել 7 ուսուցիչներ:

2012թ.-ից, աշակերտների քանակի նվազման պատճառով դպրոցը դարձավ Խրամորթի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը:

28. Սառնաղբյուրի մասնաճյուղ-դպրոցի տնօրեն Ն.Բեգլարյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 1988-1992թթ. գյուղում գործում էր 8-ամյա դպրոց: Ադրբեջանցիների կողմից գյուղը բռնագրավվելուց հետո բնակիչները ստիպված եղան լքել հայրենի եզերքը: Գյուղի երեխաները այդ ժամանակաընթացքում հաճախում էին տարբեր վայրերի դպրոցներ:

Ազատագրվելուց հետո գյուղը ամբողջովին ավերված ու քարուքանդ արված էր: Դպրոցը վերաբացվեց 1997-1998 ուս.տարում՝ որպես Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ:

Ներկայումս դպրոցի շենքը հիմնանորոգված է:

29. Զրաղացների մասնաճյուղ-դպրոցը մինչև 1991թ. գործել է տարրականի կարգավիճակով: 1991-1992 ուս.տարում դպրոցը ստացել է 8-ամյայի կարգավիճակ:

Դպրոցը տարբեր ժամանակներում ղեկավարել են Մ.Պետրոսյանը (1992-1997թթ.), Մ.Գրիգորյանը (1997-1999թթ.), Լ.Գրիգորյանը (1999թ.-ից առ այսօր):

Ներկայումս դպրոցը գործում է մասնաճյուղի կարգավիճակով:

Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը համագործակցում է հարևան գյուղերի դպրոցների հետ:

30. Հիլիսի մասնաճյուղ-դպրոցը 1988թ. գործել է տարրականի (քառամյա) կարգավիճակով, 2 դասարան կոմպլեկտով (վարիչ Ե.Բալայան): Դպրոցում սովորում էին 16 աշակերտներ, դասավանդում 8 ուսուցիչներ:

1993-1994 ուս.տարում դպրոցը դարձավ 8-ամյա: 1993-2009թթ. դպրոցում սովորողների թիվը հասնում էր 43-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 16-ի:

Սակայն, 2009թ.-ից, աշակերտների քանակի նվազման պատճառով, դպրոցը կրկին վերակազմավորվեց տարրականի: 2012թ.-ից դպրոցը դարձավ Խնձրիստանի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը՝ 2 դասարան կոմպլետով:

Ներկայումս դպրոցն ունի 11 աշակերտ, 4 ուսուցիչ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Մ.Ղուլյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Մեժլումյանը, Գ.Ղուլյանը:

31. Խրամորթի միջնակարգ դպրոցի Փառուխի մասնաճյուղ-դպրոցը 1988թ. գործել է տարրականի (1-4-րդ դասարաններ) կարգավիճակով:

Ադրբեջանցիների կողմից գյուղը բռնագրավվելուց հետո բնակիչները տարհանվել են, և գյուղի երեխաները այդ ժամանակաընթացքում հաճախել են տարբեր վայրերի դպրոցներ:

Ազատագրվելուց հետո գյուղի երկու դպրոցահասակ երեխաների ուսումը կազմակերպվում էր տնային պայմաններում:

2000թ. գյուղում կառուցվեց դպրոցի ոչ տիպային շենքը:

2000-2001ուս.տարում դպրոցը վերաբացվեց որպես Խրամորթի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ և այդ կարգավիճակով գործեց մինչև 2007թ.:

2007-2011թթ. դպրոցը գործել է տարրականի կարգավիճակով, 2014-2015 ուս.տարում՝ մասնաճյուղի, որտեղ սովորում էին 10 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

32. Սղնախի միջնակարգ դպրոցը 1990-ական թվականներին գործում էր միջնակարգի կարգավիճակով: Պատերազմի տարիներին (1991-1992թթ.) դպրոցը ժամանակավորապես դադարեցրեց իր գործունեությունը:

1992թ.՝ Շուշիի ազատագրումից հետո, դպրոցը սկսեց ապրել իր բնականոն կյանքով:

Դպրոցի տնօրենի պաշտոնում 2010թ.-ից առ այսօր աշխատում է Գ.Հովսեփյանը:

2000թ. դպրոցը հիմնանորոգվել է բարեգործներ Մելինե և Ջարեհ Իսախանյանների կողմից: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էր 44 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

33. Ծաղկաշատի Գ.Մեհրաբյանի անվան միջնակարգ դպրոցի կարգավիճակը 1991թ.-ից առ այսօր միջնակարգ է:

2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորել են 25 աշակերտներ,

դասավանդել 18 ուսուցիչներ: Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման զինծառայողների հետ:

34. Քռասնու միջնակարգ դպրոցում 1988-1990թթ. սովորում էր 21 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ:

1994-2000թթ. դպրոցում աշակերտների քանակը հասնում էր 68-ի: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորել են 31 աշակերտներ, դասավանդել՝ 14 ուսուցիչներ:

2006թ.-ից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Դ.Համբարձումյանը:

2006թ. գյուղում կառուցվել է դպրոցի տիպային շենք՝ նախատեսված 85 աշակերտի համար:

Դպրոցը բարեկամական կապեր ունի ԼՂՀ մի շարք հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

35. Հարավի միջնակարգ դպրոցը 1993թ-ից գործել է միջնակարգի կարգավիճակով:

2013-2014 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորել է 37 աշակերտ, դասավանդել 19 ուսուցիչ: 2015թ.-ից դպրոցն ունի նախադպրոցական խումբ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի հաստատած շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ ու համատեղ միջոցառումներ տարածքում տեղակայված ՊԲ զինծառայողների հետ:

36. Մոշխմհատի 8-ամյա դպրոցը: Մոշխմհատի դպրոցը փակվել է 1970թ., երեխաների փոքր քանակի պատճառով. գյուղի երեխաները հաճախել են հարևան Ակնաղբյուր գյուղի դպրոցը:

1994թ. գյուղում բացվել է 4-ամյա դպրոց, որը երեխաների թվի աճի շնորհիվ հետագայում ստացել է 8-ամյա դպրոցի կարգավիճակ: Սակայն 2009թ. աշակերտների քանակի նվազման պատճառով դպրոցը կրկին վերածվել է տարրականի, իսկ 2010թ.-ից դարձել Ակնաղբյուրի դպրոցի մասնաճյուղը: 2012թ. առ այսօր դպրոցը հանդիսանում Մադաթաշենի դպրոցի մասնաճյուղը, որտեղ սովորում է 14 աշակերտ, դասավանդում 5 ուսուցիչ:

2000-2001թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք:

5. Ստեփանակերտ քաղաքի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.)

Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՄՍ բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանի հաշվետվության[385] տվյալների համաձայն՝ 2014թ. մայրաքաղաքում գործել են 9 հիմնական, 1 միջնակարգ, 2 ավագ, 1 հատուկ (ֆիզմաթ) դպրոցներ, որտեղ սովորել են 7121 աշակերտներ, դասավանդել 986 ուսուցիչներ:

1. ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի գործունեությունը (1988-2016թթ): Դպրոցի տնօրեն, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Ս.Ներսիսյանի տվյալների համաձայն, ԵՊՀ-ին առընթ-

թեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի տնօրեն Գ.Առուշանյանի և ԼՂՀ մարզժողկրթության բաժնի վարիչ Վ.Հայրապետյանի ջանքերով 1989թ. սեպտեմբերին ՀՀ ԿԳ նախարարի հրամանով Ստեփանակերտում բացվեց ԵՊՀ-ին առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոցի մասնաճյուղը: Բացումից ի վեր 10 տարիների ընթացքում, հիմնական շենք չունենալու պատճառով, դպրոցը ստիպված էր գործել տարբեր շենքերում:

1999թ. շահագործման է հանձնվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի (Արգենտինայի հայկական համայնք, Հայաստանի և Արգենտինայի երեխաներին աջակցող հանձնախումբ, Գևորգ Վարդապետյան (Վարդապարոնյան), Կատալինա Մորիս Դե Սեֆելյան (Արգենտինա), Ալեն Մանուկյան(Ֆրանսիա), Կանադայի հայկական համայնք, Անդրանիկ Բերբերյան և ընտանիք (ԱՄՆ) միջոցներով կառուցված ԵՊՀ-ին առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի համալիրը, որը ներառում է ուսումնական մասնաշենքը՝ հարմարավետ ու լուսավոր դասասենյակներով, մարզադահլիճով, գրադարանով, ֆիզիկայի ու քիմիայի լաբորատորիաներով, համակարգչային կաբինետներով:

Գործունեության առաջին ուսումնական տարում դպրոցը կատարել է 9-11-րդ դասարանների աշակերտների ընդունելություն՝ կոմպլեկտավորելով 9 դասարան՝ 96 աշակերտի ընդգրկմամբ: Հաջորդ՝ 1990-91 ուս.տարում ընդունելությունը կատարվել է 7-րդ դասարանի, 1991-92 ուս.տարվանից՝ 6-րդ դասարանի բազայի վրա:

Իր գոյության 27 տարիների ընթացքում դպրոցը թողարկել է 987 շրջանավարտ: Նշենք անվանի մի քանի շրջանավարտների անունները.

1. Արայիկ Հարությունյան՝ ԼՂՀ վարչապետ
2. Արթուր Հարությունյան՝ ԼՂՀ Ֆինանսների փոխնախարար
3. Տիգրան Գաբրիելյան՝ ԼՂՀ էկոնոմիկայի փոխնախարար
4. Նորայր Ասլանյան՝ Ն զորամասի հրամանատար
5. Գրիգորի Սահակյան՝ Ն զորամասի հրամանատար, և շատ ուրիշներ:

Դպրոցի սաները՝ Սամվել Միրզախանյանը, Դավիթ Հարությունյանը, Հրաչ Բաբայանը, ուստարվա ընթացքում ակտիվորեն մասնակցելով “Высшая проба” միջռեգիոնալ օլիմպիադաների 1-ին և 2-րդ փուլերին, հրավիրվել են Մոսկվա՝ մասնակցելու հատուկ դասընթացների:

Զգալիորեն բարձրացել է ուսման որակը, ինչի մասին վկայում են շրջանավարտների պետական ավարտական ու միասնական քննություններում ցույց տված արդյունքները: Այսպես՝ վերջին 3 թողարկումների արդյունքում մասնաճյուղը տվել է 153 շրջանավարտ (այդ թվում՝ 3 մեդալակիր), որոնց մեծ մասը ընդունվել է ԼՂՀ, ՀՀ և նույնիսկ արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

2015-16 ուս.տարվա վիճակագրական տվյալներով՝ դպրոցն ունի 12 (7-12-րդ դասարաններ) դասարան-լրակազմ՝ 285 աշակերտով, 42 հոգուց բաղկացած մանկավարժական կազմ:

Դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են քաղաքային, հանրապետական և համահայկական օլիմպիադաների և այլ մրցույթների՝ հասնելով բացառիկ հաջողությունների:

Բարձր մակարդակի վրա է դպրոց-բանակ կապը: Բազմիցս կազամակերպվում են փոխադարձ այցելություններ, հայրենասիրական ու ռազմական բնույթի համատեղ միջոցառումներ:

2. Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցը մայրաքաղաքի առաջին հանրակրթարանն է, որի 90-ամյակը լրացել է 2015թ.: Թիվ 1 դպրոցից են ճյուղավորվել թթ. 1, 3, 5, 6, 9 դպրոցները[386]:

Մինչև Արցախյան պատերազմը դպրոցն աշակերտների քանակով ամենամեծն էր Ստեփանակերտում, սակայն պատերազմի տարիներին, քաղաքի բնակչության պակասելու հետ միասին, փոքրացավ նաև աշակերտների թիվը: Պատերազմական պայմանների թելադրանքով ու շենքային պայմաններից ելնելով՝ պարապմունքները կազմակերպվում էին տարբեր վայրերում, իսկ մի որոշ ժամանակով, երբ ռմբակոծվում ու հրթիռակոծվում էր քաղաքը, դրանք ընդհանրապես դադարեցվեցին:

1992թ. Շուշիի ազատագրումից հետո, ինչի շնորհիվ դադարեցվեց Ստեփանակերտի ռմբակոծումը, դպրոցում շարունակվեցին պարապմունքները:

Դպրոցի նախկին շենքում պարապմունքների կազմակերպումն անհնարին լինելու կապակցությամբ դպրոցին տրամադրվեց նախկին թիվ 11 ռուսական դպրոցի շենքը՝ նախատեսված 600 աշակերտի համար: Պարապմունքները կազմակերպվում էին երկհերթ: Տարեցտարի ավելանում էր աշակերտների քանակը և շենքային այդ սուղ պայմաններում դասապրոցեսի նորմալ կազամերպումը դառնում էր անհնար:

2008թ. «Փրկենք երեխաներին» կազմակերպության հայաստանյան գրասենյակը ձեռնամուխ եղավ դպրոցի մասնաշենքի կառուցմանը և այն ավարտին հասցրեց 2010թ.: 2012թ. ռուսաստանաբնակ հայազգի բարերար Նիկոլայ Սարկիսովի հովանավորությամբ դպրոցի բակում սկիզբ դրվեց ևս մեկ մասնաշենքի կառուցմանը, որը ավարտին հասցվեց 2014թ.:

Ներկայիս տնօրեն Ժ.Բալայանի տվյալների համաձայն՝ դպրոցը աշակերտների քանակով ամենամեծն է հանրապետությունում (2015-2016 ուս.տարում դպրոցի աշակերտների թիվը հասնում էր 1586-ի, իսկ նախադպրոցական 6 խմբերում ընդգրկված էին 5 տարեկան 185 երեխա):

Երկար տարիներ դպրոցը գործել է միջնակարգի կարգավիճակով: 2011-2012 ուս.տարվանից վերակազմավորվել է հիմնականի:

2005թ. դպրոցը ճանաչվել է տարվա լավագույն դպրոց:

3. Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Լ. Մարտիրոսյանի տվյալների համաձայն՝ 1938թ.-ից դպրոցը միջնակարգի կարգավիճակով գործել է մինչև 2010թ.: 2010թ. ստացել է հիմնականի կարգավիճակ:

1970-80-ական թվականներին դպրոցում աշակերտների թիվը գերազանցում էր 1000-ը, դասավանդող ուսուցիչներինը՝ 100-ը: Ներկայումս դպրոցն ունի շուրջ 850 աշակերտ, դասավանդում են շուրջ 80 ուսուցիչներ: Դպրոցում գործում են 4 նախադպրոցական խմբեր:

Դպրոցը 1994թ.-ից կրում է Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի (Բեկոր) անունը:

1981-1990թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս. Իսրայելյանը, 1990-1999թթ.՝ Գ.Հայրապետյանը, 1999-2002թթ.՝ Ա.Ներսիսյանը, 2000թ.-ից առ այսօր՝ Լ.Մարտիրոսյանը:

2007-2008 ուս.տարում դպրոցը ճանաչվել է հանրապետության, 2008-2009 ուս.տարում՝ Ստեփանակերտ քաղաքի լավագույն դպրոց:

Դպրոցի անվանի շրջանավարտներից են Սերժ Սարգսյանը (ՀՀ նախագահ), Ալբերտ Գևորգյանը (ՌԴ ներքին գործերի նախարարության պատ.աշխատող), մշակույթի գործիչներ Մարգո Բալասանյանը, Նաիրուհի Ալավերդյանը, Ժաննա

Հովսեփյանը, գիտնականներ Վանյա Ավանեսյանը, Արտյոմ Աբրահամյանը, Հրանտ Խաչատրյանը, լրագրող Մարսել Պետրոսյանը, գրող-հրապարակախոս Մաքսիմ Հովհաննիսյանը, տնտեսության և կառավարության պատասխանատու աշխատողներ Բենիկ Բախշյանը, Արարատ Դանիելյանը, Մաքսիմ Դանիելյանը, Վարդգես Բաղրյանը, Բորիս Առուշանյանը, բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը և ուրիշներ:

Շատ շրջանավարտներ ծառայում են ԼՂՀ ՊԲ-ում՝ Սամվել Կարապետյանը, Աշոտ Այդինյանը, Ստեփան Օհանջանյանը, Ռազմիկ Կարապետյանը, Արմեն Հարությունյանը, Մխիթար Ավշարյանը, Աշոտ Պողոսյանը և շատ ուրիշներ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ, մասնավորապես՝ Երևանի թիվ 188 դպրոցների, Աշոտ Բլեյան կրթահամալիրի հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի են կազմակերպվում համատեղ միջոցառումներ, հայրենասիրական դասեր:

Համատեղ մշակված և գործող պլանների համաձայն՝ դպրոցը սերտ համագործակցություն է ծավալել շեֆ զորամասերի հետ, նախկինում տանկային բրիգադի, այսօր հրաձգային գնդի հետ: Կազմակերպվում են արիության դասեր, տոնական և հանդիսավոր օրերին նվիրված համատեղ միջոցառումներ, դպրոցի զոհված շրջանավարտների հիշատակին նվիրված մի շարք համատեղ միջոցառումներ, զորամասի ստեղծման տարեդարձներին նվիրված համատեղ միջոցառումներ, դպրոցի 8-9-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ ռազմականացված միջոցառում, Ամանորին և Եռատոնին ծանրոցների առաքում և այլն:

4. Ստեփանակերտի Ա.Գրիբոյեդովի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ դպրոցը շուրջ կես դար գործել է որպես ռուսական դպրոց, իսկ 1993-2007թթ. ընդունել է նաև հայկական դասարաններ: 2008թ.-ից Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի ռուսական բաժինը լրիվությամբ տեղափոխվեց թիվ 3 հիմնական դպրոց:

Դպրոցի տնօրենի պաշտոնում տարբեր տարիների աշխատել են Հ.Ղուլյանը (1987-1992թթ.), Կ.Անդրյանը(1992-1994թթ.), Գ.Սահակյանը (1994-1998թթ.), Ս.Շահրամանյանը (1998-1999թթ.), Կ.Անդրյանը (1999-2006թթ.), Վ.Դավթյանը (2006-2008թթ.), Լ.Հովհաննիսյանը (2008թ.-ից առ այսօր):

2007 և 2014 թվականներին դպրոցը ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի տարվա լավագույն դպրոց՝ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են քաղաքային, հանրապետական և համահայկական օլիմպիադաների և այլ մրցույթների և գրանցում բարձր ցուցանիշներ:

Դպրոցի շատ աշակերտներ ԼՂՀ և ՀՀ եզրափակիչ առարկայական օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում ձեռք բերած նվաճումների համար բազմիցս արժանացել են տարբեր մրցանակների:

Այսօր էլ տարաբնույթ մրցույթներում հաղթողների շարքում են հ.3 միջնակարգ դպրոցի սաները: Աննկարագրելի է այն ուրախությունն ու հրճվանքը, որ ապրում են մանկավարժները, ում սաները մրցույթների ՀՀ եզրափակիչ փուլից վերադառնում են հաղթանակով՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներով:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը հպարտ է թողարկած շրջանավարտներով, ովքեր արհամարհել են ֆիզիկական մահը: Նրանք, զոհաբերելով իրենց

համար ամենաթանկը՝ կյանքը, կանգնած են եղել հայրենիքի ազատագրության համար մղվող պայքարի արյունահեղ կիզակետում: Նրանցից 2 ազատամարտիկ արժանացել են «Մարտական խաչ» 1-ին և 2-րդ աստիճանների շքանշանների:

Դպրոցի շրջանավարտ Յուրի Պողոսյանը արժանացել է ՀՀ և ԼՂՀ ազգային հերոսի կոչման:

Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ.3 միջնակարգ դպրոցն են ավարտել գիտության, կրթության և մշակույթի նշանավոր գործիչներ.

Զորի Բալայանը (գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ)

Անատոլի Թորոսյանը (ռազմածովային նավատորմի ծովակալ)

Մարատ Մուսայելյանը (ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար)

Արկադի Մանուչարովը (Արցախյան ազատագրական շարժման ակտիվիստ)

Հենրիխ Պողոսյանը (Արցախյան շարժման ակտիվիստ)

Աշոտ Հարությունյանը (պատմական գիտությունների դոկտոր)

Էլդար Հովսեփյանը (բժշկական գիտությունների դոկտոր)

Անդրանիկ Խաչատրյանը (էկոնոմիկայի նախարար)

Անդրեն (հանրաճանաչ երգիչ)

Կառլեն Ադամյանը (տեխնիկական գիտությունների դոկտոր)

Մարգարիտա Գասպարյանը (բժշկական գիտությունների դոկտոր)

Կարեն և Ալեքսանդր Արամյանները (տեխնիկական գիտությունների դոկտորներ)

Ռոման Բալայանը (կինոռեժիսոր) և ուրիշներ:

Դպրոցի շենքը կառուցվել է 1956թ., 1982թ. կառուցվել է 3-րդ մասնաշենքը: 2000թ. դպրոցը մասնակիորեն վերանորոգվել է ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Թուֆենկյանների կողմից, 2011-2012թթ.՝ ժամանակակից ոճով վերակառուցվել ու վերանորոգվել ռուսաստանաբնակ հայ բարերար Ս.Սարգիսովի կողմից:

2000-2012թթ. դպրոցը, ի երախտագիտություն բարերարի, կրել է Թուֆենկյանի անունը, սակայն 2012թ. օգոստոսից կրկին վերանվանվել է նախկին անվամբ: Տնօրենի հաշվետվության տվյալներով՝ 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 456 աշակերտ, դասավանդում 38 ուսուցիչ:

Դպրոցը համագործակցում է քաղաքի մյուս հանրակրթական կրթօջախների հետ, բարեկամական կապեր ունի Ա.Բլեյան կրթահամալիրի, Երևանի Ա.Չեխովի անվան ռուսական և ՀՀ Մարտունի քաղաքի թիվ 3 դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը՝ շնորհիվ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր դրվածքի: Կազմակերպվում են փոխայցելություններ, արիության դասեր, միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի ստեղծման, Հայրենյաց պաշտպանի և այլ հիշարժան օրերի:

5. Ստեփանակերտի թիվ 4 հիմնական դպրոցը ստեղծվել է Ստեփանակերտի օժանդակ գիշերօթիկ դպրոցի բազայի վրա, 1992-1993 ուս.տարում, որպես միջնակարգ դպրոց: 2010թ.-ից գործում է որպես հիմնական դպրոց:

Ներկայումս դպրոցում սովորում է 130 աշակերտ, դասավանդում 23 ուսուցիչ: Գործում է մեկ նախադպրոցական խումբ՝ 23 երեխաներով:

1999թ.-ից առ այսօր տնօրենի պաշտոնում աշխատում է Ա.Մինասյանը:

Դպրոցը համագործակցում է Ստեփանակերտ քաղաքի դպրոցների հետ:

Ամուր հիմքերի վրա է դրված նաև է դպրոց-բանակ կապը:

6. Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցում, 2015-2016 ուս.տարվա տվյալներով, սովորում են 420 աշակերտներ, դասավանդում 32 ուսուցիչներ: Դպրոցում գործում է 2 նախապատրաստական խումբ՝ 43 երեխաներով:

1981-1990թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ա.Միրզոյանը, 1990-1998թթ.՝ Ռ.Պետրոսյանը, 1998թ.-ից առ այսօր՝ Վ.Ղազարյանը:

1999թ. օգոստոսից դպրոցը կրում է նախկին շրջանավարտ, Արցախյան գոյապայքարի նվիրյալ Հայկ Բալասանյանի անունը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ դպրոցների հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի են կազմակերպվում համատեղ միջոցառումներ, հայրենասիրական դասեր:

7. Ստեփանակերտի թիվ 6 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1993թ.: Այն տեղակայված է 1980թ. կառուցված, մանկապարտեզի համար նախատեսված շենքում: Դպրոցը ի սկզբանե բացվել է որպես թիվ 1 դպրոցի մասնաճյուղ՝ 2 առաջին դասարաններով, որից հետո, 1993թ., վերանվանվել է թիվ 6 տարրական դպրոցի: 1994թ. այն դարձավ ոչ լրիվ միջնակարգ, 1999թ.՝ միջնակարգ: 2009թ.-ից դպրոցը ստացել է հիմնականի կարգավիճակ:

Պարբերաբար ավելացել է դպրոցում սովորողների ու դասավանդող ուսուցիչների քանակը: Այսպես, 2003-2004 ուս.տարում դպրոցում սովորել է 272 աշակերտ, դասավանդել 30 ուսուցիչ, 2015-2016 ուս.տարում՝ 327 աշակերտ, 35 ուսուցիչ:

2014թ. դպրոցը տեղափոխվել է Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հովանավորությանը և ԼՂՀ կառավարության աջակցությամբ կառուցված, ժամանակակից բոլոր պայմաններին համապատասխանող նոր շենք:

Դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են քաղաքային և հանրապետական օլիմպիադաների, տարաբնույթ միջոցառումների ու մրցույթների՝ հասնելով հաջողությունների:

Բարձր մակարդակի վրա է դպրոց-բանակ կապը: Մշտապես կազամակերպվում են փոխադարձ այցելություններ, հայրենասիրական ու ռազմական բնույթի համատեղ միջոցառումներ:

8. Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան թիվ 7 հիմնական դպրոցը մինչև 2010թ. գործել է միջնակարգի կարգավիճակով, 2010-2011 ուս.տարվանից փոխվել է հիմնականի:

1988-1991թթ. դպրոցում սովորել է 793-848 աշակերտ, դասավանդել 54 ուսուցիչ, 1991-2001թթ.՝ 867-758 աշակերտ, 2010-2011ուս.տարում՝ 961 աշակերտ, 47 ուսուցիչ, 2014-2015 ուս.տարում՝ 1453 աշակերտ, 55 ուսուցիչ:

1978-1999թթ. դպրոցի տնօրենի պաշտոնը զբաղեցրել է Օնիկ Ասրյանը, 1999-2006թթ.՝ Վ.Գաբրիելյանը, 2006թ.-ից առ այսօր՝ Անահիտ Պողոսյանը:

2009թ. դպրոցը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դպրոց» հանրապետական մրցույթում:

Արցախյան պատերազմի տարիներին դպրոցը բազմիցս ենթարկվել է հրետակոծությունների, ինչի հետևանքով 1999-2006թթ. պարապմունքներն անց են կացվել տարբեր շենքերում: 1997թ. կառուցվել է դպրոցի տարրական մասնաշենքը, իսկ 2006թ., մեծ բարերար Լուիզ Սիմոնի Մանուկյանի հովանավորությամբ՝ հիմնական շենքը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ դպրոցների, մասնավորապես՝ Երևանի Չարենցի անվան դպրոցի հետ:

Ամուր է դպրոց-բանակ կապը: Հաճախակի են կազմակերպվում համատեղ միջոցառումներ, հայրենասիրական դասեր:

9. Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցում 1988-2008թթ. սովորել են 1526 աշակերտներ, դասավանդել 162 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարում ավագ դպրոցում սովորում են 273 աշակերտներ, դասավանդում 35 ուսուցիչներ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Ա.Աղաբեկյանը, Վ.Հայրապետյանը, Յու.Խաչյանը, Լ.Հովհաննիսյանը, Վ.Սահակյանը: 2012թ.-ից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Լ.Գևորգյանը:

1988-89 ուս.տարում դպրոցը անվանվեց Ա.Սախարովի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցի: 2009թ. դպրոցը ստացավ ավագ դպրոցի կարգավիճակ:

2008 և 2014 թվականներին դպրոցը ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի «Տարվա լավագույն դպրոց»՝ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք անվանակարգում:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ հանրակրթական դպրոցների հետ, բարեկամական կապեր ունի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի, Երևանի Ա.Չեխովի անվան ռուսական դպրոցի հետ:

Դպրոցում բարձր մակարդակի վրա է դրված ռազմահայրենասիրական դաստիարկության դրվածքը: Կազմակերպվում են փոխայցելություններ, արիության դասեր, Հայոց բանակի ստեղծմանը, Հայրենյաց պաշտպանի և այլ հիշարժան օրերին նվիրված միջոցառումներ:

Տարիների ընթացքում՝ դպրոցը դառնալով Արցախի մատաղ սերնդի կրթության դարբնոց՝ իր քուրայում թրծել է գիտության, մշակույթի, կրթության, տնտեսության բնագավառի հայտնի դեմքերի և հասարակական-քաղաքական անվանի գործիչների: Նրանցից են.

Ռոբերտ Սեդրակի Քոչարյան՝ ԼՂՀ առաջին նախագահ, ՀՀ երկորդ նախագահ, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ:

Արկադի Արշավիրի Ղուկասյան՝ ԼՂՀ երկրորդ նախագահ, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ:

Գեորգի Միքայելի Պետրոսյան՝ ԼՂՀ Ազգային ժողովի նախկին նախագահ, ԼՂՀ նախկին արտգործնախարար, ԼՂՀ ԱԺ պատգամավոր:

Ժաննա Գեորգիի Գալստյան՝ ԼՂՀ ԱԺ պատգամավոր, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ:

Արարատ Աշոտի Դանիելյան՝ ԼՂՀ նախագահի աշխատակազմի առաջին ղեկավար, ԼՂՀ արդարադատության նախարար:

Դավիթ Կլիմի Բաբայան՝ ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ, ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ:

Կարեն Վարդանի Ղուկասյան՝ ԼՂՀ առողջապահության փոխնախարար:

Վարդգես Աշոտի Ուլուբաբյան՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ, ԼՂՀ ԱԺ պատգամավոր և ուրիշներ:

10. Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան թիվ 9 հիմնական դպրոցը հիմնվել է 1974թ., գիշերօթիկ դպրոցի հիմքի վրա: Սկսած 2010թ.-ից, դպրոցում իրականացվում է ներառական կրթություն՝ ուսուցման հատուկ պայմանների կարիք

ունեցող երեխաների համար:

2014-2015 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորել է 388 աշակերտ, դասավանդել 36 ուսուցիչ: Դպրոցում գործում է 2 նախադպրոցական խումբ՝54 երեխաների ընդգրկմամբ:

Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Գ.Փարամազյանը, Ս.Արզումանյանը, Վ. Սահակյանը, 2012թ.-ից առ այսօր՝ Ա.Անտոնյանը:

Դպրոցի սաները լուրջ հաջողությունների են հասել քաղաքային և հանրապետական առարկայական օլիմպիադաներում ու տարբեր մրցույթներում:

Դպրոցում բարձր հիմքերի վրա է դրված մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դպրոցի թիմը՝ մասնակցելով «Հայ ասպետ» խաղմրցույթի հանրապետական փուլին, գրավել է առաջին տեղը:

Դպրոցը համագործակցում է Ստեփանակերտում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

11. Ստեփանակերտի Ա.Իսահակյանի անվան թիվ 10 հիմնական դպրոցի կենսագրությունը սկսվում է 1975թ.-ից: Այն ձևավորվել է թիվ 2 դպրոցի ռուսական բաժնի հիման վրա (1-6 դասարաններ): Այնուհետև այն դարձել է 8-ամյա, իսկ 1982թ.-ից՝, նորակառույց շենք տեղափոխվելու հետ համատեղ, միջնակարգ՝ երկու, հայկական և ռուսական բաժիններով:

1994թ. ռուսական բաժնի հիման վրա ձևավորվեց թիվ 11 միջնակարգ դպրոցը, իսկ թիվ 10 դպրոցը շարունակեց գործել որպես հայկական ուսուցմամբ միջնակարգ դպրոց: 2010թ. դպրոցը դարձավ հիմնական: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել են 861 աշակերտներ, դասավանդել 78 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարում աշակերտների թիվը հասավ 888-ի, ուսուցիչներինը՝ 80-ի: 2013-2014 ուս.տարվանից դպրոցում գործում է 6 նախադպրոցական խումբ:

1975-1986թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Դ.Շահնազարյանը, 1986-1999թթ.՝ Ա.Պողոսյանը, 1999թ.-ից առ այսօր՝ Ս.Շահրամանյանը:

2010թ. դպրոցը ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի «Տարվա լավագույն դպրոց»՝ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք անվանակարգում:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ:

12. Ստեփանակերտի Վ.Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցը կազմավորվել է 1994թ.՝ թիվ 10 դպրոցում գործող ռուսական դասարանների բազայի վրա՝ 310 աշակերտներով ու 35 դասավանդող ուսուցիչներով:

2010թ. դպրոցը վերանվանվեց Ստեփանակերտի Վ.Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցի:

2010թ. թիվ 11 դպրոցը տեղափոխվեց Թրպանճեան ընտանեկան կրթական հիմնադրամի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԼՂՀ կառավարության միջոցներով կառուցված, ժամանակակից բոլոր պահանջներին համապատասխանող դպրոցական եռահարկ շենքը՝ նախատեսված շուրջ 560 աշակերտի համար:

2012-2013 ուս.տարում դպրոցում գործել է 30 դասարան՝ 655 աշակերտով, որից 465-ը՝ հոսքային ուսուցմամբ:

1994-1998թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Շահրամանյանը, 1998-1999թթ.՝ Լ.Առաքելյանը, 1999թ.-ից առ այսօր՝ Ա.Գրիգորյանը:

2006-2007 ուս.տարում դպրոցը ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի «Տարվա լավագույն դպրոց» արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք անվանակարգում, իսկ 2010-2011 ուս.տարում՝ «Լավագույն դպրոց»՝ և քաղաքային, և հանրապետական փուլերում:

Դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են քաղաքային և հանրապետական առարկայական օլիմպիադաների ու մրցույթների՝ ցուցաբերելով բացառիկ հաջողություններ:

Բարձր մակարդակի վրա է դպրոց-բանակ կապը: Պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, հայրենասիրական ու ռազմական բնույթի համատեղ միջոցառումներ:

13. Ստեփանակերտի թիվ 12 հիմնական դպրոցը բացվել է 1994թ.՝ ադրբեջանցիներից ազատագրված Մալիբեկլու (հետագայում՝ Վրեժավան) գյուղում, որտեղ հիմնականում սովորում էին սահմանամերձ հայ գյուղերից տեղահանված բնակիչների երեխաները: 1996թ.գյուղը, ելնելով աշխարհագրական դիրքից, վերանվանվեց Ստեփանակերտի Աջափնյակ թաղամասի, իսկ դպրոցը՝ Ստեփանակերտի թիվ 12 միջնակարգ դպրոց:

1999թ. շահագործման է հանձնվել դպրոցի երկհարկանի տիպային շենքը:

2012-2013 ուս.տարում դպրոցում կոմպլեկտավորվել է 9 դասարան՝ 60 աշակերտի ընդգրկմամբ: Ներկայումս դպրոցում սովորում են 91 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ: Դպրոցում գործում է նաև նախադպրոցական խումբ, 14 երեխաների ընդգրկմամբ:

6. Շուշիի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.)

Շուշիի շրջանի կրթության բաժնի վարիչ Իրինա Սարգսյանի 2013-2014 ուս.տարվա հաշվետվության տվյալների համաձայն՝ այդ ուսումնական տարում շրջանում գործել են 1 ավագ, 4 միջնակարգ և 3 հիմնական դպրոցներ, որոնցում ընդգրկված էին 681 աշակերտներ՝ 57 դասարան կոմպլեկտներով: Դասավանդել են 150 ուսուցիչներ:

Շրջանի կրթության բաժնի վարիչի, դպրոցների տնօրենների մեզ տրամադրած տվյալների համաձայն՝ ներկայացնենք դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.):

1. Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց: 1988-1991թթ. Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում սովորել են 150-160 աշակերտներ, դասավանդել 34 ուսուցիչներ: Այդ տարիներին դպրոցը ղեկավարել է Արսեն Խաչատրյանը:

Արցախյան պատերազմի տարիներին դպրոցը մյուս կրթօջախների նման ենթարկվեց ծանր փորձությունների: Շուշիի ազատագրումից հետո դպրոցը վերաբացվեց և շարունակեց իր գործունեությունը: Աշակերտների թիվը հասավ 150-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 32-ի: Դպրոցում գործում էր նախադպրոցական 2 խումբ՝ 57 աշակերտներով:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Շ.Հայրիյանը (1992-1994թթ.), Ն.Նալբանդյանը(2001-2008թթ. և 2009-2015թթ.), Լ.Հարությունյանը՝ 2015թ.-ից առ այսօր: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2013թ.:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների հետ, բարեկամական կապեր ունի Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի, Կապանի թիվ 2 ավագ դպրոցի և ԱՄՆ Բոստոն քաղաքի «Մխիթար Սեբաստացի» վարժարանի հետ:

Դպրոցը համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ:

2. Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց: 1992թ. հոկտեմբերի 5-ին Շուշիում կազմավորվեց «Արամ Մանուկեան» ազգային վարժարանը, որը մինչև 1993թ. մայիսի 1-ը ղեկավարվում էր երեք անդամներից (Կ.Ավետիսյան, Ա.Դաբաղյան, Ա.Եղիազարյան) բաղկացած խորհրդի կողմից: Այնուհետև դպրոցը ղեկավարել են տնօրեններ Ա.Տոռոզյանը (1993-1994թթ.), Զ.Գալստյանը (1994-1995թթ.), Ա.Բարսեղյանը (1995-1996թթ.), Հ.Մուսայելյանը (1996-2001թթ.), Գ.Նեչվոլոդը (2001-2002թթ.), Ն.Նալբանդյանը (2002-2009թթ.), Վ.Հարությունյանը (2009-2013թթ.), Է.Աբրահամյանը (2013թ.-ից առ այսօր):

2002-2009թթ. դպրոցում սովորել են 178 աշակերտներ, դասավանդել 28 ուսուցիչներ:

2001թ. ապրիլից դպրոցը վերանվանվել է Մուրացանի անվան միջնակարգ դպրոցի, 2009թ.-ից գործում է որպես Մուրացանի անվան ավագ դպրոց:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ հանրակրթական դպրոցների ու տարածքում տեղակայված ՊԲ ստորաբաժանման հետ:

3. Քարին տակի Հրանտ Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոցը 2010թ. նշել է հիմնադրման 120-ամյակը: Դպրոցը 1988-2016թթ. գործել է միջնակարգի կարգավիճակով:

1988-1994թթ. տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Հակոբջանյանը, 1994թ. առ այսօր՝ Ա.Հովհաննիսյանը:

1999թ. դպրոցն անվանակոչվել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, նրա երկարամյա տնօրեն Հ.Ղարախանյանի անունով:

1988թ.-ից առ այսօր դպրոցը թողարկել է 219 շրջանավարտ, դասավանդել են 70 ուսուցիչներ:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել են 103 աշակերտներ, դասավանդել 23 ուսուցիչներ:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցը համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ, պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, հայրենասիրական ու ռազմական բնույթի համատեղ միջոցառումներ:

4. Հին շենի Ա.Մկրտչյանի անվան հիմնական դպրոցում 1988-1991թթ. սովորում էր 60 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: Պատերազմական իրավիճակով պայմանավորված, դպրոցում 1992-1993թթ. ժամանակավորապես դադարեցվել են պարապմունքները:

Ներկայումս դպրոցն ունի կահավորված դասասենյակներ, դասընթացն արդյունավետ կազմակերպելու համար առկա են բոլոր պայմանները:

Դպրոցի տնօրենի պաշտոնում 1995թ.-ից առ այսօր աշխատում է Կ.Բարսեղյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ, պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ այցելություններ:

5. Եղցահողի Մ.Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում 2013-2014

ուս.տարում սովորել է 32 աշակերտ, դասավանդել 12 ուսուցիչ: 2012թ. առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Ա.Պետրոսյանը:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ Գորիսի շրջանի դպրոցների հետ:

Դպրոցում հատուկ ուշադրություն է դարձվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Հաճախակի են կազմակերպվում հայրենասիրական բնույթի միջոցառումներ, որոնց հրավիրվում են մասնակցելու նաև ՊԲ ներկայացուցիչներ:

6. Լիսագորի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ.՝ 8-ամյա դպրոցի կարգավիճակով: 1997թ. սեպտեմբերից դպրոցը ստացել է միջնակարգի կարգավիճակ:

Ներկայումս դպրոցը երկկոմպլեկտ է, ունի է 6 աշակերտ, 12 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ի.Բաբաջանյանը (1996-1999թթ.), Ա.Բարսեղյանը (1999-2008թթ.), Լ.Նասիբյանը (2008թ.-ից առ այսօր):

Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների ու ՊԲ զորամիավորումների հետ:

7. Մեծ շենի միջնակարգ դպրոցում գործում են 4 երկկազմ և մեկ առանձին դասարաններ՝ 18 աշակերտների ընդգրկմամբ: Դասավանդում են 9 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Մ.Հարությունյանը, Ս.Գրիգորյանը, Բ.Մնացականյանը, Դ.Դավթյանը (2005թ.-ից առ այսօր):

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2015թ.:

Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների ու ՊԲ զորամիավորումների հետ:

7. Քաշաթաղի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1992-2016թթ.)

Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի վարիչ Վարդուհի Մովսիսյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության[387] տվյալներով՝ ուսումնական տարում շրջանում գործել է 51 հանրակրթական դպրոց, որից 40-ը՝ միջնակարգ, 2-ը՝ մասնաճյուղով, 11-ը՝ հիմնական: ձևավորվել է 343 դասարան-կոմպլեկտ՝ 1786 աշակերտի ընդգրկմամբ: Դպրոցներում դասավանդել են 657 ուսուցիչներ:

Կրթության բաժնի վարիչի, դպրոցների տնօրենների կողմից տրամադրված նյութերի և «Լուսարար» թերթի տարբեր համարներում տպագրված հոդվածների տվյալների հիման վրա փորձենք համառոտակի ներկայացնել շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը:

1. Բերձորի Վահան Թեքյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը բացվել է 1994թ.՝ 35 աշակերտով, 12 ուսուցիչներով: 1994-2015թթ. դպրոցը տվել է 280 շրջանավարտ: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 197 աշակերտ, դասավանդում 28 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Ա.Երվանդյանը (1994-1996թթ.), Ա.Մխիթարյանը (1996-1997թթ.), Դ.Դավթյանը (1997-1998թթ.), Ա.Շահինյանը (1998-2006թթ.), Ա.Քոսակյանը (2006թ.-ից առ այսօր):

Դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են շրջանային և հանրապետական առարկայական օլիմպիադաների, այլ մրցույթների ու միջոցառումների և գրավում առաջնակարգ տեղեր:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս հանրակրթական դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ, պարբերաբար կազամակերպվում են փոխադարձ այցելություններ:

2. Բերձորի Վ.Զատիկյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ.՝ 52 աշակերտով և 18 ուսուցիչներով: Վ.Զատիկյանի անվամբ անվանակոչվել է 2001թ.: 2015-2016 ուս.տարում դպրոցը միջնակարգ էր, սովորում էր 182 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ժ.Հակոբյանը (1996-2011թթ.), Հ.Հակոբյանը (2011-2014թթ.), Հ.Արզանյանը (2014թ.-ից առ այսօր): Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և Գորիսի շրջանի դպրոցների հետ, բարեկամական կապեր ունի Երևանի Վ.Զատիկյանի անվան թիվ 90 դպրոցի հետ:

Դպրոցում հատուկ ուշադրություն է դարձվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Հաճախակի են կազմակերպվում հայրենասիրական բնույթի միջոցառումներ, այցելություններ զորամասեր:

3. Քաշաթաղի շրջանի Տանձուտի հիմնական դպրոցը հիմնադրվել է 1994թ.՝ որպես միջնակարգ դպրոց, և այդ կարգավիճակով գործել է մինչև 2010թ.: 2011թ.-ից դպրոցի կարգավիճակը փոխվել է հիմնականի:

Դպրոցի տնօրենի պաշտոնում 1994-2007թթ. աշխատել է Կ.Պետրոսյանը, 2007թ.-ից առ այսօր՝ Գ.Համբարձումյանը:

Ըստ դպրոցի տնօրեն Գ.Համբարձումյանի ներկայացրած տվալների[388], դպրոցում աշակերտների քանակը տարեցտարի ավելացել է: Եթե 2007-2008 ուս.տարում դպրոց է հաճախել 9 աշակերտ, ապա 2014-2015 ուս.տարում այդ թիվը հասել է 15-ի:

Դպրոցը շատ ակտիվ է արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպման գործում: Դպրոցի աշակերտները մշտապես մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարաբնույթ միջոցառումների:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

4. Քաշաթաղի շրջանի Հերիկի հիմնական դպրոցը իր գործունեությունը մի քանի անգամ դադարեցրել է տարբեր պատճառներով: Դպրոցը վերաբացվել է 2011թ. և գործում է առ այսօր:

Դպրոցում սովորում են 36 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ: 2011թ. առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Սամվել Պագալմյանը:

Դպրոցի կարգավիճակը հիմնական է, ունի 5 կոմպլեկտ դասարան, որոնցից 4-ը՝ երկկոմպլեկտ է, 1-ը՝ եռակոմպլեկտ:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

5. Քաշաթաղի շրջանի Հակարիի միջնակարգ դպրոցը բացվել է 1995թ.: 1995-2015թթ. դպրոցը տվել է 41 շրջանավարտ: Ներկայումս դպրոցում սովորում են 19 աշակերտներ, դասավանդում 9 ուսուցիչներ:

1995-1998թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ա.Սաղաթելյանը, 1998-2014թ.՝ Ա.Մովսիսյանը, 2014թ.-ից առ այսօր՝ Ա.Հայրապետյանը:

Դպրոցի շենքը երկհարկանի է, հիմնանորոգված, նորոգման աշխատանքները կատարվել են բարերարներ Հակոբ և Մինաս Շիրվանյանների հովանավորությամբ:

Դպրոցը համագործակցում է շրջանի մյուս կրթօջախների հետ:

6. Քաշաթաղի շրջանի Աղաձորի Հ.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը գործում է 2006թ.-ից: Դպրոցում սովորում են 38 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ: Դպրոցում տնօրինել են Ա.Գաբրիելյանը (2006-2009թթ.), Մ.Մինասյանը (2009-2013թթ.), Լ.Հարությունյանը (2013թ.-ից առ այսօր): Հիմնադրման օրվանից ի վեր դպրոցը տվել է 21 հիմնական և 17 միջնակարգ կրթությամբ շրջանավարտ:

1915թ.-ից կրթօջախը անվանվել է դպրոցի շրջանավարտ, մարտական գործողությունների ժամանակ նահատակված Հակոբ Խաչատրյանի անունով:

Դպրոցը ակտիվ է արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպման գործում: Դպրոցի աշակերտները մշտապես մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարաբնույթ միջոցառումների:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

7. Քաշաթաղի շրջանի Աղանուսի Ա.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցը բացվել է 2000թ.: Այն կրում է Արցախյան ազատամարտի հերոս, հայրենիքի համար նահատակված Արսեն Հակոբյանի անունը:

Դպրոցում 2015-2016 ուս.տարում գործել են 2 երկկոմպլեկտ և մեկ եռակոմպլեկտ դասարաններ՝ 24 աշակերտի ընդգրկմամբ: Դասավանդում են 8 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնը տարբեր ժամանակներում զբաղեցրել են Գ.Սաայմյանը (2000-2008թթ.), Ա.Աբգարյանը (2008-2010թթ.), Լ.Թևանյանը (2010-2012թթ.), Ռ.Ներսիսյանը (2012-2014թթ.), Ա.Խաչատրյանը (2014թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

8. Քաշաթաղի շրջանի Տիգրանավանի Պ.Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ.: 2010թ.-ից դպրոցը կրում է ՀՀ և Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանի անունը:

Դպրոցում սովորում է 66 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

1996-1997թթ. դպրոցի տնօրենի պաշտոնը զբաղեցրել է Ռ.Հայրապետյանը, 1997-1998թթ.՝ Աղաջանյանը, 1998-1999թթ.՝ Ա.Մելիքյանը, 1999-2003թթ.՝ Կ.Խաչատրյանը, 2003-2007թթ.՝ Պ.Ստեփանյանը, 2007-2011թթ.՝ Վ.Գալստյանը, 2011թ.-ից առ այսօր՝ Է.Միրզոյանը: Դպրոցը համագործակցում է ԼՂՀ դպրոցների հետ:

Դպրոցում մեծ ուշադրություն է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Հաճախակի են կազմակերպվում հայրենասիրական բնույթի միջոցառումներ, այցելություններ զորամասեր:

9. Քաշաթաղի շրջանի Վաղազինի միջնակարգ դպրոցը գործում է 1996թ.-ից: Առ այսօր դպրոցը տվել է 2 հիմնական և 18 միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ: Ներկայումս դպրոցում սովորում են 36 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

1996-1999թթ. դպրոցը ղեկավարել է Ա.Տոնոյանը, 1999-2002թթ.՝ Մ.Մամիկոնյանը, 2002-2007թթ.՝ Վ.Հարությունյանը, 2007թ.-ից առ այսօր՝ Ա.Մկրտչյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

10. Քաշաթաղի շրջանի Արվականի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1997թ.: 2015թ.-ից դպրոցը գործում է հիմնական կարգավիճակով:

Դպրոցում ներկայումս սովորում են 22 աշակերտներ, դասավանդում 9 ուսուցիչներ:

1997-1999թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Կարոյանը, 1999-2009թթ.՝ Հ.Հովհաննիսյանը, 2013թ.-ից առ այսօր՝ Հ.Մելքոնյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է: Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի մյուս կրթօջախների հետ:

11. Քաշաթաղի շրջանի Գողթանիկի միջնակարգ դպրոցում 1995-2006թթ. սովորել է 22 աշակերտ, դասավանդել 12 ուսուցիչ: Ներկայումս դպրոցում աշակերտների թիվը հասնում է 18-ի, ուսուցիչներինը՝ 9-ի:

1995-2004թթ. և 2006-2011թթ. դպրոցը ղեկավարել է Ա.Տոնոյանը, 2004-2006թթ.՝ Հ.Բելերյանը, 2011թ.-ից առ այսօր՝ Ա.Բարեյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

12. Քաշաթաղի շրջանի Ղազարապատի միջնակարգ դպրոցում 1996-2006թթ. սովորել է 18 աշակերտ, դասավանդել 8 ուսուցիչ: 2013-2014 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում աշակերտների թիվը հասնում է 22-ի: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ռ. Հայրապետյանը, Ա. Բարեյանը, Ա.Տոնոյանը (2011թ.-ից առ այսօր): Դպրոցը հիմնանորոգվել է 2014թ.:

13. Քաշաթաղի շրջանի Քաշունիքի Գ.Ճաղարյանի անվան հիմնական դպրոցը հիմնադրվել է 1998թ.: 2002թ. դպրոցը անվանակոչվել է Արցախյան ազատամարտում նահատակված Գրիգոր Ճաղարյանի անունով:

1998-2002թթ. դպրոցը ղեկավարել է Ա.Փիլոսյանը, 2002-2005թթ.՝ Ս.Այվազյանը, 2005-2015թթ.՝ Մ.Կարախանյանը, 2015թ.-ից առ այսօր՝ Ս.Մանուչարյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների և ՊԲ ստորաբաժանումների հետ: Հաճախակի են կազմակերպվում ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումներ, հայրենասիրական դասեր, այցելություններ զորամասեր:

14. Քաշաթաղի շրջանի Երիցվանքի Մ.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցը իր գործունեությունը սկսել է 1998թ.՝ 28 աշակերտներով, 9 ուսուցիչներով: 1998-2015թթ. դպտոցը տվել է 37 շրջանավարտ: Ներկայումս դպրոցում սովորում են 48 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ: Դպրոցի առաջին տնօրենը եղել է Հ.Ամալյանը: 2014.-ից առ այսօր դպրոցը ղեկավարում է Վ.Սափյանը:

2012թ. դպրոցն անվանակոչվել է Արցախի հերոս Մանվել Գրիգորյանի անունով:

Դպրոցի շենքը երկհարկանի է, հիմնանորոգվել է 2001թ.: Դպրոցը համագործակցում է ԼՂՀ այլ դպրոցների հետ:

Դպրոցում մեծ ուշադրություն է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Պարբերաբար կազմակերպվում են հայրենասիրական բնույթի միջոցառումներ, այցելություններ զորամասեր:

15. Քաշաթաղի շրջանի Դրախտաձորի հիմնական դպրոցը հիմնադրվել է 1997թ.: Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցում սովորել են 36-40 աշակերտներ, դասավանդել 14 ուսուցիչներ:

Դպրոցը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով, ունի համակարգչային կաբինետ:

Դպրոցի առաջին տնօրենը եղել է Գ.Գրիգորյանը: Տարբեր ժամանակներում այդ պաշտոնում աշխատել են Ռ.Մամիկոնյանը (1997-1999թթ.), Ա.Թամրազյանը (1999-2007թթ.), Ա.Դավթյանը (2007թ.-ից առ այսօր):

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի մյուս կրթօջախների հետ:

16. Քաշաթաղի շրջանի Վուրգավանի Աբրահամ և Էլիզաբեթ Պողոսյանների անվան միջնակարգ դպրոցը բացվել է 1997թ.: 1997-2015թթ. տվել է 57 շրջանավարտ: Ներկայումս դպրոցն աշխատում է 5 կոմպլեկտով, ունի 24 աշակերտ, 12 ուսուցիչ:

1997-2011թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Է.Հակոբյանը, 2011-2012թթ.՝ Վ.Բոբակյանը, 2012թ.-ից առ այսօր՝ Մ.Փոթոյանը:

Դպրոցի շենքը երկհարկանի է, հիմնանորոգված: Դպրոցի շինարարական աշխատանքները ավարտվել են 2015թ: Դպրոցը վերակառուցվել է «Հայրենասեր» բարեգործական կազմակերպության կողմից: 2015թ., ի երախտագիտություն իրականացված աշխատանքների, գլխավոր հովանավորներ, ամուսիններ Խաչատուր Պողոսյանի և Վարդուհի Աջապահյանի, դպրոցը կոչվել է Աբրահամ և Էլիզաբեթ Պողոսյանների անունով:

17. Քաշաթաղի շրջանի Ն.Սուսի Ս.Հանեյանի անվան միջնակարգ դպրոցը բացվել է 2002թ.: Այն կրում է Արցախյան ազատամարտի նահատակ Սերոբ Հանեյանի անունը: 2002-2015թթ. դպրոցը տվել է 38 շրջանավարտներ, որոնցից 20-ը՝ միջնակարգ, 18-ը՝ հիմնական կրթությամբ:

2014-2015 ուս.տարում դպրոցում, 9 կոմպլեկտ դասարանում, սովորել է 40 աշակերտ, դասավանդել 16 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ս.Սարգսյանը, Տ.Սարգսյանը, Գ.Ալեքսանյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Ավետիսյանը (2014թ.-ց առ այսօր): Դպրոցի շենքը վերանորոգվել է 2005թ.:

Դպրոցը բարեկամական կապեր Երևանի Դ.Վարուժանի և Գ.Էմինի անվան դպրոցների, ինչպես նաև՝ Կանադայի Տորոնտո քաղաքի կիրակնօրյա հայկական դպրոցի հետ:

18. Քաշաթաղի շրջանի Գետամեջի միջնակարգ դպրոցը բացվել է 2001թ.: Այժմ դպրոցում սովորում են 36 աշակերտներ: 2004-2014թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Մարգարյանը, 2014թ.-ից առ այսօր աշխատում է Ն.Սարոյանը: Դպրոցը հիմնանորոգվել է 2009թ.: Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի մյուս հանրակրթական դպրոցների հետ:

19. Քաշաթաղի շրջանի Մարտունաշենի Մ.Պապիկյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ. և կրում է Արցախյան ազատամարտի նահատակ Մարտուն Պապիկյանի անունը: Իր հիմնադրման օրվանից առ այսօր տվել է 53 շրջանավարտ:

Ներկայումս դպրոցում սովորում են 28 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ: Դպրոցի շենքը տիպային է, երկհարկանի, ունի 18 դասասենյակ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Հ.Քոսյանը (2001-2001թթ.), Ս.Աբունցը (2002-2004թթ.), Է.Կարապետյանը (2004-2005թթ.), Ռ.Բաբաջանյանը (2005-2009թթ.), Մ.Դաղունցը (2009թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ դպրոցների և ՊԲ ստորաբաժանումների հետ: Պարբերաբար կազմակերպվում են ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումներ, փոխայցելություններ:

20. Քաշաթաղի շրջանի Մովսեսաշենի հիմնական դպրոցը բացվել է 1997թ.: Ներկայումս դպրոցում սովորում է 22 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ա.Ստեփանյանը, Մ.Բալայանը, Լ.Հակոբյանը: Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների հետ: Ամուր է դպրոց-բանակ համագործակցությունը:

21. Քաշաթաղի շրջանի Քարոտանի միջնակարգ դպրոցը 2015թ. ունեցել է 22 աշակերտ, 9 ուսուցիչ: Դպրոցի տնօրենն է Մ.Ղազարյանը: Դպրոցի շենքը վերանորոգված է, համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

22. Քաշաթաղի շրջանի Իշխանաձորի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1999թ.:

Դպրոցում սովորում է 26 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Դպրոցի առաջին տնօրենը եղել է Վ.Ֆրանգուլյանը, այնուհետև տնօրենի պաշտոնում աշխատել են Խ.Միքայելյանը (2000-2004թթ.), Վ.Մուրադյանը (2004-2014թթ.), Ն.Եղիկյանը (2014թ.-ից առ այսօր): Դպրոցի շենքը վերանորոգված է:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ և ՀՀ մի շարք հանրակրթական դպրոցների հետ: Սերտ կապեր ունի ՊԲ զորամիավորումների հետ:

23. Քաշաթաղի շրջանի Հայկազյանի Հ.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1999թ.: Դպրոցը 2003թ.-ից կրում է Հայկազ Խաչատրյանի անունը: Դպրոցի տնօրենի պաշտոնում նշանակվել է Գ.Մարտիրոսյանը, որը պաշտոնավարում է առ այսօր:

2000-2004թթ. դպրոցում սովորել են 50-60 աշակերտներ, դասավանդել 24 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարում դպրոց են հաճախել 126 աշակերտներ, որոնք սովորել են 9 դասարան-կոմպլեկտներում: Դպրոցի մանկավարժական կազմը բաղկացած է 18 հոգուց: Հիմնադրման օրվանից մինչև 2015-2016 ուս.տարվա ավարտը դպրոցը տվել է 18 շրջանավարտ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ դպրոցների հետ: Դպրոցում մեծ տեղ է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Հաճախակի են կազմակերպվում հայրենասիրական բնույթի միջոցառումներ, այցելություններ զորամասեր:

24. Քաշաթաղի շրջանի Միջնավան քաղաքի Գ.Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ.: Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Մ.Սարգսյանը:

2013-2014 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորել են 82 աշակերտներ, դասավանդել 18 ուսուցիչներ:

Դպրոցը համագործակցում է ԼՂՀ դպրոցների, Երևան քաղաքի Գ.Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոցի, ինչպես նաև Սանկտ-Պետերբուրգի Գ.Ստարովոյտովայի անվան գիմնազիայի հետ:

Դպրոցում ամուր հիմքերի վրա է դպրոց-բանակ համագործակցությունը:

25. Քաշաթաղի շրջանի Բազմատուսի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2012թ: Դպրոցում սովորում է 32 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Հ.Եղիազարյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի հարևան գյուղերի դպրոցների հետ:

26. Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2010թ.՝ 22 աշակերտներով, 12 ուսուցիչներով: Ներկայումս դպրոցում սովորում են 62 աշակերտներ, դասավանդում 16 ուսուցիչներ:

Հիմնադրման օրվանից մինչև 2014թ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Գ.Հովսեփյանը, 2014թ.-ից առ այսօր՝ Ջ.Գրիգորյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է: Դպրոցը բարեկամական կապեր ունի հարևան գյուղերի դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դրված նաև դպրոց-բանակ համագործակցությունը:

27. Քաշաթաղի շրջանի Քարեգահի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1995թ.: Դպրոցում աշակերտների քանակը հասնում էր 50-ի, սակայն տարեցտարի այդ թիվը նվազել է: 2015-2016 ուս.տարում դպրոցում աշակերտների քանա-

կը հասել է 36-ի: Իր գործունեության ամբողջ ընթացքում դպրոցը տվել է 66 շրջանավարտ:

Դպրոցը տարբեր ժամանակներում ղեկավարել են Լ.Վարդանյանը (1995-1997թթ.), Ս.Բաբայանը (1997-2006թթ.), Ա.Հակոբյանը (2006-2011թթ.), Վ.Գալստյանը (2011թ.-ից առ այսօր):

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցում առանձնահատուկ տեղ է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը. կազմակերպվում են հայրենասիրական բնույթի միջոցառումներ, այցելություններ ՊԲ զորամասեր:

28. Քաշաթաղի շրջանի Միրիկի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1995թ.:

Դպրոցի առաջին տնօրենը եղել է Ա.Սահակյանը, նրան փոխարինել է Ֆ.Մկրտչյանը, իսկ 2014թ.-ից առ այսօր այդ պաշտոնը զբաղեցնում է Ն. Սարգսյանը:

29. Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդի Ա.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1994թ.: Դպրոցում սովորում են 34 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

1994-2006թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ս.Սեդրակյանը, 2006-2012թթ.՝ Վ.Պետրոսյանը, 2012թ.-ից առ այսօր աշխատում է Ռ.Բաբաջանյանը: Դպրոցի շենքը կառուցվել է 2003թ.:

Դպրոցը բարեկամական կապեր ունի հարևան գյուղերի դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դրված նաև դպրոց-բանակ համագործակցությունը:

30. Քաշաթաղի շրջանի Ուռեկանի Ն.Գույումջյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1995թ.: 2015-2016 ուս.տարում ունեցել է 10 դասարան-կոմպլեկտ, որտեղ սովորել են 48 աշակերտներ, ուսուցանել 16 ուսուցիչներ: Ներկայումս դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Ա.Հակոբյանը:

2007թ. բարերար Կիրակոս Գույումջյանի և Գուրգեն Մելիքյան հիմնադրամի հովանավորությամբ դպրոցը վերանորոգվել է: Նույն թվականին դպրոցն անվանակոչվել է բարերար Ներսես Գույումջյանի անունով:

Դպրոցում ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

31. Քաշաթաղի շրջանի Կումայրիի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1997թ.: Ներկայումս դպրոցն ունի 48 աշակերտ, 14 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ա.Սարգսյանը (1997-2002թթ.), Օ.Նաջարյանը (2002-2010թթ.), Հ.Կատայանը (2010թ.-ից առ այսօր):

Դպրոցի սաները ակտիվ մասնակցություն են ունենում տարբեր միջոցառումներում և մրցույթներում, գրանցում բարձր ցուցանիշներ:

Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

32. Քաշաթաղի շրջանի Արտաշավիի Լ.Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1995թ.՝ 27 աշակերտներով: Դպրոցում դասավանդում էին 14 ուսուցիչներ:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Ռ.Սիմոնյանը (1995-1997թթ.), Վ.Հարությունյանը (1997-2014թթ.), Վ.Խաչատրյանը (2014թ.-ից առ այսօր):

2002թ.-ից դպրոցը անվանակոչվել է Արցախի հերոս Լեոնիդ Ազգալդյանի անունով: Դպրոցի շենքը նորակառույց է:

33. Քաշաթաղի շրջանի Վարդուտի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2007թ.: Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է

Ռ.Բաղիկյանը: Դպրոցում սովորում են 32 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի հանրակրթական դպրոցների հետ:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարաբնույթ միջոցառումների ու մրցույթների:

Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

34. Քաշաթաղի շրջանի Դիցմայրիի հիմնական դպրոցը հիմնադրվել է 2000թ.: Դպրոցում սովորում են 32 աշակերտներ, դասավանդում 10 ուսուցիչներ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ա.Մխիթարյանը (2000-2013թթ.), Օ.Ներսիսյանը (2013-2014թթ.), Ս.Բալասանյանը (2014թ.-ից առ այսօր): Դպրոցը հիմնանորոգվել է 2004թ.:

Դպրոցը բարեկամական կապեր ունի հարևան գյուղերի դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դրված դպրոց-բանակ համագործակցությունը:

35. Քաշաթաղի շրջանի Շալուայի միջնակարգ դպրոցը գործում է 1995թ.-ից: 2014-2015 ուս.տարում դպրոցում սովորում էին 42 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ: Դպրոցը հիմնանորոգվել է 2012թ.: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Վ.Խառատյանը, Ա.Ավետիսյանը, Հ.Կիրակոսյանը, 2004թ.-ից առ այսօր աշխատում է Ա.Մկրտչյանը: Դպրոցը բարեկամական կապեր ունի հարևան գյուղերի դպրոցների հետ:

36. Քաշաթաղի շրջանի Վան գյուղի միջնակարգ դպրոցը գործում է 2002թ.-ից՝ 28 աշակերտներով, 9 ուսուցիչներով: Ներկայումս դպրոցն ունի 34 աշակերտ, 12 ուսուցիչ: Դպրոցը վերանորոգվել է 2002թ.: 2002թ.-ից դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Վ.Վարդանյանը: Դպրոցը բարեկամական կապեր ունի հարևան գյուղերի դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դրված նաև դպրոց-բանակ համագործակցությունը:

37. Քաշաթաղի շրջանի Աղավնոի Գ.Նժդեհի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1994թ.-ին՝ 26 աշակերտներով, 9 ուսուցիչներով: Դպրոցի շենքը կառուցվել է 1997թ.:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Գ.Պետրոսյանը, Ա.Հակոբյանը, Մ.Սահակյանը, Ջ.Մանվելյանը, Ս.Մկրտչյանը, Ե.Թանայանը (2013թ.-ից առ այսօր): Ներկայումս դպրոցն ունի 24 աշակերտ, 8 ուսուցիչ:

38. Քաշաթաղի շրջանի Սոնասարի Ս.Կյուրեղյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ.-ին՝ 22 աշակերտներով, 8 ուսուցիչներով:

2010թ. դպրոցն անվանակոչվել է Արցախյան գոյամարտի նահատակ Սամսոն Կյուրեղյանի անունով:

1996-2005թ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Է.Մելքոնյանը, 2005-2012թթ.՝ Ա.Ղազարյանը, 2012թ.-ից առ այսօր աշխատում է Ա.Նազարյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է: Ներկայումս այստեղ սովորում է 32 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ: Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դպրոց-բանակ համագործակցությունը:

39. Քաշաթաղի շրջանի Մշենիի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1995-1996 ուս.տարում՝ 38 աշակերտներով, 12 ուսուցիչներով: Դպրոցի շենքը կառուցվել է 1997թ.:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Գ.Խաչատրյանը (1995-

2007թթ.), Մ.Ներսիսյանը (2005-2008թթ.), Ա.Ներսիսյանը (2008թ.-ից առ այսօր):

2015-2016 ուս.տարում դպրոցում գործող 5 կոմպլեկտ-դասարաններում սովորել է 38 աշակերտ, դասավանդել են 12 ուսուցիչներ:

Դպրոցը համագործակցում է հարևան գյուղի դպրոցների հետ:

40. Քաշաթաղի շրջանի Ծոբաձորի հիմնական դպրոցը հիմնվել է 2011-2012 ուս.տարում: Ներկայումս դպրոցում սովորում է 22 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ: Դպրոցի շենքը վերանորոգվել է 2011թ.:

Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Ռ.Մանասարյանը (2011-2012թթ.), Ս.Սարդարյանը (2012-2013թթ.), Հ.Մկրտչյանը (2013թ.-ից առ այսօր):

Դպրոցում առանձնահատուկ տեղ է հատկացվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը. կազմակերպվում են հայրենասիրական բնույթի միջոցառումներ, այցելություններ ՊԲ զորամասեր:

41. Քաշաթաղի շրջանի Մոշաթաղի միջնակարգ դպրոցը գործում է 1995թ.-ից: 2012-2013 ուս.տարում դպրոցում սովորել է 38 աշակերտ, դասավանդել 12 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուս.տարում՝ 40 աշակերտ, 12 ուսուցիչ: Դպրոցի շենքը հիմնանորոգված է 2009թ.:

Դպրոցի առաջին տնօրենը եղել է Ս.Գալստյանը: Տարբեր ժամանակներում դպրոցը ղեկավարել են Վ.Գրիգորյանը (1997-2001թթ.), Կ.Սարգսյանը (2001-2006թթ.), Հ.Հակոբյանը (2006-2012թթ.), Ա.Հովհաննիսյանը (2012թ.-ից առ այսօր):

Ներկայումս դպրոցն ունի 10 դասարան-կոմպլեկտ՝ 46 աշակերտով, 14 ուսուցիչներով: Դպրոցը համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ:

42. Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ գյուղի Միսակ և Ազնիվ Տատրյանների անվան միջնակարգ դպրոցը գործում է 1998թ.-ից, որտեղ սովորել է 34 աշակերտ, դասավանդել 12 ուսուցիչ: Ներկայումս դպրոցում սովորում են 42 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ:

2013թ. դպրոցը հիմնանորոգվել է ամերիկահայ բարերարների կողմից: Ի պատիվ նրանց դպրոցն անվանակոչվել է Միսակ և Ազնիվ Տատրյանների անունով:

Դպրոցի առաջին տնօրենը եղել է Հ.Հայրապետյանը (1998-2002թթ.): 2002-2006թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Ն.Կնյազյանը, 2006-2010թթ.՝ Խ.Խաչատրյանը, 2010-2011թթ.՝ Յու.Պողոսյանը, 2011-2012թթ.՝ Ղ.Սիրունյանը, 2012թ.-ից առ այսօր՝ Վ.Թադևոսյանը:

43. Քաշաթաղի շրջանի Արծվաշենի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1999թ.: Դպրոցն ուներ 22 աշակերտ, 8 ուսուցիչ: Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

2014-2015 ուս.տարում դպրոցում սովորել են 36 աշակերտներ, դասավանդել 12 ուսուցիչներ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Վ.Ֆռանկյանը, Հ.Ոսկանյանը, Յու.Սարգսյանը, Վ.Կիրակոսյանը, Ա.Հակոբյանը, 2014թ.-ից առ այսօր՝ Դ.Աղաջանյանը:

Դպրոցը համագործակցում է հարևան գյուղերի դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

44. Քաշաթաղի շրջանի Ալաշկերտի միջնակարգ դպրոցը գործում է 1999թ.-ից: Իր գործունեության առաջին տարում դպրոցն ուներ 18 աշակերտ, 6 ուսուցիչ:

Ներկայումս դպրոցն ունի 32 աշակերտ, 16 ուսուցիչ:

Հիմնադրման օրվանից մինչև 2012թ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Յու.Բաղդասարյանը, 2012թ.-ից առ այսօր՝ Լ.Հակոբյանը:

Դպրոցը համագործակցում է տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

45. Քաշաթաղի շրջանի Գանձայի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996թ.՝ քառամյա դպրոցի կարգավիճակով: 2002թ.-ից դպրոցը ստացել է միջնակարգի կարգավիճակ: Դպրոցում սովորել է 34 աշակերտ, 14 ուսուցիչ:

1996-2002թթ. դպրոցը ղեկավարել է Ա.Տոնոյանը, 2002թ.-ից առ այսօր՝ Հ.Հովհաննիսյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2008թ.:

Ներկայումս դպրոցն ունի 1 եռակոմպլեկտ և 3 երկկոմպլեկտ դասարաններ, որտեղ սովորում են 22 աշակերտներ, դասավանդում 9 ուսուցիչներ:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են շրջանային և հանրապետական առարկայական օլիմպիադաներին, տարբեր մրցույթների ու միջոցառումների, գրավում մրցանակային տեղեր:

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը: Ամուր հիմքերի վրա է դպրոց-բանակ կապը:

46. Քաշաթաղի շրջանի Վակունիսի Վուրգ. Ոսկանյանի անվան հիմնական դպրոցը գործում է 1997թ.-ից: 2012-2016թթ. դպրոցում սովորել է 32 աշակերտ, դասավանդել՝ 12 ուսուցիչ: Դպրոցի տնօրենի պաշտոնում տարբեր ժամանակներում աշխատել են Ց.Կարապետյանը, Լ.Կարապետյանը, Հ.Տոնյանը, Վ.Հարությունյանը, 2014թ.-ից առ այսօր՝ Հ.Բախշյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի դպրոցների հետ: Ամուր հիմքերի վրա է դպրոց-բանակ համագործակցությունը:

47. Քաշաթաղի շրջանի Կովսականի Թ.Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցը գործում է 1998թ.-ից՝ 24 աշակերտներով, 9 ուսուցիչներով: Ըստ դպրոցի ներկայիս տնօրեն Ս.Քարամյանի ներկայացրած տեղեկությունների, 2013-2014 ուս.տարում դպրոցում սովորել է 38 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ: Ներկայումս դպրոցն ունի 34 աշակերտ, 13 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում տարբեր ժամանակներում աշխատել են Երվանդ Պյազյանը, Վ.Մարդոյանը, Գ.Կարապետյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի դպրոցների հետ:

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը: Ամուր հիմքերի վրա է դպրոց-բանակ կապը:

48. Քաշաթաղի շրջանի Այգեհովիտի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1998թ.՝ 24 աշակերտներով, 9 ուսուցիչներով: 2014-2015թթ. դպրոցում սովորել է 36 աշակերտ, դասավանդել 14 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Կ.Հովհաննիսյանը (1998-1999թթ.), Վ.Վարդանյանը (1999-2002թթ.), Ա.Արամյանը (2002-2014թթ.), Մ.Հարությունյանը (2014թ.-ից առ այսօր): Դպրոցի շենքը տիպային է, հիմնանորոգված:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

49. Քաշաթաղի շրջանի Կերենի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2002թ.՝ 22 աշակերտներով, 10 ուսուցիչներով: 2013-2014ուս. դպրոցում սովորել է 26 աշակերտ, դասավանդել 12 ուսուցիչ: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատում է Վ.Թովմասյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2004թ.:

50. Քաշաթաղի շրջանի Հոչանցի հիմնական դպրոցը հիմնադրվել է 1997թ.: Դպրոցում սովորում է 26 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Հովհ.Հարությունյանը (1997-2000թթ.), Հ.Հարությունյանը (2000-2003թթ.), Վ.Գրիգորյանը (2003-2009թթ.), Թ.Մելքոնյանը (2009թ.-ից առ այսօր): Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

51. Քաշաթաղի շրջանի Սարատակի միջնակարգ դպրոցը գործում է 1997թ.-ից: Դպրոցում սովորում է 24 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ:

Դպրոցի հիմնադրման օրվանից առ այսօր տնօրենի պաշտոնում աշխատում է Գ.Դավթյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2003թ.:

52. 2011թ. Գետափ գյուղում բացվել է տարրական դպրոց, որը հանդիսանում է Սարատակի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը, որտեղ սովորում են 9 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

8. Շահումյանի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1992-2016թթ.)

Շահումյանի շրջանի կրթության բաժնի վարիչ Խ.Վարդանյանի 2014-2015 ուս.տարվա հաշվետվության տվյալների համաձայն՝ այդ ուսումնական տարում շրջանում գործել են 16 հանրակրթական դպրոցներ, որից 11-ը՝ միջնակարգ, 5-ը՝ հիմնական, որոնցում ընդգրկված են եղել 674 աշակերտներ: Դասավանդել են 234 ուսուցիչներ:

Շրջանի կրթության բաժնի վարիչի, դպրոցների տնօրենների ներկայացրած հաշվետվությունների տվյալների և առանձին անձանց կողմից տրամադրված փաստագրական նյութերի հիման վրա համառոտակի ներկայացվում է շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.):

1. Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1999թ.՝ 24 աշակերտներով: Հետագայում, բնակչության աճին զուգընթաց, մեծացել է դպրոցում սովորողների թիվը:

2015-2016 ուս. տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում է 118 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ: 2011թ.-ից դպրոցում գործում է նախադպրոցական մեկ խումբ, 14 երեխաներով:

1999-2005թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Դ.Առստամյանը, 2005-2014թթ.՝ Է. Ֆահրադյանը, 2104թ. սեպտեմբերից առ այսօր՝ Ա.Ղուկասյանը:

Դպրոցը շենքը նորակառույց է: Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորման հետ:

2. Շահումյանի շրջանի Ակնաբերդի Շ.Մեղրյանի անվան միջնակարգ դպրոցը գործել է 1993թ. 8-ամյայի կարգավիճակով՝ 36 աշակերտներով, 9 ուսուցիչներով: 1995թ. դպրոցը ստացել է միջնակարգի կարգավիճակ: 2015-2016 ուս.տարում դպրոցում սովորում էր 114 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Է.Հարությունյանը, Ս.Ոսկանյանը, Ա.Առաքելյանը, Ս.Խաչատրյանը: 2003թ.-ից առ այսօր դպրոցը ղեկավարում է Ն.Օսիպյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի դպրոցների և ՊԲ զորամիավորումների հետ:

3. Նոր Գետաշենի Վ.Նազարյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2001թ.: 2001-2005թթ. դպրոցում սովորել են 28 աշակերտներ, դասավանդել 15 ուսուցիչներ: 2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում աշակերտների թիվը հասնում էր 34-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 14-ի:

Դպրոցի շենքը նորակառույց է, կառուցվել է Իսպահանի Հայոց թեմի թեմական խորհրդի միջոցներով: Հիմնանորոգվել է 2015թ.:

2001-2009թթ. դպրոցը ղեկավարել է Ս.Չիթչյանը, 2009թ.-ից առ այսօր՝ Դ.Գևորգյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

4. Նոր Բրաջուրի Ս.Էրումյանի անվան միջնակարգ դպրոցը գործում է 2000թ.՝ 129 աշակերտներով (ներառում էր նաև Նոր Գետաշեն և Նոր Վերինշեն գյուղերի աշակերտներին): Վերոհիշյալ գյուղերում դպրոցներ բացվելուց հետո Նոր Բրաջուրի դպրոցում աշակերտների քանակը նվազել է: 2002-2003 ուս. տարում դպրոց է հաճախել 48 աշակերտ: Դասավանդել են 24 ուսուցիչներ:

2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում աշակերտների թիվը հասնում էր 54-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 24-ի:

Դպրոցի շենքը նորակառույց է, կառուցվել է Իսպահանի Հայոց թեմի թեմական խորհրդի միջոցներով: Հիմնանորոգվել է 2015թ.:

Դպրոցը տարբեր տարիների ղեկավարել են Շ.Մարգարյանը, Դ.Գևորգյանը, Ն.Արզումանյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

5. Շահումյանի շրջանի Եղեգնուտի Պ.Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցը սկսել է գործել 1999թ.-ից: 2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Մ.Ամիրյանը, Ա.Պետրոսյանը, Ժ.Սարգսյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

6. Շահումյանի շրջանի Դադիվանքի Ա.Արմենակյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1999թ.՝ 8-ամյայի կարգավիճակով: Ներկայումս դպրոցի կարգավիճակը միջնակարգ է: 2012-2013 ուս.տարում դպրոցում սովորել են 18 աշակերտ, իսկ ներկայումս՝ 26, դասավանդում են 12 ուսուցիչ:

Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցի տնօրենի պաշտոնում տարբեր տարիների աշխատել են Ս.Կարոյանը, Ռ.Սայիյանը, Կ.Բաղեյանը, Մ.Հայրապետյանը, Ա.Գրիգորյանը, Մ.Կիրակոսյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

7. Զուարի Ն.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1998թ.՝ 45 աշակերտներով: Իր գործունեության ընթացքում դպրոցը տվել է 30 շրջանավարտ:

2015-2016 ուս.տարվա տվյալներով՝ դպրոցում սովորում է 20 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Ս.Ղարագյոզյանը, Ա. Արզոյանը, Ծ.Մակարյանը, Մ.Պողոսյանը, Տ.Բարսեղյանը:

Դպրոցը համագործակցում է շրջանի հանրակրթական դպրոցների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

8. Շահումյանի շրջանի Նոր Էրքեջի Հ.Ջառահյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2003թ., 8-ամյայի կարգավիճակով՝ 23 աշակերտներով: 2004 թ. դպրոցը դարձավ միջնակարգ:

2015-2016 ուս.տարում դպրոցում աշակերտների թիվը հասնում էր 46-ի, դասավանդող ուսուցիչներինը՝ 16-ի:

Դպրոցի շենքը նորակառույց է, կառուցվել է 2002թ.՝ իրանահայ բարերարների միջոցներով և կրում է բարերար Հայկուհի Ջառահյանի անունը:

Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցը ղեկավարում է Ա.Հովհաննիսյանը:

9. Շահումյանի շրջանի Նոր Խարխափուտի հիմնական դպրոցը գործում է 2007թ.-ից՝ 15 աշակերտներով: Այժմ դպրոց են հաճախում 19 աշակերտներ:

2007-2015թթ. դպրոցը ղեկավարել է Ա.Վարդանյանը, 2015թ.-ից առ այսօր՝ Թ.Հարությունյանը:

Դպրոցի շենքը հիմնանորոգված է:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

10. Ջարեքտարի Կ.Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1998թ., 8-ամյայի կարգավիճակով՝ 55 աշակերտներով:

Ներկայումս դպրոցում սովորում են 71 աշակերտներ, դասավանդում 18 ուսուցիչներ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2005թ.:

Դպրոցը ղեկավարել են Ա.Խաչատուրովը, Կ.Բաղեյանը, Վ.Բաղրամյանը, Ս.Սիմոնյանը, Ա.Մարտիրոսյանը, Գ.Մանուկյանը, Ս.Մարտիրոսյանը, Ռ.Ռոմանոսյանը, Լ.Հովհաննիսյանը: Ներկայումս դպրոցի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Ա.Քոչարյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

11. Շահումյանի շրջանի Նոր Վերինշեն համայնքի Ջ.Ջլավյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 2002թ.՝ 60 աշակերտներով և 17 ուսուցիչներով, վերինշենցի բարերարներ Շամիր և Գևորգ Ջլավյանների աջակցությամբ և կրում է նրանց հոր անունը:

Հիմնադրման օրվանից առ այսօր դպրոցը ղեկավարում է Շ.Մարգարյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգված է: Դպրոցում գործում է նախադպրոցական մեկ խումբ:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

12. Շահումյանի շրջանի Նոր Մանաշիդի Հ.Վարդանյանի անվան հիմնական դպրոցը հիմնադրվել է 2004թ.-ից՝ 18 աշակերտներով, 8 ուսուցիչներով:

Ներկայումս դպրոցում սովորում են 32 աշակերտներ, դասավանդում 14 ուսուցիչներ:

2004-2006թթ. դպրոցը ղեկավարել է Վ.Հարությունյանը, 2006թ.-ից առ այսօր ղեկավարում է Ռ.Հարությունյանը: Դպրոցի շենքը կառուցվել է 2002-2003 ուս.տարում:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

13. Շահումյանի շրջանի Քնարավանի Ք.Հարությունյանի անվան հիմնական դպրոցը կառուցվել է 2004թ.ֆրանսահայ բարերար Կ.Հարությունյանի միջոցներով և կրում է նրա կնոջ՝ Քնարիկ Հարությունյանի անունը: Դպրոցը սկսել է գործել 2005թ.-ից՝ 9 աշակերտներով:

2015-2016 ուս. տարում դպրոց են հաճախել 29 աշակերտներ: Դպրոցում

դասավանդում են 12 ուսուցիչներ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում տարբեր տարիների աշխատել են Շ.Հարությունյանը, Ռ.Վարդևանյանը, Ս.Հովհաննիսյանը, Բ.Սարգսյանը: 2011թ.-ից առ այսօր դպրոցը ղեկավարում է Ա.Գևորգյանը:

Դպրոցը համագործակցում է ՊԲ զորամիավորումների հետ:

14. Շահումյանի շրջանի Ծարի Սպարապետ Վազգեն Սարգսյանի անվան հիմնական դպրոցը հիմնադրվել է 1999թ.-ին:

2002թ. գյուղում կառուցվել է նոր դպրոց՝ նախատեսված 50 աշակերտների համար:

1999-2015թթ. դպրոցը ղեկավարել է Ս.Սիմոնյանը, 2015թ.-ից առ այսօր՝ Վ.Աբրահամյանը:

15. Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի Ա.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը գործում է 2002թ.-ից՝ 18 աշակերտներով, 6 ուսուցիչներով:

Ներկայումս դպրոցում սովորում են 24 աշակերտներ, դասավանդում 12 ուսուցիչներ:

2002-2009թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Հ.Մանուկյանը, 2009-2012թթ.՝ Ռ.Մխիթարյանը, 2012թ.-ից առ այսօր աշխատում է Ռուզաննա Ալավերդյանը:

Դպրոցը բարեկամական կապեր ունի շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

16. Շահումյանի շրջանի Հովսաթաղի Շ.Սարգսյանի անվան հիմնական դպրոցը հիմնադրվել է 2002թ.: Դպրոցում սովորում էին 18 աշակերտներ, դասավանդում՝ 10 ուսուցիչներ:

2015-2016 ուս.տարում դպրոց են հաճախել 24 աշակերտներ: Դասավանդում են 12 ուսուցիչներ:

Դպրոցը ղեկավարել են Ա.Գրիգորյանը, Ա.Մաթևոսյանը, Լ.Չոբանյանը, Ա.Դանիելյանը, 2012թ.-ից առ այսօր ղեկավարում է Է.Հարությունյանը:

Դպրոցի շենքը կառուցվել է 2003թ.՝ իրանահայ բարերար Շուշանիկ Սարգսյանի ժառանգների նվիրատվությամբ և կրում է նրա անունը:

Դպրոցը համագործակցում է շրջանի կրթօջախների և տարածքում տեղակայված ՊԲ զորամիավորումների հետ:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԼՂՀ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ, ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ, ԱՐՎԵՍՏԻ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋԻ ՄԱՐԶԱԿԱՆ (ՍՊՈՐՏԻ) ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1991-2016ԹԹ.)

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 1991թ. նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում էր միջնակարգ մասնագիտական, պրոֆտեխնիկական ուսումնարաններում: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ), քոլեջներում և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա, ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևով, ուսուցման տևողությունը՝ կախված սովորողների հենքային կրթությունից և ընտրած մասնագիտությունից, 2-ից մինչև 4 տարի է: Մասնագետներ են պատրաստվում 20 մասնագիտությունների գծով: Սակայն անկախություն ձեռք բերելուց հետո Արցախի նորաստեղծ հանրապետությունում հասարակական, սոցիալ-տնտեսական հարաբերություններում, հոգևոր, մշակութային կյանքում և կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում էին վերակառուցել նախկին կրթական համակարգը, ընդօրինակելով այն առավելությունները, որոնք նախապայմաններ կստեղծեն նորի զարգացման համար: Այդպես էլ կատարվեց: Արցախի Հանրապետության հռչակումից հետո դպրոցական կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներին զուգընթաց փոփոխություններ կատարվեցին նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանների (նախկինում՝ պրոֆտեխուսումնարանների) ներքին կյանքում և բացվեցին նոր տիպի ուսումնական հաստատություններ. ռազմամարզական վարժարան, պարարվեստի քոլեջ, սպորտի, արվեստի-երաժշտական և այլն:

Ըստ ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների, 2005թ. հանրապետությունում արդեն գործում էին 8 մարզադպրոցներ, 1 շախմատի դպրոց, 7 երաժշտական և արվեստի դպրոցներ, որոնցում ընդգրկված էին 7.125 աշակերտներ: Բացի այդ, հանրապետությունում գործում էր նաև ռազմամարզական վարժարան, որը բացվել է 2001թ.: Հետպատերազմյան շրջանում կրթական համակարգում նման ձեռքբերումներն, անշուշտ, գոհացուցիչ են, և դա կատարվել է հիմնականում սփյուռքահայ բարերարների աջակցությամբ: Նկատի ունենք այդ տիպի դպրոցների հիմնանորոգումը, նոր շենքերի կառուցումը, անհրաժեշտ սարքավորումներով և համակարգիչներով ապահովումը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) միջին մասնագիտական կրթության մասին ԼՂՀ օրենքով (2006թ. սեպտեմբերի 27-ին) սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակներն ու խնդիրները[389]: Համաձայն օրենքի դրույթների, հանրապետության քաղաքներում, շրջկենտրոններում վերաբացվում և բացվում են արհեստագործական ուսումնարաններ, ինչպես նաև միջնակարգ մասնագիտական՝ արվեստի, սպորտի, երաժշտական դպրոցներ (նկատի ունենք շրջաններում):

Այսպես, օրինակ, ԼՂՀ կառավարության 2006թ. մարտի 6-ի թիվ 95 որոշմամբ սեպտեմբերի 1-ին Ստեփանակերտում արդեն գործում էր արհեստագործական

ուսումնարան: Ինչպես արդեն նշել ենք, տարիներ շարունակ (1992-2006թթ.) հանրապետության կրթական համակարգի բացերից մեկը հանդիսանում էր արհեստագործական ուսումնարանի բացակայությունը, և վերջապես վերացվեց այդ բացը:[390]

Իսկ ո՞րն է նրա դերն ու նշանակությունը:

Արցախյան շարժումից ի վեր մեզ մոտ վարպետ բանվորներ չեն պատրաստվել: Հետպատերազմյան շրջանում հանրապետությունում շինարարական աշխատանքները մեծ թափ են ստացել, սակայն մեծ խնդիր էր որակյալ զոդող, ծեփագործ, որմնադիր և այլ արհեստների վարպետներ գտնելը: Նրանք բերվում էին տարբեր վայրերից, մասնավորապես Հայաստանից, ինչը, բնականաբար, թանկ էր նստում տվյալ հիմնարկի վրա: Եվ ահա կառավարության որոշմամբ հարցը լուծում ստացավ: Արհեստագործական ուսումնարանը վերջապես բացվեց և այսօր պատրաստում է որակյալ մասնագետներ:

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի տնօրեն Կարեն Անդրյանի հաշվետվությունից (2006թ. «Լուսարար» թերթին տված հարցազրույցից, թիվ 16), տեղեկանում ենք, որ ուսումնարանում սովորում են 16 մասնագիտությունների գծով 150 սովորողներ, դասավանդում են 25 վարպետ-ուսուցիչներ:[391]

Ստորև ներկայացնում ենք Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի 2007-2008 ուս.տարվա ընդունելությունը՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

1.Առևտրի սպասարկում հիմնական միջն.
2.Փայտամշակում և կահույքագործություն 8-ամյա կրթ.
3.Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա
4.Համակարգչային շահագործում գործավարություն
5.ԷՀՄ-ի տեխսպասարկում և նորոգում
6.Վարսահարդարման գործ
7.Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում
8.Խոհարար-հրուշակագործ
9.Մատուցում-սպասարկում
10.Հյուրանոցային տնտեսություն
11.Կարի գործ
12.Շինմոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում
13.Սանտեխմոնտաժում
14.Ներկում-ծեփագործում
15.Տանիքագործնական աշխատանքների իրականացում
16.«ԲՇ» կարգի ավտովարորդ:

Հանրապետությունում ավագ դպրոցների ստեղծման գործընթացի կապակցությամբ առավել կարևորվում է արհեստագործական կրթության իրականացումը: Այն իրականացվում է Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարաններում, որոնց շենքային պայմանների, նյութատեխնիկական հագեցվածության, մասնագետ վարպետներով համալրման, մասնագիտությունների կայացման, սովորողների թվաքանակի ավելացման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են տարվել: Սակայն այս ոլորտում դեռ անելիքները շատ են, և վերջերս ֆրանսահայ համայնքը ստանձնել է Շուշիում ժամանակակից պայմաններով արհեստագործական ուսումնարան ստեղծելու նախաձեռնությունը, իսկ հանրակացարանային պայմանների ապահովմամբ կլուծվի շրջաններից արհեստագործ մասնագետների պատրաստման խնդիրը: Հանրապետությունում ար-

հեստագործական կրթության ապահովման և հետագա զարգացմանն օժանդակում է ՀՀ ԿԳ նախարարությունը, և այս ուղղությամբ բովանդակային ու նյութատեխնիկական հագեցվածության տեսանկյունից բավականին աշխատանքներ են տարվում արհեստագործական ուսումնարաններում:[392]

Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Մարտունու արհեստագործական ուսումնարանն իր տեսակի մեջ եզակի հաստատություն է, որ կարողացել է իր գոյությունը պահպանել իր ստեղծումից (1973թ.) մինչև այսօր: Ուսումնական հաստատության տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Սլավիկ Հայրապետյանը իր հուշերում պատմում է, որ հարթ չի եղել այդ ճանապարհը, մանավանդ Արցախյան պատերազմի և նրան հաջորդած տարիներին: Շենքային, գույքային, նյութատեխնիկական բազայի, սովորողների թվաքանակի կորուստներ եղան: Այս հանգամանքները, չասենք կասեցրին ուսումնարանի գործունեությունը, ստիպեցին տեղում երկար ժամանակ դոփել, բայց ոչ երբեք կանգնել: Մարտունու արհեստագործական ուսումնարանը շարունակեց իր գործունեությունը ամենադժվար ժամանակներում:

Անկախություն ձեռք բերելուց հետո Արցախի նորաստեղծ հանրապետությունում վերակառուցվեց կրթական համակարգը՝ նախադպրոցականից մինչև հետբուհական համակարգ: Մարտունու արհեստագործական ուսումնարանը իր բովանդակությամբ և նյութատեխնիկական բազայով վերափոխվեց և կահավորվեց ժամանակակից տեխնիկական սարքավորումներով:

Ըստ պաշտոնական տվյալների, 1998-2005 թվականներին ուսումնարանում սովորում էին 86-88 սաներ, դասավանդում 11 ուսուցիչներ: Այն ուներ 3 կաբինետ, 1 տրակտոր, 1 ավտոբուս, իսկ 2013 թվականին սովորում էին 188 սաներ, ուսումնարանն ուներ նյութատեխնիկական հարուստ բազա, երեք ավտոբուս, կահավորված կաբինետներ:

Մարտունու արհեստագործական ուսումնարանը նաև միջնակարգ կրթություն է տալիս թեթևացած ծրագրերով, և այն կոչվում է արհեստների ավագ դպրոց:[393]

Մարտունու արհեստագործական ուսումնարանում ուսումնական գործընթացը կազմակերպվում է պատշաճ մակարդակով: Ուսումնարանում գործում են հետևյալ խմբերը՝ ավտովարորդների, կարուձևի, վարսահարդարների, էլեկտրագոդողների, հյուսն-ատաղձագործների, համակարգչային տեխնիկայի սպասարկման, խոհարարների, տրակտորիստների և այլն: Այստեղ դասավանդում են միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաներ: Ուսումնարանն ավարտում են 17 տարեկանում, վկայական տալիս են գործող հանձնաժողովի կողմից քննություն ընդունելուց հետո, երբ նրանք դառնում են 18 տարեկան:

Արհեստագործական ուսումնարանում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշարժան օրերին: Օրինակ, «Արծվիկ» ռազմամարզական խաղում ուսումնարանը շրջանում գրավել է առաջին տեղը և հանրապետական մրցույթում ինքն է ներկայացրել Մարտունու շրջանը՝ գրավելով 2-րդ տեղը: Նաև հանրապետական մրցությունում է շրջանը գրավել 2-րդ տեղը, որի հավաքականը դարձյալ ձևավորվել է ուսումնարանի բազայի վրա:

«Լուսարար» թերթի 2009թ. թիվ 29-ում տպագրված՝ Մարտունու արհեստագործական ուսումնարանի տնօրեն Սլավա Հայրապետյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2008-2009 ուս.տարում արհեստագործական ուսումնարանում գործում էր երեք խումբ, 10-րդ դասարանի հիմքի վրա՝ դերձակների մեկ խումբ և 8-րդ դասարանի հիմքի վրա երկու խումբ՝ դերձակների և ավտովարորդների: Այդ ուսումնականում ուսումնարանը տվել է 41 շրջանավարտներ:

2009-2010 ուս.տարում 10-րդ դասարանի հիմքի վրա ուսումնարանն ուներ 5 խումբ՝ 83 սովորողներով՝ավտովարորդների, տրակտորիստների, հաշվետարների, գազաէլեկտրաեռակցողների, հացթուխի, հրուշակագործի: Ուսումնարանի 2-րդ կուրսում կա երեք խումբ՝ 51 սովորողներով (հյուսն-ատաղձագործներ, ավտովարորդներ և տրակտորիստներ): 3-րդ կուրսում, որը նաև ավարտական է համարվում, կա ավտովարորդների և դերձակների երկու խումբ՝ 35 սովորողներով: Ընդհանուր առմամբ ուսումնարանում սովորողների ընդհանուր քանակը 169 է:

Արհեստագործական ուսումնարանում իրականացվող կրթական աշխատանքի հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է արհեստանոցների պատշաճ վիճակով: Ուսումնարանն ապահովված է համապատասխան վարպետներով և տարբեր առարկաների որակյալ ուսուցիչներով:

Ըստ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալների, 2009-2010 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երկու արհեստագործական ուսումնարաններ Ստեփանակերտում և Մարտունում: 2008-2009 թվականներին հատուկ ուշադրություն է դարձվել արհեստագործական ուսումնարանների հիմնանորոգմանն ու նրանցում բավարար պայմանների ստեղծմանը, անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով ապահովմանը: Լուրջ ուշադրություն է դարձվել նաև ուսումնարանում սովորողների քանակական կազմին: Այսպես, եթե 2008 թվականին Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում կար 135 սովորող, ապա 2010-2011 ուս.տարում՝ սովորում էին 270, իսկ Մարտունու արհեստագործական ուսումնարանում նույնպես կրկնապատկվել է սովորողների թիվը և դարձել 170:[394] Այստեղ գործում է նաև տրակտորիստների խումբ՝ 31 սովորողով, ինչը թույլ կտա գյուղական տնտեսությունն ապահովել երիտասարդ մեխանիզատորներով: Այս ուղղությամբ ԿԳ նախարարությունն ընդգծված քաղաքականություն է վարում: Ավելին՝ Ֆրանսիայի հայ համայնքի օգնությամբ շինարարական աշխատանքներ են սկսվել հիմնանորոգելու արհեստագործական ուսումնարանի շենքերը: Ուսումնանյութական բազայով զինումը, անհրաժեշտ սարքավորումներով ապահովումը (ձեռք են բերվել պետբյուջեի շրջանակներում և հումանիտար օգնությամբ ավտոմեքենաներ, հաստոցներ և այլն) նպաստել է ուսումնական պարապմունքների արդյունավետ կազմակերպմանը:

Ելնելով հանրապետությունում ծավալված սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի իրականացման պահանջներից, ինչպես նաև ավագ դպրոցներում ըստ նախասիրությունների հոսքային ուսուցման անհրաժեշտությունից՝ խիստ կարևորվում է արհեստագործական կրթության կայուն ցանցի ստեղծումը, որի արդյունավետ գործունեության շնորհիվ կբավարարվի տարբեր ոլորտներում արհեստագործ մասնագետների պահանջարկը: Այդ նպատակով ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում (2010թ. 16-ին մարտի)[395] հանգամանորեն քննարկվեցին կրթական համակարգի զարգացման տարաբնույթ հարցեր, որոնցից մեկը վերաբերում էր արհեստագործական ուսումնարանների աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Նախարարն (Վ. Խաչատրյան) իր ելույթում նշեց, որ առաջնահերթ կարգով անհրաժեշտ է լիարժեքորեն ապահովել Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանների նյութատեխնիկական և մասնագիտական հագեցվածությունը՝ ստեղծել հանրակացարանային հարմարավետ պայմաններ գյուղական բնակավայրերի շրջանավարտների ուսուցման համար: Նախարարը կարևոր համարեց շրջկենտրոններում ևս բացել արհեստագործական ուսումնարաններ: Կրթության շրջանային բաժինների վարիչները ևս առաջարկեցին նման կառույցներ ստեղծել նաև առանձին գյու-

ղական ենթաշրջաններում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետությունում գործող արհեստագործական ուսումնարանների շենքային պայմանների և նյութատեխնիկական հագեցվածության բարելավման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են իրականացվել, կահավորվել են ավտոգործի ուսումնասիրման և տրանսպորտային միջոցների վարման համապատասխան կաբինետները, փայտամշակման կաբինետի սարքավորումները, տրամադրվել են տրանսպորտային միջոցներ տեխնիկական ուսուցման և վարման համար, Մարտունու արհեստագործական ուսումնարանի համար կառուցվել է ավտոդրոմ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից հատկացված ֆինանսական միջոցներով նախատեսված ժամկետում (2012-2013թթ.) ժամանակակից պահանջները բավարարող արհեստագործական ուսումնարան է բացվել նաև Շուշիում՝ ընդգրկելով հիմնականում շինարարական մասնագիտություններ:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ արհեստագործական, ինչպես նաև միջին մասնագիտական կրթության ոլորտում 2010 թվականից ընթացան բովանդակային բարեփոխումներ: ՀՀ կրթության ազգային ինստիտուտի հետ պայմանավորվածության համաձայն՝ այս ոլորտը մուտք են գործել առարկայական նոր չափորոշիչներ ու ուսումնական պլաններ՝ անհրաժեշտ ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, ծրագրեր և ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տվող այլ նյութեր: Այստեղ դասավանդումը տարվում է մոդուլային ձևով, և այդ նպատակով էլ կազմակերպվում են արհեստագործական ուսումնարաններում դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Հանրապետությունում դպրոցականների նախասիրությունների ուղղորդման, ազատ ժամանցի կազմակերպման գործում մեծ է մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների (այդ մասին նշեցինք սույն գլխի 5-րդ բաժնում), ինչպես նաև արվեստի, պարարվեստի, երաժշտության և մարզադպրոցների դերը: Բերենք կոնկրետ օրինակներ:

Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանի հաշվետվության տվյալների համաձայն, շրջանում 2013-2014 ուս.տարում գործել են մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն՝ 35 խմբակներով, 420 սովորողների ընդգրկմամբ, և երաժշտական, արվեստի, մարզադպրոցներ՝ 136 սովորողների ընդգրկմամբ:[396]

Ըստ Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբալյանի հաշվետվության տվյալների, շրջանում 2013-2014 ուս.տարում գործել է մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն՝ 36 խմբակով, 380 սաների ընդգրկմամբ, երաժշտական դպրոց՝ 10 խմբակով, 112 աշակերտների ընդգրկմամբ, մանկապատանեկան մարզադպրոց՝ 18 խմբակով, 251 աշակերտների ընդգրկմամբ, Աստղաշենի արվեստի դպրոց՝ 12 խմբակով, 88 աշակերտների ընդգրկմամբ:[397]

ԼՂՀ ԿԳ նախարարության պաշտոնական տվյալներով՝ Մարտունու շրջանում գործում են 2 երաժշտական, 3 արվեստի, 2 մարմնամարզական (սպորտի) դպրոցներ, որտեղ սովորում են 400-ից ավելի երիտասարդներ: Հադրութի կրթության բաժնի արխիվային տվյալների համաձայն, շրջկենտրոնում գործում է 2 արտադպրոցական հիմնարկ՝ «Հադրութի մանկական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ՝ 313 երեխաների ընդգրկմամբ (25 խմբակ), «Հադրութի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ՝ 279 աշակերտների ընդգրկմամբ (20 խմբակ): Բացի այդ, շրջկենտրոնի Տողի արվեստի դպրոցում ուսումնական տարվա սկզ-

բին (2013-2014 ուս.տարվա) ընդգրկված է եղել 136 երեխա տասնմեկ գյուղերից: Երեխաների տեղափոխումը կատարվում է պետության կողմից տրամադրված միկրոավտոբուսով: Դպրոցում գործում են երաժշտական, գեղարվեստական, պարի, թատերական և կիրառական արվեստի բաժիններ: Դպրոցում աշխատում են 23 մանկավարժներ: Դպրոցի սովորողները ամեն տարի մասնակցում են Գյումրի քաղաքում անցկացվող ամենամյա «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին և վերադառնում մրցանակներով ու պատվոգրերով:

Համերգ-ցուցահանդես է կազմակերպվել Տող, Մարտունու շրջանի Գիշի գյուղերի հասարակության համար: Համերգներ են կազմակերպվել ՊԲ N զորամասերի զինվորականների համար: Մասնակցել են ԼՂՀ պաշտպանության բանակի կողմից կազմակերպված բանակ-հասարակություն կապի հաստատմանն ուղղված՝ Տողում անցկացված միջոցառումներին:

2013-2014 ուս.տարում Հադրութի մանկապատանեկան մարզադպրոցում գործել է 20 խմբակ տարբեր մարզաձևերից, որտեղ պարապել են 279 մարզիկներ: Հադրութում գործում են բասկետբոլի, ֆուտբոլի, հանդբոլի, ըմբշամարտի խմբակներ, իսկ պարապմունքներն անց են կացվում ՀՄԴ մարզադահլիճում, մարզադաշտում և մարզադպրոցում:

Մարզադպրոցի խմբակներ են գործում նաև գյուղական համայնքներում (Մեծ Թաղեր, Ազոխ, Դրախտիկ, Ուխտաձոր, Ջրակուս, Ակնաղբյուր, Թաղուտ և այլ գյուղեր):

Ըստ պաշտոնական տվյալների, 2013-2014 ուս.տարում ԼՂՀ մանկապատանեկան մարզադպրոցի վոլեյբոլի աղջիկների հավաքականը, Երևանում տեղի ունեցած մրցույթներում գրավելով առաջին պատվավոր տեղը, հնարավորություն ունեցավ նոյեմբերի 9-19-ը լինելու Ֆրանսիայում՝ ընկերական հանդիպումներ ունենալու նպատակով:

Մարզիչներ Գայանե Մելքումյանի և Մելորա Մնացականյանի գլխավորությամբ ութ սաներ բարեգործ-հովանավորողների շնորհիվ հայտնվեցին աշխարհի մայրաքաղաքում: Նրանք հյուրընկալվեցին ֆրանսահայերի ընտանիքներում: Ընկերական խաղերով հանդես եկան Մեդոնի, Իսի Լե Մուլինոյի, Կորբոուվայի և այլ թիմերի հետ: Գրավեցին երկրորդ պատվավոր տեղը ու պարգևատրվեցին գավաթով, մեդալներով: Նրանց համար էքսկուրսիաներ կազմակերպվեցին դեպի էյֆելյան աշտարակ, Վերսալյան պալատներ և այլ տեսարժան վայրեր:[398]

Այդ ուսումնական տարում Շուշիում արդեն գործում էին արհեստագործական ուսումնարան, 1 երաժշտական, 1 արվեստի, 1 ռազմամարզական դպրոցներ: Նման դպրոցներ են գործել նաև Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում: Իսկ Ստեփանակերտում՝ 1 ռազմամարզական վարժարան, 1 մարզադպրոց՝ 45 խմբով, 595 երեխայի ընդգրկմամբ, 1 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց և այլ տիպի կրթական հաստատություններ:

Մեր ձեռքի տակ եղած փաստագրական նյութերի ընձեռած հնարավորությունների հիման վրա համառոտակի ներկայացնենք կրթական այդ հաստատությունների ընդհանուր բնութագիրը (1991-2016թթ.):

1.Մարտունու Վ. Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարանի գործունեությունը:

Ուսումնարանի տնօրեն Ռ. Բաբայանի տեղեկությունների (այն ներկայացրել է հեղինակներին) համաձայն, 1973թ. հուլիսի 1-ին Մարտունի քաղաքում հիմնադրվել է Մարտունու N25 գյուղպրոֆտեխուսումնարանը 1929թ. կառուցված մսուր-մանկապարտեզի շենքում: 1974թ. հունվարի 1-ին ուսումնարանը վերանվանվել է

Մարտունու N 125 գյուղպրոֆտեխուսումնարանի, իսկ 1975թ. սեպտեմբերի 1-ից՝ Մարտունու N 125 միջն. գյուղպրոֆտեխուսումնարանի: 1993թ. սեպտեմբերի 1-ից ուսումնարանը վերանվանվել է Մարտունու միջնակարգ պրոֆտեխուսումնարանի: 1999թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 12-ը Մարտունու պրոֆտեխուսումնարանը վերանվանվել է Մարտունու ինքնուրույն արհեստագործական ավագ դպրոցի: 2006թ. դեկտեմբերի 12-ից մինչև 2010թ. օգոստոսի 12-ը ինքնուրույն արհեստագործական ավագ դպրոցը վերանվանվել է Մարտունու արհեստագործական ուսումնարանի, իսկ 2010թ. օգոստոսի 12-ից՝ Մարտունու Վ. Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարանի:

1973թ. հուլիսի 1-ից մինչև 1975թ. ապրիլի 23-ը տնօրեն է եղել Քոչարի Ղարախանի Սաֆարյանը, 1975թ. ապրիլի 23-ից մինչև 1980թ. դեկտեմբերի 12-ը՝ Սուրեն Մելիքսեթի Սաֆարյանը, 1980թ. դեկտեմբերի 12-ից մինչև 1983թ. փետրվարի 7-ը՝ Ռուդիկ Սևիի Գրիգորյանը, 1983թ. փետրվարի 7-ից մինչև 1992թ. դեկտեմբերի 2-ը՝ Մավրիկ Աշոտի Սարգսյանը, 1992թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1993թ. դեկտեմբերի 16-ը՝ Գեորգի Հայկի Հակոբյանը, 1993թ. դեկտեմբերի 16-ից մինչև 1995թ. նոյեմբերի 24-ը՝ Ժորա Գրիգորի Խաչատրյանը, 1995թ. նոյեմբերի 24-ից մինչև 2009թ. օգոստոսի 13-ը՝ Մավրիկ Աշոտի Սարգսյանը, 2009թ. օգոստոսի 13-ից մինչև 2015թ. հունվարի 1-ը՝ Սլավիկ Բագրատի Հայրապետյանը: 2015թ. հունվարի 1-ից առ այսօր տնօրեն է Ռաշիդ Ենոքի Բաբայանը:

1974թ. մինչև 2016թ. հուլիս ամիսը ուսումնարանը թողարկել է ներքոնշյալ մասնագիտություններով և քանակով շրջանավարտներ.

1.Տրակտորիստներ՝ 1558
2.Խաղողագործներ՝ 1734,
3.Գորգագործներ՝ 57,
4.Հաշվապահներ՝ 385,
5.Առևտրականներ՝ 147,
6.Հույսն-ատաղձագործներ՝ 165,
7.Ծեփագործներ՝ 16,
8.Գինեգործներ՝ 210,
9.Շերամապահներ՝ 28,
10.Ռադիոօպերատորներ՝ 22,
11.Ավտոփականագործներ՝ 183,
12.Օպերատորներ՝ 277,
13.Կթվորներ՝ 35,
14.Կարող մոտորավարներ՝ 30,
15.Դերձակներ՝ 389,
16.Ավտովարորդներ՝ 262,
17.Եռակցողներ՝ 34,
18.Սալիկապատողներ՝ 16,
19.Վարսահարդարներ՝ 91,
20.Համ. Օպերատորներ՝ 19:

Ընդամենը՝ 5658:

Ուսումնարանի շրջանավարտ տրակտորիստները հիմնականում ԼՂՀ ՊԲ-ում ծառայել և ծառայում են որպես տանկիստներ:

Ուսումնարանի շրջանավարտներ Շվարց Ավետիսի Հարությունյանը և Վազգեն Սերյոժայի Բալայանը ժամանակին ընտրվել են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներ:

Ըստ Ռ. Բաբայանի տվյալների, ուսումնարանի աշխատողներից 123 հոգի զոհվել են Արցախյան ազատամարտում, 1 հոգի՝ Յուրի Անատոլիի Փարամազյանը զոհվել է ապրիլյան պատերազմում, 4 հոգի զոհվել են աշխատողներից: Զոհվածներից 5 հոգի արժանացել են «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի, 3 հոգի՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի, 22 հոգի՝ «Արիության համար», 1 հոգի՝ «Հայրենյաց պաշտպանի», 2 հոգի՝ «Մայրական երախտագիտություն՝ Արցախի քաջորդիներին» մեդալների:

1992թ. հունվարի 21-ից մինչև 1992թ. նոյեմբերի 1-ը ուսումնարանի շենքում գործել է Մարտունու պաշտպանական շրջանի շտաբը՝ լեգենդար Մոնթե Մելքոնյանի (Ավո) գլխավորությամբ:

2016-2017 ուս.տարում ուսումնարանում գործում են 15 խմբեր, որտեղ սովորում են 204 աշակերտներ:

1.Տրակտորիստների 3 խումբ,
2.Ավտովարորդների 3 խումբ,
3.Սալիկապատողների 1 խումբ,
4.Եռակցողների 1 խումբ,
5.Դերձակների 1 խումբ,
6.Վարսահարդարների 4 խումբ,
7.Խոհարարների 1 խումբ,
8.Համ.օպերատորների 1 խումբ:

Ուսումնարանում աշխատում են 58 հոգի, որոնցից 18-ը վարպետներ են, 13-ը՝ ուսուցիչներ:

2.Ստեփանակերտի ուսումնաարտադրական կոմբինատի (այնուհետև տեխնիկական ուսումնարանի) գործունեությունը 1969-2005թթ.

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի ժողովրդական տնտեսության զարգացման, կենցաղային սպասարկման ցանցի ընդլայնման և բարելավման նպատակով 1969թ. մարտին բացվեց ուսումնաարտադրական կոմբինատը, որը հետագայում վերանվանվեց տեխնիկական ուսումնարանի: ՈՒԱԿ առաջին տնօրեն է նշանակվել Հայկ Մարգարյանը: Մարզում, անկասկած, անհրաժեշտ էր ունենալ որակյալ արհեստավորներ, որպեսզի կարողանային լավ և որակյալ կազմակերպել կենցաղ-սպասարկման ոլորտը: Մանավանդ որ մեծ պահանջարկ կար գյուղական վայրերում կենցաղային սպասարկման գործը բարելավելու համար:

1969-1970 ուս.տարում կազմակերպվեցին առաջին մասնագիտական խմբերը ռադիո-հեռուստացույցների վերանորոգման, կարուձևի, տղամարդկանց և կանացի հագուստների կարման մասնագիտությամբ: Առաջին դասավանդող ուսուցիչ-վարպետներն էին Սամվել Առաքելյանը, Ժորա Գրիգորյանը, Արամայիս Գրիգորյանը, Հասմիկ Հայրապետյանը:

Խմբերում ընդգրկված էին շուրջ 90 սովորողներ (Ստեփանակերտից) և մարզի շրջաններից:

Իհարկե, սկզբնական շրջանում առկա էին բազմաթիվ դժվարություններ, չկային համապատասխան նյութատեխնիկական բազա, վարպետ-ուսուցիչներ, բացակայում էր աշխատանքային համապատասխան փորձը և այլն: 1973թ. օգոստոսին ուսումնական կոմբինատի նոր տնօրեն է նշանակվում Սամվել Միքայելի Առաքելյանը, որը այդ ուսումնական մասնագիտական ցանցը ղեկավարեց 32 տարի՝ մինչև 2005թ.:

Ուսումնարանի համակարգում իրականացվեցին լուրջ փոփոխություններ,

բարելավվեցին ուսումնական և արտադրական պրակտիկայի աշխատանքները: Վարպետ-ուսուցիչների կազմը համալրվեց մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետներով: Տնօրենի անմիջական նախաձեռնությամբ ուսումնարան հրավիրվեցին անվանի վարպետներ Վլադիմիր Գրիգորյանը, Էդուարդ Ծատրյանը, Վալերի Դանիելյանը, Օֆելյա Ղազարյանը, Կարինե Գրիգորյանը և շատ ուրիշներ: Ուսումնարանի առջև ծառացած խնդիրները պահանջում էին արմատապես վերակառուցել ուսուցման կազմակերպման ձևերը, լուրջ աշխատանք տանել տեսական և պրակտիկ ուսուցման բարելավման ուղղությամբ, ամրապնդել նյութատեխնիկական բազան, կատարել վարպետ ուսուցիչների և դիմորդների ճիշտ ընտրություն: Անհրաժեշտ էր հատուկ ուշադրություն դարձնել ուսման գործընթացի ճիշտ կազմակերպմանը, որպեսզի ուսուցումը տարվի բարձր մակարդակով և ուսանողները ոչ միայն յուրացնեին տեսական հիմունքները, այլև իմանային գործնական կիրառումը: Ավելացվեցին գործնական պարապմունքների ժամերը, որոնք սովորողներին հնարավորություն են տալիս փորձով ստուգելու, ամրապնդելու և խորացնելու տեսական այն գիտելիքները, որ ստացել են լսարանում:

Ընդունելությունը կատարվում էր մրցութային եղանակով, միամսյա ստուգողական ժամկետով, որը հնարավորություն տվեց չսխալվել ընդունակ և շնորհքով սովորողների ընտրության գործում: Արդյունքները կարճ ժամկետում ակնհայտ էին, բարձրացան ուսման որակը և շրջանավարտների մասնագիտական մակարդակը: Ուսումնարանում սովորել ցանկացողների պահանջը միանգամից ավելացավ, նույնիսկ չէին կարողանում լրիվությամբ ընդունել բոլոր դիմորդներին:

1976թ. կոմբինատը, որը մինչ այդ մասնաճյուղ էր, ստացավ ինքնուրույնի կարգավիճակ, իսկ 1989թ. այն վերանվանվեց տեխնիկական ուսումնարանի: Անկասկած, սկզբնական շրջանում բավականին դժվարություններ ստեղծվեցին, չկային համապատասխան բազա, հարմար շենք, հանրակացարանը լրիվությամբ չէր բավարարում շրջաններից եկածներին: Իհարկե, ընթացքում լուծվեցին այդ պրոբլեմները, ավելացվեց խմբերի քանակը, որոնք տարեկան թողարկում էին 150-170 տարբեր մասնագետներ:

1969-2008թթ. ուսումնարանը թողարկել է մոտ 6500 շրջանավարտ 15 մասնագիտությունների գծով:

Այսպիսով, իր գործունեության տարիներին տեխնիկական ուսումնարանի կոլեկտիվը պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները: Միայն այն փաստը, որ ընդունելությունը վերջին տարիներին կատարվում էր մրցութային կարգով, հուշում է այն մասին, որ ուսումնարանի աշխատանքային գործունեությունը բարձր մակարդակի վրա էր: Բարձր են գնահատվել ուսումնարանի աշխատանքները, բազմիցս արժանացել է տարբեր խրախուսանքների:

3.Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի գործունեությունը

Ըստ պաշտոնական տվյալների, Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը հիմնադրվել է ԼՂՀ կառավարության 2006թ. մարտի 6-ի որոշման համաձայն:

Ուսումնարանը գործունեություն է իրականացնում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում:

Ուսումնարանի առաքելությունը հանդիսանում է արդյունաբերական և շինարարական ձեռնարկությունների համար որակյալ մասնագետների պատրաստումը:

Ուսումնարանում գործում են տարբեր մասնագիտությունների խմբեր, որտեղ մինչ օրս սովորել են 2632 պատանիներ և աղջիկներ:

Իր գոյության ընթացքում ուսումնարանը ղեկավարել են. 2006-2008թթ.՝ Կ.Անդրյանը, 2008-2014թթ.՝ Լ. Գաբրիելյանը, 2014թ.-ից՝ Մ. Գասպարյանը:

2009թ. ուսումնարանն ունեցավ իր առաջին շրջանավարտները: Նորաստեղծ ուսումնարանն ուներ 13 խումբ՝ 7 մասնագիտությամբ վարսահարդարներ, ավտոփականագործներ, խոհարարներ, համակարգչի օպերատորներ, ատաղձագործներ և այլն:

Ուսումնարանում աշխատում են բանիմաց վարպետներ, վաստակաշատ ուսուցիչներ:

Ուսումնարանը 10 տարիների ընթացքում ունեցել է շնորհաշատ շրջանավարտներ: Մեծ է շրջանավարտների ավանդը ԼՂՀ տնտեսության զարգացման բնագավառում: Նրանցից շատերն իրենց հմտությունները և կարողություններն են ներդրել շինարարության, արտադրության ոլորտներում: Ստանալով համապատասխան կրթություն և դաստիարակություն, պատանիները ծառայել ու ծառայում են ԼՂՀ ՊԲ շարքերում: Նրանցից շատերն արժանացել են բարձր պարգևների: Ուսումնարանի երկու շրջանավարտներ՝ Կառլեն Կարոյի Բաղդասարյանը և Էրիկ Վիլենի Գասպարյանը նահատակվեցին՝ որպես հայրենյաց պաշտպաններ: Ուսումնարանում նրանց հիշատակի պատվո անկյուն կա:

Այսօր ուսումնարանն ունի 13 խումբ, 225 սովորող: Ուսումնարանի շրջանավարտներն աշխատում են ոչ միայն Արցախում, այլև ՀՀ-ում, ՌԴ-ում և այլուր: Ուսումնարանի սաները հաճախակի են լինում «Զանգակ» մանկատանը, ծերանոցում և այլուր, որտեղ իրենց ծառայություններն են մատուցում երեխաներին, ծերերին: Ուսումնարանն ունեցել է ուսանողներ «Զանգակ» մանկատնից:

Ապրիլյան պատերազմի օրերին ուսումնարանն իր աջակցությունն ու օգնությունն է ցուցաբերել Պաշտպանության բանակին: Խոհարարները շուրջ 15000 կտոր թխվածքաբլիթ են թխել և ուղարկել առաջնագիծ:

Վարսահարդարներն իրենց մասնագիտական օգնությունն են ցուցաբերել բանակի տարբեր ստորաբաժանումներում: Ավտոփականագործները մեծ աշխատանք են կատարել ՊԲ վերանորոգման բազայում, մասնակցելով շուրջ 30 ավտոմեքենաների և զրահատեխնիկայի վերանորոգման աշխատանքներին:

Բոլորն էլ ՊԲ-ի կողմից գնահատվել են և պարգևատրվել պատվոգրերով:

Ներկայումս ուսումնարանը ղեկավարում է Մ. Գասպարյանը, ով իր ներուժով իր շուրջն է համախմբել լավագույն մասնագետների:

Ուսումնարանն օրեցօր համալրվում է նորագույն տեխնոլոգիաներով և գույքով, որտեղ մասնագետների ուժերով կրթվում և պատրաստվում են ավտոփականագործներ, վարսահարդարներ, համակարգչային օպերատորներ, խոհարարներ, ատաղձագործներ, խառատներ և այլն:

Ժամանակ կար, երբ բոլոր արհեստները վտանգի տակ էին, փակվել էին արհեստագործական ուսումնարանները:

Վերջին տարիներին երկրի ղեկավարությունը, կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում նախնական արհեստագործական և ընդհանրապես մասնագիտական կրթությանը:

Ուսումնարանին օգնության ձեռք մեկնեցին Միշել Տանկրեզին, Ռոբերտ Նազարյանը և ուրիշներ, որոնց միջոցով ձեռք բերվեցին խոհանոցային գույք, համակարգիչներ և այլն:

Ուսումնարան են հաճախում երկրամասի բոլոր բնակավայրերից: Ուսումնա-

ռանն ավարտողները հիմնականում մնում են Արցախում, շենացնում հայրենիքը:

Բացի մասնագիտական տեսական և գործնական առարկաներից, ուսանողներն անցնում են նաև ֆիզիկական պատրաստություն, ՆԶՊ, հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց պատմություն և այլն:

Ուսումնարանում առաջնորդվում են «Լավ մասնագետը անգործ չի մնա» կարգախոսով: Արհեստագործական ուսումնարանի նպատակն է թողարկել որակյալ մասնագետներ, որոնք իրենց ուժն ու կարողությունները կներդնեն մեր երկրամասի բարգավաճման ու շենացման գործին:

4.Շուշիի արհեստագործական ուսումնարանը

Շուշիի արհեստագործական ուսումնարանը հիմնադրվել է 2014-2015 ուսումնական տարում՝ Ֆրանսահայ համայնքի նախաձեռնությամբ: Ուսումնարանը ունի 5 մասնագիտությունների (առևտրի սպասարկում, վարսահարդարման գործ, խոհարար, կարի գործ, ծեփագործ և այլն) գծով 8 խմբեր, որտեղ սովորում են 98 հոգի, դասավանդում 22 մանկավարժներ: 2016-2017 ուս.տարում ուսումնարանը տվել է առաջին շրջանավարտներին: Ուսումնարանը կահավորված է ժամանակակից սարքավորումներով:

Տնօրեն Վ. Կարապետյանի հաշվետվության տվյալների համաձայն, ուսումնարանը համագործակցում է Մարտունու և Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանների հետ, կատարում փոխայցելություններ, փոխանակում առաջավոր փորձը: Պարբերաբար անց են կացվում համատեղ միջոցառումներ, որոնց մասնակցում են նաև կրթության շրջանային բաժնի ներկայացուցիչները: Հարկ է նաև նշել, որ ուսումնարանում պատշաճ մակարդակով են կազմակերպվում ուսումնադաստիարակչական աշխատանքները, բարձր հիմքերի վրա է դրված սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Սերտ կապ է հաստատված ուսումնարանի և Շուշիի N զորամասի հետ, անկախության և Եռատոնի օրերին ուսումնարանում կազմակերպվում են արիության դասեր, հանդիպումներ Շուշիի ազատագրման մասնակից ազատամարտիկների, զինծառայողների և պատերազմի վետերանների հետ:

5. Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանը

Փաստագրական նյութերից տեղեկացանք, որ ռազմամարզական վարժարանը հիմնադրվել է 2001թ.: Կարևորելով հայրենիքի պաշտպանության գործում բանակի շարքերը համալրող անձնակազմի ռազմահայրենասիրական ոգու բարձրացումը, Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների երեխաների կրթության ապահովումը և ելնելով բանակի համար դաստիարակված, կրթված զինվորականներ պատրաստելու անհրաժեշտությունից, ԼՂՀ կառավարությունը 2001թ. ապրիլի 10-ին որոշեց սեպտեմբերի 1-ից Ստեփանակերտում բացել ռազմամարզական թեքումով վարժարան, որի կազմակերպական աշխատանքները սկսվել են իրականացվել ՀՀ ՊՆ առ 11.04.2001թ. թիվ 246 և 05.06.2001թ. թիվ 428 հրամանների համաձայն:[399]

Վարժարանում պիտի իրականացվեր հանրակրթական դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների ուսումնական ծրագրերի յուրացում, պիտի ծավալվեր ապագա սպաների նախապատրաստում:

Պահանջվեց ստեղծել վարժարանի կանոնադրություն և այն դնել գործողության մեջ: Նույն թվականի հունիսի 15-ին ԼՂՀ ԿԳ նախարարի համաձայնությամբ և պաշտպանության նախարարի հաստատմամբ գործողության մեջ դրվեց ռազ-

մամարզական վարժարանի կանոնադրությունը: Այն իր մեջ ներառում է մի շարք խնդիրներ, որոշարկում վարժարանի ղեկավարումն ու լիազորությունները, կառուցվածքը, ընդունելության կարգը, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը: Կանոնադրությամբ նաև սահմանվում էին վարժարանի սովորողների (սաների), սպա-դաստիարակների, դասախոսական և ղեկավար կազմի, ինչպես նաև ծնողների իրավունքներն ու պարտականությունները:

2001թ. օգոստոսի 1-ից 20-ը հայոց լեզու, մաթեմատիկա և ֆիզպատրաստություն առարկաներից հանձնելով քննություններ՝ 66 սաներ ընդունվել են ՌՄՎ: Նրանցից 56-ը ավարտել են, որից 20-ը ընդունվել է բարձրագույն ՌՈՒՀ-եր, 10 հոգի՝ ԱրՊՀ, 5-ը՝ ուսումնարաններ:

2001թ. առ այսօր ՌՄՎ են ընդունվել 550 սան, ավարտել 370, ընդունվել բարձրագույն ՌՈՒՀ-եր 170 սան, ԲՈՒՀ-եր՝ 50 սան:

Կազմավորման պահից վարժարանում գործում էին 6 դասարաններ՝ երեք 9-րդ և երեք 10-րդ: Յուրաքանչյուր դասարան ուներ առանձին դասակի կարգավիճակ՝ դասակի հրամանատար-դաստիարակով: Յուրաքանչյուր երեք նույն դասարաններից ձևավորվում էր ուսումնական վաշտ՝ վաշտի հրամանատարով և ավագով: Դասակներն իրենց հերթին բաժանվում էին ջոկերի, որոնց հրամանատարները՝ սան-կրտսեր սերժանտները նշանակվում էին ուսման առաջադեմ և կարգապահ սաներից: Այսպիսով, ՌՄՎ-ում միջնակարգ կրթության, դաստիարակության և կարգապահության, ինչպես նաև ֆիզիկական կոփվածության ու ռազմական հմտությունների ձեռքբերման խնդիրը իրականացվում է դասախոսական կազմի և վաշտերի սպաների ներդաշնակ ու համատեղ ջանքերով, վերահսկվում հրամանատարի, տեղակալների և ֆիզպատրաստության պետի կողմից:

2010 թվականից ՌՄՎ-ն անցել է 12-ամյա կրթության և այժմ վարժարանում գործում են 3-ական 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ, որոնցում համապատասխանաբար սովորում են 23, 29 և 30 սաներ (ընդամենը՝ 82):

Վարժարանում սաների կրթության, դաստիարակության և որպես ապագա սաների կայացման գործընթացը եղել և շարունակում է մնալ վերադաս հրամանատարության ուշադրության կենտրոնում: Կազմավորման օրից մինչ այժմ ուսման մեջ առաջադեմ սաների համար սահմանված է կրթաթոշակ: Ք. Իվանյանի անվան կրթաթոշակը սահմանված է գերազանց գնահատականներով սովորողների, Յու. Պողոսյանի անվան կրթաթոշակը՝ հարվածայինների, իսկ Ա. Ղուլյանի անվան կրթաթոշակը՝ բարձր գնահատականներ ունեցող և ֆիզպատրաստության բնագավառում որոշակի հաջողություններ ունեցող սաների համար:

Ռազմամարզական վարժարանի պետ փոխգնդապետ Վ. Հակոբյանը իր հաշվետվությունում մատնանշում է, որ տարիների ընթացքում վարժարանի սպայական և դասախոսական կազմը թարմացվել, համալրվել է: Հմուտ և փորձառու մանկավարժների օրինակը փոխանցվել և փոխանցվում է երիտասարդներին և սկսնակներին:

Վարժարանում տարիների ընթացքում աշխատել և աշխատում են հանրապետությունում ճանաչված և կոլեկտիվում հարգված մի շարք մանկավարժներ:

Սաների կողմից ձեռք բերված հաջողություններում իրենց ավանդն ունեն նախկին դասախոսներ, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Գուրգեն Հայրապետյանը (ֆիզիկա), Բորիկ Բարսեղյանը (Ֆիզկուլտուրա), Նելլի Մկրտչյանը (հայոց լեզու և գրականություն), Սուսաննա Լալայանը (մաթեմատիկա), պահեստազորի մայոր Անատոլի Բեգլարյանը (ՆԶՊ):

Շուրջ տասը տարի վարժարանը ղեկավարել է նրա առաջին պետ փոխգնդա-

պետ Լյոնա Լենկոյի Ավանեսյանը (2001-2011թթ.): Սկսած 2011թ. հունվարից վարժարանի պետն է փոխգնդապետ Վահրամ Արսենի Հակոբյանը:

Վարժարանում դասավանդում են 17 դասախոս, իսկ 8 սան ստանում են կրթաթոշակ: Վարժարանն ավարտելուց հետո սաները ուսումը շարունակում են Հայաստանի, ՌԴ և օտարերկրյա ՌՈՒՀ-երում: Նախկին սաներից Աբրահամյան Դավիթը, Բաբայան Անդրանիկը, Գադյան Հարութը, Մովսեսյան Անդրանիկը, Գրիգորյան Նիկոլայը, Սարգսյան Դավիթը և ուրիշ շատեր գերազանցությամբ ավարտել են ՌՈՒՀ-երը և այժմ ծառայում են Պաշտպանության բանակի շարքերում: Իսկ այժմ ՌՈՒՀ-երում սովորում են Մագերկո Արթուրը, Գրիգորյան Հայկը, Սողոմոնյան Հայկը, Գալստյան Արսենը, Հայրապետյան Արշակը և ուրիշներ:

Ներկայումս ՊԲ-ում մինչև մայոր զինվորական կոչումով ծառայում են նախկին շրջանավարտներ Դավթյան Դավիթը, Ղուլյան Արթուրը, Ղուլյան Ռուբենը, Առաքելյան Արսենը, Բալասանյան Իգորը, Միրզոյան Միհրը և շատ ուրիշներ:

Հայրենիքի պաշտպանության ժամանակ իր կյանքն է նվիրաբերել վարժարանի շրջանավարտ լեյտենանտ Յուրի Սարգսյանը:

Վարժարանի անձնակազմը ակտիվորեն մասնակցում է ԼՂՀ ԿԳ նախարարության, Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի կողմից կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին, ինչպես նաև համաբանակային նշանակության իրադարձություններին:

2007-2012թթ. վարժարանի անձնակազմը մասնակցել է ԼՂՀ ՊԲ կազմավորման 15 և 20-ամյակներին նվիրված զորահանդեսներին, հիշարժան և տոն օրերին բազմիցս անցել է հանդիսավոր երթով:

Անձնակազմի առօրյան հագեցած և հետաքրքիր դարձնելու նպատակով կազմակերպվում են տարաբնույթ գրական-գեղարվեստական միջոցառումներ, նախաձեռնվում ինտելեկտուալ խաղեր, վարժարան հրավիրվում երգչախմբեր և նվագախմբեր: Այս ամենը ամրագրվում է հատուկ կարգացուցակով, որն էլ հիմք է հանդիսանում յուրաքանչյուր րոպե դարձնել վերահսկելի, օգտագործել նպատակասլաց:

Նկատելիորեն բարելավվել է ուսումնանյութական բազան, դասապրոցեսները անց են կացվում առարկայական դասասենյակներում:

Անձնակազմի կենցաղային պայմանները գտնվում են բարվոք վիճակում, սաներին օրվա ընթացքում տրվում է 4-անգամյա սնունդ:

Վարժարանում գործում են Սուրբ Վարդան Զորավար հոգևոր անկյունը և Մարտական փառքի սրահը:

Զորանոցներում տեղադրված են վաշտերի Պատվավոր զինվորների անկյունները: Յուրաքանչյուր դասարան կրում է ՀՀ Ազգային և Արցախի հերոսներից մեկի անունը ու կահավորված է նրա անկյունով:

Ուսման առաջադիմությունը խթանելու համար դասարանների և սաների միջև անց է կացվում մրցակցություն՝ կիսամյակային պարտավորությունների ստանձնման եղանակով:

Սաների մոտ ռազմամասնագիտական կողմնորոշումը արդյունավետ դարձնելու նպատակով յուրաքանչյուր ամիս ուսման և կարգապահության բնագավառում լավագույնը ճանաչված դասարանի հետ անց է կացվում էքսկուրսիա ՊԲ զորատեսակների զորամասերով:

6.Արվեստի-երաժշտական, պարարվեստի դպրոցների գործունեությունը

1.Մարտունու արվեստի-երաժշտական դպրոցը

Ըստ պաշտոնական տվյալների[400], Մարտունու Արամ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցը (այն ժամանակ՝ երաժշտական դպրոց) հիմնադրվել է 1973-ին՝ առաջին տնօրեն **Բենիկ Դանիելյանի** ղեկավարությամբ: Դպրոցն իր առաջին թողարկումն է կատարել 1978թ.-ին:

1988թ. դպրոցում գործում էին թառի, կլառնետի, քամանչայի, քանոնի, դաշնամուրի, վոկալի, դհոլի բաժիններ, որտեղ բացի հայ աշակերտներից սովորում էին նաև ադրբեջանցիներ:

1988-1994թթ. Արցախյան շարժման տարիներին դպրոցը շարունակում էր իր գործունեությունը՝ թողարկելով նոր շրջանավարտներ, չնայած այն հանգամանքին, որ պատերազմի օրերին այրվել էր դպրոցի շենքը: Եվ դպրոցը տեղափոխվեց Մարտունու մշակույթի պալատ ու մինչ օրս տեղակայված է այնտեղ:

1994թ. դպրոցում սովորում էր 142 աշակերտ, որից 87-ը՝ դաշնամուրի բաժին: Գործում էին դաշնամուրի, դհոլի, վոկալի, թառի, քանոնի, ակորդեոնի, կլառնետի բաժիններ:

Ժամանակագրություն՝ ըստ տարիների

Ուսումնական տարի	Աշակերտների քանակ
1995-1996՝	126,
1996-1997՝	125,
1997-1998՝	134,
1998-1999՝	138,
1999-2000՝	148,
2000-2001՝	140,
2001-2002՝	133,
2002-2003՝	121,
2003-2004՝	137:

2004թ. հուլիսի 1-ից երաժշտական դպրոցը վերակազմավորվել և դարձել է «Մարտունու Արամ Խաչատրյանի անունը կրող երաժշտական դպրոց» ՊՈԱԿ:

1982-2004թթ. դպրոցը ղեկավարում էր **Ռազմիկ Գրիգորյանը:** Դպրոցը վերակազմավորվելուց հետո 2005թ. ղեկավարում է **Ալվինա Բաղդասարյանը:**

Վերակազմավորվելուց հետո դպրոցի բաժիններին ավելացան դուդուկի, քամանչայի, ջութակի բաժինները:

Ժամանակագրություն՝ ըստ տարիների

Ուսումնական տարի	Աշակերտներ քանակ
2005-2006՝	124,
2006-2007՝	129,
2007-2008՝	131,
2008-2009՝	131,
2009-2010՝	127,
2010-2011՝	134,
2011-2012՝	139,
2012-2013՝	138:

2014թ. հոկտեմբերի 1-ին դպրոցը վերստին վերակազմավորվեց և դարձավ Մարտունու Արամ Խաչատրյանի անվան արվեստի դպրոց, որտեղ արդեն ավելացան կերպարվեստի, քանդակագործության, նկարչության, պարի բաժինները: Դպրոցն ունեցավ նաև իր մասնաճյուղը Բերդաշեն համայնքում:

2014թ. դպրոցում սովորում էր 272 աշակերտ:

2015թ. դպրոցը բացեց մասնաճյուղ նաև շրջանի Գիշի համայնքում, և նույն տարում դպրոցի սովորողների թիվը հասավ 351-ի:

Դպրոցի ձեռքբերումները

Դպրոցն իր գործունեության ողջ ընթացքում կազմակերպել և՛ իրականացրել է մի շարք միջոցառումներ, մրցույթներ, հուշ-ցերեկույթներ: Մասնակցել է քաղաքային, շրջանային, հանրապետական և միջազգային մի շարք մրցույթների և բազմիցս արձանագրել հաջողություններ:

2000թ. քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելու 1700-ամյակին նվիրված հոգևոր երգերի հանրապետական մրցույթ-փառատոնում դպրոցի մանկական երգչախումբը գրավել է 2-րդ տեղը, իսկ 2015թ. երգչախմբերի հանրապետական մրցույթում՝ առաջին հորիզոնականը:

2009թ. դպրոցի սան Վահե Սողոմոնյանը մասնակցել է հայկական ժողովրդական և գուսանական երգերի հանրապետական մրցույթ-փառատոնին և գրավել առաջին տեղը:

2009թ. դպրոցի սան Միքայել Մայիլյանը մասնակցել է Կոմիտասի 140-ամյակին նվիրված երգի փառատոնին և արժանացել «Հույսի» մրցանակի Գագիկ Ծառուկյանի կողմից:

Դպրոցի սաներ Միքայել Մայիլյանը և Ռոզա Դումիկյանը մասնակցել են «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին և գրավել 1-ին և 2-րդ տեղերը: Մ.Մայիլյան՝ 1-ին տեղ, Ռ. Դումիկյան՝ 2-րդ տեղ:

Դպրոցի ժողգործիքների նվագախումբը ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ստացել է վկայագիր՝ հանրապետական ազգային նվագարանների մրցույթում 2-րդ տեղը գրավելու համար:

Ապրիլյան ռազմական գործողությունների ժամանակ դպրոցի աշակերտները վերստին մասնակցել են «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին և կրկին արձանագրել հաղթանակներ:

Այս և անցած տարիներին դպրոցի աշակերտներն արժանացել են պետական մի շարք պարգևների, դիպլոմների, շնորհակալագրերի, պատվոգրերի՝ միշտ բարձր պահելով հարազատ դպրոցի պատիվը:

2.Հադրութի երաժշտական դպրոցը

Արխիվային տվյալների համաձայն, Հադրութի մանկական երաժշտական դպրոցը հիմնադրվել է 1970թ. սեպտեմբերի 1-ին: Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Վլադիմիր Պետրոսյանը (1988-2001թթ.), Ջուլիետա Հայրապետյանը (2001թ. առ այսօր):

2014թ. հոկտեմբերի 6-ից դպրոցը վերակազմավորվել է Հադրութի արվեստի դպրոցի: Դպրոցում սովորում է 110 աշակերտ:

Հադրութի արվեստի դպրոցի մասնագիտությունների ցանկը.

-դաշնամուր,

-երգեցողություն,

-քանոն,
-շվի,
-դհոլ,
-կերպարվեստ,
-թատերարվեստ,
-պարարվեստ:
Դպրոցի լավագույն շրջանավարտներն են՝
-Մելքոնյան Դերենիկ - Երևանի պետական կոնսերվատորիա
-Աբրահամյան Էրիկ - Երևանի պետական կոնսերվատորիա
-Դավթյան Անահիդա - Երևանի պետական կոնսերվատորիա
-Սարգսյան Սարիբեկ - Երևանի պետական կոնսերվատորիա
-Սարդարյան Հովհաննես - Երևանի պետական կոնսերվատորիա, ներկա դրությամբ սովորում է Գերմանիայի Կառլսրոէ երաժշտական համալսարանում:
Հադրութի արվեստի դպրոցը համագործակցում է շրջանի Տող գյուղի, Շուշիի, Մարտունու արվեստի դպրոցների հետ:

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՏՈՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԸ

Դպրոցը բացվել է 2006 թվականի սեպտեմբերի 1-ին: Սկզբնական շրջանում դպրոցի 5 բաժնում սովորում էին 35 երեխա, դասավանդում 5 ուսուցիչ: 2015-2016 ուս.տարում՝ սովորել են 200-ից ավելի աշակերտներ, դասավանդել 25 ուսուցիչներ: Դպրոցում սովորում են նաև հարևան գյուղերի երեխաները: Անշուշտ, դպրոցի հաջողությունը (սաների մասնակցությունը ԼՂՀ, ՀՀ մրցույթներին) պայմանավորված է տնօրենի՝ **Սուսաննա Բալայանի** և մանկավարժական կոլեկտիվի եռանդուն գործունեությամբ:
2011թ. արվեստի դպրոցը ստացավ ինքնուրույն կարգավիճակ: Իր գործունեության տարիներին դպրոցն ակնառու հաջողություններ ու ձեռքբերումներ ունեցավ:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՀԱԿՈԲ ԳՅՈՒՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ «ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ»-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ դպրոցի տնօրեն Էվելինա Լալայանի հաշվետվության տվյալների, Հ.Գյուրջյանի անվան «Արվեստի դպրոցը» հիմնադրվել է 1981թ.՝ Յուրի Ավետիսի Ալեքսանյանի գլխավորությամբ: Դպրոցում գործում է 3 բաժին՝ երաժշտական, գեղարվեստական և պարարվեստի:
Դպրոցն իր գործունեության ընթացքում ունեցել է մեծ ձեռքբերումներ:
1994 թվականին «Ամադեուս» պատանի երաժշտական կատարողների մրցույթում դպրոցի պարախումբն արժանացել է առաջին կարգի մրցանակի:
«Արցախի կոմպոզիտորների ստեղծագործություն» հանրապետական մրցույթում դաշնամուրի բաժնից Սվետլանա Ստեփանյանը գրավել է 1-ին տեղը (դասատու՝ Էվելինա Վիլենի Լալայան), Գալինա Ադամյանը՝ 3-րդ տեղը (դասատու՝ Անահիտ Բենյամինի Գրիգորյան):
1999 թվականին դպրոցի ավագ պարախումբը «Ամադեուս» մրցույթում արժանացել է «Արծաթե գավաթ» մրցանակի: Վերը նշված մրցույթում կրտսեր պարախումբը արժանացել է «Ոսկե գավաթ» մրցանակի:
«Ամադեուս» մրցույթում փոքր տարիքային կատեգորիայում վոկալ բաժնից

Տիգրան Կարապետյանը գրավել է 1-ին տեղը (դասատու՝ Ալեքսանդր Ղահրամանյան):

Դաշնամուրի բաժնից Կարինե Սարգսյանը գրավել է 2-րդ տեղը (դասատու՝ Մարինե Ռոբերտի Հայրապետյան): Նույն թվականին «Ամադեուս» մրցույթում դպրոցը պարգևատրվել է դիպլոմով:

2000 թվականին դպրոցը ազգային երգի-պարի հանրապետական մրցույթ-փառատոնում գրավել է առաջին տեղը:

Ժամանակակից երգի-պարի հանրապետական մրցույթ-փառատոնում դպրոցի 7-րդ դասարանի պարախումբը գրավել է առաջին տեղը:

2002թ. դպրոցի պարախումբը երգի-պարի հանրապետական մրցույթ-փառատոնում առաջին տեղը գրավելու և լավագույն կատարման համար արժանացել է պատվոգրի:

2003թ. դպրոցի պարախումբը ազգային երգի-պարի հանրապետական մրցույթ-փառատոնում գրավել է երկրորդ տեղը:

2004թ. Ա/Խաչատրյանի անվան դաշնակահարների մրցույթում փոքրերի տարիքային կատեգորիայում Գայանե Մարտիրոսյանը գրավել է 3-րդ տեղը (դասատու՝ Ռիտա Զավենի Հարությունյան):

2005թ. Յալթայում կայացած «Новые звезды танца» պարի միջազգային փառատոնում դպրոցի պարախումբը դասական և ժամանակակից պարերի մրցույթում դարձել է մրցանակակիր (դասատուներ՝ Տատյանա Միրզոյան և Գայանե Հովսեփյան):

2007թ. դպրոցը պարգևատրվել է պատվոգրով՝ արվեստի բնագավառում ունեցած հաջողությունների համար և պարի համաշխարհային օրվա կապակցությամբ:

2009 թվականին Հայկական ժողովրդական պարերի հանրապետական մրցույթ-փառատոնում առաջին տեղը գրավելու համար դպրոցն արժանացել է վկայագրի:

«Երգող Հայաստան» հանրապետական 4-րդ մրցույթում դպրոցի երգչախումբը գրավել է 3-րդ մրցանակային տեղը (խմբավար՝ Գայանե Նիկոլայի Հարությունյան):

Հայաստանի 2-րդ պարային օլիմպիադայում դպրոցի սաներ Վարդուհի Կիրակոսյանը և Վյաչեսլավ Հակոբյանը զուգապարում գրավել են առաջին տեղը (դասատու՝ Տատյանա Խորենի Միրզոյան):

Գեղարվեստի բաժնի 2-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Ալավերդյանը մայրաքաղաքի 86-ամյակին նվիրված՝ «Ստեփանակերտը՝ 10-ը տարի անց» խորագրով ցուցահանդեսին արժանացել է 2-րդ մրցանակի:

Նույն թվականին «Հաղթանակը և ես» թեմայով ցուցահանդեսին դպրոցի սաները գրավել են առաջին և երկրորդ տեղեր:

Դաշնամուրի բաժնի դասատուներ Էլմիրա Սուրենի Կարապետյանը և Ռազմիկա Կարոյի Դավթյանը արժանացել են ԼՂՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

2011թ. Տատյանա Խորենի Միրզոյանը արժանացել է ԼՂՀ վաստակավոր արտիստի կոչման:

2012 թվականին պարարվեստի բաժնի աշակերտները մասնակցել են «Ամադեուս» մրցույթ-փառատոնին և գրավել 2-րդ տեղը (դասատուներ՝ Տատյանա Խորենի Միրզոյան և Անուշ Գագիկի Ծատրյան):

2013 թվականին դաշնամուրի բաժնի 3-րդ դասարանի աշակերտ Վիլեն Լալա-

յանը մասնակցել է Գյումրի քաղաքում կազմակերպված «Վերածնունդ» 5-րդ միջազգային մրցույթ-փառատոնին և գրավել է 4-րդ տեղը (դասատու՝ Էվելինա Լալայան):

Ջութակի բաժնի 4-րդ դասարանի աշակերտ Գուրգեն Ավագյանը մասնակցել է «Տնջրե-2013» միջազգային մրցույթ-փառատոնին (դասատու՝ Դոնարա Ալեքսանդրի Ասրյան):

Գեղարվեստական բաժնի 3-րդ դասարանի աշակերտ Ստեփան Պետրոսյանը մասնակցել է Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված մրցույթին և գրավել 4-րդ տեղը (դասատու՝ Ռոբերտ Իոսիֆի Ասկարյան):

2014 թվականին դաշնամուրի բաժնի 4-րդ դասարանի աշակերտ Վիլեն Լալայանը մասնակցել է Գյումրի քաղաքում կազմակերպված «Վերածնունդ» 6-րդ միջազգային մրցույթ-փառատոնին և գրավել 3-րդ տեղը (դասատու՝ Էվելինա Վիլենի Լալայան):

Երգեցողության բաժնի աշակերտներ Արսեն Բաղրյանը, Անի Մանուչարյանը, Թամարա Լալայանը մասնակցել են Գյումրի քաղաքում կազմակերպված «Վերածնունդ» 6-րդ միջազգային մրցույթ-փառատոնին և արժանացել դիպլոմների:

Դաշնամուրի բաժնի աշակերտ Վիլեն Լալայանը մասնակցել է «Տնջրե-2014» փառատոնին (դասատու՝ Էվելինա Լալայան):

2016թ. պարարվեստի բաժնի 8-րդ դասարանի աշակերտները մասնակցել են Սոչի քաղաքում կազմակերպված 14-րդ «Ակվա-տեմպ» միջազգային մրցույթ-փառատոնին 13-15 տարիքային խմբում և արժանացել «Գրան-պրի» մրցանակի (դասատուներ՝ Տատյանա Խորենի Միրզոյան և Անուշ Գագիկի Ծատրյան):

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփանակերտի պարարվեստի ուսումնարանը հիմնադրվել է 2001թ. օգոստոսին: Արցախը կարիք էր զգում սեփական պրոֆեսիոնալ պարողների: Պարի պետական համույթը սնելու համար պետք էր նման մի կրթօջախ և այդ առաջարկով կառավարությանն են դիմել Արմեն Սարգսյանը, Արկադի Թովմասյանը և Աշոտ Բաբայանը:

Քոլեջի առաջին տնօրեն նշանակվեց պարի պետական համույթի մենակատար Ռաուլ Բաբայանը: Հիմնադրման օրից նրա կողքին էր փոխտնօրեն Նաիրա Առուշանյանը, որն ունի մեծ ներդրում քոլեջի կայացման գործում: Հիմնադրման օրվանից առ այսօր քոլեջում գործում են 2 բաժիններ՝ հայկական ժողովրդական պար և դասական պար: Մասնագիտական առարկաների հետ մեկտեղ քոլեջի սաները ուսումնասիրում են նաև հանրակրթական դպրոցի ամբողջ ծրագիրը: Քոլեջի աշակերտների համար կազմակերպվում է անվճար սնունդ:

ԼՂՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 27-ի որոշման համաձայն, պարարվեստի ուսումնարանը վերանվանվել է «Պարարվեստի քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության:

Ռաուլ Բաբայանից հետո քոլեջը ղեկավարում էր Գագիկ Խաչատրյանը:

Այսօր քոլեջը 11 տարեկան է: Այս տարիների ընթացքում քոլեջում աշխատել են այնպիսի պարուսույցներ, ինչպիսիք են Ելենա Գրիգորյանը և Ռոբերտ Գրիգորյանը և ուրիշներ: Քոլեջի հիմնադրման օրվանից այստեղ են աշխատել Տատյանա Միրզոյանը, Ենոք Բադալյանը:

Քոլեջը 7 անգամ թողարկել է շրջանավարտներ, ընդ որում, 2 անգամ դասական պար բաժնի շրջանավարտներ:

Քոլեջի սաները մասնակցել են տարբեր մրցույթների և փառատոների, որտեղից վերադարձել են ոսկե մեդալներով և պատվոգրերով: Շրջանավարտներ Տիգրան Սարգսյանը աշխատում է ՀՀ «Բարեկամություն» համույթում: Գուրգեն Ազատյանը և Ձինաիդա Շահնազարովան աշխատում են Ռուսաստանի Դաշնությունում: Շատ շրջանավարտներ դասավանդում են քոլեջում՝ որպես պարուսույց: Հանրապետությունում կազմակերպվող բոլոր միջոցառումներին մասնակցում են քոլեջի պարուսույցները և աշակերտները:

Շնորհիվ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցության այսօր քոլեջում աշխատում է գեղարվեստական ղեկավար, որի աշխատանքի արդյունքն են ՀՀ պարային օլիմպիադայում աշակերտների զբաղեցրած առաջին տեղը և ոսկե մեդալները:

Այսօր քոլեջի տնօրեն Կ. Հարությունյանն իր շուրջն է հավաքել հանրապետության լավագույն պարուսույցներին: Քոլեջում աշխատում են գեղարվեստական ղեկավար Մհեր Բաբայանը, բաժինների վարիչներ Ջորիկ Մանուկյանը և Սմբատ Կիրակոսյանը, պարուսույցներ Ռաուլ Բաբայանը, Նունե Փաշայանը: Շուրջ 10 տարի է, ինչ քոլեջում աշխատում է ԼՂՀ վաստակավոր արտիստ Ս. Եվրիյանը:

6. ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՍՏՂԱՇԵՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստի դպրոցի տնօրեն Ա. Գրիգորյանի տեղեկությունների համաձայն, Աստղաշենի արվեստի դպրոցը գործում է 2011 թվականից: Դպրոցում գործող բաժիններն են՝

դհոլ, դաշնամուր, քամանչա, կլառնետ, շեփոր, տենոր, դուդուկ, շվի, երգեցողություն, պար, կերպարվեստ:

Դպրոցում աշխատում են ԼՂՀ ժող. արտիստ, պարուսույց Աշոտ Բաբայանը, ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ, դհոլի դասատու Ռոմա Խաչատրյանը, փորձառու ուսուցիչներ Սուսաննա Աղաջանյանը, Սիլվա Գրիգորյանը, Դեզդեմոնա Ասծատրյանը, Մելսիկ Բաղդասարյանը, Անուշ Խաչատրյանը և Կարինե Գասպարյանը, որոնք իրենց փորձը փոխանցում են երիտասարդ մանկավարժներին:

2015թ. մայիսին դպրոցը թողարկել է առաջին շրջանավարտները, թվով 20 աշակերտ, նրանցից 8-ը ավարտել են դհոլի դասարանը, 2-ը՝ երգեցողության, 5-ը՝ կերպարվեստի, 5-ը՝ պարի: Շրջանավարտներից 2-ը շարունակում են կրթությունը Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի խմբավարության բաժնում և Հակոբ Գյուրջյանի անվան կիրառական արվեստի ինստիտուտում:

Դպրոցի պարապմունքներն անց է կացվում. Աստղաշենում՝ գյուղապետարանի շենքում, Պատարայում՝ հանրակրթական դպրոցի դասասենյակներում: Դպրոցը համագործակցում է հանրապետության բոլոր մշակութային ուսումնական հաստատությունների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:

Հաշվի առնելով, որ դպրոցի հաստիքացուցակում նախատեսված չէ ոչ մի հաստիք, տնօրենը կատարում է և՛ ուսմասվարի, և՛ տնտեսվարի, և՛ քարտուղարի, և՛ գրադարանավարի գործերը, կազմակերպում է ուսումնական դասընթացը, քննությունները և ստուգումները, մեթոդական օգնություն տալիս երիտասարդ ուսուցիչներին:

Աստղաշենում և մասնաճյուղերում 2015-2016 ուս.տարում սովորում էր 172 աշակերտ (Աստղաշենում՝ 99, Պատարայում՝ 66, Շուշիում՝ 7):

7. ԱՍԿԵՐԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Ասկերանի մանկական երաժշտական դպրոցը վերաբացվել է 1995թ., որը տնօրինել է Էվելինա Դադայանը, 1996-1997թթ.՝ Ալիսա Ավանեսյանը: 1997թ. առ այսօր՝ Անահիտ Բադալյանը:

1997թ. վերանվանվել է Ասկերանի երաժշտական դպրոցի: Ասկերանի մանկական երաժշտական դպրոցն ունի 20-ամյա պատմություն, գործունեության առաջին փուլում դպրոցն ունեցել է 1 դաշնամուրի բաժին՝ 21 սան և 6 դասատու:

Հետագայում բացվել են վոկալի, ջութակի, կլառնետի, դուդուկի և դհոլի բաժինները, նաև արվեստի նորաստեղծ բաժիններ՝ թատերարվեստ, կերպարվեստ, խեցեգործություն, դեկորատիվ կիրառական արվեստ, գոբելեն, կարպետագործություն, հագուստի դիզայն և մոդելավորում, պարարվեստ:

Այժմ դպրոցում դասավանդում են 41 դասատու, սովորում 175 սան: Արվեստի դպրոցն ունի 3 մասնաճյուղ շրջաններում՝ Խնապատի, Նորագյուղի և Ավետարանոցի համայնքներում:

Դպրոցի ձեռքբերումներն ու նվաճումները խոսուն են, դպրոցն ապրում է ակտիվ կյանքով, որի հիմնական ուղղվածությունը արվեստասեր սերունդ ունենալն է, ինչպես նաև ազգայինի պահպանումը, որն էլ հայրենասիրության յուրօրինակ դրսևորում է:

Այսպես, դպրոցը մասնակցել է մի շարք մրցույթ-փառատոների («Ամադեուս», «Հոգևոր երգեր», «Ժողովրդական երգեր», «Մանկական երգեր», «Գուսանական երգեր», «Ազգային նվագարաններ»), «Ազգային երգի-պարի փառատոների», հայ մեծանուն երգահանների և կոմպոզիտորների հոբելյաններին նվիրված անվանական մրցույթ-փառատոների (Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի, Կոմիտասի), «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական 6-րդ մրցույթին:

Արվեստի դպրոցը բազմիցս արժանացել է դիպլոմների, առաջին, երկրորդ, երրորդ կարգի գովասանագրերի, դրամական պարգևների ու խրախուսանքների: Այս ամենից բացի, դպրոցը բոլոր տոնակատարությունների (շրջանային, թե հանրապետական) ակտիվ մասնակիցն է:

8. ՇՈՒՇԻԻ ԴԱՆԻԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արխիվային փաստաթղթերի տվյալների համաձայն, Շուշիի Դանիել Ղազարյան անվան երաժշտական մասնագիտացված դպրոցը գործում է 1997թ.՝ Լոս-Անջելեսի «Շուշիի երաժշտանոց» ընկերակցության միջոցներով, իսկ 2013թ.՝ նաև ԼՂՀ կառավարության աջակցությամբ:

Դպրոցի գլխավոր տնօրեն Կ. Ղարիբյանը մասնագիտությամբ վոկալիստ է և 1989թ. ԱՄՆ քաղաքացի: Ծնվել է Երևանում, բարձրագույն կրթություն է ստացել Էստոնիայի Տալլին քաղաքի պետական կոնսերվատորիայում և Տարտուի համալսարանում:

Դպրոցի գործադիր տնօրեն Գոհար Մկրտչյանը ծնվել է Արմավիրի մարզում, բարձրագույն կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանում: 1982թ. աշխատել է Հադրութի շրջանում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Դպրոցը համագործակցում է Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական

դպրոցի հետ: Համագործակցում է նաև Շուշիի հակաօդային պաշտպանության զորամասի հետ, հաճախակի համերգներով հանդես գալիս զինվորների առջև:

Դպրոցի շենքը հարմարեցված է դպրոցական պայմաններին: Այն 12-ամյա հանրակրթությունից բացի իրականացնում է նաև երաժշտական 11-ամյա կրթություն:

Դպրոցում գործում է մեկ նախապատրաստական խումբ:

9. ՇՈՒՇԻԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԸ

Շուշիի արվեստի դպրոցը հիմնադրվել է 1992 թվականին, որտեղ սովորում են 44 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ: Տնօրենի պաշտոնում աշխատել են Լ. Մելքումյանը (1992-1998թթ.), Ռ. Աղաջանյանը (1998-1999թթ.), Լ. Մելքումյանը (1999-2008թթ.), Ռ. Հարությունյանը՝ 2008 թվականից առ այսօր:

Հիմնադրման օրից մինչև 2016 թվականը դպրոցն ավարտել են 231 հոգի, 43-ը ստացել են միջին և բարձրագույն կրթություն, 10 շրջանավարտներ այսօր աշխատում են արվեստի դպրոցում:

Դպրոցը համագործակցում է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի երաժշտական քոլեջի, ՀՀ շրջանների նմանատիպ կրթական հաստատությունների հետ:

10. ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԲԵՐՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԻ) ԴՊՐՈՑԸ

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի երաժշտական (արվեստի) դպրոցը հիմնադրվել է 1996թ.: Դպրոցում սովորում են 62 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ղևոնդ Խարանյանը (1996-1997թթ.), Սամվել Հայրապետյանը (1997-2000թթ.), Արմենակ Բալասանյանը (2000-2016թթ.):

Դպրոցի ուսումնական պլանում ներառված են հետևյալ մասնագիտությունները.

1.Դաշնամուր

2.փողային

3.վոկալ

4.ժողովրդական գործիքներ (քանոն, ակորդեոն, դհոլ, դուդուկ)

5.լարային-ջութակ, կիթառ:

Դպրոցում դասավանդող լավագուն մանկավարժներից են Անահիտ Մուրադյանը, Մարինա Բալասանյանը, Արմեն Բալասանյանը, Հասմիկ Գրիգորյանը, Շուշանիկ Մարտիրոսյանը և ուրիշներ:

Դպրոցը մասնակցել է բազմաթիվ մրցույթ-փառատոների:

Ստեփանակերտում մասնակցել են «Ամադեուս» փառատոնին, ինչպես նաև Երևանում Առնո Բաբաջանյանի անվան մրցույթին, շահելով պատվավոր տեղեր:

2015-2016 ուսումնական տարում արվեստի դպրոցում սովորում էր 320 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ:

ԼՂՀ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մարտակերտի մանկապատանեկան մարզադպրոցը հիմնադրվել է 1994-1995 ուս.տարում: Դպրոցում ընդգրկված են 92 հոգի, 12 մարզիչներ, իսկ 2004-2005 ուս.տարում ընդգրկված էին 122 հոգի, 18 մարզիչներ:

Ըստ տնօրեն Լ. Բուդաղյանի տեղեկությունների, 2007-2010 թվականներին մարզադպրոցում մարզիկների թիվը հասնում էր 290-300-ի, իսկ 2010-2014թթ.՝ 349-ի: Դպրոցում աշխատում են 24 մարզիչներ: Մարզադպրոցում գործում են 8 խմբակներ:

Մարզադպրոցի երեխաները ակտիվորեն մասնակցում են հանրապետական մարզաձևերի մրցույթներին, գրավում մրցանակային տեղեր:

Հադրութի շրջանի կրթության բաժնի արխիվային տվյալների համաձայն, Հադրութում մարզադպրոցը բացվել է 2002 թվականի սեպտեմբերի 1-ին և տնօրեն է նշանակվել Սերգեյ Ղուկասյանը, իսկ ներկայումս տնօրեն է աշխատում Հայկ Ղուկասյանը: Տարբեր տարիների մարզադպրոցը ունեցել է 156-160 մարզիկներ, 16 մարզիչներ: Մարզադպրոցում գործում են 9 խմբակներ: Մարզադպրոցի սաները մասնակցել են ԼՂՀ, ՀՀ մրցաշարերին և գրավել մրցանակային տեղեր:

ԼՂ հանրապետական մանկապատանեկան մարզադպրոցը.

Հանրապետական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Կարեն Մելքումյանի հաշվետվության տվյալների համաձայն, մարզադպրոցը գործում է 1991 թվականից:[401]

Սակայն նշենք, որ մինչ այդ, 1972-1991 թվականներին, ԼՂՀ-ում գործել է մարզադպրոց (Ստեփանակերտում):

Հանրապետական մարզադպրոցը համալիր դպրոց է, որն իրականացնում է ուսումնամարզական գործընթացը տարբեր ուսումնական խմբերում:

Մարզադպրոցը՝ առաջնորդվելով հաստատված կանոնադրությամբ, որոշակի աշխատանք է կատարել մարզական խմբերը արժանավոր և համապատասխան ընդունակություններով օժտված երեխաներով համալրելու համար:

Մարզադպրոցում ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևը ընդհանուր ֆիզիկական պատրաստությունն է, որի մեջ մտնում են տեսական, պրակտիկ պարապմունքները մրցումներին:

Մարզադպրոցում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից:

Մարզադպրոցն ունի մարզիչների սեկցիոն պարապմունքների դասացուցակ. սովորողների ցուցակ, մարզադպրոցի հրամանագիրք, դասամատյաններ ըստ խմբերի, ուսումնամարզական պարապմունքների պլան-գրաֆիկ, մարզական արդյունքների հաշվառման մատյան, մարզական միջոցառումների օրացուցային պլան, սովորողների անձնական գործեր, աշխատողների անձնական գործեր, տարիֆիկացիոն ցուցակ, կոմպլեկտավորման պլան, աշխատանքային պլան, հաստիքացուցակ, խորհուրդների նիստերի արձանագրություններ, անցկացրած մրցումների արձանագրություններ:

2015-2016 ուս.տարում մարզադպրոցում գործում էին աթլետիկայի, սամբոյի, ձյուդոյի, կարատեի, թաեքվոնդոյի, վոլեյբոլի, ֆուտբոլի, սանդա-ուշուի, ըմբշամարտի 30 խմբեր, որոնցից՝ նախապատրաստական 1-ին տարի՝ 3 խումբ, նախապատրաստական 2-րդ տարի՝ 12 խումբ, ուսումնամարզական 1-ին տարի՝ 2 խումբ, ուսումնամարզական 2-րդ տարի՝ 3 խումբ, ուսումնամարզական 3-րդ տա-

րի՝ 5 խումբ, ուսումնամարզական 4-րդ տարի՝ 3 խումբ, ուսումնամարզական 5-րդ տարի՝ 2 խումբ:

Խմբերում ընդգրկված էին 337 երեխաներ, որոնց հետ պարապում էին 5 հաստիքային և 16 ոչ հաստիքային մարզիչներ: Մարզիչներից 14-ն ունի բարձրագույն մասնագիտական կրթություն, 6-ը՝ բարձրագույն, 1-ը՝ միջին մասնագիտական կրթություն:

2015-2016 ուս.տարում մարզադպրոցում անց է կացվել մարզչամանկավարժական խորհրդի 4 նիստ, որտեղ քննարկվել են հետևյալ հարցերը.

-նոր ուսումնական տարվա խնդիրների մասին,

-նոր ուսումնական տարում ստուգումների և բաց տիպի պարապմունքների կազմակերպման մասին,

-փոխադրական ստուգարքի արդյունքների մասին,

-2015-2016 ուս.տարում կատարված աշխատանքների մասին,

-կազմակերպչական տարբեր հարցեր:

2015-2016 ուս.տարում մարզադպրոցում անց է կացվել բաց տիպի 6 պարապմունք.

-աթլետիկա -1

-թաեքվոնդո -1

-ձյուդո- 1

-սամբո -1

-վոլեյբոլ -1

-կիոկուշին-կարատե -1:

2015-2016 ուս.տարում անց են կացվել ներդպրոցական միջոցառումներ՝ ֆուտբոլ, ձյուդո, թաեքվոնդո, կիոկուշին կարատե, աթլետիկա մարզաձևերից:

Ուսումնական տարում մարզադպրոցի կողմից ուսումնական խմբերը ստուգվել են և գնահատվել: Տարեվերջին փոխադրական ստուգարքներին մասնակցել են 380 մարզիկ, որից 333-ը փոխադրվել են հաջորդ ուսումնական տարվա խմբերը, իսկ 47-ը մարզադպրոցից դուրս են մնացել: Մարզիկների փոխադրումը մի խմբից հաջորդ ուսումնական տարվա խումբը կատարվում է նորմատիվային ցուցանիշների հիման վրա: Մարզադպրոցի հաջողություններում մեծ ներդրում ունեն ուսումնական մասի վարիչ Մարինա Մուսայելյանը, լավագույն մարզիկ Արկադի Հակոբյանը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ

Մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Էմիլ Հովհաննիսյանի հաշվետվությունից[402] տեղեկանում ենք, որ մարզադպրոցը գործել է 1994 թվականից, նորանկախ հանրապետությունում: Սակայն մինչ այդ՝ 1988-1991 թվականներին, մարզադպրոցը գործել է ընդհատումներով՝ պայմանավորված պատերազմական իրավիճակով:

«Ստեփանակերտի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մարզական, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Մարզադպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ԼՂՀ օրենսդրությամբ և հաստատված կանոնադրությամբ: Հաստատությունը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական

հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Ֆիզիկական կուլտուրան ուսումնական գործընթաց է, որն ուղղված է մարզիկի գիտելիքների և հմտությունների ձևավորմանն ու ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Մարզիկի ֆիզիկական դաստիարակության համար պարտադիր պայմաններից է մարզիկի ֆիզիկական և սպորտային, մասսայական-առողջարարական և ուսումնական մասի ճիշտ կազմակերպումը: Մարզիկի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության համար մարզադպրոցի տնօրինության առջև դրվում է ֆիզիկական զարգացման պատշաճ մակարդակ ապահովելու խնդիրը:

2011-2015թթ. ընկած ժամանակահատվածում մարզադպրոցը քաղաքապետարանի աջակցությամբ իրականացնում է տարբեր մարզաձևերից մարզական կատարելության ձևավորման գործընթացը, ապահովում միջազգային և հանրապետական մրցումներում Ստեփանակերտի հավաքական թիմի մասնակցությունը, կազմակերպում ուսումնամարզական հավաքներ:

Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստության, ուսումնամարզական սպորտային կատարելագործման խմբեր: 2011-2015 ուսումնական տարիների ընթացքում մարզադպրոցի խմբերում քանակական մեծ աճ է գրանցվել: Եթե նախկինում (2008-2010թթ.) գործում էր 39 խումբ՝ 370 մարզիկների ընդգրկմամբ, ապա 2011-2015 թվականներին խմբերի թիվը հասնում էր 48-ի՝ 639 մարզիկների ընդգրկմամբ:

Մարզադպրոցը հասել է մեծ հաղթանակների: Այսպես, օրինակ, 2014թ. մարզադպրոցի բասկետբոլի բաժանմունքի պատանիների հավաքական թիմի անդամներ Յուրի Հարությունյանը, Արամ Մկրտչյանը, Արման Գրիգորյանը և Դավիթ Միքայելյանը՝ մարզիչ Անդրեյ Սարումյանի գլխավորությամբ, ՀՀ հավաքականի կազմում մասնակցել են Անկարա քաղաքում կայացած՝ մինչև 15 տարեկանների բասկետբոլի պատանեկան միջազգային մրցաշարին և զբաղեցրել 2-րդ տեղը:

2014թ. մարզադպրոցի թայ-քիքի բոքսինգի բաժանմունքի սան Դավիթ Հայրապետյանը՝ մարզիչ Գարեգին Աղաբալյանի գլխավորությամբ, մասնակցել է Լատվիայում կայացած թայ-քիք բոքսինգի միջազգային առաջնությանը և դարձել Եվրոպայի չեմպիոն:

2015թ. մարզադպրոցի թայ-քիքի բոքսինգի բաժանմունքի սան Դավիթ Հայրապետյանը՝ մարզիչ Գարեգին Աղաբալյանի գլխավորությամբ, մասնակցել է Թայլանդում կայացած՝ Մուայ Թայի առաջնությանը և դարձել աշխարհի չեմպիոն:

2015թ. մարզադպրոցի կարատե-կիոկուշին բաժանմունքի սան Մարնա Բարսեղյանը՝ մարզիչ Սուրեն Աբրահամյանի գլխավորությամբ, մասնակցել է Հունաստանում կայացած Կարատե կիոկուշինի աշխարհի առաջնությանը և գրավել 3-րդ մրցանակային տեղը:

Կան մեծ նվաճումներ նաև հանդբոլ մարզաձևում, և դրան մեծապես նպաստել է «ԼՂՀ հանդբոլի ֆեդերացիա» ՀԿ նախագահ Սուրեն Գրիգորյանը:

2015թ. մարզադպրոցի սեղանի թենիսի բաժանմունքի սաները՝ մարզիչ Վարուժան Բաղդասարյանի գլխավորությամբ, մասնակցել են Երևան քաղաքում կայացած ՀՀ ս/թենիսի թիմային առաջնությանը: Արդյունքում տղաների թիմը գրավեց 2-րդ տեղը, իսկ աղջիկների թիմը՝ 3-րդ տեղը:

2015թ. մարզադպրոցի սպորտային պարերի բաժանմունքի սաները՝ մարզիչ Մարինա Վարունցի գլխավորությամբ, մասնակցել են Երևանում կայացած՝ ապորտային պարերի բաց առաջնությանը: Եվ սոլո կարգում, և զույգերի միջև մարզադպրոցի սաները գրավեցին պատվավոր մրցանակային տեղեր:

Մարզադպրոցի նպատակն ու խնդիրներն են.

ա/ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցներով սովորողների առողջության պահպանումը և ամրապնդումը,

բ/ հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, ֆիզիկական պատրաստության ապահովումը,

գ/ ընտրած մարզաձևում սովորողների սպորտային ունակությունների կատարելագործումը,

դ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստումը,

ե/ հանրակրթական դպրոցի հետ սերտ կապի հաստատումը, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպումը և օժանդակումը:

զ/ միջազգային ասպարեզում ԼՂՀ հավաքական թիմերի հաջող մասնակցության ապահովման ծրագրերի մշակումը և իրականացումը,

է/ մարզիկների առողջության ամրապնդումը, անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը, առողջ ապրելակերպի ձևավորումը, ակտիվ հանգստի կազմակերպումը,

ը/ սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացումը և մասսայականացումը, նշանակալի նվաճումների հասած մարզիկներին խրախուսումը,

թ/ սպորտային օբյեկտների նյութատեխնիկական բազայի ապահովումը,

ժ/ զինվորական ծառայությանը նախապատրաստելու նպատակով դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կատարելագործումը,

ի/ ժամանակակից նոր սպորտհրապարակների և դահլիճների կառուցման համար միջոցների հայթայթումը,

լ/ ֆիզկուլտ-առողջարարական զանգվածային միջոցառումների անցկացումը,

խ/ օպտիմալ պայմանների ստեղծումը մարզիկի ֆիզիկական զարգացման համար:

Մարզադպրոցի գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է:

Մարզադպրոցը զբաղվում է հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

ա / լրացուցիչ մարզաառողջարարական ծրագրերի իրականացում,

բ/ ճամբարների կազմակերպում,

գ/ սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն և այլն:

Մարզադպրոցը ձգտում է շեշտը դնել հենց դրա վրա, քանի որ այսօրվա պատանին վաղվա զինվորն է, ու զինվորը պետք է լինի ֆիզիկապես առողջ և տոկուն:

Զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու համար մարզադպրոցը քաղաքապետարանի աջակցությամբ կազմակերպում է մարզական միջոցառումներ, ինչպես նաև տոնական օրերին նվիրված ուրախ մեկնարկներ: Ի դեպ, մարզադպրոցի բոլոր բաժանմունքների սաները ակտիվորեն մասնակցում են ներքաղաքային բոլոր միջոցառումներին:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում սպորտի զարգացմանը: Վերջինիս հիմքում ընկած են ինչպես բնակչության առողջ ապրելակերպի ամրապնդումը, այնպես էլ նյութատեխնիկական բազայի ապահովումը, սպորտային

դահլիճների, հրապարակների, լողավազանների կառուցումը և այլն:

Ներկայումս մարզադպրոցում աշխատում են բարձրագույն կրթությամբ մասնագետներ, որոնց մեջ կան գիտության 2 վաստակավոր գործիչներ, 4 սպորտի վարպետներ և միջազգային կարգի սպորտի 1 վարպետ: Ստեփանակերտի քաղաքապետարանը՝ քաղաքապետ Սուրեն Ալեքսանդրի Գրիգորյանի գլխավորությամբ, աջակցում է օտարերկրյա սպորտային կազմակերպությունների հետ միջազգային կապերի հաստատմանը, սպորտային պատվիրակությունների փոխայցելությունների և համատեղ միջոցառումների կազմակերպմանը, մանկավարժական աշխատանքների և սովորողների փոխանակման համաձայնագրերի կնքմանը:

Մարզադպրոցն իր երկարատև գործունեության ընթացքում ձգտում է մարզիկների մոտ սերմանել հայրենասիրական և բարոյական հատկանիշներ՝ ազնվություն, բարություն, ինքնակառավարում, կարգապահություն, հանդուրժողականություն, խմբային համատեղ աշխատանք, դրանց հետ մեկտեղ կամքի ուժ՝ հաստատակամություն, ճշտապահություն, աշխատասիրություն: Կրթության ուսուցման այս կանոնները հանդիսանում են մարզադպրոցի հիմնական գործառույթները:

Ստորև ներկայացնում ենք Ստեփանակերտի մանկապատանեկան մարզադպրոցի նվաճումները 2013-2015 թվականներին:

2013-2014թթ. մարզադպրոցն իր առջև դրել է որակի բարձրացման, հավաքական թիմերի համախմբման, մարզադպրոցում գործող մարզաձևերի մասսայականացման խնդիրները:

Ըստ տնօրինության կողմից հաստատված բուժստուգման պլան-գրաֆիկի՝ բոլոր բաժանմունքների սաները հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին անցել են պարտադիր բուժստուգում:

Մարզադպրոցի բասկետբոլի բաժանմունքի սաներ Յուրի Հարությունյանը, Արամ Մկրտչյանը (մարզիչ՝ Ա. Սարումյան), Արման Գրիգորյանը (մարզիչ՝ Ս. Ասծատրյան) ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի կողմից հրավիրվել են ՀՀ հավաքական թիմ՝ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում հավաքականի կազմում անցկացնելու մի շարք ընկերական հանդիպումներ:

Արդյունքում մարզադպրոցի սան Յուրի Հարությունյանը նոյեմբերի 5-8-ը մեկնել է Վրաստանի մայրաքաղաք և հավաքականի կազմում անցկացրել մի շարք ընկերական հանդիպումներ:

Զբոսաշրջության բաժանմունքի խմբերը ակտիվորեն կազմակերպում են արշավներ տարբեր երթուղիներով, իսկ եղանակի անբարենպաստ լինելու դեպքում անց են կացնում տեսական պարապմունքներ:

Մանկապատանեկան մարզադպրոցի բաժանմունքների սաները ակտիվորեն մասնակցում են ներքաղաքային, շրջանային, հանրապետական, Հայաստանի Հանրապետության, Եվրոպայի, միջազգային մրցաշարերին:

2013թ. սեպտեմբերի 19-23-ը մարզադպրոցի բռնցքամարտի բաժանմունքի սաները ակտիվ մասնակցություն ունեցան ՀՀ Մարտունի քաղաքում անցկացված բռնցքամարտի միջազգային մրցաշարին: Մրցաշարում 50կգ քաշային կարգում մարզադպրոցի սան Դավիթ Ղալայանը գրավեց 1-ին մրցանակային տեղը, 32կգ քաշային կարգում Տիգրան Իսախանյանը նույնպես գրավեց 1-ին մրցանակային տեղը (մարզիչ՝ Նարեկ Աբրահամյան):

Սեպտեմբեր ամսում մարզադպրոցի թայ-քիք բոքսինգի բաժանմունքի սաները ակտիվ մասնակցություն ունեցան Թբիլիսիում անցկացված՝ թայ-քիք բոքսին-

գի միջազգային մրցաշարին: Մրցաշարում 60կգ քաշային կարգում մարզադպրոցի մարզիչ Ալեքսան Աղաբալյանը գրավեց 1-ին մրցանակային տեղը, 55կգ քաշային կարգում մարզադպրոցի սան Տիգրան Հարությունյանը նույնպես գրավեց 1-ին մրցանակային տեղը, իսկ 45կգ քաշային կարգում Արման Ղազարյանը գրավեց 2-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Գարեգին Աղաբալյան):

2013թ. հոկտեմբերի 5-12-ը Երևանում կայացավ 1999-2000թթ. ծնված պատանիների ՀՀ բասկետբոլի առաջնություն: Մարզադպրոցի պատանիների հավաքական թիմը մասնակցեց առաջնությանը և թեժ մրցապայքարում գրավեց 3-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Գարիկ Սարգսյան):

2013թ. հոկտեմբերի 5-12-ը Երևանում կայացավ 1999-2000թթ. ծնված աղջիկների ՀՀ բասկետբոլի առաջնություն: Մարզադպրոցի աղջիկների հավաքական թիմը ակտիվ մասնակցություն ունեցավ առաջնությանը (մարզիչ՝ Գևորգ Շահնազարյան):

2013թ. հոկտեմբեր ամսում Ստեփանակերտ քաղաքում անցկացվեց ԼՂՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավո) հիշատակին նվիրված՝ սեղանի թենիսի հուշամրցաշար: Անհատական առաջնությունում մարզադպրոցի սաներ Աշոտ Արզումանյանը գրավեց 2-րդ տեղը: Թիմային առաջնությունում աղջիկների հավաքական թիմը զբաղեցրեց 1-ին մրցանակային տեղը, տղաների թիմը նույնպես գրավեց 1-ին պատվավոր մրցանակային տեղը (մարզիչ՝ Սերգեյ Ավանեսյան):

2013թ. հոկտեմբերի 27-ին մարզադպրոցի կարատե-կիոկուշին բաժանմունքի սաները մասնակցեցին Երևանում անցկացված կիոկուշին-կան կարատե-դո Համահայկական ֆեդերացիա Սամուրայ 2013թ. մրցաշարին: Մարզադպրոցի սաներ Դավիթ Կարապետյանը գրավեց 1-ին տեղը, իսկ Վարդան Կարապետյանը՝ 2-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Սուրեն Աբրահամյանը):

2013թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը մարզադպրոցի թայ-քիք բոքսինգի բաժանմունքի սաները ակտիվ մասնակցություն ունեցան Թբիլիսիում անցկացված թայ-քիք բոքսինգի Եվրասիայի առաջնությանը: 42կգ քաշային կարգում (13-15 տարեկանների միջև) թեժ մրցապայքարում մարզադպրոցի սան Արման Գալստյանը գրավեց 2-րդ մրցանակային տեղը, Ալեքսան Աղաբալյանը 60կգ քաշային կարգում (18 տարեկանից բարձր) գրավեց 3-րդ տեղը, 57կգ քաշային կարգում (13-15 տարեկանների միջև) Դավիթ Հայրապետյանը գրավեց պատվավոր 1-ին տեղը, (մարզիչ՝ Գարեգին Աղաբալյան): Մարզիչ Գարեգին Աղաբալյանը Եվրասիայի առաջնությունում պարգևատրվեց պատվոգրով՝ որպես լավագույն մարզիչ:

2013թ. դեկտեմբերի 14-ին մարզադպրոցի կարատե-կիոկուշին բաժանմունքի սաները մասնակցեցին կարատե-կիոկուշին կադետների Բուլղարիայի 2013թ. բաց առաջնությանը: Մարզադպրոցի սաներ Դավիթ Կարապետյանը 45-55կգ քաշային կարգում գրավեց 1-ին մրցանակային տեղը, Վարդան Կարապետյանը 60 կգ քաշային կարգում նույնպես գրավեց 1-ին մրցանակային տեղը (մարզիչ՝ Սուրեն Աբրահամյան):

Համաձայն մարզադպրոցի կողմից հաստատված ուսումնական պլանի՝ դեկտեմբեր ամսում անց են կացվել դասակարգային մրցումներ: Մրցումներին ընդգրկված էին մարզադպրոցի բոլոր բաժանմունքների խմբերը:

2014թ. փետրվարի 23-ին Ստեփանակերտում կայացավ ԼՂՀ ԿՖՄԸ մանկապատանեկան մարզադպրոցի և Ստեփանակերտի Սանդա Ուշուի բաց առաջնություն՝ նվիրված Հայրենյաց պաշտպանի օրվան: Բաց առաջնությունում մարզադպրոցի սաները գրավեցին պատվավոր մրցանակային տեղեր: Սերգեյ Գրի-

գորյանը 52կգ քաշային կարգում (16-18 տարեկանների միջև) գրավեց 3-րդ տեղը, Արման Գալստյանը 44 կգ քաշային կարգում (12-14 տարեկանների միջև) գրավեց 1-ին տեղը, Էդվին Վարդանյանը 52 կգ քաշային կարգում (14-16 տարեկանների միջև) գրավեց 2-րդ տեղը, Դավիթ Հայրապետյանը 65կգ քաշային կարգում (14-16 տարեկանների միջև) գրավեց 1-ին տեղը, Էրիկ Հարությունյանը 70կգ քաշային կարգում (18+ տարեկանների միջև) գրավեց 1-ին տեղը, Արշակ Գրիգորյանը 56կգ քաշային կարգում (14-16 տարեկանների միջև) գրավեց 2-րդ տեղը: Դավիթ Հայրապետյանին շնորհվեց պատվոգիր՝ 65կգ քաշային կարգում (14-16 տարեկանների միջև) լավագույն տեխնիկա դրսևորելու համար: Շնորհակալագիր տրվեց ԼՂՀ մարտարվեստների ասոցիացիայի փոխնախագահ և գլխավոր մարզիչ Գարեգին Աղաբալյանին՝ ԼՂՀ Ուշուի ֆեդերացիայի հետ համագործակցելու և աջակցելու համար:

Փետրվարի 23-26-ը Երևանում կայացավ ՄԿՍՎ Արմենակ Ալաչաչյանի անվան բասկետբոլի 2000-2001թթ. ծնված պատանիների 2014թ. միջազգային մրցաշար: Մարզադպրոցի պատանիների հավաքական թիմը ակտիվ մասնակցություն ունեցավ մրցաշարին, իսկ թիմի անդամ Յուրի Հարությունյանը ընդգրկվեց լավագույն հնգյակի կազմը (մարզիչ՝ Գարիկ Սարգսյան):

Մարտի 7-9-ը Ստեփանակերտ քաղաքում կայացավ ԼՂՀ սեղանի թենիսի կադետների և մինի-կադետների անհատական մրցաշար: Անհատական առաջնությունում մարզադպրոցի սան Սերգեյ Ավանեսյանը գրավեց 1-ին տեղը, Յանա Պետրոսյանը նույնպես գրավեց 1-ին տեղը, իսկ Ինեսա Արզումանյանը և Աշոտ Առուշանյանը գրավեցին 2-դ տեղը (մարզիչ՝ Վարուժան Բաղդասարյան):

Մարտի 3-19-ը Ստեփանակերտ քաղաքում կայացավ 1998-1999թթ. և 2000-2001թթ. ծնված աղջիկների վոլեյբոլի բաց առաջնություն: 1998-1999թթ. ծնված աղջիկների բաց առաջնությունում մարզադպրոցի հավաքական թիմը գրավեց 3-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Կարինե Կոստանդյան), իսկ 2000-2001թթ. ծնված աղջիկների բաց առաջնությունում մարզադպրոցի հավաքական թիմը գրավեց 1-ին մրցանակային տեղը (մարզիչ՝ Անուշ Գրիգորյան):

Մարտի 6-11-ը մարզադպրոցի բռնցքամարտի բաժանմունքի սաները մասնակցեցին Երևանում կայացած՝ պատանիների բռնցքամարտի առաջնությանը:

Մարտի 11-15-ը մարզադպրոցի բասկետբոլի աղջիկների հավաքական թիմը մասնակցեց ԼՂՀ դպրոցականների 5-րդ սպարտակիադայի ծրագրով աղջիկների միջև բասկետբոլի առաջնությանը: Արդյունքում թիմը գրավեց 2-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Գևորգ Շահնազարյան):

Մարտի 13-20-ը մարզադպրոցի բռնցքամարտի բաժանմունքի սաները մասնակցեցին Երևանում կայացած՝ երիտասարդների բռնցքամարտի ՀՀ առաջնությանը, իսկ Դավիթ Ղալայանը ընդգրկվեց ՀՀ բռնցքամարտիկների հավաքականի կազմը:

Մարտի 17-22-ը մարզադպրոցի բասկետբոլի պատանիների հավաքական թիմը մասնակցեց ԼՂՀ դպրոցականների 5-րդ սպարտակիադայի ծրագրով պատանիների միջև բասկետբոլի առաջնությանը: Արդյունքում թիմը գրավեց 1-ին մրցանակային տեղը (մարզիչ՝ Անդրեյ Սարումյան):

Մարտի 25-30-ը մարզադպրոցի հանդբոլի բաժանմունքի աղջիկների հավաքական թիմը մասնակցեց Արթիկ քաղաքում մինչև 16 տարեկան աղջիկների միջև հանդբոլի ՀՀ առաջնությանը և գրավեց 2-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Վարդգես Մխիթարյան):

Մարտի 21-23-ը Երևան քաղաքում կայացավ կադետների և մինի-կադետների

սեղանի թենիսի ՀՀ առաջնություն: Մինի-կադետների անհատական առաջնությունում մարզադպրոցի սան Լեոնիդ Ավանեսյանը գրավեց 2-րդ մրցանակային տեղը, իսկ կադետների անհատական առաջնությունում Սերգեյ Ավանեսյանը գրավեց 3-րդ մրցանակային տեղը: Խառը զուգախաղերում Սերգեյ Ավանեսյանը և Աշոտ Առուշանյանը գրավեցին 3-րդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Վարուժան Բաղդասարյան):

Մարտի 30-ին մարզադպրոցի կարատե-կիոկուշին բաժանմունքի սաները Երևանում մասնակցեցին կիոկուշին-կան կարատե-դո Հայաստանի գավաթի առաջնությանը: Դավիթ Կարապետյանը և Բորիս Գրիգորյանը -29կգ քաշային կարգում (8-9 տարիքային խմբում) գրավեցին 1-ին մրցանակային տեղը: Տիգրան Սողոմոնյանը 29կգ քաշային կարգում (14-15 տարիքային խմբում) նույնպես գրավեց 1-ին մրցանակային տեղը: Անդրեյ Սարգսյանը 35+ կգ քաշային կարգում (8-9 տարիքային խմբում) և Բորիս Սարգսյանը -28կգ քաշային կարգում (6-7 տարիքային խմբում) գրավեցին 2-րդ մրցանակային տեղերը: Սուրեն Ծատուրյանը -38կգ քաշային կարգում (8-9 տարիքային խմբում), Ալեքսանդր Հակոբյանը 14-15 տարիքային խմբում և Մարտին Քարամյանը -37կգ քաշային կարգում (12-13 տարիքային խմբում) գրավեցին 3-րդ մրցանակային տեղերը: Կիոկուշին-կան կարատե-դո Հայաստանի գավաթի առաջնությունում մարզադպրոցի սան Վարդան Կարապետյանը պարգևատրվեց պատվոգրով՝ լավագույն տեխնիկա դրսևորելու համար (մարզիչ՝ Սուրեն Աբրահամյան):

Համաձայն 2013-2014թթ. ուսումնական պլանի՝ ապրիլ-մայիս ամիսներին մարզադպրոցի տնօրինությունը բոլոր մարզաձևերից անց է կացրել մարզական միջոցառումներ՝ նվիրված Մայիսյան եռատոնին: Միջոցառումներում ընդգրկված էին մարզադպրոցի բոլոր բաժանմունքների սաները: Բոլոր մասնակիցները մարզադպրոցի կողմից պարգևատրվել են հուշանվերներով, իսկ հաղթանակած թիմերը՝ նաև պատվոգրերով:

Մայիսի 4-ին «Կարկառ» մարզազբոսաշրջային բազայում կազմակերպվել ու անց է կացվել զբոսաշրջային 4-րդ հանրահավաք-մրցույթ՝ նվիրված Մայիսյան եռատոնին: Մարզադպրոցը մրցումներին ներկայացրել է 6 թիմ: Մրցումների հիմնական նպատակներից էին ԼՂՀ-ում զբոսաշրջության զարգացումը և մասսայականացումը, մարզիկների սպորտային վարպետության կատարելագործումը, հայրենասիրության սերմանումը, առողջ ապրելակերպի ձևավորումն ու ակտիվ հանգստի կազմակերպումը:

Մայիսի 27-ին Մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվել ու անց է կացվել մարզադպրոցի սպորտային պարերի բաժանմունքի տարեկան հաշվետու համերգ՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան: Միջոցառումն անց է կացվել բարձր մակարդակով, իսկ բոլոր մասնակիցները մարզադպրոցի կողմից պարգևատրվել են նվերներով:

Մանկապատանեկան մարզադպրոցում մարզիկների պատրաստման, հավաքական թիմերի պատրաստման գործում մեծ ներդրում ունեն մարզիչներ Էմիլ Հովհաննիսյանը՝ տնօրեն, ՀՀ վաստակավոր մարզիչ Անահիտ Գասպարյանը (ուսմասվար, բասկետբոլի հավաքականի մարզիչ), Գարեգին Աղաբալյանը՝ միջազգային կարգի սպորտի վարպետ, Հայկ Հայրապետյանը՝ խառը մենամարտի ՄՄԱ Եվրոպայի և աշխարհի մրցանակակիր, Դավիթ Հայրապետյանը՝ Թայլանդի աշխարհի ոսկե մեդալակիր և ուրիշներ:

Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցը

Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցը ստեղծվել է 1983թ. հոկտեմբերին: Առաջին տնօրենը եղել է Վալերիկ Հարությունյանը, ուսմասվարը՝ Վլադիկ Առստամյանը:

Մարզադպրոցում գործում էին

Ֆուտբոլ՝ 15 խումբ

Մարզիչներ՝ Վլադիկ Առստամյան՝ 3 խումբ, Մարտունի
Սեյրան Քամալյան՝ 2 խումբ, Մարտունի
Վալերիկ Հարությունյան՝ 1 խումբ, Մարտունի

Ըմբշամարտ՝ Զարմիկ Շահրամանյան՝ 3 խումբ, Ճարտար
Արմեն Մանգասարյան՝ 2 խումբ, Մարտունի

Ծանրամարտ՝ Նիկոլայ Ավագյան՝ 2 խումբ, Ճարտար
Էդիկ Մովսիսյան՝ 2 խումբ, Բերդաշեն:

Մարզադպրոցի սաները մասնակցում էին ԼՂՀ և ՀՀ առաջնություններին, որտեղ գրավում էին մրցանակային տեղեր:

Բերձորի մանկապատանեկան մարզադպրոցը

Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Բերձորի դպրոցը ստեղծվել է 2001թ. և մինչև 2015թ. գործել որպես «Բերձորի արվեստի և մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ:

Առաջին տնօրենը եղել է Վ. Ղարիբյանը, նրան փոխարինել է Գ. Մանուկյանը: Իսկ 2014թ. տնօրինում է Կ.Գ. Մովսեսյանը:

Դպրոցում գործում են ձյուդոյի, շախմատի, բասկետբոլի, ձեռքի գնդակի, բռնցքամարտի, ֆուտբոլի խմբեր:

Խմբեր կան ոչ միայն Բերձորում, այլ նաև Կովսականում, Ուռեկանում, Վակունիսում:

Մարզիչներից աչքի էին ընկնում ձեռքի գնդակի մարզիչ Թամարա Հովհաննիսյանը, որն ընդգրկված էր ՀՀ հանդբոլի հավաքականում, ձյուդոյի մարզիչ Վրեժ Սարգսյանը, շախմատի մարզիչ Ավետիկ Հունանյանը, որոնց մարզիկները մասնակցել են տարբեր մրցումների թե ԼՂՀ-ում, թե ՀՀ-ում:

2014-2015 ուս.տարում մարզադպրոցն ուներ մոտ 20 մարզիկ, որոնք շարունակել են ուսումը ֆիզկուլտինստիտուտում:

Մարզադպրոցում ներկայումս (2016-2017 ուս.տարում) աշխատում են ձեռքի գնդակի մարզիչ, դպրոցի նախկին սան Կարինե Պետրոսյանը, ով ընդգրկված է ՀՀ հանդբոլի հավաքականում:

Մարզադպրոցն ունի վարչական հատված, որը ժամանակին վերանորոգվել է նկարիչ Ս. Մուրադյանի դստեր Զարուհի Մուրադյանի և իր ամուսնու կողմից: Պարապմունքներն անց են կացվում թիվ 1 դպրոցի դահլիճում: Կովսականում՝ Կովսականի դպրոցի դահլիճում, իսկ Ուռեկանում հատկացված է մի շինություն, որն ունի հարմարություններ և կահավորված է անհրաժեշտ սպորտային սարքավորումներով:

2016-2017 ուս.տարում Բերձորի մանկապատանեկան մարզադպրոցում ընդգրկված են 160 երեխա, 22 մարզիչ:

ԼՂՀ Շահումյանի «Խաչեն» մանկապատանեկան մարզադպրոցը

Շահումյանի «Խաչեն» մանկապատանեկան մարզադպրոցը գործում է 2004թ. հունվարի 3-ից՝ Սեյրան Մանուչարյանի տնօրինությամբ, իսկ 2007-2009թթ. տնօրենի պաշտոնում աշխատել են Արմեն Ասրյանը, Հարություն Մանուկյանը, 2009թ.-ից առ այսօր տնօրենի պաշտոնում աշխատում է Արմեն Ասրյանը:

Մարզադպրոցում գործող մարզաձևերն են՝

1.Վոլեյբոլ-2 խումբ
2.Թեթև աթլետիկա-2 խումբ
3.Սեղանի թենիս-2 խումբ
4.Ձյուդո
5.Ըմբշամարտ
6.Բասկետբոլ
7.Ֆուտբոլ:

Մարզադպրոցի լավագույն մարզիչերն են՝

1.Հարություն Մանուկյան - ազատ ոճի ըմբշամարտի մարզիչ: Ծնվել է 1965թ. սեպտեմբերի 9-ին: 1987-1993թթ. սովորել է Երևանի պետական ֆիզ.ինստիտուտում: Տարբեր քաշային կարգերում մասնակցել է մի շարք մրցումների: Հանդիսանում է ՀՀ և ԽՍՀՄ չեմպիոն:

Նունե Օսիպյան-ձյուդոյի մարզիչ: Ծնվել է 1983թ. հունվարի 14-ին: 2010թ. ավարտել է Չարենցավանի պետական քոլեջը, ունի ֆիզիկական դաստիարակության ուսուցչի որակավորում: Տարբեր քաշային կարգերում հանդիսանում է ՀՀ չեմպիոն:

Մարզադպրոցի մարզիկներն են՝

1.Մանվել Մանուկյան - ԼՂՀ ազատ ըմբշամարտի առաջնության 2-րդ և 3-րդ մրցանակակիր
2.Մանուկ Մանուկյան - ԼՂՀ ազատ ըմբշամարտի առաջնության 2-րդ և 3-րդ մրցանակակիր
3.Դավիթ Մկրտչյան - ԼՂՀ ձյուդոյի առաջնության 1-ին, 2-րդ մրցանակակիր
4.Հրաչյա Կիրակոսյան - ԼՂՀ շախմատի առաջնության 2-րդ մրցանակակիր
5.Դավիթ Մանուչարյան - ԼՂՀ շախմատի առաջնության 1-ին մրցանակակիր
6.Ամալյա Գրիգորյան - ԼՂՀ թեթև աթլետիկայի առաջնության 2-րդ մրցանակակիր (800մ)
7.Էդուարդ Ղազարյան - ԼՂՀ թեթև աթլետիկայի առաջնության 2-րդ մրցանակակիր (հեռացատկ):

ԼՂՀ հավաքականի կազմում ընդգրկված մարզիկներն են՝

1.Լիլիթ Բեժանյան-վոլեյբոլ
2.Մանուկ Մանուկյան - ըմբշամարտ
3.Էդգար Գալստյան - ֆուտբոլ:

Մարզադպրոցի շենքը նորակառույց է, շահագործման է հանձնվել 2010թ. սեպտեմբերի 1-ից:

Մարզադպրոցում սովորողների քանակական կազմը՝ ըստ ուսումնական տարիների.

1.2007-2008 ուս.տարի - 108 մարզիկ
2.2008-2009 ուս.տարի - 147 մարզիկ
3.2009-2010 ուս.տարի - 104 մարզիկ

4.2010-2011 ուս.տարի - 105 մարզիկ
5.2011-2012 ուս.տարի - 165 մարզիկ
6.2012-2013 ուս.տարի - 135 մարզիկ
7.2013-2014 ուս.տարի - 138 մարզիկ
8.2014-2015 ուս.տարի - 96 մարզիկ
9.2015-2016 ուս.տարի - 105 մարզիկ:

Մարզադպրոցի սաները սովորում են ԼՂՀ և ՀՀ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այդ մասին մանրամասն նշվել է աշխատության 2-րդ և 3-4-րդ գլուխներում:

Եզրափակելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային շրջանների հանրակրթական դպրոցների, արհեստագործական (նախնական մասնագիտական) ուսումնարանների, ռազմական վարժարանի, արվեստի, պարարվեստի քոլեջի, երաժշտական, մարզական դպրոցների վերաբերյալ համառոտ տեղեկությունները, պետք է ասել, որ այդ հաստատություններում կրթություն ու դաստիարակություն են ստացել հազարավոր սաներ, ովքեր հետագայում դարձել են գիտության, մշակույթի, ռազմական, քաղաքական և այլ ոլորտների ականավոր գործիչներ և մեր անկախ պետականության ամրապնդման ճանապարհին հաղթահարել են բազում դժվարություններ՝ մեր հանրապետության անկախությունը ճանաչելու միտումով:

Անգնահատելի է այդ գործիչների դերը, նրանցից շատերը մասնակցել են Արցախյան ազգային ազատագրական պայքարին և այսօր էլ շարունակում են իրենց արգասավոր գործունեությունը (այդ մասին կնշվի աշխատության առանձին հատորում):

ԱՄՓՈՓՈՒՄ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (1992-2016թթ.)

Արպատ Ավանեսյան, Գրիգորի Հարությունյան

Երկարամյա ուսումնասիրությունների ընթացքում հեղինակներին հաջողվել է հաղթահարել ծառացած բազում դժվարությունները և կատարել իրենց առջև դրված խնդիրը՝ հրապարակի վրա դնել պատմական Արցախի մի մասի՝ ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի ամբողջական պատմության՝ 5-րդ դարից մինչև 2016թ. ժամանակաշրջանն ընդգրկող եռահատոր աշխատությունը:

Աշխատության **առաջին հատորում** ուսումնասիրության է ենթարկվել պատմական Արցախի կրթական համակարգի ամբողջ պատմությունը՝ 5-րդ դարից մինչև 20-րդ դարի երկրորդ տասնամյակն ընդգրկող ժամանակաշրջանը («Արցախի կրթական համակարգը», Դիզակ պլյուս հր., Ստեփանակերտ, 2014, 480 էջ):

Երկրորդ հատորում ուսումնասիրության է ենթարկվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգի ամբողջական պատմությունը («Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը 1923-1988թթ.», Դիզակ պլյուս հր., Ստեփանակերտ, 2015, 504 էջ):

Աշխատության **երրորդ հատորում** ամբողջական ուսումնասիրության է ենթարկվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի պատմությունը 1991-2016թթ.: Լինելով «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը 1923-1988թթ.» խորագիրը կրող գրքի տրամաբանական շարունակությունը, աշխատության հիմնահարցերի ուսումնասիրության և վերլուծության սկզբնակետը վերցվել է 1988թ., հանգամանորեն ցույց տալու համար, թե ինչպիսին էր ԼՂԻՄ-ի կրթական համակարգի վիճակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հաստատման նախօրյակին (1988-1991թթ.):

Հարկ է նշել, որ աշխատության երրորդ հատորի առաջին և երկրորդ գլուխներում ամբողջական ուսումնասիրության է ենթարկվել միայն ԼՂՀ կրթական համակարգի մեջ ներառվող նախադպրոցական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների, հանրակրթական դպրոցների, արհեստագործական ուսումնարանների, ռազմական վարժարանի, արվեստի, պարարվեստի քոլեջի, երաժշտական, մարզական դպրոցների ամբողջական պատմությունը, տրվել են նորանկախ Արցախի Հանրապետությունում կրթական համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությունները, համահայկական կրթական դաշտում կրթական համակարգի միասնական կառավարման հիմնախնդիրները, կրթական համակարգում իրականացվող բովանդակային բարեփոխումները, կրթական համակարգի գործիչների, կրթության շրջանային բաժինների կազմակերպիչների, հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքները նորովի պլանավորող ու արդյունավետ կազմակերպող վաստակաշատ մանկավարժների գործունեությունը:

Անժխտելի փաստ է, որ հանրապետության կրթական համակարգի մեջ ներառվում են նաև միջնակարգ մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնց ամբողջական պատմությունը պետք է ուսումնասիրության ենթարկվի և լուսաբանվեն միջին մասնագիտական և բարձրագույն կրթության

ոլորտում ընթացող բովանդակային բարեփոխումները, կառավարման միասնական քաղաքականությունը, հիմնախնդիրները համահայկական կրթադաշտում: Այս տեսանկյունով էլ աշխատության հեղինակները նպատակահարմար են գտել այն դարձնել հատուկ ուսումնասիրության առարկա և ամբողջական պատմությունը ներկայացնել **չորրորդ հատորում:**

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը և Արցախի նորաստեղծ հանրապետությունը լայն հնարավորություն ստացան միասնաբար լուծելու իրենց առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները: Նորանկախ Արցախի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերին զուգընթաց, արմատական վերափոխումներ կատարվեցին նաև հանրակրթության ոլորտում:

Կրթության համակարգը՝ լինելով խորհրդային համակարգի ժառանգորդը, թևակոխեց անցումային փոփոխությունների դժվարին փուլ: Անկախությանը հաջորդած առաջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի և Արցախի տնտեսական ճգնաժամը բացասականորեն անդրադարձավ նաև կրթության համակարգի վրա: Անցումային փուլում (1991-1995թթ.) ի հայտ եկան այնպիսի գործոններ, որոնք դանդաղեցրին և խոչնդոտեցին կրթական համակարգի բարեփոխումը և առաջընթաց զարգացումը:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծվել կրթական համակարգի հետագա զարգացման համար: ԼՂՀ կառավարության, ԿԳՄ (սպորտի) նախարարության կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ հանրակրթական դպրոցների, ուսումնական հաստատությունների և այլ ոլորտների աշխատանքների վերականգնման անհետաձգելի միջոցառումների վերաբերյալ:

Այդ միջոցառումների ընդհանուր համակարգում կարևոր քայլ հանդիսացավ ԼՂՀ կառավարության 1994թ. մայիսի 16-ին ընդունած որոշումը, որով նախատեսվում էր ոչ միայն վերականգնել, ալև զգալի չափով գերազանցել տնտեսության, մշակույթի և կրթության բոլոր բնագավառների նախապատերազմյան մակարդակը: Այսինքն՝ հիմնանորոգել պատերազմի ժամանակ քայքայված կրթական հաստատությունների, մշակութային օջախների շենքերը, կառուցել նոր շենքեր, զգալիորեն ընդարձակել դպրոցների ցանցը և ավելացնել նրանցում սովորողների թիվը: Արցախահայության անձնուրաց աշխատանքի և համայն հայության աջակցությամբ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների ցանցի ընդլայնման, նրանցում ուսումնանյութական բազայի ամրապնդման ու ընդհանուր ուսուցման կազմակերպման համար:

Կրթական համակարգի կայացման փուլում (1995-1999թթ.) համեմատաբար մեծ փոփոխություններ են կատարվել հանրակրթության ոլորտում: Այսպես, դպրոցների թիվն ավելացնելու նպատակով կառավարությունն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ է տրամադրել, առանձնապես ուշադրություն է դարձվել 8-ամյա և միջնակարգ դպրոցների թիվն ավելացնելու վրա: Օրինակ, եթե 1995-1996թթ. հանրապետությունում գործող 147 դպրոցներից 35-ը տարրական էր, 14-ը՝ ութամյա(իննամյա), 98-ը՝ միջնակարգ, ապա 1998-1999թթ. 152 դպրոցներից 10-ը տարրական էր, 38-ը՝ իննամյա, 106-ը՝ միջնակարգ: Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու նպատակով կառավարությունը բավականաչափ միջոց-

ներ է տրամադրել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, ռազմագիտության, համակարգչային և աշխատանքի ուսուցման կաբինետների համար և ձեռք է բերել անհրաժեշտ սարքավորումներ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1995-1998թթ.) ԼՂՀ կրթության համակարգի բարեփոխումների ընթացքի վրա հատկապես բացասաբար են անդրադարձել ԼՂՀ կառավարության 1995-1998թթ. ընդունած սխալ որոշումները: Այսպես, օրինակ՝ 1995թ. միանգամից բոլոր նախադպրոցական հիմնարկները փակվեցին, որով փաստորեն կրթական ծրագրի ընդհանուր շղթայից անջատվեց նախադպրոցական կրթությունը: ԼՂՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 10-ի «Համայնքի սեփականության գույքի ցանկը հաստատելու մասին» թիվ 227 որոշման համաձայն՝ ԼՂՀ պետական հանրակրթական դպրոցներն ընդգրկվել են համայնքի սեփականության գույքի ցանկում: Նշված որոշման համաձայն՝ ստեղծվել են մի շարք նորմատիվային փաստաթղթեր, որոնք պետք է ապահովեին հանրակրթական դպրոցների գործունեությունը: Սակայն անցած մի քանի ամիսները վկայեցին, որ նման որոշումը ժամանակավրեպ էր և հազիվ թե կարողանար իրեն արդարացնել:

Չնայած հանրապետությունում ստեղծված դժվարություններին և անհիմն որոշումների (1998թ.) բացասական ազդեցությանը, այդուհանդերձ, հնարավորինս պահպանվել են կրթական համակարգի լավագույն ավանդույթներն ու ձեռքբերումները և միաժամանակ նախադրյալներ ստեղծվել նրա հետագա զարգացումն ապահովելու համար: Այդ գործընթացը թափ է առնում հատկապես 1999թ.-ից սկսած, երբ «Հանուն միասնական կրթական համակարգի պահպանման և զարգացման» հիմնահարցի շուրջ քննարկումներ եղան 1999թ. նոյեմբերի 30-ին ԼՂՀ ԿԳ նախարարությունում տեղի ունեցած խորհրդակցությունում, որին մասնակցում էր ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը՝ նախարար, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի գլխավորությամբ: Հանդիպման նպատակն էր մշակել ՀՀ և ԼՂՀ միասնական կրթական համակարգի ծրագրեր, ճշտել զարգացման ուղղությունները և բարեփոխումների իրականացման հիմնախնդիրները:

Խորհրդակցությունում առաջարկվեց հանրակրթական դպրոցները հանել համայնքների սեփականության գույքի ցանկից և հանձնել կրթության բաժիններին: Եվ ահա 1999թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ կառավարության որոշմամբ հանրապետությունում գյուղական դպրոցները հանվեցին համայնքների սեփականության գույքի ցուցակից և հանձնվեցին կրթության շրջանային բաժինների ենթակայությանը՝ վերականգնելով նախկին կարգավիճակը: Որոշման համաձայն՝ առանձնացվեցին նաև միջին և ավագ դպրոցներում սխալ ձևով կոմպլեկտավորված դասարանները:

Նախորդ տասնամյակի (1991-2001թթ.) համեմատությամբ հանրապետությունում կրթական համակարգը վերելք է ունենում հատկապես կայացման երկրորդ տասնամյակում՝ արմատական բարեփոխումների շրջափուլում (2001-2011թթ.): Ինչպես վկայում են ԿԳ նախարարության պաշտոնական տվյալները, կրթական համակարգի վերակառուցման նոր փուլում հանրապետությունում ընդլայնվել է դպրոցական ցանցը, բարելավվել դպրոցների նյութական բազան, լայնածավալ շինարարական աշխատանքներ են տարվել դպրոցների նորոգման, հիմնանորոգման ուղղությամբ, կառուցվել են դպրոցական նոր շենքեր: Դպրոցաշինության հարցը իր կոնկրետ ծրագրային արտացոլումը գտավ նաև 2002թ. մայիսի 27-28-ը Երևանում կայացած «Հայաստան-Սփյուռք» համահայկական երկրորդ

խորհրդաժողովում, որի կողմից ընդունված բանաձևում ամրագրվեց առաջիկա երեք տարվա ընթացքում (2002-2005թթ.) Արցախի բոլոր դպրոցները հիմնանորոգելու և նոր դպրոցական շենքեր կառուցելու հարցը: ԼՂՀ կրթական համակարգի պահպանման և զարգացման հնգամյա ծրագրի (2005-2010թթ.) պահանջներին համապատասխան բավականին մեծ ձեռքբերումներ ունեցանք: Այսպես, դպրոցաշինության ծրագիրը գերազանցապես իրականացվում է սփյուռքահայ բարերարների օժանդակությամբ: Դպրոցներում բավարար հիմքի վրա են նաև ուսումնանյութական բազան, դասասենյակների, լաբորատորիաների, ուսումնական և համակարգչային կաբինետների կահավորումը: Շնորհիվ սփյուռքահայ բարերարների աջակցության՝ հանրապետության դպրոցների զգալի մասը, այդ թվում գյուղական դպրոցները, ապահովված են համակարգիչներով: Արագ թափով ընդլայնվում է հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների ցանցը: Օրինակ, եթե 1999-2001թթ. հանրապետությունում գործում էին 169 դպրոց, 28 մանկապարտեզ, ապա 2005-2006 ուս.տարում գործում էին 234 հանրակրթական դպրոցներ, 38 մանկապարտեզ: Դպրոցների 85,9 տոկոսը, կամ 201-ը, գտնվում են գյուղական վայրերում: Դպրոցներում սովորում էին 22463 աշակերտներ, դասավանդում 4242 ուսուցիչ: Ըստ կրթական համակարգի զարգացման հնգամյա ծրագրի (2005-2010թթ.) պահանջների, հանրապետությունում կառուցվել է 45, հիմնանորոգվել 47 դպրոց, իսկ 50 դպրոց կահավորվել է նոր կահույքով, լաբորատոր և համակարգչային սարքավորումներով: Ուսուցումը այդ դպրոցներում կազմակերպվում է կաբինետային համակարգով: Ի դեպ, նշենք, որ 2005թ. հոկտեմբերի 1-ին ԼՂՀ ԿՄՍ նախարարության կոլեգիայի նիստում, որին մասնակցում էին հանրապետության շրջանների կրթության բաժինների վարիչները, դպրոցների տնօրենները, քննարկվել է նաև դպրոցներում ուսուցման կաբինետային համակարգին անցնելու հարցը, որի շուրջ եղել են առաջարկություններ՝ 2005-2006 ուս.տարվանից սկսած անհրաժեշտ շենքային և նյութական պայմաններ ունեցող հանրակրթական դպրոցներում անցում կատարել ուսուցման կաբինետային համակարգին, գործածության մեջ դնելով նախկինում ունեցած ուսումնադիտողական պարագաներն ու սարքավորումները, ժամանակակից տեխնիկական միջոցները, համակարգիչները և այլն:

ԼՂՀ կրթական համակարգի զարգացման նոր փուլում (2007-2010թթ.) լուրջ փոփոխություններ կատարվեցին՝ ի դեմս 12-ամյա կրթության: Նոր՝ 2007-2008 ուս.տարում դրա առաջին քայլը 6 տարեկանից ուսումը սկսելն էր: Հարկ է նշել, որ 6 տարեկանների ուսուցումը ոչ թե կամավորական սկզբունքով է, այլ օրենքով: Ինչպես նշել ենք, 2005-2006 ուս.տարում հանրապետության դպրոցներում արդեն ունեինք երկու առաջին դասարան: Մինչև դեկտեմբերի 30-ը 7 տարին լրացած երեխաները սովորում են հին կրթակարգով՝ 11 տարի, իսկ 6-ը լրացածները՝ նորովի, 12 տարի: Այսպիսով, առանցքային բարեփոխումներից մեկն անցումն է 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել է 2006-2007 ուս.տարում, առավել ևս՝ 2007-2008 ուս.տարում: Այդ գործընթացի շրջանակներում 2008-2009 ուս.տարվանից նախատեսվում էր եռամյա ավագ դպրոցի ներդրումը, որն ուղղված է հանրակրթական երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում կրթական որակի և արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը: Ավագ դպրոցը հանդիսանում է նախնական մասնագիտական կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված են սովորողների մասնագիտական ճիշտ կողմորոշումը և հետագա ուսումնառության

հաջողությունը: Ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն:

Ավագ դպրոցի քառամյա փորձի (2010-2014թթ.) վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց ստեղծման քաղաքականությունն իրատեսական է, մասնավորապես ավագ դպրոցները կարողացել են լուծել այն խնդիրները, որոնք միտված են ուսման որակի բարձրացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի զարգացման այս երկու տասնամյակը (1991-2011թթ.) նշանակալից է ոչ միայն այն վիթխարի նվաճումներով, որոնք ձեռք են բերվել պարտադիր ուսուցման իրականացման(նկատի ունենք 8-ամյա կրթությունը), դպրոցական ցանցի ընդլայնման, ավագ դպրոցի ստեղծման, աշակերտների թվի ավելացման, ուսուցչական կազմի քանակական և որակական բարելավման բնագավառում, այլև ուսումնադաստիարակչական աշխատանքների արմատական բարելավմամբ: ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունների նախաձեռնությամբ մշակվեցին և հաստատվեցին նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, նորացվեց նաև դասագրքաստեղծման գործը:

Կրթական համակարգի բարեփոխումների երկրորդ փուլում (2002-2008թթ.) հանրակրթական դպրոցի ուսումնական պլաններում ու ծրագրերում, դասագրքերում կատարված վերափոխումները պայմաններ ստեղծեցին վերակառուցելու բուն ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդամանկավարժական ձևերն ու միջոցները:

ԼՂՀ ԿԳ նախարարության հաստատած կանոնակարգով 2002-2003 ուս.տարում հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում էին տարբեր ձևերով, որոնք նախկինի համեմատ զանազանվում էին պարապմունքների ռեժիմով, սովորողների կազմով, արձակուրդներով, ուսուցիչների և սովորողների միջև եղած կապի ձևերով, ինչպես նաև նրանց գործունեության ընդհանուր բնույթով ու առանձնահատկություններով: Հանրակրթական դպրոցներում նորարարություն էր նաև սովորողների առաջադիմության հաշվառումն ու նրանց ուսումնական գործունեության արդյունքների գնահատումը: Այսպես, օրինակ, ԼՂՀ ԿԳ նախարարության հրամանով 2008թ. նոյեմբերի 1-ից Արցախի հանրակրթական դպրոցներում անցում է կատարվում սովորողների գնահատման 10 միավորային սանդղակի: Գնահատման 10 միավորային համակարգին անցնելու նպատակն էր ավելի ճշտգրիտ բացահայտել ու գնահատել սովորողների գիտելիքները, կաողություններն ու հմտությունները, քանի որ 5 միավորային նախկին գնահատման համակարգը դրանք լիարժեք չէր ապահովում: Դա նաև նախատեսված էր ԼՂՀ կառավարության 2005թ. ընդունած «Սովորողների գնահատման հայեցակարգի և պետական կրթակարգի մասին» որոշման դրույթներով: Նախորդ տասնամյակների համեմատ լուրջ առաջընթաց է նկատվել նաև սովորողների առաջադիմության հաշվառման, գնահատման գործընթացում:

Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների նոր փուլում (2010-2016թթ.) հանրապետության կրթական հաստատություններում լայն տեղ է տրվում տեղեկատվական նոր տեխնոլոգիաներին: Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, իսկ խոշոր դպրոցներում կան համակարգչային կաբինետներ: Բացի դրանից, նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրեր են իրականացվում: Մասնավորապես ՆՈՒՌ ծրագիրը: Արցախում հանրահայտ հապավում

դարձավ ՆՈՒՌ-ը՝ նոր ուսումնական ռազմավարությունը, որը հանրապետության կրթական համակարգում ներդրվեց արգենտինահայ բարերար էդուարդ էռնեկյանի հովանավորությամբ (2010-2011 ուս.տարում), իսկ թարմացված և ընդլայնված ձևով՝ 2012-2013 ուս.տարում:

Բացի այդ, հանրապետության դպրոցներում կատարվել են նաև փորձարարական աշխատանքներ «dasaran.am», «էկոտուր», «Դիջիթեք», «Ինստիգեյթ» և այլ ծրագրերի տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ (մանրամասն տես՝ աշխատության 2-րդ գլխի 2-րդ բաժնում):

Քննարկվող ժամանակաշրջանում(2010-2014թ.) հանրապետության կրթական համակարգի վերակառուցման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հետ միասին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և դաստիարակության հարցերը նույնպես եղել են կրթական գործի կազմակերպիչների ուշադրության կենտրոնում: Այդ մասին աշխատության 2-րդ գլխի 3-րդ բաժնում նշվել է, որ «Կրթության մասին» 1999թ. ընդունված ԼՂՀ օրենքով առաջին անգամ ծնողին տրվեց դպրոցն ընտրելու իրավունք: Արդյունքում առողջական խնդիրներ ունեցող երեխաների ծնողներից ոմանք իրենց երեխաներին հատուկ դպրոցից տեղափոխեցին հանրակրթական ծրագիր իրականացնող դպրոց, և կրթության կազմակերպման գործընթացում սկսեց շրջանառվել «ներառական կրթություն» հասկացությունը: Ներառական կրթությունը կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ՝ հանրակրթական դպրոցում: Այդ երեխաների ուսումնական գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու և այդ գործում աջակցություն ցուցաբերելու նպատակով 2009-2010 ուս.տարվա վերջին Ստեփանակերտում էր ՀՀ ԿԳ նախարարության պատվիրակությունը: ԿԳ նախարարության կողմից հաստատվել է այն դպրոցների ցանկը, որոնք պետք է իրականացնեն ներառական կրթություն: Նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2013-2014 ուս.տարում մայրաքաղաքի և հանրապետության շրջանների շուրջ 52 դպրոցներ ապահովում են կրթությունից դուրս մնացած, առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված կրթության իրավունքի իրացումը: Բնական է, որ այս պայմաններում ընդլայնվում է նաև ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների տնօրենների, դասավանդող ուսուցիչների պարտականությունների և պատասխանատվության շրջանակը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում վերապատրաստման դասընթացներում զարգացնել թե տնօրենների և թե մասնագետների(հոգեբան, մանկավարժ, հոգեբան-բժիշկ, սոց-մանկավարժ) գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև նրանց կառավարչական հմտությունները ներառական կրթության կազմակերպան գործում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի վերակառուցմանը զուգընթաց զգալի աշխատանք է տարվել նաև ուսուցչական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ: Այդ հարցը պարբերաբար քննարկվել է հանրապետական, շրջանային ուսուցչական խորհրդակցություններում, համագումարներում ու կոնֆերանսներում: Ուսուցիչների մանկավարժական, մեթոդական, մասնագիտական որակի բարձրացման, պատրաստման ու վերապատրաստման հիմնախնդիրները մտահոգել են ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության շրջանային բաժինների աշխատողներին: Հայտնի է, որ պատերազմական պայմաններում որակյալ ուսուց-

չական քիչ կադրեր կային: Ուստի հետպատերազմյան շրջանում կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները էլ ավելի են կարևորում ուսուցչի դերը: Նախատեսված բարեփոխումները թղթի վրա կմնան այնքան ժամանակ, քանի դեռ կրթական համակարգն ապահովված չէ որակյալ կադրերով: Ուստի ամենից առաջ անհրաժեշտ է վարպետ ուսուցչի ձևավորման աշխատանքը: Չէ որ ուսուցիչը գլխավոր անձն է դպրոցում: Կրթության և դաստիարակության որակն ու արդյունավետությունը բացառապես կախված են նրա մասնագիտական մակարդակից, վարպետությունից, բարձր գաղափարայնությունից: Հայտնի ճշմարտություն է, որ երկրի ապագան պայմանավորված է ուսուցիչների առողջ բանակով և առաջավոր կրթական համակարգով: Ըստ պաշտոնական տվյալների, հանրապետությունում մանկավարժական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ համեմատաբար լայն աշխատանք է տարվել հատկապես 2000-2015թթ.: Այսպես, Արցախում մանկավարժական կադրեր են պատրաստում պետական և ոչ պետական հավատարմագրված և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև պետական համալսարանի (ԱրՊՀ) մագիստրատուրան, որը պատրաստում է նաև կրթության կազմակերպիչներ: Մանկավարժական գործունեության յուրացումն իրականում տեղի է ունենում հետբուհական աշխատանքային կյանքում: Ուսուցչական կադրերի որակի բարձրացումը չափազանց կարևոր նշանակություն ունի: Հատկապես այսօրվա ավագ դպրոցը ուսուցչից պահանջում է ոչ միայն մասնագիտական խոր գիտելիքներ ու կարողություններ, այլ նաև մեթոդական պատրաստվածության բարձր որակ: Այդ կապակցությամբ ԿԳ նախարարության, կրթության շրջանային բաժինների առջև խնդիր է դրվել՝ մի կողմից հետևողականորեն բարձրացնել ուսուցիչների կրթական մակարդակը ամենամյա դասընթացների, շարունակական կրթության միջոցով, մյուս կողմից ավելի բարձր հիմքի վրա դնել հանրապետության բուհերի մանկավարժական խմբերի ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքները, որպեսզի շրջանավարտները կարողանան լուծել բարեփոխվող դպրոցի առջև դրված խնդիրները:

Աշխատության **երրորդ գլխում** փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա մանրամասն ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթության համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարները, ՀՀ և ԼՂ Հանրապետության կրթության միասնական համակարգի կառավարման գործառույթները, սկզբունքներն ու մեթոդները, քննարկվում են նաև ներդպրոցական կառավարման համակարգի հետ կապված այլ հարցեր:

Ուսումնասիրության հետ կապված արխիվային փաստաթղթերի, ժամանակակցների հուշերի և այլ նյութերի համակողմանի ուսումնասիրումը հեղինակներին հնարավորություն է ընձեռել աշխատության **չորրորդ գլխում** ժամանակագրական առումով ներկայացնել ԼՂՀ կրթական գործի կազմակերպիչների (ԼՂՀ ԿԳ նախարարների, փոխնախարարների, կրթության շրջանային բաժինների վարիչների և բարձրակարգ մասնագետների) գործունեությունը: Ուսումնասիրության բնույթից ելնելով՝ բնութագրվում է նաև ԼՂՀ ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտի, ՀՀ կրթության ազգային ինստիտուտի ԼՂՀ մասնաճյուղի, տնօրենների և վերապատրաստման դասընթացների կազմակերպիչների գործունեությունը(1991-2016թթ.): Նպատակահարմար ենք գտել նաև ուսումնասիրության ժամանակ վեր հանել այն փաստը, որ քննարկվող ժամանակաշրջանում դպրոցի, մանկավարժության ասպարեզի, գիտության ու մշակույթի ոլորտի անվանի ման-

կավարժները, գործիչները, սկսած 1988-ի Շարժման տարիներից, մինչև ԼՂՀ կայացման շրջանը և անկախության տարիները, բեղուն գործունեություն են ծավալել, նպաստելով մարզի (1988-1990թթ.), այնուհետև ԼՂՀ-ի (1991-2016թթ.) կրթական համակարգի զարգացմանն ու նորանկախ Արցախի Հանրապետության ամրապնդման գործին (ներկայացվում է 100-ից ավելի գործիչների գործունեությունը): ԼՂՀ ղեկավարների կողմից ըստ արժանվույն է գնահատվել նրանց գործունեությունը. նրանցից շատերն արժանացել են ԼՂՀ վաստակավոր մանկավարժի, գիտության վաստակավոր գործչի կոչումներին: Արխիվային նյութերի և սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա այս բաժնում ներկայացվում է նաև ԼՂՀ կառավարության, կրթության, գիտության նախարարության և կրթության շրջանային բաժինների կողմից գնահատված «Տարվա լավագույն ուսուցիչների», «Տարվա լավագույն տնօրենների», «Ձինղեկի», «Դասվարի» արգասավոր գործունեությունն ու նրանց առաջավոր փորձը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի ամբողջական պատմությունը ստեղծելու նպատակով հեղինակները նպատակահարմար են գտել աշխատության **5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխներում** համառոտակի ներկայացնել նախադպրոցական կրթական համակարգը(1991-2016թթ.), մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների, ԼՂՀ վարչատարածքային շրջանների (Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի և Շահումյանի) հանրակրթական դպրոցների, նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանների, ռազմական վարժարանի, երաժշտական, պարարվեստի քոլեջի, մարզական դպրոցների գործունեությունը 1991-2016թ. (առանձին դպրոցների համառոտ պատմությունը ներկայացվում է 1988թ.-ից):

Այսպիսով, բազմադարյան պատմության դաժան փորձություններով անցած արցախահայությունը մոտեցավ իր պատմության նոր դարին՝ հասարակական, քաղաքական հեղաշրջումներով, փոթորկվող, ազգային լուսավորության ու ազատության գաղափարներով շնչող 20-րդ դարի վերջին, որը նշանավորվեց պատմական բախտորոշ իրադարձություններով: Հայ ժողովրդի այս հատվածը՝ պատմական Արցախը, վերջնականապես ազատվեց Ադրբեջանի իշխանությունների ազգահալած քաղաքականությունից և նորից հաջողվեց վերակերտել յոթ տասնամյակ առաջ կորցրած պետականությունը: Արցախի ժողովրդի մտահղացումները իրականացան և կրթական համակարգը ներառվեց Հայաստանի կրթական համակարգում ու բարենպաստ պայմաններ ստեղծվեցին պատմության նոր դարում՝ 21-րդ դարում միասնաբար լուծել իրենց առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային և կրթական համակարգի հիմնախնդիրները:

Այդ շրջադարձերը վճռական դեր խաղացին երկու հայկական հանրապետությունների բնակչության կյանքում՝ հիմք դնելով նոր ժամանակների պահանջներին համահունչ աշխարհայեցողությանը, մշակույթին և նոր կրթական համակարգին: Սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի ընդհանուր աշխուժացման հենքի վրա արմատական փոփոխություններ կատարվեցին հատկապես 21-րդ դարի առաջին և երկրորդ տասնամյակներում (2000-2016թթ.).:

Հիրավի, Արցախի կրթական համակարգի հիմքը դրվել է մաշտոցյան շրջանում, այնուհետև զարգացել խորհրդային շրջանում, առավել ևս՝ անկախ պետականության շրջանում (1991-2016թթ.), որն ամբողջական ներկայացվել է եռահատոր աշխատությունում: Իսկ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կր-

թական համակարգերի ամբողջական պատմությունը կներկայացվի աշխատության չորրորդ հատորում:

Հ.Գ. Բնականաբար, հարգարժան ընթերցողների և առանձնապես մանկավարժ մասնագետների մոտ հարց կառաջանա. արդյոք Լեռնային Ղարաբաղում (կամ ԼՂԻՄ-ում) միայն հայկական կրթահամակարգ է գործել, թե այն ներառել է նաև ադրբեջանական նախադպրոցական և դպրոցական կրթօջախները: Հեղինակները՝ տեղյակ լինելով ադրբեջանական կրթօջախների գոյության մասին, կանխամտածված ձևով այն չեն ներառել իրենց հեղինակած և արդեն հրատարակած «Արցախի կրթական համակարգը», «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը 1923-1988թթ.» և հրատարակության ներկայացված «Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգը (1992-2016թթ.)» հատորներում, մանկավարժ հետազոտողներին հնարավորություն տալով խորը և համակողմանի ուսումնասիրություններից հետո փաստագրական աղբյուրներում առկա նյութերով ստացված արդյունքները առանձին ներկայացնել ընթերցողների լայն շրջանակին:

Նման մոտեցումը արդարացված և հիմնավորված է այն հիմքի վրա, որ մինչև օրս նույնիսկ հստակ ազգային պատկանելիություն չունեցող մեր հարևանները պատմական փաստերի խեղաթյուրման, նենգափոխման եղանակով՝ ձգտում են հնարավորինս արագ իրականացնել Լեռնային Ղարաբաղի հայաթափման ծրագիրը: Պատահական չէ, որ Ադրբեջանի տարբեր ոլորտների ներկայացուցիչներն իրենց «գիտական» հոդվածներում և աշխատություններում հետևողականորեն իրերն այնպես են ներկայացնում, թե իբր Ղարաբաղում միշտ էլ ապրել են փոքրաթիվ, աննշան քանակությամբ հայեր, «մոռանալով», որ մինչև բոլշևիկյան հեղափոխությունը և նույնիսկ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մտցնելուց հետո հայերը կազմել են բնակչության բացարձակ մեծամասնությունը: Այլ բան է Ադրբեջանի վարած միտումնավոր քաղաքականությունը՝ Ղարաբաղի հայերի թիվը կրճատել մասսայական ահաբեկչության, ռեպրեսիաների, ջարդերի ճանապարհով, ինչը և իրականացվել է Լեռնային Ղարաբաղը նրա կազմի մեջ մտնելու առաջին իսկ օրից[1,2]:

Մեր պնդման արդարացիության մեջ համոզվելու համար գոյություն ունեցող բազմաթիվ օրինակներից այստեղ ներկայացնենք միայն մեկը՝ օգտագործելով վիճակագրական տարեգրքերում ներառված փաստագրական տվյալները:

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշման ընդունումից հետո համարյա մեկ ամիս անց, 1921թ. օգոստոսին, Նարիմանովի գլխավորությամբ ընդունված դեկրետի համաձայն, Ղարաբաղում և հարևան շրջաններում անցկացվեց բնակչության հաշվառում: Մարդահամարի տվյալներով՝ երկրամասի բնակչությունը կազմել է 129243 մարդ, որից 122426-ը՝ հայեր, 6560-ը՝ ադրբեջանցիներ, 267-ը՝ հույներ, ռուսներ, քրդեր[3]: Փաստորեն հայերը կազմել են բնակչության 94,4 տոկոսը, ադրբեջանցիները՝ 5,6 տոկոսը[4]:

Այսպիսի փաստագրական տվյալների պարագայում Ադրբեջանի մի խումբ ներկայացուցիչներ առանց որևէ վիճակագրական ստույգ աղբյուր վկայակոչելու «Բակինսկի ռաբոչի» թերթում գրում են, որ իբր թե 1921թ. Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու պահին մարզի բնակչության 90 տոկոսը ադրբեջանցիներ էին[5]: Դրանով նրանք փորձում էին հիմնավորել ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 4-ի որոշումը հուլիսի 5-ի որոշմամբ փոխարինելու անհրաժեշտությունը:

Ադրբեջանի Կենտգործկոմը 1923թ. հուլիսի 7-ին ընդունեց հռչակագիր ԼՂԻՄ-ի կազմավորման մասին՝ 149,6 հազար հայ և 7,7 հազար ադրբեջանցի ազգաբնակչությամբ[6]:

Լեռնային Ղարաբաղը Ադր.ԽՍՀ կազմի մեջ մտցնելուց հետո սկսվում է հայ բնակչության արտագաղթը, որը հանգեցրել է մարզի հայ բնակչության թվաքանակի անընդհատ նվազման: Այսպես, եթե 1921թ. հայերը կազմում էին երկրամասի բնակչության 94,4 տոկոսը, ապա 1939թ. տվյալներով՝ այդ ցուցանիշը դարձավ 83,1 տոկոս[7]:

1989թ. հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում անցկացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալներով՝ մարզի բնակչությունը կազմում էր 189,1 հազար մարդ, որից 145,5 հազարը, կամ 76,9 տոկոսը, հայեր էին, իսկ 40,7 հազարը, կամ 21,5 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 2,9 հազարը, կամ 1,5 տոկոսը՝ այլ ազգեր:

Ինքնավար մարզի բնակչության թվաքանակի փոփոխության ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Ադր.ԽՍՀ ղեկավարության կողմից իրականացված քաղաքականության շնորհիվ տեղի է ունեցել մարզի հայ բնակչության թվաքանակի անընդհատ նվազում, իսկ դրան զուգահեռ՝ ազերիների թվաքանակի անընդհատ ավելացում:

Պարզ է, որ հեղինակների կողմից Արցախի կրթահամակարգի վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացնելու մեջ ադրբեջանական կրթօջախների մասին տեղեկություններ չներկայացնելու պատճառը միայն մեր հարևանների կողմից ավելորդ մեկնաբանություններ տալու հնարավորության բացառումն է:

РЕЗЮМЕ

ОБРАЗОВАТЕЛЬНАЯ СИСТЕМА НАГОРНОГО КАРАБАХА (1992-2016 гг.)

Арпат Аванесян, Григорий Арутюнян

В ходе многолетних исследований авторам удалось преодолеть много трудностей и осуществить поставленную перед ними задачу: представить вниманию общественности трехтомную работу по истории образовательной системы исторического Арцаха (ныне Нагорно-Карабахской Республики) с V в. до 2016г.

В первом томе работы изучена история образовательной системы исторического Арцаха с V в. до второго десятилетия XX в. (“Образовательная система Арцаха”, издательство “Дизак плюс”, Степанакерт, 2014, стр. 408).

Во втором томе работы изучена история образовательной системы Нагорно-Карабахской автономной области (“Образовательная система Нагорно-Карабахской автономной области в 1923 -1988 гг.”, издательство “Дизак плюс”, Степанакерт, 2015, стр. 504).

Третий том стал логическим продолжением второго и включил в себя историю образовательной системы Нагорно-Карабахской Республики с 1991г. по 2016 г. В качестве отправной точки для исследования и анализа был выбран 1988 год, чтобы детально обрисовать ситуацию в образовательной системе НКАО до провозглашения Нагорно-Карабахской Республики.

Необходимо отметить, что в первой и второй главах третьего тома изучена только история дошкольных учреждений, детско-юношеских творческих центров, общеобразовательных школ, ремесленных училищ, военного училища, школ искусств, хореографии (колледжа), равно как и музыкальных, спортивных школ, входящих в систему образования НКР; представлены направления формирования и развития системы образования Республики Арцах, основные задачи единого управления системой образования во всеармянском образовательном поле,содержательные реформы, проводимые в системе образования, деятельность работников системы образования, организаторов областных образовательных отделов, заслуженных педагогов, заново планирующих и эффективно организующих учебный процесс в общеобразовательных школах.

Бесспорно, что в систему образования республики входят также средне-специальные и высшие учебные заведения, история которых должна быть полностью изучена.Должны быть также освещены реформы, проводимые в области средне-специального и высшего образования, единая политика управления, основные задачи во всеармянском образовательном поле.Авторы работы нашли целесообразным сделать это предметом отдельного изучения и опубликовать данный материал в новом, четвёртом томе.

После провозглашения независимости Армении и Арцаха обе республики получили возможность решать совместными усилиями имеющиеся социально-экономические, политические, духовные, культурные и образовательные задачи. В республике Арцах, наряду с изменениями в социально-экономических отношениях, реализовывались коренные преобразования и в общеобразовательной сфере.

Образовательная система Арцаха, будучи наследницей советской системы, вступила в тяжёлый этап переходного периода. В течение последующих нескольких лет независимости экономический кризис в Армении и Арцахе негативно отразился и на системе образования. В переходный период (1991-1995гг.) появились такие факторы, которые замедлили и воспрепятствовали реформам и развитию системы образования.

В послевоенный период в республике были созданы сравнительно благоприятные условия для дальнейшего развития образовательной системы. Со стороны Правительства НКР, Министерства образования, науки, культуры и спорта был принят ряд решений о проведении неотложных мер по восстановлению работ в общеобразовательных школах, учебных заведениях и других сферах. В общей системе этих мер важным шагом было решение, принятое Правительством НКР 16 мая 1994г., в котором предусматривалось не только восстановить, но и ощутимым образом превзойти довоенный уровень экономики, культуры и образования. Это подразумевало капитальный ремонт разрушенных во время войны и строительство новых зданий культурных центров и учебных заведений, ощутимое расширение сети школ и увеличение численности учащихся в них. Благодаря самоотверженной работе армян Арцаха и поддержке всего армянства были созданы благоприятные условия для расширения сети общеобразовательных школ, дошкольных и внешкольных учреждений, укрепления в них учебно-материальной базы и организации общего обучения.

Значительные изменения произошли в общеобразовательной сфере в процессе становления системы образования с 1995г. по 1999 гг.Так, Правительство предоставило необходимые финансовые средства для увеличения числа школ, особое внимание было уделено увеличению числа школ с 8-летним сроком обучения и средних школ. К примеру, если в 1995-1996 гг. из действующих 147 школ в республике 35 были начальные, 14 - 8-летних школ(9-летних), 98- средних школ, то в 1998-1999 гг. из 152 школ 10 были начальные, 38 школ— 9-летние, 106 школ— средние. С целью перехода на кабинетную систему обучения Правительство выделило достаточно финансовых средств для кабинетов физики, химии, биологии, военной подготовки, информатики, труда и приобрело необходимое для этого оборудование.

На ход реформ системы образования НКР в исследуемый период негативное воздействие оказали ошибочные решения, принятые Правительством НКР в 1995-1998 гг. Так, например, в 1995 г. были закрыты все дошкольные учреждения, из-за чего из общей системы образовательной программы фактически выпало дошкольное образование.

Государственные общеобразовательные школы были включены в список имущества, являющегося собственностью общины, по соответствующему решению Правительства НКР N 227 от 10 ноября 1998 г. Согласно этому решению, был создан ряд нормативных документов, которые должны были обеспечить деятельность общеобразовательных школ. Однако прошедшие после этого несколько месяцев показали, что решение было поспешным и вряд ли себя оправдает.

Несмотря на создавшиеся в республике трудности и негативное влияние безосновательно принятых решений (1998 г.), были сохранены лучшие традиции и достижения системы образования и одновременно созданы предпосылки для обеспечения ее дальнейшего развития. Этот процесс получил новое дыхание в 1999 г., когда на совещании Министерства образования и науки НКР, в котором участвовала делегация Министерства образования и науки РА во главе с министром, академиком Эдуардом Казаряном, состоялось обсуждение по вопросу сохранения и развития единой системы образования. Целью этой встречи, прошедшей30 ноября 1999г., была разработка единых образовательных программ в РА и НКР, определение направлений развития и основных задач в процессе осуществления реформ.

На совещании было предложено снять общеобразовательные школы из списка имущества, являющегося собственностью общины,и передать их местным отделам образования. 10 декабря 1999 г. по решению Правительства НКР сельские школы в республике были сняты из списка имущества, являющегося собственностью общины, и переданы в подчинение районных отделов образования, восстановив таким образом их прежний статус. Согласно решению, были разделены классы, неправильно укомплектованные в средней и старшей школах.

Образовательная система в республике переживает подъём в период коренных преобразований в 2001-2011гг. По официальным данным Министерства образования, на новом этапе перестройки системы образования в республике расширилась сеть школ, улучшилась их материальная база, проведены крупномасштабные строительные работы по ремонту и капитальному ремонту школ, построены новые школьные здания. Задача строительства школ была отражена также в резолюции, принятой в Ереване на втором Всеармянском форуме Армения – Диаспора 27-28 мая 2002 г. В ней закреплен вопрос основательного ремонта всех школьных зданий в Арцахе и строительства новых в течение предстоящих 3 лет(2002-2005 гг.).

Были достигнуты большие успехи в процессе реализации пятилетней программы (2005-2010 гг.) сохранения и развития системы образования НКР. К примеру, при поддержке благотворителей армянской диаспоры осуществлялась программа по строительству школ.На удовлетворительном уровне находилась также учебно-материальная база, оснащение классов, лабораторий, учебных и компьютерных кабинетов школ. Благодаря поддержке благотворителей армянской диаспоры значительная часть школ республики, в том числе и сельские школы, были обеспечены компьютерами. Быстрыми темпами расширялась сеть общеобразовательных школ и

детских садов. Если в 1999-2001 гг. в республике действовали 169 школ, 28 детских садов, то в 2005-2006 учебном году действовали уже 234 общеобразовательные школы, 38 детских садов. 85,9% или 201 из которых были в селах республики. В школах учились 22 463 ученика, преподавали 4242 учителя. В соответствии с требованиями пятилетней программы развития системы образования (2005-2010гг.) в республике было построено 45 школ, капитально отремонтировано- 47, а 50 школ были оснащены новой мебелью, лабораторным и компьютерным оборудованием. Обучение в этих школах проводилось по кабинетной системе. При этом отметим, что на заседании коллегии Министерства ОКС НКР 1 октября 2005г., на котором участвовали заведующие отделов образования районов, директора школ республики, был обсужден также вопрос перехода на кабинетную систему обучения в школах, было внесено предложение о переходе с 2005-2006 учебного года на кабинетную систему обучения в школах, имеющих необходимую материальную базу и соответствующие условия в зданиях, применяя при этом имеющиеся ранее учебно-наглядные пособия и оборудование, современные технические средства, компьютеры и т.д.

На новом этапе развития системы образования НКР(2007-2010 гг.) произошли серьёзные изменения, в частности, переход на 12-летнее обучение. В новом 2007-2008 учебном году первым шагом было начало обучения с 6 лет. Необходимо отметить, что обучение с 6 лет не по добровольному принципу, а по закону. Как было отмечено, в 2005-2006 учебном году в школах республики уже было укомплектовано 2 первых класса. Дети, которым до 30 декабря исполнилось 7 лет, обучались по старой системе образования, то есть 11 лет, а дети, которым исполнилось 6 лет, по новой – 12 лет. Таким образом, одно из ключевых преобразований – переход на 12-летнюю общеобразовательную систему обучения, реализация которого началось в 2006-2007 учебном году, получило своё продолжение в 2007-2008 учебном году. В рамках этого процесса с 2008-2009 учебного года предусматривалось внедрение системы трёхгодичного обучения в старшей школе, которая направлена на модернизацию и повышение качества и эффективности образования на третьей ступени общего образования- в старшей школе. Старшая школа является основным звеном, обеспечивающим начальное специальное образование, от деятельности которого в основном зависят правильная профессиональная ориентация учащихся и их дальнейшие успехи в обучении. Как отмечено в “Государственном стандарте общего образования”, старшая школа– последнее звено общего образования, которая должна подготовить учащихся к самостоятельной жизни и вхождению на рынок труда.

Анализ четырёхлетнего опыта обучения в старшей школе(2010-2014 гг.)показывает, что политика создания старших школ в республике реалистична, поскольку старшие школы решили, в частности,задачи, направленные на повышение качества образования.

Исследования показали, что эти два десятилетия (1991-2011 гг.) развития системы образования НКРознаменованы не только большими успехами, которые были достигнуты благодаря реализации программы

обязательного обучения (имеется в виду 8-летнее образование), расширению сети школ, созданию старшей школы, строительству школ, увеличению числа учеников, улучшению качества и количества педагогического состава, но и значительному усовершенствованию учебно-воспитательных работ. По инициативе Министерства образования и науки РА и Министерства образования и науки НКР были разработаны и утверждены новые учебные планы, программы, обновилась работа по созданию учебников.

Изменения, проведенные на втором этапе реформирования системы образования, в учебных программах и планах, учебниках общеобразовательных школ(2002-2008 гг.),создали условия для усовершенствования процесса организации учебной работы и методико-педагогических форм и средств.

По регламенту, утверждённому Министерством образования и науки НКР, в 2002-2003 учебном году учебно-воспитательные работы в общеобразовательных школах организовывались различными способами, которые отличались от прежних режимом занятий, составом учащихся, каникулами, формами связи между учителями и учащимися, равно как и общим характером и особенностями их деятельности. Нововведением в общеобразовательных школах стал также учёт успеваемости учащихся и оценивание результатов их учебной деятельности. К примеру, по приказу Министерства образования и науки НКР с 1 ноября 2008 г. в общеобразовательных школах Арцаха был сделан переход на 10-балльную шкалу оценивания знаний. Целью перехода на 10-балльную оценочную систему стала необходимость в более точном выявлении и оценкеуровня знаний, возможностей и навыков учащихся, чег о предыдущая 5-балльная система полноценно не обеспечивала. Это также предусматривалось положениями решения Правительства НКР от 2005 г. “О концепции оценивания учащихся и государственном стандарте”. В отличие от предыдущих десятилетий серьёзный прогресс был отмечен в процессе учёта и оценивания успеваемости учащихся.

Анализ показал, что на новом этапе реформ, реализуемых в сфере общего образования (2010-2016 гг.), в учебных заведениях республики придавалось важное значение новым информационным технологиям. Все школы обеспечены компьютерами, а крупные школы - компьютерными кабинетами. Кроме этого,реализовываются программы по внедрению новых технологий. В частности, в Арцахе получила большое распространение программа “НОС” (новая образовательная стратегия), которая была внедрена в систему образования республики при содействии аргентинского армянина, благотворителя Эдуардо Эрнекяна в 2010-2011 учебном году, а в 2012-2013 учебном году она была представлена в более обновлённой и расширенной форме.

Наблюдения показали, что в школах республики были также проведены экспериментальные работы по внедрению программ “Dasaran.am”, “Էկոտոր”, “Դիջիքեթ”, а также других систем (подробнее см. разд. 2, гл. 2).

Наряду с реконструкцией системы образования, организацией учебно-воспитательной работы, в центре внимания организаторов учебной работы

в республике в течение рассматриваемого периода (2010-2014гг.) были вопросы образования и воспитания детей, нуждающихся в особых условиях обучения. Об этом в разделе 2 главы 3 было отмечено, что родителям впервые было предоставлено право выбора школы в соответствии с законом "Об образовании", принятом в 1999 г. В итоге детей, которые имеют проблемы со здоровьем, некоторые родители перевели в школу, где обучение проводится по общеобразовательной программе, и в процесс организации обучения был введен термин "инклюзивное образование". Инклюзивное образование –это совместное обучение детей с ограниченными возможностями здоровья и детей, не имеющих таких ограничений, в общеобразовательных школах. Для оказания действенной помощи в деле организации в 2009-2010 учебном году надлежащего и эффективного учебного процесса для этих детей в Степанакерт прибыла делегация Министерства образования и науки РА. Министерство образования утвердило списки тех школ, в которых необходимо внедрить инклюзивное образование.

Согласно официальным данным министерства, в 2013-2014 учебном году около 52 школ столицы и районов республики обеспечили реализацию закрепленного Конституцией и законами НКР права на образование детей с особыми образовательными потребностями, выбывших из системы обучения. Естественно, что это также расширяет сферу обязанностей и ответственности директоров и учителей в средних школах с инклюзивным обучением. Поэтому возникла необходимость в проведении специальных квалификационных курсов с целью повышения уровня знаний и навыков директоров и специалистов (психолог, педагог, психолог-врач, социальный педагог), равно как и их управленческих навыков для организации и реализации инклюзивного образования.

В изучаемый период в Нагорно-Карабахской Республике, наряду с реконструкцией системы образования, значительная работа была проделана для подготовки и повышения квалификации учителей. Этот вопрос регулярно обсуждался на республиканском, районных совещаниях, конгрессах и конференциях учителей. Сотрудники районных отделов образования были обеспокоены вопросами повышения педагогических и методологических навыков, подготовки и переподготовки учителей.

Известно, что во время войны было мало профессиональных учительских кадров, поэтому реформы, осуществленные в системе образования в послевоенное время,были направлены на повышение роли учителя. Но реформы останутся на бумаге, если система образования не будет обеспечена квалифицированными кадрами. Поэтому необходимо провести работу по формированию учителя-профессионала. Ведь учитель играет главную роль в школе. Качество и эффективность образования и воспитания зависят исключительно от его профессионального уровня, искусности, высоких идеалов. Истина гласит: будущее страны зависит от здоровой армии учителей и передовой системы образования. По официальным данным, в 2000-2015гг. была проделана большая работа по подготовке и повышению квалификации педагогических кадров. Педагогические кадры в Арцахе готовят государственные, аккредитованные

негосударственные и средние специальные образовательные учреждения. Арцахский государственный университет выпускает также организаторов образования.

Проблема повышения качества преподавательского состава является очень важной. Нынешние старшие школы требуют от учителя не только глубоких профессиональных знаний и умений, но и высокого уровня методической подготовки. В связи с этим перед Министерством образования и науки, районными отделами образования была поставлена цель на ежегодных курсах последовательно повышать образовательный уровень учителей, а также поставить на более высокий уровень учебно-воспитательную работу студентов педагогических отделений вузов республики, чтобы выпускники могли решать задачи, стоящие перед реформирующейся школой.

Анализ фактологических материалов и других источников позволил подробно представить в третьей главе данного исследования перспективы формирования и развития системы образования в Нагорно-Карабахской Республике, функции, принципы и методы управления единой системой образования в двух армянских республиках, затронуть также другие вопросы, связанные с внутришкольной системой управления.

Всестороннее изучение архивных документов, воспоминаний современников и других материалов дало авторам возможность представить в хронологическом порядке деятельность организаторов учебного дела (министров образования и науки НКР, заместителей министров, руководителей районных отделов образования и высококвалифицированных специалистов)в четвертой главе своей работы. Исходя из характера исследования описывается также деятельность директоров и организаторов курсов по повышению квалификации Института по переподготовке учителей НКР и филиала Национального института образования РА в НКР (1991-2016гг.). Мы сочли целесообразным отметить также тот факт, что известные педагогии, деятели науки и культуры, начиная с 1988 года и по сегодняшний день, проводили активную работу и внесли весомый вклад в развитие образовательной системы НКАО (1988-1990гг.), в дальнейшем НКР (1991-2016гг.), а также в укрепление независимой государственности нашей страны.Власти НКР достойно оценили их деятельность, многие из них были удостоены звания Заслуженного педагога, Заслуженного деятеля науки НКР. На основании анализа архивных материалов и первоисточников в данном отделе представлена их плодотворная работа и передовой педагогический опыт, которые отмечены Правительством НКР, Министерством образования и науки и районными отделами образования в номинациях “Лучший учитель года”, “Лучший директор года”, “Лучший военрук года”, “Лучший классный руководитель года”.

С целью создания целостной картины образовательной системы Нагорно-Карабахской Республики авторы посчитали целесообразным в 5,6 и 7 главах данного исследования кратко представить систему дошкольного образования (1991-2016гг.), деятельность детско-юношеских творческих центров, общеобразовательных школ административных районов НКР

(Мартакертского, Мартунинского, Гадрутского, Аскеранского, Шушинского, Кашатагского и Шаумянского), начальных профессиональных (ремесленных) училищ, военного училища, музыкального и хореографического колледжей, спортивных школ (краткая история отдельных школ представлена с 1988 года).

Таким образом, народ Арцаха, прошедший через тяжелые испытания в своей многовековой истории, к концу 20-го века вступил в ее новый этап, ознаменовавшийся социальными и политическими переворотами, насыщенный идеями национального просвещения и свободы и богатый на эпохальные исторические события. Исторический Арцах окончательно избавился от политики притеснения властей Азербайджана и воссоздал государственность, утерянную семьдесятилетий назад. Чаяния народа Арцаха осуществились, и образовательная система республики была включена в образовательную систему Армении. Из этого следует, чтов новом, 21 веке появились благоприятные условия для решениясовместными усилиями задач, стоящих перед двумя армянскими государствами в социально-экономической, политической, духовно-культурной и образовательной сферах.

Эти изменения сыграли решающую роль в жизни населения двух армянских республик, заложив основу мировоззрения, культуры и новой системы образования, и привели к коренным переменам в социально-экономической, политической жизни в первом и втором десятилетии 21-го века (2000-2016 гг.). В этот период были разработаны основные направления процесса реформирования системы образования, которые получили свое развитие на третьем этапе реформ (2008-2016 гг.).

Между тем, основа системы образования в Арцахе была заложена во времена Маштоца, получила свое развитие в советский период и за годы независимости (1991-2016гг.), что и было представлено в трехтомном исследовании. А полная история системы среднего специального и высшего образования будет представлена в четвертом томе исследования.

P.S. Очевидно, что может возникнуть вопрос о том, действовалали в Нагорном Карабахе лишь армянская система образования или она включала в себя также азербайджанские дошкольные и школьные учреждения?

Авторы, будучи осведомленными о существовании азербайджанских образовательных учреждений, сознательно не включили эту тему в уже изданные работы (“Образовательная система Арцаха”, “Образовательная система Нагорно-Карабахской автономной области в 1923-1988 гг.”) и в готовую к публикации книгу “Образовательная система Нагорного Карабаха (1992-2016 гг.)”, оставив эту возможность для других исследователей, которые при наличии соответствующего желания могут сделать ее предметом отдельного изучения.

Такой подход оправдан и обоснован тем, что наши соседи уже около века выражают свое отношение к народу Арцаха путем искажения и фальсификации исторических фактов, стремясь поскорее реализовать программу по изгнанию армянского населения из Нагорного Карабаха. Не случайно, что представители различных сфер жизнедеятельности в

Азербайджане в своих “научных” статьях и работах последовательно проводят мысль, что в Карабахе якобы всегда было малочисленное, незначительное количество армян, в то время как до большевистской революции и даже после включения Нагорного Карабаха в состав Азербайджанской ССР армяне составляли абсолютное большинство населения. Другое дело, что власти Азербайджана проводили целенаправленную политику по сокращению численности армян в Карабахе путем массового террора, репрессий, резни, что и происходило с первых же дней вхождения Нагорного Карабаха в его состав [1,2].

Для большей убедительности мы приведем один пример, используя при этом данные из статистических изданий.

Согласно декрету Нариманова, подписанного в августе 1921 года через месяц после принятия решения Кавказского Бюро Центрального Комитета РКП (б) от 5 июля 1921г., в Карабахе и соседних районах была проведена перепись населения. По данным переписи, общая численность населения составила 129243 человек, из которых 122426 были армяне, 6560 –азербайджанцы, 267–греки, русские, курды [3]. Фактически, армяне составляли 94,4 % населения, а азербайджанцы – 5,6% [4].

При наличии таких фактологических данных группа деятелей из Азербайджана, не ссылаясь на какой-либо достоверный статистический источник, написала в газете “Бакинский рабочий”, что в 1921 году численность азербайджанцев в Нагорном Карабахе якобы составляла 90% населения [5]. Этим они хотели оправдать необходимость замены решения Кавказского Бюро ЦКРКП(б) от 4 июля 1921г. на решение от 5 июля 1921г.

7 июля 1923 года Центральный исполнительный комитет Азербайджана принял декларацию о формировании Нагорно-Карабахской автономной области, население которой состояло из 149,6 тысяч армян и 7,7 тысяч азербайджанцев [6].

После вхождения Нагорного Карабаха в состав Азербайджана началась миграция армян из области, что привело к стабильному сокращению численности ее армянского населения. Итак, если в 1921 году армяне составляли 94,4 процента населения, то по данным 1939 года, этот показатель составил 83,1 % [7].

12 января 1989 года в Нагорно-Карабахской автономной области была проведена новая перепись населения. По данным этой переписи, общая численность населения составила 189,1 тысяч человек, из которых 145,5 (76,9%) были армяне, 40,7 тысяч (21,5%) –азербайджанцы, 2,9 тысяч(1,5%) – другие нации.

Данные об изменении численности населения в НКАО показывают, что политика, проводимая политическим руководством Азербайджанской ССР, привела к постоянному сокращению численности армянского населения области и увеличению численности азербайджанцев.

Авторы не представили в данной работе сведения об азербайджанских образовательных учреждениях в Нагорном Карабахе, чтобы исключить возможность для излишних трактовок со стороны наших соседей.

SUMMARY

THE EDUCATIONAL SYSTEM OF NAGORNO KARABAKH (1992-2016)

Arpat Avanesyan, Geigori Harutyunyan

During long-term studies the authorsmanaged to overcome many difficulties and accomplish their priority task: to present a three-volume work to the public that covered the complete history of historical Artsakh's (present-day Nagorno Karabakh Republic) educational system starting from the 5th century till 2016.

The complete history of historical Artsakh's educational system from the 5th century till the second decade of the 20th centurywas studiedin the first volume of the work ("The educational system of Artsakh", "Dizak plus" publishing house, Stepanakert, 2014, p.408).

The complete history of Nagorno Karabakh Autonomous District's educational system was studied in the second volumeof the work ("The educational system of theNagorno Karabagh Autonomous District in 1923-1988","Dizak plus" publishing house, Stepanakert, 2015, p.504).

The third volume became logical continuation of the previous part of the work and contained complete review of Nagorno Karabakh Republic's educational system in 1991-2016. The year of 1988 was chosen as starting point of studies and analysis in order to show the situation in the educational system of Nagorno Karabakh Autonomous Districtbefore the NKR proclamationin details.

It should be noted, that in Chapter 1 and 2 of the third volume the subject of the study was only the history of preschool institutions, centersforրhild and teen-age creativity, general education schools, vocational schools, military college, art, choreography, music and sports schools that are partof the NKR educational system; as well as directions of formation and development of the system, the main issues of united management of the educational system in the pan-Armenian educational field, substantial reforms in the educational system, the activity of the educational system workers, managers of the regional educational departments, honoredpedagogues, who plan and organize the teaching process in the general education schoolsin a new and effective manner.

It is undeniable, that secondary vocational and higher education institutions are also included in the educational system of the republic, the history of which must be studied. Reforms, carried out in the secondary vocational and higher education sphere, united policy of management, main issues in the pan-Armenian educational field must be covered as well. The authors of the work found it rational to include these subjects into further research and present it in the 4th volume.

After proclamation of independence Armenia and Artsakh got an opportunity to solve the socio-economic, political, cultural, religious and educational issues they faceby joint efforts. Along with changes in socio-economic relations, fundamental transformations in the general education sphere were also carried outin the Artsakh Republic.

The educational system of Artsakh as the successor of the soviet system

entered into adifficult phaseduring the transition period. In the first years of independence the economic crisis in Armenia and Artsakh negatively affectedthe education system as well. In the transition period (1991-1995) some factors slowed and prevented the reformation and development of the education system.

During the post-war period relatively favorable conditions for further development of the educational system has been created. The NKR government and the Ministry of education, science, culture and sports have adopted a number of decisions to take urgent measures for recovering activities in secondary schools, educational institutions and other spheres. An important step in the common system of these measures was a decision adopted by the NKR government on 16 May 1994, which was intended not only to recover, but also significantly exceed the pre-war level of economy, culture and education. That is, to reconstruct buildings of educational institutions and cultural centers destroyed during the war, to construct new buildings, significantly expand the school network and increase the number of pupils. Due to the selfless work of the Artsakh people and pan-Armenian support, favorable conditions were created for expansion of general education schools, preschool and extracurricular institutions network, strengthening the educational-material base and organization of the common study.

During the process of education system formation significant changes were made in the general educationalfield (1995-1999). Thus,the NKR Government provided all necessary funding to increase the number of schools with particular emphasis to increasing the number of 8-grade primary schools and secondary schools. In comparison with 1995-1996 there were 147 schools in the republic, 35 of which were primary, 14 of them- 8-grade or 9-grade schools, 98 middle schools; in 1998-1999 there were already 152 schools, 10 of which primary, 38 of them-9-grade and 106 secondary schools. The government provided enough financial means for cabinets of physics, chemistry, biology, computer science, military training, job training and obtained necessary equipmentto move to cabinet system of study.

During the period under study wrong decisions made by the NKR Government in 1995-1998 had a negative influence especially on the course of educational reforms. Thus, for example, all preschool institutions were closed at oncein 1995, so that preschool education has “fallen out” of the common system of educational program.

According to the NKR Government decision N227 on 10 November 1998, state general education schools were included in the estate listings of community property. A number of normative documents have been adopted which wouldhave secured the activities ofgeneral education schools. However, the following few months have shown that this decision was hasty.

Despite the difficulties existing in the republic and negative impact of unreasonable decisions, the best traditions and achievements of the educational system are mostly preserved and preconditions for ensuring its further development were created.This process revitalizedin 1999, when the issue of preservation and development of the common educational system was discussed during the meeting with delegation of Ministry of Education of the Republic of Armenia headed by minister Eduard Ghazaryan. Meeting took place in the NKR Ministry of Education

on 30 November, 1999. The aim of the meeting was to develop joint educational programs in two Armenian republics, definedirections for developmentand main issues in the process of reforms.

At the meeting it was suggested to withdraw the secondary schools from the estate listings of community property and pass it to the local departments of education. So, on 10December, 1999the NKRgovernment made a decision on withdrawing the rural schools of the republic from the estate listings of community property and passing them to the regional education departmentsrestoring their former status. In accordance with the decision, the classes in secondary and high schools that had beenformed in a wrong way were separated as well.

Educational system in the republic recorded significant growth especially during fundamental changes in 2001-2011. According to the official data of the Ministry of Education the school network in the republic has been expanded, schools' material basiswas improved, large-scale works for renovation and capital renovation, construction of newschool buildings have been carried outduring the new stage of the reconstruction of education system. The issue of school constructionwas reflected also in the resolution of second Armenia-Diaspora conference held in Yerevan on 27-28 May, 2002. The issue of complete renovation of all school buildings and construction of new ones in Artsakh during the next three years (2002-2005) was fixed in the resolution. Much has been achieved during the process of realization of five-year program on preservation and development of the educational system (2005-2010). For example, school construction project was fulfilled with the support of Diaspora philanthropists. Educational facilities and equipment status of the classrooms, laboratories and computer rooms were at a satisfactory level. Much of the schools including rural schools were equipped with computers thanks to the assistance of Diaspora Armenians. The network of general education schools, kindergartens was rapidly expanding. If in 1999-2001 there were 169 schools and 28 kindergartens operating in the republic, in 2005-2006 academic year we had already 234 secondary schools and 38 kindergartens. The 85.9 percent or a total of 201 schools were situated in rural places. There were 22463 pupils and 4242 teachers in the schools. 45 schools were constructed, 47 schools were complete renovated and 50 schools were provided with new furniture, laboratory and computer equipment according to the requirements of the five-year educational program (2005-2010). The teaching in these schools was carried out on a classroom system. It should be noted that theissue of transition to a classroom system teaching method in schools was discussed among other issues during the collegium meeting of the NKR Ministry of education, culture and sports (1 October, 2005) attended by representatives of the regional departments of education and school directors. Suggestions were made to transit to a classroom system teaching method in secondary schools with appropriate material basis and building conditions using previously owned educational visual aids and equipment, modern technical facilities, computers and so on.

Significant changes have been made during the new stage of the NKR educational system development (2007-2010), particularly transition to a 12-year education program. The first step was starting the school at 6 years of agein 2007-2008 academic year. It should be notedthat starting the schoolat that age was not

on a voluntary basis, but by law. As we have mentioned, there were already two first classes in schools of the republic in 2005-2006 academic year. Children who had turned7 before December 30 studied according to the old education system (11 years), while children who turned 6 years old studied 12 years. Thus, transition to a 12-year education system was among the pivotal reforms, the implementation of which started in 2006-2007 academic year, particularly in 2007-2008 academic year.It was also envisionedto introduce the three-year high school education systemin 2008-2009 academic year. This systemwas aimed to modernize and improve the quality and efficiency of education on the third stage of basic education – in the high school. The high school is the main link providing primary vocational education, which contributes greatly to the pupils' correct professional orientation and further successes in education. As noted in "State standard for general secondary education", high school is the last link of general education which should prepare pupils for independent life and entry to a labor market.

The analysis of 4-year experience of high school system (2010-2014) showed that the policy of establishing high schools in the republic is realistic because high schools could solve tasks related to improving quality of education.

Researches have shown that two decades of the NKR educational systemdevelopment (1991-2011) were characterized not only by high achievements attainedin the sphere of the realization of 8 years compulsory education program, expanding of school network, establishing of high schools, school construction, increasing in the number of pupils, improvement of quantity and quality of teaching staff, but also radicalreforms in teaching and educational activity. At the initiative of RA and NKR ministries of education and science new educational programs and curriculahave been developed and approved, the process of publishing textbookshas been renewed.

Changes made in educational programs, curricula and textbooks ofgeneral education schools have created conditions for improving organizational and pedagogical methods and techniques of reconstructing educational work in the second stage of the system reforming (2002-2008).

According to the regulations approved by the NKR Ministry of education and science, teaching and educational work at secondary schools in 2002-2003 academic year was organized in various ways, that differed from previous activity by the schedule of lessons, pupils composition, holidays, relations between pupils and teachers, as well as by the nature and features of their activity. Another innovation in general education schools was the assessment of pupils learning achievements and their educational activity. For example, since 1 November 2008 a transition to the 10-points grading system for evaluating the pupils' knowledge was made in secondary schools of Artsakh upon the order ofthe NKR Ministry of education and science.

Such changeswere made to clearly define and evaluate the pupils' skills, abilities and knowledge, as 5-points grading system did not fully provide this.It was also intendedby the NKR government decision "On pupils evaluating concept and state standard" (2005). Comparing with previous decades there wasa serious progress in the process of assessing and rating the pupils learning achievements.

The analysis has shown thatduring the new phase of reforming the general

education field a serious attention was paid to the introduction of new information technologies in the republic's educational institutions. All schools are now provided by computers, while large schools have computer classrooms. Besides, projects of introducing new technologies are being carried out. Especially the "NES" project (New Educational Strategy) was widely implemented in Artsakh in 2010-2011 with the assistance of famous Armenian philanthropist from Argentina Eduardo Ernekyan. The project was renewed and extended in 2012-2013academic year.

Observations have shown that some experimental works have been also carried out in schools for the introduction of "Dasaran.am", "Էկոտոր", "Դիջիքեթ", "Ինստիգեյթ" and other programs (see section 2 of chapter 2 of the work).

During the period under review (2010-2014)the issue of teaching and educating children with special needs was in the spotlight of specialists on planning the learning activities. For the first time parents have got the right to educate their children withdisabilities in a regular secondary school in accordance with the law "On Education", passed in 1999. And it became essential to promote inclusive education system in the republic, which would allow children with and without disabilities learn together in the same classes.In order to assist in proper and effective organization of such educational approach in 2009-2010 academic year the delegation of RA Ministry of education and science visited Stepanakert. NKR Ministry of education and science adopted the list of schools with inclusive education. According to the official data of the Ministry, 52 schools in Stepanakert and other regions of the republic ensured the realization of the rightfor education mentioned in the NKR Constitution and legislationfor pupils with special needs. Certainly, it would expand the scope of duties and responsibility of the principals and teachers in the schools with inclusive education. It was therefore necessary to organize special training courses for increasing knowledge and skills of principals and qualified specialists (psychologist, pedagogue, doctor-psychologist, teacher, social worker), as well as for improving their management skills in organization and realization of inclusive education.

During the period under study alongside with the reconstruction of the NKR educational system, significant work has been done for preparing and improving qualification of teachers. This issue was regularly discussed during republican and regional meetings, congresses and conferences of teachers. Workers of the regional educational departments were concerned about improving the pedagogical and methodological skills of teachers,training and retraining of teaching stuff. It is known that there were few qualified teachers during the war. Therefore,educational reforms in the post-war period were focused at strengthening of the teacher's role. But these initiatives will remain merely formalizedif the educational system will not be provided with qualified specialists. And it's necessary to carry out work on training a skillful teacher, because the teacher plays important role in school. The quality and effectiveness of education depend on teacher's qualification, skills and high ideals. It's a well-known truth that the future of the country depends on "healthy army" of teachers and advanced system of education. According to the official data,much work has been done in the republic for training and improving qualification of teaching stafffrom 2000 to 2015. Professional teachers are trainedby state and private accredited universities,

vocational institutions as well as Artsakh State University Master's programs that train education process managers too. The issue of improving the quality of teaching staff is very important. Modern high schools require not only high level of professional knowledge and skills by the teachers, but also high quality of methodological preparation. In this regard, it was required from the Ministry of education and science and regional education departments, on the one hand, to improve the educational level of teachers through annual courses and continuous education, on the other hand, put the teaching and educational work of university students and pedagogical groups on a higher basis in order to help them solve problems the modern reformed schools face.

The **third chapter** of the research presents prospects of the formation and development of the NKR educational system; functions, principles and methods of united educational system management in Artsakh and Armenia. Other issuesrelated to the management system within a school were also described in the chapter.

Comprehensive study of archive documents, memoriesof contemporaries and other materials gavean opportunity to the authors to chronologically present the activities of specialists on planningthe learning process (NKR ministers of education and science, deputy ministers, heads of regional educational departments and qualified specialists) in the **fourth chapter** of the research. Activities of directors and training courses managers of the NKR Teachers Training Institute and branch of the RA National Institute on Education in Stepanakert (1991-2016) are described in the work. We find it useful to note, that famous teachers, scientists and cultural figures from 1988 up to now have carried out active work and made substantial contribution to the development of educational system of Nagorno Karabakh Autonomous District (1988-1990) and then - Nagorno Karabakh Republic (1991-2016), as well as to strengthening of independent statehood of our country. NKR authorities appreciated their activities; many of them were awarded with the NKR honorary titles of Honored Pedagogue and Honored Scholar. They have been also nominated by the Government, Ministry of education and science and regional educational departments in “The best teacher of the year”, “The best principal of the year”, “The best military instructor of the year”, “The best class teacher of the year” categories forefficient work and pedagogical experience.

Authors considered appropriate to briefly present NKR preschool education system, activities of child and teen-age creativitycenters, secondary schools in NKR administrative regions, vocational schools, military college, choreography, music and sport schools from 1991 to 2016 in **Chapter 5,6,7** for introducing the whole picture of educational system in Artsakh. Thus, Artsakh people having overcome century-long severe challenges, approached the new phase of their history - the end of XX century full of social and political upheavals, ideas of freedom and epoch-making events. Historical Artsakh finally got rid of Azerbaijan leadership’s policy of harassing and embarked on a state building process which was lost 7 decades ago. Artsakh people’s aspirations came true: NKR educational system was integrated with Armenia’s educational system. So, in XXI century favorable conditions were created for solving problems existing in socio-economic, political, cultural and educational spheres of the two Armenian states with joint efforts.

Thesechangesplayedacrucialrole in the life of people of both Armenian republics, paving the way for new ideology, culture, educational system, which brought to fundamental transformations in socio-economic and political life in the first and second decades of XXI century (2000-2016). The main directions of reforming process in educational system were defined in this period and further developed on the third stage of reforms in 2008-2016.

Indeed, the basis of educational system in Artsakh was laid at the time of Mashtots, developed in the Soviet period and during years of independence (1991-2016), which was presented in the three-volume research. The complete history of secondary and higher education system you can find in its fourth volume.

P.S.

It is obvious thataquestion may be raised whether NagornoKarabakh had only Armenian educational system or there were also Azerbaijani preschool institutions and schools.The authors being well-informed about the existence of Azerbaijani educational institutions in Nagorno Karabakhhave not examined the mentioned topic in the already publishedworks “Educational System of Artsakh”, “Educational System in NagornoKarabakh Autonomous District in 1923-1988” and in the monograph ready for publication “Nagorno Karabakh Educational System in 1992-2016”, leaving it to other researchersto make this issue a subject of a further study. Such an approach is reasonable and justified,because our neighbors express their attitude to Artsakh people by distortion and falsification of historic facts trying to expelArmeniansfrom Nagorno Karabakh. It is not coincidence that representatives of different spheres of Azerbaijanconsistently insistedin their “scientific” articles that in Karabakh always lived small and insignificant number of Armenians, whereas before the Bolshevik Revolution and even after inclusion of Nagorno Karabakh within the Azerbaijan SSR, Armenians constituted the absolute majority of the population. And it's quite another matter that Azerbaijan authorities implemented a targeted policy on reduction of Armenian population in Karabakh by means of mass terror, repressions, massacrescarried out from the very first day after Nagorno Karabakh was annexed to Azerbaijan[1,2].

In order to be more persuasive we mention just one example based on official statistical publications.

Just one month after adopting the decision of the Caucasian Bureau of the Central Committee of the Russian Communist Party (Bolsheviks) on July 5, 1921,population censuswas conducted in Karabakh and neighboring regions according to the decree signed by Narimanov. The census recorded that the population was estimated to be 129243people, 122426of which were Armenians, 6560- Azerbaijanis, 267 - Greeks, Russians, Kurds[3]. In fact, the Armenians made up 94.4 percent of the population, Azerbaijanis- 5.6% [4].

Even having such evidence-based facts a group of eminent persons from Azerbaijan without reference toany reliable statistical sources published in the newspaper "Bakinsky rabochiy” an article which statedthat 90 percent of the population in 1921were Azerbaijanis [5].In this regard they tried to justify thenecessity of substitution of the decision made by the Caucasian Bureau of the Central Committee of the Russian Communist Partyon July 4, 1921with another one made onJuly 5, 1921.

On July 7, 1923the Central Executive Committee of Azerbaijan adopted a declaration on the formation of the NagornoKarabakhAutonomous District with population consisting of 149.6 thousand Armenians and 7.7 thousand Azerbaijanis[6].

Migration of the Armenian populationfrom the districtbeganafter the annexation ofNagorno Karabakh to Azerbaijani SSR. Thus, if in 1921 the Armenians constituted 94.4 percent of the district's population, in 1939 this figure became 83,1 percent [7].

On January 12, 1989 a new population census was conducted in NagornoKarabakh Autonomous District. According to this census data, the population of the regionwere 189.1 thousand people, 145.5 thousand or 76.9 percent of which were Armenians, 40.7 thousand or 21.5 percent - Azerbaijanis and 2.9 thousand or 1.5 percent - other nations.

The submitted data about changes in the number of people in NagornoKarabakh Autonomous District indicates that policy carried out by political leadership of the Azerbaijani SSR led to permanentdecreasing of Armenian populationin the district and increasing of the number of Azerbaijanis.

It is clear, that the authors didn’t present any information about Azerbaijani educational institutions in Nagorno Karabakh to exclude the possibility of unnecessaryinterpretations from our neighbors.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Այդ մասին տես ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանի (և համահեղինակներ) խմբագրությամբ «Կրթությունը Արցախում 405-2005թթ.», Երևան, 2005, էջ 104-405:
2. 1987-1988 ուս.տարում սույն աշխատության համահեղինակ Գ.Հարությունյանը ուսանողների փորձուսուցումը կազմակերպել և անց է կացրել վերոնշյալ պատանի բանասերների և տեխնիկների կայաններում:
3. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2006թթ., էջ 45-53, նաև սույն աշխատության համահեղինակ Գ.Հարությունյանի անձնական արխիվը (այն ժամանակ ղեկավարում էր մանկավարժական փորձուսուցումը դպրոցներում):
4. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g.1, պ.մ. 972, կ.12, պ.մ.982, կ.95: Տես նաև՝ Գ.Հարությունյան, «Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում», Երևան, 1985թ., էջ 158:
5. Բ.Ուլուբաբյան, «Արցախի պատմությունը», Երևան, 1994թ., էջ 255:
6. Նույն տեղում:
7. Վ.Բալայան, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 298-299:
8. Закон СССР от 3 апреля 1990г. О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР, «Ведомости Съездов народных депутатов СССР и Верховного Совета СССР», 1990г., N15, стр.252.
9. «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991թ.:
10. Տես Ս.Մելքումյան, Լեռնային Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն,
Երևան, 2010, էջ 3:
11. Է.Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները հանրապետությունում (1990-2003թթ.), Երևան, 2003, Հ.Աբրահամյան, ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008թթ.), Երևան, 2012 և այլն:
12. Տես՝ ՀՀ սոցիալական վիճակը 2003թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 14.03.2012թ.:
13. Վ.Բալայան, նշված աշխատություն, էջ 298-299:
14. Լ. Բաղդասարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին 2014թ-ին (8 էջ):
15. Տես՝ Ա.Աբրահամյանի հուշերը:
16. Հ.Աբրահամյան, նշված աշխատություն, էջ 247-248:
17. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999թթ. էջ 45: Տես՝ նաև Հ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, «Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2005, էջ 478-479:
18. Վերոնշյալ մանկավարժների, գործիչների հուշերը պահպանվում են սույն աշխատության հեղինակների մոտ:
19. Նույն տեղում:
20. Ռ. Բաղդասարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին, որի համար շնորհակալություն են հայտնում:
21. ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության արխիվ, գ.12-13, նաև Բ. Դավթյանի հուշերը, որը տրամադրել է հեղինակներին:

22. Մ. Բալյանը իր հուշեր տրամադրել է հեղինակներին:
23. ԼՂՀ կառավարության 1994թ. մայիսի 16-ի թիվ 47 որոշում:
24. Որպես վերոնշյալ հայրենասիրական նախաձեռնության ակտիվ մասնակից, սույն աշխատության համահեղինակ Ա.Ավանեսյանը այդ մասին պատմում է իր հուշերում:
25. Վերոնշյալ շրջանների կրթության բաժինների վարիչների հուշերը տրամադրել են հեղինակներին նրանց բարեկամները, իսկ հաշվետվությունները գտնվում են ԼՂՀ ԿԳՆ արխիվում, գ. 18:
26. ԼՂՀ ԿԳՆ արխիվում, գ. 16, նաև խորհրդակցության մասնակից Մարտակերտի շրջանի ժողկրթբաժնի վարիչ Ռ.Բաղդասարյանի նշված հուշերը:
27. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 1995-1999թթ., էջ 45, նաև՝ Հ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 479:
28. Հ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 248:
29. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 1995-1999թթ., էջ 45:
30. «Լուսարար», 1999թ., հ.1, 1-ին սեպտեմբերի: Նաև Հ.Աբրահամյան, նշվ.աշխ., էջ 249:
31. «Լուսարար», 1999թ., հ.1, 1-ին սեպտեմբերի:
32. Նույն տեղում:
33. ԼՂՀ կառավարության 1999թ. հունիսի 1-ի թիվ 102 որոշում:
34. Տես՝ ՀՀ կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիրը: Ընդունվել է 26.08.2001թ., էջ 4:
35. Ռ.Բաղդասարյանի նշված հուշերը:
36. Մ. Բալյանը իր հուշեր տրամադրել է հեղինակներին:
37. ԼՂՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 10-ի «Համայնքի սեփականության գույքը սահմանելու մասին» թիվ 227 որոշումը: Նաև «Լուսարար», 48-1998, թ.1:
38. 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Մ. Բալյանը իր հուշեր տրամադրել է հեղինակներին: Նաև նշված հոդվածը:
39. Տես ԼՂՀ կառավարության որոշում թիվ 227, նոյեմբերի 10, 1998թ.:
40. «Լուսարար», 1999թ. հոկտեմբեր:
41. «Լուսարար» թիվ 4, 1999թ. դեկտեմբեր:
42. Տես մասնագիտական կրթություն և գիտություն (ԼՂՀ ԿԳ նախարարություն) օրենքների, կառավարության որոշումների ժողովածու, էջ 12: Կազմեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Ա.Սարգսյանը:
43. Ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանն իր զեկուցումներն ու հուշերը տրամադրել է իր բարեկամ, սույն աշխատության համահեղինակ Ա.Ավանեսյանին:
44. ԼՂՀ կառավարության որոշում թիվ 227, նոյեմբերի 10, 1998թ.:
45. ԼՂՀ կառավարության որոշում թիվ 46, դեկտեմբերի 10, 1999թ.:
46. Ուսումնասիրվել են ԿԳ նախարարության և դպրոցների արխիվային փաստաթղթերը, հաշվետվություններն ու ժամանակակիցների (Բ.Դավթյան, Մ.Բեգլարյան, Օ.Ասրյան) հուշերը:
47. ԼՂՀ կառավարության թիվ 102 որոշում, 1999թ. հունիսի 1:
48. «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2002թ. էջ 6, նաև ԼՂՀ ԿԳՆ արխիվ, գ. 14:
49. ԼՂՀ ԿԳՆ արխիվում, գ. 15-16, նաև «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2002թ. էջ 9:
50. «Լուսարար» թիվ 2, 2000թ.:
51. «Լուսարար» թիվ 9, 2002թ., նաև Մարտակերտի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 12-13:

52. Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.14-15, նաև ուսուցչական խորհրդակցության մասնակից Վ.Անտոնյանի, Ա.Հայրապետյանի հուշերը, «Լուսարար» թիվ 9, 2002թ.:
53. Նույն տեղում:
54. «Լուսարար», թիվ 12, 2002թ.:
55. «Լուսարար», թիվ 12, 2002թ., նաև խորհրդակցության մասնակից Բ.Դավթյանի հուշերը:
56. Հադրութի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.9-10, նաև «Լուսարար», թիվ 9, 2002թ.:
57. Ասկերանի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.14, նաև «Լուսարար», թիվ 9, 2002թ.:
58. «Լուսարար», թիվ 9, 2002թ.:
59. Շուշիի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.16, նաև Ալբերտ Խաչատրյանի հուշերը:
60. Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.4, 5, նաև «Լուսարար», թիվ 3, 2002թ.:
61. «Լուսարար», թիվ 21, 2004թ.:
62. Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի արխիվ, գ.8-9, նաև «Լուսարար», թիվ 9, 2002թ.:
63. ԼՂ ԿԳ նախարարության արխիվ, գ.10-11, նաև «Լուսարար», 16-ին ապրիլի, 2002թ.:
64. «Ազատ Արցախ», 2004թ. հունիս: Նաև՝ Մարտունու կրթության բաժնի արխիվ, գ. 5:
65. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 11-12, նաև՝ «Լուսարար», 2004, թիվ 6, 2005, թիվ 18:
66. Նույն տեղում: Նաև՝ «Ազատ Արցախ», 2004թ. մարտի 13:
67. Այդ մասին տես ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 8,9,10: Նաև՝ «Լուսարար» թերթի 2004, թ.18, 21, 2005, թ. 18, 22:
68. «Լուսարար», 2005, թիվ 18:
69. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 8,9: Նաև՝ «Լուսարար», 2005, թիվ 22:
70. Նույն տեղում, թիվ 18:
71. Նույն տեղում:
72. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 5, 6, նաև՝ «Լուսարար», 2002, թիվ 9, 18, 21:
73. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 11-12, նաև՝ «Լուսարար» 2005, թիվ 18:
74. Նշված դպրոցների տնօրենների հաշվետվությունները ուսումնասիրվել են տեղում՝ նույն դպրոցներում:
75. Ա.Օհանջանյանի հաշվետվությունը ուսումնասիրվել է Գիշու դպրոցում և մանրամասն տեղեկություններ ներկայացվել հեղինակներին:
76. «Լուսարար», 2003, թ.2, 18:
77. Նույն տեղում:
78. Նույն տեղում:
79. Նույն տեղում:
80. «Լուսարար», 2004, թիվ 21:
81. Նույն տեղում:
82. «Լուսարար», 2005, թիվ 18:
83. Նույն տեղում:
84. «Լուսարար», 2007, սեպտեմբեր:
85. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.12-13: Նաև «Լուսարար», 2006, թիվ 5, մայիսի 11:

86. «Լուսարար», 2007, սեպտեմբեր:
87. Մարտակերտի կրթության բաժնի արխիվ, գ. 8-9, նաև՝ «Լուսարար», 2006, թիվ 16:
88. Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 11-12, նաև՝ «Լուսարար», 2007, թիվ 18:
89. Հադրութի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 12-13, նաև՝ «Լուսարար», 2007, թիվ 18:
90. Ասկերանի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.12-13, նաև՝ «Լուսարար», 2007, թիվ 18:
91. Քաշաթաղի (Բերձորի) շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.17-18, նաև՝ «Լուսարար», 2007, թիվ 1, 4:
92. Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի արխիվ, գ.13-14, նաև՝ «Լուսարար», 2007, թիվ 18:
93. Նույն տեղում:
94. Նույն տեղում:
95. ԼՂՀ ԿԳՆ արխիվ, գ. 16-17, նաև՝ «Լուսարար», 2007, թիվ 1, հունվարի 17:
96. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2000-2006, էջ 45-53, 2002-2008թթ., էջ 82-93:
97. Այդ մասին տես՝ «Լուսարար» թերթի 2009թ. թիվ 17:
98. 2008-2009 ուս. տարում Ա.Աշոտյանը հանդիպում է ունեցել ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատողների, շրջանային կրթության բաժինների վարիչների, դպրոցների տնօրենների հետ, հանդես եկել «Ավագ դպրոցը՝ 12-ամյա կրթությունը շատ լուրջ խնդիր է» զեկուցումով: «Լուսարար» թերթի 2009թ. թիվ 32:
99. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2004, էջ 9-10:
100. ԼՂՀ կառավարության 2008թ. ապրիլի 18-ի որոշումը:
101. «Լուսարար» թերթի 2009թ. թիվ 17, 2010թ. թիվ 5:
102. ԼՂՀ ԿԳՆ արխիվ, գ. 18-19, նաև՝ «Լուսարար», 2009, թիվ 7, «Լուսարար», 2010, թիվ 4, թիվ 18:
103. «Լուսարար», 2009, թիվ 24:
104. Նույն տեղում:
105. Տես՝ Վ. Սահակյանի հաշվետվությունը, որը պահվում է Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի արխիվում:
106. ԼՂՀ կառավարության 2008թ. հունիսի 20-ի թիվ 8 որոշում:
107. Տես՝ Ստեփանակերտի թիվ 11 դպրոցի արխիվ, գ.9: Նաև «Լուսարար», 2010, թիվ 7, 8:
108. Նույն տեղում:
109. Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 6, 7, նաև՝ «Լուսարար», 2010թ. թիվ 2:
110. Մարտակերտի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 11, 12, նաև՝ «Լուսարար» 2010թ. թիվ 18:
111. Ասկերանի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 9, 10:
112. Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի արխիվ, գ. 12, 13:
113. Այդ մասին տես՝ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 11, 12: Նաև՝ «Լուսարար», 2010թ. թիվ 27:
114. Շահումյանի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.12: Նաև՝ «Լուսարար», 2012թ. թիվ 28, 29:
115. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.14, 15, նաև՝ «Լուսարար», 2010թ. թիվ 18, 2012թ. թիվ 29:

116. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.16, նաև՝ «Լուսարար», 2013թ. թիվ 36:
117. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.12, նաև՝ «Լուսարար», 2011թ. թիվ 10, 2012թ. թիվ 27:
118. Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի արխիվ, գ. 8-9:
119. Վերոնշյալ փաստագրական տվյալների մասին տես ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.12,13,14: Նաև՝ «Լուսարար», 2011թ. թիվ 10,11, 2012թ. թիվ 27, 2013թ. թիվ 31:
120. Նույն տեղում:
121. «Լուսարար», 2013թ. թիվ 31, նաև՝ Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Քաշաթաղի կրթության բաժնի արխիվ, գ.8, 9, 10, 11:
122. Մարտակերտի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 13, 14, նաև՝ «Լուսարար», 2013թ. թիվ 28, «Լուսարար», 2014թ. թիվ 28, 29:
123. Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 16, 17, նաև՝ շրջանի Հացի գյուղի հիմնական դպրոցի արխիվ, տնօրենի հաշվետվությունը: «Լուսարար» 2013թ. թիվ 28, 29, «Լուսարար» 2014թ. թիվ 27:
124. Հադրութի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ.8, նաև՝ «Լուսարար» 2014թ. թիվ 31:
125. Ասկերանի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 18, նաև՝ «Լուսարար» 2014թ. թիվ 34:
126. Շուշիի շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 11, նաև՝ «Լուսարար» 2014թ. թիվ 32:
127. Քաշաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնի արխիվ, գ. 4-5, նաև՝ «Լուսարար», 2014թ. թիվ 27:
128. Նույն տեղում: Նաև՝ «Լուսարար», 2014թ. թիվ 28, 29:
129. Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի արխիվ, գ. 14: Նաև՝ «Լուսարար», 2014թ. թիվ 30, 31, 32:
130. ԼՂՀ ԿԳ նախարարի զեկուցումը տպագրվել է «Լուսարար» թերթի 2014թ. թիվ 5-6 համարներում:
131. «Լուսարար», 2014թ. թիվ 5, 6:
132. «Լուսարար», 2015թ. թիվ 8, 9:
133. «Լուսարար», 2015թ. թիվ 8, 9, 21:
134. «Լուսարար», 2015թ. թիվ 8, 9:
135. «Լուսարար», 2015թ. թիվ 3, 18:
136. «Լուսարար», 2015թ. թիվ 29:
137. Վերոնշյալ փաստագրական տվյալների մասին տես ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 13, 14, 15, 16: Նաև՝ «Լուսարար», 2015թ. թիվ 8, 9, 18, 32:
138. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 14 ապրիլի, 1999թ., հոդված 4, կետ 2: «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, 15 ապրիլի, 2000թ., հոդված 4, կետ 2:
139. Նույն տեղում, հոդված 4, կետ 3:
140. ԼՂՀ կառավարության որոշում, 1999թ. թիվ 146:
141. Այդ մասին տես ԼՂՀ ԿԳ նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի 2003թ. ապրիլի 9, թիվ 40:
142. Լ.Մկրտչյանի զեկուցումը՝ «Մեկ միասնական դաշտ՝ մեկ միասնական քաղաքա-կանություն», «Ազատ Արցախ», 10 ապրիլի 2003թ.:
143. «Լուսարար», 2008, թիվ 8, 9: Քննարկումներ կրթական հիմնախնդիրների շուրջ:
144. «Լուսարար», 2008, թիվ 9, 10:
145. Նույն տեղում:
146. «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդված: Նաև՝ ԼՂՀ ԿԳ նախարարության «Մասնագիտական կրթություն և գիտություն» ժողովածու, 2015, էջ 16-17:

147. Նույն տեղում:
148. Ուսումնասիրությունը կատարվել է ԼՂՀ հանրակրթական դպրոցներում:
149. Տես ՀՀ պետական բյուջե, 2000, 2001-2004, ինչպես նաև՝ ԼՂՀ պետական բյուջե, 2000-2006թթ.:
150. Ուսումնասիրվել են Հայաստանի և Արցախի ԿԳ նախարարությունների համատեղ ընդունած որոշումները և հրահանգները:
151. Տես՝ Ն.Հարությունյան, Կրթության կառավարման հիմնահարցերը Հայաստանում և Սփյուռքում, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման միտումները» միջազգային համաժողովի նյութեր, Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003, /Զեկուցումների ժողովածու/, էջ 479:
152. Նույն տեղում:
153. «Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999թ.:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

154. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 2:
155. Լ. Ասատրյան և ուրիշներ, Կրթության համակարգի կառավարման հիմունքները, Երևան, 2003, էջ 32-33:
156. «Մանկավարժություն», 2005, թիվ 4, էջ 17:
157. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 12, նաև «Լուսարար», 2005, թիվ 18:
158. «Լուսարար», 2009, թիվ 12, 2010, թիվ 21:
159. «Լուսարար», 2009, թիվ 19:
160. «Լուսարար», 2009, թիվ 19:
161. «Լուսարար», 2007, թիվ 4:
162. Նույն տեղում:
163. ԼՂՀ ԿԳ նախարարության տեղեկագիր, 2011թ.:
164. «Լուսարար», 2012, թիվ 33, 34, 35:
165. Նույն տեղում:
166. «Լուսարար», 2012, թիվ 34, 35:
167. «Լուսարար», 2014, թիվ 9, 10:
168. Նույն տեղում:
169. «Լուսարար», 2013, թիվ 28, 29:
170. «Լուսարար», 2000, թիվ 1:
171. «Լուսարար», 2000, թիվ 1, 2:
172. ՀՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 16-17: Նաև այդ տվյալները նշվում են՝ «Մանկավարժություն», 2005, թիվ 4, էջ 25, Լ. Ասատրյան, նշվ. աշխ. էջ 36:
173. «Լուսարար», 2002, թիվ 8:
174. «Լուսարար», 2007, թիվ 14-15:
175. «Լուսարար», 2008, թիվ 13, 2009, թիվ 13:
176. «Լուսարար», 2010, թիվ 12, նաև թիվ 22, արխիվ:
177. «Լուսարար», 2010, թիվ 15:
178. Վերոնշյալ ուսումնական պլանները մեզ տրամադրել է Ստեփանակերտի թիվ 8, 11, ավագ դպրոցի, արհեստագործական ուսումնարանի տնօրինությունը: Նաև տե՛ս՝ ԼՂՀ ԿԳՆ 2012թ. հունիսի 25-ի թիվ 115-ն հրամանը:
179. Այդ մասին մանրամասն տես՝ «Լուսարար», 2012թ. թիվ 19, 20, 2013թ. թիվ 19:
180. Ուսումնասիրությունները վերոնշյալ դպրոցներում կատարվել են դպրոցների տնօրենների համաձայնությամբ:

181. Ուսումնասիրությունները կատարվել են 2014-2015 թվականներին:
182. Ուսումնական աշխատանքների վերաբերյալ մշակված մեթոդական հանձնարարականները, նշված հուշատետրերը պահպանվում են մեր կողմից ուսումնասիրված՝ Ստեփանակերտի թիվ 1, 2, 7 և այլ դպրոցներում:
183. Ուսումնասիրվել են հանրակրթական դպրոցների արխիվային նյութերը:
184. Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Միքայելյան Ը.Ս. Միքայելյան Ս. Օ, Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2010: Նաև՝ Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան, 2008:
185. Նույն տեղում:
186. «Լուսարար», 2008, թիվ 28:
187. «Լուսարար» 2008, թիվ 22:
188. «Լուսարար», 2005, թիվ 25-26:
189. «Լուսարար», 2007, թիվ 3:
190. «Լուսարար», 2008, թիվ 3, 4:
191. «Լուսարար», 2009, թիվ 22-23:
192. Ի. Սարինյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
193. Վ. Սուխոմլինսկի. խորհուրդներ ուսուցչին, Երևան, 1981, էջ 4-5:
194. Տե՛ս Ստեփանակերտի թիվ 1, 2, 7 դպրոցների արխիվ, գ. 10, 12, 13:
195. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 12-13:
196. Տե՛ս վերոնշյալ դպրոցների արխիվը:
197. «Լուսարար», 2009, թիվ 21:
198. «Լուսարար», 2012, թիվ 30-32:
199. «Լուսարար», 2012, թիվ 32:
200. «Լուսարար», 2013, թիվ 21, 2014, թիվ 28, 29:
201. «Լուսարար», 2012, թիվ 30-32:
202. «Լուսարար», 2013, թիվ 12, 13:
203. Շուշիի շրջանի կրթության բաժնի արխիվ, Գ. 8,9,10:
204. Նույն տեղում:
205. Շրջվարչակազմի կրթության բաժնի արխիվային փաստաթղթերում, Գ. 12,13:
206. Նույն տեղում:
207. «Լուսարար», 2013, թիվ 28-29:
208. «Լուսարար», 2014, թիվ 7,8:
209. Նույն տեղում:
210. «Լուսարար», 2011, թիվ 22, 28:
211. Նույն տեղում:
212. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 22-23: Նաև «Լուսարար», 2012, թիվ 25-26:
213. «Լուսարար», 2013, թիվ 35:
214. «Լուսարար», 2014, թիվ 35:
215. «Լուսարար», 2015, թիվ 3:
216. Նույն տեղում:
217. «Լուսարար», 2015, թիվ 6, 7:
218. ԼՂՀ ԿԳ նախարարության հաշվետվություն, Գ. 12, նաև տպագրվել է «Լուսարար» թերթի 2014, թիվ 26-ում»:

219. Այդ մասին նշվում է Մարտակերտի շրջանի կրթության բաժնի արխիվային փաստաթղթում: Գ. 8, 9:
220. Մարտունու կրթության բաժնի արխիվ, Գ. 11, 12:
221. «Լուսարար», 2014, թիվ 30, 31:
222. «Լուսարար», 2014, թիվ 34:
223. «Լուսարար, 2013, թիվ 28, 2014, թիվ 33:
224. Քաշաթաղի կրթության բաժնի արխիվ, Գ. 8, 9:
225. «Լուսարար», 2014, թիվ 13, 14:
226. Այդ մասին տես՝ Ա. Մելիքսեթյան, Ներառական ուսուցման անցման անհրաժեշտությունը, Մանկավարժություն, 2007, թիվ 8, էջ 58:
227. «Մանկավարժություն», 2012, h.7, էջ 6:
228. Տես՝ «Մանկավարժություն», 2012, h. 7, էջ 6:
229. Նույն տեղում:
230. «Լուսարար», 2010, թիվ 16:
231. Նույն տեղում:
232. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 12:
233. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.2-3, նաև, «Լուսարար», 2010, թիվ 16.17:
234. Ներառման ուղեցույց՝ Ապահովելու մատչելի կրթություն բոլորի համար, 2005:
235. «Լուսարար», 2013, թիվ 28, 29:
236. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ.2:
237. Տե՛ս, ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. -12:
238. ԼՂՀ ԿԳ նախարար Հ. Ասրյանի հաշվետվությունը, Գ. 12:
239. Նույն տեղում:
240. Նույն տեղում:
241. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 16:
242. «Լուսարար», 2000թ. թիվ 1-2:
243. Մ. Աստվածատրյան և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Երևան, 2003: ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 14-15: «Լուսարար», 2003, թիվ 18:
244. Դասընթացների նշված կազմակերպիչները իրենց հուշերը տրամադրել են հեղինակներին:
245. Տես՝ ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 12:
246. «Լուսարար», 2005, թիվ 15, 2006, թիվ 16:
247. Այդ մասին իր հուշերում պատմում է Շուշիի Մուրացանի անվան միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ս. Ալեքսանյանը, տես «Լուսարար», 2005թ. թիվ 25-26:
248. Նույն տեղում:
249. Տե՛ս «Լուսարար», 2006թ. 18-19 (Դասընթացներ վեց տարեկանների ուսուցիչների համար):
250. «Լուսարար», 2007, թիվ 19:
251. «Լուսարար», 2008, թ 23:
252. «Լուսարար», 2009, թիվ 30:
253. «Լուսարար», 2009, թիվ 30:
254. ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի ԱՎԲ-ի գլխավոր մասնագետ Ա. Հովհաննիսյանի հաշվետվությունը գտնվում է ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի արխիվում:
255. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 14, նաև «Լուսարար», 2012, թիվ 18:

256. «Լուսարար», 2012, թիվ 34-35:
257. Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի տնօրեն Լ. Մարտիրոսյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներիին: «Լուսարար», 2013, թիվ 25:
258. ՀՀ ԿԱԻ վերապատրաստումների բաժնի պետ Գ. Առստամյանի զեկուցագիրը պահպանվում է ՀՀ ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղում:
259. ԼՂՀ ԿԳՆ, արխիվ, Գ. 16, 17, նաև «Լուսարար», 2014, թիվ 33-34:, թիվ 14, 15:
260. Այդ մասին տես՝ ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, Գ. 11-12: Նաև շրջանային կրթության բաժինների արխիվային փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

261. «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, 2000թ. մարտի 15: Նաև տես՝ Մասնագիտական կրթություն և գիտություն(ԼՂՀ ԿԳ նախարարություն), Ստեփանակերտ, 2015, էջ 12:
262. Մանրամասն տես՝ Սբ.Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Եր. 1958, Լևոն Խաչերյան, Գլաձորի համալսարան, Եր., 1973, Ա.Գզոյան, Տաթևի համալսարան, Եր., 2003 և այլ աղբյուրներ:
263. Այդ մասին տես՝ Մ.Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 1964: Ա. Իգնատյան, Մոսկվայի Լազարյան ճեմարան, Եր., 1969: Մ.Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմությունը, Եր., 1986: Գ.Հարությունյան, Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը 5-20-րդ դարի սկզբին, 2002:
264. Կրթության մասին օրենքի 18-րդ հոդվածը:
265. Այդ մասին տես՝ Հանրակրթության պետական կրթակարգ (ՀՀ ԿԳ նախարարություն), Երևան, 2004, էջ 14-16:
266. ԼՂՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», 2006թ. սեպտեմբերի 27, հոդված 4:
267. ԼՂՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», 2005թ. մայիսի 25-ին:
268. Տես՝ Ն.Հարությունյան, Կրթության կառավարման հիմնահարցերը Հայաստանում և Սփյուռքում, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման միտումները» միջազգային համաժողովի նյութեր, Երևան, 15-20 սեպտեմբեր, 2003թ., «Զեկուցումների ժողովածու», էջ 479:
269. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, Երևան, 1999:
270. Այդ մասին տես Լ.Ասատրյան, Ա.Կարապետյան և ուրիշներ, Դպրոցի կառավարման տեսությունը և պրակտիկան, Երևան, 2001, էջ 10: նաև՝ Ս.Մովսիսյան, Դպրոցի կառավարման հիմունքներ, Եր. 1980, էջ 35:
271. Լ.Ասատրյան, նշված աշխատությունը:
272. Նույն տեղում:
273. Сергеева В.П., Управление образовательными системами, М.,2000, ст.24-25:
274. Լ.Ասատրյան և ուրիշներ, նշված աշխատություն, էջ 68:
275. Տես՝ Ս.Մովսիսյան, նշված աշխատություն, էջ. 66-67:
276. См. И.А.Зайцева и др., Управление образовательными системами, М., 2003, ст. 66.
277. Ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ և Արցախի հանրակրթական դպրոցներում, ուսումնական հաստատություններում:
278. См. В.А.Разанова, Психология управления, М., 2003.
279. Վ.Պ.Սերգեևա, նշված աշխատություն, էջ 27:
280. Լ.Ասատրյան, նշված աշխատություն, էջ 62:

281. Վ.Պ.Սերգեևա, նշված աշխատություն, էջ 5:
282. Ն.Հարությունյան, Ա.Գրիգորյան, Կրթության զարգացման և որակավորման խնդիրները, «Մանկավարժական միտք», 2013, 1-2, էջ 6-8:
283. Լ.Ասատրյան, նշված աշխատություն, էջ 63-66:
284. Лазарев В.С., Системное развитие школы, М., 2003.
285. Տես՝ ժամանակակից մանկավարժական մոտեցումներ (20-րդ դարի մանկավարժական տեսություններ), պատ. խմբ.՝ Ս.Տ.Վադումյան, ակադեմիական խորհրդատու՝ Գ.Վարելա, «Նոյան տապան» հր., Երևան, 2005, էջ 169:
286. Նույն տեղում:
287. ՀՀ սահմանադրություն, 35-րդ, 39-րդ հոդվածներ, Երևան, 1995, փոփոխություններով՝ 2005թ.:
288. См. В.Ф.Афанасьев и др., Труд руководителя, М., 1977, стр. 198.
289. Լ.Ասատրյան, նշված աշխատություն, էջ. 65:
290. Այդ մասին տես Ա.Ա.Ղուկասյան, Լ.Թ.Ասատրյան, Ա.Մ.Կարապետյան, Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիական և զարգացման միտումները, Երևան, 2005, էջ 132:
291. Նույն տեղում:
292. Ն.Հարությունյան, նշվ. գիտ. հոդվածը, էջ 6-7:
293. Ա.Խրիմյան, նշվ.աշխ., էջ 31:
294. См. В.А.Сластенин, И.Г.Исаев и др., Педагогика, М. 2003, ст. 488:
295. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 40, 5-րդ կետ, ընդունված 1999թ.:
296. Լ.Ասատրյան և ուրիշներ, նշված աշխատություն, էջ. 65:
297. Այդ մասին մանրամասն տես՝ Ա.Ա.Ղուկասյան, Լ.Թ.Ասատրյան և ուրիշներ, նշված աշխատություն, էջ 133:
298. Ն.Կ.Հարությունյան, նշվ. գիտ. հոդվածը, էջ 7:
299. Լ.Ասատրյան, նշված աշխատություն, էջ 66:
300. Գ.Ե.Ղույումչյան, Մանկավարժություն, գիրք 2-րդ, Երևան, 2005, էջ 208, նաև տես՝ Сергеева В.П. Управление образовательными системами, М.,2000.
301. См. В.Ф.Афанасьев и др., Труд руководителя, М., 1977, стр. 198.
302. С.Н.Князев, Управление: искуство, наука и практика, Минск, 2002, стр. 96.
303. М.И.Кондакова и др., Управление народным образованием в районе (городе), М.,1981, ст. 15-16.
304. Լ.Ասատրյան, նշված աշխատություն, էջ 74:
305. Տես՝ Ս.Մովսիսյան, Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980, էջ 59-60:
306. Տես՝ Цирульников М.И., Анализ функций общеобразовательной школы, «Советская педагогика», N4, 1977, стр. 77.
307. Захаров М.Г., Организация труда директора школы, 1971, стр. 52-53:
308. Տես Գ.Ղույումչյան, Մանկավարժություն, 2-րդ մաս, Երևան, 2005, էջ 211:
309. Այդ մասին մանրամասն տես՝ Լ.Մարտիրոսյանի նշված աշխատությունը, էջ 101-106:
310. Ուսումնասիրությունները կատարվել են Ստեփանակերտի թիվ 1, 2, 7, 5 և այլ դպրոցներում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

311. Հաշվետվությունը պահպանվում է ԿԳ նախարարության արխիվում, Գ. 14:
312. ԼՂՀ շրջանային կրթության բաժինների վարիչների հաշվետվությունները պահպանվում են ԿԳՆ արխիվում, Գ. 13, 14, 15, 16:

313. Գ.Հարությունյանի հուշերը:
314. ԼՂՀ ԿԸԱ, որոշում թիվ 277, 10-11 1998թ. և որոշում թ. 278, 1999 դեկտեմբեր:
315. Այդ մասին տես՝ 2006թ. «Լուսարար» թերթի թիվ 11, 12, 14 և այլ համարներում տպագրված նախարարի համառոտ զեկուցումները:
316. «Լուսարար», 2012, թիվ 33:
317. Ռաֆիկ Ահարոնյանը իր հուշերը տրամադրել է սույն գրքի համահեղինակ Գ. Հարությունյանին (3 էջ ծավալով):
318. Վաղուհասի միջն. դպրոցի պատմության ուսուցիչ Կ. Հարությունյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին, 2015թ.:
319. Մարտակերտի կրթության բաժնի արխիվ, Գ. 6, 7:
320. Ռ. Հարությունյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
321. Ա.Խաչատրյանի իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
322. Ն. Առստամյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
323. Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվ, Գ. 12:
324. Ս. Պետրոսյանի զեկուցումը պահպանվում է շրջանի կրթության բաժնի արխիվում:
325. Հադրութի կրթության բաժնի արխիվ, Գ. 12, 13:
326. Ա. Աբրահամյանը իր հուշերը տրամադրել է սույն գրքի համահեղինակ Ա. Ավանեսյանին:
327. Խ. Ղազարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին (4 էջի ծավալով):
328. Գ. Ստեփանյանը, Մ. Բալյանը իրենց հուշերը տրամադրել են հեղինակներին:
329. Կ. Մարգարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին (2015թ.):
330. Լաուրա Մարտիրոսյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
331. Այդ մասին տես՝ Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի կրթական համակարգը, Ստեփանակերտի թիվ 2, «Լուսարար», 2015, էջ 313-314:
332. ԼՂՀ ՊԱ Լուսբաժին, Գ. 30, Գ. 24, 26:
333. Բ. Դավթյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին 2015թ.:
334. Բ. Բաբայանի հաշվետվությունը գտնվում է ԼՂՀ ԿԳՆ արխիվում, Գ.13 :
335. Բելլա Բաբայանը իր հաշվետվության և այլ փաստագրական տվյալներ տրամադրել է հեղինակներին (4 էջի ծավալով):
336. Լևոն Հարությունյանի հուշերը Աշանի դպրոցի նախկին տնօրեն Էմիլ Բալայանը տրամադրել է սույն գրքի համահեղինակ Ա. Ավանեսյանին:
337. Է. Բալայանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

338. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 1995-1999թթ., էջ 45:
339. Տե՛ս Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 248:
340. «Լուսարար», 2002, թիվ 1:
341. «Լուսարար» 2003թ.:
342. Նույն տեղում:
343. «Լուսարար», 2008, թիվ...:
344. «Լուսարար», 2008, թիվ 10-11:
345. «Լուսարար», 2008թ. 19-20:
346. «Լուսարար», թիվ 10-11:
347. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 12, նաև «Լուսարար», 2010, թիվ 22-23, 2012թ. թիվ 21:

348. Մարտունու կրթության բաժնի արխիվ, գ. 8, 9:
349. «Լուսարար», 2012, թիվ 2:
350. Ա. Բալյան, Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր, Երևան, 1983, էջ 76:
351. Նույն տեղում:
352. Վ.Ա. Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1917, էջ 16:
353. «Լուսարար», 2014, թ. 36:
354. ԼՂՀ ԿԳ նախարարության արխիվ, գ. 14:
355. «Լուսարար», 2014, թիվ 36:
356. «Լուսարար», 2015, թիվ 8-9:
357. «Լուսարար», 2015, թ. 8.9:
358. Մանկապարտեզի գործունեության մասին նյութերը տրամադրել է տնօրեն Լուսինե Բաղրամյանը:
359. Առաջաձորի մանկապարտեզի գործունեության նյութերը տրամադրել է տնօրեն Մարինե Ասծատրյանը:
360. «Թալիշի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի գործունեության մասին նյութերը տրամադրել է Փիրուզա Քոչարյանը:
361. «Լուսարար», 2014թ., թ. 27:
362. «Սոսի պետական մանկապարտեզի գործունեության մասին նյութերը տրամադրել է տնօրեն Նախշուն Ստեփանյանը:
363. Մաճկալաշենի պետական մանկապարտեզի գործունեության մասին նյութերը տրամադրել է տնօրեն Լյուբա Մանասյանը:
364. Կարմիր շուկայի մանկապարտեզի գործունեության մասին նյութերը տրամադրել է տնօրեն Առլետա Սարգսյանը:
365. «Լուսարար», 2014, թիվ 22:
366. «Լուսարար», 2013, թիվ 28-29:
367. «Լուսարար», 2002, թիվ 10, 2004, թիվ 3:
368. «Լուսարար», 2005, թիվ 9, 2006, թիվ 4:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

369. Այդ մասին մանրամասն տես՝ Հ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 5:
370. Մ.Մարգարյանի հաշվետվությունը պահպանվում է դպրոցի արխիվում:
371. Մարտակերտի կրթության բաժնի արխիվ, գ.8:
372. Նոր Սեյսուլանի դպրոցի արխիվ, գ. 4:
373. Այդ մասին տես դպրոցի արխիվ, գ.4:
374. Մ.Աղաջանյան, «Հաթերք», Ստեփանակերտ, 2012, էջ 39:
375. Ն.Պետրոսյանի հուշերը գտնվում է Ջագլիկի դպրոցի արխիվում:
376. Ս.Ավանեսյանը իր ձեռագիր նամակը տրամադրել է հեղինակներին:
377. Հաշվետվությունը տպագրվել է «Լուսարար» թերթի 2014թ. թիվ 27 համարում:
378. Գ.Սարգսյանը իր ձեռագիր նամակը տրամադրել է հեղինակներին:
379. Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ (հոսքային) դպրոցի տնօրեն Գ.Պետրոսյանի ներկայացրած ձեռագիր տվյալները:
380. Կ. Ավետիսյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
381. Վ. Ղազարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
382. Ն. Շադյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
383. Ա.Այվազյանը դպրոցի մասին ձեռագիր տվյալները տրամադրել է հեղինակներին:

384. Տես՝ Այգեստան գյուղի դպրոցի արխիվ:
385. «Լուսարար», 2014, թիվ 26:
386. Ռ.Դադայան, «Իմ հավերժող կրթարան», Ստեփանակերտ, 2006:
387. «Լուսարար», 2014, թիվ 3-24:
388. «Լուսարար», 2015, թիվ 22:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

389. Մանրամասն տես՝ ԼՂՀ ԿԳՆ «Մասնագիտական կրթություն և գիտություն», Ստեփանակերտ, 2015, էջ 44-47:
390. «Լուսարար», 2006թ. թիվ 16:
391. Նույն տեղում:
392. Մարտունու կրթության բաժնի արխիվ, Գ. 14:
393. Նույն տեղում:
394. «Լուսարար», 2010թ., թիվ 5:
395. «Լուսարար», 2010թ., թիվ 22-23:
396. «Լուսարար, 2014, թիվ 28:
397. Նույն տեղում:
398. «Լուսարար», 2014, թիվ 30-31:
399. Ռազմամարզական վարժարանի արխիվային նյութերը հեղինակներին տրամադրել է տնօրինությունը:
400. Մարտունու շրջանի կրթության բաժնի արխիվ, գ. 12:
401. Կարեն Մելքումյանը իր հաշվետվությունը տրամադրել է հեղինակներին:
402. Էմիլ Հովհաննիսյանը իր հաշվետվությունը տրամադրել է հեղինակներին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1988-2016ԹԹ.)

1. Կրթական համակարգի վիճակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման նախօրյակին (1988-1991թթ.) 7
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությունները և նրա սերտաճումը Հայաստանի կրթության համակարգի հետ (1992-2016թթ.) 12
3. ՀՀ և ԼՂՀ կրթության միասնական քաղաքականությունն ու զարգացման միտումները 96
4. ԼՂՀ կրթական համակարգի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները 107
5. ՀՀ և ԼՂ Հանրապետության կրթական համակարգի միասնական կառավարման հիմնախնդիրները համահայկական կրթադաշտում 115

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՆՐԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-2016ԹԹ.)

1. Կրթության ոլորտի բարեփոխումների գործընթացը ԼՂՀ-ում և այդ միտումով ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցային հիմնախնդիրները 119
2. Հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու որակի բարձրացումը կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխան 144
2.1 Հանրակրթության բովանդակության հիմնախնդիրները, չափորոշչի կառուցվածքային տարրերը, ուսումնական պլանների, դասագրքերի վերափոխումը բարեփոխումների պահանջներին համապատասխան 144
2.2 Հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու որակի բարձրացումը բարեփոխումների պահանջներին համապատասխան 203
2.3 Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը (բանակ-դպրոց կապի ամրապնդման ուղղությունները) 260
3. Ներառական կրթության կազմակերպումը ԼՂՀ հանրակրթական դպրոցներում 271
4. Ուսուցչական խորհրդակցությունները և կոնֆերանսները, մանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը (1992-2016թթ.) 286

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. ԼՂՀ կրթական համակարգի ձևավորման ու զարգացման փուլերը և հեռանկարները (պատմաքննական վերլուծություն) 313
2. ՀՀ և ԼՂ Հանրապետության կրթության համակարգի միասնական կառավարման գործառույթների, սկզբունքների ու մեթոդների գիտամանկավարժական վերլուծությունը 327
3. Ներդպրոցական կառավարման համակարգը, դպրոցների տնօրենների կազմակերպական գործունեությունը (առաջավոր փորձի վերլուծություն) 343
4. Դպրոցի կառավարման իրավական հիմքերը (դպրոցի գործունեության և զարգացման օրենսդրական բազան) 362

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1991-2016թթ.)

1. ԼՂՀ կրթության, գիտության (մշակույթի և սպորտի) նախարարների գործունեությունը (1991-2016թթ.) 369
2. ԼՂՀ ԿԳ նախարարության բարձրակարգ մասնագետների գործունեությունը 386
3. ԼՂՀ կրթության շրջանային բաժինների վարիչների գործունեությունը (1991-2016թթ.) 394
4. ԼՂՀ ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտի, ՀՀ կրթության Ազգային ինստիտուտի ԼՂՀ մասնաճյուղի տնօրենների և վերապատրաստման դասընթացների կազմակերպիչների գործունեությունը (1991-2016թթ.) 414
5. ԼՂՀ վաստակավոր մանկավարժների գործունեությունը 422
6. ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչների գործունեությունը 468
7. ԼՂՀ հանրակրթական դպրոցների տարվա լավագույն ուսուցիչների, տնօրենների գործունեությունը 475

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԼՂՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1991-2016ԹԹ.)

1. ԼՂՀ նախադպրոցական կրթական համակարգը (1991-2016թթ.) 487
2. ԼՂՀ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների գործունեությունը (1991-2016թթ.) 524

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1988-2016թթ.)

1. Մարտակերտի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) 544
2. Մարտունու վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) 560
3. Հադրութի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) 571
4. Ասկերանի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) 580
5. Ստեփանակերտ քաղաքի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) 589
6. Շուշիի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1988-2016թթ.) 597
7. Քաշաթաղի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1992-2016թթ.) 599
8. Շահումյանի վարչատարածքային շրջանի դպրոցների ընդհանուր բնութագիրը (1992-2016թթ.) 609

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԼՂՀ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ, ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ, ԱՐՎԵՍՏԻ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋԻ, ՄԱՐԶԱԿԱՆ (ՍՊՈՐՏԻ) ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1991-2016ԹԹ.) 613

ԱՄՓՈՓՈՒՄ 645
РЕЗЮМЕ 655
SUMMARY 664
ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 672

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՊԱՏ ՍԱՆՋԱՆԻ
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻՇԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
Մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (1991-2016ԹԹ.)

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

Խմբագիր՝ Ա.Գասպարյան
Ռուսերեն և անգլերեն տեքստի խմբագիր՝ Լ.Ասրյան
Սրբագրիչ՝ Ա.Գասպարյան
Համ. շարվածքը և էջադրումը՝ Թ.Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x108 1/16,
ծավալը՝ 43 տպ. մամուլ: Տառատեսակը՝ Arial Armenian: Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25, Ստեփանակերտ-2017
հեռ. +37447946360, +37497302002, E-mail:dizak-plus@mail.ru